

ՆԻԹԵՐ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Չ. ՀԱՏՈՐ

Խմբագիր՝ ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒՔԵԱՆ

«ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ» մատենաշարի հրատարակությունը կը կատարուի Հ.Յ.Դ. Բիւրոյի որոշումով:

© All rights reserved
ISBN 978-9953-0-1528-6

Ներկայ հատորի տպագրությունը իրականացած է «ՓԻՆԻԿ» հիմնադրամի միջոցով:

ՅԱՌԱՋԱԲԱՆ

1907 – 1909 տարիները Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար հարուստ են պատմական շարք մը իրողութիւններով: Նախ ներքին ճակատի վրայ, Չորրորդ Ընդհ. Ժողովի օրակարգի ամենէն հրատապ խնդիրներէն բխած՝ ընկերվարական գաղափարախօսութեան վերջնական եւ պաշտօնական որդեգրումը, որուն մեկնակետը տրուած էր դեռ 1905 թ. «Կովկասեան Նախագծի» մշակումով: Ատենին մեծ աղմուկ բարձրացուցած այս հարցը կուսակցութենէն ներս ստեղծած էր հակադիր երկու հոսանքներ,– ծայրայեղ ազգայնական միերանական շարժումը եւ ձախակողմեան հակումներով անջատականներու խմբակներ, որոնց շրջայազերծած բուռն պայքարները կը սպառնային տաճկահայերու եւ կովկասահայերու միջեւ ճեղք բանալ ու պատակտում յառաջացնել կուսակցութենէն ներս: Չորրորդ Ընդհ. Ժողովը յաջողեցաւ ամրապնդել հայ ազատագրական շարժումը առաջնորդող մեծագոյն կազմակերպութեան միասնականութիւնը եւ հայ դատի համար պայքարի դրօշին շուրջ համախմբել հաւասարապէս կովկասահայը, տաճկահայը եւ ընդհանրապէս բովանդակ հայութիւնը: Այնուհետեւ չէզոքացուեցան այլախոհ տարրերը, գտուեցան շարքերը եւ, վերամշակուած Ծրագրի համաձայն, ձեռնարկուեցաւ կազմակերպման կամ վերակազմակերպման քաղաքական եւ մարտական խումբերուն, արիեստակցական եւ գիւղացիական միութիւններու, կուսակցութեան բազմաճիւղ ոստերը արձակելով ժողովրդական լայն խաւերէն ներս:

Արտաքին ճակատի վրայ կը սպասէին շատ անելի ծանրակշիռ մարտահրաւերներ,– Դաշնակցութիւն-Երիտասարդ թուրքեր յարաբերութիւններ, Օսմանեան սահմանադրութեան հռչակում, Պարսկաստանի յեղափոխական շարժում, ընկերվար Միջազգայնականի անդամակցութիւն, եւ այլն: Նշուած հարցերը առաջին հայեացքով կը թուին յատկանշել առսուելաբար Դաշնակցութեան գործունէութեան տարբեր երեսները միայն: Անոնցմէ շատեր, սակայն, յատկապէս Օսմ. սահմանադրութեան հռչակումը եւ հայեթուրք յարաբերութիւններու նոր էջի մը բացումը՝ պատմակշիռ այնպիսի տարողութիւն կը կրէին, որ ճակատագրական նշանակութիւն պիտի ունենային ամբողջ հայ ժողովուրդին համար: Ներկայ հատորին մէջ տրուած են միայն 1907–1909 տարիներու հատուածին աղերստող նիւթերը, մինչ խնդիրներու հոլովոյթը պիտի երկարէր գէթ մինչեւ համաշխարհային Ա. պատերազմը եւ հայ ժողովուրդին վրայ ի գործ դրուած Յեղասպանութիւնը: «Նիւթեր»ու յաջորդ հատորներուն մէջ, ըստ ժամանակագրական կարգի, տեղ կը գտնեն անշուշտ Հ.Յ.Դ. դիւանատան մէջ պահուած ա՛յս եւ միւս խնդիրներուն վերաբերող արխիւային փաստաթուղթերը:

Խօսելով Դաշնակցութեան եւ Երիտասարդ թուրքերու յարաբերութեանց կամ «գործակցութեան» մասին, թէեւ հարցին տարբեր երեսներուն յատկացուած գլուխներուն տակ կը տրուին անհրաժեշտ համարուած ծանօթութիւնները, այսուհանդերձ անելորդ չ'ըլլար հոս, ընդհանուր յառաջաբանին մէջ, մատնանշել այդ յարաբերութիւններու հոլովոյթին կապուած կարգ մը երեւոյթներ:

ա- Յայտնի է որ համիտեան վարչակարգի տապալման նպատակով Թուրքիոյ ընդդիմադիր տարրերը համախմբելու եւ միացեալ շարժում ստեղծելու գաղափարը կը պատկանի Հ.Յ.Դ. Չորրորդ Ընդհ. Ժողովին (1907), իսկ անոր իրականացման նախաձեռնութիւնը՝ Արեւմտեան Բիւրոյին: Վերջինիս ներկայացուցիչը, Է. Ակնունի, շուտով պիտի լծուէր եռանդագին աշխատանքի նախ Երիտասարդ թուրքերու գոյգ հատուածներուն, Ահմէտ Ռիզայի գլխավորած «Իթթիհատ»ին եւ իշխան Սապահետտիին «Թերաքքը»ին, սպա Օսմանեան միւս ազգութիւններու կազմակերպութեանց հետ, գլուխ հանելու համար 1907 թ. Դեկտեմբերի փարիզեան կոնգրէն, ուր եւ պիտի վճռուէր Սուլթան Համիտի գահընկէցութիւնը, բռնատիրութեան փոխարինումը ազատ կարգերով եւ օսմանեան երկրի քաղաքացիներուն ժողովրդավարական իրաւահաւասարութիւնը՝ առանց կրօնի եւ ցեղի խտրութեան:

բ- 1908 թ. Յուլիս 11/24ին հռչակուած Սահմանադրութիւնը արդիւնք էր բազմաթիւ պատճառներու, սկսած հայերու եւ մակեդոնացիներու մղած հայդուկային զինեալ պայքարէն մինչեւ արաբական աշխարհի խլրտումները, բռնակալ ու նեխած վարչակարգին դէմ Թուրքիոյ թէ արտասահմանի մէջ ծաւալ ստացած դժգոհութիւններէն մինչեւ թուրք բանակի ըմբոստացումը, յատկապէս Մակեդոնիա նահանգին մէջ տեղակայուած զօրաբանակին, որուն սպայական կազմին մէջ լայն տարածում գտած էին արդէն վարչակարգին դէմ ուղղուած գրաւոր եւ բանաւոր քարոզչութիւնները: Արդարեւ գլխավորապէս վերջիններն էին որ մտահոգ՝ կայսրութեան սպառնացող անդամահատութենէն կամ քայքայումէն՝ շարժումին գործնական բնոյթ տուին եւ դէպի մայրաքաղաք իրենց յանդուգն առաջխաղացքով, պարտադրեցին սուլթանին սահմանադրութիւնը հռչակելու, առանց սակայն այս վերջինը գահընկէց ընելու, ինչպէս որոշուած էր Փարիզի կոնգրէին:

գ- Վերջին իրողութիւնը դժբախտ կողմերէն մէկն էր շահուած յաղթանակին, որովհետեւ անելի քան 30 տարիներ գահին կառչած Ալաիւկ Համիտ Բ., առերեւոյթ համակերպութիւն ցոյց տալով հանդերձ նոր իշխանաւորներուն, թաքուն կերպով պիտի շարունակէր իր սադրանքները՝ պատեհ առիթով կայսրութիւնը ի նպաստ իրեն շրջելու համար: 1909 թ. Մարտ 31ի շերիաթական յեղաշրջման փորձը այդ նպատակով հիւսուած դաւադրութիւն էր. ձա-

խողած դարձեալ սելանիկեան գորաբանակին շնորհիւ, որ Պոլիսը վերագրաւել էտք այս անգամ վերջ պիտի դնէր Սուլթան Համիտի 33ամեայ անփառունակ գահակալութեան:

դ- Կարմիր սուլթանին գահընկէցութեամբ իշխանութեան գլուխ վերադարձաւ Իթթիհատ վէ Թերաքքըն (Միութիւն եւ Յառաջդիմութիւն), նախկին երկու անջատ խմբաւորումներու միացումով (առանց Սապահետտին իշխանի) կազմուած կուսակցութիւնը, որուն առաջին օրերէն յայտնուող մեծաւորակաւ հակումները հետզհետէ պիտի շեշտուէին, հասնելու համար բռնատիրական աստիճանի: Կուսակցութիւնը Թուրքիոյ տարածքին չունէր կազմակերպական կառոյց, իսկական անդամակցութիւն եւ հիմք՝ ժողովրդական զանգուածներու մէջ: Իշխանաւոր դարձած էր շնորհիւ զինուորական յեղաշրջումի մը եւ բանակն էր իր ապաւէնը: Չեռնարկուեցաւ գաւառական քաղաքներու մէջ Իթթիհատի բջիջներու կազմութեան՝ ակումբներու (քլիւպ) ձեւին տակ: Շուտով ասոնք լեցուեցան նախկին վարչակարգի ազգայնամուլ ու յետադիմական տարրերով, պետական փտած պաշտօնեաներով, երկրի կեդեքի վաշխառուներով, մինչեւ իսկ իրենց ջարդարարութեամբ հանրածանօթ քիւրտ ցեղապետներով: Այնպէս որ, եթէ մէկ կողմէ Պոլիսն ու կարգ մը մեծ քաղաքներ կը շարունակէին Սահմանադրութեան առաջին օրերու զինուորութեամբ տարուիլ, խօսքի ու մամուլի ազատութենէն շռայլօրէն օգտուիլ, պատկերը բոլորովին այլ էր ներսը, գաւառական քաղաքներու եւ հեռաւոր գիւղերու մէջ: Հոս, միեւնոյն շարագործներու ձեռքով կը շարունակուէին նախկին անօրէնութիւնները, երբեմն աւելի համարձակ ու բացայայտ կերպով: Բուն հարցը այն էր, որ Երիտասարդ թուրքերու կուսակցութեան վերնախաւին մէջ իսկ բոյն դրած յետադէմ ու կրօնամուլ տարրերը ձեռք պիտի բերէին այն աստիճանի գերիշխող դիրք, որ կուսակցութիւն-կառավարութիւն-պետութիւնը, մէկ եւ միեւնոյն էութեան վերածուած, պիտի դառնար իրողական իշխանութիւն ու ջլատէր՝ կայսրութիւնը ազատական բարեօրոգումներով վերանորոգելու ուղղութեամբ թափուած բոլոր ջանքերը:

Թուրք հասարակական խաւերուն մէջ տիրական կը մնար մէկ ուրիշ մտայնութիւն եւս, ըստ որուն իբրեւ տիրող ցեղի, իրեն վերապահուած էր իշխելու իրաւունքը, իսկ տիրապետեալ ժողովուրդներուն՝ ստորադասի ենթակայութիւնը միայն: Նոր իրաւակարգի յայտարարած իրաւահաւասարութիւնը, հետեւաբար, խախտում կը համարուէր այդ անյեղի սկզբունքին: Անոր վտանգուիլը պատճառ բերելով կարելի է հետեւաբար երեսակայել, թէ որքա՞ն դիրքին էր տգէտ ամբողջները ոտքի հանել ու գրգռել կեանքներուն դէմ...

ե- Կրիլկիոյ աղէտը մէկ ցայտուն օրինակն է մեծամուլական եւ հիւանդագին այդ մտայնութեան: Գործուած նախճիրն ու աներածութիւնները բացայայտ էին: Ծանօթ էին նաեւ անոր հեղինակները: Իշխանութիւնները, փոխանակ համիտեան օրերու բնորոշ այդ եղեռնագործութիւնը կանխելու, ապա յանցագործներն ու մեղսակիցները պատժելու, միգրէր կը թափէին մոլորեցնելու հանրային կարծիքը, միջազգային թէ տեղական: Պետական եւ դիւանագիտական շրջանակներէն կ'արտահոսէր ապատեղեկատուութիւն՝ իրականութիւնները ծածկելու եւ մեղքն ու յանցանքը հայերու վզին բարդելու թաքուն դիտաւորութեամբ: Խորհրդարան, զին. ատեան, մամուլ իրար անցած էին եւ ամիսներ տեսող քաշքշուքները ուրիշ նպատակ չէին հետապնդէր, բայց միայն քողարկել բուն պատասխանատուները, կոտորած սարքող մարդասպանները: Թուրքիոյ մէջ յանցագործ աշխարհի մարդիկը պիտի շարունակէին անձեռնմխելի մնալ, որովհետեւ պետութիւնը որեւէ ժամանակ կրնար պէտք ունենալ անոնց: Հարիւր տարիներու հեռաւորութենէն դիտուած՝ պիտի տեսնուի որ այս մէկը մնայուն երեւոյթ է Թուրքիոյ պատմութեան մէջ եւ իրերայաջորդ վարչակարգերը կը հետեւին միեւնոյն վարքագծին:

գ- Անդրադառնալով սահմանադրական Թուրքիոյ միայն առաջին տարուան անցուդարձերուն, պէտք է հաստատել որ Երիտասարդ թուրքերու հետ Դաշնակցութեան յարաբերութիւններն ու գործակցութիւնը այնքան ալ հարթ գետնի վրայ չընթացան: Անցած առաջին օրերու ընդհանուր խանդավառութիւնը, երբ հայկական կուսակցութիւնը կը ճանչցուէր գլխաւոր դարբիններէն մէկը ազատական կարգերու յարթանակին, եւ իբրեւ այսպիսին մեծ համարում կը վայելէր ժողովրդական զանգուածներուն մօտ, հիմնական խնդիրներու լուծման շուրջ երկու կուսակցութեանց միջեւ շուտով երեսան պիտի գային լուրջ տարակարծութիւններ: Դաշնակցութիւնը սահմանադրութեան գաղափարին փարած էր անկեղծութեամբ, մեկնակէտ ունենալով Փարիզի կոնգրէին որոշումները: Տրուած էր իր մարտական ուժերը. հայրենի լեռներուն վրայ կոռուող ֆետայական խումբերը վար դրած էին զէնքերը՝ անոնց գործածութիւնը վերապահելով միայն Երկրի սահմանադրական կարգերը պաշտպանելու նպատակին: Ընդունած էր Օսմանեան հայրենիքի ամբողջականութեան գաղափարը՝ Թրքահայաստանը յայտարարելով անոր անբաժան մասը: Այս բոլորին դիմաց կուսակցութիւնը իրաւունք ունէր պահանջելու Փարիզի կոնգրէին մնացեալ որոշումներուն գործադրութիւնը, Սուլթանին գահընկէցութիւնը, առանց ցեղի ու կրօնի խտրութեան ազգութիւններու իրաւահաւասարութեան եւ նահանգային ապակեդրոնացման սկզբունքներու յարգումը, հին վարչակարգի փտած տարրերու պաշտօնէ հեռացումը, հանրածանօթ շարագործներու սանձահարումը, բռնազրբաւում հողերու վերադարձը օրինաւոր տէրերուն, եւ նմանօրինակ բազում խնդիրներ: Դիշդ է որ այս բոլորին լուծումը մէկ օրէն միւսը չէր կրնար կատարուիլ: Կարելորդ, սակայն, իշխանութեանց կամքն էր՝ կացութիւնը շրջելու դէպի արմատական բարեփոխումներ. բան մը, որ ոչ միայն երեսան պիտի չգար, այլ երկրին նոր տիրակալները իրենց շրջապատը պիտի ուռնացնէին հետզհետէ յետադէմ, կրօնամուլ եւ միեւնոյն յանցագործ աշխարհին պատկանող տարրերով: Խորքին մէջ Իթթիհատի ղեկավարութեան որոշ խաւին համար ազգայնականութիւնը

դարձած էր առաջնորդող գաղափարախօսութիւն եւ օսմանցիութիւնը անոր համար համագոր էր թրքութեան, որուն մէջ պէտք է ձուլուէին կայսրութեան միւս ժողովուրդները, մոռնալով իրենց ազգային, կրօնական ու մշակութային բոլոր առանձնաչափութիւնները: Այս պայմաններուն մէջ հասկնալի կը դառնայ թէ ինչու խուլ ականջներու կը հանդիպէին պետական ընդհանուր բարեկարգութիւններու, հայկական նահանգներու մէջ քրիստոնէայ կամ հայ պաշտօնէութեան եւ դատաւորներու նշանակման ուղղութեամբ դիմումները, թէ ինչպէս է որ նոր իրաւակարգի անդրանիկ խորհրդարանի կազմութեան առիթով հայոց պահանջած 25 անդամներու փոխարէն, միայն 10 հայ երեսփոխաններ պիտի ընտրուէին, եւայլն եւայլն:

Հ. Յ. Դաշնակցութիւնը այս բոլորը կը կրէր մեծ համբերատարութեամբ, գրաւ դնելով դարձեալ Երիտասարդ թուրքերու կուսակցութեան այն ողջամիտ եւ ազատական ներկայացուցիչներուն վրայ, որոնք ի վերջոյ պէտք է յաջողէին պետութիւնը առաջնորդել դէպի արդարութիւն եւ յառաջդիմութիւն: Այդ յոյսերը դժբախտաբար չիրականացան, իսկ Ատանայի կոտորածները եկան անգամ մը եւս օդին մէջ պտտցնելու համատարած նոր եղեռնագործութեան մը սարսափելի ուրուականը: Նոյնիսկ ծանրագոյն այս պարագային, Դաշնակցութեան թէ հայութեան մէկ հատուածին համար ուրիշ էլք չէր մնար կարծես, բացի ապահինել նորէն պետութեան դէկը ձեռք առած թրքական ուժեղագոյն կուսակցութեան, Իթթիհատ վէ Թերաքքը-ին, մանաւանդ անոր անկեղծ ու առողջ տարրերուն, որոնք նոյնպէս ցնցուած կը թուէին ըլլալ թէ՛ Սուլթանի Համիտի պետական յեղաշրջումէն՝ նոյն օրերուն փորձուած, եւ թէ՛ Կրիլկիոյ հայութեան մուր ուժերու կողմէ գործուած ոճիրներուն: Այլընտրանքը՝ հին վարչակարգն էր, որմէ վստահաբար ոչ մէկ բարիք կարելի էր սպասել: Ուստի, ամիսներ տեսող բանավէճերէ եւ լարուած բանակցութիւններէ ետք, վասն սահմանադրական կարգերու պաշտպանութեան եւ հայ ժողովուրդի ֆիզիքական ապահովութեան, 1909 թ. Օգոստոս 3ին Իթթիհատի հետ պիտի կնքուէր նոր համաձայնութիւն:

Եթէ Յառաջաբանին մէջ ծանրացանք առաւելաբար Օսմանեան սահմանադրութեան եւ Դաշնակցութիւն-Իթթիհատ յարաբերութիւններուն վրայ, գլխաւոր պատճառը այն է, որ 1907-1909 տարիներու այս իրադարձութիւնները առանցքային նշանակութիւն ունին իբրեւ առաջին լուրջ փորձ մը, զէ՞ր Դաշնակցութեան կողմէ, թուրքերու եւ հայերու միջեւ փոխադարձ հասկացողութիւն ստեղծելու եւ միասնաբար ապագայ կերտելու տեսակէտէն: Ապա նաեւ Հինգերորդ Ընդհ. Ժողովի զբաղումներուն եւ կազմակերպական շրջաններէն յղուած գրութիւններուն մեծագոյն բաժինը կը վերաբերի նոյն այդ հարցերուն:

Թուրքիոյ մէջ ստեղծուած կացութիւնը կուսակցութիւնը կը դնէր դէմ յանդիման շատ մը խնդիրներու, ինչպիսին էին՝ գաղտնի, ընդյատակեայ եւ զինեալ պայքարէն անցումը՝ խաղաղ, հրապարակային ու ազատ պայմաններու մէջ գործունէութեան, կուսակցութեան օրինականացումի հարցը ըստ միութիւններու մասին օսմ. խորհրդարանի ընդունած օրէնքին, կազմակերպական ցանցի տարածումը ամբողջ կայսրութեան մէջ, դաշնակցական երեսփոխաններուն դերին ու վարքագծին ճշդումը՝ խորհրդարանէն ներս թէ դուրս, եւայլն: Այլապէս նաեւ ժողովի զբաղումներուն մաս պիտի կազմէին Կովկասն ու ցարական կառավարութեան շրջապագրած զանգուածային հալածանք-ձերբակալութիւնները դաշնակցականներուն դէմ, Պարսկաստանի յեղափոխութիւնը եւ կուսակցութեան մասնակցութիւնը սահմանադրական շարժման եւ, վերջապէս, Դաշնակցութեան պաշտօնական անդամակցութիւնը միջազգային ընկերվարական կազմակերպութեան:

Ինչպէս կը տեսնուի Հ. Յ. Դաշնակցութեան գործն ու պայքարը պարտադրաբար կը ծաւալէր միաժամանակ երեք պետութեանց սահմաններէն ներս: Հասկնալի է ուրեմն որ ներկայացուած հատորը, արդէն սովորականէն մեծ ծաւալ ստացած, չկարենար պարփակել վերոյիշեալ հարցերուն վերաբերող բոլոր վստեղագրերը: Անոնք տեղ պիտի գրաւեն «Նիւթեր»ու յաջորդ՝ եօթներորդ հատորին մէջ: Այդ շարքին են յատկապէս՝ 1907–1909 տարիներուն Կովկասի մէջ կայացած Ռայոնական ժողովները, Դաշնակցութեան Խորհուրդին եւ Արեւմտեան Բիւրոյի 1904–1908 թուականներուն կայացուցած Ռոշումներուն համառօտ արձանագրութիւնները, ընկերվար Միջազգայնականի կեդրոնին հետ փոխանակուած գրութեանց թղթածրարը:

* * *

Հ.Յ.Դ. Չորրորդ Ընդհ. Ժողովի որոշումն էր «յառաջիկայ կուսակցածողովը նշանակել գալ տարուայ վերջը, ոչ ուշ քան 1908 թիւր»: Նախապետուած թուականին Թուրքիոյ, Պարսկաստանի եւ Ռուսիոյ իրադարձութիւններու պատճառով կարելի չէր եղած ժողովը հրաւիրել, հակառակ այն իրողութեան որ շարք մը շրջաններ անյեպաջգելի կը

համարէին զայն մանաւանդ Օսմ. սահմանադրութեան սրեղծած նոր պայմաններու լոյսին տակ: Այնուհետեւ 1909 թ. Մարտի 31ի Համիտի յեղափոխական յեղաշրջման փորձը եւ Կրիլկիոյ աղէտը պատճառ դարձան նոր յեղաշրջումի: Ի վերջոյ Հինգերորդ Ընդհ. Ժողովը պիտի սկսէր Պուլկարիոյ Վառնա քաղաքին մէջ 1909 թ. Օգոստոս

14/27ին եւ փետր ամսի քան մէկ ամիս՝ մինչեւ Սեպտ 18 հին փոմարով: Գումարուած 67 նիստերու արեւնագրութիւնները արչանագրուած են 1538-18 համարը կրող մեծ փոմարի մը մէջ: Բացումին ներկայ են իրաւասու չայն ունեցող 17 պարզամատրներէն 12ը. մնացեալները, ինչպէս նաեւ ժողովին կողմէ հրաւիրեալները պիտի հասնէին հեղափոխութեան, ոմանք բաւական ուշ, քուէի իրաւունք ունեցողներուն թիւը բարձրացնելով 26ի:

Կազմին մասին խօսելով, Արեւելեան Բիրոյի ներկայացուցիչն է Եղիշէ Թոփչեան (Երուանը), Արեւմտեանինը՝ Յոնան Գալթեան Պոլսոյ Պար. մարմինը կը ներկայացնէ Է. Ալնունի. կազմակերպական շրջաններէն ընկերուած պարզամատրներն են՝ Վասպուրականէն՝ Մարգիս Բարսեղեան (Վանայ Մարգիս) եւ Վանիկ (Միհրան Թերլէմէզեան), Տարօն-Մասուն եւ Պիթիսի շրջանէն՝ Մարգպետ (Ղազարոս Ղազարոսեան) եւ Սեպուի (Արշակ Ներսէսեան), Կարինէն Մարալ (Գրիգոր Ղարիպեան), Տրապիզոնէն՝ Հրանկր կամ Մարիանը (Մարաֆեան), Մարզուանէն՝ Ազիլեան, Սեբաստիայէն՝ Վահան (Գայ), Խարբերդէն՝ Համազասպ (Ամասունի), Տիգրանակերպէն՝ Չուլայ (Լեւոն Կարապետեան), Պոլիսէն՝ Բարսեղ Շահպազ, Իզմիրէն՝ Հայկ Բարսաբանեան, Պարսաններէն՝ Ժիրայր (Բարբող Չօրեան) եւ Յար. Շահրիկեան, Ամերիկայէն՝ Թովմաս Ճելայեան եւ Տիգրան Աստիկեան, Երոպայի Հ.Յ.Գ. Ուս. միութենէն՝ Շիրակունի (Մարտիրոս Յարութիւնեան): Պարզամատրներ չունին Լեռնավայր-Կիլիկիան եւ Եփրատը:

Արեւելեան Փոքր Ասիոյ հայաշար շրջաններու մեծաթիւ ներկայացուցչութեան դիմաց, որ կը բացաւորուի զոլխաւորաբար Փոքր Հայքի նորակազմ 4 Կ. Կոմիտէիներով, Կովկասը կը ներկայանայ համեայ պարկերով մը: Յարական ուստիականութեան խիստ հեղափոխականներուն հեղափոխութեան, պարասխանապարտ ընկերներու մեծ մասը կը գտնուէր բանակներու մէջ կամ անցած էր արտասահման: Կազմակերպութիւնը եւս, բոլորովին ընդհանրակ մտած, սեղմուած էր: Նախկին 10 Կ. Կոմիտէիներէն փոխարէն Հինգերորդ Ընդհ. Ժողովին Կովկասը կը ներկայանար միայն չորսով, որոնց պարզամատրներէն կը յիշուին Ռուկանապար-Պարուն Թուրքէն (Արարապեան, որ Արր. Գիւլխանդանեանն է) եւ երկրորդ մը՝ որուն անունը յիշարակուած չէ: Այնքանազատի պարզամատրին անունը եւս չէ յիշարակուած: Մրգասարան-Երեւանէն Ծապոնացի (Ար. Տէր Յակոբեան), Նաւահանգիստ-Պարունէն՝ Վագրիկ, որ կը ստորագրէ նաեւ Քաղբիկ չեւով:

Վրէժարան-Պարսկաստանի պարզամատրն էր Վահան (Նիկոլ Մարտիրոսեան):

Արեւնագրութիւններուն մէջ կը հանդիպինք նաեւ Պիե-

ռի, Մաշայի (Արդեօ՞ր Ար. Տէր Յակոբեանն է) եւ Եփրեան Գրիգորեանի, որոնք հաւանաբար անունով շիշարակուած վերեւի անձանօք մնացած պարզամատրներն են:

Ընդհ. Ժողովը խորհրդակցական չայնի իրաւունքով կը հրաւիրէ Ս. Չաւարեանը, Ռոստոմը, Անդրանիկը, Նիկոլ Գումանը, Ռուրէն Տարօնացին (Տէր Մինասեան), Սեբաստիացի Մուրափը, ինչպէս նաեւ օսմանեան խորհրդարանի դաշնակցական անդամները, - Արմէն Գարուն, Վարդգէս Սերենկիւիեանը, Վահան Փափագեանը (Կոմս) եւ Գեղամ Տէր Կարապետեանը, ինչպէս նաեւ իբրեւ հիւր, ռուսական Գումայի հայ անդամ Յ. Սաղաթէլեանը եւ Ս. Արարապսկին: Ժողովական աշխատանքներու ընթացքին կը հրաւիրուին Գալուստ Մոլոյեանը եւ Պոլիս գտնուող Աւերեանը, Մարգպետը եւ բժ. Կիլիկեանը:

* * *

Թէ՛ Ընդհ. Ժողովի արեւնագրութեան եւ թէ՛ մնացեալ գրութիւններու մասին հարկ է կարարել հետեւեալ մատչանշումները -

- Մեծ է թիւը լեզուական եւ ուղղագրական անհարթութիւններուն, հեղինակներուն կողմէ բոլոր փրուած կամ արչանագրութիւն կազմողներուն, մանաւանդ երբ խօսք առնողը արեւելահայ է, իսկ գրի առնողը արեւմտահայ, կամ հակառակը: Առաջինները կը հետեւին փառադարձութեան դասական կանոններուն, վերջինները կը գրեն ըստ հնչիւնային արտասանութեան: Նման շփոթութեանց առիթ կու տան օտար բառերը, օրինակ՝ պարլամենտ-փարլամենտ, բիւջէ-պիւժէ, պլապֆորմ-փլապֆորմ, կանոնադատ-բանադատ, կարինէ-քարպինէ, կամ յարուկ անունները, - Պիեռ-Քիեռ, Շահրազ-Շահպազ, Մուրադ-Մուրապ, Բագու-Պարոս, Գիարբեկի-Տիարպեթի, եւ այլն: Աշխատած ենք ըստ կարելոյն միաշեւորութիւն մտնել, ջանալով պահել իւրաքանչիւր գրութեան առանձնապարկութիւնը:

- Արեւելահայերէնի հին չեւիկ թիրքն ու թիրքիան վերածած ենք թուրք եւ թուրքիայի:

- Օտար բառերու «ր» սկզբնապարտ փոխարինած ենք «ռ»-ով, ինչպէս ռեֆորմ, ռայոն, ռէակցիա, եւ այլն:

- Հնարաւորութեան սահմաններուն մէջ դարձեալ, ջանացած ենք ծածկանունով յիշարակուած անձնանունները եւ փեղանունները ծանօթագրութեամբ բացաւորել, փայլով համապարասխան յայտնի անունները: Հարկերին վերջաւորութեան փեղադրուած անձնանուններու եւ փեղանուններու ցանկին մէջ կը կարարուին համապարասխան յղումները:

Ե. ՓԱՄՊՈՒԹԵԱՆ

ԳԼՈՒԽ I

Հ.Յ.Գ. ՀԻՆԳԵՐՈՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Առաջին այս գլուխի նիւթերու հիմնական բաժինը կազմուած է Հինգերորդ Ընդհ. Ժողովի ատենագրութիւններէն, - ընդամենը 67 նիստերու արձանագրութիւն՝ ամփոփուած 1537-18 համարը կրող մեծ տոմարի մը մէջ: Այս վերջինէն առաջ տրուած են Արեւմտեան եւ Արեւելեան Բիրոններու յղած հրաւեր-շրջաբերականները, որոնցմով կը ծանուցուի Ընդհ. Ժողովի գումարումը, մասնակցութեան պայմանները, օրակարգը, ինչպէս նաեւ լիազօրագրեր եւ այլազան գրութիւններ, ընդհանրապէս ուղղուած Գիւանին, բայց նաեւ տարբեր մարմիններու, որոնք սակայն բոլորն ալ սահմանուած էին յանձնուելու Ընդհ. Ժողովի նկատարութեան:

Կը յաջորդեն ա.- ատենագրութիւններէն քաղուած «Կազմակերպական որոշումներ» խորագրով Արեւմտ. Բիրոյի կողմէ կուս. մարմիններուն ուղղուած այն շրջաբերականը, որուն բովանդակութիւնը «Դրօշակ» պաշտօնաթերթով կամ առանձին գրքոյկով պիտի չիրատարակուէր. բ.- «Յայտարարագիր եւ Որոշումներ Հ. Յ. Գաշնակցութեան V Ընդհանուր Ժողովին» գրքոյկը, որ արեւմտահայերէնով լոյս տեսաւ ժրմեւի մէջ 1910 թ.ին եւ որ կրկնութիւնն էր «Դրօշակ»ի 1909 թ.ի N° 9 եւ 10 թիւերուն մէջ (Սեպտ.-Նոյեմբեր) հրատարակուածին: Այս վերջինները մեծ մասամբ քուէարկուած բանաձեւեր են, որոնք ժողովական արձանագրութեանց մէջ նշուած են տարբեր գիրով:

Ա. - ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՕՐԱԿԱՐԳ

Փաստ. 1539-1

Ա 1.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ Ե. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընկերներ,

Հ.Յ.Գ. Դ-րդ Ընդհանուր Ժողովի որոշումով, Ե-րդ Ընդհ. Ժողովը տեղի ունենալու էր տարիէ մը, սակայն հետզհետէ իրարու յաջորդող ճանգամանքները եւ ուրիշ անդէպ պարագաներ յետաձգել տուին այդ որոշումի ճշտապահ իրագործումը, ուստի եւ տեղի ունեցաւ Խորհուրդը¹:

Վրայ հասաւ Թուրքիոյ յեղափոխութիւնը, որ կու գար յեղաշրջել հին կարգուսարքը եւ կը ստեղծէր նոր պայմաններ եւ նոր վիճակ, քաղաքական, հասարակական եւ յեղափոխական տեսակէտով:

Իրերու յեղակարծ ու անստոյգ դրուածիւնը կը թելադրէր կազմակերպութեանը մնալ աչալուրջ դիրքի վրայ եւ հետեւիլ գործերու համընթացին եւ պարզումին:

Մինչ այդ՝ Պոլսոյ մէջ կազմուեցաւ Պատասխանատու Մարմին, որ ուժեղացուեցաւ երկու Բիւրոններու եւ Պարսնեան Մարմնի ներկայացուցիչներով եւ կովկասեան ընկերներով:

Միւս կողմէ Ընդհանուր Ժողովը իր խորհրդակցութեան պահուն ներքին քաղաքական հորիզոնը պարզուած գտնելով ըստ այնմ՝ իր ընթացագիծը կը գծէր կազմակերպական, գործելակերպի եւ ուղղութեան տեսակէտով:

Այժմ Ընդհանուր Ժողովի գումարումը անհրաժեշտ կը դառնայ թէ՛ Բիւրոններու եւ թէ՛ Մարմիններու ցանկութիւնով:

Ընդհանուր Ժողովը կը գումարուի մօտիկ ժամանակի մէջ, հետեւաբար դիմելով ձեզ, ընկերներ, եւ հիմնուելով «Կանոնագրութեան» Ընդհ. Ժողովի մասին տրամադրութիւններուն վրայ, կը խնդրենք ձեզի ուղարկած հար-

ցերը դնել շրջանային ժողովներու վիճաբանութեան, ընտրել պատգամաւոր եւ կազմել տեղեկագիր-հաշիւ եւ շուտափոյթ ուղարկել Բիւրոյիս:

Ժողովի գումարման տեղը եւ ժամանակը հեռագրով կը հաղորդուի ձեզի:

Ընդհ. ժողովի մասնակցութեան պայմաններուն համար աւելորդ չենք համարիր մէջ բերել կանոնագրին հետեւեալ գլխաւոր կէտերը՝ առաջնորդուելու համար:

307. 102.- Ընդհ. ժողովին կը մասնակցին Բիւրոներու, Պատասխանատու Մարմիններու, Կեդր. Կոմիտէներու շրջանային ժողովներու եւ Կեդր. Կոմիտէներու ներկայացուցիչները:

ՃԱՆՕԹ. ք.- Կեդր. Կոմիտէի շրջանը իրաւունք ունի դրկելու Ընդհ. ժողովին երկու պատգամաւոր, եթէ ան կը համապատասխանէ երկու կամ աւելի Կեդր. Կոմիտէներու ցենզին, գործօն անդամներու թուով եւ այլ ցենզով:

122.- Իւրաքանչիւր Կեդր. Կոմիտէ պարտաւոր է՝

ա) Ունենալ 1000 գործօն անդամ:

բ) Տարեկան առ նուազն 20,000 ֆր. մուտք եւն:

ՃԱՆՕԹ.- Երկրին մէջ Կեդր. Կոմիտէներու տարեկան մուտքը նուազագոյն պահանջով 10,000 ֆր. է:

107.- Դաշնակցական ուսանողութիւնը (Ռուսաստան եւ Արտասահման) ձայն կը ստանայ, եթէ ունենայ որոշեալ ցենզը:

123.- Արտասահմանի եւ Ռուսաստանի դաշնակցական ուսանողութիւնը կը մասնակցի Ընդհ. ժողովին, երբ անդամներու թիւը պակաս չէ քան 100 արտասահմանի մէջ, իսկ 200 Ռուսաստանի մէջ:

110.- Պատգամաւորները իրաւունք ունին ցուցակէն դուրս նոր խնդիրներ եւս առաջարկելու ժողովին, որոնք կը քննուին պաշտօնական օրակարգը սպառելէ առաջ:

ՃԱՆՕԹ. 112.- Մարմինները պարտաւոր են Ընդհ. ժողովի բացումէն առնուազն մէկ ամիս առաջ, դրկել տեղեկագիրը եւ հաշիւները Բիւրոներուն:

113.- Բիւրոներու, Պատասխանատու Մարմիններու եւ Կեդր. Կոմիտէներու կողմէ եկած ամէն պատգամաւոր պարտաւոր է Ընդհ. ժողովին ներկայացնել գրաւոր տեղեկագիր եւ գրաւոր ու իր մարմնէն վաւերացուած հաշիւներ:

Այս պահանջը չկատարող մարմիններու պատգամաւորները Ընդհ. ժողովին մէջ կ'ունենան միմիայն խորհրդակցական ձայն:

114.- Ամէն մէկ պատգամաւոր պարտաւոր է իր շրջանի մէջ ոչ միայն մեծամասնութեան, այլեւ փոքրամասնութեան կարծիքները բերել Ընդհ. ժողովին:

115.- Ընդհ. ժողովը օրինաւորապէս բացուած կը համարուի, երբ ներկայ է պատգամաւորներու 2/3 մասը:

117.- Իւրաքանչիւր պատգամաւոր մէկ ձայնէն աւելի չի կրնար ունենալ:

118.- Պատգամաւորը իրաւունք չունի առանց զինք ընտրող մարմնի համաձայնութեան ձայնը ուրիշին տալ:

119.- Գործիչ մը երբ շրջանի մը ձայնը կը ստանայ կը համարուի պատգամաւոր եւ կը կորսնցնէ իր գործիչի ձայնը:

121.- Դաշնակցութեան նպատակի եւ կազմակերպութեան սիստեմի վերաբերեալ ռելէ արմատական փոփոխութիւն չի կրնար որոշել Ընդհ. ժողովը, եթէ կանխապէս այդ խնդիրը չէ ներկայացուած Կեդր. Կոմիտէներուն:

Ասոնցմէ դուրս, կը խնդրուի նաեւ ցենզ չունեցող մարմիններէն, ինչպէս եւ անհատ ընկերներէն հաղորդել գրաւոր տեղեկագիրներ եւ կարծիքներ:

Ժողովին մասնակցող ամէն պատգամաւորի երթուղարձի ճանապարհածախսը, ինչպէս եւ ժողովի տեւողութեան միջոցին իր ապրուստի ծախսը կը հոգացուի զինքը ուղարկող մարմնին կողմէն:

Ընկերական բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

1 Մարտ 1909
Ժընև

1.- Դաշնակցութեան խորհուրդը այն գերագոյն մարմինն էր, որ ընդհանուր ժողովներու միջեւ պարբերաբար գումարուելով կ'առնէր, օրուան պահանջին համաձայն, հարկ եղած կարեւորագոյն քաղաքական եւ կազմակերպական որոշումները, պարտադիր Բիւրոներէն սկսեալ կուսակցական բոլոր մարմիններուն անխտիր: Խորհուրդը կը բաղկանար Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոներու, Պատասխանատու Կեդր. Կոմիտէներու, ինչպէս նաեւ Ընդհ. ժողովներու կողմէ յատուկ նպատակով կեանքի կոչուած մարմիններու (Կովկասի Ինքնապաշտպանութեան, Ցուցական կամ Տեղորական մարմիններ) մէկական ներկայացուցիչներէն: Շրջաբերականին մէջ յիշուած խորհուրդը գումարուած էր 1908 թ.ի Մարտի 12-25, թիֆլիսի մէջ:

Փաստ. 98-1

Ա 2.- ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ՀՐԱՒԵՐԸ Ե. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ

Ընկերներ,

Ուղարկելով շրջանիդ V Ընդհ. ժողովի օրակարգը՝ Արեւել. Բիւրոյին փոխարինող ժամանակաւոր մարմինը առաջարկում է.

ա. Քննութեան նիւթ դարձնել օրակարգը շրջանիդ լայն մասսաներում.

բ. Եթէ այդ հարցերից դուրս գտնէք Ընդհ. ժողովին առաջարկելու այլ կարեւոր հարցեր, մինչեւ Մայիսի 15 անպատճառ հասցնել մեզ:

գ. Բոլոր որոշումները եւ բանաձեւերը ուղարկել գրաւոր կերպով.

դ. Ուղարկել գրաւոր զեկուցումներ զինական, նիւթական եւ կազմակերպական խնդիրների մասին:

Բոլոր զեկուցումները եւ հաշուեքննիչները հասցնել մեզ մինչեւ Մայիսի 10 անպայման:

Ծանօթ.- Այն շրջանները, որոնք չեն համապատասխանում պահանջած ցենզին, նոյնպէս պիտի ուղարկեն իրանց զեկուցումները:

Ի նկատի ունենալով, որ բանակցութիւններ են սկսած մեր եւ Արեւմ. Բիւրոյի մէջ ժամանակի եւ ուր [յինելու] վերաբերեալ եւ որ կարող է օրակարգում նշանակուած ժամանակը մնալ անփոփոխ, առաջարկում է շրջանիդ ուղարկել, մանաւանդ, զեկուցումները աւելի շուտ:

ԱՐԵՒԵԼ. ԲԻՒՐՈՅԻՆ ՓՈՒՍԱՐԻՆՈՂ
ԺԱՄԱՆԱԿԱԻՈՐ ՄԱՐՄԻՆ

P.S.- ա. ուղարկուում են նաեւ Արեւել. Բիւրոյին փոխ[արինող] ժամ[անակաւոր] մարմնին կողմից աւելացրած հարցերը:

բ. եթէ ձեր շրջանում կան անկախ վայրեր, խնդրում ենք նրանց քննութեան համար եւս ուղարկել օրակարգի պատճենը:

Ապրիլ, 1909

Փաստ. 1539-3



ՍԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Ա 3.- ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՊ ԸՆԳՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ (ԿԸ ԿԱՅԱՆԱՅ 1 ՅՈՒՆԻՍ (Ն.Տ.) 1909*)

- ա) Առժամեայ դիւանի ընտրութիւն:
- բ) Պատգամաւորներու լիազօրութեան վաւերացում:
- գ) Ժողովի կազմը եւ բացումը.— Օրակարգի հաստատում:

Ա. ԸՆԳՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿ

ՏԵՂԵԿԱԳԻՐ – ՁԵԿՈՒՑՈՒՄ (1907 – 1909)

1) Երկրի Մարմիններու՝

- ա) Դուրան-Վասպ. Պատ. Մարմին:
- բ) Պոլսոյ Պատ. Մարմին:
- գ) Կ. Կոմիտէներ:

2) Արեւմտեան Բիւրոյի՝

- ա) Կազմ.— Բիւրօ եւ խմբագրութիւն
- բ) Զեռնարկներ.— Պարիզի կոնգրէն. Լահէյ. Շթովկարտի սոցիալիստական կոնգրէն. Քաղ. գործունէութիւնը Եւրոպայում (Ֆրանսիա, Անգլիա). Պրիւքսէլի սոցիալիստական բիւրոն:
- գ) Հրատարակութիւններ.— «Դրօշակ», «Pro Armenia»- գիրք, պատկերներ, բաց-նամակներ:

Շրջանի տեղեկագիրներ՝

- ա) Ամերիկայի Կ. Կոմիտէ:
- բ) Պալքանեան Կ. Կոմիտէ:
- գ) Եգիպտոս:
- դ) Լեռնավայր:
- ե) Փոքր-Ասիա
- զ) Եւրոպայի Հայ Ուսանող. Մարմին

3) Արեւելեան Բիւրոյի՝

- ա) Կազմ.— Բիւրօ:
- բ) Կազմակերպական.— Պրոպագանդային գործունէութիւն Կովկասի մէջ:
- գ) Զինա-մարտական ձեռնարկներ (Երկիր, Կովկաս եւայլն):
- դ) Ռուս կառավարութեան դիրքը դէպի Դաշնակցութիւնը եւ փոխադարձաբար:
- ե) Հրատարակութիւններ եւ կուլտուրական գործունէութիւն.— Թերթ, գիրք, ուսումնարան եւայլն:

Շրջանի տեղեկագիրներ՝

- ա) Կովկասի Կ. Կոմիտէներ:
- բ) Վրէժի Կ. Կոմիտէ:

Դրամական հաշուետուութիւն

ա) Դրամական հաշուետուութիւն իւրաքանչիւր մարմնի (1907 – 1909)

Բ. ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ ԵՒ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

- ա) Դաշնակցութիւնը եւ Երիտասարդ-թուրքերը՝ իրենց դիրքը փոխադարձօրէն:
- բ) Մեր դիրքը Սահմադրութեան հանդէպ.— Կուսակցութեան օրինականացման (légalisation) հարցը:
- գ) Ազգայնական հարցը:
- դ) Մեր դիրքը դէպի միւս յեղ. կուսակցութիւնները եւ ազգութիւնները:
- ե) Դաշն. պատգամաւորներու դիւցիպլինան Խորհրդարանին մէջ:
- զ) Bloc Խորհրդարանին մէջ եւ դուրսը:
- է) Կուսակցութեան վերաբերմունքը դէպի ազգային կուլտուրական հաստատութիւնները. մամուլ, գիրք, դպրոց, լսարան եւլն եւ մարմինները.— Պատրիարքի եւ կաթողիկոսի ընտրութեան հարցը:
- ը) Մեր դիրքը եւ վերաբերմունքը ժողովրդին ինքնապաշտպանութեան պահանջներուն հանդէպ:
- թ) Մեր դիրքը դէպի ռուս կառավարութիւնը եւ ռուս կուսակցութիւնները:
- ժ) Մեր դիրքը Պարսկաստանի շարժման հանդէպ:
- ժա) Աշխատաւորական քաղաքականութիւն.— Սոցիալիստական գործունէութիւն.— Ճշդել դասակարգային կռուի սահմանները մեր իրականութեան մէջ.— Արհեստակցական միութիւններ. կուսակցական եւ անկուսակցական.— Գիւղացիական միութիւններ:
- ժբ) Վերաքննութիւն մեր նուազագոյն պահանջներուն եւ սահմանագծում՝ «նուազագոյն» պահանջներ եւ plate-forme հասկացողութիւններուն:

Գ. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

- ա) Կազմակերպական կանոններու վերաքննութիւն եւ լրացում:
- բ) Կոմիտէներու կազմութիւնը.— Նոր շրջաններու բաժանում (Երկրի մէջ, Կովկաս, Պարսկաստ. Արտասահմ.):
- գ) Պատասխանատու մարմիններու վերացումը:
- դ) Բիւրոններու, Ռայոնական եւ Շրջանի ժողովներու իրաւասութեանց ճշդումը:
- ե) «Խորհուրդի» իրաւասութիւնը:
- զ) Անհատ ընկերներու դերը կուսակցութեան մէջ:
- է) Դրամական-հաշուական սխտեմի վերաքննութիւն եւ վերանորոգում:
- ը) Տուրքի կանոնաւորումը:
- թ) Դրամական ու կարգապահական գեղծումներու մասին կարգադրութիւն:
- ժ) Քննել նախընթաց Ընդհ. ժողովի կողմէ ընդունուած մարմիններու գործունէութիւնը:
- ժա) Կուսակցական կարգապահութիւն:
- ժբ) Քաղաքական խումբեր:
- ժգ) Մարտական:
- ժդ) Խիստ կանոններ Դաշնակցութեան նոր անդամներ ընդունելու մասին:
- ժե) Կարմիր խաչ եւ Օժանդակ խմբեր:

Դ. ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- ա) Զանազան մարմիններու կողմէ:
- բ) Անհատ ընկերներու կողմէ:

Ե. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՊՐՈՊԱԳԱՆԴ

- ա) Բիւրոններու տեղափոխութեան հարցը:
- բ) «Դրօշակ»-ը Տեղափոխումի հարցը:
- գ) Pro Armenia
- դ) Կուսակցութիւնը եւ կիսապաշտօնական թերթերը:
- ե) Պոլիս պաշտօնական օրգանի մը հրատարակութիւնը (հայերէն, ֆրանսերէն կամ թուրքերէն):
- զ) Գրքեր՝ հայերէն եւ գանազան լեզուներով.- Թուրքիկներ.- Շրջաբերականներ:
- է) Հայկական Հարցը եւ Եւրոպան (Յ1-րդ յօդուած):
- ը) Միատեմատիք դասընթացքներ պրոպագանդի համար:
- թ) Հրապարակային դասախօսութիւններ:

Չ. ՆԱԽԱՀԱՇԻՒ

- ա) Կազմակերպութեան առձեռն դրամական հաշիւը:
- բ) Մուտքի ապագայ աղբիւրներ (տուրք, հանգանակութիւն, հասոյթ եւ այլն):
- գ) Նախահաշիւ առաջիկայ ձեռնարկներու համար:

Է. ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ա) Ընտրութիւն Բիւրոններու:
- բ) Ուժերու բաշխում:
- գ) Որոշում՝ յաջորդ Ընդհանուր Ժողովի տեղի եւ ժամանակի:

Ծանօթ.- Կը խնդրուի ցեմզ չունեցող Մարմններէն, ինչպէս եւ անհատ ընկերներէն՝ հաղորդել գրաւոր տեղեկութիւններ եւ կարծիքներ:

Ժողովին մասնակցող ամէն պատգամաւորի երթուղարձի ճանապարհածախսը, ինչպէս եւ ժողովի տեւողութեան միջոցին իր ապրուստի ծախսը կը հոգացուի զինքը ուղարկող Մարմնին կողմէ:

1909, Ապրիլ
Ժընեւ



Բ.- ԼԻԱԶՕՐԱԳՐԵՐ

Փաստ. 1539-5

1909 VII 4/17

ԲԵՐԴԻ ԿՈՄԻՏԷ²

Հ. Յ. Դաշնակց. Պատ. Մարմնոյն
Կ. Պոլիս

Ընկերներ

Ամսոյս վերջը տեղի ունենալիք Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհ. Պատգամաւորական Ժողովին՝ [կամքէ] անկախ պատճառներով, չպիտի կարողանանք մեր ներկայացուցիչը ուղարկել: Մենք արդէն հաղորդել ենք մեր պահանջները յատուկ տեղեկագրով: Միայն մեր ձայնը կու տանք Սեւ Բլուրէ² եկող պատգամաւորին:

Ընկերական բարեկեցութիւնով
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑ. ԿՈՄԻՏԷ, ՔԱՂԱՔԻՑ

Յ. Գ.- Ժամանակի անձկութեան հետեւանքով չկարողացանք ներկայիս պարունակութիւնը առանձնապէս հաղորդել Արեւմտ. Բիւրոյին: Անշուշտ հարկ եղածը յարմար միջոցով կը հաղորդէք ժողովին:

Սեւ Բլուր գումարուած Ռայոնական Ժողովի որոշման համաձայն, Կեդր. Կոմիտէ կազմուելու իրաւունք տրուած էր մեզ: Այդ մասին Ձեր կողմանէ՝ ցարդ չենք ընդունել որչա՞հ հրահանգներ, ոչ էլ Կեդր. Կոմիտէի պաշտօնական պլանք, մինչդեռ միւս նորակազմ Կեդր. Կոմիտէներուն ուղարկուել է:

ՆՈՅՆՔ

Փաստ. 1539-6

1909 Յուլիս 4/17

Հ. Յ. Դաշնակցութեան
Կ. Պոլսոյ Պատասխանատու Մարմին

Ընկերներ,

Կը հաստատենք մեր 52 թիւ նամակը: Ստացանք ձեր գինուորագրութեան մասին տուած հեռագիրները:

Համաձայն ձեր եւ Բիւրոյի կարծեաց կ'ուզենք ուղարկել միայն մի պատգամաւոր - թէպէտ կազմ. կանոնագրի այդ յօդուածը աւելի իրաւունք է տայիս - սակայն միեւնոյն ատեն ի նկատի ունինք մի ուրիշ խնդիր. այն պատգամաւորը որի անունը շատոնց ձեզ տուինք, եւ որը Շրջանային Ժողովը որոշած էր, հակառակ մեր իրեն ուղղած քանիցս նամակներուն, չենք գիտեր ուր մնաց - պիտի կարենայ հասնիլ Ընդհ. Ժողովին թէ ոչ. այսպիսով կը կասկածինք կամ կը վախնանք որ մեր կողմից մի պատգամաւոր ունեցած ըլլալու առիթն իսկ փախցնենք: Չայս ի նկատի ունենալով նոյն Շրջանային Ժողովին կողմէն իբր թեկնածու ընտրուածը ընկեր Գայլը կ'ուզենք ուղարկել որը այժմ հոս է եւ վստահ ենք թէ պիտի հասնի Ընդհ. Ժողովի. այսպէսով գոնէ մեր այդ առիթը կորսնցուցած չենք լինիլ: Գայլը այսպէսով, 4-5 օրից մտադիր ենք ճամբայ դնել:

Ընկերական բարեկեցութիւնով
Հ. Յ. Դ. ՍԵՒ ԲԼՈՒՐԻ³
ԿԵԴՐՈՆ. ԿՈՄԻՏԷ
ԲԱՍԻԼ

2.- Բերդը ծածկանունն է Շապիհ Գարահիսարի:
3.- Սեւ Բլուրը՝ Սերաստիան (Սըվազ) է:

Փաստ. 1539-8

1909 Յուլիս 9/22

Հ. Յ. Դաշնակցութեան
Պատասխանատու Մարմին
Կ. Պոլիս

Մեծայարգ ընկերներ,

Կը հաստատենք ներկայիւ 2/15 թուակիրնիս: Ստա-
ցանք ձեր 18 թիւը:

Ըստ ձեր վերջին գեկոյցին, Ե. Պատգ. Ժողովի հա-
մար Կեդր. Կոմիտէի համար ընտրուած ներկայացուցի-
չը պիտի մեկնի: Սեւ Բլուր³ հեռագրով հաղորդած էր
իր ներկայացուցչին մեկնիլը, զոր կը սպասենք հոս մի-
քանի օրից, որի հետ միասին պիտի կարենան ճամբայ
ելլել յառաջիկայ Երկուշաբթի ամսոյս 13/28ին:

Գաղթականութեան հոսանքը մեր շրջանում ծանր
չէ, բայց հաւանական է որ զօրանայ հետզհետէ եթէ
երկրի ընդհանուր բարեկարգութիւնը դեռ այս ու այն
պատրուակներով յապաղի: Այնուամենայնիւ պիտի
զրենք մեր շրջանի բոլոր մարմիններին որպէսզի աշ-
խատեն այս հոսանքը դադարեցնելու: Հոս կրկին պէտքը
կը զգանք շրջուն պրոպագանդիստի, ուստի յիշեցնելով
մեր Յունիս 11/24 թուակիրը, պիտի խնդրէինք որ բարի
ըլլալիք ընդօրոյթ ուղարկել կարող գործիչ մը, որը թէ
կազմակերպական տեսակէտներով եւ թէ գաղթային
խնդրի առթիւ պիտի կարողանայ շատ օգտակար ըլլալ,
որովհետեւ պրոպագանդիստի մասին մեր շրջանի բո-
լոր մարմիններն ալ պահանջկոտ են:

Ընկերական ջերմ բարեւներ
Հ.Յ.Դ. ԿԱՅԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ⁴

Փաստ. 1540-7

1909 Օգոստոս 11/24

Հ. Յ. Դաշնակցութեան] Ընդհանուր Ժողովին

Յարգելի ընկերներ,

Համաձայն Կազմակերպութեան ընդհ. կանոնագրի
102րդ յօդուածի տրամադրութեան՝ Պալք. Կեդր. Կոմի-
տէս իր ձայնը յանձնած է ընկեր Շահրիկեանին, որ պի-
տի ներկայանայ Ժողովիդ մեր կողմէ:

Խնդրելով ճանչնալ զինքը մեր օրինաւոր ներկայա-
ցուցիչը, կը բաղձանք ժողովիդ բեղմնաւոր աշխատանք
եւ յաջող ելք:

Ընկերական սրտագին բարեւներով
Հ.Յ.Դ. ՊԱԼՔ. ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

Փաստ. 1540-8

1909 9 Օգոստոս 11/24

Հ. Յ. Դաշն. Ընդհ. Ե. Ժողովին

Յարգելի ընկերներ,

Համաձայն Հ.Յ.Դ. Պալքանեան Լ. Շրջանային Ժո-
ղովի միաձայն որոշման, գումարուած 1909 Ապրիլին,
մեր ընկերներէն Ժիրայր⁵ պիտի ներկայացնէ Պալք.
շրջանի ձայնը՝ իրեն հետ ունենալով նոյն Ժողովի կող-
մէ մշակուած հարցերը, ինչպէս նաեւ Պալք. Կեդր. Կո-
միտէիս կազմակերպական-դրամական գործառնու-
թեանց Տեղեկագիր-հաշուեկշիւը:

Խնդրելով ընդունիլ զինքը իբրեւ օրինաւոր պատ-
գամաւորը Պալք. շրջանի կը ցանկանք Ժողովիդ բեղմ-
նաւոր աշխատանք եւ յաջող ելք:

Ընկերական սրտագին բարեւներով
Հ.Յ.Դ. ՊԱԼՔ. ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

Փաստ. 1540-17

1909 թ.

Մրգաստանի Շրջանային Ժողովի կողմից, Հ. Յ.
Դաշնակցութեան V Ընդհանուր Ժողովին մասնակցե-
լու համար, ընտրուած է ընկեր Ծապոնացին⁶:

*
**

Ընկեր Ծապոնացին, Մրգաստանի Շրջանային Ժո-
ղովի կողմից ընտրուած է ներկայ լինելու Հ. Յ. Դաշ-
նակցութեան V Ընդհանուր Ժողովին:

ՄՐԳԱՍՏԱՆԻ ԿԵՆՏ. ԿՈՄԻՏԷ

4.- Կայանը՝ Մարգուանն է:
5.- Ժիրայր՝ ծածկանունն է Բարթող Չօրեանի:
6.- Ճապոնացի կամ Եպոնացի ծածկանունն է Ա. Տր Յա-
կոբեանի: Մրգաստանը ծածկանունն է Երեւանի:

Գ.- ԺՈՂՈՎԻՆ ՈՒՂՂՈՒԱԾ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ստորեւ տրուած նամակը ստորագրած են Քրիս (Ֆեներճեան) եւ Թորգոմ (Սերեմճեան Արտա-
շէս), երկուքն ալ անդամ նախկին Յուցական Մարմնին, հետացուած Դաշնակցութեան շարքերէն
Չորրորդ Ընդհ. Ժողովի որոշումով:

Նամակին առաջին էջին վերեւ տարբեր ձեռագրերով կը կարդացուին հետեւեալ արձանագրու-
թիւնները.- «Դիւանը աւելորդ համարեց ընթացք տալ այս անպատկառ քղթին». «Խորհուրդին
տուինք ժողովին զեկուցանելու համար. Սեւ Աշոտի հարցի հետ միասին»: Սեւ Աշոտը
ծածկանունն է Յուցական Մարմնի նախկին անդամ Եղիկեան Կարապետի:

Փաստ. 1539-12

Գ 1.- ՔՐԻՍԻ ԵՒ ԹՈՐԳՈՄԻ ՆԱՄԱԿԸ Ե. ԸՆԴ. ԺՈՂՈՎԻՆ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան
Ընդհանուր Ժողովին

1907ին Վիեննայի մէջ գումարուած Հ.Յ.Դ. 4րդ Ընդ-
հանուր Ժողովը կանխակալ նպատակներով չափազանց
հետաքրքրուեցաւ Պոլսոյ Յուց. Պատասխանատու
մարմնոյ անձերով եւ մոռնալով արժանապատուու-
թեան ամէն նկատում կը քի այնպիսի բուռն թափ մը,
խեղաթիւրուած հոգւոյ այնպիսի այլանդակ արարք մը
ցուցադրեց, որ անհուն վիճ մը բացաւ գաղափարի եւ
իրեն միջեւ, որու խորը զննելը իրաւամբ գայթակղու-
թիւն կը պատճառէ մարդուն:

Մենք այդ Ժողովին փոխան գաղափարի ընկերակից-
ներու՝ չափազանց յանդուգն ու մոլի հակառակորդնե-
րու միայն հանդիպեցանք, որոնք պատմութենէն իսկ
չսոսկալով, պատմական մնալիք դրոյսպի իլամովը⁷ Սա-
ֆոն⁸ կազմակերպութենէն ի սպառ արտաքսումի
պատուոյն արժանացուցին: Արդարեւ ինչ մեծ պատիւ
զրպարտուած ըլլալ յեղափոխական գերագոյն Ժողովէ
մը. բացարձակապէս զրպարտուած:

Հ.Յ.Դ. գոյութեան ամբողջ ժամանակաշրջանին բա-
զում վիժած ձեռնարկներ, հարիւրաւոր սխալ եւ կորուս-
տաբեր գործեր, տմարդի եւ վատ արարքներ կատար-
ուած են եւ երբեք դատի ենթարկելու առաքինութիւնը
ցոյց չէ տրուած. ոչ մի ձեռնարկ Հ.Յ.Դ.ի մէջ չէ դատ-
ւեր, այլ ընկերաբար սրբագրուել է:

Չարմանալի հակառակութեամբ մը Դ-եան 15 տարուայ
գոյութեան ընթացքին մէջ առաջին անգամն էր որ կա-

տարուած յեղափոխական ձեռնարկը, այն ալ իւր տե-
սակին մէջ էն փառաւորը եւ էն դժուարինը եւ էն պա-
կաս քննադատելին, դատի կ'ենթարկուէր ամօթալի ա-
պօրինութեամբ:

Մանրամասնութեանց ծանօթանալէն եւ իրողու-
թեանց խորը թափանցելէն յետոյ, կոյրերու հետ միայն
բացարձակ անմիտները կարող էին չտեսնել այդ ամօ-
թալի գործին մէջ անձնական հաշիւ, վիրաւորուած ե-
սերի գալարումներ, վրէժխնդրական ձգտումներ, եւ
այդ բոլորը հեղինակաւոր ընկած ընկերոջ անուան
պաշտպանութեան տակ թաքնուած: Այդ պատրուակով
կատարուեցաւ անձնական հին հաշիւներու յարդարու-
մը եւ դատի ձեւին տակ ընկերասպանութեան վատթա-
րագոյն գործը: Պէտք է խոտովանիլ որ մարդիկ ուրիշ
կերպ ալ չէին կարող վարուիլ. Ուրբաթի⁹ դէպքը գեղե-
ցիկ առիթը կը ներկայացնէր իրենց շիւ նպատակին հաս-
նելու համար, ձեռքէ փախցնելու չէր գար եւ փառաւո-
րապէս օգտուեցան:

Ու ոճիրը գործուեցաւ. մեղապարտ դատապարտու-
թեան սարսափելի ոճիրը, որու վրան բաց թողուլ չէր
կարելի, պէտք էր ծածկել զայն, պէտք է մարսելի դարձ-
նել զայն ներկայացնելով արդարութեան, ասպետակա-

7.- Ի բացակայութեան:
8.- Մարգարեան Մարտիրոս, որ Քրիստափոր Միքայէլեանի
եղերական մահէն ետք կը ղեկավարէր Սուլթան Յամիտը ահա-
բեկելու կոչուած Յուցական Մարմնը:
9.- Ակնարկութիւն Սեւանիքի արարողութեան, որ Սուլթա-
նին մզկիթ այցելութիւնն է եւ որու ընթացքին տեղի պիտի ու-
նենար ահաբեկումը:

նութեան, ընկերոջ պատուի պաշտպանութեան եւ այլ քողերով: Եւ ինչպէս դատապարտութեան ոճիրը կատարելու արդարութեան ամէն նկատում մէկդի թողւած էր, բնական էր որ զայն ծածկելու համար ալ ամէն միջոց ներելի պիտի սեպուէր, որով մարդիկ կորսնցուցած յեղափոխականի արժանապատուութեան ամէն ըզգացում, բոլորովին ամբոխացած, բոլորովին անպատասխանատուօրէն սկսան զրպարտութեանց եւ հալածանքի՝ մոլեգին եւ անխնայ, որով պէտք եղաւ կրկնակի ոճիրներ գործել խօսողները լռեցնելու, խօսողները չէզոքացնելու եւ մեծ ոճիրը ծածկելու համար:

Սրտառուէ էր գործուած ոճիրը պարտկելու այս ճիգը. առ ա՞հի էր այդ թէ առ ամօթի, չգիտենք, բայց աշխատուեցաւ պարտկել: Մի կուսակցութեան համար անբարոյականացուցիչ ոճրապարտ սիստեմը սկսաւ գործադրուիլ: Ընդհ. ժողովի օրինակին հետեւելով ստորադաս ժողովներ եւ մարմիններ ղրայպէն¹ տասնեակներով ընկերներ արտաքսեցին կամ հեռացուցին, ընկերներ որոնք բողոքելու, կազմակերպութեան պիւրոկրատ դարձած ղեկավար մարմիններու կարծիքները չունենալու ոճիրը գործեր էին: Կազմակերպութեան շարքերուն մէջ քննադատողի, բողոքողի դերը խիստ վտանգաւոր է այժմ եւ անպատճառ կորստաբեր իբրեւ կազմակերպական ընկերով: Ի՛նչ սուլթանասպանութիւն: Դատապարտութիւնները շատ անգամ կը կատարուին անպաշտօն կերպով, ընկերական շարքերու մէջ բողոքող կամ քննադատող ընկերով հանդէպ անվստահութեան եւ նոյնիսկ զրպարտութիւններով պատկութիւն սերմանելով, շատ անգամ ալ չդատուած եւ չապացուցուած մեղադրանքի մը հիման վրայ մի անարդար վճիռ տալով, անշուշտ միշտ ղրայպէն, թէեւ այս մասին Դաշնակցութեան ծրագրի մէջ օրէնքի տրամադրութիւնը շատ որոշ է, — ամբաստանեալի պէտք է միջոց տալ, հրաւիրել ինքզինքը պաշտպանելու:

Մենք տիրութեամբ տեսանք որ Ընդհ. ժողովի կատարած ոճիրէն վերջը, կազմակերպութիւնը թաւալզուր կը դիմէ բարոյական անկում՝ զգուելի սիստեմ մը, յատուկ բռնապետական կառավարութիւններու. գործունէութեան մէջ է եւ արդէն շատեր զոհուած են այդ սիստեմին. մենք սարսափով տեսանք որ Ընդհ. ժողովի ոճիրը մինակը չմնաց իր տեսակին մէջ, այլ այդ նախադուռը եղաւ նոյնանման բազում ոճիրներու:

Բոլոր այս կատարուածներէն վերջ, իբրեւ մարդ եւ

իբրեւ յեղափոխական չդաւաճանելու համար մեր խրդճին եւ մեր յեղափոխական սկզբունքներուն՝ միեւնոյն ժամանակ ուզելով դիւրութիւն եւ հնարաւորութիւն տալ մեր վախկոտ հակառակորդներուն որպէսզի չստիպուին քսութիւններ եւ աւելորդ զրպարտութիւններ ընել ազնուօրէն եւ վճռագրոյն մէջի նենգաւոր կէտ-կէտերու տեղ կարողանան ուզած տրամադրութիւններն անցնել, կ'ըսենք:

Քանի այդ ամօթալի դատը կայ ու կը մնայ, կուսակցութեան մաքրութիւնը ու գաղափարաբանութիւնը կասկածելի է, որով ոչինչ կարող է ընդհանուր ըլլալ մեր եւ Դաշնակցութեան մէջ եւ իբրեւ նոյն Յուլ. Պատ. մարմնոյ հաւասար անդամները ունենալով ինչպէս պատասխանատուութեան նոյնպէս եւ այդ պատուոյն մէջ մեր հաւասար բաժինը, ինքզինքնիս կը նկատենք Սաֆոյի նման արտաքսուածներ, մինչեւ այն ցանկալի օրը երբ հայ ազգն ալ ուրիշ քաղաքակիրթ եւ գարգացած ազգերու նման կը հասնի պէտք եղած քաղաքացիական հաս(ու)ութեան եւ ճշմարիտ պատմութեան դռները կը բացուին:

Ապագայ աղբիւրէ գուրկ պատմաբանին կրնայ օգտակար ըլլալ մեր Դաշնակցութեան արխիւին մէջ թողած փաստաթղթերը, օրինակ Պոլսոյ Յուլ. մարմնոյ մէկ տարուան արձանագրութիւնը, 1905ի Դաշնակցութեան Խորհուրդին տրուած տեղեկագիրը, 1908ի Թիֆլիսի ընկերական ատեանի արձանագրութիւնները, 1907ին Ընդհ. ժողովին տրուած տեղեկագիրը եւ երեք ամբաստանագիրներուն տրուած երեք հատոր պատասխանները եւ այլն եւ թող ներուի մեզ ըսել որ այդ փաստաթուղթերու անվթար պահպանման շատ ալ վստահ չենք¹⁰:

Նախորդ Յուլ. Պատասխանատու մարմնոյ անդամներ
ՔՐԻՍ ԹՈՐՔՈՍ

1909 Օգոստոս 4/17
Կ. Պոլիս

10.- Նշուած բոլոր փաստաթուղթերը, ոչ միայն «անվթար» պահուած են այլեւ հրատարակուած: Տեսնել «Նիւթեր»ու Դ. հատոր, էջ 194-223, եւ Ե. հատոր, էջ 397-515:

Փաստ. 1539-15

Գ 2.- ՎՌԱՄԵԱՆԻ ԵՒ ՎԱՆԱՅ ՍԱՐԳԻՍԻ ՆԱՍԱԿԸ ԻՆՆԻ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԻՆ

Աղթամար,
Օգոստոս 25, 09

Հինգերորդ Ընդհանուր ժողովի դիւանին,

Քանի մը խնդիր կը յանձնարարենք ձեր ուշադրութեանը, Օրակարգի համար:

Ա.— Նկատելով որ ընկ(երակցութեանց) Օրէնքի յօդուած 4-ը ընդունուած է արդէն, ժողովը ծրագրին մէջ մտցնելիք փոփոխութիւններ կ'ունենայ անշուշտ: Յատկապէս շեշտելու է ծրագրին մէջ ոչ-իսկ ազգութիւններու կազմակերպումը, եւ ապակեղրոնացման խնդրին գալով՝ Օսմանեան Հայաստանի հետ, յիշելու է նաեւ միւս ապակեղրոն գաւառներու անունները (Մակեդոնիա, Քիւրտիստան, Արաբիա, Սուրիա եւ այլն):

Բ.— Ռազմական-գինական մասը կեղրոնացնելու [է] մէկ մարմնի մը ձեռքը, հակակշռի տակ առնելու համար կազմակերպութեան միջոցը, անոնց պահպանումը եւ գործածումը: Այս եւ նման խնդիրներու մասին յիշատակելու չէ արձանագրութեան մէջ, որ պիտի տպագրուի: Ո՛չ իսկ բազմակէտեր դնելու է:

Գ.— Սասնաւոր նշանակութիւն թուրքերէնի հմուտ պրոպագանդիստներ նշանակելու՝ գաւառական պրտոյտներու համար:

Դաշ(նակցութեան) ծրագիրը, պատմութիւնը, ապակեղրոնացում, ազգային հարց՝ թուրքերէնով հրատարակելու է անպատճառ:

Ե.— Առանց դրական գործիչի, պատրաստուած ընկերներու, ո՛չ մէկ յոյս կայ սկսուած գործը շարունակելու:

լու Վասպ(ուրական)ի եւ Տարօնի մէջ:
Եթէ Ընդհ. ժողովը անուշադիր գտնուի այդ կէտին՝ ապահովօրէն կրնանք պնդել, որ քայքայումը չպիտի ուշանայ այդ գաւառներու մէջ, իրեն հետ բերելով նաեւ demoralisation¹¹ մը: Նշանակուած ընկերները հոգ չէ թէ տեղացի ըլլան, խնդիրը պատրաստուած ըլլալու մէջն է:
Ե.— Մեր ուշադրութիւնը կեղրոնացնելու ենք մասնաւորապէս կուլտուրական-դպրոցական գործի վրայ, մէջն առնելով նաեւ գիւղատնտեսականը: Գործիչ ընկերները այդ ճիւղերով զբաղելու են:

Ընդհ. ժողովի ուշադրութեան կը յանձնարարենք կովկասի Առաջին կեղրոնական ժողովի¹² պատրաստած ծրագիրը՝ դպրոցական եւ գիւղատնտեսական: Օգտուելու է կատարուած այդ աշխատանքէն, մեր գաւառներու համար եւս:

Մեր ամբողջ պրոպագանդը ապարդիւն մնալու դատապարտուած է, եթէ անտես թողունք այս կէտը: Մեր ժողովուրդը տգէտ, յետամնաց, անտաշ է՝ ահաբեկիօրէն...

ՎԱՀԱԲ
ԲԱՐՍԵՂԵԱՆ¹³

11.- Յուսակուն, վիստոթիւն:
12.- Ակնարկութիւնը Չորրորդ Ընդհ. ժողովէն անմիջապէս ետք գումարուած 1907 թ. Յուլիսին, Ռայոնական ժողովին է: Գրութիւնը յղուած է «Ինքն յանձնախումբին» որոշումներու խմբագրութեան ատեն Գլխաւոր առնուելու համար:
13.- Ստորագրողներէն Վահաբ ծածկանունն է Վոսանեան Արշակի, իսկ Բարսեղեան Վանայ Սարգիսն է, իսկական անունով՝ Օտապաշեան Պողոս:

Փաստ. 1539-16

Գ 3.- ՅԱՐ. ՇԱՀՐԻԿԵԱՆԻ ՆԱՄԱԿ

Հ. Յ. Գաշնակցութեան Ե. Ընդհանուր Ժողովին¹⁴,

Իմ եւ ընկեր Գարոյի միջեւ տեղի ունեցած միջադէպի առիթով Պատասխանատու մարմնի հէնց սկզբից հարցի մօտենալու ձեւից, քննութեան ընթացքից մինչեւ տրուած որոշումն ու հաղորդագրութիւնը տարուել է անօրինական, միակողմանի եւ ո՛րեւէ արդարութեան սկզբունքի հետ անհաշտ կերպով: Այդ պիտի տեսնուի վերաքննութեան միջոցին: Հէնց որ որոշումը ինձ հաղորդուել [է], ըոպէին, անմիջապէս բողոքել եմ գրաւոր եւ խնդրել ամբողջ դոսիէն եւ արձանագրութիւնը նոյնութեամբ յղել Ընդհ. Ժողովին: Այժմ տեղեկանում եմ խորհրդի անդամներից մէկից, որ ո՛չ միայն դոսիէն եւ արձանագրութիւնը ամբողջովին եւ նոյնութեամբ Ընդհ. Ժողովին կամ խորհրդին չէ ներկայացուած, այլ չէ ներկայացուած նաեւ իմ վերոյիշեալ բողոքը, եւ խորհուրդը չի էլ իմանում թէ ես պահանջել եմ վերաքննութիւն, մինչդեռ Գարոյինը բերուած ու ներկայացուած է: Խնդրում եմ Ընդհ. Ժողովից բացատրութիւն պահանջել Պատասխանատու մարմնից այս տարօրինակ վարմունքի համար, եւ անմիջապէս ներկայացնել տալով ամբողջ դոսիէն, յանձնարարել խորհրդին շուտափոյթ ձեռնարկել վերաքննութիւնը¹⁵:

Յարգանքներով՝ ՆԻՒՐԱ

6/19 - IX - 1909

Փաստ. 1539-18

Գ 4.- ՎՌԱՄԵԱՆԻ ՆԱՄԱԿ

Վան, Սեպտ. 9, 09
Ընդհ. Ժողովի դիւանին:

Ներփակէն գատ, «Ազատամարտ»ի հասցէով ղրկուած է ձեզ մեր «տեղեկագիր»ը, Օգոստոս 12-ին, «դաւաճանները», Սեպտ. 2-ին, ինչպէս նաեւ ցուցակներ է. Ակնունու միջոցով, նաեւ նամակ մը Օգոստոս 25-ին: Այս անգամ եւս «Ազատամարտ»ի հասցէով ղրկուած է ձեզ «Վանի խուզարկութեան քարտէզը», որ կցելու էք Վանի դաւաճանութեան պարութային¹⁶:

Ընկերական բարեւներով
ՎՌԱՄԵԱՆ

Այսօր հեռագրեցինք նաեւ որ Շամիրը¹⁷ (Սարգիս) կամ ուրիշ մը փութան հոս, որովհետեւ մենք պիտի մեկնինք Սեպտեմբերի վերջերը: Վանը կարելի չէ մենակ թողուլ, ինչպէս կրնաք եզրակացնել վերջին դէպքերէն (Առաջնորդի դէմ սպառնալիք, Ազատամարտի գործեր եւն):

14.- Յ. Շահրիկեանի բողոքի այս նամակին վերեւ կը գրուենք, Ակնունդի ձեռագրով, հետեւեալ մակագրութիւնը. «կարդացուեց ժողովում. յանձնել խորհրդին»: 15.- Յար. Շահրիկեանի եւ Արմէն Գարոյի միջեւ տարակարծութիւն ու վեճ ծագած էր, երբ վերջինը՝ Օսմանեան խորհրդարանի անդամ, հայկական նահանգներու զարգացման նպատակով, կառավարութեան ներկայացուցած էր թուրքոյ արեւելեան շրջաններէն անցնող շոգեկառքի գծի մը հաստատման ծրագիր: Ֆրանսական դրամատան մը ներկայացուցչի հանգամանքով Շահրիկեանի միջամտութիւնը, ըստ Արմէն Գարոյի, ծրագիրը խանգարելու բնոյթ ունեցած էր: 16.- Թղթածրարին, թղթապանակին: 17.- Շամիրը մէկ ուրիշ ծածկանունն է Վանայ Սարգիսին (Օտապաշեան Պօղոս):

Փաստ. 1539-21

Գ 5. - ՎԱՆԱՅ ՍԱՐԳԻՍԻ ՆԱՄԱԿ

Իննի յանձնաժողովին!

Ընկերներ!

Ընդհանուր Ժողովին գրաւոր կերպով ներկայացրել էի իմ հրաժարման պատճառները: Որքան լսեցի, այդ դուրսմենտը, որը գրուած է խորհրդին որոշ պատճառներից դրդուած, եւ դա ապագայում պէտք է ունենայ ինձ համար նշանակութիւն, ոչ միայն չէ կարդացուած, այլեւ չէ մտցուած արձանագրութեան մէջ:

Սոյն գրութիւնով ստիպուած եմ ձեզնից խնդրել, որպէսզի ապագայում զանազան թիւրիմացութիւնների տեղիք չտրուի, կարդացուի եւ մտցուի արձանագրութիւնների մէջ:

Պիտի խնդրէի, որ այդ մասին ինձ յայտնէիք Իննի բռնած դիրքը:

Յարգանքներով՝
ՍԱՐԳԻՍ¹⁸

18.- Գրութեան հեղինակը Վանայ Սարգիսն է (Բարսեղեան-Օտապաշեան), որ ընտրուած էր անդամ Արեւելեան Բիւրոյի: Նա մակը անթուակիր է, բայց մակագրուած՝ «Ստ[ացուած] 1909, 8 Յոկտեմբեր», այսինքն Ընդհ. Ժողովի փակումէն ետք, երբ Իննի յանձնաժողովը տակաւին կը շարունակէր գեղիլ իրեն վստահուած պարտականութեամբ, գլխաւորաբար՝ Ընդհ. Ժողովի գրքովին պատրաստութիւն եւ առկախ հարցերու լուծում: 19.- Վահան ծածկանունն է Ատրպատականի (Վրթ) պատգամաւոր Նիկոլ Մատինեանի:

Փաստ. 1539-19

Գ 6.- ՄԱՏԻՆԵԱՆ ՆԻԿՈԼԻ ՆԱՄԱԿ

16-IX-09

Ընդհանուր Ժողովի դիւանին,

Ընկերներ,

Նկատի ունենալով որ այսօր արդէն ժողովը պիտի փակուի, խնդրում եմ ժողովի առաջ դնել հետեւեայ հարցերը:

I Ատրպատականի Կ. Կոմիտէի 15.000 Ֆր. պարտքը ի՞նչպէս պիտի փակուի,

II Վրէժում գտնուող «Խարխախ» արհեստանոցի մասին տնօրինութիւն,

III Փոխել Ատրպատականի Կ. Կոմիտէի անունը եւ դնել Պարսկաստանի կամ աւելի շուտ «Իրանի Կ. Կոմիտէ»:

ՎԱՀԱՆ¹⁹

Յ. Գ.- Ժամանակի սղութիւնը նկատի չառնել խրնդրում եմ, որովհետեւ այնպիսի հարցեր են, որոնք կարճ ժամանակում կը լուծուեն:

Փաստ. 1537-18

Դ.- Արշալույս
Ե.Պ.Պ. Կ. Բնակարանային ժողով

1909 Օգոստոս 14/27 -
Վառնա

Նիստ Ա. 14 Օգոստոս 909

Հ. Յ. Դաշնակցութեան Ծրդ Ընդհանուր Ժողովի առաջին նախապատրաստական նիստը բացուեցաւ Բուլղարիայի Վառնա քաղաքում 1909 թ. 14/27ին Օգոստոսի, երեկոյեան ժամը 8^{1/2}ին, ներկայութեամբ հետեւեալ վայրերի եւ մարմինների պատգամաւորների.

- 1- Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչ՝ 1
- 2- Շամի շրջանից ներկայացուցիչ 2 ձայն.
- 3- Տրապիզոնի շրջանից (նոր) ներկայացուցիչ 1 ձայն.
- 4- Բալկանի շրջանից ներկայացուցիչ 1 ձայն.
- 5- Ամերիկայի շրջանից ներկայացուցիչ 2 ձայն.
- 6- Իզմիրի շրջանից (նոր) ներկայացուց. 1 ձայն.
- 7- Մարզուանի շրջանից (նոր) ներկայացուցիչ 1 ձայն.
- 8- Վրէժի շրջանից ներկայացուցիչ 1 ձայն.
- 9- Ոսկանապատի շրջանից ներկայացուցիչ 2 ձայն.
- 10- Նաւահանգստի շրջանից ներկայացուցիչ 1 ձայն.
- 11- Մրգաստանից 1 ձայն
- 12- Քարից ներկայացուցիչ 1 ձայն.
- 13- Հրաւիրուած գործիչ ընկեր 1 ձայն

Ժողովին նախագահ ընտրուեց ընկեր Յոնան, քարտուղար՝ Քազրիկ:

Նախքան հերթական հարցերին անցնելը ժողովը ստուգեց թէ արդեօք կանոնադրութեան համաձայն ներկայ պատգամաւորները օրինական թիւ ներկայացնու՞մ են նիստի պաշտօնական բացման համար: Հաշուեցաւ, որ ամբողջ կազմակերպութեան վայրերից սպասուում են եւ ընդամէնը կարող են ներկայանալ Ընդհանուր Ժողովին միայն 17 պատգամաւորներ 17 ձայնով, որից 12-ը արդէն ներկայ են:

Նկատելով որ կանոնադրութեան 115րդ յօդուածի համաձայն պատգամաւորների երկու երրորդը ներկայ է, որոշուեց ժողովը օրինապէս բացուած համարել եւ զբաղմունքները շարունակելու համար կազմել օրակարգ:

Առաջարկուեց հետեւեալ օրակարգը.-

- 1- Գործիչ ընկերներին ձայնի իրաւունքով հրաւիրելը.
- 2- Ընտրութիւն ստուգիչ յանձնաժողովի.
- 3- Պրիզիդիումի¹ ընտրութիւն.
- 4- Պարապմունքի ժամերը.
- 5- Թեկլամենտ².
- 6- Օրակարգի հաստատում.
- 7- Արձանագրութեան ձեւը.
- 8- Ընդհանուր Ժողովի համար անհրաժեշտ նիւթեր.

Հրաւիրելիք գործիչ ընկերների քանակը որոշելիս թեր ու դէմ կարծիքներ լսելուց յետոյ, դրուեցին երկու տարբեր առաջարկներ. 1- հրաւիրելիք գործիչ ընկերների թիւը աւելի չլինի պատգամաւորների թուի մէկ երրորդից. 2- հրաւիրել գործիչ ընկերներին անկախ պատգամաւորական թուի տոկոսից:

Առաջին բանաձեւը անցաւ 8 ձայնով ընդդէմ 4-ի: Երկրորդ բանաձեւը ստացաւ 4 ձայն:

Ժողովներին ձայնի իրաւունքով մասնակցելու համար առաջարկուած գործիչ ընկերներից որոշուեց հրաւիրել հետեւեալներին.

- 1- Ռոստոմ, որին նաեւ հրաւիրել էին Արեւմտեան եւ Արեւելեան Բիւրոները՝ կանոնադրութեան 104րդ յօդուածի համաձայն:
- 2- Անտոն
- 3- Անդրանիկ
- 4- Դոմման
- 5- Ռուբէն Տարօնցի
- 6- Մուրատ

Ժողովն ի նկատի ունենալով որ ընկեր Վարանդեան հիւանդութեան պատճառով գուցէ չկարողանայ գալ եւ այդպիսով մէկ ձայնից զրկուի ժողովը, որոշուեց 1/3 տոկոսից դուրս հրաւիրել նրան ձայնի իրաւունքով: Դրուեցաւ Թուրքիայի պարլամենտի եւ ռուսական

1.- Նախագահութիւն, դիւան:
2.- Ժողովական կանոններ:

Դոմայի դաշնակցական պատգամաւորների հարցը: Նկատի ունենալով որ կարելի է լսել դաշնակցական պատգամաւորների պարլամենտական գործունէութեան մասին մանրամասն զեկուցում, երկրորդ՝ որպէսզի պատգամաւորները յարմարութիւն ունենան դաշնակցական Ընդհանուր Ժողովի տրամադրութիւնների եւ ուղղութեան հետ տեղն ու տեղը ծանօթանալու եւ երրորդ՝ դիրեկտիւներ³ ստանալու համար պարլամենտի առաջիկայ գործունէութեան համար, ժողովը որոշեց Թուրքիայի պարլամենտի դաշնակցական 4 պատգամաւորներին էլ հրաւիրել⁴: Ռուսական Դոմայի պատգամաւոր Յ. Սաղաթէլեանի հարցը ուշ լինելուն պատճառով թողնուեց յաջորդ նիստին:

Յանձնարարուեց ընկեր Ժիրայրին անմիջապէս հեռագրով ժողովի կողմից հրաւիրել վերոյիշեալ գործիչ ընկերներին եւ թուրքական պարլամենտի անդամներին:

Յաջորդ նիստը սկսուելու է հետեւեալ օրը առաւօտեան ժամը 9-ին: Նիստը փակուեց ժամը 12-ին:

Նախագահ՝	Քարտուղար՝
ՅՈՒԱՆ	ՔԱԶՐԻԿ

Նիստ Բ. 15/28 Օգոստոս 909

Ընկեր Ռոստոմի նախագահութեամբ ժողովը բացուելով, նախ՝ լսեց նախորդ նիստի արձանագրութեան ընթերցումը, եւ ապա մի քանի ուղղումներից յետոյ ընդունեց այն:

Ապա ժողովը սկսեց զբաղուիլ նախորդ նիստի օրակարգից մնացած հետեւեալ խնդիրներով՝

- 1- Արարատսկուն եւ Դոմայի անդամ Սաղաթէլեանին հրաւիրելու հարցը.
- 2- Ստուգիչ յանձնախմբի ընտրութիւնը.
- 3- Պարապմունքների ժամերը.
- 4- Թեկլամենտ.
- 5- Արձանագրութեան ձեւը եւ քարտուղարների հարցը.
- 6- Ընդհանուր Ժողովի պարապմունքներին անհրաժեշտ նիւթեր.

Որոշումներ
1- Արարատսկին հրաւիրել որպէս հիւր: Սաղաթէլեանի դաշնակցական պատգամաւոր համարուելու հարցի շուրջ վիճաբանութիւններ եւ լուսաբանութիւններ ըլլալէ յետոյ, որոշուեցաւ կանչել նրան իրրեւ հիւր,

որոշ բացատրութիւններ տալու համար:

2- Ընտրել մի ստուգիչ յանձնախումբ՝ 3 հոգուց բաղկացեալ, որոնք երկու Բիւրոների ներկայացուցիչների հետ պիտի ստուգեն ճանաչուած մարմինների ցենզերը եւ մանդատները, ինչպէս նաեւ պատգամաւորի հանգամանքը ճշդող պարագաները: Բացի սրանից պիտի զբաղուին նաեւ դեռ իրաւասու մարմիններից չհաստատուած բայց այդ նոյն մարմինների կողմից ժողովին հրաւիրուած նոր մարմինների ցենզերի խնդրով: Այս բոլորի մասին յանձնախումբը ժողովին պիտի ներկայացնէ զեկուցում, իր կարծիքը յայտնելով պատգամաւորին ձայն տալու չտալու մասին: Ժողովին կողմէ լրնարուեցին ընկերներ Ժիրայր, Վահան եւ Վազրիկ:

3- Որոշուեց ժողովներ ունենալ առաւօտեան ժամը 8—12, իսկ ճաշից ետք ժամը 4—7:

4- Թեկլամենտի մշակումը յանձնուեց ընկերներ Ճապոնացուն, Պիեւին եւ Թովմասին:

5- Որոշուեց արձանագրել ժողովի բուն գրադմունքի նիւթ եղող խնդիրների վիճաբանութեանց կարեւոր մասերը եւ էութիւնը, նշանակելով թեր եւ դէմ կարծիքների ո՛ր շրջանի պատգամաւորին պատկանելի: Բացի դրանից բոլոր որոշումները եւ բանաձեւերը նշանակել նոյնպէս թեր ու դէմ կարծիքների ո՛ր շրջանից լինելու յիշատակելով: Արձանագրութեան կանոնաւորութեան եւ պատգամաւոր ընկերները այդ գրադմունքով շատ չճանաբեռնելու համար, որոշուեց դրսից հրաւիրել երկու ընկերներ, որոնց ընտրութիւնը եւ հրաւիրելը թողնուեց Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչին:

6- Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչին յանձնարարուեց աշխատել ամենակարճ ժամանակում ժողովի տրամադրութեան տակ դնել 30ական օրինակ կանոնագիր, ծրագիր, 4րդ Ընդհանուր Ժողովի որոշումները եւ Ընդհանուր Ժողովի համար հրատարակուած օրակարգը: Բացի սրանից, գոնէ մի քանի օրինակ խորհուրդի եւ Ռայոնական ժողովների որոշումներ, Օսմանեան խորհրդարանի պլատֆորմը եւ օրինակ մըն ալ 4րդ Ընդհանուր Ժողովի ատենագրութեան ամբողջութիւնը:

Ժողովն սկսուեց եւ փակուեց 18 ընկերների ներկայութեամբ: Ժողովը փակուեց որոշուած ժամին:

Նախագահ	Քարտուղար՝
	ՎԱՆԻԿ

3.- Գրահանգներ, ցուցմունքներ:
4.- Օսմանեան խորհրդարանի դաշնակցական չորս անդամներն էին Արմէն Գարո եւ Վարդգէս (Սերեւնիկեան) Կարին-Երզրումէն, Գեղամ Տէր Կարապետեան Տարօնէն եւ Վահան Փափագեան (Կոմս) Վանէն:

Նիստ 4. Օգոստոս 15/28, 1909
Երեկոյեան ժամը 4-ին

Նիստը բացուեց 18 ընկերների ներկայութեամբ, նախագահ ընտրուեց ընկեր Սարգիսը: Նախորդ նիստի արձանագրութիւնը կարգացուելով ընդունուեց, մի քանի սրբագրութիւններէ յետոյ:

Օրակարգ

1- Զեկուցում եղաւ Ընդհանուր ժողովի զբաղմունքի համար կազմակերպիչ Բիւրոյի կողմից պատրաստուած օրակարգի եւ առաջարկների մասին:

Որոշում

Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչի զեկուցումից յետոյ, ընկերներից՝ Ռոստոմին, Սարգիսին, Պիեռին եւ Ճապոնացուն յանձնուեց կազմակերպիչ Բիւրոյի կազմած օրակարգն ու առաջարկները վերաքննութեան ենթարկելու, հարցերը դասաւորելու եւ զեկուցումների յանձնարարների կազմերի մասին նոր առաջարկներ մտցնելու [գործը]:

Ժողովը փակուեց որոշեալ ժամից առաջ — ժամը 5:30ին — յանձնարարներին աշխատելու ժամանակ տալու համար:

Նախագահ Բարտուղար՝

Վահագն
ՎԱՆԻԿ

Նիստ 7. 16/29 Օգ. 1909

Նիստը բացուեցաւ ժամը 8:30ին նախագահութեամբ ընկեր Ռուբէնի:

Կարգացուեցաւ նախկին ժողովի ատենագրութիւնը սրբագրութեամբ վաւերացուեցաւ: Ընդհանուր ժողովի աշխատանքը ղիւրացնելու համար կազմակերպիչ Բիւրոյի օրակարգին անցնելով, յանձնաժողովը ներկայացուց նախապատրաստական Բիւրոյի աշխատութիւնները բարեփոխուած. կարգ մը յաւելումներով սրբագրուելէ ետք ընդունուեցաւ:

ՕՐԱԿԱՐԳ
Հ.Յ.Գ. Ե. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

- ա- Դիւանի ընտրութիւն
- բ- Պատգամաւորներու լիազօրութեան վաւերացում ներկայացուելիք տեղեկագիրներ
- 1- Վրէժ — Վահան
- 2- Արեւմտեան Բիւրո — Յովնան, Ժիրայր, Աստիկեան
- 3- Պատասխանատու Մարմին — Ակնունի
- 4- Թուրքիա — Ակնունի, Սիմէոն, Սարգիս
- 5- Արեւելեան Բիւրո — Եղիշ, Ռուբէն, Ռոստոմ, Պիեռ

Զեկուցումներ

- 1.- Թուրքիայի մասին (Ակնունի, Սիմէոն, Գարո, Ռուբէն Տարօնցի)
 - ա- Արդի վիճակը գլ. Բ. կէտեր. ա.բ.գ.դ. (տես տրուած օրակարգը)
 - բ- Մեր վերաբերմունքը դէպի երիտ. թուրքերը եւ այլ կուսակցութիւնները (հայ եւ օտար).
 - գ- Մեր դիրքը դէպի այլ տարրերը, թուրք, յոյն, արաբ, քիւրտ եւ այլն:
 - դ- Մեր վերաբերմունքը դէպի սահմանադրութիւն.
 - ե- Մեր վերաբերմունքը դէպի այժմեան կառավարութիւնը.
 - զ- Կուսակցութեան օրինականացման հարցը
 - է- Յերդ յօդուածը
 - ը- Դաշնակցութեան միջազգայնացումը

- 2.- Կովկաս (Ռոստոմ, Ռուբէն, Եղիշ, Պիեռ)
 - ա- Ընդհանուր քաղաքական կացութիւն.
 - բ- Պետական Դոման եւ կուսակցութիւնները.
 - գ- Յեղափ. կուսակցութիւնների արդի վիճակը.
 - դ- Մեր վերաբերմունքը դէպի միւս յեղ. կուսակցութիւնները.
 - ե- Մեր վերաբերմունքը դէպի կառավարութիւնը:
- 3.- Գաղութներ (Ժիրայր, Ճելալեան, Յովնան, Շահպագ)
 - Բալկան, Ամերիկա, Եգիպտոս
- 4.- Պարսկաստան (Ռոստոմ, Վահան)
 - Դաշնակցութեան վերաբերմունքը պարսկական յեղափոխութեան մէջ:
 - Մեր դերը դէպի Իրանի սահմանադրութիւնը.

5.- **Վերաքննութիւն Դաշնակցութեան մինիմում ծրագրի եւ սահմանագծում նուազագոյն պահանջների, պատճառով հասկացողութեան** (Սիմէոն, Միքայէլ, Արարատսկի, Գարո, Վարդգէս)

6.- **Դաշնակցութեան վերաբերմունքը ռուսի ազգ. խնդիրը**

Յանձնաժողովը յայտնեց թէ օրակարգի մէջ դրուած «Ազգայնական Հարց» իրենց համար մութ ըլլալը եւ պարզաբանութիւն խնդրեց:

Արեւմ. Բիւրոյի ներկայացուցիչն տուած բացատրութեան յետոյ տեղի ունեցան վիճաբանութիւններ եւ օրակարգի այդ կէտի փոխարէն առաջարկուեցան երեք բանաձեւ:

- ա - Ծրագրային պարզաբանութիւններ եւ լրացումներ Ազգ. խնդիր եւ սոցիալիզմ հասկացողութիւնների վերաբերմամբ.
- բ - Դաշնակցութեան վերաբերմունքը դէպի Ազգ. հարցը.
- գ - Դաշնակցութեան Ազգ. քաղաքականութիւնը, որոնցմէ (բ.)ը ընդունուեցաւ եւ յանձնուեցաւ Արարատսկի, Միքայէլ, Սիմոն, Պիեռ, Ռոստոմ:

Ժողովը շարունակեց իր նիստը եւ անցաւ յանձնաժողովի կողմէ ներկայացուած օրակարգի Յրդ յօդուածին.

7.- **Աշխատաւորական քաղաքականութիւն** (Սիմէոն, Եղիշ, Ճապոնացի, Շահպագ...)

- ա- Սոցիալիստական գործունէութիւն
- բ- ճշդեղ դասակարգ [ային] կռուի սահմանները մեր իրականութեան մէջ.
- գ- Արհեստակցական եւ կոոպերատիւ միութիւններ կուսակցական եւ ոչ կուսակցական:
- դ- Գիւղացիական միութիւններ

8.- **Կազմ. դիրքը ազգային-կուլտուրական հիմնարկութիւնների վերաբերմամբ, դպրոց, մամուլ, պատրիարք, կաթողիկոս եւ այլ հաստատութիւններ** (Յաբէթ, Շահրիկեան, Վարդգէս, Աստիկեան):

9.- **Ինքնապաշտպանութեան հարց** (Դոման, Ռուբէն Տարօնացի, Անդրանիկ, Մուրատ)

10.- **Օսմ. երեսփ. ժողովի դաշնակցական ընկերների հաշուետուութիւնը եւ զեկուցումը:**

- ա- Դաշն. պատգամաւորի դիտարկումն խորհրդարանի մէջ.
- բ- Բլոկ խորհրդարանի մէջ (պատգամաւորական սեկցիա).

11.- **Կանոնադրութեան վերաքննութիւն եւ նշակում** (Յովնան, Շահրիկեան, Եղիշ, Ժիրայր).

- ա- Պատգ[ամաւորական] մարմնի զեկուցում.
- բ- Ընդհ. ժողովի եւ Ռայոնական ու Շրջանային ժողովների իրաւասութեան ճշդում.
- գ- Խորհրդի իրաւասութեան ճշդում.

12.- **Անհատ քննութեան դեռ կուսակցութեան մէջ**

13.- **Մարմինների եւ շրջանների վերակազմութիւն** (Յովնան, Սիմոն, Սարգիս, Ռուբէն)

- ա- Մարմիններու իրաւասութեան ճշդում.
- բ- Մարմիններու տեղափոխութիւն.

14.- **Արհեստակցական, քաղաքական, մարտական, Կարմիր խաչ եւ օժանդակ խմբեր** (Սիմոն, Սարգիս, Եղիշ, Մուրատ)

15.- **Պրոպագանդա** (Սաշա, Դոման, Եփրեմ)

- ա- «Դրօշակ»ի տեղափոխութեան հարց.
- բ- Pro-Armenia. պրոպագանդ բանաւոր եւ գրաւոր.
- գ- կուսակցութիւնը եւ կիսապաշտօնական թերթեր.
- դ- Պոլիս — պաշտ[օնական] օրգանի մը հրատարակութիւնը (հայերէն, ֆրանսերէն, թրքերէն).
- ե- Գրքեր՝ հայերէն եւ զանազան լեզուներով. թուղիկներ, շրջաբերականներ.
- զ- Հայկական Հարցը եւ Եւրոպան (Յերդ յօդուած).
- է- Սիստեմատիկ դասընթացներ պրոպագանդի համար.
- ը- հրատարակային դասախօսութիւններ.

16.- **Դրամական եւ հաշուական լանձնախուճ.** (Ճապոնացի, Հայկ, Ռուբէն, Ճելալեան)

- ա- Հանգանակութեան եւ տուրքի կանոնաւորումը.
- բ- Մախքերի սահմանափակում: Հաշուետուութիւն բոլոր մարմիններին.
- գ- Նախահաշիւ — (մուտքի այլեւայլ աղբիւրներ, դրամական անձեռնմխելի միջոցներ).
- դ- Հանգանակութեան ձեւի խնդիր (բռնի, կամաւոր)

17- **Առաջարկուեցաւ կազմել ուրիշ քոմիտեաներ**

- ա- պիւտճական
- բ- դատական
- գ- էնվանթարական⁵

5- Գոյացուցակի վերաբերեալ:

ա- **Պիւտճեական**.— յանձնախումբի կազմումը աւելորդ դատուեցաւ. հաշուեքննիչ քումիսիոնի անդամները իրենց աշխատութիւնները լրացնելէ յետոյ ազատ պիտի ըլլան հրաւիրել ուրիշ ընկերներ, որոնք պիտուի բաշխումի ժամանակ պիտի օգնեն սոյն յանձնախումբին:

բ- **Դատական**.— վիճաբանութիւններ տեղի ունեցան. Ընդհ. ժողովը ի նկատի ունենալով որ Ընդհ. ժողովը լրանալէ առաջ պէտք է վերջացած համարուին մինչեւ այսօր ներկայացուած դատերը, առաջարկեց կազմել Խորհուրդը, որ դատերը քննելէ յետոյ ներկայացնէ Ընդհ. ժողովին ի գիտութիւն:

գ- **Էնվանթարական յանձնախումբը** կազմուեցաւ ընկեր Ալոյեան, Անդրանիկ, Ռոստոմ, Մուրատ, Դուրման, Ռուբէն Տարօնցի, Ռուբէն Արարատեան, որոնք պիտի աշխատին Ընդհանուր ժողովի կից:

Այս առթիւ որոշուեցաւ հեռագրել ընկեր Ալոյեանին խորհրդակցական [ձայնի] իրաւունք տալով [իրեն]:

18.— Մարմինների ընտրութիւն

Յաջորդ ժողովի ժամանակն ու վայրը:

19.— Մասնաւոր առաջարկներ

ա- **Զինուորների խնդիր** խաղաղ ժամանակ.

բ- **Կովկասի** եւ **Օսմանեան** երկրի Դաշնակցութեան] փոխադարձ յարաբերութիւնը:

գ- **Գաղտնի** թային խնդիր:

Նախագահ՝ **Քարտուղար՝**
ՌՈՒԲԷՆ ՀԱՅԿ ԲԱԹԱԲԱՆԵԱՆ

Նիստ Ե. 16/29 Օգոստոս 1909

Նիստը բացուեցաւ ժամը 4ին նախագահ[ութեամբ] ընկեր Ռուբէնի: Կարդացուելով նախկին ժողովի ատենագրութիւնը, ուղղումներէ յետոյ վաւերացուեցաւ:

Ժողովը զբաղեցաւ պատգամաւորներու լիազօրութեան վաւերացման հարցով:

Ստուգիչ յանձնախումբը իր տեղեկատուութիւնը ըրաւ եւ իւրաքանչիւր վայրի պատգամաւորներու մասին եղած ցուցմունքները նկատի առնելով տուաւ իր որոշումները:

Արեւելեան Բիւրօ.—

Արեւելեան Բիւրօյի ներկայացուցիչը, համաձայն ընկեր Ռոստոմի եւ Ռսկանապատի ներկայացուցիչ ընկեր Ռուբէնի հաւաստումներուն ընտրուած է իր չորս ընկերներու համաձայնութեամբ. անդամներու ցրուած

վիճակը պատճառ եղած է որ չկրնայ առնուել մնացած երկու ընկերներու ձայնը. Յանձնաժողովը կ'առաջարկէ ընտրութիւնը վաւերական ճանչնալով՝ ձայն տալ Արեւելեան Բիւրօյի ներկայացուցիչին երբ հասնի:

Ժողովը ընդունեց յանձնաժողովի առաջարկը:

Արեւմտեան Բիւրօ.—

Թէեւ փոխանցուած պաշտօնական նամակներով պայցուցուած է ընկեր Յովնանի ներկայացուցչութիւնը, բայց հարկ տեսնուեցաւ նամակով պահանջել նաեւ մանտաթ, ունենալով հանդերձ ձայնի իրաւունք ժողովի մէջ: Ժողովը ընդունեց յանձնախումբի առաջարկը:

Ոսկանապատ [Պաքու].—

Երկու ներկայացուցիչներու ընտրութեան մանտաթը վաւերական է. հաշուի եւ ցենզի թղթերը թէեւ ուղարկուած՝ բայց չեն հասած: Համաձայն երկու ներկայացուցիչներու տեղեկութեան Ռսկանապատը ունի անդամներու եւ մուտքի պահանջուած ցենզը: Նկատի ունենալով ընկերներու վստահելիութեան պարագան, նկատի ունենալով նաեւ Կովկասի այժմեան դրութիւնը՝ որ կրնայ գուցէ արգելք եղած ըլլալ թղթերու ստացւելուն, նկատի ունենալով միաժամանակ որ Արեւելեան Բիւրօյի ցրումէն յետոյ նոյն մարմինն է ղեկավարել կովկասեան գործը, կ'առաջարկէ տալ ձայնի իրաւունք:

Ժողովը հաստատեց ստուգիչ յանձնախումբի գեկուցագիրը:

Նաւահանգիստ [Պաթում].—

Պատգամաւորութեան օրինաւորութիւնը հաստատող մանտաթը օրինական. դրամական ցենզը նոյնպէս լրիւ. մինչեւ կովկասեան հալածանքներ՝ անդամներու թիւը նոյնպէս ամբողջական. միայն Յունուարէն յետոյ իջած 800-ի: Կ'առաջարկուի տալ ձայնի իրաւունք:

Ժողովը ընդունեց տալ ձայնի իրաւունք:

Մրգաստան [Երեւան].—

Ժամանակաւոր Բիւրօյի (Արեւելեան) կողմէ տեղեկութիւն կը տրուի որ Մրգաստանի Շրջ. ժողովին կողմէ պատգամաւոր ընտրուելու է Շահխաթունեան, իսկ քանտիթաթ՝ Տէր Յակոբեան, որ տեղեկագիր, հաշիւ, վիճակացոյց եւ իր ներկայացուցչութիւնը հաստատող վկայագիր միանգամայն չունէր, թէեւ ուղարկուած ըլլալը կ'իմացնէր. պատգամաւորը իմացուց նաեւ որ 1907ին Մրգաստանի կազմակերպութիւնը ունեցած է դրամական եւ անդամական ցենզ միանգամայն: Իսկ այժմ անդամական ցենզը բաւականաչափ լրիւ է, իսկ դրամականը ոչ: Յանձնաժողովի մեծամասնութիւնը նկատի առնելով Երեւանի անցեալ ու ներկայ գործունէութիւնը ինչպէս նաեւ Կովկասի ներկայ դրութիւնը, կ'առաջարկէ տալ ձայնի իրաւունք. իսկ փոքրամաս-

նութիւնը նկատելով որ Մրգաստանի պատգամաւորը ցենզի վերաբերեալ երեք տրամադրութիւններէն ոչ իսկ գոնէ մէկ-երկուքը կը ներկայացնէ եւ նշանակուած է միայն քանդիթաթ՝ Մրգաստանի Շրջանային ժողովի կողմէ, որ կանոնագրի տրամադրութեանց զանցառութիւնը կրնայ վնասել ժողովի հեղինակութեան, որ այդ զանցառութիւնները կրնան վնասակար նախընթացներ դառնալ, կ'առաջարկէ տալ խորհրդակցական ձայնի իրաւունք մինչեւ անհրաժեշտ թուղթերու ժամանումը: Թեր ու դէմ վիճաբանութիւններէ վերջ ժողովը յանգեցաւ հետեւեալ եզրակացութեան. ընդունելով հանդերձ որ Մրգաստան չունի հաշիւներ եւ մանդատ, բայց որովհետեւ ան ունեցած է յեղ. անցեալ եւ նշանակալի դեր Պարսկաստանի վերջին յեղափոխական շարժման մէջ եւ Արեւելեան Բիւրօյի ներկայացուցիչն ալ կը հաստատէ պատգամաւորի իսկութիւնը, ժողովը համաձայն յանձնաժողովի մեծամասնութեան կարծիքին՝ ձայնի իրաւունք տուաւ:

Քաղ [Ալեքսանդրապոլ].—

Վկայա[կա]նին մէջ պատգամաւորութեան հանգամանքը լաւ ճշդուած չէ թէեւ, բայց իրեն՝ պատգամաւորի հաւաստումին համաձայն՝ ներկայացուցիչն է մարմինին: Քարը Կեդր. Կոմիտէ չէ, դրամական եւ անդամական ցենզ չունի. տեղեկագիր եւ հաշուեկշիռ չեն հասած դեռ: Յանձնաժողովը կը ձգէ այս մասին որոշումը Ընդհանուր ժողովին. ժողովը նկատի ունենալով յանձնախումբի տեղեկութիւնները, վիճաբանութիւններէ վերջ չհամաձայնեցաւ տալ վճռական ձայնի իրաւունք: Արեւել. եւ Արեւմ. Բիւրօներու ներկայացուցիչները աչքի առաջ ունենալով Քարի անցեալ գործունէութիւնը եւ իբրեւ յեղափոխ. վայր յառաջիկային մէջ անոր ունենալիք կարեւորութիւնը, ժողովին առաջարկեցին, համաձայն կանոնագրի 103րդ յօդուածի տրամադրութեան, տալ ձայնի իրաւունք, ինչ որ ընդունուեցաւ:

Վրէժ [Պարսկաստան].—

Յանձնարարագիրը դեռ չէ հասած. դրամական եւ անդամական ցենզը՝ լրիւ: Կ'առաջարկուի տալ ձայնի իրաւունք: Ը. Ժ. ընդունեց տալ ձայնի իրաւունք:

Պալքան.—

Յանձնարարագիր, դրամական եւ անդամական ցենզ՝ լրիւ. կ'առաջարկուի տալ ձայնի իրաւունք: Ժողովը հաստատեց ստուգիչ յանձնախումբի որոշումը:

Ամերիկա.—

Պաշտօնական նամակով ծանուցուած Արեւմ. Բիւրօյին ընտրութիւնը, իսկ առանձին յանձնարարական կը հասնի մօտ օրէն. դրամական եւ անդամական ցենզ՝ լրիւ: Գալով պատգամաւորի մէկուն՝ ընկ. Ճելալեանի

դէմ եղած բողոքին՝ ընկ. Վահագնի կողմէ, նկատի առնելով որ այդ հարցը Ամերիկայի Դաշն. Շրջանային ժողովի առջեւ ելլելէ յետոյ ընկ. Ճելալեան ընտրուած է Կեդր. Կոմիտէի անդամ, շրջիկ եւ երկրորդ անգամ պատգամաւոր այս ժողովին, յանձնաժողովը կ'առաջարկէ տալ ձայնի իրաւունք. խնդիրը յանձնել միանգամայն Խորհուրդի նկատառութեան: Ընդհ. ժողովը ընդունեց ստուգիչ յանձնախումբի առաջարկը:

Պոլսոյ Պատասխանատու] մարմին.—

Պ[ոլսոյ] Պ. մարմինը ընդունուած 4րդ Ընդհանուր ժողովին չէ ունեցեր լրիւ կազմ, բայց Սահմանադրութեանէն յետոյ Բիւրօներու համաձայնութեամբ, մնացող անդամներու, Պալքանի ներկայացուցիչին եւ գործիչ ընկերներու մասնակցութեամբ կազմուած է չորս Մարմին, որ մինչեւ այսօր վարած է գործերը, ուստի եւ կ'առաջարկուի տալ ձայնի իրաւունք նոր Մարմինին:

Յանձնաժողովի գեկուցագիրը կարդացուելէ վերջ վիճաբանութիւններ տեղի ունեցան եւ հետեւեալը որոշուեցաւ.

Ընդունելով հանդերձ որ Պոլսոյ ներկայ Պատ. Մարմինը իրերի բերմամբ այն պատ. մարմինը չէ որ ընտրուած է 4րդ Ընդհանուր ժողովին՝ թէ իր կազմով եւ թէ ֆունկցիոնով, տալ անոր մի ձայնի իրաւունք, նկատի առնելով ներկայ Մարմինի կատարած դերը եւ իր գործունէութեան սահմանի ընդարձակութիւնը:

Էզմիը [Ոսկահանք].—

Վկայական ունի, անդամական եւ դրամական ցենզը լրիւ՝ սահմանադրութեանէն ի վեր, իսկ անկէ առաջ իրեն գործօն վայր ունեցած է իր գործունէութիւնը: Կ'առաջարկուի տալ ձայնի իրաւունք: Ընդհանուր ժողովը ընդունեց յանձնաժողովի առաջարկը:

Նախագահ՝ **Քարտուղար՝**
ՌՈՒԲԷՆ ՀԱՅԿ ԲԱԹԱԲԱՆԵԱՆ

Նիստ Զ. 17 Օգոստոս

Ընդհանուր ժողովի վեցերորդ նիստը կայացաւ առաւօտեան ժամը 8ին մասնակցութեամբ բոլոր եղած 17 պատգամաւորներին եւ նախագահութեամբ ընկեր Յովնանի:

Կարդացուեց նախորդ Ե. նիստի արձանագրութիւնը, որը սրբազորուելուց եւ կարեւոր ուղղումներ անելուց յետոյ հաստատուեց: Մանդատներին ստուգող յանձնաժողովը կարդաց իր գեկուցումը Մարզուանի Կ. Կոմիտէի Ընդհանուր ժողովին՝ ունենալիք ներկայացուցչութեան մասին եւ գտնելով որ անդամական եւ դրամական ցենզը լրիւ է, առաջարկուած է տալ Մարզուանի ներկայացուցչին վճռական ձայնի իրաւունք:

սակայն անհրաժեշտ է համարում էնդ. Ժողովի ուշադրությունը հրահրել, որ ապագայում «Նոր Մարմիններին» հաստատման եւ նրանց էնդ. Ժողովում ունենալիք իրաւասութեան համար դրուի որոշ ցենզ: Նախագահը առաջարկում է ժողովին արտայայտուել այն մտքով, թէ ինչպէ՞ս պիտի վերաբերուի էնդ. Ժողովը նորակազմ Կ. Կոմիտէներին տրուելիք ներկայացուցչութեան վերաբերեալ առ հասարակ: Վիճաբանութիւնը յանգում է այն եզրակացութեան, թէ նորակազմ մարմինները, որոնք թէեւ ունին դրամական եւ անդամական ցենզ, սակայն դեռեւս չեն ցոյց տուել աչքի ընկնող յեղափոխական գործունէութիւն, չպէտք է հաւասար իրաւունքներ ունենան միւս Կ. Կոմիտէների հետ, քանի որ դրանց գոյութիւնը մեծ մասամբ լինում է արդիւնք ժամանակաւոր հոսանքի եւ դժուար է երաշխաւորել, որ նրանք երկար կը պահպանեն իրանց գոյութիւնը: յիշեցնում է, որ այդպիսիների վերաբերեալ հարկաւոր է պահանջել բացի դրամական անդամական ցենզից, յեղափոխական, կուսակցական գործունէութեան անցեալի ցենզ: Այս խնդրի մասին վիճաբանութիւնները վերջանալուց յետոյ 15 ձայնի առաւելութեամբ ընդունուում է հետեւեալ բանաձեւը.—

«Նոր մարմինների ցենզի մասին եղած վիճաբանութիւնների առթիւ էնդ. Ժողովը յանձնարարում է կանոնադիր կազմող յանձնաժողովին, նկատողութեան առնել ժողովի վիճաբանութիւնները եւ ուշադրութիւն դարձնել նոր Կ. Մարմիններու յեղափոխական գործունէութեան վրայ, իսկ ներկայումս Արեւմ. Բիւրոյի կողմից հրահրուած նոր մարմիններին ձայնի իրաւունք տալ, եթէ նրանք ունեն համապատասխան ցենզը ըստ կանոնագրի»:

Անցնելով Մրգաստանի նորակազմ մարմնի ունեցած ցենզի խնդրին, ժողովը գտաւ, որ այդ մարմինը դեռեւս չունի դոկումենտներով հաստատուած նոյնիսկ դրամական-անդամական ցենզ եւ որոշեց յետաձգել այդ մասին վերջնական որոշում կայացնելը, մինչեւ կարելու տեղեկութիւնների ստացուելը:

Տրապիզոնի շրջանի մասին մանդատային յանձնաժողովը զեկուցանում է, որ անդամական ցենզը լրիւ եւ դրամականը՝ անորոշ, որովհետեւ հաշիւները դեռեւս չեն ստացուած: Երջ. Ժողովի կողմից եկած պատգամաւորը ունի վկայական, սակայն նրա ընտրութեան եւ ժողովի օրինականութեան դէմ կան բողոքներ, ուստի առաջարկում է տալ նրան խորհրդակցական ձայնի իրաւունք, մինչեւ որ ժողովը ծանօթանայ բողոքի հոլթեան հետ: Որոշուեց յետաձգել այս խնդրի լուծումը, թողնելով Տրապիզոնի պատգամաւորին իր նախկին իրաւունքների մէջ ձայնի իրաւունքով, մինչեւ գրաւոր բողոքների ստացուելը եւ նրանց հոլթեան պարզուելը: Վասպուրականի մասին զեկուցուած է, որ Երջանային ժողովի եւ Կ. Կոմիտէի կողմից կան վկայագիր-

դրամական, անդամական ցենզը լրիւ է, սակայն ձայն տալու որոշումը թողնել էնդ. Ժողովին, ի նկատի ունենալով, որ վերոյիշեալ Մարմինը, դատի տակ է: Այս մասին թեր ու դէմ կարծիքներ փոխանակելուց յետոյ, ժողովը մի եզրակացութեան չգալով, խնդրի լուծումը թողնուեց հետեւեալ նիստին:

Նախագահ

Քարտուղար՝



ԵՓՐԵՄ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Նիստ է.

Ժողովը բացուեց ժամը 4ին, նախագահութեամբ Յովնանի, մասնակցութեամբ 15 պատգամաւորների, որոնց թիւը քիչ յետոյ բարձրացաւ 18ի: Շարունակուում է Վասպուրականի Կ. Կոմիտէի ձայնի իրաւասութեան մասին նախորդ նիստում ընդհատուած վիճաբանութիւնները: Ժողովականների մի մասը բաւական համարելով այն հանգամանքը, որ Վասպուրականի մարմինը կասկածի եւ դատի տակ է, առաջարկում է չտալ նրան ձայնի իրաւունք, մինչեւ խնդրի վերջնական լուծումը, իսկ դրան հակառակ միւս մասը պնդում է որ իրաւական տեսակէտից դեռեւս չի կարելի համարել Վասպ. Կ. Կ. դատի եւ կասկածի տակ, քանի որ այդ մասին կատարուող քննութիւնը դեռեւս չէ վերջացած եւ վերջանալով կարող է տալ բոլորովին հակառակ հետեւանքներ, ցրելով բոլոր կասկածները Կ. Կ. դատի տալու վերաբերմամբ: ուստի անորոշութեան մէջ գտնուելով, մեզ իրաւունք չպիտի համարենք ձայնի իրաւունքից զրկել մի այնպիսի Մարմին, որ բոլորիս յայտնի պայմաններում աչքի է ընկել իր գործունէութեամբ եւ առաջարկում է տալ Վասպուրականի ներկայացուցիչներին վճռական ձայնի իրաւունք, յետաձգել խնդրի վերջնական լուծումը, շտապեցնելով Խորհրդի գումարումը էնդ. Ժողովի նիստերի ընթացքում, որպէսզի լուծում տրուի այդ խնդրին եւ հետեւանքների մասին տեղեկագրուի էնդ. Ժողովին: Այս բանաձեւը ստանում է 9 ձայն ընդդէմ 4-ի եւ երեք ձայն ձեռնպահ: Քուէարկութեան դրուեց եւ երկու ձայնով ընդդէմ 14-ի չանցաւ հետեւեալ բանաձեւը. «որովհետեւ Վասպ. ի աղէտը՝ չափազանց լուրջ է եւ այն տեղի Կ. Կոմիտէն կասկածներ

6.- Կ'ակնարկուի Տիքոյի Դալիթի մատուցեան հետեւանքով 1908 թ. Փետրուարին թրքական զօրքի կողմէ Կան-Վասպուրականի զինապահեստներու բռնագրաւումին եւ այնուհետեւ ամբողջ նահանգին մէջ հայերու դէմ շրթայագործուած հալածանքներուն:

չնորհիւ ենթարկուում է պատասխանատուութեան, առաջարկուում է էնդ. Ժողովին այդ Կ. Կ. ի ներկայացուցիչին զրկել ձայնի իրաւունքից մինչեւ դատի վերջանալը: Ընկեր Պ. առաջարկում է արձանագրել, որ համաձայն կանոնադրութեան, խնդիրը վճռուած է համարում եւ յօգուտ դրա ձայն են տուել ժողովականների 2/3ը, այն ինչ ներկայ դէպքում այդ չկայ: Նախագահը առաջարկում է, որ եթէ ներկայ դէպքում 9 ձայնի որոշումը օրինական ոյժ չի ստանում, հետեւապէս երկու ընդդէմ քուէարկող ձայնով չի կարելի զրկել Վասպ. Կ. Կ. ի ներկայացուցիչին էնդ. Կանոնը ժողովում վճռական ձայն ունենալու իրաւունքից, ուստի պէտք է պահպանել նախկին դրութիւնը մինչեւ գործի վերջնական լուծումը: Այս եզրակացութիւնը ստանում է ժողովի միաձայն հաւանութիւնը:

Այս եզրակացութիւնը ստանում է ժողովի միաձայն հաւանութիւնը:

Ժողովը անցնում է ռեկլամենտի մշակման խնդրին, որը այդ առթիւ ընտրուած յանձնաժողովի կողմից զեկուցանում է ընկեր Զալալեան. երկար վիճաբանութիւնների առարկայ դարձաւ ռեկլամենտի այն կէտը, թէ ի՞նչ ձեւով պիտի ներկայացնեն յանձնաժողովները իրենց տեղեկագրերը ռայոնների մասին. ոմանք գրանում էին, որ յանձնաժողովները պէտք է ներկայացնեն էնդ. Ժող. ին իրենց յանձնած ռայոնների տեղեկագիրը գրաւոր եւ որքան հնարաւոր է լրիւ: Իսկ դրա հակառակ մի մասը գտնում էր, որ կարիք չկայ այդքան բարդ եւ դժուարին աշխատանք ստեղծելու, քանի որ շրջանները առանց այդ էլ ներկայացնում են իրենց գրաւոր եւ լրիւ տեղեկագիրը: Այլ հարկաւոր է որ յանձնաժողովները ի մի հաւաքելով այդ նիւթերը, տան նրանց մասին ամփոփ տեղեկութիւններ եւ եզրակացութիւններ, մանաւանդ որ ժամանակի սղութիւնը զրկում է յանձնաժողովներին այդքան բարդ աշխատութիւններ կատարելու հնարաւորութիւնից: Քուէարկութեան դրուեց հետեւեալ բանաձեւը:

«Յանձնաժողովները ներկայացնելու են Ը. Ժ. իրենց ռայոնական տեղեկագիրը բանաւոր, իսկ ժողովի վերջում արխիւներում պահելու համար ներկայացնելու են գրաւոր եւ աւելի լրիւ կերպով: Բանաձեւը ստանում է 10 ձայն հակառակ 8-ի: Այնուհետեւ ռեկլամենտի միւս կէտերի մէջ եւս մի քանի կարեւոր փոփոխութիւններ մտցնելուց յետոյ, ժողովը ընդունեց այն եւ փակուեց նիստը:

Ընդունուած Ռեկլամենտը.

1- Ժողովի նիստերը տեղի են ունենալու օրական երկու անգամ. առաւօտեան ժամը 8-12 եւ կէսօրից յետոյ 4-7:

2- Ամէն մի պատգամաւոր, եթէ ժողովի որոշած ժամին բացուելէն ետքը մինչեւ 15 ռ[ոպէ] ուշանայ եւ այդ կրկնուի երեք անգամ, պատասխանատուութեան պիտի ենթարկուի ժողովի դիւանի կողմից:

3- Նախագահական կազմը ամէն մի ժողովի վերջա-

նալուց յետոյ կանխայայտուն է ժողովականներին յաջորդ նիստի օրակարգը:

4- Կարեւոր առաջարկները եւ բոլոր բանաձեւերը ժողովականները ներկայացնում են նախագահութեան գրաւոր կերպով:

5- Բոլոր բացատրութիւնները, բողոքները, դիմումները, որ կը լինեն ժողովի ընթացքում, պէտք է ուղղուին նախագահական կազմին ժողովը վերջանալուց յետոյ: Եթէ նախագահութեան կողմից անլսելի մնայ դիմողի ձայնը, բողոքաւորը կարող է դիմել անմիջապէս Ը. Ժ. ին:

6- Ժողովի ընթացքում կարգապահութիւնը խանգարողներին առաջին անգամ նախագահը կը զգուշացնի եւ երկրորդ դէպքում զրկում է այդ նիստի ընթացքում խօսելու իրաւունքից. իսկ երրորդ դէպքում առաջարկում է ժողովին հեռացնելու նիստի դահլիճից կարգը խանգարողին նոյն ժողովի ընթացքում:

7- Երջանների տեղեկագրերը ներկայացնում են անպայման գրաւոր կերպով. ռայոնների տեղեկագիրները, որ պիտի կարդան համապատասխան յանձնաժողովները կարող են լինել եւ բանաւոր, սակայն այն պայմանով, որ ժողովի վերջում նոյնը ներկայացուի գրաւոր եւ աւելի ընդարձակ կերպով:

8- Ձեկուցումները կարող են լինել թէ գրաւոր եւ թէ բանաւոր:

9- Եական հարցերի վերաբերեալ զեկուցումները տրուում են ոչ աւելի քան 40 ռ[ոպէ], իսկ երկրորդական հարցերու համար ոչ աւելի 20 ռ. հակառակ պարագային ժողովը կարող է այդ ժամանակը պակասեցնել կամ աւելացնել:

10- Ամէն մի խօսողի տրուում է առաջին անգամ 15 ռ., երկրորդ անգամ 10 ռ.:

11- Ձեկուցանողին իր վերջին խօսքը ասելու համար տրուում է 20 ռ.:

12- Երկրորդական հարցերի առթիւ թեր ու դէմ կողմերը կը մասնակցեն վիճաբանութիւններին երեքական հոգով իւրաքանչիւր կողմից, որից յետոյ հարցը դրուում է քուէարկութեան:

13- Բոլոր նրանք, որոնք յարգելի պատճառներով ստիպուած կը լինեն որոշ ժամանակով բացակայել ժողովից, պէտք է հաւանութիւն ստանան նախագահութիւնից:

14- Գերթական նախագահը ղեկավարում է ժողովը եւ չի մասնակցում վիճաբանութիւններին ըստ էութեան:

Ծանօթ. Եթէ նախագահը ցանկանայ մասնակցել վիճաբանութիւններին, կարող է գրուել հերթին եւ իր պաշտօնը յանձնել ընկերոջը:

Նախագահ

Քարտուղար՝

ԵՓՐԵՄ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Նկատ Ը. 18/31 Օգոստոս, 1909

Ժողովը բացուեցաւ առաւօտեան ժամը ծին, նախագահութեամբ ընկեր Ռուբէնի: Ներկայ էին մասնակցող ընկերներէն 17: Կարդացուելով նախորդ նիստի ատենագրութիւնը՝ վաւերացուեցաւ:

Շրջաններու տեղեկագրութեան անցնելէ առաջ, որոշուեցաւ ընթացք տալ օրակարգին վրայ գտնուող մէկ քանի հերթական հարցերուն:

1- Նկատելով որ ընկերներու յապաղման պատճառով Խորհուրդի գումարումը կը ձգձգուի, ինչ որ արագելէ՞ կ'ըլլայ ժողովներու կանոնաւոր զբաղումներու խանգարման, որոշուեցաւ կտրուկ հեռագիր մը եւս ուղղել Պոլիս, քանի որ նախորդ հեռագիրներուն ցարդ ոչ մէկ պատասխան ստացուած էր. այս մասին հարկ եղած կարգադրութիւնը ձգուեցաւ Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչին:

2- Եւրոպայի դաշնակցական Ուսանողական Միութիւնը թէեւ իր տեղեկագիրն ուղարկած եւ ընտրած էր իր պատգամաւորը, բայց չէր կրցած զայն հասցնել ժողովի վայրը՝ նիւթական պակասութեան պատճառով: Ժողովի խորհրդածութեան նիւթ դարձաւ այս պարագան: Առաջարկողներ եղան կազմակերպական միջոցներէն տրամադրել՝ Ուսանողական Միութեան ներկայացուցիչը ժողովի կանչելու: Ընկերներէն ոմանք հակառակ կարծիքի էին այն պատճառաբանութեամբ, որ միութիւնը պարտաւոր էր իր ներկայացուցիչին ճանապարհածախսը հայթայթել, ինչպէս միւս մարմինները ըրած էին: Այս առթիւ եղած առաջարկներէն ձայնի մեծամասնութեամբ ընդունուեցաւ «միայն ճանապարհածախս հայթայթելու» առաջարկը: Գալով դրամի հայթայթման եղանակին, որուն շուրջը նոյնպէս տեղի ունեցաւ կարծիքներու փոխանակութիւն, որոշուեցաւ՝ իբրեւ փոխատուութիւն Ուսանողական Միութեան՝ վճարել կազմակերպական արկղէն:

3- Անցնելով երկու-երրորդի մեծամասնութեան եւ ձեռնպահութեան խնդիրներուն, առաջարկուեցաւ 2/3ի սկզբունքը պահել միայն սկզբունքային-էական խնդիրներու վերաբերմամբ, մնացեալ ոչ-էական խնդիրներուն մէջ ընդունելով պարզ մեծամասնութեան սկզբունքը: Մինչ ընկերներէն ոմանք ալ կ'առաջարկէին անխախտ պահել կանոնագրութեան 2/3ի տրամադրութիւնը: Կարծիքներու փոխանակութենէ յետոյ, հետեւեալ բանաձեւը քուէարկութեան դրուեցաւ՝ «Այն բոլոր հարցերը, որոնք կը վերաբերին ոեւէ հին որոշումներու փոփոխման, կամ ծրագրային եւ տաքտիկական հարցերուն, կ'որոշուին 2/3 ձայներու մեծամասնութեամբ, իսկ միւս բոլոր հարցերը կ'ընդունուին պարզ մեծամասնութեամբ»: Այս բանաձեւը չընդունուելով 2/3ի մե-

ծամասնութեամբ՝ անխախտ պահուեցաւ կանոնագրութեան 2/3ի տրամադրութիւնը:

Ձեռնպահութեան պարագան եւս խորհրդածութեան նիւթ դառնալով, ժողովը եկաւ հետեւեալ եզրակացութեան, «ձեռնպահ մնալ կարելի չէ, բայց ձեռնպահութեան պարագային՝ ենթական պարտաւոր է բաւարարութիւն տուող պատճառաբանութիւններ տալ»:

4- Ժողովի երկրորդ մասին մէջ Վրէժի ներկայացուցիչը իր շրջանի գործունէութեան մանրամասն տեղեկութիւններ տուաւ. այս առթիւ եղան հարցումներ՝ որոնց հարկ եղած բացատրութիւններ տրուեցան: Տեղական կազմակերպութեան թուրքութեան նկատմամբ եղած դիտողութիւնները բացատրուեցան անով՝ որ պարսկահայերու վիճակը բացառիկ հանգամանքներու տակ է, պանդխտութիւն, տնտեսական եւ աշխարհագրական պայմաններ, թուական քանակութեան եւ ինտելիգենտ դասակարգի պակասը հաւասարապէս իրենց ներգործութիւնը ունեցած են այդ տեսակէտով:

Նախագահ՝ Գարսուղար՝
ՌՈՒԲԷՆ ԺԻՐԱՅԻ

Նկատ Թ. 18/31 Օգոստոս 1909

Ժողովը բացուեցաւ ժամը 4ին, նախագահութեամբ ընկեր Ռուբէնի եւ ներկայութեամբ մասնակցող 18 ընկերներու:

Վրէժի ներկայացուցիչը շարունակեց իր տեղեկագրութիւնը՝ նիւթ ունենալով պարսկական շարժումները, իրենց ծագումէն մինչեւ այժմ: Այս տեղեկագրութեան մէջ մասնաւորապէս յիշատակուեցաւ թուրք-պարսկական միջադէպը, դաշնակցական խումբերու գործունէութիւնը, Մուսթաֆայի կռիւր եւ իր նշանակալի ազդեցութիւնը, որմէ յետոյ Դաշնակցութեան հրապարակ կու գայ, Սալմաստի շրջանի շարժումները եւ մեր ընկերներու մասնակցութիւնը, Թաւրիզի կռիւները, Սմբատին գործունէութիւնը, եւ ուսական արշաւանքը:

Ժողովը վերջացաւ որոշեալ ժամուն, թողնելով տեղեկագրի քանի մը մասերու լրացումը յաջորդ նիստին:

Նախագահ՝ Գարսուղար՝
ՌՈՒԲԷՆ ԺԻՐԱՅԻ

Նկատ Ժ. 19/1 Օգոստոս 1909

շարունակութիւնը թողնելով յաջորդ նիստին:

Ժողովը բացուեցաւ առաւօտեան ժամը ծին նախագահութեամբ ընկեր Աստիկեանի. կը բացակայէին մասնակցող ընկերներէն երկուքը:

Ժողովի խորհրդածութեան նիւթ եղան՝

1- Առաջարկուեցաւ հրաւիրել ընկեր Շահրիկեանը, որուն մասին նախորդ ժողովներէն մէկուն մէջ արդէն խօսուած էր: Թեր ու դէմ կարծիքներէ ետք, 2/3ի մեծամասնութեամբ որոշուեցաւ մնալ նախկին որոշման վրայ, եւ սպասել Պոլսոյ ընկերներուն՝ ծանօթանալու համար խնդրոյն ընթացքին:

2- Շարունակուեցաւ Վրէժի տեղեկագրութիւնը, նիւթ ունենալով՝ Ջուլֆայի գործունէութիւնը, միջկուսակցական մարմնի մը կազմութիւնը, պարսիկ խումբերու կռուի եղանակները, Սաթթար եւ Բաղր խաներու հետ յարաբերութեանց լաւացման ջանքեր Դաշնակցութեան կողմէ, Դաշնակցութեան դերն ու ներգործութիւնը պարսիկ յեղափոխութեան մէջ, Դաշնակցութեան ռազմական գործունէութիւնն ու ոյժը Պարսկաստանի մէջ եւ անոր ներգործութիւնը յետադիմականներուն վրայ, հայ եւ պարսիկ ժողովուրդներու վերաբերումը դէպի Դաշնակցութեան մասնակցութիւնը պարսիկ յեղափոխութեան՝ առաջ եւ այժմ:

Ընկերներ գոհունակութեամբ լսելով պարսկական շարժման մանրամասնութիւնները, յոտնկայս իրենց յարգանքը ընծայեցին Պարսկաստանի եւ առհասարակ Թուրքիոյ ու Կովկասի մէջ ինկող դաշնակցական մարտիկներու յիշատակին: միաժամանակ որոշուեցաւ նաեւ Հ.Յ.Դ. Ե. Ընդհանուր Ժողովի անունով շնորհաւորական հեռագիր մը ուղղել պարսկական Մէճլիսին՝ երբ բացուի, իսկ քաջալերութիւն կռուող ընկերներուն՝ Պարսկաստանի կեդր. Կոմիտէի միջոցով:

3- Անցնելով Արեւմտեան Շրջանի տեղեկագրութեան, Բիւրոյի ներկայացուցիչը ընդհանուր գծերով ծանօթացուց նոյն շրջանի գործունէութիւնը, մասնաւորապէս վեր առնելով հետեւեալ կէտերը՝ Բիւրոյի կազմը, մասնակցութիւն Եթովպիայի քոնկրէտին, դիմում՝ Լահէի դեսպանախորհուրդին եւ Եւրոպայի օտար բարեկամներուն, մասնակցութիւն Պրիւքսէլի քոնկրէտին, յարաբերութիւն Երիտասարդ Թուրքերուն հետ եւ Փարիզի քոնկրէտ, Օսմ. Սահմանադրութեան յայտարարութիւնը, Յուցական-տեռորական Մարմինը, դիմում եւրոպական պետութեանց եւ հանրային կարծիքին՝ Վանի եւ Ատանայի դէպքերու առթիւ, հարցապնդումներ եւրոպական դահլիճներու մէջ, դրամական եւ հրատարակչական գործը, եւ գաղղղներ՝ Ամերիկա եւ Պալքան: Ամերիկայի ներկայացուցիչը իր կարգին տուաւ լրացուցիչ տեղեկութիւններ նոյն շրջանի մասին:

Որոշեալ ժամուն ժողովը վերջացաւ, տեղեկագրի

Նախագահ՝ Գարսուղար՝
ԱՍՏԻԿԵԱՆ ԺԻՐԱՅԻ

Նկատ ԺԱ. 19/1 Օգոստոս 1909

Ժողովը բացուեցաւ կէսօրէ ետք ժամը 4ին, նախագահութեամբ ընկեր Ռուբէնի. մասնակցող ընկերներէն կը բացակայէին երկուքը:

Նախորդ նիստի ատենագրութեան ընթացումէն եւ վաւերացումէն յետոյ՝ Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչը ամբողջացուց նոյն շրջանի մասին իր տեղեկագրութիւնը, վեր առնելով հետեւեալ կէտերը՝ կազմակերպական կեանքը Եգիպտոսի մէջ, ձեռնարկներ Բիւրոյի կողմէ՝ նոյն վայրի կազմակերպութեան կանոնաւորման ի նպաստ. Կիլիկիոյ կազմակերպութեան վիճակը՝ մինչեւ սահմանադրութեան հռչակումը եւ հոն տեղի ունեցած կազմակերպական ներքին երեւոյթներն ու փոփոխութիւնները: Եւրոպայի Դաշնակցական Ուսանողական Միութեան գործունէութիւնն ու համագումարը: Պալքանի ներկայացուցիչը եւս տուաւ լրացուցիչ տեղեկութիւններ՝ նոյն շրջանի կազմակերպական կեանքին եւ գործունէութեան վերաբերմամբ՝ 4րդ Ընդհանուր Ժողովէն մինչեւ հիմա:

Նկատողութեան առնուելով Եւրոպայի դաշնակցական Ուսանողութեան գործունէութիւնը՝ դիտել տրլուեցաւ որ ուսանող ընկերները չեն բերած կազմակերպութեան այն օգտակարութիւնները՝ զորս կ'ակնկալէր իրենցմէ: ուսանողութիւնը պահանջուած չափով չէ աշխատակցած կուսակցութեան թերթերուն: Արձակուրդի ժամանակ գոնէ այցելութիւններ չեն տուած գաղութներու կազմակերպութեանց՝ իրենց ազատ ժամանակները օգտակար դարձնելու համար եւ թէ առհասարակ Եւրոպայի դաշնակցական ուսանողութեան քով պակասած է գոհողութիւնը, չնայելով որ նոյն ընկերներու ղեկավար շարքերուն մէջ չեն պակսիր նախկին ուսուցիչներ եւ գործօն ընկերներ, մինչ անցեալի մէջ ուսանողութեան քով նկատելի էր գործունէութեան աւելի ուժեղ թափ եւ գոհաբերութեան ոգի. ուսանողութիւնը իր հասարակական ըմբռնումներով եւ իր գիտակցութեամբ կանգնած ըլլալով անհամեմատ բարձր մակարդակի վրայ քան մեր մասսաներ, պէտք է համեմատութեան նոյն չափով ալ խստապահանջ ըլլալ անոր նկատմամբ: Ընկերներէն ոմանք վեր առին այն անընդհատ պայմանները՝ որոնցմով շրջապատուած է ժամանակակից ուսանողութիւնը, օրինակ՝ ուսական յեղափոխութեան բարդութեան՝ միտքերու եւ տրամադրութիւններու մէջ առաջ բերած ոչ-նպաստաւոր յեղա-

7.- Պէտք է ըլլայ՝ պատճառ կ'ըլլայ:

չըղումը: Եւրոպական միջավայրը՝ ուր տիրապետողն է նիւթականը եւ կը պակսի յեղափոխական ոգին, մանաւանդ Գերմանիա եւ Զուիցերիա՝ ուր համախմբուած է մեր ուսանողութիւնը: Ռուսական յեղափոխութեան հետ միաժամանակ առաջացած այն հոսանքը՝ ուր նոյնպէս ուժեղ են նիւթական ձգտումները: Այս ուղղութեամբ կատարուած թեր ու դէմ վիճաբանութիւններէն յետոյ՝ միաձայնութեամբ հետեւեալ բանաձեւը ընդունուեցաւ:

«Ընդունելով որ՝ պատրաստուած մտաւորականութիւնը, որը դուրս պիտի գայ ուսանողութենէն, մեծ դեր ունի կատարելու հասարակական շարժումներու՝ մասնաւոր յեղափոխական շարժման կանոնաւորման ու հիմնաւորման մէջ, Գ. Յ. Դաշնակցութեան Ե. Ընդհանուր ժողովը հարկ կը համարէ շեշտել՝ որ Գ.Յ.Դ. Եւրոպայի ուսանողութիւնը իր տեսական-գիտական պատրաստութեան միացնէ նաեւ գաղափարական-գոհողութեան ոգի մը, առանց որուն իր մտաւորականութիւնը յեղափոխական կուսակցութեան համար անօգուտ պիտի ըլլայ»:

Ժողովը փակուեցաւ որոշեալ ժամուն:

Նախագահ՝ ԲՈՒԲԷՆ
Քարտուղար՝ ԺԻՐԱՅՐ

Նիւստ ԺԳ. 1909 20-VIII [Օգոստոս] առաւօտեան

Ներկայ են 17 ընկերներ
Նախագահուած է Վարդգէսը:

Օրակարգը.— Արեւելեան Բիւրոյի շրջանի տեղեկագրի գեկուցումը:

Օրակարգին անցնելուց առաջ ժողովն զբաղուեց հետեւեալ խնդիրներով:

1- Առաջարկուած է մի անգամ էլ կարդալ Ընդհանուր ժողովի օրակարգը ամէն մէկին իր պարտականութիւնը յիշեցնելու համար:

Ընդունուած է եւ գործադրուած:

2- Զբաղուել մնայուն պրէզիտիուտի խնդրով, քանի որ բացակայ ընկերները դեռ կը շարունակեն ուշանալ:

Որոշուեց թողնել յաջորդ նիստին:

3- Փոփոխել օրակարգի հարցերի դասաւորութիւնը եւ գեկուցանողները կազմերը:

Մերժուեց:

Ընկեր Ռոստոմն առաջարկում է թոյլ տալ մի ընդհանուր տեսողութիւն Ռուսաստանի ընդհանուր դրութեան, ազգութիւնները եւ կուսակցութիւնները մասին, որով մասամբ կը լուսաբանուեն տեղեկագրի մէջ յիշուած գրաւոր երեւոյթներ, դէպքեր եւ հոսանքներ:

Առաջարկը մերժուած է, առարկուելով, որ այդ բոլորը պիտի ասել կովկասեան ապագայ գործունէութեան գեկուցման մէջ, իբրեւ պատճառաբանութիւն:

Ընկեր Ռոստոմն անցնում է տեղեկագրին, որը հետեւեալ խնդիրները կը շօշափէր:

1- Պայքար միջնադարեան շարժման դէմ.— Դրդ Ընդհանուր ժողովը այդ շարժման գեղծարարների պարագլուխի մասին որոշումներ էր տուել, գործադրութիւնը թողնելով Արեւելի: Բիւրոյին: Որոշումները գործադրուած են առանց անմիջական բարդութիւն առաջացնելու: Միջնադարեան անյաջող տեւորից յետոյ ինքն ու իւրայինների մի մասը կը դառնան ոստիկանութեան ակընյայտի գործակալներ: Այս շարժման հետեւած մասսայի միայն մի մասը կրկին ընդունուեց կազմակերպութեան մէջ, հրապարակական գղղում յայտարարելով: Դրդ Ընդհ. ժողովից 2 ամիս վերջ շարժումը պաշտօնապէս ոչնչացած էր:

2- Անջատականներ.— Կազմակերպութեան մէջ եղած այս հոսանքի մասին եւս Դրդ Ընդհ. ժողովը իր խօսքն ասել էր, որից յետոյ մեծ մասը կրկին մտան կազմակերպութեան մէջ եւ միայն մի փոքրամասնութիւն անջատուեց, բայց կամաց-կամաց կազմալուծուեց, առանց զգալի վնաս հասցնելու կազմակերպութեան: Խմբակը դուրս եկաւ կազմակերպութիւնը քննադատելու յանուն սոցիալիզմի այն ժամանակ, երբ կազմակերպութիւնը հէնց այդ սոցիալիզմի կովկասում կիւարման համար յարձակումների կ'ենթարկուէր ներսից եւ դրսից: Անջատուած խմբակը ցոյց տուաւ, որ գուրկ է յեղափոխական-բարոյական կորովէ: Իրենց գործունէութիւնը եղաւ քննադատել եւ խծբծել Դաշնակցութիւնը:

3- Պետական Դուժ.— Պետական Գ. Դուժայի հանդէպ կուսակցութիւնը չունեցաւ իր որոշակի եւ մի քաղաքականութիւնը, որի շնորհիւ ո'չ մասնակցեցանք եւ ոչ էլ հակառակը եղաւ իսկապէս: Թէեւ Երեւանի շրջանը մասնակցեց, բայց առանց յաջողութեան եւ ի վերջոյ իր ձայները միացուց կատէղներին ընտրելով Սաղաթէլեանը:

4- Դպրոցական գործերի մէջ կազմակերպութեան քաղաքականութիւնը ամէնուրեք նոյնն է: Մասնակցեցինք ամենաեռանդուն կերպով: ունեցանք մեծ յաջողութիւն եւ սիրեցինք պարծենալ չափէն աւելի, կարծես յեղափոխական մեծ գործ էինք կատարած: Մեր յաջողութիւնները եղան ժամանակաւոր եւ արդիւնքը դրական ու բացասական շնորհիւ ե'ւ մեր ընկերների եւ արտաքին պատճառների:

5- Կաթողիկոսական ընտրութիւններին մասնակցելը աւելի խնդրոյ եւ յուզումների առիթ է եղած կազմակերպութեան ներսը: Կովկասեան Ռայոնական ժողովը նոյն իսկ արգելած էր դաշնակցականներին իբր անհատ մասնակցել: Խորհուրդն այդ արգելքը վերցուց: Խնդիր-

ը բաւական սուր բնաւորութիւն է ստացել եւ ի վերջոյ ուրիշ բնաւորութիւն ստանալով մի երկու հոգի հեռացուել են: Խնդրոյ առարկայ է եղած նաեւ Խրիմեանի [չիրիմին] վրայ դաշնակցականներու կողմէ պսակ դնելը: Այս խնդիրները դեռ չէին լուծուած սկիզբի ընդհ. ժողովներում եւ այս Ընդհանուր ժողովը պիտի որոշէ կայուն քաղաքականութիւն:

6- Զանազան խնդիրների առթիւ կուսակցութիւնների ներսում սկսուած յուզումներն վատ ձեւով արտայայտուած են Թիֆլիսի շրջանային ժողովին, ուր երիտասարդներ կամ նորերը դուրս էին եկած պայքարի հնրի դէմ եւ ընտրեցին Կեդր. Կոմիտէ բոլոր հներին դուրս թողնելով:

7- Թուրք-պարսկական, իսկ յետոյ ռուս-թուրքական դառնալու նշաններ ցոյց տուող կոնֆլիկտի մէջ Դաշնակցութիւնն ունեցել է դեր: Թուրքերի գրաւումներից յետոյ պարսիկներ մեզ դիմեցին գործակցելու իրենց: Եղան յարաբերութիւններ ու բանակցութիւններ: Ընդունուեցան երկու կողմէն որոշ պայմաններ, բայց կոնֆլիկտը չբարդանալու պատճառով յարաբերութիւնները գործնական արդիւնք չունեցան: Այդ նոյն միջոցներին, երբ ռուս-թուրք պատերազմի շրջակներ սկսուեցին, բանակցութիւններ սկսեց նաեւ ռուսաց գինուորական շտաբը: Դարձեալ երկուստեք ընդունուեցին որոշ պայմաններ, բայց նոյն վերոյիշեալ պատճառով անգործադրելի մնացին: Այդ երկու խնդիրների մէջ Դաշնակցութիւնն ունէր իր քաղաքական նպատակները եւ հայ ժողովրդի ֆիզիքական գոյութեան ապահովութեան խնդիրը:


8- Պարսկական ազատագրական շարժման մասնակցել է Արեւելի: Բիւրոն իր շրջաններով, թէ՛ մարդով, թէ՛ դրամով եւ թէ՛ գէնքով: Այս մասնակցութիւնը եղած է Վրէժի Կ. Կոմի-համաձայնութեամբ եւ պահանջով: Այդ մասնակցութեան Վրէժի Կ. Կոմի-ն արտօնուած էր Դրդ Ընդհանուր ժողովից:

9- Դրդ Ընդհանուր ժողովից վերջ մարտական, աւելի տեւորական գործը ունեցած է բաւական լայն ծաւալ: Տեւորները 10-է աւելի են, պաշտօնեաներ, ոստիկան-լրտեսներ, կազմակերպական-գեղծարարներ: Բացարձակ մեծամասնութիւնը յաջող է անցել: Անյաջողներն ունեցել են բացասական հետեւանքներ կուսակցութեան համար:

10- Ռուսական կառավարութեան վերաբերմունքն ու հալածանքները.— Կառավարութիւնը ընդհ. ոչակցիայի սկզբին դեռ Դաշնակցութեան չմտնեցաւ: զբաղուած էր փաստեր եւ տեղեկութիւններ հաւաքելով եւ ճշդելով: Այս գործում մեծ ծառայութիւն մատուցին Միջնադարեանները եւ ուրիշ հակադաշնակցականներ: Նախնական պատրաստութիւններին կը յաջորդեն ձերբակալութիւններ, որոնք հետզհետէ մասսայական բնոյթ կը ստանան: Մշակական-բուրժուա-կղերական

բանակը հասարակութեան մէջ մշակեց հակադաշնակցական տրամադրութիւն: Ռէակցիան առիթ եղաւ, որ Դաշնակցութիւնից պոկուեցին կողմնակի տարրերը:

Ժամը 12-ը լինելով, նիստը փակուեց եւ շարունակութիւնը թողնուեց յաջորդ նիստին:

Նախագահ՝ Քարտուղար՝

ՎԱՆԻԿ

Նիւստ ԺԳ. 1909, 20VIII [Օգոստոս] երեկոյեան

Ներկայ են 22 ընկերներ: Նոր էին եկած ընկերներ՝ Պերճ, Մարալ, Տարօնցի Ռուբէն, Դուժման:

Նախագահուած է Վարդգէսը:

Օրակարգը.— Արեւելի: Բ-ի տեղեկագրի շարունակութիւնը.— Նախագահը կ'առաջարկէ օրակարգին անցնելուց առաջ զբաղուել մնայուն պրէզիտիուտի խնդրով, քանի որ նոր ընկերներ եկած են: Թէեւ եղան առարկութիւններ, բայց հարցը քուէարկութեան դրուելով, ձայնից մեծամասնութեամբ վճռուեց պրէզիտիուտի ընտրութիւնը կայացնել: Բայց որովհետեւ քուէարկութեան մասնակցեցին նաեւ էրզրումի ու Պոլսի նորեկ պատգամաւորները, հարց բարձրացաւ նրանց ձայնի իրաւունքի մասին, մասնաւորապէս Պոլսի, իբր նոր կազմուած մարմնի, որի խնդիրը, նախ պիտի յանձնել մանդատային յանձնաժողովին: Ըստ հոլթեան վիճաբանութիւն սկսուեց Պոլսի ձայնի մասին, որի պատգամաւորը կը շեշտէր, որ իր շրջանը հին պիտի նկատել, նման Տրապիզոնի: Իսկ թէ՛ այս մէկ տարուայ մէջ Կեդր. Կոմիտէ չէ ստեղծուած, պատճառը Պատասխանատու Մարմնի ներկայութիւնը եւ թուրքութիւնն է: Զայն տալ պահանջողները կ'առաջարկէին ցենզի հարց չբարձրացնել: Պատասխանող եղաւ, որ վիճաբանութեան նիւթը ցենզի հարցը չէ, այլ նոր շրջան լինելը: Հարցը քուէարկութեան դրուելով որոշուեց, որ Պոլսի, ինչպէս նաեւ էրզրումի պատգամաւորները խորհրդակցական ձայնով մասնակցեն մինչեւ մանդատների ստուգումը:

Ժողովն անցաւ օրակարգին:

10- Ռուս կառավարութեան վերաբերմունքի շարունակութիւնը.— Հոկտեմբերի 17ից յետոյ կուսակցութեան կիսալեգալացումը մեծ նիւթ մատակարարեց ոստիկանութեան: Եւ ահա, երբ սկսեց Ռուսաստանի մեծ ոչակցիան, թէպէտ կուսակցութիւնը փորձեց բոլորովին դաւադրական դառնալ եւ հալածանքներից խուսափել, բայց մասամբ արդէն ուշ էր: Մարտական-դաւադրականը լեգալ օրերին մասամբ արհամարհուած էր

եւ որոշ հակակրուժեան արժանացած կուսակցութեան որոշ շարքերից: Քայքայման պատճառներէն է նաեւ դասակարգային կռուի մէջ մեր ունեցած սխալ տակտիկը: Միւս կողմից էլ սկսել էինք շուայել նախկին տարիների գործունէութեամբ ձեռք բերուած յեղափոխական-բարոյական կապիտալը, առանց տեղը դնելու:

11- Մեր ընկերներից մի մասը ազդուած էր մասնաւորապէս Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատների մեր մասին արած քննադատութիւններէից: Մեզ բուրժուական կուսակցութիւն կ'անուանէին, մեր կուրը նմանեցնել 89-ի Մեծ Յեղափոխութեան⁸, որի մէջ ղեկավար էր բուրժուազիան, յանուն Համամարդկային գաղափարների, եւ իր ետեւից կը տանէր աշխատաւորութիւնը, որի արիւնով յաղթանակ տարուեց, բայց արդիւնքը եղաւ սեփականութիւն բուրժուազիային: Բայց քննադատողները կը մոռնային, որ ներկայ սոցիալական պայմանների մէջ, հէնց սոց.-դեմոկրատների կուրներն էլ նոյն հետեւանքների կը յանգէին, եւ երկրորդ՝ այժմ աշխատաւորութիւնն է դուրս գալիս կազմակերպուած եւ երրորդ՝ Դաշնակցութեան գործունէութեան մէջ աշխատաւորութիւնն է բուրժուազիային ենթարկել իր տակտիկին:

12- Կուսակցութիւնը բաւական աշխատանք թափեց կուրելով թէ կազմակերպական եւ թէ դրսի անհատների շանտաժի դէմ եւ դրանով էլ բաւական թուով այնպիսի թշնամիներ ունեցաւ, որոնք մտան լրտեսների, ոստիկանների շարքերը: Բայց այդ կուրն անհրաժեշտ էր կազմակերպութեան բարոյականը պահպանելու համար:

Այս բոլորից յետոյ Ռուսաստանի Համատարած ուժակցիայի յաղթանակից յետոյ, Դաշնակցութիւնը մէն-մենակ չէր կարող մնալ կուրի դաշտի վրայ եւ սկսուեց նահանջը: Այժմ նահանջի վերջին կէտին ենք հասած-իսկ եթէ կուրը չենք սկսում ոչ թէ պատճառը մեր անգործութիւնն է, այլ նպատակայարմարութեան հարցը: Ընդհանուր ժողովը պիտի որոշի Կովկասի վաղուայ գործունէութեան շրջանն ու տակտիկը, աչքի առաջ ունենալով բոլոր հանգամանքները:

Ընկեր Ռոստոմի տեղեկագիրը այսչափով վերջնաւորով, առաջարկ եղաւ, որ ընկերներ Ռուբէն եւ Պիեռ խօսեն վերջին ամիսների մասին. իսկ հալածանքների սկզբնական շրջանից մինչեւ զարգացման բարձր շրջանը թողնուի ընկ. Երուանդին: Առարկութիւն եղաւ առաջինն էլ յետաձգել, մինչեւ ընկեր Երուանդի գալը: Հարցը քուէի դրուելով, որոշուեց, որ ընկերներ Ռուբէն եւ Պիեռը յաջորդ նիստին տան իրենց յանձնուած մասի տեղեկագիրը, իսկ Երուանդինը կը մնայ մինչեւ ինքը գայ:

Ժողովն անցաւ լսուածների մասին հարցումների եւ դիտողութիւնների:

Մրգաստանի պատգամաւորը նկատեց, որ անջատա-

կան շարժման մասնակցողների սխալներից մէկն էլ այն էր, որ հակասոցիալիստական կը համարէին հայ-թաթարական կուրներին Դաշնակցութեան կատարած դերը: Անջատականների մասին աւելի ճիշտ բնորոշում կը տրուի, եթէ ասուի, թէ Դ-րդ Ընդհ. ժողովից յետոյ բուրժուային հեռացան կազմակերպութիւնից այնպիսիները, որք գործից կը խուսափէին, գուրկ լինելով յեղափոխական տեմպերամենտից⁹:

Հարց եղաւ, թէ Դաշնակցութիւնը միայն հա՞յ պարտներու դէմ¹⁰ կը մղէր տնտեսական պայքար, թէ ընդհանրապէս: Պատասխանուեց, որ առանց խտրութեան, բայց որովհետեւ հայ աշխատաւորութիւնը մասնաւորապէս հայ-պարտների մօտ կ'աշխատէր, բնականաբար աւելի հայերի դէմ կը մղուէր:

Նախագահը յայտնեց, որ այլեւս դիտողութիւններ եւ հարցումներ անողներ չկան, ուստի ինքը ժողովին կը ներկայացնէ իրեն տրուած մի գրաւոր հարց, օրուայ օրակարգից դուրս:

Առաջարկ.— «Կը լսուի որ ընկեր Շահրիկեանը կու գայ Ընդհանուր ժողովին իբր պատգամաւոր. ո՞ր շրջանից կամ մարմնից ընտրուած»:

Նախագահը պատասխանեց, որ ընկեր Շահրիկեանը գալու է Բալքանի Կեդր. Կոմիտէի կողմից:

Երբ ումանց կողմից հարց տրուեց, թէ Շահրիկեանը կրնա՞յ Բալքանից ընտրուել, Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչը առաջարկեց հարցին մօտենալ սկզբունքով, թէ որեւէ դաշնակցական իրաւունք ունի՞ ընտրուելու Ընդհ. ժողովի պատգամաւոր մի մարմնի կողմից, որի անդամ չէ:

Ժողովականները հարցին մօտեցան սկզբունքով եւ թեր ու դէմ վիճաբանութիւններից պարզուեց, որ կանոնագրի մէջ այդ կէտը, եւ ընդհանրապէս պատգամաւորի ցենզը նախատեսուած չէ: Եւ որովհետեւ այժմ էլ այդ ուղղումը չի կարելի անել, պիտի ղեկավարուել մինչեւ այժմ գործնականի մէջ եղած օրինակներով, որով այդպիսի ընտրութիւն մը Հնարաւոր է եղած:

Հարցը քուէի դրուելով ընդունուեց, որ ներկայ պարագայում էլ պիտի վարուել ըստ նախընթացի, միայն թէ կանոնագրի մէջ պիտի որոշել այդ հանգամանքը:

Առաջարկ եղաւ պրէզիդիումի ընտրութեան անցնել, քանի որ նախորդ նիստի մէջ ընդունուեցաւ, բայց վիճաբանութիւնների պատճառով անգործադրելի մնաց:

Առաջարկն ընդունուելով, վիճաբանութիւններ եղան նախագահների թուի մասին եւ մեծամասնութեան որոշումով ընդունուեց նախագահական կազմը 3 հոգուց բաղկանայ: Թեկնածուների ցանկը կազմելուց յետոյ ժողովը անցաւ գաղտնի քուէարկութեան, որի հետեւանքով ընտրուեցան ընկերներ՝ Անտոն, Ռուբէն եւ

8.- 1789-ի ֆրանսական յեղափոխութեան: 9.- Խառնուածքից: 10.- Այսինքն՝ հայ գործատերերու, մեծահարուստների:

Ակնունի, որք հերթով պիտի նախագահեն: Քարտուղարների հարցը յետաձգուեց յաջորդ նիստին:

Ժողովը փակուեց ժամը 7-ին:

Նախագահ Քարտուղար՝ ՎԱՆԻԿ

Նիստ ԺԴ. 1909, 21 VIII [Օգոստոս], առաւօտեան

Ժողովը բացուեցաւ մասնակցող 19 ընկերներու ներկայութեամբ, առաւօտեան ժամը 8ին, նախագահութեամբ ընկեր Յովնանի:

1- Ստուգիչ յանձնաժողովը Կարինի պատգամաւորի վերաբերմամբ տուաւ հետեւեալ ցուցումը. «Կեդր. Կոմիտէն վաւերացուած. պատգամաւորը ընտրուած Կեդր. Կոմիտէն եւ Երջ. ժողովի հաւանութեան ենթարկուելէ յետոյ իմացուած Պոլսոյ Պատասխանատու Մարմին. ճանապարհորդութեանց պատճառով վկայական, անդամական վիճակացոյց եւ դրամական հաշվեցոյց չէ կրցած վերցնել միասին: Պատգամաւորի տեղեկութեան վրայ հիմնուելով՝ շրջանը ունի անդամական եւ դրամական ցենզ միանգամայն: Յանձնաժողովը թէեւ համաձայն ձայն տալու, բայց նկատի առնելով որ ոչ մէկ գրաւոր տօքիւման կայ իր տրամադրութեան տակ, խնդիրը կ'ենթարկէ ժողովի ուշադրութեան եւ նկատառութեան»: Ժողովը լսելով Կարնոյ շրջանի ընկերական եւ յարակից գործառնութեանց ծանօթ ուրիշ ընկերներ եւ ներկաներու 2/3ի ձայնի մեծամասնութեամբ (15 ձայն) տուաւ ձայնի իրաւունք:

Պոլսոյ շրջանի պատգամաւորին վերաբերմամբ ստուգիչ յանձնաժողովը հետեւեալ զեկուցումն ըրաւ. «Պոլսոյ հինէն ի վեր գործօն շրջան է. վկայական ունի պատգամաւորը. անդամական ցենզը լրիւ. դրամական ցենզը մօտաւոր. հաշուեկշիռ չէ կրցած միասին բերել՝ Երջանային ժողովի ուշ եւ հապճեպ գումարման պատճառով: Կ'առաջարկուի ժողովին տալ ձայնի իրաւունք»: Այս մասին եւս կարծիքներու փոխանակութենէ յետոյ 2/3ի մեծամասնութեամբ (16 ձայն) ընդունուեցաւ յանձնաժողովի առաջարկը:

2- Առաջարկուելով քարտուղարի հարցը վերջնապէս կարգադրել, կարգացուեցաւ նախորդ նիստերու այն կէտը, որ քարտուղարութեան խնդիրին կը վերաբերէր: Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչը այդ առթիւ իրեն եղած յանձնարարութեան մասին որեւէ կարգադրութիւն չէր ըրած: Նկատելով որ այս մասին նոր դիմումներ եւ բանակցութիւններ երկար եւ միանգամայն աւելորդ աշխատութիւն մը պիտի ըլլայ, որոշուեցաւ (16 ձայն) եղած ուժերով բաւականանալ եւ տանիլ գործը: Ընտրուեցան 10 ընկերներ, որոնք հերթով ընթացք պի-

տի տան քարտուղարութեան աշխատանքներուն՝ փոխադարձ աջակցութեամբ:

3- Նախագահութիւնը իւրաքանչիւր զեկուցանող յանձնաժողովի աշխատանքներու տեսակը եւ օրը նշանակած էր թերթիկներու վրայ, որ եւ բաժանեց: Յանձնաժողովները որոշուած օրը պատրաստած պիտի ըլլան իրենց յանձնուած աշխատութիւնները, հակառակ պարագային պարտաւոր պիտի ըլլան նախօրօք յայտնել նախագահութեան՝ տարբեր կարգադրութիւն ընել կարենալու համար:

4- Ժամանակաւոր Արեւելեան Բիւրոյի ներկայացուցիչը տուաւ իր տեղեկութիւնները՝ հետեւեալ աշխատութեանց մասին: Դ-րդ Ընդհ. ժողովէն յետոյ Արեւելեան Բիւրոն հրաւիրած է գործիչ-ընկերներ՝ խորհրդակցելու եւ ընթացք տալու համար նոյն Ընդհանուր ժողովի ծրագրին եւ որոշումներուն. այդ ժողովը տեղի ունեցաւ Թիֆլիսի մէջ, ունենալով բաւական նշանակելի դեր կուսակցական շարքերու գուման եւ կազմակերպական գործերու կանոնաւորման տեսակէտէն: մօտ 5-7 ամիս յետոյ ունեցաւ նաեւ Ռայոնական ժողով, ուր ծրագրուեցան բանուորական եւ գիւղացիական միութիւններու կազմակերպման եղանակը. այդ ժողովին մէջ էր որ բաւական վիճաբանութեան նիւթ դարձաւ կաթողիկոսական խնդիրը: Երջանի ընկերներու անտարբերութեան եւ թուլութեան պատճառով կարելի չեղաւ ժողովին որոշումներն իրականացնել գիւղացիական, արհեստակցական միութիւններու վերաբերմամբ: Կոոպերատիւ ընկերութիւններու կազմութեան մասին եւս տրուեցան որոշումներ նոյն ժողովին, բայց տիրող պայմանները թոյլ չտուին եւ հազիւ կարելի եղաւ քանի մը ընկերութիւններ հիմնել. մէկ կողմէն աշխատաւորներու անպատրաստ վիճակը, միւս կողմէն ոստիկանական խտրութիւնները յոյս չեն ներշնչել այդ ընկերութիւններու կանոնաւոր յարատեւութեան:

5- Կովկասեան վերջին բանտարկութեանց շարքը՝ արդիւնք հայ յետադիմական տարրերու մատնութեանց՝ կը սկսի Եայթայի տեւորէն յետոյ, շնորհիւ մատնանշուած անուններու. ոստիկանութիւնը կը հետամտի հեռագրական եւ նամակակցական տօքիւմաններ ձեռք ձգել եւ մօտ երկու տարուայ սիստեմաթիք աշխատութիւններէ յետոյ միայն կը ձեռնարկէ ուղղակի ձերբակալութեանց. ոստիկանութեան ձեռնարկը կու գայ դիւրացնել Վլադիկաւկասի մէջ բռնուած արխիւը՝ ուր կային անուններու ցանկեր. ոստիկանութեան կը գործակցին նաեւ կազմակերպութենէն այս կամ այն կերպով ցաւցած անձնաւորութիւններ՝ որոնք մտած էին կանխաւ ոստիկանութեան շարքերը: Հետապնդութեան շրջանին ընկերներ չկրցան նախագայ եւ զգուշանայ: Բանտարկութիւններէն յետոյ ոստիկանութիւնը կը սպառնար բանտարկեալները սպաննել, եթէ կազմակերպութիւնը փորձէր պատժել այս կամ այն ոս-

տիկանը: Ձերբակալութիւնները առաջ տարուեցան մեծ թափով եւ ամէն Հնարաւոր մեքենայութիւններով, այնպէս որ այդ թիւը քիչ ատենէն հասաւ մինչեւ 700-ի: Շարքերու մէջ առաջ եկաւ կազմալուծում. եղաւ շրջան մը ուր ամբողջ գրագէտ դասակարգը ահաբեկման ենթարկուեցաւ: Անկէ յետոյ պատահաբար ձերբակալուածները արձակուելով՝ բանտը պահուեցան անոնք՝ որոնց մասին ոստիկանութիւնը ձեռք անցուցած էր տօքիւմաններ: Տեղի ունեցած կազմալուծումները մասամբ դարմանելու համար՝ Պաքուի Կեդր. Կոմիտէի նախաձեռնութեամբ Ապրիլին կը հրաւիրուի Ռայոնական ժողով, որ իր օրակարգին վրայ կ'ունենայ քանի մը հակաճարձեր —

ա- Պարսկաստանի շարժումները. բ- Ռուս կառավարութեան հալածանքը Դաշնակցութեան դէմ. գ- Մարմիններու վերակազմութիւն. դ- Ուժերու բաշխում եւայլն: Այդ ժողովը չունենալով օրինական ցենզ՝ կը կոչուի Կովկասի ռայոնի մարմիններու արտակարգ ժողով, որուն որոշումները կ'ըլլան սակայն պարտաւորիչ: Նոյն ժողովին կողմէ կ'ընտրուի Արեւելեան Բիւրոն փոխարինող Մարմին մը Պաքուի մէջ, որուն անդամներէն մէկը անմիջապէս կը ձերբակալուի, միւսը կը վտանգուի եւ կը մնայ մէկը, որով Պաքուի Կեդր. Կոմիտէն ինք կը հարկադրուի տանիլ գործերը՝ մինչեւ ներկայ Ընդհ. ժողովը: Նոր Մարմինը ջանքեր գործ կը դնէ կազմակերպելու շրջանը, բայց չի յաջողիր:

Այժմ լաւագոյն ընկերները բանտարկուած են. ահաբեկման դրութիւնը կը շարունակուի. հասարակական խաւերու կողմէ տեղի ունեցած մատնանշումները կը նպաստեն ձերբակալութեանց: Աշխատութիւններ գործ կը դրուին բանտարկեալ ընկերներու կարիքներուն բաւարարութիւն տալու համար. ընկերներ ուղարկուած են Բեթերսպուրկ՝ փաստաբաններ վարձելու եւ յարակից կարգադրութեանց համար. մարմին մը կազմուած է Պաքուի մէջ՝ բանտարկեալներու բաւարարութիւն տալու եւ բանակցութեանց գործը առաջ մղելու նպատակով: Այժմ բանտարկեալներու թիւը կը հաշուուի 500: Դատական խնդիրներուն ընթացք տալու համար անհրաժեշտ կը նկատուի 30000 ռուբլիի ծախք մը, ինչ որ կը յանձնուի Ընդհ. ժողովի ուշադրութեան: Հասարակութեան, մասնաւորապէս «մշակական»ներու բռնած դիրքն ու վերաբերումը շատ վատ է: Հանգանակութեանց ձեռնարկները կը մնան ապարդիւն եւ առաջ կը մղուին շատ դժուար: Հակառակ սակայն բոլոր այս խստութեանց եւ ձերբակալութեանց, կազմակերպութիւնը կատարած է ահաբեկման փորձեր եւ տեւորներ:

Ոսկանապատի ներկայացուցիչը առանձնապէս կանգ առաւ նոյն շրջանի մեր բանտարկական քաղաքականութեան վրայ, նկատելով որ Ոսկանապատը համեմատաբար բաւարար դրութեան մէջ է ընդհանրապէս եւ ռէակցիան քիչ ներգործութիւն ունեցած է այդ աշ-

խատանքներուն վրայ: Ոսկանապատը ոչ միայն կազմակերպական տեսակէտէն լաւ է պահած ինքզինք, այլ ցոյց տուեր է խոշոր աջակցութիւն՝ միւս շրջաններուն, պահելով կուսակցութեան կովկասեան հատուածի մէջ բարձր տրամադրութիւն: Այդ կը բացատրուի այն հանգամանքով, որ Ոսկանապատի մէջ կեդրոնացած է խոշոր բանուորութիւն, որը յեղափոխական բանակի կորիզը կը կազմէ եւ ամէնէն աւելի քիչ կ'ենթարկուի ռէակսիոն տրամադրութիւններու: Ամբողջ բանուորութիւնը որ կազմուած է մօտ 65-70,000 (բանուորներ) է, ապրելով բոլոր ելեւէջները ռուսական յեղափոխութեան, ի վերջոյ, ռէակցիայի տիրապետութենէն ետքը սկսաւ իր զուտ դասակարգային պայքարը, առանձին ուշադրութիւն դարձնելով դասակարգային գիտակցութեան եւ յեղափոխական տրամադրութեան. սկսաւ հետեւողական գործադուլներու շրջանը, ուր առանձնապէս աչքի կ'իյնար հայ բանուորութիւնը. կուսակցական մեր շարքերը, որ մեծ ազդեցութիւն ունին բանուորական մասսաներուն վրայ, գլխաւորապէս զբաղած էին՝ այսպէս կոչուած «ազգային քաբիթայ»ի բրոքելմով, որովհետեւ Պաքուի իրականութեան մէջ այդ խնդիրը բաւական լուրջ կերպարանք ունի: Չնայած հարցի կարեւորութեան, չնայած կուսակցութեան ջանքերուն, այնուամենայնիւ կարելի չէր եղած այդ խնդիրին մէջ ունենալ որոշ տակտիկա: Խնդիրը ինքը այնքան բարդ է, որ մանաւանդ մեր իրականութեան մէջ եւ մեր ուժերով անհնարին էր հարցին տալ ունէ դրական լուծում. ամենալաւ դէպքում՝ այդ խնդիրն ետեւէն իյնալով կը վիժէին գործադուլները: Կապիտալիստական յարաբերութիւններու խճճուած դրութիւնը, անոր միջազգային դրութիւնն ու տեղական առանձնայատկութիւնները, մանաւանդ որ այդ կապիտալիզմի առաջխաղացութիւնն ու կացութիւնը ծածկուած է մթութեան քողով՝ սովորական աչքերու համար ընդհանրապէս, կը գրկեն մեզ տնտեսական յաջող ռոպէներ եւ ազգային քաբիթայի վիճակը որոշելու հնարաւորութենէն: Կոտորածներէն յետոյ հայ բանուորութեան պակսելուն պատճառով՝ 17,000ը իջած է մօտաւորապէս 8000-ի. այժմ կուսակցութիւնը ունի 3000 հետեւողներ եւ 5000՝ իր ազդեցութեան տակ. ունի շարք մը մանր միութիւններ եւ «Յառաջ» սպառողական լեկալ ընկերութիւնը: Ի շարս միւս միութիւններուն՝ կայ 1-Նաւթարդիւնաբերող բանուորներու միութիւն. (Ս. Դ. փոքրամասնական) 2000 հոգի, 2-Մեքանիկական բանուորներու միութիւն (Ս. Դ. մեծամասնական) 1500, 3-Կոպերացիա (սոց. յեղափոխականներու) 800:

Լրացուցիչ տեղեկութիւններ տուին նաեւ Քարի, Մրգաստանի եւ Նաւահանգստի ներկայացուցիչները:— Քարի շրջանը ներկայիս կը գտնուի կէս-կազմալուծուած դրութեան մէջ. արհեստակցական միութիւնները կենսունակութիւն ցոյց չեն տար. գոյութիւն ունին

այժմ քաղաքական խուճեքներ՝ մօտ 60 հոգի. գործակատարական միութիւն 200 հոգի եւ աշակերտական միութիւն՝ 65 հոգի: Շրջանի գիւղերուն մէջ կան միայն անհատ ընկերներ: Կուսակցութեան թույնալուծ շատ նըպաստած են բացի ընդհանուր ռէակցիայէն՝ եւ մեր բուն մասսաներու մէջ դաշնակցական մտածելակերպի կատարեալ աններդաշնակութիւնը: Ինտելիգենտ շրջաններուն մէջ մեծ դժգոհութիւն եւ սառնութիւն առաջացուցած է Փ. Ջանլաթեանի շանթաժը, որ մնացած է անպատիժ:

Մինչեւ 1908 Սեպտեմբերին Մրգաստանի շրջանը ունեցեր է իր թէ դրամական եւ թէ անդամական ցենզը, բայց անկէ յետոյ նուազած: Այժմ գաւառներու մէջ կան բաւական ինտելիգենտ ուժեր: Քաղաքին մէջ գոյութիւն ունին 3 արհեստակցական միութիւններ: Խուճարկութիւնները մեծ վնասներ չեն հասցուցած կուսակցութեան. ոչ մէկ զէնք եւ տղքիւման չէ բռնուած: Վերջին տարուայ ընթացքին՝ կատարուած են երկու յաջող տեւորներ, մէկը Աշտարակցի Կարոյի՝ մատնութիւններու պատճառով, միւսը գաղտնի ոստիկանութեան չէֆ Մելիք-Շահապետեանի վրայ: Կը պակսին դեկալար ուժեր:

Նաւահանգստի Կեդր. Կոմիտէի կազմը լրիւ գոյութիւն ունի մինչեւ այժմ. կայ տեղական մարմին եւ միութիւններու ներկայացուցչական մարմին: Տնտեսական եւ քաղաքական ճնշումը լքում առաջ բերած է շարքերուն մէջ եւ դժուարութեամբ կ'առնուի կազմալուծումներու առաջը: Շրջանը գրեթէ ամբողջ կազմալուծման մէջ է: Անհրաժեշտ է կազմակերպիչ ընկերներու ներկայութիւնը: Մինչեւ 1909 Յունուար շատ մարմիններ է ստացուած է անդամավճարներ. ձեռնարկուած է հանգանակութեան, որուն 2000 ռուբլին ուղարկուած է Վիշապի մարմնոյն: Կատարուած է երկու տեւոր: Նաւահանգստի հայ-վրացի բանուորներուն մէջ առաջացած սպանութիւններուն վերջ տուած է միջկուսակցական մարմին ստեղծելով: Հայ-յունական ընդհանրման առաջը առնուած է:

Տեղեկաբերութեանց շուրջ կարծիքներու փոխանակութենէ յետոյ ժողովը փակուեցաւ որոշեալ ժամուն:

Նախագահ Քարտուղար՝ ԺԻՐԱՅՐ

Նիստ ԺԵ. 22 Օգոստոս. Առաւօտ

Ներկայ են 20 ընկերներ. նոր եկած են ընկեր Անտոն եւ Եւր[ոպայի] Հ.Յ.Դ. Ուս. Միութեան պագամաւորը. վերջինս մինչեւ ստուգիչ յանձնաժողովի գեկուցումը՝ պիտի մասնակցի խորհրդակցական ձայնով:

Սկսում է Արեւել. Բիւրոյի տուած տեղեկագրի քննադատութիւնը: Լինում են հետեւեալ նկատողութիւնները:

1- Միայն է Կովկասի ընկերների ձերբակալման միակ պատճառը համարել Միհրանին: Երկրորդ՝ հալածանքն սկսուելուց յետոյ Բ[իւրոյի] անդամները պիտի աշխատէին գաղտնի մնալ Կովկասում, գոնէ մէկ երկուսը, եթէ այդ էլ անհնար էր, իրենց տեղը պիտի հրաւիրէին ձեռնհաս ընկերներ եւ հեռանալուց յետոյ աշխատէին ուղղութիւն տալ գործերին: Երրորդ՝ մեր կուսակցութեան արտաքին քաղաքականութեան մէջ եղել է անարխիական քայլեր: Մի Բիւրոն թուրք ընդդիմադիրների հետ կոնգրէ է գումարում համագործակցութեան որոշ ծրագիր մշակելու, միւսը՝ ռուս-թրքական կոնֆլիկտի առթիւ բանակցութիւնների մէջ է եւ կարծես տրամադիր նրա առաջխաղացման: Այդ պարագայում նկատուում է նաեւ կանոնագրութեան խախտում, որովհետեւ ըստ կանոնագրութեան արտաքին քաղաքականութիւնը վարող միակ իրաւասուն Դաշնակցութեան Խորհուրդն է: Այդ տեսակէտից սխալ էր նաեւ որ պարսկական շարժումներին մասնակցելու համար բանակցութեան մէջ մտաւ ինքը Բիւրոն: Ներքին քաղաքականութեան մէջ էլ պաշտօնական եւ անպաշտօն մեթոտ է գործադրում կրիտիկական վաղըկեաններում: Դաշնակցականը կաթողիկոսական կամ Դոմմայի ընտրութիւններին պաշտօնապէս չի կարող մասնակցել բայց որպէս քաղաքացի իրաւունք ունի եւ այդպիսով բացուում է դաշնակցական ամէն մի անհատի առաջ դուրսգալիս՝ ճանապարհ: Ըստ կանոնագրութեան Խորհուրդը միայն քաղաքական անակնկալների ժամանակ, ինչպիսին էր Տաճկաստանի յեղաշրջումը, իրաւունք ունի արտակարգ որոշումներ անել: Բայց կաթողիկոսական ընտրութիւնը անակնկալ չի: Ներկայ խնդրում իրաւականից գատ նկատուում է բարոյական խախտում եւս. Բ[այոնական] ժողովում բացի մէկ երկուսից բոլորը ընդդէմ են լինում կաթողիկոսական ընտրութեան մասնակցութեան, սակայն Խորհուրդը այլ որոշում է տալիս:

Անջատականների հեռանալու մասին տրուած պատճառաբանութիւնը միակողմանի է համարուում: Փիլիսոփայական, քննադատական վերաբերմունքը, տաճկահայ եւ ռուսահայ դատերի միասին տանելը, բուն փող հաւաքելը պիտի համարել անջատուելու գլխաւոր պատճառներ: Ու կուսակցական թերթը նոցա յարձակումներին փոխանակ գիտական հիմնաւորումներով պատասխանելու, հայհոյանքի ճամբան էր բռնել, ինչպէս էին Բրինտարի յօդուածները եւ Վահէի «Անջատականները»: Քանի որ տարբեր մարմինները եւ նոյնիսկ միեւնոյն մարմնի անդամները շատ յաճախ իրարու հա-

11.- Երկուութեան:

կասական քայլեր են առնում, առաջարկում է կանոնագրութեան մէջ մտցնել իւրաքանչիւր Մարմնի իրաւասութեան որոշ սահմանները: Տնտեսական եւ ազգային քաղաքական շատ կարեւոր խնդիրներ մոռացութեան տալով, մեր կուսակցութիւնը կովկասում լեզալ գործունէութեան պիւրկր մղուեց եւ տիրեց բոլոր հասարակական ասպարէզները: Այդ պատճառով մեզնից շատ տարրեր հեռացան: Միայն ուղղութեամբ տարուած գործադուրները հետեւանքն ալ այն եղաւ որ Բագուի 17 հազար բանուորներից այս օր միայն 10 հազար է մնացել: Միհրանի անյաջող տեւորից յետոյ մեր ընկերների ծայտա գնայ կախուելը անհոգութեան եւ անզգուշութեան հետեւանք է համարուում: Նկատուում է որ Ընդհանուր ժողովում Բիւրոններից զատ շատ լաւ կը լինի քննադատել տեղական մարմիններին: Ընկերներից մէկը (Թող) արդարացնէ եւ Բիւրոյին, որ մասնակցել է կաթողիկոսի թաղման: Նախ, որ կաթողիկոսը կրօնապետ լինելուց զատ՝ է եւ ազգի քաղաքական ներկայացուցիչը: Այս դրութեան հետ պիտի հաշտուել առ ժամանակ: Խրիմեան՝ յեղափոխականի վայել քաջութեամբ 40-50 տարի քարոզել է, ուստի պիտի որ ցոյց տրուէր նրան յարգանք որպէս անձնուէր գործիչի:

Հարց է տրուում, թէ երկրի ո՞ր մարմիններին է տրուել համամտութիւն կաթողիկոսական ընտրութեան մասնակցել: Երկրորդ՝ ինչպէ՞ս է եղել, որ Բիւրոն կաթողիկոսական ընտրութիւնը քաղաքական տագնապ է համարել:

Տասը վայրկեան դադարից յետոյ ընկեր Անտոն պատասխանելով Արեւելեան Բիւրոյին արած մեղադրանքներին, յայտնում է որ Բիւրոյի անդամների այս կամ այն խնդրի առթիւ գրած նամակները թէեւ լինում են անձնական, այդպիսի դէպքերում երկրորդական խընդիրների վերաբերեալ կարող են նաեւ տարբեր կարծիքներ յայտնել: Արեւելեան Բիւրոյի ընկերների իրենց դիրքից հեռանալու համար արած մեղադրանքները աւարդար են, քանի որ հեռանալը ունեցել էր իր պատճառները եւ կատարուել է նախքան ձեռքակալութիւնները, եւ դրանից յետոյ, ինչպէս գրուած էր Արեւմտ. Բիւրոյին, հրաւիրուած են եղել Բիւրոյի հին անդամները ինչպէս եւ օտանդակող ընկերները: Չպէտք է մոռանալ նաեւ այն հանգամանքը, որ նախքան ձեռքակալութիւնները եւ Արեւել. Բ.ի ցրուելը, քայքայուած են եղել համարեա կովկասի բոլոր մարմինները եւ Խորհուրդը գտնելով որ այդ տեղ կան միայն երեք մարմիններ, իրենց իրաւասութեան սահմանները պահպանող, պահանջ է դրել որ դրանք մինչեւ Օգոստոս պարզեն իրենց դիրքը եւ տան հաշիւները: Անցնելով Գ. Դումայի ընտրութիւնների մասնակցելու խնդրին, հակառակ Ռայոնական ժողովի որոշման, ընկերը պարզում է կուսակցութեան հակասական քայլերը այդ հարցում, որ Ա. Դումային բոյկոտ է յայտարարուած, հետեւելով ռուս

կուսակցութիւններին, երկրորդ Դումային մասնակցում են դարձեալ նոյն հաշիւներով, իսկ երրորդի վերաբերեալ նկատուում են տատանումներ, որովհետեւ տատանում էին եւ էսէռները, ուստի Արեւելեան Բ.ն դիմել է մարմիններին, առաջարկելով նրանց արտայայտուել թէ ինչ դիրք պէտք է բռնի կուսակցութիւնը այս խնդրում, հրաւիրելով կամ Շրջանային ժողով, կամ գործիչ ընկերներին խորհրդակցութեանց: Գալիս են շրջաններից տարբեր կարծիքներ համարեա ձայների հաւասար բաժանումներով, որոնք հնարաւորութիւն չեն տալիս պարզելու մեր դիրքը խնդրի վերաբերմամբ, ուստի որոշում է կայանում թողնել ընտրողների ազատ կամքին: Բագու, Թիֆլիսը եւ միւսները չեն մասնակցում, կամ ձեռնպահ են մնում. մասնակցում են Երեւանը եւ Գանձակի մի մասը: Ընտրութիւնների երկրորդ ֆազում իր մասնակցութիւնը եղել է Բ.ի ընկերների մասնաւոր ցանկութեան համաձայն, որոնց առաջարկութեամբ, թէեւ ուշ, ինքը դիմել է Սաղաթէլեանին դնել իր թեկնածութիւնը, սակայն Սաղաթէլեանը շատ իրաւացի կերպով մերժել է, առարկելով որ այդ խընդրում ոչ մի գիշում չի կարող անել, որովհետեւ կուսակցութիւնը պաշտօնապէս չի մասնակցում. որից յետոյ ընկեր Անտոնի աջակցութեամբ Սաղաթէլեան ընտրուում է պատգամաւոր: Կաթողիկոսական հարցերի վերաբերեալ Խորհուրդը փոխելով ռայոնական ժողովի որոշումը, վարուել է արդարացի եւ օրինաւոր եւ դրանով հիմնուել է այն հանգամանքի վրայ, որ Դաշնակցութիւնը իբրեւ մի Ազգ. կուսակցութիւն չէր կարող մոռացութեան տալ շատ ազգային խնդիրներ, որոնք այսպէս կամ այնպէս կապ ունին կաթողիկոսի հետ: Այս որոշումը բխում է նաեւ Դ. Ընդհ. Ժ.ի որոշումներից, որտեղ պարզ կերպով շեշտուած է, որ մենք մնում ենք ազգային ընկերակրական կուսակցութիւն:

Ընկեր Ռոստոմ նոյնպէս սխալ է համարում Բիւրոյի ընկերներին արած մեղադրանքները. մեղադրել կարելի է միայն դրանց, որոնք հեռացել են ինքնազուլիս կերպով (օրինակ) Լիպարիտը եւ Խաթակը: Պետական Դումայի եւ կաթողիկոսական ընտրութիւնների անպաշտօն կերպով մասնակցելը, աւելի ցանկալի է համարում, երբ կուսակ. շարքերում նկատուում են համարեա հաւասար հակառակ հոսանքներ: Անպաշտօն մասնակցութիւնը մանաւանդ այնպիսի խնդիրներում, որոնք չեն բխում մեր կուսակցութեան ոգուց, ցանկալի է նաեւ այն տեսակէտից, որպիսին առաջ եկաւ հայ-թրքական ընդհարումների պաշտօնապէս մասնակցելուց: Բոյկոտը Դումայի վերաբերմամբ ընկերը համարում է սխալ եւ նշան ծուլութեան, անհոգութեան եւ վախկոտութեան: Չարմանալու եւ հակասական ոչինչ չկայ, եթէ մեզանից շատերը համարում են Խրիմեանին մեծ, Առաջին յեղափոխականը, որի թաղման օրերին ոչ մի դժգոհութիւն չէր լսուում: Բայց լոյս տեսաւ այդ առթիւ

անջատականների մի թուղցիկը եւ ահա սկսեցին մեր շարքերում եւս լսուել դժգոհութեան ձայներ եւ դա ապացոյց է մեր մտավայտութեան: Մինչեւ այժմ ոչ ոք չէ մտադրել¹² էսէռներին, որոնց շարքերում, նոյնիսկ պետական Դումայում կային շատ տէրտէրներ. վերջապէս յայտնի Գապոնի Յունուարի 8ի կազմակերպած թափօրը խաչվառներով եւ Կայսրի նկարով բոլորովին դատապարտութեան եւ յարձակումների առարկայ չէ դարձել: Իրաւական տեսակէտից ռայոնական ժողովը իրաւունք չունէր պահանջելու որ իր որոշումները օրէնք դառնան կուսակց. բոլոր անդամների համար: Մի կողմը թողնելով կաթողիկոսի դերը մեր շատ ազգային եւ կուլտուր. խնդիրներում, չպէտք է մոռացութեան տալ մեր ծրագրի «խճղի ազատութեան» վերաբերեալ կէտը, որի դէմ է մեղանշում կովկասի Ռայոնական ժողովի որոշումը:

Թուրք-պարսկական կոնֆլիկտին մեր ցոյց տուած վերաբերմունքը բխում է Դ. Ընդհ. ժողովի որոշումից եւ վճռուած է ոչ թէ Արեւել. Բ.ի մէջ, այլ Խորհրդի, որը բացի Դ. Ընդհ. Ժ.ի որոշումները, ի նկատի է առել կեանքի եւ մեր ներկայ շահերի պահանջները:

Արեւելեան Բ.ն միայն ուղարկել է Բրինտարին ծանօթանալու Վրէժի ընկերների տրամադրութեանը, որ վերջացնելով իր միսսիան, մասնաւոր համաձայնութիւն կայացրել է Վրէժի Կ. Կ.ի եւ պարսիկ գործիչների հետ. ուրեմն մասնակցութիւնը եղել է Վրէժի կողմից, իսկ կուսակցութեան միւս մարմինները ցոյց են տուել միայն մասնակի աջակցութիւն:

Անջատականների պատճառով սխալ են եղած մեղադրանքները: Նրանց շարքերում կար երկու հոսանք, մէկը անձնական, միւսը քիչ բացառութեամբ, բոլորովին չէր հետաքրքրում ոչ սոցիալիզմով ոչ թուրքահայ խնդրով: Դրանց մէջ աւելի գերակշռում էր մտավայտութիւնը եւ ուրիշ ոչինչ: Դրանք պնդում էին որ բռնի կերպով դրամ հանգանակելը անթոյլատրելի է, սակայն անջատուելի վերջ մեզանից աւելի առաջ գնացին այդ խնդրում:

Դուման.— Միայն է համարում այն կարծիքը, որ Պարսկաստանի վերաբերեալ ամէն բան արած է (Ռայոնական) Ժ.ի որոշման համաձայն, պարզելով որ այդ ժողովին ինքն է եղել Պարսկաստանի գործերի մասին զեկուցանողը եւ եղել է այն կարծիքի, որ Պարսկաստանում հայերը մի բուռ ժողովուրդ են, չարժէ այնտեղ նոր հայկական խնդիրներ ծագեցնել, թողնելով որ այնտեղի ընկերները որոշեն իրենց անելիքը: Բայց Բրինտարը գնացել այնտեղ եւ համաձայնութիւն է կապել Դաշնակցութեան՝ անունից. ապա գնացել են Վահագն ու Ռոստոմ, իսկ Բագուում մեր ընկերները կուսակցութեան անունից այդ նպատակաւ դրամ են հաւաքում:

Վիճաբանութիւնները վերջացած համարելով առաջարկում են բանաձեւեր Արեւել. Բիւրոյի գործերի մա-

սին, սակայն ժողովականներից ոմանք առարկում են որ Բիւրոյի գործերի համար բանաձեւ չի կարելի դուրս բերել, առանց շրջանների հետ ծանօթանալու եւ որովհետեւ առաջիկայում շատ հարցեր պիտի քննուեն, որտեղ նորից պիտի դառնանք այս խնդրին, ուստի քուէարկութեան դրուելով միաձայն կ'անցնի հետեւեալ բանաձեւը. «Բոլոր մարմինների գործունէութեան մասին տալ գնահատութիւն, դրանց տեղեկագիրը եւ զեկուցումը լսելուց եւ քննադատելուց յետոյ»:

Նախագահը յայտնում է ժողովականներին, որ կուսակցութեան գանազան շրջաններում լուրեր են տարածուել, որ իբր թէ մեր կենտրոնական մարմինների մէջ եղել են ընկերներ, որոնք ցուցումներ են տուել ռուս կառավարութեան վերջին ձեռքակալութիւնների ժամանակ: Այդ բոլոր լուրերը միանգամայն սխալ ու մրտացածին են եւ դուրս են գալիս մեր հակառակ բանակից: Բացի Միհրանից այդ մտքով ոչ ոք ջակցութիւն չէ ցոյց տուել կառավարութեան: Արեւել. Բ.ն եթէ ոչինչ չէ կատարել այդ կասկածները փարատելու համար, դա եղել է որոշ դիտաւորութեամբ, որովհետեւ մեր ամէն մի յայտարարութիւնը այդ ուղղութեամբ կարող էր նոր գէնք տալ կառավարութեան ձեռքը:

Նախագահ Քարտուղար

ԽԿԱՄ ԺԶ. 1909 22 VIII [Օգոստոս].
ԵՆԵԿՈՅԵԱՆ ԺԱՄՈ 4-ԻՆ

Ներկայ են 21 ընկերներ, միւսները ժողովի ընթացքում գալիս են: Բացակայում է ընկ. Դումանը (հիւանդ): Նախագահում է Ռուբէնը:

Օրակարգ — Թուրքիայի Մեծ Հայքի շրջանի տեղեկագիր:

Զեկուցում է ընկ. Սարգիսը.
Նկարագրում Թուրքիայի եւ մասնաւորապէս Մեծ Հայքի ընդհանուր դրութիւնը եւ ժողովրդի վիճակը IV Ընդհանուր ժողովից մինչ այժմ: Տնտեսական քայքայումը, դաժան կարգերը խստութեամբ շարունակուում էին մինչեւ Սահմանադրութեան հրատարակումը: Պետական անտանելի հարկերի, քիւրդ բէգերի կարալաների ալամ-գուրարայի, ընչաքաղց սալաֆտարների պատճառով ժողովրդի տնտեսական կեանքը չափազանց անմխիթար վիճակի մէջ է եղել եւ կը շարունակուի, թէեւ քիչ մեղմացած: Հայ գիւղացու կեանքն ու գոյքը կառավարութեան եւ քիւրտերու կամայականութեան է ենթարկուած եղել: Միստեմ դարձած էին հալածանքներ:

12.- Պետք է ըլլայ՝ մեղադրել:

ըը, ամէն տեսակի, մասնաւորապէս Մշուժ եւ Վասպուրականում: Քիւրտերի կողմից ոչխարի թալանը պարբերական եւ սովորական է եղել, որի հետեւանքով 1000-ից անլի ոչխար ունեցող գիւղերն այժմ հազիւ 100 հատ ունին կամ չունին ոչինչ: Քաղաքների մէջ արհեստներն ու վաճառականութիւնը կանգ էին առել: Եւ ահա այս բոլորի հետեւանքով առաջացած սովից շատ տեղերում ժողովուրդը նուազում եւ անյայտանում էր:

Տնտեսական քայքայումը նկատի ունենալով, կուլտուրական-կրթական գործը համեմատաբար, մանաւանդ քաղաքներում, քիչ շատ լաւ է եղել:

Անարդար հալածանքների եւ լարուած դրութեան պատճառով ազգերի յարաբերութիւնը լարուած, կասկածոտ եւ թշնամական էր: Յարաբերութիւնը, համեմատաբար լաւ է եղել ռայա տարրերի մէջ:

Կազմակերպութեան ներքին կեանքը մաքուր է եղել. գիւղերը համայնական ձեւով են կազմակերպուել եւ համայնական ուժով տարել կազմակերպական գործը: Ժողովուրդը մեծ մասամբ իր միջոցներով է գինուել. շատ անգամ համայնական հողերի եկամուտը յատկացրել զէնքի: Այս ուղղութեամբ տանելով գործը, երեք տարուան ընթացքում մօտ 2000 զէնք են ձեռք ձգում: Մարտական ոյժը զօրացնելու համար կազմուել են առանձնապէս մարտիկ, թուղցիկ խմբեր, որոնց հետ յարմար եղանակներին, գինավարժութեան պարապմունքներ են եղել: Կազմուել են նաեւ մի քանի կանանց խմբեր, որոնք մասնաւորապէս Մշուժ, կատարել են սուրհանդակի պաշտօն, որի համար եւ հալածուելով, բաւական թուով փախստական կանայք են եղել:

Պրոպագանդան տարուել է թէ՛ բանաւոր եւ թէ՛ գըրաւոր: Բայց ժողովուրդը ճշունած դրութեան մէջ անկարող է եղել կանոնաւոր հետեւել պրոպագանդային եւ սպասուած արդիւնքը չէ ստացուել: Ընդհանուր ժողովի որոշման համաձայն պրոպագանդ էր սկսուած նաեւ քրդերի մէջ, թուղցիկների միջոցով եւ մի երկու անգամ անձամբ այցելելով: Հայ տարրը համակրանքով էր վերաբերում ընկերների այս քայլին եւ աջակցում էր, մասնաւորապէս թուղցիկներ տարածելով:

Երբ կատարուում են էրգորումի, Քաստեմունիի եւ Դիարբէքիի շարժումները, ընկերները պրոպագանդայի գործն անլի հասունացած են համարում եւ որոշում են գործն ընդլայնել: Այդ շարժումները հետզհետէ ձգում էին կառավարութեան պրեստիժը. մանաւանդ արաբական շարժումները թուրքերին եւ քրդերին համոզում են, որ մահմետականն էլ կարող է կառավարութեան ղէմ ղեգոհել ու կուուել, ինչպէս գեաւուրները: Վասպուրականում Ալի բէյի ճշունների պատճառով ղեգոհութիւնը ծայր է առնում, որի ոյժ է տալիս միւս կողմից մեր ընկերների նախաձեռնութեամբ հրատարակուող թուրքերէն Սաբահ-իւլ-խայր (բարի լոյս) թերթը, որը մեծ ընդունելութիւն է գտնում տեղական

թուրք տարրի, առանձնապէս գինուորականների կողմից, որոնք սկսում են աշխատակցել ղեգոհ եւ քննադատական տրամադրութիւն ունեցող յօդուածներով: Պարիզի կոնգրէից առաջ արդէն սկսել էին ընկերները թուրքերի հետ համագործակցութեան ծրագիր մշակել եւ ձեռնարկել էրգորումի եւ Վանի թուրք յեղափոխականների ու Դաշնակցութեան միջեւ կոնգրէ գումարելու ընդհանուր տակտիկա մշակելու համար:

Յեղափոխութեան շնորհիւ հայ տարրի մէջ մտել է մարտական ոյժ, տոկոնութիւն դիմադրելու արհաւիրքներին, յոյս լաւագոյն օրուայ համար, որ եւ պատճառ է եղել արտագաղթի դադարեցման: Սակայն դրական արդիւնքների հետ հայ ժողովուրդը յեղափոխական շարժումների պատճառով ենթարկուել է գրկանքի, թալանի եւ մասնակի սպանումների. օրինակ Նարեկ եւ Մշոյ դաշտի բազմաթիւ գիւղեր: Դաւիթի մատուցութիւնը եւ նրանից առաջացած ղէպքերի պատմութիւնը ժողովականների համաձայնութեամբ թողնուում է առանձին նիստի:

Սահմանադրութիւնից յետոյ ժողովուրդի վերաբերմունքը ղէպի Դաշնակցութիւն, չափազանց խանդավառ է եղել: Իթիհատի հետ յարաբերութիւնը միշտ ենթակայ է եղել տատանումների, ունենալով եւ բարեկամական եւ սրուած բնաւորութիւն. մասնաւորապէս էրգորումում լաւ է եղել: Տեղեկաբերի կարծիքով առ այժմ վաղաժամ եւ վտանգաւոր է փորձել թուրքերի մէջ նոր կուսակցութիւն առաջ բերել: Իթիհատի յարաբերութիւնը սկսել է ղէպի լաւ գնալ Մարտ Յից յետոյ¹³:

Երբ տեղեկաբերն իր ասելիքները վերջացնում է, առաջարկուում է, Վանի ղէպքերի մանրամասնութիւնները եւ իսկութիւնը պարզելու համար, ուղարկուած քննիչ ընկերներին հեռագրելով կանչել, պահանջելով, որ գոնէ մէկը գայ: Առաջարկն ընդունուում է: Առաջարկուեց եւ որոշուեց, որ Մշոյ եւ էրգորումի շրջանների մասին յաջորդ նիստին լրացուցիչ տեղեկութիւններ տան ընկերներ Ռուբէն Տարօնացի եւ Մարալ:

Խորհուրդի գումարումը արագացնելու համար ձայների մեծամասնութեամբ ընդունուում է հետեւեալ որոշումը.

«Նկատելով որ կանոնագրութեան համաձայն այժմ չի կարելի օրինական խորհուրդ գումարել, Արեւելեան եւ Արեւմտեան ռայոնական ժողովների ներկայացուցիչների չգոյութեան պատճառով, Ընդհանուր ժողովը որոշեց Բիւրոներու եւ պատասխանատու մարմինների ներկայացուցիչների վրայ անլաւացնել արեւելեան եւ արեւմտեան շրջանների պատգամաւորների ընտրած ներկայա-

13.- 1909 Մարտ 31ին Սուլթան Գամիտի կողմէ սահմանադրական կարգեր տապալելու եւ Մախկիմ բռնակալութիւնը վերահաստատելու փորձ, որ ծանօթ է շերիաթական շարժում անուանով:

ցուցիչներին եւ այդպիսով կազմել օրինական խորհուրդ»:

Երկու շրջանների պատգամաւորներին թողնուեց ժողովից դուրս ընտրել իրենց ներկայացուցիչները:

Ժողովը փակուեց ժամը 7ին:

Քարտուղար Նախագահ՝
ՌՈՒԲԷՆ

Լիստ ժ. 1909, 23 VIII. առաւօտեան ժամը 8ին

Ժողովը բացուեցաւ 20 ընկերներու ներկայութեամբ. միւսները յաջորդաբար հասան: Կը նախագահէ ընկեր Անտոն: Կը շարունակուի թրքահայերու տեղեկագիրը: Եղած առաջարկութեան մը վրայ նախագահութիւնը պարտաւորութիւն կը ստանձնէ մասնաւոր տեղեկագիր բերել տալ Տարօնի մասին: Յետոյ, ընկեր Ռուբէն Տարօնացի կու տայ հետեւեալ տեղեկութիւնները այդ շրջանի վերաբերմամբ.— Սահմանադրութեան հետ առաջ կառավարութիւնը մասնաւոր ուղարկութիւն դարձուցած էր Սասնոյ վրայ, եւ թուրքերը պահ մը այն կարծիքին եկած էին թէ՛ վերջնականապէս յաղթող են իրենք. բայց այդ կարծիքը տեւեց մինչեւ Սարհատի¹⁴ վերադարձը: Մշոյ շրջանին մէջ հարկահանութեան եւ այլն պետական ճնշումներու սիստեմներէն զատ՝ որոնց մասին արդէն խօսուեցաւ այստեղ՝ կառավարութիւնը արուեստական կերպով հակառակութիւն կը ծնեցնէր հայուն եւ քիւրտին միջեւ, եւ ստեղծուած էր այդ տարրերուն մէջ այնպիսի հոգեբանութիւն մը, որ կուիները անպակաս կ'ըլլային: Ի վերջոյ, ժողովուրդը յուսահատեցաւ եւ իբրեւ փրկութեան վերջնական միջոց ոմանք վճռեցին գաղթել, իսկ ուրիշներ՝ կուուիլ: Կառավարութիւնը գաղթումին կողմնակից էր, եւ կը քաջալերէր գաղթողները: Բայց իր այդ ընթացքը կ'ունենար հակառակ հետեւանք, որովհետեւ ժողովուրդը կը սկսէր մտածել այն հանգամանքին մասին թէ՛ կառավարութիւնը կարեւորութիւն կ'ընծայէ ինքն իր հողին վրայ մնալուն կամ չմնալուն:

Յեղափոխութիւնը Տարօնի մէջ դասակարգային շերտաւորումին կամ գիտակցութեան վրայ չէր հիմնուած: Ժողովուրդը կ'ըսէր թէ՛ Փլան ստրուկ էր, ուստի պէտք է կուուի ազատուելու համար, եւ այս սկզբունքով ալ կը կազմակերպուէր իր բոլոր դասակարգերով,— հարուստ, աղքատ, կղերական, գիւղացի եւ այլն, որոնք քով քովի կու գային «Միութիւն» անունին տակ, որուն կ'ընծայէին բացառիկ կարեւորութիւն: Տարօնի մէջ ժողովուրդը մեծ ցանկութիւններ ունէր ղէպի գարգացական աշխատանքը, բայց իր նիւթական անձուկ վիճակին պատճառով շատ ջնջին կերպով կը կարողանար հասնիլ իր նպատակին: Ամբողջ գիւղերուն մէջ

միջնակարգ կրթութիւն ստացած մարդ չկար: Վարժարանները նախնական վիճակի մէջ էին: Ազգաբնակչութիւնը Մուշի շրջանին մէջ կը բաղկանայ հայերէ եւ քիւրտերէ. եղած սակաւաթիւ թուրքերն ալ քիւրտ դարձած են, եւ այս բոլորին յարաբերութիւնները ինչպէս ըսուեցաւ հեռու էին համերաշխական ըլլալէ: Քիւրտերը կը խլէին հայոց հողերը, եւ կազմակերպութիւնը այս ընդհանուր ցաւերուն մէջ ժողովուրդը պաշտպանելու պարտականութիւնը ստանձնած էր: Այդ բանը կ'ընէին մարտական խումբերը, որոնք կը պահպանուէին ժողովուրդին կողմէ: Ամսապճար չկար եւ ոչ ալ խմբական դրութիւն: Ունէինք բաւական թուով յեղափոխական կիներ, որոնք ամբողջապէս կը կատարէին սուրհանդակային աշխատանքներ: Բացի յեղափոխութենէն, ժողովուրդը կը կուուէր կառավարութեան ղէմ երբեմն մասսայական ցոյցերով ալ, կամ հաւաքական գաղթի ու դաւանափոխութեան սպառնալիքներով: Տեղ տեղ ալ, սակայն, ինչպէս Կինճի գաւառը տեղի կու տային եւ կ'իսլամանային: Ինքնապաշտպանութեան գաղափարը հասած էր մեծ գարգացումի, եւ ատոր պատճառ նկատուելով՝ երիտասարդութիւնը կ'ենթարկուէր բացառիկ ճնշումներու ու կը դառնար փախստական: Մուշ-Սասուն շրջանին մէջ գրեթէ շարունակ կը տիրէր պաշարման վիճակ. յաճախ տեղի կ'ունենային մասսայական խուզարկութիւններ եւ անոնց իբրեւ անմիջական հետեւանք՝ ընդհարումներ յեղափոխականներուն հետ: Այդպիսով է որ վերջին երկու երեք տարուան ընթացքին պատահած են 13 կուուներ (200-250 գոհ): Վերջին տարիները կը պատահէր որ եօթ ութ տեղ միեւնոյն ժամանակ կու տեղի կ'ունենար: Կամաց կամաց եկանք այն եզրակացութեան թէ՛ մարտական խումբերու թիւն ու իրաւունքները պէտք էր կրճատուէր, եւ գիւղական կազմերու պետերուն տալ հաւասար ձայն, որովհետեւ ժողովուրդը արդէն սկսած էր յոգնիլ եւ դիմել կործանարար միջոցներու, ինչպէս են՝ մասսայական գաղթումը եւ Թերքի թեպա¹⁵: Եղած զէնքերու մասին կարելի չէ որոշ բան ասել քանի որ անոնց մէկ մասը կառավարութիւնը, իսկ միւս մասը կազմակերպութիւնը հաւաքած են: Մշոյ կողմերը ջանքեր եղած են կազմակերպելու քիւրտերը, եւ երբեմն յաջողութիւններ եղած են (նէոպեթիցիները): Բայց գիւղապետները մեզ մօտեցած են յաճախ շահադիտական նպատակներով, ինչ որ ունեցած է երբեմն իր աղէտալի հետեւանքները:

Մուրատ կ'աւելցնէ.— Մշոյ շրջանին մէջ, դեռ 1904ի կուուները չսկսած, ունեցած ենք 400 հրացան, բայց ժողովուրդը շատ ունէր երկրորդական զէնքեր: Մինչեւ

14.- Գեորգ Չաւուշի: Խօսքը կը վերաբերի 1904 թ. Սամոյն ապստամբութեան ճնշումն ետք Գեորգ Չաւուշի Սասուն վերադարձին:
15.- Հայատակութեան, քաղաքացիութեան հրաժարում:

նը դանդաղեց Պատ. Մարմնի պատճառով: Այնուամենայնիւ, ի հարկէ զինման գործունէութիւնը ունեցաւ իր մեծ օգուտները, որոնց ապացոյցն է Մալաթիան եւ այլ վայրեր: Առանձին կազմակերպական գէնք Փոքր Հայքի շրջանում գոյութիւն չունի. եղածները ժողովրդական են բոլորը:

Յարաբերութեան խնդիրը զանազան տարրերի մէջ պահանջուած չափով գոյութիւն չունի, եւ այս գլխաւորաբար այն պատճառաւ, որ նոյն տարրերը իրենց անկեղծութեան համար վստահութիւն չեն ներշնչում: Ապացոյց՝ Իթիհատի ղեկավարների հէնց իրանց յետադիմական լինելը, որոնք կարողում են «Վօլքան» եւ այլ յետադիմական թերթեր: Օտար ցեղերի մէջ, գլխաւորաբար չէրքէզները եւ Տերսիմի քիւրտերը աւելի անկեղծ տրամադրութիւն ցոյց տուին յարաբերութեան խնդրին նկատմամբ, եւ որոնց մէջ Դաշնակցութեան ընդունելութիւնը աւելի մեծ եղաւ քան թէ Իթիհատինը: Վերջիններս յատուկ դիմումներ են արել Դաշնակցութեան իրենց ուղղութիւն ցոյց տալու համար:

Ինչ վերաբերում է Պոլսի շրջանին, պէտք է սսել որ 1898 թուից այս կողմ եղել են շատ սակաւաթիւ ընկերներ միայն: Նոյն թուից յետոյ լայն նշանակութեամբ կազմակերպութիւն չի եղել, այն յայտնի պատճառով որ Պոլսի իր 30,000 լրտեսներով եւ այլ սոսկալի պատճառներով, ինչպէս նաեւ Յակոբի ծանօթ խնդրով, անհնարին է եղել կազմակերպական գործունէութիւնը զարգացնելու: Սահմանադրութիւնից յետոյ, սակայն, զանազան ընկերների ջանքերով առաջ է գալիս բաւական մեծ քանակով մի կազմակերպութիւն, մօտ 19 կոմիտէ եւ ենթակոմիտէներով՝ զանազան շրջաններում: Տրամադրութիւնների անկման հետ, սակայն, թուլանում է եւ կազմակերպութիւնը: Ներկայումս Պոլսը բաժանուած է երեք մասերի, իրենց առանձին տեղական կոմիտէներով:

Ինքնապաշտպանութեան գործի մասին Պատասխանատու Մարմինը կը տայ յատուկ գեկուցում: Շրջաններում ինքնապաշտպանութեան գործը աւելի լաւ է քան Պոլսում, օրինակ, Պարտիզակ որ ունի մօտ 1000 կտոր գէնք, Սեբաստիա եւայլն:

Այս ընդհանուր տեղեկագրից յետոյ, ընդմիջում է լինում 10 ըրպէ: Դադարից յետոյ ընկերներ Ամատունի (Խարբերդ), Հայկ (Իզմիր), Ագիլեան (Մարզուան) եւ Հրանտ (Տրապիզոն) տալիս են իրենց շրջանի մասին լրացուցիչ տեղեկութիւններ: Լրացնող ընկերները կանգ են առնում գլխաւորապէս իրենց շրջանի կազմակերպական, ինքնապաշտպանութեան, տնտեսական եւ կրթական հարցերի եւ զանազան տարրերի մէջ ստեղծուած յարաբերութիւնների վրայ:

Ժողովը փակուում է ժամը 12ին:

Քարտուղար

Նախագահ՝ ՌՈՒԲԷՆ

Նկատ ժԹ. 1909 Օգոստոս 24, երեկոյեան Ժ. 4ԻՈ

Նախագահում է Ռուբէն:

Շարունակուում են Փոքր Հայքի տեղեկագրի վերաբերեալ լուսաբանութիւններն ու քննադատութիւնները: Դիտողութիւնները գլխաւորաբար ծանրանում են հետեւեալ կէտերի վրայ.

Մի քանիսները գտնում են որ այնտեղ գործունէութեան ընթացքում ոչ միայն արուել (են) անտակտութիւններ, այլեւ այնպիսի անիմաստ քայլեր, որոնք նպաստել են կազմակերպութեան թուլացման: Մի կողմ թողնելով ժողովրդի զինման՝ լուրջ եւ նման խնդիրները, տարուել են հոգեւորականութեան եւ կրօնի դէմ կռուով, կռիւ որը ուղղուած է եղել ոչ հոգեւորականութեան դէմ իբր դասակարգի, այլ անհատ վարդապետների: Հրապարակաւ խօսուել է կրօնի դէմ մի ժողովրդի մէջ, որը դեռ եւս հաւատում է: Ուրիշները նկատում են որ մերոնք խօսելով դպրոցական աշակերտներին կազմակերպելու եւ ըմբոստացնելու գործերում, վնաս են հասցրել կազմակերպական անուան եւ դիրքին. մասնաւորապէս աչքի է ընկնում այդ Կարինի Սանասարեան վարժարանում: Մերոնք ժողովրդի հետ, որը մի անգամ ազատութիւն ձեռք բերելով արեցած վիճակի մէջ է եղել, զինավարժութեամբ պարապելիս, թոյլ են տուել շատ ազատօրէն դուրս գալ հրապարակ, կասկածներ ծնեցնելով շրջապատող թուրք տարրերի մէջ, թէ հայերը զինուում են, յետին մտքեր ունեն. այդ անշուշտ պատճառ է դարձել հարեւանների լարման, մի հանգամանք որը տրամագծօրէն հակառակ է մեր ցանկութեանց:

Ընկերներից մէկը շեշտում է շրջուն գործիչների — որոնք գնում են մի քանի ամսով պտտում ընդարձակ շրջան եւ կազմակերպում ոչ հիմնաւորապէս — տուած բացասական արդիւնքի վրայ:

Սուսկի պէս բուսած Կ. Կոմիտէները որքան արագ կազմակերպուում են առանց զգալի օգուտ բերելու գործին, նոյնքան էլ արագ քայքայուում են: Աւիթից օգտուելով շեշտում է գործի յաջողութեան եւ հաստատուն հիմքերի վրայ դրուելու տեսակէտից՝ գործիչների երկար ժամանակով մի վայրի հետ կապուած լինելու անհրաժեշտութիւնը: Նկատի է առնուում այն որ գործիչ ընկերները շատ անգամ առաջնորդուում են անհաստական սկզբունքներից բխած քաղաքականութեամբ:

Ընկերներից մէկը նկատում է որ Տրապիզոնում Կ. Կոմիտէն ժողովրդի զինման գործում աշայուրջ չի վերաբերուել՝ մատակարարելով աւելի թանկ գնով ապրանք քան արժէ շուկայում. մինչդեռ հակառակը պիտի լինէր. ծանրանում է եւ այն հանգամանքի վրայ, որ անհատներ Դաշնակցութեան անունից գէնքեր են ծախում ժողովրդին, շահագործելով կազմակերպութեան անունը յօգուտ իրենց գրպանի:

Տեղեկաբերը եւ շրջանին ծանօթ ընկերները հերքում են այն, որ նախ հալածանք չէ սկսուել վարդապետների դէմ. Տրապիզոնում միայն եղել է մի դէպք, կռուել են վարդապետի դէմ, իբր մի անհատի որը շահագործում է Դաշնակցութեան անունը այս ու այն կողմը ներկայանալով Կ. Կոմիտէի անդամ: Իսկ ինչ վերաբերում է հրապարակաւ ժողովրդի հաւատալիքների դէմ խօսելուն, ճիշդ է եղել է, բայց այս հեռու է կռուի սխտեմ լինելուց:

Դպրոցներում աշակերտների ըմբոստացնելու քայլեր չեն արուել, այդ մի հոսանք է որ բերել է ազատ կարգերը, ինչպէս եւ այդ արտայայտուեց աշխատաւորների մէջ իրենց տնտեսական դրութեան բարելաւման համար՝ անկախ կազմակերպութիւններից: Մասնաւորապէս Սանասարեան դպրոցի վերջին դէպքերի ժամանակ կազմակերպութիւնը ո՛չ մի մասնակցութիւն չի ունեցել, նոյնիսկ հակառակ ժողովրդի կողմից արուած մասնաւոր մի քանի դիմումներին:

Զինավարժութիւնը նախկին ձեւով տարուել է մի քանի շրջաններում, իսկ մի քանի վայրերում ցուցամուտութիւնը ժողովրդը արել է անկախ կազմակերպութիւնից:

Տրապիզոնի պատգամաւորը ընդունելով որ իրենք ձեռնհաս չեն եղել գէնքի մատակարարման գործում, այդ հարցի վրայ ծագել է թիւրիմացութիւններ մարմնի անդամների մէջ: Ապրանքի թանկութիւնը, կազմակերպական դրամը եւ անունը ընկերի չենթարկելու համար, ցամաքի վրայ գնուած լինելու պայմանով է բացատրուում: Բացի այդ ստիպուած են եղել որոշ տոկոս բարդել ապրանքի վրայ այն վնասի պատճառով, որ առաջ է գալիս ժողովրդի տուած յունական գրանները յետ դարձնելուց՝ իբր անգործածելի գէնք: Անհատներ չեն եղել կազմակերպութեան անունը շահագործող. մի զինավաճառ ընկեր ունենք, որը դաշնակցական է եւ ինչպէս շատ ուրիշները պարապում է զինավաճառութեամբ:

Աւիթից օգտուելով Կարնոյ պատգամաւորի հետ միասին նկատել են տալիս, որ ժողովուրդը մեզ վրայ նայում է իբր մի կազմակերպութեան, որը միմիայն ինքնապաշտպանութեան համար է եւ մեզ հետ կապուում են այդ հողի վրայ: Այդ բացասական կողմից ազատուելու համար, առաջարկում են գէնքի մատակարարման գործը զատել կազմակերպութիւնից — մի գործ որը աւիթ է տալիս ժողովրդի մէջ այդ միտքը աւելի խորանալուն:

Ժողովը նկատելով որ ընկերներից մէկը պնդում է Տրապիզոնի մարմնի կամ այնտեղի զինավաճառ ընկերոջ, շահադիտական ձգտումներով ապրանքի թանկ ծախելուն վրայ, եւ որ այդ աւթիւ թիւրիմացութիւններ է ծագել մարմնի մէջ, որոշեց անցնել հերթական հարցերին, թողնելով այդ խորհրդին՝ եթէ դիմումներ կը լինին:

Ապա ընկեր Անտոն անցնում է Կիլիկիայի տեղեկագրին: Տեղեկագրից երեւաց որ բացի ընդհանուր պայմաններից, Մ[եծ] Հայքի եւ Փոքր Հայքի դրութիւնը տարբեր է: Մեծ Հայքում հայերը կազմում են 1/3 մասը ազգաբնակչութեան, իսկ Փոքր Հայքում 18%: Այդ կողմից Կիլիկիան մօտենում է Մ[եծ] Հայքին:

Այդ երկիրը եղել է այնքան բերրի, որ անուանի դրախտը այդտեղ են հաշուում: Ասորական շրջանում մեծ դեր է խաղացել. Նաբուգոդոնոսոր թագաւորը թաղուած է Թարսուսում: Շրջանը անցեալում եղել է շատ կարեւոր եւ է այսօր էլ. դա ամենակարճ ճանապարհն է դէպի Միջին Ասիա. հիմա էլ այդտեղից է անցնում Բաղդադի երկաթուղին. այդպիսով այդ անկիւնը (միջին դարերում Հայկական Մոց) իր աշխարհագրական դիրքով, Պոլսից յետոյ, բռնում է իր կրողը կամ երրորդ տեղը, մասամբ ապահով լինելու, մասամբ էլ առեւտրական մեծ յարմարութիւններ ունենալու պատճառով: Կիլիկիան՝ Շարդենի¹⁷ վկայութիւնից — Հաճրն մօտենում է Սեբաստիայի, եւ եթէ այսօր կտրուած է, այդպէս չի եղել անշուշտ անցեալում: Հայ ազգաբնակչութիւնը հաստատուել է այդ վայրերում խաչակրաց արշաւանքից եւ Բագրատունեաց թագաւորութիւնից շատ առաջ: Գէօքսիւնը դեռ 5րդ դարու մէջ հայկական քաղաք էր հաշոււում: Հայերը հաւանօրէն տեղաւորուած են եղել լեռներում: 50-80ական թուականներին այդ վայրերում դերերէյներն¹⁸ են եղել իշխողները, որոնց եւ ժողովուրդը վճարում էր հարկ. միայն Ջէյթունն է եղել ազատ հարկերից կազմելով ինքն իրենից մի դերերէյուլութիւն: Բայց երկրի «խլաւհիէթ»¹⁹ հետ դերերէյուլութիւնները կամաց կամաց վերանում են, հայերը սկսում են իջնել դաշտ, հողագործութեամբ պարապել՝ գրաւելով հողեր: Դրա պատճառը սակաւահողութիւնն է: Օրինակ, այսօր Հաճրնոյ հայ տարրը, նոյն թուով ազգաբնակչութեան հետ համեմատած 5 անգամ պակաս հող ունի: Հողերի գրաւումը անշուշտ առանց կռուի չէր կարող լինել. մինչ այժմ էլ գէյթունցիք պատմում են թէ ինչպէս 50-80 տարի առաջ գրաւեցին Բէրիթ Սարը եւ սկսեցին հանքերը մշակել: Միւս կողմից հաճրնցիք հիմնել են Կարս-Բազար, ուր աշխատում են 7-8 ամիս մշակելով հողերը: Ատանան երեւի 40 տարի առաջ փոքր է եղել, բայց շրջակայքում չիթիլքներ հիմնելով ընդարձակուել է: Նոյնը Չոք Մարզուանում եւ Ֆրնտըճագում:

Ատանայի դաշտը բերրի է. միջակ բերքը 1-8, այս տարի 1-10, 1-12. կան ամէն տեսակի բոյսեր, որոնք աճում են առանց ջրի: Այդ հարստութիւնը քաշում բերում է ծովեզերքից ֆելլահներին, հայերին՝ լեռներից:

17.- Ժան Եարդեն (1643-1713), ֆրանսացի ճանապարհորդ եւ գրող. հեղինակած է ուղեգրական երկեր դէպի Իրան եւ Գնդկաստան:
18.- Աւատատերերը, բոնակալներու իմաստով:
19.- «Բարեկարգութիւններ»:

Գայլիս են ամէնքը խարբերողից, Սրվազից: Ղրիմից Չոխուր Օվա են եկել 20,000 թաթարներ, որոնք կոտորուել են ջերմից: Ներկայումս էլ կառավարութիւնը հայ գիւղերի մօտ տեղաւորում է մուհաջիրներին:

Ազգաբնակութեան 1/3 մասը կազմում են հայեր, 1/3ը Ֆելլահներ եւ ոչ թուրք ցեղեր, 1/3ը թուրքեր: Թուրքերը 50 տ[արի] առաջ թափառաշրջիկներ են եղել, բայց կամաց կամաց նստակեաց են դառնում ու պարապում հողագործութեամբ: Այժմ աշխրթներ շատ քիչ կան: Ֆելլահները, արաբախօս, կրօնով աղանդաւոր ո'չ քրիստոնեայ, ո'չ մահմետական, ապրում են ծովեզերքում: Հաճընի եւ Ջէյթունի մէջ ապրում են չերքէզները, գաղթականներ 58ի պատերազմից յետ: Դրանք թուրքերի հետ լաւ չեն, իսկ հայերի հետ բարեկամ, գուցէ 80ական թուականների պատամբութեան ժամանակ լաւ ջարդ ուտելու պատճառով:

Հայերը այդ վայրերում զգում են իրենց մայրենի հողի վրայ, այնպէս, ինչպէս Մ[եծ] Հայքում: Թուրքերը անշուշտ չեն կարողանում տանել այդ եւ նայում են ոչ հաշտ աչքով:



Ազգերի մասին խօսելիս կրօնի մասին էլ պիտի խօսել, որովհետեւ այդ հանգամանքը մեծ դեր է խաղում, մանաւանդ այդպիսի շրջանում: Հայերի 1/3 մասը բողոքականներ եւ կաթոլիկներ են. դրանք նոյնիսկ արմատ գցել են գիւղերում: Բողոքականները ունեն իրենց առաւելութիւնները եւ իրենց բացասական կողմերը: Առաւել կողմը այն է, որ տարածում են հայ տարրի մէջ լուսաւորութիւն ու կապում նորան Եւրոպայի կեանքի հետ. դրանց բացասական կողմը արտայայտում է ներքանով, որ չնայած հայ տարրի 2/3ը մասը (լեռներում) խօսում են հայերէն, դպրոցական եւ եկեղեցական լեզուն համարում են թուրքերէն, մտածելով հայ տարրի միջոցով եւ այդ լեզուով աւելի յաջողութիւն կարող են ունենալ թուրքերի մէջ:

Ատանայի դաշտը հարուստ լինելով շատ է յառաջդիմած. 2000 հնձելու մեքենայ կայ, մի թիւ որ ոչ մի տեղ չէք գտնի. 5000 ոսկիանոց շոգիի մեքենայ: 100 տնից բաղկացած մի գիւղում 15 հնձելու մեքենայ ունեն. այդ գործածական է եւ հայերի, չէրքէզների եւ թուրքերի մէջ: Կան եւ գործարաններ բամբակի, թել մանելու, բամբակ մաքրելու. այժմ սկսել են եւ ուրիշ գիւղերում, սողցարաններ, սառոցի եւ այլն: 5 տարի առաջ Ատանայում բանուորների թիւր 1000 էր, իսկ այժմ թիւր կրկնապատկուել է: Այսպիսով տեսնում ենք արդիւնաբերութիւնն ու երկրագործութիւնը շատ արագ զարգանում է: Նոյն յաջողութիւնը կարելի է ասել եւ կրթական գործի նկատմամբ:

Այս բոլորը մի կողմից նախանձ է շարժում, միւս կողմից էլ վախը թէ հայերը Կիլիկիան գրաւում են սաստկանում է. այդ կարծիքին են նոյնիսկ «գիտակից» տարրերը, այնպէս որ երբ այս տարի հարց է դրում

Հաճընից 500 տուն հայեր իջեցնել դաշտ, իթթիհատականները խանգարում են եւ թոյլ չեն տալիս:

Այդ պարագայում սահմանադրութիւնը յայտարարում է. հայերը իրենց շատ են ազատ զգում եւ թոյլ տալիս իրենց զանազան ցուցամոլ արարքներ. թուրքերը շատ վատ են տպաւորում, բացատրում են այդ հայերի անջատողական ձգտումներով եւ բացի այդ չեն կարողանում հաշտուել այն մտքի հետ, թէ իրենց ստորադրեալ ազգի հետ հաւասար կարող են լինել: Սահմանադրութիւնից յետ Կիլիկիա է մտել 8500 կտոր գէնք, որից 1/4 մասը հայերի ձեռքն է անցել: Երկու կողմն էլ սկսում են զինուել եւ զինավարժութեամբ պարապել, օդը լեցւում է եւ կարծես մի բանի սպասելիս լինէին: Դրութեան լարման նպաստում է եւ կուսակցական գիտակցութիւնը սահմանադրութիւնից յետ, դպրոցական ուսանողների ըմբոստացումները պատուելիների դէմ, եւ այն պրոպագանդան որ երիտասարդ ուսանողները անում էին տնտեսական եւ քաղաքական հողի վրայ շատ խաւերում:

Քարտուղար՝  ՎԱՀԱՆ
Նախագահ՝  ՌՈՒԲԷՆ

Նիստ 20րդ. 1909 Օգոստոս 25, առաւօտեան

Ստուգիչ յանձնախումբը շարունակեց կարդալ իր տեղեկագիրը:

1- Արեւմտեան Բիւրոն եւ Ատրպատականի մարմինը իրենց ներկայացուցիչներու յանձնարարականները դրկած էին:

2- Արաբները ներկայացուցիչը ունի յանձնարարական, անցեալի մէջ ունեցած է կանոնաւոր կազմակերպութիւն եւ մարմին. Սահմանադրութենէն յետոյ կազմակերպուած եւ ունեցած է անդամական ցենզ. երեք ամսոյ ընթացքին ունեցած է 200-240 ոսկի անդամական եւ այլ մուտք, իսկ 144 ոսկի ալ գէնքի բացառիկ դրամ ի հաշիւ կազմակերպութեան:

Մեծամասնութիւնով ընդունուեցաւ յանձնախումբի առաջարկը եւ որոշուեցաւ տալ վճուական ձայնի իրաւունք:

3- Մարզուան վկայական ունի, կազմակերպութիւն, նոր անդամական ցենզ՝ լրիւ, դրամական դեռ չէր ճշդուած հաշիւները պատասխանատու մարմինին քով ըլլալուն համար:

Ծանձնաժողովը նկատելով որ ժողովը նախորդ պատգամաւորներու վերաբերմամբ շատ խստապա-

հանջ չէ գտնուած եւ կանոնագրէն թեթեւ շեղումները. աչքի առաջ ունենալով շրջապատող պայմանները կ'առաջարկէ տալ ձայնի իրաւունք, իսկ փոքրամասնութիւնը կ'առաջարկէ Մարզուանի պատգամաւորին տալ խորհրդական ձայն այն պատճառաբանութեամբ որ բոլորովին նոր կազմուած մարմին մըն է եւ դաշնակցական անցեալ չունի:

Թեր ու դէմ վիճաբանութիւններէ վերջ ժողովը որոշեց տալ վճուական ձայնի իրաւունք: Դիտուեցաւ սակայն որ ապագային նոր մարմիններու նկատմամբ աւելի խստապահանջ [պէտք է] ըլլալ:

Վիճաբանութիւններ տեղի ունեցան նաեւ ատենագրութիւններու մասին եւ որոշուեցաւ որ արձանագրութիւնները կարդացուին ժողովին յաջորդ օրն իսկ եւ եթէ գտնուին սրբագրուելիք կէտեր ուղղուին եւ երկրորդ ժողովին մէջ դարձեալ կարդացուին. մեծամասնութիւնով ընդունուեցաւ այս նոր առաջարկը. կարդացուեցաւ 15րդ նիստի ատենագրութիւնը: Դիտել տրուեցաւ որ արձանագրութիւնը չէ կատարուած նախկին որոշումին համաձայն թէ՛ ատենագրութիւնը պէտք է կատարուի հոսանքները գրելով թեր ու դէմ:

Շարունակուեցաւ կիլիկեան տեղեկագիրը:

Վերջերս ինքնաբերաբար սկսել էին զարգանալ արհեստակցական միութիւններ. կ'արժէ յիշել Հաճընի կօշկակարներու միութիւնը օրինակ, որոշած էին ընկերական հողի վրայ մեծ գործարան մը հիմնել, մի բան որ կործանուեց կոտորածների շնորհիւ: Թուրքերու կողմէ հայերուն [նկատմամբ] ունեցած զաղտնի թշնամութիւնը կը շեշտուի երբ վերջերս սահմանադրութենէն յետոյ կը սկսին զինուել: Շեշտել էական հաւասարութիւն. խանդավառ ցոյցերը, ազատ ճառերը եւ հայերուս կողմէ սահմանադրութեան ջերմ ընդունելութիւնը կը նպաստէր քաղաքականապէս թուրքերու ատենագրութեան դէպի հայերը եւ հաստատել կու տար կարծես թէ սահմանադրութիւնը միայն հայերուն համար է եւ մահմետական տարրի գերակշռութիւնը պիտի կորսուէր մօտիկ ապագայի մէջ: Թէեւ յայտնի փաստ չկայ թէ գահընկէց Սուլթանը մասնաւոր հրահանգներով պատրաստել տուած է կիլիկեան աղէտը եւ թէ ստուգուած չէ թէ մասնաւոր մարմին մը սարքուած ըլլայ կոտորածներ ծրագրելու համար, բայց թուրք քիչ շատ գիտակից համարուող անձերը ակնյայտնի կերպով կը փափաքէին հայերու տնտեսական թուլացման. օրերով, գուցէ եւ միանրով ստեղծուած այս մթնոլորտը, Մարտ 31ին ուշակսիտնին գուզընթաց, տեղի տուաւ կատարուած վայրագութիւններուն:

Ընկերը կը շեշտէ մասնաւորաբար թէ կիլիկեան աղէտը կը գերազանցէր 95-98ի կոտորածները. կոտորածը ուղղուած է եղել աչքի ընկնող հայերու դէմ, մասնաւորաբար քաջերու, ունեւորներու, կրթուածներու եւ գեղեցիկներու դէմ:

Չոհերու թիւր 10-12000ի կը հասնի եւ 9/10ը տղամարդ, որոնցից, 1/3ը Հայաստանի ներսերէն գաղթողներ եղած են, իսկ մնացեալ 2/3ը կիլիկեցի:

Ատկէ զատ կոտորածներէ յետոյ սովը եւ մահը մեծ դեր կատարած է: Սովից ու ցրտից մեռնող երախաների թիւր հասած է 3-4000-ի եւ վտանգ կայ որ եկող ձմեռ նոյն բանը կը շարունակուի:

Փոնուզի գոհերուն թիւր 800ի կը հասնէր, այն ինչ կուրից յետոյ սովի պատճառներով մեռան 1000-ից աւելի անձեր. այս տխուր փաստերի հետ միտիթարական կէտ կայ սակայն: Չկայ գիւղ մը, վայր մը որ հայեր ազատուած չըլլան մահմետականներու կողմէ. կրօնքի, դրացիութեան եւ համամարդկային զգացմունքները դեր խաղացած են կոտորածներու ժամանակ:

Ինքնապաշտանութիւնը եւս ինչպէս ամէն տեղ ունեցած է իր օգուտները Կիլիկիայի մէջ:

Կորուստը անշուշտ շատ աւելի մեծ պիտի ըլլար եթէ ինքնապաշտպանութիւն տեղի չունենար:

10-12 քաղաքներ ու գիւղեր յամառ կերպով կուրած են մինչեւ որ կառավարութիւնը միջամտած եւ կամ թշնամին յետ նահանջած է:

Ընկերը յիշում է, Հաճըն, Չոք Մարզուան, Քեսապի, Ֆուրուսի, Շէյխ Մուրատի, Սոսոյ, Կարս [Բագար]ի եւ այլ վայրերու արածները: Դաշնակցական մարմինները, անհատները կատարած են իրենց պարտքը համերաշխօրէն ժողովուրդի միւս խաւերուն հետ:

Ջէյթունը իբրեւ Կիլիկիայի ամենաուժեղ վայրը, ոչ միայն չի ենթարկուել յարձակման այլեւ իր միջամտութեամբ ազատել է շրջակայ հայաբնակ վայրեր՝ Մարաշ, Ալպիսթան, Կէօքսիւն. կուրներու ժամանակ շատ տեղեր թուրքեր դիմած են իրենց սովորական խորամանկութեան, — նախ ժողովել եղած բոլոր գէնքերը, եւ յետոյ կոտորել են. այսպէս պատահած է քանի մը տեղեր: Կոտորածից ոչ պակաս կարեւոր է ժողովրդի տնտեսական քայքայումը: Հայերն թալլելով, ասել է մի քիւրտ, մենք հարստանում էինք նիւթապէս, իսկ կանանց ու երախաներին դարձնելով մահմետական կրկնապատկուում էինք թուով:

Կիլիկիայի հայ ազգաբնակչութեան 1/3 մասը թալանուած է ամբողջովին, միւս 1/3-ը տուժած է կիսով չափ: Ընդհանուր կորուստը 2-3 միլիոն ոսկուց պակաս չէ: Դրա դիմաց հաշուելու է եւ նպաստը. 12000 ոսկի միջազգային յանձնաժողովի կողմէ, 10000էն ոչ պակաս պատրիարքարանի եւ այլ միսիոնարներու [?] օգնութիւնը: Կառավարութեան բաժնած 30000 առաւել 100000-ների դիմաց, հարեւան քրիստոնեայ ազգերը թէեւ առաջին անգամ վախցած են բայց յետոյ ցոյց տուած են մասնաւոր մարդավարութիւն, մանաւանդ եւրոպացիները:

Կիլիկիայի հայութեան կրած արիւնոտ վէրքերի բուժումը կախուած է արդարութեան գործադրութիւնից:

խոշոր յանցաւորները կրելիք օրինակելի պատիժը, բոլոր վնասների հատուցումը եւ որբերու, ալքիմիկներու ապահովելը եւ այն էլ վնասողների հաւաքական պատասխանատուութիւնը միակ միջոցն է ապահովելու համար) հայութիւնը ապագայ անակնկալներու դէմ:

Ընկեր Մարտիրոս կը հարցնէ թէ Եւրոպայի մէջ տարածաշուկայային թէ յանցանքը կը ծանրանար հայերուն վրայ: Թէ հայերն էին միակ պատճառը կոտորածներուն:

Ընկեր տեղեկաբերը պատասխանեց: Այդ մեղադրանքը բխած է երկու աղբիւրներէ. մին բողոքական միսիոնարների, երկրորդը իթիւհատականների, սակայն երկուքն ալ հնարովի են եւ մեր կուսակցութիւնը ոչ մի պատճառ տուած չէ ընդհարումներուն:

Ընկեր Մուրատ կը խօսի թուրք տարրի տրամադրութեան մասին եւ կը շեշտէ ինքնապաշտպանութեան օգուտները:

Ընկեր Ռոստոմ սկսաւ իր գեկուցումը Պարսկաստանի մասին:

Պարսկաստանը կազմակերպուած տէրութիւն չէր մինչեւ վերջին ժամանակ. ամէն ինչ անուանական կերպով ամփոփուած էր Շահի անձնաւորութեան մէջ. խաները մի քանի վայրերում պահել էին իրենց աւատական բոլոր իրաւունքները: Օրէնքները բացակայում էին. յատուկ պետական գանձարան չունէր. Փոնկսիոնները չէին բաժնուած. միեւնոյն պաշտօնեան բարձր թէ ստորին եւ օրէնսդիր էր, եւ դատաւոր էր եւ կառավարող. Շահի կողմից նշանակուած պաշտօնեաների հետ միասին դատում, պատժում էին միւլտիպլիները եւ այլ դիրք ունեցող հասարակական դէմքեր. պաշտօնեաներին ռոճիկ չէր տրուում, ընդհակառակը ամէն մի պաշտօնեայ յատուկ տուրք էր վճարում իր մեծին պաշտօնը ձեռք բերելու համար: Կաշառքը օրինական հիմք ունէր Պարսկաստանում. իրաւակարգի, առ հասարակ կարգերի կատարեալ բացակայութեան պատճառով (չէրիսթը ինքը մեկնաբանում եւ գործադրում էր տեղի, ժամանակի եւ այլ հանգամանքների համաձայն). ժողովուրդը չէր սովորել որոշ հասարակական կրթութեան, տիսիպլինի:

Այս բոլորն էր պատճառը որ յեղափոխութեան շրջանում եւ Սահմանադրութիւնը հռչակուած օրերում նոր կարգերը չէին հաստատուում, հասարակական ֆունկցիաները չէին բաժանուում եւ կազմակերպուած կոլլեկտիւ աշխատութիւնները չափազանց մեծ դժուարութիւնների էին հանդիպում:

Մօտաւորապէս այս դրութեան մէջ էր Տաճկաստանը XIX դարու սկզբում, բայց շնորհիւ այն հանգամանքի որ Ռուսաստանը Փոքր Ասիայի վրայով, կամ Բոսֆորը տիրելով էր ձգտում հասնիլ ծովին, եւրոպական պետութիւնները, մասնաւորապէս Անգլիան առանձին հոգ պիտի տանէին Պարսկաստանը՝ ուժեղացնելով իբրեւ պատնէշ պահել նրան Ռուսաստանի յառաջխաղացութեան հանդէպ:

Պարսկաստանը իբրեւ ճանապարհ չէր նկատուում. նրա տերիտորիայի ամբողջութիւնը ապահովուած էր համարուում. դրանով գլխաւորապէս պէտք է բացատրել Պարսկ(աստանի) թմրութիւնը, ինչպէս նաեւ այն հանգամանքը որ նա անկատելի կերպով ընկնում էր օտար պետութիւնների խնամակալութեան տակ:

Սակայն վերջին տասնեակ տարիներում արթնացման նշաններ նկատուում են: Ազդում էին Տաճկաստանի եւ Ռուսաստանի յեղափոխական շարժումները (բացի այն որ Ատրպատականի թուրքերը ականատես էին Դաշնակցութեան գործունէութեան, Երիտասարդ թուրքերի հրատարակութիւնները, որ ուղարկում էինք Պարսկաստանի վրայով Վասպուրական, ցրուում էին մեծ քանակութեամբ թաւրիզում, Սալմաստում եւ այլ վայրերում): Բաբիների շարժումները աւելի որոշ քաղաքական գոյն են ստանում. Ֆրան-մասոնների օթեակները վերածուում են յեղափոխական խմբերի: Միրզա Մելքոն խանի եւ Մոստէշար Դովլէի առաջարկած ռեֆորմները ուղարկութեան լուրջ առարկայ են դառնում. Հնդկաստանում հրատարակուող Հաբիթու Մաթէն Պարսկաստանի վերածնութեան գաղափարն է արծարծում. ժողովրդի մէջ սկսում են կռիւներ, ուղղուած, թէեւ անգիտակցաբար, տիրող կարգերի դէմ:

Այդ կռիւներով նա կրթուած էր ապագայ մեծ շարժման համար: Ամենանշանաւորն էր ռէփի (ծխախոտ) մենավաճառման դէմ ժողովրդեան կռիւը հոգեւորականութեան ղեկավարութեամբ, որ վերջացաւ յաղթանակով: Այն կարծիքը թէ դա կղերականութեան յաղթանակն էր՝ սխալ էր: Յետագայ դէպքերը ցոյց տուին որ ժողովուրդը աւելի բուռն թափով յարձակուում էր կալուածատէր մուլտիպլիներու վրայ:

Հիմնայատակ անելով նրանց տները եւ թալանի տալով ցորենի ամբարները. դա յայտնի «Տաքի կռիւներ» էին, որ կրկնուած էին պարբերաբար գլխաւորապէս Թաւրիզում:

Իրանի քաղաքական արթնացման գործը աւելի ուժով առաջ գնաց Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան մէջ առաջ եկած փոփոխութեան հետեւանօք պարտութիւն կրելով Տաճկաստանի խնդրում, յոյսը կտրելով միաժամանակ Փոքր Ասիայից ու Բոսֆորից եւ դրանից յետոյ ջախջախելով Մանչուրիայում, Ռուսաստանը կամայ ակամայ աչքերը պիտի դարձնէր նորից Մերձակայ Արեւելքի վրայ, «չսառուղ» ծովի հասնելու համար եւ մասնաւոր ուղարկութեան առնէր Պարսկաստանը: Ոչ միայն իբրեւ շուկայ այլ իբրեւ ճանապարհ, նա ստիպուած էր գործել ոչ միակ այլ Անգլիայի հետ համաձայնութեամբ: Երկու պետութիւններն էլ հաւասարապէս շահագրգռուած էին Գերմանիայի առաջնութեան առաջն առնելու գործին մէջ: Սակայն իւրաքանչիւրը, հակառակ կայացած համաձայնութեան, յատուկ ընթացք էր բռնում իրանի հանդէպ:

Ռուսաստանը ձգտում էր երկիրը պահել միապետական ռեֆորմի տակ. մի հանգամանք որ, ինչպէս կը տեսնենք, նպաստաւոր էր ի միջի այլոց նաեւ տնտեսական նուաճման տեսակէտից. — կամ թէ անիշխանական դրութեան մէջ. մինչդեռ Անգլիան աշխատում էր իրանում հաստատել տալ սահմանադրական կարգեր, խանգարելու նպատակաւ Ռուսաստանի քաղաքական եւ տնտեսական նուաճումներին: Իսկապէս Ռուսաստանը կատարել էր այդ ուղղութեամբ խոշոր բաներ:

Յիշենք խճուղիների, Փոնկսիոնների, բանկերի հաստատումը, Մուկաֆարէդդին Շահին արած փոխառութիւնները (2 անգամ) եւ որ գլխաւորն է, պայման չկենքել ապագայում ոչ մի փոխառութեան առանց ռուս կառավարութեան համաձայնութեան: Միապետական ռեֆորմի շարունակութիւնը հնարաւորութիւն կը տար Ռուսաստանին դիւրութեամբ առաջ տանել իր նուաճումները:

Այս արտաքին վտանգի գերակայութիւնն էր որ առաւելապէս ցնցեց պարսիկ հասարակութիւնը: Վերածնութեան խնդիրը դրուեց: Շարժումը նշանակալից է նրանով, որ կրօնական հողից հեռանում էր եւ ձգտում էր կանգնել ազգային տեսակէտի վրայ:

Շարժումը իրանի ժողովրդինն էր եւ ոչ տիրապետող կրօնի՝ շիիզմի: Նրա մէջն էին հրաւիրում նախ եւ առաջ Հին զրադաշտական Փարսերը (գեաբըները), հայերը, սիւննիները, եւ այլն:

Պարսկաստանի շարժումները կարելի է բաժանել մի քանի ֆազերի:

Ա- Ցագան հասնում է մինչեւ սահմանադրութեան հռչակումը Մուկաֆֆերէդդինի օրով:

Նրա մահից յետոյ սկսւում է երկրորդ ֆազան: Մուհամէտ Ալի Շահը երդուում է պահպանել եւ գործադրել սահմանադրութիւնը: Բայց դէպի նրա անձնաւորութիւնը վստահութիւն չկար ա) նա համարում էր գործիք ռուս կառավարութեան) ձեռքին. բ) իր բնաւորութեամբ վարկաբեկում էր ժողովրդի աչքում: Հէնց նրա առաջին քայլերը կասկածները սանձահարել [էին]: Երր-ջապատը ռուս կառավարութեան ազնտներն էին: Հրաւիրեց իբրեւ Սատրապամ՝ Աթաբեկը, որ յայտնի կողմնակից էր ռուս քաղաքականութեան: Աթաբեկը ընկաւ տեւորիստների ձեռքով 907 թուին: Դեկտեմբերին փորձեց տապալել Մէջլիսը. նա ստիպեց[?] խոշոր ընդդիմադրութեան. գործում էին շահի դէմ նաեւ Չելլի Սուլթանին ազնտները: Ընդհանրապէս ատելութիւն կար դէպի Ղաջարեան հարստութիւնը, որովհետեւ սրանց տիրապետութեանը տակ Պարսկաստանը յե-

տադիմել [էր]: Ռաշտը եւ Թաւրիզը ըմբոստացան, սպառնալով չճանաչել շահին եւ իրենց համար առանձին կառավարութիւն ստեղծել, իսկ ամենագլխաւորը Նաջաթի 3 մուշտէյիտների բողոքը եւ նգովքն էր. նրանք բարոյական մեծ հեղինակութիւն են ամբողջ շիա ազգաբնակչութեան աչքում: Շահը պարտութիւն կրեց եւ յետ նահանջեց: Նորից երդուեց հաւատարիմ մնալ սահմանադրութեան: Բայց միաժամանակ ձեռնարկեց սեւ հարկերակային գործողութիւններ, որոնք աւելի զրգռեցին ժողովուրդը Շահի դէմ: Այդ շրջանում Շահը կողմնակիցներ գտաւ խաների եւ հոգեւորականների որոշ շրջաններում, որոնք ժամանակ ունեցան հաշիւ տալու իրենց եւ հասկնալու, որ նոր ռեֆորմ այնքան էլ ձեռնտու չէ իրենց առանձնաշնորհեալ դրութեան:

Գիւղացիները հարկ չէին վճարում, տուրքերը չէին գանձուում. երկիրը ընկաւ անել վիճակի մէջ մանր մուկը աւատապետների երեւալով:

Սրան աւելացաւ այն որ Մէջլիսը ցոյց տուեց իր անկախութիւնը, անպատրաստականութիւնը երկիրը կառավարելու, կարգ ու կանոն մտցնելու: Նոյնը եւ տեղական անջուամանները՝ իրենց մէջ ուղեցին ամփոփել բոլոր Փոնկսիոնները՝ օրէնսդիր, վարչական: Առաջինը փոխարինեց Շահին, վերջինները՝ նահանգապետներին: Շահը մնաց մի կողմ: Մինիստրները անուանական էին: Մէջլիսը հնադարեան աք-սաքթայները՝ ժողով էր աւելի: Բացի այդ՝ Մէջլիսի ազդեցիկ անդամներից ոմանք նոյնպէս սկսեցին կաշառք առնել եւ հարստանալ, ինչպէս նախկին պաշտօնեաները: Աչքի էր ընկնում Սայիտ Ապտալլան: Ինտելիգենտ փոքրամասնութեան ջանքերը գրեթէ ապարդիւն էին անցնում. պէտք է նկատել որ այդ Մէջլիսում բաւական տեղ էին բռնում հոգեւորականները:

Գուցէ փոքրամասնութիւնը յաջողէր հետգհետէ կարգի գցել գործերը, կնքել փոխառութիւն՝ վստահութիւն ձեռք բերելով, եթէ մի քանի դէպքեր վրայ չհասնէին: Չելլի Սուլթանը շարունակում էր իր էնտրիկները. պատրաստուեց մահափորձ Շահի դէմ, որ անյաջող անցաւ: Ռուսաստանը օգտուեց դրանից եւ համոզեց Շահին ցրուել Մէջլիսը:

Մէջլիսը ցրուեց. չէնքը ռմբակոծուեց: Միապետութիւնը վերականգնեց:

Դրանից յետոյ սկսւում է երրորդ ֆազան: Ժողովը գոցուեցաւ սովորական ժամուկ:

Քարտուղար՝ Նախագահ՝

Միջլիսի անդամներ *Քարտուղար*
ՀԱՅԿ ԲԱԹԱԲԱՆԵԱՆ ՌՈՒԲԷՆ

20.- Գաղտնի յեղափոխական կոմիտեներ, ակումբներ:
21.- Սպիտակ մօրուսաւորներու, այսինքն՝ ծերուհիներու:

**Նիստ ԻԱ. 1909 Օգոստոս 25.
Երեկոյեան ժամը 4-ին**

Ներկայ են 24 ընկերներ:
Նախագահում է Ռուբէնը:
Օրակարգ.— շարունակութիւն
Զեկուցում Դաշնակցութեան Պարսկաստանի ապա-
գայ գործունէութեան մասին:

Կարգացուցին եւ սրբագրուելով վաւերացուցին
ԺԱ., ԺԲ., ԺԳ. եւ ԺԴ. նիստերի արձանագրութիւննե-
րը:

ԺԱ. նիստի արձանագրութեան մէջ նկատուելով
ընդհանուր բացասական վերաբերմունքի արտայայ-
տութիւն Եւրոպայի Հ. Յ. Դաշնակցութեան ուսանող-
ութեան նկատմամբ, ի բացակայութեան իրենց ներ-
կայացուցիչ պատգամաւորի, հարկ տեսնուեց մի քանի
բացատրութիւններ լսել պատգամաւորէն, ի գիտու-
թիւն միայն: Ուսանող ընկերը տուաւ հետեւեալ բա-
ցատրութիւնները:

1- Կովկաս ընկերներ ուղարկելու կոչին ուսանողու-
թիւնը գործնական արձագանգ չէ տուել, նախ փորձը-
լած ընկերներ չունենալու եւ երկրորդ տրամադրելի 3-
4 ընկերներ, արդէն առանց այն էլ գնալու էին, այնպէս
որ աւելորդ է համարուած յիշել, որ այդպիսիները ար-
ձագանգ կը հանդիսանան եղած կոչին: 2- Ուսանողու-
թիւնը իր համագումարում պարտադիր որոշում է տը-
լած աշխատակցելու կուսակցական թերթերին. այդ
գործնականացուել է եղած դրական ուժերի չափով:
«Հայրենիք»ին աշխատակցել յանձնարարուել է ընկեր-
ներին, երբ իմացուել է, որ նրա հրատարակութիւնը կը
շարունակուի: Վերջին կիսամեակին ուսանողութեան
դրական ուժերը կլանուած են եղել «Ուսանող» օրգա-
նով, որի վրայ ուսանողութիւնը նայում է իբր օգտա-
կար գործ կուսակցական պրոպականդայի եւ մտքերի
պարզաբանութեան տեսակէտից: 3- Դրամական անդա-
մական պարտաւորութիւնները ուսանողներ կատարել
են, իրենց ստացածի 2 առ հարիւրը վճարելով: գոյացել
է 7-800 մարկ, որը գործադրուել է թերթի եւ համագու-
մարների ճանապարհածախսերին: Այդ համագումար-
ները ուսանողների շարքերի խտացման եւ գիտակցու-
թեան նպաստել են մեծ չափով: 4- Ընդհանուր ժողովին
դրկելիք պատգամաւորի ծախսի մասին Արեւմտեան
Բիւրոյի ներկայացուցչին դիմում եղած է մի՛ միայն ան-
հատապէս, որի համար դիմողը նոյնիսկ յանդիմանուել
է ընկերներին:

Այս բացատրութիւններինց յետոյ ժողովը անցաւ
օրակարգին, լսելով ընկ. Ռոստոմի գեկուցման շարու-
նակութիւնը:

Զեկուցում.— Յրդ. Փագա.— Սաթթար խանի ըմբոս-
տացումը.— Թաւրիզ 2 մասի բաժնուած, միապետական
եւ սահմանադրական թաղերու. Դաւաչի թաղի անձնա-

տուր լինելը: Սալմաստը, Խոյը, Ուրմիան եւ Մարանդը
սահմանադրական. միապետականների կազմակերպը-
ւելը: Սամատ խանը Մարաղի կողմից, Ղարադաղի Ռա-
հիմ խանը Անլիի կողմից, էյին-Դովլէն Վասփինջից:
Թաւրիզի պաշարումը.— Մակուայ խաները Խոյի վրայ-
կուրների վրայ կանգ չի առնուած տեղեկագրի մէջ՝
մանրամասնութիւններով լինելու համար: Այս ֆագան
փակուած է ուսու գորքերի Թաւրիզ մտնելով: Կ'անցնի
դրութեան ընդհանուր գծերին:

Թաւրիզում եւ ուրիշ տեղերում գոյութիւն ունէին
անջուլմաններ²⁰, հրամանատարներ, կառավարիչներ,
գինուորական շտաբներ, մոբիլիզացիոններ եւ այլն:
Կար Թաւրիզում նաեւ մուջախը անջուլման (յեղափո-
խականներին): Չնայած սրան ֆունկցիաները չէին բաժ-
նուած եւ չկար սխտեմ: Մարմինները, նաեւ անհատ դե-
կավարները յաճախ խառնուած էին ոչ իրանց վերաբեր-
եալ գործերի մէջ: Բացի յայտնի մարմիններից, ունէին
եւ գաղտնի կոմիտէներ, որոնք ձգտում էին մարդիկ ու-
նենալ այլ եւ այլ տեղեր իրենց որոշումները առաջ տա-
նելու համար. դա պարսից սիրած մեթոտն է: Սաթթար
խանի եւ Բաղըր խանի մօտ կային նոյնպէս «խորհրդա-
կաններ», որոնք լաւ հոգեբաններ են եւ կարողանում
են ճարտիկ կերպով ասել եւ անել նրանց այն ինչ որ ու-
զում են. գաղտնի կոմիտէներից կարելի է յիշել «Իշթի-
մայուն ամըլուն թարակկի խահան» Խորալիլուն ամը-
լուն եւ մի շարք անանուն խմբակցութիւններ եւ ան-
հատներ:

Գործավարութեան մէջ կանոնաւորութիւն մտցնե-
լու բազմաթիւ փորձեր գրեթէ ապարդիւն անցան, աւե-
լի յաջող էր Թաղի գաղէն, որը կարողացաւ որոշ կանո-
նաւորութիւն մտցնել անջուլմանում. բայց Օթաղը նի-
զահում (գինուորական շտաբ), ուր մտնում էին Սաթ-
թար խան, Բաղըր խան, Իսմայէլ եւ ուրիշներ, Հաճի Ա-
լի աղան երկու սոցիալ դեմոկրատների հետ միասին,
երկու դաշնակցականներ եւ ուրիշներ, փորձը վերջա-
ցաւ ընդհարումով նրա եւ Սաթթար խանի միջեւ, որից
յետոյ շտաբը լուծուեց: Նիստերը անկայուն էին լինում.
մտնում էին շարունակ կողմնակի անձինք, նախկինից
շարունակ չեղում էին եւ այլն. գործի կանոնաւորու-
թեան մեծ չափով խանգարում էր Սաթթար խանի եւ
Բաղըր խանի հակառակութիւնը, մի բան, որ եղաւ
յարձակումների այնպիսի թեւաւորման ամենամեծ պատճա-
րը: Ոչ մի ծրագիր չէր յաջողում այդ հակառակու-
թեան պատճառով: Ներքին բարոյական կապը թոյլ էր
առհասարակ պարսիկ ղեկավարների միջեւ: Փոխա-
դարձ վստահութիւնը յաճախ պակասում էր: Բանակը
բազմաթիւ էր: Հրացանակիրների թիւը մօտ 15000.
բայց կանոնաւոր կազմակերպութիւն չկար. աւելի լաւ
կազմակերպուած էին Բաղըր խանի մարդիկ. մար-
զանքներ չէին կատարում: Երջանապետներից եւ խրմ-
բապետներից շատերը կասկածուած էին որպէս շահա-

սէրներ: Չէին պահում այնքան հոգի, որքանի համար
շաբաթական էին վերցնում: Բանակի մէջ մեծ թուով
մտել էին ապրուստի միջոցներից զրկուած արհեստա-
ւորներ, խանութպաններ, բանուորներ, որոնք գէնքի
գործ անելու մէջ հմտութիւն չունէին: Նրանց գրաւում
էր 2 դրան օրականը (մօտ 40 կ. — 1 ֆր.): Լաւ կռուող-
ները սրանց հետ խառնուած լինելով առանձին ար-
դիւնք չէին կարողանում տալ. շուտ ենթակայ էին լի-
նում պանիկայի:

Մեր առաջարկը, մեր տղաներին յանձնել մարզելու
գործը, չընդունուեց, մեր դէմ յարուցած կասկածների
պատճառով: Նոյն առաջարկը արեց ամերիկացի Բաս-
կուելը, բողոքականաց դպրոցի ուսուցիչներից մէկը.
բաւական դժուարութիւններից յետոյ նրան յանձնուեց
կիսաինտելիգենտների մի խումբ: Յետոյ միայն Հէօք-
մաքստի կռուից առաջացած ոգեւորութեան շրջանում
մարզանքը լայն չափեր ընդունեց: Զիւալուների հետ
պարապում էր Բասկուելը, իսկ հետեւակների հետ անգ-
լիական մի թերթի թղթակից Մօրը: Փաստը ցոյց տուեց,
որ մարզանքները բոլորովին աւելորդ էին: Վճռողական
կռուի ժամանակ, ինչպէս գուշակում էր Բաղըր խանը,
կռուողներ ցրուեցին հին ձեւով եւ Բասկուելը զոհ գը-
նաց իր իլիուզիաներին: Զէնք գտնուում էր մեծ քանա-
կութեամբ: Բացի կառավարական վերնդեմքերից, կա-
յին մեծ թուով մոսիւններ, մաուզէրներ եւ այլն: Բայց
դժբախտաբար գործածութիւնը անբաւարար էր: Փամ-
փուշտները միշտ խնդրի առարկայ էին լինում: Կռու-
ողները շարունակ գանգատուում էին, թէ քիչ փամ-
փուշտ է տրուում կռուի ժամանակ եւ դրանով էին ար-
դարացնում իրենց նահանջը. իսկ ղեկավարները նրանց
մեղադրում էին փամփուշտ գողանալու եւ ծախելու
մէջ: Ամէնից լաւ գինուած էին մեր տղաները. իւրաքան-
չիւրը կրում էր բացի մոսիւնից եւ տասնոց ատրճանակ:
Փամփուշտի կողմից մերոնք շատ էին նեղուում: Երկիւղ
կրելով, որ մերոնք ապագայում կարող են առանց
փամփուշտի մնալ, Քեռին արգիլում էր արձակելը կամ
քիչ մարդ էր վերցնում կռիւ գնալիս:

Թնդանօթ ունէին մօտ 30 հատ: Մեծ մասը հին սիս-
տեմի: Աւելի գործ էին տեսնում 3 փոքրիկ լեռնային
թնդանօթները, կապսիւլաւորները: Խոշորները չունէին
ուղմբեր: Ընդհանրապէս թնդանօթից օգտուել չէին
կարողանում: Թէ մեր եւ թէ եւրոպացի ինստրուկտոր-
ների ջանքերը թնդանօթները նպատակին ծառայեցնե-
լու՝ ապարդիւն անցան: Գլխաւոր պատճառը մեծ վախն
էր, թէ չլինի թէ թնդանօթը առաջ տանելիս թշնամու
ձեւը ընկնի: Կռուի ձեւերը նախնական էին: Պատի
տակից դուրս գալ ընդհանրապէս չէին սիրում երկու
կողմից էլ, թէ միապետականները եւ թէ սահմանադրա-
կանները: Միապետական բանակը՝ բաղկացած քրտե-
րից, լեռնականներից աւելի առաւելութիւններ ունէին
դրսի կռիւներում, ուր սահմանադրականները չէին դի-

մանում: Աւելի դա նկատելի էր Մարանդի-Ջուլֆի ճա-
նապարհի վրայի տեղի ունեցած կռիւներում: Միապե-
տականների համեմատական քաջութեան պատճառնե-
րից մէկն էլ թալանի իրաւունքն էր, որ նրանց տրուած
էր: Սահմանադրականները կռուի ժամանակ ունեցած
էին անգէնների մեծ ամբոխ, որի պարտականութիւնն
էր «Եա Ալի» կոչումներով քաջաբերել իրենց եւ ահաբե-
կել հակառակորդներին: Հնադարեան այս մեթոտը չէր
վերանում, հակառակ նրա ցոյց տուած ակնյայտնի
վնասներին: Կռուի ծրագիրներ չէին մշակուած եւ երբ
կազմում էին չէին գործադրում: Առաջին այնպիսի
դրութիւնը վնասում էր առաջ բերում, իսկ յաջողու-
թիւնը մեծ ոգեւորութիւն: Սաթթար խանը, որ ոգեւո-
րելու մեծ ընդունակութիւն ունի, չէր վարանում դուրս
գալ փոքրիկ խմբով եւ փոքրիկ յաջողութիւնով քաշել
իր յետեւից կռուողների ահագին բանակ: Կռիւները
տանում էին à la²²:

Այս բոլորից պարզ է, որ Թաւրիզում միայն պաշտ-
պանողական տակտիքի կարելի էր հետեւել, ինչպէս նա-
եւ Խոյում, որ նոյնպէս պաշարուած էր եւ դրսի հաղոր-
դակցութիւնից կտրուած: Կռուով պաշարումը վերաց-
նելու յոյս չկար: Միեւնոյն ժամանակ թշնամի կողմն էլ,
յոյսը կտրելով գէնքի ուժով քաղաքը մտնելուց, կանգ
էր առել պաշարման տակտիքի վրայ, որպէսզի ստիպի
քաղաքը անձնատուր լինի սովից:

Սովը վրայ հասաւ եւ զգալի կերպով. մանրամաս-
նութիւնների վրայ կանգ չեմ առնում: Մեզ պահում էր
այն յոյսը, որ Ռաշտը կամ Սպահանը շարժուեն եւ Թեհ-
րանը խառնելով մեզ ազատեն պաշարման դրութիւնից:
Թաւրիզի թուրք ազգաբնակչութիւնը ցոյց տուեց օրի-
նակելի դիմացկունութիւն:

Դրսից եկած ուժերն էին.

1- Կովկասից — թուրք յեղափոխականները: Սկզբնե-
րում սրանք մատուցել էին մեծ ծառայութիւն. միջին
թուով եղել են մօտ 100 հոգի: Բայց յետոյ մի մասը ըզ-
բաղուել է թալանով եւ դրա պատճառով ստեղծուել էր
անտագոնիզմ²³ դրսեցի թուրք յեղափոխականների եւ
ներսեցիների միջեւ: Բանը հասաւ նոյնիսկ արիւնահեղ
ընդհարման, որի առաջը բարեբախտաբար շուտով
աւելուեց:

2- Վրացիներ — Սոցիալ դեմոկրատներ անունով եկել
էին մօտ 50 հոգի. մի մասը սպանուեց, միւս մասը վերա-
դարձաւ Կովկաս: Վերջերում մնացել էին մօտ 10 հոգի
Թաւրիզի առաջին կռիւներում, երբ դեռ Դաւաչին
անձնատուր չէր եղել. նրանք ուղմբերով լաւ գործ էին

22.- Ուսերտն անընթեռնելի բառ:
23.- Գալառակութիւն, թշնամական հակադրեցութիւն:

տեսել: Սուկաք-նիզամի դժոխսյին մեքենան նրանց պատրաստածն էր: Հրացանով կռուողներ քիչ կային մէջները: Խոյուժ եղել էին 2-3 հոգի, իսկ Սարհատի խմբում՝ մեծ թուով. նրանց ներկայութիւնը բարոյական մեծ նշանակութիւն է ունեցել:

3- Դաշնակցականները, առաջին կռուում եղել են մօտ 10 հոգի, Քեռին հասաւ մօտ 20 հոգով: Ուրմիայում, Սալմաստում, Խոյուժ կային մօտ 50 հոգի դրսեցիներ. Սալմաստ կամաւորների թիւը հասնում էր 120-140ի, Սարհատի խմբում 45 հոգի: Սկզբում դէպի դաշնակցականները լաւ չէին վերաբերուում: Պատճառ՝ հայ-թրքական ընդհարումները կովկասում եւ սոց. դեմոկրատներին բարդած մեղադրանքները մեր վրայ իբրեւ նեղ ազգայնականներին բացի այդ հրահանգ էր տրուած թիֆլիսի թուրք կոմիտէից, գգուշանալ դաշնակցականներին եւ սանձը նրանց ձեռքը չտալ: Սակայն հետզհետէ անվստահութիւնը վերացաւ, եւ նոյնիսկ չէին քաշուում հրապարակաւ արտայայտուելուց:— (պակաս կայ)²⁴

Այս բոլորից յետոյ պիտի սանկցիա տալ²⁵ մեր Պարսկաստանի գործունէութեան, յայտարարելով՝ Դաշնակցութիւնը Պարսկաստանի մէջ եւս յեղափոխական կուսակցութիւն: այդ համապատասխան է եւ տեղի դաշնակցական ուժերի կարողութեան: Դրանից յետոյ պիտի ջանալ ուղղութիւն տալ բոլոր դեմոկրատիկ տարրերին, սահմանադրութիւնն ապահովելու եւ դրսից թէ ներսից ռուսական ոտնձգութիւնները խանգարելու համար:

Զեկուցումը վերջացաւ եւ նախագահի յայտարարութեամբ այս նիստին կարելի էր միայն հարցեր տալ, քըննադատութիւնները եւ բանաձեւերը յաջորդ նիստին թողնելով:

Հարց տրուեց, թէ ընդհանրապէս ի՞նչ փոփոխութիւններ են նկատուած Պարսկաստանում եւ ինչի՞ց կը բխի դէպի Դաշնակցութիւնը եղած ներկայ լաւ վերաբերմունքը:

Ընկեր զեկուցողը պատասխանեց, որ աւատականութիւնը սկսում է արագ քայքայուել, եւ գիւղացիութիւնը տեղ տեղ հրաժարուում է որոշ պարտաւորութիւններին դէպի կայունածատէրերը եւ բողոքում է որոշ հարկերի դէմ: Հոգեւորականութիւնը իր ազդեցութիւնը կորսնցուցել է, դէպի հայեր ստեղծուել է լաւ վերաբերմունք, մասամբ համոզուած լինելով, որ հայերը առանձին քաղաքական ձգտումներ չունեն: Կովկասացիներ, որ միշտ կասկածոտ են եղած դէպի Դաշնակցութիւնը, վստահացած հեռացան: Իսկ դէպի Դաշնակցութիւնը եղած ներկայ լաւ վերաբերմունքը մեծ մասամբ կը բխի օրուայ տրամադրութիւնից, որ մենք իրենց աջակից եղանք հնարաւոր միջոցներով, առանց նկատումների, եւ եթէ մենք շարունակենք մեր աջակցութիւնը միշտ այդ տրամադրութեան մէջ պիտի մնան,

քանի որ մեզ պէտք ունեն, հէնց թէկուզ մեր անկեղծութեան համար:

Նիստը փակուեց ժամը 7.30ին:

Քարտուղար՝ ՎԱՆԻԿ Նախագահ՝ ՌՈՒԲԷՆ

Նիստ ԻԲ. Օգոստոս 26 (Առաւօտ)

Ժողովը բացուեցաւ նախագահութեամբ ընկեր Անտոնի. մասնակցող ընկերներէն ներկայ 23:

Ժողովն օրակարգ ունենալով Պարսկաստանի շարժումներու վերաբերմամբ ճշդել Դաշնակցութեան դիրքն ու մասնակցութեան եղանակը, քննութեան եւ վիճաբանութեան ենթարկեց զեկուցանող յանձնախումբի եզրակացութիւնը, որուն մօտեցան ժողովականները տարբեր հայեցակէտներով ու պատճառաբանութիւններով, յանգելով սակայն երկու որոշ եզրակացութիւններու.— 1- Չմասնակցիլ իբրեւ կուսակցութիւն՝ ազատ ձգելով որ տեղւոյն ընկերները մասնակցին իբրեւ քաղաքացիներ՝ մեր ծրագրի թելադրած ոգիով. 2- Իբրեւ կուսակցութիւն ունենալ աքթիւ մասնակցութիւն եւ հրապարակ գալ ազգային ուրոյն պահանջներով:

Առաջին տեսակէտի իբրեւ պատճառաբանութիւն մէջբերուեցան հետեւեալ կէտերը.—

Քաղաքական աշխարհի հետեւելիք ուղղութեան վրայ որոշ եւ դրական կարծիք յայտնել անկարելի է. հետեւաբար երկրին բախտը չենք կրնար վճռել այս կամ այն պետութեան ցանկութիւններու կամ դիտաւորութիւններու համաձայն: Մեր ընկերներու [դերը] Պարսկաստանի յեղափոխութեան գործին մէջ թեթեւ բան մըն է, քանի որ երկրին վաճառականութիւնը, արհեստները պարսիկ ժողովուրդին ձեռքն է եւ հայութիւնը հոն կը կատարէ²⁶ շատ աննշան թիւ մը՝ այն ալ ցրուած ամբողջ երկրին մէջ. միակ հայաշատ կեդրոնը Սալմաստն է, ուր հագիւ փոքրաթիւ հայութիւն մը կ'ապրի եւ այդ փոքրաթիւ հայութիւնը իր ուժերը ցրուելէ եւ դասակարգային տեսակէտներու վրայ կանգնելէ աւելի պէտք ունի ինքնամփոփուելու եւ կենալու ազգային գոյութեան պահպանման հողի վրայ: Մեր ընկերներու ունեցած գործունէութիւնը Պարսկաստանի մէջ բաւականաչափ գրաւական չէ, որ մենք իբրեւ կուսակցութիւն հրապարակ գանք աքթիւ գործերով եւ ուրոյն պահանջներով: Պէտք է ցոյց տալ գործունէութեան որոշ հիմք:

պատմական անցեալն ու 70000 ցրուած բնակչութեան մը գոյութիւնը նոյնպէս իրաւունք չի տար մեզ այդ ուղղութեամբ գործելու. վաղը երբ Պուլկարիա եւ Ամերիկայի մեր գաղութներն ալ նմանօրինակ դեր մը խաղան ռէակցիայի պահուն՝ միթէ՞՞ այդ բանը մեզ իրաւունք կու տար նման միջամուտ պահանջներ գծել. ինչպէս Ամերիկայի եւ Պուլկարիոյ, նոյնպէս եւ Պարսկաստանի վերաբերմամբ մէկ բան միայն կրնանք ընել.— այն է՝ իբրեւ քաղաքացի մասնակցիլ այն խնդիրներուն, որոնց միջամտութիւնը իրենց պարտականութիւնն է, ինչպէս նաեւ Դաշնակցութեան ծրագրի ցուցմունքներով ղեկավարուիլը՝ նոյն տեղի կուսակցական ընկերներու պարտականութիւնը: Պարսկաստանի գործունէութիւնն ալ իր տպաւորութեամբն ու յաջորդող ոգեւորութեամբն այն է՝ ինչ որ տեսանք Թուրքիոյ մէջ. բայց պարսիկ ժողովուրդի ցոյց տուած օրինակները յուսադրիչ եւ վստահելի չեն եւ գուցէ ան ալ վաղը վարուի այնպէս՝ ինչպէս պատահեցաւ Թուրքիոյ մէջ: Կուսակցութեան ուշադրութիւնը պէտք է լարուած լլլայ Թուրքիոյ եւ Կովկասի հայութեան վրայ: Կովկասի Դաշնակցութիւնն ու Թուրքիոյ Դաշնակցութիւնը բխած են ժողովուրդի ծոցէն, մինչ Դաշնակցութիւնը Պարսկաստանի մէջ յաջողեցաւ արտաքին ընկերներու աջակցութեամբ: Դաշնակցութիւնը ղնելով իր պահանջները՝ յառաջիկային հարկադրուած պիտի լլլայ կռիւ մղել յանուն այդ պահանջներու իրագործման, ինչ որ հակամարտութիւններու առիթ պիտի տայ. իբրեւ յեղափոխական կուսակցութիւն՝ երբ գործ ունինք Թուրքիոյ մէջ, պէտք է լեկալ պահենք մեր ոտքին հողը՝ Պարսկաստանի եւ Թուրքիոյ մէջ՝ ուր բռնկումներ կը սպասեն՝ մեր կուսակցութեան ուժը չի թոյլատրեր նոյնպէս աքթիւ մասնակցութիւն ունենալու պարսկական շարժման մէջ եւ ներկայանալ իբրեւ կուսակցութիւն եւ կուսակցական սեփական պահանջներով:

Երկրորդ տեսակէտին իբրեւ պատճառաբանութիւն մէջբերուեցան հետեւեալ կէտերը.

Արտաքին քաղաքական վերաբերումը՝ Պարսկաստանի նկատմամբ. ռուսական միջամտութեան պարագան, Անգլիոյ եւ Ռուսիոյ փոխադարձ յարաբերութիւններն ու շահերը՝ Պարսկաստանի մէջ. ռուսական առաջխաղացութեան ռէակսիոն բնաւորութիւնը: Նախորդ Ընդհանուր Ժողովի դրական որոշումը՝ որ կը բխի մեր կուսակցութեան եւ ազգային իրական շահերէն: Մինչեւ հիմա Պարսկաստանի մէջ հայութեան ձեռք բերած առանձնաշնորհումները լլլալով արդիւնք տիրող անիշխանութեան, ներկայ պարագաներուն անմասն մնալ այդ շարժումներուն մէջ՝ պիտի նշանակէր կորսնցնել նոյն իսկ մեր ունեցած առանձնաշնորհումները եւ պարսիկ ժողովուրդին թշնամութիւնը հրաւիրել հայ տարրին վրայ, ուրկէ պիտի օգտուի ի հարկին

ռուս կառավարութիւնը: Պարսկաստանի սահմանադրութեան անխախտ պահպանումը ունի իր բարերար ներգործութիւնը Ռուսիոյ եւ Թուրքիոյ վրայ: Դաշնակցութիւնը չլլալով հայկական ունէ հատուածի ուրոյն սեփականութիւնը՝ կարելի չէ այս կամ այն հատուածի շահերու տեսակէտէն մօտենալ. անիկա իբրեւ յեղափոխական կուսակցութիւն չի կրնար բնաւ խոյս տալ այդ դատէն՝ երբ այդ դատը մեզի համար ունի յեղափոխական հող: չի կարելի արգիլել տեղական դաշնակցականները իրենց մասնակցութեանը մէջ, ու երբ կարելի չէ այդ արգիլումը՝ պէտք է որ կուսակցութիւնը ցոյց տայ իր ուղղութիւնը եւ չթողու՝ այդ շարժումը առանց քննիչի, եւ թիւրիմացութիւններու ու շեղումներու մէջ: Պարսկաստանը վերածննդեան յոյսեր կը ներշնչէ. հայ ժողովուրդը հոն գաղթական չէ այլ իր ծննդավայրին մէջ եւ կապուած իր օճախին հետ, հետեւաբար չի կրնար անտարբեր մնալ իր ծննդավայրի ճակատագրին հանդէպ: Ժամանակի բերումով իսկ արդէն Պարսկաստանի յեղափոխական գործունէութիւնը մտած է Դաշնակցութեան գործունէութեան [մէջ], ու եթէ մեր ժողովուրդին վիճակուած է առաջդիմական դեր կատարել, պէ՛տք է կատարէ: Պարսկաստանի աշխարհագրական դիրքը սերտ առնչութիւն ունի հայութեան միւս երկու հատուածներուն հետ, որոնք նոյնպէս խմբուած են գլխաւորաբար երկու սահմանազուխներուն վրայ, հետեւաբար մեր միջամուտ ծրագրի տեսակէտով չենք կրնար արհամարհել 70000 ժողովուրդ մը եւ նայիլ անոր վրայ իբրեւ գաղութի: Պարսկաստանի մէջ մեր գործունէութիւնը — իբրեւ մահմետական աշխարհի — իր նշանակալի ներգործութիւնն ունի թուրք-հայկական յարաբերութիւններու վրայ: Դաշնակցութեան Պարսկաստանի Շրջանային ժողովը եւս նկատի առած է խնդիրը եւ աչքի առելու ունենալով հայ ազգաբնակչութեան քաղաքական-տնտեսական վիճակը՝ եկած է այն եզրակացութեան, որ հայ ժողովուրդը ինչպէս եւ Դաշնակցութիւնը չեն կրնար անմասն մնալ եւ հետեւաբար կը փափաքի ունենալ Ընդհանուր Ժողովի որոշումը: Փոխադարձ կապը մեր բոլոր յեղափոխական ձեռնարկներու մէջ եղած է եւ է անխուսափելի. թուական տոկոսները պէտք է դեր կատարեն. եթէ գործը անհրաժեշտութիւն է, կուսակցութիւնը ինք պէտք է ուղղակի միջամտէ եւ ստանձնէ:

Մէկ երկու ընկերներ յոյս չունէին նաեւ Պարսկաստանի եւ պարսիկ պետութեան վերածնութեան մասին, որ մեռնելու դատապարտուած է, քանի որ երկիրը երթալով կ'աղքատանայ եւ երկրին տնտեսական կացութիւնը կը ծանրանայ: Արտաքին քաղաքական ազդեցութիւններն ալ երկրին բաժանումը կը մատնանշեն եւ այն բոլոր ջանքերը գորս մենք պիտի թափենք այդ երկրին վերածնութեան ի նպաստ, պիտի անցնին ապարդիւն: Զկայ Հիմնական տեսակէտ այդ երկրի վերածնութեան

24.- Այդպէս է արձանագրուած:
25.- Գաւառուփիւն, վաւերացում տալ:
26.- Պէտք է լլլայ կը կազմէ:

ի նպաստ: Պէտք է առաջնորդուիլ այն տեսակէտէն՝ որ մեր ժողովուրդին ստուար զանգուածը ո՛րը համախմբուած է: Հէնց այդ տեսակէտէն պէտք է նպաստել ռուսական պետութեան տիրապետութեան Պարսկաստանի վրայ, որով սահմաններէն մէկը կը վերնայ: Պէտք է մեր առած իւրաքանչիւր քայլի մասին մտածել թէ ո՛րքան նպաստաւոր է ան հայկական կեդրոնացման. այժմեան ժամանակաւոր կառավարութեան մէջ միայն մէկ բանի պէտք է ձգտինք՝ հայերու կեդրոնացման նպաստել:

Չեկուցաբեր ընկերը տուաւ լրացուցիչ բացատրութիւններ՝ եղած պատճառաբանութիւններուն, վեր առնելով հետեւեալ կէտերը: Դաշնակցութիւնը չի կրնար չէզոք մնալ, որովհետեւ պայմանները կը հարկադրեն ելլել չէզոքութենէ: Նոյնիսկ մեր ունեցած առանձնաշընորհումները չեն կրնար պահուիլ չէզոքութեամբ, ուստի եւ պէտք է երկրին դեմոկրատական հոսանքին ձեռք տալ: Յեղափոխական կայան ունենալու տեսակէտով ալ պէտք է աշխատիլ սահմանադրական կարգերու հաստատման Պարսկաստանի մէջ. ռուսական տիրապետութեամբ արդէն բոլոր այդ արտօնութիւնները կ'երթան հայ ժողովուրդին ձեռքէն: Այն առարկութիւնները որ այսօր մէջ կը բերուին Պարսկաստանի յեղափոխական շարժման մասնակցելու վերաբերմամբ, տեղի կ'ունենային 1903ին Կովկասեան հարցի հրապարակ գալուսն, առարկուելով որ Դաշնակցութեան գործունէութեան վայրը Թուրքիան է եւ Կովկասի մէջ գործունէութիւն մը՝ ռուս կառավարութեան թշնամութիւնը կը հրաւիրէ մեր վրայ, երբ նոյն ռուս կառավարութիւնը իր թաթր երկնցուցած մինչեւ Թուրքիա՝ կը հարուածէր թրքահայրութիւնը, միւս կողմէ կը ճնշէր Ռուսիոյ հայրութիւնը: Պարսկաստանի մէջ տեղի ունեցածը պետութեան դէմ կռիւ չէ, այլ սահմանադրական եւ միապետական կարգերու կռիւ: Պարսկահայը տնտեսապէս եւ կուլտուրապէս կապուած է Կովկասի հետ, մինչդեռ չենք կրնար նոյնը ըսել եւ ընել Պուլկարիոյ եւ Ամերիկայի գաղութներու մասին: Մեր գործունէութեան համար ներկան պէտք չէ մեզի առաջնորդ ըլլայ, այլ ապագան:

Այս վիճաբանութիւններէն յետոյ բանաձեւերու վիճաբանութիւնն ու պատրաստութիւնը ձգուեցաւ յաջորդ նիստին:

Քարուղար՝ Նախագահ
ԺԻՐԱՅՐ

Նիստ ԻԳ. 26 Օգոստոս 1909 (կտօնէ Եր)

Ժողովը բացուում է 20 ձայնի ներկայութեամբ, որ յետոյ կը բարձրանայ 28ի: Նախորդ նիստում Պարսկաստանի մասին եղած գեկուցման քննադատութիւնը վերջացած համարելով, նախագահը առաջարկում է անցնել բանաձեւերի քուէարկութեան: Բանաձեւերը առաջարկում են առանձին առանձին ա) Ռուբէն Տարօնացիինը, բ) Ծափոնացիինը, գ) Ռուբէն Արարատսկիինը, դ) Վանիկինը եւ ե) Գիսակինը: Բանաձեւերի շատութիւնը եւ որոշ կէտերում միանման լինելը ի նկատի ունենալով, ժողովականները ցանկութիւն են յայտնում որ նման բանաձեւերը միացուին եւ որքան կարելի է սակաւ թուով բանաձեւեր ներկայացնել ժողովին որպէսզի հնարաւոր լինի մէկնումէկը անցկացնել: Իսկ նախքան քուէարկութեան անցնելը՝ առաջարկում է պարզել այն խնդիրը թէ՛ Դաշն. Ե-րդ Ընդհանուր Ժողովը ընդունու՞մ է Պարսկաստանը որպէս յեղափոխական գործելավայր, թէ՛ ոչ: Նախագահը քուէարկութեան է դնում այս առաջարկը, որին ձայն են տալիս 12 հոգի ընդդէմ 10ի: Խնդիրը վերջնականապէս պարզուած չհամարելով եւ բանաձեւերի միացման նպաստած լինելու ցանկութեամբ նախագահը առաջարկում է ժողովին արտայայտուել այդ մտքով: Ումանք պնդում են որ Պարսկաստան չի կարելի ընդունիլ մեր գործելավայրը, պատճառաբանելով որ դրանով կը խանգարուի Կովկասում եւ Թուրքիայում ապագայ մեր գործունէութիւնը: Իսկ ումանք ալ, ընդհակառակը, Պարսկաստանի վերածնութիւնը եւ այդ երկրում սահմանադրական կարգերի հաստատուիլը, համարում են մի օժանդակող ազդակ Կովկասի եւ Թուրքիայի առաջընթացութեան համար, որ կը նպաստի այդ երկրներում մեր ունենալիք ապագայ գործունէութեան, թէ՛ ազգերի համերաշխութեան եւ թէ՛ զուտ յեղափոխական տեսակէտից: Այս առթիւ թեր ու դէմ կարծիքների փոխանակութիւնից յետոյ, ձեռնարկում է քուէարկութեան: Անտոնի բանաձեւը, որ քուէարկում է մաս առ մաս, հետեւեալն է.

Ընդհանուր Ժողովը, լսելով գեկուցումը կուսակցութեան կատարած քայլերի եւ ապագայ անելիքների մասին Պարսկաստանում, որոշում է.—

Ա- Հաւանութիւն տալ Պարսկաստանի եւ Կովկասի մարմինների գործունէութեան Պարսկաստանում, գտնելով որ այդ քայլերը եղած են Դ-րդ Ընդհանուր Ժողովի որոշումների կիրառումը, ժամանակի եւ տեղի փոխուած պահանջների համաձայն. (բանաձեւի այս մասը ստացաւ 15 ձայն):

Բ- Կողմնակից Պարսկաստանի անկախութեան եւ ինքնուրոյնութեան՝ Ընդհանուր Ժողովը ձեռք տուած պարսիկ ազատականների եւ ռամկավար խաւերի ու մարմինների հետ մաքառիլ դրսի ոտնձգութիւնների դէմ. (բանաձեւի այս մասը ստացաւ 8 ձայն):

Գ- Օրէց օր փոփոխութեան ենթարկուող դէպքերի ու գործունէութեան նկատմամբ Պարսկաստանում հետամուտ լինել հայ ազգային-կուլտուրական իրաւունքների եւ համապատասխան մարմինների պահպանման եւ զարգացման, մտցնելով եւ ամրապնդելով պարսկական վերածնման շարժման մէջ այն ընդհանուր ազատական, ռամկավարական եւ աշխատաւորական ոգին, որը բխում է Դաշնակցութեան ծրագրից. (ստացաւ 7 ձայն):

Բանաձեւի առաջին կէտի անցած լինելու նկատմամբ, որ հաւանութիւն է տրուում Պարսկաստանում մեր ընկերների ունեցած գործունէութեան, ընկեր Անտոն բացատրում է որ իրենց ոչոքի մէջ են մնում Պարսկաստանի խնդրի նկատմամբ կայացուած Դ-րդ Ընդհանուր Ժողովի որոշումները:

Ընկերներից ումանք գտնում են նախագահի այս բացատրութիւնը սխալ, առարկելով որ Դ-րդ Ընդհանուր Ժողովը այդ որոշումները կայացրել է դեռ այն ժամանակ, երբ Պարսկաստանում նոր էր սկսում ազատագրական շարժումը, որը այժմ յաղթանակելով մտել է մի նոր շաւղի մէջ եւ հարկաւոր է նրան մի ընթացք տալ: Բացի դրանից, պէտք է ընդունել որ ներկայ որոշման համաձայն՝ Դ-րդ Ընդհանուր Ժողովի որոշումները կորցնում են իրենց նշանակութիւնը եւ չեն կարող պարտաւորական լինել մեր մարմինների համար: Ուստի, ցանկալի են համարում, որ երկու գլխաւոր հոսանքները մի համաձայնութեան գան եւ կուսակցական մարմիններին ապագայում անորոշութեան մէջ չթողնեն:

Քուէարկութեան դրուեցին երկու բանաձեւերը, որոնցից եւ ոչ մէկը անցաւ, որի պատճառով նորից վերսկսում են վիճաբանութիւնները, բաժանելով ժողովականներին երկու գլխաւոր հոսանքի: Մի մասը համարում է Դաշնակցութեան Պարսկաստանի մարմինների տեղական գործերին միջամտելը կուսակցութեան սահմաններում մի հասունացած եւ կենսական պահանջ, գտնելով որ այդ մարմիններին պիտի տրուի գործելակերպի ազատ իրաւունք, մանաւանդ որ Պարսկաստանում սահմանադրական կարգերի ամրապնդուիլը զգալի չափով պիտի նպաստի մեր կուսակցութեան Կովկասի եւ Թուրքիայի գործունէութեան: Միւս մասը, ընդհակառակը, պնդում է որ Պարսկաստանում համարեա չկայ հայրութիւն, այնտեղ չկայ ազգային ուրոյն գործունէութեան հող, հետեւաբար չի կարելի դուրս գալ ասպարէզ ազգային ուրոյն պահանջներով: Ուրեմն, չպէտք է ընդունիլ Պարսկաստանը կուսակցութեան իբր գործելավայր, եւ հարկաւոր է յանձնարարել տեղական մարմիններին՝ տալ իրենց գործունէութեան տեղական բնոյթ, եւ չմիջամտել Պարսկաստանի ազատագրական շարժման ամբողջ կուսակցութեան անունից:

Վերջում, ժողովականները մի եզրակացութեան

չգալով եւ ժամանակը սպառած համարելով առաջարկեցին Պարսկաստանի վերաբերեալ բանաձեւի քուէարկելը յետաձգել մի այլ անգամի, որը ընդունուելուց յետոյ ժողովը փակուեց որոշեալ ժամին:

Քարտուղար՝ Նախագահ
ԵՓՐԵՄ

Նիստ ԻԴ. 27 Օգոստոս 1909 Առաւօտ ժամը 8.15-ին

Ժողովի կը բացուի նախագահութեամբ ընկեր Ռուբէնի:

Ընկեր Պիեռ կը գեկուցանէ Ռուսաստանի մեր գործունէութեան մասին: Հիմնաւորելու համար այն որոշումները, որ պիտի ընդունուեն, կ'ուսուումսարիչ ռուսական վերջին յեղափոխութեան պակասաւոր կողմերը, եւ կը գտնէ որ գլխաւորաբար երեք են անոնք:

1- Չօրքի չէզոք մնալը, 2- Յեղափոխական կուսակցութիւններու հաւաքական ծրագիր եւ դեկավար կեդրոն մը չունենալը, եւ 3- Չափազանցուած պահանջներ ներկայացուելուն պատճառով ազատական տարրերու հեռանալը: Ռուսաստանի արդի իրականութիւնը տրտուր է: Դուրս կը ներկայացնէ շատ սեւ պատկեր մը: Հոն կը տիրեն Հոկտեմբերեանները՝ որոնք ամենաջերմ կուսակիցներն են արդի կառավարական դրութեան: Այս երրորդ Դուրս երկու աշխատանք կատարած է ցարդ, 1- Յեղափոխութիւնը արմատախիլ ընել եւ 2- Պահպանել Ռուսաստանի դիրքը միջազգային քաղաքականութեան մէջ: Արդի ռուսական կառավարութիւնը սահմանադրական չէ սակայն, եւ իր 1-2 քայլերը (Նոյեմբեր 9ի օրէնքը եւ այլն) խաբէական են: Այնպէս որ հիմա ստեղծուած է շատ դժգոհ մթնոլորտ մը ոչ միայն գիւղացիական եւ բանուորութեան այլ նաեւ բուրժուազիայի մէկ մասին մէջ դէպի կառավարութիւնը, եւ կը տիրէ այն հոգեբանութիւնը ինչ որ էր 1908էն առաջ: Գալով յեղափոխական կուսակցութիւններուն, անոնք ամէնքն ալ կը ներկայացնեն պառակտուած վիճակ մը՝ սոցիալ դեմոկրատներէն մինչեւ լեհական կուսակցութիւնները: Յեղ.ական ընկերավարականները (սոց. յեղ.ները) ծանր տագնապի մէջ են արդէն: Ուստի ասոնցմէ ոչ մէկը առանձին բան մը չի կրնար ընել. անհրաժեշտ է հաւաքուիլ եւ մշակել ընդհանուր տեսակէտ մը, գործ մը՝ գոր յաջողութեամբ կրնայ կատարել Դաշնակցութիւնը շնորհիւ իր դիրքին եւ վայելած վստահութեան: Կովկասի մէջ, մասնաւորապէս, հիմա հայ եւ վրրացի գիւղացիները նոյնիսկ որոշ համամտութիւն ցոյց կու տան դէպի յեղափոխութիւնը: Իսկ Թուրքերը այլ լեւս չեն կատարել անցեալի յետադիմական դերը շնոր-

հիւ իրենց առաջնորդներուն, որոնց տրամադրութիւնները փոխուած են:

Ընկեր Ճափոնացի նմանապէս կը շեշտէ ռուսական յեղափոխութեան պակասութիւններուն վրայ, բայց կը ծանրանայ մասնաւորապէս ռուսական կառավարութեան դէպի հայերը ունեցած քաղաքականութեան վրայ, եւ անհրաժեշտ կը գտնէ որ՝ համապետական յեղափոխութեան համար, մեր առնելիք քայլերէն անկախ կերպով հակազդենք նաեւ առանձնապէս մեր դէմ ուղղուած յարձակումներուն:

Ընկեր Ռոստոմի կարծիքով, սկզբունքով կարելիութիւն կայ համագումար մը գումարելու, եւ ան՝ յաջողութիւն կ'ունենայ որովհետեւ միւս կուսակցութիւնները սկսել են համոզուել որ Դաշնակցութեան ուղղութիւնն էր շիտակը եւ ըստ այնմ կը վերաբերուին, բայց այդ բանը (համագումարը) պէտք է շտապեցնել մինչեւ որ յեղափոխական ընկերակարգները (Մ. Ռ.ները) չկազմակերպեն իրենք գիրենք, առանց որոնց անկարելի է համագումարը յաջողցնել: Գալով ղեկավար կեդրոն մը ստեղծելու գաղափարին, այդ անիրականալի բան է:


Ընկեր Անտոն կը գտնէ որ Ռուսաստան իր տնտեսական եւ քաղաքական զարգացմամբ բաւական ետ մնացած երկիր է, հետեւաբար առաջդիմութեան ճամբուն մէջ ստիպուած է Եւրոպայի ետեւէն երթալ: Ռուս յեղափոխականները մոռցան այդ կէտը, եւ այդ է որ կը կազմէ իրենց անյաջողութեան գլխաւոր պատճառը: Մեր տարբերութիւնը անոնց վրայ այն է որ մենք կը կանգնինք իրական հողի վրայ: Ամէն երկիրներու յեղափոխութեան ատեն, նեղ օրերուն, յեղ. կուսակցութիւնները կը միանան ընդհանուր թշնամիին դէմ, որովհետեւ գիտեն թէ՛ իրական քաղաքականութեան մէջ կը կայանայ փրկութիւնը: Ռուսաստանի մէջ մահու եւ կենաց օրերուն անգամ, յեղափոխականները չհամաձայնեցան իրարու հետ տեսական տարաձայնութիւններու պատճառով: Ուրեմն, ռուսական յեղափոխութեան անյաջողութեան պատճառներն են. 1- Անհամերաշխութիւնը. 2- Առաւելագոյն պահանջներ ներկայացնելը: Մենք, ի հարկէ, պէտք է որ նպաստենք ռուս յեղափոխականներուն, բայց անոնք ալ պէտք է որ այս ուղղութեամբ գործեն: Պէտք է որ բոլոր ընկերակարգական կուսակցութիւնները համերաշխին իրարու հետ եւ վերցնեն կեդրոնացման դրութիւնը:

Գալով այն հանգամանքին թէ՛ յեղափոխութեան համար արդէն կայ պատրաստ հող բանտորութեան եւ գիւղացիութեան մէջ, այդ սխալ է: Այդ տակաւին հեռու է: Ոչ համայնքներու քայքայումը, ոչ ալ բանտորներու օրավարձերու անկումը կապ չունին այդ բանին հետ: Թէ՛ դէպի յեղափոխութիւն կ'երթանք, այդ անտրանալի է, բայց ժամանակը կարելի է ճշդել: Հարցին մօտենալով գործնական տեսակէտէ, Ռուսաստանի մէջ, ինչպէս նաեւ Թուրքիոյ, պէտք է դնել ընկերակարգական

կարգերի անմիջական իրականացման պահանջներ, այլ ընկերային հասունացած բարենորոգումներ միայն: Եւ այդ բանին պէտք է ձգտիլ քաղաքական ընդհանուր գիտակցութիւն արթնցնելով: Համաժողովի մը գումարման դէմ չեմ սկզբունքով, միայն ժամանակի խնդիր է այդ: Միայն այնտեղ պէտք է ձեռք տալ նաեւ ոչ-ընկերակարգական բայց իսկական ռամկավար տարրերուն: Ինչ կը վերաբերի փոքր ազգերուն, որ անոնք ալ ճշուած են, այդ հանգամանքով ալ պիտի կուտին անշուշտ:

Ընկեր Ամատունի կը ծանրանայ չափաւոր պահանջներ դնելու անհրաժեշտութեան վրայ:

Ժողովը կը փակուի որոշեալ ժամին:

Քարտուղար՝ Նախագահ՝
 ՊԵՐՃ ՌՈՒԲԷՆ

ՆԻՍՏԱ ԻՇ.

Նախագահում է Ռուբէն: Շարունակում է Ռուսաստանի վերաբերեալ վիճաբանութիւնները:

Ժողովի սկզբից արդէն երեւան է գալիս երկու հոսանք. մի մասը կարծում է որ Ռուսաստանը այժմ գտնուում է գրեթէ այն դրութեան մէջ, ինչ որ ներկայացնում էր 905ին: Պատերազմական տեսանկյունից իրենց ծանրութեամբ այնքան ճշել են ժողովրդեան զանազան խաւերը, ունեցիկները իր ուժեղ հատուածներով այնքան ճշել է, որ շատ լայն խաւերում արդէն գիտակցական է դարձել ռեժիմի անտանելիութիւնը, որ ամէնքը պատրաստ են միջոցների դիմելու, այդ խեղդող ծանրութիւնից ազատուելու համար: Վերցրէք բանտոր դասակարգը. բացի այն, որ նրանք զրկուած են քաղաքական ազատութիւններից, չեն կարողանում, ամենափոքր չափով իսկ, իրենց տնտեսական դրութեան բարելավման համար մտածել ու աշխատել. դրանք ամենաշահագրգռուած տարրերն են ռեժիմի տապալման խնդրում, մանաւանդ որ չկարողացան վերջին շարժումների ժամանակ իրենց յաղթութեան պտուղները վայելել:

Նոյեմբեր 9ի օրէնքը եկաւ հարուած տալու գիւղացու համայնական դրութեան, հողը՝ որին կապուած է գիւղացին, ձեռքից դուրս է գալիս. նա ճշուած է եւ քաղաքական կարգերից, որի արդիւնքը լինում է տնտեսականի խիստ քայքայում: Տիրող աննպաստ պայմանների շնորհիւ, չեն գործում եւ գործարանները, կանգ են առել, բուրժուազիան չի կարողանում գործադրել

իր կապիտալները ներկայ դժնդակ պայմաններում. այդպէս էր եւ Ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ: Բացի վերոգրեալ ընդհանուր ճշումները, նկատի պիտի առնել եւ այն մասնաւոր ճշումներն ու հալածանքները, որոնց ենթակայ են փոքրիկ ազգերը, որով աւելի շահագրգռում են տիրող ռեժիմի տապալումով: Միայն (խոշոր) կալուածատիրութիւնն ու խոշոր բուրժուազիան են գոհ ներկայ ռեժիմից: Ընկերներից մէկը նոյնիսկ շեշտում է որ մենք ապրում ենք Ռուսաստանում յեղափոխ. ժամանակում, յեղափոխ. մէջ, որովհետեւ ամենախոշոր մասը ազգաբնակչութեան ճշուած է. պայմանները յեղաշրջման համար հասունացած են. ժողովուրդը չի կարող տանել տարեկան 2.5 միլիարդ բիւրգէն եւ 9 միլիարդ պարտքը. հէնց որ զինուորական դրութիւնը վերացուի, յեղափոխութիւնը կը պայթի:

Յենուելով վերոգրեալ փաստերի վրայ, գտնում են որ գործունէութեան համար պատրաստի հող կայ եւ առաջարկում են.

Ա- Ամենալայն խաւերում պրոպականդ մղել. պարզելով ներկայ դրութիւնը՝ շահագրգռել նրանց քաղաքական կռուով (մի քանի հոգի՝ ծանրութեան կեդրոնը դարձնել քաղաք. պրոպականդան) եւ զարկ տալ մարտական ոյժերի լաւ կազմակերպման:

Բ- Դաշնակցութիւնը իր վրայ պիտի վերցնի Ռուսաստանի ընդդիմադիր տարրերից եւ ճշուած ազգութիւններից մի congres հրաւիրելու ինիցիատիւր²⁷, ուր համաձայնութիւն կը կատարուի ընդհանուր լողունգներու շուրջը: Լողունգների մշակումը ու տեխնիկական յարմարութիւնները թողնել կազմակերպիչ բիւրոյին:

Գ- Քաղաքական ակտերի շարքը սկսել չարիք դարձած կենտրոնական անձանց դէմ տեղադրելով, մի կողմից կառավարութեան ահաբեկելու, միւս կողմից ժողովրդեան տրամադրութիւնը բարձրացնելու համար: Իսկ այժմ մասնաւորապէս ուշք դարձնել մեր դէմ սկըսած հալածանքների հակահարուածի վրայ:

Միւս հոսանքը՝ գտնելով որ Ռուսաստանը այժմ դեռ եւս գտնուում է ունեցիկայի թեւերի տակ, որը հետզհետէ ուժեղանում է եւ որ դրութիւնը միխիթարական չէ ինչպէս նկարագրուում է, նախ կուսակցութիւնները կազմալուծուած են, բուրժուազիան, որի մասին այնքան խօսւում է եւ որի աջակցութիւնը կռուի յաջողութեան տեսակէտից շեշտում է, այնքան էլ շահագրգռուած չէ ռեժիմի տապալումով ինչքան կարծուում է, եւ նա շատ հեռու է հաշտ լինելուց աշխատաւոր բանակի հետ, չի տեսնում դրութիւնը վարդազոյն: Բուրժուազիան շատ լաւ հասկանում է որ վաղը աշխատաւորական [աւորական] այդ

բանակը իր դէմ է դուրս գալու, որի հետ կռիւը շատ դժուար պիտի լինի: Այնպէս որ նրանք աւելի շատ կառավարութեան հետ համաձայնութեան կը գան (երկուսին էլ ձեռնտու է փոխադարձ գիջումներով հաշտուել): Մենք Ֆրանսիական յեղափոխութիւնը իբր օրինակ չենք կարող վերցնել. նախ սխալ է եւ այն կարծիքը որ Ֆրանսիայում բուրժուական կռիւ էր — կռիւր տարաւ աշխատաւորութիւնը բայց բուրժուազիան էր որ օգտուեց — եւ երկրորդ՝ այժմ Ռուսաստանում պայմանները տարբեր են. Ռուսաստանի բուրժուազիան Ֆրանսիականի պէս չի նետուի, որովհետեւ նա ունի այժմ Արեւմուտքի 100 տարուայ պատմութիւնը եւ լաւ կազմակերպուած է թէ թէ որիայի եւ թէ գործնականապէս եւ, բացի այդ, նա իր կաշուի վրայ փորձեց այդ «վտանգաւոր» դասակարգը. մօտիկ անցեալում հակամարտութիւնը շատ ցայտուն կերպով արտայայտուեց. այնպէս որ նա կը զգուշանայ իր համար վտանգաւոր դրութիւն ստեղծելուց եւ ձեռք չի մեկնի աշխատաւորութեան ու չի ուզենայ նրա հետ բախուել: Մի շատ կոնկրետ օրինակ. Պրուսիայում բուրժուազիան ընդդիմանում է ընդհանուր ընտրական իրաւունքին, մի իրաւունք որը շատ դեմոկրատական է:

Congres հրաւիրելուն դէմ չեն, միայն վերոգրեալ հանգամանքները աչքի առաջ ունենալով, առաջարկում են ձեռնարկել միայն յեղափոխական տարրերի հետ, իսկ դեմոկրատ ինտելիգենցիան առանց այն էլ կը գայ: Իսկ նախ քան congres-ին ձեռնարկելը սպասել մինչեւ ռուս[ական] S. R. կուսակցութիւնը ոտքի կը կանգնի, Ազգ. ֆեան²⁸ վերջին դէպքերի պատճառով յառաջ եկած քայքայումից:

Ուեէ որոշում չտալ այժմեանից քաղաքական ակտերի, որովհետեւ դեռեւս Ռուսաստանում պայմանները հասունացած չեն. երբ սկսուում է պիտի շարունակուի հակառակ պարագային ո՛չ մի նշանակութիւն չունի: Իսկ ինչ վերաբերում է Դաշնակցութեան դէմ սկսած հալածանքին հակահարուածով պատասխանելուն, այստեղ ո՛րեւէ կոնկրետ որոշում չտալ, որովհետեւ մի կողմից կառավարութեան սպառնալիքի տակ ունենք ընկերներ բանտում եւ բացի այդ, յաջողութիւնը կախուած է մեր ներքին ուժերի չափից ու լաւ կազմակերպուած լինելուց: Թողնել այդ մեր ապագայ պատշաճ մարմիններին ի տնօրինութիւն, որոնք ըրոպէի թելադրութեամբ եւ համաձայն պայմանների կ'որոշեն այս կամ այն կոնկրետ քայլերը անել: Առայժմ մեր ամենամեծ ուշքն դարձնելու ենք մեր շարքերի վերակազմութեանը եւ պատրաստել նրանց ապագայ քաղաքական սոցիալիստական յեղաշրջման:

Ժողովը փակուեց որոշեալ ժամին:

Քարտուղար՝ Նախագահ՝
ՎԱՀԱՆ ՌՈՒԲԷՆ

27.- Նախաձեռնութիւնը:
28.- Ազգ. ֆ, ռուս ընկերակար-յեղափոխական կուսակցութեան մարտական կազմակերպութեան ղեկավարը, որ յետագային ի յայտ եկաւ իբրեւ դաւաճան եւ լրտես ցարական գաղտնի սպասարկութեանց, մեծ ցնցում առաջացնելով նոյն կուսակցութեան շրջանակներուն մէջ:

Լիստ ԻԶ. Օգոստ. 28. 909

Ժողովը բացում է առաջօրեան ժամը 8-ին. ներկայ են 23 ընկեր. նախագահում է ընկեր Անտոն:

Կարդացում է 17րդ եւ 18րդ նիստերի արձանագրութիւնները, որոնց ընթերցումից յետոյ՝ ժողովն անցնում է օրակարգին:

Օրակարգի խնդիրն է նախորդ նիստի շարունակութիւնը՝ Դաշնակցութեան դիրքը ռուս կառավարութեան հանդէս:

Զեկուցանող ընկերը նաեւ պատասխանում է նախորդ նիստում արուած դիտողութիւններին, կանգ առնելով գլխաւորապէս հետեւեալ խնդիրները վրայ՝

Հողերի համայնացումը, սոցիալիստական շարժումների ըմբռնումները, ռուսական յեղափոխական շարժումների հոլովումը եւ նրան յառաջ մղող ազդակները: յեղափոխական) եւ ընդդիմադիր տարրերի գործակցութեան շարժառիթներ եւ ազգային առանձին շարժումները, որից յետոյ ընկերն անցաւ մեր կատարելիք դերի մասին Ռուսաստանում եւ Կովկասում: Կանգ առնելով յիշեալ կէտերի վրայ առանձին առանձին, ապա նա առաջարկեց քուէարկել իւր բանաձեւը:

Առաջարկուեց հարցի ընդհանուր տեսակէտի վրայ Ծական ըրպէ եւս կանգ առնել աւելի եւս լուսաբանելու համար: Առաջարկուեց նաեւ որ իւրաքանչիւր ներկայացուցիչ բացի իր անհատական կարծիքը արտայայտելուց, ներկայացնի նաեւ իրեն ուղարկող մարմնի ընդունած բանաձեւը նոյն հարցի առթիւ. ընդունում է. շարունակում են դիտողութիւնները:

Ռոստոմ նկատում է որ ռուսական յեղափոխականների գլխաւոր պակասը եղել է այն՝ որ նրանք մասսաներին մօտեցել են վերացական գաղափարներով, որոնք անմարսելի են եղել մասսաների համար: Այս տաքտիքան է եղել գլխաւոր տարբերութիւնը Դաշնակցութեան եւ ռուս յեղափոխականների միջեւ, որովհետեւ Դաշնակցութիւնը մասսային տուել է այնպիսի նիւթեր, որոնցմով նա ապրել է. ինչ վերաբերում է սոցիալիստական յեղափոխութեան՝ մեր տեսակէտը այն է որ քանի դեռ կայուն է բուրժուազիայի ուժը Եւրոպայում, Ռուսաստանում դա անհնարին է (սոցիալիստական յեղափոխութիւնը) շնորհիւ իր սոցիալական դրութեան. մի բան՝ որին ռուս յեղափոխականները պահանջուած չափով ուշադրութիւն չեն դարձրել. եւ եթէ նոյնիսկ յաջողւէր ռուս սոցիալիստական յեղափոխութիւնը Ռուսաստանում, այդ դէպքում հէնց Եւրոպան կը խեղդէր նրան:

Տաճկաստանի ներկայ կարգերում մենք եւս տեղի պիտի տանք կղերին եւ բուրժուազիային, որովհետեւ արտաքին ազդակները աջակցում են նրանց. ինչ վերաբերում է գինուորների մէջ մղուելիք պրոպագանդին, նա եւս չի տարուել պահանջուած տակտով: Մասնաւորապէս սոց. դեմոկրատների կողմից: Եղել է ժամանակ

որ գորքը ինքը իրան տրամադրելի է արել, բայց որը չեն կարողացել շահագործել եւ հակառակը աւելի եւս գրգռել են, հարուածները ուղղելով գինուորների եւ վերջումն էլ յատկապէս սպաների դէմ, ինչպէս օրինակ Դերբէնտ, Կրասնոդար եւայլն:

Ապա վերջացնում է ընկերը իր դիտողութիւնը, օրինակ բերելով Օսմ. գինուորներին՝ սրանց մէջ ոչ թէ ազատամտութիւնն էր գլխաւոր պատճառը սահմանադրութեան պաշտպանութեան, այլ նրանց տրամադրութեան խելացի շահագործումը սպաների կողմից:

Ուսանողութեան ներկայացուցիչը. Ռուսաստանի եւ Կովկասի գործունէութիւնը բաժանում է 3 գլխաւոր ճիւղերի. ա) ընդդիմադիր տարրերի գործակցութիւնը որի յաջողութեան ազդակը պիտի լինի կոնգրէն. բ) որովհետեւ մասսային անկարելի է սպասեցնել այս կամ այն համոզմունքով, որ նա չառաջարկէ իւր ուղղակի պահանջները, լինեն նրանք ազգային ու տնտեսական. հետեւապէս հէնց յեղափոխական դիրքեր գրաւելու տեսակէտէն էլ անհրաժեշտ է այդ ուղղութեամբ աշխատել եւ գ) մարտական մի կանոնաւոր ոյժ ստեղծելուց յետոյ ներկայ հակադաշնակցական հալածանքին տալ հակահարուած:

Տարօնացին նկատում է որ Կովկասի դէմ սկսուած հալածանքը կրում է ընդհանուր բնոյթ եւ ոչ թէ առանձին հայկական. հետեւաբար անհրաժեշտ է կովկասեան ընդդիմադիր առանձին տարրերի հետ գործակցել, հակազդող հարուածն էլ ընդհանուր դարձնելու համար:

Սարգիսը նկատում է որ ընկերների տեսակէտների մէջ կան երկու ծայրայեղութիւններ եւ առաջարկում է գտնել մի այնպիսի միջոց որ ժողովրդի թէ՛ քաղաքական, թէ՛ տնտեսական, թէ՛ ազգային եւ թէ՛ այլ հասունացած պահանջները իրանց յատուկ տեղն ունենան եւ բխեն ժողովրդի սրտից: Նա գտնում է որ ազգային հարցի շուրջը գլխաւորապէս լինում են տարածայնութիւնները. ոչ ոք անշուշտ չի առաջարկի բաժանուել ընդհանուր Ռուսաստանից, բայց միեւնոյն ժամանակ անկարելի է որ եօթ միլիոն կովկասեան ազգաբնակչութիւնը ապրի ընդհանուր ռուսական կեանքով:

Ինչ վերաբերում է տեուրին, առաջարկում է ահաբեկումը չընդունել որպէս սիստեմ, այլ որպէս միջոց եւ այն էլ այնպիսիների վերաբերմամբ, որոնք ամբողջ հասարակութեան համար չարիք են: Զինուորների մէջ մղուելիք պրոպագանդայի վերաբերմամբ համամիտ է նաեւ ընկերոջ:

Դիտողութիւնից յետոյ ընկերները կարդում են իրենց մարմինների ընդունած բանաձեւերը այս առթիւ. յայտարարում է դադար (10) ըրպէով:

Շարունակում են դիտողութիւնները: Ընկեր Անտոն բնորոշում է դաշնակցական եւ հնչակեան կուսակցութիւնների միջեւ եղած տարբերութիւնները իրանց քաղաքական, տնտեսական, ազգային եւ այլ խնդիրներ

րի ըմբռնման շուրջը: Սրանից յետոյ նա բնորոշում է տալիս ռուս յեղափոխականների գործունէութեան եւ նրանց սխալ կողմերի վրայ, եւ որպէս ապացոյց իր տեսակէտի նա մանրամասն շեշտում է Ռուսաստանի ազգաբնակչական, քաղաքական, կրթական, տնտեսական եւ այլ կողմերի վրայ, եզրակացնելով որ Ռուսաստանը իւր այս պայմաններով, համեմատութեամբ Եւրոպայի, բռնում է ամենայնտին տեղը Թուրքիայի հետ համարեա. յիշեալ համեմատութիւնից յետոյ ընկերը գրտնում է այսուամենայնիւ գործակցութիւնը ընդդիմադիր տարրերի միջեւ անհրաժեշտ է, բայց նախ քան այն՝ անհրաժեշտ է կազմակերպական շարքերի ուժեղացումը, արձագանգելով այն բոլոր ազգային եւայլն պահանջներին՝ որոնց վրայ չանդրադառնալ անկարելի է:

Արուած դիտողութիւններից յետոյ զեկուցանող ընկերը կանգնում է էլի իւր նախկին տեսակէտի վրայ, գտնելով որ ներկայ հասարակական, քաղաքական, տնտեսական եւ այլ բոլոր երեւոյթներում ինչպէս նաեւ ժողովրդական հոգեբանութեան մէջ այլեւս չի ապրում բռնակալութիւնը եւ որպէս այնպիսին նա գտնում է որ ներկայումս բացի յեղափոխական լոզունգներից, ուրիշ մի ուղղութեամբ չի կարելի առաջնորդել ժողովրդին:

Բացի այս՝ ընկերն առաջարկում է իսկոյն անցնել հակահարուած տալուն, որոնք ունենան իրենց պայման նշանակութիւնը թէ կառավարութեան եւ թէ մանաւանդ ժողովրդի հոգեբանական տրամադրութեան վրայ:

Ոմբերի վերակազմութեան ներկայ սիստեմի դէմ, առաջարկում է որ վերակազմութեան ընթացքում ուշք դարձուի գլխաւորապէս գաղտնապահութեան վրայ, առանց շատ մեծ տեղ տալու հաւաքական դասախօսութիւններին:

Ժամանակը ուշ լինելուն պատճառաւ նիստը փակում է, բանաձեւերի մասին վիճաբանութիւնը թողնելով յաջորդ նիստին:

Քարտուղար՝ Նախագահ
(Կիւս) ՓԻՆՈՍ

Լիստ 27. Օգոստոս 28

Ժողովը բացուեցաւ կէսօրէ ետք ժամը 4ին՝ նախագահութեամբ ընկեր Ռուբէնի: Բացակայ էին մասնակցող ընկերներէն Պարոյր եւ Գիսակ: Կարդացուեցաւ 19րդ նիստի արձանագրութիւնը եւ վաւերացուեցաւ:

Նիստի մեծագոյն ժամանակը յատկացուեցաւ Կովկասեան գործունէութեան մասին առաջարկուած բանաձեւերու վիճաբանութեան, սակայն նկատելով որ

բանաձեւերը իրենց ամբողջութեամբ քուէարկել անկարելի կ'ըլլայ եւ իրենց այս կամ այն մասով՝ ընդհանուր տրամադրութեան անհամապատասխան եւ ոչ-ամբողջական, որոշուեցաւ երկու էական մտքերը առանձին քուէարկութեան դնել յետոյ միայն զբաղիլ բանաձեւերու կազմութեամբ: Այդ էական կէտերն են.

1- Ռուս կառավարութեան վերջին քայլերուն — ուղղուած Դաշնակցութեան եւ դաշնակցական ընկերներու դէմ — պէ՞տք է պատասխանել աքթիւ ձեռնարկներով: Այս հարցը զբաղեցուցած լլլալով Կովկասի ընկերական շրջանակները՝ կարելի է՞ր եղած որոշ եզրակացութեան մը յանգիլ, այն պատճառով որ ոեւէ աքթիւ գործունէութիւն գուցէ պիտի առաջացնէր բաւական ծանրակշիռ կացութիւն մը Կովկասի հայութեան եւ բանտարկուած ընկերներու համար միանգամայն. մինչ միւս կողմէ լուծեան քաղաքականութիւնն եւս ունէր իր անպատեհութիւնները՝ կազմակերպութեան համայնի եւ ուժի տեսակէտէն:

2- Կարելի՞ է կազմել Ռուսաստանի ընդդիմադիր տարրերու քոնկրէս մը:

Այս երկու հարցերու մասին արդէն նախորդ ժողովներով վիճաբանուած՝ տրուեցան հետեւեալ որոշումները.

1- Կովկասեան ձեռնհաս մարմինները ազատ կը ձրգււին իրենց այդ ուղղութեամբ գործունէութեան մէջ, եթէ նախ քան միւս կուսակցութիւններու հետ համաձայնութեան գալը՝ որեւէ աքթիւ քայլի դիմելը կը գրտնեն ձեռնտու:

2- Դաշնակցութիւնը իր կամ Միջազգային սոցիալիստական բիւրոյի նախաձեռնութեամբ կը ջանայ գուժարել խնդրոյ առարկայ եղող քոնկրէն, որուն կը հրաւիրուին եւ Ռուսիոյ միւս ընդդիմադիր տարրերը՝ կանխաւ ստացուելով համաձայնութիւնը այդ մասին ընկերվարական կուսակցութիւններուն:

Յանձնարարուեցաւ բանաձեւ ներկայացնող ընկերներուն՝ հաւաքուելով մշակել բանաձեւերը ժողովի արտայայտութեան համաձայն եւ ենթարկել յաջորդ նիստերու քննութեան եւ վաւերացման:

Անցնելով օրակարգի միւս հարցին — Զեկուցում գաղութներու վերաբերմամբ — տրուեցաւ հետեւեալ զեկուցումը:

Կազմակերպութիւն գոյութիւն ունի Ամերիկայի, Պալքանի եւ Եգիպտոսի մէջ: Ամերիկայի մէջ կազմակերպութիւնը ունի կոմիտէութիւններ եւ Կեդր. կոմիտէ: Դրդ Ընդհ. Ժողովէն յետոյ ընկերները ջանացին ամէն կերպով համաձայնեցնել կազմակերպական դրութիւնը՝ կանոնադրի ցուցմունքներուն, կազմելով խումբեր եւայլն. բայց կարելի չըլլալով ոեւէ արդիւնք ձեռք բերել, ուժ տրուած է ընկերական ընդհանուր հաւաքումներու: Փրոփակաստան կը մղուի «Հայրենիք» թերթով եւ փրոփակաստան ընկերներու միջոցներով,

որոնք իրենց ազատ ժամերուն կ'այցելեն այս կամ այն շրջանը. կուսակցութիւնը կը պահէ երկու-երեք ընկերներ՝ որոնց մշտական գործն է նոյնպէս այցելել մարմիններուն եւ ընթացք տալ կազմակերպական-կուլտուրական գործերուն: Փրոփականտի համար ունին ընկերական, համակիրներու եւ հրապարակային ժողովներ: Նախորդ Ընդհ. ժողովէն առաջ աւելի ուժ տրուած է գուտ կուսակցական փրոփականտին, բայց Դ-րդ Ընդհ. ժողովէն յետոյ՝ կուսակցութեան սկզբունքային հարցերուն: Կան բաւական ինտելիգենտ տարրեր՝ աւարտած գանազան հայկական եւ օտար վարժարաններ: Գաղութը հայրենիքին կապող միակ ազդակը յեղափոխական փրոփականտն է: Այս փրոփականտին կը ծառայեն նաեւ գանազան ընկերական-կազմակերպական ընթերցարանները, որոնք կը մատակարարուին ոչ կուսակցական միջոցներով: «Հայրենիք»ը իբրեւ փրոփականտի թերթ՝ բաւարար չի յայտնուիր, ատոր համար ալ սկիզբէն ի վեր պահանջ զգացուած է խմբագրող ձեռքի մը: Ամերիկայի կազմը թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս ունի նշանակելի կողմեր՝ գորս չէ կարելի անտես առնել: Անմիջական պահանջ կայ երկու կարող գործիչ-ընկերներու՝ իբր փրոփականտիստի եւ խմբագրի:

Պալքանեան շրջանը եւս կազմակերպական գրեթէ նոյն նմանութիւններն ունի Ամերիկայի հետ: Հոս պանդուխտներու հետ կան եւ գաղթող թէ տեղացի բազմաթիւ ընտանիքներ՝ կրթական-կուլտուրական իրենց պահանջներով: Այս գաղութի կազմակերպական-կուլտուրական փրոփականտը կը տարուէր «Ռազմիկ»ով, որուն հրատարակութեան վերջ տրուեցաւ Սահմանադրութենէն յետոյ: Մնայուն փրոփականտիստ գոյութիւն չունի, օգտուած են ընկերներու պատահական այցելութիւններէն: Պուլկարիոյ երկու-երեք քաղաքներուն մէջ եւս կան կազմակերպական ընթերցարաններ, երգեցիկ-թատերական եւ այլ խումբեր: Ռումմանիոյ կազմակերպական դրութիւնը տարբեր է՝ տիրող քաղաքական խստութեանց պատճառով. ընկերները ձգտած են ստեղծել սրճարաններ՝ որոնք կը ծառայեն պանդուխտ-ընկերներու իբրեւ հաւաքատեղի՝ արտադրելով նաեւ բաւական հասոյթ կազմակերպութեան: Պալքանի կազմակերպութիւնը սկիզբէն ի վեր ունի իր կարեւորութիւնը ու լայն օժանդակութիւնը՝ ռազմական-փոխադրական գործերու եւ հայթայթումներու մէջ: Կազմակերպութեան փրոփականտը ցանկալի եղանակով շարունակելու համար պէտք էր զգացուի գործիչի մը՝ որ տարուան մէջ երկու անգամով, 4 ամիսի չափ, իր ժամանակը տրամադրելի ընէ: Եգիպտոսի մէջ եւս կազմակերպութիւնն ունի մարմիններ իր խումբերով եւ ընկերներով: Եգիպտոսը եւս կարեւոր է իբրեւ կամուրջ երկրին: Չնայած գաղութի նիւթական պայմաններուն՝ չի տար կազմակերպութեան նիւթական

այն արդիւնաբերութիւնը՝ զոր կու տան միւս գաղութները: Երեք գաղութներու մէջ եւս տիրող պայմանները թոյլ չեն տուած կազմակերպելու արհեստակցական եւ այլ միութիւններ: Ընկերական կապերը թուլցած են կազմակերպութեան հետ՝ Սահմանադրութենէն յետոյ եւ հետեւաբար անհրաժեշտ կը դառնայ կարեւոր գործունեւոր՝ գաղութներու ընկերական շարքերը սերտորէն կապուած պահելու համար երկրին հետ:

Գաղութներու վերաբերմամբ եղած այս գեկուցման շուրջն արտայայտուելով, ժողովական ընկերները այն միտքը շեշտեցին թէ՛ քանի գոյութիւն ունին քաղաքական, տնտեսական այժմեան պայմաններն ու կարգերը՝ գաղթականութիւնը գոյութիւն պիտի ունենայ, ինչպէս միւս երկիրներու մէջ է: Ամերիկայի հայ գաղթականութիւնը բաւական նշանակելի դեր կ'ընայ կատարել, որովհետեւ Ամերիկա պիտի ունենայ մեծ ներգործութիւն՝ Արեւելքի գործերուն մէջ. այդ պատճառով կարեւոր է Ամերիկայի մէջ ստեղծել համակրանք: Ռազմական ուժեր պատրաստելու եւ զիտական գրուածքներու վերաբերմամբ հրատարակչական ձեռնարկներ ընելու համար եւս Ամերիկան կու տայ դիւրութիւններ: Ընկերներէն ոմանք յայտնեցին այն միտքը թէ գաղթականութիւնը մեզի համար չարիք է, եւ այն բոլոր գաղթականները որոնք կը մեկնին հայրենիքէն, մեզի համար մասամբ կորած պէտք է համարել, ինչպէս միւս հին գաղութները անցեալի մէջ: Ամերիկայի կատարած դերը Արեւելքի մէջ մեզի համար միանգամայն կը մնայ անորոշ, ուստի գաղթականութեան հոսանքին առջեւ առնելու մասին պէտք է մտածել եւ գաղութներու մէջ փրոփականտա պէտք է ընել՝ վերադարձնելու համար գաղթողները: Մեր գաղութը չպիտի դիմանայ եւ պիտի կլանուի ամերիկեան ուժեղ կուլտուրայէն:

Ժողովը փակուեցաւ որոշեալ ժամուն:

Քարտուղար՝ Նախագահ՝
ԺԻՐԱՅԻ ՌՈՒԻԲԷՆ

Ամսաթիւ 28. Օգոստոս 29

Ժողովը բացուեցաւ առաւօտեան ժամը 8ին նախագահութեամբ ընկեր Ռուբէնի: Եկած էր նաեւ Պատասխանատու Մարմնի ներկայացուցիչը: Ներկայ բոլոր մասնակցող ընկերները:

Շարունակուեցաւ կարծիքներու փոխանակութիւնը գաղութներու եւ անոնց կազմակերպական վիճակին վրայ: Բացի պալքանեան եւ ամերիկեան գաղութներէն՝ Եւրոպայի փոքրաթիւ գաղութն եւս կ'ընայ իր օգուտները տալ. լեզուի հարցը դեռ չ'ապացուցաներ որ հին գաղթականներէն շատեր դադրած են ինքզինքնին հայ

անուանելէ՛ ինչպէս Կալիֆորնիա եւ Լեմպերկի գաղթականները: Ընկերներու այցելութիւնը այդ եւ նման հայ գաղութներու՝ կ'ունենայ անպայման իր օգտակարութիւնները: Կարելի է Եւրոպայի հայ գաղութներու գանազան կարեւոր կեդրոններու մէջ կազմել կրթական եւ այլ կուլտուրական ընկերութիւններ: Կ'արտայայտուի նաեւ այն միտքը թէ՛ մինչեւ հիմա գաղութները երկրին հետ կապող միակ ազդակը յեղափոխական կենդանի գործն է եղած, որ կը պակսի ասկէ յետոյ, ուստի հարկ է զարկ տալ գաղութներու կուլտուրական գործերուն եւ այդ ուղղութեամբ ձեռնարկներ ընել՝ զանոնք կապելու համար երկրին հետ: Վիճաբանութիւնները բաւարար համարելով՝ զեկուցանող մասնախումբին յանձնարարուեցաւ ժողովէն դուրս պատրաստել բանաձեւը եւ ներկայացնել քուէարկութեան համար:

Պատասխանատու մարմնի ներկայացուցիչը մարմնի գործունէութեան տեղեկաբերութիւնը ըրաւ, վեր առնելով հետեւեալ զլխաւոր կէտերը — Պատասխանատու մարմնի կազմն ու կրած փոփոխութիւնները Դ-րդ Ընդհ. ժողովի կողմէ ընտրուած եւ անկէ յետոյ: Նոյն մարմնին վրայ դրուած պարտականութիւնները՝ Դ-րդ Ընդհանուր ժողովէն — հայ-թրքական համերաշխութիւն, Փարիզի քննկրէ եւ այդ առթիւ բանակցութիւններ երիտասարդ թուրքերու հետ. համաձայնութիւն ընդհանուր վեց կէտերու շուրջը. թուրք խմբակցութեանց դրական (Սապահէտտինի լիկային կողմէ) եւ բացասական (Միութիւն եւ յառաջդիմութիւն կոմիտէի կողմէ), վերաբերմունքը տեւորական գործունէութեան շուրջը: Թուրքերուն հետ առաջին յարաբերութիւն Պոլսոյ մէջ՝ սահմանադրութենէն յետոյ. առաջարկ նոր Քոնկրէի մը գումարման Պոլսոյ մէջ՝ կազմակերպելու համար իսառն Կոմիտէի եւ ուղղումներ մտցնելու համար Փարիզեան Քոնկրէին մէջ՝ եթէ հարկ տեսնուէր: Կարծիքներու տարբերութիւններ Համիտի գահնկէցութեան մասին Պատասխանատուին եւ իթթիհատականներուն միջեւ եւ անհամաձայնութիւն Քոնկրէի եւ իսառն Կոմիտէի կազմութեան վերաբերմամբ: Մերձեցման եւ միացման անյաջող փորձեր Սապահէտտինի Լիկային եւ իթթիհատականներու մէջ: Իթթիհատի յետագայ յարաբերութեանց գանազան փոփոխութիւնն ու ելեւէջները Դաշնակցութեան հետ: Յարաբերութեանց Նոր Շրջան Մարտ 31էն յետոյ: Սեւանիկ ուղարկուած պատգամաւորութեան բանակցութենէն յետոյ անպաշտօն իսառն Կոմիտէի կազմութիւն Պոլսոյ մէջ: Դաշնակցական երեսփոխաններու դերը: Թուրքիոյ կուսակցական ներքին վիճակը եւ անոր ներգործութիւնը երկրին քաղաքական կեանքին վրայ: Նոր կուսակցութեան կազմութիւն՝ յանձին «Ահրար»ի, մասնակցութեամբ բոլոր ազգերու դժգոհ տարրերէն, որ իր գործունէութեան ծրագրին մէջ կ'ընդունէր շարք մը հակա կէտեր, «Ահրար»ի կազմալուծումը՝ իր կազ-

մակերպական եւ այլ սխալներու պատճառով: Կուսակցութեանց համախմբման նոր ջանքեր՝ Դաշնակցութեան կողմէ՝ Մարտ 31էն առաջ: Ջանքեր՝ Պոլսոյ հայ հասարակական կարեւոր խաւերը կանչելու համար՝ որոշ գործերու շուրջը: Յարաբերութիւն երկրի հետ եւ այդ առթիւ հաստատուած երկու օֆիսներ՝ թղթակցական յարաբերութեանց կանոնաւոր պահպանման համար: Գրավաճառանոցի հիմնարկութիւն: Խաղաղ եւ սպառնական դիմումներ՝ բանտարկեալներու արձակման համար՝ Սահմանադրութեան առաջին օրերուն: Դիմումն հայ նախարարի մը անուանումին համար դահլիճին մէջ: Դիմումն վերադարձող գաղթականներու վերաբերմամբ: Կազմակերպական փրոփականտի գործը եւ կազմակերպիչ ուժերու առաքում երկրի գանազան վայրերը՝ այդ ուղղութեամբ: Փարլամենտական գործունէութիւն եւ փլաթֆորմի պատրաստութիւն. «Նահանգային ինքնավարութեան» եւ «ապակեդրոնացման» պահանջներու շուրջը դժգոհութիւններ՝ երիտասարդ թուրքերու կողմէ: Համեմատական ընտրութեան պահանջ Դաշնակցութենէն եւ զարտուղի ընթացքներ «Իթթիհատ»էն:

Ժողովը փակուեցաւ որոշեալ ժամուն:

Քարտուղար՝ Նախագահ՝
ԺԻՐԱՅԻ ՌՈՒԻԲԷՆ

Ամսաթիւ 29. Օգոստոս 29

Ժողովը բացուեցաւ նախագահութեամբ ընկեր Ռուբէնին մասնակցող բոլոր ընկերներու ներկայութեամբ: Կարգացուեցաւ նախորդ նիստերու արձանագրութիւնը եւ վաւերացուեցաւ:

Պատասխանատուի ներկայացուցիչը նախ քան իր տեղեկագրութեան շարունակութեան անցնելը, տուաւ հետեւեալ տեղեկութիւնները, յայտնելով որ ժողովին կողմէ ուղղուած հեռագիրներուն օրը-օրին եւ անմիջապէս պատասխանուած են «փոսթ ռեսթանթ» հասցէով, բայց այդ հասցէն իբրեւ հեռագրի հասցէ ծանօթ չըլլալով հոս գտնուող ընկերներուն, հեռագիրները նոյնութեամբ մնացած են տեղական փոսթը, զորս այսօր միայն ստացուած է, հետեւաբար նախորդ ժողովներով Պատասխանատու Մարմնին վերաբերմամբ եղած արտայայտութիւնները կ'ըլլան միանգամայն բացատրուած եւ չ'զգոքացուած: Գալով գանազան վայրերէն սպասուած պատգամաւորներուն՝ Մուշէն հեռագրուած է որ Մարգպետ եւ Սեպուհ պիտի մեկնին, բայց մինչեւ անոնց ժամանումը կը յանձնարարեն փոխանորդել տալ անոնց տեղ Գեղամին եւ Տարօնացուն՝ եթէ հարկ տեսնէ ժողովը: Հեռագիր մը ստացուած է նաեւ

Սամսոնէն՝ յայտնող թէ Տիգրանակերտի պատգամա-
ւորը հոն հասած է: Նկատելով որ զբաղումները երթա-
լով կը նուագին եւ հաւանականաբար վերջնան 15 օր-
ւան ընթացքին, ժողովը աւելորդ տեսաւ Մուշ-Սասունի
պատգամաւորներու ճամբորդութիւնը եւ հետեւաբար
որոշեց հեռագրել որ չմեկնին:

Անցնելով տեղեկագրութեան շարունակութեան՝
Պատ. Մարմին ներկայացուցիչը ծանօթացուց ինքնա-
պաշտպանութեան գործին շուրջը գործ դրուած աշխա-
տանքը, որ սկիզբէն իսկ կը բախի դժուարութեանց:
Պատասխանատուի ընկերներէն ոմանք կը նախընտ-
րէին այդ գործը ձգել ժողովուրդին մինչ միւս ընկերնե-
րը կը նախընտրէին որ կազմակերպութիւնը կանգնի
գործին գլուխը եւ զնման ու բաշխման գործը ինք կա-
տարէ: Այս երկու տեսակէտները ունէ կերպով կարելի
չ'ըլլար հաշտեցնել, որով եւ գործը չ'ունենար ցանկալի
յաջողութիւնը: Ինքնապաշտպանութեան գործին դէմ
իբրեւ արգելք կար եւ կառավարութեան պրովակացիա-
ները, որ հոս հոն հեռագիրներ կ'ուղղէր՝ զգուշացնելով
տեղական իշխանութիւնները թէ՛ Դաշնակցութիւնը
զէնք փոխադրելով կ'ամբարէ: Այս ամբաստանութեան
ոյժ տուին նաեւ Ատանայի դէպքերը, որով եւ անկարե-
լի եղաւ գործը պահանջուած թափով առաջ տանիլ: պա-
տահեցան զէնքերու ձեռքակալութիւններ եւս, իսկ գըն-
ւած եւ փոխադրուած զէնքերու ցուցակը կը տրուի ար-
դէն: Բացի շրջաններու մէջ եղած բերանացի պրովա-
կանտէն, կը ձեռնարկուի նաեւ զրաւոր պրովականտի
գործին՝ «Ազատամարտ»ով եւ «Ազատութեան Մատե-
նադարան»ի պրոչիւրներով, որոնցմէ առաջինին կը
սահմանուի 30000 Փր.ի պիւտճէ մը՝ առաջին տարուայ
համար: Փարլամենտական խնդիրներով եւ երկրին ընդ-
հանուր վիճակով հետաքրքրելու համար արտաքին աշ-
խարհը, միտք կը յղացուի Ֆրանսերէն թերթի մը հրա-
տարակութեան՝ Քիլառի դեկավարութեամբ եւ երեք
մարմիններու — Դաշնակցութիւն, Իթթիհատ եւ յոյներ
— դեկավարութեամբ, բայց միւս մարմինները չկրնա-
լով յանձնել իրենց ինկած բաժինի վճարումը (մօտ 33000
Փր. իւրաքանչիւրին) կարելի չ'ըլլար ձեռնարկը իրակա-
նացնել: Հարց կը ծագի թուրքերէն թերթի մըն ալ հիմ-
նումին, բայց նիւթական եւ այլ անհրաժեշտութիւննե-
րու չգոյութիւնը արգելք կը հանդիսանայ նոյնպէս
անոր հրատարակութեան: Պոլսոյ մէջ ընդհանուր
հանգանակութեան մը ձեռնարկելու համար եւս կը
խորհուր հասարակութեան տրամադրութիւնները:
առաջին օրերուն թէեւ նպաստաւոր բայց ինչ-ինչ պատ-
ճառներով այդ թուականին չի ձեռնարկուիր: յետոյ
այդ նպատակով կը գումարուին ժողովներ, յանձնա-
ուութիւններ կ'ըլլան հարուստներու կողմէ նշանակ-
ւած գումարներու վերաբերմամբ, բայց Ատանայի
դէպքը պատճառ կը բռնուի եւ չ'իրագործուիր մինչեւ
այսօր: Իթթիհատի կողմէ այժմ ձգտումներ կան կազ-

մելու տեւորական խառն Մարմին՝ ի հարկին կարեւոր
դէպքերու պահուն հրապարակ գալու համար: Թուր-
քիոյ այժմեան կացութիւնը բաւական պոտորուած է:
Աթթիւ ձեռնարկներու չէ դիմուած՝ որովհետեւ Սահ-
մանադրութեան յայտարարութեանէն յետոյ Պատասխա-
նատու Մարմինը իրաւասութիւնը չի գգար նախորդ
Յ[ուցական] Տ[եւորական] Պ. Մարմին տրուած իրա-
ւասութեամբ գործելու: Գաւառներու եւ Պոլսոյ մէջ
կատարուած բերանացի պրովականտը նպաստեց հայ-
թրքական յարաբերութեանց պարզումին: Ազգային-
կուլտուրական գործունէութիւն: Դրամական եւ գի-
նական վիճակ եւ այլն:

Տեղեկագրութեան աւարտումէն յետոյ ընկերները
հետեւեալ հարցումները ուղղեցին. 1- Ի՞նչ դեր ունի
Դաշնակցութիւնը «Ահրար» կուսակցութեան կազմու-
թեան մէջ եւ ո՞րքան մասնակից էր այդ կուսակցութիւ-
նը ունակստի շարժման. 2- Ինչո՞ւ Դաշնակցութիւնը
Մարտ 31ին¹³ չկրցաւ իր արժէքին համապատասխան
ուժով հրապարակ գալ. 3- Մարտ 31ի միջ-կուսակցա-
կան ժողովին հրաւիրուած էին հայ միւս կուսակցու-
թիւնները. 4- Ինչի՞ արդիւնք են «Իթթիհատ»ի հակասա-
կան դիրքերը. 5- Ինչո՞ւ համար Պատասխանատուն
վերջին համաձայնութիւնը կնքեց «Իթթիհատ»ի հետ,
երբ Ընդհանուր ժողովը գումարուելու վրայ է. 6- Ին-
չո՞ւ հրատարակութեան ձեռնարկուեցաւ «Ազատա-
մարտ»ին, երբ Արեւմտեան Բիւրոն յանձնարարած էր
մինչեւ Ընդհ. ժողով սպասել եւ որոշուած Պոլսոյ հան-
գանակութիւնը ընել նախ:

Իբրեւ պատասխան վերոյիշեալ հարցումներուն՝ հե-
տեւեալ տեղեկութիւնները տրուեցան.

1- «Ահրար»ի կազմութեան մէջ Դաշնակցութիւնն
ունեցած է ուղղակի մասնակցութիւն. այն ժամանակ
երբ Իթթիհատը զանազան ազդեցութիւններով կը սայ-
թաքէր շիտակ ուղիէն, հարկ եղաւ սանձ դնող ոյժ մը
ստեղծել. եթէ այդ ոյժը ըլլար գուտ հայ, յոյն կամ այլ
ազգութիւններէ՝ պիտի նուաճուէր եւ հալածուէր:
հարկ էր որ այդ ոյժը առաջացուէր թուրք մտաւորա-
կանութենէն եւ այդպէս ալ եղաւ: «Ահրար»ներու ան-
դամներու կարեւոր մասը իր սկզբնական շրջանին կը
բաղկանար լաւ տարրերէ: Բայց «Ահրար»ը իր քաղա-
քական ծրագիրն առաջ տանելու համար ինկաւ ծայրա-
յեղութիւններու մէջ: Ռէաքսիոնէրական շարժման մէջ
մասնակցութիւն ունենալու վերաբերմամբ միակ կաս-
կածն այն էր, որ Համիտի ու Կաթիւնէրական ծրագիրն
ու «Ահրար»ներու շարժումը ընդդէմ Իթթիհատի գու-
գաղիպեցան: Բոլոր «Ահրար»ները սակայն միշտ մնա-
ցին թշնամի Սուլթանին եւ նոյնիսկ համակարծիք անոր
ոչնչացման: «Ահրար»ներու համար ցանկալի էր ներկայ
սուլթանին գահ բարձրանալը, որ նախ քան Սահմա-
նադրութիւնը դրական խոստումներ տուած էր. «Իթ-
թիհատ»եանները զանազան մանէօվրներէ յետոյ, բար-

Նիստ L. 1909 30-VIII Առաւօտեան ժամը 8-ին

Ներկայ էին 28 ընկերներ. բացակայ է Մուրատը. նա-
խագահում էր ընկեր Անտոնը:
Կարդացուեցին եւ սրբագրուելով վաւերացուեցին
22 եւ 23րդ նիստերի արձանագրութիւնները:

Օրակարգ՝ գեկուցում պարլամենտական տեղեկագ-
րի.— տեղեկաբերն է ընկեր Գիսակը:

Միակնարկ ձգելով անցեալ 30 տարուայ մէջ հայերի
եւ ընդհանրապէս քրիստոնեաների պետական պաշտօն-
ների մէջ լինելու իրաւունքների եւ իրականութեան
վրայ, կ'անցնի դատարանների եւ իդարէներէ²⁹ կազմե-
րին յիշելով, որ հայերին եւ քրիստոնեաներին մահմե-
տականներին հաւասար ձայն է տրուած, միշտ նախա-
գահը մահմետական լինելու պայմանով: 1895ի Մայիս-
եան ծրագրի հետեւանքով մուլախիններ³⁰ նշանակուե-
ցին զանազան վարչական եւ այլ պաշտօնեաների մօտ,
քրիստոնեաներէն, ինչպէս նաեւ ոստիկանական պաշ-
տօնների մէջ ընդունել սկսեցին:

Սահմանադրութիւնից յետոյ Սայիտ փաշայի շրջա-
բերականով պարլամենտական ընտրութիւններին պի-
տի ճանչուէին քրիստոնեաների իրաւունքները պրո-
պոզիոնել հիմունքներով, որով հայերը կ'ունենային
20-է աւելի երեսփոխաններ Օսմանեան պարլամենտի
մէջ: Սակայն Քեամիլ փաշան փոխելով այդ կարգադ-
րութիւնը, իրաւունքը հիմնեց ձայնից մեծամասնու-
թեան վրայ: Այս հանգամանքն առաջացուց դժգոհու-
թիւն քրիստոնեաների մէջ եւ միայն յետագայ գիջում-
ները եւ զանազան կոմբինացիաներ հնարաւոր դարձը-
րին ունենալ 10-ը հատ հայ երեսփոխան, որոնցից չորսը
դաշնակցական են եւ 2ը Դաշնակցութեան թեկնածու-
ներ: Դաշնակցութիւնը իր թեկնածուներով ընտրու-
թիւններին մասնակցել է կարին, Վան, Տրապիզոն, Իգ-
միր, Խարբերդ, Մուշ, Պոլիս:

Իթթիհատն ընտրութիւններին ջանացած է անոնք
ընտրել տալ, որոնք համաձայնած են անպայման իրեն
հետեւիլ: Ըստ ազգութեան պարլամենտի կազմն է՝ 125
թուրք, 70 արաբ, 25 ալբանացի, 23 յոյն, 10 հայ, 4 բուլ-
ղար, 4 հրեայ, 3 սերբ, 1 ուլահ = 285:

Պարլամենտի առաջին գործն է եղած զբաղուել սահ-
մանադրութեան վերաքննութեամբ, նոր կարգերը հիմ-
նաւորելու համար: Այդ աշխատանքի մէջ պարլամենտի
ընդհանրութիւնը ձախ էր, մինչեւ Մարտ 31-ը: Պարլա-
մենտական գործի մէջ երեւան են եկած բոլորի անտեղ-
եակութիւնները եւ անպատրաստութիւնները այդ գոր-
ծին: Կարգ-կանոն բացակայած է, ինչպէս նաեւ մշակ-

29.- Պետական վարչութիւններու, վարչական խորհուրդնե-
րու:
30.- Բառացի նշանակութեամբ՝ օգնականներ, օժանդակ-
ներ:

ըութեանց տեղի չտալու համար, իրենք ալ հարկադր-
ւեցան ներկայ սուլթանի գահ բարձրանալուն, զայն մի-
անգամ ընդմիջտ իրենց ազդեցութեան եւ շրջապատին
մէջ առնելով:

2- Ռէաքսիոնէրական օրերուն ոչ մէկ կուսակցու-
թիւն հրապարակ եկաւ իր ռազմական ուժերով: Այդ
շարժման սկզբնական պարագաները անծանօթ էին եւ
յանկարծակի վրայ հասան. ասոր հետ մէկտեղ ինքնա-
պաշտպան ուժեր հրապարակ եկան: Դիմումներ եղան
խումբեր եւս հրապարակ բերելու, բայց կառավարու-
թիւնը յանձն չառաւ պատճառաբանելով որ առանց ա-
նոր ալ Մակեդոնիայէն եկած խումբերը իրենց վրայ
սուղի կը նստին եւ թուրք ամբոխը թիւր մեկնութիւն-
ներ կու տայ այդ երեւոյթին:

3- Մարտի միջ-կուսակցական ժողովին, բացի ոչ-հայ
տարրերէն, երկրորդ ժողովին հրաւիրուած էին եւ միւս
հայ խմբակցութիւններէն: Առաջին ժողովին կանչուած
էին իւրաքանչիւր ազգութենէն մէկ կուսակցութիւն,
որպէսզի այդ հաւաքուող մարմինները նախաձեռնէին
գումարել երկրորդ ժողովը, որուն մասնակցեցան մնա-
ցած կուսակցութիւնները:

4- Սելանիկի կոմիտէն թէեւ ամէն բարի ցանկու-
թիւններ կ'արտայայտէ, բայց Պոլսոյ եւ գաւառներու
մարմինները կը գործեն հակառակ: Պոլսոյ կոմիտէին
կողմէ խոստացուած հեռագիրները չեն ուղղուիր գա-
ւառները եւ ընդհակառակը: Իսկ գաւառական մար-
մինները կազմուած են կասկածելի տարրերէ, այնպէս
որ երբեմն ալ տրուած հրահանգներուն ալ հակառակը
կ'իրագործուէր:

5- Խառն Մարմին կազմելու եւ համագործակցու-
թեան գալու խնդիրը հինէն ի վեր ընդհանուր ձգտում
մըն էր եւ անոր սկզբունքը ծանօթ. այդ հիմունքով ալ
եղած են վերջին դիմումները, մանաւանդ Վանէն հե-
ռագրուած ալ էր այդ մտքով: Պատասխանատուն բաւա-
կանացած է իր մէջ գտնուած այս կամ այն շրջանէն եկած
ներկայացուցիչներով: Իսկ համաձայնագիրը 2 ամիս
առաջ խմբագրուած ըլլալով՝ անյարմար դատած է պա-
հել զայն մինչեւ Ընդհանուր ժողովի վերջաւորութիւնը:

6- «Ազատամարտ»ի հրատարակութեան հարցը դեռ
անցեալ տարիէն դրուած էր Պատասխանատուի սեղա-
նին վրայ մարմիններու յաճախակի պահանջով: Այդ
ատեն իրականութիւն չտրուեցաւ՝ կարգ մը պատճառ-
ներով — ընկերներու սակաւութիւն, դիրքի անորոշու-
թիւն — յետոյ հրատարակուեցաւ Պատասխանատուի
ընկերներու որոշումով, այն պայմանով որ տրամադր-
ւած 30000 Փրանքը հայթայթուի Պոլսի հանգանակու-
թենէն:

Ժողովը փակուեցաւ որոշեալ ժամուն:

Քարտուղար՝
ԺԻՐԱՅԻՐ
Նախագահ՝
ՌՈՒԲԷՆ

լած կանոնաւոր բանախօսութիւններ: Ժամեր տեւող անմիտ վիճաբանութիւնները, օրակարգից դուրս, սովորական են եղած:

Իթթիհատականներն էլ պարլամենտական գործունէութեան մէջ մշակուած ուղղութիւնն չեն ունեցել, բայց գծուած սահմաններ եղած են «Իթթիհատական» համարուածների համար: Արաբների եւ ալբանացիների մէջ եւս եղած են մեծ քանակութեամբ իթթիհատականներ: Թագաւորի իրաւանց կրճատման խնդրից գատ, Իթթիհատն ընդհանրապէս աջ է եղել, մասնաւոր ազգութիւնների իրաւահասարակութեան խնդիրներում եւ Մարտ 31-ից յետոյ անցած օրինագծերի մէջ: Յոյները միշտ աջ, իսկ ձախ՝ միայն գուտ յունական խնդիրներում: Հայերը միշտ ձախ եւ իրար համաձայն, բուլղարները նոյնպէս. իսկ հրեաներն՝ իթթիհատական:

Պարլամենտի մէջ եւ դուրս Իթթիհատի դիկտատորութիւնը առաջացրել էր դժգոհութիւն յետադէմների եւ ազատամիտների մէջ, ի հարկէ բոլորովին տարբեր պատճառներով: Մասնաւորապէս խոջաները³¹ չէին կարողանում հանդուրժել, հակառակ լինելով սահմանադրութեան: Հայերն էլ դժգոհ էին Իթթիհատի բռնակալ ընթացքից եւ աւելի յարած էին օպպոզիցիա կազմել ցանկացող ազատամիտներին, իսմայիլ Քեմալին: Սակայն ազատամիտների խմբակցութիւնը փոխանակ մաքուր օպպոզիցիա մնալու, արտայայտուեց ուժակցիայով, Իթթիհատին տապալելու տենչից քաղաքական կռուի մէջ խորութիւնն չընկելով:

Մարտ 31-ի շարժման մէջ խորհրդարանի այս եւ այն մասը դեր ունեցաւ, մասնաւորապէս Իթթիհատի հակառակորդ խոջաները եւ ահրարները:

Պարլամենտական գործունէութեան մէջ աչքի կ'ընկնի Քեմալի փաշայի անկման խնդիրը: Իթթիհատը վտանգ կը զգար տեսնելով վարչապետին ահրար խմբակցութեան յարած, ուստի ջանք չխնայելով կարողացաւ նրան տապալել: Հայ պատգամաւորները տապալման ձայն տուին, բայց ղեկավարուելով տարբեր մոտիւններով: Պարլամենտի մէջ ուղղութիւններ բացակայած են, բայց համախմբակցութիւններ կատարուած են մասնաւորապէս Իթթիհատի, ապա ալբանացիների, յոյների, բուլղարների եւ ահրարների հետ, առանց սակայն տեւականութեան:

Մարտ 31-ին պարլամենտը նիստի սկսած էր, շրջապատուած զօրքով եւ սարսափի տակ կը շարունակէր որոշումներ տալ: Դրութեան դէմ բողոքել են հայերը, մասնաւորապէս Հայաճեանը, պահանջելով զօրքի հեռացումը, ազատ զբաղմունքի հնարաւորութեան համար: Թէեւ պարլամենտը պատգամաւորութիւնն ղրկեց Այ-Ստեֆանօ ազատական զօրքի յառաջխաղացութիւնը արգիլելու, բայց հայերը պարլամենտի մէջ բողոքեցին եւ գաղտնի հակառակ պահանջ դրին ազատական բանակին:

Հայ պատգամաւորներն իրենց յատուկ զբաղմունքի նիւթ են դարձրել Անատոլուի յանձնաժողովը, Ատանան եւ գինուորագրութիւնը:

Մարտ 31-ից յետոյ Իթթիհատի աւելի դէպի աջ թեքւելու հետեւանքն է՝ անցած օրինագծերի սահմանափակումները եւ մասամբ հակասահմանադրական որոշումները: Յաջող ելք է ունեցել Անատոլուի երկաթուղու հարցը:

Բիւզըջի խնդրին դաշնակցականներս չմասնակցեցինք եւ ներկայ չեղանք, որովհետեւ հիմնապէս տարբեր տեսակէտներ ունէինք յանձնաժողովի տեսակէտներից եւ քննադատելն էլ միտք չուէինք:

Հայ երեսփոխանները միջնորդ են հանդիսացել ընդհանրապէս հայ ժողովուրդի, եւ մասնաւորապէս իրենց ընտրող շրջանի, եւ կառավարութեան միջեւ. իրենց հարցապնդումները երբեմն դրական արդիւնքներ տրւել են:

Տեղեկաբերն անցնելով ապագայ անելիքներին կը յայտնէ, որ Իթթիհատի ձախ թեւի ցանկութիւնն է ստեղծել ձախակողմեան մի խմբակցութիւն: Ինքն ընկեր պատգամաւորների կողմից արտօնուած չէ որեւէ առաջարկ անելու, բայց անձնապէս կը յայտնէ, որ պիտի աշխատել հնարաւոր չափով խուսափել ազգայնական մասնաւոր պահանջներէ, ստեղծելով ձախակողմեան մի խմբակցութիւն ազգային շրջանակներէ դուրս: Ուժերը կեդրոնացնել գիւղացիների եւ աշխատաւորութեան պահանջների վրայ: Ընդհանուր ժողովը սահմաններ եւ տակտիկ պիտի որոշի յաջորդ նստաշրջանի համար:

Ժողովականներ հարցեր տուին՝ ա- Ռէակցիայի օրերին հայ պատգամաւորների դերը, բ- Ահրարների հետ ընկերակցելու, գ- Դաշնակցականների իբր անհատ թէ խմբակցութիւն երեւան գալու եւ իբր կուսակցութիւն արտայայտուելու, դ- Էրզրումի ընտրութիւններին դաշնակցականների բռնի միջոցների դիմելու, ե- Մանր ազգութիւններից բլոկ կազմելու, գ- Ազգային կուսակցութիւններ արգիլող յօդուածի հանդէպ դաշնակցական պատգամաւորների բռնած դիրքին եւ իրենց՝ պատգամաւորների կարծիքով ստեղծագործական աշխատանքի թէ օպպոզիցիայի համար պարլամենտ գնալու մասին:

Ընկեր տեղեկաբերը պատասխանեց. որ ուժակցիայի օրերին հայ պատգամաւորները, մասնաւորապէս դաշնակցականները մերկացրել են շարժումը հինց առաջին բուլղին, հրապարակի վրայ են եղել եւ աւելի կողմնակի միջոցներով աջակցել են սահմանադրականներին եւ Իթթիհատականներին. ահրարների հետ բանակցութիւններ եղել են, Գ. Զօհրապը յարաբերել է, բայց համաձայնութիւն դեռ չկայացած վրայ է հասել Մարտ 31-ը, ահ-

31.- Մուլլաները:

րարների իսկութիւնը յայտնուել է եւ յարաբերութիւնները խզուել են: Դաշնակցական պատգամաւորները Պատասխանատու Մարմնի հետ միշտ խորհրդակցել են, բայց տակտիքական նկատառումներով երբեք չեն արտայայտուել յանուն կուսակցութեան, ինչպէս վարուել է նաեւ Իթթիհատը: Էրզրումի ընտրութիւններին դաշնակցականները ո'չ մի բռնութեան չեն դիմել: Մանր ազգութիւններից բլոկ կազմելու փորձն անյաջող է անցել, իսկ յոյների առաջարկած քրիստոնեաների բլոկին դաշնակցականները դէմ են եղել: Ընկերակցութեանց օրինագծի Դ. յօդուածի դէմ մինչեւ վերջը բողոքուել է, բայց Իթթիհատի տիրապետութեամբ անցել է: Դաշնակցական պատգամաւորները համոզուած լինելով որ ստեղծագործական ներկայ աշխատանքներին իրենք անմիջական ազդեցութիւն եւ մասնակցութիւն չեն կարող ունենալ, ուստի եւ իրենց դերն աւելի օպպոզիցիա են համարել:

Նախագահութիւնը յայտնեց, որ նոյն օրը երեկոյեան նիստ չի լինելու:

Ժողովը փակուեց ժամը 11-ին:

Քարտուղար՝ ՎԱՆԻԿ

Նախագահ

Նիստ ԱԱ. Օգոստոս 31 1909

Կը նախագահէ ընկեր Ռուբէն: Կը կատարուի քննադատութիւն Պատասխանատու Մարմնի գործունէութեան շուրջը, գլխաւորաբար կանգ առնուելով հետեւեալ խնդիրներուն վրայ.

Ա) Ինքնապաշտպանութեան գործին Պատ. Մարմինը չէ տուած պէտք եղած կարեւորութիւնը եւ տարւած է աւելի արտաքին քաղաքական գործունէութեամբ: Որոշուած էր 10,000 Ֆր. յատկացնել զինման գործին եւ պահել պահեստներ գլխաւորաբար ծովեզերեայ քաղաքներուն մէջ՝ չէ կատարուած: Պատ. Մարմնի ներկայացուցիչին յայտարարութեան համաձայն ուժակցիայի օրերուն Պոլիս միայն 70-80 զինուած տղաք ունեցած ենք, ինչ որ ոչինչ ըսել է համեմատած Պոլսոյ հայ ազգաբնակչութեան (180,000) ինքնապաշտպանութեան կարիքներուն: Այս ինքնապաշտպանութեան հարցին վերաբերմամբ Պատասխանատուն ինք ոչինչ չընէ զատ՝ խանգարած է նաեւ գաւառներու զինման գործը, յայտնելով թէ կազմուած է Կեդր. Զիֆոն եւ յետոյ չկազմելով այդ մարմինը: Կարինէն եղած առաջարկի մը համաձայն՝ ընկեր մը պիտի հաստատուէր Ծովափի առանձնապէս զբաղելու համար զինման հարցով: Պատասխանատուն չկատարեց իր խոստումը եւ գաւառներուն կարելի չեղաւ բաւարարութիւն տալ այդ տեսակէտին: Պատասխանատուի պահանջին վրայ՝ Արեւմտեան

Բիւրոն Մարտ 31-ին Պոլիս դրկած է 20,000 Ֆրանք, բայց չի գիտցուել թէ իր նպատակին գործածուած է այդ գումարը:

Բ) Ընտրողական պայքարին մէջ, Պոլսում, Պատասխանատուն հետեւեցաւ սխալ ուղղութեան: Մինչդեռ ամենուրեք պայքարը դրուած էր կուսակցական հողի վրայ, — Պոլսոյ մէջ պատասխանատուն աշխատեցաւ Հայաճեանի եւ Զօհրապի ընտրութեան, ինչ որ մեզի դէմ հանեց Պոլսոյ հայութեան ղեկավարներէն շատերը եւ այսօրուայ դրութեան մէջ այդ բանը իր բաժինը ունի:

Գ) Պատասխանատուն իրաւունք չուէր Պոլիս մտնելուն պէս ինքզինք յայտարարել լեկալ մարմին եւ նոյն ճամբուն մէջ մղել նաեւ մարմինները եւ ընկերները:

Դ) Պատասխանատուն Պոլսոյ մէջ ջանացած չէ առաջ բերել ուժեղ կազմակերպութիւն. այնտեղ մասսա չուէինք:

Ե) Ծրագրուած հանգանակութիւնը չէ կատարած:

Չ) Որոշուած էր որ «Ազատամարտ» հրատարակուի եւ անոր յատկացուի տարեկան 30,000 Ֆրանք դեֆիցիտ³² այն պայմանով որ այդ գումարը դուրս բերուէր Պոլսոյ մէջ հանգանակուած գումարէն. այդ հանգանակութիւնը կատարուած չըլլալով չպիտի ձեռնարկէր թերթի հրատարակման. բացի այդ՝ իրաւապէս Պատասխանատուն իր մուտքին 50% միայն ծախսելու իրաւունք ունէր, հետեւաբար եթէ իր պիւտճէն ներէր միայն պիտի հրատարակէր թերթ:

Ժ) Պատասխանատուն Պոլսոյ մէջ արիստոկրատիք հաստատութեան մը տպաւորութիւնը կը թողուր ոչ միայն ժողովուրդին, այլեւ մեր ընկերներէն շատերուն վրայ եւ մասնաւոր ինքզինքը բացառապէս արտօնուած մարմին մը կը զգար ինչպէս այդ երեւցաւ — Ներսէս) Փ(ափագ)եանի հարցին մէջ, որ հակառակ Ամերիկայի Շրջանային Ժողովին կողմէ արտաքսուած լլլալուն՝ պրոպականտի գործ ստացաւ Պատասխանատուն:

Ը) Բոլոր ուժերը ղրկուեցան Պոլիս եւ գաւառները պրոպականտիստներ չըրկուեցան:

Թ) Մարտ 31ին³³ Պատասխանատուն չուէնեցաւ պէտք եղած յեղ. հոտառութիւնը ժամանակին ի հանդէս գալով մասնակցելու համար ազատագրական շարժման, ինչ որ մեր ձայնը չեղտելու լաւ առիթ մըն էր:

Ժ) Քաղաքական վնասուածներուն կառավարութեան կողմէ տրուելիք նպաստներուն համար Պատասխանատուն Պոլսոյ մէջ քանի մը ընկերներ ցոյց տուած էր. ատիկա քումպրոմիս³³ մըն է, որ չի վայելր Դաշնակցութեան:

32.- Պիւտճէի բաց, այսինքն՝ վարկ, փոխատուութիւն իմաստով:
33.- Համաձայնութիւն՝ փոխադարձ զիջումներով:

կէտերում հաւասար աստիճանի վրայ են կանգնած, Ռուսիան աւելի հասունացած կը գտնենք, որովհետեւ զեմստվոնները³⁸ 49 տարուայ ընթացքում պատրաստել են մի սերունդ: Թալաէդ բէյը — ներկայ ներքին գործոց մինստրը — 3-4 տարի առաջ եղել է մի սոսկ հեռագրիչ, առանց քաղաքական կեանքով ապրած լինելու: Քաղաքական անհասունութեան ամենամեծ ապացոյցը այն է, որ Իթթիհատ վէ Թերաքքի կուսակցութիւնը, որը իր ձեռքում ունի այժմ կառ[ավարութեան] դեկը, իր ծրագիրը փոխում է շատ յաճախ: Plate-forme-ի մէջ ոչ մի տնտեսական ռեֆորմների պահանջ է մտցրած մասսաները դէպի իրեն քաշելու:

Բացասական կողմերը շեշտելով մոռացութեան չափերի տանք եւ այն առաւելութիւնները որ ունի Իթթիհատը: Իթթիհատը կեդրոնացնելով իր ձեռքը կառ[ավարութեան] դեկը դա տանում է համեմատաբար լաւ, իսկ միւսները արտաքին վախի շնորհիւ լուրւմ են, համակերպում, ինչպէս Սաբահեդդինը: Քամիլ փաշայի անկումից յետ, տեսնում ենք որ եթէ կայ մի կուսակցութիւն սահմանադրութեան կողմնակից, որ կարող է տանել կառավարութիւնը դէպի ռեֆորմներ, այդ Իթթիհատն է: Բաւականին անմաքուր տարրեր կան, բայց մաքրագործումը տեղի կ'ունենայ անպայման եւ հաւանական է ձախ թելը բաժանուելով միանայ դրսում եղող դեմոկրատների հետ եւ աշխատի մտցնել եւ տնտեսական ռեֆորմների պահանջ:

Պարլամենտական մեր տակտիկան եղել է պակասաւոր եւ չենք կարողացել կենտրոնանալ որոշ ուղղութեամբ: Մենք փորձեցինք երեւան գալ պարլամենտական աշխատանքներում երկաթուղիների եւ սենդիկաների հարցերում, բայց մնաց կիսակատար: Ապագայում մենք քրդերի, ալբանացիների հետ աւելի լաւ կարող ենք դիմադրել թրքամուլութեան. այդ տարրերի մէջ ազգային ինքնագիտակցութիւնը եւ արթնացումը կամաց-կամաց զարգանալու եւ արթննալու նշաններ են ցոյց տալիս:

Այս ասածներս բաւական են գալու հետեւեալ եզրակացութեանց, եւ ներկայացնում է հետեւեալ բանաձեւը.

1- Նկատելով որ սահմանադրութիւնը Թուրքիայի համար հանդիսանում է միակ միջոց թէ օսմանեան պետութեան վերածնութեան եւ թէ ճնշուած ազգերի ու կեղեքուած խաւերի վիճակի թեթեւացման, ինչպէս եւ խոշոր ազդակ իրաւակարգի յաղթանակի հարեւան երկրներում (Ռուսիա եւ Պարսկաստան եւ ամբողջ Արեւելքում):

2- Գտնելով քաղաքականապէս ոչ հասուն բայց իրենց արդի վիճակից դժգոհ ժողովրդական լայն զանգաւածները իրենց դիրքով իսկ հանդիսանալու են սահմանադրութեան պաշտպան բանակը, երբ սահմանադրական կառավարութիւնը կատարէ իր պարտականութիւնները դէպի պետութիւնը սնուցանող, բայց մինչեւ

որս միայն կեղեքուած խաւերը,

Ընդհանուր ժողովը որոշում է՝

Ա) Պաշտպանել Օսմանեան արդի սահմանադրութիւնը բոլոր միջոցներով եւ լայնացնելով նրա բովանդակութիւնը ժողովրդապետութեան,— իրաւակարգի — դեմոկրատիկ ռեֆորմների եւ ազգային հաւասարութեան մտքով.

Բ) Սահմանադրական կարգերի ամրապնդման եւ ամբողջ երկրի յառաջդիմութեան զգալի զարկ տալու համար, համոզել պարլամենտի եւ վարչական ղեկավար խաւերը, չբարձրացնել միջազգային բարդութիւններ յառաջացնող խնդիրներ, այլ կեդրոնանալ ժողովրդական լայն զանգուածների վերաբերեալ՝ մանաւանդ ընդհանուր տնտեսական բնոյթ ունեցող բարեփոխութեանց վրայ (պրոգրեսիւ տուրք ժառանգութեան եւ հարստութեան վրայ, աշարի աստիճանական վերացում, հող՝ չունեցողներին, գին[ուորներ] ռոճիկի յաւելացում, բանաւորական) օրէնսդրութիւն, ճանապարհների, երկաթուղիների լայնացում ու բարեկարգում, անցազրերի վերացում, աւատական կարգերի ջնջում):

Կուսակցական յարաբերութիւններ

1- Գտնելով որ Օսմ. պետութեան, թէ նրա մանուկ եւ երբորուն պարլամենտում չկան դեռ եւս յառաջադէմ երկրներին յատուկ գտուած կուսակցութիւններ իրենց յստակ ուղղութիւններով ու նպատակներով եւ որ գոյութիւն ունեցող կուսակցութիւնները ու պատգամաւորական ժողովը յաճախ ծառայեցում են պոլիտիկան անձանց, խմբերի նեղ շահերին.

2- Նկատելով որ Թուրքիայի քաղաք. զարգացման արդի վիճակի մէջ երիտասարդ թուրք տարրի ամենայնուայի խաւերը համախմբուած են Իթթիհատ վէ Թերաքքի կազմակերպութեան մէջ եւ ցոյց են տալիս նշաններ մաքրել իրենց շարքերը կասկածելի տարրերից եւ ընդգրկել լայն տնտեսական բարեփոխութիւնների անհրաժեշտութիւնը ազգերի հաւասարութեան հետ միասին.

Ը[նդհանուր] ժողովը որոշում է.

1- Ձանալ համաձայնութեան գալ եւ խառը մարմինների միջոցաւ համագործակցել Իթթիհատի եւ միւս ընկերվարական, սահմանադրական եւ դեմոկրատիկ խաւերի հետ բոլորին համար ընդհանուր կէտերի շուրջը, խորացնելով, լայնացնելով հետզհետէ այն չափով, որ չափով դաշնակցող մարմինները համամիտ կը լինեն եւ կ'իրականացնեն իրաւակարգը լայն մտքով, դեմոկրատիկ ռեֆորմները եւ ազգերի կատարեալ հաւասարութիւնը:

2- Յանուն մի քանի այրող տնտեսական եւ այլ պա-

36.- Ռուսիոյ մէջ զաւառական ինքնավարութեան խորհուրդներ:

հանջների ժողովրդական լայն խաւերը գիտակցութեան բերելու նպատակով, համաձայնութեամբ համամիտ կազմակերպութիւնների պրոպականդ մղել, առաջ բերելով գիւղացիների եւ ասնաֆների մի ժողովրդական միութիւն՝ հակամէտ սահմանադրութեան, որը կը լինի նոր ռեժիմի պաշտպան բանակը:

Դաշնակցական պատգամաւորներ

Դրա հետ միասին դաշնակցական պատգամաւորներին հրահանգել՝ գործել հաւաքական խորհրդակցութեամբ եւ պատասխանատուութեամբ, քննուող հարցերը լուսաբանել աշխատ[աւոր] եւ ճնշուած խաւերի տեսակէտից, նախաձեռնող հանդիսանալ մի քանի հասունացած օրէնքների:

Մինիստրութիւնների եւ կառավարութեան նկատմամբ պատգամաւորները բռնելու են անաչառ քննադատողների դեր, պաշտպանելով սկզբունքներ եւ ոչ անձեր:

Դաշնակցական պատգամաւորներին ինչպէս նաեւ գործող դաշնակցական անհատներին արգելում է մտնել կաբինէտի մէջ³⁷:

Պատգամաւորները իրենց ծախսը սահմանափակում են իրենց նախ քան պատգամաւոր ընտրուելը ստացած ռոճիկով եւ 5 ոսկի աւելի, իբր ճանապարհածախս եւ իբր ներկայացուցիչ. իսկ մնացած մասը յանձնելու են իրենց ընտրող Կ. Կ. էի կասսան:

Ժողովը նկատելով որ գեկուցումը լրացնելու կարիք կայ, որ պակասում է Թուրքիայի արդի վիճակի վրայ տեղեկութիւններ, 17 ձայնով ընդդէմ 10ի որոշում է լսել միւս ընկերներից լրացումներ, վիճաբանութիւններ, ապա անցնել եզրակացութեանց:

Ժողովի սկզբում ընկերներից մէկը իր խօսակցութեան ընթացքում, կանգ է առնում մեկուսացման քաղաքականութեան բացասական կողմերի վրայ, եւ շեշտում որ այդպիսով թուրք տարրերին զրգուում ենք մեր դէմ: Նրանք կարծում են որ հայերը պանարմենիստական ձգտումներով եւ Մ[եծ] Հայաստանի գաղափարներով են երեւան գալիս եւ երբ դնում ենք ապակեղրոնացում ու ազգերի հաւասարութիւն, նրանք միշտ անջատման եւ քաղաքական առանձին տեղեկներ են տեսնում, չեն ուզում հաւատալ մեզ: Կայ այժմ յայտնի 4րդ յօդուած³⁸, մենք միջոցներ պիտի փնտռենք տակից դուրս գալ եւ որոշ չափով համակերպուենք, ոչ այն պատճառով որ մեր սկզբունքների մէջ սխալում ենք, այլ այն որ լաւ պիտի ուսումնասիրենք թուրքերի հոգեբանութիւնը եւ կը տեսնենք որ նրանք մտածում են Պոլսում կենտրոնական ուժեղ կառավարութիւն ստեղծել եւ ինքնուրոյն զարգանալ: Մենք պիտի ձգտենք մեր կուսակցութիւնը միջազգային դարձնել, այսինքն Իթթիհատի նման ընդունել մեր մէջ ամէն

ազգութիւններից. այդ լաւագոյն ձեւն է յետ մղելու մեկուսացման քաղաքականութիւնը եւ ազատուել կոտորածից:

Կուսակցութիւնը միջազգային դարձնելու վերաբերմամբ արտայայտուում են մի քանի ընկերներ, շեշտելով այն հանգամանքը, որ այդ հարցը լինելով մեր կազմակերպական ձեւի հիմնական փոփոխութիւնը չօջափող մի հարց, համաձայն կանոնագրի չի կարելի ժողովի նիւթ դարձնել ու վճիռներ կայացնել քանի որ նախօրոք մեր մարմիններին չենք դրել քննադատելու. իսկ միւս մասը պնդում էր որ կարող ենք խօսել. վերջապէս որոշուում է առանձին հարց չդարձնել եւ թողնել վիճաբանութեանը ընթացքում խօսուելի, քանի որ այդ կապ ունի կուսակցութեան օրինականացման հետ կապուած օրակարգին:

Թուրքիայի արդի կացութեան եւ մեր բռնելիք դիրքի նկատմամբ վիճաբանութիւնները երեւան են բերում երկու հոսանք.

Մի հոսանքը գտնում էր որ Թուրքիան սահմանադրական տարրեր շատ ունի եւ սխալ է կարծել թէ սահմանադրութիւնը կը պահպանուի միայն մի խումբ գինւորների ձեռքով, առանց ժողովրդի մեծամասնութեան օգնութեան, ինչպէս ասուեց թէ ժողովրդի 90% տոկոսը հակասահմանադրական է: Օսմ. ժողովուրդը հին ռեժիմի օրով էլ ցոյց տուեց իր սահմանադրութեան կողմնակից լինելը, ապացոյց մի շարք ցոյցերը, որոնք կատարուեցին շատ խիստ պայմաններում իսկ: Բացի այդ վերցնենք ազգաբնակչութեան 90% տոկոսը, եւ քննենք նրանց վիճակը. կը տեսնենք որ տնտեսական շատ խոշոր ճնշում է ծանրանում նրանց վրայ. հէնց այդ բաւական է որ նրան հակամէտ դարձնի դէպի սահմանադրութիւնը եւ դէպի նոր կարգեր մղի, հէնց իրեն շահերի տեսակէտից: Վերցրէք ինտելիգենցիան, աւելացրէք բուրժուազիայի դեմոկրատիկ մասերը, որոնք գաւառներում համեմատաբար աւելի մաքուր են մնացել, ճնշուած ազգերին, որոնք գերազանցօրէն սահմանադրական են իրենց շահերի տեսակէտից, հին ռեժիմից դժգոհներին, կը տեսնէք որ սահմանադրութեան կողմնակիցները մեծ շանսեր ունեն: Ճիշդ է այն որ սահմանադրութեան վիճակը կը շարունակուի շատ եւ քանակացած, բայց նրանց ոչալ շահերը կը թելադրեն նրանց սահմանադրական լինելու: Իրաւակարգի պահանջը ակնբերել է: Մէկ էլ չի կարելի ասել մի ամբողջ ժողովրդի համար սահմանադրական չէ: Վերցրէք յոյները, նրանք իրենց

37.- Այսինքն կառավարութեան, կառավարական դահլիճի մէջ:

38.- Ընկերակցութեանց մասին թրքական խորհրդարանի ընդունած 6րդ օրէնքի 4րդ կէտով կարգիւրուելու ազգային հիմունքով միութիւններու կամ կուսակցութեանց կազմութիւնը. բաց մը որ օրինակացման դժուարութեան դիմաց կը դնէր Դաշնակցութիւնը:

էութեամբ եւ կուլտուրայով սահմանադրական պիտի լինեն, բայց մենք շատ անգամ տեսնում ենք հակառակ գնալիս: Մի ժողովրդի սահմանադրական լինելը պայմանաւորուում է իր ռէալ շահերի ու երազների իրականացման տենչով. թուրքերը մտածում են թուրքիան թուրքերի համար:

Համագործակցութիւնը իթթիհատականների հետ անհրաժեշտ է, իբր մի կուսակցութեան, որ իր մէջ հաւաքում է սահմանադրական տարրերին մեծ մասամբ եւ դեմոկրատիկ խաւերին: Մենք աւելի շատ նրա ձախ թեւին հակուելու ենք նրան աւելի ձախ տանելու համար՝ կազմելու դեմոկրատիկ կուսակցութեան կորիզը:

Շարիաթը զուր է նկատում իբր սահմանադրութեան հակառակորդ. ընդհակառակը նա չի ընդունում միապետութիւնից բխող սուլթանութիւն եւ տալիս է ընտրական իրաւունքի սկզբունքները. չէզոքացրէք ճնշող տարրերը, oligarchie-ն³⁹ եւ կ'ունենանք մի սահմանադրական ժողովուրդ թէկուզ միտիկ:

Ընկերներից մէկը շեշտում է իթթիհատականների հետ համերաշխ գնալու անհրաժեշտութեանը վրայ, եւ նկատում որ մենք մեծ տակտիկական սխալ գործած կը լինենք, եթէ չուսումնասիրենք ու չհասկանանք թուրքերի հոգեբանութիւնը եւ ընդառաջ գնանք ստատուք-ի առաջարկին. դրանք արդէն մեկուսացման քաղաքականութեան տենդենցներ են. զուտ ազգայնական գործը՝ գործունէութիւնը վախեցնում է թուրքերին. պետական ամբողջութեան վտանգ են տեսնում. նրանք տեսնում են իրենց առաջ Եւրոպային որը ձգտում է կլանել Արաբիան եւ ուրիշ կողմեր. յոյները ունեն համաբիւզանդական ձգտումներ, բուլգարները ձգտում են քշել թուրքերին եւրոպական մասից. Արաբիայի գերիշխանութեան վախը կայ: Արաբները պարլամենտում ունեն 70 պատգամաւոր. հաւանական է վաղը հասնի 120ի. ինչո՞ւ թոյլ չտանք թուրքերին ինքնապաշտպանութեան գործում ազատ լինելու: Դաշնակցութիւնը առաջինը պիտի լինի նրանց ձգտումներին ընդառաջ գնացողը եւ մենք Ադանաների վախից ազատ կը լինենք:

Միւս հոսանքը գտնում էր որ թուրքիայում սահմանադրութիւնը երբորուն է եւ անցողական շրջանի մէջ է գտնուում. 99 գուցէ եւ 99 3/4 % թուրք ժողովուրդի հակասահմանադրական է իր հուլիսամբ եւ գոյնով. թուրք ժողովուրդը չի կարող թողնել իր դարերով գերիշխողի դերը հանդէպ հպատակ ազգութեանց. մահմետական կրօնը շատ մեծ արգելք պիտի հանդիսանայ. թուրք ժողովուրդը ամէն կերպ ձգտում է իրենից յետ ժողովրդների կլանել ու ձուլել իր մէջ, իսկ նկատելով հայերին կուլտուրայէս բարձր եւ անկարելի ձուլելու, նրա բնաջնջման է ձգտում: Այդ աւելի աչքի պիտի ընկնի մանաւանդ սահմանադրական կարգերում երբ դըրուած է ազգերի իրաւահաստատութեան [հարց], մի հանգամանք որ թուրք գերիշխող տարրի համար տանե-

լի չի կարող լինել. իբր ապացոյց դրան բերում են այն որ երբ գաւառներն եւ մտնում սահմանադրութեան հոտ անգամ չկայ, նախկին դրութեան է գրեթէ եւ մահմետական տարրը դժգոհ դրութիւնից: Մարտ 31-ին¹³ թուրք տարրը ուրախացաւ եւ սպասում էր հրամանների. գաւառում այդ օրերին մի մարդ չէիք գտնի սահմանադրութեան կողմնակից. միայն իբր բացառութիւն Արաբկիրում գտնուեց դեպոյի մի պահապան (Շահբազի խօսքերն են վերջինը): Որ հայերին ճնշում եւ հալածում են՝ այդ փաստ է: չէրքէզներ, թաթարներ եւ մուհաջիրներ են բերում հայերի հողերի վրայ բնակեցնում, մինչդեռ հողը շատ սակաւ է: Ուրիշ ապացոյց՝ Ադանան եւ նման դէպքերի կրկնումը շատ հաւանական է:

Իսկ ինչ վերաբերում է մեկուսացման քաղաքականութեան, մեղքը մերը չէ. կառավարութեան կեդրոնախոյս քաղաքականութեամբ պիտի բացատրել: Ադանան մի վէրք չէ միայն որ պայթեց. թուրքերին հետ գնալիս մի կողմը պիտի մնան իդէալները, առողջ քաղաքականութիւնը իտէալիզմով չի տարուում, ռէալ հողի վրայ պիտի կանգնենք եւ թող որ թուրք տարրը ինքը ձեւեր մշակի մեզ մօտենալու համար: (Այս պարբերութիւնը Շահբազինն է):

Իսկ գալով 4րդ յօդուածին ու իթթիհատի հետ միասին գործելուն, այդ հոսանքը պնդում էր որ մենք երբեք միջազգային հողի վրայ կանգնելու չենք. այդ սկզբունքային գիջում կը լինի. միայն տակտիկական փոփոխութիւններ պիտի լինեն: Վերջին declaration-ի մէջ սկզբունքային գիջումներ կային: Միջազգային այդ տեսակի հասկացողութիւնը սխալ է, Եւրոպայում փորձերի հիման վրայ եկել են հակառակ եզրակացութեան եւ այժմ ամենալաւ սիստեմը աւստրիականն է համարում: Մենք ոչ մի դէպքում երիտասարդ թուրքերի պատճառաբանութիւնները նկատի առնելու չենք, նրանք տարուում են միլլէթը հաքիմիէի⁴⁰ սկզբունքով եւ եթէ մենք մի քայլ գիջում անենք, ստիպուած ենք անելու եւ երկրորդը, երրորդը. գիջման եւ համակերպութեան քաղաքականութիւնը մեզ շատ հեռու կը տանի: Մի՞թէ մեր նպատակն է նրանց գերիշխանութեանը ձգտել: Ի՞նչ դիրք պիտի բռնենք մենք, երբ նրանք տարուած այդ միլլէթը հաքիմիէի գաղափարներով մտածեն ճնշել յոյներին եւ ուրիշ հպատակ ազգերին. մենք այդ ճնշուած ազգերի դէ՞մ պիտի գնանք յանուն համերաշխութեան: Իթթիհատը պարլամենտական մի կուսակցութիւն է. վաղը նրան փոխարէն մի ուրիշը կարող է ծնուել: Մենք Ռուսաստանում S.R.-ի [սոցիալ ռեւոլուցիոնէր] եւ S.D.-ի [սոցիալ դեմոկրատ] լուրջ ծրագիրներով դուրս եկած կուսակցութեանց հակառակ էինք գնում եւ ըմ.

39.- Ֆրանսերէն՝ սակաւապետութիւնը:
40.- Տիրող ազգի:

բոստանում. այժմ իթթիհատականներին ե՞նք համակերպելու:

Մենք պիտի գնանք արաբների, ալբանացիների եւ քրդերի հետ միասին, չպիտի հրաժարուենք սոցիալիզմից եւ ապակենտրոնացումից, իսկ եթէ դրանից յետ ստիպուած կը լինենք իլլեգալ մնալ, կը մնանք:

Ընկերներէն մէկը (Ամատունի) շեշտում է bloc իթթիհատի հետ նշանակում է վազ անցնել ազգային եւ այլ իրաւունքներից. դա ինքնասպանութիւն է. մենք միայն մեր վիճակակից ազգերի հետ պիտի միանանք: Վիճաբանութեան շարունակութիւնը թողնուեց յաջորդին:

Ժողովը անցնում է լսելու մանդատային յանձնաժողովի գեկուցմանը Պատասխանատու Մարմնի եւ Բալքանի Կ. Կոմիտէի ներկայացուցիչների վերաբերմամբ:

Պատասխանատու Մարմնի ներկայացուցիչն ընդունում է նախորդ նիստերից մէկում ընդունուած բանաձեւի եզրակացութիւնը. իսկ Բալքանինը 20 ձայնով ընդդէմ եօթի: 7 հոգին չէր ընդունում պատճառաբանելով որ ընկեր Նիթրան նախ որ Բալքանի Կ. Կոմիտէի անդամ չէ եւ մնում է ուրիշ շրջանում եւ երկրորդ դատի տակ է:

Քարտուղար՝ ՎԱՀԱՆ Նախագահ

Նիստ 34. Սեպտեմբեր 1

Նիստը բացուեցաւ երեկոյեան ժամը 4ին, մասնակցող բոլոր ընկերներու ներկայութեամբ: Կը կարդացուի նախորդ նիստերու արձանագրութիւնը եւ կը վաւերացուի:

Ընկեր Նիթրա մէջբերելով իր դատական պարագան, կը բողոքէ ստուգիչ յանձնաժողովի եզրակացութեան եւ ժողովի նախորդ որոշման դէ՞մ ի մասին իր պատգամաւորութեան ընդունելութեան, յայտնելով որ իր դատական պարագան բոլորովին տարբեր է այն բոլորէն՝ որ կապուած են ժողովականներէն մէկ-քանիին անձնաւորութեան հետ:

Անցնելով օրակարգին, ժողովը շարունակեց ընդհատուած վիճաբանութիւնը՝ թուրքիոյ մէջ Դաշնակցութեան հետեւելիք ուղղութեան եւ գործունէութեան շուրջը, նիւթ առնելով մասնաւորապէս «լեկալ» կամ «իլլեկալ» մնալու հարցը:

Օրինականացման հարցը պաշտպանող ընկերները արտայայտուեցան կանգ առնելով հետեւեալ պատճառաբանութիւններուն վրայ: Իրերու դրութիւնը թուրքիոյ մէջ բարդ է եւ մեր վիճակը այնքան ծանր, որ կանգ առնել գեկուցանող յանձնաժողովի եզրակացութեան վրայ՝ մեզ կը դնէ միանգամայն վտանգաւոր ճամբու

մէջ: Պարզ է որ թուրքիոյ մէջ կայ որոշ չափով սահմանադրութիւն. մէկ տարուայ ամբողջ փորձը եւ բոլոր պայմանները ցոյց կու տան որ հայերս համերկրացի ազգերուն մէջ միեակ ենք եւ որոշ չափով յոյս դրած թուրք գօրքերու եւ կառավարութեան վրայ. եթէ մենք մեր յոյսերը դնենք փոքր ազգութեանց վրայ — որ այնքան աղմուկներ յարոյց — սխալ է, որովհետեւ ներկայ կառավարութիւնը դէ՞մ է այդ փոքր ազգութեանց յառաջխաղացութեան վրայ. եթէ հակառակ ուղղութեամբ ընթանանք՝ կ'առաջանայ սահմանադրութեան քրիզիս: Առ այժմ մեր գլխաւոր ջանքը պիտի լլլայ պաշտպանել սահմանադրութիւնը. եւ եթէ այդպիսին է՝ սխալ է կենալ առ այժմ ազգային ուրոյն պահանջներու վրայ. այժմ մեր կուսակցութիւնը ժամանակի մը համար պէտք է մեր ծրագրային գանազան խնդիրները դնէ մէկ կողմ՝ ոչ թէ անոր համար որ դէ՞մ ենք, այլ անոր համար որ օրուայ ռէալ քաղաքականութիւն չենք ընդունիր: Մեր ջանքը պիտի լլլայ երիտասարդ թուրքերու հետ համերաշխ գործունէութեամբ սահմանադրութեան պաշտպանումն ու ամրացումը: Բայց համերաշխութեան անունով պիտի չընենք գիջում, այլ կանգ առնելով ըստ հուլիսեան միջազգային հողի վրայ՝ պիտի գործակցինք անոնց, շարունակելով ներքնապէս մեր գաղտնի կազմակերպութիւնն ու ինքնապաշտպանութեան գործը: Խորհրդարանը դեռ չէ անցած շինարար եւ կուլտուրական աշխատանքներու. պէտք է աջակցիլ եւ ջանալ այդ աշխատանքներու իրագործման եւ այդ ո՛ւժն է Դաշնակցութիւնը: Կազմակերպութիւնը ամբողջովին դնել գաղտնի վիճակի մէջ, կը նշանակէ քոնֆլիկտ ստեղծել եւ հեռացնել մասսան մեզմէ. օրէնքը չի թոյլատրեր Դաշնակցութեան գոյութիւնը ներկայ վիճակով, ուրեմն հարկ է միջոցներ փնտռել: Հայ ժողովուրդը չունի այն պայմանները՝ ինչ պայմաններ որ ունին պուլկարները, մակեդոնացիները, ալպանացիներն եւ այլն. ոչ մէկ տեղ մեծամասնութիւն եւ այն ալ ցրուած. մեր դրութիւնը դարձած էր անտանելի. եթէ վրայ չհասնէին սահմանադրական շարժումները, հայ ժողովուրդին այլեւս ապրելու հնարաւորութիւն չէր մնացած. սահմանադրութեան տապալումէն վնասուողը մենք պիտի լլլանք ամէնէն աւելի, որովհետեւ ո՛չ մէկ հնարաւորութիւն ունինք մեր գլուխը պահելու, մինչդեռ միւս ազգութեանց հաշտոյն աւելի կու գայ՝ եթէ սահմանադրութիւնը գոյութիւն չունենայ. ու եթէ անգամ մըն ալ հարուածը հասնի հայ ժողովուրդի գլխուն ալ ոչ մէկ կերպով կրնայ ոտքի կանգնիլ եւ հրապարակալ ազգային պահանջներով: Հայ ժողովուրդին գոյութեան հարցը, իթթիհատի, թուրք ժողովուրդին ու պետութեան ամբողջ պահպանութեան ձգտումը կը նույնացնեն, կը դիւրացնեն համերաշխութեան գործը: Սոցիալիզմը ինքնապիտանութեան միջազգայնացումն է: Իսկ Դաշնակցութիւնը իբրեւ Դաշնակցութիւն իր ինքնու-

թիւերը պիտի պահէ եւ ձեռք տայ նման կազմակերպութեանց: Առանց թուրք տարրին՝ ոչ մէկ քայլ չենք կրնար ընել Թուրքիոյ մէջ. արտաքինապէս մենք մեզ կ'անուանենք Օսմանեան դաշնակցութիւն, իսկ ներքինապէս կը շարունակենք մեր գործը: Թուրք ժողովուրդէն պահանջել սահմանադրութեան հոլութեան հասկացողութիւնը՝ դժուար է: բայց թուրք ժողովուրդը ճշմարտութիւնը նախորդ ռեժիմի տակ՝ սահմանադրութենէն ակնկալութիւն մը ունի, հետեւաբար սահմանադրութեան արդիւնաւորութենէն կախում ունի անոնց սահմանադրականութիւնը: իսկ երիտասարդ թուրք ինտելիգենցիան որքան ալ ձգտում ունենայ ձուլել ոչ մահմետական տարրերը իրենց մէջ, իրենք ալ գիտեն որ այդ բացարձակապէս անկարելի է. ուստի համերաշխութիւնը երբեք վտանգ չի կրնար ըլլալ մեր գոյութեան պահպանման: Ընկերակցութեանց հրդեհ եւ այլ յօդուածները աւելի ուղղուած են արաբներու եւ այլ մահմետական ազգութեանց դէմ, որոնց դէմ չեն կրնար կռուիլ կրօնական եւ այլ հողի վրայ, հետեւաբար այդ յօդուածներով հայութեան դէմ էնթրիք սարքելու դիտաւորութիւն չէ ունեցած: Հայերը եղած են տեսակ մը քաղութեանց նոխազը միւս ազգութեանց: «Իթիհատ»ը զգալով հայ տարրին կենսունակութիւնն ու ստեղծագործող ոգին, միշտ լաւ յարաբերութիւն ունենալ հարկադրուած է: Նոյնիսկ այն դրացի ազգութիւնները, որոնք մեզմէ շատ աւելի նպաստաւոր պայմաններով շրջապատուած են, այդ համերաշխութեան կապերը կը պահեն: արաբները հակառակ իրենց թուական առաւելութեան, ուղղակի «Իթիհատ»ի հետ կապուած են եւ համախոհ անոր քայլերուն: յոյներն ու պոլկարները, հակառակ իրենց ազգայնական հակադիր ձգտումներուն, «Իթիհատ»ի հետ սերտ յարաբերութեան մէջ մտան: Նախկին ուղղութեամբ գործել Թուրքիոյ մէջ՝ վնասակար է եւ դէմ ժողովուրդի շահերուն, որ հանգիստի պէտք ունի: մեր գաղտնի գործունէութեամբը՝ նախորդ ռեժիմի օրով՝ թուրք տարրին մէջ արմատացուցած ենք անշատողական կասկածները մեզ նկատմամբ: Սահմանադրութեան օրով եւս նման գործունէութիւն մը աւելի պիտի խորացնէ այդ կասկածները եւ պատճառ պիտի դառնայ ծանրածանր հալածանքներու. այսպէսով ոչ միայն ժողովուրդին հանգիստը պիտի վրդովենք, այլեւ Եւրոպայի հանրային կարծիքը: երէկ Ատանայի դէպքերու պահուն իսկ վրդովուեցաւ այդ կարծիքը մեր դէմ սխալ լուրերու հիման վրայ: Ժողովուրդը այլեւս անկարող է տանիլ ծանր պայմաններ եւ ձանձրացած է յեղափոխական թէ միապետական լուծէն միանգամայն: Ներկայ ռեժիմը ասպարէզ կու տայ ամէն կերպով աշխատելու: Օրինականացման հարցին բաւարարութիւն տալու համար կը բաւէ «հայ յեղափոխական» բառերը ջնջել, որովհետեւ օրէնքին մէջ գետեղած, «կառավարութեան կարգերու դէմ» բացատրու-

թիւերով կ'ակնարկուի դէպի միապետութեան ձգտումը: Ընկերակցական սկզբունքն ու գաղափարը դէմ չէ 3րդ յօդուածին: բաւական է միայն վերցնել «յեղափոխական» բառը, որ Թուրքիոյ ներկայ պայմաններուն մէջ աւելորդ է: Եթէ մեր ծրագիրը յայտնի կերպով հրատարակենք եւ հասկցնենք անոր միտքը անվերապահօրէն թուրք ինտելիգենցիային եւ իթիհատին, Դաշնակցութեան օրինականացումը չպիտի արգիլուի: Յարմարագոյն ժամանակն է տիրող ազատութենէն օգտուելով՝ փրփականտ ընել մեր ծրագիրն ու սկզբունքները: գաղտնի գործունէութիւնը վնասակար է մեր ժողովուրդին ու վնասակար անոր գոյութեան: իսկ զեկուցանող յանձնաժողովի եզրակացութեան ի նպաստ եղան հետեւեալ արտայայտութիւնները: Թուրքիոյ վիճակը միշտ փոփոխման վտանգին ենթակայ է: ինչ որ կայ այսօր Թուրքիոյ մէջ, Մարտ 31ին գոյութիւն չունեցաւ եւ վաղը գուցէ գոյութիւն չունենայ: Թուրքիոյ մէջ չի կրնար գոյութիւն ունենալ ռեժիմ մը՝ որ Ռուսիայէն տարբերի: Ընդհակառակը Ռուսաստանի մէջ սահմանադրութեան հոլութիւնն ու գաղափարը աւելի լայնցած է. Ռուս ժողովուրդը այն չէ՝ ինչ որ է մահմետական ժողովուրդը: այս վերջինը կանգնած է աւելի ցած մակարդակի վրայ եւ մեծ մասամբ հակասահմանադրական է: Սահմանադրութեան հոլութիւնը — Թուրքիոյ նման երկրի մէջ ուր ամբողջ դարեր բռնակալութիւնն ու տիրող տարրի գերիշխանութիւնն է տիրապետեր — ազգերու հաւասարութեան մէջն է, մինչդեռ Թուրքիոյ մէջ այդ հաւասարութիւնը ձուլում կ'ըմբռնուի: Եթէ թուրքերը ըմբռնեն մեր ծրագրին էութիւնն այնպէս՝ ինչպէս ըմբռնուած է Ռուսիոյ մէջ՝ հոն եւս նոյն հալածանքները պիտի սկսուի՝ ինչպէս Ռուսիոյ մէջ: Այսօր՝ երբ թուրքերը Դաշնակցութեան վրայ կը նային կուսակցութեան մը վրայ՝ որ իր անցեալն է ունեցեր, իր հայրուկային խումբերն ու զոհարարութիւնները եւ այդպէս ըլլալով հանդերձ կ'ունենան իրենց վերապահումները, որքան տարբեր ընթացք պիտի բռնեն՝ երբ ըմբռնեն մեր ծրագրին բովանդակ ոգին: Իթիհատը ինք եւս ունի իր իլլեկալ մասը, իր օրինականացումը, աւելի երեւոյթը փրկելու նպատակով է: Դաշնակցութիւնը եւս կը մնայ գաղտնի եւ իր անդամները կը մտնեն զանազան կրթական, գիւղացիական եւ այլ կուլտուրական միութիւններու մէջ եւ կը կազմեն սահմանադրական բանակ: Եւ Դաշնակցութիւնը իլլեկալ կը դառնայ՝ հակառակ իր կամքին եւ տիրող պայմաններէ հարկադրուած. անոր թոյլ չեն տար որ լեկալ դառնայ: ընկերակցութեանց օրէնքի չորրորդ եւ յարակից յօդուածները ուղղակի Դաշնակցութեան դէմ են, որով ընկերակցական ամենաթեթեւ ակնարկութիւն մը իսկ կը ժխտեն: Դաշնակցութիւնը մնալով «հայ յեղափոխական» ազգային կուսակցութիւն, ոչ ոք կրնայ զինքը մեղադրել իբրեւ հակասահմանադրական, իբրեւ

պատճառաբանութիւն՝ որ ան միայն Թուրքիոյ հայութեան համար ստեղծուած չէ: կ'արգիլուին սենտիքաները, կ'արգիլուին գիւղացիական եւ բանուորական միութիւնները: եթէ մեր իլլեկալ մնալու որոշման մէջ մեղադրուինք՝ մեր պատասխանը պարզ է՝ այն որ թոյլ չեն տար մեզ մեր սկզբունքներուն համաձայն աշխատելու: Եթէ երիտասարդ թուրքերը մեր գործակցութեան պէտքը կը զգան այսօր՝ պիտի զգան եւ վաղը: Համակերպութիւնը չէ որ մեզ պիտի փրկէ, այլ համագործակցութիւնն ու մեր գործունէութեան թաքցիլական եղանակը: Գաղտնի մնալու գաղափարը կոտորածի վախեր կը ներշնչէ, մինչդեռ կոտորածներ պատահեցան երբ կը գործակցէինք իթիհատին: Կառավարութիւնը եթէ պահանջէ որ Դաշնակցութիւնը գոյութիւն ունենայէ դադրի, ինքզինք է որ վտանգած պիտի ըլլայ: եթէ Դաշնակցութիւնը եւ իթիհատն են սահմանադրութեան նեցուկը, կառավարութիւնը բնաւ պիտի չկրնայ ընել նման պահանջ մը: Մեր եւ իթիհատի մէջ առայժմ սկզբունքային եւ գաղափարային ոչ մէկ կապ կայ, բացի սահմանադրութեան շուրջը ստեղծուած համերաշխութենէն, բայց որովհետեւ մեր կացութիւնը վտանգաւոր է, այդ պատճառով ալ մենք ձեռք կու տանք անոր, հայ ժողովուրդի գոյութեան պահպանման տեսակէտով առաջնորդուելով՝ անկարելի է մեզ հրապարակաւ մեր ամբողջ ծրագրով ու պահանջներով: Իթիհատի հետ համերաշխութեան անհրաժեշտութեան չափ կարեւոր է Թուրքիոյ միւս ազգութեանց հետ համերաշխ գործակցութիւն մը: Վիճաբանութեան շարունակութիւնը յետաձգուեցաւ յաջորդ նիստին:

Քարտուղար՝
ՃԻՐԱՅԻՐ
Նախագահ

Սկստ 35րդ. 2 – IX առաւօտեան ժամը 8-ին

Ներկայ են 27 ընկերներ:
Կը նախագահէ ընկեր Ռուբէն:
Օրակարգ՝ շարունակութիւն կուսակցութեան լեզալիզացիայի խնդրին:
Իլլեկալութեան կողմնակից մի քանի բանախօսներ կը նկատեն, որ յեղափոխ. կազմակերպութեան ոյժը մասամբ եւս իր գաղտնի լինելն է: լեզալիզութիւնը այնքան էլ հնարաւորութիւն չի տար ազգեցութիւն ունենալ պարլամենտական-հասարակական գործունէութեան մէջ, քանի որ կուսակցութիւնը լեզալ շօշափելի ոյժ մը չունի դեռ: Միաժամանակ կը շեշտուի, որ հնարաւորութիւն չկայ ներկայ օրէնքին յարմարուիլ, կուսակցութեան հոլութիւնը պահպանելով: Միայն կը համարուի

այն միտքը, թէ հայ ժողովուրդի միջից վերացել է արդէն այն հողը, որ հիմք էր յեղափոխական գաղտնի Դաշնակցութեան համար: Գաղտնի մնալով համերաշխութեան եւ լեզալ գործունէութեան համար՝ հիմնել խառն կուլտուրներ, միաժամանակ պատրիարքարան կամ մի այլ լեզալ հիմնարկութիւն դարձնել խողովակ լեզալ գործերի յարաբերութեան: Լեզալիզացիայի սկզբունքը չէ որ կը մերժուի, այլ անհնարինութիւնը կը շեշտուի ընկերակցութեանց օրէնքի մի քանի յօդուածները նկատի առնելով:
Ակնունդ.— Դաշնակցութեան հայեցողութեան հիմնական կէտն է եղած կանգնել իրականութեան ուշալ հողի վրայ: երբ եղած են շեղումներ, կուսակցութիւնը ինքնաբերական⁴¹ է մատնուել: Փաստերի եւ ո՛չ թէ որինքնի փոխադրութեան հետեւելու մէջ է Դաշնակցութեան կենսունակութիւնը: Թէորիայի փոխադրութեամբ տարուելու դէմ պայքարել ենք դեռ մի քանի տարի առաջ հէնց մեր շարքերում գտնուածներին սխալը մատնանշելով: Այժմ ընկերներ կան, որ կանգնած են դարձեալ թէորիաների փոխադրութեան ճամբու վրայ այդ խնդրի նկատմամբ,— թողած փաստերի փոխադրութիւնը՝ որի վրայ կանգնած են միւս բոլոր խնդիրներում: Չէ՞ որ այդ՝ ամլութեան կը դատապարտէ կուսակցութիւնը:
Միթէ՞ Թուրքիայում չէ կատարուած մի այնպիսի փոփոխութիւն, որը պատճառ լինի կուսակցութեան համար լեզալիզացիոնի նման կարեւոր նորութիւն մտցնելուն: Մեր տարիների նուազագոյն երազ-ցանկութիւնը, հայ ժողովուրդի ամենատարրական ազատութիւնները, այսօր մասամբ իրականութիւն են օսմանեան սահմանադրութեան յայտարարութեամբ: Պատմական այդ մեծ իրողութեանը եթէ չյարմարացնենք մեր տաքտիկը՝ հետեւած կը լինենք թէորիաների փոխադրութեան: Ժողովուրդի շահը պիտի լինի մեզ առաջնորդողը: իսկ հայ ժողովուրդը այսօր գերազանցօրէն պէտք ունի հանգստութեան եւ գոնէ եղածը պահպանելուն: Չլսել այդ ձայնը եւ, դողմատիկօրէն⁴² յամառելով, առաջացնել փոթորիկներ, թէպէտ եւ հակառակ մեր կամքին, կը նշանակէ ոտնահարել ժողովուրդին իր կենսական շահերով մէկտեղ: Երբ պահանջ կը դրուի մեկուսացման քաղաքականութիւնը թողնել, ո՛չ թէ կ'առաջարկուի համակերպութիւն, այլ համագործակցութիւն կոնկրէտ բարեփոխումների եւ պահանջների շուրջ: Արդէն մինչեւ այժմ էլ մեր համերաշխական յարաբերութիւնների մէջ երբեք չենք համակերպած, այլ միշտ յամառօրէն կանգնել ենք մեր սկզբունքների եւ պահանջների վրայ: Միւս բոլոր տարրերը իթիհատին

41.- Անգործունէութեան:
42.- Վարդապետական դրութեան վրայ հիմնուած, վերացականօրէն:

խնկարկել են եւ նրա խօսքերին ու քաղաքականութեան հաւանութիւն տուել, իսկ մենք միշտ քննադատել ենք, երբ սխալ ենք տեսել: Նրա բոլոր պահանջները, որ մեզ նից գիջողութիւններ են պահանջել, մերժուել են, իսկ ընդհակառակն մենք ստիպել ենք նրանց խոստովանել, որ հայերի եւ դաշնակցականների շարժումների եւ պահանջների ու գործերի մէջ անջատականութիւն չկայ: Հակառակ նրանց պահանջներին, մենք պլատֆորմի միջոց չվերացրինք մեր ազգային, յեղափոխական եւ ապակեդրոնական լինելն ու պահանջները: Անվնաս եւ հարկաւոր գիջումներ եղած են եւ մեր կողմից, որովհետեւ համագործակցութիւն հնարաւոր չէ առանց փոխադարձ գիջումների:

Իրականութիւնը հաշուի չառնել եւ յամառօրէն շարունակել նախկին ճանապարհը, կը նշանակի կռիւ յայտարարել ո՛չ միայն կառավարութեան, Իթթիհատին եւ մահմետական յետամնաց ազգերին, այլ եւ հայ ժողովրդին: Մի հանգամանք է այս, որ չի կարելի անտեսել: Գոնէ ձեւականօրէն չօրինականանալ եւ շարունակել բոլորովին նախկին ձեւով՝ կը նշանակէ կազմալուծուել եւ երկրի բոլոր գործերից չէզոքանալ: Լեզալիզացիան եւս, անշուշտ, ունի իր անյարմարութիւնները, գաղտնի եւ յայտնի մասերի գործունէութեան [եւ] յարաբերութիւններին մէջ, բայց պիտի աշխատել միջոցներ գտնել եւ ընտրել չարիքներից փոքրագոյնը: Կրդ յօդուածից կարելի է ձեւականօրէն խոստափել, օրէնքի ցանկացած միջազգայնացումն իսկապէս ընդունելով, որից սակայն զրկուած ենք, որովհետեւ օրակարգի մէջ չի մտել այդ հարցը: Հ. եւ Յ. եարլիկը⁴³ ջնջելով եւ միայն Դաշնակցութիւն, կամ Դաշնակցութեան օսմանեան, կովկասեան եւ իրանեան հատուածներ կոչուելով, կարելի է ոչինչ գիջած չլինել կուսակցութեան հոլութիւնից, եւ թերեւս կատարած լինել օրէնքի պահանջը: Լեզալ Դաշնակցութիւնն ունենալով է իր գաղտնի մասը, որի կազմը եւ մարմինները յայտնի չպիտի լինեն լեզալ կազմակերպութեան. միաժամանակ այդ գաղտնին հրապարակ չպիտի իջնէ այնպիսի անուսով մը, որ իր առնչութիւնը հաստատէ լեզալի հետ: Այսպիսով մեր ձեւական օրինականացումը հնարաւորութիւն եւ վահան կը հանդիսանայ մեր իլլեզալ գործունէութեան: Վերջապէս բացարձակ կռիւ յայտարարել օրէնքին, կը նշանակէ նոր փոթորիկների առիթ հանդիսանալ եւ հակառակորդներին գէնք տալ հալածել մեզ իբր ազգայնական եւ հակասահմանադրական կուսակցութիւն մը եւ թերեւս իբր այդպիսին զրկուենք տեղ ունենալուց նաեւ միջազգային սոցիալիստական համագումարում:

Դուռման.— Սահմանադրութիւնն է ծառայում հիմք օրինականացման կողմնակիցներին. իսկ մի մասը ժողովականների բացառում է այդ սահմանադրութեան իրական լինելը եւ սահմանադրական տարրերի գոյութիւնը Թուրքիայում: Հապա ինչպէ՞ս է, որ սահմանադր-

րութիւն կայ. ինտելիգենտ սպաների ղեկավարութեամբ գործն է սահմանադրութեան պաշտպան: Բայց չպիտի հետեւեցնել որ սպաների սահմանադրական լինելը պայմանաւորուած է իրենց ինտելիգենտութեամբ: Բարձր գինուորականութիւնը աւելի կրթուած է, բայց եղել է եւ է հակասահմանադրական. հարցը պաշտօնի մէջն է. սպաները կուռում են իրաւունք, արտօնութիւն, իշխանութիւն ձեռք ձգելու համար: Եւ այս սահմանադրական գինուորական շարժումը աւելի ճիշդ այն է, որ իշխանութիւնը մի խմբակից անցնում է միւսին: Սխալ է սահմանադրութիւն անուանել, որովհետեւ կառավարութեան վարչութեան իրաւունքները չեն սահմանափակուած ժողովրդի իրաւունքների ընդարձակմամբ, այլ նոր կառավարութիւնը հնից իշխանութիւնը խլելով չղաղարեց սահմանագծել անհատների եւ ժողովրդի իրաւունքները: Այդ սահմանադրութեան պահպանութեան մասին եթէ մենք չմտածենք էլ, իրենք՝ ներկայ կառավարիչների խմբակը պիտի ջանայ իր արիւնով պահպանել, որովհետեւ դա մի դիրք է, որի կորսնցնելով, կը կորսնցնեն եւ իրենց արտօնութիւնները եւ պաշտօններն ու ռոճիկները: Մենք մի անելիք ունենք.— աջակցել եւ ջանալ որ կատարուած փաստը ժողովրդաօգուտ դառնայ: Այդ ուղղութեամբ գործել ենք եւ պիտի գործենք: Եթէ կ'ուզենք կարեւորութիւն ունենալ եւ չչահագործուել, այս թոյլ վիճակով չէ, որ պիտի մօտենանք Իթթիհատին, այլ աւելի ուժեղ ու կազմակերպուած վիճակով: Այժմ պիտի ջանանք մօտենալ մեզնից աւելի թոյլերին՝ ասորիներին, եգիպտացիներին եւ եթէ հնարաւոր է, նաեւ քիւրտերին: Մենք պիտի հաշտ աչքով նայենք եւ յոյների եւ Թուրքերի եւ արաբների թուլացման, որպէսզի կամաց կամաց ստեղծուեն մի քիչ համագործուած այս բազմացեղ երկրի մէջ, որպէսզի այդ բոլորը կարողանան իրար հետ լաւ ապրել: Իսկ թէ մինչ այդ Դաշնակցութիւնը ի՞նչ պիտի անի եւ ի՞նչ ձեւով, այդ թող այս ժողովը խորհի եւ վճռի:

Աստիկեան.— Որոշումներու մէջ գզացումներով չառաջնորդուինք, այլ իրականութեամբ, որին համապատասխան ձեւերով եւ նպատակներով կը կազմուին կազմակերպութիւնները եւ ըստ այնմ փոփոխութիւններ կը կրեն: Գաղտնի մնալով կուսակցութիւնը պիտի հալածուի, քայքայուի եւ գործը զոհած պիտի լինի իր անուանը: Մեր այդ վճռական որոշումին համապատասխան ուժեր չունինք երկրի կազմակերպութիւններու մէջ, ինչպէս ցոյց տուաւ Պատաս. Մ.ի տեղեկագիրը: Հայ ժողովրդի եւ կուսակցութեան գոյութիւնը չվտանգելու համար պիտի յարմարուինք պարագաներուն միայն: Գաղտնի գործելու հետեւանքը պիտի լինին ձեռքակալութիւններ, որոնցով ժողովուրդը իր անմիջական շահը վտանգուած չտեսնելով, թիկունք չպիտի

43.- Վերադիրը:

ըլլայ մեզ, ինչպէս չէ եւ այժմ կովկասի մէջ: Հայ ժողովրդի համար յամենայն դէպս այս սահմանադրութիւնը իրականութիւն մ'է, եւ նա ո՛չ մէկ դրդիչ ունի ներկայ պարագային մեզ հետ լինելու, եթէ մենք հալածուինք օրէնքէն: Պիտի գիջումներով օրինականանալ, ներքին կազմակերպութեամբ վարելով արգիլուած մարտական մասը:

Թուրքէն.— Շատ խօսուեց այն մասին, թէ ինչքան մենք համերաշխութեան ձեռք մեկնեցինք, այս մի տարուայ մէջ մեզ միշտ խաբեցին. դարերի պատմութիւնն է կրկնուում, որի մէջ մոռանում ենք մի բան էլ լիջել, այն է, չէ՞ որ մենք էլ ենք խաբուում եւ միաժամանակ խաբուելն էլ գիտակցելով գնացել ենք խաբողների յետեւից, որովհետեւ թոյլ ենք. այլ կերպ անհնար է: Այժմ էլ ուզում ենք նոյնը կրկնել. լեզալ լինել խաբելու չափ եւ պահել իսկապէս գաղտնի գոյութիւն:

Գալով համագործակցութեան, պիտի իմանանք, որ յարատեւ համագործակցութիւն հնարաւոր է միայն միակերպ եւ միասկզբունք տարրերի մէջ. իսկ Իթթիհատի հետ կարող է լինել միայն կոնկրէտ խնդիրների, աւելի ճիշտ Սահմանադրութեան պաշտպանութեան շուրջ, ժամանակաւոր բոլի: Բայց հէնց այդ բոլի գործնական պահանջների համար առանց մարտական ուժի բան մը չպիտի կարենանք անել: Լեզալ լինելով իսկ հնարաւորութիւն չունենք առաջացնելու այդ ուժը, որովհետեւ զրկուած ենք աշխատաւորական կազմակերպութիւններ ստեղծելու իրաւունքից: Լեզալի հետ միաժամանակ ունենալ գաղտնի բաժին, կարող է լինել պատճառ աւելի վտանգաւոր բարդութիւնների: Գալով միջազգայնացման, ըստ հոլութեան այնպէս ենք, բայց օրէնքի պահանջած միջազգայնացումը ձուլման պահանջ է իսկապէս: Ներկայ երկսայրի դրութիւնը արդիւնք է նրան, որ յանկարծակի ամբողջութեամբ ջրի երես ելանք առանց նկատի առնելու ապագան: Միջավայրի ազդեցութեան արդիւնքն էր այդ. տեսանք Իթթիհատը կառավարութիւն դարձած, մենք էլ ունեցանք նոյն իդը մեր միջավայրի մէջ եւ լեզալանալով կարծեցինք նոյն դիրքերը գրաւել. իսկ այժմ երբ բացասական արդիւնքի ենք հասել, բնականաբար նահանջելն աւելի դժուարին է: Մենք գործել ենք մեծ սխալ կառավարութեան մօտենալով, փոխանակ հեռու մնալու եւ օպպոզիցիա հանդիսանալու. ամենաշատը կարելի էր յարաբերել անուղղակի միջոցներով: Գալով ընդհ. համագործակցութեան այլացեղ աշխատաւորների, ընդդէմ այլացեղ շահագործողների, գոնէ այժմ հնարաւոր չէ: Մեր ամենամեծ գործը պիտի լինի ստեղծել ուժեղ կազմակերպութիւններ, գոյացնել մարտական ուժ ամենանհրաժեշտի, սահմանադրութեան պաշտպանութեան համար:

Նիթրա.— Թէ լեզալիզացիայի անհրաժեշտութիւնը եւ հնարաւորութիւնը, եւ թէ հակառակը փաստողները

իրաւացի են, ինչպէս նաեւ համակերպութեան երկուդը: Բայց մի բան զարմանալի է, որ ասում են թէ մենք յեղեւ սոցիալիստ ենք, թէ եւ ոչ ակտերով, բայց զիջում չենք անի: Այդպէս էինք սահմանադրութիւնից առաջ, բայց յետոյ ձեռք մեկնեցինք Իթթիհատին յանուն ո՛չ-սոցիալիստական պահանջների, այլ ռեժիմի փոփոխութեան համար, որի կատարուելու վերջին մոմենտին պարագաների բերմամբ դեր չունեցանք: Մեր այժմուայ ուժով մեր բուն նպատակներին հասնելու համար, շատ տկար ենք: Այժմ մեզ համար դեպի⁴⁴ է՝ ձեռք բերուածի անպայման պահպանումը. դրանով արդէն զիջում արուած է եւ ծրագիրը մի կողմ դրուած: Եւ ուրիշ ելք չկայ. ժամանակաւորապէս պէտք է հրաժարուել կուսակցութեան ընդհանուր քաղաքականութիւնից: «Սահմանադրութիւն պիտի պաշպանենք» համաձայնութիւնն իսկ խոշոր զիջում մ'է, որ անհրաժեշտ է գոյութեան համար: Մի իրականութեան առաջ ենք կանգնած որն մեզ ասում է, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը յեղափոխական չպիտի լինի յեղափոխութեան համար, այլ ժողովրդի, մանաւանդ որ մեր համոզումն էլ է, որ միայն մենք մենակ յեղափոխութիւն անել չենք կարող այս երկրի մէջ: Հնարաւորութիւն պիտի տալ ժողովրդին մաճ բռնելու, շունչ քաշելու, մի պատառ հաց ուտելու, հէնց յեղափոխութեան ապագայի համար: Ամբողջի աւսածները ցոյց կու տան, որ մեզնից եւ ո՛չ մէկը այս րոպէին չի մտածում յեղափոխութիւն անելու մասին, այլ ինքնապաշտպանութեան, որը նոյնպէս մենակ տանել չենք կարող. դրա համար էլ պէտք են կոմպրոմիսներ⁴⁵, հէնց մեր թշնամիների հետ: Թէ եւ իրականացած չէ սահմանադրութիւնը, բայց նրա մէջ գանազան նկատումներով շահագրգռուածները, թէկուզ իրար խաբելով, պիտի դաշնակցեն: Միջազգայնացումն եւս լինելու է խաբէութեամբ, ինչպէս է Իթթիհատինը: Պիտի հնարաւորութիւն ստեղծել հայ ժողովրդին այժմ գործել էվոլիցիայով, որը յաջորդել է ռեվոլիւցիային, որը ապագայի համար պիտի պատրաստենք մեր պրոպագանտայով, ուժեղ կազմակերպութեամբ, գաղտնի գործունէութեամբ, բայց ոչ այժմ իսկ դաւադրական ակտերով: Ժամանակաւորապէս պաշտպանում ենք ներկայ մեզ համար ոչ մշտապէս ընդունելի կարգերը. սա մի զինադադար է, վաղուայ աշխատաւորական ժողովրդապետական պայքարի համար: Օրգանական աշխատանքի պիտի նուիրուել, միաժամանակ պիտի տանել կուսակցական ներքին գործունէութիւնը, ազգային-կուլտուրական ու աշխատաւորական մասը, բուն կերպով պայքարելով ատոնց հակառակ օրէնքներու դէմ:

Ինչպէ՞ս օրինականանալ. հնարաւոր չէ Հ. Յ. տառերը ջնջելով: Ծրագիրն է որ պիտի օրինականացուի, իսկ մեր ծրագիրը չի կարող օրինականացուել, ինչպէս եւ

44.- Նշանաբան:

մենք չպէտք է սկզբունքային փոփոխութիւններ մտցնենք: Մի բան կարելի է անել, կազմել մի պլատֆորմ.— նուազագոյն-ներկայ պահանջներ, մի նոր խմբակցութեան անունից, լեզու գործունէութիւնից չզրկուելու համար: Իսկ Դաշնակցութիւնը մնայ իլլեգալ կազմակերպութիւն ապագայ յեղափոխութիւնը պատրաստելու համար:

Պիեռ.— Միսալ է Նիթրայի տեսակէտը, թէ ներկայ սահմանադրութեան պաշտպան լինելն իսկ մի մեծ կոմպրոմիս է: Կուսակցութիւնն ունենալու է նաեւ ժամանակաւոր տաքտիքական փոփոխիկ. եւ այդ է իր արածը, ոչ թէ ծրագրիցն է հրաժարուել: Եւ այդ էլ արուած է, մեր բուն նպատակներին հասնելու համար. դա առաջին կայանն է մեր սոցիալիստական գործունէութեան ուղի: Թերեւս հնարաւորութիւն լինի օրինականանալ նոր կուսակցութիւն դառնալով. բայց մենք չենք եկած Ընդհ. Ժ. դրա համար, այլ որոշելու Դաշնակցութեան դիրքը Թուրքիայում: Միսալ կը համարէ այն առաջարկը, որ կ'ուզուի անկախ Դաշնակցութիւնից ստեղծել ինչ որ միջազգային-աշխատաւորական համախմբակցութիւններ, իբր նշան լեզուութեան. այդպիսի կազմակերպութիւնները կը խախտեն Դաշնակցութեան հիմքերը: Ամբողջապէս իլլեգալ մնալով, լեզու գործերը կը թողնենք չէզոքների կամ այլ լեզու կուսակցութիւնների. այդտեղ հարց կը ծագի, թէ այդ տարրերը պիտի կարողանան տանել այդ գործերը: Այդ էլ ելք չէ: Պիտի մի որեւէ ելք գտնել. հնարաւոր չէ՞ Ֆինլանդական վոյմայի պէս քաղաքական օֆիսներով տանել լեզու մասը:

Անտոն.— Լեզուիցացիայի խնդիրը չպիտի կապել միջազգայնացման հետ: Ակնունին յիշեց փաստերի փրկիստիպարութիւնը իբր մեզ ուղեցոյց. հէնց այդ փրկիստիպարութեան ջերմ կուսակից Ժօրէսը⁴⁵ կ'արգիլէ իր ընկերները կապուել կառավարութեան հետ, մինչստոր դառնալ: Թուրքերի ցանկութիւնն է փոփոխել տալ մեր ծրագիրն իր հոլթեան մէջ եւ ոչ թէ եարլիկները⁴⁴: Առանց այդ փոփոխութիւնների էլ մեզ հետ համերաշխելու պահանջը պիտի զգան, երբ մենք ոչալ, Ֆրիգիքական — կազմակերպուած — մարտական ուժ ունենանք: Ահա թէ ինչին պիտի ձգտենք: Ուրիշները՝ խաբելով նրանց հաւանութեան նշան ցոյց կու տան, բայց մենք մեր քննադատութիւնների եւ հակառակութեան մէջ ունենք շիտակութիւն եւ անկեղծութիւն, որ երիտասարդ թուրքերին լաւ ծանօթ է եւ խոստովանել ու յարգել են. այդ իսկ պիտի ստիպէ նրանց համագործակցել մեզ հետ, յանուն իրենց եւ մեր շահերի: Այս մի տարուայ լեզու գործունէութիւնը մեզ շատ բան չտուաւ թէ՛ դրամական, թէ՛ կազմակերպական եւ թէ՛ իրաւունքների տեսակէտից: Դաշնակցութիւնը պիտի մնայ գաղտնի՝ ստեղծելով մի ուժեղ դեմոկրատիկ համախմբակցութիւն զանազան ցեղերի աշխատաւորներից լեզու գործերի համար:

Ասրգիւ.— Վերապրեցինք Կովկասի փոխանցման շրջանի (Հոկտեմբեր 17ից յետոյ) կեանքը: Փոխանցման շրջան է եւ այստեղ՝ անկայուն ապագայով. պիտի յետ քաշուել բոլոր լեզու գործերից. կազմակերպութեան ուժը կեղծոնացնել զուտ յեղափոխական կազմակերպութիւնների վրայ, ապագայ գործի համար: Գաղտնի մնալուց գաւտ ուրիշ հնար չկայ օրէնքից խուսափելու համար:

Յետագայ մի քանի խօսողներ նոյնպէս իլլեգալութիւն կը պաշտպանեն, լեզուութեան հնարաւորութիւնը ժխտելով: Գիսակը կ'առաջարկէ զուտ վիճարանական, իրար փաստեր ջրելու ուղղութիւն պահելուց հրաժարուել, եւ աշխատել խորհրդակցել աւելի ելք գտնելու համար: Ռոստոմ կը նկատէ, որ կոտորածների կոչմարի⁴⁶ դէմ կարելի է դուրս գալ յայտարարութեամբ մը, որ մենք գաղտնի ենք, բայց դադարեցրած դաւադրական ձեռնարկները ներկայ սահմանադրական կառավարութեան դէմ: Համաձայնութիւն իթթիհատի հետ միայն կոնկրէտ խնդիրների շուրջ:

Ժողովը փակուեց որոշեալ ժամին:

Քարտուղար՝ **ՎԱՆԻԿ**
Նախագահ՝ **ՌՈՒԲԷՆ**

Նիստ 36րդ. Սեպտ. 2. Երեկոյեան ժամը 4.ին

Ներկայ են 27 ընկերներ. նախագահում է ընկեր Ռուբէնը:

Ակնունի.— Ժամանակի սղութեան պատճառով չի կարողանում երկար կանգ առնել իրեն եղած հակաճառութիւններին. ուստի կանգ կ'առնէ մի քանիսի վրայ: Լեզուիցացիայի մասին երկար վիճեցին, զանազան կարծիքներ յայտնեցին, բայց այնուամենայնիւ ոչ ոք չի պատասխանում կամ չի կարողանում պատասխանել այն հարցին, թէ ի՞նչ անենք այն մղձաւանջի դիմաց, որ ստեղծուել է ընկերակց[ութեանց] հրդ. յօդուածից յետոյ: Բայց բոլորն ալ միեւնոյն ժամանակ համոզուած են, որ status quo պահպանել, շարունակել անփոփոխ այնպէս, ինչպէս մինչեւ հիմա է եղել, անհնարին է. տարբերութիւնը միայն առաջարկուած նոր սխտեմների միջև է: Ոմանք առաջարկում են մեր office-ը պահպանել եւ դա լինի մեր կազմակերպութեան լեզու մասը: Միւսները առաջարկում են մի նոր լեզու մարմին, կուսակցութիւն կազմել, որ մեր իլլեգալ վահանը հան-

45.- Ժան Ժորժ, ֆրանսացի հանրածանօթ ընկերվարական առաջնորդ եւ տեսաբան:
46.- Մղձաւանջի:

դիսանայ: Մի ուրիշն էլ առաջարկում է Ընդհ. յայտարարութեամբ կազմակերպութիւնը լուծուած յայտարարել եւ սրանով խաբել կառավարութիւնը ու շարունակել ծածկաբար մեր գործը: Մինչեւ անգամ Անտոնը, որ լեզուիցացիային կատարելապէս հակառակ է, առաջարկում է գիւղացիական-աշխատաւորական միջազգային միութիւններ կազմել, մեր ազգային գործունէութիւնը վարագուրելու նպատակով: Բայց այս բոլոր միջոցները անիրագործելի են.— office-ը չենք կարող թաքցնել. նոր ընկերութիւն կազմելու միտքը անթափանց չէ, որ նրանով ծածկենք իրական վիճակը. մի ընդհանուր յայտարարութեամբ, որ մենք լուծուած ենք, կառավարութեան չենք խաբել. իսկ գիւղացիական միութիւնները չեն փոխարինի լեզուիցացիայի պահանջը: Բոլորն ընդունում են, ինչպէս տեսնում էք, այն ճշմարտութիւնը, որ պէտք է մի միջոցի դիմել հրդ. յօդուածը յետ մղելու համար, [բայց] չեն առաջարկում մի իրագործելի ձեւ այս վիճակից դուրս գալու:

Ռոստոմի գաղափարն ամենագործնականն է՝ յայտարարել, որ մենք ձեռք ենք վերցնում ռազմական կուսամիջոցներից: Միջանկեալ պիտի ասեմ, որ այսպիսի յայտարարութիւն մինչեւ հիմա մեր կազմակերպութեան եւ ոչ մի մարմնի կողմից չի եղել, այնպէս որ տարածուած լուրերը սխալ են: Այս յայտարարութիւնը միակն է որ կարող է հասարակութեան վրայ ցանկալի տպաւորութիւն թողնել. սա կը խաղաղացնի թէ հասարակական կարծիքը, թէ՛ իթթիհատին եւ թէ կառավարութեան: Բայց նոյն իսկ եթէ դեկլարասիոնի բանաձեւը ընդունուի, այնուամենայնիւ իթթիհատը մեզնից պիտի պահանջի, հրդ. յօդուածի հիման վրայ, որ մենք յայտարարենք, որ մենք ազգային կուսակցութիւն չենք: Եթէ Ընդհ. Ժողովը այս խնդրում հետեւի օրէնքին դիմադրելու ուղղութեամբ, այս դէպքում մի կողմից մեր եւ միւս կողմից թուրք ժողովրդի եւ կառավարութեան միջեւ պիտի ստեղծուի մի հակամարտութիւն. նրանք դուրս պիտի գան մեր դէմ, իբր պարլամենտի ընդունած օրէնքին հակառակողի. այդ կուրսը եւ համարում եմ գերազանցապէս վտանգաւոր: Մի ընկեր միայն (Վահան) ասում է, որ ճիշդ այնպէս, ինչպէս Ռոստոմ ասում է, կը դիմադրենք նաեւ թուրքիայում եւ գաղտնի կը մնանք: Բայց մոռանում են, որ մենք ադանայական պերսպեկտիւ⁴⁷ ունենք մեր առաջ թուրքայիում եւ ի հարկէ ոչ ոք մեզանից չի ցանկանում, որ հայ ժողովուրդը թուրքիայում մեռնի, միայն թէ Հ. եւ Յ. տառերը պահպանուած լինեն: Այստեղ է, որ ոչ ոք չի ուզում հարցի ուղիղ աչքերին նայել:

Ես պնդում եմ, որ լաւագոյն միջոցը այն է, որ մենք յայտարարենք, թէ կազմակերպութիւնը հանդիսանում է լեզու, ընդունում է իր շարքերի մէջ նաեւ ոչ հայ տարրեր. իսկ միւս կողմից նման իթթիհատին եւ միւս ազգերի կուսակցութիւններին շարունակում է իր

գաղտնի գործունէութիւնը: Ես համաձայն չեմ, որ յայտարարենք, թէ դադարելու ենք յայտնհետեւ գործադրելուց մեր ռազմական մարտակերպը. մենք հմայք ունենք ժողովրդի մէջ մասամբ էլ շնորհիւ կուրսի այդ եղանակի. իսկ այդպիսի մի յայտարարութիւն փոքր հարուած չի լինի մեր հմայքին: Իսկ եթէ ստեղծենք կազմակերպութեան մէջ լեզու մաս մը եւ նրա յետեւը թաքցնենք գաղտնին, դրանով կը մտնենք իթթիհատի հետ գաղտնի գործակցութեան: Մեր ներկայ անուան տակ համագործակցութիւն պաշտպանող ընկերները, կը սխալուեն: Եթէ իթթիհատը մեզ ասի, որ ուզում է մեզ հետ գործել, բայց չի կարող, որովհետեւ մենք օրէնքին հակառակ ենք գնում, ահա ջուրը կ'ընկնի մեր ամբողջ համագործակցութիւնը:

Նիթրայ.— Ծեշտում է, որ օրէնքը պահանջում է ներկայացնել ծրագիր, երբ մի նոր մարմին է հիմնում. հարկաւոր է մի նոր ծրագիր ներկայացնել, որը կը լինի եարլիկ մեր բուն գործունէութեան համար, սա օրէնքի բացարձակ պահանջն է:

Ակնունին լրացնում է իր ասածը.— Պոլսի այժմեան պայմաններում եթէ մենք ներկայանանք այն ձեւով, ինչպէս ես էի առաջարկում, այսինքն իբր Դաշնակցութեան օսմանեան հատուած, չսահմանափակուելով միայն հայերով, սա արդէն բաւական է օրէնքին բաւարարելու համար: Մեր ծրագիրը մենք չենք փոխում. եւ դա հնարաւոր է. մենք ունենք այնտեղ մամուլի այնպիսի ազատութիւն, որպիսին Գերմանիայում չկայ: Միայն թէ մեր նուազագոյն պահանջները պիտի նորից խմբագրուեն, ոչ թէ որովհետեւ հրդ. յօդուածն է հրապարակ եկել, այլ որովհետեւ նրանից էլ առաջ պայմաններն այդ անհրաժեշտ էին դարձրել: Օրինակ մենք պահանջում ենք թուրքաց Հայաստանում քաղաքական եւ տնտեսական ազատութիւն: Սրան հակառակ են մինչեւ անգամ մեր Պոլսի ընկերներից շատերը: Այժմեան պայմաններում մենք չենք կարող թ[ուրքաց] Հայաստանում այդպիսի պահանջներ դնել, որոնք առանձնացման, անջատողականութեան համար սկիզբն են դնում: Այդպիսի պահանջ պիտի անել ամբողջ թուրքիայի համար:

Անտոն.— Խնդիրը լայն կերպ էր դրուած, բայց ժողովը ահա 24 ժամ է միայն լեզուիցացիայի հարցով է զբաղուած. ես այդ խնդիրը պարզուած եմ համարում եւ անցնում եմ միւս կէտերին: Ոմանք այն կարծիքին են, որ կուսակցութիւնը պիտի միջազգայնացնել եւ մեր մէջ ընդունուեն նաեւ իսուելայն այլ ազգերից: Այդ չպիտի կարողանանք անել, որովհետեւ դա չի հասցնի դրական հետեւանքների: Ուրիշ երկիրներ դրա համար պարզ օրինակներ տալիս են: Ռոստոմ ասում ամենամիջազգային եւ ամենակեղերոնական սոց.-դեմ[ոկրացիան]

47.- Յեռապատկեր, այստեղ վախի, սարսափի իմաստով:

այն տեղերը, ուր նա տրամադրված չէր, 2) ստեղծել ներքին շուկաներ եւ 3) ինքնապաշտպանութիւնը թողնել ժողովուրդին:

Նիւթը.— Նմանապէս կը կարծէ, որ ինքնապաշտպանութիւնը պիտի դնել ժողովրդական հիմքերու վրայ: Բայց որովհետեւ ըմբոստ տարրերուն մեծամասնութիւնը մտած են կազմակերպութեան մէջ, պէտք է որ վերջինը կատարէ թէ նախապատրաստութիւնները եւ թէ ղեկավարէ միայն թէ միշտ ժողովրդի անունով:

Ռուբէն.— Երկու շրջաններու կը բաժնուի ինքնապաշտպանութեան աշխատանքը.— 1) Նախապատրաստական եւ 2) կռուի մոմենտ: Առաջին մոմենտին մեր մարմինները պիտի կատարեն աշխատանքի կարեւոր բաժինը, իսկ երկրորդ շրջանին կազմակերպութիւնը պիտի տայ դուրսէն կամ ներսէն ղեկավար ուժեր, կռիւր յաջողութեամբ առաջ տանելու համար: Այն բոլոր չարիքները, որ կան այսպիսի մի գործի մէջ (չանտաժ եւ այլն) ոչինչ են համեմատած անոր տուած օգուտներուն: Կովկասի հայութիւնը կը կոտորուէր հայթաթարական կռիւններին, եթէ կազմակերպութիւնը ակտիւ մասնակցութիւն չունենար:

Մուրադ.— Նոյն կարծիքին է, որ աշխատանքի մեծ մասը կազմակերպութիւնը պիտի կատարէ, քանի որ ժողովրդի գոյութեան պահպանման գործն առեր ենք մեր վրայ: Ժողովուրդն ինքը զինուել չի գիտեր: Այս մի տարուայ մէջ երկրի մէջ գնուած է 8-10,000 զէնք, որի 10%-ը հազիւ կարելի է օգտակար նկատել: Բացի այդ մեր ժողովուրդը զէնք գործածել չի գիտեր եւ մեր պարտաւորութիւնն է սորվեցնել իրեն: Իսկ բռնի զինման մասին կարելի չէ խօսք ընել այլեւս որովհետեւ Սահմանադրութեանն ասդին ժողովուրդն է, որ մեզ կարող է զինել, իր միջոցներով:

Անտոն.— Այս գործի մէջ կազմակերպութիւնը պիտի ունենայ ակտիւ մասնակցութիւն եւ նոյն իսկ երբեմն պիտի ըլլայ ղեկավար: Դաշնակցութիւնը պիտի հիմնուած լինի զէնքի ուժին վրայ, որուն անմիջական մասը կը կազմէ ինքնապաշտպանութիւնը: Այսպիսով է կազմակերպութիւնը պահած իր դիրքը: Անշուշտ պիտի խոյս տալ սխալներէն, բայց չէ կարելի ամբողջապէս ժողովրդին թողնել իր պաշտպանութիւնը: Ուստի իբրեւ նախանձախնդիր հայ մասսաների ֆիզիքական գոյութեան, մանաւանդ ներկայ յեղաշրջման եւ անորոշ կացութեան մէջ, եւ կողմնակից՝ անոր արթնացման ստորկական վիճակէն եւ գրկուած արժանապատուութեան գիտակցութենէն, Հ.Յ.Դ.ը իբր կազմակերպուած եւ ռազմապէս փորձուած հայ ժողովրդի մէկ մասը, կուսակցական մարտական խումբերով պէտք է մասնակցի հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան, դնելով վերջինս համաժողովրդական հիմքերու վրայ:

Պիեռ.— Կը հակաճառէ Անտոնի կարծիքներուն եւ կը գտնէ, որ անոնք միլիտարիստական բնոյթ ունին: Կու-

սակցութիւնը չի կրնար երեւան գալ ժողովրդի գոյութիւնը պաշտպանելու համար: Դաշնակցականները իբր անհատներ պիտի մասնակցին ինքնապաշտպանութեան գործին, որովհետեւ 1) ղեկավար մասնակցութիւնը կը վնասէ կազմակերպութեան եւ 2) ան կը սպաննէ ժողովրդի ինիցիացիան²⁷ ու ուժը: Մեր գործը պիտի լինի միայն ստեղծել համաժողովրդական հիմնարկութիւն մը բոլոր կուսակցութիւններէ եւ դասակարգերէ եւ նրան յանձնել ինքնապաշտպանութեան գործը:

Ռոստոմ.— Կը բացատրէ, թէ ինչպէս յեղափոխական գործը չի կարելի բաժանել ինքնապաշտպանութեան գործէն եւ կ'եզրակացնէ, թէ կուսակցութիւնը պարտաւոր է կռուի բոլոր մոմենտներուն մէջ ունենալ ակտիւ մասնակցութիւն: Յաջողութեան համար պէտք է գործը դնել ժողովրդական հողի վրայ, մասնակցութեամբ ուրիշ կուսակցութիւնների եւ չէզոքների:

Ընկերներ Ջելալեան, Ժիրայր եւ Ամատունի պաշտպանեցին կազմակերպութեան ակտիւ եւ ղեկավար մասնակցութեան տեսակէտը: Վերջինն աւելցուց նաեւ, որ որպէսզի ինքնապաշտպանութիւնն արդիւնաւոր լինի պէտք է Դաշնակցութիւնը համաձայնութեան գայ հայ միւս կուսակցութիւններին հետ:

Ընկեր Ակնունի պաշտպանեց զուտ ժողովրդական ինքնապաշտպանութեան տեսակէտը թուելով տաքտիկական եւ քաղաքական այն բոլոր անյարմարութիւնները եւ վտանգները, զորս կը ներկայացնէ կազմակերպութեան ուղղակի միջամտութիւնը: Ընկեր Ակնունի կ'առաջարկէ այս հարցի վերաբերմամբ պահպանել 1V Ընդհ. Ժող.-ի որոշումը:

Ժողովը փակուելէ առաջ որոշուեցաւ հեռագրել Պոլիս ընկեր Մարգարտին որ եթէ պատգամաւոր չէ՝ չգայ: Ստացուած էր հեռագիր, թէ Սեպուհ եւ Երուանդ մեկնած են էրզրումէն. որոշուեցաւ հեռագրել Տրապիզոն որ չգան, որովհետեւ ժողովը վերջանալու մօտ է:

Նիստը փակուեց ժամ 12-ին:

Քարտուղար՝ ՎԱՆԻԿ	Նախագահ
----------------------------	---------

Նիստ 38-րդ. 3 Սեպտ. ԵՐԵՎԱՆԻ

Նիստը բացուում է ժամ 4 1/2ին. ներկայ են 23 ընկերներ. նախագահում է ընկ. Ակնունին:

Կարդացուում են 27, 28, 29 եւ 30-րդ նիստերի արձանագրութիւնները եւ վաւերացուում:

Օրակարգ.— Դաշնակցութեան դիրքը դէպի ինքնապաշտպանութիւն:

Ընկ. Նիթրա յայտնում է, որ ինքնապաշտպանութեան գործը լինելով յատուկ ժողովրդական գործ, պի-

տի տարուի նաեւ ժողովրդական ուժով:

Նոյն ժողովրդից պիտի ընտրուի մի յատուկ մարմին առանց իր վրայ վերցնելու «Դաշնակցութիւն» անունը: Այս միեւնոյն մարմինը պիտի հայթայթէ ժողովրդի ինքնապաշտպանութեան բոլոր միջոցները: Ընտրուած մարմինը կը լինի անկուսակցական. դրանով ինքնապաշտպանութեան գործունէութիւնը կ'ազատուի կուսակցական կռիւների վայր դառնալէ: Իսկ մարտական գործը, անկախ ինքնապաշտպանութիւնից, բնականաբար կուսակցութեան վրայ է ընկած: Այդ մարտական գործի մէջ եղած կուսակցական խմբերը վտանգի դէպքում իրանց ձեռքը կ'առնեն ինքնապաշտպանութեան գործը, իւր բոլոր միջոցներով: Ժողովրդի զինման գործին ընկերները պիտի աջակցեն իրենց միջոցներով, որպէս քաղաքացիներ:

Սարգիսը ինքնապաշտպանութեան գործը բաժանում է 2 գլխաւոր մասերի. մատակարարողական եւ կազմակերպական: Դաշնակցութիւնը չի կարող իր վրայ վերցնել ոչ մէկը եւ ոչ էլ միւսը, որովհետեւ իսկապէս ֆիզիքական հնարաւորութիւն չունի բաւարարելու դրանց: Որքան էլ ինքնապաշտպանութիւնը Տաճկաստանում մի կենսական անհրաժեշտութիւն լինի, Դաշնակցութիւնը չէ որ պիտի իր ուսերի վրայ առնէ այն, որովհետեւ բացի այն, որ չի կարող բաւականացնել եղած պահանջները, ունի եւ իւր վնասակար կողմերը խոշոր չափով: ա) Որ Դաշնակցութիւնն իր շարքերի մէջ կը մտցնի անբարոյականացում, որը կազմակերպութեան դէպի կործանում կը տանի: բ) Կազմակերպութիւնն իր վրայ վերցնելով այդ գործը կը վտանգէ թէ իւր եւ թէ ժողովրդի գործը, որովհետեւ այսպիսով իւր վրայ կը հրաւիրէ թէ կառավարութեան եւ թէ թուրք տարրերի ուշադրութիւնը: գ) Ինքնապաշտպանութեան գործը թողնելով ժողովրդին, նրան հնարաւորութիւն կը տրուի էժան եւ մեծ քանակութեամբ զէնքեր ունենալու, ինչպէս օրինակ Կովկասը, որտեղ երբ զինման գործը ժողովրդին թողնուեց, հրապարակը լեցուեց առատ եւ համեմատաբար էժանագին զէնքերով: Կայ եւ այն որ ինքնապաշտպանութեան գործը իր վրայ վերցնելով, կազմակերպութեան ձեռքը կը կեղրոնանան այդ նպատակով ժողովրդից հաւաքուած մեծ գումարները որի վտանգման դէպքում, բացի նիւթական վնասից, պիտի պատճառի նաեւ լքումն ժողովրդական խաւերին: Զինման ամենանպատակաւորմարն է ստեղծել ներքին շուկայ, որով ժողովուրդը տեղի վրայ կրնայ իր միջոցների չափով բաւարարութիւն ստանալ: Կազմակերպութիւնը այդ գործով կ'լանուելու փոխարէն իր մարտական գործն ու միջոցները պիտի ուժեղացնէ, որի համար լաւ կը լինի, որ իւրաքանչիւր կեղը. Կոմիտէի բըր ցենդ ունենայ մի միւսում քանակ տեղական կազմակերպական զէնքերի, իր մարտական խմբերի համար, որոնք վտանգի դէպքում կը կազմեն ինքնա-

պաշտպանութեան կեղրոնը, իրենց շուրջը հաւաքելով ժողովրդի ինքնապաշտպանութեան բոլոր ուժը:

Վանիկը գտնում է, որ ինքնապաշտպանութիւնը համաժողովրդական մի պատասխանատու գործ է եւ Դաշնակցութիւնը չի կարող այդ պատասխանատուութիւնը իր վրայ վերցնել: Դաշնակցութեան դերը եւ աջակցութիւնը կը լինի բարոյական. նա իր պրոպագանդայով գիտակցել պիտի տայ ժողովրդին ինքնապաշտպանութեան կարիքը եւ աջակցէ ժողովրդական մի կազմակերպութիւն ստեղծել գործը վարելու համար, կազմել տալով մի յատուկ մարմին ժողովրդի միջոց վստահելի եւ գործից հասկացող մարդկանցից: Զինման խնդրում համաձայն է ընկ. Սարգսի տեսակէտին:

Մարգուանի ներկայացուցիչը յայտնում է թէ հարցը չի պարզուում ճիշդ կերպով. ժողովրդին պէտք է վճարական կերպով ասել կամ կը մասնակցենք կամ գնա՝ քո գլխի ճարը տես. գտնում է, որ ինքնապաշտպանութիւնը կապուած է յեղափ. գործի հետ եւ առաջարկում է անպայման աջակցել ժողովրդին այդ գործի մէջ:

Ամերիկայի պատգամաւորը գտնում է, որ Սահմանադրական կարգերում ժողովրդական ինքնապաշտպանութեան գործին ակտիւ աջակցելու մէջն է կայանալու գլխաւորապէս Դաշնակցութեան գոյութիւնը: Առանց դրան ժողովուրդը չի կարող ըմբռնել կազմակերպութեան գոյութեան իմաստը, որովհետեւ յեղափոխութիւն նա ինքնապաշտպանութիւն է հասկանում: Հակառակ դէպքում նա չի հետեւի Դաշնակցութեան, ինչպէս օրինակ Ամերիկայի դաշնակցականները: Ժողովուրդը, որ ամբոխ է, ինքն իրան, առանց գլխաւորի չի կարող ինքնապաշտպանութեան գործը վարել. նրան պէտք է մի մարմին, փորձառու եւ հեռատես. իսկ այդ մարմինը Դաշնակցութիւնը կրնայ հանդիսանալ ներկայ պարագային: Զինման գործի համար պիտի ստեղծել մի յատուկ մարմին, նման բիւրոներին:

Նիթրան յայտնում է, որ այժմեան ինքնապաշտպանութիւնը նախկինից տարբեր է. ներկայումս ինքնապաշտպանութիւնը առաջ է գալիս Սահմանադրութեան պաշտպանութեան կարիքից, եւ որպէս այդպիսին մեր դրացի թուրք տարրի մի մասն էլ նրան պէտք ունի. հետեւապէս առաջարկում է ստեղծել մի միջոց, որով հնարաւոր լինէր, երկուսի զինման գործը միասին տանել:

Պերճը շեշտում է, որ անպայման ակտիւ աջակցութիւն է պէտք, հէնց մեր գաւառների մարմինների կարծիքով է, որոնք ուրախութեամբ ընդ առաջ գնացին Պատաս. Մ-ի այն տեղեկագրութեան, թէ զինման համար մի կեղրոնական մարմին պիտի ստեղծուի, որը սակայն չարուեց:

Պիեռ շեշտում է, որ ժողովի համար այդ մարմինների պահանջը պարտաւորիչ չէ, որովհետեւ նրանք ենթարկուած ժողովրդի հոգեբանութեան, ենթադրում են թէ կազմակերպութիւնն է, որ պիտի փրկէ իրենց

վտանգից: Այդ գործը բառի լայն նշանակություններով ժողովրդական է, որովհետև ազգի բոլոր անհատներն էլ վտանգի մէջ են, ուրեմն եւ Դաշնակցութիւնը, որպէս հայ ժողովրդի մի դասակարգի կուսակցութիւն, չի կարող իր վրայ վերցնել այդ համաժողովրդական գործը, նման դարձնել, թատրոնին եւայլն: Սրա համար պիտի աշխատել առաջ բերել ինքնապաշտպանութեան համար մի համագալին կեդրոնական վարչութիւն, որն իր ուսերի վրայ տանի ամբողջ գործը, որի մէջ կը մասնակցեն դաշնակցականները որպէս հայ անհատներ: Զիջոնի գործն էլ յանձնելու է նոյն մարմինն. ինչ վերաբերում է յեղ.-մարտական գործին, դա անկախ է համա-ժողովրդական մարմնից եւ կրում է կուսակցական բնոյթ:

Գիտակը յայտնում է, որ ուղիղ ճամբան ընկ. Սարգսի առաջարկներն են:

Դադար 5 րոպէ:

Ռուբէն դէմ է խօսում ազգային կեդր. վարչութիւն մը ստեղծելուն, գտնելով որ դա միանգամայն անիրականանալի է: Համաձայն է, որ նախապատրաստութեան մէջ Դաշնակցութիւնն իր բարոյական աջակցութեամբ ժողովրդին հնարաւորութիւն տայ կազմակերպելու գործը, իսկ վտանգի ժամանակ ուղղակի մասնակցելու է:



Մուրատը քննադատում է ինքնապաշտպանութեան նկատմամբ դաշնակցական մարմինների բռնած բացասական դիրքը եւ առաջարկում է անպայման աջակցել: Պիտի այժմ իսկ որոշել կազմակերպութեան մարտական գործունէութեան սահմանները, քանի որ ինքնապաշտպանութիւնից ձեռք ենք վերցնում:

Անտոն նախ կանգ է առնում այն խնդրի վրայ, որ ինքնապաշտպանութիւնը, որպէս ժողովրդի գոյութեան խարխիս չի հակասում ընկերվարութեան: Դաշնակցութեան դիրքին գալով, ինքնապաշտպանութեան գործում, կ'եզրակացնէ, որ Դաշնակց. մինչև այսօր մասնակցել է, եւ այժմ էլ մասնակցելու է, մանաւանդ որ կազմակերպութեան հանգանակած դրամները մեծ մասամբ ինքնապաշտպանութեան համար են, ուրեմն եւ այդ գործին պիտի յատկացուեն: Բացի այդ, բոլոր դաշնակցականներն իրենց գլխաւոր գործերից մէկը պիտի համարեն աջակցել ժողովրդին այդ գործի մէջ, ստեղծելով ինքնապաշտպանութեան մարմիններ, ոչ Դաշնակցութեան անունով, որի մէջ դաշնակցականներն ունենալու են խոշոր դեր:

Ամատունին գտնում է, որ այդ գործը ժողովրդին թողնել միանգամայն անկարելի է, որովհետև ժողովուրդն ինքն իրեն անկարող է տանել այդ գործը, երկրորդ, որ ժողովուրդը չի կարողանում գէնքեր հայթայթելու ճանապարհներ, միջոցներ գտնել, թէեւ ցանկանայ եւ դրամ ունենայ էլ: Կազմակերպութիւնն անպայման աջակցելով պիտի ստեղծէ շուկայ, հէնց ժողովրդի

դրամով, միայն թէ գործակցելով գոյութիւն ունեցող միւս հայ կուսակցութիւնների հետ, որպէսզի վերջինները խոչընդոտ չհանդիսանան: Եթէ Դաշնակցութիւնը անտարբեր մնայ դէպի ինքնապաշտպանութիւնը շատերը կը հեռանան կազմակերպութիւնից:

Զեկուցանողը (Դուբան) գտնում է, որ եթէ ժողովուրդը կարիք չի գտնում իր միջոցներով տանելու ինքնապաշտպանութեան գործը, ինչ միջոց էլ որ առաջարկուի, անօգուտ է ինքնապաշտպանութեան գործի յառաջ տարման համար. իբր ապացոյց Կովկասում եւ թուրքիայում օրինակներ շատ ունենք: Մի քանի բացատրութիւններից յետոյ, կարճ ժամանակ եւս կը շարունակուեն վիճաբանութիւններ, որից յետոյ կ'որոշուի բանաձեւերի մասին խօսելը թողնել յաջորդ նիստին: Նիստը կը փակուի որոշեալ ժամին:

Քարտուղար՝  Նախագահ
Արտագրեց՝ 

Նիստ 39. Սեպտ. 4 առաւօտեան

Նախագահում է Ռուբէն, ներկայ 29 [հոգի]:
Մարտիրոսը առաջարկում է թոյլ տալ իրեն հեռանալու, որովհետև իբր ուսուցիչ իր վրայ է վերցրել բարոյական պարտականութիւններ, պարտաւոր է ժամանակին տեղ հասնել: Իսկ ինչ վերաբերում է իրեն ընտրողներին իւր վրայ դրած պարտականութեանց, իրեն պատասխանատու չի համարում, որովհետև ընտրողները այդ հանգամանքները նկատի ունենալով հանդերձ իրեն ընտրել են, հաշտուելով ժողովից շուտ հեռանալու մտքի հետ:

Ժողովը թեթեւ վիճաբանութիւններից յետ, ընդունելով պատճառաբանութիւնները իրաւացի՝ թոյլատրում է գնալ:

Կարդացում է դիւանին ուղղուած 18 հոգու ստորագրութեամբ մի նամակ, որով հեղինակները նկատի ունենալով ժամանակի սղութիւնը եւ շրջաններից ընկերների այստեղ հաւաքուելով շրջանի գործերը երեսի վրայ մնալը, առաջարկում են զբաղուել մի քանի կարեւոր հարցերով միայն, միւսները թողնելով մի յանձնախմբի, որը մշակելով կը յայտարարէ նրանց Ընդհանուր ժողովի անունից:

Ընկերներից մէկը գտնելով այդ առաջարկը գործնական, առաջարկում է թողնել ոչ թէ յանձնախմբի, այլ ուժեղացրած խորհրդին: Այդ երկու առաջարկների վե-

րաբերեալ տեղի են ունենում վիճաբանութիւններ. մի քանիսը գտնում են որ խորհուրդը լուծուած պիտի համարուի եւ դադարած գոյութիւն ունենալու իրաւունքից, երբ Ընդհանուր ժողովը արդէն նիստ ունի:

Ընկեր Յոնանը գտնում է որ խորհուրդը կայ եւ կարող է զբաղուել, որովհետև ներկայ Ընդհանուր ժողովը իրաւունք չունի խորհուրդը լուծուած համարել, այդ հարցը մարմիններին ի քննութիւն դրուած չլինելու պատճառով:

Ակնունին գտնում է որ ներկայ խորհուրդը իր իրական կազմը չունի ռայոնական ժողովների ներկայացուցիչները չլինելու պատճառով եւ բացի այդ առաջարկուած հարցերով զբաղուելու համար Ընդհանուր ժողովից ընտրուած կոմիտիոնը աւելի կոմպետանս եւ իրաւասութիւն կ'ունենայ քան խորհուրդը: Բացի այդ առաջարկում է ժողովի զբաղմունքները աւելի արդիւնաւէտ դարձնելու համար գալ պատրաստի բանաձեւերով:

Անտոնը գտնելով որ ո'չ մի որոշում չի կարող պարտադիր լինել երբ այդ չէ անցած 2/3-ի մեծամասնութեամբ, եզրակացնում է որ Ը. Ժ. -ից ընտրուած կոմիտիոնի որոշումներն էլ, չունենալով իր հետ 2/3-ի քուէն, չի կարող ամբողջ կուսակցութեան համար լինել պարտաւորական: Առաջարկում է նկատի ունենալով ժամանակի սղութիւնը, զբաղուել կարեւոր հարցերով, միւսները թողնել բաց՝ կամ խորհուրդը կը լուծէ կամ կը մնայ յաջորդ Ընդհանուր ժողովին:

Քուէարկում են հետեւեալ առաջարկները.

I- Ժողովը զբաղուելով կարեւոր հարցերով ցրուում է, միւսները թողնելով յանձնախմբին, որը քննելով եւ որոշումներ կայացնելով յայտարարում է նրանց Ընդհանուր ժողովի անունից (15 ձայն):

II- Ժողովը զբաղուելով կարեւոր հարցերով ցրուում է, միւսները թողնելով խորհրդին, (ուժեղացրած) 8 ձայն. Ոչ մէկը 2/3-ի քուէն ստացած չլինելով հարցը մընում է բաց:

III- Գալ ժողովի պատրաստի բանաձեւերով (17 ձայն)

Ապա ժողովը նիւթերի (օրակարգի) նոր բաժանում կատարելով անցնում է հերթական հարցերին եւ ընդունում հետեւեալ բանաձեւերը:

I- Նկատի ունենալով որ Ռուսիայում միապետական ռեժիմը յենուելով ազնուականութեան, հողատիրերի ու խոշոր բուրժուազիայի վրայ եւ շահագործելով աշխատաւոր խաւերը եւ քաղաքային միջակ դասը, վաղուց ի վեր չի համապատասխանում դեմոկրատիայի քաղաքական հասունութեան ու հաւաքական ոյժին (միաձայն):

II- Գիտակցելով որ արտաքին պարտութեան եւ ներքին յեղափոխութեան ճնշման տակ 1909-ին մտցրած սահմանադրութիւնը, ընդդիմադիր տարրերի տաքտիկական սխալների շնորհիւ (ներքին երկպառակութիւնների, մարտական ոյժի թուլութեան) յետագայում էապես վերացուեց եւ այսօրուայ պետական դուսման հանդիսանում է միայն նպաստաւոր միջոց ու քող փրկելու [հա-

մար] կառավարութեան դիրքը թէ դրսում եւ թէ ներսում (միաձայն)

III- Գտնելով որ ժողովրդական մասսաների վրայ յենուող կուսակցութիւնները դրական հետեւանքի կարող են հասնել միայն այն դէպքում, երբ առանց սոցալութեան տալու կուսակցութեան հեռաւոր իդէալները, կը մարգեն մասսաները գործնական քայլերով կոնկրետ հարցերի շուրջը (աւատական կարգերի վերացում, հող չունեցողների, հարկերի թեթեւացում եւայլն) (միաձայն):

Ընդհանուր ժողովը որոշում է.

1.- Կազմակերպական շարքերը ստուարացնելիս եւ ամրապնդելիս անճանճե՞ծ ուշադրութիւնը դարձնել ընդհանուր քաղաքական պահանջների ու կռուի կարեւորութեան վրայ, ինչպէս եւ այն միջոցների որոնք պայմանաւորում են նրա յաղթանակը (ռազմական ոյժ եւ ղեկավարութիւն, զօրքի դերը եւ համագործակցութեան արժէքը) (միաձայն):

2.- Նախածեռնութիւն ստանձնել թէ Ռուսիայում ընդհանրապէս եւ թէ Կովկասում մասնաւորապէս ընկերվարական [եւ] վերջիններիս համաձայնութեամբ եւ այլ դեմոկրատիկ կուսակցութիւններից, հրաւիրել մի համագումար ընդհանուր պլատֆորմ, տաքտիկ եւ գործակցութեան ձեւեր մշակելու համար (միաձայն)

3.- Ակտի քայլերը կառավարութեան հանդէպ պայմանաւորել կազմակերպական ներքին ոյժով ու կորով, պատասխանատու քայլերը (ապստամբութիւն, ընդհանուր գործադուլ եւայլն) կապելով Կովկասում եւ ամբողջ Ռուսիայում առաջ գալիք կուսակցութեանց համաձայնութեան հետ (24 ձայն յօգուտ, 1-ը հակառակ):

Որոշում է միեւնոյն ժամանակ Կովկասում սկրսւած ներկայ հայաժանքների դէմ կուսակցութեանս հանդէպ, ձեռք առնուելիք միջոցները թողնել կովկասեան մարմիններին:

Տասը րոպէ դադարից յետ դրուում է Պարսկաստանի վերաբերեալ բանաձեւը

Արդէն առաջուց այդ մասին երկար խօսած լինելու պատճառով, քիչ վիճաբանութիւններից յետ, որոնց մէջ գլխաւորաբար շեշտուում էր վախը՝ ապագայում տակից դուրս գալ չկարողանալու եւ ոյժերի պակասի նըկատմամբ, ժողովը 19 ձայնի առաւելութեամբ ընդդէմ Թ-ի ընդունում է հետեւեալ բանաձեւը.

Ընդհանուր ժողովը լսելով Պարսկաստանի մէջ կատարուած քայլերի եւ ապագայ անելիքների մասին գեկուցումները եւ նկատելով

I Որ պարսկական շարժումները ուղղուած աւատական դրութեան դէմ, սոցիալիստական յեղաշրջման բնոյթն ունին,

II Որ Պարսկաստանի վերածնութիւնը իր մեծ օգուտ ունի թուրքիայի, Կովկասի եւ ամբողջ Մօտաւոր Արեւելքի վերածնութեան գործում,

III Որ Պարսկաստանի ներկայ շարժման յաջողութեան մէջ է կայանալու եւ պարսկահայ ժողովրդի ազգա-

յին-կուլտուրական եւ տնտեսական շահերի բարգաւա-
ճումը:

IV Որ Դիւանակցութիւնը իր ակտիւ մասնակցու-
թեամբ Պարսկաստանի շարժումների մէջ վերահաս-
տաում է եւ այդ հասարակական- կուլտուրական կապը
մեր եւ մահմետական ժողովրդների միջեւ, որ խզուած է
եղել տարիներից ի վեր:

V Որ մեր յարաբերութեանց այդ նոր շրջանը իր անվի-
ճելի օգուտն ունի մեր եւ մահմետական ժողովրդների
մերթնեցման տեսակետից Կովկասում ինչպէս նաեւ
Թուրքիայում:

Որոշեց

Տալ իրաւասութիւն Պարսկաստանի Դաշնակցական
մարմիններին, որոնք ցայժմ պաշտօնապէս նկատուել են
իբր օժանդակներ՝ Թուրքիայի եւ Կովկասի հանդէպ, հրա-
պարակ գալու իբր յեղափոխական ակտիւ մարմիններ:

Ընդհանուր ժողովը հրահանգում է.

I Պահպանել սերտ կապ պարսիկ ժողովրդի դեմոկ-
րատիկ տարրերի հետ, կատարելով անելիք բոլոր քայ-
լերը՝ համագործակցութեամբ նրանց հետ:

II Աշխատել յառաջ բերել նրանց մէջ աշխատաւորա-
կան կուսակցութիւններ, համապատասխան դաշնակ-
ցական աշխարհայեացքների

III Կանոնաւորել ներկայումս գոյութիւն ունեցող ազ-
գային կուլտուրական ձեւերը եւ ապահովել տալ նրանց
պետական հիմնական օրէնքներով:

Պարսկաստանի Դաշնակցական մարմինները գործ-
նական պատասխանատու ձեռնարկների դիմելուց ա-
ռաջ պիտի ստանան կուսակցութեան բարձրագոյն
պատշաճ մարմինների համաձայնութիւնը:

**Ժողովը անցնում է գաղութների հարցին, քիչ վիճա-
բանութիւններից յետ, թողնում է կազմել մի բանաձեւ
եւ կարդալ 2 օրից:**

**Քարտուղար՝
ՎԱՀԱՆ** **Նախագահ՝
ՌՈՒԲԷՆ**

Նիստ 40.

**Ժողովը բացուեցաւ նախագահութեամբ ընկեր Ռու-
բէնի եւ մասնակցութեամբ բոլոր ընկերներու: Կար-
դացուելով 31-32րդ նիստերը վաւերացուեցան հարկ ե-
ղած ուղղումներն անելով:**

**Կազմակերպութեան օրինականացման հարցին վե-
րաբերութեամբ Պոլսոյ Պատասխանատու Մարմին ներ-
կայացուցիչը՝ Ակնունին, հետեւեալ պատճառաբան-
ւած առաջարկները ներկայացուց.**

1) **Նկատի ունենալով հոգեկան այն խաւար վիճակը
որի մէջ գտնուում է մահմետական ազգաբնակչութիւնը,
որն ներշնչուած հին ռեփիմից, շարունակում է տածել
մեծ անվստահութիւն դէպի փոքրիկ ազգութեանց քա-
ղաքական ձգտումները եւ դէպի քաղաքական-յեղափո-
խական հայ կուսակցութեանց յատկապէս,**

2) **Նկատելով օսմանեան պարլամենտի հաստատած
«Ընկերակցութիւնների օրէնքի» չորրորդ յօդուածը, որ
արգելում է ազգային-քաղաքական կուսակցութիւննե-
րի գոյութիւնը,**

3) **Գիտակցելով այս վիճակից ծնունդ առնող մեծ վը-
տանգը, որ նպաստում է հարեւան ազգերի փոխադարձ
անվստահութեան ու ատելութեան եւ շարունակում է
լայնացնել այս վիճը որ բացուած է այլակրօն եւ այլա-
ցեղ տարրերի մէջ,**

Դաշնակցութիւնը

**Իբրեւ սոցիալիստական եւ յեղափոխական կուսակ-
ցութիւն դաւանող միջազգային տեսակէտների, պիտի
առաջինն անէ հարկաւոր քայլերը, իրերի այս վիճակին
իրական դարման անելու նպատակով:**

**Ինչպէս առաջինն եղաւ 20 տարի առաջ յեղափո-
ղը բարձրացնող Փոքր Ասիայի մէջ, ինչպէս անդրանիկն
եղաւ՝ համերաշխութիւն եւ համագործակցութիւն
ստեղծելու, 1907-ին հայ-թուրք եւ այլ տարրերի քաղա-
քական կուսակցութիւնների միջեւ, նպատակ ունենա-
լով փոխադարձ ոյժերով գրոհ տալու բռնաւոր ռեփիմի
դէմ, այնպէս էլ այժմ, դրողւած թէ միջազգայնացման
մեծ գաղափարից եւ թէ հարկադրած օրէնքի չորրորդ
յօդուածի տրամադրութիւնից, — ի պատիւ հարագատ
սահմանադրութեան, նա առաջինը պիտի լինի առնելու
դարձեալ մի քայլ, որը պիտի նպաստէ թէ իր գաղա-
փարների իրականացման եւ թէ օրէնքի հալածանքից ա-
զատ մնալու, որ կարեւոր մի հանգամանք է թուրքիա-
յի հայ ազգաբնակչութեան այժմեան անհաստատ ու
խառնակ կացութեան հարցում:**

Այս նպատակով առաջնորդուելով,

1) **Միջազգայնացնել Դաշնակցութիւնը եւ ցայժմ ե-
ղած ազգային կուսակցութիւնից վերածել նրան միջազ-
գային կուսակցութեան, ընդունելով մեր շարքերի մէջ
ո՛չ հայ անդամներ, թուրք, քիւրտ, եզդի, ասորի, ո-
րոնք կ'ընդունեն մեր ծրագիրը, մեր տաքտիկը, մեր կա-
նոնագիրը:**

2) **Հ. Յ. Դ-եան փոխարէն ընդունել իբրեւ պաշտօնա-
կան անուն, Դաշնակցութիւն, որով սովորաբար գոր-
ծածուում է եւ ժողովրդականութիւն է ստացել մեր կու-
սակցութիւնը եւ որի դրօշի տակ կարող են այդպիսով
համախմբուել երկրի բոլոր ազգութիւնների պատկա-
նող դաշնակցականները, միասին եւ շաղկապուած ա-
ռաջ տանելու այն ծրագրային եւ կուսակցական կռիւր,
որ նպատակ ունի պաշտպանել բոլոր աշխատաւոր
տարրերի քաղաքական, տնտեսական եւ քաղաքացիա-
կան շահերը՝ անկախ ազգութիւնից եւ կրօնից:**

3) **Հաստատել երեք պետութիւնների սահմաններում
գործող կուսակցութեան համար:**

- ա) Դաշնակցութեան Օսմանեան հատուած
- բ) » կովկասեան »
- գ) » Իրանեան »

**անունները, որոնք արտայայտում են ո՛չ թէ ազգայ-
նական այլ պետական բնոյթ ունեցող վիճակ եւ ուրեմն**

յարմարութիւն կը տան այդ երեք պետութիւնների մէջ
ապրող այլեւայլ ազգութիւնների պատկանող անձանց
մտնել նոյն դրօշի տակ:

4) **Պաշտպանել անկախ մեր հիմնական ծրագիրը եւ
ներկայ քաղաքական պարագաներին համապատաս-
խան սրբազրութիւններ մտցնել «նուազագոյն պա-
հանջների» մէջ, սրբազրումներ՝ որոնց նպատակը պի-
տի լինի ոչ թէ նուազեցնել մեր սոցիալիստական պա-
հանջները, կամ յեղափոխական տաքտիկը, այլ աւելի
հեշտացնել այն ճանապարհը որը տանում է դէպի բոլոր
ազգերի համերաշխութիւն մի կողմից եւ դէպի Օսման-
եան սահմանադրական պետութեան ամբողջութեան
պաշտպանումը միւս կողմից, վերացնելով մէջտեղից ի
միջի այլոց հայկական անջատողականութեան մասին
մնացած յետին գրոյցները:**

5) **Կազմակերպութիւնը պիտի շարունակէ տանել եւ
զարգացնել իր յեղափոխական միջոցները, գինական եւ
ուզմական, որոնք անհրաժեշտ են, ներկայ երբորուն
պայմանների մէջ, պաշտպանելու թէ սահմանադրու-
թիւնը եւ թէ հայ ժողովրդի քաղաքական իրաւունքները:**

6) **Դրա հետ միասին եւ դրան կից կուսակցութիւնը
պիտի հաստատի իր լեզալ մարմինները, որոնց նպատա-
կը եւ պաշտօնը պիտի լինի վարել կուսակցութեան պրո-
պագանդը գրաւոր եւ բանաւոր եւ մեծացնել կազմա-
կերպութեան շարքերը:**

7) **Աշխատանքի տեսակէտով, կազմուած երկու ճիւ-
ղերի — իլլեզալ գործող եւ լեզալ գործող — փոխադարձ
յարաբերութիւնները եւ իրաւունքների սահմանները ո-
րոշելու [համար], կազմել յատուկ մարմին լիազօրուած
Ընդհանուր Ժողովից:**

**Այս բանաձեւ-առաջարկին դէմ արտայայտուեցան
հետեւեալ կերպով.**

**Դաշնակցութիւնը միջազգայնացնել՝ պիտի նշանա-
կէր կուսակցութիւնը ներսէն պայթեցնելու եւ թշնամի-
ներին ձեռքը գէնք տալու ծառայել, որովհետեւ թուր-
քերը կրնան զանազան տարրեր ներկայացնել մեր կու-
սակցութեան մէջ առնելու համար՝ գորս չենք կրնար
մերժել. արդէն պէտք եղած գիջումներէն աւելին ըրած
է կուսակցութիւնը եւ բաւականաչափ ապացոյցներ
տուած ենք երիտասարդ թուրքերուն մեր անկեղծու-
թեան ի նպաստ. կը բաւէ այդքանը եւ աւելի գիջումներ
ընել կարող չենք: Եթէ ընդունուի առաջարկուած բա-
նաձեւը հարկ պիտի ըլլայ ներքին գաղտնի բանաձեւ մը
եւս պատրաստել, անդամներու ցանկի եւ դրամական
հաշուի երկու սիստեմ պահել, ի հարկին գործածելու
համար ներքին եւ արտաքին գործունէութեան ի հաշիւ,
այն ինչ Դաշնակցութիւնը 8-10 հոգիներէ բաղկացած
չէ, որ կարելի ըլլայ սահմանափակումներ ընել. ու երբ
հարկադրուած պիտի ըլլանք այդ երկու պարագաներն
ալ յայտնել՝ դուրս պիտի գայ կեղծիքը եւ ոչ միայն յա-
ջողութիւն չպիտի տայ, այլ վնասակար պիտի հանդի-
սանայ: Գաղտնի մնալով ընդհակառակը մենք կրնանք
ունենալ հասարակութեան ամէն գործերուն մէջ մեր**

մասնակցութեան եւ աշխատակցութեան բաժինը, ինչ-
պէս օրինակ Ֆրանկմասոնները Եւրոպայի մէջ: Դաշ-
նակցութիւնը ընդունելով առաջարկուած բանաձեւը,
յանձն առած պիտի ըլլայ փոփոխել եւ այն հիմերը որու
վրայ կեցած էինք. օրինակ նուազագոյն պահանջները
պիտի կրճատենք եթէ դադրինք ազգային կուսակցու-
թիւն ըլլալէ: Մրագրին մէջ մէկէ աւելի անգամ գոր-
ծածուած է «Հ.Յ.Դ.» անունը գոր անկարող ենք ջնջել,
կամ ի՞նչ պէտք է դնել անոր տեղ, եթէ երբեք յանձն
առնուի ջնջել: Օսմանեան հատուած բացատրութիւնը
դէմ է կուսակցութեան «մի եւ անբաժան» սկզբունքին-
այդ բացատրութեամբ մենք սկիզբը դրած կ'ըլլանք
կուսակցութեան անջատման եւ իրաւունք կու տանք
վաղը որ կովկասեան հատուածն ալ բաժնուի: Երբ իթ-
թիհատը Ընդհանուր Ժողովէն [ետք] մեզմէ պատաս-
խան սպասէ օրինականացման ելքի մասին՝ մեր պա-
տասխանը շատ պարզ է — այն՝ որ այդ հարցը ընկերա-
կան լայն խաւերուն մէջ պէտք եղած կերպով քննուած
չըլլալով կարելի չէ եղած եզրակացութեան մը յանգիլ,
որով դրութիւնը կը մնայ նոյնը եւ յետոյ Դաշնակցու-
թիւնը կը սպասէ որ սահմանադրական օրէնքները դիւ-
րութիւններ տան ընկերվարական կուսակցութեանց
կամ ընկերակցութեանց հիմնումին: Յեղափոխական
կուսակցութեան մը համար պատուաբեր չէ դիմակ
հագնիլ եւ ծուռումուռ ճանապարհներու դիմել: Փո-
խանակ չորրորդ յօդուածին յարմարելու եւ գիջելու,
պէտք է անոր դէմ կանգնիլ: Կոտորածներու սարսափը
միանգամայն անարժէք է յեղափոխականներու համար-
առաջին գիջում մը հաւասար է առաջին դիրքը ձեռքէն
հանելու. կուսակցութիւնները մի տարուան համար
ստեղծուած չեն եւ հետեւաբար ոեւէ գիջումն խախ-
տումն է մեր աւանդութիւններուն, ծրագրին-կանո-
նագրին: Երբ անցեալին մէջ՝ Դաշնակցութեան դրօշի
տակ թուրք եւ այլ աշխատաւորներ կազմակերպուած
են, այդ անոր համար է, որ նման կուսակցութիւններ
գոյութիւն չեն ունեցած ակնարկուած ազգութեանց
մէջ: Դաշնակցութիւնը միջազգայնական է ոչ թէ իր ծո-
ցին մէջ օտար տարրեր ընդունելու առումով, այլ նոյն
տարրերէն առաջացած ուրոյն կազմակերպութեանց
կամ ընկերակցութեանց հետ դաշնակցելու առումով:
Դաշնակցութեան նուազագոյն պահանջները փոփոխել
կը նշանակէ փոփոխել Դ-եան սկզբունքները եւ կու-
սակցութիւնը ենթարկել քայքայումներու. այս հի-
մունքներով ալ կուսակցութիւնը առանց այլեւայլի
պէտք է գաղտնի մնայ, ինչպէս կ'արտայայտուի մար-
միններէ եկած հարցերու մէջ եւս:

**Օրինականացման հարցին ի պաշտպանութիւն հե-
տեւեալ պատճառաբանութիւններու վրայ կանգ առնը-
ւեցաւ. ընդունելով օրինականացման մասին վերի ա-
ռաջարկ-բանաձեւը կազմակերպութիւնը ոչինչ կը գո-
հէ-կը կորսնցնէ. կազմակերպութիւնը կայ ու կը մնայ
գաղտնի. մինչ առաջարկուած ձեւով կը մնանք գաղտ-
նի եւ պաշտպանուած կ'ըլլանք հալածանքներէ ու օրէն-**

քի հետապնդութիւններէն: Թուրք եւ օտար տարրը մեր լեզու մասին մէջ պիտի մտցնենք, այն ինչ գաղտնի մասին մէջ ո՛չ միայն օտար տարրեր չենք ընդունիր, այլ չենք ընդունիր եւ հայեր. երբ կազմակերպութիւնը կը մտար բուն գաղտնի վիճակի մէջ, մատնիչներ եւ այլ վնասակար տարրեր յաջողած են սպրդիլ ներս, ինչ որ ընկերակցութեանց օրէնքը ոչ մէկ կերպով բռնի կը պարտաւորեցնէ ընդունիլ անպայման օտար տարրերը: Լեզու եւ իլլեզու դրութիւնը միաժամանակ ընդունելու պարագային՝ իլլեզու մասը կրնայ մատնուիլ եւ վտանգուիլ — եթէ չենք կրնար այդքան գաղտնիք պահել, ուրեմն եւ չպիտի կրնանք պահել եւ բուն գաղտնի կազմակերպութիւնը: Սահմանադրութիւնը մեզի դիւրութիւններ կու տայ, որոնցմէ պէտք է օգտուիլ լեզու հոգի վրայ: «Օսմանեան հատուած» բացատրութիւնը նոյնպէս ո՛չ մէկ անպատեհութիւն ունի, քանի որ իրականին մէջ արդէն կը գործածուի «Կովկասեան հատուած», «Թուրքաց հատուած» բացատրութիւնները եւ անջատականութեան պատճառաբանութիւններն ու վախը բնաւ չի համեմատուիր առաջարկուած ձեւին հետ: Անջատականութիւնը կը դատապարտէինք եւ կը ծառանայինք անոր դէմ, որովհետեւ ուղղակի անջատելու մտքով հրապարակ կը նետուէր այդ գաղափարը, մինչդեռ առաջարկուած այժմեան ձեւը, պարագաներն ու հոգեբանութիւնը հիմնովին տարբեր են անցեալի իրականութիւնից: Անցեալին մէջ եւս կազմակերպութեան ծոցին մէջ ընդունելու ենք օտար տարրեր. այս պարագային մէջ եւս նոյնը կ'ընենք օրէնքին բաւարարութիւն տալու համար. ատիկա հաստատութիւնն է անցեալի իրողութեան:

Կազմակերպութեան հատուածները շահերով եւ գաղափարներով իրարու հետ կապուած են եւ ո՛չ մէկ պարագայի տակ կը բաժնուին:

Իրերու բնական բերումով իսկ կազմակերպական ոյժերը հրապարակի վրայ են, ուստի շինարար գործ կատարելու եւ գանոնք հետապնդութիւններէ գերծ պահելու համար հարկ է լեզու հոգ ստեղծել անոնց ոտքին տակ, այլապէս պիտի արգիլուին: Առաջարկուած փոփոխութիւնն արդիւնք է ներկայ քաղաքական պայմաններուն. երբ կառավարութիւնը չընդունի իսկ, մեզ հալածելու բաւականաչափ պատճառներ չ'ունենար այդպիսով եւ չի կրնար ըսել որ «դուք ձեր անլեզու վիճակը շարունակեցիք պահել սահմանադրութեան օրերուն ալ: Թուրքերը հետաքրքրող խնդիրը քաղաքական խնդիրն է, որու մէջ կը պարփակուի անջատողականութիւնը: Մենք մեր լեզու մասի գործերով այս գաղափարն է որ պիտի աշխատինք հեռացնել մեզմէ: Երբ երկրի սահմանադրական կացութիւնը ամուր հիմերու վրայ դրուած ըլլար եւ թոյլատրուէր ընկերվարական խմբակցութիւններու գոյութիւնը՝ առանց վիճաբանութեան պիտի ընդունէինք լեզուի գաղտնիք. այժմ երբ կասկածներ կան այդ մասին մենք կը պահենք արդէն մեր գաղտնի մասը: Մեր իրէջալը ժողովրդին հանգիստն

ու անոր յառաջադիմութիւնը ապահովելուն մէջ կը կայանայ: Միայն է նաեւ այն կարծիքը թէ՛ Դ-իւնը ընդունելով «լեզուի» եւ «իլլեզուի» դրութիւնը միանգամայն կեղծիք մը ըրած կ'ըլլայ. յեղափոխական ծրագրով գործունէութիւնը ինքնին կեղծիք է արդէն: Բռնուող ընկերներուն մեծ մասը կեղծած են՝ գաղտնապահութեան եւ այլ տեսակէտներէ առաջնորդուած. այս հիմունքներով ալ ո՛չ մէկ անպատեհութիւն կայ եղած առաջարկներու էական կէտերը ընդունելուն մէջ:

Ընկեր Դուման կը խնդրէ իր կարծիքը արձանագրել նոյնութեամբ, որ հետեւեալն է.

«Ամբողջ էութեամբ բողոքում եմ խաբէութեան քաղաքականութեան դէմ, որը վտանգաւոր է. նա հիմք է դնում ամենատեսակ կեղծիքի, անբարոյականացում է այդպիսի քաղաքականութեան հետեւողներին, միջնացնում է պարզ ու վճիտ հասկացողութիւններն ու մտածումները, սեւացնում է գաղափարական մաքուր սկզբունքները, եւ այդպիսով մտցնում է կազմալուծող տարրեր կուսակցութեան շարքերի մէջ:

Մնում է երեք տեսակ ճանապարհ. Առաջին.— Լուծուել իթթիհատի մէջ. Երկրորդ.— Ձինաթափ լինել ու սպասողական դիրք բռնել:

Երրորդ.— Դարձեալ դիմել իլլեզու գործունէութեան»: Ընկեր Գիսակը իր ձեռնպահութիւնը կը պատճառաբանէ հետեւեալ կերպով.

«Նկատելով որ ժողովը շատ թեթեւ կերպով կը վերաբերուի օրինականացման հարցին, եւ նկատողութեան չ'առնել այն ամէն վտանգները որ կարող են ծնունդ առնել բացարձակ իլլեզու գործունէութենէ մը, որուն երբեք պէտք չ'ունինք այժմ, եւ որը ոճրագործութիւն մը կը նկատեմ հայ ժողովրդին եւ նոյնիսկ մեր կազմակերպութեան հանդէպ, կը յայտնեմ որ բոլորովին ձեռնպահ եմ այդ հարցի քուէարկութեան մէջ, առաջարկելով հակառակ պարագային խնդիրը յանձնել մարմիններուն եւ ընկերներու ուշադրութեան նախքան որոշում մը տալը»:

Վիճաբանութիւնը շարունակուեցաւ այս ուղղութեամբ, բայց կարելի չ'ըլլալով որոշ եզրակացութեան մը յանգիլ առաջարկուած բոլոր կէտերուն մասին, առաջարկուեցան քանի մը հիմնաւոր կէտեր քուէարկութեան ենթարկել եւ դիրքերը իրարմէն տալ՝ նոր բանաձեւ մը մշակելու համար՝ ժողովի արտայայտութեան եւ ընդհանուր ցանկութիւնների սահմաններից դուրս չ'զայլով:

Նիստը փակուեց որոշեալ ժամին:

Քարտուղար՝	Նախագահ՝
ԺԻՐԱՅՐ	ՌՈՒԲԷՆ

Նիստ 41-րդ. 5 – IX, առաւօտեան ժամը 8.30-ին

Ներկայ են 28 ընկերներ (նոր է եկած Տիգրանակերտի պատգամաւոր) Զուլալը: Նախագահում է ընկ. Անտոնը: Օրակարգ.— կուսակցութեան օրինականացման մասին բանաձեւ:

Նախ կարդացուեց Մուշի երեսփոխան ընկեր Գեղամի Ընդհ. Ժողովին ուղղած նամակը, հայրենիք մեկնելու պատճառով ժողովից բացակայելու, պարլամենտական գործունէութեան եւ Մուշ-Սասունի կարիքների մասին:

Նախագահը յայտնեց, որ երեկոյեան նիստ չի լինի յանձնաժողովներին զբաղուելու ժամանակ տուած լիւնելու համար. գեկուցանողները պարտաւոր են բերել մշակուած բանաձեւեր, որպէսզի վիճաբանութիւնները կեղրոնանան կոնկրէտ կէտերի շուրջ:

Մանդատային յանձնաժողովը գեկուցեց, որ Տիգրանակերտի մարմինը իրաւասու ո՛չ մի մարմնից Կետր. Կոմիտէ չէ ճանաչուած, գոնէ ձեւականօրէն: Պատասխանատու Մ-ը հրաւիրել է մասնակցել Ընդհ. Ժողովին, եթէ կետր. Կոմիտէ են կամ ցենց ունեն, որից յետոյ նրանք առանց այդ մասին տեղեկագրելու, նշանակել եւ յայտնել են իրենց պատգամաւորը: Իրականութեան գալով ընկ. Զուլալը ունի հեռագիր այնտեղի մարմնից ժողովի գալու համար. մարմնի ցենցի մասին ո՛չ մի տեղեկութիւն-փաստաթուղթ խոստացել են շուտով դրկել հաշիւները: Ընկերներ Պերճ եւ Զուլալ կը հաստատեն, որ անդամական ցենց ունի, իսկ դրամականը անորոշ է: Յանձնաժողովը իր ձեռքում եղած տուեալներով որոշ եզրակացութեան չ'զայլով ընկերոջ ձայնի խնդիրը ժողովին կը թողնուի:

Նախագահը խնդիրը վիճաբանութեան կը դնէ: Խօսողների մի մասը կը պնդէ, որ թէեւ պատգամաւորի անձնական ցենցի մասին կանոնագրի մէջ որոշ յօդուածներ չկան, բայց իրենք կարիք կը զգան ընկերոջ նկատմամբ այդ հարցը յարուցանել: Նա իր գործունէութեան մէջ եղել է շատ անտակտ. օր(ինակ), դուրս է եկել հակակրօնական պրոպականդի, հակառակ Տրապիզոնի Կետր. Կոմ-ի պահանջի⁴⁸, հրատարակել է Մայիս 1-ին թուղթիկ, Պատասխ. Մ-ի որոշման հակառակ Մամսոնից գնացել է Մարզուան, եղած զգուշացումները նկատի չէ առել, ուստի այդ բոլորը նկատի ունենալով, իբր զգուշացում եւ գործի ապագայ շահն ու իր ուղղուիլը նկատի առնելով, պիտի մերժել Զուլալի պատգամաւորութիւնը, մանաւանդ, որ Տիգրանակերտը դրամական ցենցով չի հաւասարուում նոյն իսկ վերջին նորակազմ մարմիններին:

Հակառակ խօսողները կը նկատեն, որ թէեւ Զուլալի անտակտութիւններն իրողութիւններ են, բայց դրանք արդիւնք են իր ըմբռնման, տեսակէտներին եւ փորձառութեան պակասութեան. իսկ հակադիսցիպլին վարմունք չէ ունեցել եւ Պատաս. Մ-ի կարգադրութեան համաձայն Մամսոնի շրջանում է մնացել (Մարզուան մէջն է): Միւս կողմից, եթէ օգտակար չէ, ինչո՞ւ գանազան վայրեք կ'ուզուի: Ձայնից զրկելու խնդիր կարելի է յարուցանել, եթէ իբր անձնաւորութիւն վարկաբեկած է, այլապէս ժողովը իրաւունք չունի մէկին զրկել մի իրաւունքից, որը կը վայելն բոլոր դաշնակցականները, քանի դեռ դաշնակցական են: Գալով շրջանի ցենզին նոյնպիսի է, որպէս միւս նոր շրջաններինը. միայն

քանի որ դեռ ոչ մի հաշիւ չկայ, նախորդ օրինակներին հետեւելով, պիտի տալ առայժմ միայն խորհրդակցական ձայնի իրաւունք: Մասնաւորապէս ընկ. Սարհանտ կը շեշտէ, որ այդ մեղադրանքների կուլութիւնը եւ պատճառները պիտի պարզուեն Խորհուրդի մէջ, ուր երեւան պիտի գայ Տրապիզոնի նախկին Կետր. Կոմիտէի գործունէութեան եւ հաշիւների պատկերը եւ պարզ կը լինի թէ ո՞վ է վնասել շրջանի կազմակերպութեան գործին:

Խնդիրը քուէի դրուելով, որոշում է ընկեր Զուլալին տալ խորհրդակցական ձայնի իրաւունք մինչեւ հաշիւների ստացուիլը:

Ժողովն անցնելով օրակարգին, վիճաբանութիւններից յետոյ, որք նախորդների կրկնութիւնն էին, որոշուեց օրինականացման վերաբերեալ հարցերը որոշ դասաւորութեամբ քուէարկել:

Քուէարկուեցին հետեւեալները.

- 1) Յամենայն դէպս կուսակցութիւնը գաղտնի պիտի լինի: 24 ձայն թեր, 1 ձեռնպահ:
- 2) Ցանկալի է համարուում օրինականացուել: 19 ձ. թեր, 8 ձեռնպահ:
- 3) Ներկայումս հնարաւոր է օրինականացուել առանց ծրագրային գիջումների.— 11 ձ[այն] թեր. 12 դէմ. 2 ձեռնպահ:
- 4) Ցանկալի է մի ելք գտնել օրինականացուելու առանց սկզբունքային-ծրագրային գիջումների: 18 ձ. թեր. 7-ը ձեռնպահ:

Տեղի են ունենում վիճաբանութիւններ ելքի հնարաւորութեան եւ նախորդ ժողովին յանձնաժողովի բերած բանաձեւի յօդուածների մասին: Առաջարկ է լինում անմիջապէս քննութեան եւ քուէարկութեան ենթարկել առաջարկուած ելք-բանաձեւի յօդուածները, այդ տեղից դուրս ձգել նուազագոյն պահանջների քննութեան եւ սահմանագծման խնդիրը, որ օրակարգի մէջ կայ անկախ օրինականացման խնդրից: Առաջարկն ընդունուելով, ընկեր Անտոնը նկատում է, որ առաջարկուած բանաձեւի յօդուածների մէջ «Օսմանեան հատուած»-ի տեղ լաւ կը լինի դնել «Թուրքահայկական» հատուած եւ օտարներին ընդունելու յօդուածը դուրս ձգել:

Քուէարկութեան են դրուում բանաձեւի յօդուածներն առանձին-առանձին:

1) Ներկայ սահմանադրական կարգերում կազմակերպութիւնը ձեռք է վերցնում դաւադրական բռնի մարտակերպից իր նպատակներին հասնելու համար եւ գործադրում է այն ռէակտիւնի դէմ: Թեր 18 ձ:

Երկրորդ յօդուածը, օտար անհատներին ընդունելու մասին, քուէարկութեան չ'ըրած նախագահը կարդաց ընկ. Պերճի բողոքն այդ մասին, որով այդ քայլը օրէնքի պահանջած միջազգայնացում նկատելով, որի մասին օրակարգի մէջ հարց չէ եղած, ժողովն իրաւունք չունի այդպիսի սկզբունքային փոփոխութիւն մը քուէարկելու եւ որոշելու:

48.- Զուլալ նախապէս իբրեւ գործիչ կը գտնուէր Տրապիզոնի, Սամսոնի եւ Մարզուանի շրջանները:

Այս առթիւ ծագած վիճաբանութիւնները ի յայտ կը բերեն երկու հոսանք, որոնցմէ մէկը (Պերճ, Մուրատ, Անտոն) կը շեշտէ որ առաջարկուածն այն տեսակի կազմակերպութիւն չէ ինչ որ մինչ այժմ եղած է մեր պրակտիկայի մէջ գանազան տեղերում, որոնց հետքն էլ անհետանալ է սկսել: Եթէ օտար տարրերի ընդունելը իբր սիստեմ որոշուի, կուսակցութիւնը հայկական լինել է պիտի դադրի, որով եւ հակառակ օրակարգի, վճռած կը լինենք միջազգայնացման հարցը:

Միւսները (Սարգանտ, Ռուբէն, Սարգիս) շեշտում են, որ նոյնիսկ մեր միութիւնների մէջ օտարներին ընդունել ենք, իսկ մի քանի վայրերի մէջ թիւրքերին եւ քրդերին կազմակերպել ենք առանձին, իրենց մարմիններով. այնպէս որ օտար տարրերի մէջ ազգային խմբակցութիւններով կազմակերպութիւններ ստեղծելը սկզբունքային փոփոխութիւն մը չէ, այլ նախորդում ընդունուածի կրկին հաստատումը:

Հարցն սպառուած համարուելով շարունակուեց յօդուածների քուէարկութիւնը:

2) Առաջուայ պէս շարունակել կազմակերպել օտար տարրերին ազգային խմբակցութիւնների սիստեմով: 22 ձ. թեր. 2 դէմ. 1 ձեռնպահ:

3) Պարլամենտական եւ օրինական բոլոր ճանապարհներով պայքարել ընկերակցութեանց օրէնքի 3-րդ եւ 4-րդ հակասահմանադրական յօդուածների դէմ: 19 ձ. թեր:

4) Նուազագոյն պահանջների վերաբնութեան խնդրով զբաղուել անկախ օրինականացման խնդրից: 21 ձայն թեր:

5) Օրինականացման համար յայտարարել Հ. Յ. Դաշնակցութեան «Օսմանեան հատուած»: Թեր 10 ձ. դէմ 11 ձայն. ձեռնպահ 4:

Նիստը փակուեց որոշեալ ժամին:

Քարտուղար՝ **ՎԱՆԻԿ** Նախագահ՝

Նիստ 42. արաւօտեան

Նախագահում է Ակնունի, ներկայ են 29 [հոգի]:

Նախագահը յայտնում է որ Պոլսից գրում են թէ Աղայեւն ու Դր. Կարաբէկովը յայտնել են Պատասխանատու Մարմինն որ իրենք ուզում են Դ[աշնակցութեան] հետ համաձայնութեան գալ Պարսկաստանում եւ Կովկասում միասին գործելու: Պատասխան ստացած լինելով որ Ընդհանուր ժողովը նիստեր ունի այժմ, խնդրել են Պարսկաստանի վերաբերեալ ոեւէ որոշում չկայացնել մինչեւ իրենք դիմում կ'անեն ժողովին որոշ առաջարկով: Նախագահը ցաւ է յայտնում որ արդէն բանաձեւը ընդունուած է, սպասելը արդէն ուշ, եթէ ժողովի ընթացքում դիմումը կը լինի օրակարգի նոր նիւթ կը դարձնենք եւ կը խօսենք:

Կարդացուած է ընկեր Դումանի դիւանին ուղղած մի գրութիւնը, որով ժողովի ուշադրութիւնն է հրաւիրում եւ նրա տնօրինութեան թողնում այն որ Ատրպատականի Կ. Կոմիտէն խախտել է IV Ընդհ. ժողովի որոշումը բռնի հանգանակութիւն կատարելով: Իրեն (Դումանին) անյայտ պահանջ է դրել Թիֆլիսում ապրող խոսրով Արզումանեանցը եւ բաւարարութիւն չստանալով Կ. Կ. էն Սալմաստում գրաւել է նրա հարուստ կալուածները եւ շահագործում է նրանց յօգուտ Դ-եան եւ II Բագում ապրող պարսկաստանցի եղբ. Թումանեաններից ստացել է ոչո՞ով 5000 ռ[ուբլի]. իսկ Ոսկանապատի Կ. Կոմիտէն ո'չ միայն թոյլ է տուել իր ռայոնում կատարելու հակադաշնակցական քայլ, այլեւ իր մի անդամին մտցրել է հանգանակիչ մասնախմբի մէջ:

Վրէժի պատգամաւորը յայտնում է որ ընկեր Դումանը թիրիմացութեան մէջ է. իբր դատական գործ բացատրութիւններ կը տամ խորհրդում:

Տիլիպպէից Վաղինակ քահանան մի գրութեամբ առաջարկում է լուծել այն հարցը թէ մի քահանայ կարող է լինել դ[աշնակցական] թէ՞ ոչ. որովհետեւ ինքը 15 տարուց ի վեր եղել է դ-ական ու ակտիւ մասնակցութիւն ունեցել կուսակցական գործերում, մինչեւ իսկ իր քահանայ եղած ժամանակ միաձայնութեամբ ընտրուել է Պալքանի արտակարգ Շրջանային ժողովին մասնակցելու: Իսկ 907-ի Շրջանային ժողովում հարց է բարձրացւում թէ քահանան չի կարող ընկերվարական կուսակցութեան անդամ լինել. հարցը չի լուծուում, հարցը մընում է բաց եւ իրականութիւնը լինում է այն որ ինքը առանց ո'եւէ որոշման չէզոքանում է ինքնին:

Կարդացուած է Սեբաստիայից ընկեր Վարդան Շահաբաբի գրութիւնը, որով առաջարկում է նկատի առնել հետեւեալ կէտերը.

- ա) Ջնջել Պատասխանատու Մարմինը. բ) Պարտաւորեցնել բոլոր Կ. Կոմիտէներին մէկը միւսին կոնտրոլի ենթարկելու, թէ գործունէութիւնը եւ թէ հաշիւները:
- գ) Ամենախիստ սահմաններ գծել անհատ գործիչների:
- դ) Արգելել անհատ գործիչներին, Կ. Կ.-ին նուէրներ տալ թէ դրամով թէ իրերով. ե) Արգելել յեղափոխականներին արծաթէ իրեր գործածելու եւ ցուցամոլութիւններ անել. զ) Վերջին ժամանակներս կազմակերպութիւնը չի տարբերում այն կառավարութիւնից որի դէմ կռուում ենք, եւ գործիչները՝ չինովնիկներից: ի) Հրատարակել նահատակ ընկերների պատկերները: լ) Ջնջել կանոնագրի 128 յօդ[ուածը]⁴⁹. թ) Տեւորել այն անձանց որոնք շարունակում են համիտեան քաղաքականութիւնը եւ մի տեղից հեռացուելով մի ուրիշ տեղ եւն պաշտօն ստանձնում: Նոյնը եւ նախկին դրութիւնը շարունակող քիւրտ բէկերին:

Ստացուել է Շամից եւ Վանայ ապրանքների կորստի քննութեան տեղեկագիրը՝ Վահաբի յառաջաբանով եւ

49.- Չորրորդ Ընդհ. ժողովին ընդունուած կանոնագրութեան 128րդ յօդուածը կ'ըստ. «Բռնի միջոցներու գործածութիւնը հանցանակութեան գործի մէջ խստիւ արգիլուած է»:

Այնթապից մի տեղեկագիր:

Որոշուած է Դումանի գրութիւնը տալ խորհրդին «ի քննութիւն»: Վաղինակ քահանայինը կազմակերպական հարցերի մէջ դնել, իսկ ընկեր Վարդան Շահաբաբի առաջարկները նկատի առնել համապատասխան հարցերը քննելիս: Վահաբի տեղեկագիրը՝ խորհրդին, իսկ Այնթապինը՝ տեղեկագրերի յանձնախմբի:

Նիթրան առաջարկում է քուէարկել նախորդ նիստից մնացած կուսակց[ութեան] légalisation-ի անուան վերաբերեալ բանաձեւի մասերը: Նախագահը նկատում է որ այդ կը քուէարկուի նուազագոյն պահանջների քուէարկութիւնից յետ:

Անտոն յիշեցնում է անցեալ ժողովի որոշումը, որ légalisation-ի հարցը քննուում է անկախ նուազագոյն պահանջների քննութիւնից:

Նախագահը նկատելով որ այդ հարցը այսօրուայ նիստի օրակարգից դուրս է եւ միջանկեալ արուած առաջարկ, փակելով հարցը անցնում է ինքնապաշտպանութեան խնդրին իբր հերթական հարց:

Բանաձեւեր առաջարկում են ընկերներ

Դուման 7 ստորագրութեամբ,

Անտոն, Նիթրա եւ Ամատունի:

Ժողովականներից մի քանի հոգի նկատելով որ առաջարկուած բանաձեւերից պարզ երեւում է որ նախկին տարբերութիւնները չկան, որ բոլորն էլ գրեթէ համաձայն են ինքնապաշտպանութիւնը դնել համաժողովրդական հիմունքների վրայ, (միայն Ամատունին չէր ընդունում, առարկելով որ այդպիսով գործը նշանակում է մեղքներ) եւ որ միայն մեր իբր կուսակցութիւն եւ իբր անհատներ մասնակցելու ձեւի մասին է հարցը, առաջարկում են բանաձեւեր բերող ընկերներին առանձին համաձայնութեան գան եւ բերեն մի բանաձեւ:

Մի քանի հոգու առաջարկից յետ — թոյլ տալ ճական ըրպէնով խօսք այդ հարցի շուրջը, որպէսզի բանաձեւեր պատրաստող ընկերները ծանօթանան ժողովի տրամադրութեան հետ, նախագահը քուէարկում է.

I Բննել հարցը ամբողջութեամբ եւ քուէարկել կէտերը առանձին. + 8, - 17:

II Թողնել յանձնախմբին բերելու պատրաստի բանաձեւ. + 11, - 14:

III Կարելու կէտերը քուէարկել, ընդունիլ, ապա յանձնել յանձնախմբին խմբագրելու եւ լրացնելու. + 14, - 11:

Դուման.— Ընդհանուր ժողովում չկայ մէկը, որ ինքնապաշտպանութեան գործը անհրաժեշտ չնկատի մեր պայմաններում, ամէնքն էլ ցանկանում են տալ զինման գործին լայն չափեր, բայց հարցը նրանումն է, որ դաշնակցականները երեւան են գալու իբր քաղաքացիներ, եւ իբր հասարակութեան անդամներ են մասնակցում: Եթէ կուսակցութիւնն է հանդէս գալիս այդ տեսակի խնդիրներում, տարաձայնութիւնները գանազան խաւերում անպակաս են դառնում, եւ բացի այդ մի կերպ չի նովնիկականութեան դրութիւն է ստեղծը:

ւում: Ըստ իմ առաջարկած բանաձեւի, առաջին աստիճանում (նախապատրաստական) ժողովուրդը ինքն է տանում իր գործը, իսկ եթէ նեղ դրութեան մէջ է գոյւմ իրեն, այդ ժամանակ կը հրաւիրէ մեզ, իսկ եթէ այդ շրջանում չի ըմբռնում կամ չի ուզում միջոցներ ձեռք առնել՝ այդ արդէն իրեն գործն է: Երկրորդ շրջանում, երբ արդէն պահանջը սուր կերպարանք ստացած կը լինի, մենք յառաջ կը գնանք եւ մենք ենք որոշելու ըրպէի լրջութիւնը եւ մէջ ենք նետուելու առանց հրաւերի իսկ: Սուր վիճակը որոշում է նրանից, երբ ընդհարումները լայն չափեր են ստանում եւ անհատական սպանութիւնները յաճախակի դառնալով ստանում են ազգային բընաւորութեան գոյն. այդ արդէն նշան է որ դրութիւնը լուրջ է եւ մենք առանց հարցնելու մէջտեղ պիտի նետուենք:

Անտոն.— Նախ քան Ընդհանուր ժողովը կողմնակից էի ինքնապաշտպանութեան գործը ժողովրդին թողնելու. բայց այժմ որ բոլորը լսելուց յետ, երբ այդ ձեւով էք թողնում ժողովրդին, որովհետեւ ըստ իս հէնց մեր ամենամեծ գործը նախապատրաստական շրջանում է լինելու, գալիս եմ այն եզրակացութեան, որ կուսակց[ութեան] պաշտօնական մասնակցութիւնը անհրաժեշտ է. դրանով սերտ կապ կը ստեղծուի մեր եւ գործի մէջ. հակառակ դէպքում մենք մեզ կապուած չգալով կը թուլանանք: Երբ որոշենք թողնել ժողովրդին, ինքնապաշտպանութեան անձեւերը մէջ կը մտնեն կը խառնեն եւ մենք իբր անհատներ չենք կարող ոեւէ դրական դեր խաղալ, որովհետեւ մեր առաջարկներն ու որոշումները պարտաւորիչ լինել չեն կարող: Մենք մոռանում ենք որ մեր միջոցները ստանում ենք ժողովրդից մեծ մասամբ այդ անուան տակ, պիտի մի մնայուն գործ էլ ստեղծել մեր ձեռքով: Կարելու է վերցնել մեր ձեռքը այն տեսակէտից եւս, որ մենք շնորհիւ այն պայմաններին որի մէջ ապրում ենք, ինքնապաշտպանութեան ենք քաղաքական կուլ, որովհետեւ մեզ ջարդում են իբր սահմանադրականներ:

Նիթրա.— Արզումաններս նման [են] Անտոնի յառաջ բերածներին: Եթէ Շամի ռայոնական ժողովի որոշումը, որը բռնուած է կառավարութեան ձեռքով, իմ առաջարկած ձեւով մշակած լինէր, այդքան աղմուկ չէր հանի: Մենք պիտի ընդհանրացնենք թէ ժողովրդի եւ թէ կառավարական ղեկավար շրջանների մէջ այն միտքը, որ այս կուլները գերիշխող ու իշխուող ազգերի կուլներ չեն, այլ սահմանադրութեան եւ ռէակտիւնի: Տարակարծիք չեմ որ ժողովրդի ձեռքը մնայ այդ, բայց նկատում եմ որ ժողովրդի մէջ նախաձեռնութեան ոգի չկայ, էլի մերոնք են որ մէջ պիտի մտնեն եւ նախաձեռնող հանդիսանան, իբր այդ գործի համար միակ ընդունակ տարրը: Ուզում է այդ լինի կուսակցութեան անունից կամ անկախ այդ անունից, մենք պիտի մեր ձեռքն առնենք այդ գործը: Բացի այդ քայլերից, մենք ունենալու ենք եւ մեր մարտական խմբերը, ի հարկին մէջ նետուելու համար:

Ամատուկներ.— Գործը չվիժեցնելու համար կուսակցությունը իր վրայ պիտի վերցնի, որովհետև երբ իբր անհատներ երեւան գանք, չէզոքներն ու միւս կուսակցությունները խանգարողի դեր պիտի ստանան: Գործը աւելի յաջող տանելու համար համաձայնութեան պիտի գանք ընդդիմադիր տարրերի հետ. անպայման այդ համաձայնութիւնը պիտի կայացուի մեր եւ նրանց բարձրագոյն մարմինների մէջ, հրահանգելով մեզ, մի հանգամանք որը ստիպում է մեզ դուրս գալ իբր կուսակցութիւն:

Մարտիրոս.— Գտնում է որ միւս կուսակցութիւնների հետ կարող ենք բանակցել եւ ո՛չ պաշտօնապէս էլ, այդ ձեւական կողմն է:

Ռոստոմ.— Ոչ պաշտօնապէս մասնակցելու կողմնակից է, եւ բերում է Թաւրիզի օրինակը, որ առանց անպատեհութիւններ ստեղծելու հնչակեանների հետ ո՛չ պաշտօնական հողի վրայ միասին գնացինք, յետոյ նոյն ձեւով միացան եւ Ս. Դ. -երը եւ կարելի եղաւ միացեալ ոյժերով գործը շատ յաջող տանել: Շեշտում է որ մենք հէնց այդ ձեւով ենք մէջ մտնելու եւ անպայման նախապատրաստական շրջանում էլ, որովհետեւ իսկական գործը այդ ժամանակ է:

Քուէարկում են հետեւեալ կէտերը, որոնք իբր դեկավարող սկզբունքներ պիտի ծառայեն բանաձեւ մշակող յանձնախմբին.

I- Ինքնապաշտպանութիւնը անհրաժեշտ է – այո՛ – միաձայն.

II- Վտանգի րոպէին կուսակցութիւնը մէջ է մտնում, կ'ուզէ հրաւիրեն կամ ոչ. – + 23, - 2:

III- Կուսակց.ը նախապատրաստական շրջանում մէջ է մտնում իբր կուսակցութիւն. + 10, - 14, 1 ձեռնպահ:

IV- Նախապ. շրջանում կուսակցութեան) անդամները դուրս են գալիս իբր քաղաքացիներ + 10, - 15:

V- Նախապ. շրջանում կուսակցութիւնը պարտաւոր է դուրս գալ իբր քաղաքացիներ համաձայն կուսակցութեան դիրեկտիւնների + 10, - 9:

VI- Դաշնակցութեան բարձրագոյն մարմինները պաշտօնական բանակցութեան մէջ են մտնում եւ համաձայնութեան գալիս հնչակեանների պատշաճ մարմինների հետ միասին տանելու ինքնապ. գործը. + 2, - 23:

Անցած են համարում միայն I եւ II կէտերը:
Կարդացում է ընկեր Անտոնի Թուրքիայի վերաբերեալ բանաձեւը, որի հետեւեալ 2 կէտերը ընդունում են, մնացածը յանձնելով յանձնախմբին մշակելու:

«Նկատելով որ Սահմանադրութիւնը Թուրքիայի համար հանդիսանում է միակ միջոցը թէ Օսմանեան պետութեան վերածնութեան եւ թէ ճնշուած ազգերի եւ կեղեքուած խաւերի վիճակի թեթեւացման, ինչպէս եւ խոշոր ազգայն իրաւակարգի յաղթանակի հարեւան երկրներում (Ռուսիա, Պարսկաստան եւ Սօտաւոր Արեւելքում):
«Գտնելով որ քաղաքականապէս անգիտակ, բայց ի-

րենց արդի վիճակից դժգոհ ժողովրդական լայն զանգւածները իրենց դիրքով իսկ հանդիսանալու են սահմանադրութեան պաշտպան բանակը երբ սահմանադրական կառավարութիւնը կատարէ իւր պարտականութիւնները դէպի պետութիւնը սնուցանող, բայց մինչեւ օրս միայն կեղեքուած խաւերը (+ 24, - 1)»:

Վիճաբանութիւն է ծագում բանաձեւի մէջ արտայայտուած երկու մտքերի վերաբերեալ. մէկ որ՝ «Ժողովուրդը անգիտակ է» եւ երկրորդ՝ «սահմ. յայտարարութեանը նպաստել է մեծ չափով արտաքին բարդութեանց վախը» եւ «ուհակսիտնը զսպուած է մնում արտաքին սպառնալիքի ճնշման տակ»:

Յովնան.— Գտնում է որ անյարմար եւ անտակտ բան կը լինէր եթէ այժմ այդքան բացորոշ կերպով յայտարարենք այդ ճշմարտութիւնները:

Անտոն.— Անհրաժեշտ է, որովհետեւ նկատումները ունեն եւ իրենց պատասխանի մէջ դարմանը:

Պէքե.— Անյարմար եմ գտնում մի քաղաքական լուրջ կուսակցութեան համար, որը նպատակ է դնում սահմանադրութեան պաշտպանութեան համար համերաշխ գործակցութիւն ուրիշ կուսակցութեանց հետ սահմանադրութեան պաշտպանութեան համար, յայտարարել որ ժողովուրդը եւ նրանից ծնուած կուսակցութիւնները անգիտակ են, չեն հասկանում:

Գիսալ.— Ուղղումն է մտցնում. «Օսմանեան ժողովուրդների մեծագոյն մասը անգիտակ է եւ այն»:

Քուէարկում եւ ընդունում է յայտարարել, բայց ուրիշ խմբագրութեամբ, որ անտակտ չլինի այդ յայտարարութիւնը:

Իսկ ինչ վերաբերում է երկրորդ մտքին, ընկերներից մի քանիսը գտնում են որ արտաքին միջամտութեան վախը սահմանադրութեան յայտարարման մէջ շատ մեծ դեր է խաղացել եւ որ Ռէվէլի տեսակցութիւնից յետ կառավարութիւնը) ստիպուած եղաւ սահմանադրութեան յայտարարութիւնը անել: Թուրքերը Պարիզում նստած չգիտէին թէ բանը ինչու է, նոյնիսկ մենք այդ ժամանակները խորհրդում նստած ո՛չ մի բանից խաբար չունէինք: Որ ուհակսիտնը զսպուած է մնում արտաքին վախից, այդ էլ պարզ է, իթիհհատականները ուհակցիայի դէմ կուուելու իրենց միջոցներից մէկն էլ ընտրել են այն, որ միշտ վախեցնում են թէ երկիրը ձեռքից կը գնայ. պէտք է այդ ճշմարտութիւնը յայտարարենք. մենք շատ բաներում զիջեցինք յանուն մեր համերաշխութեան, չասացինք եւ մոռացութեան տուինք:

Միւս մասը գտնում է, որ ո՛չ միայն անյարմար եւ անտակտ քայլ կը լինէր, այլեւ դրանով ցոյց տուած կը լինէինք թէ մենք ուզում ենք որ այդ վախը միշտ մնայ, մինչդեռ էապէս այդպէս չենք մտածում եւ բացի այդ, չենք կարող խոշոր դեր տալ արտաքին միջամտութեան վախին, որովհետեւ դրանով մենք մոռացութեան

տուած կը լինենք 30 տարուայ ներսի աշխատանքը: Մակեդոնիայում թերթեր էին հրատարակուած եւ բանակի տակը փորում: Ռէվէլի տեսակցութիւնը եւ արտաքին վախը, արագացրին միայն, այդ չափով միայն մենք պիտի տեղ տանք այդ մտքին. եւ երբեք չմոռանանք տարիների ներսի աշխատանքը:

Ուշ լինելու պատճառով ժողովը փակուած է:

Քարտուղար՝ Նախագահ
ՎԱՀԱՆ

Նիստ 43-րդ. 6 – IX. Երեսուցեան Ժամը 4.30-ին

Բացակայ է ընկեր Մուրատը:
Նախագահում է ընկ. Ակնունին: Կարդացում է 33րդ նիստի ատենագրութիւնը եւ ուղղումներով ընդունում:

Կարդացում է ընկ. Նիթրայի մի գիրը, ուղղուած ժողովին, իրա եւ ընկ. Գարոյի միջեւ պատահած խնդիրների շուրջը: Ընկ. Ակնունին յայտնում է, որ արդէն այդ խնդիրը Պատասխ. Մ-ի կողմից «Խորհուրդին» է յանձնուել, որն իր ձեռքի տակ ունեցած երկու կողմի գրութիւնները նկատի պիտի առնէ եւ քննութեան մտնէ: Ժողովականները համաձայնութիւն են յայտնում, որ խնդիրը դատական բնոյթ ունենալով Խորհուրդին պիտի թողնել:

Ընկեր Ռոստոմի կողմից Թուրքիայի սահմանադրութեան) մասին կազմուած բանաձեւի վրայ կանգ են առնում ընկերները, որոնց դիտողութիւններին ի պատասխան, ընկ. Ռոստոմը յայտնում է որ բանաձեւի մէջ չկայ եւ ոչ մի սխալ բան. եթէ միանում ենք իթիհհատի հետ, արդէն նրանք էլ բուրժուական տարրեր են: Արտաքին միջամտութիւնը, որքան էլ բուրժուական լինի, բայց եւ այնպէս ազգակ է ուհակցիայի զսպման գործում: Արտաքին միջամտութեան վտանգը եթէ վերցրելի, անպատճառ ուհակցիան գլուխ կը բարձրացնի:

Անտոն.— Ռոստոմի պաշտպանած կէտը տակտիկական է. սահմանադրութեան հիմնաւորումը թոյլ է, ամէն միջոցից պիտի օգտուել նրան պաշտպանելու. արտաքին միջամտութեան մասին եղած ակնարկը պիտի նկատել միայն որպէս չափ ու ապացոյց թէ որքան թոյլ եւ երեւուն են Օսմ. սահմանադրութեան) հիմքերը:

Սարգիս.— Ընկերների խօսածներից հետեւցնում է, որ եթէ արտաքին միջամտութեան վտանգը չլինի ուհակցիան կը յառաջանայ: Դա նշանակում է ուրեմն, որ պիտի ձգտել միշտ այդ վտանգը պահել, ուհակցիան զսպելու համար. այսպիսի մտածողութիւն շատ վատ պիտի ազդէ երիտ. Թուրքերի վրայ: Ռէվէլիտն տարրերը արտաքին միջամտութիւնից չեն վախենում. նրանք կ'անեն եւ կը ցանկան այն ամէնը, ինչ որ կրնայ տապա-

լել ներկայ ուեժիմը. նրանք՝ արտաքին միջամտութեան՝ այս ուեժիմի դէմ, կողմնակից են եւ զսպուած են միայն կախադաններով: Արտաքին միջամտութիւնից վախենում են երիտ. Թուրքերը, որպէս հայրենասէրներ: Երիտասարդ Թուրքերի մէջ աւելի յեղափոխական եւ մաքուր տարրեր կան, քան ուուս Հոկտեմբերեաններին:

Չելալեան.— Պարզ է, որ Ադանայի խնդրում երիտ. Թուրքերը մասն ունեն. նրանք ոչ ազատական եւ ո՛չ էլ անկեղծ են. նրանք վախենում են արտաքին միջամտութիւնից. այդ երեւաց կրետէի խնդրում, երբ նրանք սկսեցին մեզ մօտենալ ու սիրաշահել: Մեզ հայերիս համար մի ելք կայ, մօտենալ իրար, սեղմուել ու մտածել երկրի թէ ներքին եւ թէ արտաքին վտանգները դիմագրուելու համար:

Իււման.— Ռէվէլիտն շարժումը չի մեռել. հայ ժողովուրդին վտանգի ժամանակուայ համար մնացել է մի բաց դուռ, արտաքին միջամտութեան յոյսը:

Նախ պիտի ապահովել հայ ժողովուրդը կոտորածներից, ապա մտածել այդ բաց դուռը գոցելու մասին:

Ժողովը նոյն բանաձեւում արտայայտուած հետեւեալ կէտի վրայ դարձուց իր ուշադրութիւնը.

«Համոզել հարեւան տարրերի ղեկավարներին խոյս տալ այն ամէն քայլերից, որոնք կարող են առիթ տալ ազգային ընդհարումների եւ արտաքին միջամտութեան»:

Այս հարցի մասին արտայայտուած են ընկերները, թէ հողային, դպրոցական եւ նման հարցերը ազգային չեն. մենք գիտենք, որ Թուրքիայում ապրող յոյն, արաբ, ալբան տարրերն են, որ յարուցանում են իսկապէս ազգային հարցեր ու բարդութիւններ: Դաշնակցութիւնը պիտի յայտարարէ, որ ինքը խոյս է տալիս այդ հարցերից: Դպրոցական, հողային, պատրիարքարանի եւ նման հարցերից շատ բարձր պիտի դասել սահմ. պահպանման շահը. դա հարցն է ամբողջ Թուրքիոյ հայութեան գոյութեան: Խոյս պիտի տալ ազգային բարդութիւններից, բայց թոյլ չպիտի տալ որ կառավարութիւնը խլի արդէն մեր ունեցած իրաւունքները, որոնք առանձնաշնորհումներ չեն: Արտաքին միջամտութեան խօսքը պիտի դուրս ձգել. չի կարելի ասել, որ չպիտի դիմենք արտաքին միջամտութեան, բայց եւ այնպէս այդ միտքն էլ չպիտի յայտարարել: Երիտ. Թուրքերի հետ այնպէս պիտի յարմարուել, որ արտաքին միջամտութիւն չյառաջանայ, որից օգտուելու են ուհակցիոնները: Փոքր խնդիրներ կան, որ փոփոխուելով մեծանում-դառնում են Ազգային մեծ խնդիրներ: Կառավարութիւնը վասպետականում), Բաղէշում հալածում էր մեր ընկերներին, որոնք դրանից տրամադրուած էին լեռները քաշել, որից կրնար ազգային բարդութիւն ծագել: Նորատունկեանի մասնակի խնդիրներն եւս ուզեցին նոյն գունաւորման ենթարկել: Յիշուած բանաձեւը լաւ կը գտնեն, դրանով երիտ. Թուրքերը կը համոզուեն, որ

մենք անկեղծ ենք սահմ. հանդէպ:

Այս մտքերի դէմ այն առարկութիւնն է լինում, թէ այդ բարդութիւնները կեանքն է ստեղծում եւ ոչ մենք: Պիտի համոզել միւս տարրերին եւս, որ նրանք էլ խոյս տան նման խնդիրներէ: Երբ որ տարրերը, կառավարութիւնը եթէ ցանկանայ խլել մեր դպրոցները, դրանով ինքը յարուցած կը լինի բարդութիւն: Կնճռոտութիւններ արդէն շատ են. պիտի աշխատել խոյս տալ նորերից: Օտար կապիտալիստները³⁴ ջնջման ձգտումն էլ բարդութիւններ եւ անպայման արտաքին միջամտութիւն պիտի առաջացնէ. երիտ թուրքերին պիտի համոզել, որ առ այժմ հրաժարուեն այդ հարցերը քրքրելուց:

Ժողովը որոշում է բանաձեւն ամբողջութեամբ վերադարձնել ընկ. Ռոստոմին, որպէսզի աւելի լաւ ձեւաւորէ եւ քուէարկութեան բերէ յաջորդ նիստերից մէկին:

Կը դրուի Թուրքիայում սոցիալիստական կուսակցութիւնների հետ համագործակցութեան հարցը:—

Վանիկ.— Թուրքիայում այդպիսիներ չկան, այնպէս որ ո՛չ թէ պիտի մտածել անոնց հետ համագործակցելու, այլ այդպիսի խմբակցութիւններ առաջ բերելու մասին, օտար տարրերի մէջ: Այդ ուղղութեամբ պիտի աշխատել — թեքել իթթիհատի ձախ թեքը:

Առարկում են, որ Թուրքիայում Մակեդ(ոնական) սոց. դեմոկր(ատ) բունդ կայ, որ սոցիալիստ կուսակցութիւն է. նրանց նուազագոյն պահանջները գրեթէ նոյն են, ինչ մերը. պիտի նրանց մօտենալ. ուրիշների մէջ սոց(իալիստական) ուղղութեամբ կուսակցութիւններ առաջացնելու մենք ընդունակ չենք:

Գլխակ.— Պարլամենտում պիտի գործել որպէս սոցիալիստներ. այդ դրօշակի տակ կու գան աշխատաւորական բոլոր տարրերը. այդ ուղղութեամբ կարելի է չէզոքացնել ազգային կնճռոտութիւնները:

Թեր եւ դէմ մի քանի վիճաբանութիւններից յետոյ հարցը քուէարկուում է հետեւեալ ձեւակերպումով:

«Այլ ազգերի մէջ գոյութիւն ունեցող սոց(իալիստ) կուսակցութիւնների հետ ձգտել ձեռք ձեռքի տալու»: Ընդունում է ժողովի կողմից:

Ընկ. Անտոնն առաջարկում է հետեւեալ բանաձեւը. «Ձգտել հիմնելու ընդհանրապէս աշխատաւորական լայն մասսաների համախմբումներ եւ նրանց դեկավարելով, ընդհ. հանրագրութիւններով ազդել պարլամենտի վրայ»:— քուէարկում է, բայց չի անցնում:

Դրում է փոքր ազգերին կուլտուրական ատոնում-իայի հարցը. ընկ. Անտոնը կարդում է իր բանաձեւը. «Ընդունելով, որ ազգայնական կոնֆլիկտների վերացումը հանդիսանում է Թուրքիայի վերածնութեան ու խաղաղ զարգացման հիմնական պայմաններից մին. ընդունելով, որ Օսմ. պետութիւնը կազմող բոլոր ազգութիւնների համար ազգային հաւասարութիւնը անկապտելի իրաւունք է, եւ դրա հակառակ տարուած ձուլման քաղաքականութիւնը կը գտնի բնականաբար դիմադ-

րութիւն, ո՛չ թուրք ազգերի կողմից. ընդունելով, որ քրիստոնեաների վայելած ազգային ներքին ինքնավարութիւնը դպրոցական, կրօնա-ազգային-կուլտուրական գործերում (սխալ անունով «առանձնաշնորհում»), հանդիսանում է միջոց գէթ փոքր չափով հակազդել(ու) թուրք-մահմեդական տարրերի գերիշխանութեանը եւ մօտենալ(ու) ազգերի իսկական հաւասարութեան ակտին, Ընդհ. Ժողովը որոշում է, ազգային դպրոցների եւ գոյութիւն ունեցող ազգ.-ինքնավարութեան եւ իրաւասութիւնների կրճատման համար ուղղուած ոտնձգութիւններին դէմ մաքառել, գործակցելով բոլոր շահագրգռուած խաւերի ու ընդդիմադիր սահմանադրական) հայ եւ ո՛չ հայ տարրերի հետ»:

Սկսում են վիճաբանութիւններ. դիտել կը տրուի, որ մենք դրանով չենք հակասում այն որոշման, որ խոյս ենք տալու ազգային բարդութիւններից. այլ բան է նոր իրաւունքների գրաւման աշխատել եւ այլ բան է արդէն ունեցած իրաւունքը պահպանել: Մեր արդէն ունեցած իրաւունքների դէմ թոյլ պիտի չտալ եւ ո՛չ մի ոտնձգութիւն:

Մի քանի ընկերներ համաձայն լինելով վերելի մտքերի հետ, աւելացնում են, որ երկրում մասնաւոր պէտք է գործակցել հայ այլ կուսակցութիւնների հետ, որոնք տեղ-տեղ մեզի չափ ուժ են. լինելով փոքր ազգ, պիտի իրար միանալ: Այդպէս համերաշխիլ հնչակեանների հետ, որք բաւական շատ են, եւ գոնէ դեմոկրատ տարրեր են. թէ ինքնապաշտպանութեան եւ թէ նման այլ ազգային խնդիրներում գործակցութիւն պիտի ստեղծել:

Պէտք է յայտարարել տիրող ցեղերին, որ բնաւ տրամադիր չենք ձուլուելու եւ մինչեւ վերջ էլ պիտի մնանք ուրոյն ազգութիւն:

Ներկայացրած լինելով ժողովին գրեթէ նման մտքով մի բանաձեւ եւս, ժողովը որոշեց յանձնարարել մասնաժողովին, որ այդ երկու բանաձեւերը միացնի եւ այնպէս քուէարկութեան բերէ:

Նիստը փակուեց ժամը 7.30-ին:

Քարտուղար՝ **ԶՈՒԱԱ**

Արտագրող՝ **ՎԱՆԻԿ**

Նիստ 44. 7 Սեպտ.

Նախագահում է Ռուբէն. բացակայ Յովնան (հիւանդ): Ներկայ են 29 [հոգի]:

Օրակարգ.

«Մեր դիրքը դէպի ազգային կուլտուրական հիմնարկութիւնները». գեկուցանում է ընկեր Պերճ:

Ազգային-կուլտուրական հիմնարկութիւնները 3 տեսակի են. ա) բուն կուլտուրական հաստատութիւններ (դպրոց, գրադարան-ընթերցարան, հրատարակչական, գրական ընկերութիւններ եւ այլն) բ) ազգային քաղաքական-կուլտ. հաստատութիւններ (մարմիններ) ինչպէս թուրքահայերի գաւառական եւ կենտրոնական, երեսփոխանական, քաղաքական ժողովներ, պարսկահայոց եւ ռուսահայոց թեմական խորհուրդներ, կենտրոնական ժողով, եւ այլն. գ) կրօնական-քաղաքական-կուլտուրական մարմիններ — թաղականութիւն, կոնսիստորիա, կրօնական ժողով, կաթողիկոսութիւն, պատրիարքութիւն եւ առաջնորդութիւն:

Այս բաժանումները կատարելուց յետոյ, որոշ է որ Դ-իւնը իբր սոցիալիստական կուսակցութիւն ո՛չ մի հետաքրքրութիւն չէ կարող ունենալ մարմինների կրօնական ֆունկցիաների մասին, այլ, կուսակցութեան վերաբերմունքը պիտի որոշուի հանդէպ այդ մարմինների եւ հիմնարկութիւնների կուլտուրական-քաղաքական ֆունկցիաները:

Պէտք է իսկապէս գործօն մասնակցութիւն ունենալ այդ գործերի մէջ, բայց կուսակցութիւնը յեղափոխական-քաղաքական մեծ գործ ունենալով չի կարող. թէ հնարաւորութեան եւ թէ տակտիկական տեսակէտով՝ չպէտք է ունենալ անմիջական մասնակցութիւն: Սակայն, իւրաքանչիւր դաշնակցական անհատ պատրաստ է մասնակցել, կուսակցական տեսակէտների վրայ կանգնելով եւ ջանալով կրօնական ֆունկցիաները բաժնել քաղաքական-կուլտուրականից, վերջինը դնելով զուտ համազգային հողի վրայ, գատելով դաւանութիւններից, ինչ որ հնարաւորութեան նշաններ ցոյց կու տայ, քննութեան խնդիր դառնալով զանազան դաւանութեանց մտաւորական տարրերու մէջ:

Ապա գեկուցաբերը կարդում է յանձնաժողովի կազմած բանաձեւը (տես արձանագրութեան վերջը դրուած բանաձեւերի մէջ):

Ժողովը անցնում է վիճաբանութիւններին:

Ճապոնացի.— Ձեկուցումը պատճառաբանութիւններ չունէր, որոնցմով հիմնաւորուած լինէր մասնակցութեան առաջարկը: Բանաձեւի մէջ ասուած է մարմիններ չեն մասնակցում: Բայց հրահանգներ տալիս են դաշնակցական ընկերներին. այդ երկուսը հակասական են, մէկը միւսին ոչնչացնող: Կուլտուրական հիմնարկութիւններին մասնակցելու խնդիրը քննութեան առարկայ կրնայ լինել տակտիկական տեսակէտից,

որով եւ կը տեսնուի թէ՛ ինչքան կը տուժեն մեր յեղափոխական գործերը: Իբր օրինական գործեր աւելի գրաւիչ են եւ կազմակերպական ահագին ուժեր կը կլանեն: Օրինակներ շատ են, Երեւանի շրջանային ժողովը՝ անցեալ տարի՝ կաթողիկոսական ընտրութիւնների պատճառով՝ չկայացաւ, որովհետեւ ընկերները աւելի կարեւոր գործ էին համարած այդ ընտրութիւններով զբաղուիլ: Այդ գործօն մասնակցութիւնը կուսակցութեան շուրջն է համախմբել Սեպտեմբերեան ուսուցիչների մեծ քանակ, որոնք պաշտօնի տէր լինելուց յետոյ, Դաշնակցութեան անունն անգամ չեն տար: Այս աննորմալ պայմաններին, այդ գործերով չէ որ պիտի զբաղուի յեղափոխական կուսակցութիւնը, այլ քաղաքական-մարտական-տնտեսական գործունէութեան կանոնաւորմամբ եւ հիմնաւորմամբ:

Դուլման.— Աւելի լաւ է ոչ մի մասնակցութիւն չունենալ, քանի որ կազմակերպութիւնը իր մտաւորականութեամբ ցած է քան դուրս մնացած մտաւորականութիւնը, որը պիտի համախմբուի այդ գործերի շուրջը: Մենք անմիջական մասնակցութեամբ դաստիարակութեան գործին կը վնասենք: Հիմնարկութիւններին մէջ եթէ մեր գաղափարներով առաջնորդուենք, միշտ ընդհարումներ պիտի ունենանք հոգեւորականութեան եւ ժողովրդի, իսկ դրանց հետեւանքով կառավարութիւնների հետ, մի բան որ կը վնասէ մեր քաղաքական յեղափոխական գործին: Իսկ եթէ մասնակցելիս թողնենք մեր գաղափարները եւ կոմպրոմիսների ճամբան բռնենք, շատ վատ յեղափոխական դաստիարակութիւն տուած կը լինենք դաշնակցական մասսային: Ուժերի ջլատման հարկ չկայ. այդ գործերի համար յեղափոխական շարքերից դուրս աւելի շատ ձեռնհաս անհաստներ կան:

Մարտիրոս.— Այն բոլոր գործերը, որոնց կուսակցութիւնը ուղղակի կամ անուղղակի պիտի մասնակցի, երկու տեսակի են: Մէկը, որ ուղղակի կը բխի կուսակցութեան յեղափոխական նպատակներից, որ իր առաջնակարգ անելիքներն են: Դրանից դուրս կան գործունէութեան յաջողութեան նպաստող խնդիրներ, որպիսիներից են կուլտուրական գործերը եւ ինքնապաշտպանութիւնը, որոնք առաջին տեսակի գործերի չափով պարտաւորիչ չեն ընկերների համար: Կուլտուրական գործերիցն էլ պիտի ընտրել այնպիսիները, որ ուղղակի կը բխեն կուսակցութեան սկզբունքներից, իսկ այնպիսիներ որ հակասող բնոյթ ունին մեր ուղղութեան, օրինակ, կրօնական ֆունկցիա ունեցողները, չնայած որ ունին նաեւ քաղաքական-կուլտուրական ֆունկցիաներ [պիտի հրաժարուել]: Առաջին տեսակի գործերը եւ հիմնարկութիւնները մնայուն են նաեւ ընկերվարական կարգերում, իսկ երկրորդները քայքայման եւ վերացման ենթակայ: Դրանց նկատմամբ պէտք է ունենայ հետեւեալ վերաբերմունքը, ուժ տալ ուրիշ ֆակտորների եւ չէզոքացնել այդպիսի հիմնարկութիւնների դերը:

կրօնական հիմնարկությունների ղեկավար դասակարգը այժմ հիմնուած լինելով ամբողջապէս կեղծիքի վրայ, չի կարելի նրանից լաւ բան սպասել:

Ամատուներ.— Պատրիարքարանը կրօնական հիմնարկութիւն մը լինելով հանդերձ, Թուրքիոյ մէջ քաղաքական մարմին մըն է միաժամանակ, եւ չենք կարող անուշադիր թողնել զայն: Պիտի ջանալ դաւանութիւնները քաղաքական-կուլտուրական գործերէն զատել, վերջինները յանձնելով ամբողջապէս աշխարհականացած մարմիններու: Այդ բոլորին պիտի անհատական ուժեղ մասնակցութիւն ունենալ, որով հնարաւոր պիտի լինի այդ հիմնարկութիւններու աստիճանական ռամկավարացումը: Գալով կաթողիկոսին, չէ՞ որ կըրթական հիմնարկութիւնների իրաւական պետն է, որով անոր ընտրութիւններն ալ չէ կարելի ազգաթող ընել: Մասնակցել պէտք է նաեւ բարեգործական ընկերութիւններին: Այս բոլոր անհատական մասնակցութիւններն հրահանգելով, չպիտի արգիլել կրօնական հիմնարկութիւններին մասնակցելը: Գործօն դեր ստանձնողները անպայման կուսակցութեան հրահանգներով պիտի ղեկավարուեն:

Աւրգիւ.— Դաշնակցութիւնը թողած իր բուն գործերը, մտնում է հասարակական բոլոր գործերի մէջ, ամէն ինչ բխցնելով կուսակցութեան սկզբունքներից: Անմիջական մասնակցութիւն ունենալ մեր բուն նպատակներին անմիջական առնչութիւն ունեցող գործերուն, իսկ կողմնակիները թողնել բոլոր նրանց որ ցանկանում են եւ հնարաւորութիւն ունեն եւ կը սիրեն ապրիլ հասարակական այդ կեանքով: Հասարակական այդ օրինական գործունէութիւնը սիրողներ շատ են: Ոչ մի հիմնարկութեան մէջ կուսակցական մասնակցութիւն չունենալ: Մեր ուժերը քիչ են եւ քաղաքական կռուի համար: Մեր հմայքը հետեւանք է մեր ռազմական գործունէութեան, եւ երբ մասնակցում եւ տիրում ենք կուլտուրական հիմնարկութիւններին, ոչ թէ մեր կուլտուրական բարձրութեան շնորհիւ է, այլ հմայքի: Մեր մասնակցութիւնը եւ յաջողութիւնը մեզ դիկտատոր կը դարձնէ, բոլորը կը քաշուեն, կը սկսուեն ինտրիկներ, որոնց հետեւանքով հիմնարկութիւնները կը քայքայուեն: Պիտի ունենալ անհատական-քաղաքացիական մասնակցութիւն առանց կուսակցական նկատումներու: Կաթողիկոսական եւ պատրիարքական ընտրութիւններին ոչ մի մասնակցութիւն. հետեւանքները միշտ բացասական են եղած. դա մի միջավայր է, որն իր ամբողջ հոգեբանութեամբ մեզ հակառակ է:

Գիսալ.— Կրօնի նկատմամբ ապերախտ ենք. մեր ժողովրդի գոյութեան մէջ դեր է ունեցած ան եւ ունի. հէնց մեր յեղափոխական գործի համար եղած է դիւանագիտական վահան: Եկեղեցիէն՝ քաղաքական-կուլտուրական գործերու անջատման ջանքերու հետեւանքը պիտի լինի ազգային բոլոր ինքնավարութիւններէն

գրկուել: Ժամանակը եկած չէ կռիւ յայտարարել կրօնական հիմնարկութիւններին դէմ, պիտի պահպանել բացարձակ չէզոքութիւն: Բացի սրանից, իբր քաղաքացի, իրաւունք չունենք ուրիշներու յարգանքի առարկաները նախատել: Մեր անհատական մասնակցութիւնների մէջ կուսակցութեան առաջ բարոյական պատասխանատուութիւն պիտի զգանք:

Մուրատ.— Այդ գործերին մասնակցելն ու հակառակիլը մեր կուսակցութեան հմայքին վնասել է: Անհատներն ազատ են, բայց գործօն ընկերները իսկապէս չպէտք է մասնակցեն:

Հայկ.— Անհատը ազատ լինի. պատրիարքի կրօնական-քաղական իրաւունքների բաժանման հարցը չյարուցանել: Դաստիարակութեան գործը կուսակցական նկատումներէ զերծ պիտի լինի, մանուկը պիտի դաստիարակել իբր մարդ, գործօն մասնակցողները հաշիւ տան կուսակցութեան:

Ակնունք.— Անմիջական մասնակցութեան բացասական հետեւանքներէն մէկն էլ դէպի կուսակցութիւնը ստեղծուած հակակրօնութիւնն է: Այդ հիմնարկութիւնները կուսակցական լինել չեն կարող, եռանդուն մասնակցութեան իրաւունք չունինք, ամբողջ մտաւորականութիւնը, գոնէ նրա լաւագոյն մասը, մեր մէջ չբովանդակելու տեսակէտից: Մեր յաջողութիւնների մէջ անհատի արժանիքը քիչ դեր է ունեցել: Օգտուել ենք կուսակցութեան ռազմական-քաղաքական հմայքից: Անհատական մասնակցութեան համար էլ սահմաններ պիտի որոշել, թոյլատրելով գործօն մասնակցութիւնը աշխարհական գործերին: Անհատական մասնակցութիւնը անհատական արժանիքներով: Պատասխանատու ընկերները չունենան անմիջական ոչ մի մասնակցութիւն:

Անտոն.— Այս հիմնական խնդիրներին մօտենալիս չպէտք է ենթարկուել առօրեայ դէպքերին ու ժամանակաւոր հոսանքներին: Մասնակցութեան խնդրին պիտի մօտենալ եւ սկզբունքային եւ տակտիկական տեսակէտից: Կղերականութիւն եւ հոգեւորականութիւն տարբեր բաներ են. հոգեւորականութիւնը միջնադարեան Եւրոպայի ամենակուլտուրական տարրն է եղած, ինչպէս նաեւ մեզանում կուլտուրան պահպանողը, մինչեւ 18րդ դարը: Կեղծիքը հոգեւորականութեան սեփականութիւնն է միայն, որ իբր առանձնաշատուկ թերութիւն կը շեշտուի, քիչ կան ընկերվարականներ կեղծիքի մէջ թաղուած: Յետամնաց երկիրներում, մասնաւորապէս Արեւելքում, կրօնը եւ հոգեւորականութիւնը ազգութեանց հիմք են եղած: Թուրքիայում եղած կրօնա-ազգային ինքնավարութիւնը՝ էքս-տէրիտորեալ ինքնավարութիւն է: Այդ հիմնարկութիւնները ոչ միայն պիտի ազգաթող չանել, այլեւ պիտի պաշտպանել: Զուտ քաղաքական ֆունկցիաներ կան խառնուած կրօնականի հետ, իսկ դրանք անջատել չենք կարող, քանի պետութիւնը այդ սկզբունքին փարած է: Աշխատանքի

բաժանման սկզբունքով ղեկավարուելով է որ հեռու պիտի լինինք այդ գործերէն, իբր կուսակցութիւն:

Ռոստոմ.— Կուսակցութիւնը մի ծայրայեղութիւնից անցնում է միւսին: Մի ժամանակ ամէն գործերի խառնըւում էինք, այժմ առաջարկներ են լինում ոչ մի գործի չխառնուիլ: Համակերպութիւնը ծայր է տալիս այդ ուղղութեան մէջ, փափկանկատութիւններով ամէն ինչից հրաժարում ենք, հապա ի՞նչ ենք անելու: Մեր կուսակցութիւնը մասսայական է, չենք կարող պահանջ ընել բացարձակ չէզոքութեան, պիտի թողնել անհատների ազատ կամքին առանց սահմանափակումների: Առարկել թէ՛ մտաւորական ցենզ չունենալու համար հէնց չպիտի մասնակցել, անհիմն է, հապա ի՞նչպէս է որ ժողովրդի գոյութեան հետ կապուած քաղաքական բարդ խնդիրներով զբաղուելու ցենզ ունենք: Մի՞թէ վերջինը աւելի երկրորդական նշանակութիւն ունի:

Պեռ.— Սկզբունքային հարց չի կարող լինել կուլտուրական հիմնարկութիւնների նկատմամբ: Հարցը ամբողջապէս այն է թէ՛ իբր քաղաքական կուսակցութիւն՝ որքան շահեկան է մեր մասնակցութիւնը: Խօսուածները չպարզեցին մեր վերաբերմունքը դէպի հոգեւոր պետերը. այստեղ ահա խնդրին պիտի մօտենալ սկզբունքորէն, ոչ տեխնիկական յարմարութիւնների տեսակէտից: Երկու որոշ վերաբերմունք կարող է լինել, դրական կամ բացասական: Կը շեշտուի հոգեւորականների դրականութիւնը կուլտուրայի համար, հապա նրա սխալաստիկան այդ նոյն գործի (մէջ): Ո՞րն է գերակշռողը: Եւ գնահատման հետեւանքը պիտի ցոյց տայ մեզ հոգեւորականութեան բացասականութիւնը: Խօսքը դասակարգի ամբողջութեան եւ ոչ անհատների մասին է, եւ եթէ այդպէս չղեկավարուենք, բուրժուազիան իբր դասակարգ՝ հէնց ներկայումս, ուրեմն, աւելի դրական կողմեր ունի քան բացասական: Իրողութիւնն այն է որ պիտի քայքայել հոգեւորականութեան տիրապետութիւնը, միայն թէ տակտիկով: Ոչ մի մասնակցութիւն նրանց ընտրութիւններին, որովհետեւ նրանց քաղաքական դերը ձեւական է, խողովակ են եւ կեանքը հոսում է անկախ նրանցից. խողովակը գործածել քաղաքական-աշխարհական մարմինների միջոցաւ:

Աւրհանտ.— Եկեղեցու պետութիւնից բաժանելու հարց չի կարող լինել, այլ աշխարհական գործերի անջատման խնդիր կարող է լինել: Հրահանգներ եթէ տրուին, մասնակցութիւնը կը լինի կուսակցական: Ընտրուողը կրնայ հրահանգներ ստանալ իր ընտրութեան նպատակներէն կամ ընտրողներէն:

Ռուբէն.— Թուելով բոլոր կուլտուրային հիմնարկութիւնները, կը նկատէ որ որոշ հիմնարկութիւններ (օր. բարեգործական) բացուած են զանազան դասակարգային բուրժուազիական նպատակներով, որոնց ոչ մի մասնակցութիւն չպիտի ունենալ: Առաջնորդական, կաթողիկոսական եւ պատրիարքական ընտրութիւններ

րին չմասնակցել, նոյնիսկ անհատապէս, իսկ կեղերոնական եւ երեսփոխանական ժողովներին մասնակցել իբր կուսակցութիւն: Երբ մենք այդ կեղերոնական հիմնարկութիւնների դէմ ենք, չի նշանակեր որ թոյլ պիտի տանք որ նրանց իրաւունքները կառավարութիւնը խլէ: Մեր ցանկութիւնն է ժողովրդին դարձնել այդ իրաւունքները:

Նիթրա.— Խնդիրը տաքտիկական է, այդ հիմնարկութիւններից եւ ոչ մէկին սկզբունքային տեսակէտով չպիտի մօտենալ. մենք մեր գործունէութեան մէջ պիտի առաջնորդուենք այդ հիմնարկութիւնների աշխարհականացման սկզբունքով: Մեր ջանքը պիտի լինի կղերականութեան տիրապետութեան տեղ հաստատել ժողովրդապետութիւն. այստեղ պէտք է զգոյշ տակտով գործել, որովհետեւ պետութիւններն են մեր վզին փաթաթել այդ տիրապետութիւնը: Կրօնական պետերի անձնաւորութիւնը նշանակութիւն ունի հէնց այն տեսակէտից, որ նրանք մի խողովակ լինին, որ քաղաքական-աշխարհական մարմինների թելադրութիւններն ընդունեն եւ դառնան դիմակ, ոչ իսկական դերակատար: Զէ՞ որ հակառակորդի ով լինելը մեծ նշանակութիւն ունի: Պատրիարքը՝ նոյնիսկ երեսփոխանական ժողովը ցրելու իրաւունք ունի: Հոգեւորականութիւնը պիտի հաստատի աշխարհականների պաշտօնները, կուլտուրական-քաղաքական հիմնարկութիւնների մէջ: Անհատական մասնակցութիւն պիտի ունենալ եւ ղեկավարուել կուսակցութեան աշխարհահայեացքով: Եթէ իրենց գործողութիւնների համար պատասխանատուութեան պիտի կանչուին գործօն դեր ստանձնողները, բնականաբար հրահանգներ պիտի ստանան:

Պեռ.— Հրահանգ տալը հակասական չէ պաշտօնապէս չմասնակցելուն. չէ՞ որ առանց դրան կը ստեղծուի անիշխանութիւն եւ հէնց մեր ընկերները կրնան իրար հակասել այդ հիմնարկութիւնների մէջ: Գործերէն թեթեւալու հոսանք մէ՛ սկսուած, կամայ ակամայ կ'ամփոփուենք, որի հետեւանքը կը լինի կազմակերպութեան քայքայումը, քանի որ մեր մասսաները կապուած են կուսակցութեան՝ մեր ընդգրկած այս եւ այն գործերու համար: Կ'առարկուի թէ՛ սկզբունքի հակառակ է այդ հիմնարկութիւնների մէջ մտնել կողք կողքի աշխատելով ոչ ընկերվարական տարրերու հետ. հապա օսմանեան խորհրդարանը, մի՞թէ այնտեղի խոճաները աւելի ռամկավարական են: Խնդիրը հիմնարկութիւնների էութիւնն է, ոչ կազմը: Պէտք է մասնակցել: Եկեղեցու բաժանման հարցը դրուած է կուլտուրական գործերէն բաժնելու մտքով: Հոգեւորական պետերու անձը նշանակութիւն ունի. ստիպումներով չէ որ գործ պիտի կատարենք, այլ համոզելով:

Վիճաբանութիւնները վերջ գտնելով, հետեւեալ բանաձեւերը քուէարկուեցին, իրենց բոլոր կէտերը առանձին առանձին:

Ա. բանաձև (Յանձնախմբի).

Նկատելով որ ազգային կուլտուրական հաստատու-
թիւնները (վարժարան, ընթերցարան, լսարան, հրատա-
րակչական, եւ այլն) եւ մեր ազգային ինքնավարութիւ-
նը ներկայացնող հաստատուութիւններ (երեսփոխանա-
կան ժողով, քաղաքական ժողով, թեմական խորհուրդ,
եւ այլն) իրենց կազմութեամբ եւ ոգով թէեւ անհամա-
պատասխան են մեր ծրագրի ռամկավար սկզբունքնե-
րուն, բայց սերտ առնչութիւն ունին մեր ազգային
կուլտուրայի զարգացման եւ մեր քաղաքական կեան-
քին հետ, ստացաւ 8 ձայն թեր եւ 10 դէմ:

Նկատելով որ կաթողիկոս, պատրիարք առաջնորդ
եւ համանման այլ պաշտօնեաներ զուտ եկեղեցական-
կրօնական պարտաւորութիւններէ դուրս ունին նաեւ
Տաճկաստանի եւ Պարսկաստանի մէջ քաղաքական եւ
կուլտուրական իսկ Ռուսաստանի մէջ՝ կուլտուրական
ֆունկցիաներ, եւ հետեւաբար իրենց անձնաւորու-
թիւնը այս հարցերում կարող է նշանակութիւն ունե-
նալ (11 թեր, 11 դէմ):

Նկատելով որ մեր պատասխանատու մարմիններու
կողմէ պաշտօնական եւ ուղղակի մասնակցութիւն մը
այս հարցերուն մէջ կը ներկայացնէ տակտիկական ան-
պատեհութիւններ, քանի որ տակաւին մեր առջեւ ու-
նինք քաղաքական այնպիսի ծանրակշիռ հարցեր, որոնց
պարտաւոր ենք նուիրել մեր ուժերու մեծագոյն բաժի-
նը (13 թեր, 5 դէմ):

Որոշուեցաւ.

Ա.- Կազմակերպական մարմինները պաշտօնապէս
ոչ մէկ մասնակցութիւն չպիտի ունենան այդ հաստա-
տութիւններու գործերուն մէջ (20 թեր),

Բ.- Ամէն մէկ դաշնակցական ընկեր կարող է գոր-
ծօն մասնակցութիւն ունենալ այդ հաստատութիւննե-
րուն մէջ (11 թեր, 8 դէմ),

Գ.- Մասնակցող ընկերները ղեկավարուելով Դաշ-
նակցութեան սկզբունքներով, իրենց գործունէութեան
հրահանգները պիտի ստանան տեղական կազմակեր-
պական մարմիններէն, եւ համարատու պիտի ըլլան ա-
նոնց առջեւ (4 թեր, 18 դէմ),

Դ.- Բոլոր դաշնակցական ընկերները ղեկավարուե-
լով եկեղեցին պետութենէն բաժնելու սկզբունքով՝ պի-
տի ձգտին զատելու վերեւ յիշուած հաստատութիւննե-
րու եւ պաշտօնեաներու կրօնական-եկեղեցական ֆունկ-
ցիաները կուլտուրական-քաղաքական ֆունկցիանե-
րէն, եւ տալ այդ վերջիններուն համազգային բնոյթ (13
թեր, 4 դէմ):

Բ. բանաձև (Ակնունիի).

Քննելով Դաշնակցութեան մասնակցութեան խնդի-
րը ազգային-կուլտուրական հիմնարկութիւնների եւ
գործերի մէջ, եւ նկատի առնելով այս հարցի շուրջը ար-
տայայտուած կարծիքները, Ե-րդ Ընդհ. Ժողովը՝

ա) Նկատելով որ կազմակերպութիւնը ունի իր ծը-
րագրային եւ տակտիկին վերաբերեալ ուղղակի նպա-
տակներ, որոնց պիտի նուիրուած լինի կուսակցութեան
մարմինների մեծագոյն աշխատանքը (14 թեր, 1 դէմ),

բ) Նկատելով որ կրօնական բնոյթ ունեցող հիմնար-
կութիւններն իրենց ոգով չեն համապատասխանում
մեր սկզբունքային տեսակէտներին (4 թեր, 10 դէմ),

գ) Աչքի առաջ ունենալով որ մեր ազգային կուլտու-
րական հիմնարկութիւնները կուսակցական չպիտի լի-
նին, նաեւ այն դժգոհութիւնները, յաճախ թիրիմացու-
թիւնների վրայ հիմնուած, որ առաջ են գալիս հասարա-
կութեան մէջ անհատների մասնակցութիւնը ամբողջ
կուսակցութեան վերագրելով (6 թեր, 8 դէմ),

Որոշեց՝

ա) Յայտարարել, որ կուսակցութիւնը՝ իբր ամբող-
ջական մի մարմին՝ չի մասնակցի ազգային, հասարա-
կական եւ կուլտուրական հիմնարկութիւնների մէջ
(միաձայն անցաւ)

բ) Կուսակցութիւնը իր անդամներին չի արգելում
մասնակցիլ այդ գործերից աշխարհականների մէջ ի-
րենց անձնական պատասխանատուութեամբ, իբր ան-
հատ քաղաքացիներ, առանց որեւէ կերպ օգտուելու
կուսակցութեան հմայքից եւ ազդեցութիւնից (14 թեր),

Մանօթ. Այս տեսակէտի վրայ կանգնելով, Ընդհ.
Ժողովը աւելորդ չի համարում կցել եւ այն՝ որ ազգա-
յին հիմնարկութիւնները պիտի լինեն անկուսակցական
եւ հնարաւորութիւն պիտի տրուի հասարակական բո-
լոր խաւերին մասնակցել:

Գ. բանաձև (Անտոնի).

ա) Ընդունելով խղճի ազատութիւնը քաղաքացիա-
կան անկապտելի իրաւունքներէն եւ ազատութիւննե-
րէն մին եւ նախանձախնդիր այդ ազատութեան պաշտ-
պանութեան ամենալայն մտքով, Ընդհ. Ժողովը որո-
շում է զբաղուել կրօնական հարցերով, պահելով ամէն
մի անհատին իր անհատական ազատութիւնը խղճի վե-
րաբերեալ խնդիրներում (8 թեր, 7 դէմ),

բ) Նկատի ունենալով մեր առաջ դրուած բարդ եւ
ծանր քաղաքական խնդիրները, որ դրուած են Դաշ-
նակցութեան առաջ իբր քաղաքական կուսակցութեան,
միւս կողմից եւ այն հանգամանքը որ կուլտուրական
գործերում մեզմէ ոչ պակաս օգտակար կարող են լինել
եւ ոչ դաշնակցական խաւերը (4 թեր, 5 դէմ),

գ) Գիտակցելով, որ կրօնական նախապաշարմունք-
ները հետեւանք են ժողովրդի տգիտութեան եւ կը թու-
լանան ու կը չքանան լուսաւորութեան տարածումով (8
թեր, 7 դէմ):

Ժողովը փակուեց ժամը 12.30-ին:

Քարտուղար՝ **ՎԱՆԻԿ** Նախագահ՝ **ՌՈՒԲԷՆ**

Նիստ 45. Սեպտ. 7 1909

Կը նախագահէ ընկեր Ռուբէն:

Ընկեր Ճապոնացի կը զեկուցանէ պրոպագանդայի
մասին: Պրոպագանդը պէտք եղած եղանակով չէ տար-
ւած: Մեր բոլոր Ընդհ. Ժողովները այս հարցի վերաբեր-
մամբ ընդհանրապէս շատ որոշումներ տուած են, բայց
ատոնք չեն գործադրուած: Ուստի, այսուհետեւ պէտք
է չափաւոր որոշումներ տալ:

«Դրօշակ»ի մասին նախորդ Ընդհ. Ժողովի մէջ ո-
րոշուած էր երկշաբաթաթերթի վերածել եւ միեւնոյն
ժամանակ հրատարակել նաեւ յաւելուածներ, ինչ որ
կատարուած չէ ուժերու պակասութեան պատճառով:
Հիմա որ Բիւրոն Երկիր փոխադրելու հարց կայ, ի՞նչ
պիտի ըլլայ «Դրօշակ»ը: Յանձնաժողովը կը կարծէ որ
ան պէտք է շարունակէ մնալ Եւրոպա, զանազան պատ-
ճառներով որոնց մէջ նշանակելի են Երկրի անվստահ
դրութիւնը, յետոյ այն հանգամանքը որ «Դրօշակ»ը
երեք հատուածներու օրգանը լինելու կոչուած ըլլալով
կրնայ ըլլալ որ մէկ հատուածին մէջ խմբագրուելով
տարուի միայն անով. եւ վերջապէս արխիւին գոյու-
թիւնը գոր անհրաժեշտ է պահել արտասահման: Յանձ-
նաժողովը կ'առաջարկէ ուրեմն տալ «Դրօշակ»ին եր-
կու խմբագիր եւ մէկ օգնական, կատարելու համար
տեխնիկական եւ հաշուական աշխատանքները: Պիտո-
ճէն ըլլալու է 25 հազար Փրանք, «Դրօշակ»ը դարձնելու
է երկշաբաթաթերթ, եւ միւս կողմէ դադարեցնելու է
գրքոյկներու հրատարակութիւնը քանի որ այդ գործը
արդէն յաջողութեամբ կը կատարէ Պոլսոյ Ազատու-
թեան Մատենադարանը: Յանձնաժողովին առաջարկ ե-
ղած է նաեւ «Դրօշակ»ի հաւաքածոյին կամ անոր լաւա-
գոյն յօդուածներուն բ. տպագրութիւնը ընել, բայց
մենք կը կարծենք որ այդ անկարելի է առ այժմ կազմա-
կերպութեան միջոցներու սղութեան պատճառով: Միւս
կողմէ՝ պէտք է շարունակել պատկերներու հրատարա-
կութիւնները եւ պէտք է լոյս ընծայել մանաւանդ մեր
բոլոր (նահատակ) ինկած ընկերներու մէկ ալպոմը
(յարմարցնելով անոր հրատարակութեան թուականը
Դաշնակցութեան 20ամեակին):

Գալով կիսապաշտօնական թերթերուն, Յանձնաժո-
ղովը կը կարծէ, [որ] պէտք է ջնջել զանոնք, որովհետեւ
անոնք շատ սուղի նստած են կազմակերպութեան.
Թիֆլիսի շարք մը թերթեր, Խարխիս եւ Ռազմիկ, բո-
լորն ալ բացեր տուած են եւ բաւական մեծ քանակու-
թեամբ: Նոյնիսկ «Ազատամարտ»ը որ հազիւ երկու ա-
միս է կը հրատարակուի, ունի արդէն խոշոր դեֆիսիտ:
Բացի այս, մենք չունինք բաւականաչափ մտաւորական
ուժեր այդչափ թերթեր հրատարակելու ցանկալի բո-
վանդակութեամբ: Վերջապէս, մեր կիսապաշտօնական
թերթերու գոյութիւնը պատճառ կ'ըլլայ հակառակու-
թեանց: Ուրեմն, լաւագոյն է հաւաքել բոլոր մտաւորա-

կան ուժերը եւ հրատարակել միակ լաւ թերթ մը: Իսկ
կողմնակի թերթեր պէտք է հրատարակուին ընկերնե-
րու մասնաւոր ջանքերով եւ կազմակերպութեան բա-
րոյական աջակցութեամբ: Յանձնաժողովը դէմ է նա-
եւ Պոլսոյ մէջ որեւէ պաշտօնական թերթ հրատարակե-
լուն, որովհետեւ միջոցներ չունինք:

Իսկ ինչ կը վերաբերի գրքերուն, թէ «Դրօշակ»ի եւ
թէ «Յառաջ»ի (Թիֆլիս) խմբագրութիւնները հրատա-
րակած են բազմաթիւ գրքոյկներ, որոնց շարունակու-
թիւնը կ'ընէ հիմա Ազատութեան մատենադարանը:

Ազատութեան մատենադարանի մասին լայն բա-
ցատրութիւններ կու տայ ընկեր Անտոն, որ եղած է այդ
գործի հիմնադիրներէն մէկը: Այս մատենադարանը
հիմնուած Սահմանադրութենէն յետոյ, նպատակ ունէր
բանախօսութեանց մէջ ըսուածները հրատարակելու
գրքոյկներով, բայց հազիւ մէկ հատ կատարուեցաւ (Ա-
պակեդրոնացումը): Այնուհետեւ, սկսաւ հրատարակել
կամ սպառուած գրքեր կամ բոլորովին նոր աշխատու-
թիւններ: Մինչեւ հիմա հրատարակուած են 10 գիրք եւ
4 ալ մամլոյ տակ կայ: Հրատարակուած գիրքերը պիտի
ըլլան հետեւեալ չորս ուղղութեամբ.— 1) Ազատութեան
վերաբերեալ, 2) Ազգային հարցեր շօշափող, 3) Գիտա-
կան-ընկերական, 4) Գիտական-հակակղերական: Զա-
նացինք լեզուն եւ երբեմն մինչեւ անգամ բովանդակու-
թիւնը յարմարցնել ժողովուրդի հասկացողութեան:
Հատորներու գիները նշանակուած են շատ աժան բայց
դարձեալ եղած ծախսը 1.5 անգամն է անոնց, այնպէս
որ կազմակերպութիւնը յամենայն դէպս վնաս չ'ընէր:
Ծուռով լոյս կը տեսնէ «Աւերուած Հայաստանը» որ
Տարօնի մասին Դ-րդ Ընդհ. Ժողովին ներկայացուած
տեղեկագիրն է, շտկուած: Նոյնպիսի ուսումնասիրու-
թիւն մը պիտի հրատարակենք նաեւ Վասպուրականի
համար ինչպէս նաեւ այս շրջանի կանոնաւոր մէկ քար-
տէզը: Խմբագրութիւնը կը մտածէ հրատարակել նաեւ
մեր ընկերներէն ոմանց յիշատակարանները վէպի ձե-
ւով, երգեր՝ նոթաներով, եւ այլն: Գալով դրամականին,
մինչեւ հիմա ծախսուած է 31,283 դահեկան, եւ ստաց-
ւած է 86,000 դահեկանի գիրք: Թուական բոլոր մանրա-
մասնութիւնները կան մասնաւոր տոմարի մը մէջ, որ
բոլորին տրամադրութեան տակ է: Նշանակելի կէտ մըն
է որ գրքոյկներու սպառումը զգալապէս նուազեցաւ
Մարտ 31էն ասդին. այնուամենայնիւ մենք կը կարծենք
որ պէտք է դարձեալ ուժ տալ անոնց տարածութեան, ո-
րովհետեւ ամէնէն քիչ ծախս պահանջող ձեւն է պրո-
պագանդայի համար եւ ամէնէն նպատակաւորմարը:
Խմբագրութիւնը կը մտածէ հրատարակել նաեւ քանի
մը բրոշուրներ թրքերէն լեզուով եւ մէկ քանի ձեռա-
գիրներ պատրաստ կան արդէն:

Ճապոնացի.— Յանձնաժողովը կը կարծէ որ գրքե-
րու հրատարակութիւնը պէտք է այսուհետեւ կեդրո-
նացնել Պոլիս Ազատութեան Մատենադարանին մէջ եւ

պէտք է հրատարակուին երկու կատեկորիայի գրքեր ա) ինտելիգենցիային, բ) լայն մասսաներուն համար: Pro-Armenia՝ն իր գոյութեան իրաւունքը կորսնցուցած ըլլալով կ'առաջարկենք փակել: Պէտք է սահմանափակել թուղթիկները: Կեդր. Կոմիտէները եւ Բիւրոները պարբերական շրջաբերականներով պէտք է ուղղութիւն տան Մարմիններուն: Պէտք է դադարեցնել մեր պաշտօնական օրգանին աշխատակցողներու վճարը: Ընկերները կրնան աշխատակցել բուրժուազիական այն թերթերուն որոնք հակադաշնակցական չեն: Կ'առաջարկենք նաեւ հրատարակել մանրամասն ուղեցոյցը պրոպագանդայի պէտք է ուժ տալ շրջուն պրոպագանդիստներու եւ կազմակերպուած սիստեմատիկ դասախօսութիւններու:

Կը բացուի վիճաբանութիւն «Դրօշակ»ի տեղափոխութեան վերաբերմամբ:

Ընկերներէն ոմանք կը պնդեն թէ «Դրօշակ»ը պէտք է հրատարակուի երկրին մէջ: Յանձնաժողովը միայն կրճատուաներով է զբաղուած եւ չէ հետաքրքրուած «Դրօշակ»ի ուղղութեամբ եւ բովանդակութեամբ: «Դրօշակ»ը ցարդ չէ շօշափած մեր իրական կեանքը, պատճառը այն է եղած որ նա մեր [կեանքէն] կտրուած մնացած էր: «Դրօշակ»ը պէտք է հրատարակուի կամ երկրի մէջ Պոլիս եւ կամ շատ մօտիկ վայր մը: Այդպիսով միայն ան կարող է զարգանալ իբրեւ արտայայտիչը մեր կեանքին: Կ'ըսեն թէ դրութիւնը անվստահ է եւ կարող է վտանգուիլ, այդ առարկութիւն չէ որովհետեւ ուրիշ շատ մը ընկերներու հետ երկու ընկեր ալ կրնան վտանգուիլ:

Արիւիւր կարելի է պահել Եւրոպա ո՛րեւէ տեղ մը: Բայց գէնքը հոն պէտք է ըլլայ ուր կուր կայ: Այս բոլորէն դուրս, տեխնիկական եւ պիւտճեական անյարմարութիւններ կը ներկայացնէ այլեւս «Դրօշակ»ի արտասահման պահուիլը: Բիւրոն եթէ երկիր պիտի ըլլայ, Եւրոպայի մէջ անջատ խմբագրութիւն մը պահելը նոր ծախսեր ստեղծել ըսել է, եւ միւս կողմէ այդպիսի խմբագրութիւն մը շնորհիւ իր գտնուած վայրի՝ պիտի կոչուի կատարելու բիւրոյական աշխատանքներ: Եթէ երկրին մէջ եկաւ ըսել մը ուր թոյլ չտուին այլեւս հրատարակել «Դրօշակ»ը, կը փոխադրենք դարձեալ արտասահման: Իսկ Պոլսոյ մէջ հրատարակելով, խնայողութիւնը անհամեմատ շատ կ'ըլլայ, որովհետեւ «Ազատամարտ»ի պիւտճէին վրայ աւելցնելով 10 հազար Փլըրանք կարելի է հրատարակել նաեւ «Դրօշակ»ը:

Այն ընկերները որ կը պնդէին «Դրօշակ»ի արտասահման՝ Ժընեւ կամ ուրիշ կարեւոր կեդրոնի մը մէջ մնալը, կ'առարկեն թէ երկու տեսակ թերթ կ'ըլլայ, 1) անոնք որ օրը օրին տեղի ունեցող հարցերով կը զբաղուին եւ 2) անոնք որ սկզբունքային խնդիրներ պարզաբանելու կոչուած են: «Դրօշակ»ը երկրորդ տեսակին կը պատկանի, առաջին աշխատանքը կրնան կատարել երկիր հրատարակուած թերթերը: Սկզբունքային աշխատանքներու համար նիւթ կայ նաեւ Եւրոպայի մէջ: Բոլոր թերթերը լիքն են թուրքիայի դէպքերու մանրամասներով: Խմբագրութիւնը պարտաւոր է գանոնք ուսուցանարիւր եւ վերլուծել: Եւ այդպիսի աշխատանք աւելի արդիւնաւոր կերպով կարելի է կատարել հեռուէն: Միւս կողմէ՝ կան կառավարական խստութիւնները: Անցեալ Ընդհ. Ժողովին առաջարկուած էր «Դրօշակ»ը փոխադրել Կովկաս, բայց չեղաւ այդ եւ հիմա շատ գոհ ենք: Թուրքիոյ ապագան աւելի պայծառ չէ քան Ռուսաստանինը երկու երեք տարի առաջ: Դեռ քանի մը օր հազիւ կայ որ Պոլսոյ մէջ թերթ մը դատապարտուեցաւ 100 ոսկի տուգանքի: Պոլսոյ մամուլ օրէնքը թոյլ չի տար մինչեւ անգամ հակառակ գրել ցարիզմին, անանկ որ Պոլսոյ մէջ «Դրօշակ»ի պարունակութիւնը կը խաթարի: «Դրօշակ»ը հրատարակուելով արտասահման կ'ունենայ խմբագրութիւն մը կապուած երկրի Բիւրոյին հետ:

Յետոյ, նկատի ունենալով եղած առաջարկները՝ նախագահը քուէարկեց հետեւեալ հարցերը:—

1) «Դրօշակ»ը Եւրոպայի մէջ պահել: Կ'որոշուի Եւրոպայի մէջ պահել (18 ձայն ընդդէմ 3ի): Խմբագրական կազմի մասին՝ մեծամասնութեամբ կ'որոշուի խօսիլ Բիւրոներու մասին խօսել յետոյ:

2) Հրատարակել ամիսը մէկ անգամ ուժեղ բովանդակութեամբ, երկու ամիսն անգամ մը, թէ երկշաբաթաբար: Կ'որոշուի ամիսը մէկ անգամ ուժեղ բովանդակութեամբ (20 ձայն ընդդէմ 1ի):

Վիճաբանութիւն կը սկսի կիսապաշտօնական թերթերու նկատմամբ: Այն ընկերները որ դէմ են կիսապաշտօնականներու գոյութեան, կը պատճառաբանեն թէ՛ այդ թերթերը չեն կրնար պահպանել ուղղութիւնը: Թիֆլիս՝ ուր հաւաքուած էին ատեն մը մեր լաւագոյն ուժերը «Յառաջ»ի շուրջը, դարձեալ չկարողացան պահպանել կուսակցական ուղղութիւնը, այնպէս որ մէկ կողմէն այդ թերթերը չեն կրնար եւ չեն ըլլար իսկական արտայայտիչները կուսակցութեան գաղափարներուն, եւ միւս կողմէն՝ հասարակութեան աչքին կը ներկայանան իբրեւ այդպէս: Արդիւնքը՝ փոխանակ օգուտի վրէնս է: Բացի այդ, այս կիսապաշտօնական թերթերը շատ սուղի նստած են կազմակերպութեան գլխին, ինչպէս այդ կ'երեւի կատարուած գեկուցումէն: Կիսապաշտօնական թերթերը ջնջելով պէտք է թողնել որ մեր մըտաւորական ընկերները իրենց սեփական ուժերով ընեն այդ բանը: Այդպիսով կազմակերպութիւնը ազատ կը մնայ նաեւ այն հակառակութիւններէն որ կապուած են կիսապաշտօնական թերթերու հրատարակութեան հետ: Այնուամենայնիւ, կարելի է բացառութիւն ընել Ամերիկայի «Հայրենիք»ին համար որ նիւթապէս ապահովուած է արդէն, եւ որ այնտեղի գաղութին համար կը ներկայանայ իբրեւ անհրաժեշտութիւն:

Կիսապաշտօնականներու պահպանման ի նպաստ

խօսողները կ'ըսեն թէ՛ այսօր Թուրքիոյ մէջ երկու գործ ունինք մենք՝ 1) մտածել մեր ներքին մարտական-ինքնապաշտպանական գործի ուժեղացման եւ 2) սահմանադրութեան պաշտպանութեան մասին: Եւ այդ տեսակէտով կոչուած է մեծ դեր կատարելու կիսապաշտօնականը: Առօրեայ կեանքի մէջ կուսակցութիւնը պէտք է ունենայ իր դերը եւ այդ դերին մէջ էն գործող ազդակը մամուլն է: Պաշտօնական օրգանը զբաղուած ծանր նիւթերով չի կրնար պայքար մղել, այդ պարտաւոր են կատարել կիսապաշտօնականները: Շատ լաւ կ'ըլլար որ ամէն տեղ ունենայինք կիսապաշտօնականներ, բայց քանի որ ոչ նիւթապէս եւ ոչ ալ մտաւորապէս մեր ուժերը չեն բաւեր այդ բանին, առ այժմ պէտք է բաւականանալ կեդրոններու մէջ կիսապաշտօնականներ հաստատելով, Պոլիս, Թիֆլիս եւ Դաւրէժ: Ստիպողական է այդ տեղերը մէկ մէկ թերթ ունենալ: Լաւ կ'ըլլար նոյնիսկ Պոլսոյ մէջ ունենալ թրքերէն թերթ մը որպէսզի մեր գաղափարները մատչելի ըլլային նաեւ թուրք մասսային:

Ժամանակը ուշ ըլլալով, ժողովը կը փակուի:

Քարտուղար՝ ՊԵՐՃ	Նախագահ՝ ՌՈՒԲԷՆ
---------------------------	---------------------------

Նիստ 46-րդ. 8 Սեպտ. 1909

Նիստը բացուում է առաւօտեան ժամը 8.20ին. ներկայ են 24 ընկերներ. նախագահում է ընկեր Անտոն:

Օրակարգի հարցն է նախորդ նիստի շարունակութիւնը պրոպագանդի հարցի վերաբերմամբ:

Զեկուցանող ընկեր Ակնունի պատասխանում է Pro-Armenia-ի հրատարակութեան վերաբերմամբ նախորդ նիստում եղած հարցումին, յայտնելով որ Պրօ-Արմենիան դադարել է Պատ. Մարմնի, Արեւմտ. Բիւրոյի եւ Բիյեռ Քիյառի համաձայնութեամբ: Քիյառի համար թէեւ մի քիչ դժուար էր հրաժարուել 10 տարուայ գործից, բայց համաձայնուեց երբ մանաւանդ Պոլսում միտք կար Ֆրանսերէն մի թերթ հրատարակելու: Նա հրաւիրուել էր թէ հրատարակուելիք թերթի եւ թէ մի քանի այլ խնդիրներու մասին խորհրդակցելու: Այս ժամանակն էր որ դադարեց Պրօ-Արմենիան, առանց պարտք թողնելու: Ինչ վերաբերում է Ազատամարտին, ընկերը գտնում է որ կազմակերպութեան կողմից բաց թողնուելիք դեֆիցիտը շատ չէ, համեմատած նրա ծաւալին մասնաւանդ որ ներկայումս գրաւոր պրոպագանդայի անհրաժեշտութիւնն է նկատուում, մասնաւորապէս Թուրքիայում հայ իրականութեան մէջ: ՅՕ7 թ. Ընդհանուր Ժողովը արդէն որոշած է գրաւոր պրոպագանդային լայն տեղ տալ. Կովկասը համեմատաբար

աւելի լայն չափով օգտուեց գրաւոր պրոպագանդայից: Թուրքահայ կեանքը չի կարող յետ մնալ այս խնդրում, երբ նկատի առնենք մանաւանդ այն ցած ընկած մակարդակը որի վրայ գտնուում է թուրքահայ մամուլը ընդհանրապէս: Մաքուր, անկաշառ մամուլը թուրքահայ իրականութեան համար խոշոր անհրաժեշտութիւն է նաեւ կուսակցական շահերի տեսակէտից: Օրինակ գերմանական Ս. Դ. իր պրոպագանդի համար ունի 73 թերթ, որոնք նոյն կուսակցութեան միջոցներով են հրատարակուում եւ որի բիւտճէն համարեա թէ հաւասար է մեր կուսակցութեան անցեալ տարուայ բիւտճէին: Այս բոլորից գատ պէտք է իմանալ որ Ազատամարտը չպէտք է [լինի] օրուան պոլիմիկայի թերթ, այլ պէտք է լինի կուսակցական թերթ, իր բոլոր բարձրութեամբ եւ որպէս այսպիսին մենք ի նկատի ենք ունեցել որ մարմինները ամէն տեղ ցոյց կը տան բարեխիղճ վերաբերմունք թերթի տարածման գործում, որով դեֆիցիտի երկիւղ չէր լինի: Թերթի բաժանորդագրութիւնը պէտք է բարձրանայ մինչեւ 12.000-ի, հակառակ դէպքում դեֆիցիտը միշտ կ'ունենայ: Սկզբում «Ազատամարտ»ը տպուում էր 7000 օրինակ, վերջերս սակայն իջաւ 6000-ի, որը ամբողջութեամբ էլ չի սպառուում. մեր մարմիններին է մնում թերթի տարածման գործը այնպէս կարգաւորել, որ նա ծածկի իւր դեֆիցիտը: Ինչ վերաբերում է գաւառական կիսապաշտօնական թերթերին, ընկերը գտնում է որ նրանք էլ կարող են դեր ունենալ որպէս պրոպագանդի գլխաւոր միջոց:

Գլխաւ.— Պոլսոյ մամուլի կողմից «Ազատամարտ»ի դէմ սկսուած յարձակումների առթիւ եղած խօսքերին, յայտնում է որ նրանք բոլորն էլ ժամանակաւոր երեւոյթներ են, որոնք իսկոյն յետ կը քաշուին մեր ցոյց տուած տոկոսներին: Անդրադառնալով Ազատամարտի հրատարակման գտնում է որ Պոլսում անհրաժեշտ է նրա գոյութիւնը եւ պէտք է շարունակել:

Զուլալ.— Գտնում է որ կիսապաշտօնական թերթերի գոյութիւնը անհրաժեշտ է, որոնք սակայն խիստ կերպով ենթակայ պիտի լինին մարմինների կոնտրոլին: Դրամական օժանդակութեան վերաբերմամբ կազմակերպութեան կողմից համաձայն չէ եւ առաջարկում է թերթերի նիւթականը դնել ակցիոներական հողի վրայ: Բացի այս՝ բոլոր մարմիններին պիտի պարտաւորացնել տարածման վրայ լուրջ ուշադրութիւն դարձնել: Երբ անհատական ուժով հրատարակուող թերթերը կարող են իրանց գոյութիւնը պահել առանց դեֆիցիտի, անկարելի է որ կազմակերպական մի թերթ դեֆիցիտ ունենայ երբ մարմինները բարեխղճութեամբ վերաբերուեն թերթերի տարածման:

Վանի ներկայացուցիչը համաձայն է որ պաշտօնական օրգաններին կազմակերպութիւնը աջակցի իւր բոլոր միջոցներով: Կիսապաշտօնական թերթերի գոյութիւնը անհրաժեշտ նկատելով հանդերձ ընկերը դէմ է

այնուամենայնիւ նիւթական աջակցութեան կուսակցական կասսայից: Կիսապաշտօնական թերթերին տուելիք աջակցութիւնը կը լինի միայն բարոյական, մարմինների կողմից նրանց տարածումը ապահովելով:

Ճապոնացի.— Յանձնաժողովի կողմից խօսելով բերում է նաեւ թուեր կիսապաշտօնական թերթերի եւ մասնաւորապէս «Ազատամարտ»ի տարածման, նրանց առաջ բերած խոշոր դեֆիցիտի վրայ, եզրակացնելով որ կազմակերպութիւնը տնտեսապէս չի կարող տանել նրանց գոյութիւնը:

Առւելն.— «Դրօշակ»ը ճիշտ է որ իրա բովանդակութեամբ չի կարող բաւականութիւն տալ մեր պահանջին, բայց կիսապաշտօնական լեզու թերթերն էլ ենթակայ լինելով զանազան ազդեցութիւնների, է՛լ աւելի հեռի են մեր պահանջին բաւարարելուց. այս պատճառաւ էլ կազմակերպութիւնը չի կարող նիւթական աջակցութիւն ցոյց տալ նրանց: Կիսապաշտօնական թերթերի հրատարակութեան ամենանպատակաւոր մար ձեւն է՝ ընկերների նիւթական-բարոյական աջակցութեամբ հրատարակելը, ի հարկէ ընկերների իրանց անհատական միջոցներով. նոյնը նաեւ «Ազատամարտ»ի եւ «Հորիզոն»ի վերաբերմամբ:

Վիճաբանութիւններից յետոյ հարցը բաւականաչափ պարզուած նկատելով առաջարկուում է փակել հարցը. քննարկուում են հետեւեալ կէտերը.—

- ա) Օգտակա՞ր են կիսապաշտօնական թերթերը.— կողմնակից՝ 19 ձայն
 - բ) Ցանկալի՞ է նպաստել կիսապաշտօն. թերթերին.— կողմնակից՝ 13 ձայն
 - գ) Օգտակա՞ր է համարուում կիսապաշտօնական թերթերի հրատարակումը
- Պոլիս եւ Թիֆլիս.— կողմնակից.— 14 ձայն
- դ) Նպաստել նրանց.— > 9 ձայն
 - ե) Չնպաստել նրանց.— > 12 ձայն

(Դադար 10 րոպէ) Դադարից վերջ առաջարկուում են բանաձեւեր:

Առատում.— Նախքան բանաձեւը կարդալը յայտնում է որ սկզբում բոլոր մարմինները համաձայնուել են Պոլսում թերթ ունենալ, ուրիշ խնդիր է թէ Պատասխանարմինը կամ թերթի դեկավարները լաւ չեն տարել գործը. սրա դէմ պէտք է բողոքել, բայց այս բողոքները դեռ իրաւունք չեն տալիս մեզ հրաժարուել թերթից. սրանից յետոյ ընկերը կարողում է իր բանաձեւը որ քուէարկուելով՝ յետաձգուում է: (Յետ է մղուում):

«Աչքի առաջ ունենալով որ Պոլսում հրատարակուող կիսապաշտօնական թերթի պահանջը դրուած է ոչ միայն Պոլսի այլեւ Թուրքիայի այլ կեդր. Մարմինների կողմից, Ընդհ. ժողովը եւս գտնելով նրա օգտակարութիւնը՝ պարտականութիւն է դնում Թուրքիայի բոլոր մարմինների վրայ հայթայթել նրա համար անհրաժեշտ

միջոցները: Մանրամասնութիւնների ճշտումը թողնել Արեւմտ. Ռայոնի ժողովին: Ռոստում» (13 կողմնակից ձայն):

Պոլսոյ ներկայացուցիչը «Ազատամարտ»ի համար բաց թողնուելիք գումարի դէմ եղած առարկութիւններին պատասխանելով՝ թուում է նաեւ այն բոլոր ծախսերը, որոնք էապէս լինելով կազմակերպական՝ այնուամենայնիւ ծանրացած են թերթի վրայ, որոնք ծանրացած պիտի լինէին էլի կազմակերպութեան վրայ եթէ թերթը գոյութիւն չունենար. հետեւապէս պէտք է նկատի ունենալ որ թերթը եթէ մնար որպէս թերթ իւր ծախսերով, զգալի տարբերութիւն կը լինէր իր ծախսերի մէջ. ինչ վերաբերում է բարոյական կողմին, եթէ «Ազատամարտ»ը այս օրերում փակուի, բարոյական անկում է Դաշնակցութեան՝ թրքահայ ժողովրդի աչքում: Բողոքելով աւելորդ ծախսերի եւ այլ անկանոնութիւնների դէմ այնուամենայնիւ թերթը պիտի պահել:

Ոսկանապատի ներկայացուցիչը գտնում է որ միմիայն նիւթական հաշիւներով անարդար է թերթերը դադարեցնել, որովհետեւ որպէս պրոպագանդի միջոց նրանք կազմակերպութեան բիւջէից խլում են շատ չնչին գումարներ: Բացի այս՝ մանաւանդ ներկայ պայմաններում անհրաժեշտ է թերթերի գոյութիւնը հէնց Դաշնակցութեան շահերի տեսակէտից, որովհետեւ շատ դէպքերում նրանք են ցոյց տալիս Դաշնակցութեան գոյութիւնը մասսայի մէջ:

Ակնուէր.— Թիւրիմացութիւն է համարում Պատասխ. մարմին դէմ արուած զրպարտութիւնը, իբր թէ թերթի հրատարակումով նա արած լինէր անտակտ քայլ: Թիւրիմացութիւն է, որովհետեւ թերթը հրատարակուել է Պատ. Մ.-նի ընկերների մեծագոյն մասի եւ մանաւանդ երկրի մարմինների ընդհ. պահանջով: Կանխատեսուած 30.000 Փր. դեֆիցիտը չի ծախսուել միմիայն թերթի վրայ, ինչպէս որ ցարդ եղել են ծախսեր որոնք չեն վերաբերուելիս եղել թերթին, նոյնը լինելու է այսուհետեւ, որոնց վրայ Պոլսի ընկերը ամբողջութեամբ դեռ կանգ չառաւ. եթէ թերթին չպատկանող զանազան ծախսերը բաժանենք մօտ 15.000-ը դուրս կը գայ միմիայն այդ կարգի ծախսերը: Ընդհ. ժողովը այսքան մանր խճճանքներով չպիտի զբաղուի, այլ ընդհակառակը, պիտի աշխատի ոգեւորել նրանց եւ շարունակել թերթի գոյութիւնը որ յաջորդ տարին գուցէ դեֆիցիտ չունենայ:

Ամբերկայի ընկերը (Չալալ).— Բողոքում է ընդհանրապէս թերթերի համար բաց թողնուած գումարների համար: Նա գտնում է որ հէնց կազմակերպութեան պրեստիժի բարձրացման տեսակէտից անհրաժեշտ է գլխաւոր ուշադրութիւն դարձնել զինման եւ ինքնապաշտպանութեան վրայ: Վտանգի ընկնում թերթերում գրուածները չեն որ պիտի բարձրացնեն կազմակերպութեան վարկը այլ գէնքերը: Ընկերը դէմ է թերթերին նպաստելուն կազմակերպական միջոցներից:

թերին նպաստելուն կազմակերպական միջոցներից:

Արագիւ.— Բողոքում է հարցի կրկնաքուէարկութեան դէմ, նկատելով որ միանգամ կատարուած քուէարկութիւնը ցոյց տուեց որ ոչ մի առաջարկ չանցաւ. բողոքում է նաեւ այն արտայայտութեան դէմ, որ ուսուցիչ բարձր մարմին քան թէ Ընդհ. ժողովը: Դ-ն մէջ Ընդհ. ժողովից բարձր մարմին գոյութիւն չունի:

Յանձնաժողովի կողմից Եաբոնացին էլի մատնանը չում է թուեր, որոնք ցոյց են տալիս թէ թերթերը որքան մեծ չափով են ծանրանալու կազմակերպութեան վրայ, չհաշուած եւ այն ծախսերը, որոնք ծախսուում են ընկերների եւ կամ այլ գործերի վրայ:

Անտոն.— Պատասխանելով Ակնուէրու այն առարկութեան թէ գերմանական Սոց. Դեմ.-երը 73 թերթ ունեն, բերում է թուեր գերման ազգաբնակչութեան եւ նրանց մէջ հրատարակուած ընդհ. թերթերից եւ եզրակացնում որ Ս. Դ.-երի հրատարակած թերթերը նրանց հետ համեմատած՝ 1/10-ը հագիւ են կազմում. այն ինչ մեր հրատարակելիք եւ հրատարակած թերթերը համարեա թէ կէս առ կէս են լինում ընդհ. հայ թերթերի հետ համեմատած, որը՝ չափազանցութիւն է: Որպէս եզրակացութիւն՝ ընկերը գտնում է [որ] կիսապաշտօնական թերթերին կուսակցութեան կողմից չպէտք է նպաստել, այլ նրանք պէտք է հրատարակուեն ընկերների մասնակի օժանդակութեամբ:

Դուման.— Պատասխանելով այն առարկութեան թէ թերթերի փակումը առաջ կը բերի կուսակց. պրեստիժի անկում, գտնում է միանգամայն աւելորդ. մի անգամ սկսած սխալ գործի շարունակութիւնը աւելի վատ է, այն տեսակէտից քան թէ շարունակելը: Բացի այս՝ ընկերը սխալ է գտնում նաեւ այն առարկութիւնը թէ կազմակերպութիւնը շատ փոքր տոկոս է յատկացրել պրոպագանդի գործին. ընդհակառակը, մասնաւորապէս IV Ընդհ. ժողովից յետոյ կազմակերպութիւնը մի տեսակ հրատարակչական ընկերութիւն էր դարձել. իր ասածներին որպէս ապացոյց ընկերը կարողում է պրոպագանդի վերաբերմամբ IV Ընդհ. ժող.-ի կայացրած որոշումը եւ խօսում նաեւ ներկայումս հրատարակուող թերթերի ու հրատարակչ. մարմինների մասին: Ընկերով եզրակացութիւնն է այն՝ որ կիսապաշտօնական թերթերին չպէտք է նպաստել:

Գիսակ.— Դէմ է կիսապաշտօնական բայց երկրորդական բնոյթ կրող թերթերի բազմութեան: «Ազատամարտ»ի համար նախատեսուած 30.000-ը համարում է բաւական որից դուրս ոչ մի նիւթական աջակցութիւն չպէտք է լինի. ընկերները հրատարակելու են իրանց պատասխանատուութեամբ: Ինչ վերաբերում է ընդհ. պրոպագանդին, ընկերը առաջարկում է այս նպատակաւ բիւջէի որոշել, որից իւրաքանչիւր մի մարմին կ'օգտուի այնպէս՝ ինչպէս նա կը ցանկայ:

Ամբերկայի ներկայացուցիչը (Աստիկ).— Թերթերի գոյութիւնը գտնում է անհրաժեշտ, աւելցնելով որ պէտք է կանոնաւորել նրանց տարածումը ինչպէս նաեւ սահմանափակել աւելորդ ծախսերը:

Կարնոյ ներկայացուցիչը.— Շեշտելով մտաւոր ու բարոյական այն տիտուր վիճակը որը երեւան կր գայ եթէ կազմակերպական մաքուր ու բարոյական բարձրութեան վրայ կանգնած թերթեր գոյութիւն չունենան, գտնում է կիսապաշտօնական թերթերի գոյութիւնը անհրաժեշտ: Նիւթականի տեսակէտից, հէնց կիսապաշտօնական թերթերի գոյութիւնը աւելի օգտակար է որովհետեւ նրանք տալով հասարակութեան իր շահերի գիտակցութիւնը եւ կանգնեցնելով նրանց բարոյական բարձրութեան վրայ, այսպիսով կր կապեն մասսային յեղափոխութեան հետ, որից արդէն դուրս են գալիս մեր բոլոր նիւթական միջոցները: Ինչ վերաբերում է աւելորդ ծախսերին եւ կամ կիսապաշտօնական թերթերի կուսակցութեան սկզբունքներին հարազատ արտայայտիչը չլինելուն, ընկերը յայտնում է որ պէտք է բողոքել եւ կանոնաւորել նրանց:

Կարդացուում են բանաձեւեր եւ քուէարկուում.—

«Նկատի ունենալով որ նոյնիսկ բռնապետական շրջանում կուսակց. մարմիններ պահանջ զգացել եւ ձգտել են կեանքի առօրեայ պայքարի մէջ արտայայտուելու համար տեղական մամուլ ունենալ.— նկատելով որ քիչ ու շատ սահմանադրական) երկրներում առաւել եւս կուսակցութիւնը անհրաժեշտ պահանջն ունի քաղ., հասարակական, տնտեսական եւ առօրեայ կեանքի երեւոյթներին, դէպքերի, պայքարի մէջ արտայայտուել, իւր ազդեցութիւնը գործ դնել, ուղղութիւն թելադրել — նկատելով որ տակտիկական տեսակէտով առայժմ անպատեհ ու անպատշաճ է տեղ. պաշտօնական օրկաններ ունենալ.— 1) ժողովը որոշում է Տաճկաստանի, Կովկասի, Պարսկաստանի եւ գաղութների գլխ. կեդրոններում առայժմ մի-մի կիսապաշտօնական թերթ ունենալ (10 ձայն +):

2) Որովհետեւ կեդրոնական կիսապաշտօնական թերթերը չեն կարող բաւականութիւն տալ նահանգային տեղական կեանքի պայքարին որ կեանքի զարգացման ընթացքում առաւել եւս զգալի պահանջ է դառնալու, ժողովը որոշում է.—

Որ կեդր. կիսապաշտօնական օրկանների գոյութիւնը ապահովուելուց յետոյ միայն, աստիճանաբար ու ըստ նիւթական եւ մտաւորական ուժերի, հետզհետէ եւ ամէն մինը ապահովելուց յետոյ, նահանգային կեդրոններում եւս մի-մի տեղական կիսապաշտօնական օրկաններ հիմնել, մէկից միւսը անցնելով (7 ձայն +):

— Կիսապաշտօնական օրկանների հրատարակումը ամբողջապէս թողնուում է համապատասխան մարմիններին, որոնք իրաւունք ունին կուսակց. գանձարանից բաց թողնել իբրեւ նպաստ թերթի ամբողջ ծախսի միայն 1/3-ը (1 ձայն +):

— Պոլսի նման մի քաղ. կեդրոնում անհրաժեշտ է ունենալ նաև օտար լեզուով մի օրկան (տաճկերէն): սակայն որովհետեւ առայժմ կուսակցութեան ոյժերից վեր է առանձինն թերթ հրատարակելու հնարաւորութիւնը, ուստի Պոլսի մեր կիսապաշտօնական օրկանը պիտի ունենայ նաև տաճկերէն յաւելուած կարեւոր խնդիրները շուրջը (14 ձայն +):

Պետրոսի բանաձեւը ամբողջութեամբ քուէարկուում է — (12 ձայն +):

Ակնունու բանաձեւը.— 1) «Համաձայն սոյն նիստում տրուած նախորդ որոշման, կիսապաշտօնական թերթի օգտակարութիւնը ժողովը գտնում է անհրաժեշտ, ուստի ունենալ Պոլսում եւ Թիֆլիսում կուսակց. կիսապաշտօնական թերթեր («Ազատամարտ» եւ «Հորիզոն») — (15 ձայն +):

2) Կ. Պոլսի եւ Թիֆլիսի թերթերին կուսակցութիւնը պէտք է դրամական նպաստ տայ որի քանակը չպիտի դուրս գայ Ընդհ. ժողովի որոշած տոկոսից» (11 ձայն +):

3) Յանձնարարել այդ երկու շրջաններ՝ Պոլսի եւ Թիֆլիսի ուսյունական ժողովներին ճշտել երկու վայրերի թերթերի նպաստի քանակը եւ հոգալ այդ մասին» (16 ձայն +):

Գիսակի բանաձեւը.— գրաւոր պրոպագանդի համար որոշուած պիւտճէն երկու ուսյ. ժողովների նկատողութեան յանձնել եւ անոնց թողնել իրենց ուզած ձեւով տանիլ գործը (թերթ, բրոշիւր) առանց դուրս ելնելու իրենց յատկացուած բիւտճէէն (14 ձայն +):

Արզաւի բանաձեւը՝ քուէարկուած (13 ձայն +):

Անտոնի բանաձեւը.— «Անկարող լինելով ընդհ. կուսակցութեան միջոցներից նպաստ տալ Պոլսոյ եւ Թիֆլիսի կիսապաշտօնական թերթերին, նրանց ապահովելու եւ շարունակելու գործը թողնուում է հրատարակող մարմինների ուսյուն. ժողովներին (10 ձայն +):

Շարունակելու պարագայում՝ յանձնարարուում է թերթերի խմբագրութիւններին պաշտօնական գոյն չտալ իրանց գոյութեան եւ կուսակց. պաշտօնական ազդերը պաշտօնական թերթերում տպագրուելուց եւ կամ թուղցիկներով դուրս գալուց, յետոյ միայն տպել թերթերում» (18 ձայն +):

- (Դադար 5 ըոպէով)
- Ռոստոմի բանաձեւը՝
- ամբողջութեամբ քուէարկուում է — կողմնակից 13 ձ.
- Պարոյրի » » » » — 14 ձ.
- Ճապոնացու » » » » — 9 ձ.
- Ռուբէնի » » » » — 8 ձ.

Վերջին քուէարկութեան ներկայ են վճռական 22 ձայներ:

Բանաձեւերի ընթերցումից յետոյ զեկուցում է տրուում գրքերի եւ թուղցիկների հրատարակութեան մասին: Չեկուցանողը յայտնում է որ «Յառաջ»ի, «Դրօշակ»ի եւ այլ հրատարակութիւնները նպատակաւոր-

մար է կեդրոնացնել մի մարմնի մօտ, որը լինելու է Պոլսի «Ազատութեան մատենադարանը»: Թուղցիկների վերաբերմամբ յայտնուում է որ նրանց հրատարակութիւնը պէտք է սահմանափակել հրատարակման իրաւունքը տալով մի միայն Կետր. կոմիտէներին:

Չուլալ դէմ է այս կարծիքին. նա կողմնակից է որ տեղ. կոմիտէները եւս ունենան թուղցիկներ հրատարակելու իրաւունք:

Ռուբէն.— Գտնում է սխալ հրատարակչ. գործի կեդրոնացնելը եւ առաջարկում է Կովկասում եւ Պոլսում առանձին հրատարակել. Պոլսը պիտի վերադարձնի «Յառաջ»ի գումարները այնտեղ նոր գրքեր հրատարակուելու համար: «Հայրենիք»ը կարող է իր հրատարակութիւններին Պոլսում կեդրոնացնել, որովհետեւ թէ յարմարութիւններ եւ թէ առաւելութիւններ կան: Ինչ վերաբերուում է թուղցիկների հրատարակման, տեղ. կոմիտէին իրաւունք պէտք է տալ միմիայն ազդեր հրատարակելու իսկ թուղցիկ՝ բացի Կ. կոմիտէներից ոչ ոք իրաւունք չունենայ բաց թողնել:

Պոլսոյ ներկայացուցիչը գտնում է գրքերի տարածումը անբաւարար եւ առաջարկում է հրատարակելիք գրքերը դարձնել փոքրիկ եւ բովանդակութեամբ դիւրամատչելի ժողովրդի առաջ:


Ամերիկայի ներկայացուցիչը (Աստիկ.) գրքերի եւ թուղցիկների հրատարակութեան վերաբերմամբ համաձայն է Ռուբէնի հետ: Չուլալ դէմ է խօսում: Գրքերի ուրոյն հրատարակութեան համաձայն է:

Վանի ներկայացուցիչը կարդում է շրջանի կարծիքը, որն է՝ թերթերից աւելի ուժ տալ գրքերի հրատարակութեան, ինչպէս նաև թուղցիկներ գրքերի տարածման:

Անտոն գրքերի հրատարակումը գտնում է եւ օգտակար եւ անհրաժեշտ, ի հարկէ ուղղելով այն բոլոր սխալները որոնք կատարուել են փութկոտութեան շնորհիւ կեդրոնացման դէմ խօսելով առաջարկում է որ Կովկասում եւ Թուրքիայում հրատարակուեն առանձին առանձին, միայն թէ նախապէս խորհրդակցելով իրենց շրջանի բիւրոների հետ, նրանց համաձայնութեամբ որոշելով թէ՛ քանակը, թէ՛ տեղի յարմարութիւնը: Բիւտճէի վերաբերմամբ գտնում է որ պէտք է 15% յատկացնել յատկապէս պրոպագանտի համար: Թուղցիկների վերաբերմամբ համաձայն է Ռուբէնի հետ:

Ընկերոջ յայտնած կարծիքից յետոյ գրքերի հրատարակման խնդիրը քուէարկուում է, միաձայն որոշուում է բրոշիւրների հրատարակութիւնը երկու տեղում եւս շարունակելու:

Ժողովը փակուում է:

Քարտուղար՝

ՄԱՐԱԼ

Նիստ 47. Սեպտ. 9 (երեկոյեան)

Ժողովը բացուելիս ներկայ են 21 ընկերներ. նախագահում է ընկեր Ակնունի: Բացակայ են ընկերներ — Յովնան, Դուլման: Կարդացուեց 34, 35, 38 նիստերի արձանագրութիւնները եւ ուղղումներից վերջ վաւերացուեց:

Կարդացուեց նաև ընկերներ Վահաբի եւ Բարսեղեանի մի նամակը որով կ'արտայայտուէին օրինակահարցման հարցի շուրջը ընկելով ժողովին մի քանի ցուցմունքներ:

Ժողովին ներկայացուեց ինքնապաշտպանութեան հարցի շուրջը հետեւեալ բանաձեւը, որուն զանազան մասերը անջատ անջատ քուէարկուելով անցան:

«Գ. Յ. Դ.-ն Ե-րդ Ընդհ. ժողովը մանրամասն քննութեան ենթարկելով ինքնապաշտպանութեան խնդիրը եւ լսելով կուսակց. մարմինների կարծիքները այդ մասին եւ նկատելով՝

ա) Որ հայ ժողովուրդը յեղաշրջման ներկայ անցողական շրջանում ընդհանրապէս չի կարող ապահով նկատուել (միաձայն)

բ) Որ ռեակցիոն տարրերը իրանց նպատակի իրագործման համար շարունակուում են ոչ միայն սահմանադրական տարրերի դէմ գրգռումներ յառաջ բերել, այլեւ թշնամութիւն սերմանել այլակրօն, այլացեղ ժողովուրդների միջեւ, ինչպէս այս ապացուցուեց կովկասեան ընդհարումներով եւ Մարտ 31-ով, Աստանայի աղէտով, եւ հետեւաբար, ինքնապաշտպանութեան պարտականութիւնը ընկնում է ժողովրդական բոլոր խաւերի հետ նաեւ քաղ. բոլոր կուսակցութիւնների վրայ (20 ձայն+, 3 ձայն-) Որոշեց.—

ա) Ինքնապաշտպանութեան գործը, իբրեւ համաժողովրդական գործ դնել ժողովրդական հիմունքների եւ անկուսակցական հողի վրայ (19 ձայն+, 4 ձայն-)

բ) Նախապատրաստական շրջանում Դաշնակցութեան բոլոր անդամները պարտաւոր են մասնակցել ինքնապաշտպանութեանը՝ իբրեւ անհատներ եւ նպաստել նրան կազմակերպելու եւ զինման գործին (20+, 2-, 1 ձեռնպահ):

գ) Վտանգի դէպքում Դաշնակցութիւնը իրապարակ է գալիս իր ամբողջ ուժով, թէ ընդհարման առաջը առնելու եւ թէ ժողովրդի ինքնապաշտպանութիւնը ուժեղացնելու համար (19+, 2-, 2 ձեռնպահ):

Ընդհ. ժողովը գտնելով որ ինքնապաշտպանութիւնը ներկայ պայմաններում սերտ կապուած է բռնապետական երկրներում բուն յեղափոխական քայլերի, իսկ սահմանադրական Թուրքիայում՝ Սահմանադրութեան պաշտպանութեան եւ ռեակցիոնի դէմ ուղղուած կրուի հետ, հրահանգում է այդ գործում եւս կապ հաստատել այլ ցեղերի սահմանադրական տարրերի հետ (18+, 4-, 1 ձեռնպահ):

Յետոյ քուէարկութեան դրուեցաւ ազգ. կուսութեան ձեռնարկութիւնների վերաբերեալ հետեւեալ բանաձեւը քննուած նախընթաց ժողովներում

«Քննելով Դաշնակցութեան մասնակցութեան խնդիրը ազգ-կուլտուրական հիմնարկութիւնների ու գործերի մէջ եւ նկատողութեան առնելով այդ հարցի շուրջը արտայայտուած հայեացքները եւ նկատելով

1) Որ մեր ազգ. կուլտուրական հիմնարկութիւնները թէեւ իրանց ներկայ կազմութեամբ ու ոգով չեն համապատասխանում սեր սկզբունքներին, բայց սերտ առընչութիւն ունին մեր ժողովրդի կուլտուրական կեանքին հետ եւ ամփոփում են իրանց մէջ ազգ.կուլտուրական ինքնուրոյնութեան հիմքերը (16+, 5-):

2) Որ կազմակերպութիւնը իր առաջն լին իր ծրագրին ու տակտիկին վերաբերեալ ուղղակի նպատակներ, որոնց նուիրուած պիտի լինի կուսակց. աշխատանքի եւ ջանքերի մեծագոյն մասը (20+, 1-):

Ընդհ. ժողովը որոշում է.—
ա) Դաշնակցութիւնը իբրեւ կուսակցութիւն չպիտի մասնակցի ազգ. կուլտուրական եւ հասարակական հիմնարկութիւնների մէջ (20+, 1-, 2 ձեռնպահ)

բ) Կուսակցութեան անդամները իբրեւ անհատ-քաղաքացիներ, կարող են մասնակցիլ այդ հիմնարկութիւններին առանց հակասելու կուսակցական սկզբունքներին (22+, 1-)

Հարց է բարձրանում թէ «ազգ. կուլտուրական խնդիրների մէջ կը մտնեն» նաև կաթողիկոսական-պատրիարքական ընտրութեան եւ այլ նման հարցեր թէ ոչ»: Բանաձեւ պատրաստող յանձնաժողովը յայտնեց թէ ինք իր մէջ եւս այդ խնդրոյն վերաբերմամբ եզրակացութեան չգալով այդ հարցին վրայ լուրջութեամբ անցել է, ձգելով կեանքի պայմաններուն եւ մարմինների հայեցողութեան:

Այս խնդրոյն շուրջը երկարօրէն արտայայտուեցան ընկերները թեր ու դէմ. առաջնորդուելով այն սկզբունքէն թէ «կրօնքը» խղճի գործ է եւ կրօնական խնդիրներով չի կրնար զբաղիլ Դաշնակցութեան Ընդհ. ժողովը, միւս կողմից կաթողիկոսական եւ այլ ընտրական հարցերը չկան մեր առաջ մօտ ապագայի մէջ, որոնք շատ են յուզել մեր շարքերին, որոշուեցաւ մնալ յանձնաժողովի տեսակէտին վրայ:

Քարտուղար՝
ՄԻՀՐԱՆ

Նախագահ

Նիստ 48-րդ. Սեպտ. 10

Ժողով բացուում է առաւօտեան ժամի 8.15-ին, ներկայ են 25 ընկերներ 24 ձայնով, նախագահում է ընկեր Ռուբէն:

Կարդացուում է 37-րդ նիստի արձանագրութիւնը եւ վաւերացուելով ժողովը անցնում է օրակարգին:

Ընկեր Դուլմանի ինքնապաշտպանութեան համար կազմած ուղեցոյցի մասին զանազան կարծիքներ փո-

խանակուելուց վերջ ժողովը յանգեց հետեւեալ եզրակացութեան. 1) Որ ընկեր Դուստանի կազմած ուղեցոյցը հրատարակուի իրա անունով. 2) Որ այդ խնդիրը (գրուածքի տեսակը, հրատարակութեան ձեւը, ուղեցոյցում յայտնուած գանազան վիճելի մտքեր) թողնել մի յանձնաժողովի որի անդամներ որոշուեցին ընկերներ Ռոստոմ, Անդրանիկ, Մուրատ, Դուստան եւ Տարօնացի:

Կարդացում է Պարսկաստանում մեր ունենալիք գործունէութեան մասին վերջնական խմբագրութեամբ արդէն ընդունուած բանաձեւը:

Ընկեր Սաշա եւ իրա հետ մի քանի ընկերներ նկատողութիւն են անում գտնելով որ բանաձեւում ասուած այն խօսքը թէ «պիտի մասնակցել ազգ[ային] կուլտուրական հաստատութիւններին» ոչ միայն մութ կերպով արտայայտուած միտք է, այլեւ հակասում է նաեւ նախորդ ժողովում ազգ[ային] կուլտուրական հաստատութիւնների վերաբերմամբ մեր ընդունած բանաձեւին:

Կարդացում է Օսմ. Սահմանադրութեան մասին կազմուած հետեւեալ բանաձեւը որը քննարկում եւ ընդունում է:

Օսմ. Սահմանադրութիւն

«Յանդուած որ Սահմ. ռեժիմը սկիզբն է դնում Օսմ. երկրի վերածնութեան, իրաւագուրկ ազգերի եւ կեղեքուած դասերի բարելաւման, ինչպէս նաեւ հանդիսանում է իբրեւ մի խոշոր ազգակ իրաւակարգի յաղթանակի հարեւան երկրներում (Ռուսաստան եւ Պարսկաստան) (միաձայն):

«Նկատելով միաժամանակ որ աւատական իշխանութեան մնացորդները եւ սրանց հետ միասին մարտնչող ռեժիմի բարիքները վայելած խաւերը սահմ. իրաւակարգը սպառնալիք նկատելով իրենց գոյութեանը՝ յարմար առիթների պիտի սպասեն ռեակցիոնը բարձրացնելու համար (միաձայն):

«Որ մեր հարեւան մահմետական ժողովրդական մասսաները թիր պերպով են ըմբռնում Սահմ. կարգերի էական նշանակութիւնը եւ համարելով այդ իբրեւ լոկ մի առանձնաշնորհում տրուած քրիստոնեացեալներին, անհաշտ աչքով են նայում տեղի ունեցած փոփոխութեան վրայ, եւ որ Սահմ. ռեժիմի ապաւեճը ներկայումս զինուորականութեան եւ մտաւորականութեան մի մասն է միայն (20+, 1-):

Որ սահմանադրութեան հռչակման գործի մէջ որոշ դեր է խաղացել ներքին հասունացած պահանջի հետ միասին նաեւ արտաքին վտանգի սպառնալիքը (17+, 4-):

Յետեւաբար Սահմ. ռեժիմի օգտակարութեան գիտակցութիւնը բաւարար չափով հիմք չի գտել դեռեւս կեանքի մէջ (19+, 1-):

Ընդի. ժողովը որոշում է

1) Պաշտպանել Օսմ. Սահմ[անադրութիւն]ը բոլոր հնարաւոր միջոցներով, բացատրելով ու լայնացնել ջանալով նրա բովանդակութիւնը իրաւակարգի, ժողովըր-

դապետութեան եւ ազգերի հաւասարութեան տեսակետներից (20+, 1-)

2) Կեդրոնացած պահելով ամբողջ ուշադրութիւնը այդ իրամայական պահանջի վրայ, կոչ անել մեզ հետ կապ ունեցող բոլոր ուրիշ տարրերին խոյս տալ այն բոլոր քայլերից, որոնք կարող են առիթ ծառայել ներքին ազգային, ինչպէս նաեւ արտաքին միջազգային բարդութիւնների (20+, 1-)

3) Յատուկ ուշադրութիւն դարձնել այն ընդի. բնոյթ ունեցող գործնական ձեռնարկների ու պահանջների վրայ, որոնցով հնարաւոր կը լինի մի կողմից ցոյց տալ Օսմ. ժողովրդներին սահմ[անադրութեան] առաւելութիւնները եւ միւս կողմից սերտ կապ հաստատել տարբեր ցեղերի աշխատաւորների միջեւ, ընդգծելով նրանց շահերի նոյնութիւնը» (20+, 1 ձեռնպահ):

Ժողովը անցնում է Օսմ. պարլամենտում մեր բռնելիք դիրքի վերաբերեալ ընկեր Անտոնի կազմած բանաձեւի քննութեան:

Ընկերները համարում են այդ բանաձեւում արտայայտուած ոգին շատ կոնկրէտ, որը վերաբերում է միայն հայութեան մի հատուածին. չի կարելի այդպիսի մի բանաձեւով խօսել երեք պետութիւնների պարլամենտների մասին. իւրաքանչիւր երկրում կեանքը տարբեր է եւ ենթակայ օրէց օր փոփոխման. Ընդհ. ժողովում այդ ուղղութիւնների մանրամասները դնել չի կարելի. ժողովը պէտք է տայ միայն ընդհ. սկզբունքը, մնացածը թողնելով իւրաքանչիւր երկրի մարմիններին, որոնք իրանց դիրքերից երկրի կողմէն իրանց ընտրած ուղղած պատգամաւորներին իրանց երկրի սեփ[ական] պարլամենտում:

Անտոն.— Այդ բանաձեւում շեշտուել է հաւաքական գործակցութեան մասին. դրան պիտի ձգտել. շեշտուել է աշխատաւորական տեսակէտի պաշտպանութեան մասին. օրէնքների նախաձեռնութեան մասին մեր պատգամաւորները չեն արել եւ ոչ մի բան. դրա համար էլ շեշտուել է բանաձեւում որ մեր պատգամաւորները այդ ուղղութեամբ անեն ձեռնարկներ. դրանով՝ մենք բարձրացնում ենք մեր կուսակցութեան պրեստիժը մեր պատգամաւորները պարլամենտում պիտի աշխատեն խոյս տալու ազգ. եւ միջազգային հարցերի խճճումից: Մեր ընկերները մինիստրական կաբինէտում չպիտի պաշտօն ստանան. որպէս յեղափոխականներ ցանկանում [ենք] տիրող անարդար կարգերը յեղաշրջել: Էլ ինչպէ՞ս կարելի է գնալ եւ մտնել տիրող տարրերի շարքերում եւ գործել՝ համաձայն նրանց ոգւոյն:

Ժողովը նախագահի առաջարկութեամբ ընդունում է հետեւեալ բանաձեւը. «Ընդհ. ժողովը պէտք է պարլամենտներում մեր բռնելիք դիրքի համար ընդհ. սկզբունքները միայն գծի, մասնակի հարցերը թողնելով իւրաքանչիւր երկրի ընկերներին»:

Ժողովը քննութեան է առնում կաբինէտում մեր ընկերների մասնակցութեան հարցը:

Հարցին ի նպաստ արտայայտուող ընկերները գտնում են. քանի որ Սահմ-ը պաշտպանելու հարց ունինք, քանի որ բացարձակ օպպոզիցիա չենք կազմում, մենք պէտք է մտնենք կաբինէտում, նպատակ ունենալով միմիայն սահմանադրութիւնը պահպանելն ու պահպանելը. սահմ.-կան կառավարութեան գործակցիլ մեր պարտականութիւնն է. երիտ. թուրքերը իրանք են որ մեզանից խնդրում են խելացի մարդիկ գործի անցկացնելու համար:

Կառավարութեան գործերին մէջ մասնակցելու հարցը զրաւել է ընկերվարական բոլոր կուսակցութիւնների ուշադրութիւնը, բայց դա չի լուծուած նոյնիսկ սոց[իալիստական] միջազգ. կոնգրէսներում. հարցը շատ խորն է. ընկ. Անտոնը առաջնորդուած է իրա բանաձեւը պաշտպանելիս միմիայն հասարակական մտրալով, զուտ բարոյական սկզբունքով. եւրոպացի սոցիալիստներից կան որ կարծում են պիտի գրաւել կառավարական բոլոր պաշտօնները, եւ պիտի մտցնել այնտեղ սոց[իալիստական] տեսակէտը: Միայն կը լինի օպպոզիցիա կազմել. երբ մենք միաբանում ենք երիտ. թուրք բուրժուական տարրի հետ տակտիկական տեսակէտով, էլ ինչո՞ւ չմտնել կառավարական պաշտօններում էլ: Դ-նը ռեվոլուցիան թողել՝ ու անցել է ռեֆորմիստական շրջան: Դուրսը մնալով՝ ոչինչ էլ չի լինի. պիտի գործի մէջ մտնել. եթէ կաբինէտի մէջ մտած լինէր մի դ[աշնակցական], նա գաւառներին կարող կը լինէր շատ օգուտներ տալ: Եթէ երիտ. թուրքերը ուժ չունին Սահմ-նը պաշտպանելու, պիտի ուժ տալ, պիտի օգնել: Եւրոպական մինիստրութիւնների մէջ մտնում են բուրժուական տարրերը եւ բնական է որ սոցիալիստները կռուեն՝ եւ ընդհարուեն այդ տիրող ուժերի դէմ: Բայց այլ բան է Տաճկաստանում: Թուրքիոյ կառավարութիւնն է հէնց ինքը օպպոզիցիա, հանդէպ՝ բռնապետութեան կողմնակից տարրերի: Թուրքիայում կառավարութեան մէջ մտնել են երկրի բոլոր մաքուր տարրերը. մենք միանում ենք իթ[իստ]ի հետ Սահմ.-նը պաշտպանելու համար. ախր չէ՞ որ կառավարութեան էլ ցանկութիւնն է այդ միեւնոյն Սահմ-եան պաշտպանութիւնը: Գուցէ վաղը հէնց կարող է պատահել Սահմ[անադրութեան] գոյութեան հանդէպ վտանգ, մի նոր «Մարտ 31»: Կառավարութիւնը ստիպուած պիտի լինի այդ վտանգի դէմ ուժ կազմել, ինչպէ՞ս մերժել եւ ասել թէ չենք կարող գործակցել ձեզ:

Առաջարկ է լինում որ ընկերները պատշաճ մարմինների համաձայնութիւնով կարող լինեն մտնել կաբինէտի մէջ, բայց դուրս գալով Դ[աշնակցութիւն]ից. իսկ պատգամաւորների ստացած ռոճիկի աւելորդ մասի հարցը՝ թողնել հէնց պատգամաւորների խղճին ու հայեցողութեան:

Ընկերներից ոմանք էլ առաջարկում են այս անցողական շրջանում մտնել դահլիճի մէջ եւ կամ ընտրել

այն ճիւղերը, որոնք շինարար աշխատանքների հետ կապ ունեն եւ ոչ թէ ոստիկանութեան հետ:

Ընկերներից ոմանք խօսում են հակառակ, հետեւեալ պատճառաբանութեամբ: Ճիշտ է որ սոցիալիստներ ցանկանում են գրաւել կառավարութեան դեկը, բայց քանի որ նրանք ուժ չունին ամբողջովին այդ իրագործելու պէտք է մնան հեռի կառավարական մեխանիզմին մասնակցելուց. անհատապէս մասնակցելը մեզ տալիս է աւելի վնասներ, որոնց գլխաւորը այն է որ չփոթ է ստեղծում կուսակցութեան շարքերում սկզբունքի եւ տակտիկայի հողի վրայ. ես գտնում եմ որ մեր ընկերները հեռի մնալով կառավարական ֆունկցիաները գրաւելու մասնակի ձեռնարկներից ու ձգտումներից շատ աւելի լաւ կարող են ծառայել կուսակցութեան ընդհ. նպատակներին:

Կառավարութիւնները բուրժուական են եւ միշտ կողմնակից պահպանելու ներկայ կարգերին: Ֆրանս. կառավարութեան կաբինէտում ուր մասնակցում են եւ սոցիալիստներ, հէնց այդ կառավարութիւնը ուղարկեց զինուորներ բանուորներին կոտորելու համար, եւ արդէն եւրոպ. սոցիալիստները սկսել են հեռանալ ռեֆորմիստականութիւնից. օրինակ՝ Ֆրանսայում — սենտիկալիստները: Գերմանիայում՝ անարխիստ-սոցիալիստները եւայն: Քանի կառավարութիւնը կազմուած է տիրող դասակարգերէ, նա պիտի ունենայ իրա ուրոյն շահը, միշտ հակառակ աշխատաւորութեան շահերին: Մենք պիտի չմասնակցենք կառավարական պաշտօններում: Այս խնդրում մանաւանդ ոչ միայն օպպոզիցիա կազմելու տեսակէտն է մեզ հետաքրքրում, այլ մենք՝ մտնելով կառավարական գործերում ստիպուած պիտի լինենք պաշտպանելու կառավարութեանը եւ նրա տեսակէտները, մինչդեռ Դ-նը պէտք էր առաջնորդուէր իրա կուսակցական աշխարհահայեացքով: Առաջարկուում է, կառավարական գործերում մտնող ընկերը պէտք է դադարի դ[աշնակցական] գործօն անդամ լինելուց:

Թուրքիոյ հասարակական-սոցիալական կեանքը բնաւ պիտի չհամեմատել եւրոպ. կեանքի հետ. այնտեղ այլ պայմաններ են տիրում. Եւրոպայի սոց. կեանքը թոյլ է տալիս սոցիալիստներից ոմանց մտնելու կառավարութեանը եւ դա՛ գուցէ իրաւացի էլ է. Տաճկաստանի կառավարութիւնը չէ կանգնած մարդկային նոյնիսկ ամենատարրական արդարացի հիմքերի վրայ. երբ այդպէս է բանը, մենք ուրեմն ամբողջ հոգւով պէտք է դէմ լինենք այդ կառավարութեան, ու նրա գործելակերպին ու հայեցողութեան եւ կամ մասնակցելով՝ այդպիսի կառավարութեան ֆունկցիաներին պէտք է նախ Դ-նը հրաժարի իր հիմնական պահանջներից ու սկզբունքներից: Գիտենք որ թուրք կառավարութիւնը դէմ է փոքր ազգերի գոյութեան հարցին. դէմ է՝ ժողովրդապետական սկզբունքին. դէմ է տնտեսական ռե-

Ֆորմներին. ինչ որ կայ հրապարակի վրայ, դրանք երե-
ւոյթները փրկելու համար են միայն, ուրեմն կառավար-
ուութիւն եւ սոց. յեղ. կուսակցութիւն երկու հակառակ
ծայրեր են:

«Իթթիհատ»ի հետ մենք գործակցում ենք միայն մի
կէտում.— Դա Սահմ.-ն պաշտպանութեան հարցն է.
բայց այլ բան է կառավարութիւնը: Ինչքան էլ մենք
Տաճկաստանում ռեֆորմիստներ լինենք, այդ մեր
տակտիկան կարող է համարուել: Բայց գործը տանել
այնքան յառաջ մինչեւ կառավարութեան գործերին
մասնակցելու աստիճանը, այդ նշանակում է մի սոց.
կուսակցութեան համար.— խաբել ինքզինքը: Կառավար-
ութիւնը կարգ է պահպանում, կառավարում է, իսկ
մենք՝ դէմ ենք այդ «կարգերին»: Էլ ինչպէ՞ս գնալ եւ
այդ կարգերում գործեր կառավարել: Մի կառավարու-
թիւն որ Շատախում արիւնարբու միւտիւրին նորից
պաշտօնի է ուղարկում Կարճկան եւ Կարճկանի գայ-
մագամը որ մի ռէակցիոնէր մարդ է, նրան էլ մի նոր
պաշտօնի կոչում, մի կառավարութիւն որ տասնեակ
հազարաւոր հայերի կոտորողներին մինչեւ այսօր ցան-
կանում է անպատիժ թողնել, այդպիսի կառավարական
կազմում, մենք դ[աշնակցական]ներս կարող չենք մաս-
նակցել:

Կառավարութիւնը մի կազմակերպութիւն է որ ինք-
նակոչ կերպով նստել է ժողովրդի վրայ ու կատարում
նրանից հաւաքած փողերի բաշխումը ըստ իրա քմահա-
ճոյքին: Կուրը «Իթթիհատի» եւ «Ահրարի» մէջ ոչ թէ
կրում էր գաղափարական հիմք, այլ զուտ այդ դրամի
բաշխման գործը ձեռք ձգելու տենչն էր մղում երկու
կողմերին էլ ընդհարուել իրար հետ. գրեթէ ամբողջ
թուրք ժողովուրդը վարակուել է այդ ցաւով: Կառավար-
ական շինարար աշխատանքին պիտի նպաստել ոչ թէ
ներսից այլ դրսից, եւ այդ կերպը աւելի ձեռնտու է մեզ,
օրինակ Նորատուճակեանի եւ ընկեր Գարոյի պայքարը
չատ մնասեց մեր պրեստիժին: Եւ դա՛ նաեւ մի խնդիր
էր:

Ինչ վերաբերում է պատգամաւորների ռոճիկին,
պիտի խոստովանել որ այդ պատգամաւորները ընտրու-
ում են ոչ թէ շրջանի ընդհ. ժողովրդի, այլ՝ կուսակցու-
թեան կողմից, կուսակցութեան դրամական, ֆիզիքա-
կան եւ բարոյական ամբողջ ուժի միջոցաւ: Կուսակցու-
թեան ջանքով ու արիւնով. պարզ է որ նրանք կուսակ-
ցութեան պատգամաւորներն են: Կառավարութիւնը
տալիս է նրանց ռոճիկները լիառատ կերպով: Շատ լաւ
էր որ պատգամաւորները իրանք մտածէին աւելորդ
փողերը յանձնել կուսակցութեան, բայց ինչ արած որ
չեն ուզի զրկուել: Ռուսական Դումայի գիւղացի պատ-
գամաւորները իրանց ռոճիկի 3/4-ը տալիս էին իրանց
համայնքներին, գիւղերին եւ կուսակցութիւններին.
նրանք վարժուած լինելով սակաւապէտութեան՝ զգու-
շանում էին շաղկապութիւնից:

Օսմ. պարլամենտի մեր պատգամաւորներից ոմանք
դեռ երէկ էր որ իրանց ընկերների հետ գէնքը ձեռներին
վարում էին չարքաշ կեանք. նրանք պատգամաւոր
ընտրուեցին իրանց ընկերների միջոցաւ, ուրեմն ի՞նչ
արդարութեամբ, ի՞նչ իրաւունքով մեր պատգամաւոր-
ները 50-ական ոսկիներ պիտի ունենան ամսական, իսկ
իրանց ընկերները յիսուն փարա իսկ չունենան. շատ
փողը մարդկանց փոխում է, յիշել պիտի ժողովրդական
խօսքը. «ոսկու փայլը արտացոլում է մարդկանց դէմ-
քին վրայ»:

Վարդգէս՝ պատասխանելով գտնում է որ անտրա-
մաբանական է այն միտքը թէ փողը անբարոյականաց-
նում է մարդկանց, որովհետեւ այդպիսի մտքով պիտի
թոյլ տալ նաեւ ընկերներին մտնել այնպիսի տեղերում
ու խաւերում, որոնք ամէնից աւելի են անբարոյակա-
նացնում մարդկանց: Եթէ խօսքը լուր դրամի վրայ է, ես
եւ ընկեր Կոմսը պատրաստ ենք թողնել այդ դրամն էլ,
պաշտօնն էլ. եթէ ժողովը յարմար նկատի մենք պատ-
րաստ ենք ապրելու ամսական 5 ոսկիով էլ: Այն առա-
ջարկը որով պատգամաւոր ընկերի ընտրուելուց առաջ
չահած ամսական հասոյթի վրայ աւելացնել է ուղւում 5
ոսկի եւս, դա գործնական միտք չէ, որովհետեւ ընկեր
Կոմսը իր ընտրուելուց առաջ աշխատում էր Դաշնակ-
ցութեան համար՝ հաց ու փոր: Բանտարկուածներն էլ
օրական հասոյթ 2 կտոր հաց ունէին. իսկ Գարոն՝ շա-
հում էր ամսական 80 ոսկի. այդպիսով չի իրագործուում
արդարութիւնը: Մէկը՝ որ ընտրուելուց առաջ շատ սա-
կաւապէտ էր, ընտրուելուց վերջ պարտաւոր չէ ան-
պայման այնպէս ապրելու, քանի որ դա՛ հնարաւոր չէ:
Ընկեր Վարդգէսի առաջարկն է այն որ նկատի առնելով
տեղի պայմանները որոշել ծախսերի մակսիմումը չափս,
իսկ աւելացած դրամը՝ յանձնել կուսակց. կասսային:



Ապա ընկեր Վարդգէս անդրադառնալով ընկերների
կաբինէտում մտնելու հարցին ասում է. «երբ ընկերնե-
րը առարկում են որ մեր երկրում իրաւակարգի կորիզն
անգամ չկայ, դրա հետ միասին պիտի գիտենալ որ մե-
զանում դասակարգերի շերտաւորումն էլ դեռ չի կա-
տարուել. ուրեմն՝ յայտնի չէ թէ ո՞վ է կառավարում
երկրին. այսպիսի մի երկրում՝ մենք անշուշտ պիտի
մասնակցենք կառավարութեան գործերին: Դ-ն ընկեր-
ներ մտնելով կաբինէտում, կարող են իրանց տեսակէտ-
ները մտցնել այնտեղ. ամէն անգամ երբ նկատի աշխա-
տաւոր ժողովրդի շահերին հակառակ մի քայլ է լինում,
նա կարող է ուղղել այդ քայլը. հակառակ պարագային
հրապարակաւ հրաժարուում է, եւ այդ՝ անպայման աւե-
լի օգուտ է տալիս ժողովրդին:

Ընկեր Ակնունիի բանաձեւը որի միտքը այն է թէ
«Դաշնակցական» ընկերները յեղ. բացառիկ պարագա-
ներում կարող են մտնել կաբինէտում, դ-կան մարմին-
ների համաձայնութիւնով, բայց մասնակցելով կառա-
վարութեան գործերին, դադարում են դ-ական գործօն

անդամ լինելուց»: Այս բանաձեւը դրոււմ է քուէարկու-
թեան եւ ստանում՝ 12 ձայն, որով չի անցնում:

Մնացեալ ձայներից մի քանին թէեւ համաձայն են
այս բանաձեւի մտքին, բայց կողմնակից լինելով բանա-
ձեւի կէտերին առանձինն քուէարկելուն՝ մնում են
ձեռնպահ:

Ժողովում գալիս են Սալնոյ Զորի պատգամաւոր ըն-
կեր Սեպուհը եւ Արեւել. Բիւրոյի անդամ Երուանդը⁵⁰.
Նիստը փակոււմ է կէսօրի ժամը 12-ին:

Քարտուղար՝  Նախագահ՝ 
ԶՈՒԼԱԼ ՌՈՒԲԷՆ

Նիստ 49-րդ. 10 Սեպտ. 1909

Նախագահում է ընկեր Ռուբէն:
Կարդացուեցան 38, 39, 40 եւ 41-րդ նիստերու արձա-
նագրութիւնները:

41-րդ նիստի արձանագրութիւնը կարդալիս Զուլա-
լը յայտնում է իր ցաւը ժողովի եւ մանաւանդ մի քանի
ընկերների հանդէպ, որոնք առանց իրմէ բացատրու-
թիւններ լսելու, իր բացակայութեանը զանազան որա-
կումներ են տուած իր գործունէութեանը: Ընկերներից
ոմանք տեղեկանալով, որ ընկերներ Աւերեան, Մարգ-
պետ եւ Կիլիկեան գտնուում են Պոլիս, առաջարկում են
նրանց հրաւիրել ժողովի, խորհրդակցական ձայնով:
Բացատրութիւնը լսելուց յետոյ ժողովը միաձայն որո-
շում է նրանց հրաւիրել եւ այդ մտքով հեռագրոււմ է
Պոլիս:

Ժողովը անցնում է օրակարգին, որի նիւթն է Դ-ն
պատգամաւորների դիրքը զանազան պարլամենտնե-
րում:

Ընկեր Անտոն առաջարկում է հետեւեալ բանաձե-
ւը.—

«Կուսակցութեան մարմինների հետ միասին Ընդի.
ժողովի կողմից գծուած ուղղութեան հետեւելու են նաեւ
Թուրքիայի, Ռուսիայի եւ Պարսկաստանի պարլամենտ-
ներում աշխատող դաշնակցական ընկերները (ընդուն-
ւած 24 ձայնով):

Վերջիններիս հրահանգոււմ է նաեւ.—

1) Գործել հաւաքական խորհրդակցութեամբ ու պա-
տասխանատուութեամբ. բոլոր պարագաներում քննը-
տող հարցերը լուսաբանել աշխատաւոր ու ճնշուած խա-
ւերի տեսակէտից (24 ձայն +): Նախաձեռնող հանդիսա-
նալ մի քանի հասունացած օրէնքների (Չի անցնում):

2) Միմիստրութիւնների ու կառավարութեան նկատ-
մամբ, պատգամաւորները բռնելու են անաչառ դիրք

քննադատողի, պաշտպանելով սկզբունքներ ու հանրա-
յին շահեր եւ ոչ անձեր (24 ձայն +):

3) Դ-ն պատգամաւորներին ինչպէս նաեւ դաշնակ-
ցականներին առ հասարակ արգիւլում է մտնել մի-
նիստրական կազմերի մէջ (14+, 13-: Չի անցնում):

4) Դ-ն պատգամաւորների ծախսը սահմանափակե-
լու է նախքան պատգամաւոր ընտրուելը իրանց ստա-
ցած ռոճիկով: Աւելացնելով դրան տարին 80 ոսկի ճամ-
բորդութիւնների ու ներկայացուցչութեան համար:
Պատգամաւորների ստացած ռոճիկի մնացած մասը
յանձնելու է պատգամաւորների ներկայացուցած
չրջանների Կ. Կ.-երին (5+, 11-: Չի անցնում):

Սկսոււմ է վիճաբանութիւն չանցկացած կէտերի
մասին: Կաբինէտներին մասնակցելու հարցին (բանա-
ձեւի 3րդ կէտը) վերաբերմամբ, ընկերներում մէջ գոյա-
նում է երկու հոսանք. ոմանք կարծում են թէ ոչ թէ
դաշնակցականներ չպիտի մասնակցեն կաբինէտներին,
այլեւ ընդհակառակը պիտի ջանան մտնել բոլոր պետա-
կան պաշտօններում, ամրացնելու համար Սահմանադ-
րական կառավարութիւնը: Մենք որոշել ենք պահպա-
նել Սահմանադրութիւնը. հէնց դրանով էլ՝ de facto դա-
դարում ենք pur-sang⁵¹ յեղափոխականներ լինելուց:
Մենք պարտաւոր ենք ընդունել որ մեր ընկերները ի
հարկին դառնան մինիստր, որովհետեւ այդ բանը երբեք
չի վնասում մեր սկզբունքներին: Եթէ հարց դրուէր եւ-
րոպ. ամէնից հեղինակաւոր ընկերվարականներին, այս
մասին նրանք ոչ միայն կ'ասէին «այո», այլ՝ «անպատ-
ճառ»: Մանաւանդ որ ժամանակակից բուրժուազիա-
կան կառավարութիւնների կաբինէտներին սոցիալիստ-
ների մասնակցութիւնը կամ չմասնակցելը վերջնակա-
նապէս չի վճռուած: Կան օրինակներ որ ամենաթուղ
սոցիալիստներ մտած են այդ կառավարութիւնների մէջ
որպէս մինիստր: Բացի այս՝ բոլոր այն երկրներում ուր
կոչուած ենք մենք գործելու, աւելի եւս պէտք ունին որ-
պէսզի ուժեղացնենք մեր օժանդակութեամբ: Մեր
երկրներում հիմա բացառիկ յեղ. եւ անցողական շրջան
է:

Պէտք է գիտնալ որ մանաւանդ Թուրքիոյ ներկայ
կառավարութեան մէջ եթէ մենք ունենայինք յեղափո-
խականներ, նրա ուղղութիւնը բոլորովին տարբեր կը
լինէր:

Բանաձեւին ի պաշտպանութիւն խօսելով զանազան
ընկերներ պնդում են որ իրերի արդի կացութեան մէջ յե-
ղափոխականները մնալով օպոզիցիոյ դերին մէջ կա-
րող են աւելի մեծ գործ կատարել քան մասնակցելով կա-
ռավարութիւններին: Եւ այդ ուղղութեամբ մենք պէտք
է թելադրենք նոյնիսկ «Իթթիհատ»ականներին որպէսզի
հետամուտ չըլլան կառավարական պաշտօններին:

50.- Եղիշէ Թոփչեան:
51.- Չտարիւն:

Պաշտօնները կը փչացնեն յեղ. տրամադրութիւնները: Յեղափոխականները պէտք է մնան կառավարութեանէն հեռու եւ գաղտնի: Թուրքիայում իշխողները ներկայիս սահմանադրականներ չեն ժողովրդապետական սկզբունքի տեսակէտից: Մեր կողմէն այդպիսի կառավարութեան ուղղակի մասնակցութիւնը կը լինէր օպպորտունիզմ: Այս վիճաբանութիւնից յետոյ բանաձեւի խնդրոյ առարկայ կէտին կ'աւելցուի հետեւեալը: «Այս որոշումը չի վերաբերում յեղափոխական եւ բացառիկ անցողական շրջաններին, (երբ) շրջանի ղեկավար մարմնի համաձայնութեամբ ընկերներ կարող են մտնել ժամանակատար կառավարութեան մէջ, դադարելով միայն օրից կուսակցութեան գործօն անդամ լինելուց» (ընդունում է):

Յետոյ միաձայնութեամբ ընդունուում է Երուանդի հետեւեալ առաջարկները: «Ընդունելով որ իւրաքանչիւր դ-ն պարլամենտական ֆրակցիա կազմում է մի մարմին, ԸՈՊԻ. Ժողովը պարտք է դնում նրանց վրայ իբրեւ այդպիսի մասնակցել իր ներկայացուցչի միջոցով (աշխակցութեան) ԸՈՊԻ. Ժողովին եւ անել հաշուետուութիւն: «Պատգամաւորները պէտք է սերտ կապ ու յարաբերութիւն պահպանեն զիրենք ընտրող շրջանի Կ. Կ.-ներուն հետ եւ փոխադարձ տեղեկութիւններ տան»:

Միաձայնութեամբ ընդունուեցան նաեւ հետեւեալ առաջարկները.— «Չխորշել ժամանակատար բլոկներից՝ պարլամենտում կոնկրետ խնդիրների շուրջը սկզբունքային համեմատական կուսակցիցների հետ»:

«Դ-ն պատգամաւորները իրենց պարլամենտական քայլերի համար պէտք է խորհրդակցին շրջանի բարձր մարմնի հետ»:

Ժողովը փակուում է:

Քարտուղար՝ Նախագահ
ՊԵՐՃ

Նիստ 50. արաւօտեան Աեպտ. 11 1909

Կը նախագահէ ընկեր Ակնունի. ներկայ են 23 հոգի: Նախագահը հարցնում է ժողովին՝ զբաղուել դրամական հարցով թէ ծրագրի նուազագոյն պահանջների վերաքննութեամբ:

Առաջարկ է լինում զբաղուել դրամական հարցով իբր ներկայումս մեր շատ կարեւոր խնդիրներից մին եւ գլխաւորաբար ուշք դարձնել եւ մանրամասնութեամբ քննել այն մարմինների հաշիւները (ինչպէս Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոների, Պատասխանատու մարմինների), որոնք ունէ շրջանային ժողովի կողմէ քննուած եւ վաւերացուած չեն, եւ խորհուրդն էլ ժամանակին հաւաքուած չլինելով, հնարաւոր չէ եղեր ստուգելու

այդ մարմինների հաշիւները: Ի նպաստ այս առաջարկին, խօսում են ընկերներ Պիեռ եւ Ակնունի: Վերջինը շեշտում է որ ինքը կողմնակից է այդ երեք մարմինների հաշիւների մանրամասն քննութեան:

Հաշուեքննիչ յանձնախումբը դեռ եւս իր գործը վերջացրած չլինելով, առաջարկում է յետաձգել, աւելացնելով միեւնոյն ժամանակ որ հաշուի մանրամասն քննութեանց մէջ չէ մտել եւ հնարաւոր էլ չէր, գլխաւորաբար հաշիւների չիկայութեան [SIC] եւ մեծ մասամբ անսխտեմ լինելուն պատճառով, մինչեւ որ պատրաստ է ընդհանուր պատկերը՝ տախտակ-հաշուեցոյցով:

Ժողովը անցնում է ծրագրի նուազագոյն պահանջների վերաքննութեան:

Նախագահը գեկուցանում է:

Կազմակերպիչ Բիւրոն եւ յետոյ Ընդհ. Ժողովն էլ աշխատանքները յանձնաժողովների բաժանած լինելու պատճառով, նուազագոյն պահանջների հարցն էլ յանձնել մի հատուածի (section), որը այդ հարցը պիտի քննէր անկախ ունէ խնդրից:

Մեր պահանջները բաժանուում են չորս մասի:

Առաջին մասը բաղկացած է մի քանի տողերից (կարդուում է ծրագրի նուազագոյն պահանջների սկզբի տողերը), այդ մեր credo-ն⁵² է ամբողջապէս: Առաջին մի քանի տողերի մէջ շեշտուում է այն որ մենք ընկերվարականներ ենք եւ հետեւում ենք յեղափոխական տաքտիկայի. այդ երկուսն էլ մեր սիւններն են, պիտի թողնել անփոփոխ, միայն «հայ աշխատաւոր» բառերի մօտ կամ կ'աւելացնենք «հայ եւ օտար աշխատաւոր» կամ թէ կը թողնենք սոսկ «աշխատաւոր» բառը, որպէսզի օտար տարրեր էլ կարողանանք ընդունել մեր մէջ. իսկ մնացածը կը մնայ անփոփոխ: Երկրորդ մասը՝ Անդրկովկասին վերաբերող՝ պիտի թողնել անփոփոխ, որովհետեւ կովկասի մէջ դեռ եւս պայմանները չեն փոխուել ցարդ. դեռ քաղաքական դրութիւնը աւելի թեքուել է դէպի վատը: Երրորդ մասը՝ ընդհանուր պահանջներն էլ փոփոխելու կարիք չկայ, որովհետեւ շօշափում են ընդհանուր կէտեր, որոնք դեռ եւս իրենց raison d'être-ն⁵³ չեն կորցրել: Միայն փոփոխելի կէտերն են Թուրքաց Հայաստան բաժնում 1 եւ 3 կէտերը, իսկ 2 եւ 4 կէտերը դարձեալ թողնել անփոփոխ: Որպէսզի հնարաւորութիւն ունենանք թուրքերի մտքի միջից հանել այն համոզումը, որ ունեն մեր վերաբերմամբ՝ իբրեւ անջատականներ. պիտի առաջին կէտից հանել քաղաքական եւ տնտեսական ազատ» եւ «դաշնակցական» բառերը, իբր անժամանակակից բան. մենք հանել ենք այդ՝ plate-forme-ը կազմելիս: Այդ յօդուածը այսպէս խմբագրել, — Թուրքաց Հայաստանը կազմում է Օսմանեան սահմանադրական պետութեան անբաժան մասը: Դրանով ցոյց

52.- Հաւատարմը:
53.- Գոյութեան իմաստը:

տուած կը լինենք որ վերաբերում է ամբողջ երկրին: Յորդ կէտում «Ֆեդերատիւ» բառի փոխարէն դնել «սահմանադրական»:

Ընդհանուր պահանջներ:

13րդ կէտը — «եկեղեցու բաժանումը պետութիւնից»: «Կրօնը անհատական խղճի գործ է»: Այդ պիտի բարեփոխել այն ձեւով որ ընդհանուր երկրին յարմարի: Եկեղեցին բաժանելու հարց չի կարող լինել մեր երկրում որ չկայ այն:

14րդ. «Ազգերի ինքնորոշման իրաւունք»: Այդ ֆրագը որ մտել է մեր իրականութեան մէջ ռուսներից, կամ պիտի ճշտել այն ձեւով որ նշանակի ազգերի կատարեալ իրաւահաւասարութիւն, եւ կամ հանել որովհետեւ դրանից յետոյ հէնց նոյն կէտում կայ «կատարեալ հաւասարութիւն բոլոր ազգերի եւ կրօնական համայնքների եւայլն», նախադասութիւնը:

20րդ. «Համայնական եւ կանտոնային բոլոր պաշտօնեաների համար պարտաւորական է եւայլն», պիտի փոխել «համայնական եւ նահանգային բոլոր պաշտօնեաների»:

Ճապոնացին հարց է տալիս թէ՛ ինչ նոր փոփոխութիւններ են տեղի ունեցել, որոնք այժմ մեզ ստիպում են փոխել նուազագոյն պահանջների այս կամ այն կէտը:

Նախագահ.— Անկասկած է որ այդ վերաքննութիւնը կախուած է մեր քաղաքական պայմանների նոր փոփոխութիւնից, անկախ որեւէ կողմնակի հանգամանքներից:

Ընկերներից երկու հոգի յիշեցնում են [որ] այդ գեկուցումը անկախ է այն յանձնախմբից՝ որը ընտրուած է Ընդհ. Ժողովից, եւ որը հնարաւորութիւն չի ունեցել զբաղուելու:

Արագիւ.— Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը որ նուազագոյն պահանջները մշակելիս՝ Երկիրը լաւ ուսումնասիրուած չէ եղել, եւ միւս հպատակ ազգերի անկախութիւն ստանալը նկատի ունենալով՝ Յորդ յօդուածը մեծ դեր է խաղացել ու territorial ինքնավարութեան անուան տակ մենք ձգտել ենք իրապէս ex-territorial ինքնավարութեան. այդ վեց վիլայէթները իրենց տնտեսական քաղաքական կացութեան մէջ երբեք տարբեր պատկեր չեն ներկայացնում հարեւան միւս նահանգներից, եւ հայ ազգաբնակչութիւնը այդ վեց վիլայէթներում չի կարող մի միութիւն կազմել թուրք, քաղաքական-տնտեսական տեսակէտից: Եզրակացնում է որ մեր նուազագոյն պահանջների հիմնական փոփոխութեան կարիքը անհրաժեշտ է: Թուրքաց Հայաստանը մնում է պատմական անուան, իսկ Օսմանեան բոլոր նահանգները վայելում են նահանգային ինքնավարութիւն վարչական ապակեդրոնացման հիմքերի վրայ: իսկ cantonային դաշնակցութիւնը կը լինի ապագայում:

Անտոն.— Գտնելով որ պահանջների մէջ հիմնական փոփոխութիւններ են առաջ բերում այդ առաջարկները, շեշտում է այն հանգամանքը որ այս ժողովը ծրագրի

ըը հիմնական փոփոխութեանց ենթարկելու իրաւունքը չունի, նախօրօք մարմինների եւ դաշնակցական մասսաների համաձայնութիւնը առած չլինելով՝ համաձայն կանոնագրի: Մենք պիտի շեշտենք կանտոնային դաշնակցական կապերի վրայ, որպէսզի նախ մեր ազգային իրաւունքները ապահովենք, մի բան որ չէ տալիս նահանգայինը: Մենք շեշտելու ենք որ անջատումը վանում ենք եւ այդ ուղղութեամբ ճշտում պիտի մտցնենք ծրագրի մէջ. իսկ որ ձգտել ենք ու ձգտում ենք ex-territorial ինքնավարութեան, այդ պարզ է: Մենք անջատականներ չենք, բայց ձգտում ենք ազգային ինքնավարութեան՝ երբեք պետութեանց սահմանների թուլացմամբ: Քսան տարի առաջ դէմ էին տնտեսական ազատութեան, կողմնակից լինելով քաղաքական ազատութեան, իսկ այժմ կատարեալ հակառակը: Այդ բառերը դուրս նետել չի կարելի՝ խոշոր միտք պարունակելու պատճառով: Մենք ձգտում ենք կատարեալ ազատ անհատների միութեան:

Այդ մասը՝ առաջին կէտ՝ այսպէս է ձեւակերպուելու «ձգտելով քաղաքացիական, քաղաքական եւ տնտեսական կատարեալ ազատութեան»: Մենք մեր պահանջները պիտի մտցնենք մի ընդհանուր բանաձեւի մէջ. մենք կովկասում պահանջում ենք հանրապետութիւն, իսկ ուզում ենք Թուրքայիում քաղաքական, տնտեսական ազատութիւնը փոխարինենք սահմանադրական բառով:

Ընկերներից ոմանք գտնում են որ նուազագոյն պահանջները քննելու եւ հիմնովին փոփոխելու համար, Հինգերորդ ժողովը իրաւունք ունի, որովհետեւ արդէն օրակարգի մէջ դրուել է ու մարմիններում ծեծուել, այնպէս որ ընկեր Անտոնի արտայայտած միտքը թէ՛ նուազագոյն պահանջները քննելու իրաւունքը չունենք, հիմք չունի:

Անտոն.— Շեշտում է որ մեր հիմնական նպատակն է ձգտել ընկերվարական կարգերին իբրեւ ընդհանուր նպատակ: Այդ մնում է: Ֆեդերատիւ բառը հանելով մենք սկզբունքային հակասութեան մէջ չենք ընկնի, ապակեդրոնացման կը մօտենանք քայլ առ քայլ: իսկ ինչ վերաբերում է քաղաքական-տնտեսական ազատութեան, կողմնակից չլինելով ջնջելուն՝ անհրաժեշտ է գտնում ճշտելու այն ձեւով ինչ մտքով որ գործ է ածած այն. նկատել է տալիս որ այդ ֆորմուլը մտել է մեր մէջ «Նարօտնաեա վօլիայից եւ ասվապաժտենիէ» բառէն, որ նշանակում է ազատութիւն ոչ անկախութեան մտքով, այլ քաղաքական իրաւունքներ ձեռքբերելու: Պիտի ճշդենք այդ ուղղութեամբ, որովհետեւ մինչեւ այժմ մեր մէջ իր գործածուածի մտքով չէ հասկացուել:

Դուման.— Մինչեւ այժմ քաղաքական ազատութիւն ասելով հասկացել ենք Հայաստանի ազատութիւնը, Բուլկարիայի պէս, բայց երբ անջատման գաղափարից հրաժարուեցինք՝ ամէն ինչ պարզուեց: Այժմ քաղաքական ազատութիւն ասելով քաղաքացիական ազատութիւն եմ հասկանում: Նկատելով որ կովկասի եւ Թուրք

քիոյ պայմանները նոյնն են գրեթէ աշխարհագրական (ծայրագաւառներ) եւ ցեղական յարաբերութեանց տեսակէտէ, գտնում է գործնական Անտոնի առաջարկը — պահանջները մի ընդհանուր բանաձեւի մէջ մտցնել երեք երկիրների համար:

Գիտակ.— Գտնելով որ նուազագոյն պահանջները միջոց են նպատակին հասնելու, հետեւաբար ըստ պահանջների եւ պայմանների փոփոխութեան կարելի է լայնացնել եւ նեղացնել: առաջարկում է հանել քաղաքական-տնտեսական ազատութիւն բառերը, ընդունելով որ այդ կասկածներ է յարուցանում չըջապատի մէջ եւ բացի այդ՝ մեր մէջ էլ շարունակ հասկացում է անկախութեան մտքով եւ ոչ թէ Ռոստոմի եւ Դոմմանի բացատրութեամբ: Փոխել «Հայ աշխատաւոր» բառերը, դնել կամ «աշխատաւորներ» կամ թէ «Հայ եւ օտար աշխատաւոր», իսկ Կրդ յօդուածը պիտի լինի «Օսմանեան երկրի նահանգները վայելում են եւայն»: Իսկ ինչ վերաբերում է կովկասի եւ Թուրքիոյ վերաբերեալ պահանջները ընդհանուր դարձնելու, գտնում է ոչ ինչացի, որովհետեւ պայմանները — քաղաքական եւ տնտեսական — տարբեր են: պահանջներն էլ համաձայն պայմանների պիտի լինեն:

Ճապոնացի.— Credo-ին մէջ «Հայ աշխատաւոր» բառերը պիտի մնան այն պարզ պատճառով, որովհետեւ մենք Հ. Յ. Դ. ենք, ուրեմն շատ բնականօրէն պաշտպանում ենք Հայ աշխատաւորութեան բովանդակ շահերը: «Թուրքաց Հայաստան» բառը պիտի հանել, որովհետեւ ոչ միայն դրսում սխալ է հասկացում, այլեւ մեր շարքերում, նոյնիսկ Իզմիրի շրջանային ժողովում որոշում են կայացնում զինուել եւ յարմար ըռպէին ապստամբութեամբ անկախութիւն ձեռք բերել: Ուրեմն, այդ առաջ է բերում թիւրիմացութիւններ: Մեր պահանջները պիտի լինեն միատեսակ բոլոր երկիրների համար: Ինչո՞ւ Ռոսաստանում այդ բռնապետական դրութեան տակ ռամկավար հանրապետութեան պահանջ ենք դրնում, իսկ սահմանադրական Թուրքիայում սահմանադրական բառը աւելի շեշտում:

Ֆեդերատիւ.— Բառը հանելու կարիք չկայ, որովհետեւ մենք ասում ենք որ ամէն մի նահանգ ունենայ իր ներքին գործերում՝ օրէնսդրական իրաւունք, մենք ձգտում ենք կանտոնային ֆեդերացիայի:

Պերճ.— Գտնում է որ մեր նուազագոյն պահանջների մէջ կատարեալ քառու է տիրում, եւ դրանից առաջ է գալիս մեր մէջ կատարեալ աշխարհաքաղաքացիութեան եւ անկախ Հայաստանի կողմնակիցներ, նայած ով ինչպէս է հասկանում: Պիտի առաջ բերենք բիւրեղացում մեր ծրագրի եւ պահանջների մէջ, որպէսզի մեր շատերի մէջ էլ միատարրութիւնը (հոմոթէնութիւն) կարողանանք պահել: նրանք որոնք աշխարհաքաղաքացիութեան եւ անկախ Հայաստանի կողմնակիցներ (են), կը հեռանան, կը մնայ իսկական կուսակցութիւնը:

Երուանդ.— Հակառակ է հանուելուն «Հայ աշխատաւոր» եւ «Թուրքաց Հայաստան» բառերը, որովհետեւ դրանք իրենց մէջ պարունակում են մի ամբողջ բովանդակութիւն, դրանք luxe-ի համար դրուած չեն: Դաշնակցութիւնը մնում է եւ եղել է Դաշնակցութիւն, որովհետեւ կապուած է եղել Հայ անուան հետ եւ գործում է Թուրքաց Հայաստանում: Ամէն մի բառ եւ միտք պիտի հասկանանք այնպէս ինչպէս է: երբ ուրիշները չեն հասկանալ՝ մեղքը մերը չէ: պիտի բացատրել: Մենք գործում ենք Հայ ժողովրդի մէջ եւ Թուրքաց Հայաստանում: Թուրքաց Հայաստան բառերը բնորոշում են մեր գործունէութեան վայրը իր սահմաններում: շատ պարզ է որ մենք Արաբիայում չենք գործում: Գերմանիայում սոց. դեմոկրատ կուսակցութիւնը կողմ է գերմանական Ս. Դ. թեան, նշանակում է որ այդ կուսակցութիւնը գործում է Գերմանիայում: Դրանով առաջնորդուելով, եւ չգտնելով պայմանների ունէ փոփոխութիւն, հանելը գտնում եմ միանգամայն աւելորդ, սխալ՝ տակտիկ տեսակէտից: Եթէ այսօր Թաւաթբէյի էլ է վաղը մի ուրիշը՝ Ֆէրիտ փաշա կը լինի, ուրեմն մենք պիտի ամէնին համակերպե՞նք եւ ծրագրից մի բան հանե՞նք: «Քաղաքական» բառը իսկապէս որ թիւրիմացութեան տեղիք կը տայ, պիտի՝ 14րդ կէտից ազգային «ինքնորոշում» բառը դնել դրա տեղը եւ փակագծի մէջ բացատրել՝ որ մենք դրանով հասկանում ենք որ Հայ ժողովուրդը, ղեկավարուելով պետական ընդհանուր օրէնքներով, տնօրինում է իր վիճակը իր տեղական օրէնքներով:

— Գտնելով որ «Ֆեդերատիւ» բառը բխում է մեր սկզբունքներից, աւելորդ է համարում կասկածների վրայ ծանրանալը, եւ եթէ հանենք այդ բառերը, ու նոյնիսկ Իթիհատ անունը վրանիս առնենք, դարձեալ պիտի կասկածեն, եթէ տրամադիր են կասկածելու: Ենչտում է երկրների ընդհանուր պահանջ դնելու անհրաժեշտութիւնը, նկատելով որ պայմանները ու ժողովուրդը նոյնն են: Եզրակացնում է՝ բացատրել քաղաքական բառը, եւ թողնել անփոփոխ ֆեդերատիւ, հայ աշխատաւոր, եւ Թուրքաց Հայաստան բառերը:

Մուրադ.— Նկատել է տալիս որ Հայ աշխատաւոր մասսաները թեւ թիկունք լինելով Դաշնակցութեան շատ սերտ կապուած է եղել նրան, եւ եթէ այսօր կապենք նրան եւ օտար տարրեր, Հայ աշխատաւորները կը հեռացնենք մեզնից: Իսկ ինչ վերաբերում է մեր շրջապատի վերաբերմունքին հասկացողութեան, նրանք տանել չեն կարողանում եւ քրդին, եզիդին, եւ դրա հետ մենք պիտի շեշտենք եւ Արաբիա, Մակեդոնիա, Ալբանիա եւ Քուրդիստան, որպէսզի աւելի ընդհանրացնենք:

Պիեռ.— Զընդունելով Պերճի հոմոթէնութեան առաջարկը՝ ընդհակառակը տարբեր հոսանքների գոյութիւնը կուսակցութեան կենսունակութեան վերագրելով, գտնելով Երուանդի բացատրութիւնը բռնազբօսիկ

«Թուրքաց Հայաստան» բառի վերաբերմամբ իբր միջոց գործունէութեան վայրի սահմանների գծում, եւ նմանութիւնը Գերմանիայի սոց. դեմոկրատների, որովհետեւ Դաշնակցութեան գործունէութիւնը երեք պետութեանց սահմանների մէջ է տարածում, շեշտում է նրա ազգային ծրագրի քառու ներկայացնելը: օրինակ, 2րդ կէտով արդէն Թուրքիայում կանտոններին տալիս է կատարեալ անկախութիւն, թղթատարութեան, հեռագրի, մաքսի, դրամի եւ զօրքի, իսկ արտաքին քաղաքականութիւնը կը վարէ պետութիւնը: Միւս կողմից՝ կովկասում դնելով ապակեդրոնացում territorial հողի վրայ, Թուրքիայի բաժնում Զրդ կէտում, «կանտոնների սահմանները որոշելիս պէտք է նկատի առնել ազգաբնակչութեան ցեղակրօնական եւ կուլտուրական առանձնատկութիւնները, ըստ կարելույն միաձոյլ համախմբումներ կատարելու համար»: Այդ թէ՛րիապէս ազգային չի կարելի հասկնալ, որ մենք մեր պատմափոփոխութեան աշխարհահայեացքով հասկանում ենք, որ ազգային շրջանակի մէջ կ'իրականանայ ընկերակցութիւնը, որը արդէն հասկնալի է, եւ այդ է պատճառը որ մենք ազգային ենք, բայց այդ տեսակէտից չէ բխում այդ յօդուածը՝ որը արդէն անջատման ձեւ է առաջարկում:

Աչքի առաջ ունենալով՝ որ այս հարցերի նկատմամբ որոշ եզրակացութեան գալ չենք կարող, որովհետեւ որքան ընկեր կայ այնքան էլ հասկացողութիւն, ապացոյց որ այս հարցի պէս պարզ խնդրում հնարաւոր չեղաւ եզրակացութեան գալ, առաջարկում է թողնել հարցը, չզբաղուել ժողովում, տալ յանձնաժողովի ուսումնասիրելու, ծեծել կուսակցութեան մամուլում եւ ժողովներում, ապա դնել կամ յաջորդ Ընդհ. ժողովին կամ Խորհրդին, միայն թէ այս ժողովը մի բացատրական բանաձեւով յայտարարէ որ վանում է անջատողական գաղափարը:

Սոստում.— Պատճառ չեմ տեսնում «Հայ աշխատաւոր» բառերը վերացնելու, որովհետեւ գործում ենք Հայ ազգաբնակչութեան մէջ: Դաշնակցութիւնը կանգնած է երկու կէտի վրայ, ազգային-կուլտուրական եւ territorial ինքնավարութեան վրայ: Թուրքաց Հայաստանը իբր territorial՝ գոյութիւն ունի եւ պիտի մնայ, եւ աւելի մեծ իրաւունքներ կարող է ունենալ քան Մակեդոնիան, ուր ազգային խնդիրը աւելի խճճուած է: Եւ երբ իմանալով հանդերձ որ վեց վիլայէթներում հայերը 1/4 մասն էին կազմում ազգաբնակչութեան եւ դնում էինք territorial ինքնավարութեան պահանջ, նշանակում էր որ մեզ ցանկալի էր երկրի մի մասը դնել տանելի պայմաններում մէջ, եւ բացի այդ՝ մեզ ցանկալի է ընդունել փոքր կանտոնային սիստեմը, որի մէջ կը զարգանայ ազգային ինքնուրոյնութիւնը: Վանի առաջարկը՝ ինքնավարութիւն ամբողջ երկրի համար՝ կայ 1904ի մեր ժողովի արձանագրութեանց մէջ, բայց որովհետեւ մեզ մօտ հապ-

ձեպով է եղել, հարկաւոր է լուրջ խմբագրական կազմ, բոլորը դասաւորելու համար: Ազգային ինքնորոշումը կարող ենք ջնջել, որովհետեւ արդէն ազգերի կատարեալ հաւասարութիւն դրել ենք: «Ինքնորոշում» բառը մտած է եւ ուս յեղափոխական կուսակցութեանց ծրագրից: նրանց կարծիքով ամէն մի ազգ իրաւունք ունի տնօրինելու իր վիճակը իր ուզած ձեւով, ինչպէս, օրինակ P.P.S-ը, որը ձգտում էր կատարեալ անկախութեան: Նոյնիսկ ուսական յեղափոխութեան ատեն երբ Սահմանադիր ժողով հրաւիրելու հարց կար, թէ՛ ո՞վ է ուզում կապուած մնալ Ռոսաստանին, կամ բաժանուել:

Ռուբէն.— Ըստ իս՝ այստեղ խօսելով եզրակացութեան չենք կարող գալ, շատ լաւ կը լինի տալ մի յանձնախմբի մշակելու եւ միեւնոյն ժամանակ մամուլ նիւթ դարձնելու: Պահանջների մէջ կան եւ հակասական կէտեր — 22 եւ 23: Հայ բառը հանելով ունէ փոփոխութիւն առաջ չենք բերել, որովհետեւ մեր իրականութիւնն այն է որ մենք կապուած ենք Հայ ժողովրդի հետ: Ֆեդերատիւ բառը չի կարելի փոխարինել սահմանադրական բառով, եւ ոչ ալ կանտոնայինը նահանգայինով, որովհետեւ դրանց տարբերութիւնը շատ խոշոր է: Ռոսաստանում էլ նահանգային ինքնավարութիւններ կան (զեմստոս), ուրեմն մեր ծրագրի այդ կէտը իրականացե՞լ է: Մենք պահանջում ենք կանտոնային լայն ինքնավարութիւն օրէնսդրական ֆունկցիաներով, դրանով թէ՛կուզ ազգաբնակչութեան միայն 1/10 մասն էլ կազմենք, վստահ պիտի լինենք որ մեր ազգային ինքնուրոյնութիւնը ապահովուած է:

Նիթրա.— Նուազագոյն պահանջներ եւ պլատֆորմի մեկնութիւններ թիւրիմացութեան են ենթարկուած: Նուազագոյն[ով] չի կարող առհասարակ բուրժուական ընկերութեան յատուկ կարգերի մէջ ձեռք բերել հնարաւոր համարուած պահանջները, որովհետեւ, եթէ այդպէս լինէր, այդ պարագայում պէտք էր, եւ բնական ու տրամաբանական պիտի լինէր, բոլոր երկիրների համար էլ քաղաքական, տնտեսական եւ հասարակական միեւնոյն, միօրինակ պահանջներ դնել: հարկ չէր լինի մեր կողմից առանձին նուազագոյն պահանջներ մշակել, այլ՝ ընկերակցական միջազգային համագումարի կողմից մշակուած միանուագ պահանջներ բոլոր երկիրների եւ ընկերակցական կուսակցութիւնների համար բաւական եւ պարտաւորիչ կը լինէր, մինչդեռ մենք ոչ միայն մեզ՝ դաշնակցական կուսակցութեան համար՝ այլեւ մինչ իսկ Թուրքիոյ եւ կովկասի համար տարբեր պահանջներ ենք մշակել եւ դրել: Պարզ է, որ նուազագոյն պահանջները այդ բնոյթը չունեն: Նուազագոյն պահանջներ ասուածը ուրիշ ծագում եւ բնոյթ ունեն, այն է՝ ըստ մէն մի երկրի ժողովրդի գտնուած քաղաքական, տնտեսական, աշխարհագրական, կուլտուրական, ազգագրական պայմանների՝ մի որոշ ժամանակամիջոցի համար դնել այնպիսի պահանջներ՝ ո-

րոնց հասնելը, ձեռք բերելը եւ դրուած ժամանակի համեմատութեամբ՝ մեծ յաջողութիւն, խոշոր ու հիմնական փոփոխութիւն, յառաջդիմութիւն կարող է համարուել, որից յետոյ կը դրուեն նոր պահանջներ նոր պայմանների համեմատութեամբ, մինչեւ որ կը հասնենք ընկերվարական կարգերին: Իսկ պլատֆորմը, ինքն ըստ ինքեան շատ պարզ է: դա այն պահանջն է՝ որ ամէն մի երկրի մէջ պարլամենտական շրջանի, այսինքն պատգամաւորական մի ընտրութիւնից մինչեւ միւսը, օրէնսդրական հիմնարկութեան միջոցով մէն մի կուսակցութեան ձեռք բերել մտադրած կամ հնարաւոր դատած պահանջներն ու ռեֆորմներն են:

Մեր նուազագոյն պահանջները բացառիկ բնոյթ եւ հանգամանք ունեն: Ո՛չ մի այլ ընկերվարական կուսակցութիւն չունի եւ չէ ունեցել այսպիսի ընդարձակ եւ ծրագրային ձեւ ստացած նուազագոյն պահանջներ: Սա իր պատմական պատճառն ու պատմութիւնն ունի: Մեր նուազագոյն պահանջների գաղափարը եւ սկզբնական կազմը ծագել է Բագուից այն ժամանակ՝ երբ Ռուսաստանի յեղափոխութիւնը իր եռման շրջանին մէջ էր եւ մէն մի ժողովուրդը կարծում էր տարբեր ուսումներ պիտի կարողանայ անել: Բոլոր արմատական եւ մասնաւանդ Ռուսաստանի բոլոր ազգերի ռամկավար տարրերի մտաւորականութիւնը համագումար գումարելու եւ իրանց պահանջները դնելու էին պատրաստուած: Իշխան Աղեքսանդր Արդուլթեան Պետերբուրգից կոպկաս՝ եւ առաջին անգամ Բագու եկաւ այդ առաջարկով որ մենք էլ՝ հայերս էլ մշակելով մեր պահանջները ներկայանանք տեղի ունենալիք համագումարին: Ահա այդ ժամանակ էր որ հաւաքուեցինք մի քանիսներ եւ կազմեցինք մի նախագիծ՝ որ նոյն ժամանակ նախ դրուեց կովկասեան Ռայոնական ժողովին առաջ, ուր չնչին փոփոխութիւնների ենթարկուելուց յետոյ՝ ստանալով կովկասեան նախագիծ անունը ուղարկուեց չորրորդ Ընդհանուր ժողովին, եւ չորրորդ Ընդհ. ժողովն էլ չնչին փոփոխութիւններ մտցնելով դուրս բերեց այն՝ որ այժմ մեր առաջ է դրուած, եւ որի խմբագրութիւնը մի օրինակ չէ եղել, երկու անգամ է կազմուել եւ այդ երկուսն էլ մեր առաջն է, եւ սրանցից մէկի մէջ՝ օրինակ, ապակեղրոնացումը կանտոնային՝ իսկ միւսը նահանգային է դնում: Սա ինքն ըստ ինքեան ապացոյց է թէ՛ Ընդհանուր ժողովի լուրջ մշակութիւնից եւ կեանքի ամբողջական ուսումնասիրութիւնից չէ բխած, այնպէս որ մենք այսօր չենք կարող իրաւամբ որոշել թէ՛ կանտոնայինն ենք հիմք ընդունելու թէ՛ նահանգայինը: Եթէ, օրինակ, նահանգային ապակեղրոնացումը ընդունենք, եւ աչքի առաջ ունենալով Թուրքիոյ տիրող պայմանները, պէտք է ընդունենք, պարտաւոր ենք նկատի ունենալ, որ նահանգային ապակեղրոնացման, նահանգային Սէյմի սաղմը այս երկրի օրէնսդրութեան մէջ կայ արդէն: Վնահանգային կազմակերպութիւն օ-

րէնքով՝ գոյութիւն ունեն նահանգային ընդհանուր ժողովներ, որոնք մանրանկարը պէտք է լինեն կեղրոնական ընդհանուր ժողովների, այսինքն կեղրոնական պատգամաւորական ժողովի, իրաւունքը ունին գծելու, մշակելու, պատրաստելու նահանգային բիւրջէն: Նահանգային ընդհանուր ժողովների այդ իրաւասութիւնը առ այժմ խորհրդակցական օրէնք ունի եւ ենթակայ է կեղրոնական վաւերացման: Եթէ առաջ տարուի իթթի-հատականների ընդունած նահանգային իրաւասութիւնների լայնացման սկզբունքով եւ ծրագրով, եւ խորհրդակցական իրաւասութիւնը բիւրջէտային օրէնսդրական իրաւասութեան փոխարկուի, ստացուած կը լինի նահանգային լայն ապակեղրոնացումը: Միայն թէ, այդ չէ Դաշնակցութեան պաշտպանած ապակեղրոնացումը: Վտանգաւոր է պաշտպանել այդպիսի աղօտ եւ անորոշ ապակեղրոնացում, ինչպէս ասուած է իթթիհատի կատարած համաձայնութեան մէջ: Ոչ մի տեղ հայ ժողովուրդը մեծամասնութիւն չի կազմում, նշանակութիւն չունի թէ Թուրքերը մեր ապրած նահանգներում քանի տոկոսն են կազմում: Ամբողջ Թուրքիոյ ազգաբնակչութեան 1/3ը Թուրք տարրն է ներկայացնում, բայց այդ թուի մեծագոյն մասը ընկնում է մեր բնակած վայրերի մէջ: Յամենայն դէպս, մեզ հետ ապրող մահմետական այլ ցեղերը աւելի սերտ կապ կամ շահակցութիւն ունեն Թուրքին հետ քան հայի: Ազգերի եւ կրօնների շահերի հակադրութիւնը գոյութիւն ունի եւ մի օրով փոխուելու, վերանալու հարցեր չեն: Հայը՝ իր թուի համեմատութեամբ՝ չի կարող երկրի իրաւահաւասարութեան արժանանալ, եթէ կանտոնային թէ նահանգային ապակեղրոնացման մէջ իրաւունքների եւ պարտքերի համեմատական՝ ըստ բնակակից ցեղերի թուի՝ բաշխում չլինի, համեմատական սկզբունքը օրէնսդրական պարտադրութիւն ընդունուած չլինի, առանց այդ սկզբունքի, կեղրոնացման դրութիւն մեզ համար աւելի տանելի կը լինէր քան ապակեղրոնականը, որովհետեւ կեղրոնում աւելի թույլ ազդեցութիւն կարող է ունենալ բնակակից ցեղերի մրցակցութիւնը:

Մեր նուազագոյն պահանջները՝ կովկասի վերաբերմամբ՝ ռուս յեղափոխութեան ներշնչած ուսումներից, իսկ Թուրքիոյ վերաբերմամբ՝ Բերլինի դաշնագրութեան Յարդ յօդուածի եւ Մայիսեան ծրագրի ազդած նախապաշարումներից ազատ չեն եղել: Ես չեմ ընդունում որ մեր ծրագրի մէջ երբեւիցէ սպրդած լինի մեծ Հայաստանի գաղափարը, բայց ինչպէս ասացի մտել է Յարդ յօդուածի եւ Մայիսեան ծրագրի նախապաշարումները որոնց երկուքն էլ անգործադրելի (են) եւ մեր ժողովրդին համար բարիքներ չեն կարող համարուել: Մենք որոշում տուեցինք եւ ընդունեցինք որ անջատականներ չենք, որ պետութեան ամբողջութիւնը եւ սահմանադրութիւնը պիտի պաշտպանենք, ի հարկէ աշխատելով տա՛նք նրան հետզհետէ ռամկավարական-ժողովրդական ձեւ:

Թուրքահայաստանի տերմինն էլ մի թիւրիմացութիւն եւ նախապաշարում է, եւ ոչ մի առնչութիւն չունի պատմական-աշխարհագրական տերմինների գործածութեան հետ: Եթէ այդպէս լինէր, մենք պիտի գործածէինք եւ կովկասի համար Ռուսահայաստան տերմինը, բայց խմբագրողները՝ անկասկած՝ գտնուում էին հոգեբանական այն տպաւորութեան տակ, որ այնտեղ Յարդ յօդուածի եւ Մայիսեան ծրագրի նման հարցեր գոյութիւն ունենալ չեն կարող, ուստի եւ չէին էլ կարող մտածել Ռուսահայաստանի նման սահմանափակումներով ղեկավարուել: Թուրքահայաստան տերմինը մեր գործունէութեան եւ նպատակին չէ կարող համապատասխանել, որովհետեւ մենք ընդունել ենք հայ աշխատաւորութեան շահերը պաշտպանելը, իսկ հայ աշխատաւորութեան կէսը, կամ աւելին, գտնուում է Թուրքահայաստանից դուրս Թուրքիոյ այլ մասերի մէջ, եւ մենք պաշտպանում ենք եւ պիտի պաշտպանենք այդ աշխատաւորութեան շահերը ամէն տեղ:

Մանօթ.— Հետեւեալ ճշդումը եղած է կովկասեան նախագծի մասին ընկեր Նիթրայի յայտնած մտքին նկատմամբ: Ոսկանապատի կեղը. կոմիտէն կազմած է կով. նախագիծը, որը անցաւ Ռայոնական ժողովից: Նոյն նախագիծը չէ ինչ որ Խորհուրդը հաստատել է: Անկախ կովկասեան Ռայոնական ժողովից՝ Արեւմտեան Բիւրոն էլ կազմել էր մի նախագիծ որը եւ ներկայացրեց Խորհրդին ի հաստատութիւն: Խորհուրդը մեծ մասամբ օգտուել է վերջինիս նախագծից, ի միջի այլոց աչքի առաջ է ունեցել եւ կով. ռայ. ժողովին էլ:

Որոշում է թողնել նուազագոյն պահանջների վերաբնութեան հարցը յանձնաժողովին:

Արեւմտեան Բիւրոյի շրջանի Ծ պատգամաւոր նորից հարց են բարձրացնում թէ ինչո՞ւ իրենց առաջարկին ընթացք չի տրուիր: Նախագահը նկատել է տալիս որ առաջարկը ժողովի նիւթ դարձնելու համար անհրաժեշտ է 15 ստորագրութեամբ բերել: Սօտ կէս ժամ վիճաբանութիւնները շարունակուում են գլխաւորաբար Խորհրդի իրաւասութեան շուրջը, իբրեւ դատական բարձրագոյն ատեանի: Մի մասը պնդում է որ Ընդհ. ժողովը պիտի լինի բարձրագոյն ատեանը եւ անոր վճիռը վերջնական, իսկ միւսը նկատում էր որ՝ ըստ կանոնագրի՝ վերջնական ինստանցիան Խորհուրդն է դատաբարձրում: Ընդհ. ժողովը, իբրեւ օրէնսդիր մարմին, չպիտի գբաղի դրանով: Ժողովը փակուում է:

Քարտուղար՝ Նախագահ

ՎԱՀԱՆ

Արտագրիչ՝ *ԱՍՏԻԿԵԱՆ*

Նիւստ 51րդ. Սեպտ. 11, Երեկոյեան 7-ի՞

Ներկայ են 25 ընկերներ. բացակայում է ընկ. Նիթրա: Նախագահում է ընկեր Ակնոււնի:

Օրակարգն է շարունակութիւնը նուազագոյն պահանջների քննութեան:

Նախագահ.— Նկատի ունենալով փոփոխուելիք կէտերը ժողովի ուշադրութիւնը հրաւիրեց արտայայտուելու, այդ առաջարկներն ընդունելու կամ չընդունելու մասին իրանց պատճառաբանութիւններով:

Երուանդ.— Մրագրի-կանոնագրի մէջ չի կարելի շուտով փոփոխութիւններ մտցնել մասնաւանդ որ մարմիններն այդ մասին կոնկրէտ առաջարկներ չեն արել, որովհետեւ չեն գբաղուել դրանով, թէեւ օրակարգի մէջ եղել է: Պիտի մտցնել փոփոխութիւններ, ոչ ժամանակաւոր. իսկ լուրջ աշխատանքի համար ժամանակ եւ մանրակրկիտ ուսումնասիրութիւն պէտք է. առանց մի փոփոխութիւն մտցնելու, ընտրել մի մասնաժողով որն այդ գործով գբաղուի, նոր խմբագրութեամբ ուղարկի բոլոր մարմիններին ի քննութիւն, միւս կողմից կուսակցութեան մամուլի մէջ եւս կարելու կէտերը լայն կերպով վիճաբանուեն, յետոյ նոյն մասնաժողովը այդ բոլորը մի մշակուած տեղեկագրով ներկայացնէ յաջորդ Ընդհ. ժողովին:

Արագիւ.— Գտնում է Երուանդի առաջարկը ընդունելի եթէ միայն կ'որոշուի պատֆորմով գբաղուել:

Ակնոււնի, Գիսակ.— Կը շեշտեն փոփոխութիւնների անհրաժեշտութիւնը վաղուան գործունէութեան համար. եւ թէ կա՞ն յետագայ գործունէութեան խոչընդոտ յօդուածներ. չի կարելի նոյնութեամբ թողնել. առաջարկուած փոփոխութիւններին պիտի մօտենալ այդ անհրաժեշտութեան տեսակէտից:

Բարթոլեւ Պիեռ.— Կը պնդեն որ մասնաժողովի պիտի յանձնել, նրանց ժողովի կողմից տալով դիրեկտիւներ եւ նկատողութիւններ:

Պերճ.— Թէեւ պայման էր դրուած որ այս խնդիրը լեկալիզացիայի հետ կապ չպիտի ունենայ բայց ինչքան ձեւականօրէն խուսափենք, իրապէս ամէն փոփոխութիւն այդ խնդրից կը բխեցուի:

Արագիւ.— Այս հարցը դրուած է եղել մի քանի տեղերում Սահմանադրութիւնից մի քանի ամիս վերջ, այնպէս որ լեկալիզացիայի հետ կապ չունի, այլ այն՝ որ մի քանի գործիչ ընկերներ նկատել են որ առանց մի քանի փոփոխութիւնների, չի կարելի այդ ծրագրի պահանջների վրայ պնդել: Այրանիայի եւ Արաբիայի պահանջած աւտոնոմիայի կառավարական ձեւը մեզ համար չարիք է, որովհետեւ մեր բնակավայրերի մէջ այդ կարգերի գոյութեան պարագային մահմետական յետամնաց մեծամասնութիւն կազմող մասսան պիտի չարիք դառնայ հայ ժողովրդի համար: Այդ վեց վիլայէթների ինքնավարութեան խնդիրը պիտի վերացնել ոչ անջատական

միտք պարունակելուն առարկութեամբ այլ որովհետեւ չի բխիր հայ ժողովրդի իրական շահերից: Ընդհ. պետութեան նահանգային վարչական ապակեղրոնացումը եւ օգտակար եւ հասունացած է: Չենք կարող մեր միջավայրի համար դնել այնպիսի պահանջներ որ պիտի տարածուի հարեւանները վրայ, մինչ նրանք բոլորն էլ հակառակ են այդ պահանջներին:

Անտոն.— Առաջարկուած փոփոխութիւնները հիմնական-ծրագրային են, մինչ մենք ընդհանրապէս այդ բոլորի մասին այս ժողովից դուրս չենք էլ մտածել: Ազգերի ինքնորոշումը ծրագրային խնդիր մը չէ՝ դա էքստերիտորեալ հարց եւ կուլտուրական ինքնավարութեան ամբողջութիւնն է: Եթէ այդպէս անցողակի սկսենք այս հիմնական կէտերի փոփոխութեամբ զբաղուել, երկրորդականներն ինչո՞ւ ենք թողնում: Եթէ կան թերութիւններ, արդիւնք են անցեալ ժողովին այդ խնդիրների վրայով շտապ անցնելուն. այժմ նոյն մեթոտով շարժուելով, աւելի մեծ սխալներնի մէջ կ'ընկնենք: Այդ հիմնական խնդիրներով լրջօրէն պիտի զբաղուել: Այժմ պիտի կրկնել որոշ կերպով մի որոշում. 1904-ի ժողովին բանաձեւ անցաւ որ մենք անջատողական չենք եւ պարզ յայտարարել այդ:

Եսպոնացի.— Այս հիմնական խնդիրներով ոչ միայն անցողակի չպիտի զբաղուել այլեւ չպիտի մօտենալ նրանց ուրիշների ձգտումներին համապատասխանեցնելու տեսակէտից. այդ մտադրութեան համար միայն կարելի է պլատֆորմին մօտենալ: Մեծ եւ լուրջ վիճաբանութիւնների խնդիր է նուազ[ագոյն] պահանջների մեր գործելավայրին համապատասխան չլինելը:

Չուլայ.— «Թուրքաց Հայաստան» բառի փոփոխութիւնը հիմնական չէ որովհետեւ ոչ մի տարբերութիւն չկայ Թուրքիայի միւս մասերի եւ Հայաստանի մեր գործունէութեան մէջ, ուրեմն եւ մասնակի պահանջներ չպիտի ունենանք եւ այդպիսի յենարան-տերրիտորիա չկայ մեզ համար:

Երուանդ.— Միտալ է այդ տեսակէտը. այդ տերրիտորիայի համար յատուկ քաղաքական պահանջներ արժէք են հէնց հայ աշխատաւորութեան սոց. ձգտումների համախմբման եւ գործնականութեան համար:

Գիսակ.— Ինչո՞ւ նոյն ծրագրի մէջ յիշուած է Անդրկովկաս փոխանակ Ռուսահայաստանի. միթէ՞ Տիգրանակերտ-Պարբերդը աւելի Հայաստան են: Եթէ նկատումներով [է] այդպէս դրուած, այժմ նոյն տեսակ նկատումներով պիտի առաջարկուած փոփոխութիւններն ընդունել:

Ակնունք.— Անջատման դէմ որոշում հանելը բոլորի հաւանութիւնն ստացաւ. բայց միւս խնդիրների քննութիւնն էլ պէտք է, մերձեցման, համերաշխութեան համար. թուրքերը միշտ երկիւղ են անում որ մեր ուշքը կեդրոնացել է մի կէտի վրայ, այդ թ վիլայէթների վրայ: Պիտի ընդհ. պետական քաղաքական պահանջներով հրապարակ իջնել յաջողութիւն ունենալու համար: Մի

տարուայ նոր կեանքը մեզ պիտի հասկացրած լինի որ դնենք պարզ եւ որոշ քաղաքականութիւն: Իսկ դա՝ արած կը լինենք առաջին յօդուածից հանելով «քաղաքական-տնտեսական ազատութիւն» բառերը:

Նախագահ.— Քուէարկութեան պիտի դնել մի քանի խնդիրներ վիճաբանութիւններուն ուղղութիւն տալու համար:

- 1) Ընդհանրապէս այս ժողովը իրաւունք ունի փոփոխութիւններ մտցնել նուազագոյն պահանջների մէջ (անցաւ՝ քուէարկութիւնով)
- 2) Առաջարկուած կէտերը հիմնական են (4+, 1-, 20 ձեռնպահ)
- 3) Ընտրել մի յանձնաժողով մշակուած փոփոխութիւնները բերելու այս ժողովին (9+)
- 4) Պլատֆորմով զբաղուել (4 ձայն կողմնակից)
- 5) Փոխել միայն ա. յօդուածի «քաղ. եւ տնտես. ազատութիւն» բառերը (10 ձայն +)
- 6) Անջատման դէմ հանել մեր որոշումն եւ մտցնել ծրագրի մէջ (11 կողմնակից ձայն)
- 7) Ընտրել յանձնաժողով դիրեկտիւներ տալով մշակելու նուազ. պահանջները յաջորդ ընդհ. ժողովին ներկայացնելու համար (2 +)

8) Ընտրել 6 հոգինոց յանձնախումբ որը այս ժողովին բերի անհրաժեշտ փոփոխութիւնները (17 ձայն+): Ընդունուեց): Ընտրուեցին՝ Ռոստոմ, Գիսակ, Երուանդ, Անտոն, Նիթրա, Սարգիս:

Անտոն.— Կ'առաջարկէ մի յատուկ նիստ նուիրել այն խնդրին թէ ի՞նչ պատճառներով կուսակցութիւնն սկսել է քայքայուել:

Նախագահ.— Ժողովին յայտնում է որ Կովկասից եկած մի նամակից կ'իմացուի որ բանտարկեալների գործերը դատարանին կ'անցնի, պիտի նկատի ունենալ ծախսերի խնդիրը:

Եսպոնացի.— Ժողովը կոնկրէտ ոչինչ չստաց կուսակցութեան այնտեղի կացութեան համար անելիքների մասին:

Նախագահը թէ Անտոնի եւ թէ Եսպոնացու առաջարկները գտնում է օրակարգից դուրս եւ թողնում յաջորդ նիստերից մէկում նրանցով զբաղուելը:

Նախագահը յայտնում է որ վիճաբանութեան կը դնէ արեւմտ. շրջանի 9 պատգամաւորների դիւանին տուած թղթի մէջ դրուած հարցը, որ Խորհրդի դատական վրձիւներն այս ժողովին պիտի բեկանուին կամ սանկցիա ստանան:

Ռուբէն եւ Յովնան.— Կը նկատեն որ ընկերները կըրնային այդ հարցը յարուցանել, բայց չպիտի իրանց պատգամաւորին արգիլէին Խորհրդին մասնակցել ինչպէս որ այդ մասին ոչինչ չեն յիշատակած իրանց գրութեան մէջ. պիտի պարզել թէ ինչպէս է եղել չմասնակցելու կարգադրութիւնը եւ ժողովը այդ երեւոյթի մասին արտայայտուի:

Նիթրա եւ Պերճ.— Պահանջ դնող 9 հոգին միայն նամակի համար են հաւաքաբար պատասխանատու իսկ վերջին որոշումը, եթէ եղել է, անհատներն են պատասխանատու:

Ամատունք.— Մասնաւոր խօսակցութիւններից երեւաց որ իբր ես եմ եղած պատգամաւորին յայտնողը որ չմասնակցի. թէ եւ ես հակառակ եմ որ այդ Խորհրդին մասնակցի մեր պատգամաւորը բայց իրեն ոչինչ չեմ ասել. Ջելալեանը միայն ասել է որ դրութիւնն անորոշ է: Չմասնակցելու խօսք եղած է բայց որոշում չի տրուել:

Վանիկ.— Օրինականն այն կը լինի որ կանոնագրին հետեւելով, Խորհրդի որոշումը լսելուց յետոյ մենք մեր կարծիքը կրնանք յայտնել եւ եթէ հարկ կը տեսնենք այդ խնդրի վերաքննութիւնը պիտի դնենք Խորհրդին կամ ըստ կանոնագրի սրանից յետոյ լինելիք բարձրագոյն դատական ատեանին, որի իրաւունքն է վերաքննել, կամ ոչ: Այստեղ խնդիրը մի կոնկրէտ հարցի շուրջ կը դառնայ, այն է՝ Վասպուրականի գործի: Բողոքողների ցանկութիւնն է այդ գործը ենթարկել Ընդհ. ժողովի սանկցիային, կամ բեկանման կամ վերաքննութեան. այդ մտքով էլ սկզբի ժողովների մէջ արտայայտուած են, իսկ ժողովը որոշեց լսել միայն ի գիտութիւն:

Ամատունք.— Այդպիսի կարեւոր հարցերի լուծումը պիտի ենթարկուի Ընդհ. ժողովի պէս հեղինակաւոր մարմնի վաւերացման կամ բեկանման: Ընդհ. ժողովը պիտի ունենայ վետոյի իրաւունք:

Երուանդ.— Ընդհ. ժողովից դատերի բացարձակ անջատումը հետեւանք է անցեալի դառն փորձերի. անչափ եռանդ կը սպառի եւ զբաղմունք, [որ] բուն խնդիրներն կը մնան անլուծելի. միւս կողմից էլ դատական խնդիրների մասին այսպիսի ժողովներում հնարաւոր չէ եզրակացութեան գալ: Պիտի ղեկավարուել անցեալ ժողովի կարգադրութեամբ եւ կարիք չկայ շեղում անելու նախ քան կանոնագրի փոփոխութիւնը:

Դուսման.— Բարձրագոյն ատեանի վճիռն այն ժամանակ կը բեկանուի երբ ներկայացուի ի հաստատութիւն, իսկ մեր ներկայ կանոնագրով Ընդհ. ժողովը այդ իրաւունքը չունի:

Աստիկեան.— Եթէ տառացի հետեւող լինենք կանոնագրին, ներկայ Խորհուրդն անօրինական չէ եւ գործի յաջողութեան համար ընդունուեց նրա օրինականութիւնը. Խորհուրդը բարձրագոյն ատեան լինելով հանդերձ, Ընդհ. ժողովը չէ կարող ուղղակի չարտայայտուիլ եւ չվաւերացնել նրա կարեւոր ընդհանուր նշանակութիւն ունեցող որոշումները: Անվստահութեան խնդիր չկայ, այլ Խորհուրդը կրնայ սխալուիլ: Վանի խնդիրը՝ ոչ միայն ընդհ. կուսակցական, այլ համագաւթին մի խնդիր է, որով պիտի բոլորս զբաղուինք, գոնէ որոշ եզրակացութեան մը գալու համար, որպէսզի այդ խնդրի առթիւ ծագած դժգոհութիւններին կարելի լինի վերջ տալ: Խորհրդի իրաւասութեան յօդուածների մէջ

չկայ, որ նրա որոշումները վերջնական են: Պիտի անպայման վճիռը ենթարկել Ընդհ. ժողովի քննութեան:

Աւարայ.— Խորհրդի օրինականութիւնը ընդունելուց եւ մասնակցելուց յետոյ այժմ մի ուրիշ պայմանի չընդունուելու պատճառով ապօրինի կը լինի օրինականութեան հարց յարուցանելը:

Նիթրա.— Ճիշտ է որ Ընդհ. ժողովը դատարան չէ, բայց բարձրագոյն համարառու մարմին է եւ իր իրաւունքն է օգտուել կամ ոչ այդ իրաւունքից: Խորհուրդը պիտի գումարուի Ընդհ. ժողովից առաջ եւ իր աշխատանքների մասին տեղեկագիր-հաշիւ պիտի ներկայացնի այս ժողովին: Այս ժողովը բնականաբար պիտի արտայայտուի իր լսած բոլոր տեղեկագիր-հաշիւների մասին, ինչպէս նաեւ Վանի գործի մասին պիտի տրուի տեղեկագիր եւ ժողովը պիտի արտայայտէ իր կարծիքները, թէ Խորհուրդը որչափ է ճշտութեամբ կատարել իրա պարտականութիւնները: Խորհուրդը «կը համարուի» եւ ոչ թէ «է» բարձրագոյն ատեան: Միւս կողմից Խորհուրդը կազմուած է հաշուետուներէ, որից կրնայ փոխադարձաբար զեղծումներ առաջանալ: Ընդհ. ժողովի իրաւունքն է Խորհրդի որոշումներին քննադատօրէն վերաբերուիլ:

Ռուբէն.— Խորհրդի կազմի եւ իրաւունքների բացառութիւնները բռնագրօսիկ են: Թէ եւ ձեւական շեղում եղել է, բայց հական շեղում չկայ իսկ դրա հետեւանքն այն չպիտի լինի որ անմիջապէս ոչնչացնենք Խորհրդի իրաւասութիւնը: Փոխելու իրաւունք ունինք, իսկ այժմ՝ նա իր իրաւասութեան մէջն է: Եթէ ամէն ինչ Վասպուրականի գործի համար է, ոչ թէ ապօրինութիւն պիտի անենք, այլ յատուկ որոշում տանք: Այն առարկութիւնը թէ պարլամենտական երկրներում օրէնսդրական մարմինները զբաղում են դատական գործերով, սխալ է, նրանք միջամտում են երբ կատարուած է լինում հակասահմանադրական ակտ, որն ուղղակի խախտում է այդ հիմնարկութիւնների հիմքերը: Այդպէս էլ Ընդհ. ժողովը իրաւունք կ'ունենայ զբաղուելու այդ գործով երբ տեսնի որ Խորհրդի որոշումը շօշափել է կազմակերպութեան հիմքերը:

Ռոստոմ.— Ընկեր Աստիկեանը մօտեցաւ բուն խնդրին, որի պատճառով յարուցել են այս իրաւասութեան հարցը. դա՝ Վանի գործն է: Նրա մասին 4-րդ նիստի մէջ 2 որոշում կայ. մէկ՝ դատը տեսնել Խորհրդի մէջ, երկրորդ՝ տեղեկագիր-գեկուցում-քննադատութիւն Ընդհ. ժողովում: Եթէ այդ մասին արտայայտուելուց զատ ուրիշ նկատումներ չկան, հին որոշումը բաւարար է: Ընդհ. ժողովի դատերի մասին տուած որոշման հոլութիւնն այն է որ Ընդհ. ժողովը դրանցով չզբաղուի:

54.- «Վանի խնդիր»ը կը վերաբերի 1908 թ. Փետրուարին Վասպուրականի գիմնապահեստներու գրուման, Դեղքի Դաւոյի մատուցեան եւ այդ առթիւ կուս. մարմիններուն պատասխանատուութեան հարցի քննութեան:

ինչպէս կ'ուզէք կազմենք այդ խորհուրդը, կամ դատական մի մարմին, միայն թէ խնդիրը չգրուի Ընդհ. ժողովին:

Ձեռք.— Սթէ խորհուրդն առաջ կայանար, տեղեկագիր պիտի գրէր Ընդհ. ժողովին, այժմ պիտի կատարէ նոյնը, միաժամանակ Ընդհ. ժողովը պիտի ասի իւր խօսքը, ինչպէս ամէն տեղեկագրի մասին անում է:

Աստուծաբան.— Իմ կարծիքն է, այն էր որ Վասպ-ի գործերը Ընդհ. ժողովում պիտի քննուէր, բայց հակառակը որոշուեց: Գալով այս խորհրդին կարելի է ասել, մինչեւ այժմ եղածներից աւելի լրիւ է եւ օրինաւոր: Բայց հարցը ծագել է նրանից որ այստեղ Վասպուրականի խնդրին մտնենու՞մ են կանխակալ կարծիքներով եւ որոշ միտումով: Պիտի ուղղամտութեամբ մօտենալ եւ ոչ անձնաւորութիւններ նկատի առնել:

Պերճ.— Սարգիսը քանիցս այնպէս կ'արտայայտուի կարծես յեղափոխական ուղղամտութիւնը եւ անկեղծութիւնը իրեն է առանձնաշնորհուած: Այստեղ կան ծանր ամբաստանութիւններ որոնց ոչ թէ հաստատումը այլ պարզարանութիւնն է մեր ցանկութիւնը: Այստեղ դրամի եւ գէնքի խնդիրը չէ որ կարեւորութիւն ունի, այլ ազգային բարոյականութեան խնդիր կայ եւ դէպքը ոչ թէ միայն համազգային այլեւ միջազգային բնոյթ ունի: Խորհրդին գալով չեմ կարող մտքովս անցկացնել դաշնակցական կազմի մը ամբողջական անբարոյացում, բայց չեմ էլ կարող ընդունիլ, որ գործ մը մէկ դատարանէ միայն անցնի. առանց նախադատի խորհուրդը վերջնական ատեան չպիտի ճանչցուի Ընդհ. ժողովը թող ընդունած կանոնադրային սխալն ուղղէ աթմ, երբ կայ այսչափ հական խնդիր մը: Գործի արագացման, կուսակցական բարոյականութեան եւ մեր մտքերու մաքրագործման համար անհրաժեշտ է այդ: Այնպէս որ եթէ Ընդհ. ժողովը բաւարար չգտնէ տրուելիք որոշումը, քննելու իրաւունք ունենայ:

Պերճ.— Խնդիրը ձգձգում է այն պատճառով որ 2 կողմերն էլ ունեն իրենց լուրջ հիմունքները: Խորհրդին վերաբերեալ կանոնադրական բաժինը խառն է: Ընդհ. ժողովը դատական մասը օրէնսդրական է անջատելով մի քայլ առաջ է գնացել եւ դա պիտի համեմատել ուրախալի երեւոյթ: Իսկ բերել կրկին միացնել, կր լինի եւ հակախառնարանական եւ հակասահմանադրական: Բայց մի ուղղում մտցնելով, Ընդհ. ժողովն իր որոշումով չի բերեղացրել դատական կազմը. նրա մի մասը կազմուած է վարչական մարմիններից, սա՛ անարդար բան է: Սա մի պակասութիւն է որն անպայման պիտի շտկել: Սթէ դատի խնդիրները երկրորդական լինէին, կարելի էր այս անգամ էլ անցնել առանց անմիջական նկատողութեան: Բայց Վանի գործի համար, պիտի մի ելք գտնել, որ ցունէ այս ժողովի կազմը որոշումից դժգոհ չլինի: Բողոքողը ամբողջ մի շրջան է. բնտրելու է մի մասնաժողով, որն լուրջ ուսումնասիրելուց յետոյ

խնդիրը դնէ Ընդհ. ժողովին. եթէ չկարողացանք եզրակացութեան գալ, թող մնայ յաջորդ Ընդհ. ժողովին, որը կ'որոշէ ինչ անել:

Աստուծաբան.— Անցեալ Ընդհ. ժողովի դառն փորձերը հաստատեցին խորհրդի այդ ֆունկցիան, թէ եւ ճիշտ է Պերճի նկատածը, բայց այս ժողովը իր դրած կանոններով չպիտի ղեկավարուի, այլ՝ նախորդով: Վասպ-ի գործի մասին պիտի լսել եւ կարծիքներ յայտնել, քննադատել: Բիւրոյի քննիչների տեղեկագիրն էլ մասամբ նախնական դատարան կրնայ լինել:

Քուէարկութեան հետեւեալ հարցերը.
ա) Խորհուրդն օրինական է (ընդունուեց):
բ) Ընդհ. ժողովի սանկցիայով հաստատուի Խորհրդի որոշումը (8 ձայն +, 11 ձայն -):
գ) Մասնաժողովի յանձնել (6 ձայն կողմնակից: Չանցաւ):

Նիստը փակուեց ժամը 2-ին:

Քարտուղար՝ Նախագահ ՎԱՆԻԿ՝

Նիստ 52. Սեպտեմբեր 12

Ժողովը բացում է առաւօտեան ժամը 8.30-ին նախագահութեամբ ընկեր Ռուբէնի: Ներկայ են եւ նոր ժամանած ընկերներ Աւերեան, Կիլիկեան, Մարգարեան եւ Վահան (Գայլ) Սեբաստիոյ ներկայացուցիչը:

Օրակարգ.— Կանոնագրի վերաքննութիւն: Ցանձնաժողովի կողմից գեկուցանում է ընկեր Երուանդ:

Ժողովը կանոնագրի առաջին մի քանի կէտերը քննում է եւ յանգում այն եզրակացութեան, որ Ընդհանուր ժողովում անկարելի է կատարել այդ շխատանքը ժամանակի սղութեան պատճառով:

Քուէարկութեան է դրում հետեւեալ բանաձեւը.
«Ժողովը որոշեց կանոնագրի քննութիւնը յանձնել մի մասնաժողովի, որը այն վերաքննելով կը ներկայացնէ խորհրդին ի հաստատութիւն»: 18 ձայնով անցնում է:

Ժողովը անհրաժեշտ է համարում տալ յանձնաժողովին մի քանի դիրեկտիւներ:

Աստուծաբան.— Գտնում է որ ինչպէս Տաճկաստանի նոյնպէս եւ Ռուսաստանի պայմանները փոխուել են. կանոնագիրը քննելիս նկատի պիտի ունենալ այդ երկրներէ քաղաքական եւ այլ փոխուած պայմանները. օրինակ այժմ, չնորհիւ Թուրքիայի համեմատաբար տանելի պայմանների, այժմ աւելորդ է Թուրքիոյ համար թողնել առանձին գլուխ:

Ռուբէն.— Գտնելով Կովկասի քաղաքական եւ կազմակերպական վիճակը համապատասխան Թուրքիոյ նախկին վիճակին, յայտնում է կովկասեան արտակարգ

աշտնական ժողովի որոշումը՝ Կովկասի վերաբերեալ, ընդունել եւ գործադրել կանոնագրի Թուրքիոյ վերաբերեալ գլուխի:

Վարդգէսը առաջարկում է ունենալ մի ուրիշ գաղտնի կանոնագիր էլ, գտնելով որ ներկան իր մի քանի կէտեր պարունակելու պատճառով — որոնցից իլլեգալութեան հոտ է բուրում — անկարելի է գործադրել: Պատրաստելիք կանոնագիրը պիտի յարմարեցնել քաղաքական փոխուած պայմաններին:

Վանիկ եւ Բալկանի պատգամաւորները գտնում են կանոնագիրը տարբեր ու բացառիկ Թուրքիոյ վերաբերեալ՝ նոյն ցենզի եւ վարչական մարմինների ընտրութեան խնդրում: Նրանց կարծիքով պիտի ուշադրութեան առնել այդ կէտերը միայն:

Մի քանի ընկերներ շեշտում են այս հանգամանքը. որքան որ Թուրքիոյ պայմանները փոխուած լինեն, բայց եւ այնպէս տնտեսական կեանքը մնում է նոյնը եւ առաջարկում են թողնել նախկինը: Հնարաւոր են համարում ռէակցիայի գլուխ բարձրացնելը Թուրքիոյում, ինչպէս եղաւ Կովկասում եւ Ռուսաստանում:

Աստուծաբան.— Գտնում որ ժողովուրդը միշտ էլ բարձր է նիւթապէս եւ պատրաստ աջակցելու՝ ուր գործ, շարժում եւ յեղափոխական գործունէութիւն կայ. առաջարկուած դրամական ցենզի վերաբերեալ բացառիկ պայմանները Թուրքիոյ վերաբերեալ չընդունիլ:

Ապա որպէս դիրեկտիւներ յանձնաժողովի համար, քուէարկում եւ անցնում են հետեւեալ կէտերը.

1) Կանոնագրից Թուրքիոյ վերաբերեալ բացառիկ գլուխը հանելով բոլոր երկրների դաշնակցական կազմերի համար պատրաստել մի ընդհանուր կանոնագիր:

2) Նկատի ունենալով երեք հատուածների քաղաքական վիճակը, որոնք անկարելի են դարձնում յաճախ կանոնագրի ամբողջական կիրառումը, Ընդհանուր ժողովը անխուսափելի է գտնում, պահպանելով հանդերձ մարմինների սիստեմի նոյնութիւնը, թոյլատրել վարչական մարմինների ընտրութեան եւ ցենզի վերաբերմամբ անելու շեղումներ եւ համաձայն երկրի քաղաքական երեւումը պայմանների՝ դնել այդ առթիւ ընդհանուր ծանօթութիւններ:

Ծանօթ.— Ռայոնական ժողովներին թողնել որոշելու անդամների եւ դրամականի վերաբերեալ ցենզը, նորմալ ցենզի կէտը ընդունելով իբր minimum:

3) Կանոնագիրը քննող մասնաժողովին տալ զանազան մարմիններից եկած ցուցմունքները՝ Ընդհանուր ժողովի դիրեկտիւների հետ, յանձնարարելով կանոնագիրը վերաքննել եւ IV եւ V Ընդհանուր ժողովների գծած սահմաններից դուրս չգալ:

Ժողովը փակում է ժամի 11 1/4-ին:

Քարտուղար՝ Նախագահ ՉՈՒԼԱԼ

Նիստ 53. Սեպտ. 12 երեկոյեան

Նիստը բացուեցաւ նախագահութեամբ ընկեր Ակունի: Կարդացում է 42, 43 եւ 44 նիստերուն արձանագրութիւնները. անոնցմէ երկուքը վաւերացուեցաւ, իսկ 43րդի արձանագրութիւնը յանձնուեցաւ ընկերներ ժիրայրի եւ Վանիկի, անբաւարար նկատելով ներկայացուածը:

Կուսակցութիւններու համերաշխութեան եւ համագործակցութեան մասին դիրեկտիւներ տրուած ըլլալով նախորդ ժողովներուն մէջ, համապատասխան բանաձեւը մշակուած էր: Այս առթիւ վիճաբանութեան դրուեցաւ հայ խմբակցութեանց կամ կուսակցութեանց հետ համագործակցելու, համերաշխելու առաջարկը, գործակցացուցած էին պատգամաւոր ընկերներէն ու մանք: Կարդացուեցաւ IVրդ Ընդհ. ժողովի կողմէ բանաձեւուած որոշումն այդ հարցի մասին, յետոյ նախագահութիւնը ըրաւ համառօտ տեսութիւն մը, Հ.Յ.Դ. ի հանդէպ ցոյց տրուած վերաբերումներու շուրջը՝ գոյութիւն ունեցող հայ խմբակցութեանց կողմէ, սկսեալ Փարիզի քոնկրէնէն մինչեւ այժմ, անդրադառնալով միաժամանակ մերձեցման անցեալի փորձերուն:

Համագործակցութեան կամ համերաշխութեան մը պէտքը շեշտող ընկերները արտայայտուեցան հետեւեալ տեսակէտներով.

Թուրքիոյ բոլոր կարեւոր կենտրոններուն մէջ, գոյութիւն ունին զանազան հայ խմբակցութիւններ — Սահմ. Ռամկավար եւ մասնաւորապէս հնչակեաններ — որոնք այսպէս թէ այնպէս իրենց որոշ ներգործութիւնն ունէին մեր հասարակական կեանքին մէջ: Գոյութիւն ունեցող փոխադարձ հակամարտութիւնները շարքերու մէջ՝ ինչպէս օրինակ ինքնապաշտպանութիւն, դպրոցական հարց եւ նման օգտակար ձեռնարկներ — կը վտանգուին:

Կուսակցական հակառակութիւնները սկսած են մուտք գործել ընտանեկան յարկերու մէջ եւայլն եւ խանգարել ընտանեկան, հասարակական ներդաշնակ կեանքը: Ակնարկուած խմբակցութեանց վարիչ ուժերը չէ որ աչքի առջեւ պիտի ունենանք՝ այլ հետեւող շարքերը, որոնք յար եւ նման են մերիներուն. անոնց մէջ եւս չեն պակսիր մաքուր եւ անձնուէր տարրեր: Պիտի նկատի առնել հայ ժողովուրդի շրջապատող պայմանները եւ անոր ազգային գոյութեան վտանգի հարցը, կուռի վայրերուն մէջ: Ընկերներէն մին գտնում է որ վերջերս ալ Ատանայի մէջ — դաշնակցականներուն կողքին կեցած կուսեցան նաեւ հնչակեան գիւնուորները, մինչ իթ-թիհատեան սպաներ կ'առաջնորդէին կոտորող խուժանին: Արդ, երբ իթթիհատի հետ կը համերաշխինք, աւելի քան բարոյական պարտաւորութեան տակ կը գտնուինք եւ համերաշխելու՝ հայ խմբակցութիւններուն հետ:

Մոռանալու չէ նաեւ այն հանգամանքը, որ ժողովուրդը այլեւս զգուած է կուսակցական կռիւներէ: Որպէսզի գործնական հողի վրայ դրուի համերաշխութիւնը՝ միջկուսակցական ատեաններէ հետ միաժամանակ նախաձեռնելու է խորհրդակցական ժողովի մը գումարման, ուր նկատի առնուի համերաշխութեան հարցը եւ համաձայնութիւն կայանայ քանի մը հական նշանակութիւն ունեցող խնդիրներու շուրջը, ինչպէս, օրինակ, ինքնապաշտպանութիւն, կուլտուրական ձեռնարկներ եւ այլն: Այս բոլորին իրականացման համար, անհրաժեշտ է որ կուսակցութեանց արտայայտիչ մարմինները նախ համաձայնին փոխադարձաբար եւ համապատասխան հրահանգներ ուղղեն իրենց պատկանեալ շարքերուն, այլապէս ամէն ջանք պիտի մնայ ապարդիւն եւ պիտի շարունակէ գոյութիւն ունենալ նոյն անմխիթար կացութիւնը: Երբ բոլոր այս փորձերէն յետոյ, դարձեալ արդիւնք մը ձեռք չձգուի, մեր յեղափոխականի պարտականութիւնը կատարած կ'ըլլանք գէթ: Այս արտայայտութեանց դէմ եղան հետեւեալ պատճառաբանութիւնները.

Քաղաքական կուսակցութեանց գոյութիւնը հայ կեանքին մէջ կարեւոր է եւ անոնց փոխադարձ գործակցութիւնը՝ նոյնպէս կարեւոր: Այդ ուղղութեամբ քայլեր շատ առնուած են անցեալի մէջ, բայց մնացած են ապարդիւն: Կուսակցական կռիւները արդիւնք են մեր հասարակութեան անգիտակցութեան եւ կուլտուրական զարգացման ցած աստիճանի. ժողովուրդի մաքուր տարրերը հաւաքուած են այն կուսակցութեան շուրջը, որ առաջին անգամ բոյն դրած եւ կենդանի գործ սկսած է երկրի մէջ. Մեծ-Հայքի մէջ, ուր Դաշնակցութիւնը շօշափելի եւ կենդանի գործերով արտայայտուած է, գոյութիւն ունեցող հնչակեանները ձուլուած-միացած են անոր մէջ. Փոքր-Հայքի մէջ, հնչակեանների գոյութիւնը պատմական նոյն իրողութեան արդիւնք է: Համերաշխութիւնը իրականացնել կարեւարու համար, անհրաժեշտ է վարի շարքերուն մէջ աշխատանք սկսիլ: Իսկական տարրերը անոնք են, մինչ վերի շարքերը մեր հրահանգին կամ աշխատանքներուն պիտի նային յետին մտածումներով եւ արդէն հնչակեան վերին շարքերուն կողմէ համերաշխութեան շուրջը յարուցուած աղմուկները, սկիզբէն մինչեւ վերջ, այդ հոգեբանութեան արտայայտութիւնն են. անոնց նպատակն է եղած համերաշխութեան խնդիրը շահագործել ի վնաս Դաշնակցութեան. ինչ որ համերաշխութեան ի նպաստ արձագանգ կու տան Դաշնակցութեան այդ շրջանները մասնաւորապէս, որոնք սկիզբէն ի վեր ամէնէն աւելի կատաղի պայքարը մղած են անոր դէմ: Յետոյ, համերաշխութեան ի նպաստ ընդհանուր որոշումներ անցած են արդէն նախորդ նիստերուն մէջ, որոնց համաձայն կարելի է ընթանալ: Եթէ Թուրքիոյ մէջ կան՝ այդ պարագային հարկ կ'ըլլայ ճշդել անոնց քա-

նակը, որակը եւ գտման հարց դնել: Իսկ ինչ կը վերաբերի կողակասին, հայ իրականութեան մէջ գոյութիւն ունեցող կուսակցութեանց վրայ ընդհանուր ակնարկ ընելէ վերջ, ընկերներէն մէկը կը գտնէ որ այժմ հայ առանձին կուսակցութիւններ չկան, մասնաւորաբար հնչակեաններ, հետեւաբար համերաշխութեան խօսք ըլլալ չի կրնար:

Սեբաստիոյ ընկերը մասնաւորաբար շեշտեց այն հանգամանքը թէ՛ իրենց կողմէ եւս վերջերս ուժեղ ջանքեր գործ դրուած են, բայց իրարու քով գայու պարագային իսկ՝ անյաջողութեան մատնուած են. նոյնիսկ հնչակեան շարքերը իրենք իրենց մէջ կազմակերպուեցան իբրեւ բաժնուած հատուածները միացնելու համար, բայց շուտով մոռցան. նոյն իսկ ինքնապաշտպանութեան շուրջը կարելի չեղաւ համաձայնութիւն մը գոյացնել:

Վիճաբանութիւնները այս ուղղութեամբ շարունակուելէ յետոյ, մշակուելիք բանաձեւերու մէջ մտցնելու համար հետեւեալ դիրեկտիւները քուէարկուեցան ձայներու 2/3-ի մեծամասնութեամբ:

«Ընդունելով որ հայկական իրականութեան մէջ գործող քաղաքական կուսակցութիւններու հակամարտութիւնը վնաս կը հասցնէ ժողովրդի ընդհանուր շահերուն, Ընդհանուր ժողովը կը յանձնարարէ իր բոլոր մարմիններուն՝ ամէն ջանք գործ դնել՝ յաջողեցնելու համար հայ քաղաքական կուսակցութիւններուն համերաշխ գործակցութիւնը:

Իբրեւ այս ուղղութեամբ բռնուելիք առաջին քայլ, կը յանձնարարուի Թուրքիոյ Բիւրոյին կամ Պատասխանատու մարմնին, իրաւիքն զանազան հայ կուսակցութիւններուն խորհրդակցական ժողով մը եւ եթէ հնարաւոր ըլլայ գոյացնել համերաշխութիւն մէկ քանի անմիջական կէտերու շուրջ, որպիսիք են սահմանադրութեան եւ ազգային-կուլտուրական շահերուն պաշտպանութիւնը:

Միաժամանակ կը յանձնարարէ ուժ տալ իրականացնելու 3.3.7. IV Ընդհանուր ժողովով որոշուած «միջկուսակցական իրաւարար ատեանի սկզբունքին իրականացման»:

Նիստը փակուեցաւ:

Քարտուղար՝ Նախագահ
ԺԻՐԱՅԻՐ

Լիստ 54. 13/IX/09

Ներկայ են 30 հոգի 28 ձայնով. նախագահում է Ակնունի:

Նախագահը յայտնելով որ ընկերներից 7-8 հոգի շուտով մեկնելու են, առաջարկում է ժողովին շուտ փակման մասին կարգադրութիւն անել:

Թեր եւ դէմ կարճ վիճաբանութիւններից յետ, որոշում է այդ հարցը թողնել նախագահութեան որոշելու, եւ օրակարգի նիւթերի մասին փոխանակ զեկուցումներ պատրաստելու՝ բերել բանաձեւերը միայն, որոնց շուրջը կը լինեն եւ վիճաբանութիւնները:

Ընկեր Ռոստոմը հրաժարում է Խորհրդի նիստերին մասնակցելուց, առարկելով որ դէպի ներկայ Խորհուրդը նկատում է մի քանի ընկերների կողմից անվստահութիւն, հետեւաբար Խորհրդի որոշումները չեն կարող ունենալ այն բարոյական նշանակութիւնը որը անհրաժեշտ է կուսակցական կեանքում:

Նախագահը քուէարկում է, որ ժողովը իր վստահութեան քուէն է տալիս Խորհրդին. անցնում է միաձայնութեամբ:

Համաձայն ընկերներից մի քանիսի առաջարկին քուէարկում են հետեւեալ կէտերը.

I Խորհրդի որոշումները՝ դատական գործերի վերաբերեալ՝ վերջնական են ըստ կանոնադրի եւ դժգոհը կարող է բողոքել միայն յաջորդ Խորհրդին (+12, -14):

II Խորհրդի որոշումները՝ դատական հարցերում՝ զեկուցում են Ընդհանուր Ժող.ին եւ նրանից ստանում վերջնական սանկցիան (+2, -24):

III Խորհրդի որոշումները՝ դատական խնդիրներում՝ վերջնական են, դժգոհը կարող է բողոքել միայն յաջորդ Խորհրդին. միայն Ընդհանուր Ժողովը լսում է վճիռների մասին զեկուցումն ի գիտութիւն (+12, -14):

Քուէարկուած կէտերից ոչ մէկը 2/3-ի մեծամասնութեան քուէն ստացած չլինելով, հարցը մնում է բաց եւ հրդ նիստի որոշումը իր գորութեան մէջ:

Դիւանը առաջարկում է նորեկ ընկերներ — Սեպուհին, Մարգարեանին, Կիլիկեանին — պատրաստել իրենց շրջանների համար տեղեկագիր՝ յաջորդ նիստերից մէկում կարդալու, ապա անցնում է կիսատ մնացած բանաձեւերի եւ դիրեկտիւների քուէարկութեան:

Նկատի ունենալով որ մեր վերաբերմունքը դէպի այլ կուսակցութիւնները արդէն որոշուած են, միաձայնութեամբ թոյլ է տրուում բանաձեւ մշակող յանձնախումբին, աչքի առաջ ունենալով մեր անցեալ սերտ յարաբերութիւնները մակեդոնական յեղափոխական կուսակցութեանց հետ, շեշտել այդ եւ այժմ ու կոչ անել երկու կուսակցութեանց դադարեցնել եղբայրասպան կռիւը:

Նախագահը յիշեցնելով անցեալ ժողովներում մեր ընդունած կէտերը՝ օրինականացման բանաձեւի համար — դաւադրական միջոցներից՝ ուղղուած ներկայ

կառավարութեան) դէմ՝ ձեռք քաշել, ուղղել մարտական ոյժերը ուժակցիոնի դէմ եւ ամէն միջոց ձեռք առնել սահմանադրութեան պաշտպանութեան համար. ընդունել մեր մէջ՝ ինչպէս անցեալում՝ օտար տարրեր եւս առանց խախտելու մեր ազգային սկզբունքը, կռիւ՝ 3 եւ 4 յօդուածների դէմ — նկատել է տալիս որ բաց է մնացել այն հարցը, թէ Թուրքիայում Դաշնակցութիւնը պիտի կոչել Հ.Յ.Դ. Թուրքիոյ թէ Օսմանեան հատուած եւ առաջարկում է թոյլ տալ այդ հարցի շուրջը 4 հոգի թեր եւ 4 հոգի դէմ խօսելու, որպէսզի յանձնաժողովը բանաձեւ կազմելիս նկատի ունենայ ժողովի տրամադրութիւնները: Ընդունում է: Նախ քան ձայներ տալը, կարդացում է Պոլսից գրուած Ռուբէնի, Վահագնի, Գարոյի ստորագրութեամբ մի երկտող, որի մէջ առաջարկում են ժողովին մի ելք գտնել կուսակցութեան օրինականացման մասին, նկատելով որ այդ՝ իրականութիւնից բխող անհրաժեշտութիւն է:

Թուիչեանը գտնում է որ լեզալ դուրս գալը մեր կուսակցութեան համար շատ վտանգաւոր խաղ է, նոյնը եւ անուան փոփոխութիւնը, որովհետեւ՝ ճանաչելով կառավարութեան տրամադրութիւնները — առհասարակ իմիջհատից դուրս կուսակցութիւնները կազմալուծել — վստահ կարելի է ասել, որ նրան գոհացնել կարելի չէ եւ մեր դէպի գիջումն արած մի քայլը, անել կը տայ եւ ուրիշները, մանաւանդ որ հաւանաբար այդ դրութիւնը չի շարունակուելու, ինչպէս այդ տեսանք Ռուսաստանում. երկրորդ, եթէ մենք կուսակցութեան անունը փոխենք, կազմակերպութիւնը, մանաւանդ գաւառներում, այնպիսի հարուած կը ստանայ, որ մինչ այժմ նմանը չենք տեսել: Ժողովուրդը կապուած է ամէն մի տառի հետ տարիներ շարունակ, եւ շարունակ մեզ հետ եղել է, է՛, եւ կը լինի. թէ կուզ տասը օրինագծեր անցնեն նման 3 եւ 4 յօդուածների, մենք մեր լեզալ դրութիւնից դուրս գալու չենք եւ ո՛չ մի փոփոխութեան ենթարկելու մեր անունը. թող կուտեն մեզ հետ, բանտարկեն, սպանեն, կախեն, մենք հալածանքների սովոր ենք: Մենք անունը փոխելով կուսակցութիւնը չենք փրկիլ. խնդիրը անուան փոփոխութեան մէջ չէ, այլ էութեան, կուսակցութեան գործունէութեան, իսկ շատ պարզ է որ մենք գործունէութիւնից հրաժարուողը չենք. այդ կը լինէր արդէն սկզբունքային շեղում. մենք հակառակ օրէնքի տրամադրութեանց պիտի կազմակերպենք միութիւններ եւ ունենանք մեր աշխատաւորական քաղաքականութիւնը: Միայն մի ելք կայ՝ մնալով նոյն դրութեան մէջ՝ ազատուել օրէնքի հալածանքներից, այդ այն է որ պիտի կազմել մի սահմանադրական դաշնակցութիւն Թուրքիայի, որի մէջ կը մտնեն մակեդոնացի, քիւրտ, թուրք, արաբ այլ կուսակցութիւնները, իւրաքանչիւրը զոհելով միեւնոյն ժամանակ իրեն կուսակցական ինքնուրոյնութիւնը:

Աստիկեան. — Գտնում է որ այդ անունը՝ Թուրքիոյ

Հատուած պիտի ընդունել անպայման, կուսակցութեան օրինականացումը Թուրքիոյ Հայութեան Համար կենսական հարց համարելով. այդ անունը կը մնայ մինչեւ VI Ը[նդհ.] Ժ[ողով]ը, որից յետ համաձայն նոր պայմանները՝ միջոցներ ձեռք կ'առնուի:

Արագիւ.— Գտնելով հարցը ձեռք մէջ է միայն, հնարաւոր է համարում մնալ գաղտնի իսկ կառավարութեան մօտ լեզալ յայտարարել:

Թոփչեան.— Կնիքների հարցը ինչպէ՞ս լուծել, եւ ժողովրդին ինչպէս հասկացնել որ նոյն կուսակցութիւնն է՝ անունը փոխուած:

Գայլ (Վահան).— Երկու տեսակի կազմակերպութիւնը ունի այն անյարմարութիւնը, որ կառավարութիւնը աւելի ուժեղ կասկածելով, կը սկսի մեզ է՛լ աւելի հալածել, որովհետեւ հնարաւոր է ծածկել երկու կազմակերպութեանց գաղտնի կապը:

Պիեռ.— Նկատի ունենալով որ կոնկրէտ առաջարկներ չկան, ելք գտնելը դժուարանում է, եւ ինչպէս երեւում է, հակառակ իր նախկին համոզման — հարցը հասունացած չլինելով թողնել կեանքին — արդէն հասունացած է եւ Տաճկաստանի կազմակերպութեանց համար կենսական նշանակութիւն ունեցող հարց է՝ ինչպէս այդ երեւում է Գարոյի, Վահանի (Կոմս), Վահագնի եւ Ռուբէնի նամակից — ընկերներ՝ որոնք պատասխանատու գործեր են վարում եւ լաւ հասկանում իրականութիւնը եւ վաղը նրանք են լինելու ժողովի որոշումները կեանքի մէջ իրականացնողների առաջին շարքերում, թէ պարլամենտում թէ՛ դրսում. առաջարկում է իսկոյն եւեթ հրահրել նրանց, առաջարկել մի պրոյեկտ⁵⁵ պատրաստել եւ եթէ նրանք էլ մի բան անել չկարողացան, վաղը միւս օրը զանազան թիրիմացութիւններից ազատ կը լինենք եւ հանգիստ կ'ասենք՝ շատ մը տածեցինք, բայց մի ելք չգտանք:

Անտոն.— Ենչտեղով որ կառավարութիւնը հակառակ է ազգային, աշխատաւորական եւ յեղափոխական բնոյթ ունեցող կուսակցութեանց գոյութեան, հիմքեր՝ որոնց վրայ է մեծացել եւ յենում կուսակցութիւնը, գտնում է որ, առանց սահմ.-դեմոկրատ կուսակցութիւն դառնալու, առանց սկզբունքային խոշոր գիշումների, հնարաւոր է լեզալ դառնալ, իսկ նրանք որ չեն ուզում համակերպել եւ ուզում են դեմոկրատիայի ուղղութեամբ գնալ, թող հեռանան կուսակցութիւնից...

Նախագահ.— Ընդհատում եմ ձեր խօսակցութիւնը. մենք միջոցներ ենք փնտրում կուսակցութիւնը փրկելու եւ ոչ քայքայելու, խօսէք նիւթի մասին.

Անտոն.— Ոչ մի հնարաւորութիւն չկայ եւ մասերը (գաղտնի եւ լեզալ) միասին տանելու: Կրճ յօդուածով իթթիհատականները նպատակ ունեն ամէն ինչ սեղմել օսմանցիութեան մէջ, մի հանգամանք որ անհնար է դարձնում կուսակցութեան օրինականացումը, առանց ծրագրային գիշումների: Մենք մտածում էինք մի ժա-

մանակ լեզալ հրատարակել կուսակցութիւնը Կովկասում, բայց այժմ այնտեղի կացութիւնը պարզ է ձեզ համար, եւ հասկանալի պիտի լինի այն, որ նոյնը սպասում է մեզ Տաճկաստանում: Միայն մի հնար կայ, այդ այն է, որ պիտի կազմել աշխատաւորական մի դաշնակցութիւն բոլոր ազգերից, եւ Դաշնակցութեան հոսանքի 90% կարելի է վերցնել այդ միութեան համար. մենք էլ կը մտնենք այդ կուսակցութեան մէջ կազմելով նորա մի մասը:

Առաջարկներ են լինում չխօսել՝ իբր արդէն շատ ծեծուած հարց, այլ քուէարկել 1) Հ.Յ.Դ. Օսմանեան Հատուած, 2) ունենալ կազմակերպութեան 2 մասեր — գաղտնի եւ լեզալ — առաջինը պահելով շատ զգուշութեամբ:

Նիթրա.— Նկատի առնելով որ մեր 20 տարուայ իլլեզալ գործունէութիւնը մեզ չփրկեց, ընդհակառակը անընդունակ դարձրեց օրգանական աշխատանքի, շեշտելով որ իրաւունքը չունենք խաղալու մի ազգի ֆիզիքական գոյութեանը հետ, առաջարկում է սկսել լեզալ գործունէութեան եւ ձեռք գարկել օրգանական շինարար աշխատանքի:

Ռոստոմ.— Նկատել է տալիս որ խօսուում է առանց մի ելք ցոյց տալու. Դաշնակցութիւնը, իբր իրաւական մի միութիւն գոյութիւն ունենալ չէ կարող օրէնքի տեսակէտից, այդ արդէն վճռուած է: Այժմ մենք ձգտելու ենք մի modus vivendi⁵⁶ ստեղծելու: Երեք կէտ արդէն ընդունել ենք (դաւաղրական միջոցներից ձեռք վեր առնել, մեր մարտական ոյժերը ուղղել միայն ուձակսիոնի դէմ, մեր մէջ ընդունել եւ օտար տարրերի), այժմ էլ ընդունենք թուրք-հայկական հատուած. ի՞նչ ենք կորցրել: Եթէ կառավարութիւնը չհամակերպի, կը սկսի հալածել, էլի նոյնն ենք ինչ որ կանգ: Միայն մի հանգամանք աչքի առաջ պիտի ունենալ, լաւ դաս առած կովկասի խրատական օրինակներից, — կազմակերպութեան ոյժերը գաղտնի պիտի պահել: Կառավարութիւնը այս կամ այն պատճառներից դրդուած առայժմ մեզ հաշտ աչքով կը նայի, ուրեմն մենք էլ կ'օգտուենք այդ չափով, որքան հնարաւոր է:

Արագիւետը կարծում է որ առանց սահմ.-դեմոկրատիկ կուսակցութիւն դառնալու, հնարաւոր է լեզալ մնալ, մանաւանդ որ կառավարութիւնը մեզնից շատ լաւ կազմակերպուած է ու կը հալածէ մեր լեզալ եւ իլլեզալ մասերը միեւնոյն ժամանակ: Առայժմ թողնենք նոյնը եւ սպասենք. եթէ հալածանքները ծայր կը տան, խորհուրդը կ'որոշէ մեր բռնելիք դիրքը:

Ակնունք.— Ընդունելով որ Ընդհանուր Ժողովի մեխր կազմում է այս հարցը ո՛չ միայն այն պայմանով որ

55.- Նախագիծ:
56.- Լատիներէն. բառացի՝ ապրելու եղանակ: Խնդրոյ առարկայ վիճող կողմերուն միջեւ խաղաղ գոյակցութեան միջոցներու որոնում:

Կրճ յօդուած գոյութիւն ունի, այլեւ պայմանների նոր դասաւորութեամբ նոր տակտիկա մշակելու հարկի մէջ ենք գտնուում, նկատել է տալիս որ եթէ դրա համար որոշ պատասխան չտրուի, մենք մեր անձեռնհասութիւնը շեշտած կը լինենք ու կը ցրուենք առանց մի բան արած լինելու: Տեսնում եմ որ ժողովի տրամադրութիւնը գիջելու կողմը չէ. մենք դժբախտաբար չենք ուսումնասիրում հարցը. եթէ այդպէս վարուենք, որոշ եզրակացութեան կը գանք եւ համաձայն մեր մի լաւ սովորութեան միաձայնութեամբ որոշում կը տանք: Մենք ձեռք ենք քաշել դաւաղրական գործունէութիւնից — այդ մի խոշոր քայլ է, օտար տարրեր ընդունում ենք, այդ նոյնպէս խոշոր քայլ է. եթէ այս երկու որոշումները ընդունում ենք, էլ ի՞նչ ենք քաշուում մի տարրական փոփոխութիւն անելուց, որով կուսակցութեան հոլթիւնը չի փոխուում եւ որ մանաւանդ մեր կանոնագրի մէջ հատուած բառը շեշտուած է: Ընդունելով այդ երկու որոշումները, կը գործենք տակտիկական խոշոր սխալ՝ եթէ ընդունենք «Հատուած» բառը: Բացի այդ մենք յոխորտալուց շատ զգոյշ պիտի լինենք, որովհետեւ նախկին բարոյական, զինական, զինուորական եւ նիւթական ոյժերը չունենք, էլ շատ չենք կարող ջարդել փշրելու մասին շատ խօսիլ:

Աեպուհ.— Առաջարկում է բոլոր յեղափոխական կուսակցութեանց հետ միասին, բողոքենք Կրճ յօդուածի դէմ եւ տապալենք եւ լեզալ մնանք:

Դուման.— Մենք իբր Ֆեդերացիայի կողմնակից երեք հատուած ունենք Ֆեդերատիւ կապերով կապուած:

Դրում է քուէարկութեան հետեւեալ կէտերը. ներկայ են 24 [հոգի].

I Պահելու Հ.Յ.Դ. անունը բոլոր հատուածների համար +15, -9:

II Հ.Յ.Դ.եան Թուրքիոյ հատուած, կովկասեան հատուած եւ Պարսկաստանի հատուած: Ներկայ 25 [հոգի] +16, -8, 3 ձեռնպահ:

III Միայն Թուրքիոյ հատուած, միւսները անփոփոխ +17, -8

Վերջինը անցած է համարում 2/3-ով:

Թոփչեան.— Յիշեցնում է որ անցեալ ժողովում հատուած բառի համար 3 ամիս զբաղուեցինք, եւ որ այդ առթիւ արիւն հոսեց, այժմ եթէ այդպէս ընդունենք, վաղն էլ կ'ասենք ինքնուրոյն լինենք եւ կը բաժանուենք: Իսկ ինչ վերաբերում է Ակնունու ասածին, թէ մեր կանոնագրում հատուած բառը շեշտուած է, չպիտի մոռանալ որ այդ բերոյական հատուածների համար է ասուած եւ ոչ երկրների:

Յովնան.— Երբ այդ հարցը անցաւ այդ ձեւով, Կովկասի եւ Պարսկաստանի դրութիւնը ի՞նչ է լինում իբր «ոչ հատուածներ». ուրեմն նրանք իրենց թեւերը իբր

մայր Դաշնակցութիւն տարածում են Թուրքիայի վրայ?

Թոփչեանը առաջարկում է հետեւեալ բանաձեւը, որը չի անցնում.

Ի նկատի ունենալով, որ Հ.Յ.Դ.ն ունէ՛ անջատողական ձգտում չունենալուց գատ, հայրենիքի ու ժողովրդի շահերի տեսակէտից անհրաժեշտ է համարում իրաւահաւասար ազգերի մերձեցումն ու դաշնակցումը,

Ի նկատի ունենալով որ այդ մերձեցման ուղին հարթել կարող են բուն ժողովրդական կուսակցութիւնները, Ուստի յանձնարարում է իր բոլոր եւ առանձնապէս Կ. Պոլսի մարմինն, բանակցութեան մտնել ազգային միւս կուսակցութիւնների (մակեդոնական, քրտական, ալբանական, արաբական եւայլն) հետ գործակցութեան նպատակով, ինչպէս այդ արուած է «Իթթիհատի» հետ:

2) Ազգային ուրոյն կուսակցութիւնների մերձեցումով առաջ բերել ընդհանուր կազմակերպութիւն «Օսմանեան սահմ[անադրական] Դաշնակցութիւն» անունով:

3) Այդ Դ-իւնը իբրեւ Օսմանեան մի կազմակերպութիւն, աշխատելու է պաշտպանել հայրենիքի ամբողջութիւնն ու սահմանադրական կարգերը, միեւնոյն ժամանակ ազգային իւրաքանչիւր հատուածին՝ ազատ թողնել իր ներքին գործերում:

Անտոնի բանաձեւը որը նոյնպէս չի անցնում.

Սկզբունքով եւ գործելակերպով մեզ յարակից կուսակցութիւններից ու խաւերից (մակեդոնացիներ, պարլամենտ, դեմոկրատները, բանուորական, գիւղացիական միութիւններ եւայլն) կազմել մի լեզալ միութիւն կամ բլոկ, կամ կազմակերպութիւն, կապուած դաշնակցական կապերով: Միութեան նպատակը գծելիս նկատի ունենալ մեր պլատֆորմը:

Այս բանաձեւերի շուրջը վիճաբանութիւններ են տեղի ունենում, գտնելով այդ տեսակի կուսակցութիւններ յառաջ բերելը անհնար է, եւ ոչ իրականանալի:

Ժողովը փակուում է:

Քարտուղար՝ Նախագահ
ՎԱՀԱՆ

Լիստ 55.

Կը նախագահէ ընկեր Ակնունի. Համերաշխութիւն մակեդոնական կուսակցութիւններու հետ:

Ընկեր Ռոստոմ կ'առաջարկէ հետեւեալ բանաձեւը.

Նկատելով որ մակեդոնական կուսակցութիւնները ընդգրկած են իրենց մէջ մեծ թուով գիտակից ռամկավար ուժեր, որ նրանք եղել են մեր առաջին դաշնակիցները բռնակալական ռեժիմը խորտակելու մէջ եւ ներկայումս կարող են մեծապէս նպաստել սահմ. շարժման

զարգացմանը՝ դեմոկրատիկ ուղղութեամբ,

Հ.Յ.Դ. V Ընդհանուր ժողովը յանձնարարում է սերտ կապ հաստատել նրանց հետ, թէ քաղաքական եւ թէ տնտեսական հողի վրայ:

Ժողովը որոշում է կոչ անել մակեդոնական կազմակերպական երկու հատուածներին վերջ տալ արիւնահեղ թշնամութիւններին՝ դիւրացնելու համագործակցութեան աշխատանքը:

Այս մասին կը խօսին թեր ու դէմ գանազան ընկերներ:

Ոմանք կը շեշտեն այն հանգամանքը թէ մակեդոնական երկու կուսակցութիւններուն մէջ մեծ տարբերութիւն կայ: Սարաֆովիստները բացէ ի բաց անջատականներ են եւ հետեւաբար անոնց հետ սերտ մերձեցում մեր կողմէ կրնայ անտակտ արարք մը նկատուիլ իթթիհատականներուն հետ մեր յարաբերութիւններուն տեսակէտէն: Նոյնիսկ Սանտանսքին եւ ընկերները կը կարծուի թէ ներքնապէս անջատման ցանկութիւններ ունին. անանկ որ յամենայնդէպս այս գործին մէջ պէտք է շատ դելիկատ⁵⁷ ըլլալ:

Միւս կարծիք ունեցող ընկերներ կ'ըսեն թէ մակեդոնացիներու հետ մեր համագործակցութիւնը սահմանադրութեան պաշտպանութեան վերաբերմամբ չէ: Մենք պէտք է ձեռք տանք անոնց՝ ոյժ մը գոյացնելու համար նաեւ իթթիհատի դէմ ի պաշտպանութիւն փոքր ազգերու շահերուն: Գալով Սարաֆովիստներու մասին ըստուածներուն, առանց հետաքրքրուելու անոնց ներքին մտադրութիւններով, մենք կարող ենք անոնց հետ ալ մերձեցում առաջ բերել, քանի որ անոնք դուրս են եկած սահմանադրական ակումբներու ձեռով: Այսպիսով կը յաջողինք նաեւ յառաջ բերել ցանկալի հաշտութիւնը երկու Ֆրակցիաներու միջեւ մանաւանդ որ մեր տեսակէտով հարցը հոսանքներու եւ ուղղութիւններու վրայ է եւ ոչ թէ անձերու վրայ:

Այս խօսակցութենէն յետոյ առաջարկուում է մակեդոնացիների հետ մեր յարաբերութիւնների ճշդումն թողնել իթթիհատականների վերաբերմամբ մեր դիրքը վերջնականապէս ճշդելուց ետքը, քանի որ մեր կուսակցական յարաբերութիւնների մէջ ամենակարեւորը մեր եւ իթթիհատականներուն յարաբերութիւններն են:

Գուէի դրուելով միաձայնութեամբ ընդունուում է մակեդոնական կուսակցութիւնների հետ համաձայնութիւն գոյացնելու սկզբունքը, իսկ բանաձեւի վերջնական ձեւը թողնուում է իթթիհատի վերաբերմամբ բանաձեւը ընդունելուց յետ:

Չեկուցում դրամական հարցի վերաբերմամբ.

Ընկեր Ռուբէն հաշուեքննիչ յանձնախումբի կողմէ խօսելով ընդհանրապէս բոլոր հաշիւներուն վերաբերմամբ կը յայտարարէ թէ առհասարակ ոչ մէկ սիստեմ չկայ հաշիւներու մէջ: Առհասարակ խառն ի խուռն են

այդ հաշիւները եւ իւրաքանչիւր մարմին գանոնք ներկայացուցած է այն ձեւով որ ինքը յարմար տեսած է: Բացի այդ մտաւորապէս 15 մարմիններու, որոնք կը մասնակցին ընդհանուր ժողովին, միայն 4ը ունին նաեւ 1907-ի հաշիւները: Հետեւաբար մեր հաշուական գործին ընդհանուր պատկերը տխուր է, մանաւանդ պակաս են մանրամասնութիւններ թէ մուտքի եւ թէ ելքի այդ եւ այլ պատճառներով հաշուեքննիչ յանձնաժողովի պատրաստած ընդհանուր հաշիւը չկարողացաւ մանրամասն ըլլալ:

Ահաւասիկ, առանձին առանձին իւրաքանչիւր մարմնի հաշիւներու վերաբերմամբ, յանձնաժողովի դիտողութիւնները, որոնց կը պատասխանեն համապատասխան մարմիններու ներկայացուցիչները:

Արեւմտեան Բիւրօ.— Ներկայացուած է տպագրուած հաշիւներ 1907-ից մինչեւ 1909 Յուլիս 1ը. հաշուական սիստեմը լաւ է. դոկումենտներ չկան եւ ոչ մի մարմնի կողմից ստուգուած չէ:

Հաշուեքննիչ յանձնաժողովի դիտողութիւններու վրայ կ'աւելացուեն նաեւ հետեւեալները՝ գանազան ընկերներու կողմէ. 1) Արեւմտեան Բիւրօն լաւ կ'ընէր իր հաշուեկշիւն մէջ արձանագրէր միայն իր սեփական մուտքերը եւ սեփական ծախսերը, որպէսզի յայտնուէր կազմակերպութեան այդ մարմնի դրամական իսկական պատկերը. 2) Հաշուեկշիւն մէջ ցոյց է տրուած 3 տարուայ համար ճանապարհածախս 14.000 Ֆրանք, որ չափազանց մեծ գումար է. 3) Տ. գիւղի ինքնապաշտպանութեան դրամը ուղացուած է ուղարկել եւ այդ գործած է շատ վատ տպաւորութիւն նոյն գիւղացիների եւ իւղը⁵⁸ ուղարկողների վրայ. 4) Արեւմտեան Բիւրօյի անդամները իրենց ամսական ապրուստի դրամը առանց սպասելու ներկայ Ընդհանուր ժողովին, բարձրացուցած են 150-ից 175 Ֆրանքի: Իրաւունք չունին այդ բանը ընելու. 5) Զանազան ուսանողներու նպաստ տրուած է. Արեւմտեան Բիւրօն իրաւունք չունէր այդ ընելու:

Այս գանազան քննադատութիւններուն կը պատասխանէ Արեւմտեան Բիւրօյի ներկայացուցիչը ընկ. Յովնան.

— Նախ սխալ է թէ մեր հաշիւները վաւերացնող դոկումենտներ չկան: Բոլոր դոկումենտները իրենց մանրամասնութիւններովը գոյութիւն ունեն, բայց որովհետեւ շատ են անոնք, անհրաժեշտ չնկատեցինք մինչեւ այս հեռուոր քաղաքը բերել: Անոնք կը մնան ժրնեւ եւ կազմակերպութիւնը կրնայ ուզած ժամանակը ստուգել: Թէ մեր հաշիւները ստուգուած չեն ճիշտ է, այդ ստուգումը պարտաւոր է կատարել ռայոնական ժողովը, Խորհուրդը կամ Ընդհանուր ժողովը: Գալով սե-

57.- Նրքանկատ, զգոյշ:
58.- Իւղ - ուժանակ, պայթուցիկ ցիւր:

փական մուտքը եւ ելքը արձանագրելուն միայն, պէտք է գիտնալ որ Արեւմտեան Բիւրօն, ըլլալով միայն գործադրիչը Ընդհանուր ժողովի որոշումներուն եւ չունենալով առանձին գործունէութիւն, չունի մասնաւոր մուտք կամ ելք իր մուտքը կը կազմեն մասնաւորաբար պատկերներու, քարտերու եւ «Դրօշակ»ի փոխարժէքը, բայց ատոնք ալ գրեթէ միշտ վատ կը տրուին համապատասխան մարմիններու կողմէ: Ճանապարհածախսս 14.000 Ֆրանքը շատ կը լինի իսկապէս, եթէ կարծուի թէ դա ծախսուած է միայն Արեւմտեան Բիւրօյի անդամներուն վրայ, բայց այդպէս չէ: Այդ գումարից տրուած է ճանապարհածախս բազմաթիւ ընկերներու, որոնք գնացած են ամէն կողմէ Կովկաս, Տաճկաստան, Ֆրանսա, Պելճիքա, եւ միշտ կազմակերպութեան գործով:

Տ. գիւղի ինքնապաշտպանութեան դրամին ուղանալը իսկապէս պէտք չէր որ տեղի ունենար, բայց այդ ուղանալու գլխաւոր պատճառն այն էր նաեւ որ, Արեւմտ. Բիւրօն չգիտէր թէ ո՞ւմ միջոցով, ի՞նչ ճանապարհով ուղարկի փողը: Սակայն հիմա արդէն կարգադրուած է Պատասխանատու մարմնէն եւ շուտով տեղ կը հասնի փողը: Ապրուստի դրամի քանակը (Բիւրօյի անդամներուն վերաբերեալ) բարձրացնելու պայմանները բացատրել աւելորդ պիտի լինէր, դա միայն կեանքի սղութիւնն է. այսօրուայ ժրնեւը չի նմանիր 20 տարի առաջուայ ժրնեւին: Բիւրօյի անդամները այդ որոշումը տալիս, խորհրդակցած են Արեւելեան Բիւրօյի անդամներուն հետ: Ուսանողներուն տուած նպաստի քանակը շատ մեծ չէ համեմատած այն օգուտին՝ զոր մենք կը սպասենք անոնցմէ, եւ նկատի պէտք է ունենալ որ այդ ուսանողները կողմնակի ծառայութիւններով արդէն կազմակերպութեան վերադարձուցած են իրենց ստացած նպաստները, թէեւ բաւական կը շարունակուի այդպէս արձանագրուած պահել, մտածելով թէ գուցէ օր մը վճարուին:

Ի վերջոյ քննելով IV Ընդհանուր ժողովի կողմէ Արեւմտեան Բիւրօյի յատկացուած բիւրճէի գումարը, տեսնուեցաւ որ Բիւրօն յամենայնդէպս դուրս չէ եկած նաեւ գծուած սահմաններից:

Պալքանեան Կ. Կոմիտէ.— Հաշուեքննիչ յանձնաժողովը գտնում է, որ ներկայացուցած է հաշիւ, տեղեկագրի հետ 1907-ից մինչեւ 1909 Օգոստոս 1. հաշուական պատկերը լաւ է. ստուգուած է Շրջանային ժողովի կողմից. ունի 2893 Ֆր.ի պահանջ մասնաւոր մարդկանց վրայ. ապառիկների մէջ չէ ցոյց տուած թերթի հաշուոյն գանձելի 812 Ֆրանք. ցենզ ունի:

Պալքանի պատգամաւոր ընկեր Ժիրայր կը պատասխանէ թէ այդ 812 Ֆրանքը մնացած է Պուլքէշի ընկերոջ մը վրայ որմէ կանոնաւոր մուրհակ կայ եւ պիտի գանձուի: Յետոյ գանազան ընկերներ դիտողութիւն կ'ընեն մասնաւոր մարդկանց վրայ գումարներ ձգուած ըլլալու մասին եւ կը պահանջեն որ անոնք գանձուին:

Ամերիկայի Կ. Կոմիտէ.— Հաշուեքննիչ յանձնաժողովը կը գտնէ որ ցենզ ունի. ներկայացուցած է հաշիւ տեղեկագրի հետ 1907 եւ Օ8 տարիներու համար. ստուգուած է Շրջանային ժողովի կողմից: Հաշուական սիստեմը խառն է, չկայ ամսական մուտք կամ ելք: Տպարանի համար վճարուած է 3500 տալեր (մօտ 18.000 Ֆր.): Մասնաւոր ընկերների համար գանձուած դրամը խառնուած է հաշուի մէջ. մասնաւոր նկատուումներով դրամներ հանգանակուած են — կուռողների համար 127 տալեր, բանտարկեալներու համար՝ 172: Թիֆլիսի «Գործ»ին համար գանձուած դրամները (բաժնեգին) մտցրուած են մուտքի եւ ելքի մէջ: 1907-ին եղած է 1351 տալեր ճանապարհածախս.—

Ամերիկայի պատգամաւորը կը պատասխանէ, թէ տպարանի համար տրուած գումարը (3500 տալեր) փոխատուութիւն է եւ թէ Տպարանը կամ Հայրենիքի վարչութիւնը պիտի վերադարձնեն այդ գումարը. մասնաւոր նպատակներով հանգանակուած գումարները յատկացուցած են իրենց: «Գործ»ի հաշուոյն մուտք 77 տոլար էր, 88ը դրկած ենք, իսկ մնացած 11-ը 1908-էն ետք դրկուած ըլլալով, յաջորդ հաշիւներուն մէջ պիտի երեւան: Իսկ ինչ կը վերաբերի 1351 տալեր ճանապարհածախսին, անոր մէջ կան նաեւ պրոպագանդիստներու ապրուստին համար տրուած գումարները:

Պատասխանելով նաեւ Արեւելեան Բիւրօյի ներկայացուցչի այն առարկութեանը թէ «Գործ» թերթի ապառիկները 1500 տոլարի կը բարձրանան Ամերիկայի մէջ եւ մինչեւ այժմ գանձուած ու դրկուած չեն խմբագրութեան, կը պարզէ որ 1500 ռուբլի է, եւ դժուարութեամբ կը գանձուին, բայց Կ. Կոմիտէն գանոնք գանձելու համար ջանքեր չպիտի խնայէ, ու կարելիին չափ պիտի ընէ:

Արեւմտեան Բիւրօյի ներկայացուցիչը յանուն իր ներկայացուցած մարմնի, յայտնում է որ Պուլկարիան եւ Ամերիկան իրենց հաշիւներուն մէջ, բացի Ամերիկայի 3500 տոլար տպարանին փոխատուութեան հարցից — որուն համար ալ եղած է դիտողութիւն — եղած են ճշդապահ:

Եգիպտոս.— Աղեքսանդրիա ներկայացուցած է հաշիւ 1908 թուին համար, ստորագրուած են թակոմիտէի կողմից. յայտնի չէ քննուած ըլլալը. դոկումենտները Արեւմտեան Բիւրօյի մօտ է, հաշուական սիստեմը լաւ է:

Գահրէ.— Հաշիւը ստուգուած է ենթակոմիտէի անդամներու կողմէ. քննուած ըլլալը յայտնի չէ. դոկումենտները Արեւմտեան Բիւրօյի քով են. հաշուական սիստեմը լաւ է: Ամբողջ եկամուտը ծախսուած է տեղւոյն վրայ: Խմբատեղիի վրայ ծախսուած է 400 Ֆրանք: Երկուքն ալ ունեն ենթակոմիտէի ցենզ:

Արտ. 56. 14 ԱՄՈՒՆ

Նախագահում է ընկեր Անտոն:

Ընկեր Մարգարեի կու տայ Սալնոյ ձորի տեղեկագիրը, որը յետոյ գրի առնելով կ'առաջարկէ արձանագրութեան մէջ մտցնել:

Այլ խոսքեր

Կը գտնուի Բիթլիսի վիլայէթին մէջ: Սա ամենահաշարտ վիլայէթներէն մէկն է. ունի 120000 հայ բնակչութիւն: Կը բովանդակէ հետեւեալ հայաշարտ շրջանները

- 1) Բաղէշ — (1000 տուն հայ, 4000 խլամ)
- 2) Ախլաթ — 20-21 կտոր գուտ հայաբնակ գիւղեր,
- 3) Ռահուան — 5-8 կտոր գուտ հայ գիւղեր,
- 4) Գիւզալդարա — 8 հայ գիւղ,
- 5) Տանտիկ — 8 հայ գիւղ,
- 6) Խիզան
- 7) Մոտկան եւայլն եւայլն:

Այս հայաշարտ եւ կարեւոր վայրում յեղափ. (Դաշնակցութիւնը) շատ շուտով մուտք գործած է եւ խաղացած է կարեւոր դեր: Սերոբ Աղբիւրի, Թաթուլի, Գուրգէնի, Հրայրի գործունէութեան վայրն է եղած Սալնոյ ձորը երկար ժամանակ: Սասնոյ գործունէութեան ժամանակ, Ախլաթը հանդիսացած է կամուրջ Շամի եւ Սասնոյ միջեւ: Առանձին երախտագիտութեամբ պէտք է յիշել «Ջրհոր» աղբատ գիւղը իր խաղացած ակտիւ դերի համար: Այս շրջանի կարեւոր գործիչներէն Հրայրի սպանութենէն վերջ շրջանի կազմակերպութիւնը երթալով քայքայուած է: Գէորգ Չառուշ քիչ յարաբերութիւններ պահած է:

Սահմանադրութենէն վերջ մենք հասնելով հոն սկըսանք նոր կազմակերպութիւն, որու յաջողութեան օգնեց ժողովուրդի յեղափ. բարձր տրամադրութիւնը: Լաւ կազմակերպեցինք քաղաքը, Ախլաթը եւ շրջակայքը, իսկ շրջիկները դրկեցինք նաեւ միւս գաւառները, որ նոյնպէս յաջողուցին կազմակերպութիւններ, այնպէս որ տարուան մը կարճ ժամանակին մէջ այդ վերակազմուած շրջանը լրացուց Կ. Կ. ի մը ցենզը: Մեծ ոյժ տուինք եւ Զիֆոնին⁵⁹:

Բաղէշը ըլլալով կենտրոնը վիլայէթի, անհրաժեշտ է ուժեղացնել հայ գործիչներով եւ կազմել ուժեղ Կ. Կոմիտէ: Առանց դրսի գործիչներու շրջանը կը քայքայուի եւ մենք կը կորսնցնենք շատ բան: Մուշը, Սասունը, որոշ կախում ունին Բաղէշէն իբր վիլայէթի կեդրոնի:

Իթիհատը սահմանադրութենէն վերջ կազմուեցաւ գինուորականներէ: Սկիզբը պահպանողական տարրեր մուտք չգործեցին իւր մէջ. բայց վերջը անոնք ալ մտան: Մինչեւ այդ մեր յարաբերութիւնները բարեկամական էին, բայց Իթիհատը ամէն բանի մէջ բարի ցանկութիւններէ անդին չանցաւ: Արժանի է յիշել մեր կոնգրէն

Իթիհատի հետ 1908 Նոյեմբերին, որը բաւականին յաջող ընթացք, բայց անյաջող վերջաւորութիւն ունեցաւ: Մեր առաջարկը «խառը բիւրոյի» վերաբերեալ՝ մերժուեցաւ: Սալնոյ ձորը շրջապատուած է ուժեղ աշիրաթներով: Ռիզայի բէգ, Ղասըմ բէգ, Սէյիդ բէգ, Ֆաթէ, Մուսա ցեղապետ բէգերու անունները բաւական են յիշեցնելու հարստահարութիւններու երկար եւ շարունակուող շարքերը: Խիզանի կողմերը Սէյիդ-Ալի դեռ կը շարունակէ իր շարագործութիւնները: Իր շրջանին մէջ սպանուած են աւելի քան 20 հայեր, 5-8 թուրքեր՝ սահմանադրութենէն վերջ:

Այդ հարստահարիչները պատժելու հարցը կենսական կարեւորութիւն ունի երկրի համար: Անոնց հետ կապ ունին կառավարութեան հին պաշտօնեաները, որոնք դեռ չեն փոխուած. հին պաշտօնեաներու փոփոխման հարցը նոյնպէս կարեւորութիւն ունի:

Հողային հարցը դեռ չէ լուծուած եւ երկար չի լուծուիր: Հողերը իրենց օրինական տէրերուն դարձնելը շատ կարեւոր է, բայց մեզ համար կը պակսին մասնագէտ ոյժեր. — Կարող փաստաբան մը Բաղէշ, մէկն ալ Մուշ:

Անհրաժեշտ է հոն դրկել նաեւ բժշկական ոյժ:

Մենք մեծ ոյժ տուինք կուլտուրական գործին, որը կը գտնուի վերին աստիճանի անմխիթար դրութեան մէջ:

Հարցումներ տեղի ունեցան, որոնց ընկերը պատասխանեց: Նախագահը տրուած տեղեկութիւնները բաւ համարելով խօսքը տուաւ ընկեր Կիլիկեանին, որը բերանացի տուաւ իր տեղեկագիրը, յետոյ գրի առնելով խնդրեց արձանագրութեան մէջ առնել:

Անշուշտ շատ բան գրուեցաւ եւ խօսուեցաւ Կիլիկեան աղէտի մասին. ես պիտի բաւականանամ, առանց մանրամասնութեանց մէջ մտնելու, ամփոփ պատկերով մը ներկայացնել աղէտի ծագումը, պատճառները եւ պատասխանատուութիւնը:

Բաղդատաբար Մեծ հայքի կեղեքումների ու հարստահարութեանց եւ այն բացառիկ դրութեան որ մասնաւորապէս ստեղծուած էր հայերու համար, կիլիկեան հայութիւնը գերծ մնացած էր այդ անտանելի կացութիւնից եւ թուրք-հայ յարաբերութիւնները կարելի է ըսել թէ կորէկտ էին:

Բայց սահմանադրութեան հռչակումը հակազդեցութիւն մը ունեցաւ այդ շրջանների մէջ. թուրքին ենթադրել տուաւ, որ նա քրիստոնեաների — մասնաւորապէս հայերի — գործն է, թէ նա յաղթանակն է ստորին ցեղերու՝ տիրապետող տարրին վրայ, ու թուրք մասսային մէջ տեղի տուաւ հակահայկական տրամադրութիւններու, զոր շահագործեցին կարգ մը մուսթ մարդիկ, որոնք անհատապէս հին ռեփրմի ատեն, առանձնաշնորհեալներն էին ու որոնց շահերուն սահմանադրութիւնը դիւր չէր գար:

59.- Զինուորական ֆոնդ՝ զինման համար:

Այս հակահայկական շարժումը, կոնկրէտ կերպով արտայայտուեց Հաճնոյ եւ Ատանայի շրջանակներուն մէջ:

Թուրք ժողովուրդին այս տրամադրութեանը երբ որ աւելացնէք տեղական կառավարութեան թուրքիւնն ու անիշխանութիւնը, արդէն հողը պատրաստուած կը լինի տխուր դէպքերու ծագման համար: Ամենափոքր մի կայծ պիտի բռնկեցնէր ահագին հրդեհը եւ այդ կայծը չուշացաւ: Մի հայ երիտասարդ ինքնապաշտպանութեան համար սպաննեց երկու թուրք: Թուրք ժողովուրդը գրգռուեցաւ եւ այս միջադէպի մէջ ենթադրեց հայ ազգաբնակչութեան մէջ ապստամբութեան նախաշարժը: Մարտ 31-ին թուրքերը բոլորովին գրգռուած՝ միթիւններ կը սարքեն ու կը քարոզեն հայերը ջարդել: Նոյն գիշեր հայ մը կը սպաննեն ու հետեւեալ առտուն գործը կը սկսի արդէն շնորհիւ այն հանգամանքին, թէ տեղական կառավարութեան մօտ բարի կամեցողութիւնը կը պակսէր ու Պոլսոյ Մարտ 31-ի գինուորական շարժումը վրայ կը հասնէր. ջարդերը սկսան մեծ տարածութիւն ստանալ ու ծաւալել վիլայէթի բոլոր գաւառները եւ նոյնիսկ մինչեւ Հալէպի վիլայէթի մէջ ինչ ինչ գաւառներ:

Գալով զոհերու ընդհանուր թուին՝ ըստ վերջին վիճակագրութեան 10.000ի կը հասնի, որուն մեծամասնութիւնը կը կազմէ այլ եւ այլ գաւառներէ գաղթած հայերը. Հաճըն, Մուշ, Խարբերդ, Բալու, Դիարբէքիր եւ այլն. որբերուն թիւը կը հասնի 5000-ի:

Գալով այն գործունէութեան որ մենք պիտի ունենանք ապագային մէջ, ես բաժնում եմ երկուքի. ա) ազգային հողի վրայ գործունէութիւն, բ) կազմակերպական:

Ա. Ազգային գործունէութիւն

- 1.- Որբերու հարցը. կառավարութիւնը կը ջանայ որբանոցները պետականացնելու, թուրք լեզուն դարձնել որբանոցներու պաշտօնական լեզուն. մենք պէտք է բողոքենք սոյն գործելակերպին դէմ: Որբերուն պէտք է ազգային դաստիարակութիւն տանք, ու կառավարութիւնը նպաստէ մեզ: Եթէ մեր ազգային եւ կառավարական միջոցները չբաւեն որբանոցներու կանոնաւորման ու բարւոքման, մենք պէտք չէ այնքան խստապահանջ լինենք որբերը օտար միջազգային հաստատութիւններու յանձնելու համար:
- 2.- Ժառանգորդներէ գուրկ մնացած ընտանիքներու հողերն ու կալուածները մահլիճի տակ երեւալու վտանգի մէջն են. այս վտանգին առաջն առնելու համար, պէտք է կառավարութեան դիմումներ ընել, եւ յատկապէս այդ գործով զբաղելու համար փաստաբաններէ կազմուած յանձնաժողով մը Կիլիկիա փոխադրել:
- 3.- Հողային հարցը եւ գաղթականութիւն. — Ատանայի վիլայէթին մէջ կը գտնուեն մեծ տարածութեամբ

պետական հողեր, որոնց վրայ հայկական գաղթականական հաւաք մը ստեղծելու համար, զգոյշ կերպով պրոպագանդ ընել բոլոր գաւառներու մէջ:

4.- Դպրոցներ եւ կուլտուրական գործունէութիւն. — աղէտէն առաջ կուլտուրական հաստատութիւնները բաւական գոհացուցիչ վիճակի մէջ կը գտնուէին. դըպրոցական պիւտճէն 1700 ոսկի էր, որը այս տարի պիտի բարձրանար 2000 օսմ. ոսկիի. կային լսարան-ընթերցարաններ եւայլն: Երկրին ուսանողութիւնը կը հասնէր 1500-1700-ի:

Կը կարծեմ այս տարի ուսանողութեան թիւը պիտի աւելնայ, ի նկատի ունենալով սա պարագան, որ շրջակայ գիւղերուն եւ գիւղաքաղաքներուն ժողովուրդը համախմբուած է Ատանայի մէջ: Ազգային շրջանակներու մէջ պէտք է գործել, վերականգնելու համար Կիլիկիոյ դպրոցական գործունէութիւնը:

5.- Կիւրոսի մէջ օրթոտոքս դաւանութեան, աւելի լաւ է անել ուսու եկեղեցւոյ գիրկն դիմելու համար շարժում կամ հոսանք մը սկսած է. այս շարժման գարկ տրուողները հաւանականաբար ուսու քաղաքական ագէնտներն են: Այս լուրջ հարցը պէտք է յանձնել ազգ. շրջանակներու խորհրդակցութեան ու այս շարժման դէմ կանգնել:

Բ. Կազմակերպական

Կազմակերպական տեսակէտով Կիլիկիան բաժնուած է 2 մասի. Արեւելեան եւ Արեւմտեան Կիլիկիա: Արեւելեան մասի համար բան մը չպիտի կրնամ ըսել, որովհետեւ մեր շրջանակէն դուրս է (Հալէպ, Այնթապ, Մարաշ):

Գալով արեւմտեան մասին, դաշնակցական գործիչները հող մտած են 1900 թուականին: Մինչեւ Սահմանադրութեան հրատարակութիւնը, յեղափ. գործունէութիւնը պահանջուած չափով եղած չէ, ի նկատի ունենալով սա պարագան որ ժողովուրդը զգուած ու յուսախաբ եղած էր հնչակեան գործունէութենէն: Սահմանադրութենէն վերջ ամէն կողմ կազմուեցան ենթակոմիտէներ եւ կոմիտէներ եւ ակումբներ բացուեցան (Ատանա, Սիս, Զոք-Մարգուան, Ղարս-բազար եւայլն):

Աղէտի միջոցին, ինքնապաշտպանութիւնը սարքուեցաւ դաշնակցականներու եւ հնչակեաններու նախաձեռնութեամբ, որոնք կողք կողքի կուուեցան պատնէշներու վրայ: Ատանայի, Սոսյ (ուր ինքնապաշտպանութիւնը սարքուած է միմիայն դաշնակցական ընկերներու նախաձեռնութեամբ) Զոք-Մարգուանի, Հաճընոյ, Շէյխ-Մուրադի եւայլն, ինքնապաշտպանութիւնը հիանալի — ուր որ ինքնապաշտպանութիւն տեղի ունեցաւ, հոն վնասները լայն ծաւալ մը չառին:

Կիլիկիոյ հողին վրայ մեր ապագայ գործունէութիւնն պէտք է բխի սա հիմունքէն թէ՛ բացառիկ պարա-

Ահա այսպիսով մենք տեսնում ենք որ Պարսկաստանի շարժումները Դաշնակցության վրայ նրբակամ ծախս նստել են մասնաորակա 80.000 Ֆրանք, մի գումար, որը ոչ միայն չափ, այլև չափազանց քիչ ստացված յաջող արդյունքի տեսակետից:

Այս չեմ հաշուում հրացաններն ու ատրճանակները, որովհետև նոյնությամբ մնում են, իսկ թշնամու մեղքից տարած մի քանի հրացանների եւ ատրճանակների փոխարեն բերել ենք մենք եւս: Իսկ Ռաշտի Եփրեմի հետ կապուած ծախսերը հաշուելու չենք, որովհետև ամբողջությամբ արուած են պարսիկ յեղափոխականների կասսայից: 4000 ուռլիի հէնց փոխադրուած է եղել Ոսկանապատ 14 պինուորների ճամբու ծախսի եւ ռազմամթերքի եւ հրացանների համար: Մեր Ռաշտի մարմինը ծախսել է ընդամենը 4510 դրան (2250 Ֆր.) որը գրուած է պահանջ եւ կր ստացուի:

Ատրպատականում ծախսեր չափ են եղել, բայց դրանք չեմ հաշուում, որովհետև կազմակերպական մուտքեր չեն: օրինակ թեմական պատգամաւորական ժողովը իւր նախաձեռնութեամբ ինքնապաշտպանութեան համար գումար է հանգանակել եւ ծախսել մեր միջոցով: Նոյնը եւ Սալմաստում, Խոյում, Ուրմիայում: Պարսկաստանի ինքնապաշտպանութեան արտասահմանի մասնաճիւղը հանգանակութիւն է բացել Ոսկանապատում: ստացել ենք եւ պարսիկ յեղափոխականներից (բայց քիչ): Անշուշտ վերջին թուածս գումարները կազմակերպական մուտքեր չեն կարող հաշուել:

Արեւմտեան Բիւրոյի հաշիւների մէջ նշանակուած 27500 Ֆրանքը մենք ամբողջովին չենք ստացել: այդ գումարը փոխադրուած է եղել Գովկաս մեզ փոխադրելու, բայց մեծ մասը (դուրս գալով Քեուու խմբի ծախսը) մնացել է Արեւելեան Բիւրոյի մօտ, այժմ պարզ չէ ծախսուած է թէ՛ մնում է:

Հանք —
Մնացորդ 907-ից 8.500 զ.
Մուտք 908 9.435-40*
Ելք 908 14.915-45
Մնաց. 1.019-85**

Մուտք 909 4400-82
Ելք 909 5138
Մնացորդ 288-4

* Որից ստացած է ուրիշ մարմնից 4212 Ֆրանք
** Որից ստացած է » » 848-40 Ֆր.

Հաշիւներ ներկայացուած են 908 Օգ. 1909 Յուլիս: Կեքուած են եւ ստորագրուած Կ. Կ.-ի կողմից եւ Արեւելեան Բիւրոյի ներկայացուցիչի: Հանգանակուած է գրադարանի համար 1485 Ֆր. ծախս՝ 1830 Ֆր.: Արտակարգ ծախքեր (զանազան) բացի վերելի ծախքերից գրադարանի վրայ 1777 Ֆրանք: Ցենց մօտաւոր:

Բացատրութիւն տրուեցաւ ընկեր Վանիկի կողմէ եւ ըսաւ թէ քաղաքական պայմաններու պատճառաւ հաշիւների մի մասը չեն կարողացած պահել:

Տրապիզոն —
Մնացորդ 908 5.213-08*
Մուտք 909 1318
Ելք 909 5570**
Մնացորդ 908-08

Այս հաշիւները սկսում են Օգոստոսից, կան նաեւ

զանազան պահանջներ: Ներկայացուած են 904-ից մինչ 909 Յունիսը: Ընդհանուր տախտակ չկայ: Մուտք եղել է Ադաւնիի օժիտից եւ հանգանակութիւնից: Հաշիւները կազմել է եւ ստացել Պատասխանատու մարմնի ներկայացուցիչը, շրջանային ժողովի կողմից չէ ստուգուած, կայ նաեւ Զիֆոնի հաշիւ: Անցեալ Ընդհանուր ժողովի պատգամաւորին տրուած է եղել 1198 Ֆր., տան վարձք 240 Ֆր.: Խարխա թերթի դեֆիցիտը վճարել է Կ. Կոմիտէն 1900 Ֆրանք:

Համաձայն Երջանային ժողովի որոշումին, Խարխալ պիտի հրատարակուէր բաժնեգներից հաւաքուած գումարով, այս չէ արուած եւ ծախսուել է պատրաստի դրամից: Չէ ներկայացուած ամբողջ շրջանի հաշիւները: Մախասին հինգ ամսուայ ամսաթուղակ, որպէս Խարխալի խմբագրի, 540 Ֆրանք, թերթը հրատարակուել է Ապրիլից, իսկ թուղակը ստացել է Փետրուարից: Ընկերների վրայ պահանջ կը մնայ 429 Ֆր. Մախասի, եւ 403 Ֆր. Ժիրայրի: Չի բացատրուած վիճելի 220 Ֆրանքի մասին: Ցենց չունի:

Տրապիզոնի ներկայացուցիչը լրացուցիչ տեղեկութիւններ տուաւ եւ քննադատեց հաշուետուութեան թերի ըլլալը եւ պահանջեց լուրջ ուշադրութիւն դարձուի, քանի որ հաշիւները Երջանային ժողովի կողմից չեն քննուած եւ շրջանը յոյսը դրած է եղել Ը. Ժողովի հաշիւներին մարմնի վրայ: Կը մատնանչէ Կ. Կ.-ի կից գրավաճառական հաշիւների բացակայութիւնը:

Չուլալ նոյնը կը պահանջէ:
Ընկեր Թոփչեան դիտել կու տայ թէ բացակայ եղող ընկերներու մասին է խօսքը եւ Ընդհանուր ժողովի մէջ պէտք չէ լսուի միակողմանի քննադատութիւն:

Մուրատ կ'առաջարկէ լուրջ ուշադրութիւն դարձրել հաշիւներու վրայ:
Ժողովը կ'որոշէ հետեւեալը.
Ճնկատի ունենալով Տրապիզոնի գանգատները եւ Պատասխանատու մարմնի կողմէ ղրկուած քննիչի գեկուցումը, այդ խնդիրը յանձնել Խորհրդին իբր դատ»:

Կարին — 1907 — 1909
Հաշիւները քննուած եւ ստորագրուած են. տարիները եւ ամսաթուերը յայտնի չեն եւ անկարելի է իմանալ թէ իւրաքանչիւր տարուայ մուտքն ու ելքը ինչքա՞ն են:

Պարտք ունի 2018 Ֆր., ստանալիք՝ 895 Ֆր. Կ. Կոմիտէի գանձապահից: Գործիչ ընկերների վրայ ծախսուած է 4428 Ֆր.

Մուտք 908 8000
Ելք 908 8000
Մուտք 909 11.164-50*
Ելք 909 11164.50**

* Որից 2018 պարտք վերցրած
** Որից 895-15 ստանալիք

Ժողովը փակուում է ժամանակի ուշ լինելու պատճառով:

Քարտուղար՝ Նախագահ
ՀԱՅԿ ԲԱԹԱԿԱՆՆԵԱՆ
Մանսօթ — Հայկի բացակայութեան արտագրեցի եւ ստորագրեցի՝ ՎԱՀԱՆ

Լիստ 57. Սեալտ. 14 (Lisunt 57)

Նիստը բացուեցաւ նախագահութեամբ ընկեր Ակնունիի: Ժողովի թոյլտուութեամբ մեկնեցաւ ընկեր Գիսակ:

Հաշուեքներն յանձնախումբը ներկայացրեց հետեւեալ վիճակացոյց պատկերը, որ ցոյց կու տայ կուսակցութեան նիւթական հասոյթներու տարուց-տարի կրած փոփոխութիւնները:

Անդամավճարների մուտաւոր մուտք

Մարմիններ	Ֆր. 1907ի մուտք	Ֆր. 1908ի մուտք	Ֆր. 1909ի կու տարուայ մուտք
Ջրաբերդ	—	60	17
Քար	3092	3092	3092
Վան	—	233	935
Կարին	—	1967	1967
Վրտ	12445	15900	18185
Բաթում	—	6219	855
Տրապիզոն	—	—	480
Բագու	—	8225	—
Եգիպտոս	—	1465	—
Բալկան	42972	19134	3234
Ամերիկա	68215	37015	—
Պոլիս	—	2213	2213
Խարբերդ	—	—	815
Եր. Ուսանող. Սիոսք.	—	325	325
Իզմիր	—	673	673
Մարզուան	—	—	443
Պատասխան. մարմին	—	24	24

Մանսօթութիւն.—

1) Որովհետև հնարաւորութիւն չեղաւ ներկայացուած հաշիւներից վերականգնել ճշգրիտ եկամուտների անհրաժեշտ ելքերը, յանձնաժողովը ուշադրութեան առաւ միայն անդամավճարները, որոնք կը կազմեն կուսակցութեան եկամուտի կայուն մասը, այդպիսով ցանկութիւն ունենալով ցոյց տալ կուսակցութեան հասոյթների զարգացումը կամ անկումը:

2) 1907 թ. ամէն մարմնի եկամուտն էր միջին հաշուով 31681 Ֆր. 1908-ին 7421 եւ 1909-ին 5117 Ֆր. ինչ որ ցոյց կու տայ կուսակցութեան հասոյթների տարուէ տարի անկումը:

3) Քարի հաշիւները երեք տարուանը միասին ներկայացուած ըլլալուն՝ ինչպէս եւ Պոլսինն ու Կարինինը, երեք հաւասար մասերու բաժնուեցաւ, որով եւ կարելի

եղաւ ճշտել տարեկան իսկական հասոյթները:

4) Պալքանի եւ Ամերիկայի հաշիւներէն յայտնի չէր բուն խմբական հասոյթը, ուստի ստիպուած եղանք կոմիտէական մուտքը հաշուել իբր խմբական տուրք:

5) 15 մարմիններ հաշիւ ներկայացուցած են 1908-ի համար, որոնցից 4-ը սկսել են իրենց գործունէութիւնը Օգոստոսից: Միջին թիւը հանելու համար բաժնուած է 13 մարմնի:

Կուսակցութեան մուտքի աղբիւրները կանոնաւորելու եւ ելքը չափաւորելու համար, հաշուեքներն յանձնախումբը հետեւեալ առաջարկները կ'ընէ:

1) Մշակել հաշուական յատուկ եւ միօրինակ սխտեմ՝ բոլոր մարմինների համար, մուտքի եւ ելքի համար միանգամայն:

2) Սահմանափակում անձեռնմխելի գումարի համար:

3) Կենտրոնական Կոմիտէն իրաւունք ունի ծախսելու իր շրջանի հասոյթին 80%-ը, իսկ մնացած 40%ը կ'ուղարկէ կենտրոնական կասսա (Արեւմտեան եւ Արեւելեան Բիւրոներ): այդ 80%-ը պիտի ծախսուի՝ զինամարտական 80% — պրոպագանդ բանաւոր եւ գրաւոր 20% վարչական (դիւանական փոստ, կոնտրա, ժողով եւ այլ): 15% եւ անձեռնմխելի գումար — 5%:

4) Ամերիկա, Պալքան եւ Եգիպտոս կրնան ծախսել իրենց հասոյթի միայն 20%-ը:

5) Յատուկ նպատակներու համար (ինքնապաշտպանութիւն, բանտարկեալներ եւ այլ) ուղարկուած գումարներ կը ծախսուին միմիայն այդ նպատակներուն համար:

6) Հանգանակութիւն կրնան ընել միայն Կենտր. Կոմիտէները եւ Բիւրոները, իսկ միւս մարմինները Կենտր. Կոմիտէի հաւանութեամբ եւ անոր կնքուած յանձնարարականով:

7) Կուսակցութեան բոլոր դրամները պէտք է պահուեն պանքաներու մէջ:

8) Իւրաքանչիւր Կ. Կ.-ի հաշիւները կը ստուգեն Բիւրոները, քննիչները կամ իրենց շրջանային ժողովները, իսկ Բիւրոներու եւ Պատասխանատու Մարմիններու հաշիւները՝ ռայոնական ժողովները, իսկ եթէ ռայոնական ժողով չըլլայ՝ Խորհուրդը:

9) Կրճատել ուժիկներն ու ճանապարհածախսերը:

10) Փոխարինաբար դրամ տալ ի սպառ կ'արգելուի: Գանձապահին քով գտնուած դրամին պատասխանատու է համապատասխան մարմինը հաւաքարար:

11) Պահանջել այս կամ այն անհատի կամ ընկերոջ մօտ գտնուած կազմակերպական դրամները, նշանակելով որոշ ժամանակամիջոց:

Առաջարկուեցաւ նախ պիւտճէն եւ եկամուտը ճշտել եւ յետոյ անցնել ձեռնարկներու, որովհետև առանց ատոր անկարելի է ունէլ ձեռնարկ գծել: Այդ առթիւ տեղի ունեցան քննադատութիւններ կուսակցութեան մէջ

նշմարուող հաշուական եւ այլ թերութեանց շուրջը: Կուսակցութեան կենտր. կասսաները մտած գումարները տարեկան տարի նուազում են, որոնց պատճառները թէ ներքին են եւ թէ արտաքին: Բռնի հանգանակութեան գոյութիւնը, անոնցմէ գոյացած հասոյթներուն վրայ յոյս դնելով եւ գանոնք ընդունելով իրրեւ տեւական հասոյթ՝ ոյթ չէ դրուած բուն իսկ նորմալ հասոյթներուն: Կուսակցութիւնը պէտք է իր նորմալ հասոյթներէն մէջ տեղ հանէ իր նորմալ պէտքերուն դէմ:

Ձանազան նպատակներով հանգանակուած գումարները եւս նորմալ հասոյթի հետ չփոխուած են, որոնք նոյնպէս պէտք էին գործածուել իրենց նպատակին եւ բուն նորմալ հասոյթների հետ պիտի չունենային ոեւէ կապ: Զինական, մարտական, գրաւոր թէ բերանացի պրոպագանդի եւ վարչական ծախքերու մէջ պէտք է տիրէ համաչափութիւն, նայած թէ կուսակցութեան հասոյթները մասնաւորապէս ո՞ր ճիւղին ի նըպաստ կը գոյանան աւելի: Որպէսզի կուսակցութիւնն ըլլայ առողջ, պէտք է այդ համաչափութիւնը զարգացնել: Շեշտուեցաւ մասնաւորապէս ազատ գործիչների թիւը սահմանափակելու անհրաժեշտութեանը վրայ, ծանրանալով մասնաւորապէս այն սկզբունքի վրայ, որ իւրաքանչիւր ընկեր իր սեփական աշխատանքով ապրի, ինչպէս եղած է անցեալին մէջ: Ճիշտ է, որ ազատ ընկերները ունեն իրենց օգտակարութիւնները, բայց այդ օգտակարութեան հետ կապուած են նաեւ բազմապիսի վնասներ: Մեր եկամուտները պիտի չկանոնաւորուեն մինչեւ որ այս սկզբունքը չկիրարկուի ամենալայն չափերով: Ազատ եւ կազմակերպութեան հաշուով ապրող ընկերներու թիւը այնքան շատցած է, այդ տեսակէտով իրականութիւնը այնքան ճշտող է, որ շարքերն անգամ սկսած են մտածել, որ իրենց տուած դրամները այս կամ այն ընկերներին ապրեցնելու կը սահմանուի աւելի: Թուրքիոյ այժմեան պայմանները ամէն դիւրութիւն կու տան սեփական աշխատանքով ապրելու, բացառութիւն պիտի կազմեն այն ընկերները, որոնք հայկական շրջանէն դուրս են: Դաշնակցութիւնը իր նախկին տասը տարիներու ընթացքում հազիւ քանի մը գործիչներ ունէր մինչդեռ այդ նոյն շրջաններու գործունէութեան վրայ է, որ այժմ կանգնած է Դաշնակցութիւնը: Ընկերները պէտք է աշխատին ճարել այն տեսակ գործեր, որ դիւրութիւն տայ իրենց օգտակար ըլլալու նաեւ կուսակցութեան:

Ազատ գործիչներու անհրաժեշտութեան մասին խօսելով ընկերներից ոմանք հետեւեալ պատճառաբանութիւնները մատնանշեցին: Ազատ ընկերներու պահանջը կեանքի պահանջ է: Մեր գործելավայրերից եւ արտասահմանէն ամէն օր ազատ ընկերներու պահանջ կ'ըլլայ եւ այդ ուղղութեամբ դիմումները անպակաս են կեդրոնական մարմիններուն: Աշխատելու է շահագործման առջեւ առնել եւ գործի գլուխ կանչել արժանաւորները:

Իրրեւ սկզբունք պէտք է ընդունել ազատ ընկերներու մինիմում թիւը եւ գաւառներու եւ շրջաններու վերաբերմամբ դիմել իրենց համապատասխան մարմիններուն՝ տալով անոնց Ընդհանուր Ժողովի ցուցմունքները: Ազատ գործիչներու վերաբերմամբ խօսուած պարագային պէտք չէ առաջնորդուել նախապաշարումների եւ բամբասանքներու ազդեցութիւնէն, այլ անոնց գործէն. արտակարգ գործերը կը պահանջեն եւ արտակարգ մարդիկ: Ընթացիկ շրջանը մասնաւորապէս եւ բացառաբար կը պահանջէ ազատ գործիչներ. քանի որ մեր մտաւորականութեանն ու շարքերուն կը պակսի բաւարար չափով մտաւորական պաշար, այս տեսակէտով ալ Ընդհանուր Ժողովը պէտք է թոյլ տայ՝ գէթ իւրաքանչիւր Կեդր. Կոմիտէի՝ ունենալ մէկ մէկ ազատ գործիչ: Եթէ ԾՍ-ական թուականներուն մենք կը բաւականանայինք շատ փոքրաթիւ ազատ ընկերներով՝ պատճառն այն էր, որ Դաշնակցութիւնը խմբակցութիւն էր միայն, ուրիշ ոչինչ: Այժմ արդէն դարձել է լայնածաւալ կուսակցութիւն՝ իրեն համապատասխան կարիքներով. հետեւաբար անկարելի է առանց ազատ գործիչներու պահել կուսակցութիւնը բաղձալի քանակով եւ ծաւալով, այլապէս մենք կը լղառնանք՝ նոյնպէս խմբակցութիւն եւ ոչ թէ կազմակերպութիւն կամ կուսակցութիւն: Ոչ մէկ Կեդր. Կոմիտէ առանց ազատ գործիչի չի կարող տանիլ իր գործերը. տարբեր խնդիր է, եթէ Ընդհանուր Ժողովը սահմանափակում է Կեդր. Կոմիտէի ծախքերը եւ կարգադրում խնայող ըլլալ եւ քիչով բաւականանալ: Առանց ազատ գործիչներու՝ կուսակցութեան հասոյթը ինքնին պիտի նուազի եւ շարքերը պիտի կազմալուծուին: Չկան պատրաստուած շարքեր, որպէսզի կարելի ըլլայ ազատ ընկերներ չունենալու առաջարկը իրականացնել կեանքի մէջ: Գալով ռոճիկների հարցին մեր կուսակցութեան մէջ գտնուող ազատ գործիչները անհամեմատ աւելի նուազ ստացած են, քան միւս կուսակցութիւնները: Մեր ընկերները մընացած են իրենց համեստ ծախսերու սահմանին մէջ՝ երբ կազմակերպութեան պիւտճէն բարձրացած է իր սահմանէն:

Վիճաբանութիւնները շարունակուելով այս ուղղութեամբ 24 ձայնաւորներու 18-ին համաձայնութեամբ անցաւ հետեւեալ բանաձեւը.

«Ազատ ընկեր կարող են պահել միայն Կեդր. Կոմիտէները, այն պայմանով, որ ծախսերը երբեք չանցնեն Ընդհանուր Ժողովի կողմից որոշուած իրենց տեղական ծախսերու տոկոսի սահմանից»:

Ընկեր Սարգիսը իր կարծիքը կը խնդրէ արձանագրել, որ հետեւեալն է.— Ի նկատի ունենալով որ բիւրճէտային խնդիրի առիթով անկարելի է լինում խօսիլ այն ձեւով, որ այս կամ ընկերը անձնական բնոյթ չտայ եւ չվիրաւորուի, ձեռնպահ եմ մնում այդ կարեւոր խնդրի քուէարկութեան մէջ:

Նիստը փակուեցաւ որոշեալ ժամուն:

Քարտուղար՝ Նախագահ՝ ԺԻՐԱՅԻ

Ծանօթ.— Նրա բացակայութեան պատճառով արտագրեցի ես՝ ՎԱՀԱՆ

Նիստ 58. Սեպտ. 15 (առաւօտեան)

Ներկայ են 30 ընկերներ (28-ը ձայնի իրաւունքով): Նախագահում է ընկեր Ակնունին: Օրակարգն է՝ դրամական հարցեր: Զեկուցանում է ընկեր Ռուբէնը, որի կարծիքով՝ 1) ենթակոմիտէն իրաւունք պիտի ունենայ ծախսելու վարչական պրոպագանդային գործերի համար իր եկամուտի 10%-ը, 2) Կոմիտէն նոյն նպատակներով իր եկամուտի 15%-ը, [որ] Կեդր. Կոմիտէի համաձայնութեամբ 25%-ի կրնայ բարձրանալ 3) Կեդր. Կոմիտէն իր ծախսերը պիտի սահմանափակէ այն շրջանով, որ իր եւ իր շրջանի միւս մարմիններու ծախսերը միասին կազմեն Կ. Կ. ի շրջանի ամբողջ եկամուտի 80%-ը, իսկ 40%-ը դրուելի կեդրոնական կասսան՝ ընդհանուր ձեռնարկների եւ ծախսերի համար: Այս առթիւ եղած վիճաբանութիւնների մէջ կ'արտայայտուի այն միտքը, որ ենթակոմիտէի եւ կոմիտէի ծախսերի մասին չպիտի որոշել: Իւրաքանչիւր Կ. Կոմիտէի Շրջանային Ժողովի իրաւունք ունենայ բաշխել 80%-ը իր շրջանի զանազան մարմիններին՝ համաձայն ծախսի տեսակներին յատկացուած տոկոսներին:

Քուէարկուելով անցան հետեւեալ որոշումները.

- 1) Կ. Կոմիտէն իր շրջանով կրնայ ծախսել ամբողջ եկամտի 60%-էն ոչ աւելի. 40% անպայման պիտի ղրկէ կեդրոնական կասսան:
- 2) Շրջանային Ժողովը իր շրջանի մարմինների ծախսերի տոկոսը որոշելիս, մտաւորապէս ծախսերի հետեւեալ նորման կ'ընդունի. ա) Զինական 35% բ) մարտական-յեղափոխական-տեռորական 25% գ) պրոպագանդ (գրաւոր, բանաւոր) 25% դ) վարչական-դիւանական 15%:
- 3) Յատուկ նպատակներով ստացուած եւ հանգանակուած գումարները գործածել իրենց նպատակին:
- 4) Մի յանձնաժողովի միջոցով մշակել ընդհանուրի համար հաշուական սխտեմ:
- 5) Ուշք դարձնել դրամական աղբիւրների կանոնաւորման (անդամավճար, վիճակախաղ, ներկայացում, մասնակի հանգանակութիւններ եւ այլն): Ակնունին առաջարկում է ձեռնարկել Պոլսում մի մեծ հանգանակութիւն գէնքի համար: Կ'առարկուի, որ մի կողմից ինքնապաշտպանու-

թիւնը ժողովրդին թողած ենք, միւս կողմից մենք ենք այժմ գէնքի համար դրամ հաւաքում: Պէտք է ասած՝ հանգանակութեան յաջողութեան համար շանսեր չկան, ու կամաւոր հանգանակութեամբ հարուստներէն ոչինչ սպասել չէ կարելի:

Ռոստոմ.— Որոշ յաջողութիւն կարելի է սպասել, Ընդհանուր Ժողովը թող ընտրէ երեք հոգուց հանգանակիչ մասնախումբ:

Հայկ.— Որոշումների մէջ այս տարի էլ չեշտել, որ բռնի հանգանակութիւն չլինի:

Քուէարկուելով ընդունուած են հետեւեալ կէտերը եւս.

- 1) Հանգանակութիւնը լինում է յանուն Դիւանակցութեան կազմ. ծախսերի եւ մարտականի:
- 2) Ընդհանուր Ժողովը ընտրում է մի հանգանակիչ մասնախումբ
- 3) Այդ յանձնախմբից, Բիւրոներից եւ Կ. Կոմիտէներից դուրս ոչ ոք իրաւունք չունի հանգանակութիւն անելու:
- 4) Վերացնել դրամական յանձնարարականներ տալը
- 5) Կազմակերպական յանձնարարականները ղրկել յանձնարարուող ընկերոց գնալիք վայրի մարմին:
- 6) Կ. Կոմիտէների հաշիւները շրջանային, իսկ Բիւրոներից՝ ռայոնական ժողովները անպայման պիտի ստուգեն: Ուայոնական ժողով չգումարուելու դէպքում, Խորհրդի վրայ է ընկնում այդ պարտականութիւնը:
- 7) Ամբողջ եկամտի 5%-ը մեկուսացնելով կազմել անձեռնմխելի ֆոնդ:
- Ծանօթ.— Մարմիններից պահանջել որ այդ 5%-ը կեդրոնական կասսային ղրկելիք 40%-ից անմիջապէս գատեն եւ ուղարկեն Արեւմտեան Բիւրոյին:
- 8) Ոչ մի նպատակով ընկերներին փոխատուութիւն չանել: Գանձապահը պատասխանատու է առանց մարմնի գիտութեան դրամ բաց թողնելու:
- 9) Ուշք դարձնել դրամական աղբիւրների կանոնաւորման հետ եւ յետ պահանջել անհատների մօտ մնացած Զիֆոնի գումարները:
- 10) Ընկերների վրայ եղած պարտքերը գանձել եւ բացառիկ հանգանակութեանց հաշիւները փակել ու ներկայացնել ռայոնական ժողովին:
- 11) Արգելոււմ է ուրիշ կուսակցութեանց փոխարինաբար կամ իրրեւ նպաստ փող տալը: Երբ ոեւէ ձեռնարկ կամ ակտի համար է դիմումը, այդ ժամանակ մարմինները կարող են օգնել համագործակցութեան սկզբունքով:
- 12) Կոմիտէն ուժեղացնելու համար կուսակցական ամեն մի մարմին (Բիւրո, Կ. Կոմիտէ եւ այլն) պատրաստ է տարին գէ մի անգամ քննել իր շրջանի համապատասխան մարմինների հաշիւները, ինչպէս նաեւ ունեցած կուսակցական ինվենտարի (զէնք, մթերք եւ այլն) ապահով լինելը:
- 13) Կուսակցական այն մարմինները որոնք չեն ունեցաւ կուսակցութեան մթերքին, դրամական մուտքի եւ ելքի վերաբերեալ կնքուած եւ ստորագրուած հաշիւները.

արգելում է մասնակցել կուսակցութեան համապատասխան ժողովներին (շրջանային, ռայոնական եւ ընդհանուր):

14) Կուսակցութեան բոլոր մարմինների գանձապահներն ու ծախսարարները ամէն տարի իրենց հաշիւները մաքրելով՝ փոփոխուելու են վերընտրուելու իրաւունքով մարմնի պատասխանատուութեամբ:

Նախագահը կարող է վասպուրականի Կ. Կոմիտէի մի առաջարկը, որով Ընդհանուր ժողովին է թողնուում որոշելու, թէ վասպուրականի դէպքից առաջ անհատներից եւ համայնքներից հաւաքուած գէնքի դրամները, ցարդ գէնքով չվճարուած, ի՞նչ անել:

Վիճաբանութիւններից յետ, որոշուում է, «Յատուցանել զԵնքով. վասպուրականի Կ. Կոմիտէին եւ համապատասխան Բիւրոյին թողնելով ի՞նչ զԵնքով հատուցանելու որոշուումը, վասպուրականի Կ. Կոմիտէի եկամուտներով գումուած, թէ՞ ընդհանուր կազմակերպական»:

Ժողովը փակուեց ժամի 1-ին:

Քարտուղար՝ ՎԱՆԻԿ Նախագահ

Ծանօթութիւն.— Վանիկի բացակայութեամբ արտագրած լինելով սոյն արձանագրութիւնը եւ ստորագրեցի նրա փոխարէն՝ ՎԱՀԱՆ

Երեսմ 59

Նիստը բացուում է ընկեր Ակնունու նախագահութեամբ, առաւօտեան ժամի 8.30-ին: Ներկայ են 23 հոգի, որոնց թիւը ժողովի ընթացքում բարձրանում է 29-ի 25 ձայնով:

Կարդացուում են 45 եւ 48րդ նիստերի արձանագրութիւնները եւ վաւերացուում:

Ժողովը, նկատի առնելով որ աշխատանքները կարող են երկարել, եւ բուլղարական կառավարութեան կողմից հանուած խոչընդոտները՝ շուտ փակելու համար, որոշեց կարեւոր հարցերը լուծել, մնացածները թողնելով ինը հոգուց ընտրուած մի յանձնախմբի՝ աշխատանքները շարունակելու համար՝ եւ ցրուել:

Ընկեր Յովնանը զեկուցանում է Բիւրոնների դասաւորման մասին հետեւեալը, մասնաժողովի կողմից.

Որ ներկայ ժամանակաշրջանը անցողակի է, պիտի կազմել ժամանակաւորապէս մի յարմար դասաւորումն եւ վերջնականապէս չփոխել Բիւրոնների ռայոնները: Արեւելեան Բիւրոյին պիտի թողնել Կովկասը, Պարսկաստանը եւ Մեծ-Հայքը: Արեւել. Բ-ի մի մասը կը հաստատուի Մեծ-Հայքի մէջ, վարելով այդ վայրի գոր-

ծերը, իրեն համար ընտրելով բնակատեղի մի կարեւոր վայր, իսկ միւս մասը կը մնայ Կովկասում եւ կը վարէ Կովկասի եւ Պարսկաստանի գործերը:

Արեւմտեան Բիւրոյին պիտի թողնել արտասահմանը եւ Փոքր-Հայքը: Նկատելով որ Տաճկաստանի քաղաքական կացութիւնը վստահութիւն չի ներշնչում, Արեւմտեան Բիւրոն էլի կը մնայ ժընեւում, միայն մի քանի ընկերներ կը մնան Պոլիս եւ կը վարեն Արեւմտեան Տաճկաստանի գործերը:

Ընկեր Սարգիսը պաշտպանում է յանձնաժողովի առաջարկը:

Ճապոնացին առաջարկում է Արեւելեան Բիւրոյին թողնել Կովկասն ու Պարսկաստանը, Արեւմտեանին՝ Արեւմտեան Տաճկաստանն ու գաղութները, իսկ Մեծ Հայքի համար կազմել մի ուրիշ Բիւրո:

Ամերիկայի շրջ(անի) պատգամաւորը գտնուում է որ ամբողջ Տաճկաստանի համար [պէտք է] կազմել մի բիւրո, որը համաձայն Տաճկաստանի ընդհանուր քաղաքականութեան կը վարէ ամբողջ Թուրքիայի գործերը: Փոխանակ նորանոր բիւրոներ ստեղծելու, պիտի աշխատել Կ. Կ.-երը ուժեղացնել, հակառակ պարագայում, գործը կը կաղայ: Վարչական պատասխանատու գործեր ստանձնող ընկերները արտասահման չպիտի մնան, այլ երկրում. դա է պատճառը մեր գործերի անյաջողութեան եւ ընդհանուր թուլութեան:

Նիթրա.— Եթէ Բիւրոնները իրենց խողովակ-դերից [անցնում են] կառավարողի դերին եւ դառնում «կեդրոն», դա արդիւնք է Կ. Կոմիտէների թուլութեան. դրա համար էլ առաջարկում է մեծ կարեւորութիւն տալ գլխաւոր ոյժերին Կ. Կոմիտէների վրայ բաժանելուն:

Դուման.— Նկատել է տալիս որ այս հարցը սերտ կապուած է լեզուաբանական հարցի հետ եւ բացի այդ նաեւ միւս կուսակցութեանց դէպի մեզ բռնած քաղաքականութեան:

Ռոստոմ.— Արեւելեան Բիւրոյին պիտի թողնել Կովկասն ու Պարսկաստանը, իսկ Արեւմտեանին ամբողջ Թուրքիան. Արեւմտեան Բիւրոն կը մնայ իր տեղում, իսկ միւս կողմից պիտի ուժեղացնել Կ. Կոմիտէները: Այս ձեւով ժամանակաւորապէս գործը յառաջ կը գնայ, մինչեւ դրութիւնը կը պարզուի: Բիւրոնների ընտրութիւնն էլ պիտի թողնել ռայոնական ժողովներին:

Շրտան.— Չորրորդ Ընդհանուր ժողովը արդէն արել է մի շատ յարմար կարգադրութիւն, բաժանելով Արեւելեան Բիւրոն երկու հատուածների՝ Կովկասեան եւ Թրքահայաստանի եւ եթէ Տաճկաստանի պայմանները լաւ լինեն, Թրքահայկական հատուածը պիտի հաստատուէր Տաճկաստանում: Առաջարկում է ընդունել IV-րդ ժողովի որոշումը այժմ էլ, եւ Արեւելեան Բիւրոն կը մնայ ամբողջական իր երկու հատուածներով, մէկը Կովկասում, միւս Թուրքիայում եւ տարուայ մէջ մի քանի անգամ միասին ժողով կ'անեն, կապը էլ աւելի

սերտ անելու համար: Դէմ է Ռոստոմի առաջարկին, առարկելով որ այդ նշանակում է խաչ դնել կովկասեան գործունէութեան: Արեւելեան Բիւրոյի անդամներից 5-ը ընտրել Ընդհանուր ժողովում, 1-ը Կովկասի Ռայոնական ժողովում, միւսը Մեծ-Հայքի: Իսկ Արեւմտեան Բիւրոյի 7 ընկերներից 2-ը կը մնան ժընեւ 5-ը Պոլսում:

Յովնան.— Բիւրոնները ռայոնական ժողովներում ընտրելը շատ անյարմար է, մանաւանդ Արեւմտեան ռայոնի համար՝ թէկուզ հէնց զուտ տեխնիկական տեսակէտից: Բիւրոնները մինչ այժմ կատարել են կեդրոնի դերը, դրանից պիտի խուսափել: Ձգտելով իրականացնել մեր ապակեդրոնացման սկզբունքը անհրաժեշտ է ուժեղացնել Կ. Կոմիտէները, հակառակ դէպքում նրանց դերը կորսուած է եւ ամբողջ գործերը կ'ընկնեն Բիւրոնների տիրապետութեան տակ: Արեւելեան Բիւրոյից Մ.-Հայքը բաժանելը անյարմար է, որովհետեւ նա Կովկասից շատ աւելի հեշտ կարող է բաւարարութիւն տալ Մ. Հայքին, քան Արեւմտեանը՝ ժընեւից: Տաճկաստանում հէնց որ քաղաքական պայմանները քիչ փոխւեն, իսկոյն բոլոր ուժերն էլ կրկին Կովկաս պիտի թափւեն, որքան էլ աննպաստ, տխուր կացութեան մէջ լինի Կովկասը: Հիմնուելով դրանց վրայ պնդում է յանձնաժողովի առաջարկը:

Պիեռ.— Պաշտպանում է այն տեսակէտը, որ Կովկասի եւ Թուրքիոյ պայմանները բոլորովին տարբեր են, անհրաժեշտ է, որ Մ.-Հայքը իբր Թուրքիայի պայմաններ ապրող մի մասը, կապուի ամբողջ Թուրքիայի հետ եւ ո՛չ Կովկասի եւ մենք տեսնում ենք որ Թուրքիայում սահմանադրութեան հուշակումից յետ, Մ.-Հայքը այլեւս Կովկասի հետ ոչ մի կապ չի ունենում, եւ իր կապը պահում է Պոլսի հետ: Ամբողջ Թուրքիան ունենալու է մի Բիւրո, ընդհանուր քաղաքականութեան համաձայն վարելու գործերը: Տաճկաստանի համար մի առանձին Բիւրո ստեղծելով, դատերի անջատումն նկատողների վախը զուր է, որովհետեւ կուսակցութիւնը այդ ձեւով չի բաժանուի: Յանձնաժողովի առաջարկը անգործնական է այն տեսակէտից, որ այդքան թուով մենք Բիւրոյի համար ընկերներ չունենք, որովհետեւ de jure, անուսով թէեւ Բիւրո է լինում, բայց de facto այդ դրութիւնը կը յառաջացնէ Թուրքիայում թիւներ էլ: Առաջարկում է հետեւեալ ձեւը.— Արեւելեան Բիւրոյի շրջանը կազմում է Կովկաս, Ռուսաստան եւ Պարսկաստան. Արեւմտեանինը Թուրքիան եւ գաղութները: Արեւմտեանի մի մասը հաստատում է Մ.-Հայքի կարեւոր կենտրոններից մէկում, իսկ միւսը՝ Պոլսում: Դրոշակի խմբագրութիւնը յանձնել Ընդհանուր ժողովից ընտրուած 2 ընկերների, որոնք եւ պատասխանատու կը լինեն ժողովի առաջ:

Արեւելեան Բիւրոն կը բաղկանայ առնուազը 5 ընկերներից, իսկ Արեւմտեանը 7, որից երկուսը կը ստանձնեն Դրոշակի խմբագրութիւնը:

Բիւրոնների ընտրութիւնը կատարելիս, չպիտի ծանրանալ բացառիկ դրութեան վրայ, որով սահմանափակած կը լինենք ռայոնական ժողովների իրաւունքները: Կովկասում ինչ դրութիւն էլ ստեղծուի, հնարաւորութիւն կայ ժողով գումարելու, ուստի դեմոկրատիկ սկզբունքը խախտելու մասին չպիտի մտածել անգամ:

Ընկերներից մէկը խօսում է Պիեռի դէմ, պաշտպանելով յանձնաժողովի առաջարկը: Գտնում է որ Արեւելեան Բիւրոն բաժանելով երկու հատուածների, երբեք գործունէութեան մէջ չփոթ յառաջ չի գալ, որովհետեւ Մ.-Հայքի Արեւել. Բիւրոյի հատուածը յարաբերութիւն կարող է պահել Թիֆլիսի հետ, քան Պոլսի: Դէմ է չեթուրքիայում տարեկան 1-2 անգամ բոլոր մարմիններից ռայոնական ժողովներ գումարելու մտքին: Գաւառները գլխաւորաբար պիտի ուժեղացնել, ուղարկելով ընկերներ Մուշ, Կարին, Վան եւ այլն:

Մի քանի ընկերներ բուռն կերպով արտայայտուում են եւ ընդդիմանում այն առաջարկին, որը վերաբերում է Արեւելեան Բիւրոյի շրջանից Մ.-Հայքը հանելուն, առարկելով որ դրանով կովկասեան եւ Թուրքիոյ դատերը բաժանած կը լինենք. կապը՝ թէկուզ de jure, անհրաժեշտ է, կուսակցութեան ամբողջութիւնը պահելու համար, թող միայն այդ կապը լինի բարոյական:

Ակնունդ.— Խօսում է անջատումն ենթադրուող կարծիքի դէմ եւ առաջարկում հետեւեալ ձեւը. Արեւելեան Բիւրոյին թողնել Կովկասն ու Պարսկաստանը, իսկ Արեւմտեանին՝ իրա նախկին ռայոնում (արտասահման եւ Փոքր Հայք), իսկ երկու Բիւրոնների երկուական ներկայացուցիչները, իրենց հետ առնելով Մ.-Հայքի Կ. Կոմիտէներից մէկի մի անդամին, 5 ընկերներով կը կազմեն մի Բիւրո, որի ռայոնը կը կազմի Մեծ-Հայքը: Այսպիսով հնարաւոր կը լինի նաեւ ջնջել անջատման վերաբերեալ թիւր կարծիքը եւ կասկածները:

Անտոն.— Բիւրոնները յարաբերութեան խողովակներ են: Դաշնակցութիւնը, յարգելով գործունէութեան սկզբներում ապակենտրոնացման սկզբունքը պահում էր այդ դրութիւնը, իսկ յետոյ հետզհետէ շեղուեց եւ այժմ բիւրոնները դարձել են վարչական-կենտրոնական մարմիններ, շնորհիւ այն բանի, որ դրամը եւ ուժեղ ընկերները կենտրոնացան այդ մարմինների մէջ եւ Կ. Կոմիտէները թուլացան: Իսկ գալով Բիւրոյի վայրի մասին, ասում է որ Արեւելեան Բիւրոն Կովկասից չէ կարողանում անդրադառնալ Տաճկաստանի գործերի վրայ եւ ընթացք տալ նրանց, որով անհրաժեշտ է դառնում Մ.-Հայքը կապելը Արեւմտեան Բիւրոյի հետ:

Թեր եւ դէմ վիճաբանութիւնները այս ուղղութեամբ շարունակուում են:

Նախագահը քուէարկութեան է դնում հետեւեալ կէտերը.

1) Արեւելեան Բ.-ի ռայոնը կազմում է Կովկաս եւ Պարսկաստան +13, -12

- 2) Արեւելեան Բ.-ի ռաշոնը կազմում է Կովկաս, Պարսկաստան եւ Մ.-Հայք +10, -15
 - 3) Արեւմտեան Բիւրոյի ռաշոնը կազմում է Արտասահման եւ Փոքր-Հայք +10,-15
 - 4) Արեւմտ. Բ.-ի ռաշոնը կազմում է ամբողջ Թուրքիան եւ Արտասահման +12, -13
- Ժողովը փակուում է երեկոյեան ժամը 7-ին:

Քարտուղար՝ **ԶՈՒԼԱԼ**
Նախագահ

Նիստ 60

Ժողովը բացւում է գիշերուայ ժամի 8.3/4 ին, նախագահութեամբ Ակնունու: Ներկայ են 29 ընկերներ 25 ձայնով:

Մանդատային յանձնաժողովի զեկուցումից յետ, որոշում է Սեբաստիայի պատգամաւոր Գայլին տալ վճռական ձայնի իրաւունք:

Ժողովը երկար կանգ է առնում Բիւրոնների կազմի, նրանց ռաշոնների որոշման խնդիրների վրայ. ընդհանրապէս վիճաբանութեանց մէջ արծարծւում էր այն միտքը, թէ Մեծ-Հայքում եթէ ոչ յատուկ Բիւրո, բայց անպայման պիտի լինի հաստատուած այս կամ այն բիւրոյական հատուածի մի ուժեղ կազմ:

Երկար թեր եւ դէմ վիճաբանութիւններից յետ, ժողովը փակուում է, առանց մի եզրակացութեան գալու, թողնելով այդ հարցը յաջորդ նիստին:

Ժողովը փակուում է գիշերուայ դամը 12-ին:

Քարտուղար՝ **ԶՈՒԼԱԼ**
Նախագահ

Նիստ 61. 16/IX/09

Կը նախագահէ ընկեր Ակնունուի: Օրակարգի նիւթն է նախահաշիւը: Զեկուցանող ընկեր Ռուբէն հիմնուելով 1908-09 շրջանի կազմակերպական եկամուտներուն վրայ, ինչպէս նաեւ զանազան Կ. Կոմիտէներու ապագայի վերաբերմամբ ըրած ցուցմունքների վրայ, ցոյց է տալիս որ յառաջիկայ շրջանին համար կ'ունենանք հաւանակահարաւ տարեկան 280.000 ֆրանք մուտք:

Գաղութներու Կ. Կոմիտէների ծախսի սակը որոշելու համար եղած առաջարկի մը վրայ, միաձայնութեամբ որոշուում է այդ սակը վճել 20%:

Ընդհանուր կազմակերպութեան ծախսերի յատկացւած գումարների բաշխման վերաբերմամբ, առաջարկուում է հետեւեալ բանաձեւը.

«Մարմիններից իւրաքանչիւրը ընդհանուր նպատակների համար նախահաշուով նշանակուած գումարներից իրենց բաժինը (եկամուտի 40%, գաղութներից 80%) կարող են ուղարկել անմիջապէս կարիքի վայրը, միայն նախապէս Բիւրոյի համաձայնութիւնը կամ ցուցմունքն ստանալով:

260.000 ֆրանքի հաւանական մուտքից զեղչելով գաղութների Կ. Կոմիտէներուն 20% իսկ միւս Կ. Կ. [ներ]ի 60% կը մնայ կեդրոնական կասսային համար մօտ 120.000 ֆրանք, որը յանձնաժողովի կողմից առաջարկուում է բաշխել հետեւեալ միւթերու վրայ.

- 1) Արեւելեան Բիւրո,
 - 2) Արեւմտեան Բիւրո,
 - 3) Դրօշակ,
 - 4) Պրոպագանդ – գրաւոր եւ բանաւոր
 - 5) Զինա-մարտական 1) Կովկաս, 2) Տաճկաստան – Մեծ Հայք, Փոքր-Հայք, Կիլիկիա եւ 3) Պարսկաստան
 - 6) Բանտարկեալներ
 - 7) Անակնկալներ
- Տ[եռորական] Մ[արտական] գործերու պիւտճէն որոշուում է որ մաս է կազմում Զինա-մարտականին:

Ընկեր Անտոնի առաջարկութեանը վրայ, 15 ձայնով որոշուում է իբրեւ յարգանքի արտայայտութիւն, Սասունին եւ Ձէթունին ընել բացառիկ յեղափոխական աջակցութիւն մը, զէնքով կամ դրամով, մասամբ կազմակերպական եւ մեծ մասամբ կողմնակի միջոցներով: Գործադրուումը կը յանձնարարուի Արեւմտեան Բիւրոյին եւ Բիւրոներու երկրի սեկցիային:

Պիւտճէի գումարներու ճշտումը թողնուում է մարմիններու ընտրութիւնը կատարելուց յետոյ:

Քարտուղար՝ **ՊԵՐՃ**
Նախագահ

Նիստ 62

Նախագահուում է Ակնունուի: Ներկայ են 29 հոգի, 25 ձայնով: Բիւրոների վայրերի եւ գործունէութեանց շրջանների նկատմամբ լինում են նախկին ժողովների վիճաբանութեանց շարունակութիւնը ու քիչ յետոյ քուէարկւում հետեւեալ կէտերը:

- 24 ձայն
- 1) Բիւրոների գործունէութեան սահմանները մնում են 907-ի ժողովից վաւերացուած կանոնագրի շրջանակում. +20, -4
- 2) Արեւելեան Բիւրոյի մի մասը մնում է Կովկաս, միւսը՝ Մ.-Հայք +20,-4
- 3) Արեւելեան Բիւրոն ընտրուում է մի ամբողջական մարմին, իրենց յետոյ որոշուում են երկու վայրերում մնացող ընկերների թիւն ու անձնակազմութիւնները +19, -5

Ներկայ 25
5) Թողնել Արեւելեան Բիւրոյի հատուածներին մշակել իրենց յարաբերութեանց ձեւի մանրամասները միւս մարմինների (Կ. Կ.-երի հետ): +22, -3

Ներկայ 26
Ռայոնական ժողովներն են
ա) Արեւելեան Բիւրոյի շրջանում
1) Կովկասի, ուր մտնում է նաեւ Վրէժը, 2) Մ.-Հայքի
բ) Արեւմտեան Բիւրոյի ռայոնի
1) Արեւմտեան Տաճկաստանը՝ հաշուելով եւ գաղութները
2) Փոքր-Հայքի, եթէ միայն հաստատուած Կ. Կ.-երի թիւը 4-ից պակաս չէ:

Արեւմտեան Բիւրոն բաղկանում է առնուազը 7 հոգուց, որից 5-ը ընտրուում է Ընդհանուր ժողովը, իսկ երկուսը ռայոնական ժողովները (միաձայն):

Արեւելեան Բիւրոն բաղկանում է 8 հոգուց, որից 5 ընտրուում են Ընդհանուր ժողովից – 3-ը Կովկասի եւ 2-ը Մեծ-Հայքի համար: Կովկասի ռայոնական ժողովը ընտրուում է 2-ը, իսկ Մեծ-Հայքինը՝ մէկ, որով կովկասեան հատուածը (Բիւրոյի) լինում է 5 հոգուց, իսկ Թուրքիայինը (Մ.-Հայք) երեք (միաձայն):

VI Ընդհանուր ժողովի ժամանակը

Վեցերորդ Ընդհանուր ժողովը տեղի պիտի ունենայ 1911 թուին, իսկ բացման օրը եւ ամիսը թողնել Բիւրոներին՝ փոխադարձ համաձայնութեամբ նշանակելու (միաձայն):

Յանձնաժողովներ

Հանգանակիչ յանձնախումբ
Այս Ընդհանուր ժողովում ընտրել 3 հոգուց մի յանձնախումբ, որը ժողովը ցրուելուց յետ պիտի սկսի հանգանակութեան յօգուտ Դաշնակցութեան (միաձայն):

Հաշուեքննիչ մասնախումբ
Ընտրել 3 հոգուց 2 մասնախումբ, որը մանրամասնաբար քննելով բոլոր մարմինների հաշիւները – մասնաւորապէս Բիւրոների եւ Պատասխանատու Մարմնի, որոնց հաշիւները չեն քննուած եւ վաւերացուած շրջանային ժողովներ չունենալու պատճառով, եւ արդիւնքը տեղեկագրել բոլոր մարմիններին ու Խորհրդին (միաձայն):

- Իննի յանձնաժողով
Ընտրել 9 հոգուց մի յանձնաժողով որի պարտականութիւններն են.
1) Կարգադրել եւ ընթացք տալ առկախ մնացած հարցերը.
2) Քննել եւ լրացնել դրամական հարցերը եւ լրացնել բիւջէի կազմումը.
3) Կարգադրել միջազգային սոցիալիստական կոնգ-

րէին մասնակցելու ձեւը եւ միջոցները.
4) Քննել եւ ընթացք տալ Վրէժի ներկայացուցչի առաջարկները.

- 5) Զիֆոնի հարցի քննութիւնը.
- 6) Խմբագրել, լրացնել եւ հրատարակութեան տալ բոլոր բանաձեւերն ու որոշումները.
- 7) Խմբագրել կանոնագրի այն կէտերը, որոնք փոխուած են եւ հրատարակել բարեփոխուած կանոնագիրը.
- 8) Ընդհանուր ժողովի ցուցմունքների համաձայն բարեփոխել եւ հրատարակել նուազագոյն պահանջները:
- 9) Ծանօթանալ Խորհրդի կատարած դատերի հետ եւ արդիւնքը տեղեկագրել բոլոր մարմիններին.
- 10) Քննել եւ փակել Ընդհանուր ժողովի դրամական հաշիւները եւ անել կարգադրութիւն այժմ մարմինների մօտ գտնուած դրամների համար եւ բոլոր թղթերը յանձնել Արեւմտեան Բիւրոյին՝ արխիւ ուղարկելու (միաձայն):

Տրւում են եւ հետեւեալ որոշումները
1) Յանձնարարել Խորհրդին իր այժմեայ կազմով
ա) Քննել դոսիէն եւ տեսնել եղած բոլոր դատերը.
բ) Յանձնարարել ապագայ Խորհրդին, որ VI Ը. Ժ.-ի նախապատրաստական աշխատանքները ժամանակին կատարել, որպէսզի ժողովը աւելի արդիւնաւէտ պարամունքներ ունենայ (միաձայն):

– Նոր Կ. Կոմիտէների հաստատումը եւ նրանց յաջորդ ժողովին հրաւիրելը թողնել Բիւրոներին:
– Նկատելով որ այժմ յեղափոխական շրջանը անցաւ եւ ստեղծուել է գրեթէ նոր մալ պայմաններ, յանձնարարուում է բոլոր մարմիններին փակել իրենց շրջանում մինչ այժմ եղած հաշիւները (միաձայն):

Վանի տեղեկագրի ընթերցումն եւ նուազագոյն պահանջների քննութիւնը թողնել յաջորդ նիստին:
Ժողովը փակուում է երեկոյեան ժամը 8-ին:

Քարտուղար՝ **ՎԱՀԱՆ**
Նախագահ

Նիստ 63. 16 / IX / 09 երեկոյեան

Նիստը բացուեցաւ նախագահութեամբ Ակնունուի: Բացակայ են ընկերներ Նիկոլ եւ Մուրատ: Նախագահը զեկուցում տուաւ Խորհրդի կազմութեան եւ անոր հետ կապուած խնդիրներու մասին, յիշատակելով արեւմտեան ռաշոնի պատգամաւորներու բողոքը եւ ընկեր Ռոստոմի հրաժարումը՝ Խորհուրդի մասնակցութենէն:
Ընկեր Ռոստոմ իր հրաժարականը պատճառաբանեց այն իրողութեամբ թէ՛ արեւմտեան ռաշոնի ինը ընկերները՝ որոնք ժողովի 1/3-ից աւելի մասը կը կազմեն, որով եւ ժողովի մնացած ընկերները 2/3-ի մեծամասնութիւնը:

թիւն չի կազմեր, — մնալով իրենց որոշման վրայ՝ Խորհուրդի որոշումները չպիտի կրնան պարտաւորիչ հանգամանք ունենալ եւ հետեւաբար կազմակերպութեան շարքերու մէջ տարածանութեանց տեղի պիտի տրուի, ինչ որ անախորժ հետեւանքներ պիտի ունենայ:

Ժողովական ընկերները դիտել տուին, որ Խորհուրդի մասին անվստահութիւն մը գոյութիւն չունի, այլ անոր կազմութիւնը յանձնարարող կանոնական-սկզբունքային տեսակէտն է, որ կը քննադատուի, ինչպէս նաեւ այն՝ որ ներկայ Խորհուրդը իր սեղանին վրայ ունի վանի խնդրին նման էական եւ ցնցող բնաւորութիւն ունեցող հարց մը, որոնց շուրջը ոչ մէկ թերացում ընդունելի չէ: Նախագահը առաջարկեց վստահութեան քուէ՝ Խորհուրդին նկատմամբ, որուն հարկ չտեսնուեցաւ արդէն իսկ գոյութիւն ունենալուն համար:

Բայց որպէսզի վանի հարցի մասին Խորհուրդի որոշումներէն դժգոհներ չմնան, առաջարկուեցաւ Խորհուրդը ուժեղացնել Ընդհանուր Ժողովին կողմէ ընդունուած երեք ընկերներով: Առաջարկը ընդհանուր հաւանութեան ենթարկելով՝ ընտրութիւնը յետաձգուեցաւ յաջորդ նիստին:

Յետոյ նախագահը կը բացատրէ Նիթրա-Գարօ խնդիրքի շարժառիթներն ու պարագաները՝ համաձայն Պատասխանատու Մարմնի կողմէ եղած քննութեանց արձանագրութեան եւ անոր որոշման:

Ներկայ Խորհուրդը՝ համաձայն կանոնագրի, քննելով այս խնդիրը՝ ընկեր Նիթրայի մասին կայացած որոշումը կը բեկանէ՝ խնդրին քննութիւնը շարունակելու առաջադրութեամբ:

Ընկեր Նիթրա դիտել կու տայ որ ընկեր Գարոն չէ յարգած գաղտնապահութեան այն պայմանը՝ զոր սահմանուած էր Պատասխանատու Մարմնի կողմից եւ ընդհակառակը ընկերը ցոյց տուած է ոչ միայն հակաընկերական ընթացք, այլ հակախորհրդակցական աթի կատարած է, ուստի ընկեր Նիթրա իրաւունք կը զգայ հրապարակով պարզել խնդիրը եւ ճշմարտութիւնը երեւան հանել:

Իսկ ընկեր Սարգիս Խորհրդի որոշման դէմ իր հետեւեալ կարծիքը կը խնդրէ արձանագրել այսպէս.

«Ի նկատի ունենալով որ ընկեր Ակնունին իրրեւ Պատասխանատու Մարմնի անդամ, հետեւապէս իրրեւ Շահրիկեանին դատող վերոյիշեալ մարմնի մէջ, չէր կարող դատող լինել նաեւ Խորհրդի մէջ, ինչպէս եւ Ընդհանուր Ժողովում էլ այդ մասին արտայայտուեց, ի նկատի ունենալով որ Թոստումը չէ մասնակցել Խորհրդի նիստերին, գտնելով որ Ընդհանուր Ժողովը մի քանի ընկերներու կողմից ցոյց տուած անվստահութիւնը բարոյական իրաւունք չի տալիս Խորհրդին գործի անցնելու եւ որ ընկեր Յովնանն էլ հակառակ է տրուած որոշումին, գտնելով որ գործի քննութիւնը դեռ չէ վերջացած, ես գտնում եմ որ Խորհուրդի որոշումը հակաս-

րինական է այն պարզ պատճառով, որ դատական խնդիրներում 2/3-ի մեծամասնութեամբ կարելի է ունէ որոշում բեկանել կամ վճիռ տալ, այն ինչ վեց հոգուց միայն (3) երեք հոգի են մասնակցել վճռին»:

Քարտուղար՝ Նախագահ
ԺԻՐԱՅՐ

Նիստ 64. 17 / IX / 09 առաւօտեան 9-ին

Նախագահում է Ակնունի:
Ներկայ են 29 ընկերներ 25 ձայնով:
Օրակարգ — քննուած խնդիրների վերջնական բանաձեւերի ընթացումն եւ քուէարկութիւնը:
Ժողովի ընթացքում քուէարկուեցին եւ ընդունուեցին հետեւեալ բանաձեւերը.

I Նուագագոյն պահանջների մէջ⁶¹

- 1) Ծրագրի վերնագրից հանել «նուագագոյն» բառը, թողնելով միայն «պահանջներ»:
- 2) Նուագագոյն պահանջների նախաբանի ութերորդ տողից «լայն ռանկավարութեամբ» նախադասութեան եւ շարունակութեան միջեւ զետեղել «դաշնակցական հիմունքների վրայ»:
- 3) Նախաբանի վերջին տողից «նուագագոյն-mini-mum» բառերը ջնջելով, շարունակութեանը կցել. «յայտարարելով որ կուսակցութեան նպատակներին ձգտելու ենք ոչ-քաղաքական անջատման ընթացքով, այլ պետական կազմի վերակազմութեամբ դաշնակցական հիմունքների վրայ»:
- 4) Առաջին յօդուածը սրբագրել. «Թուրքաց Հայաստանը կազմում է Օսմանեան սահմանադրական պետութեան անբաժան մասը հիմնուած տեղական լայն ինքնավարութեան վրայ»:
- 5) 3-րդ յօդուածի մէջ «Թուրքաց Հայաստանը, ինչպէս նաեւ Թուրքիոյ միւս ռայոնները...»:
- 6) 12-րդ յօդուածի սկզբում «կատարեալ» խօսքը դնել:
- 7) 14-րդ յօդուածի առաջին տողի վերջակէտը ստորակէտ դարձնել:
- 8) Իբր վերջաբան պահանջների «Դաշնակցութեան

61.- «Նուագագոյն պահանջները» մաս կը կազմէ Գ.Յ.Ղ. 2-րորդը Ընդհ. ժողովի (1907) հաստատուած Ծրագրի քաղաքական բաժնին: Առաջարկուած է քուէարկուած բանաձեւերը կը վերաբերին անոր «Թուրքաց Հայաստան» գլուխին: Բաղդատութեան համար տեսնել նաեւ «Նիւթր»-ու 9. հատոր, էջ 324-325:

իւրաքանչիւր գործելավայրի (Ռուսաստան, Թուրքիա եւ Պարսկաստան) ռայոնական ժողովներին է թողնուած մշակել յատուկ պլատֆորմ ընթացիկ անմիջական պահանջների վերաբերեալ»:

II Թուրքիոյ դաշնակցական բուրձ մարմիններն իրաւունք ունեն փոխադարձ համաձայնութեամբ ի հարկին, գումարել միասին ռայոնական ժողով:

III Դաշնակցական պատգամաւորների դիրքը պարլամենտում.

«Կուսակցութեան մարմինների հետ միասին, Ընդհանուր ժողովի կողմից գծուած ուղղութեան հետեւելու են նաեւ Թուրքիայի, Ռուսիայի եւ Պարսկաստանի պարլամենտներում աշխատող դաշնակցական ընկերները:

Վերջիններիս հրահանգում է նաեւ.

- 1) Գործել հաւաքական խորհրդակցութեամբ եւ պատասխանատուութեամբ. բոլոր պարագաներում քննուող հարցերը լուսաբանել աշխատաւոր ու ճնշուած խւերի տեսակէտից:
- 2) Միմիստրութիւնների եւ կառավարութեանց նկատմամբ պատգամաւորները բռնելու են անաչառ քննադատողի դեր, պաշտպանելով սկզբունքներ ու հանրային շահեր եւ ո՛չ անձեր:
- 3) Դաշնակցական պատգամաւորներին ինչպէս եւ դաշնակցականներին առհասարակ, արգելու է մտնել միմիստրական կազմերի մէջ:
- Ծանօթութիւն.— Այս որոշումը չի վերաբերում յեղափոխական եւ բացառիկ անցողական շրջաններին, երբ շրջանի ղեկավար մարմնի համաձայնութեամբ, ընկերներ կարող են մտնել ժամանակաւոր կառավարութեան մէջ, դադարելով նոյն օրից կուսակցութեան գործօն անդամ լինելուց:
- 4) Ընդունելով որ իւրաքանչիւր դաշնակցական պարլամենտական ֆրակցիա կազմում է մի մարմին, Ընդհանուր ժողովը պարտք է դնում նրանց վրայ իբրեւ այդպիսին, մասնակցել իւր ներկայացուցչի միջոցով կուսակցական ընդհանուր ժողովներին եւ ներկայացնել գործունեութեան հաշուետուութիւն:
- 5) Պահել սերտ յարաբերութիւն իրենց ընտրող շրջանի 4. Կոմիտէների հետ՝ տալով վերջիններին հարկ եղած տեղեկութիւնները:
- 6) Զխորչել ժամանակաւոր բլոկներից, կոնկրետ հարցերի շուրջը, սկզբունքային համեմատական կուսակիցների հետ:
- 7) Պատգամաւորները իրենց պարլամենտական քայլերի համար պէտք է խորհրդակցեն շրջանի բարձր մարմնի հետ:

IV Համագործակցութիւն Թուրքիոյ բուրձ քաղաքական կուսակցութիւնների հետ (հայ եւ օտար)

Սօսիկ[ից] ծանօթանալով Օսմանեան կայսրութեան մէջ եղած այլեայլ քաղաքական կուսակցութիւնների եւ խմբակցութիւնների գործունեութեանը,

Ընդհանուր ժողովը

- 1) Նկատելով որ առանց բոլոր սահմանադրական տարրերի համագործակցութեան եւ մերձեցման շատ դժուար, նոյնիսկ անհնար պիտի լինի ապահովել Սահմանադրութիւնը ռեակցիոն էլէմէնտներից որոնց վերլեւումն հաւանականութիւնը դեռ շատ զօրեղ է.
- 2) Նկատելով որ գործող քաղաքական կուսակցութիւնների ներքին թշնամանքը եւ հակամարտութիւնը անեմանե՛ծ եւ նպաստաւոր գէնքն է ռեակցիոնի ձեռքում նորից հրապարակ գալու նորահաստատ ռեժիմն կործանելու նպատակով, ինչպէս ցոյց տուեց Մարտ 31 դէպքերը.

Որոշեց

Շարունակել համագործակցել Իթթիհատ վէ Թերաքքի կուսակցութեան հետ ընդհանուր ձեռնարկներին, խառն կոմիտէների միջոցով, ամէն ջանք գործ դնել պաշտպանելու սահմանադրութիւնը եւ աւելի ամրապնդելու հայ եւ թուրք ժողովրդների յարաբերութիւնները, մնալով հաւատարիմ Դաշնակցութեան հիմնական սկզբունքներին եւ դուրս չգալով Ընդհանուր ժողովի տուած ուղղութիւնից:

Դրա հետ միասին ժողովը հրահանգում է մարմիններին.

ա) Ոչ մի ջանք չխնայել աջողցնելու համար դիմադիր քաղաքական հայ կուսակցութիւնների համերաշխ գործակցութիւնը:

Ծանօթ.— Դրա հետ միասին յանձնարարում է բոլոր մարմիններին ոյժ տալ իրականացնելու Դաշնակցութեան IV Ընդհանուր ժողովում որոշուած «միջկուսակցական ատեաններին»:

բ) Միջկուսակցական համերաշխութեան նոր ոյժ տալու եւ ընդհանուր տակտիկ մշակելու համար, ձեռնարկել բոլոր ազգերի քաղաքական կուսակցութիւններից ընդհանուր կոնգրէի գումարման նախաձեռնութեան:

գ) Սերտ կապ հաստատել մակեդոնական կուսակցութիւնների հետ, որոնք եղել են առաջին դաշնակիցներ բռնակալական ռեժիմը տապալելու գործի մէջ եւ ներկայումս կարող են նպաստել սահմանադրական ռեժիմի գարգացմանը դեմոկրատիկ ուղղութեամբ:

Դրա հետ միասին Դաշնակցութեան Ընդհանուր ժողովը որոշեց կոչ անել մակեդոնական կազմակերպութեան երկու հատուածներին՝ վերջ տալ երկրի եւ յեղափոխութեան վնասող արիւնահեղ հակամարտութեան եւ այդ քայլով զօրեղացնել համագործակցութեան աշխատանքը:

V Գաղութների բանաձևեր

Դաշնակցության V Ընդհանուր ժողովը, լսելով Ամերիկայի, Պալքանի, Եգիպտոսի եւ Եւրոպայի հայ գաղութների վերաբերմամբ եղած գեկուցումները եւ ծանօթանալով անոնց կազմակերպական, կրթական-կուլտուրական վիճակին եւ պետքերուն, եւ նկատի առնելով

1) Որ Թուրքիոյ ներկայ քաղաքական-տնտեսական պայմաններու մէջ չպիտի կասի գաղթականութեան հոսանքը եւ հետեւաբար կազմակերպութիւնը պիտի պահէ իր գոյութեան իրաւունքը նոյն գաղութներու մէջ եւ որ պիտի շարունակէ իր միւթական եւ բարոյական օժանդակութիւնները երկրի կազմակերպական գործին,

2) Որ գաղութներու հայութիւնը կազմուած ըլլալով Թուրքիոյ գրեթէ ամէն կողմերէ եկած հայերէ՛ ունի իր կարեւոր ներգործութիւնն ու դերը՝ Թուրքիոյ հայութեան կուսակցական եւ կուլտուրական կեանքին մէջ, եւ գաղութներու կազմակերպութեանց շարքերէն երկիր դարձող պատրաստուած ընկերները կրնան օգտակար հանդիսանալ իրենց մտաւոր մարզական պատրաստութիւններով⁶².

3) Որ գաղթականութիւնը մնալով անուշադիր՝ կը գտնուի լուծուելու վտանգին տակ, զինք շրջապատող կուլտուրայի ուժեղ ազդեցութեան շնորհիւ,

Կը յանձնարարենք

ա) Ձարկ տալ գաղութներու պրոպագանդին,

բ) Ոչ մէկ ջանք չխնայել յարաբերութեան մէջ դնելու համար հայ գաղութները՝ տեղական աշխատաւորական շրջաններու եւ ընկերվարական կազմակերպութիւններու հետ.

գ) Ձեռնհաս մարմիններու կողմէ ուղարկել մնայուն եւ պատահական պրոպագանդիստ ուժեր՝ համաձայն իւրաքանչիւր գաղութի կարիքին:

Ծանօթ.– Պարտադրել Եւրոպայի դաշնակցական ուսանողական միութիւնը՝ որպէսզի իր պարտականութիւններէն մէկը նկատի գաղութներու պրոպագանդը եւ այդ ուղղութեամբ գործ դնի շօշափելի աշխատանք:

VI Պահանջ Օրինականագման

Հիմնուելով ժողովի նախորդ նիստի որոշման վրայ, որով ցանկալի է համարուած Դաշնակցութեան օրինականացումը՝ քաղաքական բարդութիւններ չստեղծելու համար սահմանադրական Թուրքիայի սահմաններում շարունակելով գաղտնի գործունէութիւն.....⁶³ ինչպէս եւ նոր ռեժիմն ապահովելու գործում,

Որոշած լինելով սկզբունքային շեղումներ չանել, այլ միայն տակտիքային այնպիսի փոփոխութիւններ, որոնք առանց վնասելու կազմակերպութեան, կարող կը լինեն նպաստել նրա գործունէութեան թէ ինքնապաշտպանութեան եւ թէ սահմանադրութիւնը պաշտպանելու գործում,

ժողովը որոշեց՝

ա) Հրաժարուել դաւադրական միջոցների գործադրութիւնից ներկայ պարագաներում

բ) Կիրարկանել մարտական միջոցները սահմանադրութիւնը պաշտպանելու համար,

գ) Ընդունել մեր շարքերի մէջ, ինչպէս անցեալում, սրանից յետոյ մանաւանդ ոչ հայ անդամներ, որոնք ընդունում են կուսակցութեան ծրագիրը, պահպանելով կազմակերպական ազգային-խմբակցական սիստեմը,

դ) Ընդունել հիմք Հ.Յ.Դ. Թուրքիոյ հատուած անունը: Դրա հետ միասին Ընդհանուր ժողովը միաձայն որոշեց, ամէն կերպով, օրինական բոլոր միջոցներով, բողոքել ընկերակցութեանց օրէնքի Չորրորդ յօդուածի դէմ, որը իր անարդար իմաստով, փոխանակ նպաստելու ազգերի մերձեցման, դուռ կը բանայ ներքին բարդութիւնների համար:

Այս բանաձեւի կէտերը յայտարարել իբր կազմակերպութեան որոշում, իսկ օրինականացման խնդիրը յայտարարել կառավարութեան հետ ներքին բանակցութիւններից յետոյ:

VII Պրոպագանդի բանաձեւ

Ծանօթանալով կազմակերպութեան պրոպագանդային (զրաւոր եւ բանաւոր) նուիրուած տեղեկութիւններին,

Ընդհանուր ժողովը որոշեց՝

1) Կուսակցութեան կենտրոնական օրգան «Դրօշակը» շարունակել ժընելու:

2) «Դրօշակը» ժընելից մի այլ եւրոպական քաղաք, Պարիզ՝ ամենայարմարը, տեղափոխելու կարգադրութիւնն ու որոշումը թողնել Արեւմտեան Բիւրոյին կամ խմբագրութեան:

3) Հրատարակել «Դրօշակը» ամիսը մի անգամ եւ նրա բովանդակութեան մէջ առաջնակարգ տեղ տալ ա) ծրագրային հարցերին, բ) Սոցիալիստական ու յեղափոխական վարդապետութեան նուիրուած ուսումնասիրութեանց գ) մեր երկրի եւ կուսակցութեան գործունէութեան վերաբերեալ լուրջ տեղեկագրերին:

4) Ընդունելով կիսապաշտօնական թերթերի օգտակարութիւնը, թողնել համաձայն մեր կանոնագրի, իրաւասու մարմիններին՝ հիմնել կիսապաշտօնական օրգաններ:

5) Նկատի ունենալով կազմակերպութեան դրամական ներկայ անձուկ վիճակը, եւ այլ աւելի կարեւոր ձեռնարկների անյետաձգելիութիւնը, կիսապաշտօնական

62.- Մարզականը պէտք է հասկնալ «մարտական» իմաստով:
63.- Բնագրին մէջ բաց ձգուած մէկ բառի տեղ:

թերթերին նպաստ չտալ կազմակերպութեան դրամարկըից, թողնելով շրջանի մարմիններին հոգալ այդ ծախսերը կողմնակի աղբիւրներից:

6) Շարունակել երկու գլխաւոր կենտրոններում, այն է Պոլիս եւ Թիֆլիս արդէն հրատարակուող թերթեր, տալով որոշուած նպաստ մինչեւ 1910 Յունուար (Ազատամարտին 8000 իսկ Հորիզոնին 5000 ֆրանք): Յանձնարարել ռայոնական ժողովներին, սրանից յետ հոգալու ծախքերը կողմնակի աղբիւրներից:

7) Շարունակել բրոշուրների հրատարակութիւնը ժընել, Պոլիս եւ Կովկաս, յարաբերութեան մէջ դնելով այդ երեք վայրերի հրատարակիչ մասնախմբերը, գործի մէջ հետեւողականութիւն մտցնելու համար:

8) Առանձին հոգ տանել առհասարակ ուժեղացնելու կուսակցութեան գրաւոր պրոպագանդը (եւ բանաւոր) թէ վերը յիշուած օրգանների, թէ տեղական շրջանների պրոպագանդիստների դասընթացքների, դասախօսութիւնների, լսարանների եւ թռուցիկների միջոցով, իբրեւ լաւագոյն միջոց տարածելու կազմակերպութեան մտքերը եւ խտացնելու մեր շարքերը:

Ծանօթութիւն.– Թռուցիկներ հրատարակելը վերապահուում է ի միայն Կ. Կոմիտէներին կամ նրա համաձայնութեամբ:

VIII Կիլիկիայի դէպքերի վերաբերեալ

Հ.Յ.Դ. Ընդհանուր ժողովը լսելով Կիլիկիոյ շրջանին եւ վերջին աղէտներու մասին արուած գեկուցումները, ինչպէս նաեւ քննութեան ենթարկելով յարակից պարագաները, եկաւ հետեւեալ եզրակացութեան.

Հաստատելով թէ՛ հայ ժողովուրդը ընդհանրապէս եւ հայ կուսակցութիւնները մասնաւորապէս Կիլիկիոյ, ինչպէս եւ Օսմանեան կայսրութեան մէջ չեն հետեւած անջատողական քաղաքականութեան, այլ նուիրուած են եղեր արիւնոտ մէկ կռուի մը՝ ընդդէմ բռնակալութեան եւ հայատեաց կառավարութեան,

Թէ՛ սահմանադրութեան յայտարարութիւնը բոլոր ազատականներուն հետ միասին՝ խանդավառօրէն ողջունուած է ամբողջ հայութեան կողմէ, մինչ ընդհակառակը, հին ռեժիմի արքանակները՝ կաշառակեր պաշտօնեաներ, դերեպէյիներու ժառանգներ եւ իսլամները արտօնեալ դասակարգ կարծող տգէտներ, դժգոհ էին սահմանադրութենէն եւ ազգային հաւասարութենէն, ինչ որ շեշտած էին բազմաթիւ պարագաներու տակ եւ տարբեր ձեւերով.

Թէ՛ կառավարական պաշտօնեաները բռնած էին անտարբեր դիրք՝ դէպի այս ռեակսիոներական փորձերը, պարագայ մը՝ որ միանալով 1895-96ի ջարդերու մեղսակիցներուն անպատիժ մնալուն, ենթադրել տուաւ տգէտ խուժանին թէ կարելի է անպատիժ կերպով թալլել, խոշտանգել եւ կոտորել հայը,

Ապացուցուած համարելով թէ՛ Մարտ 31-ի վաղորդայնին սկսած կիլիկիան կոտորածներու ատեն հայերը ո՛չ մէկ տեղ – նոյնիսկ զուտ հայկական շրջաններու մէջ – նախայարձակ չեն եղած, այլ ամենուրեք բռնած են միմիայն պաշտպանողական դիրք եւ հակառակ ասոր անխնայ կերպով կոտորուած են այն բոլոր վայրերուն մէջ, ուր հայը կազմած է չնչին փոքրամասնութիւն կամ վար դրած է պաշտպանողական զէնքը անձնատուր ըլլալով հակառակորդին,

Թէ՛ տեղական կառավարական պաշտօնեաները – ի բաց առեալ սակաւաթիւ անհատներ – դաւաճանած են իրենց նուիրական պարտականութիւններուն ուղղակի կամ անուղղակի կերպով խրախուսելով կոտորածը, ռետիֆները⁶⁴ զինելու պատրուակին տակ՝ զէնք բաժնելով բաշխագուզներուն կամ թոյլ տալով կողոպտելու զինական պահեստներ.

Թէ՛ զինուորական դրութիւն յայտարարել յետոյ, նախնական քննութիւններուն մասնակցած են կոտորածի կազմակերպիչներէն շատերը, որոնք ծածկելով իսկական մեղաւորները եւ յանցանք բարդելով հայերուն վրայ, կարողացան դատապարտել հայեր, որոնց միակ «յանցանքն» էր եղած ինքնապաշտպանութեան բնական թելադրութիւնը.

Գտնելով թէ վերջին կիլիկեան աղէտներու ժամանակ սպանուած են առնուազն 10.000 տեղացի եւ դրսեցի աշխատաւոր հայեր, ամէն մէկը նեցուկ ամբողջ ընտանիքի մը.

Թէ՛ կոտորածի ատեն մարդասպաններու յատուկ ուշադրութեան առարկայ են եղած անհող եւ հողատէր ընտանիքները, որոնց բոլոր անդամները կոտորելով՝ ոճրագործները նպատակ են ունեցել «մահիլիլի»⁶⁵ օրէնքով տիրանալու «ժառանգ չունեցող» կալուածներուն, Թէ՛ սպանուածները թողած են հազարաւոր այրիներ, 10.000էն աւելի որբ ու անպաշտպան այրիներով.

Թէ՛ 7000էն աւելի ընտանիքներ ամբողջովին զրկուած են բնակարանէ, գործիքներէ, անասուններէ ու նպարէ.

Թէ՛ նոյնաչափ ալ ընտանիքներ – ազատած կոտորածէ – կիսով չափ կամ ամբողջովին ենթարկուած են թաւանի, զրկուելով տասնեակ տարիներու ընթացքին իրենց ձեռք բերած հարստութենէն.

Թէ՛ այդ միլիոնաւոր ընդհանուր վնասէն միայն ամենաչնչին մասն է վերադարձուած տէրերուն, իսկ մնացածը կը գտնուի հարեւան թաւանճիներուն քով կամ վաղուց ի վեր վաճառուած եւ սպառուած է.

Համոզուած թէ՛ առանց հայերուն կրած միւթական վնասներու հատուցման,– սովի, ցուրտի եւ այլ զրկանքներու պատճառով, Կիլիկիայի հայութիւնը անխուսափելիօրէն գտնուում է նոր, խաղաղ ձեւով մը առաջ տարած կոտորածի առջեւ,– մինչ միւս կողմէն ուրիշին աշ-

64.- Պահեստի զինուորները:
65.- ժառանգորդ չունեցող հողերը, գոյքերը պետական սեփականութիւն նկատելու օրէնք:

խատանքով հարստացած եւ անպատիժ մնացած թալանճիները նոր խրախոյս կը ստանան կրկնելու իրենց արարքները նաեւ ապագային.

Թէ՛ Թուրքիոյ պէս յետամնաց երկիրներու մէջ նման շարժումներու ատեն ամենամեծ պատասխանատուութիւնը պէտք է իյնայ ոչ այնքան կոյր գործիք խուժանին վրայ, որքան ժողովրդական զանգուածներու պաշտօնական եւ անպաշտօն ղեկավարներուն ու այդ զանգուածները գրգռող ու ֆանատիկացնող ամենայայտնի անհատներուն վրայ.

Թէ՛ արդարութեան անաչառ գործադրութիւնը Կիլիկիոյ մէջ՝ ոչ միայն անկապտելի իրաւունք է տուածներուն, այլեւ միջոց՝ յանցաւորները պահելու հասարակական օրինականութեան սահմաններուն մէջ եւ միակ պայման՝ սահմանադրական կառավարութիւնը եւ ամբողջ պետութիւնը դնելու իրենց պարտականութեան եւ կոչման բարձրութեան վրայ.

Նկատի ունենալով ահա այդ բոլորը, Դաշնակցութեան Ընդհանուր ժողովը կ'որոշէ.

Յետանուտ ըլլալ կուսակցական ու այլ միջոցներով իրագործել հետեւեալ պահանջները.

ա) Օրինակելի պատժի ենթարկել տալ իրենց պաշտօնին մէջ թերի գտնուած պաշտօնեաները, ինչպէս նաեւ կոտորածի ու թալանի ղեկավարները, մնացած մեղսակից ժողովրդական մասսան ենթարկելով հաւաքական պատասխանատուութեան՝ իբրեւ թալանճի եւ ուրիշին գոյքն ու աշխատանքը աւերողներ.

բ) Հատուցանել կամ վերադարձնել հայերու կրած վնասները, վերաշինել տուներն ու շէնքերը, վճարել ոչ չընչացած ու պակաս անասուններու, գործիքներու եւ այլ շարժական գոյքերու արժէքը.

գ) Այրի մնացած կիներուն, որբերուն, կամ սպաննուածներու ազգականներուն ապահովել սպանուածներու աշխատանքին արժէքը կամ նշանակել այդ արժէքին համապատասխան թոշակ, իսկ ամբողջովին փչացուած ընտանիքներու աշխատանքի փոխարժէքը վճարել համապատասխան եկեղեցիներուն կամ դպրոցներուն.

դ) Տարուայ ընթացքին հասցուած սովորական աշխատանքի կորուստին փոխարէն՝ վնասուած շրջաններու հայութիւնը ազատել մէկ քանի տարի սովորական տուրքերէն,

ե) Ոչնչացուած ընտանիքներու անտէր մնացած եւ «մահիլի» հրատարակուելիք հողերը յանձնել համապատասխան հայ համայնքներուն՝ ի դիմաց եկեղեցիներուն եւ դպրոցներուն:

զ) Փութով սկսել Ատանայի եւ Հալեպի վիլայէթներուն ժամտարմերիայի, ոստիկանութեան եւ վարչութեան վերակազմութեան՝ իսկական մասնակցութեամբ բոլոր ազգութեանց, վտանգի ենթակայ հայ գիւղերուն մէջ տեղացիներէն հաստատելով պահակներ, զինուած պետական զէնքերով:

Ատոր հետ միասին որոշեց՝ յայտնել կուսակցութեան յարգանքները այն բոլոր հասարակական խաւերուն, հաստատութիւններուն ու անձերուն – քրիստոնեայ, մահմետական, ֆելլահ – որոնք կիլիկեան հայ ժողովրդի տագնապալի օրերուն կանգնած մնացին իրենց մարդկային ու քաղաքացիական պարտականութեանց բարձրութեան վրայ»:

Ապա նախագահը կարդում է ընկեր Արարատսկու նամակը, որով շնորհակալութիւն յայտնելով հրաւերի համար եւ յաջողութիւն ցանկալով, կ'առաջարկէ Դ-րդ Ընդհանուր ժողովի Քրիստափորի ընտանիքին մասին տրուած որոշման գործադրման համար, կարգադրութիւն անել:

Այս առթիւ ժողովը մտքերի փոխանակութիւններ անելով տուաւ հետեւեալ որոշումը:

«Արեւմտեան Բիւրօ – խմբագրութիւնը պիտի նպաստէ Քր. Միքայէլեանի ընտանիքին անսական 250ական ֆրանքով, մինչեւ մի տարի ժամանակով, յայտարարելով Դաշնակցութեան բոլոր մարմիններին, որ ժողովիս որոշմամբ, Քրիստափորի ընտանիքի համար, պիտի գոյացնել 10.000 ֆրանքի գումար մը: Այդ գումարը բաշխել բոլոր մարմինների վրայ եւ պարտաւորացնել Բիւրոյին հասցնել մինչեւ մէկ տարի ո՛չ կազմակերպական միջոցներից: Այս առաջին տարուայ վճարելիքը 3000 ֆրանք դուրս տալ ապագայում ստացուելիք գումարներից:

Կարդացուելով ընկեր Պերճի առաջարկը, Վռամի⁶⁶ մօրը նպաստելու կարգադրութիւն մը խնդրելու մասին, ժողովը որոշեց յանձնարարել Պոլսի Սարմինի հոգալ կողմնակի միջոցներով. եւ ընդհանրապէս բոլոր մարմինները պարտաւորեցնել կողմնակի ազբիւրներից միջոցներ հայթայթել նահատակ եւ դուրս մնացած ընկերների ջքաւոր ընտանիքներին:

Նիստը փակուեց ժամը 1-ին:

*Քարտուղար՝ Նախագահ
ՎԱՆԻԿ*

Ծանօթ. — Վանիկի բացակայութեան պատճառով արտագրեցի ես եւ ստորագրեցի՝ ՎԱՀԱՆ

Նիստ 65. 17 / IX / 09

*Նախագահում է Ակնուկի:
Ներկայ են 24 ընկերներ:
Ընկերներից ոմանք դարձեալ հարց են բարձրացնում խորհրդի իրաւասութեան վերաբերմամբ. զանազան խօսակցութիւններից յետոյ առաջարկուում է հետեւեալ բանաձեւը:*

66.- Հարցը կը վերաբերի Վռամչապուհ Քենտիրեանի, որ Քրիստափոր Միքայէլեանի հետ զոհուած էր ռուսի փորձարկման ընթացքին:

«Թեւ Ընդհանուր ժողովը փակուում է, բայց խորհուրդը կարող է շարունակել իր նիստերը՝ վերջացնելու համար առկա մնացած դատական խնդիրները»:

Ընդունուում է 20 ձայնով. 2 հոգի էլ ձեռնպահ:

Ընկեր մը առաջարկում է որ պատգամաւորներից ցանկացողները կարողանան մասնակցել խորհրդի նիստերուն: Առաջարկը ստանալով միայն 7 ձայն, չի անցնում:

Առաջարկուում է Ընդհանուր ժողովից ընտրել 3 ընկերներ, ծայնի իրաւունքով մասնակցելու համար խորհրդին Վասպուրականի խնդիրը քննելիս, նկատի ունենալով, որ այս հարցը կը ներկայացնէ խորը ուսումնասիրութեան կարիք: Ընդունուում է 17 ձայնով:

Նկատի ունենալով որ Տաճկաստանում այլեւ չենք ունենալու Պատասխանատու Սարմին, առաջարկուում է որ այսուհետեւ արեւմտեան ռայոնական ժողովը 2 ներկայացուցիչով մասնակցէ խորհրդին.

Ընդունուում է 20 ձայնով:

Տրուում է գեկուցում Կարաբէկովի եւ Աղայեւի մի նամակի մասին՝ համագործակցութեան վերաբերմամբ:

Ընդհանուր ժողովը որոշում է յանձնել Իննի յանձնաժողովին:

Այս առթիւ խօսելիս յայտնուեցաւ որ այդ անձնաւորութիւնները յարաբերութիւն են պահպանում Ռաշիդին հետ եւ որոշուեցաւ յայտարարել նրանց որ եթէ իրանցից չհեռացնեն այդպիսի մարդեր, մեր կազմակերպութիւնը չի կարող գործ ունենալ իրանց հետ:

Տրուեց նոյնպէս գեկուցում Կոմսից ստացուած մի նամակի մասին, որով առաջարկուում է «Իթիֆհատ վէ Թերրաքքի»ի եւ Դաշնակցութեան միջեւ վերջին անգամ կնքուած համագործակցութեան դաշինքում յիշատակուած «նահանգային իրաւանց ընդարձակման» հարցի վերաբերեալ գործնական քայլեր առնելու մտօք, յարաբերութեան մէջ մտնել Իթիֆհատի եւ Թերրաքքիի կոնգրէին հետ: Ժողովը որոշում է խնդիրը յանձնել Գ-ի յանձնաժողովին պէտք եղած հետեւեալքը տալու համար անոր:

Անցնելով պիւտճէին, Ընդհանուր ժողովը վերջնականապէս կանգ է առնում հետեւեալ բաշխումին վրայ. —

1910-ի համար					
Մարմիններ	Պարտք 1909-ի	Պատրաստ 1909	Սպասուելիք 1910	Ծախք մարմինների համար 60%	Ընդհ. ձեռնարկներից հասանելիք 40%
Ոսկանապատ	-	17.000	40.000	24.000	16.000
Մեծ-քաղաք			10.000	6.000	4.000
Նաւահանգիստ		1.000	20.000	12.000	8.000
Մրգաստան			10.000	6.000	4.000
Քար			3.000	1.800	1.200
Ջրաբերդ			3.000	1.800	1.200
Այգեստան			1.000	600	400
Ապառաժ			1.000	600	400
Վրժ	15.000	1.000	15.000	9.000	6.000
Ժլատ-Նալբանդ			2.000	1.200	800
Վասպուրական			10.000	6.000	4.000
Մուշ-Սասուն			2.000	1.200	800
Կարին	2.000		10.000	6.000	4.000
Սալմոյ-ձոր			5.000	3.000	2.000
Ամերիկա (կիսով գանձուած)		34.000	30.000	16.000	24.000
Բալքան (գանձուած)		4.000	10.000	2.000	8.000
Եգիպտոս			2.000	800	1.200
Պոլիս		1.000	40.000	24.000	16.000
Տրապիզոն		1.000	5.000	3.000	2.000
Իզմիր	6.000		10.000	6.000	4.000
Մարզուան		1.000	4.000	2.400	1.600
Խարբերդ		4.000	10.000	6.000	4.000
Սեբաստիա			10.000	6.000	4.000
Տիգրանակերտ			5.000	3.000	2.000
Կիլիկիա			1.000	600	400
Դրոշակի եւ գրքերի վաճառք					5.000
Պատասխ. Մարմին		25.000			
	23.000	89.000	259.000	149.000	125.000

Ընդհանուր ձեռնարկներու համար 1910-ի	
Ձեռնակներ կամ մարմիններ	Ծախքերու քանակը
Արեւել. Բիւրօ (Կովկաս, Տաճկա[ստան])	15.000
Արեւմտ. Բիւրօ եւ Դրօշակ Կովկասեան թերթին	25.000
Պոլսոյ թերթին	5.000
Վերակազմութիւն Կովկասի	8.000
Հրատարակութիւն (Կովկաս, Թուրքիա)	1.200
<u>Չինական-գինուորական</u>	5.000
Մեծ-Հայք 15.000	} 38.000
Փոքր- Հայք 10.000	
Կիլիկիա 13.000	
<u>Չինական-աշարեկ [չական]</u>	} 19.000
Կովկաս 14.000	
Պարսկաստան 5.000	
Բանտարկեալներու (Կովկասի)	50.000
Ընդհանուր ժողով	15.000
Անակնկալ	5.000
Պայթուցիկներ	1.000
	191.000

Ծանօթութիւններ.-

1) Բիւրճի 66 հազար բացը պիտի լրացնել մարմինների մօտ եղած գումարներից

2) Որովհետեւ նախորդ Ընդհանուր ժողովը որոշել է եկամտի 5% աւելացնել անձեռնմխելի գումարի վրայ, թողնուած է Իննի յանձնաժողովին կամ հաշիւները կարգի բերող մարմինն ստուգելու ընդհանուր եկամուտը սկսած 1909-ից եւ որոշել գումարը նախահաշուի մէջ մտցնելու եւ նախահաշուի գումարները յարաբերական չափով պակսեցնելու համար:

3) Մարմինները պէտք է անմիջապէս Սեպտեմբեր ամսից սկսած իրենց եկամտի եւ ելքի գումարները յարմարեցնեն որոշուած բիւրճերին:

Մանր մուներ յաւելումներն ու լրացումները թողնուած են Թ-ի յանձնաժողովին:
Կազմակերպութեան զանազան վայրերուն մէջ ունեցած գէնքերու որոշ մէկ հաշիւ գոյութիւն չունենալով եւ ժողովը այդ բանը գտնելով անհրաժեշտ, յանձնարարուած է Բիւրոներին կարելի եղածին չափ շուտ, պատրաստել մի կատարեալ ինվենտորիա կազմակերպական բոլոր գէնքերու եւ գոյքերու:
Ժողովը որոշում է որ վերագրեալ բիւրճէի գործադրութիւնը սկսուած է ներկայ տարուայ Հոկտեմբեր 1-ից:
Ժողովը փակուած է:

Քարտուղար՝ ՊԵՐՃ Նախագահ

Արտ. 66. 17 / IX / 09 գիշերուայ ժամի 8.30-ին

Նախագահում է Ակնունի:
Ներկայ են 28 որից 4-ը խորհրդակցական ձայնով:
Կարդացում է Արեւելեան Բիւրոյի Վանի գործերի քննիչ մարմնի տեղեկագիրն ու եզրակացութիւնը:
Սարգիսը ձայն է ուզում՝ տալու եւ իր բացատրութիւնները:

Նախագահը թոյլ չի տալիս, առարկելով որ այդ տեղեկագիրը չէ Վասպուրականի մարմնի. եթէ թոյլ տրուի, շատ երկար վիճաբանութիւններ պիտի ծագեն առանց ոեւէ հետեւանքի, որովհետեւ իբր դատական գործ յանձնուելու է խորհուրդին:

Պիեռ.— Այդ գրութեան շուրջը վիճաբանութիւններ նշանակում է դատը վարել այստեղ եւ կամ թէ ճշնում գործ դնել դատաւորների մտքի վրայ, որովհետեւ խորհրդի անդամները, որոնք եւ ներկայ են այստեղ, լսելով այդ վիճաբանութիւնները կարող են ազդուել ժողովի տրամադրութիւններից, մի հանգամանք որը երբեք ցանկալի չէ: Նրանց պիտի թողնել այս հարցին մօտենալու առանց ոեւէ տրամադրութեան ծանօթանալու, ազատ եւ անկաշկանդ մտքով ու խղճի կատարեալ հանդարտութեամբ՝ որոշում տալու համար:

Սարգիս.— Յիշեցնում եմ որ համաձայն ժողովի նախորդ նիստերից մէկի որոշման, պէտք էր լսել Վանի մարմնի տեղեկագիրը եւ քննադատել. իսկ այժմ երբ արդէն լսում է քննիչ մարմնի եզրակացութիւնները, անպայման պիտի թոյլ տրուի եւ լսել մարմնին հակառակ կողմին, որին մեղադրում են. հակառակ պարագային, արդարութեան սկզբունքի դէմ մեղանշած կը լինենք եւ ժողովականների միտքը մի որոշ ուղղութեամբ տարած:

Ռուբէն.— Անպայման պէտք է լսել Սարգսին եւ թոյլ տալ նրան արտայայտուելու, որովհետեւ բացարձակ անարդարութիւն է լսել մեղադրական կէտերը եւ չթոյլաւորել մեղադրողին տալ բացատրութիւններ: Միայն ընթացքի մէջ կը գտնուենք, եթէ ժողովականների միտքը մի ուղղութեամբ տանենք միայն: Գուցէ Սարգիսը այնպիսի փաստեր երեւան պիտի հանէ, որ մենք հակառակ եզրակացութեան կը գանք: Կամ չպէտք է եւ թոյլ տրուէր կարդալու քննիչ մարմնի եզրակացութիւնները, այլ միայն լսէինք տեղեկագիրը եւ քննադատէինք եւ կամ եթէ կարդացուել է, պիտի թոյլատրենք Սարգսին սասել եւ իր խօսքը:

Նախագահ.— Հակառակ իմ ցանկութեան, ստիպւած եմ կանգնել ժողովի որոշման վրայ եւ թոյլ չտալ ոեւէ խօսք քննիչների եզրակացութեանց վրայ, եթէ միայն ժողովը նոր որոշում չկայացնէ:

Քուէարկում է.

1) Լսել Վասպուրականի մարմնի տեղեկագիրը եւ

քննադատել ինչպէս եղաւ ուրիշների վերաբերեալ +9, -16:

2) Թոյլ տալ Վասպուրականի Կ. Կ.ի ներկայացուցչին խօսելու 15 րոպէ բացատրութիւններ տալու +8, -19

Սարգիս.— Ենթարկում եմ ժողովի որոշման եւ չեմ խօսում, բայց չեմ կարող չսասել որ կատարում է մի շատ անարդար փաստ լսելով միայն մի կողմին. կարող է պատահել որ փաստերը սխալ են հասկացուել: Բացի այդ ժողովը չյարգեց եւ իր որոշումը՝ լսել Վանի դէպքերի առթիւ տեղեկագիրը: Այդ բոլորը նկատի ունենալով հիասթափութիւն ու ցաւ եմ յայտնում եւ զղջացած եմ այս ժողովին մասնակցած լինելուս համար:

Վանիկ.— Մեր որոշումը կայ, որով մենք պիտի լսէինք Վանի մարմնի տեղեկագիր-գեկուցումը եւ մինչեւ իսկ երբ ժողովի ընթացքում հարց էր բարձրացւում այդ հարցը խորհրդին թողնել թէ ոչ, միշտ շեշտում էր այն հանգամանքը թէ տեղեկագիրը լսելու ենք եւ քննադատելու: Կամ երբեք քննիչների եզրակացութիւնը չպիտի կարդացուէր այս ժողովում եւ լսուէր միայն տեղեկագիրը, դէպքերի նկարագրութիւնը, եւ կամ թէ կարդացուել է՝ թոյլ պիտի տրուի եւ խօսելու: Ցաւս եմ յայտնում միայն ժողովականների այն մասին, որոնք կարծում էին լսել ուրիշ բաներ, բոլորովին ուրիշ բան գտան:

Ռոստոմ.— Սկզբում ես յիշեցրի որ որոշում ունենք Վանի դէպքի առթիւ մարմնի գեկուցումը լսել մի յատուկ նիստում, չեղաւ եւ յետագային. այժմ երբ լսել ենք արդէն քննիչների եզրակացութիւնները, էլ աւելի անհրաժեշտ է դառնում լսելու այն:

Նախագահ.— Շատ անարդար որոշում է չլսելը, բայց ինչ արած, իբր ժողովի նախագահ ստիպուած եմ թոյլ չտալ եւ հպատակուել:

Սարգիսը հեռանում է:

Ժողովը անցնում է Բիւրոնների ընտրութեան:

Ռոստոմ.— Նկատի ունենալով որ ռայոնական ժողովները կարող են ուշ հաւաքուել շնորհիւ ձմեռուայ — մանաւանդ Մեծ-Հայքում — առաջարկում եմ Արեւելեան Բիւրոյի 8 անդամներին էլ ընտրել այժմ եւ այստեղ, որպէսզի կազմը լրիւ լինի եւ Բիւրոն կարողանայ ձեռնարկել աշխատանքի:

Պիեռ.— Դէմ է այդ առաջարկին այն նկատումով, որ Բիւրոն աւելի բարոյական հեղինակութիւն կ'ունենայ, երբ իր շրջանի մարմինները ընտրութեան մէջ է'լ աւելի մօտիկ մասնակցութիւն ունեցած լինեն. բացի այդ այստեղ ռայոնական ժողովի իրաւասութեան հարց կայ, որի առթիւ կարող են թիւրիմացութիւններ ծագել:

Անտոն.— Ես եւս դէմ եմ բոլոր անդամներին այստեղ ընտրելուն, որովհետեւ մենք փոխանակ իրաւանց ապակենտրոնացման, կը ձգտենք կենտրոնացումին. մի հան-

գամանք որ հակառակ է մեր սկզբունքներին եւ միեւնոյն ժամանակ հակադեմոկրատական: Մենք ընդհակառակը ձգտելու ենք ռայոնական ժողովների իրաւասութիւնները ընդարձակելու եւ ոչ սահմանափակելու: Բացի այդ, իրականութիւնը այն է լինում, որ Բիւրոն ընտրում է մի քանի ձայներով միայն, որովհետեւ առաջարկուած թեկնածուներից շատերին այստեղ չեն ճանաչում եւ քուէ են տալու նրանց, մի քանի ընկերների վստահութեան քուէին հաւատալով. ուրեմն իրականութեան մէջ, de facto մի քանի հոգիներ միայն կ'ընտրեն եւ այն Բիւրոյի ամբողջ կազմը:

Որոշում է մնալ նախկին որոշման վրայ եւ ընտրել հինգ հոգի:

Արեւելեան Բիւրո.—

Պատրաստում է թեկնածուների ցանկը հետեւեալ անուններով.

Անտոն, Բարսեղեան, Վռամեան, Ռոստոմ, Աբրահամ, Կարճիկեան, Գարմէն, Սիգ, Եսպոնացի, Աւերեան, Հայր Աբրահամ, Ծահլաթունեան, Երուանդ:

Ռոստոմն ու Աբրահամը հրաժարում են քուէարկուելուց եւ իրենց տրամադրելի անում կազմակերպութեան: Հրաժարում է եւ Աւերեան: Անտոնն եւս հրաժարում է եւ առաջարկում հանել եւ Հայր Աբրահամին, պատճառաբանելով որ ինքը չի ուզեցնալ ընտրուել, բայց միեւնոյն ժամանակ ինչպէս միշտ, այս անգամ էլ կ'անի այն, ինչ որ ձեռքից կը գայ:

Մի ընկերոջ պահանջի վրայ, որոշում է քուէարկութիւնը կատարել զաղտնի, բայց արդիւնքը յայտարարել ժողովին:

Քուէարկութեան արդիւնքը

- 1) Ծահլաթունեան 24 ձայն
- 2) Երուանդ 23 »
- 3) Բարսեղեան 18 »
- 4) Վռամեան 17 »
- 5) Եսպոնացի 11 »
- 6) Գարմէն 10 »
- 7) Կարճիկեան 10 »
- 8) Սիգ 3 »
- 9) Աբրահամ 3 »
- 10) Անտոն 1 »

Ընտրուած են համարում

1) Ծահլաթունեան, 2) Երուանդ, 3) Բարսեղեան, 4) Վռամեան:

Եսպոնացու, Գարմէնի եւ Կարճիկեանի վերաբերմամբ կրկնաքուէարկութիւն է տեղի ունենում եւ ստանում են

- Եսպ[ոնացի] 13 ձայն
- Կարճիկեան 12 »

Ժողովը որոշում է այս երկուսին էլ ընտրուած համարել:

Արեւմտեան Բիւրո.—

Թեկնածուներ.— Յոնան, Միքայէլ, Ակնունի, Ռոստոմ, Զաւարեան, Վարդգէս, Շահրիկեան, Մար, Մինասեան:

Զաւարեանը հրաժարում է. հրաժարում է եւ Ակնունին, բայց ընկերները պահանջում են ընդունելու: Առաջարկում են հանել եւ Շահրիկեանին, պատճառաբանելով մէկ՝ որ ինքը գնալուց առաջ շատ կտրուկ յայտարարեց թէ չի ուզում ընտրուել ոեւէ մարմնի մէջ եւ երկրորդ նա դատի տակ է այժմ:

Հարց է բարձրացւում Վռամեանին Արեւելեան Բիւրոյից տեղափոխել եւ ընտրել Արեւմտեանում, նկատի ունենալով որ նա շատ օգտակար կը լինի Պոլսում եւ եթէ Կովկաս գնայ — որը հարց է — 2-3 ամիս հազիւ légal կարողանայ ապրել, որի ընթացքում մի շօշափելի գործ հազիւ կարելի լինի անել:

Ընդունում է:

Քուէարկութեան արդիւնքը.

- 1) Միքայէլ 24 ձայն
- 2) Յոնան 25 »
- 3) Ակնունի 16 »
- 4) Վռամեան 16 »
- 5) Ռոստոմ 16 »
- 6) Վարդգէս 13 »
- 7) Հրաչ 8 »
- 8) Զարդարեան 4 »
- 9) Շահրիկ 1 »

Ընտրուած են համարում առաջին հինգ հոգին:

Ընկերների միահամուռ պահանջի վրայ Ռոստոմը համաձայնեց մնալ Արեւմտեան Բիւրոյի մէջ, որից յետ ձայն չտուող ընկերները — որոնք նկատի էին ունեցել թէ նա հրաժարում է քուէարկուելուց եւ ձայն չէին տուել, ինչպէս եւ Վռամեանի նկատմամբ՝ որ նա ընտրուած է Արեւելեանում, միաձայն համաձայնեցին:

Ընտրութիւն իննի յանձնաժողովի բաց քուէարկութեամբ

- 1) Պիեռ, 2) Ռոստոմ, 3) Յովնան, 4) Ակնունի, 5) Զաւարեան, 6) Զաւարեան, 7) Վահան (Վրէժ), 8) Աստիկեան, 9) Աբրահամ, 10) Եղիշէ, 11) Շահբազ, 12) Եսպոնացի:
- Վերջին երեքը մնում են իբր կանդիդատներ (միաձայն):

Հաշուեքննիչ յանձնախումբ (միաձայն)
Աբրահամ, Աստիկեան եւ Ճապոնացի, քննելու համար Բիւրոնների եւ Պատասխանատու Մարմնի հաշիւները:

Հանգանակիչ մասնախումբ (միաձայն)
Անդրանիկ, Զաւրեան, Ակնունի:

Վանի գործի քննութեան ժամանակ **Խորհրդի նիստերին ներկայ լինելու համար ձայնի իրաւունքով**·
Դուրման միաձայն
Շահբազ +18, -8
Աստիկեան +18, -8

Առաջարկում է հարցաքննել Մարգարեան եւ Սեպուհի, իբր այդ հարցին քիչ տեղեակ անձնաւորութիւններ:

Ժողովը փակուում է գիշերուայ ժամի 2-30-ին:

Քարտուղար՝ Նախագահ
ՎԱՀԱՆ

Նիստ 67. Սեպտ. 18. առաւօտ. ժամի 11.30-ին

Նախագահում է Ակնունի ներկայ են 24 ընկերներ:
Դուրում է իթթիհատականների հետ տեւորական մարմնի կազմութեան եւ նրա ունենալիք գործունէութեան հարցը: Ընկերներից ոմանք կարծում են թէ այդ հարցի մասին անպայման պիտի խօսել սանկցիա տալու²⁵ համար այդ ուղղութեամբ լինելիք գործունէութեանը՝ պատշաճ մարմինների կողմից: Ընկերներից ոմանք առաջարկում են ընտրել յատկապէս տեւորական մարմին. իսկ ոմանք գտնում են որ այդ խնդիրը յարմար է թողնել Բիւրոններին:

Ժողովականների ընդհանուր կարծիքը այն էր, որ Տաճկաստանում տեւորական գործունէութիւնը անհրաժեշտ է, քանի որ դեռեւս հակասահմանադրական հոսանքը արմատախիլ չի եղել եւ ունակցիոն տարրերը պատրաստութիւնների մէջ են յարմար մոմենտներից օգտուելով դուրս գալու համար. անհրաժեշտ է նրանց ահաբեկել: Ընկերներից մի քանիսը գտնում են որ, բացի միասին՝ ընդհանուր բնոյթ ունեցող տեւորներ կատարելուց, կազմակերպութիւնը պիտի ունենայ եւ այդ ուղղութեամբ իր առանձին գործունէութիւնը՝ յարմար դատած ժամանակ՝ ըստ որոշման:

Ընկերներից մի քանի հոգի պաշտպանելով այն միտքը թէ միայն մեր կուսակցութեան արած առանձին ահաբեկումները կարող են բացասական արդիւնք տալ,

առաջարկում են այդ թիւրիմացութիւններից խուսափած լինելու համար այդ ուղղութեամբ գործունէութիւնը դարձնել անպայման միջկուսակցական:

Ուրիշները սկզբունքով ընդունում են ահաբեկումները Տաճկաստանում միջկուսակցական հողի վրայ դրուելը, բայց իրականութեան մօտենալով նրանք գտնում են որ այդ դժուար է իրագործել: Վերցնելով Աղանայի օրինակը, նկատել են առաջին որ իթթիհատը բնաւ չպիտի համաձայնուի աղէտի գլխաւոր պատճառներին պատժի ենթարկել, քանի որ հէնց իրենց մարդիկը խաղացել են գլխաւոր դերերը: Գուցէ գտնուեն ահաբեկման արժանի անձեր որոնք իթթիհատի հաշուին չեն գալ. այդ դէպքում իթթիհատը մեզ հետ կը համաձայնի, իսկ կը լինեն մարդիկ, որոնց մենք կը գտնենք արժանի, իսկ նրանք կը պաշտպանեն: Եզրակացնելով պնդում են որ իթթիհատը անվստահելի է եւ նրա հետ մեր այդ ուղղութեամբ գործունէութիւնը անկարելի:

Դուրման.— Գտնում է որ ահաբեկչական գործունէութիւնը կարող է ազգերի ընդհարմանը պատճառ դառնալ. այդ բանից խոյս տալու համար միակ միջոցը այն է, որ իթթիհատի հետ պայման կապել թուրք ենթականերին իրենք, իսկ հայերին մենք մաքրենք:

Ժողովը անյարմար համարելով այդ առթիւ մի բանաձեւ ընդունելը, որոշում է իթթիհատի վերաբերեալ ընդունուած բանաձեւի մէջ աւելացնել մի քանի բառով հետեւեալ միտքը.

«Ամէն ջանք գործ դնել սահմանադրութեան պաշտպանութեանը համար՝ չքաշուելով ահաբեկումից իսկ այդ գործի յարմարեցումը իթթիհատի եւ այլ կուսակցութեանց հետ թողնուում է պատշաճ մարմիններին»:

Ընդհանուր ժողովը միաձայնութեամբ որոշեց գրել մի հեռագիր կամ նամակ շնորհակալական, Պիեռ Քիյառին: Գործադրութիւնը թողնուեց Իննի յանձնաժողովին:

Լինում են հետեւեալ առաջարկները.

- 1) Ամէն տեղ լրագրներում հրատարակել ուսուցարարութեան գործած խժոժութիւնները, բանտերի վիճակի մասին յօդուածներ գրել, կազմել միթիւններ բողոքելու համար ուսուցարարութեան դէմ.
- 2) Ճապոնացին առաջարկում է թուրքիայում ուսուցարանների դէմ բոյկոտ հրատարակել.
- 3) Մուրատը՝ Ռուսիայից թուրքիա անցնող հայերին խնամոտ վերաբերմունք ցոյց տալ.
- 4) Կոչ անել թուրքիոյ մարմիններին, որպէսզի ընկերներ ուղարկեն Կովկաս զբաղուելու կազմակերպական գործերով:

Անդրանիկը գտնում է որ ուսուցարարութիւնը թղթերից եւ միթիւններից վախեցողը չէ, դրանք կը մնան անհետեւանք, պիտի կատարել դրական գործ, որ նշանակութիւն ունենայ:

Պերճ.— Քանի որ ուսուցարարութիւնը իր վերաբերմունքը դէպի մեր բանտարկեալ ընկերները չէ ճշտել եւ չէ որոշել իւր դիրքը, պէտք է մենք չանենք այնպիսի քայլեր, որոնք գրգռելով ուսուցարարութեան, վատ կերպով կ'անդրադառնան դէպի բանտարկեալները:

Ժողովը որոշեց.

- 1) Յանձնարարել Իննի յանձնաժողովին բաց թողնել Ընդհանուր ժողովի անունից մի դեկլարացիա.
- 2) Բաց անել ամէն տեղ ընկերների եւ համակիրների շրջանակներում հանգանակութիւն յօգուտ բանտարկեալների.
- 3) Ամէն տեղ ընկերները եւ համակիրները բողոքի միտինկներ կազմակերպեն:

Յանձնարարուեց Իննի յանձնաժողովին որ կուսակցութեան ֆինանսական դրութիւնը աշխատի բարւոքել եւ մարմիններին պարտաւորեցնել վճարելու բիւդճէի ընդհանուր ձեռնարկներին յատկացուած գումարները իրենց ժամանակին եւ անել կարգադրութիւն մարմինների մօտ այժմ գտնուած գումարներին:

Ժողովը կրկին անդրադառնում է Վանի ծանօթ խնդրի վրայ. ընկերները գտնում են որ նախորդ նիստում Վանի քննիչ յանձնաժողովի գիրը կարգացուելուց վերջ հարկ է լսել եւ նրա դէմ եղած առարկութիւնները Սարգսի կողմից: Որոշում է նրան կանչել ժողովի ու լսել. ուղարկուեց յատկապէս մարդ բայց չգտնուեց:

Փաստ. 1539-42

Ե.- ՀԻՆԳԵՐՈՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

(Քաղուած ատենագրութիւններէն)

Հ.Յ.Դ. Ե.րդ Ընդհ. Ժողովին որոշումները երեք կարգի բաժնել որոշուած էր. ա) անոնք որ հրապարակելու սահմանուած էին եւ արդէն իսկ հրատարակուած են «Դրօշակ»ի մէջ, իր ժամանակին եւ մօտերս ալ լոյս պիտի տեսնեն առանձին գրքոյկով: Բ) Անոնք որ կազմակերպական բնոյթ մը ունենալուն՝ որոշուած էր շրջաբերականով մը հաղորդել դաշնակցական մարմիններուն: Այդ որոշումներն ու յանձնարարուածներն են որ ստորեւ առաջ կը բերենք, հրաւիրելով անոնց վրայ մեր մարմիններու լուրջ ուշադրութիւնը: Գ) Անոնք, որ խնդրոյ տակ եղած նիւթին հանգամանքով կը վերաբերին դաշնակցական այլեւայլ մարմիններու յատուկ իրաւասութեանը: Ատոնք ալ մասնաւոր նամակներով արդէն հաղորդուած են պատկան մարմիններուն:

Ա.- Վեցերորդ Ընդհ. Ժողովին գումարումը.-

1.- Վեցերորդ Ընդհ. Ժողովը տեղի կ'ունենայ 1911ին, բացման օրն ու վայրը կ'որոշեն երկու Բիւրոնները:

2.- Ընդհ. Ժողովին Օրակարգը հաղորդելու ատեն Բիւրոնները ստիպողաբար կը պահանջեն իրաւասու մարմիններէն, որ ժողովին բացման օրէն ամիս մը առաջ փութացնեն իրենց տեղեկագրերն ու հաշիւները:

3.- Ժողովին մասնակցելու հրաւեր կը դրկուի այն մարմիններուն միայն, որոնք իր ժամանակին ներկայած են իրենց տեղեկագրերն ու հաշիւներն ու պատգամաւորներու ընտրագիրը (mandat):

4.- Բիւրոնները վերջնական հրաւիրագիրը (գումարման օրն ու վայրը յայտնող) կ'արձակեն այն պարագային միայն, եթէ ստացուած ըլլան սակ ունեցող իրաւասու մարմիններու երկու երրորդին տեղեկագիրն ու հաշիւները, պատրաստուած Բիւրոններու յանձնարարած սիւստեմով:

5.- Նորակազմ Կեդր. Կոմիտէները, որոնք գէթ վերջին երկու տարուան մէջ պահանջուած սակը չունին, հրաւիրագիր չեն ստանար:

6.- Բիւրոնները հրաւիրագրերը ցրուելու ատեն, նկատի առնելով չեն միայն դրամական սակը, այլ ուշադիր ըլլալու են յեղափոխական սակին:

7.- Կեդր. Կոմիտէները ուշադիր գտնուելու են, որ պատգամաւորները ա) չգտնուին դատական ամբաստանութեան տակ Բ) ծանօթ ըլլան իրենց ներկայած շրջանի գործերուն:

8.- Ժողովին մասնակցող մարմինները անվրէպ ապահովելու են իրենց պատգամաւորներուն երթուղարձի ծախքը եւ ապրուստը՝ ժողովին ամբողջ տեղութեանը միջոցին:

9.- Բիւրոնները ժողովին մասնակցելու կը հրաւիրեն օսմանեան, ռուսական, իրանեան խորհրդարաններու դաշնակցական երեսփոխանները, առաջարկելով անոնց իրենց կողմէն ներկայացուցիչ եւ տեղեկագիր յղել:

10.- Բիւրոնները պարտաւոր են կազմակերպիչ մասնախմբին միջոցով պատրաստել տալ զեկուցումներ եւ բանաձեւեր, Օրակարգի կարեւոր խնդիրներու մասին, եւ մշակել տալ ստացուած տեղեկագրերը:

11.- Խորհուրդին կը յանձնարարուի ժամանակին կատարել նախապատրաստական աշխատանքները, որ պէսզի Ընդհ. Ժողովը չտեսէ երկու շաբաթէն աւելի եւ կատարէ արդիւնաւոր գործ:

12.- Պատգամաւոր ընկերները պարտաւոր են նշանակուած օրը գտնուիլ ժողովին գումարման վայրը:

Բ.- Ռայոնական ժողովները.-

1.- Ռայոնական ժողովները չորս են թուով.- Արեւելեան Բիւրոյի շրջան - ա) Կովկասեանը, որուն հետ է նաեւ Ատրպատականի շրջանը: Բ) Մեծ Հայքինը (Կարնոյ, Վանի, Բաղէշու եւ Տիգրանակերտի կուսակալութիւնները):

Արեւմտեան Բիւրոյի շրջան - ա) Արեւմտեանը (Արեւմտեան Փոքր Ասիա, Կիլիկիա եւ գաղութները): Բ) Փոքր Հայքինը:

2.- Ռայոնական ժողով մը, կանոնագրին տրամադրութիւնները [յարգելու] համար առնուազն չորս Կեդրոնական Կոմիտէ ունենալու է իր շրջանին մէջ:

3.- Թուրքիոյ բոլոր Կեդր. Կոմիտէները կրնան, ի հարկին, փոխադարձ համաձայնութեան գալով, գումարել Թուրքիոյ Ռայոնական ժողովը:

Գ.- Դաշնակցութեան Խորհուրդը.-

Արեւմտեան Ռայոնական ժողովը, Արեւելեանի պէս, Խորհուրդին մէջ կ'ունենայ երկու ներկայացուցիչ:

Դ.- Բիւրոնները.-

1.- Բիւրոյական շրջանները կը մնան, ըստ առաջ-

նոյն, Դ. Ընդհ. Ժողովի գծած սահմաններուն մէջ (յօդ. 85):

2.- Արեւելեան Բիւրոն կը բաղկանայ ութը անդամէ, որոնց հինգը կ'ընտրէ Ընդհ. Ժողովը, երկուքը՝ Կովկասի Ռայ. Ժողովը, մէկը՝ Մեծ Հայքի Ռայ. Ժողովը:

3.- Արեւելեան Բիւրոյի անդամներուն մէկ մասը կը մնայ Կովկաս, միւսը՝ Մեծ Հայք:

4.- Բիւրոն ինք կ'որոշէ երկու հատուածներու անդամներն ու անոնց թիւը:

5.- Հատուածները իրենք կ'որոշեն իրենց յարաբերութեան եղանակը Կ. Կոմիտէներու հետ:

6.- Արեւմտեան Բիւրոն, կը բաղկանայ եօթը անդամէ, որոնց հինգը կ'ընտրէ Ընդհ. Ժողովը, երկուքը՝ Ռայ. Ժողովները (Արեւմտեան եւ Փոքր Հայքի):

Ե.- Պիւտձէի մէջ համաչափութիւն.-

1.- Ելքի այլեւայլ բաժիններու միջեւ համաչափութիւն պահպանելու, եւ ապահովելու համար մեր գործունէութեան բոլոր ճիւղերու ներդաշնակ զարգացումը - կը յանձնարարուի հետեւեալ համեմատութիւնը նկատի ունենալ ծախքերու մէջ - *Ձինականին յատկացնել պիւտձէի 35%, *Մարտական-ահաբեկչականին՝ 25%, փրփականտին՝ (գրաւոր եւ բանաւոր) 25%, վարչական-դիւանականին՝ 15%:

Ծանօթ.- * Աստղանիշ նշանակուած բաժինները բնականաբար կը վերաբերին այն երկիրներուն, ուր գործունէութիւնը տակաւին կը պահէ դաւադրական հանգամանք:

2.- Կեդր. Կոմիտէները կրնան ծախսել իրենց հասոյթներուն մինչեւ 80%, մնացորդ 40% անվրէպ դրկելու են իրենց պատկան Բիւրոյին, ընդհանուր՝ կազմակերպական ծախքերու համար:

Գաղ[ու]թային կոմիտէները (Ամերիկա, Պուկարիա, Եգիպտոս եւն) տեղական ծախքերուն կրնան յատկացնել մինչեւ 20% միայն, 80% տրամադրելի ընելով կազմակ. պիւտձէին:

3.- Կազմակերպութեան յատկացուելիք բաժինը (40-80%) կրնայ ուղղակի դրկուել հոն, ուր անմիջական պէտք մը կայ, ստանալով պատկան Բիւրոյի հաւանութիւնը:

4.- Ամէն Շրջանային ժողով ինք կ'որոշէ ընդհանուր հասոյթներու տոկոսին քանակը, որ իր շրջանի մարմինները արտօնուած են տեղական ծախքերուն յատկացնելու:

5.- Կազմակերպութեան ծախքով ազատ ընկեր կըրնան պահել Կ. Կոմիտէները միայն², պայմանով որ չանցնին տեղական ծախքերուն սահմանուած տոկոսը:

Զ.- Անհապելի հիմնագումարը.-

Պարտաւորել Կ. Կոմիտէները որ փութացնեն առաջումը հասոյթներու 5%-ին, համաձայն հիմն[ական] կանոնագրի յօդ. 143-ին, յատկացուած՝ կազմելու յեղա-

փոխական անհապելի հիմնագումարը, տրամադրելի ընդհ. Ժողովներուն³:

Ե.- Հաշուական.-

Հասոյթներու կանոնաւորում

1.- Մասնաւորապէս կը յանձնարարուի ուշադիր ըլլալ կանոնաւորելու դրամական հասոյթները (անդամավճար, վիճակախաղ, ներկայացում, մասնակի հանգանակութիւն, եւն):

Հակակշիռ (քոնթրոլ)

2.- Կ. Կոմիտէներու հաշիւները պիտի ենթարկուին շրջանային ժողովներու, Բիւրոններուն ալ՝ ռայոնական ժողովներու հակակշիռին: Ռայ. Ժողովներու բացակայութեանը՝ Խորհուրդին կ'իյնայ այդ հակակշիռը:

3.- Հակակշիռը զօրացնելու համար ամէն մարմին՝ Բիւրօ, Կ. Կոմիտէ, կոմիտէ, պարտաւոր է տարին գէթ մէկ անգամ ստուգել իր շրջանի հաշիւները, ճշգրտել կահագիրը (inventaire) եւ վերահասու ըլլալ մթերքներու ապահով պահպանումին:

4.- Այն մարմինները որ չեն ներկայացնել իրենց դրամական եւ մթերքի հաշիւները շրջանային, ռայոնական կամ Ընդհ. Ժողովին՝ կը զրկուին անոնց մասնակցելու իրաւունքէն:

5.- Բոլոր մարմինները պարտաւոր են, տարուէ տարի, ստանալ գանձապահներէն ու ծախսարարներէն բոլոր կարգի հաշիւները եւ գոցել անոնք, ձեռնարկելով նոր ընտրութեան: Հինբեր վերընտրելի են, մարմնի պատասխանատուութեան տակ:

6.- Գանձապահը պատասխանատուութեան կ'ենթարկուի, եթէ առանց մարմնի արտօնութեան վճարումներ ընէ:

Փոխատուութիւն

7.- Կ'արգիլուի փոխատուութիւն ընել կամ նպաստ տալ ուրիշ կազմակերպութիւններու: Ձեռնարկի մը կամ որոշ արարքի մը գործակցելու պարագային միայն դաշն. մարմինները կրնան դրամով ալ օգնել:

8.- Կ'արգիլուի ոեւէ պարագայի տակ կազմակերպական սնտուկէն փոխատուութիւն ընել ընկերներու:

1.- Չորրորդ Ընդհ. Ժողովի հաստատած 85րդ յօդուածը կ'ըստէ. «Արեւմտեան Բիւրոյի շրջանը կը կազմեն՝ ա) Փոքր Ասիա Կիրասոն-խարբերդ-Տիգրանակերտի գօտն արեւմուտք. Բ) Բալկանեան քերակղզի, Ամերիկա, Եգիպտոս եւ ամբողջ արտասահմանը Ռուսաստանէն եւ Պարսկաստանէն դուրս»:

Այս վերջինները (Կովկասը ներառեալ), ինչպէս նաեւ վերոյիշեալ սահմանագօտն արեւելք ինկող Մեծ Հայքի թրքապատկան երկրամասը կ'իյնային Արեւելեան Բիւրոյի իրաւասութեան տակ:

2.- «Ազատ ընկեր» որակումը կը տրուէր գործիչ ընկերներուն:

3.- Միւլեոյն կանոնագրի 143րդ յօդուածը կը տրամադրէ. «Կուսակցութեան ընդհանուր եկամուտներու հիմն տոկոսը պահեստի կը մնայ Բիւրոններու դրամարկիւն մէջ յեղափոխական ֆոնդ կազմելու համար: Այդ գումարի գործարարութեան իրաւունքը կը պատկանի Ընդհանուր ժողովին»:

Հանգանակութիւն

9.- Կազմակերպութեան անունով հանգանակութիւն կը կատարեն միայն Բիւրոնները կամ Կեդր. Կոմիտէնները: միւս մարմինները այդպիսի ձեւերով մը ընելու համար ստանալու են անոնց հաւանութիւնը:

Հին հաշիւներու յարգարում

10.- Ընդհ. Ժողովը կը յանձնարարէ Թուրքիոյ բոլոր մարմիններուն փութալ կարգադրել առկաք բոլոր հին հաշիւները, գանձել պահանջները, որոնց հաշուեյարդարումը անհնարին էր նախորդ ռեժիմին տակ:

11.- Անյապաղ պահանջել ու գանձել Ջիֆոնի⁴ հաշիւ մասնաւորներու քով մնացած գումարները:

12.- Փութալ գանձել ընկերներու վրայ եղած պահանջները, իսկ անգանձելի համարուածներու մասին տեղեկագրել պատկան ռայ. ժողովին, գոցելով այդ հաշիւները:

Մասնաւոր գումարներ

13.- Մասնաւոր նպատակներու համար հանգանակած կամ ի պահ ստացուած գումարները գործադրելու է, առանց խառնելու կազմ. ընդհանուր հաշիւներու հետ:

Ը.- Ընդհանուր կահագիր.—

Ընդհ. ժողովը յանձնարարեց Բիւրոններուն միջոցներ ձեռք առնել, պատրաստելու համար կազմակերպչական բոլոր գոյքերուն եւ մթերքներուն մանրամասն կահագիրը (inventaire):

Թ.- Հիմնական կանոնագրին վերամշակումը.—

1.- Արեւելեան Բիւրոյի Թուրքիոյ հատուածին յանձնարարուեցաւ վերաքննել ու վերամշակել Հիմնական կանոնագիրը: Այդ աշխատանքին համար Ընդհ. ժողովը տուաւ քանի մը ցուցմունքներ, առաջարկելով միանգամայն նկատի առնել բոլոր այն դիտողութիւնները, որ կը գտնուին տեղեկագրերու մէջ:

Կանոնագրին այդ վերամշակուած նախագիծը պիտի հաղորդուի Կ. Կոմիտէներուն եւ անոնց դիտողութիւններուն հետ պիտի ենթարկուի Խորհուրդին՝ վերջնական քննութեան եւ վաւերացման համար:

2.- Ամէն շրջանային ժողով մշակելով իր շրջանի ներքին կանոնագիրը՝ օրինակ մը պիտի յղէ Արեւելեան Բիւրոյին, ներքին կանոնագրի ընդհանուր տիպ մը պատրաստելու համար:

4.- Զինուորական ֆոնդ. գէք-գիւսմքերի գնման համար ստեղծուած յատուկ մարմին:

Ժ.- Փոփոխութիւններ Հիմնական կանոնագրին մէջ.—

Մինչեւ կանոնագրին նորոգ մշակումը եւ վաւերացումը, կը յանձնարարուի գործադրել 1907ի կանոնագիրը, մտցնելով հոն Ե.րդ Ընդհ. ժողովի կատարած հետեւեալ յապաւումներն ու յաւելումները.

- ա) Ձեռնարկ է «Թուրքիոյ մէջ» բաժինը, յօդ. 31-53:
- բ) Նկատի առնելով Դաշնակցութեան երեք գործավայրերու (Թուրքիա, Ռուսիա, Պարսկաստան) քաղաքական արդի անկանոն պայմանները, որոնք յաճախ անհնարին կ'ընեն կանոնագրին ամբողջական կիրառումը,— Ընդհ. ժողովը անխուսափելի կը գտնէ՝ պահանջելով հանդերձ մարմիններու սիստեմի նմանութիւնը, թոյլատրել, բացառիկ պարագաներու մէջ, հետեւեալ շեղումները. 1) սահմանափակել ընտրական սկզբունքին կիրառումը, իրաւունք տալով որ բոլոր կազմերը՝ խումբ, ենթակոմիտէ, կոմիտէ, Կեդր. Կոմիտէ անուանուին կամ վաւերացուին բարձր մարմիններէ: 2) նուազեցնել, բայց ոչ կէսէն աւելի, ամէն կարգի սակերը — անդամներու թիւը, դրամականը, ընտրականը եւ այլն: Մանրամասները ճշդել կը թողուի իւրաքանչիւր հատուածի ռայ. ժողովներուն, պայմանով որ չհակասեն Հիմնական կանոնագրին եւ Ընդհ. ժողովի որոշումներուն:

ԺԱ.- Օժանդակութիւն.—

Աջակցութիւն Սասունին եւ Ձէյթունին: Իբրեւ յարգանքի արտայայտութիւն Ձէյթունին եւ Սասունին՝ բացառիկ յեղափոխական աջակցութիւն մը ընել անոնց, մաս մը կազմակերպական միջոցներէն, եւ գլխաւորապէս կողմնակի հասոյթներով:

Կովկասեան բանտարկեալներուն ի նպաստ հանգանակութիւններ կատարել ընկերներու եւ համակիրներու մէջ:

Նահատակ ընկերներու չբաւոր ընտանիքներուն համար նպաստ հայթայթել կողմնակի միջոցներով (ներկայացում, հանգանակութիւն, եւն) — կը յանձնարարուի իւրաքանչիւր շրջանին:

ԺԲ.- Յանձնարարականներ.—

Ծանձնարարականները պէտք չէ տալ յանձնարարուածներու ձեռքը, այլ ղրկելու է պատկան վայրի մարմինն: Կ'արգիլուի դրամական օժանդակութեան յանձնարարական տակ:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

Փաստ. 1539-26

Չ.— Ե. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՅԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ


I

ԹՈՒՐՔԻԱ

Ողջունելով Հին Ռեժիմի տապալումը Օսմանեան պետութեան մէջ, ուր նախկին կարգերու աւերակներուն վրայ կը ձեւաւորուի ազատութեան շէնքը, Դաշնակցութեան Ընդհանուր ժողովը,— քաջալերուած քսանամեայ յեղափոխական դրական աշխատանքով, զոր մտցուց վերածնութեան գործին մէջ, լցուած խորունկ յարգանքով անզուգական զոհերու յիշատակին հանդէպ, որոնք դուրս եկած մեր ժողովրդի ցաւէն եւ ծոցէն, իրենց բողոքով, իրենց արիւնով, իրենց հերոսական մահով, կուսակցական դրօշի տակ, նոր կեանքի խարխիւր կռեցին,— պարտք կը համարի յայտարարել ի գիտութիւն Թուրքիոյ բոլոր ժողովուրդներուն եւ յատկապէս հայ ժողովուրդին:

Որ՝ Դաշնակցութիւնը իբրեւ կռուող, յեղափոխական կուսակցութիւն, վար կը դնէ դաւադրական այն միջոցները, որոնցով կը պայքարէր հին բռնակալ ռեժիմին դէմ, եւ իբրեւ կողմնակից սահմանադրական ռեժիմի, որ մերձաւոր եւ լաւագոյն հանգրուանն է իր ծրագրին եւ սկզբունքներուն մշակման ու գործադրութեան համար, ի հարկին հանդէս կու գայ մարտական-ռազմական իր ամբողջ ուժով՝ կռիւ մղելու ռէաքսիոնին դէմ, երբ ան սպառնայ սահմանադրական կարգերուն եւ փորձէ վերահաստատել այն վիճակը՝ որ այս երկրի անկման եւ յետամնացութեան պատճառն եղաւ:

Որ՝ Դաշնակցութիւնը հաւատարիմ իր սկզբունքին եւ գործելակերպին, պիտի շարունակէ նոյն թափով եւ աւելի լայն ծաւալով համագործակցիլ Թուրք երիտասարդ կուսակցութեան եւ մտաւորականութեան հետ՝ ի պաշտպանութիւն սահմանադրութեան, եւ համախմբել այդ գործակցութեան շուրջը այն բոլոր դիմադիր տարրերը, հայ եւ օտար, որոնք գիտակցութիւն եւ նպատակ ունին պաշտպանելու նոր կարգերը, ինչպէս նաեւ ժողովուրդի կեղեքուած դասին շահերը, եւ իր այդ վերաշինող աշխատանքին մէջ կուսակցութիւնը ջանք չպիտի խնայէ վերացնելու համար միջազգային եւ ազգային այն բարդութիւնները, որոնք կրնան դժուարացնել իրաւակարգի հիմնաւորումը եւ ազգերու փոխադարձ եւ



Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ա Գ Ի Ր

Ե Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն Ե Ր

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

1՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՊՈՂՈՒՆ—1909

Հ ա ռ ս . 1910

Հ. Յ. Դաճնակցութեան Ժ Ը Ն Ե Վ .

անկեղծ համերաշխութիւնը:

Որ՝ Դաշնակցութիւնը նախանձախնդիր հայ ժողովուրդի ներդաշնակ եւ անարգել զարգացման, պիտի պաշտպանէ մեր ազգային-կուլտուրական քաղաքակրթող բոլոր հիմնարկութիւնները, պիտի հովանաւորէ ժողովրդական բոլոր իրաւունքները, միշտ յարգելով ու իշ ժողովուրդներու նոյնքան սրբազան իրաւունքները:

Որ՝ Դաշնակցութիւնը պիտի շարունակէ, պաշտպանելով հանդերձ սահմանադրական կարգերը, խիստ կռիւ եւ պայքար մղել կառավարութեան դէմ, այն պարագային, երբ անիկա դաւաճանելով իր պարտաւորութեան, թոյլ տայ շեղումներ՝ սահմանադրական շաւղէն,

ի վնաս երկրի բովանդակ շահերուն եւ պետութիւնը կազմող բոլոր ազգերու հաւասարութեան եւ հետեւաբար՝ անոնց մերձեցման:

Որ՝ Դաշնակցութիւնը՝ վճռականապէս ետ մղելով անջատողական ձգտումները, պիտի տքնի վերակազմել Երկրի քաղաքական եւ տնտեսական կարգերը, Օսմանեան պետութեան ամբողջութեան մէջ, հիմնուած բոլոր շրջաններու տեղական լայն ինքնավարութեան վրայ եւ ամբողջութեամբ բոլոր տարրերու դաշնակցական կապերով:

Որ՝ Դաշնակցութիւնը, անվերապահ կողմնակից արդարութեան եւ արդարադատութեան, պիտի մնայ պահանջողի դերին մէջ Ատանայական քաղաքական եղեռնին դիմաց, որ է եւ պիտի ճանչցուի համապետական աղէտ եւ անարգանք, մինչեւ որ լուացուի այդ անարգանքը՝ արդարութեան գեր-յաղթանակով, գոհեբու իրաւունքներուն ապահովումովը ու պատասխանատուներուն խիստ պատիժովը — միակ միջոցը ամբողջ պետութեան մէջ ապահովութիւնը եւ խախտուած կարգը հիմնաւորելու:

Ամրապնդումն Սահմանադրութեան, եւ կռիւ ռէաքսիոնի դէմ: Համերաշխութիւն բոլոր ազգերու՝ էական հաւասարութեան հողի վրայ: Ստեղծագործող աշխատանք՝ բոլոր ասպարէզներուն մէջ: Մաքրագործումն վարչական կազմի: Յամառ, յարատեւ ջանքեր՝ հարթելու համար այն փշոտ ճամբան՝ որ պիտի տանի դէպի ռամկապետութեան հաստատումը՝ միապետութեան փոխարէն, եւ աշխատանքի գերիշխանութիւնը՝ դրամի գերիշխանութեան փոխարէն:

Եւ այդ շաւղին վրայ, կուսակցութիւնը՝ իր քսանամեայ կեանքովը փորձառու, պիտի մնայ անչեղ եւ անյողդողդ՝ հալածանքին դէմ, ըլլայ այն ռէաքսիոնէր կառավարութեան թէ՛ ժողովրդական խաւար ու պղտոր տարրերուն կողմէն, — միշտ հաւատարիմ իր ծրագրին, իր սկզբունքներուն, իր գործելակերպին, — յենուած շիտակ եւ անձնուէր շարքերուն վրայ:

Կուսակցութեան իրաւասու մարմիններուն թողնելով մեր որոշումներու հրատարակութիւնը ի գիտութիւն ամբողջ կազմակերպութեան, Ընդհանուր ժողովը կոչում կ'ընէ դաշնակցական մարմիններուն եւ ընկերներուն, ճշտօրէն հետեւիլ կազմակերպութեան Բարձրագոյն Ատեանի գծած շաւղին, խորապէս համոզուած որ կարմիր ու մահաբոյր անցեալէն յետոյ, կարող պիտի ըլլանք պատրաստել վաղուան յաղթանակը — ժողովրդապետութիւնը, հիմնուած աշխատանքի գաղափարին վրայ:

ԿԻԼԻԿԻԱ

Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհ. ժողովը լսելով Կիլիկիոյ շրջանին եւ վերջի աղէտներու մասին տրուած

զեկուցումները, ինչպէս նաեւ քննութեան ենթարկելով յարակից պարագաները, եկաւ հետեւեալ եզրակացութեան.

Հաստատելով թէ՛ հայ ժողովուրդը ընդհանրապէս եւ հայ կուսակցութիւնները մասնաւորապէս Կիլիկիոյ, ինչպէս եւ Օսմանեան կայսրութեան մէջ չեն հետեւած անջատողական քաղաքականութեան, այլ նուիրուած են եղեր արիւնոտ մէկ կռիւի մը՝ ընդդէմ բռնակալութեան եւ հայատեաց կառավարութեան.

Թէ՛ Սահմանադրութեան յայտարարութիւնը բոլոր ազատականներուն հետ միասին՝ խանդավառօրէն ողջունուած է ամբողջ հայութեան կողմէ, մինչ ընդհակառակը, հին ռեժիմի արբանեակները՝ կաշառակեր պաշտօնեաներ, տէրէպէյիներու ժառանգներ եւ իսլամները արտօնեալ դասակարգ կարծող սոցիտներ, դժգոհ էին Սահմանադրութենէն ու ազգային հաւասարութենէն, ինչ որ շեշտած էին բազմաթիւ պարագաներու տակ ու տարբեր ձեւերով:

Թէ՛ կառավարական պաշտօնեաները բռնած էին անտարբեր դիրք՝ դէպի այն ռէաքսիոնէրական փորձերը, պարագայ մը՝ որ միանալով 1895-96-ի ջարդերու մեղսակիցներուն անպատիժ մնալուն, ենթադրել տրուաւ սոցիտ խուժանին՝ թէ կարելի է անպատիժ կերպով թալլել, խոշտանգել եւ կոտորել հայը:

Ապացուցուած համարելով թէ՛ Մարտ 31-ի վաղորդայնի սկսած կիլիկեան կոտորածներու ատեն հայերը ո՛չ մէկ տեղ — նոյնիսկ գուտ հայկական շրջաններու մէջ — նախադրածակ չեն եղած, այլ ամէնուրեք բռնած են միմիայն պաշտպանողական դիրք եւ հակառակ ասոր՝ անխնայ կերպով կոտորուած են ա՛յն բոլոր վայրերուն մէջ, ուր հայը կազմած է չնչին փոքրամասնութիւն կամ վար դրած է պաշտպանողական զէնքը՝ անձնատուր ըլլալով հակառակորդին:

Թէ՛ տեղական կառավարական պաշտօնեաները — ի բաց առեալ սակաւաթիւ անհատներ — դաւաճանած են իրենց նուիրական պարտականութիւններուն՝ ուղղակի կամ անուղղակի կերպով խրախուսելով կոտորածը, ռետիֆները՝ զինելու պատրուակին տակ՝ զէնք բաժնելով պաշիբոզուներուն կամ թոյլ տալով կողոպտելու զինական պահեստները:

Թէ՛ զինուորական դրութիւն յայտարարուելէ յետոյ, նախնական քննութիւններուն մասնակցած են կոտորածի կազմակերպիչներէն շատերը, որոնք ծածկելով իսկական մեղաւորները եւ յանցանքը բարդելով հայերուն վրայ, կարողացան դատապարտել հայեր, որոնց միակ «յանցանքն» էր եղած ինքնապաշտպանութեան բնական թելադրութիւնը:

Գտնելով թէ վերջին կիլիկեան աղէտներու ժամանակ սպաննուած են առնուազն 10.000 տեղացի ու դրսե-

1.- Պահեստի զինուորները:

ցի աշխատաւոր հայեր, ամէն մէկը նեցուկ՝ ամբողջ ընտանիքի մը:

Թէ՛ կոտորածներու ատեն մարդասպաններու յատուկ ուշադրութեան առարկայ են եղած ունեւոր եւ հողատէր ընտանիքները, որոնց բոլոր անդամները կոտորելով՝ ոճրագործները նպատակ են ունեցել «մահլիւրի օրէնքով տիրանալու «ժառանգ չունեցող» կալուածներուն:

Թէ՛ սպանուածները թողած են հազարաւոր այրիներ, 10.000-էն աւելի որբ ու անպաշտպան երեխաներով:

Թէ՛ 7.000-էն աւելի ընտանիքներ ամբողջովին զրկուած են բնակարանէ, գործիքներէ, անասուններէ ու պաշարէ:

Թէ՛ նոյնչափ ալ ընտանիքներ — ազատած կոտորածէ — կիսով չափ կամ ամբողջովին ենթարկուած են թալանի, զրկուելով տասնեակ տարիներու ընթացքին իրենց ձեռք բերած հարստութենէն:

Թէ՛ այդ միլիոնաւոր ընդհանուր վնասէն միայն ամենաչնչին մասն է վերադարձուած տէրերուն, իսկ մնացածը կը գտնուի հարեւան թալանճիներու քով կամ վաղուց ի վեր վաճառուած ու սպառած է:

Համոզուած թէ՛ առանց հայերուն կրած նիւթական վնասներու հատուցման, — սովի, ցուրտի եւ այլ զրկանքներու պատճառով Կիլիկիայի հայութիւնը անխուսափելիօրէն դրուած է նոր, խաղաղ ձեւով մը առաջ տարուած կոտորածի առջեւ, — մինչ միւս կողմէն ուրիշին աշխատանքով հարստացած եւ անպատիժ մնացած թալանճիները նոր խրախոյս կը ստանան՝ կրկնելու իրենց արարքները նաեւ ապագային:

Թէ՛ Թուրքիոյ պէս յետամնաց երկիրներու մէջ նման շարժումներու ատեն ամենամեծ պատասխանատուութիւնը պէտք է իյնայ ոչ այնքան կոյր գործիք խուժանին վրայ, որքան ժողովրդական զանգուածներու պաշտօնական ու անպաշտօն ղեկավարներուն ու այդ զանգուածները գրգռող ու ֆանատիկոսացնող ամենայայտնի անհատներուն վրայ:

Թէ՛ արդարութեան անաչառ գործադրութիւնը Կիլիկիոյ մէջ՝ ոչ միայն անկապտելի իրաւունք է տուածներուն, այլ եւ միջոց՝ յանցաւորները պահելու հասարակական օրինականութեան սահմաններու մէջ, եւ միակ պայման՝ սահմանադրական կառավարութիւնը եւ ամբողջ պետութիւնը դնելու իրենց պարտականութեան եւ կոչման բարձրութեան վրայ:

Նկատի ունենալով ահա այդ բոլորը, Դաշնակցութեան Ընդհանուր ժողովը կ'որոշէ՝

Հետամուտ ըլլալ եւ կուսակցական ու այլ միջոցներով իրագործել հետեւեալ պահանջները՝

Ա) Օրինակելի պատժի ենթարկել տալ իրենց պաշտօնին մէջ թերի գտնուած պաշտօնեաները, ինչպէս նաեւ կոտորածի ու թալանի ղեկավարները մնացած մեղսա-

կից ժողովրդեան մասսան ենթարկելով հաւաքական պատասխանատուութեան՝ իբրեւ թալանճի եւ ուրիշին գոյքն ու աշխատանքը աւերողներ:

Բ) Հատուցանել կամ վերադարձնել հայերու կրած վնասները, վերաշինել տուններն ու շէնքերը, վճարել ոչնչացած ու պակաս անասուններու, գործիքներու եւ այլ շարժական գոյքերու արժէքը:

Գ) Այրի մնացած կիներուն, որբերուն կամ սպանուածներու ազգականներուն ապահովել սպանուածներու աշխատանքի արժէքը կամ նշանակել այդ արժէքին համապատասխան թոշակ: իսկ ամբողջովին փճացուցած ընտանիքներու աշխատանքի փոխարժէքը վճարել համապատասխան համայնքներու եկեղեցիներուն կամ դպրոցներուն:

Դ) Տարուայ ընթացքին հասցուած սովորական աշխատանքի կորուստին փոխարէն՝ վնասուած շրջաններու հայութիւնը ազատել մէկ քանի տարի սովորական տուրքերէ:

Ե) Ոչնչացուցուած ընտանիքներու անտէր մնացած եւ «մահլիւր» հրատարակուելիք հողերը յանձնել համապատասխան հայ համայնքներուն՝ ի դիմաց իրենց եկեղեցիներուն եւ դպրոցներուն:

Չ) Փութով սկսիլ Ատանայի ու Հալէպի վիլայէթներուն ժանտարմբիտայի, ոստիկանութեան եւ վարչութեան վերակազմութեան՝ իսկական մասնակցութեամբ բոլոր ազգութեանց, վտանգի ենթակայ հայ գիւղերուն մէջ տեղացիներէն հաստատելով պահակներ, զինուած պետական զէնքերով:

Ատոր հետ միասին որոշեց՝ յայտնել կուսակցութեան յարգանքները այն բոլոր հասարակական խաւերուն, հաստատութիւններուն ու անձերուն — քրիստոնեայ, մահմեդական, ֆելլաւ — որոնք կիլիկեան հայ ժողովուրդի տագնապալից օրերուն կանգնած մնացին իրենց մարդկային ու քաղաքացիական պարտականութեանց բարձրութեան վրայ:

II

ԿՈՎԿԱՍ

Հ. Յ. Դաշնակցութեան Ե.-րդ Ընդհանուր ժողովը կանգնած է քաղաքական երկու տարբեր պատկերների առջեւ: Մինչ մի կողմից գայլիս ենք Թուրքիայի մեր քսանամեայ կռիւների փայլուն յաղթանակն արձանագրելու, մինչ իրանի պատմութեան մէջ՝ մեր մասնակցութեամբ բացուած նոր շրջանն ենք աւետում, մինչ երկու երկիրների բռնապետների տապալումը եւ ուժասպառ ժողովուրդների վերածնութիւնն ենք ողջունում, — այնտեղ՝ Ռուսաստանում սեւ ռէակցիան է, որ տիրող է, յաղթական: Ժողովրդի դէմ յայտարար-

լած պատերազմն է, որ շարունակում է մղուել յամառ ու անողոք՝ այնտեղ՝ արիւննոտ, նոր, մեծ պայքարի հեռանկարն է, որ դրուած է սպառնալից:

Ռուսական Յեղափոխութիւնը — նա, որ այնքան ուժգին գարկ տուեց Թուրքիայի եւ Իրանի շարժումներին, որ երկար ժամանակ իր վրայ սեւեռած պահեց ամբողջ Արեւմուտքի ուշադիր հայեացքը, նա, որի ազդեցութիւնը սոցիալիստական մտքի եւ գործի ուղղութեան վրայ անուրանալի է,— այդ մեծ յեղափոխութիւնը անգոր եղաւ, սակայն, պահպանել իր նուաճումները, ձեռք բերուած այնքան գոհողութիւններով:

Տարուած գաղափարի վեհ թուիչներով՝ նա չկշռեց իր ուժերը, հաշուի չառաւ խոչընդոտների ամբողջ լրջութիւնը եւ կազմակերպուած ուժի հանդէպ՝ չպատրաստեց մարտական կուռ շարքեր:

Հակառակ արուած կրկնակի փորձերին, անհնարին եղաւ համախմբել կուռող կուսակցութիւնները մի բանակի մէջ միահամուռ գործողութիւններին համար, եւ յեղափոխական փայլուն ըմբոստացումները՝ ժողովրդական թէ գինուորական՝ տարբեր ժամանակներում, տարբեր վայրերում ջախջախուեցին իրարից անկախ, իրարից անջատ: Աւելին եւս,— իրենք կուսակցութիւնները՝ աղանդական ոգով տոգորուած, բաժնուած էին եւ նոյնիսկ կուռի ընթացքում շարունակում էին բաժանուել ֆրակցիաների, տարուելով հատուածամով նեղսրբտուութեամբ՝ ներելի միայն առօրեայ կեանքի խաղաղ շրջանում:

Պալատական կամարիլյան²⁾ սմբած սկզբում՝ յաջողեց այդ դրութեան հանդէպ՝ գործի դնելով իր վարչական կապերը, ամրացնելով ոտի տակ հողը, նախ պոզրոմային³⁾ համատարած գործողութիւններով եւ ապա՝ սիստեմատիկ ու անդուլ գրոհներով: Մի կողմից՝ յեղափոխութեան կարմիր սպառնալիքը գործիք դարձրած, միւս կողմից՝ զապիչ միջոցները ժողովրդական լայն մասսաների վրայ եւս տարածելով, մերթ ամբոխի տականքները ոտքի հանելով, մերթ պրովոկատորների աջակցութեամբ՝ սարսափ ազդող, բայց վիժելու սահմանուած ձեռնարկներ երեւան բերելով, նա կարողացաւ խախտել յեղափոխութեան հեղինակութիւնը, ջլատել ուժերը, խուճկութիւններ սերմանել, իր հետ կապել խոշոր բուրժուազիան ու կալուածատէր ազնուականութիւնը, ստիպել, որ սահաբեկուած խաւերը միապետութեան գրկում՝ փնտռեն իրենց փրկութիւնը, եւ որ գլխաւորն է, նա իր ձեռքի տակ հաւաքեց զօրքը՝ թափել տալով նրա մէջ ամբարուած գայրոյթը հէնց իրենց յեղափոխականների եւ ժողովրդեան լայն զանգուածների գլխին:

Հ. Յ. Դաշնակցութիւնը — նա, որ առաջինը դուրս եկաւ գինուած մասսաներով պլէկէեան ռեժիմի դէմ կովկասում, վերջինը եղաւ, որ ենթարկուեց միապետութեան վճռական գրոհին, եւ դա մի այնպիսի ժամա-

նակ, երբ կուսակցական ուժերի կարեւոր մասերը կլանուած էին Թուրքիայում սահմանադրութիւնը ապահովելու խնդրով, Իրանում՝ սահմանադրութիւնը յետ ստանալու եւ ժողովրդի ինքնապաշտպանութեան կուռը առաջ տանելու անյետաձգելի գործով:

Կուռը դաշնակցական շարքերի եւ ընդհանրապէս կովկասահայ մտաւորականութեան դէմ՝ երկարօրէն եւ խնամքով նախապատրաստուած, մղուած է հայ ժողովրդի տականքների աջակցութեամբ ու խրախուսանքով, յաճախ նոյն պաշտօնեաների ձեռքով, որոնք դեռ երէկ մեր կոմիտէների թոյլտուութեանն էին սպասում իրենց պաշտօնատեղին երթալու համար, դաշնակցական մարմինների ու դատարանների աջակցութեանն էին դիմում եւ՝ յեղափոխական դրօշակի ետեւից քար ընկած՝ կազմակերպութեան մարտական ու գաղափարական կորովն էին գովաբանում:

Ռէակցիան այսօր տէր ու տիրական է համայն Ռուսաստանում: Եւ նա կանգ չի առնում: Յայտարարուած ազատութիւնները աւելի ու աւելի կրճատուում են, աշխատաւորութեան իրաւունքները՝ արեան գնով ձեռք բերուած, սեղմուում են: Ազգային ճնշումները լայն չափեր են ընդունում: Լիֆլիանդիայից⁴⁾, Լեհաստանից եւ կովկասից յետոյ հերթը ինքնավար Ֆինլանդիային է հասել: Դուման պահում է լոկ արտաքինը փրկելու համար: Ժողովրդական լայն մասսաները՝ շջմուած արշաւախմբերից, էկզեկուցիաներից⁵⁾, կախադաններից, լրուում են իրենց ցաւերը: Ասպարէզը գիշատիչներին է եւ նրանց գարշապարը լիզող սողուններին:

Բայց դա երկար տեւել չի կարող: Քայքայուող տնտեսութիւն, պետական պարտքերի յարատեւ աճում, կուլտուրական կեանքի կաշկանդում, մատաղ ուժերի սիստեմատիկ բնաջնջում,— ահա ներքին պատերազմի եւ միապետութեան յաղթանակների իրական արդիւնքները: Երկիրը չի կարող երկար դիմանալ, դժգոհութիւնները կուտակուում են նորից, բողոքները սկսում են մարմին առնել գիտակից փոքրամասնութեան մէջ, յեղափոխական ոգին վերակենդանանում է. ռէակցիայի աջակիցներն անգամ սկսում են գիտակցել, որ նրա իւրաքանչիւր յաղթանակը մի մի պարտութիւն է երկրի համար, որ Ստոլիպինի դափնիները փշեայ պսակներ են

2.- Դաւադրութիւններ սարքող պալատական խմբակ:
3.- Կոտորածներու միջոցով:
4.- Լիֆլանդիա կամ Լիվոնիա. նախկին անուանակոչումը Մերձպալթեան երկրամասի սը, որ այժմ բաժնուած է Եստոնիոյ եւ Լատվիոյ միջեւ:
5.- Ընթացիկ առումով՝ դատարանի կողմէ տրուած պատիժի, յատկապէս մահապատիժի հրապարակային գործարկութիւն: Ցարական վարչակարգի տակ, սակայն, կը հասկցուէր զօրքի տեղաւորումը որեւէ ըմբոստ համարուած համայնքի մէջ, զիւր, քաղամաս,— զանազան ձեւերով նեղելու եւ ճնշելու համար բնակչութիւնը:

իզվոյսկու ճակատին: Պլէկէեան⁶⁾ ուղին է, որ վերահաստատուում է, եւ — չեն կարող չյիշել — այդ ուղիի հետ է, որ կապուած են Մանջուրիան, Յուսիման⁷⁾ եւ ներքին փոթորիկների վիթխարի պայթումը:

Յեղափոխական նոր պայքարի գերագոյն ստիպողականութիւնը մեր առջեւ է. պէտք է պատրաստուել՝ գինուած անցեալի փորձառութեամբ: Հ. Յ. Դաշնակցութեան Ե-րդ Ընդհ. Ժողովը ուշադրութեան առնելով այն կարեւոր հանգամանքը.

Որ Ռուսաստանի յեղափոխական կազմակերպութիւնները անցեալում ծանրանում էին գլխաւորապէս ծրագրային առանձնայատուկ ուղղութիւններն առաջ տանելու գործի վրայ,

Որ առանց ձեռնարկելու դրական միջոցների, որոնց նպատակը պիտի լինէր ապահովել եւ ընդարձակել ձեռք բերուած ազատութիւնները, ոմանք զուտ տնտեսական պայքարի շուրջն էին կենտրոնացնում իրենց ջանքերը, ոմանք էլ սոցիալիստական մեծ յեղաշրջումն էին երագում Ռուսաստանում՝ յափշտակուած գաղափարի վեհութեամբ, անտես առնելով արտաքին եւ ներքին խոչընդոտները, եւ

Որ դրանով յեղափոխական կուսակցութիւնները դիւրութիւններ էին ընձեռում միապետական ուժերին՝ վերականգնելու ընկած իշխանութիւնը՝

— Գալիս է այն հաստատ համոզման, որ Ռուսաստանի արդի սոցիալ-տնտեսական պայմաններում, մօտակայ գործունէութեան ծանրութեան կենտրոնը պէտք է համարել կուռը միապետական ընդհանուր ռեժիմի դէմ, որի գոյութեամբ չափազանց դժուարին, յաճախ ապարդիւն են աշխատաւորների տնտեսական նուաճումները եւ անխուսափելի՝ ազգային հալածանքները:

Ընդհանուր ժողովը աչքի առաջ ունենալով այն մեծ ուժը, որ պահպանել է միապետական բիւրոկրատիան, այն մեծ խոչընդոտը, որ բխում է ժողովրդական մասսաների եւ զօրքի քաղաքական տհասութիւնից, գիտակցելով, որ այդ բացասական պայմանների հանդէպ անգոր են եղել եւ անգոր պիտի լինին կազմակերպութիւնների անջատ գործողութիւնները,

Հրահանգում է իր մարմիններին՝ արծարծել միւս կուսակցութիւններին եւ խմբակցութիւններին շրջաններում ստիպողական անհրաժեշտութիւնը մի ընդհանուր համագումարի, որին մասնակցէին ոչ միայն սոցիալիստական եւ յեղափոխական, այլ եւ բոլոր կազմակերպուած դիմադիր տարրերը:

Համագործակցութեան այս հրահանգը առաջինը չէ, որ բխում է Դաշնակցութեան կողմից: Բայց այս անգամ նա գալիս է հնչեցնելու իր կոչը աւելի մեծ ուժգնութեամբ եւ վստահութեամբ, սրտապնդուած այն երկու յաղթանակներով, որ ձեռք բերեց համագործակցութեան տակտիկի շնորհիւ, Թուրքիայի եւ Իրանի նման յետամնաց, ծայր-բռնապետական երկիրներում:

Քաղաքական կուռը, սահմանադրական լայն կարգերի հաստատում, ազգային հաւասարութեան իրական ապահովութիւն,— ահա այն որոշակի նշանաբանը, որի շուրջը հրաւիրուում են համախմբուել Ռուսաստանի բոլոր կուռող տարրերը, անկախ իրենց կուսակցական առանձնայատուկ կերպարանքից:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ն Ե Ր

ԹՈՒՐՔԻԱ

Համոզուած՝ որ սահմանադրութիւնը սկիզբ կը դնէ Օսմանեան երկրի վերածնութեան, իրաւագուրկ ազգերու եւ կեղեքուած դասերու վիճակի բարելաւման, ինչպէս նաեւ կը հանդիսանայ խոշոր ազդակ մը իրաւակարգերու յաղթանակին դրացի երկիրներու մէջ (Ռուսիա եւ Պարսկաստան):

Նկատելով միեւնոյն ատեն՝ ա) Որ աւատական իշխանութեան մնացորդները, ինչպէս նաեւ նախկին ռեժիմի բարիքները վայելած արտօնեալ խաւերը՝ սահմանադրական իրաւակարգը սպառնալիք համարելով իրենց գոյութեան՝ ոչնչակախն առաջ բերելու առիթներու կը սպասեն.

բ) Որ մեր դրացի մահմետական զանգուածները թիւր կերպով կ'ըմբռնեն սահմանադրական կարգերու հական նշանակութիւնը, սահմանադրութիւնը համարելով լոկ առանձնաշնորհում քրիստոնեաներուն տրուած, անհաշտ աչքով կը նային կատարուող փոփոխութեան վրայ, եւ որ սահմանադրական ռեժիմի ապաւէնը կը ներկայացնէ ներկայիս գինուորականութեան եւ մտաւորականութեան մէկ մասը միայն.

գ) Որ սահմանադրութեան հռչակման գործի մէջ՝ ներքին հասունցած պահանջներու հետ միասին նաեւ արտաքին վտանգաւոր սպառնալիքը որոշ դեր է խաղացած, եւ որ

Հետեւաբար, սահմանադրական ռեժիմի օգտակարութեան գիտակցութիւնը դեռ եւս կեանքի մէջ բաւարար չափով հիմք չէ գտած,

Ընդհանուր ժողովը որոշեց՝

1) Պաշտպանել օսմանեան սահմանադրութիւնը բոլոր հնարաւոր միջոցներով, եւ միեւնոյն ատեն բացատրել ու լայնցնել ասոր բովանդակութիւնը իրաւակար-

6.- Պլեւէ, Ստոլիպին, Իզվոլսկի՝ ցարական վարչակարգի երեք բռնակալներ. Պլեւէ՝ նախկին վարչապետ, սպանուած ահաբեկիչի գնդակով (1904), Ստոլիպին եւ Իզվոլսկի յաջորդաբար՝ վարչապետ եւ արտաքին գործոց նախարար:
7.- Յուսիմա, կղզի Քորիական նեղուցին մէջ, ուր 1905 թ. Մայիսին ճափոնական զօրքերը ոչնչացուցած էին ռուսական նաւատորմիդ եւ վճռական յաղթանակ տարած:

գի, ժողովրդապետութեան եւ ազգերու հաւասարութեան տեսակէտներէ:

2) Այդ հրամայողական պահանջի վրայ կեդրոնացած պահելով ամբողջ ուշադրութիւնը՝ կոչ ընել մեզ հետ կապ ունեցող բոլոր ուրիշ տարրերուն՝ խոյս տալ այն բոլոր քայլերէն, որոնք կրնան ներքին-ազգային, ինչպէս նաեւ արտաքին-միջազգային բարդութիւններու առիթ ծառայել:

3) Յատուկ ուշադրութիւն դարձնել ընդհանուր բնոյթ ունեցող գործնական այն պահանջներուն եւ ձեռնարկներուն, որոնցով հնարաւոր կ'ըլլայ մէկ կողմէն ցոյց տալ օսմանեան ժողովուրդներուն՝ սահմանադրութեան առաւելութիւնները, եւ միւս կողմէ՝ սերտ կապ հաստատել տարբեր ցեղերու աշխատաւոր դասակարգերու միջեւ, ընդգծելով անոնց շահերու նոյնութիւնը:

4) Ձեռնհաս մարմինները պարտաւոր են ի հարկին կիրարկանել մարտական բոլոր միջոցները՝ պաշտպանելու սահմանադրական ռեժիմը որեւէ հարուածի եւ փորձանքի դէմ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՅԼԵՒԱՅԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԵՏ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՁ

Մօտիկէն ծանօթանալով օսմանեան պետութեան մէջ գտնուող այլեւայլ քաղաքական կուսակցութիւններու եւ խմբակցութիւններու գործունէութեան,

Եւ Ընդհանուր ժողովը նկատի առնելով,

1) Որ առանց բոլոր սահմանադրական տարրերու համագործակցութեան եւ մերձեցման՝ շատ դժուար, նոյնիսկ անհնար պիտի ըլլայ սահմանադրական ռեժիմը ապահովել ռէակտիոնէր տարրերէն, որոնց վերերեւման հաւանականութիւնը դեռ շատ զօրեղ է:

2) Որ գործող քաղաքական կուսակցութիւններու ներքին հակամարտութիւնն ու թշնամանքը՝ ռէակտիոնի ձեռքին ամենանպաստաւոր գէնք է՝ նորէն դաւելու նորահաստատ սահմանադրութեան դէմ, ինչպէս ցոյց տուաւ Մարտ 31-ը՝:

3) Որ Թուրքիոյ մէջ՝ սահմանադրական կարգերը ամրապնդուած չըլլալով, քաղաքական որոշ դաւանանք ունեցող կուսակցութիւններ եւ հասարակական որոշակի հոսանքներ դեռ եւս չեն գտուել եւ կազմակերպուել, եւ որ երկրորդ՝ Թուրքիոյ վստահելի տարրերը — շահագրգռուած իրաւակարգը արմատացնելու գործի համար — համախմբուած են «իթիհատ վէ թէ-րաքը» կազմակերպութեան մէջ:

Որոշեց՝

1) Ծարուսակել համագործակցիլ իթիհատի հետ

ընդհանուր ձեռնարկներու եւ երկու կուսակցութիւններու ներկայացուցիչներէ կազմուած խառն կոմիտէներու միջոցով, մնալով հաւատարիմ Դաշնակցութեան հիմնական սկզբունքներուն եւ դուրս չգալով Ընդհանուր ժողովի գծած ուղղութիւնէն:

2) Խորացնել եւ լայնցնել համերաշխութեան գործը՝ դեմոկրատիկ ռեժիմներու ուղղութեամբ, համագործակցութեան հրաւիրելով նաեւ երկրի սահմանադրական եւ դիմադիր միւս տարրերը:

3) Ոչ մէկ ջանք չխնայել՝ յաջողցնելու համար դիմադիր քաղաքական հայ կուսակցութիւններու եւ խմբակցութիւններու համերաշխ գործունէութիւնը:

Ծանօթ.- ա) Իբր այդ ուղղութեամբ նախապատրաստական քայլ Ընդհանուր ժողովը կը յանձնարարէ Արեւմտեան Բիւրոյին՝ հրաւիրել զանազան հայ կուսակցութիւններու խորհրդակցական ժողով եւ ձգտել համերաշխութիւն կայացնել քանի մը անյետաձգելի խնդիրների շուրջը — սահմանադրութեան ապահովումը, ազգային կուլտուրական շահերու պաշտպանութիւն եւ այլն:

բ) Ատոր հետ միասին կը յանձնարարէ բոլոր մարմիններուն ուժ տալ եւ իրականացնել Դաշնակցութեան Դրո Ընդհանուր ժողովի (1907) հրահանգած «Միջկուսակցական ատեանները»:

4) Սերտ կապ հաստատել մակեդոնական կուսակցութիւններու հետ, որոնք մեր առաջին դաշնակիցները եղած են՝ բռնակալ ռեժիմը տապալելու գործի մէջ եւ ներկայիս կարող են՝ իբրեւ գիտակից ռամկավար ուժեր՝ նպաստել սահմանադրական ռեժիմի ամրապնդման՝ դեմոկրատիկ ուղղութեամբ:

Միեւնոյն ժամանակ Ընդհ. ժողովը որոշեց կոչ ընել՝ Դաշնակցութեան կողմէ՝ մակեդոնական կազմակերպութեան երկու հատուածներուն՝ վերջ դնելու յեղափոխական համերաշխութեան վնասող արիւնահեղ հակամարտութեան եւ այդ քայլով զգացնել համագործակցութեան աշխատանքը:

5) Միջկուսակցական համերաշխութեան նոր ուժ տալու եւ ընդհանուր տակտիկ (գործելակերպ) մշակելու համար՝ ձեռնարկել բոլոր ազգերու քաղաքական կուսակցութիւններու համաժողովներու գումարման:

ՌՈՒՄԻԱ

Մանրամասն քննութեան ենթարկելով Ռուսիոյ քաղաքական արդի վիճակը, եւ

ա) Նկատի ունենալով՝ որ Ռուսիոյ մէջ միապետական ռեժիմը՝ յենուած ազնուական հողատէրերու եւ խոշոր բուրժուազիայի վրայ ու շահագործելով աշխարհը

8.- Կ'ակնարկուի Սուլթան Յամիտի կողմէ սահմանադրական կարգերը տապալելու եւ բռնակալութիւնը վերահաստատելու փորձին (1909 թ.):

տաւոր խաւերը եւ քաղաքացի միջակ դասը՝ վաղուց ի վեր չի համապատասխաներ երկրի քաղաքական եւ տնտեսական հասունութեան:

բ) Գիտակցելով որ արտաքին բարդութիւններու եւ ներքին յեղափոխութեան ճնշման տակ 1905-ին յայտարարուած սահմանադրութիւնը, դիմադիր տարրերու տակտիկային սխալներու շնորհիւ (ներքին երկպառակութիւն, մարտական ուժի թուլութիւն), յետագայի մէջ էպպէս վերացուեցաւ, ու այսօրուան Պետական Դուման կը հանդիսանայ միայն իբրեւ նպաստաւոր միջոց ու քող՝ փրկելու կառավարութեան դիրքը թէ՛ ներսը եւ թէ՛ դուրսը:

գ) Գտնելով որ ժողովրդական մասսաներու վրայ յենուող կուսակցութիւնները դրական հետեւանքներու կարող են հասնիլ միայն այն պարագային, երբ առանց մոռացութեան տալու կուսակցութեան հեռաւոր նպատակները, կը մարզեն մասսաները գործնական քայլերով՝ կոնկրետ հարցերու շուրջը (աւատական կարգերու վերացում, հողերու բաշխում, հարկերու թեթեւացում եւ այլն):

Ընդհանուր ժողովը որոշեց՝

1) Կազմակերպական շարքերը զօրացնելու եւ ամրապնդելու պահուն՝ ամենամեծ ուշադրութիւն դարձնել ընդհանուր քաղաքական պահանջներու եւ կռուի կարեւորութեան, ինչպէս եւ այն միջոցներու վրայ, որոնք կը պայմանաւորեն անոնց յաղթանակը:

2) Նախաձեռնութիւն ստանձնել՝ հրաւիրելու թէ՛ Ռուսիոյ մէջ ընդհանրապէս եւ թէ՛ Կովկասի մէջ մասնաւորապէս՝ ընկերավարական եւ ասոնց համաձայնութեամբ ուրիշ դեմոկրատիկ կուսակցութիւններու համագումար մը՝ ընդհանուր պահանջներ, տակտիկ եւ գործունէութեան ձեւեր մշակելու համար:

3)

4) Ներկայ հայածանքներու դէմ միջոցներ ձեռք առնելը թողուլ կովկասեան ձեռնհաս մարմիններուն:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Հ. Յ. Դաշնակցութեան Ե-րդ Ընդհանուր ժողովը հաւանութիւն տալով Պարսկաստանի եւ Կովկասի մարմիններու գործունէութեան Պարսկաստանի մէջ, գտնելով որ այդ քայլերը եղած են Դ-րդ Ընդհ. ժողովի որոշումներու կիրառումը, ժամանակի եւ տեղի պահանջներու համաձայն, եւ լսելով զեկուցումներ ապագայ մեր ընկիւններու մասին,

Ու նկատելով՝

ա) Որ պարսկական շարժումները, ուղղուած աւատական դրութեան դէմ՝ սոցիալական յեղաշրջման բնոյթ ունին:

բ) Որ Պարսկաստանի վերածնութիւնը իր մեծ օգու-

տը ունի Թուրքիոյ, Կովկասի եւ Մօտաւոր Արեւելքի վերածնութեան համար:

գ) Որ Պարսկաստանի ներկայ շարժման յաջողութեան մէջ է կայանալու եւ պարսկահայ ժողովրդի ազգային, կուլտուրական եւ տնտեսական շահերու բարգաւաճումը:

դ) Որ Դաշնակցութիւնը իր ակտիւ մասնակցութեամբ Պարսկաստանի շարժումներու մէջ՝ կը վերահաստատէ այն հասարակական-կուլտուրական կապը մեր եւ մահմետական ժողովուրդներու միջեւ, որ դարերէ ի վեր խզուել է:

ե) Որ մեր յարաբերութիւններու այդ նոր շրջանը իր անվիճելի օգուտն ունի մեր եւ մահմետական ժողովուրդներու մերձեցման տեսակէտէ՝ Կովկաս, ինչպէս նաեւ Թուրքիա:

Որոշեց՝

Արտօնել Պարսկաստանի դաշնակցական իրաւասու մարմինները — որոնք մինչեւ այժմ պաշտօնապէս նկատուած են իբր օժանդակ Թուրքիոյ եւ Կովկասի հանդէպ — հրապարակ գալու իբրեւ յեղափոխական գործօն մարմիններ:

Նաեւ ատոր հետ Ընդհանուր ժողովը կը հրահանգէ՝

1) Սերտ կապ պահպանել պարսիկ ժողովուրդի դեմոկրատիկ տարրերու հետ, կատարելով ընկիւն բոլոր քայլերը համագործակցութեամբ անոնց հետ:

2) Աշխատիլ առաջ բերել անոնց մէջ աշխատաւորական կուսակցութիւններ՝ համապատասխան Դաշնակցութեան աշխարհայեացքի:

3) Կանոնաւորել ներկայիս գոյութիւն ունեցող ազգային-կուլտուրական հիմնարկութիւններու ձեւերը եւ ապահովել զանոնք պետական հիմնական օրէնքներով:

Դաշնակցական մարմինները Պարսկաստանի մէջ գործնական պատասխանատու ձեռնարկներու դիմելէ առաջ՝ պէտք է որ ստանան կուսակցութեան բարձրագոյն պատշաճ մարմիններու համաձայնութիւնը:

ԳԱՂՈՒԹՆԵՐ

Հ. Յ. Դաշնակցութեան Ե-րդ Ընդհանուր ժողովը լսելով Ամերիկայի, Բալկանի, Եգիպտոսի եւ Եւրոպայի հայ գաղութներու վերաբերմամբ եղած զեկուցումները, ծանօթանալով անոնց կազմակերպական ու կրթական-կուլտուրական վիճակին, եւ նկատի առնելով,

1) Որ Թուրքիոյ ներկայ քաղաքական-տնտեսական

9.- Տպագիր գորյկին մէջ կիտաւոր: Ընդ. ժողովի ատենագրութեան մէջ թիւ 3 կէտը հետեւեալն է. «Ակտիւ քայլերը կառավարութեան հանդէպ պայմանաւորել կազմակերպական ներքին ոյժով ու կորովով, պատասխանատու քայլերը (ապրստամբութիւն, ընդհանուր գործադուլ եւ այլն) կապելով Կովկասում եւ ամբողջ Ռուսիայում առաջ գալիք կուսակցութեան համաձայնութեան հետ»:

պայմաններուն մէջ չպիտի կասի գաղթականութեան հոսանքը եւ հետեւաբար կազմակերպութիւնը պիտի պահէ իր գոյութեան իրաւունքը գաղութներու մէջ եւ պիտի շարունակէ իր նիւթական եւ բարոյական օժանդակութիւնները երկրի կազմակերպման գործին:

2) Որ գաղութներու հայութիւնը կազմուած ըլլալով Թուրքիոյ գրեթէ ամէն կողմերէ եկած հայերէ՝ ունի իր կարեւոր ներգործութիւնը Թուրքիոյ հայ ժողովրդեան կուսակցական եւ կուլտուրական կեանքին մէջ եւ [որ] գաղութներու կազմակերպութեանց շարքերէն երկիր դարձող պատրաստուած ընկերներ կրնան օգտակար հանդիսանալ, իրենց մտաւոր-մարզական պատրաստութիւններով:

3) Որ գաղթականութիւնը մնալով անուշադիր՝ կը գտնուի լուծուելու վտանգին տակ՝ զինքը շրջապատող քաղաքական ուժեղ ազդեցութեան շնորհիւ, առանց կարենալու օգտակար լինել երկրին:

Կը յանձնարարէ՝
ա) Զարկ տալ գաղութներու պրոպագանդին եւ ստեղծել անոնց կուլտուրական կեանքը բարձրացնող գործօններ:

բ) Ոչ մէկ ջանք չխնայել յարաբերութեան մէջ դնելու հայ գաղութները տեղական աշխատատեղական շրջաններուն ու ընկերակարական կազմակերպութիւններուն հետ:

գ) Յանձնարարել ձեռնհաս մարմիններուն՝ ուղարկել մնայուն եւ պատահական պրոպագանդիստ ուժեր՝ համաձայն իւրաքանչիւր գաղութի կարիքներուն:

Ծանօթ.- Պարտաւորեցնել «Եւրոպայի Դաշնակցական Ուսանողական Միութիւնը» որպէսզի իր պարտականութիւններէն մէկը համարէ՝ զաղութներու պրոպագանդը եւ այդ ուղղութեամբ գործ դնէ շօշափելի աշխատանք:

ՏԱԿՏԻԿԱ

Քննելով կուսակցական տակտիկը եւ նկատելով:

Որ սահմանադրութեան հաստատումով Թուրքիոյ եւ Իրանի մէջ հնարաւորութիւն կայ կուսակցական նորմալ աշխատանքի:

Որ այդ երկու երկրներու մէջ սահմանադրական կարգերը չեն ամրապնդուած եւ դեռ եւս անոնց վտանգ կը սպառնայ ռէակտիոնի կողմէն,

Ընդհանուր Ժողովը որոշեց՝

1) Հրաժարիլ այժմեան Թուրքիոյ եւ Իրանի մէջ, իբրեւ սահմանադրական երկիրներ, դաւադրական միջոցներու գործադրութենէն:

2) Կիր արկանել կազմակերպութեան մարտական բոլոր ուժերը սահմանադրութիւնը պաշտպանելու եւ ռէակտիոնի դէմ կռուելու համար:

Ժողովը միանգամայն կը հրահանգէ կազմակերպութեան մարմիններուն, Թուրքիոյ մէջ օրինական բոլոր միջոցներով բողոքել ընկերակցութեան 3-4րդ յօդուածներուն դէմ, որոնք փոխանակ նպաստելու ազգերու մերձեց-

ման եւ սահմանադրական կարգերու հիմնաւորման, նոր դռներ պիտի բանան ներքին բարդութիւններու համար:

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Դաշնակցութեան Ե-րդ Ընդհանուր Ժողովը մանրամասն քննութեան ենթարկելով ինքնապաշտպանութեան խնդիրը եւ լսելով կուսակցութեան մարմիններու կարծիքները այդ մասին, եւ նկատելով՝

1) Որ հայ ժողովուրդը, յեղաշրջման ներկայ անցողական շրջանի մէջ ընդհանրապէս, չէ կարող ապահով նկատուել:

2) Որ ռէակտիոն տարրերը իրենց նպատակներու իրագործման համար՝ կը շարունակեն ոչ միայն սահմանադրական տարրերու դէմ գրգռումներ առաջ բերել, այլեւ թշնամութիւն սերմանել այլակրօն եւ այլացեղ ժողովուրդներու միջեւ, ինչպէս այդ ապացուցին կովկասեան ընդհարումները, Մարտ 31-ը, Ատանայի աղէտը:

3) Որ հետեւաբար ինքնապաշտպանութեան պարտականութիւնը կ'իյնայ ժողովրդական բոլոր խաւերու, ինչպէս նաեւ բոլոր քաղաքական կուսակցութիւններու վրայ:

Որոշեց՝
ա) Ինքնապաշտպանութեան գործը, իբրեւ համաժողովրդական՝ դնել ժողովրդական եւ անկուսակցական հողի վրայ:

բ) Նախապատրաստական շրջանի մէջ, Դաշնակցութեան բոլոր անդամները պարտաւոր են մասնակցել ինքնապաշտպանութեանը, իբրեւ անհատներ, նպաստելով անոր կազմակերպելու ու զինման գործին:

գ) Վտանգի ատեն Դաշնակցութիւնը հրապարակ կու գայ իր ամբողջ ուժով թէ՛ ընդհարման առաջը առնելու եւ թէ՛ ժողովրդի ինքնապաշտպանութիւնը ուժեղացնելու համար:

Ընդհանուր Ժողովը նկատելով որ ինքնապաշտպանութիւնը ներկայ պայմաններու մէջ սերտ կապուած է բռնապետական երկրներու մէջ բուն յեղափոխական քայլերու, իսկ սահմանադրական Թուրքիոյ մէջ՝ սահմանադրութեան պաշտպանութեան եւ ռէակտիոնի դէմ ուղղուած կռուի հետ, կը հրահանգէ կուսակցական մարմիններուն այդ գործի համար եւս կապ հաստատել յեղափոխական եւ սահմանադրական ուրիշ տարրերու հետ:

ԱԶԳԱՅԻՆ-ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Քննելով Դաշնակցութեան մասնակցումի խնդիրը ազգային-կուլտուրական հիմնարկութիւններու եւ գործերու մէջ, եւ ուշադրութեան առնելով այդ առիթով արտայայտուած բոլոր հայեացքները, Ու նկատելով՝

1) Որ կազմակերպութիւնը իր առաջ ունի՝ իր ծրագ-

րին եւ տակտիկին վերաբերող ուղղակի նպատակներ, որոնց նուիրուած պիտի լինի կուսակցութեան աշխատանքի եւ ջանքերու մեծագոյն մասը:

2) Որ մեր ազգային-կուլտուրական հիմնարկութիւնները, թէ եւ իրենց ներկայ կազմակերպութեամբ ու ոգով չեն համապատասխաներ մեր սկզբունքներուն, բայց սերտ առնչութիւն ունին մեր ժողովուրդի կուլտուրական կեանքի հետ եւ կ'ամփոփեն իրենց մէջ ազգային-կուլտուրական եւ ինքնավարութեան սաղմերը: Ընդհանուր Ժողովը որոշեց՝

ա) Դաշնակցութիւնը, իբրեւ կուսակցութիւն, չպիտի մասնակցի ազգային-կուլտուրական եւ հասարակական հիմնարկութիւններին մէջ:

բ) Կուսակցութեան անդամները, իբրեւ անհատ քաղաքացիներ, կարող են մասնակցիլ այդ հիմնարկութիւններուն, առանց հակասելու կուսակցութեան սկզբունքներուն:

ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԻՐՔԸ

Ընդհանուր Ժողովի կողմէ գծուած ուղղութեամբ՝ կուսակցական մարմիններու հետ՝ պիտի հետեւին նաեւ Թուրքիոյ, Ռուսիոյ եւ Պարսկաստանի պարլամենտներու դաշնակցական պատգամաւորները:

Այս պատգամաւորներու նկատմամբ Ընդհ. Ժողովը կը հրահանգէ նաեւ՝

1) Գործել հաւաքական խորհրդակցութեամբ ու պատասխանատուութեամբ:

2) Սերտ յարաբերութիւն պահել զիրենք ընտրող շրջաններու եւ Կ. Կոնստանտնուպոլիսի հետ եւ փոխադարձ տեղեկութիւններ ստանալ:

3) Իրենց պարլամենտական քայլերու համար խորհրդակցիլ իրենց ներկայացուցած շրջանի բարձր մարմնի հետ:

4) Զխորչել պարլամենտի մէջ կոնկրետ խնդիրներու շուրջ ժամանակաւոր բրկներ կազմելէ այն կուսակցութիւններու հետ, որոնք համեմատաբար մեզ մօտիկ են:

5) Պարլամենտական գործունէութեան ընթացքին՝ բոլոր քննող հարցերը լուսաբանել աշխատատեղի եւ ճշուած խաւերու շահերու տեսակէտէն:

6) Նախարարութիւններու եւ կառավարութեան նկատմամբ ունենալ անաչառ քննադատողներու դեր, պաշտպանելով սկզբունքներ ու հանրային շահեր եւ ոչ անձեր:

7) Պատգամաւորներուն, ինչպէս նաեւ դաշնակցականներուն առհասարակ կ'արգիլուի մտնել նախարարական կազմերու մէջ:

Ծանօթ.- Այս որոշումը չի վերաբերիլ յեղափոխական եւ բացառիկ-անցողական շրջաններուն: Իրենց ներկայացուցած շրջանի ղեկավար մարմիններու համաձայնութեամբ՝ դաշնակցական ընկերները կարող են

մտնել ժամանակաւոր կառավարութեան մէջ դադրելով նոյն օրէն կուսակցութեան գործօն անդամ ըլլալով:

8) Ընդունելով որ դաշնակցական պարլամենտական ֆրակցիան մարմին մը կը կազմէ՝ Ընդհանուր Ժողովը պարտք կը դնէ անոնց վրայ՝ իբրեւ այդպիսին՝ իրենց ներկայացուցչի միջոցով մասնակցել Ընդհանուր Ժողովին եւ ներկայացնել հաշուետուութիւն:

ՊՐՈՊԱԳԱՆԴ (Գ-րաւոր եւ քանաւոր)

Մանօթանալով կազմակերպութեան գրաւոր եւ բանաւոր պրոպագանդին նուիրուած գեկուցումներուն, Ընդհանուր Ժողովը որոշեց՝

1) Կուսակցութեան կեդրոնական օրգան «Դրօշակը» շարունակել հրատարակել ժընեւ:

2)

3) Հրատարակել «Դրօշակ» ամիսը անգամ մը եւ անոր բովանդակութեան մէջ առաջնակարգ տեղ տալ ա) Ծրագրային հարցերուն, բ) Սոցիալիստական եւ յեղափոխական վարդապետութեան նուիրուած ուսումնասիրութեանց, գ) Մեր երկրի եւ մեր կուսակցական գործունէութեան վերաբերող լուրջ տեղեկագիրներուն:

4) Ընդունելով կիսապաշտօնական թերթերու օգտակարութիւնը, մարմիններուն թողուլ, համաձայն մեր կանոնագրի, կիսապաշտօնական օրգաններ հիմնել:

5)

6)

7) Շարունակել բրոշիւրներու հրատարակութիւնը ժընեւ, Պոլիս եւ Կովկաս՝ յարաբերութեան մէջ դնելով այդ տեղերու հրատարակիչ մասնախումբերը՝ գործի մէջ հետեւողականութիւն մտցնելու համար:

8) Առանձին հոգ տանիլ առհասարակ ուժեղացնելու կուսակցութեան գրաւոր եւ բանաւոր պրոպագանդը, թէ՛ վերը յիշած օրգաններու եւ թէ՛ տեղական շրջիկներու, պրոպագանդային դասընթացներու, դասախօսութիւններու, լսարաններու ու թուրքիկներու միջոցով, իբրեւ լաւագոյն միջոց՝ տարածելու կազմակերպութեան մտքերը եւ խտացնելու մեր շարքերը:

Ծանօթ.- Թուրքիկներու հրատարակութիւնը վերապահուած է Կեդրոնական Կոմիտէներուն եւ կամ տեղի կ'ունենայ անոնց համաձայնութեամբ:

10.- Տպագիր գրքոյկին մէջ թիւ 2-ը, 5-ը եւ 6-ը կիսաւոր: Ընդ. ժողովի ատենագրութեանց մէջ (թիւ 2) «Դրօշակ»ը ժընեւ տեղափոխելու կարգադրութիւնը եւ որոշումը կը ձգուի Արեւմտեան Բիւրոյին: Թիւ 5-ը կը վերաբերի կիսապաշտօնական թերթերուն, որոնց կ'որոշուի «նպատակաւ կազմակերպութեան դրամարկէն, շրջանի մարմիններուն թողնելով հոգալ այդ ծախսերը կողմնակի աղբիւրներից»: Թիւ 6-ով կ'որոշուի հոգալ Պոլսոյ «Ազատամարտ» եւ Թիֆլիսի «Դրօշակ» թերթերուն նպատակը մինչեւ 1910 թ. իսկ անկէ ետք կը յանձնարարուի Ոստիկանական ժողովներուն՝ ծախսերը հոգալ «կողմնակի աղբիւրներից»:

ԳԼՈՒԽ II

Հ.Յ.Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՆԵՐ

Այս գլուխին տակ ներկայացուած փաստաթուղթերը կը բաժնուին երկու մասի: Առաջինը՝ Արեւմտեան Բիւրոյի երկամեայ գործունէութեան (1907-1909) տեղեկագիրն է՝ կարդացուած Հինգերորդ Ընդհանուր Ժողովին: Երկրորդ բաժինը կազմուած է զոյգ Բիւրոներու կարգ մը շրջաբերականներէն միայն առհասարակ տեղեկատուական բովանդակութեամբ կամ կազմակերպական բնոյթի, բայց անպայման կուսակցութեան ընդհանրական աշխատանքները, մտահոգութիւններն ու առաջադրանքները ցոյցացնող: Այլապէս, հատորին մէջ տեղ գտած են արդէն Բիւրոներէն բխած բազմաթիւ այլ գրութիւններ, շրջաբերական ըլլան անոնք թէ մասնաւոր անամակներ, որոնցմով անհրաժեշտ նկատուած թելադրանքները կ'ըլլան տարբեր մարմիններուն: Այս վերջինները կարելի է գտնել, օրինակի համար, կազմակերպական շրջաններուն վերապահուած գլուխներուն տակ:

Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչը Ընդ. Ժողովին՝ Յոնան Դարթեանն է: Արեւելեան Բիւրոյի պարագային, Ը. Ժողովի թղթածրարներուն եւ ընդհանրապէս Կեդր. ապսխիւին մէջ տեղեկագիր չի գտնուիր, թէւ ատենագրութեանց մէջ խօսք կայ գրաւոր գեկուցում տրուած ըլլալու մասին: Ձեկուցողը եւ հարցումներուն պատասխանողը Ռոստոմն է. յաւելեալ բացատրութիւններ կու տան նաեւ Ս. Չաւարեան եւ, աւելի ուշ, Եղիշէ Թովչեան (Երուանդ):

Փաստ. 57-149

**1.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ
1907 ՅՈՒՆԻՍ – 1909 ՅՈՒԼԻՍ**

Հ. Յ. Դաշնակցութեան Դ-րդ Ընդհանուր Ժողովը վերջանալէն յետոյ, 1907 Յունիսի սկիզբը Բիւրօ-խմբագրութեան մէջ էին ընկեր Ակնունի, Մինասեան, Գալֆայեան, Մար¹: Ընկեր Վարանդեան գիւղ կը գտնուէր տկարութեան պատճառով. ընկեր Յոնան Օգ. 20ին միայն կրցաւ դառնալ Թիֆլիսէն ժրնել: Նոյն տարուոյն աշնան սկիզբը Վարանդեան վերադարձաւ ժրնել, բայց շուտով ստիպուած եղաւ իտալիա մեկնել իր թոյլ առողջութիւնը դարմանելու համար, ուրկէ կանոնաւոր կ'աշխատակցէր Դրօշակին:

Ընկեր Ակնունի մինչեւ Յոնանի ժամանումը շարունակեց իր գործօն մասնակցութիւնը Բիւրոյի գործերուն, յետոյ մեկնեցաւ Փարիզ՝ համաժողովին² ուրկէ վերադարձին Վիեննա՝ զբաղելու իրեն յանձնուած գործով:

1908 Յունիս, Յուլիս ամիսներուն Վարանդեան քաղաքական միսիոնով մեկնեցաւ Փարիզ, Լոնտոն, վերադարձին կարճ ժամանակով ժրնել մնալով, Պրիւքսէլ

գնաց միջազգ. սոցիալիստական բիւրոյի 10րդ նիստին մասնակցելու եւ Թուրքիոյ section-ի խնդիրը արծարծելու համար: Միսիոնը լրանալէ յետոյ ստիպուեցաւ իտալիա եւ հարաւային Ֆրանսա գնալ դարմանուելու համար:

1908 Յուլիս 24-էն յետոյ, երբ Թուրքիոյ մէջ սահմանադրական ազատութիւն հռչակուեցաւ, ընկեր Գալֆայեան մեկնեցաւ Թուրքիա, - Իզմիր, պրոպականտի գործով. քիչ յետոյ ընկեր Յոնան եւս անցաւ Պուլկարիա, Պոլիս ուր երկու ամիսի չափ մնաց:

Ընկեր Գալֆայեանի մեկնումով եւ զայն փոխարինելու համար, Բիւրօ-խմբագրութեան կողմէ հրաւիրուեցաւ ընկեր Մարը¹ Լօզանէն: Վեց ամիս յետոյ, երբ Գալֆայեան ստիպուած էր Իզմիրէն բաժնուիլ, Անա-

1.- Տե՛ր Մարտիրոսեան Միքայէլ (Մար) եւ Յարութիւն Գալֆայեան մաս կը կազմէին «Դրօշակ»ի խմբագրութեան, բայց Արեւմ. Բիւրոյի անդամ չէին:
2.- Խօսքը Թուրքիոյ ընդհանրապէս տարրերու կոնգրէին մասին է, որ գումարուեցաւ 1907 թ. Դեկտ.ի 27-29:

տուրի, մասնաւորապէս Կիլիկիոյ շրջանները այցելելու համար, տեղացի ընկերներու խնդրանքին վրայ ընկեր Մար մեկնեցաւ Իզմիր կազմակերպական գործերով. երբ ամիս վերջ վերականչուեցաւ ժրնել, ուր երրորդ ընկերով մը ներկայութիւնը անհրաժեշտ էր:

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ԳՈՐԾ ՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

- 1.- Դիմում Լահէյի խաղաղութեան կոնգրէին:
- 2.- Դիմում Շտուտկարտի սոցիալիստական կոնգրէին եւ Պրիւքսէլի Միջ. սոցիալիստական բիւրոյին:
- 3.- Օսմ. ընդդիմադիր տարրերու կոնգրէ:
- 4.- Քաղ. գործունէութիւն Եւրոպայի մէջ:
- 5.- Հրատարակութիւններ:
- 6.- Ֆինանսական:
- 7.- Մեր յարաբերութիւնները հայ եւ օտար կուսակցութիւններու հետ:
- 8.- Շրջանի կազմակերպական գործունէութիւնը:

**1.- ԱՀՆՅԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԿՈՆԳՐԷՒ
ԴԻՄՈՒՄԸ.-**

Սոյն կոնգրէն գումարուեցաւ 1907 Յուլիս-Օգոստոս ամիսներուն: Արեւել. Բիւրոյի նախաձեռնութիւնով ու թելադրութիւններով, կաթողիկոսի կողմէ պատգամաւորութիւն մը ղրկուեցաւ Լահէյի կոնգրէին հայկական հարցին համար: Մեր դիմումին վրայ՝ Փարիզի Ֆրանսացի մեր բարեկամներէն երկուքը՝ Վիկտոր Պէրար եւ Քիլառ ընկերացան հայ պատգամաւորութեան՝ որ կը բաղկանար երեք հոգիէն. - Գէորգ արքեպիսկոպոս Իւթեճեան, Ահարոնեան եւ Շահնազար: Պատգամաւորութիւնը ներկայացուց իր Mémorandum-ը: Կոնգրէն՝ որ կազմուած էր որոշ եւ սահմանափակ նպատակով, նկատի չառաւ հայկական հարցը ըսելով թէ այդ հարցը «conférence-ի ծրագրին մէջ չկայ եւ ժողովականներու իրաւասութեանն դուրս է»:

Սոյն պատգամաւորութեան համար Արեւմ. Բիւրոն ծախսած է 1575 Ֆր.:

**2.- ՇՏՈՒՏԿԱՐՏԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ
ԴԻՄՈՒՄԸ.-**

Սոյն կոնգրէին, որ տեղի ունեցաւ 1907 Օգոստոսին, մեր կողմէն պաշտօնապէս մասնակցեցան ընկերներ Վարանդեան եւ Ակնունի:

Կոնգրէին առաջ Յունիս 10ին հեռագրով հաղորդեցինք Պրիւքսէլի միջազգային սոցիալիստական Բիւրոյի Հ. Յ. Դաշն. Դ-րդ Ընդհանուր Ժողովի որոշումը եւ խնդրեցինք որ Դաշնակցութիւնը մասնակցի միջազգ. սոցիալիստական ժողովներուն:

Յուլիս 25-ին գրաւոր կերպով խնդրեցինք Թուրքա-սաստանի առանձին section մը ստեղծել:

Օգոստոս 12-ին ղրկեցինք մեր programme-ը եւ խոստացանք մեր գործունէութեան տեղեկագիրը ղրկել:

Կոնգրէին մէջ մեր պատգամաւորներուն կողմէ առանձին հայկական section-ի մը առաջարկը յետաձգուեցաւ: Ժորժիսի առաջարկութիւնով Շտուտկարտի բիւրոն կը յայտնէր որ «Թուրքահայկական section մը ստեղծելու պահանջը նկատի կ'առնուի երբ այդ section-ը կը բովանդակէ Թուրքիոյ բոլոր ազգութիւնները»:

Սակայն որոշուեցաւ մինչեւ վեց ամիս յետաձգել երբ Դաշնակցութեան պատշաճ մարմինը կարող պիտի ըլլար ներկայացնել մանրամասն տեղեկագիր տաճկահայ կազմակերպութիւններու մասին:

Արեւմ. Բիւրոն այդ տեղեկագիրը պիտի հաղորդէր սոցիալիստական բիւրոյին երբ ստանար երկրէն (Վաշէն) սպասուած տեղեկագիրը որ չեկաւ:

1908 Հոկտեմբերին ընկեր Վարանդեան գնաց Պրիւքսէլ ուր սոցիալիստական բիւրոյի 10րդ նիստին մէջ առաջարկեց Թուրքահայ ուրոյն section-ի խնդիրը: Բացման միտինգին, ուր միջազգ. սոցիալիզմի ականաւոր դէմքերը խուռն բազմութեան առջեւ խօսեցան միջազգային քաղաքականութեան կնճիռներու մասին. - խօսողներու մէջ գրուած էր նաեւ Դաշնակցութեան ներկայացուցիչը, որ ողջունեց ժողովը Պոլսոյ եւ Թուրքիոյ սոցիալիստ յեղափոխականներու կողմէն: Այդ ողջոյնը ընդունուեցաւ ցնծագին ծափահարութիւններով: Վարանդեան խօսած է հայ ու թուրք յեղափոխութեան, ու՛կակսիոնի եւ արտաքին պետական խնդիրներու մասին:

Նիստերու միջոցին, երբ Դաշնակցութեան պատգամաւորը առաջարկեց ու փաստեց ուրոյն section-ի ընդունման խնդիրը, Թուրքահայաստանի մէջ, ժողովը միաձայն ընդունեց առաջարկը եւ Թուրքահայ section-ին տուաւ 4 ձայնի իրաւունք:

Դեկտ. 22 (1908) Պրիւքսէլի Միջազգ. սոցիալիստական բիւրոն կը հաղորդէր պաշտօնապէս որ Դաշնակցութիւնը ընդունուած է ներկայացնել «La sous-section de l'Arménie turque»³:

Դեկտ. 28-ին ղրկեցինք 200 Ֆր. տարեկան մեր անդամավճարը:

**3.- ՕՍՄԱՆԵԱՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՏԱՐՐԵՐՈՒ
ԿՈՆԳՐԷՆ.-**

Դաշն. Դրդ. Ընդհանուր Ժողովի որոշումով Արեւմտ. Բիւրոն արդէն կը պատրաստէր կոնգրէի մը գումարման հոգը, երբ 1907 Սեպ. ամսու մէջ, Ահմէտ Ռիզա ժրնել գալով մեզի դիմեց որ միջոց եւ նիւթ հայթայթենք իրեն տեւորի համար: Միեւնոյն նպատակով

3.- Ֆրանսերէն «Թրքահայաստանի ենթայանձնայանք»:

իրմէ առաջ, ամրան սկիզբները, ժրնեւ եկած էր Ռիզա- յի ընկերներէն մէկը:

Օգտուելով առիթէն Ռիզայի յայտնեցինք կոնգրէի մեր որոշումը՝ որու հաւանութիւն տուաւ իրեն յատուկ վերապահումներով եւ Դրոշակի խմբագրատան մէջ պատրաստուեցաւ նախագիծ մը այն գլխաւոր եւ էական կէտերու մասին որ պիտի վիճաբանուէին կոնգրէի մէջ եւ կազմուեցաւ ցանկը այն կուսակցութիւններուն որ պիտի մասնակցէին:

Քիչ յետոյ ընկեր Ակնունի մեկնեցաւ Փարիզ տեսակցելու «Թէրակիլը» կուսակցութեան հետ եւ նախապատրաստական գործողութիւնները կատարելու համար:

Մեր եւ թուրք երկու կուսակցութիւններու միջեւ երկար բանակցութեան յետոյ՝ որոշուեցաւ հրահրել կոնգրէին թուրքիոյ բոլոր դժգոհ տարրերու ներկայացուցիչները:

Յոյները չմասնակցեցան եւ ձեռնպահ մնացին, յայտնելով որ թուրքիոյ մէջ առանձին յեղափոխական մարմին չունին, եւ լռելեայն կամ յայտնի կը հասկնային որ ներկայ ռեժիմին փոփոխութիւնը ձեռնտու չէր իրենց շահերուն տեսակէտով:

Մակեդոնացիք՝ ըստ երեւոյթին Սարաֆովի⁴ մահուան պատճառով՝ չմասնակցեցան եւ ոչ ալ որոշ դիրք բռնեցին եւ ինչպէս կարելի էր ենթադրել, շատ հաշտ չէին կոնգրէի հայեցակէտին:

Ալպանացիները ներկայացուցիչ չունեցան, սակայն յետոյ յայտնած են որ իրենք համաձայն են կոնգրէի որոշումներուն:

Արաբները նմանապէս չունէին յատուկ ներկայացուցիչ:

Իսկ հայ յեղ. կուսակցութիւնները, որոնց՝ Արեւմտ. Բիւրոն առանձին առանձին դիմում ըրաւ, մերժողական պատասխան տուին, բացի Փորթուգալեանէ:

Հինբըր [հնչակեան] մերժեցին առարկելով որ Դաշն. Դ.րդ Ընդհ. ժողովը չէր ընդունած իրենց համերաշխութեան առաջարկը, երկրորդ՝ թէ իրենց գործունէութեանն ղուրս էր Օսմանեան համապետական բարենորոգումի խնդիրը:

Երկու վերակազմեալ հատուածներէն [հնչակեան] նորերը նախապէս տրամադիր էին, յետոյ հրաժարեցան հաւանականաբար հինբըր ազդեցութեան տակ: Իսկ հին վերակազմեալները ընդունած էին եւ պր. Չօպանեանը պատգամաւոր ընտրած, որ գրաւոր կերպով հրաժարականը դրկած էր մեզի, իսկ մինչեւ երկրորդ պատգամաւորին ժամանումը, ժողովը արդէն վերջացած էր:

Փարիզի կոնգրէի որոշումներուն առթիւ, զանազան կողմերէ, մեր ընկերներէն, բողոքներ եկան թէ հայ պատգամաւորները շատ զիջումներ ըրած էին թուրքերուն եւ թէ մեր զոհողութիւնները անտես առնուած էին: Նկատելի էր որ այդ ենթադրութիւնները հիմնուած էին մեծ մասով Դաշնակցութեան հակառակորդներու թշնամական

մեկնաբանութեանց վրայ: Արեւմ. Բիւրոն յատուկ նամակներով ապահովցուց որ թուրքերուն հետ մեր համերաշխութիւնը «կուռի համերաշխութիւն» մըն էր եւ թէ մեր ծրագիրը անվթար կը մնայ իր էութեանը մէջ:

Կոնգրէի վերջանալէն յետոյ «Մէշվէրէթ»⁵ մէջ լոյս տեսան յողուածներ, տգեղ ակնարկութիւններ հայ յեղափոխականներու անցեալ գործունէութեան մասին՝ որ հեռու էին համապատասխանելէ կոնգրէի որոշումներու ոգուն. մանաւանդ Սարաֆովի մահուան առթիւ հրատարակուած անպատիւ ու անհարկի յողուածը զայրոյթը գրգռեց ոչ միայն մակեդոնացիներուն այլ եւ բոլոր հայ շրջանակներուն:

Այդ մասին քանիցս, գրաւոր եւ բերանացի դիտողութիւն ըրինք եւ բողոքեցինք մէշվէրէթական այդ անվայել ընթացքին դէմ:

Կոնգրէի համերաշխութեանը գործնական եւ հրապարակային առաջին փորձ մը տալու համար, որոշուեցաւ Փարիզի մէջ բողոքի մեծ միթինկ մը գումարել Սուլթանի վարչութեան դէմ: Որովհետեւ այդ ատեն Վանի դէպքերը⁶ վրայ հասած էին, Արեւմտ. Բիւրոն պահանջեց, Փարիզի իր մարմնին միջոցով, որ այդ միթինկին մէջ կարեւորագոյն տեղը տրուի Վանի սարսափներուն, եւ թէ էրգրումի ու Սելանիկի դէպքերը բռնելու են երկրորդական տեղ: Առաջարկեց նաեւ որ միթինկին մասնակցին Ֆրանսացի ականաւոր բարեկամներ եւ շեշտուի անոր քաղաքական բնաւորութիւնը:

Որպէսզի մի գուցէ մէշվէրէթականները կոնգրէի որոշումներէն շեղելով՝ անոր որոշումներուն հակասող հարցեր յարուցանեն կամ շօշափեն, նախապէս պայման դրուեցաւ որ խօսուելիք նիւթերը որոշուին: Միթինկը, ի վերջոյ, չկայացաւ:

Յեղ. խառն գրականութեան մը համար թուրքերէն տպարանի մը հաստատումը եւս շուտով կարելի չըլլալով իրագործել՝ առկախ մնաց:

Իսկ «մնայուն կոմիտէն» որ կոնգրէի որոշումներու գործադիր կամ վարիչ մարմինը պիտի ըլլար, նոյնպէս ձգձգուեցաւ մեր կողմէն դրկուելիք ներկայացուցիչ անորոշութեան կամ ուշանալուն պատճառով:

Ուշ ատեն, ընկեր Ակնունի, Կովկաս Խորհուրդէն վերադարձին՝ Վիեննա եկած էր ուրկէ կը հրահրէր թուրք պատգամաւորները, ինչպէս եւ մակեդոնական կոմիտէի ներկայացուցիչները «Մնայուն կոմիտէն» կազմելու համար:

Մենք այդ մասին հաղորդեցինք (1908 Յուլիս 8) փա-

4.- Բորիս Սարաֆով՝ մակեդոնացի յեղափոխական եւ դեկավար դէմք, որ 1907 թ. Նոյեմբերին զոհուած էր Սոֆիայի մէջ եղբայրասպան գնդակով:

5.- Փարիզ լոյս տեսնող թերթ, Ամէտ Ռիզայի խմբագրութեամբ:

6.- Նկատի ունի Դիեքցի Դաւոյի դաւաճանութեամբ մեծաքանակ զէնք-զինամթերքի գրաւումը եւ անոր հետեւող սարսափները Վան-Վասպուրականի շրջանին մէջ:

րիզ: Մէշվէրէթականները մերժեցին Վիեննա գնալ ըսելով թէ «ստիպողական գործեր» գիրենք կ'արգիլէին, եւ կ'առաջարկէին Փարիզ կայացնել: Թէրաքքերները տրամադիր էին Վիեննա մեկնել: Բանակցութիւնները ձգձգուելով Յուլիս 24-ի Յեղափոխութիւնը վրայ հասաւ, այնպէս որ «մնայուն կոմիտէին» խնդիրը կորսնցուց իր ուժը եւ նշանակութիւնը:

Մակեդոնիոյ մէջ երբ թուրքերու կողմէ տեւորներ եւ շարժման առաջին նշանները սկսան, Մէշվէրէթի կողմէն մեզի հրահրելու (1908 Յուլիս 17) որ արձագանք տանք այդ շարժումներուն — ցոյցերով, տեւորներով — թուրքիոյ կարգ մը կէտերուն վրայ կառավարութեան ուշադրութիւնը ջլատելու համար:

Մինչեւ այդ ժամանակ անհնար եղած էր մեզի կազմակերպութիւններ առաջ բերել մեր առաջադրած վայրերուն մէջ, որովհետեւ Յ[ուլիսական] Տ[եւորական]ը հնարաւորութիւն չէր ունեցած մտնել կամ իրենցմէ մէկը գոնէ մտնել երկիր եւ իրագործել իր վրայ դրուած պարտականութիւնը եւ յոյսերը կամ գոնէ հող պատրաստել:

1908 Յուլիս 21-ին Արեւմտ. Բիւրոն կը պատասխանէր Մէշվէրէթին որ՝ Վանի մեր դաշն. ընկերները արդէն կուռի բռնուած ըլլալով տեղական իշխանութեանց հետ եւ թէ իրենց ուժերը, Իզմիր եւ Պոլիս, սահմանափակ ըլլալով՝ այդ տեղի ունեցած խիստ ձեռքաւարկութիւններու պատճառով, դժբախտաբար չէր կրնար խկոյն եւեթ գահացում տալ իրենց խնդիրքին: Բայց խոստացաւ շուտով կազմակերպուիլ պատրաստ ըլլալու համար ոեւէ պատահականութեան դէմ: Խնդրուեցաւ նաեւ թուրք կոմիտէներէն որ կանխաւ իմացնեն մեզի իրենց ընելիքի մասին՝ որպէսզի յանկարծակիի չգանք:

Արեւմտ. Բիւրոն փութաց հաղորդել Յ[ուլիսական] Տ[եւորականին] եւ Պալք. մարմիններուն (22 Յուլիս 1908) թուրքերու առաջարկը, խնդրելով մարտական ուժեր կեդրոնացնել հարկաւոր վայրերը. եթէ հնար է, մակեդոնացիներուն հետ միասին ընել:

Յուլիս 24-էն⁷ յետոյ մէշվէրէթականները գրեթէ անտես ըրին կոնգրէի որոշումները: Արդէն անկէ առաջ ալ, առհասարակ, փութկոտ չէին ժողովի որոշումները ու վճիռները գործադրելու մէջ: Անոնք իրենց գործելակերպէն չչեղեցան եւ ինքնազլուի ու գաղտնի շարունակեցին իրենց ներքին գործունէութիւնը, կարծես թէ ձգտում մը ունէին իրենց կուսակցութեանը միայն վերապահել յաջողութեան փառքը:

Մակեդոնական բանակի յեղ. շարժումներուն ատեն⁸, Մէշվէրէթը հանգանակութիւն բացած էր ի նպաստ յեղափոխականներուն:

Դրոշակի խմբագրութիւնը 500 Ֆրանք դրկեց այդ նպատակով (Յուլիս 25):

Սահմանադրութիւնը հռչակելէ անմիջապէս յետոյ Յ. Տ. մարմինը կ'առաջարկէր անյապաղ Ընդհ. ժողով մը գումարել Պուլկարիա՝ ընդդիմադիր տարրերէն:

Թէրաքքերն համաձայն էր, մէշվէրէթականները խուսափողական դիրք բռնեցին դարձեալ եւ չկրցին կամ չուզեցին ներկայացուցիչ դրկել: Ի վերջոյ գրեցինք Յ. Տ. մարմնին որ ներկայացուցիչ մը դրկեն Սելանիկ իթիֆի-հատի կեդրոնին հետ խորհրդակցելու համար: Այդ առաջարկը անիրագործելի մնաց:

Փարիզի կոնգրէն անպայման իր արձագանքը եւ բարոյական ազդեցութիւնը ունեցաւ երկրի ժողովուրդներուն վրայ. բայց երկուստեք այլեւայլ պատճառներով — գոր անշուշտ կը պարզէ Յ. Տ. մարմինը — կոնգրէի որոշումները կարելի չեղաւ գործնականացնել շուտ ժամանակի մէջ, մինչեւ որ Յուլիս 24-ը եկաւ եւ վերջ դրաւ ամէն ձգձգումի եւ անորոշութեան:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆԸ.—

Յ[ուլիսական] Տ[եւորական] մարմինը սահմանադրութիւնը հռչակուելէն յետոյ մտաւ Պոլիս եւ հոն կազմուեցաւ Պատասխանատու Մարմին մը, մասնակցութեամբ Յ. Տ. մարմնի անդամներուն, Արեւել. Բիւրոյի եւ Պալք. մարմնի ներկայացուցիչներուն եւ Կովկասէն եկած ընկերներու:

Պատասխանատու Մարմինը իսկոյն յարաբերութեան մէջ մտաւ Տաճկահայաստանի բոլոր Դաշն. մարմիններուն հետ:

Մենք աստասխանատուին հետ մեր յարաբերութիւններուն մէջ, ունեցած ենք դիտողութեան մէկ քանի կէտեր:

1.- Քանիցս դիտել տուած ենք որ Պոլսոյ մէջ հանգանակութեան համար թոյլ գտնուած եւ հոգեբանական ռոպէն փախցուցած էր, մինչ Իզմիրի մէջ ընկեր Գալֆայեան եւ տեղական ընկերները՝ օգտուելով առիթէն, յաջողած էին կարեւոր գումար մը հանգանակել:

2.- Պալքաներու մէջ տպարաններ հաստատելու համար՝ առանց Արեւմտ. Բիւրոյի խորհուրդը առնելու եւ անտեսելով անոր իրաւասութիւնը, Արեւմտ. շրջանի ընկերներուն կը դիմէր գումարներ պահանջելով:

3.- Պոլսոյ մէջ թերթ մը հրատարակելու համար, մեր կարծիքը յայտնած եւ կրկնակի յորդորած էինք որ այդպիսի պատասխանատու ձեռնարկ մը, առանց Ընդհ. ժողովի հաւանութեան եւ կարգադրութեան չիրագործուի, մանաւանդ որ Ընդհ. ժողովը շուտով գումարուելու էր եւ թէ մեր պիտուէն չէր յուսադրեր այդպիսի մեծ ծախքեր ընել: Կովկասեան թերթի հրատարակութիւնը կը թելադրէր մեզ աւելի հեռատես ըլլալ այդպիսի ձեռնարկներու համար, եւ նկատի ունենալով թուրքիոյ անստոյգ պայմանները, խելացիութիւն պի-

7.- Օսմ. Սահմանադրութեան հռչակման թուական:
8.- Ըսել կ'ուզէ Մակեդոնիոյ մէջ տեղակայուած թուրք յեղափոխան բանակի:

տի չըլլար որ մեր սակաւաթիւ ուժերը կլանուէին այդ թերթով:

4.- Պատասխանատուն թուղթիկով մը, ուղղուած մեր մարմիններուն, յայտարարելով «Ազատամարտ»ի մօտալուտ հրատարակումը, կը հասկցնէր որ «Ազատամարտը» կուսակցական պաշտօնական օրկան է:

Մենք բողոքեցինք յայտնելով որ Դաշնակցութիւնը միակ պաշտօնական օրկան մը ունի.— «Դրօշակ»ը:

5.- Պատասխանատուն իր գործունէութեան ու քայլերուն վերաբերմամբ առհասարակ եւ մանաւանդ երիտ. թուրքերու հետ ունեցած բանակցութիւններուն առիթով, չէ խորհրդակցած Արեւմտ. Բիւրոյին հետ եւ անգիտակ պահած է գայն: Նոյնպէս Եւրոպայի եւ Օսմանեան խորհրդարանին մեր դիմումներուն համար մենք ստիպուած էինք օտար եւ Պոլսոյ մամուլէն քաղել մեր նիւթերը հակառակ Պատասխանատուին մեր բազմիցս դիմումներու:

6.- Իրենց քով պահ դրուած 2000 Ֆրանքը Պարսկաստանի համար, չնայած մեր կրկնակի հեռագիրներուն, չուղարկեցին եւ ստիպուեցանք նորէն մենք ղրկել Պարսկաստանի ընկերներու՝ հեռագրական կրկնակի պահանջումներուն վրայ:

Ուստի Պոլսոյ գործունէութեան պատասխանատուութիւնը ամբողջովին կ'իյնայ Պոլսոյ Մարմնին վրայ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ ԵՒ ՌՊԱՅԻ ՄԷՋ.—

Արեւմտ. Բիւրոն իր երկամեայ շրջանին մէջ, իրերու եւ պայմաններու բռնադատութեամբ մասնաւոր ուշադրութիւն եւ ուժ նուիրեց Եւրոպայի մէջ քաղաքական գործունէութեան: Գրեթէ իր ջանքերուն մեծ մասը լարեց այդ կէտին վրայ եւ ունէ գոհողութիւն ու ճիգ չինսայեց ուղղակի կամ անուղղակի կերպով Հայաստանի վիճակը կենդանի պահելու համար քաղաքական շրջանակներու մէջ եւ հետաքրքիր եւ արթուն պահելու դիւանագիտութիւնը եւ հանրային կարծիքը հայ ժողովրդի դատով:

1908 Յուն. 20-ին Լօզանի մէջ ռուսներու կողմէն expropriation-ի⁹ մը առթիւ ռուս թերթերուն մէջ գրուած էր որ Դաշնակցութիւնը մէջը մատ ունի: Իսկոյն հեռագրեցինք «Բէջ» թերթին եւ հերքեցինք, յայտնելով որ Դաշնակցութիւնը հակառակ է expropriation-ի:

1908 Ապրիլին, երբ ռուսօթուրք պատերազմի երկիւղը ծագեցաւ, իսկոյն Արեւմտ. Բիւրոն դիմում ըրաւ Փարիզի մեր բարեկամներուն որ ջանան առջեւ առնել պատերազմի մը, որ աղիտաբեր կրնար ըլլալ մեր ժողովրդին: Խնդրեցինք նաեւ Վանի դէպքերու առթիւ հարցապնդում ընել թէ Անգլիոյ եւ թէ Ֆրանսայի խոր-

հորդարաններուն մէջ: Pressensé-ի անակնկալ հիւանդութիւնով այդ հարցապնդումը մնաց, Անգլիոյ խորհրդարանին մէջ տեղի ունեցաւ սակայն:

Մայիս 1-ին Յոնանը Փարիզ մեկնեցաւ Վանի դէպքերու առթիւ, Quillard-ի եւ Bérard-ի հետ տեսակցելու համար. Bérard բացակայ էր:

Նոյն ամսուն հեռագիր տուինք եւրոպական բոլոր կարեւոր թերթերուն Վանի սարսափելի դրութիւնը եւ կառավարական հալածանքները մատնանիչ ընելով: Պէտք է ըսել որ լրագիրներէն շատ քիչեր կը հրատարակէին մեր հեռագիրները:

Մայիս 27-ին նոյնպէս Վանի կացութեան մասին հեռագրեցինք անգլ., ֆրանս. եւ իտալ. Արտ. գործոց նախարարներուն: Յատուկ բողոք-նամակ մը Սըր էտուարտ Կրէյնի՝ Վանի անգլ. հիւպատոսին դէմ որ մերժած էր ընդունիլ հայերու աղերսագրերը, մինչ միւս հիւպատոսները ընդունած էին:

Այդ ժամանակները մակեդոնական հարցը թարմ այժմէութիւն կը ստանար Անգլիոյ մէջ՝ շնորհիւ Լոնտոնի մէջ կազմուած Պալքանեան կոմիտէի եռանդուն եւ գործունեայ ջանքերուն: Այդ առթիւ գրեցինք Փարիզ V. Bérard-ին, իբր ծանօթ Անգլիոյ քաղաքական շրջանակներու որ, եթէ կարելի է, անցնի Անգլիա եւ տեսնուի պետական անձնաւորութիւններու հետ եւ մակեդոնականին հետ այժմէութիւն տայ նաեւ մեր հարցին: Bérard-ի գնալը զբաղումներու պատճառով ուշացաւ եւ մնաց:

Յուլիս 10-ին գաղտնապէս իմացուցինք Quillard-ին եւ Bérard-ին, Յարի եւ Անգլիոյ թագաւորին տեսակցութեան արդիւնքը Ռէվալի¹⁰ մէջ, հայկական հարցի մասին, եւ խնդրեցինք յատուկ կոմիտէ մը կազմել Փարիզի մէջ քաղաքական փրոփականտի համար մամուլի եւ այլ միջոցով: Թելադրեցինք նաեւ որ Ֆրանսայի նախագահը Յարի այցելութեանը ատեն Հայկական Հարցը խօսակցութեան նիւթ ընէ:

Մենք մէկուկու ներկայութիւնը անհրաժեշտ համարելով Փարիզ՝ ընկեր Վարանդեան քաղաքական յատուկ միսիոնով այցելեց Փարիզ եւ Լոնտոն ուր ունեցաւ կարեւոր տեսակցութիւններ:

1908 Յունիսին, Վասպուրականի նոր խժոճութեանց լուրն առնելով, ընկեր Վարանդեան որ իտալիա կը գտնուէր, դիմում ըրաւ մեր բարեկամ պրոֆ. Ռակկայի, խորհրդարանի անդամ Բիսսոլատիին, պարզեց երկրի վիճակը եւ խնդրեց հարցապնդում ընել: Բիսսոլատի երկար վարանումէ յետոյ համաձայնեցաւ եւ խնդրեց document-ներ, փաստեր: Վարանդեան ժընեւով Փարիզ մեկնեցաւ: Արեւմտ. Բիւրոն ղրկեց պէտք եղածը Բիս-

9.- Ֆրանսերէն կալուածներու գրաւում, սեփականացում: 10.- Էսթոնիոյ մայրաքաղաք Թալինի ռուսական անուանակոչումն է:

սոլատիին: Քիչ յետոյ Բիսսոլատի կը յայտնէր Ռակկայի միջոցով Վարանդեանին, թէ երկար խորհրդակցութիւններէ յետոյ, որոշեց չընել հարցապնդումը, «Ես եկայ այն համոզման, ըսեր է իտալացի երեսփոխանը, որ թրքահայաստանի մէջ ցեղերու կռիւ կայ, ո՞րն է բուն մեղաւորը — իրեն յայտնի չէ: Յամենայն դէպս կը վախնար թէ մեղանչէր ճշմարտութեան դէմ, եթէ պարլամենտի մէջ հայերը սոսկ ներկայացնէր, իբր գոհ»:

Փարիզի մէջ տեսակցելով Քիլյառի եւ Վիկտոր Պէրարի հետ, ընկեր Վարանդեան կը խնդրէ անպատճառ տեսակցութիւն սարքել Պիշոնի հետ: Վիկտոր Բեռարի ջանքերու շնորհիւ կարելի եղաւ — 8 օր յետոյ միայն — այդ տեսակցութիւնը ուր Պէրարի եւ Քիլյառի ներկայութեան կէս ժամու չափ, Վարանդեան պատմած է Հայաստանի եւ մասնաւորապէս Վասպուրականի վիճակը, ծանրանալով ոչ միայն արդի կացութեան վրայ այլեւ վաղուց խոստացուած բարենորոգումներու իրագործման անհրաժեշտութեան վրայ: Խօսակցութեան նիւթ եղած է Մայիսեան ծրագիրը¹¹: Խօսած են եւ Պէրար ու Քիլյառ, որոնք առաջալրկած են նոր քննութիւն (enquête) հրահանգել Հայաստանի մէջ, նման 1895-ի ռուսֆրանս-անգլիական քննութեան:

Արտ. գործոց նախարարը միանգամայն համաձայն գտնուած է թէ քննութեան գաղափարին եւ թէ մայիսեան ծրագիրը յարուցանելու մտքին հետ: Միայն թէ ըսած էր, «պէտք է խորհրդակցիլ ռուս-անգլիական կառավարութիւններու հետ»: Նախարարը աւելցուցած է որ իր կողմէն ամենախիստ ազդարարութիւն կ'ընէ Պոլիս որպէսզի բռնութիւնները չչարունակուին:

Այնուհետեւ ընկեր Վարանդեան երկարօրէն տեսակցած է մեր հիւանդ բարեկամ Պրեսանսէի հետ, որմէ ստանալով խոստում հարցապնդում ընելու խորհրդարանին մէջ, մեկնած է Լոնտոն, առնելով իր հետ շարք մը յանձնարարականներ անգլիացի կարեւոր գործիչներու վրայ — երկու երեսփոխաններու եւ երկու նշանաւոր հրապարակագիրներու վրայ:

Միանգամայն սիրալիր ընդունելութիւն գտնելով բոլորի մօտ, Վարանդեան կը սկսի կիսապաշտօնական Westminster Gazette-ի եւ այլ թերթերու մէջ արծարծել հայկական խնդիրը եւ պարզել Վասպուրականի վիճակը: Միաժամանակ երեք պատգամաւորներ՝ Թրիվելիան, Լինչ եւ Օգրատի հարցապնդեցին խորհրդարանի մէջ Սըր էտուարդ Կրէյն Վանայ դրութեան մասին: Անոնց պահանջին վրայ Կրէյն՝ Պոլսոյ դեսպանէն հեռագրով տեղեկութիւններ պահանջեց կատարուած իրողութիւններու մասին: Մի քանի օր յետոյ Թրիվելիան նորէն հարցապնդեց, Կրէյն յայտարարեց որ կտրուկ ազդարարութիւններ ըրած է Բ. դրան եւ դեսպանին բռնութիւններուն վերջ դնելու եւ յանցաւորները պատժելու համար:

Աւելի հետաքրքրական եղած է տեսակցութիւնը էդ. Կրէյնի մէջ քարտուղարին հետ՝ որ ինքը եկած էր գտնե-

լու մեր ընկերը խորհրդարանի շէնքին մէջ: Քարտուղարը ըսած էր, «Անգլիան իր պարտքը կը կատարէ, սակայն տարաբախտաբար մեծ բան չի կրնար ընել, որովհետեւ Ռուսաստանը կը կաշկանդէ մեզ, մենք շատ շատ կարող ենք բռնութիւններու ու սարսափներու առաջք առնել, բայց աւելի չենք կրնար ընել»: Մեր ընկերը պատմած էր անգլիացի գործիչներուն, նաեւ քարտուղարին՝ Պիշոնի հետ իր ունեցած տեսակցութիւնը:

Վարանդեանի հետ նոյն ժամանակ Լոնտոն ժամանեց եւ ընկեր Տր. Չաւրեանը, որ կը գնար մի այլ կարեւոր անձի հետ նոյն միսիոնով: Այդ անձը տեսակցելով Hardings-ի հետ, վերջինիս նոյն յայտարարութիւնն էր ըրեր հայոց հարցի առիթով, «Ռուսիան մեզ կը կաշկանդէ, ան թոյլ չի տար հայկական հարցի լուծումը»:

Daily News-ի խմբագիրը իմանալով մեր ընկերոջ միսիոնի մասին, հրաւիրեց էր գայն իր տունը, ուր 3 ժամու չափ խօսակցութեան մէջ՝ յայտարարեց է համաձայնութեան գալ երիտ. թուրքերու հետ եւ միասին աշխատիլ ամբողջ թուրքիան վերանորոգելու: Մէկ քանի օր յետոյ արդէն հռչակուեցաւ Օսմանեան Սահմանադրութիւնը:

Այնուհետեւ կազմելով հսկող մի կոմիտէ (Comité de vigilance) Լինչն եւ այլ մէկ քանի երեսփոխաններէ, ընկեր Վարանդեան վերադարձաւ:

Պարսկաստանի մէջ Դրօշակի մուտքը արգիլուած էր, մեր կրկնակի դիմումներուն վրայ թէ Փարիզի պարսիկ դեսպանին եւ թէ Թեհրանի Արտ. գործոց նախարարութեան, Դրօշակի մուտքը ազատ յայտարարուեցաւ Պարսկաստանի մէջ:

ԿԻԼԻԿԻԱՅԻ ԿՈՏՈՐԱՄԸ.—

1909-ի Ապրիլ 14-ին տեղի ունեցաւ Ատանայի եւ ընդհանրապէս Կիլիկիայի սարսափելի աղէտը:

Արեւմտ. Բիւրոն իր բոլոր ջանքը ի գործ դրաւ սարսափին տարածման առջեւ առնելու համար, դիմումներով, բողոքներով եւ հանրային կարծիքը արթուն պահելով:

Ապրիլ 19ին երկար հեռագիրներ ղրկուեցան անգլ., ֆրանս., իտալ. Արտաքին գործոց նախարարներու կոտորածի տարածման համար անոնց միջամտութիւնը խնդրելով: Սոյն հեռագիրներու պատճէնները յանձնուեցան Clémenceau-ին եւ Լոնտոն՝ երեսփոխան Լինչին՝ որ Արեւելեան հարցի հեղինակաւոր եւ հայասէր անդամներէն մէկն է: Այդ պահուն, դժբախտաբար, Պր. Լինչ Պոլիս կը գտնուէր: Պոլսէն վերադարձին միայն կրցած էր պատասխանել մեզի, ըսելով որ ինք Ատանա-

11.- Կ'ակնարկուի 1895 թ. Մայիսին եւրոպական պետութիւններու կազմած բարենորոգումներու ծրագրին:

յի մասին Պոլիս խօսած էր Երիտ. Թուրքերու հետ եւ լաւատես կարծիք կը յայտնէր անոնց մասին:

Ապրիլ 23-ին առանձին հեռագրեցինք V. Bérard-ին, որ Ֆրանս. Արտ. գործոց նախարարութեան, պր. Պիշո-նին հետ, կարելին ընէ նորանոր աղէտներու առաջըր առնելու համար:

Մեր հեռագիրը սխալմամբ յանձնուած էր ծերակուտական Alexandre Bérard-ին, որ իմացած էր թիւրիմացութիւնը եւ գրած էր մեզի այդ մասին, միանգամայն աւելցնելով որ ինք նմանապէս կը համակրի հայկական դատին եւ այդ հեռագրին վրայ իսկոյն դիմած էր անձամբ պր. Պիշոնին որ յայտնած էր թէ «պատրաստ է ընել այն ինչ որ մենք ուզենք»: Մերակուտական պր. Bérard կը հաղորդէր նաեւ մեզի որ Le Journal du Soir-ի, որուն խմբագիրներէն մէկն է ինք, սիւնակները բաց են մեր առջեւ:

Ապրիլ 23-ին, իրենց դիմումին վրայ, Պատասխանատուին ղրկեցինք 20,000 Ֆր. ինքնապաշտպանութեան համար, իսկ 4,000 Ֆր. Իզմիրի մարմնոյն՝ նոյն նպատակով:

Ապրիլ 27-ին հեռագրով շնորհակտեցինք Օսմ. Ազգային ժողովը Ապտիւլ Համիտի գահընկէցութեան եւ Ազատարար բանակի յաղթանակին համար:

Մայիս 5-ին դիմեցինք ժընեւ Croix Rouge-ի¹² նախագահին, որ յայտնեց թէ Պոլիս գրած են արդէն Croissant Rouge-ին¹³ Ատանայի գոհերուն օգնութեան փութալու համար:

Մայիս 5 հեռագիր Օսմ. խորհրդարանին (պատճէնները ուղարկուած մեծ վէճիրին, վարդգէսին, Մանգու-մէի էֆեբարին, Արեւելքին, Եէնի Կազետային) բողոքելով որ կառավարութիւնը, հիմունելով կոտորածի հեղինակներու տեղեկագրերուն վրայ, կը ջանար հայերը յանցաւոր հանել իբր պատճառ եւ նախադրեալ կոտորածին:

Թուրքիոյ Ներքին գործոց նախարարին կողմէ եւ ժընեւի թուրք հիւպատոսին միջոցով, ստացանք թէ գրեթէ մը, որուն մէջ յայտնելով որ «կառավարութիւնը իր պարտականութիւնը ճշդօրէն կը կատարէ» կը խոստանայ «յանցաւորները ամենախիստ կերպով դատել»: Միանգամայն կը հերքէ այն լուրերը թէ կառավարութիւնը «հայերուն վերագրած ըլլայ յանցանքը»:

Խմբագրութիւնս պատշաճ պատասխանը տուաւ մասնաւոր նամակով, որուն թարգմանութիւնը լոյս տեսաւ 1909 Մայիսի Դրօշակի համարին մէջ:

Մայիս 6.— Հեռագիր անգլ., ֆրանս., իտալ. Արտ. գործոց նախարարներուն եւ անգլիական ու ֆրանսական կարգ մը երեսփոխաններուն՝ խնդրելով անոնց ազդու միջամտութիւնը եւ յայտնելով ընդհանուր կոտորածի մը երկիւղը ու տարածայնութիւնը Թուրքիոյ մէջ:

Մայիս 7.— Հեռագիր անգլ., ֆրանս., ակտոր., գերմ. կարեւոր թերթերուն բողոքելով թուրք կառավարու-

թեան ջանքերուն դէմ, որով կը նկրտէր հայերը յանցաւոր ճանչցնել եւ կոչ ընելով մամուլին եւ Եւրոպայի հանրային կարծիքին հայ ժողովրդի տագնապալից դրութեան մասին:

Մայիս 12.— Նկատի ունենալով երկրի անորոշ եւ երկիւղալի վիճակը, եւ Եւրոպայի հանրային կարծիքը օրը օրին գիտակ պահելու համար Թուրքիոյ ներսերը անցուղարձերուն, Տրապիզոնի մեր ընկերներուն գրեցինք, իբր յարմարագոյն վայրը, որ շաբաթը 2-3 անգամ հեռագրով հաղորդեն մեզի հայ ժողովրդի դրութեան մասին: Այդ հեռագիրները չստացուեցան:

Մայիս 15.— Հեռագիր Clémenceau-ին եւ ֆրանսական խորհրդարանի մեր բարեկամ երեսփոխաններուն Կիլիկիոյ ջարդերուն եւ հայաբնակ միւս նահանգներու վիճակի մասին, խնդրելով որ յանուն մարդկութեան կարելին ընեն: Մեր դիմումները ապարդիւն չանցան: Denys Cochin ֆրանս. խորհրդարանին մէջ հարցապընդեց կառավարութիւնը եւ անոր պաշտօնական ուշադրութիւնը հրահրեց Կիլիկիոյ սարսափներուն վրայ:

Մայիս 24.— Փարիզի Օսմ. դեսպանի յայտարարութեան դէմ, իբր թէ Դաշնակցութիւնը կը ջանար վարկաբեկել Օսմ. Սահնամադրութիւնը, պատասխան հեռագիր մը ղրկեցինք Temps-ին եւ ֆրանսական մէկ քանի թերթերուն, որ հրատարակեցին:

Մայիս 25.— Պերլին գրեցինք մեր ընկերներուն գերմանական մամուլին մէջ Կիլիկիոյ դէպքերու մասին պրոպականտ ընել, այդ առթիւ ղրկեցինք կարգ մը տեղեկութիւններ՝ որոնց կարեւոր մասերը լոյս տեսան տեղական թերթերու մէջ:

Մայիս 28.— Ընդհանուր ժողովը Յուլիսի վերջերը գումարուելու որոշումը հաղորդուեցաւ բոլոր կեդր. մարմիններուն:

Յունիս 5.— Հեռագիր Օսմ. խորհրդարանի նախագահին, վէճիրին, Ջէվտէթ փաշային, Ֆէրիտ փաշային բողոքելով Ատանայի մէջ անմեղ հայերու կախաղանի մահապիճիւղին դէմ, կոչ ընելով միանգամայն անոնց արդարադատութեան եւ ջանքերուն՝ ազգերու մէջ եղբայրական կապերու վերահաստատման:

Դիմեցինք նաեւ Daily News-ի խմբագրին խնդրելով որ հայ ժողովրդի պաշտպանութիւնը ջատագովէ: Պատասխանեց որ պատրաստ է՝ միայն իրեն ղրկուելու Documents-ներ: Խմբագրապետը կ'աւելցնէր նաեւ որ Ատանայի մէջ հայերու կախաղան հանուիլը անըմբռնելի կը թուէր իրեն եւ թէ իր կարծիքը փոխուած էր Երկրտասարդ թուրքերու մասին:

12.- Միջազգային Կարմիր խաչից:
13.- Կարմիր մաիկի, Կարմիր խաչի իսլամական համապատասխան անուանակոչումը:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ.—

Դ-րդ Ընդհ. Ժողովէն ասդին Դրօշակի խմբագրութիւնը լոյս ընծայած է գրքեր եւ պատկերներ, այս վերջինը մեծ քանակութիւնով:

Լոյս տեսած են հետեւեալ գրքերը, իւրաքանչիւրը 1000-էն 2000 օրինակ:

- 1.- Մրագրի մէկ մասը
- 2.- Կանոնագիրը
- 3.- Programme minimum (հայ եւ ֆրանս)
- 4.- Շտուտկարտի սոցիալիստական կոնգրէին ղըրուած տեղեկագիրը:
- 5.- Մեր ծրագրի ուղեւորէն թարգմանութիւնը
- 6.- Գէորգ Չառուշի կենսագրականը:
- 7.- Փարիզի համաժողովին յայտագիրը (հայ. ֆրանս. եւ արաբ.)
- 8.- Սոցիալիստի նամակները (Արարատսկի)
- 9.- Ուղեցոյց ընկերներին
- 10.- Եւրոպացիներու կարծիքները
- 11.- Սերոբ Աղբիւրի կենսագրութիւնը
- 12.- Ընդհանուր կրթութեան թերութիւնները
- 13.- Հոսանքներ

ՊԱՏԿԵՐՆԵՐ.—

Մեծ քանակութիւնով տպուած եւ ցրուած են հայ յեղափոխութեան հերոսներու մեծադիր եւ փոքրադիր պատկերներէն, ինչպէս եւ երկու այլաբանական մեծ պատկերներ:

Մեծադիր պատկերներէն պատրաստուած են 72,000 հատ, ընդամէնը 28 տեսակ:

Տպուած են նաեւ 50,000 նուիրատու մասնաւոր ձեւով պատրաստուած:

Բաց-նամակներէն հրատարակուած են 38 տարբեր տեսակներ, որոնց կէսը հիներէն արտատպուած է, մնացածը նոր: Ընդամէնը տպուած եւ ցրուած են 78,500 քարտ (1907 Յուլիս 30-էն 1909 Յունուար 31):

ԴՐՕՇԱԿ.—

Կը հրատարակուէր ըստ սովորականին ամիսը մէկ անգամ: Սահմանադրութեան հռչակումէն ետք Դրօշակը Պոլիս փոխադրելու հարցը ծագեցաւ. երկրի թղթակցութիւնները սկսան տեղալ Պոլսոյ թերթերուն մէջ, որոնք լայնագատ կը գրէին, որով թերթին կանոնաւոր հրատարակութիւնը յապաղում կրեց եւ սկսաւ հրատարակուիլ անկանոն:

Նախորդ Բիւրոյի օրով Դրօշակը լոյս կը տեսնէր ամսական 13.000 օրինակ. նոր Բիւրոն իջեցուց 7.000-ի, որ

բաւականութիւն կու տար եղած պահանջներուն: Հին համարներէն անթիւ քանակութիւնով դիպուած կը մնային Մարսիլիա եւ խմբագրութեան մէջ:

Կը ղրկուէին հետեւեալ վայրեր Սահմանադրութեան անգլ.:

Ամերիկա	1734 օրինակ
Եւրոպա	200 »
Պուլկարիա	540 »
Ռումանիա	180 »
Եգիպտոս	350 »
Լեռնավայր	15 »
Վիշապ (Պալքանի ճամբով)	3 օրինակ
Ափրիկեան Տրիպոլիս	3 »
Սեւ ծովու ափերը	57 »
Թուրքիա (հիւպատոսներուն եւն)	75 »
Ռուս-Կովկաս (ծրարներով)	120 »
Կովկաս 1907 Յունիս-Յուլիսէն կը ղրկուէր 3200 օրինակ. 1908 Փետրուարին իջեցուցինք 1000-ի	

Սահմանադրութեան յետոյ Դրօշակի թիւը բարձրացաւ 8000-ի: Կը ղրկուէին հետեւեալ վայրերը:

Թուրքիա (43 տարբեր քաղաքներ)	3310 օրինակ
Կովկաս 500 էնգէլի ճամբով	
500 Տրապիզոնի ճամբով	
40 հատով ղրկուած Ռուս-Կովկաս	1040 »

Պարսկաստան (10 տարբեր քաղաքներ)	481 »
Պուլկարիա (10 տարբեր քաղաքներ)	583 »
Ռումանիա (5 տարբեր քաղաքներ)	87 »
Յունաստան	18 »
Պուլկ.—Ռում.— Յունաստան (հատով)	14 »
Եւրոպա (90 օրինակ)	2ուրիցերիա 27
	Գերմ.— Աւստրիա 27
	Ֆրանս.— Պելճիքա 28
	Անգլ.— Իտալիա 8

Ամերիկա	1680 օրինակ
Եգիպտոս	350 »
Կիպրոս (Լիմասոլ)	5 »
Հապէշիստան	28 »
Հնդկաստան — Ճաւա — Սուտան	10 »
Լրագիրներուն	50 »
Հաստատութեանց	53 »

Ըստ երեւոյթին Թուրքիոյ ազատութիւնով Դրօշակի թիւը աւելնալու էր անհամեմատ. սակայն պէտք է նկատել որ միւս կողմէ Կովկասի եւ Պարսկաստանի առաջումները նուազեցան:

Դրօշակի բովանդակութիւնը թղթակցութիւններու եւ տեսական հարցերու մասին պակասաւոր էր: Երկրի թղթակցութիւնները կը պահուէին Կովկասեան թերթի

Համար, իսկ, հակառակ մեր յաճախակի դիմումներուն, ընկերներու աշխատակցութիւնը զգալի պակաս մ'եղաւ թերթին համար:

PRO ARMENIA.—

Կը հրատարակուէր նախկին ձեւով: Հոս եւս զգալի էր թղթակցութիւններու պակասը: այդ մասին քանիցս գրեցինք Կովկաս ու երկրի թարմ լուրերը հաղորդեն Փարիզ, բայց դժբախտաբար թղթակցելու եռանդը եւ փութկոտութիւնը անհրաժեշտ ընկերութեան չեղանք:

Սահմանադրութեան հռչակուելովը Pro Armenia-ի հրատարակութիւնը կը կորսնցնէր իր նշանակութիւնը: Արեւմտ. Բիւրոն զգացուց ընկեր Quillard-ին. եւ 1908 Հոկտ. ամսուն առժամապէս դադարեցաւ մինչեւ Ընդհ. ժողովի որոշումը, ութ տարի գոյութիւն ունենալէ յետոյ:

P. Armenia-ի համար ամսական 800 Ֆր. յատկացուած էր խմբագրական եւ տպագրական բոլոր ծախքերով միասին:

Պէտք է խոստովանիլ որ P. Armenia-ն կանոնաւոր լոյս կը տեսնէր ամիսը երկու անգամ, բայց առաջումի եւ բաժնեգրներու խնդիրը, հակառակ մեր ջանքերուն ու թելադրութիւններուն, մնացին անկանոն եւ անորոշ:

ITALIA ALL'ESTERO.—

Իտալիա հրատարակուող շաբաթաթերթ մը խմբագրութեամբ մեր բարեկամ Racca-ի: [«Դրօշակ»] Խըմբագրութեան կողմէ տարեկան 800 Ֆրանքի օժանդակութիւն մը կ'ըլլար յիշեալ թերթին որպէսզի ամէն շաբթու հայոց մասին լուրեր հրատարակէր: Կ'օգտուէր մեծ մասով Pro Armenia-էն:

ՏԻՆԱՆՍԱԿԱՆ.—

Արեւմտ. Բիւրոն իրեն համար նախագծուած ծախքերէն դուրս ունեցաւ բացառապէս արտակարգ ծախքեր մօտ եւ հեռաւոր ընկերներու երթեւեկութեան եւ այլ կարիքներու համար:

Արեւմտ. Բիւրոյի անդամներուն ամսաթոշակները իրենց պաշտօնավարութենէն 7 ամիս յետոյ 150 Ֆրանքէն 175-ի բարձրացուցինք, նկատի ունենալով տնտեսական պայմանները:

Հասոյթը ծախքերուն համեմատ աննշան եղած է: Սահմանադրութենէն յետոյ լոյս տեսած մեծաքանակ պատկերներու վաճառումը կը խոստանար փոխարինել հասոյթի նուազութիւնը: Սակայն այդ պատկերները, որ առհասարակ Պոլիս կը փոխադրուէին, տեղի վրայ ծախուելէ յետոյ արդիւնքը Պատասխանատուն ինք վար կը դնէր, հակառակ մեր բողոքներուն:

ՌԱԿԵՏԱՅԻՆ ԽՆԴԻՐ.—

Կարգ մը ընկերներու համար, որոնք թուրքիկ-ռումբերու պատրաստութիւնով կը զբաղէին, Արեւմտ. Բիւրոն բաւական ծախք ըրած է: 1907 Յուլիս-էն 1908 Յուլիս, այդ գործին համար ծախսուած է 4468,85 Ֆր.— նիւթի եւ անոնց ապրուստի համար:

Միաժամանակ Պարսկաստանէն գինագործ ընկեր Պետրոսը, իր արհեստը կատարելագործելու համար, 5-8 ամսով պելճիքական գինագործարան մը դրինք ուր քանի մը ամիս մնալէ յետոյ, Պոլսոյ դէպքերը վրայ գալով, վերադարձաւ Կովկաս:

ԱԹԷՆՔԻ ԶԷՆՔԵՐՈՒ ԽՆԴԻՐԸ.—

Մեր ընկերը Գալֆայեան Արեւմտ. Բիւրոյի կողմէն յատկապէս Աթէնք մեկնեցաւ եւ այնտեղի գինապահեստի խնդիրը քիչ զոհողութիւնով կրցաւ կարգադրել, ծախելով հոն գտնուած նիւթերը 5501 Ֆրանքի: Այժմ դեռ պահ կը մնայ հոն մօտ 1000 Ֆրանքի առարկայ:

ԶԷՆՔԵՐՈՒ ՓՈՒՍԱԴՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ.—

Սահմանադրական ազատութեան առիթով, երբ գէնքի մուտքը ազատ եղաւ Թուրքիոյ մէջ, երկրի ամէն կողմերէն մեզի դիմումներ կ'ըլլային եւ գէնքի մեծ պահանջ կար: Ընկեր Պարոյր¹⁴ երբ Փարիզ եկաւ Տր. Զաւրեանի հետ, 10,000 Ֆր. տրամադրեցինք իրեն գէնքի համար՝ որ փոխադրուեցաւ Պոլիս:

Քիչ յետոյ ընկեր Յոնան, Պոլսէն վերադարձին, Փարիզէն 3,000 Ֆրանքի կանխիկ ապսպրանք ըրաւ գէնքի որ Ալեքսանդրիոյ ճամբով պիտի երթար Պոլիս: Զինավաճառի միջնորդին սխալ կարգադրութեան պատճառով, այդ գէնքերը Ալեքսանդրիոյ մաքսատան մէջ բռնուեցան եւ գրաւուեցան:

Հալէպէն եւ Լեռնավայրէն ընկերները կը գրէին մեզի որ մեր միջոցներով կամ Լեռնավայրի յատկացուած գումարով գէնք գնենք եւ յատկացնենք իրենց: Որովհետեւ դրամական հնարաւորութիւն չունէինք, մերժեցինք այդ ձեւը, բայց խոստացանք դիւրութիւններ տալ եթէ իրենք տեղական միջոցներ հայթայթեն:

Պոլսոյ Պատասխանատու մարմնին յատուկ գէնքի համար դրկած ենք...

20,000 Ֆրանք — իրենց հեռագրով ստիպողական պահանջին վրայ՝ Կիլիկիոյ դէպքերէն անմիջապէս յետոյ, ինքնապաշտպանութեան գործին յատկացուելու համար:

10,000 Ֆրանքի գէնք — Պարոյրի միջոցով, Փարիզէն:

14.- Գայուկապետի՝ Անդրանիկի ծածկանունն է:

2350 Ֆրանքի գէնք Փարիզէն Յոնանի միջոցով, որ Եգիպտոսի մաքսատունէն գրաւուեցաւ միջնորդին սխալ կարգադրութեան պատճառով:

ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ.—

Ամէն կողմէ այդ մասին մեզի դիմում կ'ըլլար օգնութիւն խնդրելով: Հակառակ կուսակցական բարեցանկութեան եւ նախկին որոշումներուն եւ փորձերուն, բանտարկեալներու նպաստի խնդիրը կանոնաւոր հողի վրայ դնել անկարելի եղաւ: Եղած դիմումներուն մասամբ գոնէ կարենալ գոհացում տալու համար, դիմեցինք մեր շրջանի Կ. Կոմիտէներուն՝ որ շրջաններու բաժնեն եւ Կարմիր խաչի ու անողողակի միջոցներով կարելին ընել բանտարկեալ ընկերներու եւ անոնցմէ ամենակարօտ ընտանիքներուն օգնելու համար:

ԺՕՐԻՍՄԵ.—

Իր ազատումը անակնկալ մըն էր. եւ այս մասին եւրոպական թերթերու մէջ կասկած յարուցանող լուրեր հրատարակուեցան:

Պոլսէն Անվերս վերադառնալով բժիշկներու խորհուրդով գիւղ քաշուած էր կազդուրուելու համար, որովհետեւ, ինչպէս կ'երեւէր, ջրայնապէս քայքայուած էր:

Անվերսէն մեզի գրած նամակներուն մէջ միշտ ոգեւոր եւ յեղափոխական տրամադրութիւն կը յայտնէր՝ որուն անկեղծութիւնը բացայայտ եղաւ երբ մեր ընկերը՝ Քիլառ եւ ուրիշ հաւաստի աղբիւրներ եկան հաստատել որ իր մասին շրջած աննպաստ տարածանութիւնները անճիշտ էին:

Ազատուելէն անմիջապէս ետքը իր հիւանդութեան տեւողութեան միջոցին դրկեցինք իրեն 700 Ֆրանք: Իսկ կինը որ իր ամուսնոյն բանտարկութեան ամբողջ ժամանակը ժընեւ կը գտնուէր կեղծ անունով, վայելեց Դաշնակցութեան նիւթական ու բարոյական աջակցութիւնը: Իրեն գումար մը հայթայթուեցաւ pension մը բանալու համար: Ամուսնին ազատումէն ետքը վերադարձաւ Պելճիքա:

Փօրիս յաճախ կը թղթակցէր մեզի հետ, եւ Թուրքիոյ Սահմանադրութենէն ետքը չէր դադարել իր ընկերական խորհուրդները տալէ մեզի՝ որպէսզի զգոյշ եւ արթուն մնանք ունէ պատահականութեան դէմ: Օսմ. Սահմանադրութեան մասին աւելի յոռետես էր:

ՄԵՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅ ԵՒ ՕՏԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՀԵՏ.—

Փարիզի կոնգրէի գումարման առթիւ թղթակցութիւններ ունեցանք հայ յեղ. կուսակցութիւններու հետ,

հրաւիրելով զանոնք մասնակցել Փարիզի կոնգրէին: Անկէ ետք պաշտօնական ոչ մէկ յարաբերութիւն: Սակայն անոնց կիսապաշտօնական թերթերը շարունակեցին իրենց յարձակումները Դաշնակցութեան դէմ մինչեւ provocation-ի¹⁵ աստիճան: Հնչակեան կենտրոնները ոչ մէկ միջոց ձեռք չէին առնել իրենց թերթերը սանձահարելու եւ լուրեայն համամիտ կը թուէին այդ անորակելի վարմունքին:

Փոքր Հայքի հնչակեան նահանգային ժողովը պաշտօնապէս գրած էր Արեւմտ. Բիւրոյին եւ խմբագրութեան, հայ յեղ. կուսակցութիւններու համբարաշխութեան համար. պատասխանեցինք որ Դաշնակցութիւնը հակառակ չէ եւ ցանկացող է համբարաշխութեան:

ՄԱԿԵԴՈՆԱՑԻՔ.—

Յայտնի են արդէն մեր բանակցութիւնները մակեդոնական կոմիտէներուն հետ Փարիզի կոնգրէին առթիւ, որ դրական ելք չունեցաւ:

Կոնգրէին առաջ Նոյեմբերի սկիզբները (1907) մակեդոնական կոմիտէն Սարաֆովի միջոցով, ընկեր Պարոյրին¹⁴ դիմած էր, 50,000 Ֆրանքի փոխատուութիւն մը խնդրելով Դաշնակցութենէն, իրենց գործունէութիւնը կարենալ շարունակելու համար:

Պարոյր՝ թիւրիմացութիւնով մը գրած էր մեզի 5,000 Ֆր. միայն: Մենք Արեւել. Բիւրոյի հետ համաձայնութիւնով որոշեցինք, յանուն ընկերականութեան, այդ փոխատուութիւնը ընել եւ յայտնեցինք Սարաֆովին: Երբ իմացուցին մեզի թէ թիւրիմացութիւն կայ եւ թէ 50,000 Ֆրանք է որ կը պահանջուի, այն ժամանակ ստիպուած եղանք մերժել քանի որ Դաշնակցութեան պիտուէին անկարող էր այդքան գումար տրամադրել:

Քիչ յետոյ վրայ հասաւ Սարաֆովի դժբախտ մահը: Դաշնակցութիւնը առաջինը եղաւ իր խորին ցաւակցութիւնը յայտնելու մեր յեղափոխական բարեկամին մահուան առթիւ: Արեւմտ. Բիւրոն յատուկ պատգամաւոր ուղարկեց անոր թաղման մասնակցելու:

Այդ ցաւալի մահէն ետք, Արեւմտ. Բիւրոն գրեթէ կարեւոր յարաբերութիւն չէ ունեցած մակեդոնական կոմիտէին հետ. միայն այն ժամանակ՝ երբ Սելանիկի մէջ կարգ մը երիտ. թուրքերու ձեռքապալման առթիւ, պալքանեան մեր մարմնին միջոցով դիմեցինք իրենց (1908 Յուլիս 10) որպէսզի, եթէ հնարաւորութիւն ունին, փախցնեն տաճիկ յեղափոխականները եւ ահաբեկիչները:

Պալք. մեր կոմիտէն եւ Յ[ուսկան] Տ[եւորական] մարմինը անկէ յետոյ շարունակեցին իրենց յարաբերութիւնները մակեդոնականին հետ:

15.- Սուլթան Գամիտի մահափորձին մասնակից պելճիքացի:
16.- Ֆրանսերէն գրողութեան:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.—

Պարսկաստանի յեղափոխական շարժման գործնականապես մասնակցելու եւ դրամապէս աջակցելու համար Արեւելւ. Բիւրոն՝ Ատրպատականի մարմինն հետ համաձայն դիմած էր մեզի: Մասնակցութեան խնդիրը պատասխանատու հարց էր: Ուստի հարկ համարեցինք դիմել Պոլիս եղող ընկերներուն անոնց համաձայնութիւնը եւս առնելու համար, մանաւանդ որ մեր քով անձեռնմխելի գումարը միայն կար: Պոլսոյ մարմինը պատասխանատուութիւնը թողլով Ատրպատականի մարմինն եւ Արեւելւ. Բիւրոյին վրայ,— մենք համամիտ էինք այս մասին Պոլսոյ մարմինն հետ — ուղարկեցինք այլեւայլ անգամներ 25,000 Ֆր. Արեւելւ. Բիւրոյի միջոցով: Իսկ 5,000 Ֆրանք ալ Պատասխանատուին միջոցով:

Դաշնակցութեան պիւտճէին վրայ շատ չծանրանալու համար, 1909 Փետ. 18-ին յատուկ ու ներքին շրջաբերականով դիմեցինք մեր շրջանի մարմիններուն որ բացառիկ եւ մասնաւոր հանգանակութիւն ընեն Թաւրիզի մեր կռուող ընկերներուն օգնելու համար: Ամերիկա, Պուլկարիա, Եգիպտոս գովելի եռանդ ցոյց տուին եւ ուղարկեցին այդ նպատակով որոշ գումարներ: Ամերիկան ինք ուղղակի զրկեց Թաւրիզ, իսկ Պալքանը եւ Եգիպտոսը Պատասխանատուին միջոցով զրկեցին իրենց գումարները՝ որ ցարդ չեն ուղարկուած:

Թաւրիզի մեր ընկերներու պահանջին վրայ փութացինք անոնց զրկել պայթուցիկ եւ այլ նիւթեր:

Մայիս 22-ին պարսիկ սահմանադրականներու կողմէ երկու հոգիէ յատուկ պատգամաւորութիւն մը այցելեց մեզի: Այդ պատգամաւորութիւնը Եւրոպա եկած էր քաղաքական դիմումներ ընելու համար՝ Ատրպատականի մէջ ռուսական ոտնձգութիւններու դէմ: Ժընեւէն մեկնեցան Փարիզ եւ Լոնտոն ուր յանձնարարեցինք գիրենք մեր բարեկամներուն: Ժընեւ գալէ առաջ արդէն այցելած էին Պերլին եւ քաղաքական կարեւոր տեսակցութիւններ ունեցած էին:

ՇԱՆՏԱԺԻՍՏՆԵՐ.—

Մեր շրջանին մէջ շանտաժի երկու դէպք պատահեցաւ: Ժընեւէն անձանօթ մարդիկ Վիեննա գտնուող տաճկահայ հարուստէ մը չէքով դրամ կը պահանջէին յանուն Դաշնակցութեան: Եղելութիւնը մեզի իմաց տրուելով, հաղորդեցինք ժընեւի ոստիկանութեան որուն հետագօտուութիւնները դրական ելք չունեցան:

Երկրորդն էր՝ իմբագրութեանս մէջ ծառայող Գալուստ Յակոբեանի (աստրախանցի) անորակելի վարմունքը: Յիշեալ պարոնը իմբագրութեան անգործածելի պլանկներէն¹⁷ ձեռք անցուցած ըլլալով, անոնց միջոցով դիմած էր Աստրախանի հարուստներուն եւ դրամ պահանջած էր:

Յաջողեցանք Աստրախանէն այդ նամակներէն երկուքը բերել տալ գոր հնչակեանները կրցած էին ձեռք բերել եւ զրկել մեզի, բերել տալ եւ զանոնք ցոյց տալ ատեանի առջեւ այդ պարոնին, որ խոստովանեցաւ իր արարքը: Մնացած պլանկները գրաւուեցան իր տունէն: որոշ փափկանկատումներով չուզեցինք ոստիկանութեան յանձնել, բաւականացանք հարկ եղած յանդիմանութիւնը ընելով եւ պահանջելով որ հեռանայ ժընեւէն:

ՌՈՒՍԱՑ ՅԵՂ. ՄԱՐՄԻՆՆԵՐԸ.—

Մեր յարաբերութիւնները միմիայն ռուս Ս[ոցիալ] Յ[եղափոխական]ներուն հետ եղած է:

Դաշնակցութիւնը մէկէ աւելի առիթներ ունեցաւ իր ընկերական համակրութիւնը յայտնելու ռուս սոցիալիստ յեղափոխականներու Փարիզի մարմինն, ինչպէս՝ Կերշոնիի թաղման ուր ընկեր Quillard իմբագրութեան կողմէն եւ Փարիզի մեր մարմինը անկախ, խօսեցան եւ պսակներ դրին:

Իսկ Ազեւի դաւաճանութեան հետեւանքով, երբ իրենց բանակին մէջ լքում տիրած էր, Դրօշակի իմբագրութեան կողմէ ցաւակցական եւ յեղափոխական ոգիով նամակ մը զրկեցինք (1909 Մարտ) գոր հրատարակեցին իրենց պաշտօնական օրկանին ինչպէս նաեւ La Tribune Russe-ի մէջ: Այդ նամակը, ինչպէս կը հաղորդէր Փարիզի մեր ընկերը, շատ լաւ տպաւորութիւն ըրած էր:

Շտուտկարտի կոնգրէին մէջ մեր ներկայացուցիչները ունեցած են անոնց հետ երկար խօսակցութիւններ եւ ժողովներ մեր յարաբերութիւններուն եւ Դաշնակցութեան հեռացած եւ գիրենք սոցիալիստ-յեղափոխական անուանող «անջատականներու» խնդրին շուրջը:

Ս. Յ. կեդրոնի կարեւոր անդամներէն մէկը մեր իմբագրատուն այցելելով խօսակցութիւններ ունեցանք նոյն խնդրի շուրջը:

ՇՐՋԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆԸ.—

ՊԱԼՔԱՆԵԱՆ ՇՐՋԱՆ.—

Պալք. Կեդր. Կոմիտէն արդէն իր մանրամասն տեղեկագիրով կը պարզէ իր շրջանի գործունէութիւնը:

Այդ շրջանը ամէնէն աւելի հետաքրքրութիւն եւ գիտակցութիւն ցոյց տուաւ ծրագրային հարցերու մասին: Կարեւոր պակաս մը միշտ զգալի մնաց հոն, պրոպականտի համար շրջուն գործիչի մը կարիքը մնայուն պահանջ մը եղաւ:

17.- Պաշտօնական քուրթերն:

Մենք քանիցս դիմեցինք Գերմանիոյ մեր ընկերներուն որպէսզի յանձն առնեն Պուլկարիա գնալ եւ դասախօսութիւններ կարդալ մէկ քանի կարեւոր քաղաքներու մէջ, դժբախտաբար՝ անոնք չկրցին իրենց պարապմունքներէն ժամանակ գտնել: Առաջարկ եղաւ կովկասէն հրաւիրել որ նոյնպէս ապարդիւն մնաց: Հակառակ այս ամէնուն Պալք. շրջանը իր ներքին ուժերով կարողացաւ վառ պահել ընկերներու տրամադրութիւնը եւ կուսակցութեան հմայքը ու գործունէութիւնը:

Վարդոյի¹⁸ սպանութիւնը, այդ շրջանին մէջ մեր կողմէն խիստ դիտողութեան տեղի տուաւ պալք. Կ. Կոմիտէին:

1907 Հոկտ. 5-ի նամակով մը զգուշացուցած էինք գիրենք ունէ սպանութեան քայլ չառնել Պուլկարիոյ մէջ առանց մեր հաւանութեան: Երբ հակառակ մեր պահանջին այդ սպանութիւնը կատարուեցաւ բողոքեցինք այդ անկարգապահութեանց դէմ: Կ. Կոմիտէն կը յայտարարէր որ իրենք ալ յանկարծակիի եկած էին եւ թէ առանց իրենց գիտութեան կատարուած էր տեւորը:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆ.—

Սոյն շրջանը վերջի երկու տարուայ մէջ յաջողեցաւ իր ներքին ուժերով վարել տեղական գործերը եւ պրոպականտը:

Ամերիկայի ընկերները ցոյց տուած են միշտ վառ հետաքրքրութիւն դէպի կուսակցութեան գործունէութիւնը եւ շահերը: Հակառակ տիրող տնտեսական տագնապին՝ իրենց նիւթական գոհաբերութիւնը չեն խնայած գործին սիրոյն:

Ամերիկայի ընկերներուն համար մշտական բողոքի նիւթ եղած է կարող գործիչի մը պակասը. անոնք միշտ պահանջած են մենէ երկու-երեք դրսէն եկած գործիչներ թէ պրոպականտի, թէ «Հայրենիք»ի իմբագրութեան եւ թէ նիւթական ու բարոյական շահերու տեսակէտով:

Մենք կարելին ըրինք գոհացում տալու համար Ամերիկայի մեր ընկերներու իրաւացի պահանջներուն, բայց մեր դիմումները յաջողութիւն չունեցան: Մէկ-երկու ընկերներ յանձն առին գնալ թէեւ, բայց ժամանակաւոր կերպով, որով Ամերիկայի Կ. Կոմիտէն մերժեց յայտնելով որ ձեռք բերուած արդիւնքը չէր փոխարինել բրթեւեկի ծախքը: Առ ի չգոյժ յարմար ընկերոջ, թելադրեցինք Ամերիկայի ընկերներուն տեղական աչքի զարնող ուժերէն օգտուել, ինչպէս ընկերներ Չագամագեան, Չթճեան եւ այլն, մինչեւ կարելի ըլլար կարող ընկեր մը ուղարկել որ, դժբախտաբար, անկարելի եղաւ:

Ամերիկայի ընկերները «Հայրենիք»ի սեփական տըպարան հիմնելու համար 2,000 տոլար փոխատուութիւն ըրած էին նոյն թերթի հաշուոյն, ապահովելով մեզ որ շուտով այդ պարտքը պիտի կրնայ վերադարձնել:

Մենք դիտողութիւն ըրինք որ այդ գումարը օրինա-

կան սահմանը կ'անցնէր: Երբ 2,000 տոլարը անբաւական նկատուելով 1,000 տոլարի նոր փոխատուութիւն մը եւս ըրած էին, այդպիսի անորոշ ձեռնարկի մը մէջ եւ առանց մեր գիտութեան, մենք բողոքեցինք իրենց վրայ ձգելով պատասխանատուութիւնը:

Խիստ դիտողութիւն ըրինք նաեւ «Հայրենիք» ուղղութեան մասին, որ կը հակասէր յաճախ կուսակցութեան աշխարհահայեացքին:

Որովհետեւ Ամերիկայի ընկերները ինքնագլուխ յաճախ ընկերներ կ'ուղարկէին երկիր, որով թիւրիմացութիւններ եւ վտանգներ կրնային պատահիլ, թելադրեցինք իրենց որ առանց մեր համաձայնութեան եւ գիտութեան ոչ ոք չուղարկեն:

Նոյն շրջանի մանրամասն տեղեկագիրը կը պարզէ արդէն այդ վայրի ընկերներու գործունէութիւնը եւ կու տայ նիւթական ու բարոյական պատկերը:

ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋԱՆ.—

1907-ի սկիզբները Եգիպտոսի մարմինները կազմալոյծ եւ խառնաչփոթ վիճակ մը կը ներկայացնէին: Կարգ մը ընկերներ նկատի ունենալով այդ շրջանին ապարդիւն դերը կ'առաջարկէին լուծել զայն եւ չիք յայտարարել: Սակայն Եգիպտոսի դիրքին կարեւորութիւնը հաշուի առնելով, մանաւանդ երկրի հետ յարաբերութիւն պահպանելու համար, որոշեցինք պահել եւ ջանալ լաւագոյն հիմերու վրայ դնել զայն:

Այս նպատակով ընկեր Հանգոյցը¹⁹ զրկեցինք հոն, իբր ժամանակաւոր գործիչ, կանոնաւորելու հոնի գործերու ընթացքը:

Հին կոմիտէն լուծուեցաւ. որովհետեւ «դժգոհ»ներու կողմը անցնելով կազմակերպութեան դրամը ինքնագլուխ գործածած էր եւ Ընդհ. ժողովի որոշումներուն դէմ բողոքի կոչեր հրատարակած էր Սարհատի²⁰ եւն. ազդեցութեան տակ:

Նորակազմ ենթակոմիտէն կարողացաւ Ալեքսանդրիոյ եւ Գահիրէի մէջ կուսակցական գործերը քիչ շատ կանոնաւորել: Մենք կրկին շեշտեցինք իրենց այն բանին վրայ թէ Ընդհ. ժողովի որոշումները պարտաւորիչ էին:

18.- Վարդօ, Վարդ Պատրիկեան. Գալստիոյ հնչակեան, խըմբազիր Վառնայի «Շարժում» քերթին: Անկարգապահ ընթացքի եւ դրամական իւրացումներու պատճառաւ Պալքանի Կ. Կոմիտէի ենթակա կուսակցութեան արտաքստելու եւ անարեւելու առաջարկը հաստատուած էր Գ.Յ.Դ. Չորրորդ Ընդհ. ժողովի կողմէ: Ահաբեկման գործադրութիւնը, սակայն, կատարուած էր առանց սպասելու Արեւմտ. Բիւրոյի վերջնական հաւանութեան:

19.- Աղբալեան Նիկոլը:
20.- Սարհատ (Յ. Յակոբեան), ամերիկեան անցագրով ծագած ժամակաւոր անուճով, Իզմիրի, Կիլիկիոյ գործիչներէն, մաս կը կազմէր Ընդհ. ժողովի կողմէ ընդունուած ընկերակարական ուղղութեան դէմ բողոքողներուն: Չշփոթել Գեորգ Չաւուշի հետ, որ նոյն ծածկանուցը կը կրէր:

եւ թէ չընդունողները պէտք էին դուրս ձգել կուսակ-
ցութենէն:

Միւս կողմէ հին ենթակոմիտէի անդամները «ընթ-
գոհներու ազդեցութեան տակ կը յամառէին չյանձնել
իրենց քով գտնուած կազմակերպական դրամները, հա-
կառակ մեր կրկնակի դիմումներուն եւ խիստ պահան-
ջումներուն: Այդ գումարը պահ մնաց իրենց քով. Սահ-
մանադրութեան հաստատումէն յետոյ միայն այդ գու-
մարը դրկած էին Պոլսոյ Պատասխանատուին՝ որ սա-
կայն ոչ մէկ տեղեկութիւն չէ տուած մեզի այդ մասին:

Եգիպտոսի ընկերները թերթ մը հիմնելու համար
խմբագրի պահանջ դրին. մենք համամիտ չէինք թէ եւ,
անոնք կը խոստանային միջոցները հայթայթել ոչ-կու-
սակցական ճամբով: Ի վերջոյ հրապարակեցին շաբա-
թաթերթ մը որ հազիւ քանի մը համար լոյս տեսաւ:

ԴԺԳՈՂՆԵՐԸ.—

Կեդրոնը Ալեքսանդրիա էր որուն մէջ էին Առան-
ձար, Աղասէր, Սարհատ²¹ եւն: Մեր քաղած հաւաստի
աղբիւրներ ցոյց կու տային որ [Հնչակեան] վերակազ-
մեալները ձեռքի տակէ կը քաջայրէջին այդ շարժումը.
դժգոհութիւնը, ըստ երեւոյթին, Ընդհ. ժողովի որո-
շումներուն դէմ էր, բայց իրողութիւնը այն է որ վերա-
կազմեալներուն միանալու ձգտում մը կար մէջը, ինչ-
պէս կը յայտնէին Գաբրիէլեանի հրաժարումը դժգոհ-
ներէն եւ իր յայտարարութիւնները:

Սարհատ արհեստաւորն էր եղած այդ պառակտու-
մին, որ յետոյ անցած էր Լեռնավայր²² շարունակելու
իր հակադաշնակցական պրոպականտը:

Եգիպտոսի մէջ երկու օժանդակ մարմին եւս կազմը-
ւեցաւ երեքական հոգիէ, անկախ տեղական մարմիննե-
րէն, որոնք Լեռնավայրի եւ Բաստի²³ շրջաններով պի-
տի զբաղէին: Անոնց տրամադրութեան տակ դրինք,
մաս առ մաս, որոշ գումարներ, ներսը ընկերներ մտցը-
նելու համար:

ԼԵՌՆԱՎԱՅՐ²².—

Սոյն շրջանի գործունէութիւնը շատ թոյլ կը քայլեր
գործիչի պակասութեան պատճառով. 1907-ի սկիզբնե-
րը արդէն անկազմակերպ վիճակ մը կը ներկայացնէր:
Անցեալի փորձառութենէն խրատուած, մենք վերապա-
հօրէն կը վերաբերուէինք դէպի այդ շրջանը: Ուստի դի-
մեցինք Եգիպտոս եւ այլուր պրոպականտի եւ կազմա-
կերպութեան համար կարող ընկերներ ճարել եւ դրկել
այդ վայրը հաստատուն հող մը պատրաստելու համար,
եւ այդ նպատակով գումար մը տրամադրեցինք:

Այդ ժամանակ Մարթինը²⁴ Հալէպէն իր ծննդավայ-
րը փոխադրուած պահուն կրցեր էր փախչիլ եւ վերա-
դառնալ Դաշտ²⁵ ուր կ'ուզէր գործի մը ձեռնարկել. ա-

տոր համար մենք 30 ոսկի կը պահանջէր: Մենք մերժե-
ցինք անձնական ձեռնարկի համար յատուկ դրամ տալ.
ուղարկեցինք 200 Ֆր. միայն խորհելով որ բանտէն նոր
ելած ըլլալով դրամի կարիք ունէր:

Քիչ յետոյ «Մոց»ի²⁶ մեր ընկերները յայտնեցին մեզի
որ Մարթին երկդիմի դեր կը խաղայ: Երբ փաստերը ակ-
ներեւ եղան իսկոյն խզեցինք մեր յարաբերութիւնը ա-
նոր հետ եւ նոյնը պատուիրեցինք մեր շրջանի բոլոր
մարմիններուն:

Մարթին՝ Սարհատի ազդեցութեան տակ, մոլորեց-
նելով իր շրջանի մէկ քանի ընկերներ, բողոքի կոչ մը
հրատարակած էին Դրդ. Ընդհ. ժողովի որոշումներուն
դէմ եւ այդ կոչը լոյս տեսաւ հայ թերթերու մէջ: Մար-
թին «դժգոհներուն կոմիտէին ուղղած իր մէկ նամա-
կին մէջ, զոր Մոցի ընկերները ձեռք անցուցած էին, կը
յայտարարէր որ այդ «բողոքը կուսակցութեան ներքին
մարմիններուն միայն յատկացուած էր» եւ թէ «հրա-
պարակային բողոքի» հակառակ էր: Հաւանօրէն Սար-
հատ եւ ընկերներ ինքնազուլու հրատարակած էին այդ
կոչը. ինչ ալ ըլլար, սակայն, Մարթինի եւ ընկերներու
վարմունքը անընդունելի էր քանի որ երկերես դեր կը
խաղային: Մենք իսկոյն գրեցինք Մարթինին՝ իր ան-
կարգապահ եւ ապօրինի ընթացքին համար պատասխա-
նատու համարելով զինք:

Սարհատի ինտրիկները եւ Մարթինի երկդիմիութիւ-
նը բաւական կը յուզեն այդ շրջանը: Մենք ամէն կեր-
պով ջանացինք այդ շարժման առջեւը առնելու համար,
եւ հոնի մեր ընկերները ոչ միայն Մարթինի իրենց միա-
նալու հրաւերին խուլ մնացին, այլեւ կարելի ըրին այդ
հոսանքին դէմ մաքառելու համար: Մոցի ընկերները
մասնաւորապէս գիտակից եռանդ ցոյց տուին:

Մեր յարատեւ թղթակցութիւնները եւ յորդորները
վառ պահեցին այդ շրջանի մարմիններու մէջ ոգեւո-
րութիւնը, մենք հասկցուցինք անոնց որ Դաշնակցու-
թիւնը հաւատարիմ կը մնայ իր գործունէութեան եւ թէ
Սարհատի եւ իր ընկերներու ընթացքը կը բխի թշնամա-
կան ոգիէ:

Ի վերջոյ Մարթին եւ ընկերները անդրադառնալով
իրենց գործած սխալին ու անկարգապահութեան վրայ,
իրենց հերքումը դրկած էին մեզի իրենց բողոքագիրին
դէմ (1908 Յունուար 3) եւ կ'ըսէին որ «Իրենք, Դաշտի եւ
Հովտի²⁷ ընկերները, իրենց դիտողագիրը յանձնելով
Սարհատի եւ Առանձարի, իրաւունք տուած էին անոնց,

21.- Երեքն ալ Կիլիկիոյ իին գործիչներն, յաջորդաբար
Գոյուսնճեան Միսաք, Յակոբ Աղասէր, Յ. Յակոբեան—ժան ժա-
կոբ:
22.- Կիլիկիա եւ Սուրիա:
23.- Սեբաստիա:
24.- Մուրատեան Մարթին:
25.- Չալէպ:
26.- Պէյրութ:
27.- Չալէպի (Դաշտ) եւ Այնթապի (Գովտ):

Դրդ. Ընդհանուր ժողովի ընդունած սոցիալիստական
գաղափարի տեսակէտով, իրենց աշխարհահայեացքը
ներկայացնել ներքնապէս դաշնակցական մարմիննե-
րուն եւ առաջիկայ Ե. Ընդհ. ժողովին: Բայց անոնք չա-
րագործելով իրենց վստահութիւնը, ետ առած էին
անոնցմէ պատգամաւորի իրաւունքը...»:

Հետեւաբար կը խնդրէին մենք որ իրենց այս յայտա-
րարութիւնը հաղորդուի դաշն. մարմիններուն, չուզե-
լով հրապարակով բողոքել կառավարութեան կասկածը
չյարուցանելու համար:

Արեւմտ. Բիւրոն յանդիմանելով զիրենք իրենց ան-
կարգապահութեանը համար, եւ այն բանին համար որ
Ընդհ. ժողովէն դատապարտուածի մը պատգամաւո-
րութեան իրաւունք կու տան — մանաւանդ որ այդ մա-
սին արդէն կանխաւ իրենց ալ հաղորդուած էր — պա-
հանջեց որ «հրապարակով բողոքեն» իրենց դէմ եղած
խաբէական վարմունքին դէմ:

Միւս կողմէ Լեռնավայրի կոմիտէին յանձնարարե-
ցինք որ շրջանային ժողով գումարեն թիւրիմացու-
թիւններուն վերջ տալու համար եւ կանոնադրութիւն
մը կազմելով Ընդհ. ժողովի որոշումներուն չհպատա-
կողները հեռացնել:

Դժգոհական շարժումը արդէն վիժած էր եւ Լեռնա-
վայրի շրջանը սկսած էր հանդարտիլ եւ զգալ որ ինտ-
րիկներու զոհ եղած էր:

Եթէ, հակառակ մեր ջանքերուն, չկրցանք անմիջապէս
Լեռնավայրի համար կարող ընկերներ ուղարկել, սակայն
Մոցի ընկերները, այդ պակասը լրացուցին լիովին:

Մոցը, այդ շրջանին համար յեղափոխական վառա-
րան մը եղաւ, ուրկէ դուրս եկան եռանդուն եւ գոր-
ծունեայ երիտասարդներ՝ որոնց գործունէութիւնը
տարածուեցաւ մինչեւ Բաստի շրջանը: Մենք այդ երի-
տասարդներուն ուղարկեցինք յեղափոխական ու գի-
տական ահագին քանակութիւնով գիրքեր՝ ինքնազար-
գացման համար:

Մոցը մեզի համար դուռ մը եղաւ ուրկէ անկասկած
ու կանոնաւոր յարաբերութիւն սկսած էինք ունենալ
երկրի ներսերը մինչեւ Սեբաստիա, Տիգրանակերտ:

Որպէսզի ուսանող ընկերները արձակուրդներու
դիւրութիւն ունենան, իրենց հայրենիքները վերադար-
ձին, շրջիլ, անոնց տրամադրութեան տակ դրինք որոշ
գումար մը:

ԲԱՍՏԻ ՇՐՋԱՆ²³.—

Այս շրջանի գործունէութեան զարկ տուաւ Գահի-
րէի մէջ կազմուած Օժանդակ մարմինը:

Այդ շրջանին մէջ հինգ տարիէ ի վեր գոյութիւն ունե-
ցած են դաշնակցական խումբեր, որոնք անկազմ եւ ան-
ղեկավար մնացած են Եփրեմեանի հեռանալէն յետոյ:

Պալքանէն ընկեր մը գնալով այդ շրջանին մէջ, իր
ծննդավայրը Տ. հաւաքած էր ցիրուցան ուժերը եւ նոր
գործունէութեան մը հիմը դրած էր. 1907, Դեկտ. 8/21
մեզի դրկած իրենց տեղեկագիրը խոստամնալից էր:

Որպէսզի այդ շրջանի գործունէութիւնը աւելի
արագ յառաջդիմէ, որոշեցինք Սամսոնը կայան ընել եւ
այդ միջոցով յեղափոխական գրականութիւն մտցնել
հոն: Մինչեւ այդ ժամանակ մեր յարաբերութիւնները
«Մոցի» միջոցով կը կատարէինք Փ[ոքր] Հայքի հետ, ո-
րով շատ երկար ժամանակի կը կարօտէր:

Սամսոնը դուռը պիտի ըլլար Փոքր Հայքի շրջանին.
ուստի այդ մասին գրեցինք մեր շրջանի ընկերներուն
որպէսզի հին եւ փորձառու ընկեր մը գտնեն Սամսոն
հաստատուելու եւ ներսի ու դրսի միջեւ կանոնաւոր
կապ պահպանելու համար: Սամսոնի մէջ նոր ընկերներ
կային, բայց դեռ անփորձ էին: Սահմանադրութիւնը
վրայ հասնելով Սամսոնի միջոցով մեր յարաբերութիւն-
ները Փոքր Հայքի հետ կանոնաւոր ճամբու մէջ մտաւ:

ՓԱՐԻՉ.—

Փարիզի մէջ վերակազմուեցաւ տեղական դաշնակ-
ցական մարմինը որ կազմալուծուած էր: Այդ մարմինը
Երիտ. թուրքերու հետ կը պահպանէր ընկերական յա-
րաբերութիւններ եւ, ի հարկին, կը կազմէր CON-
ferenceներ եւ միթինկներ:

Ահա գլխաւոր եւ հակա կէտերը Արեւմտ. Բիւրոյի
շրջանի վիճակին եւ գործունէութեան, սկսած 1907 Յու-
նիսէն մինչեւ 1909 Յուլիս:



1907-1909

2.- Ը Ն Գ Ի Հ Ա Ն Ո Ւ Ր

Հ. Յ. Գ. Ա Ր Ե Ի Մ Տ Ե Ա Ն Բ Ի Ի Ր Ը

Գ. Վ. Բ. Ը Ն Գ Ն Ա Ն Ո Ւ Ր Ժ Ո Ղ Ո Ւ Ը

Մ Կ Ս Ա Ն 1907 Յ Ո Ղ Ի Մ 1. Ն Ծ

Մ Ո Ւ Տ Ի

Ա Ղ Բ Ի Ի Ր Ն Ե Ր	1907		1908		1909	Հ ի ն գ կ ի ս ա մ ն ա կ	Գ յ ու մ ւ ր
	I կ ի ս ա մ ն ա կ	II կ ի ս ա մ ն ա կ	I կ ի ս ա մ ն ա կ	II կ ի ս ա մ ն ա կ	I կ ի ս ա մ ն ա կ		
Ն ա խ ո ղ Գ Տ ա շ և ի շ (1907 յ ա Ն Վ 1-ին պ ա ռ ա ռ ս ա մ)							9315275
Դ ր ա մ Կ օ մ Բ ա լ Ե յ ց	3950330	10000—				4950330	
Ո կ ն ա ն ա զ ա ռ Կ Կ օ մ Բ ա լ Ե յ ց	9196245	1315790				10512035	
Ա մ Բ Ե ի կ ա յ Կ Կ օ մ Բ ա լ Ե յ ց		2500—	2948176	3348435	2883625	9430235	
Բ ա շ և ն ա ն Կ Կ օ մ Բ ա լ Ե յ ց			1200—			1200—	
Ո կ ն Տ ա ն ջ ր Ի Տ ա ն Գ ա ն ա կ օ թ Ի Ն Ե յ ց				3602680		3602680	
Պ ա ռ Ի ղ Ե յ ց				20000—		20000—	
Ա լ Ե ք ա ն Գ ր Ի ա յ Ե յ ց					800—	800—	
Ա մ Բ Ե ի կ ա յ Ե յ ց Ե Վ Գ ի լ ղ Ի Բ ք ն ա զ ա շ ա Մ Տ ա մ ար	187570	150850			256805	256805	
Մ ա ռ Բ Ի ն ն Ե Ր Ի և ա ն Տ ա ն ն Ե Ր Ի Տ ա շ և ի ն ս ա ա զ ա մ						338420	
Լ Ե Ա Ն Մ ա ռ Բ Ի ն Տ ա շ և ի ն Թ ա փ ա ռ Ի կ Ի յ և ս ա ա զ ա մ		2645—		485975		750475	
Չ Ի յ և ս ա ա զ ա մ					500—	500—	
Ն Ե Ի Ն Ե Ր	212—	24725	11175	38015	4620	99735	
«Պ ր օ Ա ռ մ ն Ի ա յ Ի» Տ ա մ ար ս ա ա զ ա մ	10—	90915	10—			92915	
Ա Թ Ե Ն ք Գ ա ն ա ղ Գ յ յ ք Ե Ր Ի և ս Ղ Ի Բ Ե ի Գ ա թ Ի ն Ի յ	5—	550145				550645	
«Դ ր յ ա ղ Ի» Բ ա ժ ն Ե Գ Ի և Տ ր ա ա ռ ար և Տ ա ա յ Թ Ի ն Ե Ր	142165	110415	49980	55765	105420	463745	
Ս ա ա զ ա մ ա լ կ օ	13635	135120	313970	534735	2531—	1250560	
Ա ղ ղ ար և ն յ Գ ր ա մ Ե Ր Ի յ և Ե կ ա ն		525—		12445	5—	65445	
	18512645	3944960	34443—	10078050	3634070		34614025
							439293—

Հ ի ն Գ Կ Ի Ս Ա Մ Ե Ա Կ

Հ Ա Շ Ի Ե Կ Շ Ի Ռ

«Գ Ր Ե Թ Ե Ա Կ Ի» Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Ե

Մ Ո Ւ Ն Ե Ի Ա Ն Վ Գ Ը Ն Գ Ն Ա Ն Ո Ւ Ր Ժ Ո Ղ Ո Ւ Ը

Մ Ո Ւ Ն Ե Ի 1909 Յ Ո Ղ Ի Մ 1

Ե Լ Գ

Պ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Ր	1907		1908		1909	Հ ի ն գ կ ի ս ա մ ն ա կ	Գ յ ու մ ւ ր
	I կ ի ս ա մ ն ա կ	II կ ի ս ա մ ն ա կ	I կ ի ս ա մ ն ա կ	II կ ի ս ա մ ն ա կ	I կ ի ս ա մ ն ա կ		
Ա ռ և լ Ե լ ա ն Բ Ի Ե Ր Ի ն	44450	4450	6425			55325	
Շ ա մ Կ Կ օ մ Բ ա լ Ե յ ց	1000—					1000—	
Վ ր Ե Ժ Ի Կ Կ օ մ Բ ա լ Ե յ ց				20500—	7000—	27500—	
Լ Ե Ա Ն ա Վ ա յ ր Ի շ Ղ Ե Ն Ի ն		495—	1704—			2199—	
Բ ա ա Ի շ Ղ Ե Ն Ի ն		950—	500—			1450—	
Ց. Մ ա ռ Բ Ի ն		115310	513125			628435	
Պ ա ա ա Կ ա ն ա ա լ Մ ա ռ Բ Ի ն				3924085	20000—	5924085	
Ո կ ն Տ ա ն ջ ր Ի Կ օ մ Բ ա լ Ե յ ց					4000—	4000—	
Կ ա ղ Ի ս Ղ Մ ա ռ Բ Ի ն ն Ե Ր Ի Գ ր ա մ և Ի ր Ե Ր	295630	72—		75330	1650	379810	
«Պ ր օ Ա ռ մ ն Ի ա յ Ի ն»	3900—	6700—	4450—	4200—		19250—	
Ա ռ ա ա ա Տ ա ն ն ա ն ա ղ ար յ ա զ ա մ ն Գ Ի		100—	623—	60890		133190	
Ջ Ի ն Ե ռ ա կ ա ն Վ ա ռ Ժ ա ռ ա ն Ի	14000—					14000—	
Դ Ի Բ Գ Ը Ն Գ Տ Ժ ա ղ ղ Ի Ժ ա խ Ե Ր	16200—					16200—	
Մ Ի շ ղ ա ղ ա յ Ի ն ս օ ջ Ի ա լ Ի ս ա Կ օ մ Գ ր Ե Ն Ե Ր Ի ն		236750	728—	400—		349550	
Բ ա ն ա ա Ր Կ Ե ա Ղ ն Ե Ր Ի ն և Բ ա ն ա ի յ ա զ ա ա ա մ ն Ե Ր Ի ն	500—	100—	500—	2000—		3100—	
Լ ա Տ Ի Ժ ա ղ ղ Ի ն Գ ր մ ա լ Ե Ր Ի ն և ժ ա ն ա կ Ե Ր Ի ն		2100—				2100—	
Ջ Ի ն Ե ռ ա յ Թ ա ղ ղ Ի ն Ե Ի Լ Թ Ե Ր Ի ն և փ ա Ր ն Ե Ր Ի ն		263155	183710			446865	
«Մ Ե Ղ Ղ Ե Լ Թ Ի ն» Մ ա կ Ե Գ Թ Ի Ե Ր Ե յ ղ ա մ փ ա լ Ե Ն Ե Ր Ի				500—		500—	
Գ ր Ե Ն Ի ն Ե Ր Ի ն Տ ա ն ա զ ա Ր Տ ա ն ա խ Ե Ր և ա զ ր ա ս ա	19735	135—	75—	1284825		1325560	
Բ Ի Ե Ր Ի ն Ի մ ր ա զ ա Ր Ե լ Ե Ն ա ն ա ղ ա մ Ե Ր Ի ն	3250—	3803—	364325	333515	522—	1455340	
«Դ ր յ ա ղ Ի» ա Ղ Ի ա ա ա լ Ե Ր Ի ն	2500—	5375—	4225—	5125—	4050—	21275—	
Գ ր ա շ Ե Ր Ի ն ա լ ա ջ ք ղ Ի ն ս պ ա ա ա լ Ե Ր Ի ն		512—	50—		25—	587—	
Լ Ե Ա ղ ա ղ Ի ն Ե Ր Ի ն Կ ա ղ ղ ա կ Ե Ր Ի ն	1935—	1610—	1980—	229760	1590—	941260	
Լ Ե Ա ղ ա ղ Ի ն Ե Ր Ի ն Կ ա ղ ղ ա կ Ե Ր Ի ն	32595	52205	28805	23830	18790	156225	
Ց պ ա զ ա կ ա ն Տ ր ա ա ռ ար և Ղ ա կ ա ն	47210	7530	16560	26525	34325	132150	
Ն ա մ ա կ ա զ ա Ր Ե Ր Ի ն և Բ ա ն Գ ր ա Ղ	293510	511440	343660	572570	573830	2295010	
Դ ր ա մ և Ի ր Ե Ր Ի ն փ ա խ ա զ ա Ր Ե լ Ե Ն ա ն	1200—	1532—	1726—	235150	139375	820325	
Մ ա ռ Բ Ի ն Ե Ր Ի ն փ ա խ ա զ ա Ր Ե լ Ե Ն ա ն	10835	7730	5045	38075	24860	86545	
Ա ա ջ ա Ր Ե Ր Ի ն փ ա խ ա զ ա Ր Ե լ Ե Ն ա ն	27230	8265	7140	198975		241610	
Խ մ ր ա զ ա Ր Ե լ Ե Ն ա ն ա ն Վ ա Ր Ե Ր Ի ն Թ Ե Ր Ի ն Ե Ր Ի ն							
ա ն ա խ Ե Ր Ի ն Գ ա ղ ա լ Ե Ր Ի ն Գ ր ա ա ն Ե Ր Ի ն Կ Ի յ ա յ Ե Ր	146870	1671—	171775	143920	1641—	793765	
Չ Ե Ն ա խ ա ա ն ա ն ա ն Ժ ա խ Ե Ր Ի ն	113435	96895	64690			275020	
Ա Ր Ժ Ե Թ Ե Ր Ի ն ա զ ա Տ ա ղ ա զ Ե Ր և ա Ր ա ն ա լ կ օ				7905	350	8255	
Ն պ ա ա շ Ր ա լ Ե Ր Ի ն և ա Ն ղ Տ ա ն Գ ա ն ա կ օ թ Ի ն Ե յ ց				137—	121—	258—	
	54800—	3819230	3361360	10441555	4688080		27790225
							16139075
							439293—

Պ ա ռ ա ռ ս ա մ 1909 Թ. յ ա Ն Վ 1-ին

Փաստ. 53-35

3.- ՇՐՋԱՔԵՐԱԿԱՆ-ՆԱՍԱԿ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՐՈՅԻ

1908 Փետրուար 26
ժընել

Ընկերներ,

Ներկայ շրջաբերական-նամակով կու գանք ամփոփել և պարզաբանող տեղեկություններ տալ այն ընթացիկ հարցերու մասին՝ որոնք կազմակերպութեան համար կարելորդ նշանակութիւն ունին:

Կատարուող վերջի ամենակարելորդ դէպքը կան երեւոյթը, Փարիզի մէջ Օսմանեան դիմադիր տարրերու համաժողովն էր՝ որու որոշումներուն մեծ մասով ծանօթ էք արդէն: Ատոնցմէ դուրս կան նաեւ կարգ մը որոշումներ, որոնք, իրենց բնաւորութիւնով, սահմանուած են գաղտնի մնալու եւ «Մնայուն կոմիտէի» իրաւասութեան կը պատկանին:

Փարիզի համաժողովը համերաշխութեան հողին վրայ, ամէն բանէ առաջ, *գործնական* եւ *անմիջական* նպատակ ունեցած է նկատի, եւ այդ ուղղութեամբ ալ ծրագիր մշակած:

Նկատելով թուրք ժողովրդի մէջ երեւան եկած դժգոհութեան եւ բողոքի շարժումները, որոնք մէկ քանի մասնագետներու մէջ ցոյցերով արտայայտուեցան եւ որոնք հետզհետէ կ'ընդլայնէին արծագանգ գտնելով ժողովրդի խաւերուն մէջ, Դաշնակցութիւնը, ի հարկէ, չէր կրնար անտարբեր մնալ այդպիսի երեւոյթի մը հանդէպ որ կու գար յեղաշրջել իրերու մակերեսը եւ կ'անդրադառնար մեր գործունէութեան վրայ եւ ուրկէ պէտք էինք օգտուիլ կարելի եղած չափով եւ միջոցներով:

Միւս կողմէ Դաշնակցութիւնը իր հետապնդած շահերու տեսակէտով նպաստաւոր կը համարէր զարկ տալ թուրք նորածին շարժման, որուն հարուածները ուղղուած էին հասարակաց թշնամուն դէմ եւ որ կ'ուրուգծուէր եւ կը բռնադատէր մերձեցումի եւ հասկացողութեան նախաշաւիղը հայերու եւ թուրքերու միջեւ: Երկրի մեր ընկերները միշտ եւ ամէն կերպով կը խրախուսեն այդ շարժումը եւ գիտակցութիւնը թուրքերուն մէջ՝ իրենք մնալով մութին մէջ: Իրերու տրամաբանութեան ծնունդ եղող այդ գործելակերպը շատ տեղեր արդիւնաւոր եղած է կառավարութեան դէմ յարուցած խլրտումներով եւ բողոքի բուռն արտայայտութիւնով:

Որպէսզի թուրք ժողովրդի մտքին վրայ հզօր կերպով կարողանայինք ճնշել եւ փարատել անոր մէջ ամէն կասկած դէպի հայ ժողովուրդը, հարկաւոր էր միջկուսակցական հանդիսաւոր եւ պաշտօնական կոնգրէի մը մէջ ցոյց տալ թուրքերուն մեր բարեացակամ տրամադրութիւնը, մեր ուղղութիւնը եւ արդարացի պահանջները, հասկցնելով թէ մեր գործունէութիւնը, արդարութեան եւ իրաւունքի սահմաններուն մէջ, ոեւէ անջատական նպատակ չունի - ինչպէս Դրդ. Ընդհանուր ժողովը յայտարարած է արդէն - . այդպէսով կը յուսայինք մեր դէմ լարուած դրութիւնը զիմաքափ ընել եւ ջլատել կառավարական չարամիտ ենթիկները որոնք այլեւս հեշտութեամբ պիտի չկրնային լայն եւ պարարտ հող գտնել մոլեռանդ եւ անտեղեակ ամբոխին մէջ:

Կոնգրէի նախածեռնութիւնը, ինչպէս զիտք, Դաշնակցութեան Դրդ. Ընդհ. ժողովին կը պատկանի, որ վճռեց այդ քայլը առնել նոյնիսկ մեր ժողովրդի շահերու տեսակէտով ժամանակի եւ պարագաներու բերմամբ:

Եիշդ է կոնգրէին մէջ, հարկեցուցիչ պատճառներով, կարելի չեղաւ համախմբել թուրքիոյ բոլոր դժգոհ տարրերը: Մակեդոնացիք իրենց երկու պետերուն Սարաֆովի եւ Կարվանովի դժբախտ մահովը կլանուած եւ շուարած չկրցին մասնակցիլ, սակայն այժմ անոնց հետ բանակցութիւնները կը շարունակին եւ յոյս կայ որ յարին միացեալ գործունէութեան:

Ալպանացիները տրամադրութիւն յայտնած են միանալ եւ աջակցիլ կոնգրէի որոշումներուն:

Գալով հայ կուսակցութիւններուն, անոնցմէ ոմանք նախապէս տրամադրութիւն յայտնած էին մասնակցիլ կոնգրէին, յետոյ հրաժարեցան ինչ ինչ առարկութիւններով. իսկ հին հնչակեանները, որոնց ներկայացուցիչներուն հետ մեր ընկերը առանձին տեսակցութիւն ունեցաւ Փարիզի մէջ, հրաժարեցան մասնակցել իրենց յատուկ պատճառներով:

Հայերէն մասնակցեցան ուրեմն միայն Դաշնակցութիւնը եւ Արմէնիայի խմբագրութիւնը:

Անշուշտ սա առաջին եւ կարելորդ քայլ մըն էր՝ որը պէտք էինք առնել ընդհանուր թշնամիին դէմ պատրաստելու եւ զինելու մտքերը եւ ուժերը: Մենք կոյր եւ անվերապահ վստահութիւնը չունինք՝ թէ համաժողովի որոշումները լիովի եւ կէտ առ կէտ պիտի գործադրուին, երբ աչքի առջեւ բերենք թուրքերու ան-

փորձ եւ կիսակազմակերպ վիճակը. բայց մեր կողմէն ոեւէ ջանք չի խնայուիր հասունցնելու եւ մտրակելու անոնց տրամադրութիւնները եւ զգացումները, գլուխ բերելու համար, մղելով զանոնք դէպի կենդանի գործը, դրական եւ նշանակութիւն ունեցող ձեռնարկներ՝ մեզի համար կենսական կարելորութիւն ունեցող:

Թուրք յեղափոխականներուն մէջ կան խելացի եւ համակրելի անձեր, որոնց վրայ կարելի է յոյս դնել իրենց ազատական ձգտումներով եւ վճռականութիւններով. կան որ յետին փառասիրութիւններէ կ'առաջնորդուին. կան որ անգոյն են եւ թոյլ. բայց չէ կարելի անտեսել այն յեղափոխական զգացումը որ զգալիօրէն կը շեշտուի անոնց մէջ: Հայկական յեղափոխութիւնը, ինչպէս նաեւ Ռուսաստանի եւ Պարսկաստանի շարժումները մեծապէս կ'անդրադառնան անոնց մտքին վրայ եւ բոլորովին նոր աշխարհայեցողութիւններ կը ստեղծեն անոնց մէջ. կը մնայ ճիգ չխնայել մղում եւ թափ տալու այդ զարթունսին:

Թուրքերու հետ համերաշխութիւնը հետեւանք էր իրերու վիճակի շարունակութեան եւ տիրող պայմաններուն: Այդ համերաշխութիւնով, սակայն, մենք չենք լքեր եւ ոչ ալ զոհեր մեր ուրոյն իրաւունքները եւ միջազգային դաշնագրերը. իւրաքանչիւր կուսակցութիւն կը պահէ իր անկախութիւնը եւ ծրագիրը ու այդ ուղղութիւնով ալ մենք կը ձգտինք Օսմանեան բոլոր ժողովուրդներու ընդհանուր եւ համերաշխ կազմակերպութեան մը հողին վրայ ապահովել մեր ազգային տութիւնը դաշնակցական²⁸ պետութեան մը մէջ:

Պարսկաստան. - Պարսկաթուրք վեճը մեր եւ պարսիկ յեղափոխականներու միջեւ ստեղծած է որոշ յարաբերութիւններ որոշ նպատակներու համար: Պարսիկները սկսած են շատ սիրալիկ եւ բարեկամօրէն վերաբերուիլ մերիններուն հետ. նոյնիսկ մեր ընկերներէն մէկը յատկապէս իրաւորուած էր անոնցմէ կարելորդ բանակցութեան մը համար²⁹: Որքան հմար է պիտի ջանանք օգտուիլ առիթէն մեր շահերու տեսակէտը եւ գործունէութիւնը զօրացնելու մօտիկ վայրերու մէջ:

Սոյն տեղեկութիւնը, իր քաղաքական բնաւորութեանը համար, գաղտնի մնալու սահմանուած է եւ միայն Կեդր. Կոմիտէները իրաւունք ունին իմանալու:

Լեռնավայր. - Լեռնավայրի շրջանին մէջ մեր գործունէութիւնը, նոյնիսկ Ընդհանուր ժողովի պիտոճէով, այս տարի սահմանափակ եղած է, սակայն հետամուտ ջանքեր կ'ըլլան աւելի ձեռնտու պայմաններ ստեղծելու ընդլայն գործունէութեան համար:

Հոն գտնուող մեր ընկերներէն Մարթինը, խաբուելով Սարիատի եւ իրեններու սադրանքներէն եւ հակառակ կուսակցական կարգապահութեան, այդ շրջանի մէկ քանի ընկերներու հետ կոչ հրատարակած է բողոքելով Դաշնակցութեան Դ. Ընդհ. ժողովի որոշումներուն դէմ: Մենք հարկ եղածը զրեցիմք իր այդ ապօրինի վարմունքին դէմ, որ պառակտում կը ձգէր շրջանի ընկերներու մէջ եւ այնքան թեթեւամիտ կերպով հաւատ կ'ընծայէր Սարիատին որ, ինչպէս զիտք, «դատապարուած է Ընդհանուր ժողովի կողմէն կազմակերպական դրամներու անբարեխիղճ գործածութեան համար»:

Այս առթիւ պարտք կը համարենք զգուշացնել մեր մարմինները եւ ընկերները որ բոլոր յարաբերութիւնները կտրեն Մարթինի հետ մինչեւ ցնոր կարգադրութիւն:

Միեւնոյն շրջանին մէջ, ուրախ ենք յայտնելու, որ կը պատրաստուին առաջ գալ երիտասարդ թարմ ուժեր. յոյս կայ որ քիչ ժամանակէն անոնցմէ քանիսը ինքզինքնին գործին տրամադրութեան տակ դնելով նոր ոգեւորութիւն մտցնեն այդ շրջանին մէջ:

Սակայն մինչ այդ, տեղական մեր ընկերները պահանջ կը զգան դրսէն զացող հին փորձառու ընկերներու, որոնք կազմակերպելու եւ վարելու ընդունակութիւնը ունենան. առայժմ այդպիսի կազմակերպիչ ուժերու պէտքը շատ զգալի է այդ շրջանին համար: Ուստի կոչ կ'ընենք Ամերիկայի, Պուլկարիոյ եւ Եգիպտոսի մեր մարմիններուն որ լուրջ ուշադրութիւն դարձնեն այս մասին եւ եթէ երկիր մտնելու կարող անհատներ ունին տրամադրելի, մեզի հաղորդեն անոնց ցուցակը: Անգամ մը եւս կը յիշեցնենք մեր մարմիններուն, որ այսպիսի պարագաներու մէջ, առանց կանխաւ մեր գիտութեան եւ հաւանութեան ոչ ոք ճամբայ չհանեն իրենց տեղերէն:

Փոքր Հայք. - Փոքր Հայքի մէջ կ'աշխատինք ուղարկել կազմակերպող ուժեր այնտեղի ծրագրուած գործունէութեան զարկ տալու համար: Այդ շրջանին մէջ գոյութիւն ունին դաշնակցական ուժեր, բայց յարաբերութենէ կտրուած եւ անկերպարան վիճակի մէջ: Քանիցս մեզի դիմած եւ ուզած են յեղափոխական գրականութիւն եւ կազմակերպող վարիչ ընկերներ որպէսզի ցրիւ եւ անդեկավար խումբերը հաւաքելով

28.- Դաշնակցային (Ֆեդերատիւ) իմաստով:
29.- Խօսքը կը վերաբերի Ռոստոմի:

կանոնաւոր ընթացք տան գործին: Այս մասին եւս արտասահմանի մեր մարմիններուն ուշադրութիւնը կը հրաւիրենք աչքի առաջ ունենալ այդ շրջանին համար – Սեբաստիա մասնաւորապէս – յարմարագոյն եւ եթէ կարելի է բնիկ ընկերներ եւ անյապաղ մեզի իմացնել:

Դաշնակցութեան խորհուրդը շուտով կը գումարուի Կովկաս. երկրէն արդէն ընկերներ հասած են խորհուրդին իբր պատգամաւոր:

Վանի դէպքերու մասին³⁰ մասնաւոր եւ ստոյգ տեղեկութիւն չունինք դեռ բացի եւրոպական աղբիւրներէն: Երեւի, ծմբան պատճառով հաղորդակցութիւններու դժուարութիւնն է որ այսքան ուշացուց հեռագիր կամ նամակ: Եթէ մանրամասնութիւններ ստանանք գիտակ կը պահենք ձեզ:

Խարախանեան վարդապետի մասին գրուած է ուր որ անկ է. գործնական միջոցներու համար դժուարութիւններ կան՝ ասոր համար խիստ զգուշութիւնով պէտք է շարժիլ չվտանգելու համար ձեռնարկը³¹:

Տիգրանակերտի մեր թղթակիցը կը տեղեկագրէ որ շրջակայ նահանգներէն մօտ 5000 թշուառ հայեր կը գտնուին այս պահուն այդ քաղքին մէջ եւ կը խնդրէ շուտով օգնութիւն հասցնել սովամահէ փրկելու համար զանոնք: Արդ, եթէ կարելի է, չէզոք հողի վրայ հանգանակութեան մը ձեռնարկեցէք եւ արդիւնքը շուտով դրկեցէք Տիգրանակերտի անգլ. հիւպատոսին այդ դժբախտներուն բաշխուելու համար:

Փոքր-Չայքի մեր ընկերները փափաք յայտնած են Սամսոնի միջոցով յարաբերութիւն պահպանել արտասահմանի հետ: Սամսոնը իր աշխարհագրական դիրքով նկատուած է դուռը բոլոր այդ ներքին շրջանին եւ աւելի մօտիկ է: Ուստի դիմում կ'ընենք մեր մարմիններուն ցոյց տալ մեզի վստահելի եւ լուրջ ընկեր մը որ, հաստատուելով նոյն քաղաքի մէջ, կարենար այդ փափուկ եւ անհրաժեշտ պաշտօնը կատարել եւ միանգամայն կազմակերպութիւն առաջ բերել:

Կովկասէն մեր ընկերները կը գրեն որ ռուսօ-թուրք պատերազմի հաւանականութիւնը հետզհետէ կը շեշտուի. երկուստեք փութով պատրաստութիւններ կը տեսնուին: Երկիւղ կայ որ եթէ Ռուսաստանը ժամանակին չկրնայ հարկաւոր զինուորական ուժը հաւաքել, թուրքերը կարող են առաջին յարձակողական քայլը առնել եւ յաջողիլ: Այդ յաջողութիւնը քաջալերական դառնալով քրտներուն եւ Կովկասի մահմետականներուն, հայերու դրութիւնը խիստ կը վտանգուի, եւ մինչեւ իսկ կը վախցուի որ Կովկասի մահմետականները օգտուելով առիթէն, թուրք զօրքերու ներկայութենէն, վրէժխնդիր ըլլան հայերէն, մանաւանդ որ թուրքիա այժմէն կը նախապատրաստէ Կովկասի մահմետականները: Մեր ստացած տեղեկութիւններուն նայելով Կովկասի մէջ կը վստահ թուրք լրտեսները եւ առատօրէն զէնք կը տարածուի մահմետականներուն մէջ:

Չայ ժողովուրդը ուրեմն, եթէ պատերազմ ծագի, ծանր կացութեան մէջ կ'իյնայ թէ թուրքիոյ եւ թէ Կովկասի մէջ: [Դաշնակցութեան] խորհուրդը, վտանգի նախատեսութիւնով, պիտի զբաղի այդ հարցով եւ միջոցներ ձեռք առնէ. մենք ալ մեր կողմէն Եւրոպայի մէջ կարելի պիտի ընենք այդ մասին:

Ընկերական բարեւներով
ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՐՕ

30.- Ակնարկութիւն զինապահեստներու մատնութեան:
31.- Խարախանեան Ներսէս վարդապետ աքսորուած էր Երուսաղէմ. կ'ակնարկուի զայն փախցնելու ծրագրին:

Փաստ. 53-111

4.- ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ-ՆԱՄԱԿ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՐՈՅԻ

Յուլիս 15, 1908

ՎԱՆԻ ԴԵՊԵՐՈ

Վանի դէպքերու մասին հետզհետէ ստուգուած տեղեկութիւնները կասկած չեն ձգեր կորուստի մեծութեան մասին: Կառավարութիւնը դաւաճանին միջոցով հասու եղած էր, առաջին բռնութեանը զատ, ուրիշ պահեստներու գոյութեանը, ուստի զինուորական ահագին ուժով պաշարումի ենթարկելով հայկական թաղերը, խիստ խուզարկութիւններ կատարած եւ գտած է նոր կարգ մը զէնքի պահեստներ: Այս առթիւ կառավարութեան աջակցած են ժողովրդի մէջէն նորէնոր երեսան եկող մատնիչներ:

Մեր ընկերները նկատելով իրերու ծանր դրութիւնը եւ ժողովրդին ահաբեկ վիճակը միշտ խոյս տուած էին ընդհարումներէ՝ ընդհանուր կոտորածի երկիւղի մտահոգութեամբ: Ի վերջոյ կառավարութիւնը դաւաճանի մը մատնութիւնով, որուն անունը յայտնի է³², կը յաջողի իրենց թաքստոցին մէջ պաշարել եւ ձերբակալել մեր ընկերներուն մեծ մասը, որոնց մէջ են Արամը եւ Կ. Կոմիտէի անդամ Թէոսը³³: Մնացած կարելոր ընկերները, որոնք ուրիշ տեղ թաքնուած էին, կը յաջողին պատռել զիրենք պաշարող զինուորական շղթան եւ ապաստանիլ ապահով վայրեր:

Վանի մէջ անջատ մնացած ընկերներ կը շարունակեն արտաքին յարաբերութիւնները:

Այս դժբախտ դէպքերուն առթիւ, մեր ընկերներու ոմանց վրայ եղած չարամիտ գրպարտութիւնները, որը նոյնքան չարամիտ մարդիկ շահագործեցին, բոլորովին անհիմն են: Մեր ստացած հաւաստի տեղեկութիւնները կը վկայեն, որ դաւաճանը իր անարգ քայլը չքմեղելու, իր յանցանքը մեղմացնելու համար գրպարտիչ թռուցիկ մը յայտարարած է, յուսալով հանրային խիղճին առաջ արդարանալ: Մեր ընկերները, որոնք կը ծանչնան Վանի մեր գործիչները, բոլորովին օտար կը համարեն զանոնք այդպիսի բարոյական կասկածէ:

Որովհետեւ մատնութիւնը ծանր հետեւանքներ ունենալ կը սպառնար, որ իր ետեւէն պիտի բերէ ծանր պատասխանատուութիւններ, մեր ընկերները իսկոյն գրած էին երկու Բիւրոներուն, յայտնելով, որ իրենք պատրաստ են կուսակցութեան բարձր ատենանին առջեւ ներկայանալ եւ դատուիլ ստանձնելով ամէն պատասխանատուութիւն: Մեր ընկերները իրենց խիղճին առջեւ արդար, կը պահանջէին իրենք իսկ, որ ճշմարտութիւնը պարզուի:

Անտարակոյս առաջիկայ Ընդհանուր ժողովը պիտի քննէ խնդիրը անվերապահօրէն եւ մանրամասն, եւ պիտի ճշդէ այսպիսի մեծ աղէտի մը ծանր պատասխանատուութիւնները:

ԼԵՆԿԱՎԱՅՐ ԵՒ ԲԱՍՏԻ³⁴ ՇՐՋԱՆ

Լեռնավայրի մեր ընկերները ժիր եւ եռանդուն գործունէութիւն ցոյց կու տան շնորհիւ տեղին նորահաս երիտասարդութեան: Ջանքեր կ'ըլլան այդ վայրի կազմակերպութիւնը հաստատուն հիմքերու վրայ դնել նախ գործնական քայլերէ առաջ:

Նոյն շրջանին մէջ առաջ եկած բողոքողներու հարցը առայժմ առկախ կը մնայ: Բողոքողները գրաւոր հաղորդած էին մեզի իրենց խաբուած ըլլալը Սարհատէն⁴, որ չարաչար գործածելով անոնց վստահութիւնը՝ հրապարակած է բողոքը եւ խեղաթիւրած անոնց ըսածին միտքը. ուստի փափաք կը յայտնեն վերստին շարունակել իրենց յարաբերութիւնները Դաշնակցութեան հետ ինչպէս առաջ: Կը խնդրեն միանգամայն որ իրենց հերքումը միայն մեր մարմիններուն հաղորդուի առանց հրապարակելու: Մենք յայտնեցինք որ հրապարակով հերքուի եթէ կը ցանկան իրենց նախկին դիրքը գրաւել:

Խնդիրը առայժմ այս վիճակին մէջ է եւ մեր վստահութիւնը դեռ հաստատ չէ դէպի անոնց անկեղծութիւնը:

Բաստի³⁵ շրջանին մէջ ունինք ընկերներ, բայց գործը դեռ ընթացիկ հողի վրայ չէ դրուած: Ընկերներ պատրաստ էին հոն մտնելու, բայց վերջին նամակի մը ձերբակալումին վրայ՝ ընկերներու մեկնումը յետաձգուեցաւ: Բարեբախտաբար ցարդ ռեւէ ընկեր չէ ձերբակալուած եւ եկած լուրերը ապահովիչ են, սակայն զգուշութիւնները կը շարունակուին, վախճալով որ մի գուցէ կառավարութեան կողմէ դարան մ'ըլլայ: Յա-

32.- Տիեզի Դաւիթ:
33.- Արամ Մանուկեան եւ Թէոս Տեղտրիկեան:
34.- Լեռնավայրը Կիլիկիոյ եւ յարակից Յիւս. Սուրիոյ կազմակերպութեան ծածկանունն է, Բաստը՝ Սեբաստիոյ:
35.- Իզմիրի եւ Լեռնավայրի հին գործիչներէն, որ Չորրորդ Ընդ. ժողովէն ետք կը պատկանէր դժգոհներու այն խումբակին, որ կ'ընդդիմանար կուսակցութեան որդեգրած ընկերվարական ուղղութեան:

լանօրէն այս ամառ անցնին հոն ընկերներ գործին աւելի զարկ տալու համար:

Նոյն շրջանին S-ի մէջ ձերբակալուած էին ընկերներ, բայց յետոյ ազատ արձակուած: Կառավարութիւնը, ինչպէս կը հաղորդեն մեզի, կարողացած է ծածուկ նամակները բանալ: Ատոր վրայ կատարուած են ձերբակալութիւնները: Այս շրջանը թէև նոր, սակայն հոն գնացող եռանդուն ընկերներու շնորհիւ արագ գործունէութիւն մը սկսած էր եւ այդ առթիւ, իրենց պահանջին վրայ, մեծ քանակութիւնով յեղափոխական գրականութիւն փոխադրուած է հոն:

ԵԳԻՊՏՈՍ

Այնտեղի մեր ներկայացուցիչը³⁶ մեկնած է Կովկաս՝ վայրը քիչ շատ կազմ վիճակի մէջ դնելէ յետոյ. սակայն տեղական ընկերները կը պահանջեն մնայուն գործիչ մը ունենալ:

Ընկերները կ'աշխատին դարձանել բողոքողներու պատճառով առաջ եկած խառն դրութիւնը եւ ամուր հողի վրայ դնել տեղական կազմակերպութիւնը՝ որքան հնար է եւ իրենց պայմանները կը ներեն՝ դրակա-նապէս օգտակար ըլլալ կազմակերպութեան: Արդէն կարգադրած են կարգ մը տեղական առկախ խնդիր-ներ, որոնք կը զբաղեցնէին ժամանակէ մ'ի վեր տեղական մարմինը:

ՊՈԼԿԱՐԻԱ

Շրջանային ժողովը յաջող վերջացած է նոր կոմիտէի կազմութիւնով: Պուլկարիոյ շրջանին համար եւս շրջուն պրոպագանդիստի պահանջ կայ ամառուայ եղանակներուն համար. այդ մասին դիմած ենք Եւրոպայի ուսանող մեր ընկերներէն մէկ երկուքին որպէսզի՝ օգտուելով իրենց արձակուրդներէն, գնան Պուլկարիա շարք մը դասախօսութիւններու համար:

Երկիւղ կար որ պուլկար կառավարութիւնը իր տրամադրութիւնը պիտի փոխէր դէպի հայ յեղափոխականները: Մեր ընկերներու գործը ինքնին կը դժուարանար. բարեբախտաբար առ այժմ այդ երկիւղը անցած կարելի է համարել:

ԵՐՈՊԱՅԻ ՅԱՅ Յ. Դ. ՈՒՍԱՆ. ՄԻՈՒԹԻԻՆԸ

Ինչպէս գիտէք այս անունով առանձին միութիւն մը կազմուած է, Եւրոպայի հայ ուսանողական միութեան գաւառ: Դաշնակցական ուսանողական միութիւնը այս տարուայ Ապրիլին համագումար ժողով կազմելով ժընեւի մէջ մշակեց ներքին կանոնագիր:

ԱՐԵՄՍԵԱՆ ԲԻՐՈ

Վանի դէպքերուն հետեւանքով Արեւմտեան Բիւրոն Եւրոպայի մէջ քաղաքական ներուժ գործունէութիւն մը ունեցաւ, թէ դէպքերը Եւրոպական մամուլին հաղորդելով եւ թէ Անգլիոյ, Ֆրանսայի եւ Իտալիոյ Արտ. գործոց նախարարներուն կրկնակի դիմումներ ընելով եւ անոնց ուշադրութիւնը հրաւիրելով հայ ժողովուրդի անտանելի կացութեան վրայ:

Մեր ընկերներէն երկու հոգի այժմ Ֆրանսա եւ Անգլիա կը գտնուին եւ կ'աշխատին քաղաքականապէս շահեկանութիւն արթնցնելու դէպի Յայ Դատը: Այս ուղղութեամբ ջանքեր չեն խնայուիր: Յարդ ձեռք բերած արդիւնքը բաւական յուսալից ըլլալ կը թուի: Եթէ նոր բարդութիւններ կան անակնկալներ միջազգային տեսակետով չդժուարացնեն մեր ճիգերը:

Մեր բոլոր այս կարգի գործունէութիւնը ներքին եւ գաղտնի բնաւորութիւն ունեն՝ առանց ոեւէ աղմուկի եւ հրապարակումի:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Խորհուրդը, որ գումարուած էր Կովկաս, վերջացած է, սակայն որոշումները դեռ մեզի չեն հաղորդուած: Իր ժամանակին կը հաղորդենք մարմիններուն: Ի միջի այլոց որոշուած է, որ Դաշնակցութիւնը պաշտօնապէս չմասնակցի կաթողիկոսական ընտրութեան, այլ ազատ կը ձգէ իր անդամները ըստ իրենց համոզման:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Խորհուրդի որոշումով յառաջիկայ Ընդհանուր ժողովը պիտի գումարուի 1909 Յունուարի սկիզբները: Յայտնելով այս որոշումը մեր մարմիններուն կը խնդրենք որ այժմէն պատրաստուին Ընդհանուր ժողովին ներկայացնելու համար իրենց շրջաններուն գործունէութեան մանրամասն եւ լիովի տեղեկագիրը:

ԱՐԵՄՍԵԱՆ ԲԻՐՈ

Փաստ. 18-97

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ

5.- ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՍԱԿ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՐՈՅԻ

Ընկերներ,

Սահմանադրութեան յայտարարութեամբ Պոլսում թուրքահայկական դատը մտնում է նոր շրջան: Դրա հետ միասին աւելանում են Դաշնակցութեան պարտականութիւնները:

Իրաւակարգի խոստացումը գրաքննութեան վերացման եւ բանտարկեալների ազատութեան հետ միասին կ'ունենան անշուշտ իրենց դրական ազդեցութիւնը, մանաւանդ թուրքիայի ազգաբնակչութեան կաշկանդուած մտքի արթնացման վերայ:

Սակայն, որպէսզի սկսուած ոգեւորութիւնը չմնայ բարի ցանկութիւնների ու գեղեցիկ յայտարարութիւնների շրջանակի մէջ, անհրաժեշտ է մի շարք էական, այսօրուայ թուրքիայի համար հասունացած պահանջների գիտակցութիւն եւ իրականացում կեանքի մէջ:

Այդ կէտերը ամփոփ կերպով մշակուած են Օսմանեան յեղափ. Դաշնակցութեան պահանջների մէջ, բայց անյայտ են ժողովրդական լայն մասսաներին: Վերջիններս, նրանց ղեկավար շրջանները գիտակցելու են յիշուած բարեփոխութիւնների անհրաժեշտութիւնը: Դժգոհ տարրերին պարզելու է, որ կամայականութեան տեղ ժողովրդի ընտրեալների սահմանած օրէնքների իշխանութիւնը կը հաստատուի ոչ թէ Սուլթանների փոփոխուող իրադէներով, այլ գրկուած ու ճնշուած մասսաների կազմակերպուած ու համերաշխ գործակցութեամբ:

Վստահ ենք, դաշնակցական մարմիններն ու անհատները – հաւատարիմ ազատութեան գաղափարին եւ յեղափոխական ուղիին – այս անգամ եւս կանգնած կը մնան իրենց կոչման բարձրութեան վրայ եւ կը կատարեն իրենց առաքելական կոչումը Օսմանեան երկրի վերածնութեան մեծ գործում:

Բացի այդ, հասարակական լուրջ բարեփոխութիւնները կապուած են եղել ծանր, արիւնայեղ ցնցումների հետ: Դժուար է սպասել, որպէսզի նոյնը տեղի չունենայ եւ թուրքիայում: Կամայականութեան ռեժիմով, գիւղացու կեղեքումով, մանր ազգութիւնների ճնշումով շահագրգռուած են բազմապիսի եւ ուժեղ խաւեր, որպէսզի առանց լուրջ դիմադրութեան ու կռիւների զիջեն իրենց արտօնեալ դիրքերը: Տարբեր խաւերից կազմուած, տարբեր նպատակների ձգտող թուրքիայի այսօրուայ ներքին շարժումը բարդանում է դիպլոմատիքական փոխ-յարաբերութիւններով, մի ազդակի միջամտութեամբ, որը կանգ չի առնում զոհերի առաջ:

Ազատութեան ձգտող տարրերը պէտք է լաւ գիտակցեն իրերի բարդութիւնը, հաւասարութեան տենչող ազգերը պիտի պատրաստ լինեն սեփական ոյժով պաշտպանելու իրենց իրաւունքները: Հայի կացութիւնը մասնաւորապէս թելադրում է մեզ շրջափայտեցութիւն, ամենալուրջ պատրաստութիւն գալիք դէպքերի համար:

Հրաւիրելով ձեր լուրջ ուշադրութիւնը ստեղծուած դրութեան վրայ, խնդրում ենք, ընկերներ, կուսակցական եւ վստահութիւն ներշնչող համակրող խաւերից ու անհատներից գումարել յատուկ խորհրդակցութիւններ այդ առթիւ եւ տեղեկացնել մեզ հետեւանքների մասին:

Ինչպէ՞ս տանել ներսում ու դրսում պրոպագանդը, որպէսզի սկսուած շարժումը լայնանայ եւ խորանայ, որպէսզի սահմանադրութեան պահանջը բխէ ու պաշտպանուի ժողովրդի կողմից:

Կա՞ն արդեօք շրջանումը հասուն ու ղեկավար ոյժեր երկիր մտնելու համար եւ նպատակայարմար չէ նրանց ու քաղաքականապէս հասունացած գաղթականներին մտցնել ներս:

Ի՞նչ միջոցներով ուժեղացնելու է շրջանումը դաշնակցական մարտական բանակը ինչպէս եւ կուսակցական շրջանները նիւթական անհրաժեշտ միջոցների հետ միասին:

Ահա հարցեր, որ դրուած են մեր առաջ եւ սպասում են պատասխանի:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՐՈ

20 Յուլիսի 1908 թ.

36.- Ակնարկութիւն Նիկոլ Աղբալեանի, որ 1905 թ. Դեկտեմբերէն մինչեւ 1908 թ. Մայիս ամիսը իբր գործիչ կը գտնուէր Եգիպտոս եւ Լեռնավայրի շրջանը:

Փաստ. 53-124

6.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ԳԱՂՏՆԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

1908 Յուլիս 27, ժընևի

ԽԻՍՏ ԳԱՂՏՆԻ

Ընկերներ,
Մինչև այժմ ստացուած տեղեկագիրներէն արդէն իմացած պիտի ըլլաք, որ Օսմանեան բանակի մէջ առաջ եկած յեղափոխական շարժման հետեւանք՝ Սուլթանը ստիպուեցաւ Օսմ. Սահմանադրութիւնը վերահաստատել եւ ընդհանուր ներում հրապարակել քաղաքական յանցաւորներու:

Կը շտապենք ձեզ յայտնել, որ պէտք է օգտուել ներկայ թուրքիստի և աշխատել ամէն կերպով – առանց աղմուկի եւ խիստ զաղտնապահութեամբ – համոզել զաղթականները, որ առանց ժամանակ կորսնցնելու, վերադառնան հայրենիք:

Ընկերական բարեւանքով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

Փաստ. 18-103

7.- ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՍԱԿ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ

Հ.Յ.Դ. ԵՐԿՐԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Ընկերներ

Հակառակ տիրող յուստեստութեան Օսմանեան սահմանադրական շարժումը աւելի եւ աւելի կենսունակ լինելու ապացոյցներ է տալիս:

Հին ռեփորմի սիւների չէզոքացումը, նրանց արդարադատութեան յանձնելը, աղմիսիստրացիայի մէջ կատարուող փոփոխութիւնները եւ այլն բաւականաչափ գրաւական են հանդիսանում, որպէսզի սուլթանական միապետութեան վերհաստատման վտանգը վերացած համարենք:

Նոր կարգերի ներմուծմանը խոչընդոտներ երեւան չգալու պատճառը պէտք է փնտռել մասամբ այն հանգամանքի մէջ, որ ազնուականութիւնը թուրքիստում իբրեւ կազմակերպուած հասարակական միութիւն, չի ներկայացնում այն ոյժը, ինչ ունի նա, օրինակ Ռուսաստանում: Եւ նա յոյս է տալիս, որ օսմանեան սահմանադրութիւնը կը հաստատուի անհամեմատ աւելի լայն դեմոկրատիկ հիմունքների վրայ:

Եթէ առաջիկայում թուրքիստի մէջ ծագեն խռովութիւններ, դա կը լինի հետեւանք «Երիտասարդ թուրքերի» մէջ անհրաժեշտաբար առաջ գալիք դիֆերենցիայի՝ աջակողմեան, ձախակողմեան, չափաւոր կողմերի բաժանուելուն:

Սուր խռովութիւնների տեղիք կարող է տալ նաեւ թագաժողովութեան խնդիրը, որին մեծ կարեւորութիւն են տալիս երիտասարդ թուրքերի պարագլուխները:

Ինչպէս յայտնի է, Պարիզի կոնգրէսում ընդունուած կէտերի առաջինն էր Համիդի գահընկէցութիւնը: Աւելորդ է յիշել, որ Դաշնակցութեան շարժառիթները այս խնդրում բոլորովին տարբեր են եղել երիտասարդ թուրքերի երկու խոչոր հատուածների շարժառիթներից: Մինչդեռ Դաշնակցութեան համար կարեւոր էր ինքը գահընկէցութիւնը, իբրեւ բացարձակ արտայայտութիւն, իբրեւ նուիրագործում սուլթանական ռեփորմի խորտակման, – միւսների աչքում դա մի էտապ էր, որին պիտի հետեւի բուն իրենց շահագրգռող խնդիրը՝ թագաժողովութիւնը: Ներքին պառակտումների ընթացքումն է, որ հին ռեփորմի մնացորդները պիտի օգտուեն Երիտասարդ թուրքիստի աջակողմեան թ(ե)ւից՝ յետ գրաւելու համար կորցրած դիրքերը եւ պահպանելու ըստ կարելոյն միապետութեան իրաւունքները:

Արտաքին միջամտութեան հնարաւորութիւնը եւս աւելի սպառնական պիտի դառնայ այս պարագային, մի հանգամանք, որ լուրջ վտանգ է հանդիսանում թուրքիստի պետական կազմի հիմքերի համար եւ որից չարաչար պիտի տուժի Հայ ժողովուրդը:

Աչքի առաջ ունենալով արդի փափուկ կացութիւնը եւ առաջիկայում ծագելիք բարդութիւնների կարեւոր նշանակութիւնը, Հ. Յ. Դաշնակցութեան Արեւելեան Բիւրոն անհրաժեշտ է համարում, համաձայն երկրի ընկերների յայտնած փափաքին, հրաւիրել երկրի ռազմական ժողով՝ յատկապէս այդ խնդիրների համար: Իսկ առայժմ Արե-

ւելեան շրջանի մարմինների եւ ընկերների ուշադրութեանն է յանձնարարում մի քանի դիտողութիւններ եւ առաջարկներ:

Կատարուող յեղափոխութիւնը՝ լինելով իրականացումն Դաշնակցութեան մօտակայ էական պահանջների, լինելով, աւելի ճիշտն ասած՝ նուիրագործումը եւ ընդհանրացումը ամբողջ թուրքիստի վրայ Դաշնակցութեան մասնակի յաղթանակների՝ ձեռք բերուած զանազան ժամանակներ զանազան վայրերում, օսմանեան շարժման այս յաջողութիւնը ամենափայլուն ապացոյցն է ներկայացնում մեր ծրագրի կենսունակութեան եւ մասնաւորապէս տաքտիկի գործնականութեան:

Քաջալերուած մեր տարած մեծ յաղթանակով՝ բացուած լայն ասպարէզում աւելի հաստատուն քայլերով պիտի ընթանանք Ընդհանուր Ժողովի գծած ուղիով: Տեղի ունեցած փոփոխութիւնների մէջ եւս մեր հիմնական տաքտիկը իր ընդհանուր գծերով պիտի մնայ նոյնը: Դրա հետ միասին, համաձայն Դաշնակցութեան մէջ ընդունուած վաղեմի գործելակերպին՝ ճանաչելով մոմենտի էական պահանջը, նրա վրայ կենտրոնացնել կազմակերպութեան ոյժերի մեծագոյն մասը: Ներկայ հանգամանքներում անհրաժեշտ է դառնում նպատակ դնել նախ եւ առաջ սահմանադրական ռեփորմի հաստատումը եւ կեանք(ի) ու գոյքի ապահովութիւն ձեռք բերելը, որոնց այնքան պէտք ունի հալումաչ եղած մեր ժողովուրդը:

Այդ նպատակով յանձնարարում է՝
ա) Հեռու մնալ ներկայումս ամէն մի անտեղի ցոյցից, որը կարող է ռէակցիայի գիրկը նետել դեռ եւս քաղաքականապէս տհաս մասսաներ:

բ) Խոյս տալ այն պահանջներից, որոնք էական օգուտ չտալով հանդերձ՝ կարող են նոյն հետեւանքին հասցնել:

գ) Կազմակերպել լայն պրոպագանդա՝ գրաւոր եւ բանաւոր, գլխաւորապէս հարեւան ազգերի մէջ, որոնք հանգամանքների բերմամբ շատ են գրկուած մնացել պրոպագանդի տեսակէտից: Զգտել, որ մեր հարեւանների համար տեղի ունեցած եւ ունենալիք փոփոխութիւնները չմնան իբրեւ վերելից իջած շնորհներ, այլ դառնան նրա պահանջը եւ սեփականութիւնը:

դ) Որովհետեւ թուրքերի շրջանում իբրեւ սահմանադրական շարժման ղեկավար հանդիսանում է գինուորականութիւնը, որը ժամանակի ընթացքում, կողմնակի ոյժերից ազդուած, կարող է չհարունակել գնալ ժողովուրդի շահերի ճանապարհով, եւ ընդհակառակը նեցուկ դառնալ Երիտասարդ թուրքիստի աջակողմեան, շովինիստական հովերով տարուած հատուածի համար, անհրաժեշտ է, մասսայական գիտակցութիւն առաջ բերելու հետ միաժամանակ, կազմել տեղական մէջլիսներ – քաղաքական կլուբներ (նման պարսկական անջումանների) վիլայէթներում, սանջակներում, գազաներում եւ նոյնիսկ նահիէներում: Այդ մէջլիսների ձեռքը ամփոփել հետզհետէ տեղական հասարակական գործերը: Լաւ կազմակերպուած մէջլիսները դիւրութեամբ կը հակակշռեն գինուորականութեան այն մասին, որը գործելիս կը լինի ժողովուրդի շահերի դէմ:

Այս մէջլիսները՝ ինքնուրոյն, անկախ կառավարութեան մարմիններից, կը գրաւեն իրականութեան մէջ վիլայէթ նիզամամէտով (նահանգական օրէնսդրութիւնով) եւ Քանունը էսասիյով (հիմնադիր օրէնքներով) նախատեսուած ապակենտրոն-օրէնսդիր վարչական ժողովների դիրքը եւ իրաւունքները եւ իրենց ազդեցութեամբ ուղղութիւն կը տան տեղական պաշտօնական հիմնարկութիւնների գործունէութեանը:

Բայց որպէսզի օսմանեան ժողովուրդները հնարաւորութիւն ունենան դիմագրաւելու բոլոր պատահականութիւններին, անհրաժեշտ է, հէնց այդ մէջլիսների գիտութեամբ, գինել սահմանադրական խմբեր եւ կազմել ժողովրդական միլիցիա:

Մէջլիսների անմիջական պարագլուխների առարկան կարող են լինել հարկերի, հարկահանութեան եղանակի, հողային, աղմիսիստրացիայի աւազակութեան դէմ պաշտպանուելու եւ այլ ստիպողական խնդիրներ:

ե) Թուրքիստի միւս ազգերի հասարակական կեանքը յեղափոխական ուղղութեամբ տանելու նպատակով պիտի աշխատել նրանց մէջ եւս կազմակերպութիւններ առաջ բերել նոյն հիմունքներով, ինչ հիմունքների վրայ է դրուած Դաշնակցութիւնը: Այս կազմակերպութիւնների մէջ պիտի ներս քաշել տեղական մէջլիսների յեղափոխականօրէն մտահոգ եւ գործող անդամներին:

Այս գործին կարող է նպաստել Վասպուրականի ընկերների ջանքերով կազմակերպուած Օսմանեան Յեղափոխական Դաշնակցութեան ծրագիրը, որի մի օրինակը ուղարկում ենք ներփակ:

զ) Այնտեղ ուր գոյութիւն կ'ունենան ուրիշ յեղափոխական խմբեր, թէկուզ դեռ եւս վերջնականապէս չկազմակերպուած, մեր մարմինները պիտի աշխատեն կազմել նրանց հետ միասին յեղափոխական խառն կազմակերպութիւններ, ղեկավարելու համար տեղական գործունէութիւնը:

Իբրեւ ղեկավարող սկզբունք պէտք է ընդունել՝ Յեղափոխական խոշոր ձեռնարկները գլուխ բերել համերաշխօրէն, խառը մարմինների անուսից, իսկ անջատ դուրս գալ միայն ծայրայեղ դէպքում:

Խառը մարմինները անհրաժեշտ են նաեւ համերաշխութեան կազմը ամրապնդելու, ինչպէս նաեւ ընդհանուր պրոպագանդը աւելի արդիւնաւէտ դարձնելու համար: Այդ նպատակով յանձնարարում է, որ ուր միայն տեխնիկական յարմարութիւններ կան, հիմնել օրգաններ խառը մարմինների ղեկավարութեան տակ:

Փաստ. 1538-18

Ե-ԲԳ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ

Ա 1.- ՏԵՂԵԿԱԳԻՐ (ԿԷՏԵՐ)

Հ.Յ.Գ. ՊՈԼՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻ

ՊՈԼԻՍ 1909 – ՕԳՈՍՏՈՍ

1 – Մարմնի կազմը

ա) Չորրորդ Ընդհանուր Ժողովի ընտրած Յուզա-Տեղորական մարմինը: Երեք անդամներ, որոնք պէտք է կազմակերպվեն գործը: Տեմէնի երեք անդամները՝ Անդրանիկ, Ակնունի, Վահագն¹: Ընդհանուր ծրագիրը: Միջազգային-պետական գործունէութեան սկզբունքը եւ 1907-ի Պարիզեան կոնգրէսն:

բ) Տեմէնի ժողովը Վիեննայում 1908 Փետրուարին: Անդրանիկի հրաժարականը, Տեմէնի դիմումը Դաշնակցական Խորհրդին, գումարուած Թիֆլիսում: Բանակցութիւններ Բորիսի, Դումանի եւ Աբրահամի հետ²: Խորհուրդը ընտրեց երրորդ անդամ՝ Բորիսին:

գ) Հրաւէր ժէօն-Թուրքերին եւ մակեդոնացիներին՝ գումարուելու Վիեննա, ընտրելու Permanent Comité-ն, որոշուած Պարիզի կոնգրէսում: Գարոյի հրաժարուելը՝ մտնել այդ կոմիտէի մէջ: Շահրիկի համաձայնութիւնը:

դ) Տեմէն Պատասխանատու մարմնի ժողովը, Սոֆիա, 1908 Յուլիսին: Որոշումն անմիջապէս անցնել Պոլիս:

ե) Հրաւիրուած ընկերներ – Ռուբէն՝ բալկանեան շրջանից, եւ Յոնան՝ Արեւմտեան Բիւրոյից³: Գալֆայեանի ուղարկուելը Չմիւսիսի:

զ) Արեւելեան շրջանից՝ Սիմոն, Շահրիկ⁴:
Ձ) Պատգամաւորներ:

2 – Բանակցութիւններ ժէօն-Թուրքերի հետ

ա) Մեր բանակցութիւնները Պոլսում: «Իթիհատի» ներկայացուցիչները Օգոստոս ամսին.— Ճեմալ-պէյ, Ռահմի-պէյ, եւ Հազգը-պէյ:

բ) «Ապակենտրոնացման» կուսակցութեան պատգամաւորի գալը Պոլիս: Դր. Նիհատ: Կուսակցութեան տրամադրութիւնները:

գ) Դաշնակցութեան առաջարկը՝ հաւատարիմ մնալ Պարիզի կոնգրէի որոշումներին: Խառն կոմիտէն եւ կոնգրէ հրաւիրելու մեր առաջարկը: Այդ առաջարկը «Իթիհատը» ուղարկեց Սելանիկ, Կենտրոնին: Սելանիկէն պատասխան, որ ուղարկում են յատուկ պատգամաւորութիւն – Թալաադ-պէյ, Մանկասի գաղէ (հանգուցեալ միւսիստը), Բահաէդդին-Շաքիր եւ Հազգը-բէյ:

դ) Մեր բանակցութիւնները պաշտօնական ձեւով՝ Իթիհատի հետ: Բանակցողների յանձնարարութիւնը՝ որ անկարող են գործակցել «Եղափոխական» կազմակերպութեան հետ, եւ հետեւաբար անկարելի է Խառն կոմիտէ կազմել: Մեր վէճը:

ե) «Ապակենտրոնացման» կուսակցութեան եւ «Իթիհատի» միացման առաջարկը եւ միացումը: Մեր բռնած նպատակը դիրքը: Միացման պայմանները – ընդունել «Իթիհատի» անունը. պաշտօնական օրգան «Թերակը» եւ հիմնակէտ՝ ապակենտրոնացումն:

զ) Յետագայ դէպքերը: «Իթիհատի» տրամադրութեան փոփոխուելը. Սուլթան Համիտի եւ Իլդրզի ազդեցութեանը մեծացումը: Օգոստոսի դէպքը – Յրուեցին Պարիզի կոնգրէի որոշումը: Պոլսի մարմինը յայտարարեց՝ որ կապ չունի պարիզեան «Իթիհատի» հետ: Համիտը ուրախացաւ այդ պառակտման համար եւ իրան յայտարարեց Իթիհատի նախագահ: Համիտի պահանջը՝ որ չմիանան – չմօտենան Դաշնակցութեան:

է) Մեր պահանջը՝ իրագործել կոնգրէի որոշումը՝ գահընկէց անել Համիտը: Քաղաքական պատճառները: Իթիհատի մի քանի անդամների վատ դերը: Իթիհատի խոստմնազանցութիւնը: Յետագայ տխուր դէպքերը:

ը) Նոր կերպարանք մեր յարաբերութիւնների: Երկու հոսանք «Իթիհատի» մէջ. աջակողմեան եւ ձախակողմեան: Աջակողմեանի ներկայացուցիչները – Բահաէդդին, Ահմէտ Ռիզա, Ռահմի: Ձախակողմեան՝ Մանկասի գաղէ, Թելաադ, Ճեմալ, Ռեմզի, Հասան: Սապահեդդինի եւ նրա գաղափարակիցների հետ: Դրանց խառն ժողովները եւ դրութիւնը: Դր. Սայէթ եւ Չերքէզ-Թոսուն:

թ) Յետագայ դէպքերը: Իթիհատի բռնած սխալ ընթացքը: Դժգոհութեան ծաւալումը: Քեամիլ փաշայի միւսիստութեան անկումը: Ռէհակսիտը եւ Իթիհատի տարտամ վիճակը: Նրանք փորձեցին մօտենալ Դաշնակ-

1.- Վահագն Տաթեւան, Ամերիկայէն պատգամաւոր Չորրորդ Ընդհանուր ժողովին:
2.- Բորիսը՝ Սմբատ Խաչատրեանն է, Դումանը՝ Նիկոլ Դումանն է, Աբրահամը՝ Սահակեան, Գայր Աբրահամն է:
3.- Ռուբէնը՝ Չարդարեանն է, Յոնանը՝ Դաւթեան:
4.- Սիմոն Չաւարեանն է, Յար. Շահրիկեան (Նիթրա):

ցութեան: Մարտի դէպքերը եւ մեր ներկայացուցիչների Հաղըմ-քէոյ կանչուելը: Տեսակցութիւն Թելաադի հետ եւ պահանջ՝ վայր գցել Համիտը:

ժ) Բանակցութիւններ(ի) վերսկսում: Մեր պատգամաւորները Սալոնիկ: Խառն կոմիտէի կազմումը: Ապարդին դրութիւն: Déclaration-ի անաջող ձեռնարկը:

3 – Քաղաքական այլ կուսակցութիւններ

ա) «Ահրար».— Նրա առաջ գալու պայմանները: Հակա-իթիհատական շարժումը. ահրարեան ծրագիրը: Յոյն եւ հայ անդամները.— Գրտական երկու կրուքները՝ Իբն Դուրլամեան[?] եւ Բեդիւրխանգաղէ խմբերը: Մեր բանակցութիւնները նրանց հետ: Արաբական խումբը եւ նրանց բանակցութիւնները մեզ հետ: — Մեր եւ յոյների բանակցութիւնները: Մակեդոնական քաղաքական խմբերը եւ Դաշնակցութիւնը:

բ) Մարտ-ապրիլեան մեր ձեռնարկը կազմելու՝ բոլոր քաղաքական կուսակցութիւնների դաշն: Այդ մարմնի ժողովները: Դրա որոշումները եւ դեկլարասիոնը: Նպատակը տպաւորութիւնը Երկրի մէջ: — Մեր կոչը՝ միանալու յօգուտ Սահմանադրութեան պաշտպանութեան՝ «սերբեստի» խմբագրապետի սպանութեան պատճառով: Տպաւորութիւնը:

4 – Պատ. մարմնի սկզբնական ձեռնարկները

ա) Դիմումն գաւառները, կապեր հաստատելու համար (Օգոստ. 8).

- բ) Շրջաբերականներ՝
1.- համերաշխ գործելու,
2.- ինքնապաշտպանութեան դիմելու եւ
3.- Սահմանադրութիւնը պաշտպանելու համար:

գ) Օժանդակ մարմիններ Պոլսում: Տեղական ինտելիգենտ ոյթերի առաջին ժողովը՝ [Գրիգոր] Չօհրապի մօտ: Ժողովի յայտնած կարծիքը եւ համակրանքը:

դ) Երկու օֆիսների հիմնելը կեդր. Պոլսում, յարաբերութիւնների համար — Ստամբուլ եւ Բերա (Օգոստ. 20).

ե) Ժողովրդական գրավաճառանոցի հիմնարկութեան մեր ծրագիրը եւ նպատակը: «Արծիւ» գրավաճառանոց: Գրքերի տարածման հարց:

զ) Քաղաքական դիմումներ՝ ա- Ազատել քաղաքական բանտարկեալներին (դիմումն Սոֆիայից)

բ- Հայ միւսիստը նշանակելը

գ- Հողերի վերադարձը հայերին:

5 – Կազմակերպական աշխատանքներ

ա) Խմբերի եւ կոմիտէների կազմակերպութիւնը Պոլսի մէջ

բ) Ստամբուլի կոմիտէն, նշանակուած Պ. մարմնի կողմից եւ օֆիսի դերը:

գ) Կ. Պոլսի շրջանի կազմակերպութիւնը: Մեր պրոպագանդիստները եւ կազմեր — ընկերները (մանրամասները Կ. Պոլսի շրջանի պատգամաւորից):

դ) Խմբապետների եւ խմբական հաշուեմատեանի տպագրութիւնը եւ տարածումը:

ե) կազմակերպութիւններ Փոքր-Հայքի եւ Մեծ-Հայքի մէջ:

Մեր պրոպագանդիստ-կազմակերպիչ ընկերները՝ ա- Գալֆայեան — Չմիւսիսիա եւ Կիլիկիա
բ- [Բարսեղ] Շահբազ — Հայկական նահանգներ
գ- Գործիչներ — Պոլսոյ շրջանում:

6 – Հրապարակային պրոպագանդան

1) Ատենախօսութիւնների կազմակերպութիւն(ը) Պոլսի մէջ: Մեր տպած Մրագիրը: Այդ ծրագրի մանրամասները: Քաղաքական, հասարակագիտական եւ տրնտեսական հարցեր:

2) Ատենախօսութիւնների կազմակերպութիւնը գաւառներում եւ նրանց արագ տարածումը

3) Համերաշխութեան գաղափարը միտինգների մէջ. ա- Միտինգներ Թուրքերի հետ
բ- Միտինգներ քրտերի հետ
գ- Միտինգներ յոյների եւ հրեաների հետ:

4) Դրամական մասը միտինգների: — Բարթող փաշայի 2,500 ֆրանկ նուէրը այդ գործի համար:

5) Միտինգներ՝ աւելի քան 75 Պոլսում: Խառն միտինգներ:

6) Մեր թաղական լսարանները: Նրանց դերը:

7 – Պարլամենտական պլատֆորմ

1) Մեր մշակած պլատֆորմը (Օգոստ. 27)

2) Պլատֆորմի հիմունքները եւ տարբերութիւնը մեր minimum պահանջներից:

3) Մեր բանակցութիւնները Սապահեդդինի եւ Իթիհատի հետ պլատֆորմի համար: «Ինքնավարութեան» խնդիրը. Սապահեդդինի առաջարկը այս մասին: «Ապակենտրոնացման» հարցը եւ Իթիհատի բռնած դիրքը:

4) Մեր տարածախոսութիւնները «Իթիհատի» հետ պլատֆորմի կազմի եւ տպագրութեան հարցում: Նրանք խոստացան միասին մշակել — դրժեցին: Թելաադի եւ Հազգը-պէյի գալը Սալոնիկից եւ բերած պատասխանը: Մեզ խոստացան չտպագրել, սպասել, միասին մշակել եւ տպագրեցին: Անախորժութիւններ:

5) Պլատֆորմի տպաւորութիւնը: Մակեդոնացիները, արաբները եւ յոյները համակարծիք մեզ հետ:

6) Պլատֆորմը — չորս լեզուով — հայ, թուրք, յոյն եւ ֆրանսիական:
Նրա արժէքը եւ տարածումը:

8 — Պարլամենտական գործունէութիւն

- 1) Դաշնակցութեան մասնակցութիւնը պարլ(ամեն-տական) ընտրութեան մէջ:
- 2) Մեր ջանքերով կազմուած «Սահմանադրական» մարմինը, նրա ծրագիրը: Բոլոր կուսակցութիւնները եւ կրօնական համայնքները մասնակցեցին այդ ժողովին:
- 3) Դաշնակցութեան թեկնածուները Պոլսում — Զօհ-րապ եւ Հալաճեան:
- 4) Պրոպոզիտիւնի սիստեմը եւ մեր պայքարը Իթթի-հատի դէմ: Մենք պահանջում էինք 25 պատգ(ամաւոր): Արաբների եւ յոյների խնդիրը:
- 5) Իթթիհատի կռիւը մեր թեկնածուների դէմ:
- 6) Հիլմի փաշայի տաքտիկա, ընդդէմ մինիստր Հազ-զը-բէյի: Պատգամաւոր Մուշից եւ Վանից: Մեր պահանջները:
- 7) Ընտրական ընդհանուր պայքար: Յոյն-հայ յարա-բերութիւններ: Հայ-թուրք գործակցութիւն:
- 8) Տասն հայ պատգամաւորները: Ընդհանուր ծրագիր: Պարլամենտական խմբակցութիւններ: Աջը եւ ձախը:
- 9) Պարլամենտական դիրք: Իլդըփի ճաշը եւ հայերի ցոյցը Համիտի դէմ:
- 10) Ռեֆորմներ: Զինուորագրութեան հարցը (բահաճեւ — 14 Ապրիլ — Զեկուցումն Վարդգէսի):

9 — Ինքնապաշտպանութեան հարցը

- 1) Շրջաբերական այդ մասին — Օգոստոս ամսին.
- 2) Ինքնապաշտպանութեան սահմանադրական բնոյթը:
- 3) Հազզը-բէյի եւ Հիլմի փաշայի գաղտնի հեռագիր-ները Բիթլիսի եւ Վան: Ֆերիտ փաշայի հրահանգը:
- 4) Կարճերի⁵ փոխադրութեան խնդիրը: Զիֆոն: Երկու տարբեր հոսանք Պատ. մարմնի մէջ (Յունիս 7):
- 5) Այժմեան կացութիւնը. — քանակը:

10 — Տեմէնի «նիւթերը»

- 1) Յուլիսին բերած նիւթերը.
- 2) Պատրաստութիւններ՝ տեսնուած գաղթաւայ-րում: Մեր մեքենան եւ մեր նիւթերը:
- 3) Ժրնեւից բերածը, անհատական դէպքերի համար.
- 4) Խնձորների խնդիրը: Նիւթը⁶: Քանակը (100+200)
- 5) Հրաչ-Մարալի մասնակցութիւնը:
- 6) Խնձորների խնդիրը եւ մարմինները (Հոկտ. 1) Երկու հոսանք

- 1) դէմ են որ մարմիններին տրուի
- 2) կողմնակից:

7) Կասկածները: Շէֆքէթ փաշայի պաշտ(օնական) դիմումը: Մեր պատասխանը:

11 — Հայաստան գնացող յանձնաժողով

- 1) Առաջին նշանները անկարգ վարչութեան. Դաշ-նակցութեան տեղեկութիւնները գաւառից: Մինիստր Հազզը-բէյի հերքումները եւ կասկածը: Մեր առաջար-կը հրապարակով՝ ուղարկել քննիչ մասնախումբ, խառն, մեր հաշուով:
- 2) Քննիչ յանձնաժողովի ծրագիրը: Անդամներ: Մեզ մօտ են ուղարկում մինիստրութիւնը՝ դրուստութիւն [?] իմանալու: Զեմալ, Զէքի եւ Շահնազար — անդամ-ներ: Ծրագրի ձգձգումը. Ֆերիտի դաւերը: Քայքա-յումն ձեռնարկի:

12 — Ռէակտիւնը եւ Ադանա

- 1) Մարտի 31-ը նախանշանները եւ պատճառները
- 2) Համիտի խաղացած դերը
- 3) Իթթիհատի պատասխանատուութիւնը այդ գործի մէջ: Մեր նոյն պահանջը՝ գահընկէց անել Սուլթան Հա-միտը: Մեր բանակցութիւնները այդ մասին:
- 4) Ադանան: Ադէտի սկիզբը, պատճառները, ուսակ-սիտնի դերը:
- 5) Մեր պահանջները՝
 - ա- Պատիժ պատասխանատուներին
 - բ- Զինուորական ատեան
 - գ- Վնասների հատուցումն
 - դ- Պաշտօնեանների հեռացումն
- 6) Կառավարական դեկլարասիոնը
 - ա- Դժգոհութիւն հայերի կողմից
 - բ- Պատրիարքարանը փակելու հարց
 - գ- Ազգային ժողովի փակումը
 - դ- Եկեղեցիների փակումը՝ իբր ցոյց
 - ե- Հայ պատգամաւորների ելնելը պարլամենտից
 - զ- Յեղափոխական ցոյցեր:
- 7) Քննիչ ընկերոջ Ադանա ուղարկելը (Անտոն)⁷ Բժշկական-օժանդակ միսիոնների առաքումը:

13 — Մեր հրատարակութիւնները

- 1ա- Յեղափոխական գրականութեան մեծ պահանջը Սահմանադրութեան յայտարարումից յետոյ.
- բ- Շրջաբերականներ
- գ- Բրոշիւրներ: «Կանոնագիրը» եւ «Ծրագիրը» տպագրուած Պոլսում:

5.- Ատրճանակների:
6.- Խնձորը՝ ձեռնառուներն է, Գիւթը՝ պայթուցիկ Գիւթ:
7.- Սիմոն Զաւարեան:

դ- Սեփական օրգանի խնդիրը: Մարմինների պահանջը եւ մեր յետաձգման պատճառները («Ազդակ»):

- 1- «Ազատամարտը» — ամէնօրեայ օրգան
- 2- Թուրքերէն թերթի խնդիրը: Մեր բանակցու-թիւնը թուրք թերթերի հետ:
- 3- Ֆրանսերէն օրգանի հարցը: Քիյառ կանչուեց այդ նպատակով: Մեր բանակցութիւնները յոյն եւ թուրք կոմիտէների հետ:

բ- Յեղափոխական բրոշիւրների ձեռնարկ: «Ազա-տութեան մատենադարան» (առանձին զեկոյց):

գ- Գրքերի պահանջը եւ տարածումը. ներկայ հան-գամանքները:

II «Ազատամարտ» —

- 1) Խմբագրական եւ վարչական մարմինները.
- 2) Տարեկան բիւճէն.
- 3) Կազմակերպութեան նպաստը.
- 4) Ի՞նչ պիտի անել գործը ամրապնդելու համար:

14 — Հանգանակութեան խնդիրը

ա- Կազմակերպութեան միջոցները: Պատասխանա-տու մարմնի կատարելիք դերը դրամի խնդրի մէջ:

բ- Պոլսի հայութեան տալիք դրամական աջակցու-թիւնը: Հանգանակութիւն Զմիւռնիա եւ այլ վայրեր:

գ- Դիմումն Պարիզ, Մ.-ին, որոշ ծրագրով:

դ- Պոլսի առաջին դիմումը հայ հասարակութեան մի խումբ ներկայացուցիչներին (մասնախումբ՝ Քաջազ-նունի, Շահրիկ, Վահագն):

ե- Երկրորդ դիմումը, նրանց պատասխանի համա-ձայն: — Ակնունի, Հրաչ, Վահագն, դիմող մասնախմբի անդամներ: Գործի սկզբնաւորութիւն եւ Ադանայի դէպքերը:

զ- Այժմեան կացութիւնը: Մարմինների տրամադ-րութիւնը՝ բունի հանգանակութեան մասին: Դրա անա-խորժ հետեւանքները: Պոլսի հայերին անելիքը՝ դրամա-կան գործում:

15 — Դրամական-հաշուական

ա- Պատասխանատու մարմնի եկամուտները

բ- Հանգանակութիւն

գ- Նուէրներ

դ- Յատուկ նպաստներ

Քաղուածքները՝ Հաշուեմատեանից:

16 — Ընդհանուր տաքտիկա

- ա- Յեղափոխական՝
- 1) Գաղտնի սիստեմը գործելու
 - 2) Քաղաքական օրինականացման խնդիր.
- բ- Կուսակցական՝
- 1) Կապը թուրքերի հետ.
 - 2) Իթթիհատի բուն նպատակը (միացման)
- գ- Ազգային-կուլտուրական՝
- 1) Հայոց սահմանադրութեան շրջանում.
 - 2) Դպրոցական-կրթական:

17 — Տ[եւորական] խառն ձեռնարկներ

- 1) Ռէակտիւնից յետոյ առաջ եկած պահանջը՝ չէզո-քացնելու ուսակսիտն ոյժերը:.
- 2) Տեմէնի ծրագիրը, պաշտպանած անցած տարուայ Սեպտեմբեր ամսից: Տ[եմէն]-ի միջոցներ եւ անձերը: Խանգարող պատճառները, հետեւանքը:
- 3) Պապի⁸ դէմ միջոցներ: Միջոցներ շրջապատի դէմ:
- 4) Խառն ձեռնարկ «Իթթիհատի» հետ: Տ[եւորական] խառն մարմին (բերել պայմանագիր-ծրագիրը):

18 — Թուրքիայի արդի կացութիւնը

- I
- 1) Պետութեան պաշտպանման սկզբունք
 - 2) Պետութիւնը անջատելու տեսակէտ
- II
- 1) Առաջինի մեծ թելադրութիւնները
 - 2) Յոյն-Ստոլիսկու[?] ծրագիր:
- Թուրքերի քաղաքական ձգտումները (թրքական-մահմետական) — Հաշտուելու միջոցներ:
- 1- Մեր ընդհանուր քաղաքականութիւնը:
 - 2- Արտաքին խանգարող ոյժեր (Ռուսաստան, Բու-ղարիս, Յունաստան).
 - 3- Ոյժերի մերձեցման սկզբունքը յանուն Օսմանեան սահմ[անադրական] պետութեան:

8.- Տեւորական գաղտնի բառարանին մէջ «պապ»ը Սուլ-թան Գամիտն է:

Փաստ. 192-6

Ա 2.- ՈՐՈՇՈՒՄՆԵՐ
Հ.Յ.Դ. Պ[ԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ] Մ[ԱՐՄՆԻ]

Կ. Պոլիս 1908

Որոշումներ քիւ 1

1908 Օգոստ. 6 (Յուլիս 23)⁹

Կ. Պոլսի Պատասխանատու Մարմնի անդամները, գումարուած Կ. Պոլիս, կայացրին հետեւեալ որոշումները.

1. Անմիջապէս յայտարարել Մարմնի գործունէութեան բացայայտ սկզբնաւորութիւնը:
2. Յարաբերութեան մէջ մտնել զաւառների հետ, թէ անմիջապէս, եւ թէ Արեւելեան Բիւրոյի միջոցով՝ նրա շրջանները:
3. Առաջարկել թուրքական երկու կազմակերպութիւնների, «Ապակենտրոնացման եւ Սահմանադրական» կուսակցութեան ու «Միութիւն եւ Յառաջադիմութիւն» կոմիտէին՝ ձեռնարկելու համերաշխ գործունէութեան, Պարիզի Կոնգրէի սահմաններում:
4. Հրապարակային շրջաբերականներով, բացատրել Կազմակերպութեան տեսակետը եւ անելիք քայլերը:
5. Գրել Բալկանի Կենտրոնական Կոմիտէին, անմիջապէս անցկացնելու հարկաւոր գրականութիւնը եւ այլ միջոցներ:
6. Յարաբերութեան մէջ դնել զաւառներում մեր ընկերներին՝ թուրք կոմիտէների եւ գործիչների հետ:
7. Տպագրել յատուկ շրջաբերական, խրախուսելով ժողովրդին ընդդէմ տարածուած լուրերին, հին ռեժիմի վերականգնման առիթով:
8. Անմիջական եւ նոր դիմումն անել կառավարութեան պահանջելով՝
 - ա) Բանտարկեալների ազատումը, առանց յապաղման,
 - բ) Գաղթականների անարգել վերադարձը
 - գ) Միմիստրութեան մէջ հայերի եւ այլ քրիստոնեայ տարրերի մասնակցութիւնը.
 - դ) Հայերից խլուած հողերի վերադարձը:
 Այս դիմումը անել թէ տեղական կառավարութեան եւ թէ մեր գործակից թուրք կոմիտէների միջոցով:

Որոշումներ քիւ 2

Օգոստոս 10

- Որոշուեց՝
1. Հրաւիրել մասնակցելու Պ. Մարմնի աշխատանքներին, Բալկանի շրջանից՝ ընկեր Ռուբէնին, մի ընկեր Արեւմտեան Բիւրոյից – Յոնանին⁹, Բալկանի աշխատանքները ւարտելուց յետոյ:
 2. Հեռագրել Պ. Մարմնի անդամ (ընտրուած Դաշնակցութեան Խորհրդի կողմից) ընկեր Բորիսին², թէ երբ կարող է անցնել Կ. Պոլիս:
 3. Տեղեկացնել Ֆիլիպէ՝ ընկեր Յոնանին, որ պէտք է շտապեցնել նիւթերի առաքումը:
 4. Մի մասնաւոր խորհրդակցութեան հրաւիրել Պոլսի հայ մամուլի ներկայացուցիչներին՝ բացատրելու Կազմակերպութեան աշխատանքը եւ պարզելու այն ուղղութիւնը, որին պիտի հետեւի հայ լրագրութիւնը, ներկայ պայմաններում:
 5. Հրաւիրել ժընեւից ընկեր Գալֆայեանին, անցնել Ոսկեհանք¹⁰ կազմակերպական գործերով, համաձայն Ֆիլիպէ կայացած որոշման:
 6. Ուղարկել մի պատգամաւորութիւն, պսակով, այն ցոյցին, որ հայերը վճռել են կազմել, ի պատիւ թուրք յեղափոխական զոհերի:
 7. Հրաւիրել թուրք կազմակերպութեան ներկայացուցիչներին, ա) կազմել մի comite mixte¹¹, ընթացիկ գործերը վարելու եւ բ) Հրաւիրել ընդհանուր կոնգրէ, քաղաքական պրոգրամ մշակելու: Պատրաստել այդ առաջարկին մանրամասները եւ ներկայացնել թուրք երկու կոմիտէների խառն ժողովին, Դաշնակցութեան հետ:

Որոշումներ քիւ 3

- Որոշուեց՝
1. Ուղարկել յատուկ ընկեր, կազմակերպելու տեղական մարմին Ռոտտոքո եւ թուրքերի հետ միասին տեսնուելու ընթացիկ հարցերի մասին: Որոշուեց ընկեր Աբեղեան:

9.- Թուականները նշուած են նոր տոմարով. փակագիծերու մէջ նշուածը հին տոմարով է:
 10.- Իզմիր:
 11.- Ֆրանսերէն՝ խառն կոմիտէ:

2. Ուղարկել յատուկ ընկերներ՝ Նիկոմիդիայի շրջանը, կազմակերպական ձեռնարկների համար:
3. Նպաստել Պոլիս եղած զաւառացի ինտելիգենտ ոյժերին՝ անցնելու Երկիր:
4. Քաղաքական բանտարկեալներին յատկացուած 5.000 ֆրանկից հազար ֆրանկ տրամադրելի անել, եւ օգնել քաղաքում եղած նախկին բանտարկեալներին: Բաշխումը յանձնուեց ընկեր Վահագին:
5. Կազմել Պոլսի հասարակութեան մէջ ծանօթ անձինքներից մի «օժանդակ կոմիտէ»: Որոշուեց այդ առիթով բանակցել Ջոհրաբի¹² հետ, յայտնելով նրա հետ հրաւիրելի անձանց ցուցակը:
6. Բանակցել պատրիարքական տեղապահի հետ, նպատակ ունենալով՝ լայնացնել Ազգային ժողովի ընտրութեան սահմանները, աւելի բարձրացնել ժողովի ազդեցութիւնը նրան ենթակայ գործերի մէջ, ու սահմանափակել պատրիարքի իրաւասութեան սահմանները:
7. Տպագրութեան յանձնել պատրաստուած շրջաբերականները, որոնք պիտի ուղարկուեն զաւառները եւ յանձնուեն մամուլին:
8. Գրել շրջաններին, որ պէտք է անմիջապէս զբաղուեն ժողովրդի ինքնապաշտպանութեան գործով (մանրամասները):

Որոշումներ քիւ 4

Օգոստոս 21, 1908

- Որոշուեց՝
1. Յանձնել տեղական կոմիտէին յատուկ մատեան, արծանագրելու մեր խմբերի եւ անդամների անունները (կեղծանունով), որպէսզի կարելի լինի ճշդօրէն որոշելու մեր ոյժերի քանակը եւ կազմը:
 Այդ մատեանի մէջ՝ պէտք է յիշատակել, որ անդամագրուողները պահել խօսքով պարտաւորուած են շիտակութեամբ հետեւել Դաշնակցութեան «Օրագրին» եւ «Կանոնագրին» եւ իրականացնել նրանց կեանքի մէջ:
 2. Պրոշիր բաժանել թաղերը, ըստ Կազմակերպականին, եւ իւրաքանչիւր թաղում առաջ բերել տեղական կոմիտէ, տեղական դաշնակցական կլուբ, ժողովներ եւ այլն:
 3. Տպագրել մեր ձեռնարկած ատենախօսութիւնների ցանկը: Հրապարակային ատենախօսութիւնների համար հրաւիրել, բացի մեր ընկերներից, թուրք, յոյն եւ հրեայ ու արաբ դասախօսներ, համերաշխութիւնը աւելի ամրապնդելու համար:
 4. Դասախօսութիւնների տեխնիկա[կա]ն կազմակերպութիւնը յանձնել մի յանձնախմբի, բաղկացած ընկերներ Վահագից, Դեւից եւ Շաւարշից:
 5. Հրատարակել յատուկ կոչ բանտարկեալների օգտին: Նպաստ տալիս ընդունել maximum 3 ոսկի: Բացառութիւն անելիս՝ հարցնելու է [Պատ.] Մարմնի կարծիքը:
 6. Գրել Արեւմտեան Բիւրոյին, անմիջապէս եւ պարբերաբար Պոլիս անցկացնել մեր գրքերը, պատկերները, եւ այլ հրատարակութիւնները, թէ այստեղ եւ թէ զաւառներում տարածելու համար: Երկու ընկերների թոյլ տալ հիմնելու մի յատուկ «գրավաճառանոց», ուր պիտի ծախուեն յատկապէս կազմակերպութեան հրատարակութիւնները: Այդ գրավաճառանոցը պիտի նկատուի իբրեւ մասնաւոր գործ:
 7. Յանձնուեց տեղական կոմիտէին կարգի բերելու մի office, որ վարձուած է Բեթրան[?] խանի մէջ:

Որոշումներ քիւ 5

Օգոստոս 27

- Որոշուեց՝
1. Պատրաստել մեր քաղաքական պահանջները, պլատֆորմ, միւս կուսակցութիւններին ներկայացնելու համար: Յանձնուեց ընկեր Ակնունուն:
 2. Պահանջել «Միութիւն եւ Յառաջադիմութիւն» մարմնից նրանց քաղաքական ծրագիրը:
 3. Խնդրել մակեդոն եւ յոյն կազմերից տեղեկութիւն այն մասին, թէ ինչ քաղաքական պահանջներ են ուզում առաջարկել ներկայումս:
 4. Հրաւիրել մի ժողով թուրք մարմինների հետ միասին, պարզելու ներկայ քաղաքական պահանջների հիմնական կէտերը:
 Ընկեր Ակնունի զեկուցեց այն բանակցութիւնների մասին, որոնք տեղի են ունեցել մեր եւ թուրք քաղաքական խմբերի միջեւ Պոլիս գալուց ի վեր:
 5. Ձեկուցուեց, որ տեղացի կարող անձանց մի խումբ, բաղկացած վեց հոգուց, յանձն են առել կազմել մի օժանդակ մարմին, աջակցելու Դաշնակցութեան եւ նրա ծրագիրներին: Այդ խմբին յանձնուեց մշակելու թուրքահայերի ընթացիկ պահանջները, քաղաքական, դպրոցական եւ այլ հարցերի վերաբերմամբ: Նրանց աշխատանքները պէտք է ներկայացնեն Պատասխանատու Մարմնի ժողովին:
 6. Որոշուեց կազմել կանանց կոմիտէ, որի գործը պիտի լինի պրոպագանդ սկսել հայ կանանց շրջանում, եւ եթէ կարելի է նոյն իսկ թրքուհիներու մէջ:

12.- Խօսքը Գրիգոր Ջօհրապի մասին է:

Փաստ. 192-1

Ա 3.- ՇՐՉԱԲԵՐԱԿԱՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Ընկերներ,

Ազատագրական շարժման առաջին յաղթանակը, արդիւնք տարինների չարքաշ աշխատանքի, անբաւ զոհերի եւ յեղափոխական արիւնոտ կռիւների տարուած է.— Օսմանեան կայսրութեան մի ծայրից միւսը հնչում է Ազատութեան, Հաւասարութեան, Եղբայրութեան կոչը: Երէկեան Հանրաբանտը վերածուած է ազատաշունչ երկրի: Մուսլ, երկչոտ դէմքերի տեղ երեւում են բերկրալից աչքեր. լուսութեան փոխարէն թափալուում է շարժում: աստ-լուսութեան ու քէնի աւերակների վրայ փչում է սիրոյ շունչը: Եւ ժողովրդական ամենադժբախտ խաւերն անգամ, սովոր ստրկի համակերպութեան, անտեղեակ ազատութեան վայելքի, շարժում, ծփում են ինչպէս փոթորկուած ալիքներ, նախանշանը քաղաքական աւելի երջանիկ օրերի:

Հանրային կեանքը կերպարանափոխուած է,— փողոցներում այլեւս չկայ երէկեան բռնապետութեան սոսկաբեր գործակալը,— Գաղտնի Լրտեսութիւնը: Բանտերը դատարկուած են: Ազատութեան մարտիկները, ենթակայ քաղաքական բանտարկութեան դժոխային ռեժիմի, ազատ օդումն են, գրկախառնուած ժողովրդի հետ, որին նրանք ա՛յնքան անձնուիրաբար ծառայեցին: «Ի՛է՛ պ բանտ» գողոցները իրանք են գնում բանտերը: Արտասուք տարածողները իրանք են ողբում: Շքագարդ փաշաներն ու մինիստրները, երէկեան ամենակարող տէրերը արքունիքի, կառավարութեան եւ երկրի, սողում են Յեղափոխութեան ոտքերի տակ, փախուստ տալիս ժողովրդական ցասման ճանկերից: Դերերը փոխուած են, եւ սկսուած է մի աւերմունք այն բոլորի, ինչ Յուլիսի 10ին, շնորհիւ բռնապետական ռեժիմի, նկատուած էր անսասան, անփոփոխ, յաւիտենական իսկ:

Սակայն լայնատարած բերկրանքի ընթացքում — ցաւ է ասել, եւ չենք թաքցնում — հին ռեժիմի յիշատակներից սարսափած ժողովուրդների տարբեր խաւերից դուրս են թռչում տարակուսանքի եւ երկիւղի տխուր բացազանչութիւններ՝ «Երկար պիտի տեւէ արդեօք»,— անարգալից խօսքեր նորաբողջ Ազատութեան համար, թոյն՝ յեղափոխական անդրանիկ յաղթութեան, խօսքեր, որոնք ռէակսիոն տարրերի ուժը կարող են կազմել, հիմքը նրանց քաղաքական նենգ ծրագիրներին:

Յեղափոխական ընկերներ,

Դուք որ ազատագրման գործի ու աշխատանքի ամբողջ գիտակցութիւնն ունէք, պարտաւոր էք, առանց ժամ կորցնելու, ըմբոստանալ այդ տատանման ու թերահաւատութեան դէմ՝ ձեր ամբողջ ոյժով, ձեր ձեռքերի տակ եղած բոլոր միջոցներով: — Մի երկիր — ասացէք ամէն տեղ ու ամէնքին — որ այսքան զոհեր տուեց ազատագրութեան — Հայ ժողովուրդը իր քսանամեայ կռուով ու զոհերով, Մակեդոնիան՝ իր լաւակազմ պայքարով, Արար-իան՝ իր հուժկու ապստամբութեամբ, եւ Երիտասարդ-Թուրքիան՝ իր լաւագոյն անդամների ողբերգական կորստեամբ,— ուր ամբողջ պատմութիւնն ու կեանքը վերածուած էին համատարած տանջանքի, լացի ու անէծքի — չէ կարող, իրաւունք չունի ենթարկուել թերահաւատութեան եւ տատանման, եւ կանգնած պիտի մնայ, մանաւանդ յաղթութեան այս յուսատու օրերին, իր ոյժի ու կռուի հպարտ գիտակցութեան վրայ, տէ՛րը՝ իր ապագայի, տնօրինողը՝ իր բախտի:

Ազատութիւնը արեամբ գնեցինք: Արեամբ էլ կը պաշտպանենք, եթէ տխուր հարկը ներկայանայ: Նա մերն է: Ոչ ոք նրան յետ խլել չէ կարող, որովհետեւ ոչ ոք իր կամքով չէ շնորհել: — Սա պիտի լինի հանգանակը ամբողջ ազգաբնակչութեան, խորարմատ համոզումը այն բոլոր ազգերի, որոնց այսօրուան անսահման ցնծութիւնը՝ երէկեան անսահման տանջանքի արձագանգն է միայն:

Արտապնդուած առաջին յաղթանակի այս խրախուսիչ փաստով, ոգեւորուած բռնալուծը թօթափող բոլոր ազգերի համերաշխութեան մեծ գաղափարով, յափշտակուած տարբեր ցեղերի ու կրօնների, բայց նոյն ցաւերին ենթակայ 24 միլիոն ազգաբնակչութեան վաղուան երջանկութեան հսկայ հեռանկարով, լի յարգանքով դէպի նահատակ-զոհերը, որոնք իրանց ծանօթ ու անծանօթ դամբարաններից խրախուսանքի դասեր են տալիս,— մնանք ամուր մեր յաղթավայրի վրայ, մնանք անսասան, աներկբայ, լի անճկուն կամքով, հպարտ այն գիտակցութեամբ, որ Ազատութեան դրօշակը տնկուած է Երկրի ծոցի մէջ մեր աշխատանքով, եւ նրան խլել, պոկել, վայր գլորել, չէ կարող քաղաքական ոչ մի մանէօվր, ոչ մի քմահաճոյք, ոչ մի խարդախ ոյժ:

Սա պիտի լինի, Ընկերներ, ձեր քարոզի, պրոպագանդի, ձեր ներշնչումների այսօրուան հիմնաքարը, ձեր ոգեւորութեան ու ազդեցութեան գլխաւոր նպատակակէտը:

Պայքարով, հաւատով ու համերաշխութեամբ ազատամարտի վտանգաւոր պտոյտներով անցանք: Արեան հո-

վիտները մեր յետին են: Մեր առջեւը, մերձաւոր հորիզոնի վրայ, Ազատութեան արշալոյսն է փայլատակում: Արիւնոտ կռուի բոպէներին, վհատութիւն չճանաչեցինք. նրան չպիտի ճանաչենք, եւ չենք ճանաչի այս գրաւիչ օրերին, երբ երէկեան հակայեղափոխականներն անգամ, մեծից մինչեւ փոքրը, իրանց կրծքին Յեղափոխութեան սրբանկարն են կրում, գունաւոր ժապաւէնը՝ Ազատութեան, Հաւասարութեան եւ Եղբայրութեան, մի նոր ու անսպառ աղբիւր գաղափարական պայքարի:

Կեցցէ՛ Յեղափոխութիւնը, կեցցէ՛ ազգերի Համերաշխութիւնը.
Կեցցէ՛ն ազատագրուած Թուրքիայի բոլոր ժողովուրդները:

Հ. Յ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

1908 Յուլիս 30, Կ. Պոլիս

Փաստ. 192-2

Ա 4.- ՇՐՉԱԲԵՐԱԿԱՆ Հ.Յ.Դ. Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

Յայրենակիցներ,

Տասնեակ տարիներ տանջակից ձեզի եւ բախտակից ձեր արիւնոտ ճակատագրին, մենք չդաւաճանեցինք ձեզ ու չմոռացանք ձեր տառապանքը. բողոքը մեր ատամներուն տակ ու ազատութեան բոցը մեր կուրծքին՝ նետուեցանք ամեն անգուք պայքարին մէջ եւ յարձակույնը կրկնեցինք անդուլ, անդադար՝ բռնակալութեան պարիսպներուն եւ անոնց անողորմ բերդապահներուն դէմ:

Ինկան մեզմէ սխրալի անթիւ դիւցազներ ու անհամար կտրիճներ,— բայց մենք չյուսահատուեցանք: Մեզի դէմ զինուեցան խաւարի ու մահուան բոլոր գորութիւնները եւ անօրութիւն ու բանտ, կախաղան ու գերեզման, նոյնիսկ հարազատ եղբոր արհամարհանքն ու թերահաւատ լքույնը շրջապատեցին մեզ ամեն կողմէ.— եւ սակայն շարունակեցինք մենք կռիւր:

Ազատութեան Գաղափարը մնաց անսասան եւ Յաղթութեան հաւատքը անխոցելի՝ մեր շարքերուն մէջ: Եւ մեր Գաղափարը յաղթանակեց ու մեր Յաւատքը կը ծաղկի ահա:

Դեռ երէկ բազմաթիւ էին անոնք, որ կը քարկոծէին մեր յոյսն ու զոհողութիւնը. դեռ երէկ հազարաւորներ էին մեր հաւանակորդները, որ կը տարակուսէին մեր գործունէութեան ու մեր անձնագոհութեան վրայ:

Եւ երբ Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ հաւատարիմ համերաշխութեան եւ ազգերու եղբայրութեան իր հիմնական սկզբունքներուն, արհամարհելով այնքան արգելք ու բազմադիմի դժուարութիւններ, վերջապէս կը յաջողէր ներկայ տարուան սկիզբները հայ եւ թուրք ընդդիմադիր տարրերու քունկրէն գումարել Փարիզի մէջ, ի՛նչ հալածանք, ի՛նչ նախատիմք եւ կրքերու ի՛նչ փոթորիկ իր դէմ անարժան հակառակորդներու կողմէ:

Եւ ահա Այսօրը կու գայ վկայել՝ թէ պարապ վատնուած չեն ո՛չ մեր արիւնը, ո՛չ մեր ծիգը, ո՛չ մեր անձնուիրութիւնը: Այսօրը կու գայ վկայել, թէ Հ.Յ.Դաշնակցութիւնը՝ միակը հայ կազմակերպութեանց մէջ, ստեղծելով Թուրքիոյ բոլոր դարապիտուն բացման, այլ եւ հիմը դրաւ մեծ ու ստեղծագործութեան յղի ապագայի մը:

Թող ուրեմն անհետանան ինքնակալութեան բոլոր վատնուն մնացորդները ժողովուրդներու գիտակցական զարթունիւն եւ եղբայրական դաշնակցութեան առջեւէն:

Թող ուրեմն Արդարութեան, Ազատութեան Եւրոպայի հաւասարութեան գաղափարը գրաւէ՛ աւելի ու աւելի Թուրքիոյ բոլոր ազգերը:

Թող ուրեմն մեր արիւնն ու արցունքը խեղդէ՛ բռնաւորները եւ լայնատարած Երկրին բոլոր անկիւններէն ու միլիոնաւոր շրթունքներէն բարձրացող ցնծութեան, ազատութեան եւ սիրոյ աղաղակները դատապարտութիւնը, գերեզմանն ըլլան սեւ Անցեալիս:

Եւ թող Հ. Յ. Դաշնակցութեան՝ Ազատութիւն, Արդարութիւն եւ Ազգերու Համերաշխութիւնն ընդհանրաբար, ընդհանրաբար ըլլալ նաեւ Երկրին բոլոր ազատասէր զաւակներուն, արիւնաքամ բոլո՛ր աշխատաւոր ժողովուրդներուն:

Կեցցէ՛ Յեղափոխական Գաղափարը,
Կեցցէ՛ն ազատ ժողովուրդները եւ ազատ Յայրենիքը,
Կեցցէ՛ Յայ Յեղ. Դաշնակցութիւնը:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

Կ. Պոլիս, 2 Օգոստոս 1908

Փաստ. 192-3

**Ա 5.- ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ
Հ.Յ.Գ. Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻՆ**

Դաշնակցութեան Կ. Պոլսոյ Պատասխանատու Մարմինը, նկատի ունենալով սահմանադրական կարգերու ներմուծմամբ ստեղծուած նոր պայմանները, կը յայտարարէ հետեւեալը.

Ա) Այն բոլոր ընկերները, որոնք կը պատկանէին Կազմակերպութեան, բայց բանտարկուած կամ աքսորուած էին, այժմ ազատ ըլլալով, պէտք է շտապեն անմիջապէս մտնել պատկանեալ խմբերու կամ կոմիտէներու մէջ:

Բ) Բոլոր խմբերն ու կոմիտէները պէտք է վերակազմուեն՝ համաձայն Դաշնակցութեան «Կանոնագրի» (որոնց օրինակները կրնան խնդրուիլ Արեւմտեան Բիւրոյէն կամ Կեդրոնական Կոմիտէներէն):

Գ) Կուսակցութեան մարմինները հրամայական պարտք ունին, առանց յապաղելու, ձեռնարկել մարտական ու քաղաքական խմբերու կազմութեան, իրագործելու համար այն ձեռնարկները, որոնք կրնան ծրագրուիլ Պատասխանատու Մարմիններու կամ Կեդրոնական Կոմիտէներու կողմէ:

Դ) Ձեռնարկներու ու թիւրիմացութիւններու տեղիք չտալու համար, բոլոր մարմինները պարտաւոր են դեկավարուել «Կանոնագրով», թէ իրենց ներքին յարաբերութիւններու, թէ ոեւէ ձեռնարկներու մէջ, եւ թէ դրամական հարցերու վերաբերմամբ:

Առիթէն կ'օգտուինք յիշեցնելու բոլոր ընկերներուն, որ համաձայն Ընդհանուր Ժողովի շեշտուած ցանկութեան, Կազմակերպութեան շարքերու մէջ պիտի չընդունուին այնպիսիները՝ որոնք իրենց անձով կամ քայլերով կրնան արատ բերել Դաշնակցութեան անուան եւ հմայքին: Ընդհակառակը, անշիտակ եւ կազմակերպութեան անունը շահագործելու միտումներ ունեցող անձինք, ո՛վքեր եւ ըլլան, պիտի հեռացուին կազմակերպութեան շարքերէն:

**Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻՆ**

Կ. Պոլիս, 3 Օգոստոս 1908

Ա 6.- ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Հ. Յ. Դաշնակցութեան Պատասխանատու կոմիտէն Տաճկաստանի հայ ժողովրդին բացառիկ վիճակը ի նկատի ունենալով, շրջաբերական յայտարարութիւնով մը կը պահանջէ սահմանադրական կառավարութենէն հետեւեալ միջոցներու իրագործումը:

- 1) Ազատ երթեւեկում հայկական նահանգներու մէջ:
- 2) Վերադարձումը հայ գիւղացիներու հողերուն, որոնք վերջի ժամանակներս գրաւուած էին:
- 3) Ձեռնարկ 1895-1908 տարիներու ընթացքին մէջ հայ ժողովրդի դէմ՝ ստեղծուած հալածողական միջոցներուն:
- 4) Ազատ արձակումը քաղաքական հայ բանտարկեալներուն եւ վերադարձ քաղաքական բոլոր աքսորեալներուն:
- 5) Վերադարձ հայ գաղթականներուն, որոնց թիւը կ'անցնի 90 հազարը:

Ասոնցմէ գատ Դաշնակցութիւնը, որ Թուրքիոյ մէջ կը գործէ 18 տարիներէ ի վեր, որոշած է միւս ազգութիւններու պատկանող կուսակցութիւններուն հետ համերաշխաբար ի գործ դնել բոլոր իր ուժը, ձեռք բերելու համար կատարեալ ազատութիւն ընտրութիւններու ատեն եւ սահմանադրութեան վերաքննութիւն վարչական ապակեդրոնացման ուղղութիւնով:

**Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻՆ**

Փաստ. 191-20

Ա 7.- ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆԵՐՈՒՆ

1908, 22 Օգոստոս

Ընկերներ,

Հ.Յ.Դ. Պատասխանատու մարմինը արդէն իսկ համաձայնութեամբ թուրք կոմիտէներու՝ ձեռնարկած է գործի եւ ընթացք կու տայ կազմակերպական ու այլ կարեւոր հարցերու: Եւ որպէսզի կարողանայ արդիւնաւոր կերպով առաջ տանիլ իր աշխատութիւնները, կը խնդրէ ձեզմէ որ բարի ըլլաք յարաբերութեան մէջ մտնել մեր հետ եւ անյապաղ պատասխանել հետեւեալ հարցերուն:

- 1) Ի՞նչ դրութեան մէջ է ձեր շրջանի հայ ազգաբնակչութիւնը:
- 2) Ի՞նչ վիճակ կը ներկայացնէ հայ եւ թուրք հասարակութեանց յարաբերութիւնը:
- 3) Կա՞ն ձեր վայրին մէջ թուրք կոմիտէներ. եթէ այո, մտէք անոնց հետ շուտով յարաբերութեան մէջ:
- 4) Ո՞րքան բանտարկեալներ ազատ արձակուած են եւ արդեօք կա՞ն տակաւին չարձակուած քաղաքական հայ բանտարկեալներ (եթէ այո՛, փութով հաղորդել մեզ անոնց անունները եւ պարագաները մանրամասնաբար):
- 5) Ի՞նչ է կազմակերպական վիճակը. քանի՞ ընկերներ ունինք:
- 6) Կազմակերպական ի՞նչ պէտքեր եւ այլ անհրաժեշտութիւններ ունինք:

Սպասելով ձեր պատասխանին, կը խնդրենք, առանց ժամանակ վատնելու, սկսիլ խաղաղ բայց կորովի պրոպականտի, կազմակերպելով նախ մեր ցրուած ուժերը եւ միաժամանակ հասարակութեան լայն խաւերը, տարածելու համար անոնց մէջ մեր ծրագրային սկզբունքներն ու հայեացքները: Նկատի ունենալ մանաւանդ խորհրդարանական ընտրութիւններու մօտալուտ հանգամանքը եւ ժողովուրդը պատրաստել ըստ այնմ, որպէսզի գիտակցական քուէով մասնակցի ընտրողական պայքարին՝ արժանաւոր երեսփոխաններու միջոցով կարենալ իր իրաւունքները պաշտպանելու: Այս մասին շուտով կը հաղորդենք ձեզի նաեւ առանձին հրահանգներ:

Լիայոյս ենք որ մեր կազմակերպութիւնը՝ համերաշխաբար մեր պաշտօնակից թուրք կոմիտէներուն՝ կարող պիտի ըլլայ իրագործել ազատութեան եւ արդարութեան այն պահանջները՝ որոնց համար չխնայեց տարիներու անսահման զոհաբերութիւնը: Դուք կրնաք արդէն անպայման վստահիլ Դաշնակցութեան բարոյական ոյժին, որ այս պահուս ինքն է կացութեան տէրը եւ ի վիճակի՝ ամէն կերպով աջակցելու իր ընկերներուն եւ գոհացում տալու անոնց պէտքերուն:

Ընկերական բարեկեցութեամբ
Հ.Յ.Դ. Կ. ՊՈԼՍՈՅ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻՆ

Մեր հասցէն
Mr. Aknouni
Poste Restante Française
Constantinople



Ա 8.- ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ – ՆԱՄԱԿ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Ընկերներ,

Ձեզի ղրկեցինք արդէն այն շրջաբերականները, որոնք կը վերաբերէին մեր ընթացիկ գործերուն: Այս օրերս կը ղրկենք նոյնպէս Դաշնակցութեան «Մրազիրն» ու «Կանոնագիրը», տարածելու համար կազմակերպական շրջաններու մէջ:

Ներկայ գրութեամբ կը խնդրենք ուշադրութիւն դարձնել հետեւեալ անյետաձգելի պէտքերուն վրայ. 1) Վերակազմել կեդրոնական վայրերու մարմինները, եւ ապա յատուկ ընկերներու ձեռքով կազմակերպելով իւրաքանչիւր շրջանի աւաններն ու գիւղերը, բոլոր խումբերը, ենթակոմիտէները եւ կոմիտէները կանոնաւոր յարաբերութեան մէջ դնել:

2) Ընկերական յարաբերութիւն կապել «Միութիւն եւ Յառաջդիմութեան կոմիտէի» եւ «Ապակեդրոնացման ու Սահմանադրութեան Լիգայի» հետ, եւ ձգտիլ միացած ուժերով ազդելու՝ երկու ժողովուրդներու հաշտ տրամադրութեան վրայ:

3) «Մակեդոնական յեղափոխական կազմակերպութեան» ներկայացուցիչներ ու խումբեր գտնուած վայրերուն մէջ, յարաբերութեան մտնել անոնց հետ՝ համաձայն այն բարեկամական կապին, որ գոյութիւն ունի մեր եւ անոր միջեւ:

4) Ընկերաբար ընդունիլ թուրք կոմիտէներու այն ներկայացուցիչները, որ կու գան մեր յանձնարարականով, եւ աջակցիլ անոնց՝ համաժողովրդական յարաբերութիւնները աւելի ամրապնդելու համար:

5) Թուրք կոմիտէներու հետ միացած՝ զսպել ու սանձել այն մութ ու յետադիմական տարրերը, գործակալներ հին ռեժիմին, որոնք կը փորձեն պղտորել ազգերու յարաբերութիւնները եւ առաջ բերել անխիստական վիճակ՝ տապալելու համար սահմանադրական կարգերը:

6) Կազմակերպական ու հանրային միջոցներով ինքնապաշտպանութեան վիճակի մէջ դնել մեր ժողովուրդը, դիմադրելու համար, ի հարկին, մութ տարրերու:

7) Կազմակերպել հրապարակային ատենախօսութիւններ, պարզելու համար ժողովուրդին՝ նոր ռեժիմի հիմքերը եւ Դաշնակցութեան ծրագիրը: Յանկալի է նոյնը ընել եւ թուրքերու հետ միասին:

8) Պրոպագանդ ընել քիւրտերու մէջ, ամէն կարելի միջոցներով, հասկցնելու համար անոնց՝ սահմանադրական կարգերու հանրաշահ նպատակը եւ մեծ օգուտները:

- Ասոնց հետ միասին կը խնդրենք հաղորդել մեզի մանրամասն տեղեկութիւններ թէ՛
- ա) Ի՞նչ վիճակի մէջ են ձեր շրջանի ժողովուրդներու յարաբերութիւնները:
 - բ) Բանտերուն մէջ կա՞ն արդեօք քաղաքական բանտարկեալներ, թէ բոլորն ալ ազատուած են արդէն: Ի՞նչ է անոնց վիճակը:
 - գ) Կ'երեւնա՞ն արդեօք ձեր շրջանին մէջ հին ռեժիմի գործակալներ, որոնք գաղտնի պրոպագանդ կ'ընեն մտքեր պղտորելու համար:
 - դ) Որքա՞ն անդամներ ունի Դաշնակցութիւնը:
 - ե) Ի՞նչ անմիջական պէտքեր ունիք, որոնց հարկաւոր է այժմ եւեթ բաւարարութիւն տալ:

Լիայոյս, ընկերներ, ձեր ջանքերուն եւ եռանդին վրայ՝ ներկայ կարեւոր ըրպէին, երբ հարկաւոր է երկիրը իր ամբողջ ազգաբնակչութեամբ առաջնորդել դէպի Համերաշխութեան, Եղբայրութեան եւ Ազատութեան գաղափարը, կը խնդրենք նաեւ չմոռնալ եւ այն, որ Դաշնակցութեան շարքերուն մէջ մոռտք չպիտի գործեն հակաօրինակ, կասկածելի տարրեր: Վատերը պէտք է հալածել մեր շարքերէն եւ միշտ բարձր պահել Կուսակցութեան մէջ մաքրութեան, կարգապահութեան եւ անձնուիրութեան դրօշը:

Ընկերական ջերմ բարեւներով
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
Կ. ՊՈԼՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

Ա 9.- ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ – ՆԱՄԱԿ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Ընկերներ,

Մեզ հասած նամակներն ու հեռագրական տեղեկութիւնները կը մատնանշեն այն հանգամանքը թէ հայկական նահանգներու մէկ քանի վայրերուն մէջ հայ ժողովուրդը տակաւին վստահութիւն չունի նոր ռեժիմին նկատմամբ եւ կը մնայ կասկածի ու անվստահութեան ենթարկուած:

Այս վարանման պատճառները, ի միջի այլոց, այն է՝ 1) Որ հակառակ եղած խոստումներուն, դեռ շատ տեղեր կը շարունակեն պաշտօնավարել հին կարգերու անձնուէր գործակալներ, հարստահարիչ ու բռնաւոր պաշտօնեաներ:

- 2) Որ զանազան պաշտօնեաներ չեն դադրիլ զրգուելէ մէկ ժողովուրդ միւսին դէմ:
- 3) Որ ահագին տարբերութիւն նկատելի է Պոլսոյ մէջ տիրող տրամադրութեան եւ գաւառներու իրական վիճակին մէջ:
- 4) Որ այլեւայլ պէյեր, ցեղապետներ, վալիներ ու գայմագամներ կը շարունակեն հին ձեռքով խրոխտալ, սպառնալ եւ ի հարկին ծաղրել նոր կարգերը:

- Ընկերներ,
- Բոպէ պէտք չէ կորսնցնել վերջ տալու այդ անհանգիստ ու ծանր կացութեան: Ուստի կը խնդրենք ջանալ, ձեր ձեռքի տակ եղած բոլոր միջոցներով հաւատք ներշնչել ժողովուրդին՝ դէպի ազատութեան յաղթանակը, բերելով այն գիտակցութեան, որ քանի բոլոր ժողովուրդները կը մնան համերաշխ ու պատրաստ պաշտպանելու իրենց իրաւունքները՝ հին ռեժիմը չի կրնար գլուխ բարձրացնել եւ կը մնայ թաղուած ընդմիշտ:
- Միեւնոյն ատեն կ'առաջարկենք բոլոր մեր մարմիններուն եւ ընկերներուն, երբ տեղական միջոցները բաւարար չեն ըլլար զսպելու չարիքը, շտապեն հեռագրով ու նամակով տեղեկացնել մեզի՝
- ա) Պաշտօնեաներուն բռնութիւնները եւ անիրաւութիւնները, իրենց բոլոր մանրամասնութիւններով:
 - բ) Անուններն ու գործողութիւնները այն բոլոր անձերուն, որոնք, իբրեւ ռէաքսիոնի գործակալներ՝ կը փորձեն առաջ բերել ընդհարումներ ու իրարանցում:
 - գ) Բռնութեան, սպառնալիքի ու կամայականութեան բոլոր դէպքերը, որոնք տեղի կ'ունենան գաւառներու մէջ, հակառակ նոր կարգերու տրամադրութեան:

Մենք այդ բոլոր գեղծումները՝ գեղծարարներուն անուններով միասին, ինչպէս եւ բոլոր հարկաւոր մանրամասնութիւնները անմիջապէս կը հաղորդենք սահմանադրական նախարարութեան, ջանալով կարելին ի գործ դնել՝ ձեռք բերելու համար անմիջական կարգադրութիւն եւ հեռացումը գեղծարարներուն:

Երկիւղի տեղիք չկայ: Եթէ ո՛րեւէ պաշտօնեայ կամ անձ կը փորձէ սպառնալ անոնց, որոնք գեղծումները Կ. Պոլիս հաղորդելու քաղաքացիական քաջութիւնն ունին, պէտք է հաղորդել մեզի նոյնպէս այդպիսիներուն անունները, որպէսզի ժողովրդական իրաւունքներուն դէմ դաւեր սարքողները ենթարկուին արժանի պատիժի:

Ընկերներ, շտապեցէք տեղեկագրել այս բոլորը ճշգրտէն, բարեխղճութեամբ, մանրամասնօրէն. եւ մենք հաստատ յոյս ունինք որ կարող պիտի ըլլանք կտրուկ միջոցներով զսպել այն բոլոր տարրերը, որոնք կ'երագեն դեռ ապրիլի ի հաշիւ ժողովրդական ստրկութեան ու երկիւղի:

Ընկերական բարեւներով

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

Փաստ. 786-91

Ա 10.- ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ ԹՐՔԱԿԱՆ ՅԵՂԱՇՐՋՄԱՆ ՄԱՍԻՆ

Արխիւներուն մէջ գտնուող այս փաստաթուղթը թուական չի կրեր. մատիտով վրան գրուած է «1908 ամառը»: Բովանդակութիւնը եւս ցոյց կու տայ որ նոր է տեղի ունեցած օսմանեան յեղաշրջումը եւ Սահմանադրութեան հռչակումը: Գրութիւնը ուղղուած պէտք է ըլլայ Պոլսոյ Պատ. մարմնին:

CABINET
DE
M^e KIRCOR ZOHRAB
Lagiverd Han
GALATA

Պարոններ,
Խոստացեր էի որ Պոլիս դառնալու մօտէն հետեւիմ թուրք յեղափոխական շարժումին եւ գործունէութեան՝ հասկանալու համար թէ ո՞ր աստիճան կրնայ հաւատարմութեամբ իրագործման: Ասիկա ժէօն թուրքերուն զանազան քումիթէներուն եւ միանգամայն ուրիշ ամէն դասակարգի թուրքերուն ներքին համոզումները եւ զգացումները զննելու կը կարօտէր: Երկուշաբթի ցորեկին հասայ հոս եւ մինչեւ այսօր կատարած քննութեանցս արդիւնքը հետեւեալն է: Ժէօն թուրքերը եւ ուրիշ ամէն դասակարգի թուրքերը անկեղծ երեւցան ինծի՝ ոչ միայն հայերուս իրաւունքները ճանչնալու եւ յարգելու խոստումներուն մէջ, այլ նաեւ մեզի հանդէպ ցուցուցած այն եռանդոտ համակրութեանը մէջ, որով արիւնալի անցեալի մը հետքը ջնջելու կը բաղձան: Զգացի իսկոյն որ թուրքերուն մեզի մօտութիւնը հիմա շատ աւելի է քան թէ յոյն, պոլիկար եւ հրեայ ազգութեանց ցուցուցած համակրութիւնները: Իմ կարծիքովս՝ խելացութիւն պիտի ըլլայ օգտուիլ այս պարագային: Կառավարական մարմիններուն գալով, անոնք անգոյ են ու վերակազմելու վրայ այն մարդոցմէ գորս «միութիւն եւ յառաջդիմութիւն քումիթէն» կը բաղձայ տեսնել պաշտօնի վրայ: Ուրեմն իրօք, կառավարութիւնն այսօր այս քումիթէի ձեռքն է, ինչպէս նաեւ ժողովուրդն ալ իր ձեռքն է հոս: Իսկ Սուլթանը քուրջի կտորի մը վերածուած՝ որուն վերջին ապաւէնը — յորմէ հետէ իր աւերիչ պալատականներն ու նախարարները վտարուեցան եւ բանտարկուեցան — իր պալատի շուրջը կեցող գինուորներուն երկբայելի հաւատարմութիւնն է: Ասով հանդերձ այս եւ ուրիշ տեղի գինուորներուն՝

Constantinople, le _____ 1908

Սուլթանին անձը պաշտպանելու տրամադրութիւնը՝ — ասոր ապացոյցը հտիրենէի մէջ տեսնուեցաւ — ներկայ կացութեան նժարին մէջ ոչ արհամարհելի կշիռ մը կը ներկայացնէ. այս է պատճառը գուցէ որ թուրք քումիթէն ալ իսկոյն վրան խոյանալէ եւ գինքը գահընկէց ընելէ կը վարանի, եւ սահմանադրութիւն եղծանելու համար անոր ի գործ դրած պզտիկ խարդաւանքներուն շատ կարեւորութիւն չտալով՝ ամէն պէտք եղած բաները տակաւ եւ մեղմութեամբ ձեռք անցնելու եւ գինքը առանձնութեան մէջ շրջափակելու կ'աշխատի: Այս կերպ գործելը՝ որ արիւնահեղութեանց տեղի չի տար եւ ինչպէս նաեւ տեղի չի տար օտար միջամտութեանց, արդիւնաւոր եղած է ցարդ: Մեզի գալով՝ թէ եւ թուրք հասարակութիւնը եւ քումիթէները մեզի դէմ ճշմարիտ սիրով մը վերաբերուած են միշտ, ասով հանդերձ՝ որովհետեւ ամէն ոք պարտաւոր է իր իրաւունքին ինքը տէր ըլլալ եւ հսկել, եւ ոչ թէ գայն ուրիշէ մը իբրեւ շնորհ կամ ողորմութիւն մը ակնկալել, հարկաւոր նկատեցի ամէն դասակարգի հայերէ քաղաքական քիւլա մը կազմել սահմանադրական քիւլա անունով, եւ տաճիկները չխորշեցնելու համար «Օսմ.» բառն ալ քովը դնել: Իր ջանքը պիտի ըլլայ Օսմ. կառավարութեան մէջ մեր գործակցութեան իրաւունքները լիովին պահպանել: Ասոր հետ մէկտեղ Նոր Օր անունով թերթ մը պիտի հրատարակեմ քանի մը օրէն Պոլսոյ անկեալ հայ լրագրութեան մակարդակը բարձրացնելու եւ քիչ մըն ալ քաղաքական որոշ ուղղութիւն մը հաստատելու համար մտքերու մէջ: Հիմակուհի մեր դիւանագիտութիւնը եւ ճարտարութիւնը՝ մեզի ցոյց տրուած սէրն ու համակրութիւնները աւելի եւս ամրացնելով անոնցմէ օգտուելու, եւ ազգային իրաւունքներնուս աւելին ձեռք բերելու մէջ պէտք է կայանայ: Միայն թէ — թէ որ մօտ օրէն Սելանիկի մէջ իրօք յեղափոխական բոլոր մարմինները պիտի գումարուին

congrès-ի ձեւով որով հոն գրեթէ դաշինք մը պիտի դրուի, հոն պէտք է որ մեր հնարամտութիւնը եւ կարողութիւնը ցոյց տանք: Թէ ի՞նչ պէտք է պահանջել եւ ի՞նչ ձեւով բերանացի [կը] բացատրեմ ատոնք Քէոս-թենճէի մէջ: Եթէ կրնամ օգտակար ըլլալ մեր պատուիրակներուն ըսի որ պատրաստ եմ իրենց մօտ գալու եւ իմ ջնջին հմտութիւնս այս գործերուն մէջ՝ մեր դատին ծառայեցնելու: Պէտք է իսկոյն աւելցնեմ որ թուրք քումիթէներուն մէջ իսկ վէճի նիւթ եղող ապակեղրոնացման խնդրոյն

վրայ կարելի եւ օգտակար է իրաւախոհական կարգադրութեան մը յանգիլ, քան թէ դէպի խզում երթալ: Որովհետեւ Տաճկաստանի հայութիւնը իր տառապանքներուն ու զոհողութիւններուն վերջին սահմանին հասած է, հոն՝ ուր փճացումը կը սկսի ալ: Ներկայ վիճակը անակնկալ մըն էր որ հասաւ եւ շունչ առնել տուաւ իրենց:

Փաստ. 1272-88

Ա 11.- ԶԱՊԵԼ ԵՍԱՅԵԱՆ ԹՐՔԱԿԱՆ ՅԵՂԱՇՐՋՄԱՆ ՄԱՍԻՆ

6 Օգոստոս 1908

3, B^e de Port-Royal
Paris

Սիրելի եւ ազնիւ եղբայրներ,

Մեծ ուրախութեամբ լեցուած մեր բանտարկեալ եղբայրներուն ազատութեանը համար այս մէկ քանի տողերը կը գրեմ շնորհաւորելու համար ձեզ այն յաջողութեան համար որ ձեր հեռատես եւ գիտակից գործունէութիւնը ունեցաւ: Անտարակուսելի է որ Հ. Յ. Դաշնակցութեան թուրք յեղ. կումիտէներու հետ միացումը մեծ ուժ մը տրուաւ այս վերջիններուն եւ որուն առաջին արդիւնքն է Օսմ. Սահմանադրութեան հաստատումը. գիտեմ որ մեր գործը ասով չի վերջանար եւ թէ այս յաջողութիւնը պարզապէս մեր պայքարը կը դիւրացնէ եւ կարելի կը դարձնէ ուղղակի գործունէութիւն մը երկրին մէջ, մեր հողին վրայ, նոր պահանջներուն համապատասխան պայմաններով: Նոր յաջողութիւններ եւ քաջութիւն մաղթելով ամէնուէր կը խնդրեմ որ ընդունիք անհուն շնորհակալութիւններս ինծի դրկած գիրքերնուդ եւ Դրօշակ թերթին համար. այս առթիւ կը խնդրեմ որ հետզհետէ նամակ, գիրք կամ թերթ հաճիք դրկել նոր հասցէիս որ պիտի գտնաք նամակիս վերեւ:

Ձերդ համակրանքով եւ յարգանքով

Փաստ. 851-9

Ա 12.- ՏՈՔԹ. ՍՈՒՐԷՆ ՆՇԱՆԵԱՆ ԹՐՔԱԿԱՆ ՅԵՂԱՇՐՁՄԱՆ ՄԱՍԻՆ

Պոլսոյ Պատ. մարմնին ուղղուած նամակ է. ստորագրողը՝ Տոքթ. Ս. Նշանեան անդամ էր Կեսարիոյ Կոմիտէին (Բարձր-Սար):

Ա. Ընդհանուր տեսութիւն

Սահմանադրութեան հրատարակուելէն ի վեր ամէնէն ուշագարաւ դէպքերը թուրք ամբոխի կողմէ հայերու դէմ եղած ատելութեան ցոյցեր էին, որոնց արձագանգ տուաւ նաեւ Պոլսոյ հայ մամուլը, որ դէպքերը եւ պարագաները թեթեւ գոյնով ներկայացուց հասարակաց ողջմտութիւնը չվիրաւորելու համար. ինչ որ բացայայտ է, ժողովուրդի աշխատութեան արդիւնքը շահագործող եւ ձրիաբար վայելող թուրք աղաներ եւ պէկեր՝ իրենց շահերուն կամ ապրուստի միջոցներուն վտանգի ենթարկուելը իրաւամբ Սահմանադրութեան վերագրեցին: Առ այժմ թէեւ ազատական բուռն հոսանքին առջեւ այդ ձրիակեր դասակարգը գլուխ կը ծռէ եւ Ովսաննաններ կը կարգայ յանուն ազատութեան.- սակայն վստահ ըլլալու ենք թէ անոնք առ երես ցոյցեր են: Թուրքիոյ մէջ պահպանողական ստուար բանակ մը կայ, որ անհաշտ ատելութիւն մը կը սնուցանէ դէպի նորածին սահմանադրութիւնը եւ առիթ կը փնտռէ իր օրօրոցին մէջ իսկ խեղդել գայն: Ինչպէս Ելլուրզի մէջ ապաստանած հրէշներ նոյնպէս գաւառներում համիտապաշտ ամբոխք սահմանադրութեան ճաշակումով անակնկալի մը առջեւ գտնուեցաւ եւ կորսնցուց դատելու կարողութիւնը: Հեղինակութիւն ունեցող պէկի մը, պարագլուխի մը մէկ խօսքը, մէկ հրամանը կարող է ուշաթափել այդ բանակը եւ անոնցմէ պատրաստել սեւ հարիւրակներ աւելի յանդուգն եւ աւելի կատաղի քան ուռու մուտիկը:

Կեսարիա եւ Եոզղաթ հասարակ ժողովուրդը աւելի տրամադրութիւն ունի հաւատալու թէ սահմանադրութիւնը իսլամ կրօնքի եւ թագաւորի գոյութեան կը սպառնայ եւ տգէտ մեծամեծներ կ'աշխատին օգտուել ամբոխի այս պարզամիտ տրամադրութիւններէն, ինչպէս պատահած դէպքեր կ'ապացուցանեն այս իրողութիւնը. Կեսարիոյ թուրքերը նոյնիսկ յանդգնութիւնը ունեցած են ջարդ մը կազմակերպել հայերու դէմ. Լիվան վերահասու կ'ըլլայ թուրքերու այս խորհուրդին եւ կարող կ'ըլլայ արգելել: Սակայն ո՞վ կրնայ ապահովել մեզ թէ, նոյնիսկ ազատական ձեւացող լիվաններ եւ պաշտօնեաներ, առաջին առթիւ պահպանողական չպի-

տի դառնան. փոխուեցա՞ն ասկէ մի քանի ամիս առաջ Համիտը եւ Իզզէթը իբր աստուած պաշտող եւ անոնց հրամանները անկեղծօրէն եւ ի բոլոր սրտէ կատարող սրիկայ պաշտօնեաներ: Ուրեմն, թէ՛ թուրք ամբոխի, թէ՛ պաշտօնեաներու մեծամասնութիւնը պատրաստ միջավայր մը կը ներկայացնեն պահպանողական բրոքականտի, որոյ հետեւանքը կը լինի Réaction մը ինչպէս եղած է ի Ռուսիա եւ կ'ըլլայ ի Պարսկաստան: Մինչեւ հիմա եղած ազգերու յեղափոխութիւն(ներն) ալ կը վկայեն այս պատմական ճշմարտութիւնը. պէտք է պատրաստ գտնուինք, եւ այս հակահարուածին դիմադրելու համար ամենակտրուկ միջոցներու դիմենք. կը տեսնենք եւ ի լուր կ'իմանանք թէ տեղեր կան ուր տակաւին հին կարգերը երբեք փոխուած չեն, անշուշտ փտած ռեժիմ մը չէ կարելի 1-2 ամսուայ ժամանակամիջոցին նորոգել: Սակայն կը սպասենք որ քայլ մը առնուի, կամ գոնէ լաւ վերաբերմունք մը ցոյց տրուի, տեղական վարչութեանց կամ թուրք ժողովուրդի կողմէ դէպի նոր սիստեմը: Լաւատես մը ըլլալով հանդերձ, բացարձակ իրականութեան առջեւ գտնուելով կը ստիպուի այսքան յոռետես տրամաբանութեան հետեւիլ:

Ի՞նչ պիտի ըլլայ յեղափոխութեան դերը այսպէս քրիթիկ ժամանակներուն. Դրօշակի էջերուն մէջ կը կարդամ թէ յեղափոխութիւնը ասկէ վերջ խօսքի, գրչի եւ ազատ մամուլի միջոցաւ պիտի աշխատի իրականացնել իր պահանջները: Կարելի՞ է այսքան միամիտ ըլլալ այսպէս պարագաներուն, ընդհակառակը ասկէ վերջ է որ ժամանակ մը եւս պէտք պիտի ունենանք նախորդ յեղափոխութեան հարազատ միջոցներուն: Երբ տակաւին այնքան վտանգներ կան մեր առաջ. երբ տակաւին հազար հրաւէր կարող են փչացնել այսքան թանգ գնով գնուած խօսքի ազատութիւնը, ինչո՞ւ մեր յեղափոխական կարողագոյն եւ անձնուէր ընկերներ Պոլիս կը մնան. «երկաթը տաք տաք ծեծելու է» կ'ըսեն: Երբ տակաւին հայ ժողովուրդը յեղափոխութեան յաջողութեամբ կը գինովնայ, երբ ամէն անհատ յեղափոխականի անունով միայն կը հմայուի եւ խօսքի մը միայն կը սպասէ յեղափոխական բանակին միանալու, ինչո՞ւ ամբողջ ժողովուրդը մը այսպէս հիբնոսացած վիճակի մէջ ձգելով մեր բրոքականտիստները կը մնան վոսփորի

գեղածիծաղ ափերում: Մամուլը, լսարաններու եւ քիւլակներու բեմերէն խօսուած ատենաբանութիւնները կարող են կազմակերպել ժողովուրդը մը եւ ընդունակ ընել գայն ժամանակի պահանջներուն, որոնց բոլորովին անտեղեակ է հայ գիւղացին, նոյնիսկ քաղաքացին եւ այս անտեղեակ ըլլալուն պատճառաւ մենք կը տուծենք քաղաքականապէս:

Բ. Երեսփոխանական ընտրութիւններ:-

Ընտրողական պայքար.- բան մը որ ոչ գոյութիւն ունի ոչ իմաստ հայ գիւղացիի համար. այն անհատներ որք բռնապետութեան միջոցին, ազդեցութիւն ունեցած են ժողովուրդի վրայ, կը համոզէ կամ կը հրամայէ քուէ տալ այսինչ մարդուն եւ գիւղացին կու տայ, կարծելով թէ ստիպուած է տալ. գէթ այսպէս եղած է Եոզղատի Սանճագի մէջ ուր 13-15 հայ ընտրողներ կային եւ իրենց քուէն հայ ընտրելի մը վրայ կրնային կեդրոնացնել: Առաջնորդները այս մասին իրենց խորտուիլակի դերը յաջողօրէն կատարեցին. բոլորովին անտարբեր գտնուեցան, կարծես աւելի գոհ էին եւ հանգիստ բռնատիրական կառավարութեան տակ: Այսպէս առաջին անգամ ըլլալով չկրցանք կամ չգիտցանք գործածել մեր ոյժերը.- ընտրողական պայքարի մէջ մեր իրաւունքները պաշտպանելու համար. այս ապացոյց մ'է թէ մեր ժողովուրդը տակաւին շատ խակ եւ անընդունակ է իբր որոշ մի քաղաքական տարր գործելու:

Այս առիթը փախցուցինք սակայն յաջորդ երեսփոխութեանց մէջ յաջողելու համար յեղափոխական ընկերութիւնք պէտք է աշխատին կազմակերպել հայ գիւղերը ոչ թէ իբր գիտակից յեղափոխականներ այլ գոնէ գիտակից կազմակերպութիւններ, որ պատրաստ ըլլան հնազանդելու կեդրոնէն իրենց տրուած հրամանի մը գործադրութեան ընտրելի մը մասին:

Գ. Առաջարկ մը:-

Քանի որ Հ. Յ. Դաշնակցութիւնը կը ձգտի ապակեղ-

րոնացման եւ սոսիալիստական գաղափարները ընդհանրացնել ոչ թէ միակ հայ ժողովուրդի այլ ամբողջ թուրքիոյ բնակչութեան խաւերում: Դաշնակցութիւնը իր իտէալը պէտք է հետապնդէ նաեւ թուրք եւ յոյն գլխաւոր տարրերու մէջ. անոր համար անհրաժեշտ է ծրագրի եւ նուազագոյն պահանջներու թուրք եւ յոյն լեզուներու թարգմանութիւնը. սոյն ազգութեանց մէջ Դաշնակցութեան սկզբունքին մասին շատ թիւրիմացութիւններ կան որք պէտք է յարգուին որպէսզի Դաշնակցութեան հմայքը բարձրանայ: Գաւառներու մէջ կազմուելիք դաշնակցական կոմիտէներ պէտք է ծրագրի եւ որոշ պատասխանատուութեան ենթարկուին, յանձնախումբի մը միջոցաւ ուրիշ ազգերու մէջ եւս ընկերութեան սկզբունքները տարածելու համար: Արդի կացութիւնը կը պահանջէ որ Դաշնակցութիւնը ըլլայ միջազգային յեղափոխական մի կազմակերպութիւն: Թուրք ժողովուրդը գիտակից չէ քաղաքական հանգամանքներուն որովհետեւ նախորդ ռեժիմի տակ իրենք ազգային առանձնաշնորհումներ կը վայելէին եւ իրենք չէին հետաքրքրուել քաղաքական եւ ընկերական հարցերով որոնց վրայ կրօնական մոլեռանդութիւնն ալ անտարբերութեան մոխիր կը ցանէր. թուրք դպրոցականներն ալ նոր պահպանողական սկզբունքներով սնած են արդէն. յոյները նոյնպէս: Դարձեալ հայերն են եւ կը մնան որ բարձր պիտի բռնեն գաղափարական յեղափոխութեան կարմիր դրօշը, եւ մենք այս նուիրական կոչումին հասցնելու համար պէտք է անոնց հասկնալի լեզուով խօսինք: Սելանիկ, Պոլիս, Իզմիր թուրք գաղափարականներ տեսնելով պէտք չէ միեւնոյն հաւատքը ունենալ գաւառներու մասին. այժմ ձեր լսած քիւլակները եւ «Իթիհատ ճէմիլիյէթ»ներ առժամանակեայ յուզմանց եւ յեղափոխական հոսանքին ուժգնութեան արդիւնք են եւ ոչ թէ համոզուած գիտակցութեան:

ՏՈՔԹ. ՍՈՒՐԷՆ Բ. ՆՇԱՆԵԱՆ

1908 Սեպտ. 25

ՏԵՄԷՆ

Հ.Յ.Դ.

Չորրորդ Ընդհ. Ժողովը Թուրքիոյ տարածքին Յուցական-դաւադրական ձեռնարկներու կազմակերպման համար ընտրած էր եռանդամ Տեռորական մարմին մը (Տեմէն), գործունէութեան թիրախ մատնանշելով կառավարական ներկայացուցիչներ (թուրք եւ օտար), իսկ վայր՝ ծովեզերեայ մեծ քաղաքները (Վիշապ - Պոլիս, Իզմիր): Ենչտուած էր միաժամանակ անոր «միջազգային բնատրութիւն» տալու անհրաժեշտութիւնը, այսինքն ահաբեկչական թէ դաւադրական բոլոր ձեռնարկները պէտք է գործադրուէին Օսմ. կայսրութեան ընդհինադիր միւս ժողովուրդներու եւ, մասնաւոր, թուրքերու մասնակցութեամբ:

Տեմէնի անդամ ընտրուած էին Է. Ալմուհի, Անդրանիկ եւ Վահագն Տաթեւեան: Մարմինը կազմեց իր ծրագիրը եւ ունեցաւ երկու նստաշրջան, առաջինը՝ 1908 թ. Փետրուար եւ Մարտ ամիսներուն Վիեննայի մէջ, իսկ երկրորդը Սոֆիա, Յուլիսէն Օգոստոս, այսուհանդերձ գործնական գետնի վրայ իր գործունէութիւնը հետեւանք չունեցաւ: Երկրորդ նստաշրջանի ընթացքին տեղի ունեցաւ յեղաշրջում եւ Օսմ. սահմանադրութեան հռչակում (1908 թ. Յուլիս): Սահմանադրական կարգերու հաստատումով պիտի դադրէր դաւադրական բնոյթի ամէն գործունէութիւն, իսկ այդ առաջադրանքով գործելու ուրիշ փորձեր (Մնայուն, Գործադիր, Խառն կոմիտէներ) փաստօրէն ապարդիւն անցան թուրքերու կողմէ հայերու հետ գործակցելու դժկամութեան պատճառաւ:

Այնուհետեւ, ինչպէս տեսանք, կազմի ամբողջացումով Տեմէնը դարձաւ «Պոլսոյ Պատ. մարմին»:

«Որոշումների մատեան Տեմէնի, 1908 Վիեննա» արձանագրութիւնն է սովորական չափի տետրակի մը 26 էջերուն վրայ: Առաջին երկու էջերուն Յար. Գալֆայեանի գրչով արտագրուած է Հ.Յ.Դ. Չորրորդ Ընդհ. Ժողովի որոշումը ահաբեկչական-դաւադրական գործի մասին: Երրորդ եւ վերջին էջերուն վրայ, այլ ձեռագրով մը տրուած է «գաղտնի բառարանը»: Մնացեալը, Ալմուհիի ձեռագրով կը կազմեն Տեմէնի որոշումներուն հակիրճ արձանագրութիւնները (8 նիստ):

Փաստ. 215-15

Բ 1.- ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԱՏԵԱՆ ՏԵՄԷՆԻ

- 1908 Վիեննա -

ՈՐՈՇՈՒՄ

(Քաղուած [Դ. Ընդհ. Ժողովի] Արձ. N° 54-ից)

Ընդհանուր Ժողովը լսելով տեռորի մասին եղած զեկուցումը եւ այդ առթիւ եղած մանրամասն եւ բազմակողմանի վիճաբանութիւնը, որոշեց՝

ա) Կազմակերպել Թուրքիայում քաղաքական սիստեմատիկ տեռոր, ուղղուած կառավարութեան կարեւոր ներկայացուցիչների դէմ (թուրք եւ օտարագոյն) ընդունելով ներկայ պայմաններում նրա ունենալիք խոշոր հետեւանքները:

բ) Տալ տեռորին «Միջազգային» բնատրութիւն, գործի մէջ մտցնելով Օսմանեան այժմեան ռեժիմից դժգոհ զանազան տարրերի ներկայացուցիչներին (հայ, մակեդոնացի, բուլղար, թուրք, ալբանացի, յոյն եւն):

գ) Ընդունել գործունէութեան վայր Կ. Վիշապը, ծովեզերեայ քաղաքները եւ ի հարկին նոյնիսկ Երոսպան, հայկական նահանգներում այդ գործը յանձնելով տեղական դաշնակցական մարմինների ղեկավարութեան, համաձայնութեամբ միւս տարրերի հետ:

դ) Հաստատել Կ. Վիշապում տեռորական գործունէութեան կոմիտէ 5 հոգուց, միջազգային կազմով, պահպանելով գլխատար ղեկը, ինչպէս եւ նախաձեռնութիւնը մեր կազմակերպութեան ձեռքում:

ե) Ընտրել մի նախապատրաստական կոմիտէ, բաղկացած 3 ընկերներից, այդ գործի բոլոր նախապատրաստութիւնները անելու եւ գործունէութեան ստեղծելու համար:

զ) Ընտրել մի մասնատողով, բաղկացած 3 հոգուց, ներքին կանոնադիրը մշակելու եւ ժողովի հաստատութեան ներկայացնելու համար:

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Փետրուար 28, 1908 Վիեննա

Ընդհանուր Ժողովի ընտրած Տ[եռորական] կազմակերպիչ մարմինը, բաղկացած երեք անդամից, հաւաքած Վիեննա, 1908 թ. Փետրուար 20-28ին, մի շարք խորհրդակցութիւններից յետոյ՝ ընդունեց հետեւեալ որոշումները:

1) Արձանագրել, հակիրճ կերպով, եղած որոշումները եւ ուղարկել պատճէնը [Դաշնակցութեան] Խորհրդին եւ Բիւրոններին:

2) Նկատելով, որ «Թուրքիայում գործող ղեկավար եւ յեղափոխական տարրերի կոնգրէս» (1907) որոշել է կազմել մի Մնայուն կոմիտէ, ընտրել եւ ուղարկել այդ կոմիտէի համար, Դաշնակցութեան կողմից, թուրքահայ մի ընկեր, լաւատեղեակ Երկրի գործերին: Պարիզի Նախապատրաստական Բիւրոն որոշել է, որ այդ ընկերը թուրքահայ պիտի լինի: Կանգ առնուեց ընկեր Գարոյի վրայ (այդ մասին հետագրել եւ տեղեկագրել Արեւելեան Բիւրոյին): Նրա մեկնման անհնարութեան դէպքում՝ ընկեր Շահրիկ պիտի համարուի առաջին թեկնածու: Որոշուեց՝ միաժամանակ տեղեկացնել Արեւելեան Բիւրոյին, որ եկող ընկերը կարող է մնալ Եւրոպա՝ ոչ աւելի քան 2-3 ամիս (եթէ աւելին անկարող է), քանի որ Մնայուն կոմիտէի նիստերը կարող են լինել ոչ թէ պարբերական, այլ ըստ կարիքի:

3) Հրահրել Խորհրդի եւ Բիւրոնների յատուկ ուշադրութիւնը այն հանգամանքի վրայ, որ առանց Մնայուն կոմիտէի կազմուելուն՝ կոնգրէսի որոշումները չեն կարող գործադրութեան դրուել, եւ հետեւաբար անխուսափելի է, որ այդ մարմինը կազմուի անմիջապէս, լինելիք մեր ձեռնարկներին ընթացք տալու նպատակով:

4) Կազմակերպել մարմինը, համաձայն Մնայուն կոմիտէի տրամադրութեան, կազմում է Տ[եռորական] Գործունէութեան կոմիտէ, Լիստում, բաղկացած առնուազն հինգ հոգուց, միջազգային կազմով: Գործունէութեան ինքն է պատրաստում մի ներքին կանոնագիր, իր անդամների պարտականութեան եւ իրաւունքների մասին, ինչպէս եւ առհասարակ գաղտնապահութեան եւ գործողութիւնների սահմանների մասին: Անպայման գաղտնապահութիւնը Գործունէութեան կոմիտէի վերաբերմամբ՝ պարտաւորական է:

5) Գործը ղեկը բոլոր միջոցները, որ մակեդոնական յեղափոխական կոմիտէն ստորագրէ Պարիզի կոնգրէսի Déclaration-ը եւ մասնակցի Մնայուն կոմիտէին, մի որոշումն, որին նրանք համաձայնութիւն էին տուել, եւ որը թերի մնաց՝ Սարաֆով-Գորվանովի սպանութեան պատճառով¹³: (Այդ համաձայնութիւնը սկզբունքով կայացած էր այն բանակցութիւններով, որոնք տեղի ունեցան Սարաֆովի հետ, Վիեննա (1907), Չաւէնի¹⁴ հետ՝ Ժընեւ (1907) եւ միւսների հետ՝ Սոֆիայում (1908),

յատուկ ներկայացուցիչների միջոցով (Մապարվ եւայլն):

6) Մակեդոն կոմիտէի մասնակցութիւնը Գործունէութեան կոմիտէի մէջ գտնուած ենք անհրաժեշտ: Այս մասին յայտնել մակեդոն ընկերներին, խնդրելով հարցը ղեկել, եթէ կարիք լինի, իրանց կազմակերպութեան կոնգրէսի քննութեան եւ վաւերացման:

7) Համաձայն մեր Ընդհանուր Ժողովի որոշման (տես արձանագրութեան համապատասխան կէտը), կազմել ցուցական ձեռնարկների յատակագիր եւ ներկայացնել Խորհրդի հաստատութեան, որից յետոյ միայն նա կարող է գործադրութեան դրուել:

8) Ներկայացնել Խորհրդին մեր ներկայացուցիչ միջոցով՝ հետեւեալ առաջարկները:

ա) Լրացնել Տ[եռորական] կազմակերպիչ Մարմինը առ նուազն երկու անդամով (համաձայնութեամբ եղած անդամներին):

բ) Հաստատել 1908 թուի համար՝ Ընդհանուր Ժողովի սահմանած բիւջէն (Տեռորական մարմին՝ 30 հազար ֆրանկ, ցուցական գործողութիւններին՝ 50 հազար ֆրանկ, դուրս գալով նուազեցման տուկոսը):

գ) Այդ գումարը պատրաստի պահել Արեւմտեան Բիւրոյի մէջ, ղեկելով կազմակերպիչ Մարմնի իրաւասութեան ներքոյ:

դ) Այս ձեռնարկի համար տրամադրելի անել ընկերների՝ կովկասեան շրջանից:

9) Մինչեւ այժմ տրամադրելի են յայտարարուել հետեւեալ ընկերները - Չարեհ, Դրո, Մարտո, Թուրքիա, Միշա, Անոյշ, Գրիգոր, Հրաչ, Արամ, Կոստի¹⁵: Յայտնել այդ բոլոր ընկերներին, որ Լիս մտնել չեն կարող, նախ քան աւարտուի մակեդոնական մասնակցութեան խընդիրը եւ կազմուի Մնայուն կոմիտէն, որից յետոյ միայն կազմակերպիչ Մարմինը կարող է անել հարկաւոր քայլերը ընկերներին ներս մտցնելու նպատակով:

Ծանօթ.- Այժմեանից ձեռնարկել պայթուցիկ նիւթերի եւ նոսրի պատրաստութեան: Գրաւորել ընկերներ Գրիգորին, Գրաչին եւ այլ կարող անձանց սկսելու այդ գործը, եւ նոյնիսկ հոգալու փոխադրութեան մասին: Այդ գործը ղեկել ընկեր Վահագի ղեկավարութեան տակ, Վարդանցում¹⁶:

13.- Բորիս Սարաֆով եւ Եուվան Գորվանով, Մակեդոնիոյ ազատագրական շարժման յայտնի ղեկավարներն, որոնք Սոֆիայի մէջ սպանուած էին 1907 թ. Սոյեմբերին:

14.- Սոյնպէս մակեդոնացի յեղափոխական գործիչ Լեապով, որ Կ'օզուագործը Չաւէն կամ Չաւէն Արշակունի ծածկանունը:

15.- Յիշուած բոլոր անունները դաշնակցական յայտնի դէմքեր էին, փորձուած յեղափոխականներ իրենց ընդլայնակեայ գործունէութեամբ: Ապտիլ Գամիտի ահաբեկման գործին մասնակցներն էին Ռուբինա (Արշեան), Արամ, Կոստի (Գամբարձումեան), իբրեւ յանդուգն ահաբեկիչներ ծանօթ էին Դրո (Կանայեան) եւ Մարտո (Չարուխճեան) գործընկերները:

16.- Վարդանցը նոյնն է ինչ որ «գաղտնի բառարանի» Վարդանցը, այսինքն՝ Պալքան, աւելի ճշգրիտ՝ Պուկարիան:

Ընկեր Արմէն Գարօ, հրաւիրուած նոյն գործի համար, անկարող է գալ, ընտանեկան պատճառներով:

3) Կովկասեան շրջանում գտնուող քանի մը ընկերներ, պատկանող Տեռ. մարմիններին, յայտնել են իրանց ցանկութիւնը՝ յարել Լիսի գործունէութեան:

4) Որոշուեց, վերջնականապէս կազմել Տեռորական-քաղաքական ակտերի ցուցակը, ծրագիրը, եւ յանձնել գործադրութեան:

5) Որոշուեց՝ բանակցել մակեդոնական կազմակերպութեան հետ, նրա աջակցութիւնը ապահովելու համար:

է. ԱԿՆՈՒՆԻ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1908, 28 Յուլիս

Նկատի առնելով Թուրքիայում կատարուած քաղաքական փոփոխութիւնը, Սահմանադրութեան հաստատութեամբ²³, Մարմինը որոշեց՝

ա) Ձեռք առնել համապատասխան միջոցներ, նպատելու համար ռեփեմի լայնացման եւ հաստատութեան:

բ) Դիմել թուրքերին եւ մակեդոնացիներին, առաջարկելով անմիջապէս ժողով գումարել, եւ ձեռք առնել միջոցներ՝ առաջ մղելու յեղափոխական շարժումը եւ ամրացնելու համերաշխութիւնը Թուրքիայի բոլոր ազգերի միջեւ:

գ) Նոյն այդ նպատակով պաշտօնական դիմումն անել Պարիզի Կոնգրէին մասնակցող բոլոր խմբերին եւ մարմիններին:

դ) Հրատարակել Կ. Պոլսի Պատասխանատու Մարմնի կողմից declaration-ներ, յայտնելով որ պնդում ենք Պարիզի Կոնգրէի որոշումների վրայ, եւ առաջադրելով նոյն պահանջները, որոնք բխում են մեր ժողովրդի արդի կացութիւնից:

Կցել արձանագրութեան այդ declaration-ների բնագիրը:

ե) Բանակցութեան մէջ մտնել եւրոպական մամուլի հետ նոյն նպատակով հրատարակութիւններ անելու:

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1908, Յուլիս 31

Որոշուեց՝

ա) Ուղարկել յատուկ ընկեր Ոսկեհանք¹⁸, այնտեղ կազմ առաջ բերելու, եւ պատրաստելու նիւթերի ներմուծումը:

բ) Ուղարկել ընկերներ Հրաչին՝ Վիեննա, Գրիգորին՝ ժընեւ, բերելու նիւթ եւ խմոր, մինչեւ երկու շաբաթ խնձորներ պատրաստելու համար²⁴:

գ) Այդ նիւթերը ամբարել Լիս, ապահով ընկերների միջոցով, անակնկալների դէպքում՝ կառավարութեան դէմ ցոյց կազմակերպելու համար:

դ) Առաջարկել դաշնակից միւս կուսակցութիւններին, պատրաստել մարդիկ եւ նիւթ, կուխ յայտնելու կառավարութեան, հէնց որ նա կը փորձէ յետադիմական քայլեր անել, առաջ բերել ընդհարումներ եւ ինտրիգներ:

ե) Առաջարկել ընկեր Ակնունու՝ անցնել Լիս⁶, ուսումնասիրելու վայրի վրայ գործերի դրութիւնը եւ պատրաստելու կազմակերպութեան շրջանները, գալիք ձեռնարկների համար: Նոյն նպատակով Լիս ուղարկել ընկեր Վահագին, երբ կարիք կը ներկայանայ:

զ) Յանձնել ընկեր Վահագին՝ խմբելու եւ մօտ ժամանակներ Լիս անցկացնելու այն բոլոր ընկերներին, որոնք կարող են պիտանի լինել Լիս Տեռորականի համար. նոյն նպատակով կանչել Ամերիկայից ընկեր Արամը:

է. ԱԿՆՈՒՆԻ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1908 Օգոստ. 2

Որոշուեց՝

ա) Հրաւիրել ընկեր Վարանդեանին Պարիզ, վարելու բանակցութիւններ թուրք կուսակցութիւնների հետ, Պարիզի Կոնգրէի որոշման սահմաններում (կարգադրուած արդէն):

բ) Յանձնել ընկեր Չարդարեանին՝ վարելու [Լիսի] Պատասխ. մարմնի գրաւոր բանակցութիւնները, Մարմնի անդամների Ֆիլիպէից բացակայելու դէպքում (կարգադրուած է):

գ) Առաջարկել «Թերեքքի» կուսակցութեան, յատուկ մարդ ուղարկել Բոլզարիա, բանակցութիւնների համար – (կարգադրուած է արդէն):

դ) Գրել Արեւմտեան Բիւրոյին, առաջարկելու ընկեր Գալֆային, անցնել Չմիւռնիա, կազմակերպական գործերի համար (կարգադրուած է):

ե) Գրել Կովկաս, ուղարկելու անմիջապէս, Լիսի մօտերը, մի կամ երկու կարող ընկերներ, եթէ կան տրամադրելի, կազմը աւելի զօրացնելու նպատակով:

զ) Կոչ անել բոլոր թուրքացիներին, ուր եւ լինեն, շտապել Երկիր, նպաստելու յեղափոխական գործունէութեան եւ մասնակցելու սահմանադրութեան ի նրպաստ դարձած բոլոր աշխատանքներին:

Տպել կոչը՝ Պոլսի մարմնի անունից:

է. ԱԿՆՈՒՆԻ

23.- Սահմանադրութեան հաստատման թուականն է Յուլիս 11 (իին տոմար) կամ նոր տոմարով՝ Յուլիս 24:

24.- Նիւթը եւ խմորը՝ պայթուցիկ նիւթեր են, ուժանակ: Խնձորը՝ ռումբ, նոսր:

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1908 Օգոստ. 2

Որոշուեց՝

ա) Տեղեակ պահել, հեռագիրներով եւ նամակներով, թէ Արեւմտեան եւ թէ Արեւելեան Բիւրոները, օրուայ կարեւոր դէպքերի եւ որոշումների վերաբերմամբ:

բ) Յանձնել Վահագին կարգաւորելու դրամական հաշիւները:

գ) Ապահովութեան համար, Մարմնի բոլոր ցայտմայտեղ մնացած թղթերը յանձնել Սոֆիայի բանկի արկղերից մէկին ի պահ:

դ) Պատուիրել Պոլսի Պատ. Մարմնի համար յատուկ բլանկներ²⁵, նոյնպէս եւ կնիք:

ե) Պատրաստութիւններ տեսնել Կ. Պոլսում ձեռնարկելու յեղափոխական շրջաբերականների եւ թռուցիկների տպագրութեան, յայտնելու ժողովրդին՝ Դաշնակցութեան Մրագիրը, Դիտումները եւ ուղղութիւնը:

է. ԱԿՆՈՒՆԻ

25.- Տպագիր պաշտօնական թուղթ, հարցաթերթիկ բաց ձգուած տեղերը լեցնելու համար:

ԳԱՂՏՆԻ ԲԱՌԱՐԱՆ

- 1) Պապ – Նժոյգ – Սուլթան
- 2) Կարտինալ – Մինիստր
- 3) Վիճակաւոր – Առաջնորդ, վալի
- 4) Պապի աթոռանիստը – Կ. Պոլիս, Լիս
- 5) Վատիկան – Ելզըզ
- 6) Անուանակոչութիւն – Տեռորական գործ
- 7) Նիւթ – իւղ
- 8) Նուռ – ռումբ
- 9) Լիս – Կ. Պոլիս
- 10) Տեմէն – Տեռորական մարմին
- 11) Աղօթագիրք – Շրջաբերական
- 12) ա { George Alexandre – Ժորժ Ալեքսանդր
բ { Frederic
- 13) Փարիզի խնամի – Թէրագը-ի խումբ
- 14) Փարիզի փոքրիկ խնամի – Մէշվէրէթի խումբ
- 15) Սոֆիայի խնամի – Մակեդոն. կամիտէ
- 16) Տիկին Սօֆի – Սօֆիա քաղաքը
- 17) Օրիորդ Ֆիլոմէն – Ֆիլիպէ քաղաքը
- 18) Oncle Pierre – Փիեռ Քիյառ
- 19) Oncle Francis – Փրեսանսէ
- 20) Սուրէն – Արեւմտ. Բիւրօ

- 21) Արտաւազդ – Արեւելեան Բիւրօ
- 22) Papa – Դաշնակցութիւնը
- 23) Հատոր – հազար ֆրանկ
2 հատոր – 2000 ֆրանկ
- 24) Վարդենիք – Պալքան

ԺԱՄԱՆԱԿԱԻՌ ԲԱՌԱՐԱՆ

(շարունակութիւն)

- 1) Լիս - Պոլիս – (երբեմն՝ Հոռոմ)
- 2) Մովադուռ – Չմիւռնիա
- 3) George Gueurel – Ակնունի
- 4) Չիւտտ – Վահագ
- 5) Santé bonne – Աղող տեղ հասայ
- 6) «Դրօշակ» – Ժամացոյց
- 7) Հազար – հատոր
- 8) Մտաւ հիւանդանոց – բանտարկուեց
- 9) Opération – խուզարկութիւն
- 10) Դրութիւնը վտանգաւոր է – ինֆլամեցիան սաստկանում է
- 11) Ժընեւ – Mademoiselle Horterme
- 12) Մեծ վեգիր – Աւագ կարտինալ
- 13) Տեռորական մարմին – Տեմէն

Փաստ. 215-16

Բ 2.- ՆԱԽԱԳԻԾ ՅՈՒՑԱԿԱՆ ՏԵՌՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ

Համաձայն Ընդհ. Ժողովի ցուց. գործունեությունների մասին տրուած որոշման, կը ներկայացնենք հետեւեալ նախագիծը [Դաշնակցութեան] Խորհուրդի նկատառութեան, խնդրելով անոր վաւերացումը:

ա) Նկատելով որ Յուլ. գործունեությունների նպատակը պիտի կայանայ, մէկ կողմէն խնամակալ պետութեանց քաղաքական ու տնտեսական հակամարտ շահերը շարժման մէջ դնել, եւ, միւս կողմէն՝ տաճիկ բռնակալ ռեժիմին հեղինակութիւնը կտտրել ու տապալել:

բ) Նկատելով որ Յուլ. գործունեությունները, բացառապէս, թուրք տարրին ունեցած ներկայ քաղաքական դժգոհութեան ու խլրտումներու խմորման շրջանին՝ կարող է ազիտարարական մեծ ազդակ ծառայել, ցնցելու համար մահմետական մասսան, եթէ մանաւանդ թուրք ընդդիմադիր կուսակցութիւններն եւս իրենց համաձայնութիւնն յայտնած ըլլան նոյն գործունեություններն:

գ) Նկատելով միեւնոյն ատեն որ Յուլ. գործունեությունների նշանակութիւնն ու ցանկալի ներգործութիւնը պայմանաւորուած են, ներկայ պայմաններուն տակ, կատարուելիք աքտերուն ալազանութեան եւ ժամանակի ըստ կարելոյն շարունակական տեւողութեան հետ:

դ) Նկատելով նմանապէս որ Յուլ. գործունեություններն դաշտ սահմանուած վայրերուն, մասնաւորապէս Լիսի թուրք քաղաքական հակողութեան արդի խստագոյն պայմանները անհնար ու անկարելի կը դարձնեն հաւաքական-յարձակողական ցոյցերու գործադրութիւնը, նման Պանք Օթթոմանի ձեռնարկին,

Յուլ. գործունեություններն կանգ առաւ հետեւեալ սկզբունքային կէտերուն վրայ.— Յուլ. գործունեություններն տալ ըստ կարելոյն մէկէ աւելի արտայայտութեան եղանակ եւ ջանալ այդ արտայայտութիւնը դարձնել տեւողական ու շարունակական, այնպէս որ ձեռնարկուելիք այլեւայլ գործողութիւնները յաջորդաբար իրար լրացնեն, դարձնելով սարսափն ու անապահովութիւնը ընդհանուր եւ մշտակայ, ինչպէս նաեւ առիթ ընծայելով հանրային ցասման՝ դուրս գալու ընդդէմ բռնակալ ռեժիմին:

Ուստի, Յուլ. մարմինը կ'առաջադրէ,

1) Պայթեցնել եւ այրել Լիսի²⁶ ու իր շրջանի ծովեզրեայ քաղաքներուն մաքսատուները:

Այս նպատակին պատճառաբանական իբրեւ հիմք ընդունուած են հետեւեալ ֆինանսական, քաղաքական ու հանրային ընդվզման տեսակէտները:

ա) Թրքական մաքսատուները — որոնցմէ միմիայն Լիսի երեք հաստատութիւններուն մէջ մթերուած կ'ըլլայ ընդմիջտ հինգ միլիոն ոսկիէն աւելի արժէք եւ ուր ամէն օր մաքսային գործառնութեամբ պարապած են մօտ 10.000 պաշտօնեայ, բանուոր եւ առեւտրականներ — ֆինանսական տեսակէտով կը ներկայացնեն այն գլխաւոր ու կենսական հիմնարկութիւնները, որոնցմէ իբրեւ նախադուռ, հաւանաբար եւ ստիպողաբար անցնելու հարկադրուած են եւրոպական քափիթալի արտադրութիւնները եւ եւրոպական-առեւտրական բոլոր ցանցերը, որոնց շահածութեան²⁸ եւ հասոյթներուն շահակիր²⁷ են հաւասարապէս թէ՛ պետական պիւտճէն եւ թէ՛ միջազգային դրամագլխական հաստատութիւնները: Հետեւաբար մաքսատուներու տրուած հարուածը եւ անոնց անապահովութիւնը առաջ պիտի բերեն տնտեսական անխուսափելի ընդհանուր տագնապ եւ խուճապ, պետական թէ՛ սեղանաւորական արժեթղթերու անկում, արտաքին առեւտրական յարաբերութեանց խզում ու դադար, եւ եւրոպական շահերու բախում թուրք կառավարութեան հետ:

բ) Տնտեսական այս հետեւանքները՝ իրենց էությունամբ նախասահմանուած են բնականօրէն ընդունելու քաղաքական բնաւորութիւն, քանի որ տիրող անարխիական դրութիւնը եւ բռնակալ ռեժիմին հեղինակութեան վարկաբեկումը եւ անոր պատասխանատուութիւնը դուռ պիտի բանան քաղաքական բարդութեանց եւ կնճռոտութեանց, շարժման մէջ դնելով շահագրգիռ պետութեանց հակընդդէմ հետամտութիւնները:

գ) Առաջացած տնտեսական ընդհանուր ճգնաժամին հետեւանքով կանգ պիտի առնէ երկրին տնտեսական կեանքի նորմալ ընթացքը: Ֆինանսական բոլոր հարստութիւնները՝ պորսա, պանքաներ²⁸, ընկերութիւններ եւ ֆիրմաներ ծանրօրէն պիտի կրեն հակահարուածը ու տագնապին ցնցումը: մաքսային գործառնութեանց հետ ուղղակի կապ ունեցող տասնեակ հազարաւոր անձնաւորութիւններ պիտի ենթարկուին բռնի գործադուլի: մանաւանդ՝ անգամ մըն ալ տիրող կառավարութեան բարոյական հեղինակութիւնը պիտի կրէ ցածացում ու նուաստացում յա՛չա ճնշուած ու դժգոհ բնակչութեանց, առաջացնելով անոնց մէջ յեղափոխական ու

26.- Ըսել կ'ուզէ՝ շահակցութեան:
27.- Այսինքն՝ շահակից:
28.- Սակարան, դրամատուներ:

ապստամբական տրամադրութիւն, խթանելով անոնց դիմադրական բնազդները եւ ուժգնօրէն մղում տալով մանաւանդ թուրք յեղափոխական շարժումներու ծաւալման ու արտայայտութեան:

2) Պայթեցնել եւ այրել Լիսի ռեժիմի ծխախոտագործարանը, նկատի ունենալով նաեւ Սամսոնի նոյն ընկերութեան գործարան-մթերանոցը:

Պատճառաբանութեան հիմք կազմող կէտեր.

ա) Ծխախոտի ռեժիմ ըլլալով զուտ եւրոպական աքսիոներական ընկերութեան մը շահաձեռնարկը, կը ներկայացնէ թուրքիոյ մէջ եւրոպական դրամագլուխին ամէնէն աչքի ընկածը գործառնութեանց՝ որուն դէմ բոլոր ժողովուրդները խոր ատելութիւն եւ հակակրութիւն ունին: Վնասուելով ռեժիմին՝ մէկ կողմէն վրտանգուած պիտի ըլլան եւրոպական ձեռնարկութեանց ապահովութիւնը ու տնտեսական շահերը, միւս կողմէն գրգիռ տուած՝ ժողովրդային դժգոհութեանց, եւ գոհացում՝ ժողովրդային իրաւունքներու պաշտպանութեան:

բ) Լիսի գործարանին կարեւորութիւնը անով կը բացատրուի, որ նոյն հաստատութիւնը կ'աշխատցնէ 3000է աւելի բանուորներ եւ ուր մթերուած ապրանքին արժէքը կը հասաւարի հազարն գումարներու:

գ) Սամսոնի գործարանին նշանակութիւնը, տնտեսական տեսակէտով, աւելի քան շեշտուած է այն հանգամանքով, որ ինք կը մատակարարէ ամբողջ թուրքիոյ մէջ սպառուած ծխախոտին ու սիկարներուն մեծագոյն տոկոսը:

դ) Ռեժիմի կրած ուղղակի վնասներն ու կորուստները տեղի պիտի տան ընկերութեան եւ թուրք կառավարութեանը միջեւ ընդհարումներու եւ քոնֆլիկտներու, քանի որ կառավարութիւնը յատուկ պայմանագրով երաշխաւորած է ընկերութեան շահերուն ապահովութիւնը եւ համաձայն նոյն պայմանագրութեան՝ ընկերութեան կը ստանայ օրական մօտ 1000 ոսկի փոխարինութիւն մը, ամբողջովին յատկացուած Երլտըզի ծախքերուն:

Յուլ. մարմինը, ասոնցմէ զատ, նկատի ունի նաեւ կարգ մը եւրոպական եւ թրքական պաշտօնական հաստատութիւններ եւս, որոնց կրած հարուածները բնութիւն ունենան սարսելու կա՛մ տիրող ռեժիմին ծանրութիւնը, կա՛մ անապահովութեան ու վտանգի ենթարկելու եւրոպական ձեռնարկութիւններն ու շահերը թուրքիոյ մէջ:

3) Օղը հանել Մաքրիգեղի պետական վառօդարանը եւ փամփշտաշինարանը, որոնց քանդումը իրենց զարհուրելի աղէտով, երկիւղի ու սարսափի պիտի մատնէ բռնակալութեան ռազմական մեքենան, ոչ միայն նիւթական նշանակալի կորուստ պատճառելով կառավարութեան գինուորական միջոցներուն, այլ եւ բարձրացնելով յեղափոխական հմայքն ու գորութիւնը հանրային մտածողութեան մէջ:

Յուլ. մարմինը նկատի ունի նաեւ Լիսի օդային կազարանը:

4) Պայթեցնել տաճկական փոխադրանաւերը եւ եւրոպական ապրանքատար նաւեր՝ թուրքիոյ ջուրերուն մէջ, նպատակ ունենալով արտաքին թէ՛ ներքին առեւտրական յարաբերութիւնները խզել եւ ջլատել թէ՛ արտաքին, թէ՛ ներքին տնտեսական գործառնութիւնները:

5) Պայթեցնել արեւելեան կառախումբը եւ այլ գնացքներ, անապահովութեան եւ վտանգի ենթարկելու համար եւրոպական ցամաքային յարաբերութեան գլխաւոր ճանապարհը՝ դէպի թուրքիա տանող:

6) Ծրագիր քաղաքական տեւորներու, որոնց մանրամասն ցուցմունքները եւ պատճառաբանութիւնները մեր ընկեր պատգամաւորը պիտի տայ Խորհուրդին:

ՎԱՀԱԳ

9 Մարտ 1908
Ֆիլիպէ

Փաստ. 53-122

Բ 3.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ՆԱՄԱԿԸ ՅՈՒՑԱԿԱՆ ՏԵՌՈՐԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ

1908 Յուլիս 27 Ժընև

Յ[ուցական] եւ Տ[եռորական] Մարմին

Սիրելի ընկերներ,

Ստացանք ձեր հեռագիրը: Միեւնոյն ժամանակ ստացանք եւ մի նամակ տաճիկ կոմիտէից, որն եւ ուղարկում ենք ձեզ: Ձեր հեռագրին մենք պատասխանեցինք, որ առանց Երիտ. թուրքերի ո՛չ մի քայլ չառնուի մեր կողմից: Դրուժիւնը շատ փափուկ է, պէտք է ծայրայեղ զգուշութիւն. մի անմեղ սխալ, մի ոչ-դիտաւորեալ քայլ կարող է ներկայ մոմենտում ճակատագրական լինել: Մեր քաղաքականութիւնը պէտք է լինի՝ միակ կամ մակեղոնացիների հետ ոչինչ չանել առանց երիտ. թուրքերի: Ինչ որ ալ անելու լինինք՝ խաղաղ թէ յեղափոխական, անպայման պէտք է լինի ընդհանուր համերաշխութեամբ: Հրաշալի կը լինէր եթէ հնարաւոր լինէր անմիջական յարաբերութեան մէջ մտնել Մակեղոնիա գտնուող երիտասարդ թուրքերի հետ՝ մշակելու համար ծրագիր անելիքների մասին, թոյլ չտալու վաղը գլուխ բարձրացող ռէակցիային հակահարուածը տալու:

Այստեղ է ամենավտանգաւոր եւ փափուկ կէտը — ոչինչով առիթ, «իրաւունք» չտալ ռէակցիային շարժուելու, ամբանալու: Մեր առջեւ են ռուսական եւ պարսկ. յեղափոխութիւնը: Մեր մտքերը եւ մեր երկիւղները պարտք ենք համարում բաժանել ձեզ հետ, այս փառաւոր, բայց եւ վտանգաւոր ըրողքին:

Մակեղոնացիների հետ միայն միտինգ կազմելը կարող է աննպաստ տպաւորութիւն թողնել մեր ընկեր երիտ. տաճիկների վրայ, մանաւանդ որ մակեղոնացիք, բացի այն որ չեն մասնակցել կոնգրէին, եւ հաշտ աչքով չեն նայում թուրքերին, նոյն իսկ հակառակ են այդ շարժմանը եւ հագիւ թէ համապատասխանի նրանց քաղ. եւ ազգ. ձգտումներին: Գուցէ մենք սխալուում ենք: Բայց ինչ որ էլ լինի, ոչ մի պայմանով մենք չպէտք է սառեցնենք կամ կասկածի տեղի տանք մեր միւս բարեկամներին, որոնց աշխատանքի հետեւանքն է ներկայ պատմական վայրկեանը:

Ահա ձեզ ուղարկում ենք նրանց մի նամակը²⁹ եւ հրահրում ենք նրա վերջին տողերի վրայ ձեր ուշադրութիւնը: Մենք չգիտենք ինչի հետեւանք է դա: Յամենայն դէպս մենք կը պատասխանենք:

Հեռագրեցինք Միքայէլը Պարիզ գնայ: Այնտեղ է եւ Աւետիսը³⁰: Գրել ենք որ երկուսը միասին խորհրդակցին եւ տեսակցութիւն ունենան եւ ամէն անգամ հետեւանքը ձեզ անմիջապէս գրեն:

Պէտք է օգտուել ներկայ մոմենտից եւ գաղթականներին քշել երկիր՝ քանի դռները բաց են: Սրա վրայ եւս ձեր առանձին ուշադրութիւնն ենք հրահրում:

Ի նկատի ունենալով ներկայ փափուկ ու պատասխանատու վիճակը մի քանի ընկերներ տրամադրութիւն ունին եւ պատրաստ են գալու դէպի ձեզ՝ աջակցելու ու խորհրդակցելու անելիքի մասին: Պատասխանեցէք:

«Մէշվէրէթ»ի խումբը³¹ իրենց Պաշտ. օրգան «Շուրայի իւմէթի» մէջ կոչ էին բաց թողել՝ նիւթապէս աջակցելու Մակեղոնիայի մէջ գործող յեղափոխականներին: Այս կոչին պատասխանեցինք մեր կողմէն նուիրելով 500 Ֆրանկ:

Ընկեր. բարեւներով ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

29.- Տեսնել յաջորդ՝ Ահմետ Ռիզայի ֆրանսերէն ցամակը: 30.- Աւետիսը՝ Ահարոնեանց է, Միքայէլը՝ Վարանդեանց: 31.- Ահմետ Ռիզայի գլխաւորած կազմակերպութիւնը:

Փաստ. 53-122ա

Բ 4.- ԱՀՄԷՏ ՌԻԶԱՅԷՆ Հ.Յ.Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

مكتب ادريس مكيه

واسطه نشر افكارى: تزكيه شوراى امت فرانسزجه مسورة

CHOURAI UMMETT MECHVERET

Paris, le 24 juillet 1908.

عزائى ترقى واتحاد صعبى

۲۰ بوناپارت سوقاغى . پارس COMITE OTTOMAN D'UNION ET DE PROGRES 25, Rue Bonaparte, Paris



مكتب ادريس مكيه

Փարիզ, 24 Յուլիս 1908

Chers camarades,

Après de longs efforts, nous avons obtenu ce que nous désirions. Nous en sommes d'autant plus heureux que ce résultat a été acquis sans grande effusion de sang, tout simplement par une organisation énergique et par de loyaux actes de patriotisme. Maintenant, en toute sincérité, nous devons attendre — sans désarmer. Tout mouvement d'hostilité serait mal interprété, ferait le jeu des ennemis de notre pays et fournirait au Sultan un facile prétexte de se récuser en disant: "voyez, ils ont ce qu'ils veulent, et cela ne les empêche pas de continuer à fomenter des troubles".

Donc, dans l'intérêt du pays et par un sentiment de bienséance qui nous est dicté par notre victoire même, nous devons rester tranquille. Notre dernier Congrès a scellé un pacte de solidarité entre Votre parti et le nôtre, et par conséquent, tout mouvement, même isolé, de votre part, serait considéré comme ayant notre assentiment. Nous ne sommes aucunement partisans d'une telle tactique, et si, par malheur, elle se produisait contre notre gré, nous en rejeterions toute la responsabilité sur Votre Comité.

Pour le Comité AHMED RIZA

Սիրելի ընկերներ,

Երկար ջանքերէ ետք, ստացանք այն ինչ որ կը փափաքէինք: Աւելիով ուրախ ենք մանաւանդ որ այդ արդիւնքը ձեռք բերուեցաւ առանց արիւնահեղութեան, պարզապէս՝ շնորհիւ զօրեղ կազմակերպութեան մը, եւ հայրենասիրական անկեղծ արարքներով: Այժմ, ամենայն անկեղծութեամբ, պէտք է սպասենք՝ առանց զինաթափ ըլլալու: Հակառակ որեւէ շարժում՝ սխալ պիտի թարգմանուէր, պիտի նպաստէր մեր երկրի թշնամիներուն, եւ Սուլթանին պիտի հայթայթէր դիւրին պատրուակ մը ըսել տալով. «Տեսէք, ունին այն ինչ որ կ'ուզէին, եւ այս արգելք չէ որ շարունակեն խռովութիւններ գրգռել»:

Ուրեմն, երկրի օգուտին համար, եւ մղուած պատշաճութեան զգացումէ, զոր մեզի կը թելադրէ նոյնինքն մեր տարած յաղթանակը, պէտք է հանդարտ մնանք: Մեր վերջին կոնգրէն զօրակցութեան ուխտ մը հաստատեց Ձեր կուսակցութեան եւ մերինին միջեւ, եւ հետեւաբար, Ձեր կողմէ որեւէ շարժում, նոյնիսկ մեկուսի, պիտի նկատուէր գործուած մեր համամտութեամբ: Մենք բնաւ համամիտ չենք նման տակտիկի մը, եւ եթէ, տարաբախտաբար, ան տեղի ունենար հակառակ մեր կամքին, անոր պատասխանատուութիւնը ամբողջութեամբ պիտի նետենք Ձեր կոմիտէին վրայ:

Ի դիմաց կոմիտէին ԱՀՄԷՏ ՌԻԶԱ

Փաստ. 53-125

Բ 5.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ՏԵՄԷՆԻՆ

1908 Յուլիս 28
Ժրնբե

Յ[ուցական] Տ[եռոր]ական Մարմին

Սիրելի ընկերներ,

Ձեր հեռագրի հիման վրայ ուղարկում ենք ձեզ երկու կնիք, մէկը միջկուսակցական, միւսը կուսակցական:
Այսօր հեռագիր ստացանք Արտաւազդից³², որում նրանք առաջարկում են ժողով Պարիզի խնամինների հետ՝ կազմուած Սուրէնի, Լիսի եւ Պէրմանէնտի ներկայացուցիչներին³³: Առանց այս հեռագրի էլ մենք արդէն գրել ենք վարանդեանին եւ Ղարիբին³⁴ տեսակցելու խնամինների հետ եւ խորհրդակցելու:

Մենք գրել ենք թէ մերոնց եւ թէ խնամիններին, որ երբեք չպէտք է վստահել այժմեան սահմանադրութեան, քանի նրա յայտարարողը Համիտն է եւ ակամայ. եւ պէտք է ձեռք առնել բոլոր միջոցները — սկսած տեռորից — մէջտեղից վերցնելու նրան, որ եւ միակ ճանապարհն է ապահովելու սահմանադրութիւնը: Այս խնդիրը որքան դրոււմ է մեր առջեւ հրամայականօրէն, այնչափ էլ նա փափուկ է եւ ներկայ մոմենտում խիստ վտանգաւոր. պէտք է նրան մօտենալ ծայրայեղ զգոյշ, խաղաղ եւ մեծ սառնութեամբ չզօռելու (brusquer) ոչինչ:

Եւ առաջին պայմանը, sine qua non³⁵, պէտք է լինի երկրի խնամինների հետ համաձայնութեան գալ:

Այս խնդիրը, եւ առհասարակ ներկայ բոլորն, անհրաժեշտօրէն պահանջում է հրաւիրել, ո՛չ միայն Պարիզում, այլ եւ ձեր կողմերում, ակտիւ մարմիններին խորհրդակցութեան, մտքերի փոխանակութեան եւ որոշումներ կայացնելու բռնելիք դիրքի եւ անելիքի մասին՝ գլխաւորապէս ապահովելու սահմանադրութիւնը coup d'Etat-ից³⁶: Մենք հակառակ ենք, ինչ որ էլ լինի, մենակ մեր անուան տակ — նախքան միւսների հետ տեսնուելը — հրապարակ գալ: Ուստի խնդրում ենք ստեղծել բոլոր հնարաւոր միջոցները հրաւիրելու ժողովի թէ՛ ակտիւ գործունէութեան մէջ գտնուող Պարիզի խնամինների ընկերներին եւ թէ՛ (Սապահ)էդդիին խնամիններին՝ խորհրդակցելու եւ ընդհանուր պլան գծելու՝ մոմենտի պահանջի համեմատ:

Որքան էլ մենք ջերմ կուսակից լինենք անպայման համերաշխ գործունէութեան, բայց դրան մենք գոհ չենք բերել մեր ծրագրից ոչ մի կէտ — մենք հաւատարիմ կը մնանք մեր սկզբունքներին: Խնդիրը միայն ունի գործնական եւ մոմենտի բնաւորութիւն: Այս վերջին տողերը ակելացրինք որ մեր համերաշխութեանը խիստ շեշտումը թիւրիմացութեան տեղիք չտայ սկզբունքային խնդիրների տեսակէտով:

Ընկերական բարեւներով՝
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

32.- Արտաւազդ — Արեւելեան Բիւրոյի ծածկանունը:
33.- «Պարիզի խնամինները» Ապտիլ Գամիտի ընդդիմադիր թուրք կազմակերպութիւններն են: «Սուրէնը» Արեւմտեան Բիւրոյի ծածկանունն է, Լիսի՝ Կ. Պոլսոյ Գ.Յ.Գ. կազմակերպութիւնը, Պերմանէտը՝ Փարիզի Կոնգրէն բխած թուրքիոյ ընդդիմադիր տարրերէն կազմուելիք խառն «Սնայուն կոմիտէն» է:
34.- Ահարոնեան Աւետիսին:
35.- Լատիներէն՝ անհրաժեշտ պայման, առանց որուն, այսինքն երիտասարդ թուրքերու հետ համաձայնութեան, պէտք չէ դիմել ահաբեկչական արարքի:
36.- Ֆրանսերէն՝ պետական հարուածից:

ՉԼՈՒԽ IV

ՕՍՄԱՆԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Հանրածանօթ իրողութիւն է որ Ապտիլ Համիտ Բ.ի բռնապետական վարչակարգը առանձին վայրագութեամբ կը պատուհասէր Հայաստանն ու հայ ժողովուրդը՝ պարբերական ջարդերով ու արեւածուրթիւններով: Իրողութիւն է նոյնպէս որ Համիտի այդ վայրագութենէն բաժին կը հասնէր նաեւ ազատատենչ միւս ժողովուրդներուն: Իր հաստատած ոստիկանական եւ լրտեսական ցանցին զոհ կը դառնային միաժամանակ թուրք ազատամիտ այն տարրերը, որոնք Համիտի բռնատիրութիւնը կը համարէին կործանիչ կայսրութեան ապագային նկատմամբ: Տարիներու ընթացքին այս վերջիններէն ստուար թիւ մը, մտաւորականներ եւ քաղաքական գործիչներ, հալածուած կամ արքայազնացած, ապաստան գտած էին եւրոպական ոստաններ, գլխաւորաբար Փարիզ: Իրենց կեդրոնական դէմքերն էին Թերաքը խմբակի ղեկավար իշխան Սապահետիւն, սուլթանական ազգատոհմէն, եւ Ահմէտ Ռիզա, որ 1892ին Փարիզի մէջ հիմնած էր «Մեշվերթ» թերթը: Այս երկուքին շուրջ համախմբուած էին թուրք ազատախոհ տարրեր, որոնք իբրեւ միտհատեան սահմանադրութեան ջատագովներ անհրաժեշտ կը գտնէին բարեկարգումներու ներմուծումը Թուրքիոյ մէջ, վերջինս իր անկեալ վիճակէն դուրս բերելու եւ կայսրութեան ամբողջականութիւնը պահպանելու համար: Իշխան Սապահետիւն արեւի կողմնակից էր ապակեդրոնացեալ դրութեան, մինչ Ահմէտ Ռիզա, ազատական գաղափարներու կրողը ըլլալով հանդերձ, հետամուտ էր խորքին մէջ իշխանութեան դէպք թուրք ազգայնական հոսանքին ձեռքերուն մէջ պահելու մտքին:

Եւրոպական արքայի մէջ գտնուող այս թուրք շրջանակներուն հետ համերաշխութիւն գոյացնելու ձրգտումով Դաշնակցութիւնը կանուխէն, դեռ ԺԹ. դարու 90ական թուականներէն յարաբերութիւններ կը պահէր: 1902ին Փարիզի մէջ կայացած էր Օսմ. կայսրութեան բաղկացուցիչ ազգութիւններու միջ-ազգային համագումար մը, որ սակայն անցած էր ապադիւն: Թուրք «ազատականները», յատկապէս Ահմէտ Ռիզա, բուն կերպով ընդդիմացած էին թէ՛ յեղափոխական գործելակերպին, թէ հայկական ուրոյն դատի մը գոյութեան իրաւունքին, պահանջելով հրաժարիլ Պերլինի 61րդ յօդուածէն, եւրոպական երաշխատրութենէ եւ առհասարակ Թուրքիոյ ներքին գործերուն մէջ մեծ պետութեանց միջամտութիւնը հրաւիրելու ամէն փորձ: Ըստ էութեան կը պաշտպանուէր թուրք պետական շրջանակներու մինչ այդ վարած քաղաքականութիւնը: Կը խոստացուէր ամէն կարգի հարց լուծել կայսրութեան ընդհանուր տարածքին ներմուծուելիք բարեկարգութիւններով: Բարենորոգմանց այս խոստումները, դեռ «Թանգիմաթ»ի օրերէն հանդիսաւոր ֆերմաններով հռչակուած, կը մնային մեծագոյն մասով չգործադրուած, թուրքի վրայ, մինչ կայսրութիւնը համիտեան բռնակալութեան տակ կը բռնէր քայքայումի ճամբան:

Այս կացութիւնը պատճառ դարձաւ ներքին ընդդիմութեան աշխուժացումին, մասնաւորաբար Մակեդոնիա նահանգին մէջ գտնուող թրքական զօրաբանակի սպայական դասու խլրտումին:

Հայկական նահանգներուն մէջ, Տարօն, Կարին եւ յատկապէս Վասպուրական, հայ յեղափոխականները համախոհ տարրեր գտած էին թէ բանակայիններու եւ թէ ազատամիտ թուրքերու մօտ, իրենց գաղափարները տարածելու եւ տեղական գործակցութիւններ ստեղծելու առումով (Վանի նախկին կուսակալ Ալի Բէյի դէմ համաձայնաբար գործուած ահաբեկչութիւնը Պաթումի մէջ, Վասպուրականի Կեդր. Կոմիտէի նախաձեռնութեամբ եւ թուրքերու մասնակցութեամբ «Սապահ իլ Խէյր» գաղտնի թերթի հրատարակութիւնը, 1906էն սկսեալ եւայլն): Իրերու այս կացութեան մէջ Հ.Յ.Դ. Զորքող Ընդհ. Ժողովը (1907) պիտի որոշէր նոր թափ տալով շարժումին՝ նախաձեռնարկ ըլլալ եւ իրականացնել հայ եւ թուրք ընդհանուր գործակցութիւնը:

Անմիջական առիթը պիտի ներկայանար քանի մը ամիս ետք, երբ «Մեշվերթ»ի խմբագրապետ Ահմէտ Ռիզա Ժընեւ «Դրօշակ»ի խմբագրատուն գալով Դաշնակցութենէն խնդրեց ռումբեր հայթայթել իրենց դաւադրական գործերու համար: Արեւմտեան Բիւրոն, Հ.Յ.Դ. Ընդհ. Ժողովի որոշումը յայտնելով՝ առաջարկեց Թուրքիոյ ընդդիմադիր կազմակերպութիւններու մասնակցութեամբ համագումար մը կայացնել Ապտիլ Համիտը գահընկէց ընելու եւ Թուրքիոյ մէջ սահմանադրական կարգեր հաստատելու առաջարկանքով:

Սկզբունքային համաձայնութիւնը գոյանալէ ետք, ձեռնարկուեցաւ գործի եւ Է. Ակնունի Նոյեմբերին անցաւ Փարիզ նախապատրաստական աշխատանքները ծրագրելու համար: Կոնգրէն կայացաւ 1907 թ. Դեկտ. 27-29 եւ, մասնակից 9 կազմակերպութեանց եւ խմբագրութիւններու Յայտարարութեամբ, որոշուեցաւ միացեալ ուժերով գահընկէց ընել Սուլթանը եւ խորհրդարանական ազատ կարգեր հաստատել Թուրքիոյ մէջ:

Ծրագրուած յեղաշրջումին իրագործման մէջ հիմնական դերակատարութիւն ունեցաւ Մակեդոնիա հաստատուած թրքական զօրաբանակը, որ 1908 թ. Յուլիս 11/24ին յաղթական մուտք գործեց Կ. Պոլիս: Ապտիլ Համիտ, ճարահատ, եւ իր գահը փրկելու համար աւելի պատեհ առիթի սպասելով՝ հռչակեց Սահմանադրութիւն, զայն դուրս բերելով աւելի քան 30 տարիներու փոշիներու մէջ թաղուած վիճակէն: Կոնգրէի որոշումը՝ Սուլթանը գահընկէց ընելու, չիրականացաւ, ինչ որ լուրջ վտանգ էր հաստատուած նորագատ կարգերուն համար. իրողութիւն մը, մտահոգիչ յատկապէս Հ. Յ. Դաշնակցութեան համար, որ ազատական կարգերու ամրապնդման ի խնդիր յարատեւօրէն հետապնդեց Կարմիր Սուլթանը վերջնականօրէն տապալելու նպատակը:

Այսուհանդերձ, ստեղծուած առաջին եւ ընդհանուր խանդավառութիւնը լայն շունչ քաշել պիտի տար Օսմ. կայսրութեան ազատագործի եւ տառապեալ այլացեղ ժողովուրդներուն, որոնց գիրկընդխառնումին մէջ դարձեալ հայերը հանդէս պիտի գային որպէս ամենէն ջերմ ու անկեղծ ջատագովները օսմանցիութեան զաղափարին, մէկ կողմ ձգած կամ մոռցած պահ մը զինեալ ինքնապաշտպանութեան եւ հայկական ուրոյն դատ հետապնդելու դեռ երկուան իրենց ձգտումները:

Անտարակոյս է, որ Սահմանադրութիւնը իր բերած խօսքի, մամուլի, միութեանց եւ այլ ազատութիւններով, բարիք մը եղաւ հայ ժողովուրդին համար, որ մտաւոր վերածնունդի կարճատեւ բայց արգասալի ծաղկում մը ունեցաւ՝ գրականութեան, մշակոյթի, հրատարակութեանց եւ ընդհանրապէս ազգային կեանքի այլազան մարզերուն մէջ: Մայրաքաղաքի եւ կարգ մը այլ կեդրոններու կենդանացման այս շքեղ պատկերին հակառակ, հայկական ներքին զաւառներուն մէջ սակայն, բարեփոխութիւնները կը մնային գրեթէ աննշմարելի: Քրտական ցեղախումբերու սանձարձակութիւնները եւ իթթիհատական դիմակ անցուցած թուրք վարչամեքենայի ապիկարութիւնները կը մնային անփոփոխ: Առաջինները չէին կրնար հրաժարիլ թալանի, կողոպուտի եւ ապօրինի հարկահանութեան իրենց առանձնաշնորհումներէն, իսկ վերջինները՝ իրրեւ ներկայացուցիչները յաղթական թուրք ազգի, կը կարծէին ամէն իրաւունք ունենալ զերակշիռ դիրք վայելելու եւ կամայականօրէն գործելու (Տեսնել այս մասին պերճախօս վկայութիւններ կազմակերպական շրջաններուն յատկացուած գլուխներուն տակ.՝ Տարօն, Մասուն, Պիթլիս, Վասպուրական եւ այլն):

Դժբախտաբար սահմանադրական կառավարութիւնը եւ իշխող կուսակցութիւնը՝ Իթթիհատ եւ Թերաքքըն արմատական ոչ մէկ լուրջ միջոցի դիմեցին զսպելու համար անիշխանական, յետադէմ ու ցեղամոլ տարրերը. ընդհակառակն, թուրք նոր վարիչներուն մէջ քիչ չէր թիւր անոնց, որ ներքուստ ու կողմնակի ճամբաներով քաջալեր ու պաշտպան կը կենային այդ տարրերու դաւադրական սադրանքներուն, որոնցմով ի դերեւ կ'ելլէր օսմանեան կայսրութեան իրական բարեկարգութեան միտող ամէն բարի կամեցողութիւն:

Օսմանեան սահմանադրութեան յատկացուած այս գլուխին տակ ներկայացուած փաստաթուղթերը խմբած ենք հետեւեալ երեք բաժիններուն մէջ.՝

- 1.- **Նախապատրաստութիւն.**՝ Յարաբերութիւններ եւ բանակցութիւններ երիտասարդ թուրքերու տարբեր հատուածներուն, մակեդոնական, հայկական եւ այլ կազմակերպութեանց հետ, մինչեւ Թուրքիոյ ընդդիմադիր տարրերու Փարիզի Կոնգրէն (1907 թ. Դեկտ. 27-27) եւ անոր որոշումները:
 - 2.- **Սահմանադրութեան հռչակումը** (1908 թ. Յուլիս 11/24), Թուրքիոյ խորհրդարանական առաջին ընտրութեանց առիթով հրապարակուած յայտարարագրեր եւ փոխանակուած գրութիւններ:
 - 3.- **Համիտեան յետադիմական յեղաշրջումը** (1909 թ. Մարտ 31) եւ այդ առիթով Երիտասարդ Թուրքերու, Հ. Յ. Դաշնակցութեան եւ Սահմանադրութեան զօրավիգ կանգնող կազմակերպութեանց միացեալ եւ առանձին յայտարարութիւններն ու կոչերը:
- Վերջին երկու բաժիններուն վերաբերող յաւելեալ նիւթեր գետեղուած են նաեւ Պոլսոյ Պատ. մարմնին եւ կազմակերպական որոշ շրջաններու յատկացուած գլուխներուն տակ:
- Իսկ Ատանայի կոտորածին վերաբերող նիւթերը վերապահած ենք յաջորդ Ե. Գլուխին:

Ե. Փ.

Փաստ. 1716թ-6

Ա 1.- ՕՍՄ. ԹՈՒՐԹԻՈՅ ԸՆԴԴԻՄԱԳԻՐ ՏԱՐՐԵՐՈՒ ԿՈՆԳՐԷ

Յաջորդաբար՝ ֆրանսերէն երկու նամակներ Եգիպտոս հաստատուած Տոքթ. Ապտիլլահ Գետեթէն, որ Գահիրէի մէջ հիմնած էր ընդդիմադիր կազմակերպութիւն մը «Օսմանեան Սահմանադրական Լիկա» անունով: Ջերմօրէն ջատագով Թուրքիոյ այլացեղ ժողովուրդներու գործակցութեամբ Համիտեան վարչակարգի տապալման, ան սերտ յարաբերութեան մէջ էր ինչպէս Եգիպտոսի դաշնակցական կազմակերպութեանց, նոյնպէս նաեւ «Դրօշակ»ի խմբագրութեան հետ:

Ligue Constitutionnelle
Ottomane

شورای محمدي
جمعیه الشوری العمائیه

Օսմանեան
Սահմանադրական Լիկա

Le Caire, 11 mars 1907

Գահիրէ, 11 Մարտ 1907

Rédaction Drochak, Genève

Դրօշակի խմբագրութեան, ժընևա,

Chers citoyens et amis,

Միրելի քաղաքացիներ եւ բարեկամներ,

Dans l'unique but de réunir les efforts des différents éléments de notre empire pour secouer le joug infame de la dynastie ottomane et, généralement parlant du régime actuel, nous avons formé la Ligue Constitutionnelle ottomane. Nous sommes persuadés que votre chemin et le nôtre n'aboutiront qu'au même but. Nous sommes émancipés de tout préjugé de race et nous ne voulons [que] mêler avec la plus profonde sincérité nos cœurs et nos vœux, Arménien, Turc, Juif, Kurd, Laz, Grec, Albanais, Circassien, Khaldéens etc. etc.

Այն միակ նպատակով որ մեր կայսրութեան տարբեր տարրերը միացնելով՝ թօթափենք օսմանեան անարգ լուծը եւ ընդհանրապէս ներկայ վարչակարգը, մենք կազմեցինք Օսմանեան Սահմանադրական Լիկան: Համոզուած ենք, որ ձեր եւ մեր ուղիքն պիտի յանգին միեւնոյն նպատակին: Մենք ձերբազատուած ենք ցեղային ամէն նախապաշարումէ եւ ամենախորունկ անկեղծութեամբ կ'ուզենք միաւորել մեր սիրտերն ու բաղձանքները.՝ հայ, թուրք, հրեայ, քիւրտ, լազ, յոյն, չերքէզ, քաղղէացի, եւ այլն եւ այլն:

Nous vous adressons aujourd'hui nombre exemplaire de notre organe, N° 3 et espérons que vous ferez votre possible pour les propager à côté du vaillant Drochak.

Այսօր ձեզի կ'ուղարկենք բազմաթիւ օրինակներ մեր պաշտօնաթերթէն, թիւ 3, եւ կը յուսանք որ ձեր կարելին պիտի ընէք տարածելու համար ձեր արի «Դրօշակ»ին հետ:

Mes amis me chargent de vous transmettre leur salutation et je vous serre les mains très fraternellement.

Բարեկամներուս կողմէ պարտականութիւն ունիմ ձեզի փոխանցելու իրենց ողջոյնները. եղբայրօրէն կը սեղմեմ ձեր ձեռքերը:

Salutation de la Ligue
Dr. DJEVDET

Լիկայի ողջոյններով
Տ.թ. ՃԵԻՏԵԹ

Փաստ. 1719բ-2

Le Caire, 7 juin 1907

Cher Monsieur,

Je suis en possession de votre estimée du 7 et Votre décision étant un peu retardée, j'ai cédé au désir de publier l'appel en question avec deux autres articles sous forme d'une brochure, Désir manifesté par le Directeur de la Bibliothèque musulmane à Elisabethpol. En son temps je vous avais soumis la copie de l'appel. Veuillez le revoir encore une fois; si vous le jugez opportun je puis le rédiger avec les modifications et développements que vous et nous jugerons bons et à propos. Je suis toujours prêt et mes amis également le sont, pour agir d'un parfait accord avec vous tant que vous voudrez créer entres les éléments musulmans et nons musulmans de l'Empire un compatriotisme éclairé et pur de tout esprit religieux. Si je m'adresse souvent aux musulmans et me sers comme moyens persuasifs les préceptes de Coran, c'est pour frapper avec leurs propres armes afin d'impressionner mieux. Je recommande à votre attention l'article paru dans l'Edg-tihad N° 3, année II, signé

بر توبه كورد

c'est moi et je suis très satisfait de voir plusieurs de nos citoyens de vous souscrire à cette manière de voir.

Le moment est excessivement propice pour agir et faire agir.

Si "Sabah Oul Kheir" était rédigé mieux, grand serait l'effet produit. Hélas les musulmans sont lâchement trompés et réduits à un état d'abrutissement.

"Mieux vaut tard que jamais", quelque lueur d'espoir se fait sentir par ci par là. L'incendie salubre ne tardera pas d'éclater, l'incendie assainissante!

Nous vous répétons: nous sommes prêts à participer aux publications en question. Et dans toute circonstance nous marcherons en parfait accord. Le salut de notre empire commun est dans la fraternisation et solidarité des deux principaux éléments: arménien, turc.

Les Turcs sont plus dans les ténèbres, envoyons sur eux plus de lumière. Notre lumière leur fera voir qui est leur ennemi et qui sont leurs amis, autrement les massacres se renouvellent et la ruine devient définitive pour nous tous.

Agréez Messieurs nos sincères et très fraternelles salutations.

Dr. AB. DJEVDET

Գահիրէ, 7 Յունիս 1907

Սիրելի Պարոն,

Ստացած եմ ձեր 7 [թուակիրը] եւ Ձեր որոշումը քիչ մը յապաղած ըլլալով, տեղի տուի խնդրոյ առարկայ կողմի հրատարակման, բողոքի մը ձեւով՝ երկու այլ յօդուածներու հետ միասին. փափաք մը՝ զոր յայտնած էր էլիզավէթպոլի միւսիւլման գրադարանի տնօրէնը: Ատենին ձեր [հաւանութեան] ենթարկած էի կոչին պատճէնը: Հաճեցէք վերատեսնել անգամ մը եւս. եթէ յարմար եւ լաւ գտնէք, կրնամ խմբագրել զայն ձեր եւ մեր պատշաճ համարած փոփոխութիւններով եւ ընդլայնումներով: Պատրաստ եմ միշտ, նաեւ բարեկամներս, կատարեալ համաձայնութեամբ շարժելու, այնքան ատեն որ դուք պիտի ուզէք կայսրութեան մահմետական եւ ոչ-մահմետական տարրերուն միջեւ ստեղծել լուսամիտ եւ մաքուր հայրենասիրութիւն մը՝ [գերծ] կրօնական մտայնութենէ: Եթէ յաճախ մահմետականներուն կ'ուղղեմ խօսքս եւ, իբրեւ համոզիչ միջոց, կ'օգտագործեմ Գուրանի յղացքներ, այդ՝ իրենց իսկ գէնքերով հարուածելու եւ աւելի տպաւորութիւն գործելու նպատակով է:

Ձեր ուշադրութեան կը յանձնեմ «Իծթիհատ»ի մէջ (համար 3, Բ. տարի) լոյս տեսած յօդուածը՝ «Պիր թուրք-փիւրտ» ստորագրութեամբ. այդ էս եմ, եւ շատ գոհ եմ տեսնելով մեր հայրենակիցներէն շատերուն յարիւր այդ կարծիքին:

Պահը ծայրայեղորէն նպաստաւոր է շարժելու եւ շարժիլ տալու:

Եթէ «Սապահիւլ խէյր»ը՝ աւելի լաւ խմբագրուած ըլլար, ազդեցութիւնը եւս մեծ պիտի ըլլար: Աւա՛ղ, մահմետականները դիւրութեամբ կը խաբուին եւ անբանութեան կը մատնուին: «Աւելի լաւ է ուշ քան երբեք»: Հոս-հոս յոյսի որոշ նշոյլներ կը զգացուին, եւ հրդեհը՝ կազդուրիչ ու առողջարար, պիտի չուշանայ բորբոքելու...

Դարձեալ կը կրկնենք.՝ Պատրաստ ենք մասնակցելու խնդրոյ առարկայ հրատարակութեանց, եւ ամէն պարագայի տակ պիտի քալենք կատարեալ համաձայնութեամբ: Մեր հասարակաց կայսրութեան փրկութիւնը [կը կայանայ] երկու գլխաւոր տարրերու.՝ հայ եւ թուրք.՝ եղբայրակցութեան եւ զօրակցութեան մէջ: Թուրքերը աւելի խաւարի մէջ. լոյս սփռենք իրենց վրայ, մեր լոյսը տեսնել պիտի տայ իրենց, թէ ո՛վ է իրենց թշնամին եւ որոնք են իրենց բարեկամները. այլապէս ջարդերը պիտի վերանորոգուին եւ կործանումը բոլորիս համար վերջնական կ'ըլլայ:

Ընդունեցէք, պարոններ, մեր անկեղծ եւ եղբայրական ողջոյնները՝

ՏՔ. ԱՊ[ՏԻԻԼԼԱՀ] ՃԵԻՏԷԹ

1.- Վասպուրականի Գ.Յ.Դ. Կ. Կոմիտէի նախածեռնութեամբ հրատարակուող օսմաներն գաղտնի թերթ:

Փաստ. 872ա-3

Ա 2.- ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹԵԱՆ ՄԸ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ակնունքի ձեռագրով ֆրանսերէն նոթագրութեան երկու էջ: Պատրաստուած է, հաւանաբար, ի գործակցութիւն Չորրորդ Ընդի. Ժողովի որոշումին եւ կամ Սեպտեմբերի Անճեա Ա-իգայի Ժընեւ «Դրօշակ»ի խմբագրութեան հետ ունենալիք հանդիպման ի նախապատրաստութիւն:

25-8-1907

Համաձայն ենք.

- 1) Հրակիրել Սահմանադիր խորհրդարանը
- 2) ա - Մասնակցութիւն Օսմանեան կայսրութեան բոլոր ժողովուրդներուն. բ - Զօրակցութիւն քաղաքական ընդդիմադիր խմբակցութիւններուն
- 3) Ընդդիմադիր կուսակցութեանց Կոնգրէ մը
 - ա - Բողոք վարչակարգին դէմ
 - բ - Վարչակարգին տապալումը
 - գ - Սահմանադիր խորհրդարան
 - դ - Միջոցներ (յեղափոխական-գիւնեալ յեղափոխութիւն, տեւոր եւ խաղաղ)
 - ե - Խորհուրդ
- 4) Կոնգրէի կազմը
 - ա - Թրքական կուսակցութիւն (Սապահետին)
 - բ - Ժէօն թուրքեր (Թէրազզը, Յաւաջըիմութիւն)
 - գ - Օթթոմանեան միութիւն (Գահիրէ)
 - դ - Դաշնակցութիւն
 - ե - Հնչակեաններ

- գ - Արմենական
- է - Ալպանացիներ
- ը - Յոյներ
- թ - Մակեդոնացիներ (Պուլկարիա)
- ժ - Սերպեր
- ժա - Քիւրտեր
- ժբ - Արաբներ
- ժգ - Ասորի (սուրիացի)
- 5) Ընտրութիւն գործադիր մարմնի մը
- 6) Բիւրօ մը՝ Կոնգրէն պատրաստելու համար:
 - ա) Ընտրութիւն մնայուն մարմնի (գաղտնի)
 - բ) Ընտրութիւն (գործադիր) մարմնի
 - գ) Վաւերականութեան հարց (ցենզ)
 - դ) Մախաբ
- Կոնգրէի ձեռնարկի որոշումն — լինի
- Բիւրօն կազմակերպելը — անել
- Պատրաստութիւն Կոնգրէի — անել²

2.- Վերջին երեք տողերը՝ հայերէն են բնագրին մէջ:

Փաստ. 50-78

Ա 3.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՐՈՅԷՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՐՈՅԻՆ

1907, 2 Հոկտ., Ժընև

Սիրելի Արտաւազը³,

Դարձեալ ձեր նամակները՝ քիչ եւ կարճ:

Այսօր ֆրանսիական լրագիրները տպագրել են հեռագիր Վանի Ալի-Բէյի սպանութեան լուրը՝ Բաթումում: Իմ ծանօթները անչափ հետաքրքիր են դրա մանրամասներով: Արդեօք մի բան գրել կամ հեռագրել ես արդէն:

Երկու օր է այստեղ է Պարիզից եկած Ռիզան: Երկար վէճ եւ խօսակցութիւններ: Պահանջեցինք, որ իբր նշան իր «վստահութեան», իր թերթի մէջ փոխէ տոնը դէպի Քաթա⁴, եւ դրանով մի նշան տայ իր էվոլյուսիոնի: Էական կէտերում համաձայնութիւն կայացաւ այն համաժողովի մասին, որի որոշումը տուեց [Ընդհ.] Ժողովը:

Իբր հիմք դրուեց՝ — «Assemblée Constituante»⁵ եւ իբրեւ միջոց՝ յեղափոխական կռիւր: Յուցակագրուեցին մօտ 10 խմբակցութիւններ, որոնք կարող են մասնակցել: Վաղը վերջնական որոշումներ կ'ունենանք: Նրան, հարկաւ, չենք վստահի. բայց կը ծառայեցնենք մեր ծրագրած ձեռնարկին: — Նա պնդում է որ Երկրի մէջ եղած դէպքերը իրանց հետ կապ ունեն. — այս ստուգելու էք: Յայտնեց որ Նաւահանգիստ⁶ մարդիկ ունեն — նոյնիսկ, որ ի հարկին կարող է հասցէն տալ: Այդ էլ մենք կը ստուգենք:

Մանրամասները եկողի միջոցով⁷:

Խնդրում եմ քեզ յատուկ ուշադրութիւն դարձնել Միտրօ-ի յայտնութիւններին, որի մանրամասները հաղորդուած են Աւետիսին:

-----8

Հատորները⁸ շտապեցրէք:
Նամակ գրեցէք:

Ձեր՝ ՍՈՒՐԷՆ¹⁰

3.- Չեռագիրը Ակնուցիին է. Արտաւազը ծածկանունն է Արեւելեան Բիւրոյին:
4.- Քաթա՝ Գ. Յ. Դաշնակցութիւն:
5.- Ֆրանսերէն՝ Սահմանադիր ժողով:
6.- Նաւահանգիստ՝ Պաթումի ծածկանունն է:
7.- «Եկողը» Աւետիս Ահարոնեանն է, որ կը պատրաստուէր Թիֆլիս մեկնիլ:
8.- Նամակով արժարժուած խնդրին հետ կապ չունեցող մասերը գեղջուած են (կիտաւոր):
9.- Գատորները՝ հազարներ. իւրաքանչիւր հատորը հազար ֆրանք էր:
10.- Սուրէն՝ Արեւմտեան Բիւրոյի ծածկանունը:

Փաստ. 872ա-5

Ա 4.- ԱՀՄԷՏ ՌԻԶԱՅԻ ՆԱՄԱԿԸ

Ժընևէն Փարիզ վերադարձին, Ահմէտ Ռիզա կը յայտնէ թուրքերու համամտութիւնը Կոնգրէի գումարումին:

Le 9 octobre 1907

Monsieur,

J'ai fait le compte rendu à notre Comité de l'entrevue que nous avons eue à Genève.

Notre Comité admet le principe de la réunion d'une sorte de Congrès. Il a déjà désigné la personne qui s'occupera, dans le bureau, de l'organisation de cette réunion.

Il demande avant tout que d'ores et déjà un accord soit établi pour que le Congrès ne discute aucun projet de réforme s'il n'est composé de membres ottomans. Mais tous les mécontents indistinctement peuvent en faire partie à la condition de ne s'occuper que d'une organisation exécutive, comme d'ailleurs il a été conveunu entre nous.

Nous attendons donc la réponse de votre Comité pour la réunion du bureau.

Nous avons écrit dans ce sens aux Grecs et aux Albanais.

Veillez agréer, Monsieur, l'expression de mes sentiments distingués.

AHMED RIZA

Vous trouverez dans le dernier Mechveret un article assez corsé; mais il vise un fait qui n'a aucun rapport avec votre parti.

A. R.

9 Հոկտեմբեր 1907

Պարոն,

Մեր Կոմիտէին զեկուցեցի Ժընևի մէջ մեր ունեցած տեսակցութեան մասին:

Մեր Կոմիտէն կ'ընդունի տեսակ մը Կոնգրէի գումարման սկզբունքը: Ան արդէն նշանակեց, իր բիւրոյին ներս այն անձը, որ պիտի զբաղի այդ հաւաքի կազմակերպութեամբ:

Ան [Կոմիտէն] կը պահանջէ որ նախ եւ առաջ համաձայնութիւն գոյանայ այն մասին որ Կոնգրէի քննարկման չենթարկուի ոչ մէկ բարեկարգչական ծրագիր, եթէ ան լման բաղկացած չէ օսմանցի անդամներէ:

Սակայն անխտիր բոլոր դժգոհները կրնան մասնակցիլ, պայմանաւ որ զբաղին միայն գործադրութեան կազմակերպութեամբ, ինչպէս որ համաձայնած ենք միասնաբար:

Բիւրոյի գումարման համար, ուրեմն, կը սպասենք ձեր Կոմիտէի պատասխանին:

Այս իմաստով գրեցինք յոյներուն եւ ալպանացիներուն:

Հաճեցէք ընդունիլ, պարոն, մեր ազնիւ զգացմանց հաւաստիքը:

ԱՀՄԷՏ ՌԻԶԱ

Վերջին «Մեշվերէթի» մէջ պիտի գտնէք բաւական ուժեղ յօդուած մը. նպատակակէտը, սակայն, ոչ մէկ կապ ունի ձեր կուսակցութեան հետ:

Ա. Ռ.

Փաստ. 50-27

Ա 5.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻՆ

1907 Հոկտ. 13, Ժրնեւ

Ամերիկայի Կ. Կոմիտէին
Ընկերներ,

Ներփակ երկու նամակները հաճեցէք պահարաններու մէջ դնել եւ ուղարկել Վերակազմեալ Հնչակեան երկու հատուածներուն:

Նամակները բաց կ'ուղարկենք որպէսզի դուք ծանօթանաք բովանդակութեան:
Այս մասին պէտք է բացարձակ գաղտնի պահէք, մինչեւ կոնգրէն տեղի չունենայ:
Կոնգրէի նախապատրաստութեան մէջ ենք:

Ընկերական բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

Փաստ. 50-61

Ա 6.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Գաղտնի

Արեւմտեան Բիւրօ
1907 Հոկտեմբեր 12, Ժրնեւ

Վերակազմեալ Հնչակեան Կ. վարչութեան
Յարգելի հայրենակիցներ,

Օսմանեան այժմեան ռեժիմի դէմ կռուող եւ բողոքող տարրերից մի քանիսի մէջ միտք է յղացել կազմակերպել մի ընդհանուր կոնգրէ, որին պիտի հրահրուին Թուրքիայի այլեւայլ ազգութիւնների ներկայացուցիչներ՝ արտա-յայտելու մի ընդհանուր բողոք այժմեան կարգերի դէմ եւ մշակելու մի ընդհանուր գործելակերպ նոր կարգեր հաստատելու համար:

Հաւատացած՝ որ դուք եւս կը կամենաք մասնակցիլ այդ նպատակով կազմուած կոնգրէին, մենք գտնում ենք նպատակայարմար, նախօրօք կազմել հայ կազմակերպութիւնների եւ քաղաքական խմբերի նախապատրաստա-կան խորհրդակցութիւն, որոշելու հայերիս դիրքը եւ քննելու այն առաջարկները, որ կարող ենք ներկայացնել ընդհանուր կոնգրէին:

Եթէ դուք համամիտ էք, բարի եղէք, որքան կարելի է շուտ, մեզ պատասխանել, 1) որտե՞ղ եւ ե՞րբ կարող ենք կազմել այդ խորհրդակցութիւնը, 2) ի՞նչ առաջարկ ունիք ձեր կողմից անելու:

Խնդրում ենք ամէն միջոց գործ դնել որպէսզի խորհրդակցութիւնը եթէ պիտի իրագործուի, տեղի ունենայ ոչ ուշ քան մինչեւ մի ամիս, քանի որ ուշացումը վնասել կարող է մեր ընդհանուր գործին:

Յարգանքներով
Հ.Յ.Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

Յ.Գ.- Մեր դիմումը ուղարկուած է 1) Հնչակեան կեդր. վարչութեան. 2) Արմենականներին եւ 3) Վերակազմ-եալ Հնչակեան երկու հատուածներին:

Փաստ. 872ա-6

Ա 7.- Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ

Մարտի 31, Հոկտեմբեր 1907

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
"ԱՐՄԷՆԻԱ"
ԼՐԱԳՐԻՆ
ՄԱՐՍԷՅԼ (Ֆրանս)

REDACTION
DU JOURNAL ARMÉNIEN
"ARMÉNIA"
MARSEILLE (France)



Պատուարժան վարչութիւն
Հ.Յ.Դաշնակցութեան Արեւմտեան Բիւրոյին
Ժրնեւ

Յարգելի հայրենակիցներ,

Ստացած եմ Հոկտ. 12ի Ձեր նամակը:
Համակրելով Ձեր այն մտադրութեան որով կ'ուզէք խորհրդակցական ժողով մը կազմել, որոշելու համար հայերիս բռնելիք դիրքը Թուրքերի այժմեան վարչական դրութեան դէմ բողոքող տարրերի ընդհանուր համաժողովին նկատմամբ, որոշ-լած է խմբագրութեանս կողմէն՝ Ձեր այդ հայկական խորհրդաժողովին մասնակ-

ցելու համար իբրեւ ներկայացուցիչ դրկել Տիար Յովսէփ Սարաֆեանը, որ բնիկ տիգրանակերտցի լինելով, մօտէն ծանօթ է Թուրքահայաստանի վիճակին ու գործերին եւ թէեւ Ամերիկա հաստատուած է, բայց այժմ Լոնտոն կը գտնուի իր անձնական գործերի համար:

Ուստի հաճեցէք շուտով իմացնել մեզ Ձեր հրահրած խորհրդաժողովի տեղն ու օրը, որ մեր կողմէ Տիար Սա-րաֆեան գայ մասնակցիլ: Մեզ համար միեւնոյնն է եթէ դուք յարմար տեսնէք գումարել այդ խորհրդաժողովը ժրնեւ կամ Փարիզ կամ Լոնտոն:

Թիւրիմացութեան տեղի չտրուելու համար, հարկ կը համարեմ այս եւս պարզել թէ Տիար Յովսէփ Սարաֆեան կու գայ խորհրդաժողովին մասնակցիլ Արմէնիայի խմբագրութեան կողմէն. իսկ Արմէնական անունով կազմա-կերպութեան մը հետ մենք պաշտօնական ոեւէ յարաբերութիւն կամ կապակցութիւն չենք ունեցած երբեք եւ չու-նինք: Այս մասին քանիցս արդէն յայտարարուած է Արմէնիայի մէջ, նշաւակելով զանոնք իբրեւ կեղծարարներ, որոնք Արմէնիայի անունով կը խօսին խաբելու համար միամիտները:



Ընդունեցէք յարգալիր բարեւներս
Տնօրէն-խմբագիր Արմէնիա լրագրին
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

1715ա-1

Ա 8.- ՄԱԿԵԴՈՆԱՑԻՆԵՐԷՆ ՆԱՄԱԿ

Թարգմանութիւն մակերդնական յեղափոխական կազմակերպութեան նամակին, որմով դրական տրամադրութիւն կը յայտնուի Փարիզեան Կոնգրէին մասնակցելու: Յայտնենք որ գրութեան մէջ յիշատակուած մակերդնական միւս կուսակցութիւններն եւս ի վիճակի չեղան պատգամաւորներ ուղարկելու Կոնգրէին իբր հետեւանք քիչ օրեր ետք, Նոյեմբեր 12-ին, տեղի ունեցած այն ահաբեկչութեան, որուն զոհ զացին մակերդն. յեղափոխական շարժման գլխաւոր առաջնորդ Բորիս Սարաֆով եւ իր ընկերը՝ Եուվան Կարվանով:

Organ. Revul. Du Vilayet d'Andrinople

Le 3/20 (?) novembre 1908

Chers camarades,

Notre ami le citoyen Michel Gherdjikoff nous fait connaître son entretien avec un de vos amis à Philippopolie sur un congrès éventuel entre les organisations révolutionnaires en Turquie et la formation d'une ligue ou fédération internationale à Constantinople. Nous sommes ravis de votre heureuse initiative et en vous en applaudissant nous vous déclarons prêts de nous rallier à cette tâche commune de révolutionnaires. Comme délégués de notre Organisation nous désignons les citoyens Dr. S. Dotschkow et D. Kuthérinsky qui seront munis de plein pouvoir parlementaire et de ses lettres de créance.

Nous devons vous informer que dès que nous avons connu la proposition de votre Comité Fédératif, nous l'avons recommandé aux autres formations de l'Organisation Macédonienne. A présent nous sommes en état de vous informer que les deux fractions (Sandansky de Serès et les Centralistes de Monastère), d'après nos renseignements sont favorables à votre idée et qu'elles sont disposées à prendre part au Congrès International.

Il est désirable dans ce Congrès que vous invitiez aussi des organisations révolutionnaires Arabe, Albanaise et Courde, s'il [y] en a.

Il va sans dire qu'il est indispensable de nous informer en temps opportun pour la date et le lieu de la Réunion en question, aussi bien que les organisations susmentionnées.

Recevez, chers camarades, nos salutations fraternelles et l'assurance de nos sentiments inébranlables pour la Cause commune.

Vive la Turquie libérale et fédérative!

p. le président: Dr. S. DOTSCHKOW
p. le secrétaire: A. RAZBOÏNIKOFF

P.s. Notre adresse: Dr. S. Dotschkow, Andrinople (Poste d'Andrinople)

Adresse 1) de l'organisation de Serès: Rédaction du journal "Constitutionna Zaria", passage Lombardo 10 pour Mr. Yani Sandansky, à Salonique.

2) de l'organisation Centraliste: Andrinople Bulgare à Uskub (dans une deuxième enveloppe, signée pour Christo Matoff, mettez la lettre).

3) de l'organisation de Stroumitza: Rédaction du journal "Elsinstvo" pour Chr. Tschernopuff à Salonique.

Ատրիանապոլիս, 3/20 (?) Նոյեմբեր 1908

Միրելի ընկերներ,

Մեր բարեկամը՝ քաղաքացի Միշէլ Գերճիկով մեզի կ'իմացնէ իր ունեցած տեսակցութիւնը Փիլիպպոլիսոյ ձեռք բարեկամներէն մէկուն հետ ի մասին Թուրքիոյ յեղափոխական կազմակերպութեանց հաւանական կոնգրէի մը եւ Կոստանդնուպոլսոյ մէջ միջազգային լիկայի մը կամ Դաշնակցութեան մը կազմութեան: Մեծապէս ուրախ ենք ձեր գեղեցիկ նախաձեռնութեան համար եւ, շնորհաւորելով ձեզ ատոր համար, կը յայտնենք որ պատրաստ ենք միանալու յեղափոխականներու այդ հասարակաց գործին: Մեր կազմակերպութեան իբրեւ ներկայացուցիչներ կը նշանակենք քաղաքացիներ Տ. Ս. Տոչքովը եւ Տ. Քուլթերիմսքին, որոնք օտուած պիտի ըլլան բանազնացներու լիազօրութեամբ եւ համապատասխան հաւատարմագրերով:

Հարկ կը տեսնենք իմացնել, որ ձեր Դաշնակցային Կոմիտէի առաջարկին ծանօթանելէ անմիջապէս ետք, յանձնարարած էինք զայն Մակեդոնական կազմակերպութեան միւս միաւորներուն: Այժմ ի վիճակի ենք ձեզի յայտնելու, որ ըստ մեր տեղեկութեանց երկու միաւորներ — Սերէսի Սանդանսկին եւ Մոնաստրի Կեդրոնականները — համաձայն են ձեր մտքին եւ տրամադրի մասնակցելու միջազգային կոնգրէին:

Փափաքելի է որ այս Կոնգրէին հրաւիրէք նաեւ արաբ, ալպան եւ քիւրտ յեղափոխական կազմակերպութիւններ, եթէ այդպիսիները կան:

Աւելորդ է ըսել որ անհրաժեշտ է պատեհատեն իմացնել մեզի, ինչպէս եւ վերոյիշեալ կազմակերպութիւններուն, խնդրոյ առարկայ Կոնգրէին թուականն ու վայրը:

Ընդունեցէք, սիրելի ընկերներ, մեր եղբայրական ողջոյնները եւ հասարակաց Դատին համար մեր անսասան զգացումներուն հաւաստիքը:

Կեցցէ՛ ազատական եւ դաշնակցային Թուրքիան:

Վասն նախագահի՝ Տ. Ս. ՏՈՉԿՈՎ
Վասն քարտուղարի՝ Ա. ՌԱԶՊՈՅՆԻԿՈՅ

Փաստ. 872ա-7

Ա 9.- ՆԱՄԱԿ ԱՀՄԷՏ ՌԻԶԱՅԷՆ



MECHVERET
Organe de la Jeune Turquie
4, Place Monge. 4
PARIS

Le 10 novembre 1907

10 Նոյեմբեր 1907, Փարիզ

Monsieur,

Պարոն,

Vous êtes assurément au courant du mouvement patriotique qui se produit en Asie Mineure. Vous voyez donc qu'on y travaille avec une encourageante activité.

Vous avez dû voir aussi dans les publications turques les conseils que nous donnons à nos compatriotes. (Chou-raï Ummett du 15 oct., lettre "à mon frère Ali").

Que compte faire votre parti? Où en êtes-vous du projet du Congrès? Pourquoi ne répondez-vous pas à la lettre que, d'après notre attente préalable, je vous ai adressée le 9 octobre?

Vous n'êtes certainement pas désireux de voir se perpétuer ce régime.

Je peux à la rigueur m'absenter de Paris. C'est pourquoi je serai content de connaître la décision de votre Comité.

Veillez agréer monsieur, l'expression de mes sentiments bien distingués.

AHMED RIZA

Վստահօրէն տեղեակ էք հայրենասիրական այն շարժումէն, որ տեղի կ'ունենայ Փոքր Ասիոյ մէջ: Կը տեսնէք ուրեմն որ այդ ուղղութեամբ աշխատանքը կը տարուի քաջալերիչ աշխուժութեամբ:

Տեսած պէտք է ըլլաք նոյնպէս թրքական հրատարակութեանց մէջ այն խորհուրդները, գորս կու տանք մեր հայրենակիցներուն (Շուրայ Ումմէթ, 15 Հոկտ. նամակ «Եղբայրս Ալի»):

Ի՞նչ կը խորհի ընել ձեր կուսակցութիւնը: Մեր հասաւ Կոնգրէի ծրագիրը: Ինչո՞ւ չէք պատասխաներ այն նամակին, գոր ըստ մեր նախկին ակնկալութեան՝ Հոկտեմբեր 9-ին ուղղեցի ձեզի:

Փափաքող չէք անշուշտ, որ այս վարչակարգը յաւերժանայ:

Ի հարկին կրնամ բացակայիլ Փարիզէն: Այդ պատճառաւ գոհ պիտի ըլլայի իմանալ ձեր Կոմիտէին որոշումը:

Հաճեցէք ընդունիլ, Պարոն, յարգանացս հաւաստիքը:

ԱՀՄԷՏ ՌԻԶԱ

Փաստ. 872ա-8

Ա 10.- ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆ-ՆԱՄԱԿԸ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Արեւմտեան Բիւրոյին

Ժընեւ

Յարգելի հայրենակիցներ,

Այսօր ստացած մէկ նամակէս կ'իմանամ թէ Վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւնը զիս ընտրեր է իր ներկայացուցիչ՝ Թուրքիոյ այլեւայլ ազգութեանց բողոքող տարրերուն կողմէ ի մօտոյ գումարուելիք Քոնկրէին:

Վեր. Հնչ. կուսակցութիւնն այդ պատիւն ինձ ըրեր է առանց առաջուց ինձ յայտնելու եւ հաւանութիւն ստանալու: Զպատկանելով ոեւէ կուսակցութեան, չեմ ուզեր այդպիսի քոնկրէի մը մասնակցիլ իբր կուսակցութեան մը ներկայացուցիչ: Կը փութամ յայտնել ձեզ իբր քոնկրէին նախաձեռնակներուն, ամէն թիւրիմացութիւն փարատելու համար: Գրեցի արդէն Վեր. Հնչ. կուսակցութեան, որպէսզի ուրիշ անձ մը գտնեն:

Ընդունեցէք յարգանացս հաւաստիքը

Փարիզ, 6 Դեկտ. 1907

Ա. ԶՕՊԱՆԵԱՆ

Փաստ. 1271-139

Ա 11.- ԱԿՆՈՒՆԻԷՆ ԺԵՆԵՒ՝ «ԳՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Փարիզի Կոնգրէի գումարումէն աւելի քան ամիս մը առաջ, Է. Ակնունի՝ նախապատրաստական աշխատանքներու եւ բանակցութիւններու համար, արդէն Փարիզ է, ուրկէ կը գրէ Ժընեւի եւ Թիֆլիսի ընկերներուն:

1907, 27 [Նոյեմբեր], Պարիզ

Սիրելիներ,

Ստացայ Քիյառի հասցեով ուղարկած ձեր ծրարը: Հնչակեան խմբի այդ նամակից ուրիշ բան չեմ եզրակացնում, բայց եթէ այն, որ մարմնի չկայ, կազմակերպումն գոյութիւն չունի:

Հայկական մարմինների համախմբման գործով կը զբաղուեն միայն երկուշաբթի. առ այժմ բոլոր ջանքերս ուղղուած են թուրք խմբերին, եւ օրէց օր ամրանում է յոյսս՝ որ կարող պիտի լինենք համաձայնութեան բերել: Վաղը Բիւրոն կազմուած կը լինի. երկու թրքական՝ եւ մեր ներկայացուցիչներից:

Սապահեդդին եւ իր ընկերները ինձ վրայ լաւ տպավորութիւն թողեցին: «Խնձորների» խնդրի մասին Ռիզայի մի ընկերոջ հետ այսօր պիտի բանակցեն: Թուում է ինձ, որ եթէ այդ հարցը մի փոքր յետաձգեն, զգոյշ բան արած պէտք է լինելու:

Գրեցեք ինձ անմիջապէս արդեօ՞ք Լեւակով վերադարձաւ. եթէ այո, թող իմաց տայ ինձ. իրան գրելիք ունեն: Հելլենական խումբը «սկզբունքով» համաձայնութիւն տուեց մասնակցութիւն: Ալբանականի հետ դեռ բանակցութեան չեմ սկսել:

Իմ հասցէն տուէք Միշային եւ Սիրանոյշին, գուցէ գրելիք ունենան: Վարդանին յատկապէս եմ խնդրում չմոռանալ «փորձերի» խնդիրը: Միքայելը այնտե՞ղ է արդեօք:

Հասցեւ – Hôtel des Américains, B^d S^t Michel.— ինձ:

Բարեւներ, ձեր
ԽԱՉԱՏՈՒՐ

Փաստ. 50-79

Ա 12.- ԱԿՆՈՒՆԻԷՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

907, 28 Նոյ., Պարիզ

Սիրելի Արտաւազ,

Ինչպէս տեսնում ես, գրում եմ քեզ Պարիզից, ուր եկել եմ հինգ օրից ի վեր, մանկավարժական¹¹ Կոնգրէի խնդրի համար: Պատրաստութիւնները տեսնում ենք եւ առ այժմ շատ զոհ եմ բոլորի տրամադրութիւններից. կազմակերպական Բիւրոն – կազմուած մեր, Ռիզայի եւ Սապահեդդինի խմբերի ներկայացուցիչներից – վաղը սկսում է իր աշխատանքները:

Թուրքերի յարաբերութիւնները մի քիչ նման են յոյն-մակեդոնացիներին, թէւ արտաքուստ արեւելեան քաղաքավարութեան քողի տակ, եւ ինչպէս երեւում է, մենք բաւական քրտինք պիտի թափենք՝ նրանց հաշտութիւնը կայուն դարձնելու համար:

Մեր հիմնախնդիրներն են՝ ռեժիմի դէմ ընդհանուր, միացած բողոք, պահանջ որ այդ ռեժիմը ոչնչացուի. գումարումն հիմնադիր ժողովի սահմանադրական կարգ մշակելու. եւ իբրեւ միջոց՝ յեղափոխական ճանապարհը: Ընդունում եմ:

Հաւանքով կը լինեն ինձ ազգ. կազմակերպութիւններ

եւ խմբերի ներկայացուցիչներ, իւրաքանչիւրից երեքական հոգի: Կոնգրէն պիտի կազմի միջազգային կոմիտէ, իր որոշումները իրագործելու եւ հարկաւոր քայլերն անելու համար:

Շատ յոյս ունիմ, որ մեր ծրագիրը աջողութեամբ վերջանայ, այստեղ, իբրեւ մի լաւ կամուրջ, միւսին անցնելու համար: Չեմ վարանում ասելու քեզ որ առանց այս միջազգային բնաւորութեան մեր վիշապի գործը¹² սկսել *անկարելի* է եւ *անկատար*:

Երկարօրէն չեմ գրում, քանի որ խնդրել եմ Ռոզըրէի մեր ընկերներին¹³ որոնց շարունակ գրում եմ տեղեակ պահել ձեզ անցածից:

Շամի¹⁴ ընկերներին գրեցեք այս մասին: Նրանք խոստացել են տեղեկագիր ուղարկել Կոնգրէի համար – որքա՞ն պատեհ կը լինէր:

Խնդրում եմ Ռոստոմից՝ ինձ մանրամասն գրել Իրանի իր ձեռնարկից¹⁵. այն հարկաւոր է այստեղ:

Լաւ բարեւներ,
Չեր ԱԿՆՈՒՆԻ

Մեր այստեղի բարեկամները ոգեւորուած են այս նոր քայլով:

11.- Յայտնաբար «մանկավարժական» այլաբանական իմաստով գործածուած է:

12.- Վիշապի գործ, որոնք պէտք է կատարուէին անպայման թուրքերու մասնակցութեամբ:

13.- Ռոզըրէն «Դրոշակ»ի հասցէն է ժընեւի մէջ:
14.- Շամը՝ Վանն է կամ Վասպուրական:
15.- Իրանի ձեռնարկ, ակնարկութիւն է Ռոստոմի առաքելութեան դէպի Իրան, պարսիկ յեղափոխականներու հետ գործակցութեան համաձայնութիւն կնքելու:

Փաստ. 50-80

Ա 13.- ԱԿՆՈՒՆԻԷՆ ՌՈՍՏՈՄԻՆ

30 Նոյ. 1907, Պարիզ

Սիրելի Ռոստոմին,
(Քեզ եւ Արտաւազը ինձ համար¹⁶)

Այստեղ մեկնելուցս քանի մի օր առաջ ստացուեց քո նամակը, ուր «պէտք է շտապել» ասում էր՝ Լիսի գործի համար¹⁷. քու այս խօսքերից, ինչպէս ասում են, քէֆս եկաւ. այնքա՞ն ձանձրացել էի անվերջ «եափաշ-եափաշներից», որ մեր բոլոր ընկերների միակ տաքտիկն է դարձել:

Այստեղ ձեռնարկած Կոնգրէն խոստանում է լաւ վախճան ունենալ: Քանի մի օր առաջ այս մասին Արտաւազը ինձ արդէն գրեցի, թէ եւ շատ համառօտ, թողնելով որ մանրամասները գրեն ժընեւի իմ cousin-ները, որոնց au courant¹⁸ եմ պահում:

Հանգամանքները Լիսում այնպէս են դասաւորուած, որ աւելի քան պատասխանատու է՝ «միայն մեր կողմից» մեր անուշով դպրոց բանալը: Եւ ես իբր անհրաժեշտ պայման եմ ընդունում, ինչպէս եւ այդ որոշուեց Վիեննա¹⁹, որ այն լինի միջազգային դպրոց, բոլոր ազգերի երեխաների համար ու նրանց միջոցով: Մեր հարեւանները, առանձին առանձին, շատ լաւ են տրամադրուած եւ առանձին վստահութիւն ունեն մեզ վրայ: Տարաբախտաբար միմեանց հետ շատ վատ են ու համարեա պատրաստ՝ մենամարտի բռնուելու: Երեւակայի, ահագին խնդիր դարձաւ այն հարցը, թէ արդեօ՞ք Սապահ(եւտիսին)ի մօտ լինի առաջին հաւաքումը, թէ Ռիզայի – հագիւ անցանք այդ կամուրջը:

Եթէ Լիս²⁰ կողմից որեւէ գաղտնի ինտրիգ չլինի, վստահ կարելի է ասել, որ որոշման կը հասնենք, եւ կը պատրաստենք այն պատուանդանը որ ուզում ենք:

Կոնգրէն վերջացնելուց յետոյ, – կը տեւի մինչեւ 12-15 օր – ժընեւով կ'անցնեմ՝ դէպի այն կողմը: Տարաբախտաբար, դուք բոլորդ, ձեր կողմից ոչինչ չէք արել՝ գործի շտապեցման եւ աջողութեան համար: Քանի քանի անգամ գրեցի «կոմիսէրների» մասին. քանի՞ հոգի

ապսպրանք տարան, եւ վերջինը՝ Մանուշակը: Դեռ առանձին բան չէք արել: Դրոն եւ Մարտիրոսը²¹ անուղղակի են եկել – եւ Դրոն ենթարկուած օպերասիոնի, դեռ հիւանդանոցումն է: Հարկաւոր էր դրանց լաւագոյն ընկերներից մի քանի հոգի յատկապէս ճամբել այս կողմը: Դուք այդ չարիք եւ չգիտեմ ինչու: Մանուշակի միջոցով ուղարկեցի մանրամասներ – չկան: Վաղուց չի գրում, եւ նոյնիսկ չգիտեմ, նրա հասցէով գրած նամակներս տեղ հասան:

Յոյս ունէի Գարոյի վրայ. նա էլ հիւանդացաւ. քեզ վրայ, դու էլ տարուեցիր դիպլոմադիական բանակցութեան է՛ն բարդ հարցով:

Այդ դանդաղկոտութիւնը, հարկաւ, ինձ չի կանգնեցնի: Առաջ կը քշեմ: Յոյս ունեմ մի լաւ թուրք գտնել այստեղ. մէկը կայ՝ պիտանի եւ վստահելի: Մակեդոնացիները պատրաստ են:

Ասա մեր cousin-ներին²², որ Լիսի խնդիրը, այժմեան պայմաններում, կարելոր արժէք ունի: Թեհրանում գործերը վատ չեն. նրանք այս եւ այն ձեւով առաջ կ'երթան եւ Հիւսիսակերտ²³. եւ քաղաքական կատարեալ անհեռատեսութիւն պիտի լինի, այսքա՞ն տարիների ջանքերից եւ պահանջներից յետոյ, մի քայլ չանել Լիս, ուր ինչպէս իրանք թուրքերն են խոստովանում, մի աքացի է հարկաւոր, խարխուլ շէնքը փլելու համար: Խո՞ւմ չի կարելի այսօր էլ մեր ժամանակը եւ ոյժերը վատնել հոգաբարձական եւ նոյնիսկ կաթողիկոսական ընտրութիւնների համար, չգիտեմ ինչ մեկնաբանութիւններով:

Որքա՞ն լաւ կը լինէր, եթէ կարողանայիք մի քանի ընկերներ գալ ու մտնել այս ձեռնարկի մէջ, որը ոչ միայն կարելոր, այլ եւ հնարաւոր է...

Թուրքերը մեզանից մի քանի նմոյշ-խնձորներ²⁴ են խնդրում, իրանց այգիում տնկելու համար: Խոստացանք եւ արդէն պատրաստուած էլ են: Դա մի լաւ միջոց է, նրանց փորձելու համար. խոստանում են տանել ու պահել:

Կրետէնի գործը²⁵, քեզ արդէն գրած պիտի լինեն, ընդհանրապէս անաջող եղաւ: Խոստովանում է ինքն

16.- Արտաւազը՝ ծածկանուցն է Արեւելեան Բիւրոյի: Գրութեան ընդհանուր ոճը այլաբանական է:
17.- Լիսի գործ, ակնարկութիւն Պոլիս (Լիս) կատարուելիք դաւադրական արարքներու:
18.- Cousin, ֆրանսերէն՝ գարմիկ. ժընեւի cousin-ներ «Դրոշակ»ի խմբագրութեան անդամները: Au courant պահել՝ տեղեակ պահել:
19.- Այսինքն՝ Չորրորդ Ընդի. ժողովին, որ գումարուած էր Վիեննա, 1907ին:
20.- Այսինքն Պոլսոյ սուլթանական կառավարութեան կողմէ:
21.- Դրաստամատ Կանայեան եւ Մարտիրոս Չարուխճեան,

ծանօթ ահաբեկիչները: Մանուշակը՝ յայտնաբար Ա. Սիւրոնեանն է:
22.- Cousinները (գարմիկները) այս պարագային պարսիկ սահմանադրականներն են, որոնց հետ բանակցութեան երթալու կը պատրաստուէր Ռոստոմ:
23.- Հիւսիսակերտ՝ ծածկանուցն է Պետերբուրգի:
24.- Խնձորը նոնակն է, ձեռնառուծ:
25.- Կրետէնը՝ ֆրանսական այն գիմագործարանն էր, ուր ապսպրանքները կը կատարուէին եւ ուր գիմական փորձեր ու վարժութիւններ կը կատարէին մարտական տղաքը (Գրիգոր, Պետրոս եւ այլն):

եւս, որ փորձերը լաւ հետեւանք չտուեցին: Խնդրեցի եւ թոյլ տուեց որ Գրիգորը մի քանի շաբաթ շարունակ անցնի փորձեր անելու. տեսնենք արդիւնքը: Ի դէպ, Գրիգորը հարկաւոր կը լինի այս կողմերի համար եւ ուրեմն նրան տանելու մասին — էլի գրել եմ — խօսք չպիտի լինի:

Պարիզում տեղեկութիւն հաւաքեցին եւ գուցէ հնար լինի նրա փորձերը այստեղ շարունակել: Խոստացան մի քանի օրից պատասխան բերել. աջողութեան դէպքում նա երկու շաբաթով կը գայ այստեղ:

Գարոցական կոնգրէին կը մասնակցին թուրքեր — երեք խումբ. հայեր — երեք խումբ (հաւանօրէն). մակեդոն, ալբան, յոյն, սերբ եւ երեւի՝ քուրդ:

Հայերից մեզ նախնական համաձայնութիւն տուել են Վերակազմեալները եւ Արմենականները. հին — զուռնաչիները²⁶, իբրեւ պատասխան Վիեննայի մեր որոշման, մերժում են... «քէֆն է - բոխ»: Գուցէ կարողանամ տեսնել Մուրադին²⁷ եւ համոզել աւելի լուրջ վերաբերուել գործին:

Մեր Պետրոսը եւ իր բարեկամը²⁸ այնքան են ոգեւորուած համերաշխութեան խնդրով, որ ասել չեմ կարող: Յոյս ունի, որ այս անգամ մի բան դուրս գայ: Պատրաստ է միջամտելու, երբ պէտք լինի: Ժօրէսին խօսեցի ժընեւ եղած ժամանակ. նա էլ պատրաստ է իր բոլոր ոյժը գործ դնել:

Բոլորի տրամադրութիւնն է, որ Կոնգրէն մինչեւ վախճանը՝ պիտի լինի առանց հրապարակային բնաւորութեան, որպէսզի արգելքներ չյարուցանեն: Աւարտելուց յետոյ՝ լայն տեղեկութիւններ կը տրուեն մամուլին եւ որոշումներն էլ կը տպագրուեն: Այս օրերս այդ խնդրի վերաբերմամբ պէտք է²⁹ անեն մեր ժորժին³⁰: Տեսնենք նա ինչ կ'ասէ:

Թուրքերի գաղտնի թշնամութեան պատճառներից մէկն էլ, ամենագլխաւորներից, գահաժառանգի հարցն է. իւրաքանչիւր խումբ իր թեկնածուն ունի: Եւ այնպիսի դաւեր են լինում դրա շուրջը: Որքան հետաքրքրական պատմութիւններ...

Այս նամակը տեղ հասնելու մասին գրել. պատասխանիր մի քանի կէտերին եւ մի մոռացիր իրանի հարցի մանրամասները:

Շատ բարեւներ,
Քո Մ[ԱԼՈՒՄԵԱՆ]էն:

- 26.- Հնչակեանները:
- 27.- Մուրատ Պոյաճեան, հնչակեան յայտնի դեկավար անձնաւորութիւն:
- 28.- Մեր Պետրոսը՝ այստեղ ըստած է Pro Armenia-ի խընքագրապետ Փիեռ Քիյառի համար. իր բարեկամը՝ հաւանօրէն Ֆրանսիս Փրեսանսէն է: Ժոռուը՝ (ժան) ֆրանսացի յայտնի ընկերակարական առաջնորդն է:
- 29.- Անընթեռնելի մէկ բառ:
- 30.- Ժորժ Զլեմանսօ:

Փաստ. 1271-124

Ա 14.— ՀՐԱԻՐԱԳԻՐ ՓԱՐԻԶԻ ԿՈՆԳՐԷՒՆ

(Confidentiel)

10 Décembre 1907

Chers compatriotes

Les représentants du Comité "Droschakiste", de "La Ligue Ottomane d'Initiative privée, décentralisation et Constitution", et du "Comité Ottoman d'Union et de Progrès" mus par l'esprit de solidarité en une action commune ont constitué un bureau, lequel a décidé d'organiser un Congrès qui se réunira à Paris, le 20 Décembre 1907.

- On y traitera, les questions suivantes:
- 1.- Renverser le régime actuel.
 - 2.- Etablir le régime représentatif (Parlement).
 - 3.- Rechercher les moyens pacifiques et révolutionnaires, pour atteindre ce but.

Le Congrès ayant en vue les seuls moyens pratiques, aucun programme législatif ne pourra être discuté. En outre le principe de l'indépendance et de l'intégrité de l'Empire Ottoman sera reconnu et respecté.

Sachant que vous disposez d'une organisation intérieure, nous vous prions d'envoyer deux délégués pour participer aux délibérations de notre bureau, dès que vous le pourrez (12 Décembre, dernier délai).

En cas d'adhésion, veuillez donner une réponse télégraphique à Mechveret-Paris ou Terecqui-Paris, avec la date du départ de vos délégués.

BUREAU D'ORGANISATION

P.S.- Les discussions et délibérations se feront en langue française. Le Congrès durera trois jours.

(Խորհրդապահական)

10 Դեկտեմբեր 1907

Միտելի հայրենակիցներ,³¹

«Դրօշակեան» կոմիտէի, «Անհատական Նախաձեռնութեան, Ապակեդրոնացման եւ Սամհանադրութեան Օսմանեան Լիկա»ի եւ «Միութիւն եւ Յառաջդիմութիւն Օսմանեան կոմիտէի» ներկայացուցիչները, մղուած փոխադարձ գորակցութեան եւ համերաշխ գործակցութեան ոգիէն, կազմեցին Բիւրօ մը, որ որոշեց կազմակերպել կոնգրէ մը, որ պիտի գումարուի Փարիզ, 1907 թ. 20 Դեկտեմբերին:

- Պիտի քննարկուին հետեւեալ հարցերը.
- 1.- Տապալել ներկայ վարչակարգը:
 - 2.- Հաստատել ներկայացուցչական վարչակարգ (Խորհրդարան):
 - 3.- Այս նպատակին հասնելու համար՝ որոնել խաղաղ եւ յեղափոխական միջոցներ:

Միմիայն գործնական միջոցները նկատի առնուած ըլլալով Կոնգրէի կողմէ, կարելի պիտի չըլլայ որեւէ օրէնսդրական ծրագիր քննարկել: Միւս կողմէ՝ պիտի ճանչցուի եւ յարգուի Օսմանեան կայսրութեան անկախութեան եւ ամբողջականութեան սկզբունքը:

Ծանօթ ըլլալով որ դուք ունիք ներքին կազմակերպութիւն մը, կը խնդրենք ձեզմէ, որ մեր բիւրօյի խորհրդակցութեանց մասնակցելու համար երկու պատգամաւորներ ուղարկէք, անմիջապէս որ կարենաք (12 Դեկտեմբեր, վերջին պայմանաժամ):

Հաւանութեան պարագային, հաճեցէք հեռագրով պատասխանել Մեչվերէթ-Փարիզ, կամ Թերաքքը-Փարիզին, ձեր ներկայացուցիչներու մեկնումի թուականի մասին:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԶ ԲԻՒՐՕ

Յ.Գ.- Քննարկումներն ու խորհրդակցութիւնները պիտի ըլլան ֆրանսերէն: Կոնգրէն պիտի տեւէ երեք օր:

31.- Փարիզի Կոնգրէին հրաւերները մեքենագիր են, ֆրանսերէն եւ հասցեագրուած «պարոն», «պարոններ» կամ «Սիրելի հայրենակիցներ»: Եղին վերեւ կայ ձեռագիր «Confidentiel» - խորհրդապահական արձանագրութիւնը: Թուականները կը տարուբերին Դեկտեմբերի առաջին երկու շաբաթներուն միջեւ: Յիշուած թուականը՝ 20 Դեկտ., պիտի յետաձգուէր մէկ շաբաթով՝ 27ին:

Փաստ. 1271-119

Ա 15.— ԱԿՆՈՒՆԻԷՆ ԺԸՆԵՒ՝ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

(Գաղափար)

5 Դեկտ. 1907, Պարիզ

Միրելիներ,

*

**

Երէկ ձեզ ուղարկեցինք դիմումի մի օրինակը: Դիմումները երեք կարգի են բաժանուած, մեր առաջարկութեամբ՝

ա) Կազմակերպութիւններին, որոնք Երկրի մէջ մարմիններ ունեն.

բ) Պրոպագանդ անող մարմիններին, արտասահման.

գ) Մասնաւոր անձանց, որոնք օգտակար են եղած կամ կը լինեն գործին:

Վերջինների օրինակները նոյնպէս կ'ուղարկեմ: Վերջին օրերը ծանր եւ միաժամանակ զգուշի դժուարութիւններ ծագեցին: Ստիպուած էի նոյնիսկ սպառնալ, որ «չեմ կարող շարունակել գործել ձեզ հետ»: — Սապահատիւնի խմբի մէջ կան օրինաւոր մարդիկ, որոնց հետ կարելի է գործ շինել: Տարաբախտաբար նոյնը չեմ կարող ասել Ռիզա-Մեշիկեթեան խմբի մասին, ուր կան կասկածելի տիպեր: Ռիզան մի քանի օր սկսեց երգել երգեր, բոլորովին նոր սազով: Հետաքրքրական է եւ այն, որ ես չեմ կարող, չեմ ուզում եւ երբեք էլ չեմ փորձի դիմել անուղղակի, երկդիմի միջոցների, որ այդ մարդոց համար ե՛ւ սովորական ե՛ւ բնական է, եւ այդ պատճառով ինձ դեռ շատ «աղիտալի» ըրպէնքան կ'ունենամ:

Ինչեւէ: Հրակէրներ ուղարկուեցին:

*

**

Այսօր հրակէր ուղարկուեց եւ մակեդոնական կոմիտէի համար, ձեր հասցէին, Ջաւէնին³² տալու համար: Ասացէք իրան, որ ուղարկի Բորիսին, եւ պատրաստ լինեն մարդ ուղարկելու, հէնց որ հեռագիր կը տամ: Եկողը, հարկաւ, պիտի լինի ինքը Ջաւէնը: Երկու ընկեր էլ Պարիզ կ'ունենայ, ինչպէս ինքն էր ասում, եւ ուրեմն կը լինեն երեք: Մակեդոնական կոմիտէն ես մտցրել տուի կազմակերպութիւնների մէջ, եւ ուրեմն նրանք մաս պիտի ունենան ոչ միայն Կոնգրէի, այլեւ Բիւրոյի մէջ: Այս բոլորը շատ շուտ հաղորդեցէք Ջաւէնին եւ ասացէք, թէ ինչո՞ւ ինձ չէ գրել իր ճամբորդութեան մասին, եւ առհասարակ:

Միաժամանակ եւ լաւ բարեւներ նրան: Կ'աշխատիմ վաղը իրան առանձին գրել:

Ուղարկում եմ ձեզ Ամերիկայի Հնչակեանների հասցէները: Հեռագրեցէք այստեղից նրանց առանձին, առանձին, որ հեռագրով նշանակեմ պատգամաւոր Պարիզում, թէ խորհրդակցութեան (հայկական) համար, եւ թէ կոնգրէի համար:

Ինքս չեմ ուզում ուղարկել, որովհետեւ նրանք կարող են չհասկանալ իմ հեռագիրը եւ այդ պաշտօնական մարմնի կողմից չի լինի:

Ձեր ուղարկած հեռագիրների պատճէները իսկոյն ինձ ուղարկեցէք: Կարծում եմ գրելու է մօտաւորապէս այսպէս.

«Հեռագրով նշանակեցէք ներկայացուցիչ հայկական խորհրդակցութեան եւ միջկուսակցական կոնգրէի համար, որ լինելու է Պարիզ: Մանրամասները արդէն գիտէք: Պատասխանեցէք անմիջապէս հեռագրով»:

Երբ պատասխան ստանաք, հեռագրեցէք ինձ: Ահա նրանց հասցէները՝

Mr. Vartan, P.O.Box, 2387, Boston, M.:

Այս ըրպէին նկատեցի, որ պատասխան ունինք միայն Հնչակեան մի վերակազմեալ մարմնից («Ազգ»), միւսից ոչ: Ուրեմն հեռագրելու էք միայն մէկին:

*

**

Հնչակեան այստեղի մարմինը անպաշտօն (?) կերպով ինձ ապսպրել է, որ համաձայն են խորհրդակցութեան գալ: Մուրադը²⁷ այստեղ չէ: Այլոց հետ տեսնուել չեմ ուզում, ուրեմն կը սպասեմ նրա գալուն: Նրա հետ էլ կը կարծեմ եկած «միջնորդի միջոցով» - Մելիքեանը:

Ձերագ, Բասմաճեան եւ միւսները համաձայն են, որ խորհրդակցութեան գանք: Այս օրերս, երեւի, կը գրեմ եւ «Արմէնիայի» ներկայացուցչին, որ Պարիզ գայ:

Շահագիցից դեռ պատասխան չունեմ:

32.- Ձաւէն կամ Ձաւէն Արշակունի. մակեդոնացի ծանօթ յեղափոխական գործիչ Լեապովի կողմէ գործածուած ծածկանուն: Բորիսը (Սարաֆով) եւս մակեդոնացի հանրաժանօթ յեղափոխական առաջնորդ է: Երկուքն ալ սերտ բարեկամ Ղազակցութեան:

*

**

Թիֆլիսից եկած նամակների հարցերին պատասխանել եմ. մնում է ձեզ պատասխանել խորհրդի վերաբերեալ հարցին: Կան եւ մի քանի ուրիշ կէտեր, որ նշանակել եմ մեր Agenda-ի մէջ, մեր վերջին ժողովի առիթով:

Ուղարկած հասցէները Բիւրոյի համար են, գլխաւորապէս արդէն ձեզ ծանօթներից: Ուրեմն այս խնդիրն էլ փակ է:

Պետրոսի մասին վաղը միայն պիտի իմանամ: Ասացէք իրան:

Ինչո՞ւ Միշան չի գրում իրանց վիճակի մասին: Խնդրեցի Մարտիրոսից, որ ինձ հաղորդէ Դրոյի մասին. - չէ՞ք ասել իրան:

Դարձեալ խնդրում եմ գրածներից [ս] au courant պահեցէք նորեկ ընկերներին, որովհետեւ առանձին գրելու հնար չկայ: «Խնձորները» խնդրը³³ շատ եմ աշխատում ուղացնել — մինչեւ կոնգրէի վախճանը: Դա արդիւնք է

մի քանի «զգոյշ» դիտումների: Ահա այդ է պատճառը որ այդ մասին չեմ գրում ինչ խոստացել էի գրել Գրիգորին: Այս մասին ասացէք Գրիգորին:

Ջարեհի գնալու կամ մնալու մասին մինչեւ հինգ օր անկարող եմ որոշ բան գրել: Այս ըրպէիս մի բանակցութիւն ունեմ, որից եւ կախուած է այդ: Կ'իմանամ եւ անմիջապէս կը գրեմ:

Այսօր այսքան:

Ձեր՝ ԽԱԶԱՏՈՒՐ

Յոնան, սրանից յետոյ ծրարների վրայ բան չգրես — անուշադիր եմ եղել եւ չեմ կարողացել:

Միթէ այսքան օրից ի վեր մի նոր բան չունէ՞ք:

ՆՈՅՆ

33.- Ձեռնառուներ, գոյս Ղազակցութեան խնդրած եր հայթայթել Սիմոն Ռիզա:

Փաստ. 872ա-9

Ա 16.— ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԷՆ ԱԿՆՈՒՆԻՒՆ

Մարտի 11, 10 Դեկտեմբեր 1907

Մեծապատիւ Տիար Խ. Մալումեան, Բարիզ

Յարգելի հայրենակից,

«Դրօշակ»ի խմբագրութեան կողմէն եւ Բարիզէն Ձեր գրած Դեկտեմբեր 8ի նամակն այսօր ստանալով, փութացի գրել Անգլիա Տիար Յովսէփ Սարաֆեանին որ իսկոյն ճամբայ ելնէ Բարիզ գալու եւ Թուրքիայի ներկայ վարչական դրութեան դէմ բողոքող տարրերի միջազգային համաժողովին մասնակցելու համար հայերիս նախապատրաստական խորհրդակցութեան մէջ ձայն ունենայ իբրեւ պատուիրակ Արմէնիայի խմբագրութեան:

Ուստի սոյն գրութեամբս գինք կը ներկայացնեմ Ձեզ, որ այս առիթով հարկ եղած ձեւակերպութիւնները պատշաճօրէն կատարուին Ձեզ հետ խորհրդակցելով:

Ընդունեցէք ջերմ յարգանքներս Տնօրէն-խմբագիր Արմէնիա լրագրին

Մ. Փորթոուգալեան



Յ. Գ.- Այս ըրպէիս ստացայ Համաժողովի կազմակերպիչ դիւանի շրջաբերական հրահրագիրն ալ: Հարկ չհամարեցի Մէշիկեթի կամ Թէրազգր-ի խմբագրութիւններին հեռագրել մեր պատուիրակի ճամբայ ելնելը, քանի որ Տիար Սարաֆեան սոյն գրութեամբ Ձեզ ներկայանալէ եւ պէտք եղած խորհրդակցութիւնները կատարուելէ յետոյ պիտի գործադրուի ինչ որ յարմար է: Տիար Սարաֆեան ամբրիկացի լինելով, անգլիերէն կրնայ մասնակցիլ վիճաբանութեան եւ ոչ ֆրանսերէն. բայց քանի որ հայերէն կամ թուրքերէն կը հասկնան ուրիշները, կը դիւրանայ գործը:

Փաստ. 872ա-10

Ա 17.- ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԷՆ ԱԿՆՈՒՆԻՒՆ

Մարտէյլ, 11 Դեկտեմբեր 1907

Յարգելի Հայրենակից
Տիար Խ. Մալումեան
Բարիզ

Երէկ ստացայ Դեկտ. 8ի Ձեր նամակը եւ փութացի գրել Անգլիա Տիար Յովսէփ Սարաֆեանին որ փութայ գէթ Դեկտ. 19ին Բարիզ գտնուել, Արմէնիայի խմբագրութեան կողմէն մասնակցելու համար այն խորհրդակցական ժողովին որ Դաշնակցութեան նախաձեռնութեամբ պիտի կատարուի այդտեղ, Թուրքիայի դժգոհ տարրերի միջազգային համաժողովին նմատմամբ հայերիս բռնելիք դիրքը որոշելու համար: Իր այդ պաշտօնի համար վկայագիր մը դրկած եմ Տ. Յ. Սարաֆեանին, Ձեզ ուղղուած:

Ձեր նամակէ մի քանի ժամ վերջ, ստացայ նաեւ շրջաբերական հրահրագիր մը համաժողովի նախապատրաստական Բիւրոյի կողմէն: Ես աւելորդ կարծեցի Թէրագրուի կամ Մէշվերէթի խմբագրութիւններին հեռագրել թէ Սարաֆեան պատուիրակ նշանակուած է Արմէնիայի խմբագրութեան կողմէն, քանի որ Տ. Յովսէփ Սարաֆեան պիտի գայ Ձեզ գտնել Ձեր նշանակուած հասցէով (Hôtel des Américains, Boulerd St. Michel) եւ իր վկայագիր Ձեզ ներկայացունելէ եւ Ձեզ հետ խորհրդակցելէ յետոյ պիտի վարուի ինչպէս որ պատշաճ տեսնուի հայերի կողմէն:

Կը ցաւիմ որ զանազան պատճառներով ես չկրցայ մասնակցիլ այս անգամ Ձեր խորհրդակցութիւններին. բայց Տ. Յ. Սարաֆեան ալ իբրեւ թուրքահայաստանցի լաւ ծանօթ լինելով իր ծննդավայրի վիճակին ու պահանջներին, տարակոյս չունիմ որ իր խորհրդակցութիւն կրնայ օգտակար լինել: Կը մաղթեմ Ձեր համաժողովի արդիւնաւորութիւն, դժբախտ Թուրքիայի ժողովուրդներին օգտին համար:

Ձերմ յարգանքներով
Ձեր Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Փաստ. 1271-133

Ա 18.- ԱԿՆՈՒՆԻՒՆ ԺԸՆԵՒ

Դեկտ. 24, 1907

Սիրելիք,

Այսօր հեռագրեցի, որ Գայֆան եւս մեկնի Պարիզ: Ստիպուած ենք, որովհետեւ Շահնագարը, վերջին բռնակին, հեռագրել է, որ «ստիպուած է մնալ Մանչեստր»: Արի, ու վստահիր այդ մարդոց:

Գիտեմ, խմբագրութիւնը բաւական դժուար կացութեան մէջ պիտի լինի եւ Յոնանը մենակ, բայց ուրիշ ճար չկայ. թուրքահայ ընկերներ են հարկաւոր: Հեռագրեցինք, որ Ձարդարեանը եւս գայ: Օգտաւէտ կը լինի:

Մակեդոնական կոմիտէն դեռ հեռագիր չտուեց. նրանց պատճառով ուշացրինք կոնգրէն, եւ ցայժմ նրանց պատգամաւորները չկան:


Ո՛ւՖ, իմ անսպառ համբերութիւնն անգամ սկսում է հատնել այս «այլասեռ շրջանում» եւ չգիտեմ մինչեւ վերջ պիտի բաւէ:

Սարգիսը եկաւ:

Ձեր՝ ԽԱԶԱՏՈՒՐ

Փաստ. 872ա-17

Ա 19.- ԿՈՆԳՐԵՒ ՀՐԱԻՐԱԳԻՐ



N° 1271/133

CONGRÈS DES PARTIS D'OPPOSITION
de L'EMPIRE OTTOMAN

1907, 26-28 décembre

Carte d'Entrée

Pour Monsieur

(Cette carte est personnelle et doit être présentée à l'entrée)

BUREAU D'ORGANISATION.

Փաստ. 50-97

Ա 20.— Յ Ա Յ Ա Ր Ա Ր Ա Ք Ի Ր

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՏԱՐԻԵՐՈՒ ԿՈՆԳՐԵՒՆ

Գումարուած Երոպայի մէջ
(27 — 29 Դեկտեմբերին, 1907)

Թուրքիոյ մէջ գործող ընդդիմադիր կուսակցութեանց կոնգրէն, գումարուած 1907 Դեկտեմբեր 27 — 29ին, կը յայտարարէ ձեռք բերել համերաշխութիւնը Օսմանեան կայսրութեան բոլոր ժողովուրդներուն, որոնք միահամուռ կը տառապին երկրին վրայ ծանրացած եւ սուլթան Ապտիլ Համիտ Բ-ի հրէշալին ոճիրներով ամբողջ աշխարհի աչքերուն պժգալի դարձած բռնապետական ռեժիմէն:

Երեսնամեայ այս թագաւորութիւնը աղէտալի եղած է ոչ միայն, ինպէս յանիրաւի կը կարծուի, քրիստոնեայ ժողովուրդներուն, գորս Սուլթանը կը հալածէր եւ կը ջարդէր իր սեփական շահուն համար, այլ նաեւ իսլամներուն եւս՝ քանդուած, ստրկացուած, տարագրուած, մորթուած, վերջապէս անարդարօրէն ամբաստանուած քաղաքակիրթ ժողովուրդներու կարծիքին առջեւ, որ զանոնք պատասխանատու կարծած է Սուլթանին եւ զայն չըջապատող շարագործներուն կողմէ մարդկութեան դէմ գործուած ոճիրներուն համար:

Կայսրութեան բոլոր ազգերը, յաջորդաբար, զոհ եղան Ապտիլ Համիտի եղեռնագործ կատաղութեան անիկա յաջորդաբար մղեց զանոնք մէկը միւսի դէմ, գրգռելով եւ արծարծելով արհեստական ատելութիւն՝ ցեղերուն եւ կրօններուն միջեւ — թուրք, հայ, յոյն, պոլկար, վալաք, ալպանացի, արաբ, հրեայ, տրուզ եւ քիւրդ տեսան հալածանք, աքսոր, տարագրութիւն եւ ջարդ — իսկ հայկական կոտորածները, իբրեւ պսակ բոլոր անցեալ եղեռնագործութիւններուն, արժանացուցին իրենց հեղինակը — որ տակաւին իր ոճրագործութիւնը կը շարունակէ Արաբիոյ մէջ — Մեծ Մարդասպան եւ Կարմիր Սուլթան անուններուն:

Բացի այս ոճիրներէն, Ապտիլ Համիտ հետապնդած է յամր քանդումի քաղաքականութիւն մը՝ որ կ'ոչնչացնէ հետզհետէ Թուրքիոյ բոլոր կենդանի ուժերը: Իրմով անդամալուծուեցաւ մտաւորական, տնտեսական ու ընկերական ամէն կեանք:

Անիկա սարսափ կը զգայ կրթութենէ եւ կուլտուրայէ, որ ինքնագիտակցութիւնն ու ազատ մտածողութիւնը կը կազմեն. ուստի, կրցածին չափ կաշկանդեց հանրային կրթութիւնը եւ գիտութեան ծարաւ ժողովուրդներէն իւրեք ինքնակրթութեան միջոցները: Փակեց վարժարանները, բանտարկեց ուսուցիչները, աքսորեց

Յ Ա Յ Ա Ր Ա Ր Ա Ք Ի Ր

**ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ
ՏԱՐԻԵՐՈՒ ԿՈՆԳՐԵՒՆ**

ԳՈՒՄԱՐՈՒԾ ԵՐՈՊԱՅԻ ՄՅԺ.

(27—29 Դեկտեմբերի, 1907)

—

ՔԱՂԱՔՆԵՐ ԿՕՆԳՐԵՒ ՈՐՈՑՈՒՄՆԵՐԷՆ

Հրատարակուած 1907 թ. ԴԵՆՅՎ.

ուսանողները. իսկ կրթական այն շէնքերուն մէջ որ դեռ չէ ոչնչացուցած՝ նուազեցուց ուսուցումը, անախրնթաց ծայրայեղ գրաքննութեան մը միջոցով:

Մամուլն եւս ամբողջովին ստրուկ է: անոր թող տրուած է միմիայն հրատարակել գրաքննիչներու կողմէ թոյլատրուած կամ յերիւրուած լուրերը. եւ այսպէս, թուրք կայսրութիւնը, իր տիրոջ կամքով, շրջապատուած է տգիտութեան եւ ստույգութեան պարիսպով մը:

Ապտիլ Համիտ ոչ միայն հակաուսուցող է մտաւոր զարգացման, — ինչ որ ամենաթանկագինն է ամէնուն համար, այլեւ արգելք եղած է նոյնիսկ ստրկութեան մէջ իրած այս ժողովուրդներու նիւթական բարօրութեանը: Այս ասպարէզին մէջ ալ դարձեալ աւեր, թըշուառութիւն եւ սով: Այն անարդար տուրքերը, որ կը հաւաքուին նահանգներու մէջ անպարկեշտ եւ գիշատիչ պաշտօնեաներէ՝ չեն ծառայեր բնաւ ճամբաներու եւ ջրանցքներու շինութեան, այլ լեցնելու՝ պալատին սըն-

տուկները եւ պարարելու³⁴ Երդըզի քիթը՝ ի վնաս աշխատաւորներու, վճարելու՝ լրտեսներու ամսականները եւ արտասահմանի մէջ ալ կաշառելու՝ ստորաքարը թերթերը, որ կը խաբեն Եւրոպան Թուրքիոյ իրական վիճակի մասին եւ ներքողներ կը կարդան Ապտիլ Համիտի, — ամենամեծ թշնամի՛ն իր երկրին:

Երթեւեկի արգելումը եւ անցագրերու սխտեմատիք զլացումը անկարելի կը դարձնեն առեւտրական ունէ գործունէութիւն: Հարկերու ծանրութիւնը, գիւղերու անապահովութիւնը, արմատիքի մենագրաւումը (մատրապազութիւն), վաշխառութիւնը, հաղորդակցական միջոցներու պակասը փճացուցին հողագործութիւնը: Բնութենէն օժտուած ամենահարուստ գաւառները, որոնք երբեմն աշխարհի շտեմարաններն էին, այսօր ամայացած են: Հանքային ու անտառային հարստութիւնները չեն շահագործուիր եւ կայսրութեան վրայ խոյացող աշխարհաքաղաքացի դրամատէրերու շնորհուած արտօնութիւնները ոչ մէկ օգուտ չեն տար հանրային բարեկեցութեան, այլ կը ծառայեն միայն կարգ մը յափշտակիչներու մասնաւոր շահերուն:

Իբրեւ արդիւնք այս բոլորին, ամէն ցեղի եւ կրօնի բնակիչներ՝ կայսրութեան բոլոր մասերէն՝ հազարներով կը ձգեն իրենց ծննդավայրերը եւ կը գաղթեն այլուր՝ Եւրոպա կամ Ամերիկա, քիչ մը ազատութիւն, ապահովութիւն եւ ապրուստի միջոցներ փնտռելու: Արտագաղթը եւ սովը կը շարունակեն կոտորածի գործը եւ նոյնքան ապահով կերպով կ'ամայացնեն երկիրը:

Արտաքին քաղաքականութեան տեսակէտով ալ Թուրքիոյ անձկութիւնը նուազ ողբալի չէ: Ապտիլ Համիտ, իր անձնական դիւանագիտութեամբը, բոլորովին վարկաբեկեց օսմանեան կայսրութիւնը: Կորսնցուց ազատական պետութիւններուն համակրութիւնը՝ որոնք, Փարիզի եւ Պերլինի դաշնագրութիւններու ժամանակ, արգիլեցին կայսրութեան ամբողջական անդամատուութիւնը, փոխարէն բարենորոգումներու, որ եթէ ժամանակին գործադրուէին՝ ապահոված պիտի ըլլային երկրի վերածնութիւնը եւ բարգաւաճումը: Ընդհակառակը, հանդիսաւորապէս եւ շատ անգամ խոստացուած բարենորոգումներու անգործադրութեամբ, Սուլթան Համիտ առաջ բերաւ իր յուսախաբ հպատակներուն մէջ ըմբոստութեան արդարացի շարժումներ եւ եւրոպական պետութեանց կողմէ բազմաթիւ միջամտութիւններ, արդիւնք իր շարունակական նենգամտութեան: Այս կործանարար քաղաքականութիւնը յանգեցաւ հողային նուազման, եւ եթէ այսպէս ժամանակ մըն ալ շարունակուի, ուրիշ մասեր եւս՝ Ալպանիան, Մակեդոնիան, Արաբիան, Հայաստանը, կարճ միջոցի մէջ պիտի բաժնուին կայսրութենէն — արդէն իսկ կատարեալ քայքայման վիճակի մէջ — յօգուտ պետութեանց՝ որոնք կը փնտռեն կամ հողային ընդարձակում, կամ գաղթա-

բնակութեան վայրեր, կամ ֆինանսական առաւելութիւններ:

Մինչեւ այժմ իրաց այս վիճակէն առաջ եկած յեղափոխական շարժումները անջատ էին. այսօր շատ մը տեղեր միւսխլմաններու եւ քրիստոնեաներու համագործակցութիւնը ցոյց տուաւ, որ կայսրութեան բոլոր ժողովուրդները վերջապէս յոգնած են տառապելէ եւ կ'ըմբռնեն որ երկրին պետը գիրենք անդունդը կ'առաջնորդէ: Այսօր, ամէն ոք՝ որ ընդունակ է մտածելու, պարզ կը հասկնայ, թէ թուրք կառավարութեան մէջ անմիջական փոփոխութիւն մը միայն կրնայ արգիլել կայսրութեան վերջնական մեծաղէտը եւ քայքայումը: պէտք է ուրեմն անյապաղ ու բոլոր հնարաւոր միջոցներով տապալել ռեժիմ մը՝ որ այնքան աղէտներու պատճառ եղաւ:

- Հետեւաբար կը պահանջենք.
- 1) Գահընկէցութիւն Սուլթան Յամիտի:
 - 2) Արմատական փոփոխութիւն ներկայ ռեժիմին:
 - 3) Հաստատում ներկայացուցական ռեժիմի (խորհրդարան):

Ներկայ բոլոր դժբախտութեանց գլխաւոր հեղինակին անհետացումը առաջին պայմանն է ամէն բարեխառութեան: Անոր հետ պէտք է անհետանայ նմանապէս վարչական եւ քաղաքական բռնակալութեան, ոստիկանական սարսափի եւ դիւանագիտական նենգամտութեան սխտեմը. ապա պէտք է հաստատուի ներկայացուցչական ռեժիմ՝ որով կայսրութեան բոլոր ժողովուրդները, հաւասար պարտականութիւններով եւ իրաւունքներով, պիտի արտայայտեն իրենց կարիքներն ու կամքը, եւ որ պիտի ապահովէ ամէնքին, խաղաղ ներդաշնակութեամբ, արդարութիւնը եւ ազատութիւնը:

Ահա ներկայ կոնգրէի միաբան նպատակը, համապատասխան՝ Երկրի բոլոր ժողովուրդներու կամքին, որոնք — գաւակները միեւնոյն հողին, գոր կը մշակեն եւ կը տառապին միեւնոյն տառապանքը — վճռած են ձեռք բերել, համերաշխ գործակցութեամբ մը, ազատութեան եւ երջանկութեան իրենց բաժինը:

Մենք կը միանանք ընդհանուր պայքարի մը համար, յարգելով միանգամայն իւրաքանչիւր կազմակերպութեան ինքնավարութիւնը. կը միանանք անկեղծօրէն, եղբայրօրէն եւ նախքան կռիւը սկսելը՝ խոստում կու տանք չթուլնալ ու կը յայտարարենք Սուլթանին՝ թէ մեր գէնքերը վար չենք դնել, մինչեւ որ Թուրքիոյ համար նոր դարագլուխ մը չբանանք:

Կոչ կ'ընենք ամէնուն՝ աջակցիլ մեզի մեր դաժան եւ փառահեղ ձեռնարկին մէջ, որ կը պահանջէ անվհատ

34.- Պարարտացնելու:

կորով եւ ծանր զոհաբերութիւններ: Կոչ կ'ընենք բոլորին, — գիտութեան եւ մտքի մարդոց՝ որոնց արգիլուած է ոեւէ անկախ հետազոտութիւն: գիւղացի եւ քաղաքացի աշխատաւորներուն՝ զրկուած հողէ եւ հացէ, ենթակայ՝ ապօրինի տուրքերու եւ խոշտանգուած ու կողոպտուած հարկահաւաք պաշտօնեաներէ: վաճառականներուն՝ որոնք չեն կրնար ազատ ու ապահով կերպով իրենց առեւտուրովը զբաղիլ: գինուորներուն՝ որ անվճար, մերկ ու անօթի են եւ զորս Սուլթանը կը ստիպէ իրենց հայրենակիցներուն դէմ քալել, մէկ խօսքով կայսրութեան բոլոր ազգերուն՝ որոնք ջախջախուած են գարշելի ճնշման մը տակ: Թող ամէնքը միանան այս նուիրական պայքարին, թող ներշնչուին ազատութեան, բարենորոգման եւ յեղափոխութեան գաղափարներէն՝ տապալելու համար, տրամադրելի բոլոր միջոցներով, ամօթալի եւ բռնակալ ռեժիմ մը: Երեսուն տարուայ փորձառութիւն մը խիստ դառնօրէն ապացուցուց ամէնքին, որ խաղաղ միջոցները անբաւական են ճնշման գարհուրելի իշխանութեան մը դէմ: Իր հպատակներու բոլոր խնդրանքներուն, բոլոր աղաչանքներուն՝ Սուլթանը միշտ պատասխանեց բռնի ուժով, բանտարկութիւնով, աքսորումով եւ կոտորածով:

Հետեւաբար, կոնգրէն միաբան կ'ընդունի թէ ընդդիմադիր բոլոր խումբերը պէտք է, այսուհետեւ, դիմեն յեղափոխական միջոցներու՝ որոնք քաջալերական արդիւնք տուած են, ինչպէս ցոյց կու տայ յեղափոխական գործունէութիւնը ընդհանրապէս եւ թուրք-հայ խառն խումբերու նորագոյն գործունէութիւնը: Ասոնցմէ զատ, Ասիական Թուրքիոյ մէկ քանի քաղաքներուն մէջ յեղափոխական միջոցներու կիրառութիւնը հարկադրիչ է եւ կ'արդարանայ նոյնիսկ կառավարութեան բռնութիւններովը: Արդի ռեժիմը ինքն է, որ իր ոճիրներով մեզ մղեց յեղափոխութեան:

Մենք մեզ պատրաստ կը յայտարարենք ուրեմն կռիւր շարունակելու, ընդունելով եւ յանձնարարելով հետեւեալ միջոցները:

- 1) Զինուած դիմադրութիւն կառավարութեան քայլերուն:
- 2) Անգլէն դիմադրութիւն՝ քաղաքական եւ տնտեսական գործադուլով: գործադուլ պաշտօնեաներու, ոստիկանութեան եւայլն:
- 3) Մերժում հարկերու:
- 4) Պրոպագանդ գորաբանակին մէջ, — հրաւեր կարդալ զինուորներուն՝ ջբալել ոչ ժողովուրդին, ոչ ալ յեղափոխականներուն դէմ:

- 5) Ընդհանուր ապստամբութիւն:
- 6) Սարտական այլ միջոցներ, համաձայն պարագաներու թելադրութեան:

Համիտական ռեժիմը կ'ոչնչանայ մօտալուտ ապագայի մը մէջ, եթէ ամէն անոնք՝ որ կը տառապին, ունենան, ինչպէս մենք, զայն տապալելու հաստատ կամքը: Խարխուլ պարիսպ մըն է անիկա՝ որ կարելի է ուսի մէկ հարուածով հրել ձգել, որպէսզի փրկագատ կայսրութեան մէջ հեղեղուի ազատութեան եւ արդարութեան սրբազան լոյսը:

Կեցցէ՛ համերաշխութիւնը ցարդ անմիաբան ազգերուն:

Կեցցէ՛ միութիւնը յեղափոխական ուժերուն:

ՄԻՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆ ՕՍՄԱՆԵԱՆ ԿՈՄԻՏԵ
Պաշտ. օրգաններ՝ «Շուրայի Իւմմէթ» եւ «Մէշվէրէթ»

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՄԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑ ՈՒԹԻՒՆ
Պաշտօնական օրգան «Դրօշակ»

ՕՍՄԱՆԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ԱՆՀԱՏ. ՆԱԽԱՁԵՌՆ. ԱՊԱԿԵԴՐՈՆԱՑՄԱՆ ԵՒ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ
Պաշտօնական օրգան «Թէրազզը»

ԵԳԻՊՏՈՍԻ ՀՐԷԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Պաշտօնական օրգան «Լա Վէրա»

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԽԻԼԱՑԻԹ» ԼՐԱԳՐԻ
Պրոպագանդի օրգան արաբերէն եւ թուրքերէն (Լոնդոն)

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԱՐՄԷՆԻԱ» ԼՐԱԳՐԻ
Պրոպագանդի օրգան (Մարսիլիա)

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՌԱԶՄԻԿԻ»
Յեղափոխական օրգան (Պալքանեան երկիրներ)

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՀԱՅՐԵՆԻՔԻ»
Յեղափոխական օրգան (Ամերիկա)

ԿՈՄԻՏԵ «ԱՀՏԻ ՕՍՄԱՆԻ»
(Եգիպտոս)

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԿՈՆԳՐԷԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸՆ

Մնայուն խառն կոմիտէ

Կոնգրէն որոշեց՝ կազմել գաղտնի Մնայուն խառն կոմիտէ մը, բաղկացած այն կազմակերպութիւններու ներկայացուցիչներէն, որոնք կը գործեն կայսրութեան ներսը: Սոյն կոմիտէն, կուսակցութիւններու միջոցով, պէտք է իրագործէ կոնգրէի որոշումները: Կոմիտէն պիտի ունենայ ներքին կանոնադիր մը: Մնայուն կոմիտէի կազմի եւ գործունէութեան վերաբերմամբ բացարձակ գաղտնիք պիտի պահուի: Անգաղտնապահութեան որեւէ դէպքում, յանցաւորը անձնական ծանր պատասխանատուութեան կ'ենթարկուի:

Կոչ յեղափոխական համերաշխութեան

Օսմանեան կայսրութեան դիմադիր եւ գործօն կուսակցութիւններու կոնգրէն, խորապէս ներշնչուած մարտական համերաշխութեան գաղափարէն եւ նկատելով՝

1. Այն անհուն եւ բազմադիմի ջանքերը, որը կ'ընէ Սուլթանի կառավարութիւնը՝ բաժնելու եւ մէկմէկու դէմ մղելու գործօն եւ դիմադիր խումբերը, բաժանումի այս քաղաքականութեան մէջ տեսնելով լաւագոյն միջոցը փրկելու համար իր սեփական գոյութիւնը:

2. Այն մեծ աղէտները, որ առաջ կու գան ազգերու փոխադարձ թշնամութիւններէն եւ մանաւանդ յեղափոխական խումբերի կռիւներէն, ինչպէս օրինակ՝ այդ տեղի ունի Մակեդոնիոյ յոյն եւ պուլկար խումբերու միջեւ, եւ այն բանէն որ յաճախ այդ խումբերը, իրենց ոյժը փոխանակ կառավարութեան դէմ մղելու, իրարու դէմ կամ նոյնիսկ խաղաղ ժողովուրդին դէմ կը կռուին:

Կոչ կ'ընէ բոլոր գործօն խմբակցութիւններուն, վերջ դնել այդ եղբայրասպան կռուին ու հակայեղափոխական տաքտիկին, եւ համաձայն համերաշխութեան սկզբունքներուն, կը հրաւիրէ զանոնք իրենց ոյժերը միացնել բռնակալութեան դէմ, — զլիսաւոր աղբիւրը չարիքներուն՝ որմէ կը տանջուի երկիրը:

Յարգանք դատի նահատակներուն

Օսմանեան կայսրութեան գործօն եւ դիմադիր կուսակցութիւններու կոնգրէն, գումարուած Եւրոպայում, իր վերջի հանդիսաւոր նիստին մէջ, միաձայն որոշեց արտայայտել իր խորին համակրութիւնը՝

1. Քաղաքական բանտարկեալներուն,

2. Աքսորուածներուն եւ քաղաքական տարագիրներուն, որոնք կուռած են բռնապետական ռեժիմին դէմ:

Կոնգրէի անդամները ոտքի ելան յարգելու համար այն քաջերը, որոնք ինկան կռուի դաշտին վրայ, ժողովրդի ազատութեան անունով եւ որոնք, իրենց գործով ու օրինակով, պիտի ոգեւորեն, նոյն քաջութեամբ, իրենց յաջորդները, ազատութեան եւ արդարութեան այս ցաւատանջ կռուին մէջ:

Դաւաճաններուն դէմ

Կոնգրէն, կազմակերպիչ Բիւրոյի առաջարկութեան վրայ, որոշեց՝ խստիւ պատժել, քննել եւ ապացուցանել յետոյ, այն մարդիկ, որոնք կը դաւաճանեն եւ կառավարութեան կը վաճառուին: Վճիռներու գործադրութիւնը յանձնուած է կազմակերպութիւններուն:

Յեղափոխական գրականութիւն

Կոնգրէն, երկրին մէջ հակակառավարչական եւ յեղափոխական պրոպագանդին ուժեղ գարկ տալու համար, որոշեց՝ հրատարակել թուրքերէն, հայերէն, յունարէն, պուլկարերէն, ալպաներէն, արաբերէն եւ քիւրդերէն լեզուներով շարք մը գրքոյկներ եւ զանոնք՝ ներքին կազմակերպութիւններու միջոցով՝ տարածել ժողովրդի խաւերուն մէջ:

Մասնաւորապէս որոշեց կոչեր ուղղել՝ Գիւղացիներուն, Զօրաբանակին, Մտաւորականներուն, Հոգեւորականութեան (այլեւայլ), Պաշտօնեաներուն,

Որպէսզի բոլոր տարրերը, նոյնիսկ անոնք, որոնք ցարդ հեռու մնացած են քաղաքական կեանքի մասնակցութենէն, հասկնան՝ թէ պէտք է միանալ եւ ապստամբիլ, իրենց ընդհանուր թշնամիին — կառավարութեան դէմ:

Յաջորդ կոնգրէի թուականը

Առաջիկայ կոնգրէն տեղի պիտի ունենայ 1908-ի Դեկտեմբեր ամսու վերջը: Ստիպողական պարագային, Մնայուն կոմիտէն կրնայ փութացնել անոր գումարումը, մասնակցող կազմակերպութիւններու հաւանութեամբ:

Փաստ. 1716բ-19

Ա 21.- ԿՈՆԳՐԵԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ

ՊԵՂՍ

BANQUET
DE L'A
Solidarité des Partis d'Opposition
de l'Empire Ottoman

31 Decembre 1907

☛

Lamballe

Filets de Soles à la Savante

Cœur de Filet Bouquetière

Chapons rôtis

Salade Lorette

Fonds d'Artichauts à l'Italienne

Bombe Pralinée

Gaufrettes — Petits Fours

Desserts assortis

☛

Graves — Bordeaux — Beaune

Champagne frappé

Café — Liqueurs

LÉON CHANDON
MAISON FONDÉE EN 1828
REIMS
COUVÉE ROYALE CHAMPAGNE

Restaurant CONTI, Hôtel des Sociétés Savantes, 8, Rue Banton, PARIS

Փաստ. 873-1

Ա 22.- ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԵՆ ԱԿՆՈՒՆԻՒՆ

Մարտի 11, 3 Յունուար 1908

Յարգելի Հայրենակից Տիար Խ. Մալումեան

Բարից

Երէկ երեկոյ ստացայ Ձեր հեռագիր որմէ իմացայ ուրախութեամբ թէ Համաժողովը յաջողութեամբ վերջացած է: Արդէն մեր ներկայացուցիչ Տիար Յովսէփ Սարաֆեան իր հաղորդած տեղեկութիւններով գուշակել կու տար այդ յաջողութիւն որ Ձեր եռանդուն եւ անդու ջանքերի արդիւնքն եղած է: Այդ առաջին քայլն է դէպի Համերաշխութիւնը թուրքաբնակ ճնշուած ժողովուրդների գործակցութեան եւ դէպի նպատակը յառաջադիմել կարենալու Համար: Ի հարկէ շատ անգամ անկումներ եւ վերականգնումներ պիտի պատահին մինչեւ որ միասին քայլել վարժուինք: Բայց նոր ոտքի կանգնած մանկան մը առաջին քայլերին պէս, իբրեւ սկզբնաւորութիւն, մեծ ուրախութիւն կը պատճառէ մեզ ապագայ յոյսեր ներշնչելով: Շնորհակալութիւն այդպիսի ծանր գործի մը նուիրուած Ձեր ջանքերին եւ շնորհաւորութիւն Ձեր յաջողութեան Համար:

Այսօր ալ ստացայ Դեկտ. 31ի Ձեր քարտ որին ստորագրած էին նաեւ Համաժողովի երեկոյթին մասնակցող մեր Հայ Հայրենակիցներ: Կը խնդրեմ ընդունիլ իմ փոխադարձ յարգալիր բարեւներս եւ հաղորդել նաեւ իրենց:

Այս առիթով կը շնորհաւորեմ Ձեզ, նաեւ նոր տարին, մաղթելով որ նոր ոյժ եւ նոր եռանդ աւելցունէ, մեր դժուարակոխ ճամբան հարթելով դէպի մեր սուրբ նպատակ հասնելու Համար:

Ձեր Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Յ. Գ.- Այսօրի Le Sémaphore de Marseille-ի մէջ թղթակցութիւն մը կայ Կ. Պոլսէն, որ կ'իմացնէ թէ Սուլթանի դէմ եղած մահափորձին Համար մահի դատապարտուած ժօրիսը իր պալատական բանտէ արձակուած եւ պելճիքական դեսպանատան թարգմանի ներկայութեամբ Սիրքէճիի կայարանէն շոգեկառք դրուելով Եւրոպա դրկուած է, մի հազար օսմ. ոսկիի գումար մ'ալ իրեն նուէր տրուելով իր բանտարկութեան փոխարէն: Ի՞նչ կը նշանակէ այս...

Փաստ. 53-6

Ա 23.- ԳԱԼՅԱՅԵԱՆԵՆ ՄԱՐԻՆ

Սիրելի Մար,

Տօրէ ի վեր Պարիզէն վերադարձեր եմ: Կոնգրէն 27էն սկսեալ 3օր տեւեց եւ եկաւ Համաձայնութեան՝ գլխաւորապէս ներկայ ռեփորմ տապալելու, սահմանադրական կարգեր հաստատելու Տաճկաստանում՝ յեղափոխական միջոցներով: Տպաւորութիւնը բաւականին գոհացուցիչ գտայ: Սաբաճէդըիսի կուսակցութեան մէջ կան Համակրելի տարրեր: Իսկ դրական ինչ արդիւնք կրնայ տալ ներկայ կոնգրէն, դա ապագայի հարց է: Ներփակ կը գտնես յայտարարութեան մի օրինակը, որ մշակուեցաւ եւ ընդունուեցաւ կոնգրէնում: Խաչատուրը եւ Ջարդարեանը դեռ Պարիզ են, նոյնպէս Վահագը: Սարգիսը երէկ վերադարձաւ: Կոնգրէին մասնակցում էր Մարտի 11ի Արմէնիայի ներկայացուցիչը Բասմաջեան, Բանասէրի իմբագիր եւ Լոնտոնէն Հրաչեայ Մարալը, կոնգրէսիստների թիւը հասնում էր 30ի:

Կարծեմ այսքան տեղեկութիւն առ այժմ կը բաւէ:

Ձերմ բարեւներով ԳԱԼՅԱ

10 Յունուար 1908

Փաստ. 97բ-1

Ա 24.— ԱԿՆՈՒՆԻ ՆԱՄԱԿԸ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Յաջորդաբար տրուած երկու նամակները կը վերաբերին Փարիզ գումարուած Օսմանեան Թուրքիոյ ընդդիմադիր կազմակերպութեանց կոնգրէին (1907 Գեկտ 27– 29): Առաջինն հեղինակն է Է. Ակնուցի (Խաչատուր Մալումեան), որ իբրեւ Գաշնակցութեան ներկայացուցիչ մասնակցած էր Փարիզի յիշեալ հակահամախառն համագումարին: Երկրորդ ձեռագիրը կը պատկանի Ռոստոմին, ստորագրութիւնը «Արտաւագր», որ ծածկանունն էր Արեւելեան Բիրոյին:

1908 Յունուար 30, Ժընև

Սիրելի Արտաւագր,

Մի քանի օրից ի վեր այստեղ եմ, եւ երեւի 7-8 օրից պիտի մեկնիմ Վիեննա, ուր տեսնուելու ենք Պարոյրի եւ Զաւէնի հետ³⁵, որոնք այնտեղ գալու հրաւէր ունեն:

Պարիզի Կոնգրէի մասին՝ Ռուբէնը³⁶ համաձայն իր խոստման, ձեռք արդէն գրած պիտի լինի. ուրեմն չեմ անդրադառնայ:

Մանր, դժուար, երբեմն նոյնիսկ յուսահատական եղաւ մեր աշխատանքը, բայց վախճանը մոռացնել պիտի տայ այդ բոլորը: Համերաշխութիւնը կայացած է, եւ մնում է միայն նրան գործի վերածել:

Հաւանորէն շատ մօտիկ պապագայում կը միացնենք եւ մակեդոնացիներին, որոնք յարել էին, բայց անկարող եղան գալու՝ Սարաֆովի եւ Գորվանովի³⁷ սպանութեան պատճառով: Ալբանացիները արդէն յարաբերութեան մէջ են, եւ հաւանորէն կը միանան նոյնպէս: Յոյները, որոնց հետ երկար խօսակցութիւնները ունեցայ, հրաժարուեցին պատճառ բերելով, որ իրանք գործող մարմին հետ կապ չունեն: Իսկական պատճառը այն է, որ նրանք բուլղարներին հետ հաշտուել չեն ուզում, եւ քաղաքական խելօքութիւն են համարում՝ կողմնակից երեւալ այժմեան կառավարութեան: Փչացած խումբ է այդ, անարժան նոյնիսկ լուրջ վերաբերմունքի: Մեր բարեկամները (Ֆրանսիացի) էն գլխից խորհուրդ էին տալիս՝ անտես առնել այդ խումբը՝ եւ գլխաւորապէս մենք էինք, որ տարուած բոլորին կանչելու տենչով, սկսեցինք բանակցել: Այժմ փորձում ենք գործի քաշել երկրին մէջ գործող յոյն խումբը.— տեսնե՞ք ինչ կը լինի հետեւանքը: Եթէ մակեդոն ընկերները քիչ զիջող լինեն, երեւի մի բան դուրս կը գայ:

Քրտերի վերաբերմամբ մի ծրագիր կայ, սակայն այդ մասին չեմ գրի: Գրելու բան չէ: Եկողներին միջոցով կը հաղորդենք:

Հայկական խմբերը իրանց այնքան երեխայական կերպով պահեցին, որ դուրս եկաւ ձեր ցանկացածը, որի

մասին հեռագրել էիք: Մասնակցեց «Արմէնիան»: Ամբողջ կայի վերակազմեալները, ինչպէս եւ Եգիպտոսինը՝ համաձայնութիւն տուեցին մասնակցելու: Մէկը նրանցից պատգամաւոր նշանակեց Չոպանեանին, որը առաջինութիւն ունեցաւ հրաժարուելու (նամակով), յայտնելով որ «ինքը կողակցութեան մարդ չէ»: Կը գարմանք գուցէ: Նա իրաւունք ունէր — Թաւաշանեանի խնդիրը շատ վտանգաւոր կերպարանք է ստացել, եւ պարոնը հիմք ունէր հրապարակով հրաժարուելու որեւէ կապ ունենալուց յիշեալ խմբի հետ: Նրա գրածները այդ սպանութեան մասին այնքան պատասխանատու են, որ հարկաւոր էր յետ նահանջել: Եւ նա նահանջեց: Միւս խումբը — Վերակազմեալ — որ գրաւոր կերպով համաձայնուել էր ժողովի գալ, վերջին ընդէն յետ քաշուեց, երբ «համերաշխութեան» պայման կապեցին հիների (հնչակեան) հետ: Հիները տատանուում էին: Մուրատ տրամադիր էր. Սապահ՝ ոչ³⁸: Խեղճ, մանկական պատճառաբանութիւններ: Այդ մարդոց մասին ես շատ աւելի լաւ կարծիք եմ ունեցել, քան արժէ: Ցաւում եմ անկեղծ կերպով, որ Մուրատը գտնուում է այդքան անպիտան մարդոց շրջանում եւ ազդեցութեան ներքոյ: Եթէ այդպէս շարունակի, նա կորած պիտի համարուի՝ գործի համար, մանաւանդ որ՝ իբր շատ թոյլ մարդ, անկարող է որոշ դիրք բռնել:

Արդիւնքից ուրեմն — այդ բացակայութիւնից — դուք ուրախ պիտի լինէք: Մենք, յամենայն դէպս, մեր պարտքը կատարեցինք կանչելով բոլորին, մի բան, որ շատ լաւ տպաւորութիւն ձգեց:

Անցնինք անելիքներին:

35.- Պարոյրը ծածկանունն է Անդրանիկի: Ձաւէն կամ Ձաւէն Արշակունի ծածկանունը կը գործածէր մակեդոնացի յայտնի յեղափոխական եւ Դաշնակցութեան բարեկամ — Լեւապով:
36.- Ռուբէնը Չարդարեան, որ իբրեւ անդամ Դաշնակցութեան պատուիրակութեան մասնակցած էր Փարիզի համագումարին:
37.- Բորիս Սարաֆով եւ Եուվան Գորվանով, մակեդոնացի ծանօթ յեղափոխական դէմքեր, որոնք 1907 թ. Նոյեմբերին դաւադրաբար սպանուած էին Սոֆիայի մէջ:
38.- Մուրատ (Համբարձում Պոյաճեան) եւ Սապահ-Գիւլեան, հնչակեան յայտնի ղեկավար դէմքեր:

Մինչեւ երկու շաբաթ պիտի կազմուի Comité permanent³⁹: Պարիզ խնդրեցի որ քիչ ուշացնենք այդ կազմը, որպէսզի մենք յարմար ընկեր գտնենք:

Comité-ն կարող է ահագին գործ չի նել, պնդել կապերը, նաեւ խմբեր գրաւել, եթէ կազմուած լինի կարող եւ վստահելի ընկերներէ: Իւրաքանչիւր կազմակերպութիւն պիտի ուղարկէ մի անդամ: Գաղտնապահութիւնը անպայման է: Ռիզայի⁴⁰ խմբին յայտնեցինք, որ ընկեր բերել տան ներսից⁴¹, — Պարիզ եղածները անյարմար են: Թերաքքի խումբը ունի մարդ: Մակեդոնացիները երեւի նոյնպէս: Մեր ներկայացուցիչը պիտի լինի Թուրքիայից — ես այս խօսքը տուել եմ: Այստեղ եղած ընկերները անյարմար են — նրանք արդէն գնացին — տեսնուեցին եւ ծանօթ են իբր այստեղի մարդիկ: Հարկաւոր է մի նոր մարդ, երկրին ծանօթ, եւ կարող ազդելու միւսներին վրայ, կարող առաջ մղելու մեր ծրագիրը եւ մեր տաքտիկը: Խորհրդակցեցինք, ծանր ու թեթեւ արինք, եւ կանգ առանք եղբայր Գարեգինի վրայ:

Ահա ուրեմն հարցը: Գարոն պիտի գայ այս կողմերը գէթ երեք ամսով: Մնայունը կարող է մի երկու շաբաթ հաւաքուել, ծրագրել մի քանի բաներ, միջոցներ որոնել իրագործելու Կոնգրէի որոշումները եւ ապա ցրուել, մի քանի ամսից յետոյ նորից խմբուելու պայմանով:

Այդ առաջին համախմբման կը լինի Գարոն. յետոյ, եթէ նա ստիպուած կը լինի մեկնել, նրա տեղ կարող է մասնակցել ժամանակաւորապէս այստեղի ընկերներէից մէկը, իբրեւ շարունակող ընդունուած որոշումներին:

Գիտեմ դժուարութիւններ կան. բայց եւ այնպէս պէտք է մէկդի դնել այդ եւ շտապով ճանապարհ դնել Գարոյին: Ասում եմ շտապով, որովհետեւ այդ դէպքում ես նրա հետ կարող կը լինեմ տեսնուել՝ Վիեննա կամ Բալկան, au courant անելու⁴² անցած-դարձածին եւ պարզելու այն գիծը, որին ես եմ հետեւել:

Հետեւաբար, խնդրում ենք, այս նամակը ստանալուց եւ որոշումը կայացնելուց յետոյ՝ հեռագրով հաղորդէք, որպէսզի ըստ այնմ վարուենք: Ուշացնել չէ կարելի. մի քանի օրից մեր նոր գործակիցները կը սկսեն հարցեր տալ եւ շտապեցնել:

39.- Ֆրանսերէն՝ մնայուն կոմիտե:
40.- Սիմէոն Ռիզա, Փարիզ հաստատուած թուրք ազատական եւ ազգայնական անձնաւորութիւն, որ իր «Մեշվերթ» թերթով կը պայքարէր Ապտուլ Համիտի բռնակալական վարչակարգին դէմ, մնալով ջերմ ջատագով Օսմանեան կայսրութեան անբողջակամութեան պահպանման:
41.- Այսինքն՝ Թուրքիայէն:
42.- Ֆրանսերէն՝ տեղեակ, իրագել պահելու:
43.- Կուսակցական գաղտնագրութեան մէջ «հիւանդանոցում» կը նշանակէ բանտարկուած ըլլալ, ինչ որ պարագան էր Չերքեզովի, որ թուրք յեղափոխական անձնաւորութիւն էր եւ համամիտ Դաշնակցութեան. բուն անունն էր Յիւսէյն Թօսուն:
44.- «Իրանեանի դեսպանին» պարզ է որ պիտի նշանակէ

Շտապեցէք ուրեմն (... գէթ բացառաբար):

Զեք հեռագրով հարցրի Չերքեզովի մասին — արդեօք հիւանդանոցումն է թէ առողջ⁴³ — եւ դուք հեռագրերը թողիք անպատասխան: Պարիզի նրա ընկերները շատ էին անհանգիստ:

Պարիզում տեսնուած լինելով Իրանեանի դեսպանի հետ, ձեզանից մի քանի տեղեկութիւններ ուզեցի, որպէսզի կարող լինեմ նրա հետ նորից տեսնուել մի քանի բաներ գրել տալու համար յօգուտ Ռոստոմի միասիրտին⁴⁴. Նա բոլորովին տրամադիր էր, եւ անհամբեր ըստասուտ էր այդ տեղեկութեան: Դուք ոչ մի տեղեկութիւն չուղարկեցիք եւ երեւակայել կարող էք որքան «ախորժելի» կացութիւն ստեղծեցիք:

Դրոն⁴⁵ մեկնեց մի առժամանակով այդ կողմերը: Մի քանի մանրամասներ նա կը հաղորդի ձեզ:

Վիեննայում մի քանի աշխատանքներ կատարելուց յետոյ, կարող կը լինենք որոշել Վիշապի⁴⁶ ճամբորդութեան ժամանակը եւ մանրամասները:

Այդ մասին գրել անկարող եմ:

Վահագը⁴⁷ մի քանի օրից կ'երթայ: Մարտինը եւ Սիրանոյնը, ինչպէս եւ Միշան առ այժմ այստեղ են: Զարեհը մեկնել է եւ սպասում է մեր նամակին Ալեքսանդրիա:

P.S.— Թերթի մէջ նկատեցի մի քանի անտեղի ակնարկներ Ռիզայի հասցէին — «յեղափոխական Ռիզաներ» եւայլն: Գործակցութեան փորձ անելուց յետոյ՝ աւելորդ են այդ տեսակ թեթեւ ակնարկները: Ի նկատի ունեցէք, խնդրեմ, մանաւանդ որ նրանք վերին աստիճան դիւրագգաց են, ստիպուած լինելով ընդունել մեր տաքտիկան եւ մեր շատ մտքերը, ինչպէս ինքներդ տեսաք:

Արդեօք կարող պիտի լինիք ամբողջովին տպագրել déclarations-ը:

Յատկապէս խնդրում եմ Կոնգրէի մասին մանրամասնօրէն հաղորդել Շամի⁴⁸ ընկերներին:

Շատ բարեւներ, Զեր ԱԿՆՈՒՆԻ

Պարսկաստանի դեսպանին, իսկ «Ռոստոմի միսիան» ակնարկութիւն է այդ օրերուն Թեհրանի մէջ Ռոստոմի վարած բանակցութեանց պարսիկ սահմանադրական ուժերու հետ:
45.- Դրաստամատ Կանայեան:
46.- Կ. Պոլիս:
47.- Տաթեւեան Վահագն, անդամ Յուցական-Տեղորական մարմնին:
48.- Վան-Վասպուրականի, այն իմաստով ու նպատակով որ այս վերջինները հաղորդ դառնան կայացած համագործակցութեան նկատի ունենալով որ Վասպուրականի շրջանին մէջ Դաշնակցութեան եւ թուրք ընդդիմադիր տարրերու միջեւ փոխադարձ հասկացողութեան եւ գործակցութեան համար բաւական նպաստաւոր գետին ստեղծուած էր արդէն:

Փաստ. 18-33

Ա 25.— ՌՈՍՏՈՍԻ ՆԱՄԱԿԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

1908 Փետր. 1

Սիրելիք,

Ստացանք խաչատուրի նամակը, Յուն. 30[ին] գրքուած: Ռուբէնը³⁸ գրել էր, թէ կոնգրէի մանրամասնութիւնները մասին խաչատուրը կը յայտնի, սա էլ գրուած է, որ Ռուբէնը յայտնած կը լինի: Մենք, ուրեմն, պիտի սպասենք, որ իրար հետ նոր համաձայնութեան գան:

Սպասում ենք քրտերի վերաբերմամբ կազմուած ծրագրին: Շատ չենք ցաւում, որ հնչակեան խմբերը չեն մասնակցել: Այդ խնդրի վրայ պէտք է նայել երկու տեսակէտից՝ պրոպագանդայի եւ գործնական քայլերի: Առաջին տեսակէտով գործը շատ լաւ է տարուած եւ տարուած է, իսկ ինչ վերաբերում է ապագայի գործնական քայլերին, ձեր ընտրած ճանապարհը նպատակին չի ծառայել: Խնդրի մանրամասները մեզ ծանօթ չեն, եւ մենք դատում ենք, ի հարկէ, արտաքին յայտնի երեւոյթներով:

Մեր կարծիքով՝ արտասահմանեան comite-ի ֆունկցիաները հարկաւոր կը լինի ըստ կարելոյն սահմանափակել: Նա բոլորովին տեղեկութիւն չպիտի ունենայ պատրաստուելիք գործնական ծրագրի մասին: Որքան էլ ընդունուած լինի «անպայման գաղտնապահութիւնը», այնուամենայնիւ պէտք է այնպէս տանել գործը, որ գաղտնապահութեան պէտք չզգացուի: Գործող մարմինը պէտք է անպայման ազատ լինի իր գործունէութեան մէջ, նոյնիսկ աւելին կ'ասենք, ծրագրի ամբողջութիւնը պիտի գաղտնի մնայ գործող մարմնի այն տարրերից, որոնք փորձառութիւն չունեն այդ տեսակ պատասխանատու գործերում: Թող մնայուն կոմիտէն կապեր պահպանի, նոր խմբեր գրաւի եւ այլն... զբաղուի մի խօսքով լոկ արտասահմանեան գործունէութեամբ:

Ուստի բոլորովին անհրաժեշտ չենք համարում անպատճառ երկրին ծանօթ յայտնի թուրքահայ յեղափոխական ունենալ մարմնի մէջ: Բաւական է, որ նա կեանքի փորձառութիւն ունենայ եւ կարողանայ հեղինակութիւն ստանալ: Գարոն հրաժարուած է: Բացի իր մասնաւոր պատճառներից դեր են խաղում այստեղ սպասուելիք բարդութիւնները, որի մասին քիչ յետոյ կը գրենք, փնտռում ենք մի ուրիշին:

Չէրքէզովը հիւանդանոցումն է⁴³: Վիճակը թէեւ դեռ եւս անորոշ է, սակայն չենք վախենում առանձին բարդութիւններից:

Իրանեանին⁴⁴ խօսելու համար հիմա նիւթ կ'ունեն-

նաք, բայց չլինի թէ ամբողջը նրան յայտնէք: Թեհրանից ձեզ ուղարկուած է մի հաստ ծրար: Խօսէք միայն ընդհանրապէս, իսկ գործնական խոստումներից կանգ առէք փոխադրութեան խնդրի վրայ առաւելապէս:

Դրոն եկաւ, պատմեց: Աւելորդ ենք համարում գրել նամակով այդ խնդրի մասին, քանի որ ձեզանից մարդ պիտի գայ Խորհրդին: Ուժերի մասին այնտեղ կը խօսենք, ինչպէս նաեւ այն ծրագրի, որի համար խոստացել էր խօսել Ռոստոմը:

Ռիզայի վերաբերմամբ կ'ասենք, որ արհամարհական դարձուածքներ գործ չածեն, բայց այնուամենայնիւ նա անվստահելի է եւ նրանից խեր չենք տեսնելու:

Խաչատուրի նամակի բովանդակութիւնը հաղորդում ենք Շամ⁴⁸:

Պատերազմը աւելի եւ աւելի հաւանական է դառնում: Տաճիկները սկսել են պահեստի գինուորներին կանչել, Ռուսաստանն էլ պատրաստութիւնների է ձեռնարկում: Եթէ Տաճկաստանը իր գործերը չքաշի Պարսկաստանի սահմաններից, Ռուսաստանը ուլտիմատում⁴⁹ կը դնի եւ մերժելու դէպքում կը սկսի պատերազմը: Բայց նա այդ քայլը կ'անի շատ մեծ դժուարութիւններով, բոլոր խաղաղ միջոցները գործադրելուց յետոյ: Ներկայումս նա ունի Կովկասում շատ քիչ զինուորական ուժ: մոբիլիզացիայի⁵⁰ համար երկար ժամանակ կը պահանջուի: Աւելի ճիշտ կը լինի նրա համար մոբիլիզացիան անել Ռուսաստանի նահանգներում եւ այստեղ բերել տալ: Եւ եթէ նա ժամանակին չանի այդ քայլը, Տաճկաստանը ճապոնիայի օրինակին հետեւելով կ'անի առաջին յարձակողական քայլը, որը անպայման յաջող կը լինի: Այդ յաջողութիւնը մեծ հարուած կը լինի ապագայի վերաբերեալ: Դրանով կը քաջալերուեն քրտական ցեղերը, որոնք ուրիշ պարագաներում գուցէ աւելի վարանոտ վերաբերում ցոյց տան, ինչպէս նաեւ Կովկասի մահմեդականները: Թուրք էմիսարներն⁵¹ վաղուց է վխտում են Կովկասում, անյայտ աղբիւրից առատօրէն գէնք է տարածում մահմեդական ազգաբնակչութեան մէջ: Տաճկաստանի առաջին յաջողութիւնը սրան էլ ոտքի կը հանի: Դա շատ վտանգաւոր է, որովհետեւ երկաթուղու գծերը գլխաւորապէս մահմեդականների շրջաններով են անցնում: Վրացիները նոյնպէս ուրախ կը լինեն դրան: Նրանք ենթադրում են, որ Տաճկաստանի յաղթութեան դէպքում էլ Կովկասը, եթէ ոչ ամբողջ Կովկասը, գոնէ նրա արեւելեան, հիւսիսային

49.- Վերջնագիր:
50.- Ձօրաշարժի:
51.- Արտագնայ գաղտնի գործակալները:

մասերը չեն մնալ Տաճկ[աստանի] ձեռքերում: Դիւանագիտութեան միջամտութեամբ տաճիկները կը քաշուեն, գուցէ իրենց ձեռքին պահելով հայկական նահանգները, իսկ իրենք ձեռք կը բերեն եթէ ոչ քաղաքական անկախութիւն, գոնէ ինքնավարութիւն: Այս բոլորը ի հարկէ, լուրջ բաներ չեն, բայց որոշ գաղափար են տալիս տիրող մթնոլորտի մասին: Մէջտեղ մեր բանն է բուրդ: Մեզ վտանգ է սպասում կոտորածի թէ՛ այստեղ եւ թէ՛ Տաճկաստանում: Մտադիր ենք հրաւիրել արտակարգ ժողով խօսելու համար մեր բռնելիք դիրքի մասին: Դուք էլ այդտեղ մի քանի բան լաւ կը լինի անէք: Նախ աշխատէք մի կերպ դիւանագիտական ճանապարհով ապահովել հայ ազգաբնակչութեան գոյութիւնը Տաճկաստանում: երկրորդ՝ թող նոր «Մնայուն կոմիտէն» մի շրջաբերական ուղղի օսմանեան ժողովուրդին գրգռելով նրան պատերազմի դէմ, նախազգուշացնելով, որ դա նոր դժբախտութիւններ կարող է բերել Տաճկաստանի գլխին եւ այլն...

Հետաքրքիր է, թէ ինչ դիրք կը բռնի Բուլղարիան, կը չէզոքացնե՞ն նրան արդեօք, մակեդոնական խնդրին

այս կամ այն լուծումը տալով, թէ նա դարձեալ պատերազմի կը դիմի: Չլինի թէ Մակեդոնիայի խնդիրը կարգադրեն դիւանագիտական ճանապարհով, խոստանալով Տաճկաստանին իբրեւ վարձատրութիւն այդ կորուստի համար՝ կտորներ Պարսկաստանից, գուցէ նոյնիսկ Ռուսաստանից:

Համբոյրներով՝
ԱՐՏԱԻԱԶԴ

Յ. Գ.- Դրոյի ասելով՝ այդտեղ դեռ շարունակուած են փորձերը: Դադարեցրէք, հիմա բոլորովին աւելորդ են: Շնորհակալութիւն յայտնէք այնուամենայնիւ Կրէտէնին¹⁰: Նա մեզ թէեւ բան չսովորեցրեց, բայց մենք նրանից շատ բան սովորեցինք:

Երէկուայ նամակից իմացանք, որ Չերքէզովը⁴³ խառն յանձնաժողովի առաջ խոստովանել է, թէ ինքը տաճկահայատակ է: Շարժառիթները անյայտ են:

Ն[ՈՅՆ]

Բ.- ՕՍՄԱՆԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀՈՉԱԿՈՒՄ

Փաստ. 1716q-4

Բ 1.- ԱՀՄԵՏ ՌԻՉԱՅԻ ՆԱՍԱԿՆԵՐԸ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Comité ottoman d'Union et de Progrès

REVOLUTION TURQUE EN MACEDOINE

11 juillet 1908

Des dépêches annoncent la révolte à Monastir et sur d'autres points en Macédoine de nombreux officiers appartenant au parti Jeune Turc avec le concours de la population. Une de ces dépêches, datée de Vienne, ajoute qu'une panique se déclara parmi les chrétiens pensant que le mouvement était dirigé contre eux.

Le Sultan Abdul-Hamid et certains Puissances qui ont tout intérêt à maintenir le régime despotique en Turquie veulent présenter ce mouvement patriotique des Jeunes-Turcs comme un soulèvement contre les chrétiens et contre les étrangers afin de justifier aux yeux de l'Europe les brutales mesures de répression qui vont sans doute être prises.

Or, dans aucune de ses publications, jamais le parti Jeune-Turc n'a fait de distinction de race et de religion; jamais il n'a prêché la haine et la discorde. Au contraire, le régime représentatif qu'il réclame est un garant efficace du bonheur et des avantages de toute la population de l'Empire. Israélites, chrétiens, musulmans auront les mêmes devoirs et les mêmes droits. Leurs intérêts légitimes seront sauvegardés sur un même pied d'égalité.

Le parti Jeune-Turc respecte en outre tous les traités internationaux avec le système de réciprocité. Sous un régime de justice et de liberté, assuré par la Constitution, il sera plus facile aux étrangers honnêtes de venir prêter leur concours moral et matériel à la régénération du peuple ottoman.

Quelques dépêches d'origine équivoque tendent à donner à notre mouvement un caractère obscur et mystérieux.

Le parti Jeune-Turc agit au grand jour. Il a loyalement proclamé dans divers manifestes ce qu'il est fermement décidé à faire. Il compte suivre son programme jusqu'au bout.

Pour le Comité ottoman d'Union & de Progrès AHMED RIZA

Օսմանեան Կոմիտէ Միութեան եւ Յառաջդիմութեան (Փարիզ)

ԹՐԲԱԿԱՆ ՅԵՂԱՓՈՒՍՈՒԹԻՒՆ ՄԱԿԵԴՈՆԻՅՈՅ ՍԷՉ

11 Յուլիս 1908

Հեռագրալուրեր կը ծանուցանեն որ Մոնասթրի եւ Մակեդոնիոյ տարբեր կէտերու վրայ Երիտասարդ Թուրք կուսակցութեան պատկանող բազմաթիւ սպաններ ապստամբած են՝ ժողովուրդի օժանդակութեամբ: Վիեննայէն հասած այդ հեռագրալուրերէն մէկը կ'աւելցնէ, որ խուճապ յառաջացաւ քրիստոնեաներու մէջ, որոնք կը խորհէին որ շարժումը իրենց դէմ ուղղուած էր:

Սուլթան Համիտ եւ որոշ Տէրութիւններ, որոնք ամէն շահ ունին Թուրքիոյ բռնակալ վարչակարգը պահպանելու, կ'ուզեն Երիտասարդ Թուրքերու հայրենասիրական այս շարժումը ներկայացնել իբրեւ ըմբոստութիւն ընդդէմ քրիստոնեաներու, որպէսզի Եւրոպայի աչքին արդարացնեն ճնշումի այն վայրագ միջոցառումները, որոնք ձեռք պիտի առնուին անկասկած:

Արդ, իր հրատարակութիւններէն ոչ մէկուն մէջ Երիտասարդ Թուրքերու կուսակցութիւնը բնաւ խտրութիւն չէ դրած ցեղի եւ կրօնի, բնաւ չէ քարոզած ատելութիւն եւ երկպառակութիւն: Ընդհակառակն, իր պահանջած ներկայացուցչական վարչակարգը զօրեղ երաշխիք մը կազմէ կայսրութեան ամբողջ բնակչութեան բարօրութեան եւ օգուտին համար: Հրեաներ, քրիստոնեաներ, մահմետականներ պիտի ունենան նոյն պարտականութիւններն ու իրաւունքները: Հաւասար գետնի վրայ պիտի պահպանուին իրենց օրինական շահերը:

Երիտասարդ Թուրքերու կուսակցութիւնը կը յարգէ այլապէս նաեւ միջազգային բոլոր դաշնագիրները՝ փոխադարձութեան հիմամբ: Մահմանադրութեամբ երաշխաւորուած՝ արդարութեան եւ ազատութեան վարչակարգի մը տակ, պարկեշտ օտարականներուն համար աւելի դիւրին պիտի ըլլայ իրենց բարոյական եւ նիւթական օժանդակութիւնը բերելու օսմանցի ժողովուրդի վերածնունդին:

Կարգ մը հեռագրալուրեր՝ կասկածելի աղբիւրներէ բխած, կը ջանան մութ եւ խորհրդաւոր նկարագիր մը տալ մեր շարժման:

Երիտասարդ Թուրքերու կուսակցութիւնը կը գործէ բացայայտ կերպով: Տարբեր յայտարարութիւններով ան ուղղամտութեամբ ծանուցած է այն ինչ որ վճռած է ընել: Որոշած է հետապնդել իր ծրագիրը մինչեւ աւարտը:

Միութիւն եւ Յառաջդիմութիւն կոմիտէի կողմէ ԱՀՄԵՏ ՌԻՉԱ

Paris le 17 Juillet 1908

Փարիզ, 17 Յուլիս 1908

Chers Camarades,

Nous avons été très contents de recevoir vos encouragements fraternels pour notre mouvement en Macédoine; mais quelque chaleureux que soient vos témoignages de bonne camaraderie, ils ne sauraient nous satisfaire en ce moment. Le terrain platonique doit être abandonné. Il faut agir et répartir les forces révolutionnaires sur différents points pour jeter le désarroi dans les rangs de nos adversaires et les frapper de plusieurs côtés à la fois.

Nous agissons de notre mieux en Macédoine. Nos camarades cherchent à en faire autant en Anatolie. Vous y avez des forces suffisantes: pourquoi ne les mettez-vous pas en mouvement? Pourquoi, en même temps, et surtout, ne pas agir à Constantinople même où vous avez également de sérieux moyens d'actions répressives?

Il va sans dire que votre mouvement aurait le même caractère patriotique, le même but que le nôtre: réduire à une complète impuissance les ennemis avérés de la Patrie ottomane.

Salut et Camaraderie Pour le Comité AHMED RIZA

Միրելի ընկերներ,

Շատ գոհ մնացինք ստանալով ձեր եղբայրական քաջալերանքները Մակեդոնիոյ մէջ մեր շարժումին համար: սակայն որքան ալ ջերմ ըլլան ընկերական ձեր վկայութիւնները, անոնք չեն կրնար այս պահուն մեզ գոհացնել: Պէտք է հրաժարիլ պղատոնական ոճէն: Պէտք է գործել եւ յեղափոխական ուժերը տեղաբաշխել տարբեր կէտերու վրայ՝ մեր հակառակորդներու շարքերուն մէջ շփոթութիւն առաջացնելու համար, եւ գանոնք հարուածելու միաժամանակ շատ մը կողմերէ:

Մակեդոնիոյ մէջ մենք կ'ընենք մեր լաւագոյնը: Մեր ընկերները կը փորձեն նոյնը ընել Անատոլիոյ մէջ: Հոն դուք բաւարար ուժեր ունիք: Ինչո՞ւ զանոնք չէք դներ շարժման մէջ: Ինչո՞ւ միաժամանակ, եւ մանաւանդ չգործել նոյնինքն Կոստանդնուպոլսոյ մէջ, ուր նոյնպէս ունիք ճնշում բանեցնելու մեծ միջոցներ:

Աւելորդ է ըսել, որ ձեր շարժումը պիտի ունենար հայրենասիրական միեւնոյն նկարագիրը, միեւնոյն նպատակը, ինչ որ մերինն է, — կատարեալ անկարողութեան մատնել օսմանեան Հայրենիքի բացայայտ թշնամիները:

Ընկերական ողջոյն կոմիտէի կողմէ ԱՀՄԵՏ ՌԻՉԱ

Փաստ. 1716q-5

18 juillet 1908

Chers camarades,

Conformément aux résolutions de notre Congrès, votées par tous les congressistes, nous nous sommes mis à l'œuvre et vous êtes sans doute au courant des bons résultats que nous obtenons. Mais nos camarades qui luttent si vaillamment sont en droit de compter sur l'appui moral et effectif des neuf groupements qu'ont adhéré à notre programme et à la tactique qu'il fallait employer pour le réaliser.

Que faites-vous, vous qui êtes un de ces groupements? Quels sont vos moyens de coopération?

Nous attendons, impatiemment que vous vouliez bien nous les indiquer nettement.

Salut et fraternité [AHMED RIZA]

Միրելի ընկերներ,

Համաձայն մեր Կոնգրէի որոշումներուն, քուէարկուած բոլոր ժողովականներէն, լծուեցանք գործի եւ անկասկած տեղեակ էք մեր ձեռք բերած լաւ արդիւնքներուն մասին: Սակայն մեր ընկերները՝ որոնք այնքան արիւթաբար կը պայքարին, իրաւունք ունին հաշուելու բարոյական եւ իրական գորակցութեանը այն ինչ խրմբաւորումներուն, որոնք համախոհ գտնուեցան մեր ծրագրին եւ գայն իրագործելու համար գործադրելիք մարտավարութեան:

Ի՞նչ կ'ընէք, դուք որ այդ ինչ խմբաւորումներէն մէկն էք: Որո՞նք են համագործակցութեան ձեր միջոցները:

Անհամբեր կը սպասենք որ հաճիք յստակօրէն գանոնք ցոյց տալ մեզի:

Ողջոյն եւ եղբայրութիւն [ԱՀՄԵՏ ՌԻՉԱ]

Փաստ. 18-91

Բ 2.- ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

Վ Ե Ր Ջ Ա Պ Է Ս ...

Սառոյցը կտրուած է եւ յորդացած գետը ազատուում է կաշկանդիչ կապանքներից, լայնօրէն ողողելու համար արինազանգ երկրի արգաւանդ դաշտերը եւ կեանք վերստեղծելու աւերակներում:

Սուլթանը կարգադրել է պատգամաւորական ժողով գումարել: Թուրք ազատագրական շարժումը հասնում է իր նպատակին: Խլրտումն իշխում է զինուորական շրջանում: Նա շուտով կը վարակէ աւելի լայն խաւեր: Բռնակալութեան պարիսպներն են, որ ընկնում են կամովին:

Մինչեւ այժմ կարելի էր բռնանալ ու ճնշել՝ յենուելով զինուորական ոյժի եւ ժողովրդի տգիտութեան վրայ: Մինչեւ այժմ կարելի էր անպատիժ մորթել, աւերել եւ կողոպտել:

Բայց ահա ըմբոստութեան գրոհի առաջ տեղի է տալիս կարմիր գազանը. նրա միահեծան իշխանութիւնը տատանուում է եւ մտնում է կործանման: Բռնութեան նեցուկը՝ զինուորական ոյժը, ձգտում է յենարան դառնալ արդարութեան եւ իրաւակարգի:

Չուր չանցաւ թափուած արիւնը: Տասնեակ տարիների ընդհարումները, զինուած եւ անզէն բողոքները, ժողովրդի անլուր տառապանքը եւ գերմարդկային զոհողութիւնները իրենց պտուղն ունեցան վերջապէս:

Յ. Յ. Դաշնակցութեան փայփայած երազները իրականութեան սահմանն են թեւակոխում: Գնչել է ազատութեան ժամը...

Գիտենք, որ մեզ սպասում են նոր տառապանքներ եւ ծանր փորձութիւններ: Ռուսաստանի օրինակը դեռ թարմ է մեր յիշողութեան մէջ: Պարսկաստանի դէպքերը մեզ ցոյց են տալիս, թէ ի՞նչ է սահմանադրութիւնը ասիական մի կիսակիրք երկրում: Նոր ջարդերի, նոր աւերի եւ նոր կողոպուտի ուրուականը խռովում է մեր երեւակայութիւնը:

Բայց եւ այնպէս մեր հայեացքը յուսալից է դէպի ապագան: Անվերադարձ կորուստի է մատնուում Մեծ Սարդասպանի կարմիր ռեժիմը: Երկիրը մտնում է բնականոն զարգացման ուղին: Յարակից բոլոր ցնցումները, որքան էլ զօրեղ՝ բայց ժամանակաւոր եւ վաղանցուկ կը լինին:

Գործող յեղափոխական կուսակցութիւնները պէտք է որոշեն իրենց բռնելիք ուղին, ձեւակերպեն իրենց նուազագոյն պահանջները եւ համերաշխաբար կազմակերպեն ժողովրդի ընդդիմադիր ոյժը, այդ պահանջների գոհացումն ապահովելու համար:

Ընկերներ՝ բացուում է նոր եւ արդիւնաւոր գործունէութեան մի լայն ասպարէզ: Ամենից աւելի այսօր է, որ պէտք է սերտօրէն կապուենք իրար, դիմագրաւելու համար ամէն հնարաւոր փորձութեան:

Տասնեակ տարիներ շարունակ մեր ուղղած կոչերը թուրք ընդդիմադիր տարրերին անցեալ տարի Փարիզի ժողովում դարձան մի դաշինք եւ այս տարի՝ կենդանի եւ լայն գործ: Մեր ընդարձակ պատրաստութիւնները Վասպուրականում, որի մի մասը երեւան հանեց անժամանակ խուզարկութիւնը, ապացոյց են, որ երկիրը եռում էր արդէն մի պայթման համար: Բռնակալութիւնն զգաց պատրաստուող հարուածը եւ շտապեց վերից տալ այն, ինչ որ վարից պէտք է խլուէր կազմ ուժով:

Նոյն ուղղութեամբ, անվիատ, յեղափոխական տարրերի հետ ձեռք-ձեռքի՝ մենք պէտք է շարունակենք մեր կռիւլ բռնակալութեան եւ նրա նեխիչ կարգերի դէմ, բարձր պահելով ռամկավարութեան, ազգերի իրաւահաւասարութեան եւ աշխատաւոր ժողովրդի պաշտպանութեան դրօշակը, որ ծուարուել է փոթորկոտ ընդհարումներում, բայց դեռ մեր ձեռքն է եւ անարատ: Այդ դրօշակին նայելով ընկան այնքա՛ն կորովի ընկերներ, կախաղան բարձրացան այնքա՛ն բարձր ոգիներ եւ բանտերի խաւարում տառապում են այնքա՛ն ազատութեան յուսացողներ:

Պատմութիւնը կանչում է մեզ նոր հերոսութեան եւ նոր զոհերի:

Ցոյց տանք աշխարհին, որ Յ. Յ. Դաշնակցութիւնը որքան յամառութեամբ կռուել գիտէր բռնակալութեան դէմ, այնքան ընդունակ է շինարար եւ ռամկօգուտ գործունէութեան:

Կեցցէ՛ Թուրքիայի ընդդիմադիր տարրերի համերաշխութիւնը:
Կեցցէ՛ Յ.Յ.Դաշնակցութիւնը:

1908, Յուլիս 12
Թիֆլիս

Յ.Յ.Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈ

Փաստ. 53-147

Բ 3.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՄԻՏԵԻՆ

13 Օգոստոս 1908, Ժընև

Ամերիկայի Կ. Կոմիտէին,
Սիրելի ընկերներ,

Ինչպէս կը տեսնէք, Թուրքիոյ մէջ Սահմանադրութիւն հաստատուելով ամէն ինչ շրջուած է: Պոլսոյ մէջ մամուլը վերջին ծայր ազատ է, այնպէս որ Դրօշակէն իսկ արտատպումներ կ'ընեն: Բանտարկեալները ազատուած են եւ արդէն ուրախութեան հեռագրեր ստացած ենք Պոտրում գալէի բանտարկուած մեր ընկերներէն, որոնցմէ մէկ մասը եգիպտոս անցած են, ի միջի այլոց Գրաչը: Հայաստանի բանտարկուած մեր ընկերները քիչ ուշ սկսած են արձակել, բայց նոր նախարարութիւնը այնտեղի բանտերու դռները եւս բանալ տուած է: Պոլիս մեր ընկերները ամէն ջանք կ'ընեն որ ոչ մէկ քաղաքական հայ բանտարկուած չմնայ եւ յոյս ունենք որ չի մնար, նկատի ունենալով թուրք ժողովրդի ցոյց տուած մասնաւոր համակրութիւնը դէպի հայերը եւ անոնց նահատակները:

Հարկ անհրաժեշտ է որ գաղթականները վերադառնան իրենց հայրենիքը, ասորի համար պէտք է թերթով, ժողովներով զարկ տալ եւ փութացնել այդ շարժումը, քանի եղանակները լաւ են: Չմեռը դժուար կ'ըլլայ վերադարձը:

Կովկասէն արդէն ջանքեր կ'ըլլան հոնի գաղթականները օր առաջ իրենց տեղերը վերադարձնել: Մեր օգուտը եւ շահը կը պահանջէ որ բոլոր հայերը մտնեն Երկիր եւ օգտուելով տիրող ազատութենէն վերսկսին շէնցնել իրենց տուն ու տեղերը եւ իրենց մասնակցութիւնը բերեն ընդհանուր սահմանադրական գործին:

Ուրեմն ձեր վրայ լուրջ եւ եռանդուն պարտականութիւն կը ծանրանայ գաղթականներու վերադարձի գործին մէջ: Մեր ընկերները բոլորն ալ մտադիր են մտնել Երկիր. արդէն քանիները մտած են եւ ուրիշներ ալ կը հետեւեն: Այս կենսական եւ պատմական բախտին գործիչ ուժերու կարիքը զգալի է հոն, ուր պէտք է կեդրոնանան մեր ճիգերը եւ գործունէութիւնը: Այնպէս որ ձեր գործիչի հարցը կը մնայ: Մուսայէլեանը հիւանդ անկարող է գալ, Չարդարեանը շուտով կը մեկնի Պոլիս, իսկ Թոփչեանը բնաւ չի կրնար գալ: Դուք բաւականա՛նալու էք ձեր ուժերով եւ ձեր ուշը դարձընելու էք Տաճկաստան: Մտադրութիւն կայ Պոլիս թերթ մը ունենալու մեր ուղղութեան օրկանը ըլլալու համար:

Որովհետեւ դրամի նոր եւ լայն կարիք պիտի ունենանք, ձեր քովը գտնուած դրամը փոխադրեցէք այստեղ:

Միւնիխի ձերբակալութիւններուն մէջ մենք ոչ մէկ կապ չունինք, Դրօշակի անունը տալը չարամտութեան կամ սխալմունքի արդիւնք կը թուի:

Ձեր կողմէն աւելորդ է պատասխանել այլեւս Ռիզային. մենք պատասխանած ենք:
Շուտով մեր բռնելիք դիրքը ներկայ սահմանադրութեան մէջ կ'որոշենք: Դուք մանրամասն հաղորդեցէք թերթին մէջ Պոլսոյ մէջ անցած դարձածները, ի հարկէ համակրանքով եւ զովեստով:

Ընկերական բարեւներով
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

Փաստ. ՍՎ-182-16

Բ 4.— DECLARATION⁵²

Les représentants du comité "Union et Progrès", "Décentralisation et Constitution" et de la "Fédération révolutionnaire arménienne "Dashnakzoutioun" qui ont participé au Congrès de Paris, inspirés et poussés toujours par un sentiment de solidarité, ont trouvé utiles, dans les circonstances actuelles, de décider ce qui suit:

1. Créer un "Comité Ottoman mixte" exécutif et provisoire, composé de représentants des dits comités. Chaque comité nommera deux membres.
2. Toutes les décisions à annoncer et toutes les résolutions à prendre doivent être faites par le Comité mixte et en son nom, d'un commun accord.
3. Le comité mixte servira d'intermédiaire entre les groupes d'opposition et le gouvernement constitutionnel.
4. La création de ce comité mixte sera portée à la connaissance du pays par la presse et par les groupes, afin de contribuer à l'entente des divers éléments.
5. Un bureau spécial d'organisation à Salonique sera chargé de préparer la convocation prochaine d'un Congrès à Constantinople en invitant tous les groupes d'opposition de l'Empire en vue d'élaborer un programme politique général.

Le 16 août 1908

52.- Այս փաստաթուղթը, Սիմոն Վրացեանի արտագրութեանը, վերցուած է իր անձնական արխիւէն: Կու տանք թարգմանութեան հետ մէկտեղ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կոմիտէի, «Ապակեղրոնացում եւ Սահմանադրութիւն» եւ «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան» ներկայացուցիչները, որոնք մասնակցեցան Փարիզի Կոնգրէին, ներշնչուած եւ մղուած միշտ զօրակցութեան զգացումէ մը, ներկայ պարագաներուն մէջ օգտակար գտան որոշելու ինչ որ կը հետեւի.

1. Ստեղծել «Օթթոմանեան խառն կոմիտէ» մը, գործադիր եւ ժամանակաւոր, բաղկացած յիշեալ կոմիտէներու ներկայացուցիչներէն: Իւրաքանչիւր կոմիտէ պիտի նշանակէ երկու անդամները:
2. Առնուած եւ հրապարակուած բոլոր որոշումները պէտք է ըլլան համաձայնաբար եւ խառն կոմիտէին կողմէ եւ իր անունով:
3. Խառն կոմիտէն պիտի ըլլայ միջնորդ ընդդիմադիր խմբակներու եւ Սահմանադրական կառավարութեան միջեւ:
4. Խառն կոմիտէի ստեղծումը երկրին պիտի ծանուցուի մամուլով եւ խմբակներուն կողմէ, որպէսզի նպաստէ տարբեր տարրերու համերաշխութեան:
5. Սելանիկի մէջ կազմակերպիչ յատուկ բիւրօ մը պարտականութիւն պիտի ունենայ պատրաստելու Կոստանդնուպոլսոյ մէջ մօտերս գումարելի կոնգրէ մը, հրաւիրելով Կայսրութեան ընդդիմադիր բոլոր խմբակները, նպատակ ունենալով քաղաքական ընդհանուր ծրագրի մը պատրաստութիւնը:

16 Օգոստոս 1908

Սահմանադրութեան հռչակումէն երկու ամիս ետք, Օսմ. Թուրքիոյ մէջ պիտի կայանային առաջին երեսփոխանական ընտրութիւնները, որոնց առիթով Հ. Յ. Դաշնակցութիւնը հրապարակ եկաւ իր «պահանջներ»ով: Կուսակցութեան համար առաջին անգամ պատեհութիւն կը ստեղծուէր գործնականացման հունի մէջ մտցնելու իր մինչ այդ ծրագրային ընկերվարական գաղափարախօսութիւնը: Ստորեւ ներկայացուած փաստաթուղթը, որ խորքին մէջ ընտրական յայտագիր մըն է, կարելի մանրամասնութեամբ կու տայ այն շրջափոք որմէ ներս պէտք է կատարուէին անհրաժեշտ բարեկարգութիւնները, թէ՛ ընդհանուր Օսմ. կայսրութեան վերականգնումին եւ թէ՛ ու մասնաւորաբար հայկական նահանգներու կազդուրման համար:

Փաստաթուղթը մաս կը կազմէ Արեւմտեան Բիւրոյի թիւ 53 թղթածրարին եւ կը կրէ 179 համարը. ֆրանսերէն է եւ մեքենագիր: Հայերէն թարգմանութիւնը կամ աւելի ճիշդ՝ բնագիրը կու տանք վերցնելով «Դրօշակ»ի 1908 թուականի 9-10 միացեալ թիւէն: Երկուքը տառացի համապատասխան են իրարու, այն տարբերութեամբ որ հայերէնին ներածական-հիմնաւորումը աւելի ընդարձակ շարադրանքով է:

Քաղղատութեան համար կու տանք նաեւ «Իթքիհատ»ի մէկ ծրագրին հայերէն թարգմանութիւնը՝ առնուած «Դրօշակ»ի նոյն համարէն:

Փաստ. 53-179

FEDERATION REVOLUTIONNAIRE ARMENIENNE
DASCHNAKZOUTIOUN

Բ 5.— REVENDICATIONS

Sans abandonner les principes fondamentaux de son "programme", suivant lesquels le système fédératif conviendrait le mieux à la constitution politique de l'Empire Ottoman, et le socialisme pour ce qui concerne les questions économiques, la F.R.A. DASCHNAKZOUTIOUN, dans son désir de ne pas nuire à l'accord général et de consolider le nouveau régime en ne l'exposant pas à des secousses qu'il convient d'éviter, formule les revendications suivantes, quant au présent:

POINTS GÉNÉRAUX:

1. Tant que l'Empire Ottoman jouira d'un régime constitutionnel démocratique, il sera reconnu indépendant et indivisible;
2. L'Arménie Turque forme partie intégrante de l'Empire et administre ses affaires locales d'après le système de décentralisation dont bénéficieront toutes les autres nations vivant dans l'Empire;
3. Le Gouvernement central ottoman, constitué sur la base de la représentation polulaire, gère les intérêts généraux de l'Etat: la politique étrangère, l'armée, les finances, les douanes, les chemins de fer, les postes et télégraphes, etc., abandonnant l'administration des affaires d'intérêt local aux autorités provinciales et communales;

SUFFRAGE UNIVERSEL:

4. Le Parlement, les tribunaux et les administrations locales seront élus au moyen du suffrage universel, égal, secret et proportionnel. Ce principe est aplicable pour toutes les nationalités et les communautés religieuses sans distinction:

LES DROITS DES VILAYETS:

5. Les vilayets jouiront, dans l'administration des affaires locales, de la plus large autonomie: de même les communes pour les affaires communales:
Sont réservés aux vilayets, aux cazas, aux communes et aux administrations civiles: A) Les routes, B) L'hygiène publique, C) L'instruction publique, D) Le service des eaux, E) La gendarmerie locale, F) Le développement des connaissances industrielles, agronomiques et autres:
Une partie déterminée (20-25%) des revenus des vilayets sera employée aux besoins locaux par les autorités compétentes locales;

6. Excepté les valis, les mutessarifs, les procureurs des Cours d'appel et les présidents des tribunaux, tous les autres fonctionnaires sont nommés par leurs conseils respectifs:

7. Dans la délimitation des vilayets, on doit prendre en considération, contrairement au système adopté sous l'ancien régime, les caractères ethniques et intellectuels des habitants pour constituer autant que possible des agglomérations homogènes;

EGALITÉ DES DROITS:

8. Egalité parfaite pour toutes les nationalités et pour toutes les communautés religieuses. Suppression de tous les privilèges présentant le caractère de classes:

Les personnes appartenant aux diverses nationalités auront accès aux fonctions publiques, centrales et provinciales, proportionnellement au nombre de leurs populations respectives. Cette disposition est applicable à tous les établissements dépendant de l'Etat;

RÉVISION DE LA CONSTITUTION:

9. a) Révision de la Constitution dans un esprit de décentralisation:

b) Responsabilité ministérielle devant le corps législatif;

c) Le souverain et l'armée prêteront serment de fidélité à la Constitution et pour sa stricte observation:

d) Suppression du Sénat (Ayan):

Obs.- a) Jusque-là les membres du Sénat seront élus par les Conseils provinciaux:

b) Pour la première législature, la préparation de la liste de ces membres se fera par la Chambre des Députés.

e) Modification du système électoral actuel par l'introduction du suffrage universel:

LIBERTÉ POLITIQUE:

10. Stricte application de la liberté de conscience, de parole, de presse, de réunion, de grève. Inviolabilité des personnes, du domicile, de la correspondance. Liberté de circulation, suppression des passeports pour l'intérieur:

ENSEIGNEMENT ET LES LANGUES:

11. Instruction primaire obligatoire, gratuite et générale:

Liberté complète d'enseignement:

Egalité des droits conférés par toutes écoles d'un même ordre:

Enseignement, dans la langue maternelle, dans les écoles de chaque nationalité;

Enseignement de la langue de l'Etat à partir de la quatrième année:

L'enseignement des langues nationales locales est obligatoire dans les écoles de l'Etat à partir de la même année;

12. partage du budget affecté à l'instruction publique entre les diverses nationalités, suivant le nombre de leurs populations respectives. Ce partage sera effectué par les organes créés dans ce but:

13. La connaissance de la langue de l'Etat est obligatoire. Indépendamment de la langue officielle, tous les fonctionnaires de l'Etat sont tenus de connaître la langue parlée par la population où ils exercent leur fonction:

Obs.- Emploi des langues parlées dans chaque localité, concurremment avec la langue de l'Etat, par les tribunaux et les administrations publiques. Emploi obligatoire des langues parlées par les populations pour les publications et avis officiels:

LES TRIBUNAUX:

14. Réorganisation fondamentale des tribunaux. Justice gratuite:

SERVICE MILITAIRE:

15. Egalité du service militaire pour toutes les nationalités de l'Empire sans distinction de religion. Réduction, dans les circonstances actuelles, de la durée du service militaire à deux ans:

Obs.- Les contingents de chaque localité feront, en temps de paix leur service dans les régions avoisinantes:

Augmentation de la paye des soldats:

Suppression immédiate des troupes Hamidiés:

LES FONCTIONNAIRES:

16. Réduction du nombre des fonctionnaires de l'Etat. Réduction des traitements des hauts fonctionnaires et fixation d'un maximum pour des traitements par une loi. Augmentation des traitements des fonctionnaires de rang inférieur;

Obs.- Responsabilité de tous les fonctionnaires devant les tribunaux de droit commun;

QUESTION AGRAIRE:

17. Assurer à tout villageois une quantité déterminée de terre, prise sur les terres appartenant à l'Etat. Transférer aux communes les terres appartenant à l'Etat et à la Couronne:

18. Le droit d'exploiter le sol appartient aux travailleurs, suivant les principes du droit du travail. Chaque travailleur a droit de cultiver des terres en quantité suffisante pour pouvoir, sans exploiter autrui, assurer sa subsistance et celle de sa famille;

19. Sont administrés par les corps élus des communes: Les terres communales (forêts, pâturages) et les eaux communales (force motrice et pêche). Les revenus en sont affectés à l'instruction publique dans ces communes;

20. Sont propriétés de l'Etat: les mines et les autres richesses naturelles du sol ayant un caractère exceptionnel. Une part déterminée de leur produit sera affectée aux besoins généraux intellectuels de la population locale:

LES IMPÔTS:

21. Changement fondamental du système fiscal;

Obs.- Pour le moment, réduire la quotité de la dîme à 1/15 des produits et de l'aghnam à 1/3 du droit actuellement perçu:

Radier les arriérés dûs:

Suppression des impôts de prestation, du Hedjaz, des émigrés et autres perceptions semblables:

Suppression des timbres judiciaires apposés par les tribunaux:

En fait, supprimer sans retard des "olams", "bégars" et tous les travaux non rétribués:

22. Impôt progressif sur le revenu et sur les successions. Affranchir totalement de l'impôt tous ceux dont les revenus n'atteignent pas une somme à déterminer.

CRÉDIT:

23. Crédit fourni par l'Etat à des conditions très accessibles:

24. Assurance par l'Etat contre la sécheresse, la grêle, les sauterelles, les inondations et autres accidents.

RÉGLEMENTATION DU TRAVAIL:

25. Institution d'un ministère du Travail:

Organisation légale et protection du travail:

26. Fixation des heures de travail pour les ouvriers, soit dans les villes, soit dans les villages. Réduction de ces heures pour les travaux particulièrement insalubres ou dangereux:

27. Supprimer le travail de nuit des femmes et des enfants. Le travail des femmes sera suspendu pendant les six semaines qui suivront l'accouchement. Interdire le travail des enfants jusqu'à l'âge de 15 ans. Limiter à six heures par jour le travail des enfants de 15 à 18 ans. Supprimer le travail des ouvriers en dehors des heures réglementaires. Interdire la réduction des salaires sous forme d'amende;

28. Repos complet du dimanche ou des autres jours fixés par chaque religion pour le repos hebdomadaire:

29. Assurance des ouvriers contre les accidents, la maladie, la vieillesse et le manque de travail, aux frais de l'Etat et des patrons.

CONSEILS DES REPRESENTANTS DE LA DASCHNAKZOUTIOUN

Le 1 Septembre 1908

Ք 6.– Հ. 3. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

(Պլատֆորմ առաջիկայ ընտրություններու

եւ պարլամենտական գործունէութեան համար)

Առանց շեղելու մեր «Ծրագրի» հիմնական սկզբունքներէն, որոնց համաձայն՝ հասարակութեանց մէջ տիրող ներկայ չարիքները վերջնականապէս կ'ոչնչանան ընկերվարական կարգերու հաստատումով, երբ տնտեսական կեանքի հիմը կը կազմէ աշխատանքը եւ արդիւնաբերութեան բարիքները կը յատկացուին միմիայն անոր ստեղծագործման մէջ մասնակցողներուն:

Հիմք ընդունելով՝ որ մարդկային անհատի, ինչպէս ազգային ու կրօնական միութիւններու ազատութիւնն ու հաւասարութիւնը անկապտելի իրաւունք է եւ պէտք է ապահովուի, առանց այդ ազգութիւններու եւ համայնքներու թուին նայելու:

Համոզուած՝ որ ամէն մէկ պետութեան եւ մասնաւոր Օսմանեան Կայսրութեան նման բազմալեզու երկրի մը քաղաքական լաւագոյն կազմը ֆեդերատիւ, ապակեդրոնական ձեւն է, երբ աշխարհագրական-տնտեսական ազգագրական ուրոյն դիմագիծ ունեցող բոլոր շրջանները պիտի վայելեն ներքին վարչական-օրէնսդրական ինքնավարութիւն, որը առաւել եւս ներդաշնակօրէն կ'ուժեղացնէ ու կ'ամրապնդէ պետական ամբողջ կազմը:

Գիտակցելով նոյնպէս որ այդ նպատակներուն կարելի է հասնիլ աստիճանաբար, արմատական ռամկավար բարեփոխութիւններու միջոցով, եւ համերաշխ գործակցութեամբ հարեւան ազգերու եւ միւս կուսակցութիւններու հետ, այլեւ ցանկալով ապահովել նոր ռեժիմը՝ անբաղձալի ցնցումներէ՝

3. Դաշնակցութիւնը ներկայիս եւ Օսմանեան պարլամենտի առաջին նստաշրջաններուն համար կ'առաջարկէ ստորեւ առաջադրուած՝ անհրաժեշտ եւ իրականութենէն թելադրուած Պահանջները:

Կը յուսանք որ այս «Պահանջները» կարող պիտի ըլլան ծառայել իբրեւ համերաշխ գործակցութեան հիմք բոլոր քաղաքական կուսակցութիւններու համար – թուրք, յոյն, հայ, մակեդոն, արաբ, ալբանացի, քիւրտ, եւն – որոնք կը ձգտին, ինչպէս մենք, ամրապնդել Սահմանադրական նոր ռեժիմը եւ առաջնորդել ընդհանուր հայրենիքը դէպի Ազատութիւն, ազգերու Հաւասարութիւն եւ հանուր եղբայրութիւն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՏԵՐ

1) Օսմանեան Կայսրութիւնը, քանի կ'ունենայ սահմանադրական-ռամկավար ռեժիմ, պիտի ճանչցուի անկախ ու ամբողջական:

2) Թուրքաց Հայաստանը կը կազմէ Կայսրութեան անբաժան մասը եւ կը վարէ իր տեղական գործերը, հիմնուած ապակեդրոնացման սիստեմի վրայ, որմէ հաւասար կերպով պիտի օգտուին երկրին մէջ ապրող բոլոր ազգերը:

3) Օսմանեան Կեդրոնական կառավարութիւնը, հիմնուած ժողովրդական ներկայացուցչութեան սիստեմի վրայ, կը վարէ Պետութեան ընդհանուր գործերը, – արտաքին քաղաքականութիւն, զօրք, դրամ, մաքս, երկաթուղի, պոստ հեռագիր, եւայլն, տեղական միւս ֆունկսիոնները թողնելով շրջաններուն:

4) Պարլամենտական, դատաստանական եւ տեղային վարչական բոլոր մարմինները պիտի ընտրուին ընդհանուր, հաւասար, գաղտնի եւ համեմատական ձայնատուութեան սկզբունքով: Այս սկզբունքը կը գործադրուի բոլոր ազգերու եւ կրօններու համար հաւասարապէս:

ՎԻՍՅՆՆՆԵՐՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ

5) Վիլայեթները կը վայելեն՝ տեղական գործերը վարելու մէջ լայն ինքնավարութիւն: Նոյնը համայնքները համայնական գործերու մէջ:

Վիլայեթներուն, գազաներուն, համայնքներուն եւ քաղաքային վարչութիւններուն կը վերապահուին ա) ճանապարհները, բ) ժողովրդական առողջապահութիւնը, գ) կրթական գործը, դ) ջրաբաշխութիւնը, ե) տեղական ոստիկանութիւնը, զ) տեխնիկական, գիւղատնտեսական եւ այլ գիտելիքներու տարածումը, եւայլն:

Վիլայեթներու եկամուտին մէկ որոշ մասը (20-25%) կը ծախսուի տեղական պէտքերու համար, իրաւասու մարմիններու միջոցով:

6) Բացի վաւիներէ, միւսասարքներէ, իսթինաֆի միւստայի ունումիներէ եւ ռեյիսներէ, տեղական մնացած բո-

լոր պաշտօնեաները կ'ընտրուին համապատասխան խորհուրդներու կողմէն:

7) Վիլայեթներու սահմանները որոշելու ատեն, հակառակ հին ռեժիմի գործ դրած սկզբունքին, պէտք է նկատի առնել ազգաբնակութեան տեղագրական ու կուլտուրական առանձնայատկութիւնները, ըստ կարելոյն միաձոյլ համախմբումներ կազմելու համար:

ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ

8) Կատարեալ հաւասարութիւն բոլոր ազգերու եւ կրօնական համայնքներու: Ոչնչացումն դասակարգային կերպարանք ունեցող բոլոր առանձնաշնորհումներու:

Այլեւայլ ազգութիւններու ներկայացուցիչներու մասնակցութիւնը պետական պաշտօններու մէջ, կեդրոնական թէ տեղական, պիտի գործադրուի համեմատական չափով: Նոյնը կառավարութեան հովանւոյն տակ գտնուող հիմնարկութիւններուն մէջ:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

- 9) ա) Սահմանադրութեան վերաքննութիւնը՝ ապակեդրոնացման մտքով:
- բ) Միմիստութեան պատասխանատուութիւն պարլամենտի առջեւ:
- գ) Գահակալը կ'երդուի, զօրքի հետ միասին, հաւատարմութիւն եւ անխախտ պահպանումն Սահմանադրութեան:

- դ) Վերացումն վերին ժողովի (Այանի):
Ծանօթ. ա) Մինչեւ այդ՝ Այանի անդամները պիտի ընտրուին շրջանային խորհուրդներու կողմէ:
- բ) Առաջին նստաշրջանի համար՝ Այանի անդամներու ցանկի պատրաստութիւնը կը յանձնուի պարլամենտին:

ե) Փոփոխումն այժմեան ընտրողական սիստեմի մտցնելով ընդհանուր ձայնատուութիւն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

10) Անխախտ պահպանումն խօսքի, մանուկի, խղճի, ժողովներու եւ գործադուլներու ազատութեան: – Անձեռնմխելիութիւն անձի, բնակարանի, նամակագրութեան: Ազատութիւն տեղափոխութեան: Վերացումն ներքին անցագրերու:

ԴՊՐՈՑՆԵՐ ԵՒ ԼԵՁՈՒ

11) Ընդհանուր, պարտադիր եւ ծրի սկզբնական ուսում: Կրթական-կուլտուրական գործի կատարեալ ազատութիւն: Բոլոր տեսակի դպրոցներու իրաւասութեան հաւասարութիւն: Դասատուութիւն մայրենի լեզուով ազգային դպրոցներու մէջ: Պետական լեզուի ուսուցումն այդ դպրոցի մէջ չորրորդ տարուանէ: Թուրքական դպրոցներու մէջ տեղական լեզուներու դասատուութիւնը պարտաւորական է, նոյն տարուանէ:

12) Կուլտուրային-դպրոցական նպատակներու յատկացած բիւտձէն բաժնել առանձինն ազգութիւններու միջեւ, համաձայն ազգաբնակութեան թուի: Գործադրութիւնը պիտի թողուի յատկապէս այդ նպատակի համար ընտրուած մարմիններուն:

13) Պետական լեզուն պարտաւորական է: Բոլոր պաշտօնեաներու համար պարտաւորական է, բացի պետական լեզուէ, իմանալ նաեւ տեղական ազգաբնակութեան լեզուն:

Ծանօթ. Պետական լեզուի հետ միասին տեղական լեզուի գործածութիւնը դատարաններու, վարչական հիմնարկութիւններու մէջ: Պաշտօնական յայտարարութիւններու եւ ազդերու համար եւս տեղական լեզուները պարտաւորեցուցիչ են:

ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

14) Դատարաններու հիմնական վերակազմութիւն: Չրի դատավարութիւն:

ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

15) Հաւասարութիւն զինուորագրութեան Պետութեան բոլոր ազգութիւններու համար, առանց կրօնի խտրութեան: Ձիմուորական ծառայութեան տեւողութիւնը, ներկայ պայմաններու մէջ, իջեցնել երկու տարուան:

Ծանօթ. Տեղական զօրախմբերը պիտի ծառայեն, խաղաղ ժամանակ, իրենց մերձաւոր վայրերուն մէջ: Աւելացումն զինուորներու ռոճիկներու: Անմիջական վերացումն Համիտիյէ զնդերու:

ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐ

16) Պետական պաշտոնեաներու թուի նուագեցումն: Պակասեցումն բարձր պաշտոնեաներու ռոճիկներուն եւ օրէնսդրական սահմանափակումն maximumի: Մանր պաշտոնեաներու ռոճիկներու յաւելումն:

Ծանօթ. Բոլոր պաշտոնեաներու պատասխանատուութիւն ընդհանուր դատարանի առջեւ:

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑ

17) Ապահովել, պետութեան հաշուով, հողի որոշ տարածութիւն ամէն մէկ գիւղացուն: Պետական եւ արքունական հողերը դարձնել համայնքներու սեփականութիւն:

18) Հողերէն օգտուելու իրաւունքը կը պատկանի աշխատաւորներուն, աշխատաւորական սկզբունքներով: Իւրաքանչիւր աշխատաւոր իրաւունք ունի այնչափով հող մշակելու, որ կարողանայ, առանց ուրիշի աշխատանքը շահագործելու, բաւարարութիւն տալ իր եւ իր ընտանիքի սպառողական պահանջներուն:

19) Համայնքէ ընտրուած մարմիններու կարգադրութեանը կը յանձնուին համայնական ընդհանուր նշանակութիւն ունեցող գետիներն (անտառներ, արօտներ) ու ջրերը (շարժոյժ, ձկնորսութիւն) եւ ատոնցմէ ստացուող եկամուտները կը գործադրուին համայնքի կուլտուրական ձեռնարկներու համար:

20) Համքերը, ինչպէս եւ արտաքոյ կարգի արժէք ունեցող բնական այլ հարստութիւնները կը համարուին պետական սեփականութիւն, եւ անոնց եկամուտներու որոշ մասը կը գործադրուի տեղական համաժողովրդական-կուլտուրական նպատակներու համար:

ՏՈՒՐՔԵՐ

21) Հարկային սիստեմի հիմնական փոփոխութիւն:

Ծանօթ. Ներկայ պայմաններու մէջ, անմիջապէս պակսեցնել աշարը, սահմանափակելով բերքի 1/15ով, աղմանը 1/3ով:

Յետամնաց տուրքերը չպիտի գանձուին:
Վերացումն ճանապարհային, Հիծագի, գաղթականային եւ այլ մանր տուրքերու:
Վերացումն դատաստանական փուլերու եւն.:
Անմիջական վերացումն օլամի, բեգարի եւ այլ չվարձատրուող աշխատանքներու:

22) Պրոգրեսիւ տուրք եկամուտի եւ ժառանգութեան:

Հարկէ բոլորովին ազատել որոշ չափէ պակաս եկամուտ ունեցողները:

ԿՐԵՂԻՏ

23) Պետական ամենամատչելի կրեղիտ:

24) Պետական ապահովագրութիւն երաշտի, կարկուտի, մորեխի, հեղեղի եւ այլ պատահարներու դէմ:

ԱՇԽԱՏԱՆԵՐ ԿԱՆՈՆԱԲՈՐՈՒՄ

25) Հաստատումն աշխատանքի միմիստրութեան:

Աշխատանքի օրէնսդրական կարգաւորումն եւ հովանաւորութիւն:

ա) Աշխատանքի ժամերու որոշումն բանուորներու համար, թէ քաղաքներու եւ թէ գիւղերու մէջ: Առողջապահական տեսակետէ առանձնապէս վտանգաւոր եւ վնասակար գործերու համար՝ աւելի պակաս:

բ) Վերացնել կանանց եւ երեխաներու գիշերային աշխատանքը: Կանայք ազատ պիտի ըլլան աշխատանքէ՝ ծննդաբերութենէ վեց շաբաթ առաջ եւ յետոյ: Արգիլել երեխաներու աշխատանքը մինչեւ 15 տարեկան հասակը, իսկ 15է մինչեւ 18 տարեկան հասակը՝ սահմանափակել օրական 6 ժամով: Վերացնել պայմանաժամէ դուրս աշխատանքը: Արգիլել տուգանքի ձեւի տակ օրավարձի նուագեցումը:

գ) Կիրակնօրեայ լիակատար հանգստութիւն ամէն մէկ կրօնի պատկանողներուն, իրենց կրօնի յատուկ շաբաթական կիրակէ օրերը:

26) Բանուորներու ապահովագրումն՝ դժբախտ պատահարներու, հիւանդութեան, ծերութեան եւ անաշխատութեան դէմ: Պետութեան եւ գործատէրերու հաշուով:

27) Հասարակական աշխատանքներու կազմակերպումն: Կառուցում երկաթուղային գծերու եւ այլ ճանապարհներու այն վայրերուն մէջ՝ ուր չկան, ինչպէս օրինակ՝ հայկական գաւառները:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴ

1 Սեպտեմբեր 1908
Կ. Պոլիս

Բ 7.- ԾՐԱԳԻՐ

ՕՍՄ. ՄԻՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

Գործադրելի պիտի մնան 1203-ի Գանուները հասարին եւ զայն հաստատող 4 ռէճէպ 1328-ի խաթիւր Հիւմայունի պաշտպանած իրաւունքները, եւ նոյն օրէնքին հակառակ շեղող մասերը, եթէ Երեսփոխանական Ժողովը տարբեր որոշում մը չտայ:

1) Գանուները հասարին մէջ սկզբունք պիտի դրուի թէ ազգին ձայնը պիտի ըլլայ գերակշիռ եւ հետեւաբար անպատճառ պիտի հաստատուի նախարարական պատասխանատուութիւն՝ հանդէպ Երեսփ. Ժողովոյ եւ հրաժարեալ պիտի համարուին Երեսփ. Ժողովին մէջ մեծամասնութիւն չհաճող նախարարները:

2) Երակոյտը պիտի բաղկանայ առ առաւելն երեսփոխանաց թուին մէկ երրորդին չափ անձերէ, պիտի փոխուի Երակոյտին կազմութեան համար Գանուները հասարին 82-րդ յօդուածը եւ սկզբունք պիտի դրուի, որ ծերակուտականներուն մէկ երրորդը ընտրէ կայսրը, եւ երկու երրորդը ազգը, եւ ծերակուտականներուն պաշտօնն ըլլայ առժամեայ:

3) Պիտի պահանջուի, որ Օսմանեան հպատակ եւ քսան տարեկանը լրացուցած ամէն արու առաջին աստիճանի ընտրող ըլլայ, կալուած ունենայ թէ ոչ. բնականաբար այս իրաւունքը չպիտի վայելեն իրենց քաղաքային իրաւունքները կորսնցուցած անձինք:

4) 1203-ի Գանուները հասարին Ա. յօդուածն յարգելով հանդերձ պիտի պահանջուի տրամադրութիւն մը աւելցնել Գանուները հասարին մէջ, որով ազատ պիտի հռչակուին քաղաքական համախմբումները (Ճեմիյաթը Սիասիյէ):

5) Կուսակալութեանց վարչութեան ներկայ կապը առանց խզելու եւ վնասելու, ըստ Գանուները հասարին 108-րդ յօդուածին, պիտի պահանջուի օրէնք հաստատել վարչային ինքնօրինութեան համար:

6) Երեսփոխանական Ժողովին անկ է կուսակալութեանց քաղաքային արդի բաժանումները փոխել կամ բարեփոխել: Միայն թէ գիւղաքաղաքներու մօտաւորութիւնը կամ տեղւոյ յարմարութիւնն ի նկատի առնուելով, գործերու դիւրութեան համար բարեփոխումներ ի գործ պիտի դրուին շուտով:

7) Տէրութեան պաշտօնական լեզուն թուրքերէն պիտի մնայ, եւ ամէն պաշտօնական թղթակցութիւններ ու խորհրդակցութիւններ թուրքերէն պիտի կատարուին:

8) Առ նուազն 10 երեսփոխական երբ օրինագիծ մը ներկայացնեն, պէտք է անպայման նկատի առնուի:

9) Առանց ցեղի եւ կրօնի խտրութեան, ամէն ոք հաւասար է եւ ազատ, ու նոյն պարտաւորութիւններն ունի: Բոլոր Օսմանցիք հաւասար են Օրէնքին առջեւ եւ իրաւունքի ու պարտականութեան տեսակէտով ամէն օսմանցի պաշտօնի պիտի կոչուի ըստ կարողութեան եւ արժանեաց: Ոչ իսլամներն ալ զինուորագրութեան օրէնքին հպատակ պիտի ըլլան:

10) Կրօնն ազատ է, եւ զանազան հասարակութեանց տրուած կրօնական առանձնաշնորհումները կատարելապէս պիտի պահուին:

11) Պիտի առաջարկուի, որ Տէրութիւնը պէտք եղածին չափ ցամաքային եւ ծովային ոյժ ունենայ, եւրոպական տէրութեանց միջեւ իր քաղաքական ու աշխարհագրական դիրքը պահելու համար: Զինուորական ծառայութեան պայմանաժամը զեղչել պիտի առաջարկուի, առանց վնասելու բանակին աղէկ մարզուելու սկզբունքին:

12) Գանուները հասարին 113-րդ յօդուածին վերջին մասը, որ կը հակասէ անձնական ազատութեան սկզբունքին պիտի ջնջուի:

13) Պիտի առաջարկուի օրէնքներ հաստատել գործաւորներու եւ գործատէրերու իրաւունքներն ու պարտականութիւնները ճշդող:

14) Առանց վնասելու հողատէրերու օրինական իրաւունքներուն, պիտի առաջարկուի միջոցներ ձեռք առնել, որ գիւղացիք հողի տէր ըլլան եւ դիւրութիւններ տրուին, որպէսզի անոնք կարենան աժան տոկոսով դրամ գտնել:

15) Տասանորդի համար առ այժմ պիտի գործադրուի թախմիսի դրութիւնը, իսկ ապա պիտի առաջարկուի քատասողոյի դրութիւնը գործադրել տակաւ առ տակաւ:

16) Ուսուցումն ազատ է, ինչպէս կը տրամադրէ Գանունը խնամքին եւ ամէն օսմանցի կրնայ դպրոց բանալ ըստ օրինի:

17) Բոլոր դպրոցները տէրութեան հսկողութեան ներքեւ պիտի գտնուին:

Օսմանեան հպատակներուն միօրինակ կրթութիւն մը տալու համար պէտք է ընդհանուր եւ ազատ ուսում, ու ամէն ցեղ պիտի ունենայ իր պաշտօնական վարժարանները: Նախակրթութեան մէջ պարտաւորիչ պիտի ըլլայ թուրքերէնը: Պաշտօնական վարժարաններուն նախակրթութիւնը ձրի է:

Երկրորդական եւ բարձրագոյն կրթութիւն պիտի տրուի ընդհանուր եւ պաշտօնական վարժարաններուն միջոցաւ եւ հիմը պիտի ըլլայ թուրքերէնը:

Ուսուցիչ եւ ուսուցչուհի հասցնելու համար վարժարաններ պիտի հաստատուին. նոյնպէս առեւտրական, երկրագործակ. եւ ճարտարական վարժարաններ պիտի բացուին:

Ասոնցմէ դուրս են զուտ հոգեւորական վարժարանները:

18) Երկրին տնտեսական յառաջադիմութեան համար, ինչպէս նաեւ հողագործութեան բարգաւաճման համար ամէն միջոց ձեռք պիտի առնուի:

19) Պիտի առաջարկուի փոխել երեսփոխանական ընտրութեան կանոնագիրը, ըստ ներկայ ծրագրին, եւ այնպիսի կերպով մը, որ ապագային կառավարութիւնը չկարենայ միջամտութիւն ի գործ դնել ընտրութեանց կատարեալ ազատութիւնը խաթարող կերպով մը:

20) Պիտի առաջարկուի, որ պահանջուած յատկութիւններն ունեցող ամէն օսմանցի՝ Օսմանեան երկիրներուն մէջ ունէ տեղ երեսփոխանական ընտրելի կարենայ ներկայացնել ինքզինք, եւ կարենայ ունէ տեղի երեսփոխան ընտրուիլ:

21) Ներկայ ծրագրին յօդուածները կրնան փոփոխուիլ ըստ ժամանակին պահանջմանց, ընդհանուր ժողովներու կողմէ տրուած որոշումներու համեմատ այլ եւ այլ յօդուածներ պիտի կրնան ջնջուիլ կամ՝ ուրիշ յօդուածներ պիտի կրնան աւելցուիլ:

Փաստ. 2041ա-4

Բ 8.- ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՎԵՐ. ՀՆԶ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւնը սրտազին կ'ողջունէ Օսմանեան սահմանադրութեան վերահաստատումը, որուն պահպանումն ու կատարելագործումը ամէնէն թանկագին գրաւականը կը նկատէ թուրքիոյ խաղաղ վերանորոգման, անոր քաղաքական եւ ընկերական իրական հզօրացման եւ անոր այլացեղ ժողովուրդներուն բաղձալի բարգաւաճման:

Վեր. Հնչ. կուսակցութիւնը այս առթիւ իր խնդակցութիւնը կը յայտնէ Երիտասարդ թուրքերուն, որոնք երէկ հրէշաւոր բռնակալութեան մը դէմ արիաբար մաքաւեցան, ու այսօր Ազատութեան անյողդողդ ախոյեանը մնալ կը շարունակեն անխտրական գնահատելի ոգւով:

Ներկայ ազատական ռեժիմը յաղթանակն է յեղափոխութեան, յաղթանակը այն հսկայ զոհաբերութիւններուն, որոնց մէջ հայ մարտական կազմակերպութիւններն իրենց անհաշիւ բաժինն ունեցան:

Այդ յաղթանակը ամէնէն պանծալի փառքը պիտի կազմէ Օսմանեան պատմութեան:

Վեր. Հնչ. կուսակցութիւնը, որ յեղափոխութեան տաժանքոտ կեանքն ապրեցաւ, որ Զարիքի մռայլ ուժերուն դէմ դաժան, աններող ու հայրենանուէր մաքառում մը շարունակեց, հիմա անխուսափելի պարտականութիւն մը կը նկատէ յառաջակողմը գտնուիլ այն համերաշխ ու հաւաքական շարժումին, որուն պիտի նըւիրուին բոլոր ընդդիմագի տարրերը, որոնք փոթորկոտ օրերուն մէջ Արդարութեան աննկուն նախակարապետները եղան եւ բարեշրջման այս շրջանին խաղաղութեան եւ փրկութեան աներկիւղ եւ հաւատարիմ դրօշակիրները պիտի ըլլան անտարակոյս:

Ուստի պաշտօնապէս կը յայտարարենք թէ՛

Ա.— Վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւնը կը դադրեցնէ իր գինեալ ապստամբութեան ծրագիրը:

Բ.— Անիկա, որ հայկական համատարած տառապանքներու բուժումին նուիրեց իր անվեհեր եւ աննուաճելի ճիգը, հիմա խաղաղութեան պահպանումին եւ ազատութեան ընդհանրացումին ուխտուած կը մնայ

հայրենասիրական օրինաւոր միջոցներով:

Գ.— Վեր. Հնչ. կուսակցութիւնը Օսմանեան կայսրութեան ամբողջական պահպանումին կողմնակից, ունէ՛ անջատողական ձգտում եւ նպատակ չունի: Եւ ատելութեան, հակառակութեան վրէժխնդրութեան ունէ՛ խրամատ չ'ընդունիր թուրքերուն, հայերուն եւ օսմանեան միւս բոլոր ցեղերուն ընդմէջ: Այսպէս թրքահայ ժողովուրդը օթոման միութեան անբաժան տարրը նկատելով հանդերձ պիտի ուզէ ան, որպէսզի այլեւայլ հոսանքներու մէջ չլուծուի հայ ցեղը, որպէսզի ապրի հայրենիքը, որպէսզի կարող ըլլայ ան իր պատմական դերը կատարել թուրքիոյ ընդհանուր քաղաքակրթութեան աւագ եւ կենսական գործին մէջ, որպէսզի յարգուին եւ պահպանուին անոր կրօնական եւ կրթական առանձնաշնորհումները, եւն:

Դ.— Վեր. Հնչ. կուսակցութիւնը բուռն եւ անհաշտօրէն պայքարող ուժ մը պիտի ըլլայ ընդդէմ ներքին ու արտաքին բոլոր ոտնձգութեանց, որոնք պիտի վրդովեն ընդհանուր խաղաղութիւնը, պիտի ջնջեն ազատական ռեժիմը եւ պիտի ձգտին վերահաստատել նախկին տարբադադրիչ եւ անհանդուրժելի բռնակալութիւնը:

Ե.— Վեր. Հնչ. կուսակցութիւնը ի մօտոյ, եւ իր առանձին ծրագրով, ընդհանուրին պիտի պարզէ քաղաքական ազատութեան, վարչական դրութեան, ժողովրդական ներկայացուցչութեան, զինուորագրութեան եւ այլ ընկերական ու տնտեսական խնդիրներու մասին իր մասնաւոր հայեացքներն ու պահանջները:

ՎԵՐ. ՀՆԶ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Կ. ՊՈԼՍՈՅ ՎԱՐՋՈՒԹԻՒՆ

Ծանօթութիւն.— Վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան Պոլսոյ վարչութեան վերաբերեալ ամէն գրութիւն պէտք է ուղղել առ.—

ԵՐՈՒԱՆԴ ԶԱՒՈՒՇԵԱՆ
Ռուսելի-Հիսար

Կ. Պոլիս, 12 Սեպտեմբեր 1908

Փաստ. 191-73

Բ 9.- Հ.Յ.Գ. ՀԵՌԱԳԻՐ

Իբրևիստ կուսակցութեան Սելանիկի կեդրոնին ուղղուած հեռագրի մը պատճէն-սեւագրութիւնն է, ջնջում-սրբագրութիւններով եւ լուսանցքային յաւելումներով: Ակնուցիի ձեռագիր է, ընդհանրապէս դժուար ընթեռնելի: Գրութեան իմաստը, սակայն, շատ պարզ է եւ ցոյց կու տայ այն խոր տարակարծութիւնները, որ երեւան կու գային երկու կուսակցութեանց միջեւ սահմանադրական շրջանի առաջին ամիսներէն իսկ, իբր հետեւեալն իբրևիստի վարած կողմնակալ ու երկդիմի քաղաքականութեան:

Պատճէն 20 Հոկտ. 1908 "Union et Progrès"-ի կենտրոնական կոմիտէին Սալոնիկ

Յոյս ունենք, որ Պարիզից եկած ձեր պաշտօնակիցները հաղորդեցին ձեզ մի քանի մանրամասներ մեր յարաբերութեան եւ ընթացիկ վիճակին վերաբերող: Անհրաժեշտ ենք համարում, դրողուած նորագոյն փաստերից, շեշտել եւ հետեւեալը: Անատոլիոյ ներքին գաւառներում ձեր ու մեր կոմիտէներին անորոշ եւ սառն յարաբերութիւնները՝ ցանկալի ապագայ չեն խոստանում: Այդ անորոշ վիճակը փոխանակ նպաստելու համերաշխութեան, որ մեր բոլորին տենչանքն է, ստեղծում է սրուած դրութիւն. ընտրական գործն էլ, դրուած սխալ հիմքերի վրայ, աւելի է նպաստում այս լարուած վիճակին, ինչպէս օրինակ Նարբերդ, ուր ոչ մի հայ պատգամաւոր չէ ընտրուել, ուր բոլոր պատուիրակներն էլ թուրքեր են, Իզմիր, Մալաթիա, Ատանա, նոյնիսկ Վան, ուր ընտրական անհամերաշխութիւնը առաջ է բերում բնականաբար պառակտումն հարեւան տարրերի մէջ: Այս բոլորի մէջ որոշ մաս ունի մեր անհամաձայնութիւնը: Մենք խնդրեցինք ձեր Պոլսի ներկայացուցչութեան՝ համագործակցութեան հրահանգ ուղարկել գաւառները՝ այդ մտքով: Առաջարկեցինք, ինչպէս գիտէք, կազմել մի խառն կոմիտէ, գործերը համաձայնութեամբ եւ լրջօրէն վարելու: Առաջարկեցինք Ընդհանուր Կոնգրէս, բոլոր տարրերը միացնելու: Առաջարկե-

ցինք խառն կոմիտէ ուղարկել գաւառները համերաշխութեան պրոպագանդ մղելու: Խնդրեցինք, կառավարութեան հետ ունեցած ձեր կապերի միջոցով հեռացնել հակամարտութիւնը, ժողովուրդին ճշդ պաշտօնեաները: Այդ բոլոր առաջարկները, ռացիոնալ եւ նպատակաշարմար, մնացին չիրագործուած, եւ ցաւ է ասել՝ վնասեցին մեր յարաբերութիւնների սերտացման: Կրկնակի ցաւալին այն է, որ փոխանակ մերձեցման փորձեր անելու, ձեր մի քանի մարմինները Դաշնակցութեան չէզոքացնելու անօգուտ փորձեր են անում: Վերջին հանգամանքը սպառնում է ստեղծել մի աւելի լարուած վիճակ, որի առաջը առնելու փափաքով է, որ ուղղում ենք ձեզ այս հեռագիրը, ընկերաբար ու անպայման անկեղծութեամբ ձեր ուշքը հրաւիրելով այս կացութեան վրայ: Սահմանադրութեան դէմ, ինչպէս գիտէք, դաւեր կան: Երկրի մէջ երկու ամիս առաջ նկատուած համերաշխութեան եւ եղբայրութեան փոխարէն՝ այսօր լսում են թշնամութեան եւ կասկածի, սպառալիքի խօսքեր: Զինումը այսօր դարձել է համատարած: Կասկածը եւ երկիւղը գլուխ է բարձրացնում, — մի բան որ դուք մեզանից աւելի լաւ գիտէք, եւ խորապէս ցաւում ենք, որ այդ կացութեան դիմաց՝ մենք հնար չունենք գործելու եւ աշխատելու ձեռք ձեռքի տուած, ընկերօրէն եւ համերաշխաբար: Այդ անհնարաւորութիւնն է, որ ստիպում է մեզ, առաջին անգամ լինելով, ձեզ ուղղել այս հեռագիրը, վստահ որ դուք էլ, ինչպէս եւ մենք, ուրիշ նպատակ չունենք, բայց եթէ փրկել Սահմանադրութիւնը եւ բարձր պահել համերաշխութեան սկզբունքը: Հ.Յ.Գ

Փաստ. 1715ա-2

Բ 10.- ՄԱԿԵԳՈՆԱՑԻՆԵՐԷՆ ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿ ՊՈԼՍՈՅ ՊԱՏ. ՄԱՐՄԵՒՆ

ЗАГРАНИЧНО ПРЕДСТАВИТЕЛЬСТВО
ВЪТРЕШНАТА МАК.-ОДР. РЕВОЛЮЦИОННА ОРГАНИЗАЦИЯ
A l'Organisation Révolutionnaire Arménienne
"Daschnaktzoutioun"
София, Le 16/XI 1908 г. à Constantinople

Notre envoyé spécial Mr. Grigor Vassillef nous a donné un rapport détaillé sur les entrevues qu'il a eu avec Vous et la matière traitée d'un côté et l'autre.

Nous saisissons le cas de vous informer que nous sommes bien disposés d'entrer avec Vous dans des relations plus étroites à l'avenir et dans une entente plus amicale et plus vaste que jusqu'ici sur toutes les questions concernant les intérêts des deux organisations. La perspective d'un travail de commun accord entre nous parait-il inévitable et s'impose impérativement l'idée pour une conférence des organisations révolutionnaires y compris celle des jeunes-turcs est depuis longtemps considérée de notre part comme présente.

Etant en train d'être réalisée cette idée nous sommes remplis d'espoir le plus lumineux et nous saluons l'initiative prise par Vous. Cependant, croyant que Vous avez déjà eu l'occasion de délibérer sur le parti pratique de cette conférence, nous nous permettons de vous prier de bien vouloir nous éclaircir les points ci-dessous:

- 1) Quelles questions formeront la base de la conférence
 - 2) Quel sera le nombre des délégués de chaque organisation et
 - 3) Quelle est la date exacte de l'ouverture de la conférence.
- Nous prenons la liberté d'y ajouter en outre qu'il serait convenable si l'alliance des clubs constitutionnels bulgares en Turquie y serait invitée étant donné qu'elle est déjà un facteur important pour la vie du pays. Agréez nos salutations fraternelles. Les délégués de l'Organisation Intérieure Macédo-Andropolitaine en étranger.

MARTROFF, S. KHRISTO, TATARTCHEF

Սոֆիա 16/29-11-1908

Յայ Յեղափոխական Դաշնակցութիւն Կազմակերպութեան, Կոստանդնուպոլիս

Մեր յատուկ պատուիրակ՝ պր. Գրիգոր Վասիլէֆ մանրամասն զեկոյց մը տուաւ Ձեզի հետ ունեցած տեսակցութեանց եւ երկուստեք քննարկուած հարցերու մասին:

Կ'օգտուինք այս առիթէն ձեզի տեղեկացնելու, որ տրամադիր ենք այսուհետեւ բարեկամական աւելի լայն յարաբերութիւններ մշակել Ձեզի հետ այն բոլոր հարցերուն շուրջ, որոնք կը վերաբերին երկու կազմակերպութեանց շահերուն: Համերաշխ աշխատանքի մը հեռանկարը մեր միջեւ կը թուի անխուսափելի ու պարտադիր ըլլալ, եւ յեղափոխական կազմակերպութեանց հետ, նեռարեալ երիտասարդ թուրքերուն, համագումարի մը գաղափարը վաղուց մեր կողմէ ստիպողական նկատուած է: Այժմ որ իրագործուելու վրայ է այդ միտքը, լիայոյս ենք ջերմագին եւ կ'ողջունենք Ձեր նախաձեռնութիւնը: Այսուհանդերձ, հաւատալով որ դուք առիթը ունեցած էք արդէն քննելու այդ համագումարին գործնական երեսը, թոյլ կու տանք մեզի խնդրելու, Ձեզմէ, որ հաճէիք լուսաբանել մեզ հետեւեալ կետերուն շուրջ. —

- 1.- Ի՞նչ հարցեր հիմք պիտի ծառայեն այդ համագումարին:
 - 2.- Ի՞նչ պիտի ըլլայ թիւը իւրաքանչիւր կազմակերպութեան պատուիրակներուն, եւ
 - 3.- Ճշգրիտ թուականը համագումարի բացման:
- Միւս կողմէ, կը համարձակինք աւելցնել, որ յարմար պիտի ըլլար հրաւիրել նաեւ Թուրքիոյ մէջ [գործող] պուլկար սահմանադրական ակումբներու դաշնակցութիւնը, նկատի ունենալով որ անոնք արդէն կարելոր ազդակ մըն են երկրին մէջ:
- Ընդունեցէք մեր եղբայրական ողջոյնները: Արտասահմանի մէջ Սակեդոն-Անդրոպոլեան ներքին կազմակերպութեան պատուիրակներ:

ՄԱՐՏՈՒՅ, Ս. ԽՐԻՍՏՕ, ԹԱԹԱՐՉԵՒ

Փաստ. 1715ս-3

Organ. Revul. Du Vilayet d'Andrinople
Comité Central

Andrinople 16-XII-1908

A la Fédération Révolutionnaire Arménienne
"Daschnakzoutioun"

Chers camarades,

Nous avons l'honneur de vous accuser la réception de votre lettre du 1/14 - XII.

Comme nous vous avons informé, nous avons fait la proposition à toutes les branches de l'Organisation Macédonienne, qui sont toutes favorables à votre idée. Même la fraction des Centralistes s'est montrée empressé et aujourd'hui même nous avons reçu de son part l'information qu'un délégué de leur part M. Alexandroff, est déjà parti pour Constantinople avec l'intention d'entrer en pourparlers avec vous sur la question de la conférence. De notre part nous vous recommandons M. Thodor Pavloff, député à la Chambre. Avec ces deux personnes, vous pouvez établir tous les travaux préliminaires concernant l'ordre du jour et les idées générales de la Conférence, aussi bien que sur la date et le lieu, où elle doit être tenue.

Recevez, chers camarades, nos salutations fraternelles.



P. le Président Dr. S. DOTSCHNOW
P. le Secrétaire CH. CHAPCAREFF

Անտրինոպլ, 16-XII-1908

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան,

Պատիւ ունինք յայտնելու որ ստացած ենք ձեր 1/14 Դեկտեմբերի նամակը:

Ինչպէս տեղեկացուցած ենք, առաջարկը ներկայացուցինք Մակեդոնական Կազմակերպութեան բոլոր մասնաճիւղերուն, որոնք ամէնքը համաձայն են ձեր գաղափարին: Նոյնիսկ Կեդրոնականներու հատուածը պատրաստակամութիւն ցոյց տուաւ եւ այսօր իսկ իրենցմէ տեղեկութիւն ստացանք, որ իրենց մէկ պատուիրակը՝ Պ. Ալեքսանդրով, մեկնած է արդէն Կոստանդնուպոլիս Համագումարի մասին ձեզի հետ բանակցելու նպատակով: Մեր կողմէ կը յանձնարարենք պ. Թորոք Պալուֆը, Խորհրդարանի անդամ: Այս երկու անձերուն հետ կրնաք կարգաւորել Համագումարի օրակարգին եւ ընդհանուր գաղափարներուն շուրջ նախապատրաստական բոլոր աշխատանքները, ինչպէս եւ թուականն ու վայրը, ուր տեղի պիտի ունենայ:

Ընդունեցէք, սիրելի ընկերներ, մեր եղբայրական ողջոյնները:

Վասն Նախագահի՝ Տոքթ. Ս. ԴՈՉՆՈՎ
Վասն Ատենադպիրի՝ Շ. ՇԱՊԿԱՐԵՒ

Գ.- ԱՊՏԻՒԼ ՀԱՄԻՏԻ ԳԱՀՐԵԿԷՑՈՒԹԵՆԷՆ ԵՏՔ

Օսմ. կայսրութեան մէջ շուրջ ինն ամիսներէ ի վեր հաստատուած սահմանադրական կարգերը հաճելի չէին անշուշտ Սուլթան Ապտիլ Համիտ Բ.ի համար: Արիւնարբու բռնակալը, մեկուսացուած եւ չէզոքացուած իր պալատին մէջ, ակամայից համակերպում ցոյց տալով հանդերձ իշխանութիւնը հետզհետէ կուսակցական մենաշնորհի վերածած Իթթիհատի, անաղմուկ առաջ կը տանէր դաւադրական իր գործը՝ գաղտագողի հրահրելով ու գործի լծելով թուրք մուլեանդ կրօնաւորները եւ հին վարչակարգի յետադէմ այն բոլոր տարրերը, որոնք մեծ թուով ծուարած կը մնային իշխանութեան տարբեր ոլորտներուն մէջ:

Համիտեան յեղաշրջման փորձը կատարուեցաւ 1909 թ. Մարտ 31ին նպատակ ունենալով շերիաթական կարգերու վերահաստատումը: Ան երկար շունչ չունեցաւ. Մակեդոնիոյ թրքական ազատարար բանակը կրկին շարժելով՝ անարգել մտաւ Պոլիս եւ գահընկէց ըրաւ Համիտը: Սակայն, այդ քանի մը օրերու խառնաշփոթ կացութիւնը առիթ եղաւ գրգռուած թուրք խուժանին եւ պաշտօնական զօրքին համար սարքելու Կիլիկիոյ եղեռնագործութիւնը:

1.- Փաստ. 1719գ-4ը կը ներկայացնէ Սահմանադրութեան զօրավիգ կանգնող կազմակերպութեանց առաջին միացեալ յայտարարութիւնը, որ ֆրանսերէն է եւ հրատարակուած է «Levant Herald» թերթի 17 Ապրիլի Յաւելուածին մէջ:

Փաստ. 1719գ-2ը, առաջինին հակիրճ թարգմանութիւնն է Է. Ակնունիի կողմէ խմբագրուած: Յաջորդը՝ մէկ տարբերակն է վերջինիս, արեւմտահայերէն խմբագրութեամբ:

2.- 1719գ-5 թուակարգը կրող փաստաթուղթը թուրք ազատարար բանակի հրամանատար Մահմուտ Շէվքէֆ փաշայի գնահատագիրն է, Սահմանադրութեան պաշտպանութեան համար հայերու ցոյց տուած աջակցութեան: Օսմաներէն է, էջատակին եղած թարգմանութեամբ:

3.- Փաստ 875-16ը, օսմաներէն եւ հայերէն, «Իթթիհատի եւ Հ.Յ.Դ.ի կազմելիք գաղտնի Խառն մարմնի համար խմբագրուած կանոնագրութեան հիմնական կէտերը» անունով համաձայնագիր է, որ ինչպէս նախապէս կազմուած Խառն կամ Մնայուն մարմիններ կազմելու փորձերը, փաստօրէն պիտի մնար առանց գործնական հետեւանքի:

4.- Փաստ. 1719գ-13ը Իթթիհատի եւ Դաշնակցութեան միացեալ յայտարարութիւնն է, որ լոյս տեսած է «Գրօշակ»ի, «Ազատամարտ»ի եւ Պոլսոյ բոլոր թերթերուն մէջ: Ան կազմուած է Ատանայի կոտորածներէն ետք երկու կուսակցութեանց միջեւ յառաջացած եւ ամիսներ տեւող լարուած յարաբերութիւնները մեղմացնելու եւ գործակցութեան նոր հիմքեր հաստատելու նպատակով:

Փաստ. 1719q-4

Գ 1.– PROCLAMATION DU COMITE DE L'UNION OTTOMANE

A l'effet de sauvegarder le salut de notre Patrie constitutionnelle et d'assurer la prospérité du pays, tous les partis politiques, Sociétés, Comités et Ligues, ayant mis de côté tous leurs différends dans le but de s'entendre, ont fusionné et formé le Comité "Union ottomane".

- Les diverses sociétés et comités sont:
- Le "Comité théologique musulman",
- Le Comité "Union et Progrès Ottoman",
- Le parti de l' "Union Libérale Ottomane",
- Le Comité arménien "Tachnaktzoutioun",
- La "Ligue Politique Grecque",
- Le parti démocrate ottoman,
- Le Club central albanais "Bachkim",
- Le Club kurde d'assistance mutuelle,
- Le Club circassien d'assistance mutuelle,
- Le Club bulgare,
- Le Club des diplômés de l'Ecole des sciences ottomanes,
- Le comité ottoman de la Faculté de médecine, et d'autres clubs et associations et les journaux sous-mentionnés.

Le but de la formation du Comité "Union Ottomane" est le suivant:

1. Mettre de côté tous leurs différends et défendre d'un commun accord la Patrie et la Constitution, en s'engageant à maintenir les lois constitutionnelles;
 2. L'Union Ottomane cherchera à conformer les publications des journaux au but de cette Association et elle ne s'attachera pas seulement à défendre la Constitution basée sur le Chéri contre tout danger, elle s'efforcera encore d'assurer le relèvement du pays sous le régime constitutionnel.
 3. La Chambre des députés est le seul pouvoir pour exercer un contrôle sur les actes du gouvernement conformément aux conditions essentielles du constitutionnalisme basé sur le Chéri. Ainsi, les membres de l'Union Ottomane uniront leurs efforts comme tout patriote ottoman pour assurer aux membres de cette assemblée qui possède la souveraineté nationale, la liberté de conscience et de la parole en les défendant contre toutes menaces, dont ils pourraient être l'objet .
 4. C'est donc pour assurer la réalisation de ce but légitime et sacré qu'a été décidé la formation d'un conseil mixte permanent composé comme suit.
- Deux membres délégués par chacune des institutions suivantes; Comité des Ulémas, Comité Union et Progrès Ottoman, parti Libéral ottoman, Comité Tachnaktzoutioun, parti des démocrates, Ligue politique grecque, quatre délégués de la presse ottomane, un délégué de chacun des autres clubs.

La tâche du conseil est la suivante:

- a) Le Conseil s'adressera en cas de besoin à la Chambre des députés et au cabinet par l'entremise d'une commission spéciale et tout en annonçant l'accord entre les partis, les associations, les sociétés et les journaux, exprimera la nécessité de prendre des mesures urgentes et sérieuses en vue d'assurer la tranquillité du pays et de la population et de maintenir l'ordre public.
- b) Il enverra des commissions spéciales en province en vu d'annoncer et de propager les susdites intentions sacrées.
- c) Il s'adressera à tous les journaux, qui se publient en différentes langues, tant à Constantinople qu'en province et leur conseillera de faire d'un commun accord des publications continues, en vue d'expliquer à toutes les classes de la population le caractère patriotique du but et des décisions sus-énoncées.
- d) Ledit conseil mixte qui est autorisé à agir au nom de l'Union Ottomane est sûr qu'il pourra mettre un terme à toutes disputes et litiges par suite des mesures qu'il prendra et que toutes les classes de la population et les adhérents des différents partis participeront d'un commun accord aux efforts qu'il fera afin que des événements pouvant entraîner des conséquences graves et dangereuses pour le pays et le gouvernement tant à l'intérieur qu'à l'extérieur, ne puissent pas ce produire. Comme le salut de la patrie dépend actuellement plus que jamais du maintien de l'ordre public, de la justice et de l'existence intégrale de la fraternité et de l'égalité, le Comité Union Ottomane invite tous les Ottomans à travailler dans ce but d'un commun accord.

Le 4 avril 1325 [=1909]

L'association des Ulémas
 Le Comité Ottoman Union et Progrès
 Le Parti libéral ottoman
 Le Comité Tachnaktzoutioun
 La Ligue politique grecque
 Le Parti démocrate
 Le Comité Albanais Bachkim

Le Club kurde d'assistance mutuelle
 Le Club turc d'assistance mutuelle
 Le Club bulgare
 Le Club des anciens élèves de l'Ecole Civile
 L'Association de médecine ottomane
 Le Mizan

Sabah
 kdam
 Terdjuman-i-Hakikat
 Saadet
 Yéni-Gazeta
 Osmanli
 Serbesti

Փաստ. 1719q-2

Գ 2.– DECLARATION – ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Դրդուած Մարտի վերջերին Պոլսում տեղի ունեցած ծանրագոյն դէպքերից, որոնք վտանգեցին Օսմանեան նորահաստատ Սահմանադրութիւնը, ներքեւ յիշատակուած կուսակցութիւնները, խմբակցութիւնները եւ խմբագրութիւնները,

- «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կոմիտէն
- Օսմանեան Ազատական միութիւն (Ահրար)
- Հ. Յ. Դաշնակցութիւնը,
- Ուլիմաների պատգամաւորութիւնը,
- «Իգտամի», «Միզանի», «Սերբեստիի», «Ենի-կազեթայի», «Շուրայի Հիւմայիէի» եւ «Թանինի» խմբագրութիւնները,
- Յոյն, բուլղար եւ քիւրտ կլուբները,
- Ապրիլ 5-ին, Դաշնակցութեան նախաձեռնութեամբ գումարուած ժողովում, մտքերի մանրամասն փոխանակութիւնից յետոյ,
- Որոշեցին՝
 - ա) Իրերի ներկայ ծանր կացութեան հանդէպ՝ մոռանալ անցած տարածայնութիւնները, եւ միացած ոյժերով, ձեռք ձեռքի տուած պաշտպան կանգնել Սահմանադրական ռեժիմին.
 - բ) Յայտարարել, որ Թուրքիոյ մէջ երկրի միակ տէրն ու տնօրէնը Օսմանեան Պարլամենտն է, որից պիտի բխին պետական բոլոր կարգադրութիւնները եւ որին պիտի ենթարկուին բոլոր հիմնարկութիւնները:
 - գ) Յարգել եւ ապահովել տալ ժողովրդական ներկայացուցիչների անձեռնմխելիութիւնը եւ ազատութիւնը պարլամենտի գործունէութեան ասպարէզում:
 - Հաւատարիմ այդ տեսակէտին, ժողովը վճռեց անմիջապէս կիրարկանել հետեւեալ միջոցներ՝
 - ա) Դիմումն անել, յատուկ պատգամաւորութեան միջոցով, Պարլամենտին ու մինիստրական կաբինէտին եւ ծանուցանելով կայացած միաբանութիւնը, առաջարկել, որ սահմանադրական կառավարութիւնը անյապաղ ձեռք առնի լուրջ միջոցներ՝ ապահովելու երկրի եւ ազգաբնակչութեան անարդարութիւնը, որ լրջօրէն խախտուած է.
 - բ) Ուղարկել գաւառները յատուկ յանձնախմբեր, որոնց պաշտօնը պիտի լինի՝ արծարծել եւ իրականացնել համերաշխութեան գաղափարը, ինչպէս եւ յորդորել տեղական բոլոր ոյժերին՝ պաշտպան կանգնելու սահմանադրական կարգերին՝ իրանց ձեռքի տակ եղած բոլոր միջոցներով:
 - գ) Կոչ անել Օսմանեան ամբողջ մամուլին, այլեւայլ լեզուներին պատկանող, որ միաբանին եւ միացած կերպով տարածեն ազգաբնակչութեան բոլոր խաւերի մէջ ներկայ ժողովի գաղափարը եւ նպատակը:
 - Դրա հետ միասին ժողովը ընտրեց մի Խառն կոմիտէ, բաղկացած եօթն հոգուց, որը պաշտօն եւ լիազօրութիւն ունի յանուն ժողովի ձեռք առնել բոլոր միջոցները՝ ամրապնդելու համերաշխ գործակցութեան այս գաղափարը եւ այդ միջոցով սահմանադրական կարգերի հիմնաւորումը:
 - Ներկայ ժողովը, խորապէս համոզուած որ այս եղանակով վերջ պիտի գտնեն ներքին կռիւները եւ վտանգաւոր ընդհարումները, այնքան աղիտաբեր երկրի համար՝
 - Կոչ է անում Օսմանեան հայրենիքի բոլոր գաւազներին, մի կամք, մի սիրտ դարձած՝ պաշտպան կանգնել սահմանադրական կարգերին, որոնց նպատակ[ակ]էտն է բարձր պահել Արդարութեան, Եղբայրութեան եւ Հաւասարութեան դրօշը յօշոտած պետութեան մէջ, որը յայժմ աւելի քան երբ եւ իցէ, կարօտութիւն ունի խաղաղ, ներդաշնակ եւ վերաշինող զարգացման:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1909, 5 Ապրիլի
Պոլիս

اعتزاً بآيتهم هرونوع يومه و ايلك دو قوم لره مخصوص اولاه
دو قوم ماكنه سنك تحريفاً مسير :

Գ 3.- ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
«ՕՍՄԱՆԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄՆՈՅՆ»

Երկրին մէջ գտնուող բոլոր քաղաքական կուսակցութիւնները, մարմինները եւ կազմակերպութիւնները՝ վտանգուած հայրենիքը եւ սահմանադրութիւնը պաշտպանելու համար, բոլոր հակառակութիւնները մէկդի դնելով, Օսմանեան անուան տակ «Միացեալ մարմին» մը կազմած են. այս մարմնոյն մէջ կը մտնեն՝ Ճեմիյէթը Իլմիյէի Իսլամիէ, Իթթիհատ եւ Թերազզը, Ահրար կուսակցութիւնը, Հ. Յ. Դաշնակցութիւնը, Յոյն քաղաքական ակումբը, Տեմոկրատ կուսակցութիւնը, ալպանական Պաշքըմ քիւլը, քիւրտ Թէպիլին ակումբը, Չերքէզ Բէպազի ակումբը, Պուլկար ակումբը, Մեշվերէթ ընթացաւարտից ակումբը, Օսմանեան Բժշկական մարմինը, ուրիշ մարմիններէն ստորեւ ստորագրող թերթերը:

«Օսմանեան Միացեալ Մարմնոյն» հիմունքը կը կազմեն հետեւեալները.

- 1.- Թողոյվ միջկուսակցական պաշարները՝ միասնաբար աշխատիլ պաշտպանել[ու] Սահմանադրական վարչութիւնը:
 - 2.- Մարմինը պիտի ջանայ որ բոլոր թերթերը այս նուիրական նպատակին համար միացնեն իրենց հրատարակութիւնները:
 - 3.- Ըստ հիմնական օրէնքներու եւ Սահմանադրութեան, Օսմանեան կառավարութեան միակ հակակշռողն է Մէճլիսը Մեպուսան. հետեւաբար Միացեալ մարմնոյն պարտականութիւնն է ապահովել խօսքի եւ գաղափարի ազատութիւնը ազգային ներկայացուցիչներուն:
 - 4.- Այս նպատակներուն իրագործման համար որոշուած է մշտական եւ խառն մարմին մը կազմել հետեւեալ կերպով.
- Ճեմիյէթը Իլմիյէի օսմանիյէ, Իթթիհատ վէ Թերազզը, Ահրար կուսակցութիւնը, Դաշնակցութիւնը, Տեմոկրատ կուսակցութիւնը, Յոյն քաղաքական մարմինը երկուական անդամ, Օսմանեան մամուլէն չորս անդամ, միւս քիւլակներէն մէկ մէկ անդամ:

Մշտական եւ խառն մարմնոյն պարտականութիւնները

- 1.- Մասնաւոր մասնախումբի միջոցաւ, Մեպուսական ժողովին եւ Նախարարաց Խորհուրդին դիմելով պիտի տեղեկացնէ կուսակցութեանց մարմիններու եւ լրագիրներու համերաշխութիւնը. պիտի ցոյց տայ այն հարկաւոր միջոցները որ անհրաժեշտ են ներքին խաղաղութեան ամրապնդման համար:
- 2.- Գաւառները մասնաւոր մարմիններ ղրկելով այդ նպատակները պիտի զեկուցանէ եւ ընդհանրացնէ:
- 3.- Պոլսոյ եւ գաւառի թերթերուն յանձնարարութիւններ պիտի ընէ ըստ այնմ կատարելու համար իրենց հրատարակութիւնները:
- 4.- Մասնախումբը կը հաւատայ թէ՛ այս աշխատութեանց շնորհիւ պիտի դադրին ներքին վէճերը, եւ թէ՛ բոլոր ժողովուրդը եւ ամէն հոսանքները պիտի գործակցին՝ ներքին եւ արտաքին բարդութեանց առջեւ առնելու համար ձեռնարկուած այս զգուշութիւններուն:

1719q-5

Գ 4.- ՄԱՀՄՈՒՏ ՇԵՒՔԷԹԻ ՆԱՄԱԿԸ Հ.Յ.Դ.ԻՆ



ارض راشنا فوجوبه فو سنه رسالت مركز قوميته

مقدم اخذنا
و ظفرک و دویار اولدین مهالك اجده ده المراد موفقت نام ايله فلو هوزده متولد هيات نبیة قضايتی
موجب سمعت و افتخار اولدی . جنی هوان اخوند با شایه بویه و ظفرک اولدورى سعادت ملک و مبعث نطفه و
اساسه سنه بویه برکتله و اهده مهیه هالده بولند قیوم جمع بر قوه نامت و درجه متابع مکتبه آرته جا کیرتبات اولدور
بئزه و نیا بر مبعثت جان آقشدر . بولنقومه جنی و مذهب اولد و ظفرک نام نعتیه بر ورده اولد متابع
اولد و سنه هرکات اجده س سده بر ایشای و ظفرکده جارت اولوب اس اساس موفقتن آخنده و ظفرکده احتیاسات
و ظفرک و رانه تیگو ایتمه بان مه ارض و ظفرکده اولدور و ظفرک و رانه ابراز و ایتانه و اشاهه
کوزمده نقوب مجتوده مهیه بر موفقت استقال اجنه اولوب برضا سینه و تحسنت مهیه فاهانه ظفرک نقیبه سعادت
ایبز ۱۹۱
اولدور و ظفرک اولدی
اولدور و ظفرک اولدی
اولدور و ظفرک اولدی

Handwritten signatures and text in Armenian script.

Handwritten text in Armenian script, including names and dates.

Երրորդ գորաբանակի Սպայակոյտի վարչութիւն
Քայ 3. Դաշնակցութեան Կեդր. մարմնին
Սիրելի հայրենակիցներ,

Հայրենիքի վերջին վտանգներն փրկուած ըլ-
լալէն ձեր օսմանեան զգացումներուն համար եր-
ջանիկ ենք եւ կը պարծենանք: Յորչափ օսման-
եան զանազան տարրերը կը ներկայանան միակ
եւ ահարկու զանգուածի մը պէս, ոչ մէկ ապօրի-
նի ուժ չի կրնար գետին գտնալ: Առանց ցեղի ու
կրօնի խտրութեան հայրենիքի բոլոր զաւակնե-
րուն հացովը սնած օսմ. բանակին վերջին շար-
ժումները միայն պարտականութեան կատա-
րումն էին. անոր յաջողութեան հիմը կը կազմուի
հայրենակիցներու հայրենասիրական զգացում-
ներն: Մասնաւորապէս հայ հայրենակիցներուն
ի վաղուց ցոյց տուած հայրենասիրական զգա-
ցումները մեր սրտերը կը լեցնեն խորունկ յար-
գանքով:

Երրորդ գորաբանակի եւ
Ազատարար բանակի հրամանատար
ՍԱՅՄՈՒՏ ՇԵՒՔԷԹ

Գ 5.- ՕՐԻՆԱԳԻԾ

Փաստ. 875-16

Համաձայնագրի օրինակին կցուած է Եղիշ Թոփչեանի (Երուանդ) այս երկտողը գրուած Կարիգէն (Բարձրբերդ) եւ ուղղուած Պոլիս, հաւանաբար Միսոն Չաւարեանին (Մաբաւ): Յիշուած «խնամիները» ակնարկուածն է Իփփիստին: Օրինագիծը կու տանք օսմաներէն բնագրին հետ:

Միրելի Մաբաւ !

Ահա խնամիների հետ կազմած կանոնագրի նախագիծը, որ միայն այսօր վերջացրինք:

Իրենք այսօր ուղարկեցին Սելանիկ, խնդրելով նրանց հաստատութիւնը:

Առանց դրան չեն ուզում գործը ձեռնարկել: Ուրեմն աշխատեցէք ազդել, որ իսկոյն պատասխանեն:

Մինչ այդ գուցէ նախապատրաստական մի քանի քայլեր անել: Ներիր. շատ եմ շտապում: Սկսուած է մեր Շրջանային ժողովը օրական 2 նիստ ունենալով: Միւս խնդիրների մասին յաջորդով:

Գրեցէք ձեր կարծիքը կանոնագրի վերաբերմամբ:

Ջերմ բարեւերով
ԵՐՈՒԱՆԻ

3 Յունիսի 1909, Բարձրբերդ

ԻԹԹԻ-ՀԱՏԻ ԵՒ Հ.Յ.Գ.Ի ԿԱԶՄԵԼԻՔ ԳԱՂՏՆԻ ԽԱՆ-Ն ՄԱՐՍՆԻ ՀԱՄԱՐ ԽՄԲԱԳՐՈՒԱԾ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԵՏԵՐԸ

1) Այս մարմինին հիմնական նպատակն է պաշտպանել Օսմ. երկրին ամբողջութիւնը, սահմանադրութեան յարատեւումը ապահովել ու ազգերու մէջ եղբայրութեան եւ համերաշխութեան կապերը ամրապնդելու եւ ուժակիրոնի արգելք լլլալ:

2) Այս մարմինը երկու կուսակցութիւններու կեդր. կոմիտէներուն կողմէ կ'ընտրուի. իր բոլոր որոշումներն ու ժողովները գաղտնապէս պիտի կատարէ:

3) Յիշեալ մարմինը շաբաթը առնուազն չորս անգամ եւ ի պահանջել հարկին արտակարգ կերպով նիստ պիտի գումարէ:

4) Այս մարմինին պայմանաժամը երեքական ամիս պիտի լլլայ. այս շրջանէն յետոյ դարձեալ երեք ամսուան համար երկու երրորդը կրնայ վերընտրուիլ երկու կազմի կեդր. մարմիններու կողմից:

5) Սահմանադրութիւնը ամրապնդելու եւ թուրք, հայ եւ քիւրտ ցեղերու մէջ եղբայրութեան գաղափարը զօրացնելու համար խառն մարմինը իր տրամադրութեան տակ որոշ ոյժ մը պիտի ունենայ: Այս հիման վրայ հոն թուրքերէն, հայերէն եւ քիւրտերէն թուուցիկներ պիտի հրատարակէ:

6) Այս մարմինին իշխանութեան ներքեւ գտնուելիք մարտական ոյժը թուրքերէն եւ հայերէն գատ գատ կնիքներով կնքուած թուղթի մը պարունակութիւնը ի գործ դնելու պարտաւոր պիտի լլլայ:

7) Այս գաղտնի մարտական ոյժէն ընտրուած ուրիշ տեւորիստի խումը մ'ալ պիտի ունենայ խառն մարմինը:

8) Տեւորիստներու կատարելիք կարեւոր գործերը երկու կուսակցութեանց կեդր. մարմիններուն վաւերացման պիտի ենթարկուին:

عنا نأى اتما دورتمى وارى طاشنا قوتونيه فرقة لربنا هينت
خفيه مختلطه سى عقده تنظيم اولنا موار اساسه نظاميه

1) اسبو هينتك وظا نق اساسى تامة ملد عتمان مركز مرفقيه

مشروطية اواره مركز تأسيه اذسى وبنيه الاقوام ايطيه اخوت

ومالحدك تقديروا اسباب اجتماعيه مصافه اساميه صنفه اولهجه

2) اسبو هينت لهر ايكه فرقه هينت مركز لرى طرفنده بالانتخاب

تعييه اولونه فرقة مقررده واجتماعتى صورت خفيه وه لجر ايد

3) هينت مذكره هفتده دوافل دست دفعه وحسب اديجاب

صوت فرقه العاده ده اجتماع ايد هكدر

4) اسبو هينتك صت دواى اوله ايلعه فاصه لرى نصيه اولهجه

بوست نر ايقده قلنا فى تعيد و حفظ طرفيه مركز قوميه لربنا

اكثرية تكوينه اقترايه ايديكه تقديره صت دواى اوله اوج

5) آى صنه تعيد اوله بيليه

6) هينت مختلطه اواره مشروطيه مركز تأسيه صانق وبنيه الاقوام

مركز لرى ارمى فكر اخوت ومالحدك تأسيه عقده لرى

مصيه بر قوت مالده و حاكم اولهجه و بواسه اوله بيه تركيه

ارسيه كرهه بياننام لرى نصيه صلاحيه اولهجه

7) هينت مختلطه حاكم اولهجه قراى ساهه خفيه تركيه و ارمى

اوله ه هينتك ايد ايد مهور لرى مهور بر قوت مالده حاكم

در حال ايطايه مجبور اوله هجه

8) هينت مختلطه مالده بو قواى حاساه خفيه وه مشعب اوله اوله اوزو

9) وترو بيهت ديكير بر قوت تره بيليه لوى هجه

10) وترو بيهت فرقه ساهه وظا نف مرفقه لهر ايكه فرقه هينت

مركز لرى نصيه اقترايه ايد هكدر

9) Աստուցմէ գատ խառն մարմինը պիտի ունենայ պէտք եղածին չափ շրջուն գործիչներ, որոնք պիտի քալեն կուսակալութեան շրջանին մէջ եւ փրփականտ պիտի ընեն:

10) Խառն մարմինը նկատի չառնելով կրօնի եւ ազգութեան տարբերութիւնը՝ օրինական միջոցներով պիտի պատժէ եւ կամ յանցանքին համեմատ անձամբ պիտի պատժէ կամ տեւորի ենթարկէ այն բոլոր անձերը, որոնք կը համարձակին ժողովուրդներու մէջ խռովութիւն ձգել կամ թիրախացութեանց տեղի տալ:

11) Խառն մարմինը իրաւունք պիտի ունենայ շատ անգամ գեղծանող պաշտօնէի մը բերանացի ազդարարութիւն ընել, կրկնուելու պարագային կառավարութեան իմացնել, եթէ այս ալ ապարդիւն մնայ՝ աստիճանին համեմատ տեւորի ենթարկել:

12) Խ[առն] մարմինը իր շրջանին մէջ գտնուող ժողովուրդներու մէջ յառաջ գալիք ամէն տեսակ անհամաձայնութիւնները կարգադրելու համար լրջօրէն պիտի աշխատի եւ ի պահանջել հարկին տեղական կառավարութեան պիտի դիմէ:

13) Երկու կուսակցութեանց կողմէն կառավարութեան մատուցուելիք յիշատակազիրները միայն իթթի-հատի կողմէն, իսկ ուրիշ պարագաներու մէջ թէ երկու կողմի կեդր. մարմիններու եւ թէ խառն մարմինից միացած կնիքը պիտի գործածուի:

14) Այս մարմինը պիտի ունենայ իր գատ դիւանը եւ կանոնաւոր պիտուծէն, որ պիտի հայթայթուի երկու կողմիտէն երկու կողմէն:

15) Յիշեալ յօդուածները երկու կուսակցութեան վաւերացումին պիտի ենթարկուին եւ յետոյ պիտի գործադրուին: Այս կանոնագրին համաձայն տրուելիք որոշումները երկու կուսակցութեանց պատկանող շրջաններուն համար պարտաւորիչ պիտի լլլան:

16) Խառն մարմինը պէտք եղած ատեն երկու կողմի ծրագիրներուն խմբագրութեան մէջ բարեփոխումներ կրնայ ընել՝ նկատի առնելով իր շրջանի պայմանները:

17) Այս կանոնագիրը՝ իբրեւ հիմ ընդունուելէ եւ վաւերացուելէ յետոյ երկու կողմի առաջարկով եւ համաձայնութեամբ կրնայ բարեփոխուիլ:

9) هينت مختلطه بونروه مالا ولويت داخله طرولتم وه قوتفواند
ترتيب ايتك اوزو لروى قده سيار هينتاره مالده اولهجه و
بونرى اداء ايد هكدر

10) هينت مختلطه كيم اوله اوزو وهرها نكس منه هب و مله موبو
بولنوسه بولنوسه بيه الاطاي موبيه نفايه وسو ذهاب.

11) اولهجه اهوره هرات اينلرى وساطه قانونيه ايل اصلاح ايد هكدر
تقديره هبرنه كوره بالذات تأديب و يترهيب ايد بيه هكدر

12) هينت سياتى قعد و تقعه ايد هكدر بر ما موره اخطايات شفايه
بولنوه و تكبرى هانده حكومتى خبردار ايتك و يه تاثير كور طرس

13) بولنوسه در بيه كوره (ورترور) ايد بيليه حقي حائر اوله هجه
14) هينت مختلطه دائره قعد و صلاحيتى داخله كونا عناه مختلفه

15) اساسه صحت ايد هكدر لهر ديو اختلافاتى هل و تسويه جها
هدست ولرى الخايم حكومت مجيره ايفار كيفيت ايد هكدر

16) طرفيه فرقه لربنا هكدر وه و يريه هكدر مذكره لرى يالغز اتحاد
وترمى جمعيتى طرفنده و خصوصيات ساره متعلقه اوله اقباسى

17) ايجاميه كوره كرك مركز قوميه لربنا كرك هينت مختلطه ذك صحتك
مهور لرى تعهير ايد هكدر

18) اسبو هينتك كند يه مخصوصى بوسه بولنوه وه طرفيه
قوميه لرى طرفنده صاهفه تسويه اولنوه اوزو منتظم بر
بوده سى بولنوه هجه

19) موار مذكره هرا ايكه فرقه ه تصديقه اقترايه ايد كونه صوره
موقع اهل ايه قونلوه هجه و بو نظا نامه توصيفاً و يريه هكدر قرارى

20) هرا ايكه فرقه يه منسوب شعبه لرى مجبورى اوج اوله هجه
21) اسبو هينت حسب اديجاب هرا ايكه فرقه يه ير مغرام لرى كندى

22) هر دوى داخله كوره تأليف مذكره سده صلاحيه اوله ايد هكدر
23) اسبو نظا نامه اسك احتياطيه قبول و تصديقه اولنوه هجه

24) مذكره طرفيه تكليف و مراقتيه قابل تعديل اوله ايد هكدر
25) اسبو نظا نامه اسك احتياطيه قبول و تصديقه اولنوه هجه

26) مذكره طرفيه تكليف و مراقتيه قابل تعديل اوله ايد هكدر
27) اسبو نظا نامه اسك احتياطيه قبول و تصديقه اولنوه هجه

28) مذكره طرفيه تكليف و مراقتيه قابل تعديل اوله ايد هكدر
29) اسبو نظا نامه اسك احتياطيه قبول و تصديقه اولنوه هجه

30) مذكره طرفيه تكليف و مراقتيه قابل تعديل اوله ايد هكدر
31) اسبو نظا نامه اسك احتياطيه قبول و تصديقه اولنوه هجه

ԳԼՈՒԽ V

ԱՏԱՆԱ – ԿԻԼԻԿԻՈՅ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

Սահմանադրական շրջանի հայերուրը յարաբերութեանց մէջ առաջին եւ ամենէն սեռեղի դէպքը, անշուշտ, Ատանայի նահանգի տարածքին սարքուած հայկական կորորածներն են, որոնց ծրագրումը եթէ համիտեան սադրանքով էր կատարուած, ապա անոնց ոճրային գործադրութեան համար մասնակից եւ մեղսակից էին թէ՛ հին եւ թէ՛ նոր վարչակարգի պատասխանատուները:

Նախ որ Կիլիկեան ահաւոր նախադէպերը նախապատրաստուած էին ամիսներ առաջ՝ կրօնաւորներու կողմէ հրահրուած գրգռութիւններով, կեանքը հայերու հասցէին նետուած ստապատիր ու շինծու ամբաստանութիւններով, լուրեր տարածելով որ, իբր թէ, հոս հոն կատարուած սպանութիւնները հայերու գործն են, որ վերջիններս զէնք կ'ամբարեն եւ կը պատրաստուին զօրանոցներու վրայ յարձակում գործելու, որ կը ծրագրեն Կիլիկիոյ մէջ հայկական անկախ պետութիւն հռչակելու, եւայլն եւայլն: Չէ՞ որ, ինչպէս կ'ըսուէր, Սահմանադրութիւնը հայերու գործն էր, որմով վերջ պիտի դրուէր թուրքերու եւ մահմետականներու գերակայութեան:

Ապա այս գրգռութիւններուն յաջորդեցին բուն ջարդերը, քանդումներն ու հրկիզումները, վերջիններուն ընկերացող կողոպուտներով եւ կիներու ու աղջիկներու առեւանգութեամբ: Որոշ է որ գործողութիւններու ետին կանգնած էր տեղական կառավարութիւնը, գլխաւորութեամբ նահանգապետ Ճեւատ պէյի եւ զին. հրամանատար Ռեմզի փաշայի, երկուքն ալ Ապտիլ Համիտի վստահելիներէն, որոնք կարգը հաստատելու պատրուակին տակ՝ զօրանոցի զէնքերը բաշխած էին Ատանան պաշարած թուրք եւ քիւրտ ջարդարարներու խուժանին: Անշուշտ պատահական չէր նաեւ, որ դէպքերու սկզբնաւորութիւնը կը զուգահայէր մայրաքաղաքին մէջ Համիտի փորձած շերիաբական յեղաշրջումին (Մարտ 31, հին տոմարով), որ ինքնին գերագրգիռ աշխուժութիւն առաջացուցած էր ամբողջ Անատոլիոյ եւ ի մասնաւորի Կիլիկիոյ տարածքին, հայատեաց մոլուցքով բորբոքելով թուրք եւ մահմետական տարրերը: Արդարեւ դէպքերը սկսան միեւնոյն օրը, գրեթէ նոյն ժամուն, վիլայէթի կեդրոն Ատանայի եւ ամբողջ նահանգին մէջ, տարածուելով Հալէպի հիւսիս արեւելեան գաւառներու հայաբնակ գրեթէ բոլոր ւաններուն, գիւղերուն եւ ազարակներուն (չիֆթլիկ) վրայ: Անշուշտ, սուլթան Համիտի գահընկեցութենէն ետք, իշխանութեան վերադարձած սահմանադրական կառավարութիւնը օգնական զօրք ուղարկեց՝ կոտորածները դադարեցնելու, աղիտեալ հայ ազգաբնակչութիւնը պաշտպանութեան տակ առնելու եւ նահանգին մէջ կարգը վերահաստատելու առաքելութեամբ: Յայտնի է, սակայն, որ «ազատարար» բանակը ջարդարարներուն միանալով լրումին պիտի հասցնէր վերջիններուն սկսած ոճրային արարքները:

Փաստօրէն, Ապրիլ ամսուան առաջին երկու շաբաթներու ընթացքին տեղի ունեցած եղեռնագործութիւնը, իր աննախընթաց վայրագութեամբ, պիտի գլէր ու անցնէր համիտեան նախորդ սարսափները, խլելով առնուազն 20-25.000 հայ զոհեր, առանց հաշուելու տակաւին տասնեակ հազարներու հասնող վիրաւորները, անտուն, անպատսպար եւ յետին թշուառութեան մատնուած այրիներն ու որբերը, որոնց շարքերուն մէջ յաջորդող ամիսներուն սովն ու հիւանդութիւնները հազարաւոր նոր կեանքեր պիտի հնձէին: Որոշ աղբիւրներ հայոց կորուստները կը հասցեն մինչեւ 30.000ի:

Համատարած ջարդի եւ աներածութեան այդ օրերուն, անշուշտ որ գործուած են նաեւ ինքնապաշտպանութեան սխրալի արարքներ: Նախեւառաջ, Ատանա քաղաքի հայութիւնը հերոսական ինքնապաշտպանութեամբ դուրս կու գայ ջարդարար խուժանին դէմ: Փամփուշտի պակասին եւ նահանգապետին հաշտարարի կեղծ ու պատիր հաւաստիացումներուն պատճառաւ միայն, առաջին օրերու դիմադրութենէն ետք ան վար դրած է զէնքերը եւ կառավարութեան յանձնած զանոնք: Այլ տեղեր, ինչպէս Չորք-Մարգուան (Տէրք-Եոյ), Միս, Հաճըն, Կարս-պագար եւայլն, հայերը անհաւասար մարտի բռնուած են թուրք, քիւրտ եւ չերքէզ հրոսակներուն դէմ եւ այդպէս ալ փրկուած: Մեկուսացած վայրերու մէջ սակաւաթիւ հայոց զինեալ դիմադրութիւնը թէեւ յուսահատական եղած է եւ ողբերգական աւարտ ունեցած, բայց եւ այնպէս միջոց տուած է որ շատ մը ազգակիցներ փրկուին ստոյգ մահէ: Անկասկած է որ Թուրքիոյ մէջ, առանց ինքնապաշտպանութեան միջոցներու, հայ տարրը ոչ մէկ ապահովութիւն կրնար յուսալ պետութենէն:

Կիլիկիոյ ահաւոր դէպքերը կարելի չէր ծածկել ո՛չ ներքին եւ ո՛չ արտաքին աշխարհէն: Անոնք գործուած էին բացայայտ կերպով եւ տեղւոյն վրայ գտնուող երոպացի հիւպատոսները, միսիոնարները եւ ուրիշ օտարականներ ականատես վկաներ էին: Երոպական մամուլը եւս լայնօրէն արձագանգած էր գազրելի եղելութեանց: Հարցը, երկար քաշքշուքներով, արծարծուեցաւ եւ քննուեցաւ Կ. Պոլիս խորհրդարանին մէջ, ուր բուն ելոյթներ ունեցան Գր. Չօհրապ, Վարդգէս (Սերենկիպեան), Համբ. Պոյաճեան (Մուրատ) եւ ուրիշներ խարանելով կառավարութեան բռնած երկչոտ ու երկդիմի կեցուածքը Ատանայի մէջ գործող պետական պաշտօնակատարներու նկատմամբ, երբ ամէն կասկածէ վեր էր անոնց մեղսակցութիւնն ու գործակցութիւնը ոճրագործներուն հետ:

նին մէջ, ուր բուն ելոյթներ ունեցան Գր. Չօհրապ, Վարդգէս (Սերենկիպեան), Համբ. Պոյաճեան (Մուրատ) եւ ուրիշներ խարանելով կառավարութեան բռնած երկչոտ ու երկդիմի կեցուածքը Ատանայի մէջ գործող պետական պաշտօնակատարներու նկատմամբ, երբ ամէն կասկածէ վեր էր անոնց մեղսակցութիւնն ու գործակցութիւնը ոճրագործներուն հետ:

Խորհրդարանի առաջացուցած Քննիչ յանձնաժողովի աշխատանքները պիտի մնային ապարդիւն. անդամներէն՝ իբրքիստական երեսփոխան Յակոբ Պապիկեան, որ անգգուշութիւնը ունեցած էր հրապարակաւ բացայայտելու իրականութիւնները, Պոլիս վերադարձին պիտի սպանուէր խորհրդաւոր պարագաներու տակ եւ իր տեղեկագիրը, թուրքերու համար խարանիչ ըստ ամենայնի, պիտի չկարդացուէր երբեք Օսմ. խորհրդարանին առջեւ: Խեղկատակութեան ուրիշ տխուր օրինակ մը պիտի տար Չին. Ատեանը, որ աւագ պարտականութիւն համարած էր «փաստել» հայերու նախայարձակ եւ, հետեւաբար, յանցաւոր ըլլալը: Ան պիտի բաւականանար ցմահ բանտարկութեան դատապարտելով 20 թուրք հասարակ ոճրագործներ (որոնք ատեն մը ետք ազատ պիտի արձակուէին) եւ 12 հայեր, որոնք յանցանք գործած էին ինքնապաշտպանութեան համար զէնքի դիմելու...

Կոտորածները կազմակերպող ու գործադրող յայտնի ոչ մէկ թուրք դատապարտումի վճիռ ստացաւ: Այդպէս եղած է միշտ Թուրքիոյ մէջ. եթէ զոհը հայ է կամ «կեանք» քրիստոնէայ, ամենէն զգուշի ոճիրը գործող թուրքը կը մնայ անհալի, անպատիժ. անէլին, իբրեւ այդպիսին ան կը համարուի ազգային հերոս:

Արտաքին ճակատի վրայ, Պոլսոյ Կեդր. կառավարութիւնը ձեռք առած էր արդէն որոշ կանխազգուշութիւններ: Արտասահմանեան ներկայացուցչութիւններու ճամբով եւ այլ գաղտնածածուկ միջոցներով ան կը ջանար ազդել միջազգային հանրային կարծիքին վրայ շրջաբերութեան մէջ դնելով այն միտքը, որ Ատանայի ցաւալի դէպքերուն պատասխանատու են հայերը, ի մասնաւորի հայ յեղափոխական կոմիտէները, որոնց անդամները իրենց յոխորտանքներով գրգռութիւն սերմանած են եւ, ամէն պարագայի տակ, իրենք են նախայարձակները:

Այսպէս թէ այնպէս, թուրքեւայ յարաբերութիւններուն մէջ Կիլիկեան աղէտը պիտի մնար իբրեւ կոտորացող վէրք եւ նախանշան, հաւանաբար, գալիք շատ անէլի ճակատագրական ողբերգութեան մը:

* * *

Կիլիկեան կոտորածներուն վերաբերող փաստաթուղթերը կը տրուին հետեւեալ երեք խմբաւորումներով. —

- 1.- 1909 թ. Մարտ 31ի համիտեան յեղաշրջման փորձին եւ սահմանադրական ուժերու հակազդեցութեան առիթով, նոյն թուականի Ապրիլ ամսուն Պոլսոյ Պատ. մարմնին եւ Հ.Յ.Դ. Արեւմտեան Բիւրոյի միջեւ փոխանակուած գրութիւններ:
- 2.- Ատանայի կոտորածներուն մասին տեղւոյն եւ շրջակայքի կուսակցական մարմիններու արձագանգները, ինչպէս նաեւ յատուկ առաքելութեամբ Կիլիկիա մեկնած Սիմոն Չաւարեանի երկու նամակները:
- 3.- Թուրք պետական ներկայացուցիչներու միջազգային շրջանակներու վերաբերող փաստաթուղթեր, ապատեղեկատուութեամբ եւ խեղաթիրումներով, եւ դաշնակցական վերին մարմիններու կողմէ կատարուած ճշդումներ եւ բողոքներ:

Ե. Փ.

Փաստ. 193-71

Ա 1.- ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

4/17 Ապրիլ 1909, Կ. Պոլիս

Արեւմտեան Բիւրոյի ընկերներուն, Ժընեւ

Արդէն Հեռագրեցինք ձեզի երէկ եւ այսօր կարճ կերպով, որովհետեւ Հեռագրատուներուն արգիլուած է ընդարձակ եւ կացութեան իսկութեանը վերաբերող Հեռագրիւններ Հասցնել իրենց Հասցէին:

Ամբողջ երկու օր՝ Երեքշաբթի եւ Չորեքշաբթի օրերը, քաղաքը առաւ կատարեալ անիշխանութեան վի-

ճակ: Անսպասելի կերպով զօրքը Երեքշաբթի առաւտունը շատ կանուխ պաշարեց խորհրդարանը եւ Այա Սոֆիայի հրապարակը: Զօրանոցներու մէջ կապած էին նախապէս իրենց սպաները: Ինչպէս կ'երեւի, շատ գաղտնի կազմակերպութիւն մը՝ ղեկավարութեամբ կրօնաւորներու եւ այլ մուլթ անձնաւորութեանց՝ գործած էր անշուշտ:

Առաջին օրուան ընթացքին՝ ապստամբական շարժումը երթալով ուժեղացաւ. հաւատարիմ կարծուած Սելանիկի զօրքերուն մեծամասնութիւնը միացաւ ա-

պրատամբներուն. մէկ կամ երկու վաշտ հագիւ կարգապահ մնաց:

Ապստամբները կը պահանջէին Հիլմի փաշայի դահլիճին անկումը, Սահմանադրութեան գործադրութիւնը՝ համաձայն Շէրիի (կրօնական օրինագիրք) օրէնքներուն եւ այլ երկրորդական խնդիրներ: Բայց խոր ատելութիւն մը կը շնչոտէր հանդէպ Միլիթիւնի եւ Յաւաշիմիլի կողմից: Այս քրիթիքական ռոպէին՝ երեսփոխաններէն մաս մը հաւաքուած էր խորհրդարանը, ուր սակայն զինուորներ կը մտնէին սպառնալից երեւոյթով: Ամբոխը երթալով օրուան ընթացքին մէջ հետզհետէ առաւ սպառնալից կերպարանք սպաննուեցաւ նոյնիսկ խորհրդարանի դրան առջեւ երեսփոխան մը, ինչպէս նաեւ մէկ երկու նախարար:

Հիլմի փաշայի դահլիճը հրաժարեցաւ եւ գիշերը ուշատեն հագիւ կարելի եղաւ ապստամբները ցրուել: Ձինուորները՝ գիշերը դարձան իրենց զօրանոցները՝ սկսան, իբրեւ նշան յաղթանակի եւ ուրախութեան, անընդհատ կրակել օդին մէջ: Ամբողջ քաղաքը մէկ երկու ժամ մատնուեցաւ փանիքի¹, որովհետեւ չէր գիտեր այս հրացանաձգութեանց իսկական պատճառը:

Միւս օր առտուն զինուորները դարձեալ հաւաքուեցան նոյն հրապարակը, բայց շուտով ցրուեցան: Նոյն օրն եւս զինուորական անիշխանութիւնը շարունակեցաւ, մինչեւ իրիկուն:

Այսօր արդէն պարզուած է որ պալատը մատ ունի այս բողոքին մէջ եւ Սահմանադրութիւնը լուրջ վտանգի մէջ է: Իթիթիստի բոլոր կարեւոր անդամները պահած կամ հեռացած են քաղաքէն: Ձինուորները զօրանոցներէն դուրս չեն գար, բայց անիշխանութեան մէջ են: Քաղաքին մէկ այլ տեղ սպանութիւններ կը պատահին: Պէտք է ըսել որ մինչեւ հիմա ժողովուրդին ուղղուած ո՛չ մէկ առանձին թշնամութիւն չնշմարուեցաւ. յատկապէս քրիստոնեաներու նկատմամբ հոգածու զգուշութիւն մը եւ բարեկամական տրամադրութիւն զգալի էր զինուորներուն մէջ: Բոլոր նշանները ցոյց կու տան որ դէպքերը վայրկեանէ վայրկեան գահավէժ ընթացքով կը յառաջանան եւ կարող են սպառնալից դառնալ նաեւ մեզի նկատմամբ:

Մեր նախաձեռնութեամբ երէկ եւ այսօր տեղի ունեցան Ահրարի, Իթիթիստի, թուրք այլ կազմակերպութեանց, թուրք լրագրողներու, ուրիշ խօսքով՝ հանրային կարծիքին վրայ բարոյական ներգործութիւն ունեցող տարրերէն կազմուած ժողովներ, համագործակցութեան բերելու գանոնք Սահմանադրութեան պաշտպանութեան համար: Մեր ջանքերը ունեցան յաջող արդիւնք: Համաձայնութիւն կայացաւ՝ մինչեւ խորհրդա-

րանի երկրորդ նստաշրջանի բացումը, բոլոր կուսակցութիւններէն եւ խմբակցութիւններէն կազմել խառն կոմիտէ մը, խորհրդակցաբար եւ գործակցաբար վարելու քաղաքական գլխաւոր խնդիրները, դադրեցնել կուսակցական պայքարը եւ բոլոր ուժերը լարել՝ ընդդէմ ուժաբախտի: Հիմա կը դառնանք նոյն ժողովէն: Proclamation-ը² վաղն իսկ հրապարակ կու գայ արդէն:

Միւս կողմէն, արդէն վճռականապէս ստոյգ է, որ էնվեր եւ Նիսպի՝ գլուխն անցած 5-10.000 զօրաբանակի մը կու գան դէպի Պոլիս, պաշտպանելու Սահմանադրութիւնը: Այս գիշեր իսկ կը հասնին հոս: Չենք գիտեր թէ նոր հասնող այս զօրքերը ի՞նչ կացութիւն պիտի ստեղծեն իրերու դրութեան մէջ: Կը թուի թէ ապրատամբներու եւ եկողներու մէջ բախում մը անխուսափելի ըլլայ եւ հետեւանք արիւննալի: Ոչինչ կարող ենք ըսել վաղուան կամ միւս օրուան կացութեան մասին: Եթէ զօրքերու մէջ սկսող բախումը կամ ընդհարումը դուրս գայ իր սահմաններէն եւ անցնի ժողովուրդին, կարող էք երեւակայել ահաւոր պատկերը:

Ատանայէն եկած լուրերը քրիթիքական են. ջարդը տեղի ունեցած է, բայց չենք գիտեր ի՞նչ համեմատութիւններով. այսօրուան հեռագիրները կը հաղորդեն այսպէս. «Ջարդ, բոցեր[?], թալան»: Միւս գաւառներէն մեր ստացած հեռագիրները ջարդի երկիւղ չեն յայտնել, բայց, ինչպէս կ'երեւի, իմացած են արդէն Պոլսոյ անցուդարձերը եւ վրդովման մէջ են:

Ամէն պարագայի տակ, կը գտնուինք աննախատեսելի պատահականութեանց առջեւ:

Պոլիսէն դէպի գաւառները ընդհատուած են հեռագրական յարաբերութիւնները. գաւառներէն գրուածները կը հասնին, իսկ ասկէ տրուածները՝ ոչ:

Կ'իմանանք որ Պոլսոյ կողմը, հայկական թաղի մը մօտերը, հայ քոնիթրապանտիստները³ բախում ունեցած են թուրք զինուորներու հետ եւ տեղի ունեցած են երկու կողմէն ալ սպանութիւններ: Թէ եւ դէպքը մասնակի է, բայց կը վախնանք որ կ'ընդհանրանայ եւ հայկական բնակչութիւնը չառնէ:

Նոր կազմուած դահլիճը չափազանց անզոյն է եւ անզօր. չի կրնար երկար տեւել եւ կ'իյնայ շուտով: Խորհրդարանը կը շարունակէ իր նիստերը, բայց Իթիթիստի կուսակցութեան վերաբերող անդամներուն մեծագոյն մասը բացակայ են, որովհետեւ մահուան սպառնալիքի տակ են: Ամբոխը քանդեց Իթիթիստի պիւնտն եւ «Շարայի Իւմմէյի» ու «Թանին» խմբագրատունները եւ թալանի տուլա անոնց իրեղէնները: Կը հաղորդենք ձեզի դէպքերու առած իրադարձութիւնները: Մենք կը մնանք փասիւ⁴ բայց հաշտարարի դերին մէջ կուսակցութեանց վերաբերմամբ, այս ճգնաժամի միջոցին արտայայտելով մեր համակրութիւնը Իթիթիստի, իբրեւ սահմանադրութեան կողմնակից

1.- Ֆրանսերէն՝ խուճապի:
2.- Ֆրանսերէն՝ յայտարարութիւն, կոչ:
3.- Ֆրանսերէն՝ մաքսանցանքները:
4.- Ֆրանսերէն՝ կրակարկան:

Ընկերական բարեկենսական
Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽ. ՄԱՐՄԻՆ

Փաստ. 193-73

Ա 2.- ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ԻԶՄԻՐԻ ԿՈՄԻՏԷԻՆ

Ապրիլ 7/20, 1909, Կ. Պոլիս

Հ.Յ.Դ. Իզմիրի կոմիտէին
Ընկերներ,

Անշուշտ մինչեւ հիմա տեղեկացած ըլլալու էք Ռուսիայի բանակը՝ որուն մէջ կը գտնուին պուլկար, յոյն, հրեայ եւ մասամբ հայ կամաւորներ, քայլ առ քայլ կը շրջապատէ Պոլիսը կամ աւելի ճիշդ՝ Երջուրը: Երկրի բազմաթիւ վայրերէն միջազգային եղբայրութեան ու հաւասարութեան սկզբունքով՝ կամաւորներ կը գինուորագրուին քալելու համար Պոլսոյ վրայ եւ մի անգամ ընդ միշտ հիմնայատակ կործանելու երշտրգեան բռնակալութիւնը:

Կարնոյ մեր ընկերները արդէն կ'իմացնեն թէ թուրք կամաւորներու հետ ճամբայ ելած են:

Մենք եւս հոս միջոցներ ձեռք առինք, որպէսզի Ռոստոսթոյի, Իզմիրի եւ Պոլսոյ շրջաններէն հայ կամաւորներ շուտով կազմակերպուին եւ միանան ազատական բանակին հետ:

Նոյն առաջարկը կ'ընենք եւ ձեզի: Չէ՞ք կրնար հայ թուրք-յոյն կամաւորներու լէգէոն մը հանել Իզմիրէն, վարձելով յատուկ նաւ մը եւ իջնելով Տէտէադա՝ միանալու արշաւող բանակին: Եւ եթէ հնարաւոր չէ միջազգային լէգէոնի մը կազմութիւնը, հայերը առանձնապէս չեն կրնար ձեռնարկել նոյն գործին, բան մը՝ որ անգամ մը եւս բարոյական մեծ կարեւորութիւն պիտի ունենար հայ ժողովուրդին համար: Օրինակ, որսորդական խումբը⁵ ինքը առանձինն՝ 50-100 հոգիով կրնար առնել այդ քայլը: Ուրիշ տեղեր արդէն կառավարութեան ազատական տարրը ինքը մատակարարած է կա-

մաւորներուն՝ զէնք եւ հարկաւոր պիտոյքներ. ի՞նչ է այդ տեղի զինուորական եւ քաղաքական իշխանութեանց դիրքը. չեն կրնար նոյնը ընել՝ ինչ որ ըրաւ Ռուսիան, Կարինը եւ ինչ որ կը պատրաստուին ընել Պոլսոսան, Իզմիրը, Ռոստոսթոն եւ այլ վայրեր:

Ձեր առանձին մասնակցութեան պահուելու ի հարկէ կամաւորներու պիտոյքները եւ նախնական ծախքերը կը հոգաք տեղական ընդհանուր հանգանակութեան մը միջոցով: Հարկաւոր չէ որ ամէնքն ալ ունենան կատարելագործուած զէնքեր. հակառակ պարագային, որսորդական հրացաններն ալ բաւական են: Անշուշտ, կը հոգաք որ մեր կամաւորները առանձին նշաններով յայտնի ըլլան ու աչքի գարնեն: Օրինակ, կարող են իրենց ուսերուն վրայ կրել կարմիր երիզներ՝ վրան ճերմակ գրերով մակագրութեամբ — հայ կամաւոր:

Եթէ արդէն գործի ձեռնարկէք եւ մեր առաջարկը յաջողութիւն գտնէ՝ հեռագրեցէք մեզի: Երբ միանակ հայ կամաւորներէ կազմուած ըլլայ կամաւորներու խումբը եւ միւս ազգութիւնները չուզեն մասնակցութիւն ունենալ՝ հեռագրեցէք — tout seul⁶. Իսկ երբ հաւաքական գոյն ստանայ ձեռնարկը՝ հեռագրեցէք tout ensemble⁷: Մեր հեռագրական հասցէն՝ Pera, Agnoui:

Ինչպէս կը թուի սուլթանին գահնկէցութիւնը վճռական է. թէ հարցը խաղաղ կերպով կամ կուռու՞ վ կը լուծուի, յայտնի չէ: Անշուշտ, նկատի կ'ունենաք նաեւ ձեր տեղական ինքնապաշտպանութեան պարագան ալ եւ առանձին ընկերներ կը պահէք հոս ռեզերվի մէջ՝ յատուկ այդ նպատակով: Երբ ձեր հաստատական պատասխանը առնենք, օրը օրին կը գրենք ձեզի նաեւ նոր տեղեկութիւններ եւ կարծիքներ[?]: Միայն, պէտք է շտապել եւ երկու երեք օրէն կամաւորները ճամբու դնել, որովհետեւ այս շաբթուան մէջ ամէն ինչ վճռական հանգամանք կ'առնէ: Երբ չկրնաք յաջողցնել ձեռնարկը՝ հեռագրեցէք — impossible⁸:

Ընկերական բարեկենսական
Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽ. ՄԱՐՄԻՆ

5.- Որսորդական անուրով խումբեր կազմուած էին քիչ մը անէն տեղ, երիտասարդութիւնը զէնքի գործածութեան վարժեցնելու նպատակով:
6.- Ֆրանսերէն՝ առանձին:
7.- Ֆրանսերէն՝ բոլորը միասին:
8.- Ֆրանսերէն՝ անկարելի:

Փաստ. 193-80

Ա 3.- ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽ. ՄԱՐՄՆԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

16/29 Ապրիլ 1909, Կ. Պոլիս

Արեւմտ. Բիւրոյի ընկերներուն

Աչքի առջեւ ունինք ձեր Մարտ 27 եւ Ապրիլ 13 թուակիրները:

Ժամանակին ստացած ենք Վարդանի, Արամայիսի եւ լն. կենսագրական նոթերը, ինչպէս նաեւ պաշտօնական փյանկները:

Ստացած ենք նոյնպէս 20 հատորը՝ եւ հեռագրով եւս տեղեկացուցած ձեզի մեր ստացումը: Այս հատորները պիտի յատկացնենք երկրի ինքնապաշտպանութեան գործին: Բայց նախ անցնինք կատարուած դէպքերուն, որոնք արդէն կը թուին հասած ըլլալ իրենց վերջակէտին:

Ինչպէս մեր նախորդ նամակով գրած էինք Մարտ 31-ի առաջտեան գինուորական եւ սոփիստական շարժումը պայթեցաւ յեղակարծօրէն, որը իր առաջին քայլին մէջ լոկ հակաիթիւստական բնաւորութիւն ունենալու հանգամանք ցոյց կու տար: Բայց, իրիկուան կողմը եւ միւս առաւօտուն սկսած գինուորական անիշխանութիւնը, տեղի ունեցած դիտումնաւոր ոճիրները, «Շէ՛րիաթ կ'ուզենք»ի աղաղակները, կրթուած սպաներու հալածանքն ու սպանութիւնները, խաֆիէներու վերերեւումը եւ այլ յարակից երեւոյթներ՝ կասկած չթողուցին թէ Պալատը⁹ կը գործէր իր բոլոր խորամանկ ուժով եւ այս բոլորը սաղրանքն էր ու հաքսիոն ուժի մը: Այսօր այլեւս յայտնի է թէ Պալատը օգտուած էր իթիւստի դէմ մղուած քաղաքական-կուսակցական պայքարէն եւ շահագործած ի նպաստ իրեն. այնպէս որ Ահ-րարի կամ այլ ընդդիմադիր տարրերու գործունէութեան եւ ունեւորներական շարժման միջեւ պարզ COINCIDENCE¹¹ մը կար միայն. Երլտըզը օգտուած էր առիթէն: Աւելին կայ, ինչպէս ենթադրել կու տան Ատանայի եւ Կիլիկիոյ ջարդերէն հասած արձագանգները, օրինակ՝ Իզմիրի մէջ սարքուած սոփիստական ու խաֆիէական դաւադրութիւնները, ընդհանուր փյան մը գործադրութեան դրուած է եղեր, մէկ կողմէն սահմանադրութեան սպառնալով Պոլսոյ մէջ, միւս կողմէն հայկական ջարդեր առաջ բերելով գաւառներուն մէջ:

Պարզ էր որ, իրողութիւնները իրենց գունաւորումը ստանալէ անմիջապէս ետք, մեր դիրքը պիտի ըլլար բացորոշ եւ վճռական: Պէտք էր որ կանգնէինք հալածական իթիւստի քովն ի վեր՝ պաշտպանելու համար սահմանադրութիւնը: Եւ որովհետեւ գիտէինք թէ միակ փրկարար պայմանը՝ նախ կուսակցական գինադադա-

րի մը անհրաժեշտութիւնն էր, փութացինք բոլոր կուսակցութիւնները եւ սահմանադրական տարրերը ժողովի մը հրաւիրել, գանոնք համերաշխութեան եւ գործակցութեան ենթարկելու: Մեր հրաւէրը ընդունուեցաւ շատ համակրութեամբ եւ ունեցանք երկու-երեք ժողովներ, որոնց մասնակցեցան նաեւ իթիւստի երեք ներկայացուցիչները:

Բայց դէպքերը արդէն իրարու կը յաջորդէին կայծակի արագութեամբ: Մակեդոնական բանակը հասած էր արդէն մէկ քանի օրուան ընթացքին Այ-Սթեֆանօ: Երեք ընկերներ փութացին բանակին մօտ, ուր կային նաեւ իթիւստեան պէյեր: Հոն եւս մեր կողմէն հարց դրուեցաւ անձնատուր չըլլալ փոխ-վրէժի, կուսակցական պայքարը առժամաբար մէկ կողմ դնել եւ վերջնականապէս պալատը մաքրել իր պարունակութենէն: Յատուկ դրութեամբ դիմում կատարեցինք նաեւ բանակի ընդհանուր հրամանատարին՝ հեռագրել գաւառներու եւ յատկապէս Կիլիկիոյ գինուորական իշխանութեանց ապահովելու եւ պահպանելու հայ բնակչութեան կեանքն ու կեցութիւնը: Պէտք է ըսել որ թէ՛ իթիւստը եւ թէ՛ բանակի բոլոր վարիչները ցոյց տուին Դաշնակցութեան նկատմամբ վերին աստիճանի համակրական վստահութիւն: Սկիզբէն մինչեւ վերջը եղան մեզի հետ յարաբերութեան մէջ, այլեւայլ խնդիրներու մասին առաջարկութիւններ ներկայացուցին, իսկ երբ արդէն բանակը մտաւ Պոլիս՝ Դաշնակցութեան յանձնարարագիրները կը ծառայեն իբրեւ քարթ-պլան¹²: Ներս մտնող բանակը սքանչելի ծրագրով մը կրցաւ յաջողցնել իր վրայ դրուած պարտականութիւնը: Վերջին օրերուն արդէն ջարդի երկիւղը երթալէ վերահաս ու տեսանելի կը դառնար. գունդերը կը համախմբուէին ու թուրք տարրին դիրքը արդէն գործունէութեան մէջ էր. քանի՛ քանի՛ անգամ մեր դիմումներուն վրայ՝ Պետերխանգատէները վազեցին Պոլսոյ այլեւայլ արուարձանները, յորդորելու այդ յուղկահարները¹³՝ ետ կենալու թալանի փորձերէ: Մեր ունեցած ինքնապաշտպանողական բոլոր միջոցները դրած էինք գործածութեան. տղերքը իւրաքանչիւր թաղի մէջ կը հսկէին իրենց դիրքերուն վրայ եւ տեղ տեղ կազմակերպած էինք գիշերային պահակներ:

Արդէն Պոլսոյ թերթերէն իմացած կ'ըլլաք մտնող

9.- Այսինքն հազար. 20 հատոր՝ 20.000 ֆրանք:
10.- Այստեղ՝ Սուլթան Յամիտ:
11.- Ֆրանսերէն՝ զուգադիպութիւն:
12.- Ֆրանսերէն՝ արտօնագիր, անցման տոմս իմաստով:
13.- Աւազակները:

բանակին եւ կարնիզոններուն¹⁴ կռիւի մանրամասնութիւնները. քաղաքը գրեթէ մինչեւ իրիկուն դարձաւ ճակատամարտի թատր, մինչեւ որ բոլոր գորանոցները մէկիկ մէկիկ ընկճուեցան եւ յանձնուեցան:

Պալատը պաշարուած մնաց մէկ երկու օր, եւս եւ անօթութենէ ու ծարաւէ հարկադրուած, ինչպէս նաեւ կայսերապահ գորքերուն désorganisation-էն¹⁵ եւ դասալքութենէն ճնշուած՝ եղաւ անձնատուր: Երէկ չէ առջի օր՝ Ազգային ժողովի (chambre եւ senat)¹⁶ որոշումով, մէկ պատգամաւորութիւն ներկայացաւ Համիտին՝ յայտարարելու իր գահընկէցութիւնը, ուրիշ պատգամաւորութիւն մըն ալ՝ գահաժառանգ Ռեշատին, յայտնելու իր գահակալութիւնը:

Երէկ գիշեր կարմիր գագանը յատուկ կառախումբով տարուեցաւ Սելանիկ, ուր հաւանականաբար պիտի ենթարկուի դատի: Յայտնի չէ իթիւստի տրամադրութիւնը՝ անոր կեանքի պահպանութեանը մասին: Իր սիրական տղան՝ Պուրհանէտինը, որ մեծագոյն դեկավարը կը թուի հանդիսացած ըլլալ վերջին հակասահմանադրական շարժման մէջ, կ'ըսուի որ փախած է Քորֆու:

Ձինուորական ատեանը կը գործէր գնահատելի ուղղութեամբ. անխնայ կը ձերբակալուին բոլոր ունեւորները ու կասկածելի տարրերը: Յաւալի է որ, հակառակ ամէն կողմէ, ինչպէս եւ մեր կողմէ իթիւստի տրուած խորհուրդներուն, դարձեալ նոյն կուսակցութիւնը գործեց մէկ քանի աններելի սխալներ, ձերբակալելով ահարարականներ, մանաւանդ Սապահէտտինը՝ որ երբեք մասնակցութիւն չէր կրնար ունենալ նման զգուցելի դաւադրութեան մը մէջ: Իր ձերբակալումէն անմիջապէս ետք՝ եկան լուր տալու մեզի, որպէսզի միջամտենք ի նպաստ իրեն: Կատարեցինք երկու անգամ դիմում եւ տեղի ունինք ենթադրելու որ բոլորովին ապարդիւն չանցան մեր դիմումները: Երէկ իրիկուն ուշ ատեն ազատ արձակուած էր: Այս հարցը իր մասնակի բնութենէն դուրս ունէր աւելի ընդհանուր հանգամանք, որովհետեւ եթէ այսպէս իթիւստը ձեռք առնէր նորէն իր նեղ կուսակցական յիմար ուղղութիւնը, պիտի ստեղծէր ծանր վիճակ մը եւ կուսակցական աղիտաբեր պայքարի նոր դարագլուխ:

Նոր քապիւնէն¹⁷ կազմուած չէ դեռ. դժուար է ենթադրութիւններ ընել, բայց յայտնի է որ կազմուած պիտի ըլլայ մեծ մասով իթիւստականներէ. ցաւը հոն է որ մէջտեղը ուրիշ կարող անձնաւորութիւններ ալ չկան:

Աւելցնենք տակաւին որ աշխատեցանք նոյն օրերուն շրջակայ գաւառներուն մէջ կազմակերպել ազգային պահակներ. պէտք է ըսել որ տեղ տեղ իթիւստականներ՝ միացած տեղական իշխանութեան, իրենք դիմում ըրած էին մեզի: Այսպէս Իզմիրի եւ Պաղչէճիկի¹⁸ շրջաններէն կազմակերպեցինք մօտ 270 հօգիի չափ հայ-

կական կամաւորներ, որոնց հագուստն ու գէնքերը հոգացուեցան պետական միջոցներով եւ դրկուեցան տրուելու Անատոլուի երկաթուղային գիծը, դասալիք գինուորներուն անցքը փակելու համար: Մեծ քանակութեամբ դասալիք գինուորներ ու սոփիստներ անցած են ներսերը, որոնք անտարակոյս պիտի դառնան աւագակներ ու ասպատակներ: Կառավարութիւնը միջոցներ ձեռք առած է մեկուսացնելու գանոնք: Ռոտոսթոյի մէջ եւս 55-ի չափ կամաւորներ արձանագրուեցան մեր տղոցմէ, որոնք սպաներու հսկողութեան տակ վարժութիւններ կ'ընեն մինչեւ այսօր. ուշ ըլլալով, ասոնք չկրցան մասնակցիլ բանակին շարժման:

Մեծ Հայաստանէն մեր ստացած հեռագիրները ցոյց կու տան որ ոչինչ վտանգ չկայ. միայն Նարբերդէն ստացուած հեռագիր մը կը յայտնէ թէ «մտքերը պղտորած են եւ ընդհանուր երկիւղ կը տիրէ»: Սակայն, կը կարծենք որ Պոլսոյ մէջ ստեղծուած նոր կացութեան լուրերը ներսերը հասնելէն ետք՝ երկիւղներ կը փարատին:

Օրը օրին հեռագրով իրագել պահած ենք երկրի գլխաւոր մարմինները՝ Պոլսոյ անցքերուն: Կարնոյ մէջ միայն հակա-իթիւստական եւ ունեւորներէն շարժում մը պայթած էր, բայց կ'երեւի չէր կրցած ծաւալիլ, որովհետեւ հոս դէպքերը չափազանց արագ կը յաջորդէին իրարու:

Ատանայի եւ Կիլիկիոյ ջարդերուն նկատմամբ մինչեւ այսօր ալ մանրամասնութիւնները կ'ուշանան հասնիլ, անշուշտ մէկ կողմէն ստեղծուած ահաբեկի կացութեան եւ միւս կողմէն՝ փոստի ու հեռագրի յատուկ կամայական կարգադրութեանց պատճառով: Այսօր շատ ստոյգ աղբիւրէ կրցանք իմանալ թէ կոտորածը կարծուածէն աւելի ահաւոր հանգամանք ունի. ումանք գոհեցու թիւը կը հասցնեն մինչեւ 20.000-ի. փոքրամասնութիւն կազմող վայրերու մէջ՝ հայերը ամբողջովին ոչնչացած են: Սկիզբէն Ատանայի մէջ հայերը ցոյց տուած են երկու օրի չափ մեծ ընդդիմութիւն. սակայն ետքէն միջամտած է կանոնաւոր զօրքն ու ռետիֆը¹⁹ եւ գործած է, ինչպէս կը վկայէ ականատես Ֆրանսագի երկրաչափ մը, անլուր գագանութիւն: Ատանայի վայրի կը յայտարարէ եղեր որ իրենք ջարդը կազմակերպած են իթիւստի հրահանգով: Թէ ո՞րքան հիմ ունի այս յայտարարութիւնը, քննութիւնները ցոյց պիտի տան վաղը, բայց սա ստոյգ է որ ջարդը կազմակերպուած է սիստեմաթիք կերպով: Կը մտածենք յատուկ մարմին մը ու-

14.- Ֆրանսերէն՝ պահակագօրք, կայագօրք, զօրանոց:
15.- Ֆրանսերէն՝ կազմալուծութիւն, անկազմակերպութիւն:
16.- Ֆրանսերէն՝ խորհրդարան եւ Ծերակոյտ:
17.- Ֆրանսերէն՝ դահլիճ, կառավարութիւն:
18.- Նիկոմեդիոյ նահանգի հայաբնակ աւաններ: Պաղչէճիկը հայկական Պարտիզակն է:
19.- Ռետիֆ՝ պահեստի զինուոր:

դարկել Ատանա եւ Չարդի այլ վայրերը՝ կազմուած վի-
րաբոյժներէ, բժիշկներէ եւայլն: Երեսփոխան ընկերնե-
րը հարց պիտի դնեն Համիտի դրամներէն օգնութեան
հասնիլ արկածեալներուն եւ յատուկ զինուորական
ատեան մը դրկել նաեւ Պոլիսէն, յանցաւորները ենթար-
կելու խիստ պատիժի:

Իզմիրի կոմիտէն 300 ոսկի պահանջած է մեզմէ՝ տե-
ղական ինխնապաշտպանութեան համար, յայտարարե-
լով որ հակառակ պարագային ամէն պատասխանա-
տուութիւն մեր վրայ կը թողու: Չենք գիտեր թէ ինչո՞ւ
այս դիմումը մեզի կ'ըլլայ եւ այսքան խիստ կերպով: Կը
խնդրենք դուք մտէք բանակցութեան մէջ եւ հարկ եղա-
ծը տնօրինեցէք:

Վերջին պահուն, երբ այս տողերը կը գրենք, ստա-
ցանք երկու հեռագիր, մէկը՝ Իզմիրի մեր ընկերներէն,
միւսը՝ Աղեքսանդրիայէն՝ Ատանայի առաջնորդ Մու-
շեղ եպիսկոպոսէն, որոնք կը գուժեն թէ Ատանայի մէջ
Չարդերը վերակրկնուած են եւ արկածեալ հայերու մի-
ակ ապաստանարան եղող հայոց եկեղեցին ու դպրոցն
ալ հրդեհուած են, իսկ ամբոխն ու Հալէպի զօրքը Չար-
դած են ժողովուրդը: Այս յուսահատական դրութեան

20.- Գարցը կը վերաբերի «Ազատամարտ»ին, որուն առա-
ջին համարը լոյս տեսաւ 10/23 Յունիս 1909ին:

առջեւ չենք գիտեր թէ ո՞րն է ազդու միջոցը՝ որուն դի-
մենք: Վաղը խորհրդարանին պիտի ուղղուի հարցա-
պնդում, բայց խնդիրը հոն է որ կեդրոնի կառավարու-
թիւնը, ինչպէս պարզ կ'երեւի, իր ազդեցութիւնը չի
կրնար զգացնել ներսերը, թէեւ մակեդոնական բանա-
կէն քանի մը վաչտ ճամբայ հանուած է դէպի Ատանա:

Մեր հրապարակելիք թերթին²⁰ նկատմամբ ձեր տա-
րակարծութիւնը աւելի քան զարմանալի կը թուի մեզի,
քանի որ այդ խնդիրը առաջին օրէն իսկ վճռուած էր
սկզբունքով եւ ամէնէն աւելի դուք ու Արեւելեան (Բիւ-
րոյ)ի ընկերներն էիք հրատարակութեան կողմնակիցը:
Ուրիշ տեղ գործուած սխալները միթէ՞՞ բաւական գօ-
րաւոր պատճառներ են՝ որ կաշկանդուինք ու երկրի
բոլոր կողմերէն ստիպողաբար եղած պահանջին բաւա-
րարութիւն չտանք: Ձեր բոլոր առարկութիւնները կը-
ռադատելէ ետքն էր որ այս տեղի ընկերները տուին
հրատարակութեան որոշումը, նկատելով ժամանակը
արդէն հասած, որովհետեւ փորձը ցոյց տուաւ թէ մեր
ընկերներու կողմէ տեղական թերթերու մէջ աշխա-
տակցութիւնը երբեք ցանկալի արդիւնք չ'ունենար:

Ընկերական բարեւներով՝
Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽ. ՄԱՐՄԻՆ

Փաստ. 57-111

Ա 4.- ՆԱՄԱԿ ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽ. ՄԱՐՄԻՆ

17 Մայիս 1909

Կ. Պոլսոյ Պատասխանատու մարմինին
Ընկերներն,

Կոտորածի ծաւալի մասին այսօր ձեզնից ստացած
հեռագիրը բաւական լաւատես է. — դժբախտաբար քիչ
հաւատ ներշնչող: Պէտք է աշխատիլ ըստ կարելոյն
ճշդիւ ստուգելու եւրոպական մամուլին տեղեկութիւն-
ները պէտք է տրուին նաեւ մեր սեփական աղբիւրնե-
րից, որովհետեւ ամէն տեսակ ծախու, ցածհոգի գրչակ-
ներ դարձեալ սկսում են թունաւորել միջոցառողը հայ-
կական «պրովասիոններ»ի, «սեպարատիզմի» եւ այլ ին-
սինուալիաների աղաղակներով²¹:

Հասարակական կարծիքը դիւրութեամբ չի յուզ-
ուում: Մեր մօտիկ բարեկամների մէջ անգամ նկատոււմ
է մի տեսակ պաղութիւն դէպի մեզ: Ամէնքն էլ հակ-
ւած են պաշտպանելու Իթթիհատին եւ մեղադրելու հա-
յերին, — մեղադրելու՝ մանաւանդ Ահարների հետ դաշ-
նակցելու եւ ապրիլեան contre-coup-ին²² անուղղակի
նպաստելու առթիւ: Ժօռէսի²³ երկու յօդուածների ի-
մաստն այդ էր:

Berliner Tageblatt ու այլ օրգաններ իրենց թղթաց-
կիցների բերնով վկայում են, որ նախքան Չարդը՝ Ատա-
նայում հայ երիտասարդութեան բռնած դիրքը անորա-
կելի էր, գրգռիչ, ամբարտաւան, ինքնապաստան:

Այդ վկայութիւնը, տարաբախտաբար, այսօր չըջան
է անում մամուլի մէջ, տարածոււմ է: Անշուշտ, շատ
չատերը հաւատում են եւ եթէ չեն կարող արդարացնել
կոտորածը, գէթ փաստաբանում են «մեղմացուցիչ
հանգամանքներ»:

Ահա այդ փաստի վրայ ձեր ուշադրութիւնն ենք հը-
րաւիրում, ընկերներ: Հաւատացէք, միայն անամօթ
գրչակներ չեն այդ տեսակ շշուկների տարածողը, այլ
երբեմն նաեւ bonne foi-ի²⁴ մարդիկ: Հայ յեղափոխա-
կան երիտասարդութեան այդ գրգռիչ bravade-ի²⁵ առ-
թիւ գրւում էր եւ Չարդերից առաջ, գրւում էր Հայաս-
տանի ուրիշ վայրերից: Արդեօք այդ բոլորը լոկ չարա-
միտ ինսինուալիաներ են, թէ՞ գուցէ յիրաւի տեղիք կայ
զանգատուելու նաեւ մեր գործող երիտասարդներից,
թէ՞ գուցէ նա չի կատարում լիովին իր պարտականու-
թիւնները՝ համերաշխութեան պրովագանդի վերաբեր-
մամբ, հարեւան ազգութիւնների հանդէպ...

Չպէտք է տալ թուրք կառավարութեանը, Եւրոպա-
յին, մեր հակառակորդներին ու բարեկամներին,

չպէտք է տալ նրանց՝ անգամ «մեղմացուցիչ պարագա-
ներ» փաստաբանելու հնարաւորութիւն: Չպէտք է
տրուի Չարդարարներին եւ ոչ մի «պատրուակ»: Ահա
թէ ինչու պաշտօնական քննութեան հետ միասին մեզ
կարեւոր է թւում ներքին անպաշտօն քննութիւն: Եւ
եթէ կուսակցութիւնը նկատում է, որ գործիչները փո-
խանակ անկեղծօրէն համերաշխութեան քարոզ մղելու
— որ մեր միակ փրկութիւնն է այդ դժոխային cercle vi-
cieux-ից²⁶ [դուրս գալու] — տեղ-տեղ, ընդհակառակը,
միանում են շովինիստական աղիտաբեր հոսանքներին,
ապա պէտք է սանձել տաքազլուխներին:

Աղէտների բուն պատճառները ուրացողը չենք, բայց
հարկ էր, այնուամենայնիւ, լրջօրէն անդրադառնալ
մեր ընդհանուր տակտիկի վրայ — սկսած Վանից մինչեւ
Ատանա — վերաքննել մեր խմբերի առօրեայ գործելա-
կերպը, սկսած Յուլիսեան յեղափոխութեան²⁷ օրերից,
գուցէ «պատասխանատուութեան» մի փոքրիկ բաժինը,
թէկուզ նրա հարիւրերորդ մասը, մեզ վերագրելու տը-
խուր հարկի մէջ գտնուինք:

Կրկնում ենք, օտարների տարածած վարկաբեկող
լուրերը հայերի մասին սովորաբար լինում են ինսի-
նուալիաներ: Բայց մենք չենք կարող en bloc ինսինուա-
ցիա հրատարակել այն ամէնը, ինչ գրում ու տարած-
ւում է հայ կոմիտէների ու յեղափոխական երիտասար-
դութեան դէմ:

Հայ յեղափո- երիտասարդութեան գրգռիչ ու ամբար-
տաւան ընթացքն է շեշտում եւ [էնով[ուր] Ֆավրը²⁸ Սը-
վագից Journal de Gen[ève]ին գրած իր թղթակցութեան
մէջ:

Այդ գրածների մէջ, անկասկած, կայ ճշմարտու-
թեան բաժին: Յեղափոխական անմիտ bravade-ը մեր

21.- Պրովակացիոն գրգռութիւն. սեպարատիզմ անջատու-
ղականութիւն. ինսինուալիա՝ չարամիտ ակնարկութիւն,
գրպարտութիւն:
22.- Ֆրանսերէն՝ հակահարուած. ակնարկութիւն սահմա-
նադրական կարգերը տապալելու Սուլթան Գամիտ Բ.ի փոր-
ձի:
23.- Ժան Ժօրէս՝ ֆրանսացի հանրածանօթ քաղաքական
դէմք, ընկերվարական կուսակցութեան առաջնորդ:
24.- Ուղղամիտ, անկեղծ:
25.- Ֆրանսերէն՝ յիստորիան:
26.- Ասացուածք՝ փակուղի տանող անմիտ տրամաբանու-
թիւն իմաստով:
27.- 1908 Յուլիսի Օսմանեան սահմանադրութեան հռչա-
կումն:
28.- Լեոփոլդ Ֆավր՝ գուիցերիացի մտաւորական, հայաստը
անճանաչութիւն:

տունը կը քանդի — մի այնպիսի միջավայրում, ուր շրջապատում ենք այնքան ահաբեկիչ հակառակորդներով, ուր իւրաքանչիւր մի անտակտ ժեստը կարող է տեղի տալ վտանգաւոր թիրախացութիւնների եւ որ մենք իրօք մի խղճալի ոյժ ենք, անզօր հոգալու մեր ինքնապաշտպանութիւնը:

Եւ Հէնց այդ վերջին հարցն է ամենացաւոտը, որ այսօր զբաղեցնում է մեզ բոլորիս: Մտածելն անգամ գարհուրելի է, թէ ահա միւս շրջաններում եւս աղէտը կը պայթի եւ ժողովուրդը կը յայտնուի մօտաւորապէս նոյն անօգնական վիճակում, ինչպէս 1895-98ի օրերին... Եւ ամբողջ հայութիւնը հետաքրքրող մեծագոյն հարցը այսօր այն է՝ թէ ի՞նչ արեց յեղափոխութեան տեսակէտից: Եթէ նա այդ մեծ հարցին նուիրէր գէթ կէսը այն եռանդի, որ նա գործադրել է միտինգային ու խօսելական պրոպագանդին — դարձեալ գոհ պիտի մնանք: Եթէ անտարբեր է գտնուել — կամ համարեալ — դէպի այդ սարսափելի հարցը, եթէ մեր բոլոր մարմինները անհող ու թեթեւ օպտիմիզմով տարուած՝ ինքնապաշտպանութեան պահանջի մակերեւոյթից են անցել, — ապա մենք պարզապէս ոճիր ենք գործել ժողովրդի դէմ:

Խնդրում ենք թախանձանօք՝ հաղորդել մեզ՝ որքա՞ն տրամադրելի միջոց կայ մայրաքաղաքի ու գաւառների ինքնապաշտպանութեան համար: Որքան էլ կենտրոնական կառավարութիւնը հանգստացնէ մեզ — վտանգը չէ վերացած, ջարդի սպառնալիքը դեռ կայ:

Նոր կառավարութիւնը հարկ է տեսել արդարանալու նաեւ մեր առջեւ: Երէկ տեղիս թուրք հիւպատոսը եկաւ մեզ մօտ խմբագրատուն Կ. Պոլսի կառավարութեան հրահանգով եւ յանձնեց մեզ ներքին գործոց միտնտրի գրաւոր բացատրութիւնները Ատանայի դէպքերի եւ մեր ուղղած բողոք-հեռագրի առթիւ: Ինչպէս գիտէք, պարլամենտի յայտնի աղմկալի նիստի մասին լուր առնելով, մենք հեռագրով բողոքել էինք՝ դէպքերը հայ յեղափոխականներին վերագրելու դէմ:

Թիֆլիսի փաշան երկար մի գրութեան մէջ հերքում է մեր բողոքի կէտերը, ասելով որ իր département-ը չի տակնութեամբ կատարել է իր պարտականութիւնները, որ ջարդի մէջ երբեք չեն մեղադրում հայերին, որ զօրքը տարաբախտաբար ուշ է հասել — տարածութեան պատճառով —, դրա համար եւ կոտորածը շուտ չի կանգ առել, որ հրահանգուած է ամենախիստ քննութիւն եւայլն, եւայլն:

Այդ գրութեանը երեւի մենք կը պատասխանենք: Վճռական կերպով հերքում է եւ այն՝ որ իբր Պոլսից հեռագրուած է եղել «épargnez les européens»:

Դժբախտաբար դուք մինչեւ օրս մեզ չգրեցիք Մայիս 1-ի նիստի ու վարդապետ-Ջօհրաբեան հարցապնդման մասին: Դուք ի վիճակի էք բոլորը ստոյգ իմանալու եւ

մեզ տեղեկագրելու, որպէսզի շահագործենք: Որքա՞ն կարեւոր են այժմ՝ այդ տեղեկութիւնները, երբ գրեթէ ամէն օր դիմումներ ենք անում այս կամ այն տեղ: Փաստեր պէտք է ունենանք: Դրա տեղ՝ յաճախ հեռագիրներ ենք ստանում, որոնք հաղորդում են մեզ վաղուց ծանօթ բաներ, կամ անկարեւոր, երկրորդական արժէք ունեցող իրողութիւններ: Ձեր հաղորդած հեռագրալուրերը սովորաբար գտնում ենք թերթերի մէջ — եւ աւելի վաղ:

Ոչինչ, կամ համարեալ ոչինչ չգիտենք եւ այն յարաբերութիւնների մասին, որ ամիսներից ի վեր դուք վարել էք տեղական կուսակցութիւնների հետ:

Ձեր գիտցածը գրեցէք նամակներով, երկար ու փաստօրէն: Ընդհանուր ու պարզապիտոյքով, հարայ-հրոցով չենք կարողանում յուզել հասարակական կարծիքը: Բարեբախտութիւն էր որ գոնէ Cochin-ը²⁹ խօսեց, մեր մի հեռագրական դիմումի վրայ: Ֆրանսիական Chambre-ի [խորհրդարանի]: Այդ փոքրիկ հարցապնդումի մասին կը կարդաք Temps-ի մէջ: Ժօրէսի միջամտութիւնը ընդհանրապէս թուլացրեց Cochin-ի ճառի հետեւանք-տպաւորութիւնը: Ժօրէս այստեղ եւս հաւատարիմ մնաց իր տակտիկին — ինչպէս իթթիհատի վարկը, հաւատալ նրան: Յամենայնդէպս, այդ հարցապնդումը իր որոշ օգուտը կ'ունենայ:

Մի քանի անգամ ուժգին դիմումներ ենք արել եւ Լոնտոնի մեր բարեկամ Լինչին³⁰, խնդրել ենք՝ հարցապնդում անել: Իր սովորութեան հակառակ՝ անպատասխանի թողեց մեր դիմումները: Նա եւս անշուշտ խնայում է Երիտ(ասարդ) Թուրքիային:

Միւս կողմից մեր մի նոր բարեկամ սենատոր Bérard³¹ հեռագրում է մեզ, որ անձնական տեսակցութեան միջոցին Պիշոն³² ասել է իրան, թէ մեր ցանկութեան համաձայն իր՝ միտնտրի կողմից արուած են Կ. Պոլսում ուժեղ ազդարարութիւններ:

Ահա ձեր նոր հեռագիրն է գալիս, թէ Ատանայի վալին հայերին է մեղադրում եւ հրահանգում էք դիմումներ անել: Վերջին տասն օրուայ մեր դիմումները Հէնց այդ չարաբաստիկ ինսինուացիաների շուրջն է: Էլ նոր ի՞նչ ասենք:

Եւրոպան սպասում է Ատանա ղրկուած քննութեան հետեւանքին: Au courant³³ եղէք եւ թէ կարող էք օրը օրին տեղեկացրէք մեզ այդ քննութեան ընթացքի մասին:

Եթէ հնարաւոր լինէր ձեռք ձգել Ատիլ բէյի տիրա-

29.- Ֆրանսայի Ազգ. խորհրդարանի պատգամաւոր, հայաստանի անձնաւորութիւն:
30.- Դեմի լիմէ՝ Մեծն Բրիտանիոյ Գաղափարներու պալատի անդամ:
31.- Վիկտոր Պերար՝ Դաշնակցութեան համակիր, ֆրանսացի քաղաքական ծանօթ անձնաւորութիւն:
32.- Ֆրանսայի արտաքին գործոց նախարար:
33.- Ֆրանսերէն՝ տեղեկ, իրագել:

հնչակ հեռագիրը... դա շատ կ'օգնէր³⁴:

Մենք «ալարմը» կը շարունակենք, դուք միայն նիւթ տուէք:

Բայց մանաւանդ գաւառների ինքնապաշտպանութեանը զուտ տուէք եւ, ի սէր գործի, մեր ղրկած վերջին գումարին (20 հազար) ուրիշ գործադրութիւն մի տաք: Թերթի կամ այլ նպատակների եթէ յանձնէք, հակառակ ձեր խոստման, — կը բողոքենք բոլոր ուժով: Կազմակերպութիւնը շուտով կը յայտնուի դրամական կրիզի մէջ եւ գումարները պէտք է ծախսել ծայրայեղ զգուշութեամբ եւ ամենաստիպողական անհրաժեշտութեան դէպքերում:

Վերջին 20 հատորը՝ ղրկեցինք հաւատարմով, որ պահանջում էք ինքնապաշտպանութեան նպատակին գործադրելու, եւ ղրկեցինք միայն այդ պայմանով: Յոյս ունենք, որ այդ եւ ուրիշ պահանջները կատարուել են ամբողջ Պատ. մարմնի կողմից, այսինքն տեղը գրտնուող մեր այլեւայլ մարմինների ներկայացուցիչների միահամուռ ցանկութեամբ: Եթէ դրամը վերոյիշեալ նպատակին չծառայեցնէք, կը խնդրէինք յետ ղրկել:

Ձեռք կ'սկսածում, որ թերթի հրատարակութեան խնդիրը պիտի յետաձգէք մինչեւ Ը[նդհանուր] Ժ[ողոք]

34.- Ատիլ բէյը խորհրդականն էր Թուրքիոյ ներքին գործոց նախարարին. ինք էր հեղինակը ակնարկուած այն «տիրապետչակ հեռագրին», որով Ատանայի վալիին կը հրահանգուէր. — «Մեծագոյն ուշադրութեամբ պէտք է հոգ տարուի, որ վնաս չհասնի օտար կրօնական հաստատութիւններուն եւ հիւպատոսարաններուն»:

35.- Ժողովարարութիւն կը գործածուէր հանգանակութիւն իմաստով:

վր: Ֆրանսերէն թերթի համար անպայման մեծ պահանջ կայ այս ծանր ժամանակներում, կամ թէկուզ թուրքերէնի: Այդ էր, որ պէտք էր գլուխ բերել: Եթէ այդ չենք կարող, — հայերէն օրգանը, որքան էլ նա գուշակուր[?] լինի, չի կարող արդարացնել այն ահագին ծախքերը, որ կազմակերպութիւնը պէտք է անի:

Ձեռք կարողանում բացատրել մեզ, թէ ինչո՞ւ գէթ այժմ չէք ուզում դիմել ժողովարարութեան՝³⁵ ձեր շրջանում: Մինչեւ օրս չձեռնարկեցիք, հակառակ մեր այնքան թախանձանքներին. այժմ էլ, երբ յայտնուած ենք ժողովրդի հետ ամենավտանգաւոր վայրկեաններից մէկումը եւ երբ ժողովարարութիւնը դառնում է հրամայական պահանջ — դուք դարձեալ տեղիս միջոցներից էք վերցնում: Այդ առթիւ բողոք ենք ստացել, եւ երկու մարմնից:

Ը[նդհանուր] Ժ[ողոք]ի գումարելու մասին վաղուց գրուած է ձեռք: Պատասխան չունինք. բայց անվերջ ձգուած գել չի լինի, դժգոհութիւններ սկսում են տեղալ եւ այդ առթիւ: Աշխատեցէք, որ գումարուի գոնէ Յուլիսի վերջերին:

Թուրքիայի եւ Կովկասի վերջին անցքերից յետոյ (մասսային բանտարկութիւններ, հակադաշնակցական անօրինակ արշաւանք) — անտարակոյս, կանգնած ենք լուրջ կրիզի առաջ, ոչ միայն արտաքին, այլեւ ներքին, կազմակերպական: Աշխատելու ենք միաբան կերպով հարթելու ծանր կնճիռները եւ դնելու կազմակերպութիւնը մոմենտի բարձրութեան վրայ:

Ընկերական ջերմ ողջոյններով՝ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Փաստ. 1146-42

Ա 5.- ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ Հ.Յ.Դ. ՊԱԼՔ. ՇՐՋԱՆԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ

Ընկերներ,

Նախորդ ամսուայ ընթացքին Թուրքիոյ մէջ յայտնուած հակասահմանադրական շարժումներուն անակընկալօրէն զուգորդուած հայկական ցաւալի կոտորածները Կիլիկիոյ շրջանին մէջ — սադրուած Երյտրզի եւ անոր գործակալներուն կողմէ — յայտնի է որ արտակարգ յուզման մը ենթարկած են մեր հասարակութեան զանազան շրջաններուն հետ եւ մեր ընկերական զանազան խաւերը:

Ստոյգ է որ Կիլիկիոյ եւ Ատանայի աղէտին շուրջը հրապարակուած տեղեկութիւնները թէեւ չափազանցուած, բայց խիստ ծանր ու ճշիւ են: Սակայն նոյնքան ստոյգ է որ Պալքանի մէջ տեղ տեղ մեր ընկերները ի յայտ չբերին պահանջուած կորուստ ու իրականութեան ճշգրիտ ըմբռնումը՝ նոյն ոգով ալ առաջնորդելու համար հասարակութիւնը եւ կամ փարատելու համար առաջացած թիւրիմացութիւնները: Նոյնքան ստոյգ է նաեւ որ տեղի ունեցած ցաւալի պատահարները եկան աւելորդ անգամ մըն ալ խարանելու այն սխալ ըմբռնումն ու թուրութիւնը՝ որուն անձնատուր եղան մեր ընկերական զանազան խաւերը սահմանադրութենէն յետոյ, հակառակ մեր հրապարակային թէ ներքին պրոպագանտին: Ըսինք ու կրկնեցինք որ Սահմանադրութեան յայտարարութեամբ Թուրքիան կը մտնէր յեղափոխական նոր փուլի մը մէջ, ի անակնկալներով, յի ապագայ փոթորիկներով, որոնց դիմագրաւելու համար պէտք է պատրաստ ըլլալ եւ մնալ դիրքերուն վրայ՝ խտացուած շարքերով եւ անձնագոհ, ինքնավստահ պատրաստակամութեամբ: Ու հետեւաբար, նման պատահարներու պահուն՝ շարքերը պէտք չէ որ կորսնցնէին նաեւ իրենց սառնութիւնը, իրականութեան ճշգրիտ վերլուծութիւնն ընելու ընդունակութիւնը՝ մնալու համար առաջնորդողի դերին մէջ:

Ամբոխը, որ միշտ օրուան տպաւորութիւններու տակ գիտէ շատ դիւրաւ այրել երէկուան պաշտածը եւ գիտէ միշտ պահանջել՝ առանց երբեք այդ պահանջին իրականացման համար իր օժանդակութեանը համապատասխան բաժինը բերելու, յայտնուած իրողութեան երեւութական ազդեցութեան տակ կը քննադատէ քննադատութիւն՝ որ խճճածանքի եւ բամբասանքի համարժէք է: Եւ սակայն այդ քննադատութիւն-բամբասանքները ոչ մէկ տրամաբանութեան եւ թոյլ պատասխանի կրնան դիմանալ եւ մեր ընկերները շատ դիւրաւ կրնան ուղղել տրամադրութիւնը՝ ցորչափ պակսի մեզ

հրապարակով արտայայտուելու միջոցները:

Այն պահուն, երբ հակասահմանադրական եւ յետադիմական տարրերն ու պաշտօնեաները ամէն հրէշային ջանք կը թափեն ջարդերուն իբրեւ շարժառիթ մատնանշելու հայ յեղափոխականները եւ այդ ուղղութեամբ գրգռելու մոլեռանդ ամբոխը, քաղաքագիտական եւ հեռատեսական սխալ մը պիտի ըլլար ի հարկէ, լոկ հայ ժողովուրդին անգիտակից, խճճոող եւ յուսահատող մասը համոզելու համար, ելլել հրապարակել ինքնապաշտպանութեան այն գեղեցիկ ու գովելի ջանքերը՝ զորս ի յայտ բերաւ Դաշնակցութիւնը Կիլիկիոյ շրջանին, մասնաւորապէս Ատանայի մէջ, թողլով այն պարագան, որ ռեկլամային գործունէութիւնը միշտ ատուած է Դաշնակցութենէն: Ատանայի մէջ ինքնապաշտպանութիւնը առաջին յարձակման պահուն եղած է կատարեալ. այնպէս որ այդ առաջին երեք օրերուն յարձակող խուժանին կորուստը կը հասցնեն 1000ի. մեր ընկերներէն Ս.ի տունը եղած է ամենաուժեղ մարտկոցներէն մէկը եւ առաջին մէկ երկու օրուան այդ կռիւր բացայայտ յաղթութիւն մըն է եղած մերիններուն: Չորս օր ետքը Տէտէ Աղաճէն գացած զօրքն է որ կրակ կու տայ հայոց թաղին եւ կը կատարէ զազանութեանց զարհուրելին: Եւ ասիկա տեսակ մը վրէժխնդրութիւն հայերու աննման ինքնապաշտպանութեան: Չոք-Մարգուան, Մարաշ եւ ուրիշ կէտերու վրայ նոյնպէս շատ բուռն եղած է ինքնապաշտպանութիւնը, որու շնորհիւ յաջողած են խուսափիլ ջարդերէ եւ դիմադրած օրերով: Գիւղերը, աւանները եւ մնացած անգոր տեղերն են որ մեծ է եղած հայերու կորուստը: Մոռնալու չէ որ, այն պահուն՝ երբ առաջին յարձակումներն սկսան՝ կեդրոնի կառավարութիւնը կատարելապէս անդամալուծուած էր եւ երկիրը կը գտնուէր անիշխանութեան մէջ. նոյնիսկ այս րոպէին ալ գաւառներու գլխաւոր կէտերուն վրայ զօրքը մասամբ անիշխան վիճակ մը կը ներկայացնէ, ըմբոստ՝ դէպի կեդրոնական կառավարութիւնը: Իսկ երիտասարդ թուրքերը չեն տուած այն տեսակ փաստեր՝ որոնցմով կարելի ըլլայ դատապարտել զիրենք այս հարցին մէջ իրենց բռնած ընթացքին համար: Անաչառ դատաստան մը ընելու համար հարկ կ'ըլլայ սպասել Ատանայի մէջ գործող Չինուորական Ատեանին վարմունքին:

Կորուստին վրայ ճշգրիտ վիճակագրական տեղեկութիւններ կը պակսին. մինչեւ այժմ հնարաւորութիւն չէ եղած խնամոտ քննութեամբ մը գրի առնել թէ նիւթական, թէ մարդկային կորուստները եւ հրապարակ

րակ դրուած թիւերը արդիւնք են աղէտին առթած սարսափին: Այս քննութեան համար հարկաւոր է անկողմնակալ մարմնի մը գոյութիւնը եւ տեղույն վրայ կատարուելիք մանրակրկիտ քննութեան մը ձեռնարկը: Ինչպէս յայտնի է, վերջերս կրցած է Ատանա մտնել պատրիարքական յանձնախումբը: Աղէտին վայրը ժամանած է նոյնպէս մեր ընկերներէն եւ ընկերուհիներէն կազմուած բժշկական յանձնախումբը: Շուտով ճամբայ կ'ելլէ նաեւ Պոլիս գտնուող մեր կարող ընկերներէն մէկն ալ դէպի հոն՝ մի միայն պարապելու համար տեղույն վրայ կատարուելիք քննութիւններով:

Կազմակերպութիւնը ի գործ դրած է բոլոր կարելի միջոցները՝ դադարեցնելու համար ջարդերը՝ կատարելով դիմումներ Եւզպէթ փաշայի մօտ՝ դեռ Այ-Սթէֆանօ գտնուած միջոցին իսկ, ինչպէս նաեւ խորհրդարանին եւս: Ներկայացուած է պահանջներ — ա) խիստ պատիժի ենթարկելու ջարդերու պատասխանատուները. բ) Վնասուց հատուցում, գանձելով հատուցումը թալանի մասնակցող բոլոր շրջաններու թուրք ազգաբնակիցներէն. գ) Պետական միջոցներով անմիջական օգնութիւն աղէտեալներուն եւս եւս:

Մտքերը լուսաբանելու համար հաղորդելով այս տեղեկութիւնները, պիտի սպասենք Պատասխանատու մարմնին կողմէ հրատարակուելիք շրջաբերականին

Փաստ. 953-23

Բ 1.- ԱՏԱՆԱՅԷՆ Հ.Յ.Դ. Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԵՒՆ

21 Յունուար 1909

Հ.Յ.Դ. Կ. Պոլսոյ Պատասխանատու մարմնին,

Ստացանք Ձեր 12/25 Յունուար թուակիրը: Ձէյթունը կը մեր ընկեր ժիրայրը վերադարձաւ. նպաստը բաշխած է մեր տուած հրահանգին համաձայն: Նպաստի ցուցակները Ձեզ կ'ուղարկենք յառաջիկայ շաբթուա:

Այս օրերս քաղաքին այլեւայլ կողմերը հեռագրի պատճէն մը փակցուեցաւ. — Հնդկաստանի, Աֆղանստանի եւն. միւսիւրմաններէ Անգլ. կառավարութեան արտաքին գործոց նախարարին քաղած մէկ հեռագրի պատճէնը: Սոյն հեռագիրը բաւական գէշ տպաւորութիւն առաջ բերաւ թուրք շրջանակներուն մէջ. ամէն ոք կ'ընդօրինակէր այդ հեռագիրը ու իրարու կը մեկնէին համիսլամական ընդհանուր շարժման մը տեսակէտով: Այս լուրը գիւղերն ալ տարածուած ու այլեւայլ անտեղութեանց պատճառ եղած է:

Ընկեր Գալֆայեան մեզ այցելեց ասկէ 20-25 օր առաջ: Հոս 17-20 օր մնալէ վերջ Սիս մեկնեցաւ, ուր կը

եւս, որոնցմէ կ'ուղարկուի շրջանի մարմիններուն:

Ընկերական բարեւներով
Հ.Յ.Դ. ՊԱԼՔ. ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

Յ. Գ.- Յայտնի է Ձեզ Սահմանադրականներու յաղթանակները Պարսկաստանի մէջ: Կազմակերպական ճամբաներով ստացուած վերջին հեռագիր մը կը ծանուցանէ թէ 18 ժամուայ կռիւէ մը յետոյ մեր ընկերներէն Եփրեմը 80 ընկերներով գրաւած է Ղազուիւնը: Մասէ խանը 250 ձիաւորներով գերի վերցուցած է կառավարիչը, 200 ձիաւոր, 500 հետեւակ զօրքեր, 8 թնդանօթ եւ մեծաքանակ ռազմամթերք: Սպաննուած են մէկ հայ, մէկ պարսիկ եւ 8 ալ վիրաւոր: Հակասահմանադրականներու կորուստը մեծ է: Այս նշանաւոր յաղթանակով պէտք է բացատրել Շահի վերջին գիջումները: Սահմանադրականներ սակայն իրաւամբ չեն հաւատարայդ խոստումներուն եւ կը պահանջեն աւելի մեծ գլխում եւ երաշխաւորութիւն՝ որ Շահը այլեւս չի դաւաճաներ իր խօսքին:

Կովկասի անցքերուն մասին եւս տեղեկութիւններ խնդրած ըլլալով, կը հաղորդենք իր ատենին հետաքրքիր նորութիւնները:

գտնուի տակաւին: Սիսէ վերադարձին ընկեր Պատիկեանի հետ Չոք-Մարգուանի շրջանը պիտի այցելեն:

Ձեր ակնարկած «Բիւզանդիոն»ի թղթակցութիւնը բոլորովին սուտ է. մեր եւ հնչակեաններու մէջ ոեւէ անհամաձայնութիւն տեղի ունեցած չէ: Եղելութիւնը սա է թէ հնչակեանները ու Առաջնորդը բաւական վէճ ունեցան, ատենախօսութեանց խնդրի առթիւ: Մենք բոլորովին հեռու մնացինք այդպիսի վէճերէ: Կրնաք թերթերու միջոցաւ հերքել տալ «Բիւզանդիոն»ի վերոյիշեալ թղթակցութիւնը: Հնչակեաններու հետ մեր յարաբերութիւնները շատ կորեկտ են:

Ընկերական բարեւներով
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՏԱՆԱՅԷ ԿՈՄԻՏԷ

Ներփակ կ'ուղարկենք Ձէյթունի Ուսումն. խորհուրդի մի գրութիւնը յանձնուած մեր ընկեր ժիրայրի: Ինչպէս որ պիտի տեսնէք, դպրոցներուն համար դասագիրք պէտք ունին եղեր. ուստի կը խնդրենք որ այլեւայլ գրավաճառներուն դիմումներ կատարելով, գոհացնել ջանաք Ձէյթունի վարժարաններու պահանջը:

Փաստ. 953-67

Բ 2.- ԱԶԳԱՆՈՒԷՐ³⁶ ԵՆԹԱԿՈՍՒՏԷԷՆ ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽ. ՄԱՐՄՆԻՆ

11 Ապրիլ 909 Այնթապ

Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Պոլսոյ Պատասխանատու մարմնոյն Սիրելի ընկեր,

Հալէպի միջոցաւ Ձեզ քաջած հեռագիրնիս ստացաք անշուշտ եւ մեր կացութեան մասին մի քիչ տեղեկութիւն առիք անկից կը յուսանք. ամբողջ Կիլիկիոյ միջնուրտը խաթարեց քաղաքային այն փոթորիկը, [որ] ցընցեց նաեւ Այնթապը, եւ եաթաղանները դարձեալ սրուեցան թէեւ, սակայն չենք գիտեր ինչու տեղւոյս թուրքերը մինչեւ հիմա դեռ չկրցան շարունակել 95ի վայրագութիւնները: Ատանայի արիւնոտ դէպքը լսելուս պէս շուտընդփոյթ քաղաքը ինքնապաշտպանութեան վիճակին մէջ դնել եղաւ մեր գործը. շաբաթէ մի վեր հայերը շուկայ չեն իջներ եւ մեր մարտիկները գրեթէ միշտ իրենց դիրքերուն մէջ պատրաստ կը սպասեն ցաւալի անակնկալներու առաջն առնելու համար: Հոս եւս ջարդի մը կազմակերպութեան խորհուրդը կարգ մը էշ-րէֆներու մտքէն անցեր է թէեւ, սակայն նոյն մարդիկը 2-3 անգամ յաջորդաբար նիստ ըրած ատեննին հետըհետէ ջարդ ընելու կողմնակիցները նուազեր են. առաջին գիշերը 10 հոգի, երկրորդ գիշերը 18 հոգի հակառակեր են եւ երրորդ գիշերն ալ մեծամասնութեամբ որոշուած է որ չլլայ ջարդ, եւ շաբաթէ մի վեր իթթի-հատականներ, որ լուռ կը կենային մինչ ամբողջ հայու-թիւնը սարսափի մատնուեր են, հիմա կ'աշխատին ցոյց տալ թէ կառավարութեան հետ ձեռք ձեռքի կ'աշխատին եղեր ժողովուրդին եւ հայրենիքին ապահովութեանը համար. եւ այս առթիւ թրքերէն եւ հայատառ թրքերէնով յայտարարութիւններ փակցուցեր են այսօր փողոց-

ներու պատերուն վրայ եւ այս առտու եւս իրենցմէ ներկայացուցիչներ եկեղեցի եկան ժողովուրդեան միտքը հանդարտեցնելու համար իբր թէ, որպէսզի շուկայ իջնէ: Չմոռնանք ըսել թէ քաղաքին ինքնապաշտպանութեան գործին համար տեղւոյս հնչակեան մասնաճիւղին հետ միասին գործել ուզեցինք կարծելով թէ յեղափոխական կուսակցութեան մը հետ գործ պիտի ունենանք. սակայն կը ցաւինք յայտնելու թէ մենք իրաւունք չունէինք այդպէս կարծելու եւ չարաչար սխալուեր ենք: Իբր նախատինք չէ որ կը գրենք. բուն իրենց կողմէ մեր ներկայացուցիչներուն հետ գործելու եկող անձերը իրենք իրենցմէ փախան իրենց ամօթէն. ցաւ է մեզ որ հոստեղի ժողովուրդն եւս խաբելու համար կազմակերպուած է այստեղ սոյն մասնաճիւղը. հոգ չէ սակայն. ժողովուրդը, գոնէ այս առթիւ հասկցաւ թէ ո՛վ է ճշմարիտ յեղափոխականը եւ որո՛վ վրայ պէտք է իր յոյսը դնէ:

Մտադիր ենք 100 հատ նիւում[?] եւ 100 հատ ռեզուամ գնել. կարելի չէ միթէ որ եւրոպական տան մը հետ սակարկութեան մտնէք այնպէս որ աժան կերպով փոխադրէ իսկենտերուն. այս մասին Ձեր մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք:

Ի՞նչ քիչ մ'առաջ ստացուած նամակէ մը հասկցանք թէ Սահմանաբերդին³⁷ մէջ ջարդ եղեր է եւ 20 մարդ մեռած եւ հարիւրաւորներով վիրաւորներ կան. եւ Արծուաբերդն³⁸ ալ պաշարման տակ է:

Դրօշակի Յունուար թիւը ստացեր ենք. եթէ միւսներն եւս ելեր են, շուտով դրկելնիդ կը խնդրենք:

Հաճեցէք թէ հեռագրի եւ թէ նամակի համար մեզ շիֆրէ³⁹ մը ներկայացնել որ յետ այսու անով հաղորդակցինք: Ձեր հասցէն փոխուած է արդեօք:

Քաղաքային այսքան կարեւոր դէպքեր հաճեցէք հեռագրաւ հաղորդել մեզ՝ ծախքը մեր վրայ հաշուելով:

Ընկերական յարգալիր բարեւներով

Հ. Յ. Դաշնակցութեան Այնթապի ենթակոմիտէի ԱԶԳԱՆՈՒԷՐ

36.- «Ազգանուէր» ստորագրութիւնը կը կրեն Այնթապի մարմնին գրութիւնները:
37.- Սահմանաբերդը Մարաշ քաղաքի կուսակցական ծածկանուցն է:
38.- Արծուաբերդը Ձէթունցն է:
39.- Թուանշաններով ծածկագիր մը:

Փաստ. 953-77

Բ 3.- ԾՈՅԻ ԵՆԹԱԿՈՍՒՏԷԷՆ Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽ. ՄԱՐՄՆԻՆ

24 Ապրիլ 1909, Մոց

Հ. Յ. Դ. Պատ. Մարմնին Կ. Պոլիս

Յարգելի ընկերներ, Երկրին կրած ցաւառիթ դէպքերուն հետեւանքով եւ մանաւանդ Ատանայի անտանելի ջարդն ալ մեզ առիթ չեն տար կանոնաւոր թղթակցելու: Ներկայ երկտողով կը փութանք Ձեզ իմացնել թէ մեր քաղաքին վիճակն ալ կասկածելի է. տեղակալը հին բռնապետական ոգիով սնած ու ապրած ըլլալուն՝ ամէն բանի մէջ անտարբեր ընթացք մըն է որ կը ցուցնէ:

Անցեալները՝ գիշեր ատեն 30ի չափ թուրք երիտասարդներ ձեռքերնին ահագին փայտերով գինուած՝ հա-

յոց թաղերէն անցնելով կառավարութեան դրան առջեւ կ'երթան ժամը ճիշդ 2ին ատեն եւ կը սկսին պոռալ, «չատ ապրի կայսր»ը իրենց լեզուով: Ասոր վրայ անմիջապէս Տեղակալին դիմում եղաւ որպէսզի պահակները շարունակ չըջագային, գիշեր եւ ցերեկ, անդորրութիւնը պահելու համար, սակայն մեծ անտարբերութիւն մը ցոյց տուաւ եւ կու տայ. կը խնդրենք Պոլսոյ այսքան մօտիկ եղող տեղերու համար անմիջապէս Ձեր ազդեցութիւնը բանեցնէք կեդրոնի պատկանեալ մարմնոյն քով: Եթէ ոչ վտանգը անխուսափելի կը թուի, ինչ որ խուժանին վարմունքէն կը հասկցուի:

Ընկերական բարեւներով Հ. Յ. Դ. ԾՈՅԻ ԿՈՄԻՏԷ

Փաստ. 953-86

Բ 4.- ՊԷՅՐՈՒԹԻ ԵՆԹԱԿՈՍՒՏԷԷՆ Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽ. ՄԱՐՄՆԻՆ

Պէյրութ, 9 Մայիս 1909

Կ. Պոլսի Պատասխանատու մարմնին Ընկերներ,

Կիլիկեան վերջին աղէտը սարսուացուցիչ է. սահմանադրական կառավարութեան մը օրով տրուած այս հարուածը իր նախընթացներէն շատ աւելի քստմնեցուցիչ, շատ աւելի վայրագ է: Ատանայի երկրորդ ջարդերը աւելի սոսկալի են: Հաւաստի աղբիւրներէ կը ծանուցուի որ առաջինին եւ վերջինին մէջ զօրքը միշտ մասնակցած է այս ոճրագործութիւններուն: Անտիոքէ դրկուած անհատական նամակներու մէջ օտարի մը գրած էին «այստեղ այս օրերս boucherie⁴⁰ մը դարձած է, տասը տարեկանէ վեր ամբողջ արական հայերը կը ջարդեն. ուրիշ ազգութիւններու դէմ ուեւիցէ հակառակութիւն մը չկայ ու խումբ խումբ փախստականներ կու գան մեր եզերքները, անօթի, անօգնական. Եզիպտոս կ'երթան գործ գտնելու համար, առաջին օրերուն Պէյրութ ելլալ ուզեցին 400 հայեր որ Ատանայէն փախած էին, կառավարութիւնը եւ տեղացի ժողովուրդը չձգեցին: Ատանայի շրջանէն 18 գիւղեր եւ Սուէտիոյ շրջանէն Քեսապ, Անտիոք եւլն. ընդհանուր ջարդուած հայերու թիւը մօտաւորապէս 25.000 կը հաշուի. թուրքերու կո-

րուստը Ատանայի մէջ շատ աննշան է: Բաւական ժամանակ է ի վեր ձենէ նամակ առած չենք. այս օր լսեցինք որ ընկ. Յ. Թերզեանի եւ մեր տեղական մարմնին դրկուած ձեր նամակները բռնուած են. կը ջանանք այս գեղձումի համար բողոքել: Նամակները որ տեղական փոլիսի մը ձեռքը տեսնուած են, դեռ ով ըլլալը չհասկցանք:

Հետաքրքիր ենք հասկնալ որ Հ. Յ. Դաշնակցութեան այժմեան դիրքը կամ ուղղութիւնը ինչ է հանդէպ կուսակցութիւններու, մանաւանդ իթթիհատի:

Ճիշդ այն օրերուն ուր նաեւ ջարդի մը վախը տարածուած էր Պէյրութ, ստացանք մի հեռագիր Սամսոնի Կ. Կոմիտէէն որով կ'աւետէր կուսակցութիւններու համերաշխութիւնը եւ կը յանձնարարէր դիմել տեղւոյն իթթիհատի քոմիտէին լրացուցիչ տեղեկութիւններ առնելու համար: Կասկածով վերաբերեցանք այս յուրերուն, մանաւանդ որ այդպիսի հեռագիր մը Սամսոնէն կու գար եւ ուեւիցէ դիմում չըրինք իթթիհատի:

Կը փափաքինք հասկնալ թէ Հնչակեան կուսակցութեան Հ. Յ. Դաշնակցութեան հանդէպ վերջին ըրած յայտարարութիւնը որ աստիճան ստուգութիւն ունի:

Ընկերական բարեւներով Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԷՅՐՈՒԹԻ ԵՆԹԱԿՈՍՒՏԷ

40.- Ֆրանսերէն սպանդանոց:

Փաստ. 953-92

Ք 5.- ԾՈՑԷՆ ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻՆ

1909 Մայիս 18, Մոսկով

Հ.Յ.Դ. Պատասխանատու մարմին Կ. Պոլիս

Յարգելի ընկերներ, Ձեր դրված 30 նամակի թուղթերը, ինչպես նաև թերթերը եւ 5 պրակ անդորրագրերը ընդունած ենք: Ներկայիս Ձեզ ցաւալի իրողութիւն մըն ալ կու գանք իմացնել եւ դարման խնդրել: Ատանայի անտանելի եւ աղիտաբեր դէպքերէն վերջ մեր բարեխնամ կառավարութիւնը կը շարունակէ իր անտարբեր ընթացքը, այլեւայլ ձեւերու տակ ընկճելու համար հայ ազգը: Այս անգամ ալ գինուորական տուրք գանձելու ձեռք զարկած են. ամօթ եւ անբացատրելի է այս ընթացքը: Ազգը հիմա

իր ցաւերը եւ վէրքերը հազիւ հազ կը կարողանայ դարմանել, կարենալով փոքր ինչ նիւթական օգնութիւն հասցնել Ատանայի ցաւատանջ ժողովուրդին, թէ՛ պիտի գինուորական տուրք տայ: Կ'երեւի թէ սահմանադրական կառավարութեան ձեւին տակ բռնութիւնն է որ կը շարունակուի, հայոց գինուորագրումը ականջի ետեւ նետելով: Իրաւացի կերպով ժողովուրդին բողոքը Ձեզ ներկայացնելով կը խնդրենք որ հարկ եղած միջոցները խորհուրդն եւ գործադրուին:

Հակառակ պարագային հաճեցէք մեզ իմացնել, Հինգշաբթիի փոսթով իսկ, մեր հետեւելիք խոհական ընթացքը: Սպասելով Ձեր նպաստաւոր պատասխանին, կը մնանք

Ընկերական բարեկեցութիւն
Հ.Յ.Դ. ՄՈՑԻ ԿՈՄԻՏԷ

Փաստ. 953-100

Ք 6.- ԶԱԲԱՐԵԱՆԷՆ ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻՆ

Կիլիկիոյ կոտորածներէն ետք Ատանա անցած Ս. Զաւարեան կը գրէ Կ. Պոլսոյ Պատ. մարմնին, ջարդերու մասին իր քաղած տեղեկութիւնները փոխանցելով:

26 Մայիս/8 Յունիս 1909 Ադանա

Սիրելիք,

Երէկ գիշեր երկար հեռագիր տուի Վարդգէսի⁴¹ անունով, պատճէնը ներփակ է: Ձոհերը շատ են. Ադանայի, Թարսուսի, Միսիսի, Համիդիէի, Բաղչէի կազաներում գիւղ, չիֆթլիք (խոշոր կալուած), չկայ ուր հաշուութիւնը կոտորուած կամ այրուած չլինի: Թարսուսի շրջանում (Կոլլէճի անուանացուցակով) 453 գոհ կայ. իմ ներկայութեամբ մի չիֆթլիքի ազատուածի շնորհիւ գոհների թիւը բարձրացաւ 553-ի: Եւ այդպէս շարունակուում է. բոլոր գիւղերը տուժել են առջի շրջանում: Այդ 553-ից 55-ը երեխաներ են 48-ը կիներ, օրիորդներ 323-ը 15-18 տարեկան տղամարդ 127 այլ հասակի տղամարդիկ:

Նոյնը եւ ամէն տեղ է. Օսմանիէի մէջ մօտ 500 կիւն, երեխաներ են մնացել եւ միայն 12 տղամարդ: Դրսեցիներ (Հաճին, Խարփուլ, Տիգրանակ[երտ], Մուշ) շատ կան չիֆթլիքներում կորած: Երջանին լաւ ծանօթ մի յոյն կալուածատէր, քրիստոնեայ, չիֆթլիքներում աշխատող քրիստոնեաների թիւը կը հաշուէր մօտ 10.000. մահմետական. չիֆթլիքներում աշխատող քրիստոնեաների թիւը՝ 3-5000: Դրանց մէջ հայ բանուորները կազմելիս են եղել 80%-էն ոչ պակաս (մընացածները՝ ասորիներ, յոյներ են): Վախենամ որ այդ 10-15.000 դրսեցիների 9/10-ը կոտորուած լինի: Վալին երէկ ստացուած զեկուցագրերի հիման վրայ գոհների թիւը ցոյց էր տալիս 3500 քրիստոնեայ + 2038 մահմետական = 5538, չհաշուելով դրսեցիներին, որոնց թիւը ճշտել անկարելի է իբր: Եթէ կարող էք ճշտում գործ դրէք, թող պահանջեն ցուցակագրել տէրերի միջոցաւ բոլոր չիֆթլիքներում աշխա-

41.- Վարդգէս Յովի. Սերեցիկեան, անդամ օսմ. խորհրդարանին:

Թուերից կը տեսնէք որ հարուածը ուղղուած է հայ կենսունակ տարրի դէմ...

տողների ցանկը եւ կենդանի մնացածների անունները. ես էլ կ'աշխատեմ:

Եւրոպացիների ասելով գոհների թիւը 20-30 հազարի մէջ է: Ինձ էլ թւում է որ 20.000-ի շուրջն է դառնում: Ամէն տեղ մահմետականների մէջ գտնուել են անհատներ, որ շատ օգնել են հայերին:

Ամէն տեղ լաւ են եղել յոյները, եւրոպացիները: Չէրքէները Հաճինի, Չէյթունի շրջանում պաշտպանել են, միւս տեղեր մասնակցել: Տեղական վարչութեան ղեկավարութեամբ է եղել մեծ մասը: Եւրոպացիները տեղակալ իշխանութեան անդամներ դիմադրել են. ակնուրած վարչերում քիչ շատ դիմադրութիւն ցոյց են տուած Ադանան եւ Թարսուսը. միւս տեղերը յանկարծակի են եկել...

Բիրբաշի Լիւտֆի բէյը պահում է իրեն օրինակելի կերպով. առաջի շրջանում պաշտպանում է Միսիսը, յետոյ ամբրիկական հիւլապատիսի պահանջմամբ (7 ամբրիկացիների պաշտպանութեան համար) Հաճին է փոխադրուում եւ վերջինս պաշտպանում: Նրա հեռանալուն պէս Միսիսը ջարդում են - ընդհակառակը (Ադանայից) տեղիս կոմմանդանը (որ մինչեւ օրս ազատ է) ձեռքերը ծալում է, 300 զօրքերը պարապ նստեցնում եւ գաղտնի կերպով խրախուսում կողոպուտն ու կոտորածը: Նոյն դիրքն է բռնած եւ վալին որ Պոլիս է. պահանջելու է նրան յանձնել տեղիղ զին. ատեանին, բանտարկել առանց ժամանակ կորսնցնելու. մակեդոնացոց⁴² մասնակցութեամբ հաւանօրէն տեղի է ունենում, վերջիններիս խաբուելով տեղացիների կողմէ...

Պարլամենտի ներկայացուցիչներն քննութեան համար դրսէն մարդիկ են ուզած (կէսը հայեր): Դա շատ կարեւոր է. հայերի տեղ կարելի է եւ այլ քրիստոնեաներ: Պարլամենտի անդամների գալուց յետ դրութիւնը փոխուած է դէպի լաւ. եթէ քննիչների թիւը աւելացուէր, լաւ կը լինի: Իրանց դեռ չեմ տեսած (գնացած են դէպի Չոք Մարսուան). առ հասարակ դրսէն մարդոց գալը (ինչ ձեւով էլ որ լինի) լաւ եւ ցանկալի է... Թող պատրիարքարանը յատուկ մարդիկ, փաստաբան եւ այլն դրկէ Անտիոք, Բախչէ, հոս. նաեւ Ֆելդշերներ⁴³, բժիշկներ: Մահմետական բժիշկներէ խոյս են տալիս, այն ինչ սոված, անտուն ժողովուրդի մէջ հիւանդութիւնները անպակաս կը լինեն:

Պաշտօնեաները փոխուելու են. չմոռնաք Բայագէ-դից հեռացուած միւթեսարեֆին, Վահանի գիտցած

կայմակամին, պաշտօնեաների փոխուելուն: Սրանք եւս հումանիտ են. նոր պաշտօնեաները հարկաւ դրսէն են գալու (գերադասելի է Մակեդոնիա աշխատածների մէջէն ջոկել):

Եթէ միսիոնարները, Հայոց (պատրիարքարանի) պատուիրակները, Փրանս. Հայկապի հիւպատոսը չլինէին հազարաւոր մարդիկ սովէն կը կոտորուէին:

30.000 ոսկի յատկացուելէ յետոյ իսկ կառավարութիւնը 130 դրամնոց հաց է տալիս եղել, ուրիշ ոչինչ: Հայ պատուիրակները շեշտում են որ կառավարութեան օգնութիւնը (հայերին) 1500 ոսկիէն անցած չէ (կառավարութիւնը դեռ հաշիւ չէ տուած): Այն ինչ երբ 4 օր առաջ մի խառը (միջազգայնական) յանձնաժողով է կազմուում (պարլամենտի) անդամների նախաձեռնութեամբ նրա տրամադրութեան տակ է դրուում 22 հազար (8 հազ. ո. ծախսուած համարելով). այդ նոր յանձնաժողովն էլ դեռ բան չէ ըրած... տեսնենք:

Այսօր Մերսինից դառնալու է կաթողիկոսը. գուցէ որոշ քայլեր անենք այդ ուղղութեամբ...

Վալին ասում էր որ խնդրուած է մի նոր 30.000 եւս, որ մտադիր է եկեղեցիները, դպրոցները կառավարութեան հաշուով շինել տալ: Պատիժներէ զատ ամենախոշոր հարցը (տների, գործիքների, կահ կարասիների, անասունների) առհասարակ վնասների հատուցման խնդիրը մնում է բաց: Առանց դրա կոտորածները դադարելու չեն:

Երէկ հեռագիրներ ուղարկեցի Թիֆլիսի եւ Բագուայ թերթերին օգնութիւն խնդրելով:

Կրօնական որսորդութիւնն էլ չի մոռացուում: Հայ տարրի ներկայութիւնը ամէն տեղ կարեւոր է: Կրօնի պաշտպանութիւնը չէ ի հարկէ այլ մի ժողովուրդի շիտակութեան եւ արժանապատուութեան:

Իզմիրցիներից շատ շնորհակալ են. ամենաարագ եւ ամենաշատ օգնութիւնը նրանք են հասցուցած:

Որբերին կարծեմ աւելի լաւ է տեղաւորել Պարտիզակ, Ատաբազար եւ Ռոտտոսո:

Այս նամակս ուղարկէք Յովնանին⁴⁴ ժամանակ չկար գրելու:

42.- Այսինքն Մակեդոնիա տեղակայուած եւ Կիլիկիա ուղարկուած թրքական զօրքերը:
43.- Բուժակներ, բժիշկի օգնականներ:
44.- Յոնան Դաւթեանին:

Փաստ. 953-107

Բ 7.- ՉԱԻԱՐԵԱՆԷՆ ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՄԵԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻՆ

Ս. Չաւարեանի 193-166 համարը կրող այս ընդարձակ նամակը ուղղուած է ամենայն հաւանականութեամբ Կ. Պոլսոյ Հ.Յ.Գ. Պատասխանատու մարմնին: Ըստ երեւոյթին կիսատ է: Հ.Յ.Գ. Կեդր. արխիւի բոլորովին մէկ այլ քրթածրարին մէջ (953-107) կը գտնուի Չաւարեանի միեւնոյն հարցերուն մասին գրած մէկ նամակին վերջին 6 էջերը (9-14), որ այդպէս ալ հրատարակուած է Հրաչ Տասնապետեանի խմբագրած «Սիմոն Չաւարեան» գործի Գ. հատորին մէջ (Անթիլիաս, 1997, էջ 150-151):

Մեր համոզումով վերջին այդ անկիզբ գրութիւնը մաս կը կազմէ եւ կ'ամբողջացնէ թիւ 193-166 նամակը, թէ իբրեւ էջերու եւ թէ իբրեւ բովանդակութեան շարունակութիւն: Այդպէս ալ միասին կը ներկայացնենք երկու փաստաթուղթերը, պահելով անոնց արխիւային երկու համարակալումները:

Երեքշաբթի 9/22-VI- 1909
Բախչէ

Ընկերներ,

Մօտ 10 օր է ինչ ճամբորդութեան մէջ եմ: Միսիս, Համիդիէ, Օսմանիէ, Էրզին, Բախչէ: Բոլոր տեղերն էլ տեսնուած եմ զին[ուորական] տեղական հրամանատարների հետ: Օսմանիէ նստում է Էրզինի (Չեբել Բերեքեթի) զինւ. ատեանի 1-ի քննիչ յանձնաժողովը: Ուրիշ քննիչ (Թաքիբաթ) յանձնաժողովներ կան Մարաշ, Հաջին, կարծեմ եւ Անտիոք: Ձին[ուորական] V (տեղական) հրամանատարները հսկում են խաղաղութեանը տեղ տեղ վերադարձում են թալանները, տեղեկութիւն են հաղորդում քննիչ յանձնախմբերին անցած դարձածների մասին: Քննիչ յանձնախմբերն արդէն բանտարկում են յանցաւորներին եւ իրենց գեկուցման հետ յանձնում են զին[ուորական] ատեանին: Հասկանալի է որ ուր նստում են քննիչ յանձնաժողովները (օրինակ Օսմանիէ) այնտեղ դրու[թիւնը] (քննութեան տեսակէտէ) աւելի բաւարար է եւ ընդհակառակը: Այսպէս Համիտիէի մէջ եւ շրջանում, ուր սպանուած է մօտ 1.500 մարդ եւ Միսիս, ուր բոլոր հայերը (մօտ 250) կոտորուել են եւ կենդանի մնացածներն էլ մահմետականացած են ու մինչեւ հիմա էլ չեն համարձակուում գնալ Ադանա – շատ աւելի քիչ յանցաւոր է բանտարկուած քան Օսմանիէ, ուր 588 սպանուածների վրայ 572 կենդանի մնացած կայ...

Օսմանիէի քննիչ յանձնաժողովը նստելու է նաեւ Համիդիէ, Բախչէ: Բայց ե՞րբ է հերթը վերջիններիս հասնելու: Քննիչ յանձնաժողովի անդամները ինձ ըսին որ մի 20-30 օրէն հագիւ վերջացնեն Օսմանիէն: Հետեւաբար Բախչէի շրջանը 850 ընտ[անիք] 5,268 անձով, որ 759 տեղացի եւ 52 (կարսեցի) գոհ է տուած, այսինքն բոլոր տղայ աշխատաւորներու կէսը, դեռ ամիսներ սպասելու է իր հերթին: Այն ինչ Հաջին (որ ունի առանձին քննիչ յանձնաժողով) տուած է միայն 20-30 գոհ. նոյնը եւ Մարաշը: Յանձնաժողովները որոշելու էր ոչ թէ ըստ

միւթեսարիֆութեան, այլ ըստ այլ եւ այլ շրջանների տուած գոհերի թուի եւ աշխարհագրական դիրքին:

Այդպիսով Բախչէն (գուցէ միացնելով նրան Խասսան եւ Իսլահիէն) ունենալու էր մի առանձին քննիչ յանձնախմբւ: Այդ մասին խօսեցի Էրզինի զին[ուորական] ատեանի նախագահի հետ. թէեւ յուսադրեց, բայց աշխատելու է այդտեղ:

Բացի այդ, նկատի է ունենալու եւ կարգադրելու է որպէսզի հաշուի առնուեն հետեւեալ կէտերը:

1) Քննութիւնները [?] կատարուեն տեղի վրայ՝ գիւղում, աւանում, ագարակում, եւ ոչ թէ գանգատուորների կենտրոն հրաւիրելով: Առանց դրա 9/10րդը վախենում են 1/2, 1 օր ճամբորդել եւ գնալ քննիչ յանձնաժողովի մօտ գանգատուելու: Բացի այդ քննիչ յանձնաժողովը, չտեսած աւերումները, տեղ տեղ դիակները իր աչքով, տեսական եւ սխալ գաղափար է կազմում յանցանքի մասին:

2) Քննիչ յանձ[նախումբ]ը քննելու է ոչ միայն այն դէպքերը երբ գանգատուորներ կան, այլ բոլոր կատարուած գազանութիւնների մասին, ումնից էլ տեղեկութիւն առնէ: Ընտանիքներ, գիւղականներ կան, որոնք բնաջինջ են եղած կամ մնացածն էլ փախած ու մահմետականացած են: Գանգատուող չկայ բայց կայ ամենասոսկալի ոճիր, որով ներկայումս չեն գբաղուում... (քանի որ գանգատուող չկայ, ինչպէս Չեբել Բերեքեթի Եարֆուղը, Միսիսը, շատ ագարակներ):

3) Քննիչ յանձ[նախումբ]ը գբաղուելու է նոյնչափ տեղացիներով, որչափ այն հազարաւոր հայ ու ասորի կոտորուած հնձուորներով, որոնցով տեղացիները, կալուածատէրերը, կոտորող գիւղացիները չեն հետաքրքրուում:

4) Քննիչ յանձ[նախումբ]ի մէջ մասնակցելու են նաեւ քրիստոնեաներ, գէթ իբրեւ քարտուղարներ, խորհրդականներ, մասնագէտ իրաւաբաններ: Այլ կերպ (ինչքան էլ անաչառ լինեն զինուորականները) քրիստոնեաները պիտի մեղադրեն անոնց աչառութեան մէջ: Մի մոռնաք որ զինուորականների մէջ դեռեւս քրիս-

Փաստ. 193-166

տոնեաներ չկան եւ սպաները իրաւաբանական հմտութիւն չունեն:

5) Դժբախտաբար շարժման աստուղ – կողոպուտը – թալան է (հարստութեան, անասունների, հողերի, տների, կանանց): Հարցը սակայն այս տաք օրերի մէջ չէ, երբ օգնութիւն կայ դուրսէն եւ ժողովուրդը հնարաւորութիւն ունի պտուղներով (թուփ եւայլն) կերակրուելու [?] այդպէս եւ օգտուիլ հունձէն: Հարցը պազայի մէջն է: Համարեա բոլոր հայ տները թալանուած են: Գործիքները, անկողին, հագուստ... տների 9/10րդը այրուած, հոյակապ պատերը...: Շատ ընտանիքներ կան, որ աման, գդալ, դանակ չունեն: Մաճկալը [?] չունեն պարէնը կալսելու համար եւ փայտերով են ծեծում: չունեն տալու համար եւ ձեռքերով են տալիս...⁴⁵

Ապրում են աւերակների մէջ, ծառերի տակ թրջուելով անձրեւէն: Ոչ ոք հոգ չի տանում դրա մասին: աչքաթող են արուած...⁴⁵

Միթարուում են թէ թալանները յետ են տրուում: Զինուորական հրամանատարները գիւղերում այդ հրահանգը ճիշտ է ունեն եւ տաւարը որոնում են: Տեղ տեղ ինչքերն [?] ու կովերը յետ են բերուած (գէթ որոշ չափով): Նոյնը չի կարելի ասել տան իրերի մասին՝ 1/10րդն անգամ չի գտնուում... մանաւանդ արժէքաւոր բաները: Տները⁴⁵ այրուած են ու չեն կարող վերադարձուել:

Մի քանի տեղեր հաշիւ ըրի. վնասները մօտաւորապէս հետեւեալ գումարների մէջ են տատանուում այլեւայլ ընտանիքների համար.

Տների	12	25	35	100 ոսկի
պաշար (ուտելիք)	1/2	4	5	10
Տան իրեր	4	8	40	50
Անասուններ	-	6	10	60
Կարասի, դրամ, գարդ	-	-	20	
	16 1/2	43	110	220ո.

ընտ[անիքի] հաշուի

Աւելացրէք այս ամէնին նաեւ սա որ հնձի մի մասը կորաւ, փչացուեց, մնացածը տրուեց հնձելու կիսով հարեւաններին, որ հայերը բոլորովին զրկուեցին իրենց ապրուստի գլխաւոր միջոցէ - չերամէ – եւ հասկանալի կը դառնայ կորուստի մեծութիւնը:

Զգիտեմ ինչպէս կը կարգադրուի ապրուստի խնդիրը, տուն տեղերի, բնակարանների: Մի բան միայն պարզ է, որ ամօթ է գէթ վրաններ չտալ այս կոտորուած ժողովուրդին: Եթէ Ադանայի պահեստներում չկայ, դժուար չէ Պոլսէն բերել տալ:

45.- Բնագրին ջրոտած ըլլալուն հետեւանքով, տեղ-տեղ ձեռագիրը անընթեռնելի է:

Սպանութեանց 9/10րդը կատարուել է այդ նպատակով, եւ ոչ թէ կողոպուտը կատարուել է իբրեւ հետեւանք ֆանատիզմի ու կոտորածի: Ոճրի մի կողմը անկարելի է պարզել առանց միւսի: Սպանութիւնները անբաժան կերպով կապուած են կողոպուտի հետ:

Եթէ բոլոր ոճրագործները կախուեն իսկ առանց թալանի վերադարձուելու, տուժողներ չեն կարող գգալ իրենց բաւարարութիւն ստացած: Հետեւաբար սպանութեան ու կողոպուտի քննութիւնը միացնելու է: Իսկ այդ պարագայում կրկնապատկելու է թէ քննիչ յանձնախմբի թիւը, թէ փոխելու է նրանց որակը, աւելացնելով իրենց մասնագէտ քրիստոնեայ քննիչներ:

Նման բան կարելի էր անել եւ զին[ուորական] ատեանների հետ, արտակարգ լիազօրութիւններ տալով այդ բացառիկ մարմիններին (պարլ[ամենտ]ի) եւ զօրքի հրամանատարի որոշմամբ):

6) Քննութեան ու պատժի հետ մոռնալու չէ որ 30-50 տ[արի] առաջ այս շրջանի մահմետ[ական] ազգաբնակութիւնը վարում էր աշիրական կեանք: Հիմա էլ մեծ մասամբ նստակեաց դառնալով նա դեռ շարունակում է պատկանել այս այն աշիրին, դեկավարուել այս կամ այն «պետի» հրահանգներով: Նոյնն է համարեա եւ այլեւայլ «մուհաջիրները»: Պատժել թալուողներին առանց ձեռք տալու աղաներին ու «անմեղ» պետերին, կը նշանակէ բանտարկել Սէիդ Ալիի այս կամ այն դուամին, կուուել դանակի դէմ առանց պատժելու դանակը շարժող ձեռքը...

7) Նկատի ունեցէք որ Տարսուէն սկսեալ մինչեւ Ադանա, Մերսին, Համիդիէ, Օսմանիէ, Չոք Մարսուան, Բախչէ, հաւանօրէն եւ Կարս[բազար], Խասսա եւայլն բոլոր ոճրագործ պաշտօնեաները մնում են իրենց տեղը... տեղական զին. հրամանատարների հետ [երեւի փոխադարձ համաձայնութեամբ] վարելով վարչ[ութեան] գործերը... Դա այնքան էլ չի համապատասխանում արդարութեան:

8) Բոլոր վայրերում տեղ[ական] վարչութեան կամ ազդեցիկ անդամների հրահանգով նախ քան կոտորածը հաւաքած են ռեզիւցները¹⁹, գէնք բաժնած, կամ պաշտօնեաների ձեռնպահութեան շնորհիւ (այսինքն արեւելեան ձեւի հրահանգով) խուժանը գրաւել է գէնքի պահեստները: Դա է որ կուուի տեղ կոտորածի ձեւ է տուել: Այդ գէնքերը մինչեւ օրս չեն հաւաքուած: Մեղաւորները ազատ են:

9) Ըսի որ կոտորած են ամենաազդեցիկ, ամենաաշխատաւոր, ամենախելօք, ամենաքաջ հայ անդամները: Միայն Հաջինը 3-4000 աշխատաւոր տղամարդ է կորցրել: Իսկ սպանուած ընդհանուր աշխատաւորներու թիւը երեւի 15.000էն պակաս չէ: Հետեւաբար, 15.000 ընտանիքներ զրկուել են իրենց աշխատաւորներէն: Ուս-

*Consulat Général
Ottoman
Objet
Traduction
du
Tezkeré du Ministère
de l'Intérieur
au
Ministère
des Affaires Étrangères
en date du
26 Avril 1925.*

Փաստ. 1719գ-12

**Գ 1.- TRADUCTION DU TEZKERE
DU MINISTERE DE L'INTERIEUR
AU MINISTERE
DES AFFAIRES ETRANGERES**

En date du 26 avril 1325

J'ai l'honneur de transmettre ci-joint à V.E. la copie d'un télégramme que le comité du Droschak à Genève a adressé au journal "Ieni Gazette", concernant le regrettable incident d'Adana dont mon département a donné en son temps les explications à la Chambre des Députés et dont les débats ont été reprodus dans le Journal Officiel.

Ainsi que V.E. doit le savoir et ainsi qu'il est prouvé par le procès verbal de la Chambre, le Ministère n'a jamais cessé, depuis le commencement de l'incident, à faire strictement son devoir, tandis que, pour exciter les esprits, certaines personnes ont lancé des nouvelles sensationnelles disant que le gouvernement avait télégraphié aux Vilayets d'épargner les étrangers et de ne massacrer que les Arméniens.

Cette fausse nouvelle a été publiée et la copie de cette dépêche qui ne mérite pas même d'être démentie, a été lue dans la Chambre des Députés.

Les Télégrammes échangés par le Ministère avec Adana, télégrammes qui ont été aussi lus dans la séance du Parlement, sont tellement clairs qu'ils ne prêtent même pas à une double interprétation.

Si les troubles n'ont pas pu être immédiatement étouffés, c'est qu'il a été démontré par des preuves irréfutables que les troupes envoyées n'ont pas pu arriver à temps à cause de la grande distance.

La Chambre elle-même a reconnu que le Ministère de l'Intérieur a complètement fait son devoir.

En outre le Ministère a donné des ordres aux fonctionnaires du vilayet pour que les sommes nécessaires soient versées par les caisses du vilayet pour secourir la population éprouvée et pour qu'aucune aide ne soit épargnée, tant à ceux qui seront réfugiés à Lazkié, qu'à ceux qui sont restés dans leur pays.

En attendant qu'une commission composée de personnes compétentes et intègres soit arrivée pour faire sur place une enquête minutieuse en vue de punir les coupables, conformément aux dispositions de la loi, sans distinction de races ni de religions, l'état de siège a été proclamé dans le vilayet.

Des vivres ont été envoyés et seront envoyés encore des provinces avoisinantes, ainsi qu'il a été dit au Parlement. Trente mille livres ont été destinées aux premiers besoins de la population, en attendant l'approbation de la Chambre. Dix mille livres ont été déjà mises à la disposition des autorités du vilayet; des médecins et des médicaments sont envoyés d'urgence, enfin rien ne sera négligé de tout ce qui est nécessaire pour calmer et reconforter les sinistrés. L'enquête et le jugement des coupables se fera sans perte de temps, avec la plus grande sévérité, et des instructions précises ont été données pour le prompt rétablissement de l'ordre et de la sécurité.

Même pendant les derniers événements dans la capitale, le Ministère n'a jamais cessé d'agir conformément à son devoir et son attitude énergique lui a valu l'appréciation de la Chambre qui a approuvé sa conduite loyale.

Vu ce qui précède les nouvelles des journaux européens qui continuent à prétendre que le gouvernement ne fait pas impartialement son devoir et rejette la faute sur les Arméniens, sont absolument dénuées de fondement. Je prie donc, V.E. de faire connaître la vérité par l'entremise de nos Ambassades, pour réctifier dans le sens de ma communication le télégramme du comité Droschak et d'aviser aussi notre Consulat Général à Genève à cet effet.

Veillez
H. HAÏNEAU



Traduction conforme à l'original

ՕՍՄԱՆԵԱՆ ԸՆԴՀ ՀԻՒՊԱՏՈՍՈՒԹԻՒՆ, ԺՐՆԵՒ

**ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԵ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒԱԾ
26 ԱՊՐԻԼ 1325 [1909]Ի ՏԵՂԵԿԱՆՔԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ**

Պատիւն ունիմ ներկիակ Ձեր Վսեմութեան փոխանցելու պատճէնը հեռագրի մը, զոր ժընեւի Դրօշակի կոմիտէն ուղղած է Եէնի Կազէթ թերթին՝ Ատանայի ցաւալի դէպքին վերաբերեալ, որուն մասին իմ բաժանմունքս օրին բացատրութիւն տուած է Երեսփոխանական ժողովին. այս վերջինի քննարկումները հրապարակուեցան Պաշտօնական լրագրին մէջ:

Ինչպէս Ձերդ Վսեմութիւնը պէտք է գիտնայ եւ ինչպէս որ Խորհրդարանի ատենագրութիւններով փաստուած է, նախարարութիւնը դէպքերու սկիզբէն ի վեր երբեք չէ դադրած ճշգրտօրէն կատարելէ իր պարտականութիւնը, մինչդեռ որոշ անձեր, մտքերը բորբոքելու համար, հրապարակ նետեցին զգայացուց լուրեր, ըսելով որ կառավարութիւնը հեռագրած է վիլայէթներուն՝ խնայելու օտարականները, եւ միայն հայերը ջարդելու:

Այս սուտ լուրը հրատարակուեցաւ եւ հեռագրին պատճէնը, որ նոյնիսկ արժանի չէ հերքումի, կարդացուեցաւ Երեսփոխանական ժողովին: Ատանայի հետ նախարարութեանս կողմէ փոխանակուած հեռագիրները, հեռագիրներ՝ որ ընթերցուեցան նաեւ խորհրդարանական նիստի ընթացքին, այնքան յստակ են որ ոեւէ երկդիմի մեկնաբանութեան տեղի չեն տար:

Եթէ խռովութիւնները անմիջականօրէն չխեղդուեցան, այդ ապացուցուած է [արդէն] այն անհերքելի փաստերով, որ ուղարկուած զօրագունները, մեծ հեռաւորութեան պատճառաւ, չկրցան ժամանակին հասնիլ:

Խորհրդարանը եւս ընդունեց որ ներքին նախարարութիւնը ամբողջովին կատարեց իր պարտականութիւնը:

Բացի այդ, նախարարութիւնը հրահանգեց վիլայէթի պաշտօնեաներուն, որ վիլայէթի սնտուկէն անհրաժեշտ գումարներ յատկացուին՝ օգնութեան հասնելու համար աղէտեալ բնակչութեան եւ որ ոչ մէկ օգնութիւն խնայւի ըլլայ անոնց՝ որ Լաթաքիա ապաստանած էին եւ կամ անոնց՝ որ մնացած էին իրենց բնակավայրին մէջ:

Սպասելով ձեռնհաս եւ ուղղամիտ անձնաւորութիւններէ կազմուած յանձնախումբի մը տեղ հասնելուն, որ մանրակրկիտ քննութիւն կատարելէ ետք՝ առանց ցեղի եւ կրօնի խտրութեան եւ համաձայն օրէնքին տրամադրութեանց, պատժէ յանցաւորները — վիլայէթին մէջ հաստատուեցաւ կրակմարի դրութիւն:

Ինչպէս որ խորհրդարանի մէջ ըսուեցաւ, հարեւան նահանգներէն սննդեղէն ուղարկուեցաւ, եւ տակաւին կ'ողարկուի: Բնակչութեան անմիջական կարիքներուն համար սահմանուեցաւ երեսուն հազար ոսկի, որ կը սպասէ Խորհրդարանի հաւանութեան: Տասը հազար ոսկի արդէն դրուած է վիլայէթի իշխանութեանց տրամադրութեան տակ. ստիպողական կարգով ուղարկուած են բժիշկներ եւ դեղեր. վերջապէս, ոչ մէկ բան պիտի անտեսուի աղէտեալներու անդորրութեան եւ կազդուրման համար: Յանցաւորներու հարցաքննութիւնն ու դատավարութիւնը պիտի կատարուի առանց ժամանակի կորուստի, ամենայն խստութեամբ, եւ ճշգրիտ հրահանգներ տրուած են կարգն ու ապահովութիւնը վերականգնելու համար:

Մայրաքաղաքի վերջին դէպքերու ժամանակ նոյնիսկ, նախարարութիւնը չդադրեցաւ գործելէ համաձայն իր պարտականութեան, եւ իր կորովի կեցուածքը գնահատանքի արժանացաւ խորհրդարանի կողմէ, որ եւ հաստատեց իր օրինաւոր ընթացքը:

Ի նկատի ունենալով վերեւի շարադրանքը, եւրոպական լրագիրներու այն լուրերը, որոնք կը յաւակնին թէ՛ կառավարութիւնը անաչառ կերպով չի կատարել իր պարտականութիւնը եւ յանցանքը կը նետէ հայերուն վրայ, այդ լուրերը բացարձակօրէն անհիմն են: Կը խնդրեմ հետեւաբար Ձերդ Վսեմութիւն, մեր դեսպանատուններու միջոցաւ բացայայտել ճշմարտութիւնը, իմ հաղորդագրութեանս իմաստով՝ սրբագրելու համար Դրօշակի կոմիտէին հեռագիրը, եւ արդիւնքը իմացնել ժընեւի մեր Ընդհանուր հիւպատոսութեան:

Հաճեցէ՛ք՝

H. Haineau

Թարգմանութիւնը համաձայն է բնագրին:

Գ 2.— ՆԱՄԱԿ «ԳՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆԷՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Պարոն Սինիստր,

Ապրիլ 26-ի ձեռք բերելով, զոր արտաքին գործերի պ. նախարարը կ'ուղղվե մեզի ժընեի ընդհանուր հիւպատոսի միջոցով, դուք կը բարեհաճիք հանգստացնել մեզ այն յուզմունքի առիթով, զոր արտադարձած էինք Ատանայի ողբալի անցքերու մասին դրկած մեր հեռագրին մէջ:

Բողոքի այդ հեռագիրը մենք ուղղած էինք Երեսփոխանական ժողովին, ի դէմս նախագահի: Իսկ պատճենը Կ. Պոլսի քանի մը թերթերուն:

Մենք կը բողոքէինք այն ապշեցուցիչ ամբաստանութիւններուն դէմ, որոնցմով Ատանայի իշխանութիւնները հայ յեղափոխականները կը ներկայացնէին իբր ջարդերու գրգռիչ ու նախադրածակ: Այդ մեղադրանքը կարդացուեցաւ կառավարութեան ներկայացուցչին բերնով պարլամենտի ամբիոնէն. նա միեւնոյն ժամանակ շրջան ըրաւ եւրոպական մամուլին մէջ: Մենք այժմ կը կարդանք անոր տխրալի պատճառաբանութիւնը պաշտօնական «Թագվիմ Վէկայի» N 203-ի մէջ: Անոր համեմատ հազարաւոր հայ ֆեդայիներն են որ ռումբերով ու մաուզերներով սպառնալիցուած, սարսափ էին տարածեր մահմեդական ազգաբնակչութեան վրայ:

Այդ տեսակ հրէշաւորութիւններ կը զեկուցանուին պարլամենտին, կը լսուին հաւանութեան շեշտերով եւ ի ցոյց կը դրուին «պաշտօնական թերթին» մէջ, որ պիտի տարածէ այդ սարսափելի մեղադրականը մահմեդական աշխարհին մէջ, բորբոքելով ատելութիւնն ու զայրոյթը յաւիտեանական զոհին դէմ:

Մենք պարտք սեպեցինք բողոքել օսմանեան պարլամենտին ու քաղաքակիրթ աշխարհին առջեւ մի անորակելի զրպարտութեան դէմ:

Ձեզ անյայտ չեն, պ. մինիստր, բարեկամական այն կապերը, որ մենք ունեցած ենք «Երիտասարդ Թուրքիոյ» հետ Յուլիսեան յեղափոխութենէն առաջ եւ անկէ յետոյ: Ձեզ յայտնի են եւ այն լաւ զգացումները, որոնցով տոգորուած են մեր կոմիտէներն ու ժողովուրդը՝ մահմեդական ազգաբնակչութեան վերաբերմամբ:

Մեր ծրագիրը, մեր քաղաքական բաղձանքներն եւս անծանօթ չեն Երիտասարդ թուրքերու մեծամասնութեանը, որոնց հետ աշխատած ենք ընդհանուր հայրենիքի ազատագրութեան եւ բարօրութեան համար: Այդ իղծերը հայ բովանդակ ազգաբնակչութեան իղծերն են: Ոճիր է, ուրեմն, ընդդէմ մարդկութեան, հռչակել հայ յեղափոխականները իբրեւ խռովարար, իբրեւ ազգային ատելութիւնն ու թշնամութիւն սերմանողներ: Այդ տեսակ ոճիր մը գործեցին Ատանայի իշխանութիւնները զարմանալի սանձարծակութեամբ, երբ արդէն աւերեր ու արիւններ էին ընդարծակ տարածութիւններ, խուժանի ու հակայեղափոխական զինուորութեան ստոր բնագոյներու շղթայագերծ բռնկումով:

Միտելի ողբերգութիւնը կատարուած է. նա եկաւ միանալու ողբերգութեանց այն շարանին, որոնք խաղացւեր էին համիդեան նզովեալ թագաւորութեան օրով:

Կեդրոնական կառավարութիւնը կատարե՞ց արդեօք

իր բովանդակ պարտականութիւնը այդ խմբովին սրածութիւններու առեւ, որ տեւեցին 15 օր անընդիստ ամբողջ վիլայէթին մէջ: Սա մի հարց է, որու վրայ աւելի լաւ է չծանրանալ:

Այսօր մենք ամբողջ հայ ազգաբնակչութեան հետ սպասողական մի անձկալի վիճակի մէջ ենք: Մենք կը սպասենք արդար ու անաչառ դատ ու ճնշում: Մարդկայնութիւնն ու քաղաքակրթութիւնն այդպէս կը կամենան: Սահմանադրութեան պատիւն այդպէս կը հրամայէ:

Եթէ, par impossible, սահմանադրական կառավարութիւնը մեղանչէ այդ հրամայական պարտականութեան դէմ, նա կը ձգէ ատելութեան անանցանելի վիճակը հայ եւ մուսուլման ժողովուրդներու միջեւ. դա կը լինի, արդարեւ, ամենադառն յուսախաբութեան գագաթնակէտը:

Չափազանց ցաւալի է արծանագրել, որ վերջին 10 ամսուայ ընթացքին մէջ նոր ռեժիմը ոչինչ չըրաւ այդ տարաբախտ ժողովրդի համար, ոչինչ չձեռնարկեց բարուղբելու վարչութիւնը, առողջացնելու բիւրոկրատական մթնոլորտը, ուր կը վիստան համիդեան յետադէմ ու հայատեաց պաշտօնեաներ: Չուզեցին նոյնիսկ փոխադրել վալիները, չհամարձակեցան նոյնիսկ դաշել յայտնի ջարդարարներուն, որոնց ներկայութիւնը յարատեւ սպառնալիք մըն է հայ ազգաբնակչութիւններու համար: Անտարբերութիւնը կայսրութեան ամենէն տառապող տարրի հանդէպ բնորոշ գծերն մէկն էր նոր ռեժիմին: Անպատճառութիւնը քաջալերեց յանցաւորներուն, մղելով զանոնք դէպի նոր սիրազորութիւններ:

Ատանայի ողբերգութիւնը ատոր հետեւանքն է: Նա կը սպառնայ ընդհանրանալ եւ նորէն հայ ժողովուրդը մատնուած է վտանգալի կացութեան մը ամենավատթար քմահաճոյքներուն:

Պարոն մինիստր,

Մեզ համար չափազանց տխրալի է սոյնաման փաստեր արծանագրել յեղափոխական Թուրքիոյ ամենափայլուն յաղթութեան օրերուն: Բայց այն մեծ պատասխանատուութիւնը, զոր մենք ստանձնած ենք հանդէպ մեր ժողովրդի, որի դատը պաշտպանած ենք 20 տարիէ ի վեր անհաւասար ու արիւնալի մենամարտի մէջ Արդիւ-Յամիդեան բռնակալութեան դէմ – այդ պատասխանատուութիւնը կը ստիպէ մեզ, ի պատասխան ձեր հանգրստացուցիչ յայտարարութիւններուն, ըսել ձեզ, այս քանի մը ճշմարտութիւնները, զոր մենք միանգամայն անհրաժեշտ կը սեպենք: Այսօր հայ ազգաբնակչութեան գերագոյն բաղձանքն է՝ որ իր կառավարութիւնը խօսքէն անցնի, վերջապէս, դէպի գործ: Մենք կը սպասենք, վըստահելով ձեր, ինչպէս եւ ամբողջ կառավարութեան ու պարլամենտի, իմաստութեանը: Անոնցմէ կախուած է վճռել՝ արդեօք Թուրքիոյ այլազան տարրերը պիտի ապրի՞ն այսուհետեւ սերտ համերաշխութեան մէջ, թէ՞ պիտի յօշոտեն զիրար, ի վնաս կայսրութեան կենսական շահերուն եւ յօգուտ թշնամիներուն, որոնք զայն կը հետամուտեն:

Ընդունեցէք եւայլն:

ԽՄԲԱԳՐ. «ԳՐՕՇԱԿ»Ի
ՕՐԳԱՆ Յ. Յ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Գ 3.— ԲՈՂՈՔԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ «ԳՐՕՇԱԿ»Ի ԽՄԲ. ԿՈՂՄԷՆ

ՕՍՄ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ

Ապշութիւնով կ'իմանանք որ Մայիս 1-ի նիստին մէջ, կառավարութիւնը հիմնուելով տեղական իշխանութիւններու ստալոյ տեղեկութիւններուն վրայ, Ատանայի վերջի ողբերգութիւնը վերագրած է հայ յեղափոխականներուն եւ ներկայացուցած է հայերը իբր նախադրածակ: Կը բողոքենք մենք այս չարամիտ սադրանքին դէմ որ նպատակ ունի ոճրագործները հովանաւորելու: Սա անարգանք մըն է հայ ժողովրդին դէմ՝ չարատանջ ու օրհասական: Հայ յեղափոխականները ոչ մէկ դեր չունին այս գարշելի նախճիրներուն մէջ որ կատարուած են մոլեռանդ խուժանին ձեռքով զօրքերու եւ բարձր իշխանութեանց աջակցութիւնով: Կոչ կ'ընենք Խորհրդարանին ողջմտութեան, արդարասիրութեան, որպէսզի ազդու միջոցներ ձեռք առնէ, յանցաւորները պատժելու համար: Հին ոճիրներուն անպատիժ մնալը քաջալեր մըն է մարդասպաններուն: Վարչութեան մէջ համիդեան մարդոց ներկայութիւնը ոճիրներու մշտնջենական աղբիւրը պիտի ըլլայ՝ ուրկէ պիտի տուժեն միշտ կայսրութեան անդորրութիւնը եւ ապահովութիւնը:

5 Մայիս

ԵՐՐՈՊԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԵՆ

Օսմանեան Խորհրդարանի Մայիս 1-ի նիստին մէջ, թուրք կառավարութիւնը հիմնուելով Ատանայի վալիին, կոտորածներու կազմակերպողին, ստալոյ տեղեկութիւններուն վրայ, ամբաստանեց հայ յեղափոխականները խռովութիւններու իբր թելադրիչ եւ ներկայացուց հայերը իբր նախադրածակ: Մեր բոլոր ուժով կը բողոքենք այդ անորակելի սադրանքին (insinuation) դէմ որ նպատակ ունի հովանաւորել իսկական ոճրագործները: Սա սիրելի սիստեմն է համիդական բռնակալութեան եւ միանգամայն գրգռու մը ու անարգանք մը հայ ժողովրդի հասցէին, մահատանջ եւ յաւիտեանական քաւութեան նոխազը հակայեղափոխութեան: Հայ կոմիտէները եւ ժողովուրդը, ընդհակառակը, բոլոր սրտով կը ցանկան խաղաղութեան եւ տարբեր ազգութիւններու միաբանութեան եւ կայսրութեան բարգաւաճման: Հայկական կոտորածները սկսան Պոլսոյ պետական հարուածի հետեւեալ օրը, մեղսակցութիւնով տեղական իշխանութիւններուն եւ յետադիմական զօրքերուն: Ինչպէս միշտ, հայերը յանկարծակիլ եկած, երկու օր ինքնապաշտպանուեցան, սակայն անկարելի էր ընդերկար դիմադրել կառավարական եւ արիւնարբու խուժանի միացեալ ուժերուն դէմ:

Այժմ Ատանայի ողբերգութեան եւ նահանգներու մասին ամէն տեղեկութիւն խիստ զրաքննութեան ենթարկուած է: Հակառակ պաշտօնական աղբիւրներու ապահովութեանց Հայաստանի դրութիւնը լի է վտանգներով: Մեր սեփական տեղեկութեանց համեմատ, կոտորածը կը սպառնայ ծաւալիլ հեռաւոր նահանգներուն մէջ, ուր վարչութիւնը յանձնուած է հին համիդական ռեժիմի մարդոց: Գուցէ 1895-96ի հայկական ջարդերուն վերսկսումի նախօրէին կը գտնուինք:

Ուժգին կոչ կ'ընենք քաղաքակիրթ աշխարհի հանրային կարծիքին եւ մամուլին նորանոր եւ ահաւոր աղէտներու առջեւը առնելու համար:

7 Մայիս

Գ 4.- ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽ. ՄԱՐՄԵԻ ԵՒ ԻԹԹԻՀԱՏԻ ՍԵԼԱՆԻԿԻ ԿԵԴՐՈՆԻ ՄԻՋԵՒ ՓՈԽԱՆԱԿՈՒԱԾ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Իթթիհատ Վէ Թերագգը կուսակցութեան Սելանիկի Կեդրոնական Կոմիտէին

Հաւագոյն յարաբերութիւն մշակած եւ իր ընկերակցութիւնը մեզ պատիւ համարած անձնաւորութիւններէն մէկն ալ՝ Ձեր կուսակցութեան յարգելի անդամներէն Վիեննայի գինուորական կցորդ Իսմայիլ Հազգը պէյն է:

Ասկէ առաջ լրագիրներուն մէջ երեւցան Վիեննայի մէջ տեղի ունեցած էթերվիւներ եւ Հազգը պէյին վերագրուած յայտարարութիւններ, որոնց համաձայն, իբր թէ, Ատանայի աղէտներու սկզբնապատճառները Պոլսոյ Հայ Կոմիտէներն են եղած:

Մէկ կողմ թողունք այն որ իրողութիւնն ու ճշմարտութեան էութիւնը բաւական են ինքն ըստ ինքեան հերքելու այդ կարգի բոլոր մեղադրանքները, որոնք կ'ուղղուին առհասարակ հայկական տարրին. եթէ Հայկական Կոմիտէները ըստաճը Քաղաքական կուսակցութիւններն ու Մարմիններն են, այս Երկրի ու Պետութեան վերածնունդեան, վերաշինութեան, ընդհանուր բարօրութեան, խաղաղութեան եւ եղբայրութեան նուիրուած Հ. Յ. Դաշնակցութեան, նպատակը, ուղղութիւնն ու գործունէութիւնը ա՛յնքան յայտնի են եղած որ, արժանացած են ընդհանրութեան համակրութեանն ու Ձեր կուսակցութեան գնահատմանը:

Հետեւաբար չենք կրնար ընդունիլ, որ Իսմայիլ Հազգը պէյը հակառակ գաղափար եւ համոզում ունեցած եւ յայտնած կրնայ ըլլալ:

Բայց եւ այնպէս՝ լրագիրներու այդ տեղեկութիւնները ցարդ հերքուած չըլլալը կասկած կ'առաջացնէ: Այդ հրատարակութիւնը ձեր մարմնի ուղադրութիւնն եւս գրաւած պէտք է ըլլայ եւ դուք պէտք տեսած ըլլալու էք ստուգելու թէ իրօ՞ք տեղի ունեցած են այդ յայտարարութիւնները, մանաւանդ որ կուսակցութեան մէջ կարեւոր, տեղ գրաւող Իսմայիլ Հազգը պէյի նման անդամ մը չի կրնար ինքզինք իրաւասու համարել իր կուսակցութեան մտքերուն ու համոզումներուն հակառակ մտքեր յայտնելու:

Ուստի, կը խնդրենք, մեզ յայտնել նախ՝

Արդեօք իսկապէս տեղի ունեցած են յիշուած էթերվիւները եւ այդ առթիւ Իսմայիլ Հազգը պէյին վերագրուած յայտարարութիւնները: Եթէ տեղի չեն ունեցած, բարի եղիք պաշտօնապէս հերքելու:

Երկրորդ՝ եթէ հակառակ հաւանականութեան, տեղի ունեցած են, Ձեր կուսակցութիւնը ճշմարտութեան համապատասխան կը գտնէ անոր յայտնած մտքերը:

**ՀԱՅ Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ**

13/28 Յունիս 1909

Հ. Յ. Դաշնակցութեան Պոլսոյ Պատասխանատու մարմնին

Յարգելի եղբայրներ,
Խաղաղութեան եւ եղբայրութեան ամրապնդման համար, ձեր կուսակցութեան նպատակը եւ ուղղութիւնը մեզ բոլորիս յայտնի է: Վիեննայի գինուորական կցորդ Իսմայիլ Հազգը պէյի թերթերէ ոմանց թղթակիցներուն ըրած յայտարարութիւնները պաշտօնական կարեւորութիւն մը չունենալով հանդերձ, մեր կուսակցութեան նպատակին եւ ուղղութեան եւս համաձայն չըլլալը կը յայտնենք եւ կը հերքենք:

Մեր այս նամակը ձեր ցանկացած թերթերու միջոցով հրատարակելու արտօնուած ըլլալիդ եւս կը յայտնենք: Այսպիսի անհատական խօսակցութիւններու երկու կուսակցութեանց միջեւ հաստատուած յարաբերութեան եւ համաձայնութեան վրայ ազդեցութիւն չի կրնալ ունենալը աւելցնելով, կը խնդրենք, ազնիւ եղբայրներ, որ ընդունիք մեր համակրանաց հաւաստիքը:

**ԻԹԹԻՀԱՏ ԵՒ ԹԵՐԱԳԳԸԻ ՍԵԼԱՆԻԿԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵԴՐՈՆ**

Համար 407
17 Յունիս 1325 [1909]

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ՉԼՈՒԽ VI

ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

Կազմակերպական շրջաններուն սահմանուած բաժինը կը բանանք Վասպուրականով, ուր 1905էն ի վեր կը գործէին երկու Կեդր. Կոմիտէներ. **Վան-Վասպուրականը**, ծանօթ նաեւ Շամ եւ Շամիր ծածկանուններով, եւ **Լեոնապարը**: Վերջինս կազմակերպուած էր Իշխանի (Միքայէլեան Նիկոյ) կողմէ եւ կը տարածուէր Վանի վիլայէթին հարաւի գաւառներուն վրայ (Ռշտունիք, Կարճկան, Մոկս, Շատախ եւայլն):

Վասպուրականը ունէր ուժեղ կազմակերպութիւն եւ յեղափոխական հարուստ անցեալ. հոն մարտական եւ կազմակերպական նկատառելի գործունէութիւն ծաւալած էին Պետոյի (Սերեմճեան), Վազգէնի (Տերոյեան Տիգրան), Խանասորի Վարդանի, Գիսակի (Վարդգէս, Սերեմկիլեան Յովհ.) նման դէմքեր: Վերջին տարիներու հանրածանօթ գործիչներն էին Վահան Փափագեան (Կոմս), Իշխան, Վանայ Սարգիս (Բարսեղեան, Օտապաշեան Պողոս), Վարդան Շահպազ եւ ուրիշներ: Մեծ թափով առաջ կը տարուէր ժողովուրդի զինումը, որ կը կատարուէր հարեւան պարսկական Ատրպատականի ճամբով: Յատկանշական ուրիշ երեւոյթ էր՝ Վասպուրականի ղեկավարութեան հաստատած սերտ կապը թրքական բանակի ազատամիտ սպաներու եւ այլ տարրերու հետ, որոնց գործակցութեամբ 1906 թուականէն կը հրատարակուէր սուլթանական յետադէմ վարչակարգին դէմ ուղղուած «Մապահ իլ Խէյր» օսմաներէն թերթը:

Այսուհանդերձ 1908 թ. սկիզբը շրջանը ենթարկուած էր ծանրագոյն ցնցումի մը. դիւրեւ Պաւլի մատնութեան հետեւանքով թրքական իշխանութիւնները երեւան հանած էին կուսակցութեան զինապահեստներուն մէկ կարեւոր մասը եւ գրաւած՝ տարիներու տքնաջան աշխատանքով ամբարնուած հսկայական քանակութեամբ ռազմամթերք: Հետեւեցան խուզարկութիւններ եւ խստագոյն հետապնդումներ՝ նոր պահեստներ գտնելու եւ յեղափոխականները ձեռք անցնելու նպատակով: Չերբակալուեցան ու բանտ նետուեցան Արամ Մանուկեան եւ շատ ուրիշներ՝ որոնց շարքին մատնիչ Պաւլի ահաբեկիչ պատանի Տաճատ Թերլեմէզեանը: Հալածանքները եւ կոտորածները տարածուեցան ամբողջ նահանգին մէջ ահ ու սարսափի մատնելով հայ ազգաբնակչութիւնը: Ղեկավար ուրիշ դէմքեր, ինչպէս Կոմս եւ Վանայ Սարգիս, անցան Լեոնապարի շրջան, ուր եռանդուն կը գործէր Իշխանը:

Չինապահեստներու գրաւումը եւ շրջանի հայութեան կրած մարդկային եւ նիւթական կորուստները մեծ հարուած կը հասցնէին անշուշտ Վասպուրականի յեղափոխական շարժման: Տկարացողներ եւ մինչեւ իսկ կառավարութեան գործիք դարձած մատնիչներ պիտի չպակսէին: Այնուամենայնիւ, սեփական ժողովուրդի պաշտպանութեան ի խնդիր մղուած կռիւները պիտի շարունակուէին անվիատ կերպով: Ընդատակ անցած բոլոր մը ղեկավարներու եւ հաւատարմ մարտիկներու առաջնորդութեամբ՝ ժողովրդական ընդդիմութիւնը յարատեւեց մինչեւ, Սահմանադրութեան հռչակմամբ, ընդհանուր Թուրքիոյ մէջ ընդդիմադիր ուժերու յաղթանակը:

* * *

Վասպուրականի թղթածրարը կազմուած է հետեւեալ նիւթերէն.

- 1.- 1909 թ. Ապրիլի Խորհրդակցական ժողովի բանաձեւեր, սահմանուած հաւանաբար ուղարկուելու Հ.Յ.Դ. Հինգերորդ Ընդհ. Ժողովին:
- 2.- Չինապահեստներու գրաւման առիթով գրութիւններ՝ Արամ Մանուկեանէն, Վանայ Սարգիսէն եւ Վասպ.ի Կեդր. Կոմիտէէն:
- 3.- Ինքնապաշտպանութեան հրահանգներ:
- 4.- Բողոքի հանրագրութիւն Վանայ ժողովուրդին:
- 5.- Սահմանադրութեան հռչակման առիթով՝ հրապարակային կոչեր եւ յայտարարութիւններ:

Ե. Փ.

Փաստ. 669-113

1.- Հ.Յ.Գ. ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԽՈՐՀՐԳԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԲԱՆԱՉԵՒԵՐԸ

Արձանագրութեան շապիկին վրայ նշուած է Գաւաշ: Ամենայն հաւանականութեամբ կը վերաբերի Վասպուրականի երկու Կ. Կոմիտէութեանց շրջաններուն՝ Վանի եւ Լեոնապարի: Ժողովը գումարուած է Գաւաշի մէջ (Լեոնապարի շրջան), թուական չի կրեր, շապիկին վրայ, այլ ձեռագրով, գրուած է «հաւանօրէն 1908-9 թուականներուն»: Բանաձեւերը մօտէն քննելով, սակայն, պարզ կը դառնայ որ խորհրդակցական ժողովը գումարուած պիտի ըլլայ Օսմ. սահմանադրութեան հռչակումէն ետք, ուրեմն 1909 թ. Ապրիլ 1-4:

Հ.Յ.Գ. Վասպուրականի Կ. Կոմիտէի հրահրով Ապրիլ 1-էն մինչեւ 4-ը գումարուած խորհրդակցական կուսակցական ժողովը կազմակերպուած մարմիններու տեղեկագիրները եւ ընկերներու գեկուցումները լսելէ յետոյ, հետեւեալ հարցերու մասին կարգ մը որոշումներ ըրաւ, որոնք կը յայտարարուին Վասպ.ի շրջանի բոլոր մարմիններուն:

- Օրակարգի հարցերն էին
- Ա. Ի՞նչ ուղղութեամբ պէտք է տանել բանաւոր եւ գրաւոր պրոպականտները:
- Բ. Դաշնակցական ընկերներու հրապարակած թերթերը:
- Գ. Ի՞նչ հիմունքներու վրայ պէտք է դնել ինքնապաշտպանութիւնը:
- Դ. Մեր շրջանի վերակազմութիւնը:
- Ե. Դաշն. Ե.րդ Ընդհ. Ժողովին մասնակցելու սակը եւ Շրջանային ժողովի իրաւասութեան սահմանները:

Ա.

Ժողովը լսելով բանաւոր եւ գրաւոր պրոպականտի համար տուած գեկուցումը, վիճաբանութիւններէ յետոյ եկաւ հետեւեալ եզրակացութեան:

1. Նկատելով, որ կուսակցական գործունէութեան յաջողութեան համար ամենակարեւոր ազդակներէն մէկը կուսակցութեան բանաւոր եւ գրաւոր պրոպականտն է:

II. Նկատելով, որ արդէն պրոպականտը մեր շրջանի մէջ սկսուած եւ շարունակուող ու բաւականին ընդլայնուած կուսակցական գործ է. բայց շնորհիւ քաղաքական եւայլն պայմաններու ու կարող, պատրաստուած ընկերներու պակասութեանը՝ պրոպականտն ունի պատահական եւ մասամբ անտակտ բնոյթ:

III. Նկատելով, որ գաւառներու մէջ մասնաւորապէս՝ չնայած ազգաբնակչութեան մեծ տոկոսին եւ ահագին կարիքին՝ մինչեւ ցարդ ցանկալի չափերով եւ ուղղութիւնով չէ տարուած բանաւոր եւ գրաւոր պրոպականտը:

Ժողովը պրոպականտան լուրջ հիմունքներու վրայ դնելու եւ կուսակցական գործունէութեան ամենամեծ ազդակը դարձնելու համար՝ կ'առաջարկէ

1. Բանաւոր պրոպականտը սիստեմատիկ դարձնելու, սխալներէ եւ վայրիվերոյ ըմբռնումներէ ազատելու համար՝ կազմակերպել Կ. Կոմիտէութեան շրջանի մէջ պրոպականտային կուրսեր՝ կուսակցութեան տեսակէտները պարզելու եւ պրոպականտային տակտիկը մշակելու համար, մասնագէտ պրոպականտիստ ընկերներու ղեկավարութեամբ:

2. Որոշ սիստեմով կազմել քաղաքի եւ գաւառներու գրադարանները:

3. Ոյժ տալ հրապարակական սիստեմատիկ դասախօսութիւններու եւ այժմէական հարցերը արձագանգող միջիններու:

4. Պրոպականտային տակտիկը համաձայնեցնել կուսակցական գործնական տակտիկին:

5. Ոյժ տալ դպրոցական գործին, հարկաւոր օժանդակութեամբ ստեղծել նիւթական միջոցներ եւ գործը պատրաստուած ուսուցիչներու յանձնել:

6. Թուղցիկներով արձագանգ տալ ընթացիկ կարեւոր խնդիրներու, վայրկեանը ըմբռնել տալու համար մեր շարքերուն եւ առհասարակ աշխատաւոր տարրերուն:

7. Աշխատիլ ունենալ կիսապաշտօնական օրգան մը, որը սիստեմատիկ կերպով պարզէ կուսակցութեան հիմնական սկզբունքները եւ արտայայտէ կուսակցական քաղաքականութիւնը պետական ազգային եւ հասարակական հիմնարկութիւններու եւ խնդիրներու նկատմամբ:

8. Ժողովրդական հաւատալիքներու եւ աւանդական սրբութիւններու վերաբերմամբ բանաւոր թէ գրաւոր պրոպականտա մղելու ատեն պէտք է գործը տանիլ համաձայն մեր կուսակցութեան պատմափիլիսոփայական աշխարհային հայեացքին եւ դաւանանքներուն՝ անտակտօրէն չվիրաւորելով ժողովրդի զգացումները:

Բ.

«Դաշն. ընկերներու հրատարակած եւ դաշն. ուղղութիւն կրող թերթերու դիրքը կուսակցութեան հանդէպ» գեկուցումը լսելէ եւ երկար վիճաբանութիւններէ յետոյ,

1. Նկատելով, որ թերթերը առհասարակ տեղական պրոպագանտային գործին օգտակար լինելով հանդերձ կազմակերպական ձեռնարկներու եւ գործիչներու

հանդէպ բռնած են անկորեկտ դիրք,

II. Նկատելով, որ թերեւս անկախ խմբագիրներէն այդ թերթերը պրոպակցիայի եւ անմեղ մատուցիւններու տեղի են տուած,

III. Նկատելով, որ այդպիսի երեւոյթներ մեր հակառակորդներու ձեռքին զէնք կը դառնան ընդդէմ մեր կուսակցութեան,

IV. Նկատելով, որ մուծ ոյժերը լուեխայն կը խրախուսուին եւ թղթակիցներու անունով ձեռնարկներ կամ ընկերներ կը վարկաբեկեն,

V. Նկատելով, որ շատ անգամ փոխանակ սկզբունքային հարցեր շօշափելու՝ անձնականութիւններու կը մօտենան,

Այս եւ այն բազմաթիւ նկատումներով՝ ժողովը յարգելով հանդերձ կուսակցութեան ընդգրկած «խօսքի եւ մամուլի ազատութեան» մեծ սկզբունքը, կ'առաջարկէ թերթ խմբագրող ընկերներուն, որ անոնք կուսակցական ձեռնարկներու մէջ պահելով հանդերձ իրենց դաշն. անհատական ազատութիւնը, պէտք է զգուշանան հետեւեալ երեւոյթներէն:

1. Ի սպառ չմօտենալ այն հարցերուն, որոնք դաւադրական բնոյթ ունին հանդէպ կառավարութեան կամ ժողովրդեան:

2. Կազմակերպական լեզալ ձեռնարկներուն վերաբերող թղթակցութիւնները խիստ ստուգման եւ հսկողութեան ենթարկել՝ պրոպակցիայի եւ անուղղակի մատուցիւններու նիւթ չտալու համար:

3. Խուսափիլ այն բոլոր երեւոյթներէն, որոնք կուսակցութեան ներսի ընկերներ զօտեցնելու կը ծառայեն՝ անձնականութիւններ վիրաւորելով, եւ կը ստեղծեն ոչ բնականոն կացութիւն, խոչընդոտ հանդիսանալով ստեղծագործող աշխատանքի:

4. Այն բոլոր հարցերը որոնք կուսակցական տեսակէտէ ինքնադատական բնոյթ ունին, կատարուելու են կուսակցութեան ներսը — ռայոնական, շրջանային եւ տեղական-դաշն. ընկերներու ժողովներու մէջ:

Խորհրդակցական ժողովը լիայոյս է, որ երիտասարդ ընկերները ըմբռնելով այս հարցի կարեւորութիւնը — մանաւանդ որ վիճելի խնդիրները պարզուած են — այսուհետեւ աւելի զգոյշ կը լինեն նման պարագաներու մէջ: Կ. Կոմիտէի վրայ պարտք կը դրուի ընկերական յարաբերութեամբ եւ խորհուրդներով աշխատիլ չէզոքացնելու այդ երեւոյթները, իսկ հակառակ պարագային կազմակերպական ներքին կանոնագրի համաձայն պատասխանատուութեան կանչել այդպիսի ընկերները:

Գ.

Ժողովը «Կազմակերպական, ժողովրդական եւ պետական ինքնապաշտպանութեան» մասին տրուած գեկուցումը լսելէ յետոյ, եկաւ հետեւեալ խորհրդակցութիւններու:

I. Նկատելով, որ ի շարս յեղափոխական տեսակէտի վրայ կանգնած միւս կուսակցութիւններու՝ Դաշնակցութիւնն ալ կ'ընդունի յեղափոխական-մարտական գործունէութեան անհրաժեշտութիւնը:

II. Նկատելով, որ մեզ շրջապատող այլացեղ տարրերը, լինելով տգէտ եւ մոլեռանդ՝ կրօն-ազգային հարցերու մէջ դիւրաւ կ'ենթարկուին իրենց աղանջներու եւ սեւ ոյժերու գրգռումներուն հայ յեղափոխութեան եւ աշխատաւորութեան դէմ:

III. Նկատելով, որ սահմանադրական կարգերը դեռ չեն հաստատուած [եւ] յետադիմական շարժումը կրնայ մեր ձեռքէն խլել այս կիսատ ազատութիւնը:

Այս եւ այլն նկատումներով՝ ժողովը անհրաժեշտ կը գտնէ մեր ժողովրդի մարտական պատրաստութիւնը, առաջարկելով հետեւեալ միջոցներ:

1. Աշխատել խաղաղ միջոցներով գիտակցութեան բերել մահմետական տարրերը, բաժանելով իւր աղանջից եւ մօտեցնելով իրենց շահակից հայ աշխատաւորներուն:

2. Զգտել պետութեան միջոցներով չէզոքացնել աւագակցութիւնները եւ խուլիզանական շարժումները, անոնց վերացումը հաւասարապէս կարեւոր համարելով բոլոր աշխատաւոր տարրերուն եւ պետութեան, պահանջելով զօրք կամ տեղական կամաւոր պահակա]գունդերու համար զէնք:

3. Մտցնելով մեր շարքերու եւ առհասարակ ժողովրդի լայն խաւերու մէջ գինուելու անհրաժեշտութիւնը, աշխատիլ այդ նպատակին հասնելու համար օգտուիլ մասնաւոր առեւտրական ձեռնարկներէ՝ կուսակցութեան հսկողութեան տակ:

4. Կազմակերպութիւնը նախաձեռնութիւն պէտք է վերցնէ գինել իր շարքերը եւ նպաստել ոչ կուսակցական տարրերու գինման:

5. Կուսակցութիւնը պէտք է պրոպագանտային միջոցաւ ստեղծէ ռազմական կորով ժողովրդի սրտի մէջ եւ այդ խնդրին մօտենալ ընդհ. կուսակցական յեղափոխական տեսակէտով:

6. Կազմակերպութիւնը պարտաւոր է աշխատիլ մարզանքներով զէնքը՝ գարդի վիճակէն դարձնել քաղաքական պայքարի եւ ինքնապաշտպանութեան միջոց:

7. Պատրաստել որոշ մարդիկ ղեկավար ընկերներով՝ շրջաններու համար: Ժողովը յոյս ունի, որ ինքնապաշտպանութեան հարցը կը դրուի լայն հիմունքներու վրայ, դարձնելով բոլոր աշխատաւոր տարրերու համար պայքարի, ազգ. ինքնապաշտպանութեան եւ յետադիմութեան դէմ կռուելու լաւագոյն միջոցը:

Դ.

Ժողովը լսելով վերակազմութեան վերաբերեալ գեկուցումը, եկաւ հետեւեալ եզրակացութեան:

Իբրեւ կուսակցական կազմակերպական օրգաններ համարել քաղաքական խմբերը, արհեստակցական եւ գիւղացիական միութիւնները: Միութիւններ կազմելու

ատեն պէտք է ի նկատի ունենալ հետեւեալ պայմանները:

I. Քաղաքական խմբերու մէջ կարող են մտնել Դաշնակցութեան քաղաքական-տնտեսական ծրագիրն ու տակտիկը ամբողջութեամբ ընդունող հետեւեալ տարրերը. ա) ապադասակարգային-աշխատաւորական մտաւորականներ բ) մանր արդիւնաբերողներէն եւ խանութպաններէն անոնք, որոնք յաւելեալ արժէքով չեն ապրիր: Դասակարգային շահերուն հակադիր անհատները երբ ընդունին մեր պատամափիլիսոփայական աշխարհայեացքը ամբողջութեամբ, միայն այն ժամանակ կարող են գործօն անդամ լինել եւ կ'ենթարկուին՝ կուսակցութեան տնտեսական-դասակարգային քաղաքականութեան իրենց մասնաւոր ձեռնարկներուն մէջ, առանց կողմնակի միջամտութիւններու կամ նկատմաներու:

II. Կոոպերատիւ միութիւնները քաղաքներու մէջ համարուելու են կռուի ամենալաւ միջոցը մասնաւոր շահագործման սխտեմին դէմ. ասոնք միջոցներ են որ մի կողմէն քաղաքական խումբերը կը կապեն տնտեսական-դասակարգային գործունէութեան հետ, իսկ միւս կողմէն աշխատաւորութեան վարժեցնելու են ընկերակցական գործունէութեան, համայնական սեփականատիրութեան եւ համերաշխ գործունէութեան:

III. Արհեստակցական միութիւնները սկզբունքով ընդունելով տնտեսական պայքարի ամենալաւ միջոցներէն մէկը եւ անոնց կազմակերպումը ու ղեկավարութիւնը համարելով իւր պարտականութիւններէն մէկը, բայց օգտուելով Կովկասի փորձառութիւններէն, ժողովս յարմար կը գտնէ արհեստակցական միութիւնները կազմակերպել անկուսակցական հողի վրայ. միայն անոնց մէջ մղելու է ուժեղ պրոպագանտա՝ շահագրգռուելու քաղաքական հարցերով եւ այնպիսի տակտով տանելու է գործը, որ չքայքայուի տեղական արդիւնաբերութիւնը:

IV. Գիւղացիական միութիւնները համարելով մեր ամենակարեւոր կազմակերպական օրգաններէն մէկը, բխեցնելով մեր ծրագրի պատմա-փիլիսոփայական աշխարհայեացքէն իբրեւ աշխատաւորներու, իբրեւ ազգաբնակչութեան ստուար մեծամասնութիւնը, առանց որու համակրութեան անկարելի է քաղաքական կամ հասարակական որոշ գործունէութիւն: Գիւղացիական միութիւնները իրենց օրգաններով գիւղացու մէջ կը զարգացնեն ընկերակցական ոգի, կը չափաւորեն անոր մասնաւոր սեփականութեան մոլեռանդութիւնը, կը շահագրգռեն հասարակական-պետական հարցերով, նորան կը կապեն հողի հետ ու տեղի վրայ ապրելու յոյս կու տան:

Այս եւ ուրիշ նկատումներով գիւղացիական միութիւնները կազմակերպել կուսակցական հողի վրայ:

Այս միութիւններուն անդամակցելու ցենզը նախատեսուած է գիւղացիական միութեան կանոնադրի մէջ:

Ե.

I. Ի նկատի ունենալով, որ Վասպի ընկերներու, մարմիններու եւ շրջանի աշխատաւոր ազգաբնակչութեան շահերու տեսակէտէն չափազանց կարեւոր է, որ Վասպի Կ. Կոմիտէն եւ Կ. Կոմիտէներու շրջանային ժողովը ակտիւ մասնակցութիւն ունենայ կուսակցական բարձրագոյն իրաւասու ու ձեռնհաս ժողովին մէջ:

II. Նկատելով, որ ընդհ. կուսակցական ուղղութեան վրայ ներգործելու համար եւս անհրաժեշտ է ունենալ այդ իրաւունքը:

III. Նկատելով, որ անցեալի մէջ Վասպի շրջանի վայելած դիրքը առհասարակ կուսակցութեան, մասնաւորապէս վերջին Ընդհ. ժողովին մէջ, եւ վերջին դէպքերու շնորհիւ Վասպի մարմնի պատասխանատուութեան տակ ընկնելը:

IV. Նկատելով որ շրջանի բոլոր ընկերներու եւ մարմիններու պատիւը կը պահանջէ ձայնի իրաւունքով մասնակցել մեր կուսակցութեան Ընդհ. ժողովին:

Վասպի շրջանային խորհրդակցական ժողովը անհրաժեշտ կը գտնէ Կ. Կոմիտէի միջոցով պահանջել բոլոր ընկերներէն եւ մարմիններէն՝ ջանք չինսայել նպաստելու շրջաններու կազմակերպման, ոչ միայն լրացնելու դաշն. կանոնադրով պահանջուած նուազագոյն ցենզը, այլեւ գերազանցօրէն բաւարարութիւն տալ անոր:

Շրջանային ժողովի իրաւասութիւններն են

1. Շրջաններու գործունէութիւններն ու հաշիւները եւ նախահաշիւ կազմել:
2. Կը քննադատէ ուրիշ Կ. Կոմիտէներու շրջաններու ընդհ. կուսակցական բնոյթ ունեցող կատարուած ձեռնարկները:
3. Որոշել ընդհ. կամ մասնակի գործելակերպ՝ շրջանի տարբեր մասերու համար, չհակասելով Ընդհ. ժողովի որոշումներուն:
4. Որոշել յատուկ ձեռնարկներ շրջանի սահմաններու մէջ:
5. Դատական իրաւասութիւն ունի ընկերներու եւ մարմիններու վերաբերմամբ:
6. Ներկայացուցիչ կ'ուղարկէ Ընդհ. ժողովին իր շրջանի տեսութիւնները լսեցնելու եւ պաշտպանելու համար, նոր առաջարկներ կ'ընէ սկզբունքային եւ տակտիկային խնդիրներու վերաբերմամբ, ո'չ միայն իր շրջանի, այլ նաեւ ընդհանուր կազմակերպութեան վերաբերմամբ:
- Շրջանային ժողովին կարող են մասնակցել 1) Կ. Կոմիտէի ներկայացուցիչը, 2) Կոմիտէների ներկայացուցիչները, 3) Ենթակոմիտէներու ներկայացուցիչները: Գիւղացիական միութիւններէն՝ մինչեւ 200 հոգու մէկ ներկայացուցիչ: Քաղաքական խումբերին եւ Արհեստակցական միութիւններին մինչեւ 100 հոգու մէկ ներկայացուցիչ:

ՎԵՐՋ

Փաստ. 667-68

2.— ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Դիերցի Դաւիթի դաւաճանական մատուցեան եւ Վասպուրականի զինապահեստներու գրաման մասին Արամ Մանուկեան կը տեղեկացնէ Ատրպատականի մարմնին, գրելով թուրք-պարսկական սահմանին վրայ գտնուող Մեմուրի (Ս. Թաղէի վանք) ընկերներուն եւ կը թելադրէ ձեռք առնել հարկ եղած կանխագրուչական միջոցները:

Մենաւորի ընկերներին

Միրելիք !

Երեւի լսեցիք այն սոսկալի հարուածը, որ իջաւ մեր գլխուն, շնորհիւ մի ընկեր կոչուած սրիկայի, որուն դուք ծանօթ էք. այս ամառ իբրեւ «մարտական օժանդակ» ներս ճամբեցիք. դա Դ՛հերցի Դաւիթն է...

Դաւաճանութեան ամենասոսկալին պայթեց մեր գլխուն. մեզ անյայտ պատճառով նա բռնել տուեց վերջին 1905, 906 եւ 1907 թ.ների դրսից փոխադրած ամբողջ ապրանքները... սերունդների տարիների աշխատանքը ծով ընկաւ:

Առաջին օրը յանկարծակի գալով չկարողացանք մի որեւէ բան անել. ուշ երեկոյեան միայն իմացանք որ դաւաճանութիւնը մեր շարքերից է եղել. միւս օրը պատրաստուեցինք հակահարուած տալ, բայց դժբախտաբար դաւաճանը ազատուեց. կռիւր տեւորից փոխուեց լայն մասսայականի, 5-8 ժամ երկու կողմից կրակ արձակուեց, զինուորներից եւ զապիթիաներից 8-10 հոգի ընկան. կռիւր եղաւ Ա... Թաղում, Սահակ-բէյի տան դիմաց...

Ժողովրդին համարեա վնաս չեղաւ. մերոնցից մէկը թեթեւ վիրաւորուած է թեւից, այն էլ մեր գնդակներից: Նոյն կռուի ժամանակ կառավարութիւնից այդ փողոցում հանուած մէկ պահարանի ապրանքները, համարեա ամբողջութեամբ յետ խլեցինք... Ժողովուրդը մեծ մասամբ սուգ ու շիւտանի մէջ է, իսկ մի փոքրամասնութիւնը, մեր շարքերից, դրսից եւ արմենականներից գլուխ են բարձրացրել եւ միաբերան կը գոռան որ յանցաւորը Կ. Կոմիտէն է, դրսեցիները եւայլն. ուշակցիան սկսուած է...

Սրիկան գտնուած է կառավարական մի ազդեցիկ պաշտօնեայի տան (Ալայի բէյ), ազատ երթեւեկում է, չորս դին խօսում է ժողովրդի հետ առանց ամօթի. շատերին ասել է որ ինքը ժողովրդին բարբարութիւն է արել, գէնքերը ժողովրդին կոտորել տալու համար է...

Այս երկրորդ օրուայ դէպքից յետոյ, կառավարութիւնը բոլոր ուժերը յետ քաշեց, դադարեցրեց խուզարկութիւնը եւ սպասողական վիճակի մէջ մենք եւ կառավարութիւնը դէմ առ դէմ կանգնած ենք. վերջը Աստուած գիտէ թէ ի՛նչ կը լինի:

Դէպքի ժամանակ ձգեցինք մի ուղմբ, եւ պատահական կերպով պայթեցրինք մի ցինկ խմոր¹. այս երկուսի պայթումը սոսկալի ազդեց կառավարութեան եւ թուրք ամբոխի վրայ. նրանք սարսափած յետ փախան...

Ինչեւէ. գրում ենք ձեզ յոյս չունենալով, երկրորդ անգամ գրելուն, սիրտ չունենալով երկար գրելու, երես չունենալով մանրամասն խօսելու...

Այս սուրհանդակը կը ճանաչէք. սա մի անգամ էլ է եկել, բայց վերադարձել է Յակովբի հետ, բերել է հասարակ թերթեր, որը թողնուած է Աւետարան². լաւ կը լինի, որ կապողը այնպէս թեթեւ լինի եւ յարմար, որ մէջքը կապի. աշխատեցէք ուղարկել Վտակ³ N 25[ից] բարձր թուերը, մէկ-մէկ օրինակ, եւ եթէ այլ կարեւոր նորութիւններ կան, այն էլ կը ճամբէք, նորէն մէկ-մէկ օրինակ. ի հարկէ աշխատեցէք մեծ մասամբ նորութիւններ ճամբել, մանաւանդ նամակներ եթէ այդպիսիք կան:

Սրան դրամ հարկաւոր չէ, բացի հացից ոչինչ չէք տայ...

Ինչպէս գիտէք, այն լիրբը ձեր բոլոր գաղտնիքներն էլ գիտէ. զգուշութեան համար, ամէն բան լաւ դասաւորեցէք, ձեր անունները — կեղծ — փոխեցէք եւ միշտ զգոյշ մնացէք մինչեւ նրա սատկիլը: Հետաքրքիր է իմանալ, թէ ձեզ մօտ, Բլուր եւ Աւարայր ու Մինարէթ⁴ ինչքան ապրանք կայ պատրաստ...

Զգիտենք ի՛նչ վիճակի մէջ է եւ գծերի դրութիւնը. մեր մարդկանց տրամադրութիւնը ինչպէս է. այս բոլորի մասին դուք գրեցէք մեզ:

Ներփակ նամակները անմիջապէս ըստ պատկանելոյն ճամբեցէք:

Գրեցէք մեզ հող եղած նորութիւնների եւ նոր ընկերներու մասին եթէ կան այդպիսիք: Լսեցինք որ մի քանի մարդիկ կան որ պատրաստուած են ներս գալ. լաւ կը լինի որ դրանք սպասեն, տեսնենք ինչ վերջ կ'ունենայ:

1.- «Մի ցինկ խմոր». խմորը պայթուցիկ ցինկ է, ուժանակ. այսինքն զինկով շինուած մէկ արկղ ուժանակ:
 2.- Աւետարանը թուրք-պարսկական սահմանի վրայ Արաղայի խաչան գիւղն է:
 3.- Վտակ՝ Թիֆլիսի հրատարակուող դաշնակցական լրագիր (1907-1908):
 4.- Յաջորդաբար՝ Քիշմիշթեփե, Խոյ եւ Սալմաստ:

ներկայ ճգնաժամը... Գծերի վրայ դեռ վստահութիւն չկայ, ըստ երեւոյթին ամէն բան քանդուած է թւում...

Մենք առաջով ապահով ենք, — մեր տրամադրութիւնը բարձր է, եւ յուսահատուելու էլ տեղիք չունենք. այս էլ կ'անցնի:

Սրան անմիջապէս յետ ճամբեցէք, թող չուշանայ ո՞վ գիտէ ի՞նչ կը լինի:

Ընկերական բարեւանքով ԱՐԱՄ

1908⁵ թ. Փետր. 6-ին
Շամիր

5.- Բնագրին մէջ 1907 է, ինչ որ ակնբերւ սխալ է, որովհետեւ զինապահեստներու գրաւուը տեղի ունեցաւ 1908 թ. Յունուար 23-էն սկսեալ:

Փաստ. 668-13

3.— ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԶԻՆԱՊԱՀԵՍՆԵՐՈՒ ԳՐԱԽԱՆ ՄԱՍԻՆ

1908 թ. Յունուար-Փետրուար ամիսներուն, դիերցի Դաւոյի մատուցեան հետեւանքով թրքական զօրքը գրաւեց մեծաքանակ ռազմամթերք Վան-Վասպուրականի շրջանին մէջ: Ժընեւ՝ Արեւմտեան Բիւրոյին ուղղուած Վասպուրականի Կեդր. Կոմիտէի այս նամակը սեղմ գիծերու մէջ կը նկարագրէ շրջանը ամիսներ շարունակ ահ ու սարսափի մատուցող անցուղարձերը: Վանի աղէտ անունով ծանօթ այս դէպքին մանրամասնութիւններուն համար տեսնել Վահան Փափագեանի (Կոմս) «Իմ Յուշերը», Ա. հատոր, Պոսքըն, 1950, էջ 506-591:

Վան, Փետր. 11/24 1908

Ընկերներ,

Կ'երեւի հեռագիրները գուժեցին ձեզ այն մեծ դժբախտութեան մասին որ պայթեց մեր գլխին: Յունուար 23ի առաւօտեան լսեցինք որ Ս. Գրիգոր վանքում խուզարկութիւն կայ: Այդ օրերը մի սպանութիւն էր պատահել որ վերագրուում էր մեր սուրհանդակ Ճաֆարին (հայ): 22ի գիշերը մարդ ճամբեցինք դրան գիւղից բերելու. տղաները ճանապարհին հէնց Ս. Գրիգորի տակ հանդիպում են զօրքերի եւ տղաներից մէկը Ճաֆարի հետ կը բռնուի, եւ ահա մենք կարծում էինք որ Ճաֆարն է մատնել: Վանքում կը գտնուէր մեր պահեստներից ամենամեծը. ժողովրդի համար բերած 200000 ծայրձ ամբողջովին հոն էր. ժամը թրքական 4ին լուր տարածուեց որ քաղաքն էլ են խուզարկում. իսկ ժամը 8-9ին նոր իմացանք որ դաւաճանը մեր նախկին ընկերներից տհերցի Դաւիթն է, որ տասը տասն եւ հինգ օր առաջ՝ հասարակ պատճառներով գժտուել եւ վրայի ատրճանակը ձգել ու տուն էր գնացել. ինքը կիսափախըստական գեղացի ընկերներից էր. ժողովրդական

տգէտ տիպ. մեզ մօտ գործակատար էր, հինգ տարի է մեծ եռանդով կ'աշխատէր կուսակցութեան մէջ: Անցեալ տարուան մենք վերջնական կերպով հեռացրել էինք Կովկաս, մէկ էլ տեսանք աշնան յանկարծ տեղս եկաւ. երբ նամակով բացատրութիւն պահանջեցինք այս առթիւ՝ որ առանց մեր գիտութեան մարդ կը դրկեն, Բիւրոն պատասխանեց թէ Տիգրանի համաձայնութեամբ, թէ խորհրդով է ճամբուած... ինչեւէ. իրողութիւնը այն է որ 23ին մեզ յանկարծակիի բերելով, օգտուելով մեր բոլոր գաղտնիքներից ու պրիումներից (ձեռնարկ) 7-8 ամենամեծ պահարաններ խուզարկեց որոնց տեղը ինքը գիտէր եւ ահագին քանակութեամբ ապրանքներ դուրս տուաւ. բոլորը միասին 270ի չափ գէնք եւ 300.000ի չափ ծայր...:

Առաջին օրը ընկերները ցրուած լինելով չկարողացանք մի հակահարուած տալ, թէեւ փորձեցինք դաւաճանը զարնել՝ բայց տեղորիստների ապիկարութեան պատճառով, չյաջողեցինք... Նոյն գիշերը իսկոյն մնացած աննշան պահարաններն փոխադրեցինք ուրիշ տեղեր, իսկ որոնց մասին ինքը ստոյգ տեղեկութիւններ

6.- Փամփուշտ:

չունէր՝ ձգեցինք. միեւնոյն ժամանակ վճռեցինք ինչպէս էլ լինի 24ին նրան զարնել, այլապէս մեր ամբողջ քարտէսը՝ բացուելու էր եւ եղաւ: 24ին ժամը 5ին՝ բացին՝ մեր չսպասուած պահարաններից եւս մէկը... իսկ քիչ յետոյ շրջապատեցին այն թաղը, ուր խտացած էին մնացած պահեստները եւ ուր մենք դիրք էինք բռնել նրան զարնելու: Բացում է երկու փոքրիկ եւ մի մեծ պահարան, տեղորիստները նորէն չեն յաջողում մօտենալ զինուորական կուռ շղթայի պատճառով: Վերջապէս ստիպուում ենք ճանապարհների բերանները բռնել եւ մասսայական տեղորի դիմել. երբ խուզարկու խումբը ցանկանում է դուրս գալ՝ տանելով իր հետ աւարը, իր հետ ունենալով դաւաճանին, որ յաճախակի ծպտուում էր իբր զօրք եւ ոստիկան, մօտաւոր կերպով ցոյց են տալիս դաւաճանին նշանները՝ գնդակը պայթում է. դրան հետեւում է ռումբի պայթիւնը. սկսում է մի սոսկալի եւ խառնիճաղանձ կռիւ: Բոլոր թաղերից վազում են փախտական եւ կամաւոր ընկերները. կռիւը սկսում է ժամը 8ին եւ տեւում է մինչեւ ժամը 12ը: Դժբախտաբար նշանները սխալ էին. դաւաճանը ազատուում է եւ դիրք բռնած՝ գնդակներ ձգում մեր աչքի ընկնող ընկերների վրայ: Մեզանից միմիայն մի հոգի թեթեւ վիրաւորուած է թեւից, այն էլ մեր գնդակներից: Թշնամեաց 10ի չափ զոհեր կան: Ժամը 11:30ին փողոցում պայթում է պահեստից հանուած մի ցինգ տինամիտի խմոր՝ հրացանի գնդակից: Սոսկալի աղմուկն ու պայթումը պանիկա եւ սարսափ է առաջացնում թուրքերի մէջ ու սկսում են փախչել: Պայթիւնի ձայնը վեց ժամ հեռու լսում է: Հայերի տներին կից եւ մօտերը գտնուած տներից փախնում են եւ ցարդ չեն վերադարձել:

Միւս օրը միայն պատգամաւորներ են գնում կուսակալի մօտ թալանի հրաման առնելու բայց կուսակալը մերժում է:

Ռումբը ու տինամիթը ժամանակաւոր կերպով խաղաղութիւն են հաստատում: Այդ օրուանից անցել է 16 օր. դեռ ոչ մի խուզարկութիւն եւ ոչ էլ ոեւէ շարժում չի եղել: CONSUL-ները ժողովներ են անում եւ միջամտութեամբ ցանկանում են ազդել կառավարութեան եւ մեզ վրայ: Անգլիական հիւպատոսը՝ ոչ պաշտօնական տեսակցութիւն է խնդրում, պահանջելով որ չհրատարակի իր տեսակցութիւնը եւ խօսածները:

Երկար ու բարակ ցերեմոնիաներից՝ յետոյ ուզում է իմանալ մեր բռնելիք դիրքը, ասում է որ կուսակալը կոտորածի միտք չունի (արդէն մի քանի տուն կողոպտել են, մի տուն՝ ուր որ դիրք էինք բռնել՝ վառել են եւ մի քանի մարդ վիրաւորել են): Նա ցանկանում է խուզարկութիւն որ իր իրաւունքն է: Խնդրում է որ մենք հակահարուած չտանք: Այլ տեղի տանք գէթ մի ամսով թողնելով կառավարութեան ինչ կ'անէ անէ: Մենք առաջարկում ենք չորս պայման:

1.- Միջամտութիւն լինի եթէ կոտորածի նշաններ երեւան:

2.- Մասսայական ձերբակալութիւններ չլինեն քաղաքում եւ գաւառում:

3.- Մասսայական խուզարկութիւններ չլինեն:

4.- Խուզարկողները եւ խուժանը թալան ու կողոպուտ չանեն:

Բայց պնդում ենք որ դաւաճանը պէտք է մեռնի ինչ գնով էլ որ լինի:

Խնդրում է գէթ մասսայական տեղոր չանել: Մնացած զրոյցները շարունական¹⁰ էին ու ակադեմիական:

Ժողովուրդը բաւականին յուզուած է. տեղորի առաջին փորձը շատ լաւ ազդեց. առաջին օրը մեր հոգին հանում էին դաւաճանի ահաբեկումը պահանջելով...: Շուկան մի շաբաթ համարեա չբացուեց, այժմ էլ կիսաբաց է, երիտասարդութիւնը զգուշանում է. ամէնքը սպասողական վիճակի մէջ են: Դաւաճանին վերջացնելու բոլոր փորձերն առաջով ի դերեւ են ելնում տեղի սարսափելի պայմանների պատճառով¹¹: Լուրերն են առեղծուածային է, չգիտենք պարսկական կոնֆլիկտն է պատճառը թէ քաղաքական այլ կոմբինացիաներ¹², բայց փաստ է որ կառավարութիւնը պարտութիւն կրեց առաջին իսկ հարուածին տեղի տալով:

Մենք նոյն կուռին խլեցինք նոյն փողոցների պահեստներից հանուած ապրանքի մեծ մասը: Ընդհանուր գծերով այս է մեր արդի վիճակը:

Սեւ հարիւրեակները¹³ ոտքի են կանգնում: Քաղաքում սկսուել է ռէակցիա, նոյնը եւ գաւառում:

Դաւաճանութեան պատճառները հազար ու մի ձեւով են բացատրուում: Ինքը դաւաճանը նամակով եւ ձեռագիր ազդով ասում է որ իբր թէ մենք մեր ներկայուածեամբ անբարոյականացնում ենք ժողովրդին, գէնքբերը նրանց կոտորել տալու համար է, ուստի ժողովրդին փրկելու համար՝ գէնքբերը բռնել է տուել, կոչ է անում տներում մեզ տեղ չտալ: Անմիջական առիթը հետեւեալը կը համարուի:

Լսեցինք որ ինքը յարաբերութիւն է ունեցել մի աղջկայ հետ: Մեր ընկերներից մէկը¹⁴ կանչում է եւ բացատրութիւն պահանջում, ուրանում է: Ընկերը իրեն յայտնում է որ եթէ ճշդուեց՝ հետը պիտի ամուսնանայ եւ պիտի պատժուի ընկերական դատի ենթարկուելով: Ինքն իբր թէ այս վերջինը մահուան պատիժի սպառնալիք է համարել եւ այս խայտառակ քայլն առել է իրեն

7.- Այսինքն զինապահեստներու տեղերը:
8.- Բնագրին մէջ ծածկագիր (շիֆոն):
9.- Արարողութիւններ, ձեւակերպութիւններ:
10.- Սովորական, անարժէք իմաստով:
11.- Ի վերջոյ դաւաճանը պիտի ահաբեկուէր ամիս մը ետք պատանի Տաճատ Թերլեմեզեանի ձեռքով, նոյն տարուան Մարտի 10/23ից:
12.- Չուզակցութիւններ, դասաւորումներ:
13.- Դակայեղափոխական տարրերը:
14.- Կոմսն է (Վահան Փափագեան):

փրկելու համար: Առանձնապէս զայրացած է Արամի եւ կոմսի դէմ, ասել է որ այն աղջիկը որ կ'ուզէին գլխիս կապել, իրենք են բռնաբարել (Արամն է բռնաբարել): Ինչեւէ, ամբողջ կազմով դատապարտութեան սեւ սեղանի առաջը պիտի կանգնենք: Դիմել ենք Արեւել. Բիւրոյին (Դաշնակցութեան) Խորհուրդ հրահրելու եւ զբաղուելու կարգ մը անհրաժեշտ խնդիրներով ու դատելու այս վիժուածքը:

Խորհուրդը անհրաժեշտ է եւ այլ կուսակցական խնդիրների համար: Մենք երեւի, Մարտին՝ թէ ընկերներ կաջացուցիչ եւ թէ տեղեկագիր կ'ուղարկենք:

Սպասում ենք Դաշնակցութեան բարձր ատեանի անողոք եւ անկաշառ դատին. իսկ մինչ այդ կը շարունակենք աւելի մեծ եռանդով պաշտպանել մեր եղած գործը:

Ձեր յանդիմանական նամակին պատասխանելու ժամանակ չունինք. արդէն մեր այս մեծ կորուստը մեզ բաւ է...: Եթէ ապրեցինք նորէն կը գրենք: Մանրամասները Մեծ քաղաքի վրայով:

Բարեկենդան

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

Ման.¹⁵ — Նամակը ստացուած է Վանի Կեդր. կոմիտէէն Մարտ 23 (ն.տ.) Ֆիլիպէ՝ Պետիկեանի հասցէով եւ անկէ ուղարկուած մեզի:

Բնագրին համաձայն է:

Ս. ՄԻՆԱՍԵԱՆ, ՎԱՐԴԱՆ, ԳԱԼՅԱ

15.- Գրութեան աւարտին անելուց անմիջապէս ծանոթագրուելու եւ ստորագրուած ժընել գտնուող ընկերներու կողմէ: Այս Տաճատ ստորագրութեամբ (ամենայն հաւանականութեամբ դաւաճան Դաւոյի ահաբեկիչ Տաճատ Թերլէնգեանն է) կատարուած է թուականի ճշգրտում:

այն Գրութեան Գրական Գործակալ
մեր 9-22 = Յամբի Նշ Երես
Կարճ "Ռուսիի պայթեցումը մեզ
օրս ապրիլ 16 օր": Ռուսիի պայթեցումը
Գրութեան Գրական Գործակալի Կողմէ:
Մարտ.

Սոյն գրութիւնը գրուած է ուրեմն Փետր. 9/22: Նամակի մէջ երես 5 կ'ըսուի «Ռուսիի պայթիւնէն մինչեւ օրս անցել է 16 օր»: Ռուսիի պայթիւնը պատահեց Յունուար 24-Փետր. 5ին: 2 օրուան տարբերութիւնը սխալ հաշուի արդիւնք է:

SUSUS

Փաստ. 668-18

ԳԱՂՏԵԻ

4.- ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ (ԳԻՒՂԵՐԻՆ)

Ձիմապահեստներու գրաւումէն ետք, Վասպուրականի Ձիմ. մարմնի շրջաբերականը, ուր, ստեղծուած բացառիկ պայմաններուն մէջ, կը տրուին ինքնապաշտպանութեան յատուկ հրահանգ-ցուցմունքներ: Շրջաբերականը խնորատիպ է, գունատ եւ տեղ-տեղ անընթեռնելի:

Դաւաճան Դաւիթը այնքան կորուստներ պատճառելէ վերջ ամիս ու կէս է որ կը սպառնար արմատախիլ ընել յեղ. գործը: Տեւորիստի գնդակով վերջ դրուեցաւ անոր անարգ կեանքին, բայց թուրք մի կարգ սրիկաներ առիթէն օգտուելով յանկարծակիի բերին հայ անմեղ մարդկանց եւ սպաննեցին:

Կենտրոնական կոմիտէս ի նկատի ունենալով որ թուրք վայրենի խուժանի եւ բոլոր աւագակների ախորժակը կարող է բացուած լինել այդ դէպքերի առթիւ, ի նկատի ունենալով որ թերեւս ընդհարումներ պատահին եւ գաւառներում, առ ի զգուշութիւն ձեզ կը դրկէ հետեւեալ հրահանգները, պարտաւորեցնելով խստօրէն հետեւել անոնց ճշգրիտ եւ անյապաղ գործադրութեանը:

Գիւղական ռազմամթերք

1) Հնարաւոր եղածին չափ իսկոյն կարգաւորել (սրբել, պակասաւորները լրացնել եւայլն) գիւղական զէնքերը:

2) Դրամական հանգանակութեամբ լրացնել պակաս մնացած ռազմամթերքը, ինչպէս փամփուռներ, վառօղ, գնդակ, ազա եւայլն:

Մանօթ. — Ենթակոմիտէները կարող են պահանջել կանխիկ գումարով կենտ. կոմիտէէն:

3) Գիւղական ամբողջ զէնքերը, ռազմամթերքը¹⁶

Մարտական խմբեր

Իւրաքանչիւր գիւղ ունենալու է երկու տեսակ մարտական խմբեր.

1) Թուուցիկ, 2) տեղական:

Թուուցիկ խմբերը պիտի կազմուին գիւղի ամենայն տեղաբնակներէն, առողջ երիտասարդներէն՝ թուով 5-10 հոգի:

Տեղական խումբը պիտի կազմուի մնացած երիտասարդներէն:

Թուուցիկ խումբը պարտաւոր է հարկը պահանջած

վայրկեանին օգնութեան հասնիլ գիւղերին կամ գաւառներին (երբ կը պահանջուի գաւառի ենթակոմիտէէն կամ ընդ. հրամանատարէն):

Տեղական խումբը պիտի պահպանէ միայն իւր գիւղը կուրի պարագային:

Տեղական ու թուուցիկ խմբերը պիտի զինուին գիւղական-համայնական, խմբական-կազմակերպական զէնքերով:

Մանօթ. — Եթէ զինատէրը յարմարութիւն ունի բայց ուզում է (?) թուուցիկ խմբի մէջ մտնելու, կարող է զէնքը յանձնել եղբորը կամ մօտիկ ազգականին եթէ ունի:

Թուուցիկ եւ տեղական խմբերի ռազմական պատրաստութիւնը պիտի հոգայ գիւղի գործադիր մարմինը համայնական ռազմամթերքէն, (իսկ չեղած պարագային) պիտի միացնել անհատական ռազմամթերքը եւ յատկացնել ըստ կարիքի երկու խմբերին էլ:

Գիւղի հսկողութիւնը

Գործադիր մարմինը ցերեկ թէ գիշեր (մանաւանդ գիշերը) հերթական շատ կանոնաւորութեամբ պահպանութիւն (նէօպատի) պիտի նշանակէ:

Ծանօթ. — Բացի շատ ծերերէն կամ ծանր հիւանդներէն, իւրաքանչիւր անդամ անխտիր պիտի պահպանութիւն անէ (թուուցիկ, կամաւոր, թէ չէ գոք):

.....¹⁶

Գիշերային պահապանների վրայ պիտի հերթով հսկեն գործ. մարմնի անդամները, խմբապետը եւ նրա օգնականը:

Գործադիր մարմինը գիւղի տասնապետի հետ պիտի որոշեն գիշերուայ անունը թէ պահապանների եւ թէ գիւղի տասնապետի համար (այդ անունները պիտի փոխուին իւրաքանչիւր օր):

16.- Անընթեռնելի քանի մը բառ, խնորատիպ օրինակին ընդհանրապէս թոյլ դրոշմին պատճառով:

Սուրհանդակութիւն

Իւրաքանչիւր գիւղ պիտի ունենայ (այժմ է) առնուազն երկու ճարպիկ, արագաշարժ եւ խելօք սուրհանդակներ:

Գործադիր մարմինը պարտաւոր է ունէ լուր (ստուգելի վերջ) անմիջապէս հաղորդել շրջանի ենթակոմիտէին կամ հրամանատարին այդ սուրհանդակների միջոցով:

Գործադիր մարմինը պարտաւոր է ամենավտանգաւոր վայրկեաններում իսկ յարաբերութիւն պահել շրջակայ հայ գիւղերի եւ ենթակոմիտէների հետ:

Դերքեր

Գործադիր մարմինը եւ տասնապետը շրջանի հրամանատարի կամ ենթակոմիտէի ցուցմունքով պարտաւոր են ինքնապաշտպանողական դիրքերը այժմէն որոշել:

Դիրքեր կը լինեն չորս տեսակ

- 1) Գիւղի մօտ գտնուող բլուրներ
- 2) Գիւղի շուրջ եղող այգիներ
- 3) Գիւղի ծայրերի տներ կամ այգիներ
- 4) Գիւղի կենտրոնը եղող ամենաբարձր կէտեր

Այդ 4 դիրքեր պիտի ի նկատի ունենալ եւ պահպանները միշտ պիտի հսկեն մանաւանդ բլուրների եւ այգիների վրայ:

Թշնամու յարձակմանը պիտի դիմադրել բլուրներէն՝ բլուր չեղած տեղը՝ այգիներէն¹: Ներսի մնացեալ դիրքերը միայն պիտի պահուին ամենածանր պարագաներին:

Գաւառի ճանապարհները

Կռիւն սկսուելու պարագային իւրաքանչիւր գիւղի գործ. մարմնի կամաւորական (թուղթիկ թէ տեղական) խմբերի ամենակարեւոր գործը պիտի լինի պահպանել հայկական գիւղից գիւղ անցնող ճանապարհները եւ թշնամուն թոյլ չտալ երբեք կտրելու գիւղէ գիւղ կամ գաւառէ գաւառ յարաբերութեան գծերը*:

Յանձնելով այս առժամանակեայ հրահանգները, ձեր լուրջ ուշադրութեանը, կը յանձնարարենք անմիջապէս ձեռնարկել նրանց գործադրութեանը, առանց գաղտնիքը երեւան հանելու կամ տարածախնդրելու:

Պիտի գիտնաք որ մեզ համար երբեք ցանկալի չեն այս աննպատակ ազգայնական կռիւները:

Այս բոլոր պատրաստութիւնները պիտի կատարուին ինքնապաշտպանութեան նպատակով. հետեւաբար ոչ մէկը տեղի չպիտի տայ կռիւների եւ ամէն կերպ պիտի աշխատէք վերահաստատել ձեր նախկին խաղաղ բարեկամութիւնները քիւրտ ու թուրք աշխատաւոր ժողովրդների հետ:

**ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ
ՋԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

1908, 15 Մարտ

*) Մնացեալ կարգապահական կանոնները տես կամաւորական կանոնագրի մէջ:

Փաստ. 53-59

5.— ՀԱՆՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Ձինապահեստներու գրաւումէն ետք, կառավարութեան քանցուցած արտակարգ խստութիւններուն դէմ, խուզարկութիւններ, ձերբակալութիւններ, խոշտանգում, թալան եւայլն – Վանի հայութեան անունով ներկայացուած բողոքի հանրագրութիւն: Հայերէնը վերցուած է «Դրօշակ»ի 1908 թ. N° 5էն:

**ADRESSE DU PEUPLE DE VAN
AUX CONSULS, AU GOUVERNEMENT
ET AU PATRIARCHE**

**ՀԱՆՐԱԳՐՈՒԹԻՒՆ
ՎԱՆԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ
(Ուղղուած Հիւպատոսներուն,
Կառավարութեան եւ Առաջնորդին)**

Après les horreurs muettes du 23 Mars où périrent de nombreux innocents et à la suite desquelles de nombreuses familles furent plongées dans la misère, nous, Arméniens restants, enfermés dans nos maisons et dans la crainte continuelle de nouveaux malheurs, nous sommes consultés sur notre situation passée, présente et à venir et en sommes venus à la conclusion suivante:

Considérant le passé immédiat nous voyons que les villages et bourgs arméniens de Mamtank, Khizan, Sparkert, Garkar, qui, il y a 40 à 50 ans étaient riches et peuplés, sont aujourd'hui complètement dépeuplés; leurs malheureux habitants en ont émigré dans des pays lointains ou se sont réfugiés à Van où ils mènent une vie misérable, ne possédant plus rien et arrivant à peine à végéter, leurs terres et leurs maisons étant devenues la proie de leur voisins kurdes qui les ont achetées à des prix dérisoires ou s'en sont simplement emparé.

Il y a 30 ans déjà, alors que au cours de la dernière guerre d'Orient, les Arméniens rendirent de signalés services aux troupes turques en leur fournissant du pain, des vivres, des vêtements, des volontaires; quand ils transportaient au moyen de leur chevaux et de leurs bœufs les munitions et vivres de l'armée turque, et que les villageois arméniens nourrissaient gratuitement les soldats turcs et les volontaires kurdes, ceux-ci tuèrent sans la moindre cause des milliers d'Arméniens, pillèrent les villages et payèrent l'hospitalité reçue en exigeant de grosses sommes comme tribut pour l'usure de leurs dents (diche grassy) faute de quoi il massacraient les malheureux qui ne pouvaient pas payer.

C'est à la même époque que le bazar de Van fut pillé puis incendié et que des centaines de familles vinrent pleurer sur les décombres. La terrible famine, qui en fut la conséquence et qui causa tant de victimes, est un fait inoubliable.

Et maintenant, [alors qu']on attribue l'affreuse situation économique et politique actuelle aux fauteurs de désordre, où étaient-ils donc lors des événements tout semblables d'il y a 20 à 30 ans?

Pour parler de faits plus récents, en 1895-96, lorsque

Մարտ 23ի անլուր խժոճութենէն յետոյ որուն զոհ գացին շատ մը անմեղ ազգայիններ եւ նոյնչափ ընտանիքներ ալ թշուառացան, մենք մնացեալ հայ ժողովուրդս՝ առ ահի նոր վայրագութեանց՝ մեր տուներուն մէջ փակուած, խորհրդակցեցանք անցեալ, ներկայ եւ ապագայ կացութեան վրայ եւ հետեւեալ եզրակացութեան յանգեցանք:

Անդրադառնալով մօտիկ անցեալին մենք կը տեսնենք որ մեր շրջապատի Մամտանք, Սիզան, Սպարկերտ, Կարկառ եւն. գաւառակներ, որք 40-50 տարի առաջ հարիւրաւոր տուներէ բաղկացեալ շէն եւ բարգաւաճ հայ գիւղեր ունէին, վաղուց ի վեր ամայացած են եւ հայեր թողած իրենց տունն ու տեղը՝ կամ օտար աշխարհներ գաղթած են եւ կամ Վանայ մէջ թշուառ եւ աստանդական կեանք մը կը վարեն, զուրկ սեփականութենէ եւ ունէ ստացուածքէ որոնք իրենց քիւրտ զրացիներու սեփականութիւն դարձած են ձրի եւ կամ չնչին գնով մը:

Դեռ երեսուն տարի առաջ երբ հայերը վերջին արեւելեան պատերազմի ժամանակ այնչափ անձնուէր ծառայութիւններ կը մատուցանէին թրքական բանակին տալով հաց, ուտեստ, զգեստ, կամաւոր զինուորներ եւ բանակի այլեւայլ պիտոյքներ, երբ հայերու սայլերը եւ անասունները բանակին ռազմամթերք, ուտեստ եւայլն կը փոխադրէին եւ հայ գիւղացին ճրիպպէս կը կերակրէր թուրք զինուորը եւ քիւրտ կամաւորները, ասոր հակառակ հազարաւոր հայեր ի գուր տեղ սպաննուեցան, հայ գիւղերը կողոպտուեցան, քիւրտ զինուորը իրեն եղած հիւրընկալութեան փոխարէն մեծկակ գումար մը տիշ քիրասի առնելով միայն կը հեռանար, իսկ հակառակ պարագային կը սպաննէր եւ կը կողոպտէր: Վանայ շուկան ալ նոյն միջոցին էր որ հրոյ եւ կողոպտի ճարակ եղաւ եւ հազարաւոր ընտանիքներ մոխիրի վրայ նստան: Սոյն աղէտներու հետեւանքը եղող սարսափելի սովն արդէն անմոռանալի է իր սովամահ կոտորածով: Արդ, երբ այժմս տնտեսական եւ քաղաքական սոսկալի կացութեան բուն պատճառը կը վերագրուի խռովարարներուն, ո՞չ ապաքէն ասկէց 20-30 տարի առաջ չկային ատոնք:

Գալով մօտիկ անցեալին, երբ հայերը բողոքը Բ. Դրան հասցուցին, արդիւնքը եղան՝ 1895-1896ի աշխար-

les Arméniens adressèrent leur protestation à la Sublime Porte, il leur fut répondu par les épouvantables tueries qui otèrent la vie à plusieurs centaines de mille des leurs.

Les villages peuplés des districts d'Artèche, d'Altchavaze, d'Aghbak, de Nortouze, habités par les Arméniens, furent complètement dévastés, en même temps que les arrondissements de Tchioulamerik, Pervar, Lévi, etc., habités par les Syriens, et les Kurdes s'établirent à la place des habitants massacrés forçant ceux qui restaient à les servir comme des esclaves.

La plupart des quartiers de Van habités par les Turcs et des Arméniens furent nettoyés de ces derniers, tandis que les autres quartiers se vidaient de leurs habitants Arméniens qui se réfugiaient dans le quartier des consuls où les malheureux, dans la crainte de nouveaux massacres et à l'abri des drapeaux étrangers, espéraient pouvoir se procurer un morceau de pain.

Bien que la famine résultant des événements de 1896 fut devenue périodique, les Arméniens continuèrent à supporter leur affreuse situation, espérant en fidèles sujets de l'Empire ottoman arriver enfin à jouir des droits égaux promis par la Code, lorsque les événements inattendus et affreux du 23 Mars se produisirent - des quantités de malheureux qui étaient retournés de la ville dans leurs villages furent massacrés par la populace turque, leurs cadavres même disparurent, privés de l'ultime consolation d'une sépulture chrétienne.

C'est pourquoi enfermés depuis plus d'un mois dans nos maisons; affamés et tremblants à chaque instant pour notre vie, voyant que pas un de ceux qui organisèrent les tueries n'a été puni jusqu'à présent, nous sommes persuadés par une longue et triste expérience que la différence de race et de religion et la fausse interprétation des lois est la cause de toutes nos misères. Nous voyons déjà devant nos yeux le terrible spectre de la famine, conséquence inévitable de l'état actuel, alors qu'en plein printemps les semences ont dû être abandonnées, toutes communications étant interrompues et toute sécurité disparue.

Voyant que la population turque qui nous exploite, au lieu d'être punie suivant la loi continue de jouir du droit de porter les armes et de nous spolier et a toute facilité pour continuer ses exactions,

Voyant que, tandis que les impôts sont doublés, triplés, l'impossibilité de vivre augmente, les communications étant coupées et la famine étant devenue endémique

Voyant que le peuple arménien est rendu responsable de chaque désordre particulier tandis que le peuple turc prend immédiatement une position menaçante et même massacre les Arméniens innocents et sans armes,

Voyant que, bien que toutes les races de l'Empire jouissent devant la loi des mêmes droits, les peuples turcs et Kurdes circulent armés tandis que les Arméniens n'ont

հաւեր դէպքերը, հարիւր հազարաւոր հայերու կոտորածը, հուրը, սուրը, կողոպուտը եւայլն: Արճէշի, Արճաւազի, Աղբակի, Նորտուզի հայաբնակ գաւառներու բազմամարդ գիւղերը ամալացան, ինչպէս նաեւ ասորաբնակ կարգ մը գաւառակներ՝ Ճիւլամերկ, Պէրվար, Լէվի եւայլն եւ քիւրտերը բնակութիւն հաստատեցին թէ՛ այդ լքուած եւ թէ՛ դեռ ուրիշ հայաբնակ գիւղերու մէջ, արդիւնաբերող եւ աշխատող հայ ժողովուրդի տեղ, պարկեշտ հայ բնակիչները վտարելով կամ իբրեւ գերի իրենց ծառայեցնելով: Այգեստանի թրքախառն թաղերու մեծ մասը բնաջինջ եղաւ կոտորածով իսկ մնացեալը դատարկուեցան հայերէ: Եւ հայ ժողովուրդ եկաւ գետնը շարժել այն թաղերու մէջ միայն ուր ի դէպ նոր կոտորածներու՝ եւրոպական հիւպատոսներու եւ օտար դրօշի պաշտպանութիւնը վայելել եւ անօթի չմեռնելու համար կտոր մը հաց մուրալ կը յուսար:

Թէեւ 1898ի դէպքերուն հետեւանքով սովը քանի մը տարիներէ ի վեր պարբերական վիճակ մը ստացած է եւ հայ ժողովուրդ առհասարակ կը նեղուի հացի տագնապէ, այնուամենայնիւ կը շարունակէինք կրել ու տոկալ ակնկալելով՝ իբրեւ հաւատարիմ հպատակներ՝ կայսերական օրինաց համաձայն հաւասար օրէնքներ վայելելու, եւ հաւանակնկալ կերպով կատարուեցան Մարտ 23ի անլուր եւ վայրագ խոզոտութիւնք. բազմաթիւ անմեղ եւ անզէն հայեր քաղաքէն տուն վերադարձած ատեն թուրք վայրագ խոզոտութիւնք անգամ սպաննուեց, որոնց դիակներն անգամ անյայտացան գուրկ մնալով կրօնական եւ հողի ներքեւ թաղուելու միտքով թաղուեցին:

Ուստի, այսօր ամսի մը մօտ տուններնուս մէջ փակուելու պարտաւորուած առահի եւ անօթի, տեսնելով որ բազմաթիւ հայերու արիւնը թափող ոճրագործներէն ոչ մին պատժուած է ցայսօր, դարաւոր դժբախտ փորձառութեամբ համոզուած ենք որ կրօնի, ազգութեան տարբերութիւն եւ պետութեան օրինաց թերի գործադրութիւնն է պատճառը մեր այս բոլոր թշուառութեանց: Եւ ներկայ գարնան երկրագործութեան բուն շրջանին երբ պահանջութիւնը վերցուած, հաղորդակցութիւնը կտրուած եւ վարուցանք ի սպառ դադրած է, անմիջապէս հետեւանք եղող աւելի անտանելի սովի մօտապատկերը արդէն ամէնուս աչքի առջեւն է:

Հետեւաբար, նկատելով որ մեզ հարստահարող քիւրտ ցեղն փոխանակ ըստ օրինի զսպելու՝ գէնք կրելու եւ ասպատակելու ասպարէզն ընդարձակուած է եւ իր շահատակութիւնները շարունակելու դիւրութիւն ստացած է:

Նկատելով որ մինչդեռ տուրքերը կրկնապատկուած եւ եռապատկուած են, ընդհակառակը ապրուստի անհնարութիւն յառաջ եկած եւ ճամբաներու փակուելովը եւ սովը մնալուն կերպարանք ստացած է:

Նկատելով որ երկրի մէջ մասնաւոր դէպք մը պատահած ատեն հայ ժողովուրդը պատասխանատու կը բռնուի եւ թուրք ժողովուրդը կամ սպառնալից դիրք մը կ'առնէ եւ կամ անմեղ ու անզէն հայերու վրայ յարձակելով կը կոտորէ, հետեւաբար կոտորածի ուրուա-

pas même la permission de porter pour leur défense un simple couteau,

Voyant que l'Arménien, qui paie sans murmurer les impôts doublés et triplés est torturé de travers, jeté en prison où il est torturé parfois pendant des années, les interrogations et le jugement étant renvoyés indéfiniment contrairement à la loi, ce qui fait que beaucoup s'enfuient pour échapper au tribunal,

Voyant enfin qu'une poignée d'Arméniens chrétiens, entourés par les races privilégiées turque et kurde, sont persécutés depuis des siècles au nom de la religion chrétienne; que notre honneur, notre vie, nos biens ne sont pas respectés, que notre religion est insultée journellement, que nos lieux de culte sont profanés, détruits, incendiés, tandis qu'il ne nous est pas même permis d'élever la voix pour protester alors que notre vie est devenue absolument intenable,

C'est pourquoi, nous adressant à Vos Excellences, nous vous prions respectueusement de bien vouloir être nos interprètes auprès du gouvernement ainsi qu'auprès du patriarche de Constantinople pour leur présenter fidèlement notre situation et les prier d'y mettre fin.

Nous demandons:

1) Le droit de vivre dans ce pays comme des êtres humains et des citoyens égaux en droit, sous la protection du gouvernement impérial ottoman.

2) D'avoir la sécurité de notre honneur, de nos vies et de nos communications, garantie solennellement par un iradé impérial.

3) Que la population ne soit pas rendue responsable d'actes commis par des individus.

4) L'ouverture de Constantinople et des centres commerciaux de la Turquie et de l'étranger aux Arméniens de ce pays.

5) La punition selon les lois des organisations et des exécuteurs des tueries du 23 Mars.

S'il n'est pas fait droit à la protestation ci-dessus et si nos légitimes réclamations restent sans résultat, veuillez prier le gouvernement impérial de bien vouloir nous autoriser à émigrer ailleurs et nous en donner les moyens.

Avec un profond respect

LA POPULATION ARMENIENNE DE VAN
3500 signatures

10/23 Avril 1908

կանը միշտ մեր աչքի առաջին ցցուած է:

Նկատելով որ յաջս օրինաց երկրի բոլոր ժողովուրդք հաւասար համարուած ատեն, թուրք եւ քիւրտ ժողովուրդք գինուած կը պտտին, իսկ հայեր ինքնապաշտպանութեան համար դանակ մը իսկ կրելու համար արտօնեալ չեն:

Նկատելով որ հայ ժողովուրդը՝ կրկնապատկուած բոլոր տուրքերը անտրտունջ վճարած ատեն խէթիւ կը նայուի իրեն, շատեր ամբաստանուելով տարապարտուց՝ տարիներով բանտերու մէջ չարչարանքներու կ'ենթարկուին, հարցաքննութիւնք հակառակ օրինաց անհունապէս կ'երկարաձգուին եւ այս պատճառով շատեր դատարանէն կանչուած ատեն փախստական ըլլալու կը պարտաւորուին:

Վերջապէս նկատելով որ ափ մը քրիստոնեայ հայ ժողովուրդ շրջապատուած մահմետական, թուրք եւ քիւրտ առանձնաշնորհեալ ցեղերէ, դարերէ ի վեր կը հալածուի եւ կը չարչարուի յանուն քրիստոնէական կրօնի եւ ազգութեան, մեր պատիւը, կեանքը եւ ստացուածքը կը բռնաբարուին եւ կը յափշտակուին, մեր կրօնը ամէն օր կը հայհոյուի, մեր սրբավայրերը կը քանդուին եւ հրոյ ճարակ կը լինին, իսկ մենք չենք կարող բողոքայ ձայն իսկ հանել եւ այս պայմանաց ներքեւ ներկայ կեանքը այլեւս անտանելի դարձած է:

Ուստի դիմելով յոտս Գերապատուութեանդ կը խնդրենք որ շնորհ ընէք մեր այն թշուառ ու արգահատելի վիճակը, ինչպէս նաեւ մեր այն գրութեան իսկական թարգմանութիւնը ներկայացնել կեղր. ու նահանգային կառավարութեանց բարձր ուշադրութեան, ինչպէս նաեւ համիմաստ ուրիշ գրութիւն մ'ալ Ամեն. Ս. Պատրիարք հօր ի Կ. Պոլիս եւ խնդրել հիմնական փոփոխութիւն մը մեր վիճակին, որով կարողանանք:

1. Ապրիլ իբրեւ մարդ եւ իբրեւ հաւասար քաղաքացիներ այս երկրին մէջ, ընդ հովանեաւ Օսմանեան կայսերական կառավարութեան:

2. Ունենալով պատուոյ, կենաց եւ ընչից ու հաղորդակցութեան կայսերական բարձր իրատէսով երաշխաւորեալ ապահովութիւն

3. Անհատի գործած յանցանքի համար երբեք պատասխանատու չճանչցուի հասարակութիւն:

4. Բացումն Կ. Պոլսոյ եւ Թուրքիոյ արտասահմանի առեւտրական կեդրոններու երկրիս հայ ազգաբնակչութեան համար եւս:

5. Ըստ օրինի պատժումը Մարտ 23ի եղեռնագործներուն եւ նոյն դէպքի հեղինակներուն:

Երբ մեր վերոյիշեալ արդարացի բողոքներուն ու պահանջներուն գոհացում չտրուի եւ առանց հետեւանքի մնան անոնք:

Այն ատեն շնորհք ըրէք խնդրել կայս(երական) կառավարութեանն ու ճանապարհներ բանալ տալով զմեզ այլուր գաղթեցնելու միջոցներ ձեռք առնել ու գործադրել:

Մնանք խորին յարգանօք
ՎԱՆԱՅ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ
(3500 ստորագրութիւն)

10/23 Ապրիլ 1908

Փաստ. 668-44

6.- ՎԱՆԱՅ ՍԱՐԳԻՍԷՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Չինաստանի հասարակական գիտությունների ակադեմիան և Միջազգային հասարակական գիտությունների ակադեմիան համատեղ շարունակ հալածական պայտերով Վանի մէջ, Կոմսի եւ քանի մը տասնեակ գիտնականներու հետ յաջողած էին ճեղքել քաղաքը պաշարող զինուորական շրջան եւ անցնիլ Վասպուրականի հարաւը՝ Լեոնապարի գաւառները: Գրութեան վերեւ «պատմէն Լեոնապարից եկած նամակների» նշումէն կը հետեւի որ արտագրութիւն է գաղտնի քանաքով գրուած նամակի մը:

20 Յուլիս 1908

Արեւելեան Բիւրոյին

Ընկերներ!

Վաղուց է Ձեզ չենք գրել: Պատճառը ներկայ անարխիան էր, արդէն 2 անգամ Ձեզ գրել ենք, ստացել էք թէ ոչ, չգիտենք: ուստի աւելորդ չենք համարում նորից կրկնել:

Դաւիթի դէպքից յետոյ¹⁷ (23) երկրի գլխին ծանրացել են հայկա-թրքա-քրտական ընդհարումների ուրուականները: Թուրք ամբողջ ամէն կերպ աշխատում էր կոտորածներ առաջացնել, բայց այնպիսի ձեւի տակ, որ կառավարութիւնը իրենց հետ լինի, կամ գոնէ չէզոք մնայ: Դաւիթի տեւորից յետոյ մենք համարեա թէ պատերազմական վիճակում էինք: Սենսացիոն¹⁸ լուրերը, մօտ 80-80 հայերի սպանելը վառել էին ժողովրդի երեւակայութիւնը: Երիտասարդութիւնը գէնքի տակ դիրքերում գիշեր ցերեկ սպասում էր: Այդ ժամանակ թէ ժողովրդի եւ թէ երիտասարդութեան տրամադրութիւնը վատ չէր:

Մայրայեղ քաղցածութիւնը եւ անցեալի դառն յիշողութիւնները արհամարհել էին տալիս մահը: Մենք ի նկատի ունենալով տնտեսական վիճակի ծայրայեղ անկումը, ձեռքը եւ այլ կարեւոր պարագաներ, ամէն կերպ աշխատում էինք ընդհարումների տեղիք չտալ եւ երկիրը չենթարկել կատաստրոֆներին¹⁹. անգլիական հիւպատոսը երկու անգամ մեզ հետ տեսնուեց եւ առաջարկեց, որ հեռանանք Շամից, պատճառաբանելով, որ Ձալալ փաշան գալիս է եւ թեթեւ ընդհարումների դէպքում կոտորածը անխուսափելի է: Ձալալ փաշայի անունը արդէն մի կոչմամբ²⁰ էր դառել: Ամիսներ շարունակ լսում էր, թէ զօրքով գալիս է Վանի վրայ, ումանք փաստաբանում էին, թէ պարսկա-թրքական պատերազմի համար է գալիս:

Չափազանցած լուրերը, Ձալալ փաշայի ուշանալը, դրութեան անորոշութիւնը, համարեա 4 ամիս շուկայի շարունակական փակումը՝ փոքր առ փոքր ազդում էր ժողովրդի եւ երիտասարդութեան վրայ եւ գնալով

սկսում էր լքուել եւ ընկնել ունեակցիայի գիրկը: Վերջապէս Մայիսի սկիզբներին զօրքի ծայրը սկսուեց երեւալ Վանում եւ շարունակական կերպով նորանոր թապուրներ էին մտնում Վան:

Արդէն չէզոք եւ հակայեղափոխական տարրերը սկսեցին հակայեղափոխական պրոպագանդը եւ պահանջում էին, որ մենք անպատճառ հեռանանք քաղաքից: Երիտասարդութեան մեծամասնութիւնը համարում էր փախստական: Մենք կասկածելով, որ կոտորածը կարող է անխուսափելի լինել, վճռեցինք ինչ կերպ եւ լինի մնալ, Շամի երիտասարդութեան ընտրեալ մասը պահել քաղաք, որպէսզի վտանգին կարողանանք դիմադրաւել: ուստի մտածեցինք մեզ եւ երիտասարդութեան այնպիսի ձեւի տակ դնել, որ խուզարկութեան դէպքում ընդհարում չլինէր, իսկ վտանգի դէպքում պատրաստ մէջտեղ դուրս գանք, ուստի ձեռնարկեցինք ստորերկրեայ պահեստների եւ ականների: Մեր ձեռնարկները յաջող էին անցնում, բայց որովհետեւ դաշնակցական փախստականների թիւը օրէցօր աւելանում էր, մեր պահուելու միջոցները սկսուեցին տարածալըւել եւ ահա մատնուում է Արամի²¹ տեղը, չորս կողմը եւ ամբողջ թաղը պաշարում են: Պատգամաւոր են ուղարկում անձնատուր լինելու: Քեանքեանները²² Արամի հարցին պատասխանում են, որ ազատուելու յոյս չկայ, բոլոր անցքերը բռնուած էին, ուստի Արամը իւր հետ եղած 8 մարդով անձնատուր է լինում: Տասը հոգին չեն ցանկանում եւ չորս օր դիմանում են ստորերկրեայ անցքերում, բայց շնորհիւ քաղցին ուժասպառ են լինում եւ երբ հնարք են գտնում անցք քանդել եւ դուրս

17.- Ակնարկութիւն գիտնականներու մատուցեալ հեղինակ դիտարկի Դաւիթի. փակագծի մէջ առնուած թիւը (23) դաւաճանի սահաբեկման թուականն է նոր տոմարով (1908 թ. Մարտ):

18.- Յնցիչ, զգայացուցիչ:
19.- Աղէտներու:
20.- Մղծաւանց:
21.- Արամ Մանուկեանի:

22.- Ստորերկրեայ ջրմուղ, հոսող ջուրներու անցք, հոր փորողները: Քանքեան (Վանի բարբառով՝ Քեանքեան) կը կոչուէին նաեւ ստորերկրեայ այդ ջուրերը, որոնցմէ նշանաւոր էին Վարագայ սարէն դէպի Վան հոսող աղբիւրները: Դոս գործածուած է այս վերջիններուն վրայ աշխատող վարպետներուն համար:

գալ, մի քանիսը դուրս են գալիս ազատուում, իսկ մի երկուսն էլ ուժասպառութիւնից ժամանակին չկարողանալով դուրս գալ, անձնատուր են լինում: Դուրս եկողներից 2 ապահով մեզ մօտ եկան:

Կառավարութիւնը յաջողուել է հասարակութեան մեզանից բաժանել: Իսկ այդ դէպքը ուղղակի խրախուսեց կառավարութեան եւ լքեց հասարակութեան: Մենք 5 հոգով — Սարգիս, Բժիշկ²³, Սէյրատ, Ալէս, Արմենակ,— հագիւ էինք կարողանում մեզ համար տեղ գտնել պահուելու: Համարեա թէ բոլոր թաղերն էլ զօրքով լիքն էին: Խուզարկուած թաղերում զօրքեր էին թողնում, իսկ նոր խուզարկելիք թաղերը ամբողջովին պաշարում: Յարաբերութիւնները թաղերի մէջ ի սպառարգիլուած էր, մեզ մնում էր երթալ այն տեղերը որտեղ մի օր առաջ խուզարկած էր եւ այդպէս էլ արինք: մինչեւ կէս գիշեր, հագիւ էինք կարողանում տեղ գտնել, ոչ ոք դռները չէ բացում, իսկ մեր ընկերների տները վտանգուած էին: Մայիսի 9-ին գիշերը գնացինք մի տուն որը հէնց նոյն օրը խուզարկել էին: Միւս օրը առաւօտեան նորից հարեւան թաղերը եւ տները սկսեցին խուզարկել եւ զօրքով շրջապատել: Մեր կեցած տունը մի քանի անգամ մօտեցան ու հեռացան: Ժամը 8ին մօտերը 8 սպայ եւ մօտ քառասուն զօրք ու ոստիկան եկան կրկին այդ տունը: Յայտնի ոստիկանապետ Ակեհան էր, ձեռքերը գրպանը դրած, համարձակ բարձրացաւ վերին յարկը եւ ոտով զարկեց դռան: մենք կանչեցինք «Թասիւմ» եւ զարկինք, դժբախտաբար առաջի փամփուշտը չպայթեց եւ նա իրեն գցեց ներքեւ սանդուխներից եւ ազատուեց... զօրքը յանկարծակիի եկաւ մեր ուժեղ յարձակումից եւ ժամանակ չունեցաւ ուշքի գալու ու դիմեց փախուստի: Մենք անցանք հարեւան թաղը եւ 2 ժամուայ կռիւից յետոյ անցանք այգիներով եւ կորցրինք մեր հետքերը:

Երեք բան էր մնում անել. 1) գէնքի կանչել երիտասարդութիւնը (մօտ 20ի չափ կարող էինք ունենալ առաջին գիշերը) եւ սկսել կռիւ, 2) դուրս գալ քաղաքից, կամ բաժանուել եւ մէկ մէկ ծպտուիլ մնալ քաղաքում:

Տեսնելով ուժերի ծայրայեղ անհաւասարութիւնը, այդ երիտասարդութիւնն էլ լքուեց բոլորովին, բաժանբաժան եղած պաշարող զօրքերի պատճառով:

Երրորդ առաջարկը մէկ հոգու էր եւ չընդունուեց, մնում էր երկրորդը — հեռանալ քաղաքից: Գիշերը 16 հոգով մենք դուրս եկանք քաղաքից:

54 վրաններով պաշարուած էր քաղաքը, բացի այդ զօրքերով լցուած էր եւ այդ վրանների մէջի եղած տարածութիւնը: Ինչեւէ. դուրս եկանք աննկատելի. 5 հոգի մնացին քաղաք յեղափոխական-փախստականներից: Դրանցից մէկը, որ շատ կարեւոր անձնաւորութիւն էր, չկարողացաւ միանալ մեզ հետ:

Այդ անպիտանը մի քանի օր յետոյ, երբ նրանց տունը խուզարկում են որտեղ դռնդաղներ²⁴ կային, յանձ-

նում է կառավարութեան, ծայրայեղ ծեծի տակ — ամորձիքները սեղմում են մեքենայով — խոստովանութիւններ է անում. երբ գտնում են նրա ցոյց տուած 3 մեծ պահարանները, այնուհետեւ սկսում է խուզարկութիւն. նոր ձեւ — այն է բռնել աչքի ընկնող երիտասարդներին եւ դժոխային տանջանքների ենթարկել. այդ բանը այնքան է ահաբեկում երիտասարդութեան, որ կամովին իրենց պահեստները յանձնում են կառավարութեան. այսպէս բարոյական սնանկ եւ լքուած երիտասարդութիւնը ամբողջ Շամի պահարանները յանձնում է կառավարութեան: Գաւառում գէնքերը մենք հաւաքում էինք ու ամէն մի գիւղի գէնքերը յանձնում մի երիտասարդի. լքումը այնքան մեծ է լինում որ խուզարկութիւնների ժամանակ երիտասարդները չեն խուսափում գեղերից եւ չեն թաքցնում հասարակութիւնից իրենց գիտնապահ լինելը եւ բոլոր գէնքերը յանձնում են կառավարութեան:

Այսպիսով տարուան Արճակի, Թիմարի եւ Հայոց ձորի գէնքերը: Այս վերջինի յանցանքը ընկնում է մեր մի տեղական ընկերոջ վրայ, որին ուղարկել էինք գէնքերը հաւաքելու եւ պահելու այնպիսի ձեւով, որ ամբողջ գաւառում միայն 4 հոգի իմանան, բայց փոխանակ այսպէս անելու նա էլ ուրիշ գաւառների պէս է անում:

Շատախ, Մոկս, Գաւաշ մենք դրսեցի փախստականներս հաւաքուեցինք եւ անձամբ պահեցինք, այդ իսկ պատճառով ազատուեց: Կառավարութիւնը տարաւ մօտ 2000 գէնք եւ 700.000ի չափ փամփուշտներ. ահա՛ մէկ վիժում, որ լիակատարապէս ամէն բան բացուած էր: Կառավարութեան մատնիչները տասնեակներով վխտում են. շատերը նոյնիսկ դաշնակցական շարքերից:

Ռէակցիան թեւատարած սաւառնում է ամէն տեղ: Գաւառներում զօրք է դրուած: Կառավարութիւնը լրրբացած իւր անսպասելի յաջողութիւններից յոյս ունի ամբողջ յեղափոխականներին արմատախիլ անել:

Հակայեղափոխական եւ չէզոք տարրերն էլ մատնիչների հետ դաշնակցած, աջակցում են կառավարութեան: Սա մի չտեսնուած ունեակցիայի շրջան է:

Բայց յոյս ունինք, որ մենք պէտք է յաղթենք այդ բոլոր խոչընդոտներին եւ տէր դառնալ դրութեան: Դա կախուած է մեր յեղափոխ. գործունէութիւնից եւ մեր ապագայ անելիքներից:

Արդէն սկսել ենք մի շարք տեւորներ, եւ յոյս ունենք, որ այդ բանը մեծ հետեւանք կ'ունենայ մեր ապագայ անելիքների համար:

Չմոռանամ ասել, որ պատանիներից եւ երիտա-

23.- Բժիշկ մէկ այլ ծածկանունն է Կոմսի (Վահան Փափագեան): Միւսները՝ ընդհանրապէս Կեդր. Կոմիտէի անդամներ են:

24.- Դրացանի կոթեր:

սարդներին շատերը դեռեւս լաւ են տրամադրուած: Գնայած այս բոլորին, բայց եւ այնպէս Տաճկաստանում անակնկալներ չըջանում ենք ապրում: Արդէն Պոլսից գրել են, որ երեսփոխանական ժողով պէտք է գումարուի, քաղաքական յանցաւորներին պէտք է ազատեն եւ այլն եւ այլն...²⁵

Սղերդի կողմերը քրդական շարժումները նորից սկսուել են: Խօսք կայ (իր թէ) քրդերի զէնքերը հաւաքում են: Այդ բոլոր անակնկալներին դիմաւորելու համար մենք պէտք է ունենանք հաւատով ու էներգիայով մարդիկ: Թէ կարողանաք մինչեւ աշուն մեզ հասցնել

մէկ կրթուած երիտասարդ ընկեր, շատ լաւ կը լինի: Մեր կազմի մասին մենք ձեզ գրել ենք, աւելորդ ենք համարում նորից կրկնել: Լսեցինք, որ Յարութիւնը Մենաւորից²⁶ վերադարձել է: Թող գայ նորից Մենաւոր, որպէսզի առաջին պատեհութեան ներս մտնէ:

Շաւարշ անունով մէկ ընկեր ունինք, որ ներկայ պայմաններում մինակ մնալով դուրս է եկել, թող միասին ներս գայ:

Երկու ամսից ի վեր ձեզանից ոչ մի տող չունենք: աշխարհից բոլորովին կտրուած ենք: Աշխատեցէք մեզ մի կերպ տեղեկութիւն տալու:

Բարեւներով
ի դիմաց Կ. Կոմիտէի
ՍԱՐԳԻՍ

1908, 20 Յուլիս

25.- Խօսքը կը վերաբերի Յուլիս 11ին Օսմ. սահմանադրութեան հոշակման:
26.- Մեմուրը՝ Ս. Թաղի վանքն է. Յարութիւնը՝ դաշնակցական հին գործիչ. եղած է անդամ Վասպուրականի Կեդր. Կոմիտէին:

Փաստ. 668-46

7.- ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԻ ԿՈՉՁԸ

ՕՍՄԱՆԵԱՆ ԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

Հայրենակիցներ !

Անցեալ թուրքիկով մենք յայտարարեցինք որ հաւատում ենք Օսմանեան պետութեան սահմանադրական դառնալուն...: Այդ երեւոյթը մեզ համար պարզ էր եւ հասկանալի. մենք չզարմացանք...:

Մենք աշխատաւոր ժողովրդի յեղափոխականներս՝ 19 տարի անընդհատ հարուածում ենք միապետական ռեժիմը, իւրաքանչիւր ուղիով հարուածը որոշ չափով խախտում էր հնացած շէնքի հիմունքները: Խելառ եւ գլուխ կորցրած կառավարութիւնը՝ կատաղած գազանի նման ամէն կերպ ցանկանում էր Օսմանեան երկրի համար «նոր ծագող» արշալոյսը խաւարացնել. այդ յախուռն եւ անմիտ քայլերն ողջ երկիրը մատնում էր քաղաքական եւ տնտեսական անկման, եւ դորանով աւելի ու աւելի զայրացնում իսկական Օսմանեան երկրի քաղաքացիներին... Բոլորը գտնում էին որ այլեւս անտանելի է ներկայ կացութիւնը, եւ մի ելք էին փնտրում, իսկ այդ ելքը մենք արդէն ցոյց էինք տուել թէ գործով եւ թէ խօսքով, եւ ահա էրզրում, Գասթեմուդի, Բայբուզը, վերջերս Պոլիս արձագանգում էին մեր կոչին: Մնանկ կառավարութիւնը զգաց որ հողը իր ոտների տակից կորչում է եւ կամայ-ակամայ ստիպուած եղաւ տեղի տալ ժողովրդական գոռ ալիքների առաջ...:

Տաճկաստանը յայտարարուած է Սահմանադրական... Այդ ուրախալի լուրը ժողովրդական յաղթանակի առաջին քայլը պտուղն է... բայց այդ սահմանադրութիւնը մեզ յուսախաբութիւն եւ լքում կը պատճառէ, եթէ մենք մեր պահանջները պարզ եւ կտրուկ չձեռնարկենք, եւ մինչեւ որ մեր արեան վերջին կաթիլը չպաշտպանենք...:

Որպէսզի երկրի քաղաքական դեկը մի խումբ սրիկայ պալատականների ձեռքից դուրս գայ եւ չընկնի նոյնանը ման մի խումբ կեղեքողների եւ վաշխառուների ձեռքը, եւ որպէսզի ներկայ սահմանադրական կառավարութիւնը ժողովրդի իսկական ներկայացուցչութիւն լինի, անհրաժեշտ է որ երեսփոխանական ժողովը ընտրուէ:

- 1.- Ընդհանուր, ուղղակի, հաւասար եւ գաղտնի քուէարկութեամբ:
 - ա) Ընդհանուր.— Այդ նշանակում է, որ իւրաքանչիւր օսմանեան քաղաքացի, առանց ազգի եւ սեռի խտրութեան, իրաւունք պիտի ունենայ ընտրելու եւ ընտրուելու...
 - բ) Ուղղակի.— Պատգամաւորները պէտք է անմիջապէս ընտրուին ժողովրդի կողմից միաստիճան ընտրողական ձեւով: Միաստիճան, առանց սահմանափակումների կատարուած ընտրութիւնը կարող է իսկական եւ ժողովրդական համարուիլ, հետեւաբար եւ երկրի մեծամասնութեան կարծիքը եւ կարծիքները ներկայացնող...:

- գ) Հաւասար ընտրութիւնը ասելով հասկացում է որ իւրաքանչիւր օսմանեան քաղաքացի՝ հարուստ թէ աղքատ՝ մի ձայնի իրաւունք պիտի ունենայ:
- դ) Գաղտնի ընտրութիւնը անհրաժեշտ է, որպէսզի ընտրողները ձայն տան իրենց ցանկացած անձնաւորութիւններին, առանց կողմնակի ճնշումների:

- 2.- Իւրաքանչիւր 25.000 հոգին իրաւունք պիտի ունենայ մի պատգամաւոր ընտրելու:
- 3.- Երեսփոխանական ժողովը իրաւունք պիտի ունենայ մի պատգամաւոր ընտրելու:
- 4.- Պէտք է պահանջել բոլոր կողմնակի տուրքերի, օլամի, գուպարայի եւ այլն հարկերի ոչնչացում:
- 5.- Օսմանեան երկրի տնտեսական, քաղաքական, զինուորական եւ կուլտուրական կարիքները հոգալու համար տուրք է նշանակուում. տուրքը բաժանուում է ըստ կարողութեան, այսինքն իւրաքանչիւրը վճարում է իր կարողութեան համեմատ:
- 6.- Իւրաքանչիւր ընտանիքի տարեկան բիւտձէն եթէ չի անցնում 12 ոսկուց այն կողմը, նա ազատ է տուրք վճարել:
- 7.- Վերացում է մշտական գործը եւ նրան փոխարինում է միլիցիա. բոլոր օսմանեան քաղաքացիները՝ առանց ազգի եւ կրօնի խտրութեան՝ մասնակցում են երկրի պաշտպանութեան գործին:
- 8.- Հեռացում են հին պաշտօնեաները եւ ընտրում են նորերը:
- 9.- Բարբարոս, ոճրագործ եւ յանցաւոր բոլոր հին պաշտօնեաները դատի են կանչուում եւ ըստ օրինի պատժուում:
- 10) Բոլոր քաղաքական յանցաւորներին առանց բացառութեան ներում եւ արձակում բանտից:
- 11) Ժողովրդական կրթութիւնը պէտք է լինի պարտադիր եւ պետութեան հաշուով:
- 12) Բոլոր հողերը խլել պորտաբոյժ եւ անաշխատ կալուածատէրերի ձեռքից եւ յանձնել աշխատաւոր գիւղացիութեան:
- 13.- Հողերը պէտք է լինին համայնական, ոչ ոք իրաւունք չպիտի ունենայ հողը գնել եւ ծախել:
- 14.- Հողերը բաժանուում են ժողովրդի վրայ, ըստ նաֆարի:
- 15.- Երկիրը բաժանուում է նոր նահանգների ըստ ազգութեան եւ կուլտուրայի:
- 16.- Իւրաքանչիւր նահանգ (կանդոն) իրաւունք ունի ունենալու իր օրէնսդրական եւ վարչական մարմինները, միայն մի պայմանով՝ այն է՝ որ տեղական, կանդոնային ազատութիւնը չխախտէ օսմանեան պետութեան ամբողջութիւնը:
- 17.- Կենտրոնական կառավարութեան եւ տեղական ինքնավարութիւնների իրաւունքները եւ պարտականութիւնները որոշուում են յատուկ օրէնքներով, Սահմանադիր ժողովի եւ կանդոնների կողմից փոխադարձ համաձայնութեամբ:

Հայրենակիցներ !
Մենք այստեղ ընդգծեցինք այն հիմնական պահանջները, որոնք անհրաժեշտ են երկրի բարգաւաճման, առաջընթացի եւ աշխատաւոր տարրերի բրջանկութեան համար:
Մենք, դաշնակցականներս, երկար տարիներից ի վեր պարզել ենք եւ պաշտպանել այս հիմնական սկզբունքները. այսօր երբ միապետական ռեժիմը թաւալվելով ընկնում է, աւելի եւս խրախուսուած եւ քաջալերուած մեր պայքարի արդիւնքից, կոչ ենք անում օսմանեան երկրի բոլոր աշխատաւոր տարրերին, առանց կրօնի եւ ազգութեան խտրութեան, որ կռուի զէնքը վար չընեն, մինչեւ որ չհասնեն իրենց նպատակներին:
Դուք չկարծէք որ կառավարութիւնը ողորմութիւն է անում. սա ժողովրդի, յեղափոխականների յաղթանակն է եւ ոճրագործ կառավարութիւնը, հակառակ իր կամքին, գլխիկոր ստիպուած է լսել եւ կատարել յեղափոխական տարրերի պահանջները:
Կեցցէ Սահմանադիր ժողովը:
Կեցցէ Օսմանեան յեղափոխական դաշնակցութիւնը:

Հ.Յ.Գ.
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

Փաստ. 668-50

8.- ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵԻ ԿՈՉ

ՕՍՄԱՆԵԱՆ ԱԶԱՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ
(Առանց ազգի եւ կրօնի խտրութեան)

Հայրենակիցներ !

№ 3 թռուցիկով մենք յայտնեցինք որ ժամանակն է գործի դիմելու, սահմանադրութիւնը իրականացնելու համար:

Այժմ ցոյց կը տանք թէ ի՞նչ միջոցներ եւ ճանապարհներ կան այդ նպատակին հասնելու համար:

Անհրաժեշտ է կազմել մի խառն մարմին այն մարդկանցից՝ որոնք իրենց հասկացողութիւններով եւ տրամադրութիւններով կանգնած են սահմանադրական կարգերի կողմը: Այդ մարմնի մէջ պէտք է մասնակցին Վասպուրական վիլայէթում գտնուած բոլոր ազգութիւններից ներկայացուցիչներ, այն է թուրք, հայ քիւրտ, ասորի եւ եզիտի:

Այդ մարմնի կամ ժամանակաւոր կոմիտէի դերը պէտք է լինի ուսումնասիրել Վասպուրականի վիճակագրական, տնտեսական, քաղաքական եւ իրաւաբանական կացութիւնը եւ յարաբերութիւնը, այն է՝

- 1) Ամբողջ վիլայէթում որքան ազգաբնակչութիւն կայ եւ իւրաքանչիւր ազգութիւն ի՞նչ տոկոս է կազմում:
- 2) Ժողովուրդը ի՞նչ իրաւաբանական յարաբերութեան մէջ է կառավարութեան, աղաների, բէյերի, շէխերի եւ կալուածատէրերի հետ:
- 3) Հողերի ո՞ր տոկոսը պատկանում է աղաներին եւ կալուածատէրերին, ո՞ր տոկոսը ժողովրդին եւ կառավարութեան:

4) Ուսումնասիրել այն հիմնական պատճառները՝ որոնք քայքայում են տնտեսապէս մեր երկրի աշխատաւոր ժողովրդին, այն է՝ ա- հարկային սիստեմի յոռի եւ անարդար կողմերը, բ- հարկերի բաշխման եւ գանձման եղանակը, գ- աղաների, բէյերի եւ կալուածատէրերի կողոպտում եւ կեղեքումը աշխատաւոր ժողովրդին, այիդի, տասանորդի, օլամի, ջուբարայի, դատաստանական ֆունկցիայի եւայլն ձեւերի տակ:

5) Երեւան հանել այն բոլոր կաշառակերութիւնները եւ թալանները, որ կատարւում են այս եւ այն իշխանութիւնների կողմից եւ որոնք ոչ պակաս չափով նպաստում են երկրի տնտեսական քայքայման եւ անարդար կարգերի հաստատուն մնալուն:

6) Ուսումնասիրել բարեխղճօրէն ամբողջ վիլայէթի տարեկան եկամուտը եւ ելքը: Իւրաքանչիւր ընտանիք միջին թուով ո՞րքան աշխատանք (մուտք) է ունենում եւ դրանից ո՞ր տոկոսը մտնում է կառավարութեան գանձարանը, ո՞ր տոկոսը աղաների, բէյերի, կալուածատէրերի, սալաֆտարների եւ կաշառակեր պաշտօնեաների գրպանը եւ ո՞րը մնում ընտանիքի ապրուստի համար:

7) Ի՞նչ վիճակում է նահանգի կրթական գործը:

8) Երկրի հողորդակցութեան միջոցները եւ ճանապարհները ի՞նչ վիճակում են եւ ի՞նչ միջոցների պէտք է ձեռնարկել՝ վիլայէթի գանազան մասերի մէջ արագ եւ ապահով յարաբերութիւն ստեղծելու համար:

Այս բոլորը անհրաժեշտ են, որպէսզի մեր պատգամաւորները նախապատրաստուած կերպով ներկայանան երեսփոխանական ժողովին, ներկայացնեն երկրի վիճակը իր բոլոր հրէշային կողմերով եւ հնարաւորութիւն ունենան պաշտպանելու վիլայէթի արդարացի պահանջները: Եւ ժամանակաւոր կոմիտէն իբրեւ գործադիր իշխանութիւն, հէնց այսօրուանից պէտք է ձգտի իրականացնել կեանքի մէջ սահմանադրական կարգերը եւ օրէնքները:

Ինչպէս անցեալ անգամ էլ շեշտել ենք, հին դրութիւնը ամբողջովին շարունակում է իր գոյութիւնը. կաշառակեր, անբարեխիղճ եւ անգութ պաշտօնեաները ոչ միայն իրանց պաշտօններումն են դեռ եւս, այլ եւ շարունակում են նոյն գործողութիւնները ինչ որ առաջ. այդ բանը նկատուում է մասնաւորապէս գաւառներում: Առանց ուղացնելու՝ այդ անբարեխիղճ մարդկանց պէտք է հեռացնել պաշտօնից եւ պատասխանատուութեան տակ գցել: Աղաները, բէյերը եւ այլ ինքնազուլիս իշխանութիւնները սանձարձակօրէն կառավարում են ժողովրդին, տէր համարելով իրենց ոչ միայն երկրին, այլ եւ մարդկանց ինչքին եւ կեանքին. անհրաժեշտ է տառապող եւ աշխատաւոր ժողովրդին պոկել նրանց ճիւղաններից եւ դատաստանական, հարկային եւ այլ ֆունկցիաները կենտրոնացնել մի միայն այն մարդկանց եւ հաստատութիւնների ձեռքը, որոնք ըստ «գանունը է սասիի» իրաւունք ունին այդ գործով զբաղուելու:

Եթէ ոեւէ մէկը նորից համարձակուի իրեն ժողովրդին տէր համարել եւ խառնուել նրա ներքին գործերում, անմիջապէս պատասխանատուութեան ենթարկել: Այդպիսով է որ մենք հնարաւորութիւն կը տանք ժողովրդին գիտակից դառնալ իր իրաւունքներին եւ նոր սահմանադրական օրէնքները եւ կարգերը իրականացնել կեանքի մէջ, այլապէս ժողովուրդը միշտ էլ կը մնայ նոյն ստրուկը, եւ իր լաւագոյն ոյժերը երեւան չի հաներ երկրի բարգաւաճման եւ բարեկարգման գործին նուիրելու համար:

9) Ժամանակաւոր կոմիտէն պէտք է ունենայ իր օրգանը (թերթ), որպէսզի մերկացնէ եւ քննադատէ հին ձեւի կարգերը, երեւան հանէ ամէն տեսակի բռնութիւն եւ կեղեքում եւ միւս կողմից ժողովրդին նրան ըմբռնելու լեզուով հասկացնէ նոր օրէնքների եւ կարգերի իմաստը եւ տրամադրութիւնը, իրագել պահէ վիլայէթի ազգաբնակչութեան՝ մեր ընդարձակ հայրենիքում կատարուած բոլոր գործերին եւ կոչ անէ, որ ամէնքս առանց կրօնի եւ ազգութեան խտրութեան, մեր բարոյական եւ նիւթական ուժերը չխնայենք երկրի վերածնութեան գործի համար:

Մենք հաւատացած եւ համոզուած ենք, որ եթէ սահմանադրական կարգերը լայն կերպով իրագործուին մեր երկրում եւ իւրաքանչիւր օսմանեան քաղաքացի իր մասն ունենայ երկրի գործերի մէջ, մի քանի տարուայ աշխատանքից յետոյ ոչ միայն լիովին եւ հիմնապէս կը բարեփոխուի երկիրը, կը ծաղկի եւ կը հարստանայ, ժողովուրդը ինքնագիտակցութեան կը գայ, այլ եւ Տաճկաստանը կը դառնայ օթերորդ հօրը եւ ուժեղ պետութիւնը եւ չի թոյլ տար այս եւ այն եւրոպական պետութեան խառնուելու իր ներքին գործերուն: Մենք այժմ հասուն ենք եւ մեզ հարկաւոր չեն խնամակալներ, նամանաւանդ այն տեսակի, որոնք մեր ընդարձակ եւ հարուստ երկիրը ուղղակի կողոպտում են գանազան առանձնաշնորհումներով եւ կոնցեսիաների անուան տակ:

Դէպի՛ գործ, ազատ օսմանեան քաղաքացիներ, դէպի՛ գործ. այլեւս անց է կացել քննալու ժամանակները, տուկուն եւ յարատեւ աշխատանքով է որ երկիրը կը դնենք բարգաւաճ եւ բարեկեցիկ վիճակում:

Կեցցէ վերածնուած Տաճկաստանը, կեցցեն դեմոկրատիկ սահմանադրական կարգերը, կեցցէ եւ օսմանեան երկրի յեղափոխական տարրերի Դաշնակցութիւնը, որոնք արդարութեան, ազատութեան եւ եղբայրութեան գաղափարները իրականացնում են կեանքի մէջ:

Հ.Յ.Դ. ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

3 – 8 – 1908

Փաստ. 668-45

9.- ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Հ.Յ.Դ. ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵԻ

Ընկերներ!

Հինգ ամսից ի վեր ժողովրդեան թշնամի մարդակեր կառավարութիւնը սկսել է սխտեմատիկ հալածանք յեղափոխական տարրերի դէմ, յոյս ունենալով մի անգամ ընդ միշտ վերջ տալու Օսմանեան երկրի ճնշուած տարրերի ազատագրութեան:

Հալածանքներ, բռնութիւն, կամայականութիւն առաջին անգամ չէ որ յարուցանուած են աշխատաւոր հասարակութեան եւ մասնաւորապէս յեղափոխականների դէմ, բայց ամէն անգամ մենք մեր հակահարուածներով եւ տոկոսն գործունէութեամբ ի դերեւ ենք հանել կառավարութեան մեքենայութիւնները. բայց այս անգամ ի հրճուանս կառավարութեան, նրան յաջողուեց յեղափոխական տարրերիս նիւթական մեծ հարուածներ հասցնել, եւ շատ հասկանալի է...

Հասարակութիւնը՝ այդ գորչ մեծամասնութիւնը, այդ անորոշ եւ անգոյն մսի գունտը՝ յախուռն կերպով միացաւ կառավարութեան եւ սկսեց կատաղի հալածանք երիտասարդութեան եւ մանաւանդ յեղափոխականներիս դէմ, ու բոլոր աններելի միջոցներով գործի դիմեց որպէսզի ապահովէ իր անասնային գոյութիւնը. ի՞նչ փոյթ նրան թէ դրանով նա իր ազատագրութեան համար է գերեզման փորում, ի՞նչ փոյթ նրան թէ մի քանի հարիւր երիտասարդներ կը փտին բանտի խորքում կամ կ'անպատուին գանակոծութեամբ փօլիս տախտակներով²⁷ եւ զնդաններում. նրան հարկաւոր էր փրկել իր անասնային կաշին, եւ նա փրկեց, ծաղիկ երիտասարդութիւն իրեն գոհարեւելով անարգ կերպով...

Դորան միացան նաեւ դիմակաւոր, մութ եւ անպատիւ տարրերը, որոնց համար գերադասելի է մութ եւ խաւար նկուղները, ստորաքարչ սողալը եւ լիզելը իրենց բռնաւորների ոտները, եւ որոնց համար մի փոր հացը, մի քանի դրուշը աւելի է, քան աշխատաւոր ժողովուրդներու ազատագրական գործը, մարդկային արժանապատուութիւնը. այդ տարրերը կարծեցին որ մենք մեռանք, յեղափոխական, ազատագրական շարժումը արմատախիլ եղաւ, եւ արձակ համարձակ ասպարէզ դուրս եկան, ստորներու վայել յանդգնութեամբ հրէջ ոստիկանութեան եւ բիւրոկրատիայի արբանեակներ դառան...

Բայց զգոյ՜ մենք կանք եւ կանգուն ենք, թէպէտեւ նիւթական եւ ռազմական մեծ կորուստներով, թէպէտեւ վիրաւոր սրտով, բայց եւ այնպէս բարոյապէս բարձր, լի վառ յոյսերով դէպի ապագան, հաւատով դէպի վերջնական յաղթանակը...

Ահա Վասպուրականի ռէակցիայի այս ծանր օրերում, յեղափոխութիւնը ծայր է առել ուրիշ վայրերում աւելի ուժգին եւ յախուռն, եւ ազատութեան քաղցր ելեւէջները հասնում են մեր ականջին... Սահմանադրութեան հաստատման մասին են խօսում, արձակում են քաղաքական բանտարկեալներին, խօսուում է պատգամաւորների ընտրութեան մասին... այդ բոլորին մենք հաւատում ենք...

Տասն եւ եօթ տարի անընդհատ մենք պայքարել ենք բռնակալութեան դէմ, կատարուել են հերոսական գործեր. յեղափոխական երիտասարդութեան արիւնով ուռգել ենք Պոլսից մինչեւ Տաւրոսեան լեռնաշղթան, Մակեդոնիայից մինչեւ Արաբիան եւ հրգրումը. մի՞ թէ այդքան թանկագին սերմերը ապարդիւն են գցուած Օսմանեան պետութեան պարարտ հողի վրայ, մի՞ թէ այդքան կարմիր, թարմ արիւնները մի անձրեւի ոյժ անգամ չէին ունենալու, ուռգելու հերկուած դաշտերը, անդաստանները, մի՞ թէ մեր նահատակ ընկերների վառ իտէալները միայն սին յոյ սեր էին...

Ոչ եւ հազար անգամ ո՛չ... ճշմարտութիւնը եւ արդարութիւնը մեր կողմն էր, եւ ահա թէպէտեւ մենք խոցուած ու վիրաւոր, բայց եւ այնպէս հազար գլխեան Հիդրան — միապետական ռեժիմը դէպի անկում կը դիմէ...

Մօտ է ազատութեան, հաւասարութեան եւ եղբայրութեան ժամը, գօտեպնդուեցէ՛ք, յեղափոխական ընկերներ, եւ բռնեցքնեղ սեղմած, քայլեցէ՛ք դէպի ազատութեան թշնամիները. կարճ ժամանակում հրապարակը կը մաքրուի, օդը կը թարմանայ եւ համասօմանեան յեղափոխութիւնը տէր կը դառնայ դրութեան:

Կեցցեն բոլոր օսմ. յեղափոխական տարրերը, կեցցեն այն աներեւոյթ հերոս ընկերները, որ դեռեւս յոյսը սրտներում, վառ իտէալներով, հպարտ նայում են դէպի ապագան, կեցցէ Դաշնակցութիւնը որ մի րոպէ անգամ առանց լքուելու, շարունակում է Օսմանեան երկրի աշխատաւոր տարրերի ազատագրութեան գործը...

24-8-1908

Հ.Յ.Դ. ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԵ

27.- Ոստիկանատուներու մէջ:

Փաստ 668-47

10.- ՀԵՌԱԳԻՐ ՍԵԼԱՆԻԿԻ ԻԹԹԻՀԱՏԻՆ

Հեռագրի այս արտագրութիւնը թուական չունի: Մատիտով կատարուած նշումը «Մայիս 8-909» յայտնապէս սխալ է, որովհետեւ Մայիսին դեռ Օսմանեան սահմանադրութիւնը չէր հռչակուած եւ հեռագիր տուող յեղափոխականները, — Վահան Փափագեան (Կոմս), Բարսեղեան-Օտապաշեան (Մարգիս) եւ Միքայէլեան Նիկոլ (Իշխան) տակաւին լեռներն էին: Վասպուրականի Կ. Կոմիտէի անունով (Կոմսի ձեռագիր) յայտնաբար Թիֆլիս Արեւելեան Բիւրոյին ուղղուած նամակի մը մէջ (փաստ. 668-52), որ 19 Օգ. 1908 թուականը կը կրէ, կը կարդանք «հեռագիրներ տուինք Դրօշակի եւ Չանգակի խմբագրութիւններին: Սելանիկի կոմիտէին եւս տուինք մի հեռագիր հետեւեալ բովանդակութեամբ (տես առանձին թղթի վրայ): Տուէք թերթերին հրատարակութեան»: Վստահօրէն խօսքը կը վերաբերի այս հեռագրին: Ուրեմն եւ թուականը հին տոմարով կը ճշդուի մօտաւորապէս 1908 թ. Օգոստոս 18, իսկ նորով՝ Օգ. 31: Արամ Մանուկեանի «Դրօշակ»ի խմբագրութեան տրուած հեռագիրները եւս (ստորեւ տրուած) կը հաստատեն վերոյիշեալ թուականը:

Սելանիկ Իդրիհատ վէ Թերագոզ ջեմիթին

Յայրենակիցներ!

Քանի մը օր է ինչ իջել ենք քաղաք մեր հայրենիքի հպարտ լեռներից լսելով սահմանադրական կարգերի հաստատումը: Մենք ներկայացուցիչներն ենք իր քաղաքակրթական հակումների համար տանջուող դժբախտ մի ժողովորդի. մենք ներկայացուցիչներն ենք եւ մի յեղափոխական կուսակցութեան, որ 20 տարուց ի վեր, շատ անգամ միայնակ կռուել է յանուն արդարութեան, ազատութեան եւ մարդկայնութեան: Մենք միշտ հաւատում էինք համօսմանեան մեծ յեղափոխութեան եւ մեր բովանդակ ոյժերով նպաստում էինք նրա կարմիր արշալոյսին: Փարիզի կոնգրէն վերջնականօրէն պսակեց մեր յոյսերը կուռ դաշն կապելով շատ ժողովրդական «Իդրիհատ վէ Թերագոզի» եւ իշխան Սապահետտինի կուսակցութեան: Եւ այսօր շնորհիւ երկրի դժգոհ տարրերի բռնակալ կարգերի դէմ մղող պայքարին, մասնաւորապէս շնորհիւ ձեր կուսակցութեան եռանդուն աշխատանքին եւ հայրենասէր դեմոկրատ բանակի լայն օժանդակութեան, մեր ընդհանուր հայրենիքի վրայ ծագեց ազատութեան սքանչելի արշալոյսը:

Մենք սիրալոյսով վայր ենք դնում մեր զենքերը նուիրելով մեր թանկագին հայրենիքի վերածննդեան մեծ գործին, յանուն քաղաքական կարգերի դեմոկրատացման,

մանր ազգերի իրաւահաւասարութեան եւ տեղական լայն ապակենտրոնացման եւ միշտ պատրաստ ձեզ հետ դիմագրաւելու ազատութեան թշնամիներին:

Կեցցէ սահմանադրական Թուրքիա
Կեցցեն Թուրքիոյ բոլոր դժգոհ տարրեր
Կեցցէ Իդրիհատ վէ Թերագոզի ջեմիթը
Կեցցէ դիւցազն բանակ
Դ. Յեղ. Դաշնակցութեան ներկայացուցիչներ
ԿՈՄՍ, ՍԱՐԳԻՍ, ԻՇԽԱՆ

Յ.Գ.- Արամը եւ մի մաս ընկերներ Օգոստ. 4 (17)ին առտու ազատ արձակեցին, ինձ արդէն 8 ժամ առաջ Պոլիս դրկեցին ոստիկաններով: Օգոստ. 1-ին ազատ էին ձգած հարիւրաւոր բանտարկեալներ:

ՏՃԹ²⁸

Եթէ ուզում էք կարող էք օգտուել:

ՄՅԵՐ²⁹

Մանօթ.- Մատիտով գրուած թուականը Մայիս 8 1908 սխալ թուական է: Ստորագրողները այդ օրերին դեռ փախրստական էին: Յուլիս 11ի յեղափոխութենէն յետոյ միայն Օգոստոսի վերջերը նոր լեռնէն իջան: Արամը բանտէն Օգոստոս 4ին ազատուեց:

ՏԱՃԱՏ

11.- ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ «ԴՐՕՇԱԿ»ԻՆ

Վան, 20 Օգոստոս

250է աւելի բանտարկեալներով ազատուեցանք. սահմանադրութիւն եւ ընդհանուր ներում շնորհուեցաւ:

ԱՐԱՄ

Վան, 31 Օգոստոս

Կոմսը, Սարգիսը ազատօրէն քաղաք մտան այսօր: Այցելութիւն հայրենասէր հրամանատարին. համակրական խօսքեր փոխանակուեցան՝ աշխատիլ Սահմանադրութիւնը միասին պահպանելու համար. սիրալիք ընդունելութիւն. այցելութիւն Վազգէշի³⁰ եւ նահատակներու գերեզմաններուն:

ԱՐԱՄ

(«Դրօշակ», 1908, N 8, էջ 122)

28.- Յետ գրութեան տակ ստորագրողը՝ ՏՃԹ, մատնիչ Դափթը ահաբեկող Տաճատ Թերլեմէզեանն է:
29.- Միեր՝ ծածկանունն էր Արեւելեան Բիւրոյի ներկայացուցիչ:

ցիչ Դամօ Օհանջանեանի:
30.- Վազգէնը՝ նահատակուած յայտնի յեղափոխական Տիգրան Տերոյեանն է:

Փաստ 668-59

12.- ՄԵՐ ԴՐՕՇԱԿԸ

Ժամը հնչեց...

Յուլիս 11-ի պետական մեծ ակտը, նոր դարագլուխ է բանում, ո՛չ միայն համայն Տաճկաստանի պետական-քաղաքական կեանքի համար, այլև նրա բոլոր մասնիկների...

Մենք՝ Հ. Յ. Դաշնակցականներս, որ 18 տարուց ի վեր համարեա մեն միմակ կռուի դրօշակ ենք բացել եւ գայն ընդգրկել ու պահել ընթրստութեան լեռնակատարներին, ամենից առաջ մենք իրաւունք ու պարտականութիւն ունինք հաշուի առնել մեր փշոտ անցեալը, խոնարհիլ նրան ստեղծագործող անմահ ու անձնուէր գաղափարական ոգիների առաջ, ու բանալ մեր կարմիր յեղափոխութեան համար մի նոր դարագլուխ, մի նոր ու փառահեղ էջ...

Մենք խոստովանում ենք, մենք բացարձակ յայտարարում ենք, որ մինչեւ հիմա մեր դերը եղել է քանդելու մէջ, մենք եղել ենք բռնակալների գերեզմանափորները... այն խորին համոզումով, որ մինչեւ հիմնը, փտածը արմատից չկտրեն, նորը, թարմը – կենդանին չէիք կարող նրա վրայ կանգնեցնել, փլուած տունը կարկատաններով չէր փրկուի...

Բայց այժմ, երբ համայն Տաճկաստանի ընթրստ ու ազնիւ տարրերի գրոհի առաջ տապալուած է բռնակալութիւնը, տապալուած է անէծք դարձած ռեժիմը՝ մենք իսկոյն ոտքի կանգնելով այն մեծ ու հսկայական ճակատամարտից, սեղմում ենք մեր շարքերը, յանուն նոր ու ստեղծագործող պայքարի...

Հին անիծուած ու սեւ օրերին, երբ զուլունը թեւատարած թագաւորում էր մեր դժբախտ հայրենիքում, մեր պայքարի ու ռազմի օրերին, մեր մարտական շարքերում կանգնած էին թերեւս տարրեր, որոնք չէին համապատասխանում իրենց քաղաքական-տնտեսական նկարագրով մեր կուսակցութեան սոցիալիստական-յեղափոխական ոգուն... Բայց անցեալը անցաւ, այն ժամանակ մենք շատ անգամ ինքնապաշտպանութեան եւ ոստիկանի դերի մէջ ենք եղել. այժմ պայմանները փոխուած են, փոխուելու եւ գտուելու են նաեւ մեր շարքերը... Այսօրուանից մենք ոտք ենք կոխում մի նոր գործունէութեան ասպարէզ. այսօրուանից մենք արտայայտուելու ենք մեր քաղաքական եւ տնտեսական ծրագրի ամբողջ էութեամբ...

Այսուհետեւ քաղաքային բանուորութիւնը եւ մանր արհեստաւորութիւնը մտնելու է մեր կազմակերպութեան մէջ, իր հուժկու արհեստակցական միութիւններով, հետապնդելու ո՛չ միայն քաղաքական այլ եւ տնտեսական-դասակարգային կռուին...

Այսուհետեւ անհող ու սակաւահող մանր գիւղացիութիւնը մտնելու է մեր շարքերը, կալուածատէրերին սարսափեցնող գիւղացիական միութիւններով, սպառողական եւ այլն ընկերութիւններով, յանուն հողերի համայնացման ու պրոգրեսիւ հարկային սիստեմի:

Այսուհետեւ երկրի աղը – աշխատաւորական ինտելիգենցիան մտնելու է մեր շարքերը, իր կազմ ու պատրաստ քաղաքական խմբերով, յանուն մեր երկրի քաղաքական-տնտեսական ազատութեան...

Այսուհետեւ մեր արհեստակցական, գիւղացիական եւ քաղաքական միութիւններից ու խմբերից կազմելու են մի հսկայ ու պատրաստ մարտական-ռազմական բանակ, նորէն ստորերկրեայ մնալու պայմանով, եւ ամէն անգամ պատրաստ դիմագրաւելու ազատութեան եւ հաւասարութեան թշնամիներին՝ խորտակելու համար աշխատաւոր ժողովրդի դէմ նիւթուած բոլոր դաւադրութիւնները...

Այսուհետեւ մենք դուրս ենք գալիս հրապարակ, յանուն մեր նոր հաստատուած կարգերի դեմոկրատիզացիայի, յանուն քաղաքական-օրէնսդրական ապակենդրոնացման, եւ վերջապէս որ ամենակարեւորն է յանուն մեր աշխատաւոր ժողովրդի տնտեսական եւ դասակարգային շահերի պաշտպանութեան...

Այսուհետեւ մենք դուրս ենք գալիս յանուն միջազգայնութեան, կոչ անելով բոլոր ժողովրդների աշխատաւոր տարրերին կազմակերպուելու եւ միանալու Տաճկաստանի մեծ ու զօրաւոր յեղափոխական-սոցիալիստական բանակի մէջ, ընդհանուր եւ միացեալ բանակով նուաճելու եւ ստեղծելու աշխատաւոր ժողովրդի համար երկրային դրախտի, ազատութեան, արդարութեան եւ մարդկայնութեան դրօշակով...

Բայց այս բոլորի հետ, ներկայ քաղաքական փափուկ մոմենտում մենք քաղաքական իմաստութիւն ու առաքինութիւն ունինք ձեռք մեկնելու եւ բլոկ կազմելու ընդդէմ հին կարգերի մնացորդների ու հաւանական ռեակցիայի այն լիբերալ ազատական տարրերին, որոնք անկեղծ սահմանադրական են եւ պատրաստ են պայքարի...

Դաշնակցական ընկերներ! ուրեմն գտեցէ՛ք ձեր շարքերը, ուրեմն անցեալ մեծ պայքարի քրտինքը դեռ չցամաքած, դիրքեր գրաւեցէ՛ք ու կազմակերպուեցէ՛ք արհեստակցական, գիւղացիական, քաղաքական ու մարտական միութիւնների ու խմբերի՝ բոլոր աշխատաւոր եւ հալածուած տարրերից:

Դէպի՛ գործ, դէպի՛ նոր գոհաբերութիւն. ցոյց տանք մեր հակառակորդներին, որ մենք ո՛չ միայն անձնագոհ ու քաջարի կռուողներ էինք, այլ եւ հնուտ եւ ընդունակ ստեղծագործողներ ենք...

Կեցցէ՛ Հայ Յեղ. Դաշնակցութիւնը:

Կեցցէ՛ Թուրքիոյ ընդհ. յեղ. դաշնակցութիւնը:

Հ.Յ.Դ. ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ՊԼՈՒԽ VII

ԴՈՒՐԱՆ – ԲԱՐՉՐԱԽԱՆԴԱԿ (ՏԱՐՕՆ – ՍԱՍՈՒՆ)

Օ սմանեան սահմանադրութեան նախորդող տարիներուն, Տարօնի դաշտային եւ Սասնոյ լեռնային շրջանները թատերաբեմ հանդիսացած էին արիւնալի կռիւներու եւ, հակառակ պարբերաբար կրկնուող կոտորածներուն ու աւերածութեանց, կազմակերպական այս գօտին կը մնար, սահմանակից Վասպուրականի հետ միասին, հայ յեղափոխական դիմադրութեան ուժեղագոյն ամրոցներէն մէկը: Անոր ամրակուտ հիմքը նետած էին առասպել դարձած Արարոն, Հրայր Դժոխքը, Սերոբ Աղբիւրը, Անդրանիկը եւ շատ մը ուրիշ առաջնորդներ: Ժողովուրդին հոգիին մէջ դեռ վառ կը մնար յիշատակը Գեորգ Չաւուշի, հռչակուած իր սխրալի քաջագործութիւններով: Վերջին տարիներուն կուսակցութեան կազմակերպական եւ մարտական գործերը կը վարէր Ռուբէն Տէր Մինասեանը:

Սահմանադրութիւնը, եթէ պահ մը յոյսով լեցուցած էր ուժաբամ դարձած տեղւոյն հայ ազգաբնակչութիւնը, ապա շուտով յայտնի պիտի դառնար որ հին կացութենէն շատ բան փոխուած չէր: Իշխանութեան գլուխ կը պահուէին երկի կաշառակեր ու կեղեքիչ պաշտօնեաները: Դատարանները կը շարունակէին կամայական վճիռներ արձակել, անտեսելով արդարութեան ամենէն տարրական կանոնները: Գիւղացիներու հողերը կը մնային թուրք եւ քիւրտ բռնագրաւիչներու ձեռքը: Այօրինի հարկահանութիւնը կը կատարուէր ծեծով եւ խոշտանգումներով: Քրտական զինեալ ցեղախումբերը, քաջալերուած ֆետայական ուժերու ցրուումէն, նոր թափով վերսկսած էին իրենց սանձարձակ գործունէութեան՝ սովորական դարձած թալանին ընկերացող սպանութիւններով:

Այս պայմաններուն մէջ Տարօն-Սասունը, ինչպէս նաեւ Սալնոյ ձոր անունով ծանօթ Պիքլիսի եւ Խլաթի շրջանները կը դիմագրաւէին լուրջ տագնապ: Հոն գործուողուած ուժերը՝ Գարմէն (Մելքոնեան), Սեպուհ (Ներսէսեան Արշակ), Սեբաստացի Մուրատ, Մարգպետ (Ղազարոսեան Ղազարոս) գերմարդկային ճիգեր կը թափէին չարիքներուն առաջը առնելու համար: Պերճախօս են այդ իմաստով Պոլսոյ Պատ. մարմնին ուղղեալ անոնց յուսահատութեան հասնող գրութիւնները՝ նկարագրելու համար Սահմանադրութեան առաջին ամիսներուն ժողովուրդին ապրած անտանելի պայմանները: Ընդհ. Ժողովին եւս Ռուբէն, Գեղամ Տէր Կարապետեան (Տատրակ) եւ ուրիշներ առիթ պիտի ունենան պարզելու այս դժնդակ կացութիւնը:

Դուրան Բարձրաւանդակի թղթածրարը կը սկսիմք նոր վարչակարգի տակ Սուրբ Կարապետի մէջ գումարուած Շրջանային ժողովով, որուն ներկայ են, տեղական հին դէմքերու կողքին քազմաթիւ նոր գործիչներ: Կը հետեւին անոնց գանգատ-բողոքի գրութիւններէն մէկ քանին:

Ե. Փ.

Փաստ. 697-62

1.- ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎ՝ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՄԷՋ

1908 Սեպտ. 15
Ս. Կարապետ.

Օրակարգ Շրջանային ժողովի մասին

- 1.- Սահմանադրութիւնը եւ Դաշնակցութեան դիրքը
- 2.- Համերաշխութիւն երկրի զանազան ցեղերի հետ
- 3.- Յեղափոխականների իրաւունքները եւ փոխադարձ պարտականութիւնները
- 4.- Դաշնակցութեան եւ ժողովրդի ինքնապաշտպանութեան հարցը
- 5.- Դաշնակցութեան եւ ժողովրդի կրթական խնդիրը

Կազմակերպական

- 6.- Վերստուգել կոմիտէների սահմանները
- 7.- Կանոնաւորել իրաւասութեանց հարցը
- 8.- Կազմական սեփական թերթ երկրում կամ Պոլսում
- 9.- Գիւղացիական միութիւններ
- 10.- Անջատման հարցը Կովկասից
- 11.- Մեր դիրքը Սահմ. վտանգների դէպքում
- 12.- Տեւոր
- 13.- Մարտական խմբեր
- 14.- Կամաւորներ (Կառավարութեան, ժողովրդեան համար)
- 15.- Ցուցական գործը (նախկինի պէս կարելի՞ է շարունակել)
- 16.- Զեղծարարների հարցը
- 17.- Դատական հարցը
- 18.- Գաղթականներուն հարցը
- 19.- Հողային հարցը
- ա.- Վերստանալ գրաւուած հողեր
- բ.- Նոր հողեր ձեռք բերելու ջանալ
- 20.- Պատգամաւորի հարցը հողային իրաւասութեան յանձնուած է:

14 Սեպտ. 1908
Երեկոյ ժամը 2

Նախագահ Տ. Վարդան վարդ. Յակոբեան. ներկայ էին Պ. Ռուբէն, Կորիւն, Տ. Մուշեղ Զրիկի, Տ. Սարգիս Գոմբերի, Տ. Քերոբէ Սասգիւղի, նաեւ Յարութիւն Զխաւցի՝ Աւօ, Հայկ, Արամ Աւրանցի, Մուշեղ Դերբէ-

վանքցի, Բենիամին Արքավանքցի, Գէորգ Խաշխաւտաղցի, Մեսրոպ Սուլուխցի եւ Ստեփան, էրօ, Սաղոյեան, Յովհաննէս Պաղլուցի, Տիրան Սորտարցի, Առինչ-վանքցի Մուշեղ, Օղունքցի Մխիթար, Յունանցի Գրիգոր, Բերդակցի Ներսէս, Տէրիքցի Խաչօ, Սոխազմի վարժ. Գեղամ եւ ուրիշ շատ մը ունկնդիրներ:

Խօսեցաւ ընկեր Ռուբէնը բացատրութիւններ տալով սահմանադրական նոր կարգերու մասին, համակրանք յայտնեց Սահմանադրութեան, իսլամ բոլոր հայրենակիցներու հետ խաղաղ ապրելու համար, համերաշխութեան յորդորներ տուաւ ժողովրդին: Յետոյ Դուրանի դաշնակցական մարմիններու վերակազմութեան մասին, երկար ու բացատրալից տեսութիւններ պարզեց, ու յետոյ՝ ցանկութիւն յայտնուեցաւ ներկաներու կողմէ ձեռնարկել վերակազմութեան:

Վերակազմուած շրջանային մարմինները պէտք է որ խնամ տանին պահպանել համերաշխութիւն դրացի ցեղերու հետ, համակրիլ, աջակցիլ Սահմանադրութեան եւ ձգտիլ ապակեդրոնացման:

Կը յանձնարարուի, որ նոր գործիչները անուանուին խելօք ու խղճամիտ անձնաւորութիւններէ, անոնցմով, որ հոգիով յեղափոխական են, եւ թէ անցեալ գործունէութիւն ունեցեր են. խելացի գործիչներ կարող են հայ եւ թրքական համերաշխութիւն պահել հրահանգելով հասարակութիւնը:

Այս մասին կ'առաջարկուին հետեւեալ բանաձեւերը. ա. Գիւղային խումբերու մէջ քննութեամբ ընդունիլ մաքուր անհատներ եւ այսպէս կազմուելէ յետոյ, իրաւունք տալ, որ իրենք ընտրեն իրենց խմբապետները:

բ. Կազմել երկու մասնաժողով՝ իւրաքանչիւրը երեք շրջանի համար, փորձառու, լաւագոյն ընկերներէ, որոնք՝ Կ. Կոմիտէի ներկայացուցչի մը հսկողութեամբ շրջանային ընտրութիւնները լրացնեն եւ յայտագրեն Կ. Կոմիտէին:

գ. Այդ մասնաժողովները պիտի ընտրեն Կ. Կոմիտէին, հարկաւ ամէնէն մաքուր անհատներէ:

Գիւղական համայնքներէն բացատրութիւններ տրուեցաւ Օսմ. խորհրդարանի անդամակցութեան համար ձեռնարկուած մարդահամարի եւ ընտրական գործողութեանց եղանակին համար:

Յանձնարարութիւններ եղան լրացնել Մշոյ Գաւառ-Ընդհ. ժողովին անդամներ, Առաջնորդարանէ ղրկուած ընտրելիաց ցանկի վրայէն, արժանաւորներուն ընտրութիւնը շեշտուելով:

Ժամը Թին դադար:

Սեպտ. 15 1908

Ներկայ էին Պ. Ռուբէն, Յեսու, Կորիւն, Տ. Քերոփ, Տ. Սարգիս, Տէր Մուշեղ քահանայք, Դերթ(եվանքցի) Մուշեղ, Արքավանքցի Բենիամին, Խաշխաւտաղցի Գէորգ, Սուլուխցի Ստեփան եւ Ենովք, Տէրիկցի Խաչօ, Աւրանցի Հայկ, Ասօ, Արամ, Մխանցի Արութ, Փեթարցի Պետօ, Պաղլուցի Յովհաննէս, Օղունքցի Մխիթար, Առինչվանքցի Մուշեղ, Գառնենցի Մկրտիչ, Բերդակցի Ներսէհ, Յունանցի Գրիգոր, Սոխազմցի Գեղամ, Սորտարցի Տիրան, Քիւրտմէյտանցի Գրիգոր, Տ. Կարապետ եւ Տ. Ստեփան վարդապետներ. Շէխլանցի Աբրէ, Սովսէս Տոնոյեան Գոմսեցի եւ Աս.ը: Բոլոր հոգեւորականաց մասնակցութեամբ նահատակուած ընկերների յիշատակին հոգւոց արտասանուեցաւ:

Շէխլանցի Պետրոս, Զիւրէթցի Վահան եւ Հերկերտցի Նազարը ժողովի հրահրելու համար խնդիր եղաւ առաջին երկուքը մերժուեցան, իսկ Նազարը ընդունուեցաւ:

Բացակայ ընկերներն էին: Ախջանցի Տ. Ղեւոնդ, Մկրտ, Ալիջանցի Պատիկ, Յրօնքցի Ասօ, Առինջի Սահակ, Մոկցի Ղազար, Երիշտէրու Վահան, Ղլաղաճայ Սարգիս, Մանուկ, Պօղոս, Դրմբտոցի Օհան, Ղարձայ Գասբար... ճշդել նաեւ բացակայ միւս ընկերները:

Ատեանը բացուեցաւ

Ա.ը կը խօսի Տարօնոյ անցեալ ու ներկայ յեղափոխութեան մասին, յեղափոխական վերջին ճիգերու արժանաւորութիւնը: Սահմանադրական կացութիւնը: Մեր համակրանքը Սահմանադրութեան. մեր ձգտումը ապակեդրոնացման, վերակազմութեան հարկը, այնպէս որ յեղափոխութիւնը նոյնացուի ժողովրդի հետ: Կատարեալ համերաշխութիւն պահել դրացի իսլամ ցեղերու հետ. ժողովրդի տնտեսական վիճակը: Բարելաւելու համար կազմել մի մասնաժողով, որ մշակէ մի ծրագիր ստանալու մեր բռնաբարուած իրաւունքների վերստացման միջոցները, եւ թէ հաց, լուծք, սերմ եւայլն աշխատի հայթայթել ժողովրդին համար:

Ընկեր Ռուբէնը կը խօսի ու երկարօրէն էլի կը բացատրէ Սահմանադրական նոր կարգերը, մեր բռնելիք դիրքը Սահմանադրութեան հանդէպ, ու ապակեդրոնացման դրութեան շահեկան եւ առաջընթացական օգուտները կը պարզէ. այնուհետեւ կը սկսին կարծիքների փոխանակութիւնները ու հետզհետէ կ'ընդունուին հետեւեալ բանաձեւերը:

Ա. Ժողովը կը համակրի սահմանադրական արդի կարգերին, պայմանաւ որ ապակեդրոնացում տեղի ունենայ, զոր կը ձգտի ստանալ իր բոլոր ուժովն ու անձնուիրութեամբ, համերաշխ գաւառ(ական) ազգաբնա-

կութեանց ձգտումին, մերժելով անջատողական ունէ ձգտում:

Բ. Սահմանադրութիւնը յեղափոխութիւնն ձեռք բերաւ արդէն. պարտինք պաշտպանել, միաժամանակ՝ ջանալով փափաքուած արդիւնքի յանգեցնել ապակեդրոնացման ձգտումը. յեղափոխական միջոցներ, հետեւողութեամբ դաշնակցական ծրագրին՝ ի նկատի ունենալով տեղական պայմանները:

Ընկեր Կորիւնը կը շեշտէ թէ, Տարօնոյ դաշնակցական բոլոր ընկերները, պէտք է իրենց որոշումները անեն գիտակցաբար եւ հարցերը հասկանալի եւ անոնց վրայ որոճալի յետոյ՝ կ'առաջարկէ նաեւ որ դաշնակցական գործունէութիւնը ընդլայնուի Տարօնէն դուրս հարեւան գաւառներն ալ, ու ժողովը սա բանաձեւը կ'ընդունէ:

Գ. Ի նպաստ ապակեդրոնացման՝ պահանջ դնել որ Դաշնակցութիւնն ընդլայնէ իւր գործունէութիւնն դրացի բոլոր կարեւոր գաւառներում. օրինակ Կարին, Տիգրանակերտ, Խարբերդ եւ որպէսզի շարժոււմը ընդհանուր ու զօրեղ հանգամանք ունենայ եւ որպէս հնար է նոյն մտքով փրփականտա ընել միշտ շրջապատող ցեղերի մէջ:

Դադար ժամը 7 1/2ին:

Նիստ Գ.

Դ. Օտար ցեղերու հետ համերաշխութիւնը կարելի է եւ պէտք է պահպանել հետեւեալ կերպով՝ ա) Առժամանակեայ վերապահ ընթացք մը բռնապետ ու կեղեքող դասակարգին դէմ: Օրինական միջոցներով բողոքները սկսիլ: բ) Ազգ. կուր եւ ցեղային ատելութիւն առաջ չբերելու համար, ջանալու է] համերաշխութիւն մշակել իսլամ հողագործ եւ արհեստաւոր դասակարգերու հետ, նոյնպէս, շարունակուած ճնշումների դէմ օրինական միջոցներով եւ կառավարութեան դիմելով պաշտպանուել:

Ե. Համաձայնութիւն կը յայտնէ իսլամներու հետ, քաղաքին մէջ խառն մարմիններ կազմել, սա պայմաններով թէ՛ ա) Թուրք անդամներ ծանօթ կեղեքիչ ու բռնակալ տարրերէ չլինին, բ) Պէտք է նպատակ ունենան՝ ապակեդրոնացում. գ) Համեմատական չափով արժանաւոր հայ անդամներ ընդունուին: դ) Բողոքել, եթէ մարմինին մէջ վնասակար անդամներ մտցուին: ե) Հետամուտ ըլլալ, հարկաւոր միջոցներով եւ հեռագրական բողոքներով այս մարմնի կազմութիւնը փութացնել: զ) Այս խառն միութեան անկախ՝ Դաշնակցութիւնը կը պահէ կազմը եւ ծրագիրը. ի հարկին խառն մարմինը միութեան միջնորդի դեր ալ կրնայ կատարել: է) Փափաք կը յայտնուի, որ խառն միութեան հայ անդամ-

ներէն մեծագոյնը դուրսէն (Դաշտ եւ Սասուն) իսկ նրա լազագոյնը Քաղաքէն ընտրուին: ը) Ապակեղրոնացման ծրագրին ի նպաստ ի հարկին ըլլալով՝ նոր պայքարին համար պահանջ դնել, որպէսզի ժողովրդի ինքնապաշտպանութեան մասին միջոցներ ստեղծուին: Ժողովը խորհրդակցութենէ յետոյ, նկատի առնելով Դուրանի ծայրայեղ չքաւորութիւնը, միաձայնութեամբ ժողովրդի ինքնապաշտպանութեան խնդիրը թողուց Հ. Յ. Դաշնակցութեան, պայմանաւ որ նրա կողմէն եւ իր նպաստամատոյց միջոցներով այդ կենսական կարիքը հոգացուի:

Դադար:

Նիստ Դ.

18 Սեպտ. 1908

Կրթական

Ժողովը կ'ընդունէ հետեւեալ բանաձեւերը ի նպաստ կրթութեան:

1.- Այն գիւղերում, որոնք կարող են գոհացուցիչ կերպով նպաստել տարրական դպրոցի մը ծախքերուն հոգացման, կ'որոշէ բանալ տարրական դպրոցներ. այս մասին հարկ եղած կարգադրութիւնները անելու համար, իրաւասութիւնը կը թողու Ոսուցչական խորհրդին եւ կոմիտէութեան. վերջինները պիտի հոգան միայն տնտեսականը, հայթայթելով կրթական հասոյթներ եւն:

2.- Իսկ, որ տեղերում մէջ դպրոցներ բացուելու խնդիրը վերապահուեցաւ կոմիտէներուն, ուսուցչական մարմնոյն եւ տեսչին:

3.- Դուրանի համար, դպրոցներ վարելու պէտք տեսաւ տեսչի մը եւ օժանդակի մը, որոնց պաշտօնի կիրառման համար կ'ընդունի որ Դուրանի Դաշնակցութեան կազմը տրամադրելի դիւրութիւններ տայ: Մեծամասնութեամբ տեսուչ նշանակեց Աւրանցի Հայկ Տ. Վարդանեան եւ օժանդակ՝ Եղիշէ Տ. Կարապետեան:

4.- Որոշեց՝ իւրաքանչիւր վանք ունենայ իւր հոգաբարձութիւնը կրթականի եւ տնտեսականի: Մասնաւորապէս Ս. Կարապետի համար, որոշեց որ՝ Հոգաբարձութիւնը վեց անդամէ բաղկանայ, 3 միաբանութենէն եւ 3ը դուրսէն: Քուէից առաւելութեամբ ընտրուեցան

- ա) Տ. Վարդան վարդապետ Յակոբեան:
- բ) Ստեփան վարդ. Բաղտասարեան
- գ) Եղիշէ վարդ. Կարապետեան
- դ) Յովհաննէս Մելիքեան Պաղլուեցի
- ե) Արամ Տ. Վարդանեան Աւրանցի
- զ) Մովսէս Տօնոյեան Գոմսեցի:

Կազմակերպական

1.- Ի նկատի առնելով Դուրան-Բարձրաւանդակի Կեդր. Կոմիտէներու հարցը, երկար խօսակցութիւններէ վերջը առկախ թողուց զայդ. (վերստուգել կոմիտէներու

սահմանները եւ կանոնաւորել իրաւասութեանց հարցը):

2.- Լսելով որ վանէն Մուշ հասած են յեղ. երեք ընկերներ, կ'որոշէ անոնցմէ երկուքը վերջնականապէս պահել այստեղ, քանի որ Դուրան-Բարձրաւանդակ պէտք ունի կարող ընկերներու:

Նիստ Ե.

17 Սեպտ. 1908

Շէխլանցի Պետրոս խնդիր տուած էր ժողովէն իր մերժուած ըլլալուն համար, կարծիքներ փոխանակուեցան. որոշուեցաւ զայն կանչել ժողովի, պայմանաւ որ իր մերժման առթիւ եղած խնդիրը ապա ի նկատի առնուի:

Ժողովը ընդունեց հետզհետէ հետեւեալ բանաձեւեր.

1.- Որոշեց, տեղի ունեցած առաջարկի վրայ, կրթական հարցին համար տրուած որոշումները ծրագրի մը ձեւին տակ ներկայացնել Տարօնոյ երեսփ. ժողովին գործադրութեան դրուելու, պայմանաւ որ Դուրանի կրթական պիւտճէն կրճատուի կամ նուազում չկրէ:

2.- Որոշեց, որ գիւղային բոլոր դպրոցներ ունենան իրենց ընթերցանելի թերթեր Պոլսոյ մամուլէն:

3.- Պահանջ տրուեցաւ, եթէ անկախ արգելքներ չըլլան, Տարօնոյ մէջ ունենալ առանձին թերթ եւ մամուլ:

4.- Որոշեց կազմել գիւղացիական միութիւններ՝ գիւղերու բարգաւաճման համար հոգալով դպրոցը, պաշտպանելով ժողովուրդը վաշխառուներու դէմ եւ վարելով գիւղական համայնքի զանազան դատեր:

5.- Բոլոր գործիչ ընկերներ պարտական են կազմակերպութեան կանոնադիրը ուսումնասիրել եւ զայն միայն ուղեցոյց ունենալ:

6.- Այդ կանոնի համաձայն կազմել մարտական խմբեր:

7.- Կամաւորներ կազմելու սկզբունքը կ'ընդունի, իսկ գործադրութիւնը կը թողու Կեդր. Կոմիտէին:

8.- Արդի պայմաններում մէջ աննպատակաբար կը գտնէ ցուցական գործունէութիւնը եւ կ'արգիլէ ունէ ցուցական գործ:

9.- Պահանջ կը դնէ Դուրանի կողմէ, իսկ Սասնոյ կողմէ ցանկութիւն կը յայտնէ որ երկու շրջաններ հաւասար ձայնով (երկուական անդամ) մասնակցին Կեդր. Կոմիտէի կազմին, սակայն համաձայնութեամբ կազմակերպական կանոնագրի տրամադրութեան:

Իստական. 1. Կ'որոշէ կազմակերպութիւնը բնաւ չխառնուի Առաջնորդարանի վերաբերեալ կրօն. եւ ամուսնական հարցերու. 2) Գիւղական վէճեր ու դատեր նախ պիտի տեսնէ գիւղ. խումբը. դժգոհ կողմը կարող է դիմել ենթակոմիտէին. Կեդր. Կոմիտէին դիմած ատեն յանցաւոր կողմը տուգանք վճարէ. սխալ դատաս-

տան վճռողները բարոյական պատիժի ենթարկուին եւ արտաքսուին. 3) Երբ բռնաբարութիւն տեղի ունենայ, խումբը պարտական է բռնաբարողը Առաջնորդարան տանիլ եւ անոր միջոցաւ պատիժի ու բանտարկութեան դատապարտել տալ: 4) Եթէ կանխամտածութեամբ ոճեր եւ սպանութիւն գործուի, կ'որոշէ որ չարագործը անպայման կառավ. դատարանին առջեւ հանուելու եւ պատժուելու համար, բողոքարկուին վրայ ճնշում չըլլայ եւ ազատ թողուի: 5) Գիւղական դատերու գործադրութեան համար, կը հաւանի տուգանք առնել, Ազգ. իրաւունքներէ զրկել, չափաւոր ծեծել (տուգանքները պէտք է արձանագրել [եթէ] անոնք կը վերաբերին դաւրոցներու եւ կրթութեան): 6) Յայտնի անառակ եւ օտարներու հետ խառնակեաց կիներ կ'որոշէ հեռացնել տալ գիւղէն, իսկ անբարոյական այրերը նախատել, եւայլն: 7. Ձեղծարարներ. կ'որոշէ ա) Կազմակերպական գէնքեր ծախողներ մէկի տեղ երկուք պիտի տան, իսկ անձնականինը մէկի տեղ մէկ: բ) Հաշուական գեղծումներ. քննել 1903էն եւ անկէ առաջ ալ պարտական եղած գեղծարարներ պարտքերը նոյնութեամբ վճարեն եւ արտաքսուին գործէ: գ) Այն խաֆիաներ, որոնց խկութիւն եւ արարք ճշդուին, զրկուելու են Ազգ. իրաւունքներէ (իրենց անձը միայն եւ ո'չ ընտանիք). գործադրութիւնը մասնաժողովին կը վերապահէ:

Նիստ Զ.

17 Սեպտ. 1908
չարունակութիւն

Գաղթականութեան հարց (գաղթականներու վերադարձը դիւրացնելու եւ թէ նոր գաղթողներու տեղի չտալու համար կ'որոշէ

1) Կառավարութեան բողոքելով, արտաքսել տալ գիւղերէն այն քիւրտեր, որոնք գաղթականներու տունը եւ հողերը գրաւած են:

2) Բողոքել սալաֆտարի դէմ եւ միայն դրամագլուխը վճարել:

3) Հող չունեցողներուն գործ եւ ապրուստ հայթայթել. զանազան թուուութեամբ տառապող բազմամարդ ընտանիքներու նպաստի միջոցներով օգնել:

4) Տուրքերու ծանրութենէ եւ զանձման սաստկութենէ փախչողներուն ջանալ որ իր բաժին տուրքը թեթեւացուի եւ տրոց անկանոն հաւաքման դէմ բողոքուի:

Ընդհ. կարօտութիւն

Նկատի անելով որ Դաշտի ամբողջ ժողովուրդը լուծքէ, սերմէ, ուտելիքէ զրկուած է եւ կարօտ է տուրքի գանձման առժամանակեայ դադարումի եւայլն, կ'որոշէ որ Դաշտի գիւղերու կողմէն ներկայացուցիչներու

խումբ մը Մուշ երթալով դիմումներ ընեն կառավարութեան, Բ. Դրան, Պատրիարքարանի, խնդրելով այդ անմիջական պէտքերու հոգացումը. որոշեց, որ այս նպատակը հետապնդեն Արքայականքի Բենիամին, Յունանցի Գրիգոր, Տէրկէվանքի Մուշեղ, Խաչխալտաղցի Գէորգ եւ Գառնինու Մկրտիչ, միասին հաւաքել եւ գործի ձեռնարկել անյապաղ: Որոշուեցաւ Կարապետ էֆ. կիսով չափ վարձք առնելու պայմանով աջակցի: Մախքերը պէտք է հոգայ Առաջնորդարանի նպաստից մասնաժողովը: Այս հինգ հոգին միայն պիտի ընդունին ուտեստի ծախքը եւ ոչ թէ ուրիշներ, ու նոյնպէս պիտի հոգան նպաստամատոյցէն առած դրամով հեռագրական այլեւայլ ծախքեր: Կ'որոշէ որ եկող գաղթականներ մասնակից ըլլան բաժնուելիք նպաստներուն: Գիւղական համայնք դիւրութիւններ տան անոնց տեղաւորուելուն, հողերը ձեռք բերելուն եւս: Ժողովրդական այդ մասնաժողովի պարտքն է ցորենի շահագէտներու դէմ բողոքել, ի հարկին դիմել թուրք եւ հայ խառն կոմիտէին: Կ'որոշէ, հեռագիր տրուի ընդհ. կարօտութեան համար Պոլիս. նոյնպէս բողոքուի Օսմ. խորհրդարանի անդամոց ընտրութեան մասին տեղի ունեցած անկանոնութեանց դէմ:

Հողային հարց

Որոշեց

Ա. Բունի գրաւուած հողերու համար բողոքել կառավարութեան եւ վնասներով ետ պահանջել:

Բ. Արտաքսել տալ գիւղերէն այն ամէն քիւրտեր, որոնք ունէ պատրուակով հողեր գրաւելու կը շահագործեն:

Գ. Գրաւի ենթականեր (մուրիպա) ջանալ որ կէս քուչանը ամբողջին չվերածուի, գրաւ եղած դրամը վճարուի եւ վերստացուի. եթէ միջոց չունենայ պարտք տալու, օրինական միջոցներ ստեղծէ հողերը ձեռքէ չհանելու:

Դ. Քուչանով հողեր. Բողոքել, դրամը ետ տալ (դրամագլուխ) եւ պահանջել հողերու ետ առնուիլը:

Ե. Սէտէտով առնուածներ. Այդ հողերը տիրոջն են արդէն. կարող է ետ առնել. ի հարկին բողոքել, իսկ հայրուն տրուածը առ այժմ մնայ:

Զ. Հուտուտ դաշի կամ սահմանակցութեան պատրուակով, իսլամներու գրաւած հողերը ետ առնել, ի հարկին բողոքել, վնասներով ի միասին պահանջել:

Է. Չէրքէզներուն տրուածներ. Նախլիխանէ չկայ եւ եթէ կայ, հողերը հայ համայնքին կը պատկանի. բնիկներու իրաւունքն է. օրէնքի ուժով ետ առնելու է:

Ը. Պանքային գրաւուած ու ծախուած հողերը. Բարձրագոյն հրամանի կը կարօտի:

Թ. Բողոքել եւ արգիլել, որ քուչուները հայոց արօտավայրերը չզան:

Ժ. Ունէ հող, թուրքերու, քիւրտերու ծախուիլ՝ արգիլուած է. ի պահանջել հարկին, հայրուն կրնայ ծախել:

Պատգամաւորական հարց

Ժողովը կ'ընդունի որ երբ թէ՛ Դաշնակց. Ընդհ. Ժողով գումարէ եւ թէ՛ երկրում Ռայոնական ժողով՝ իր պատգամաւորներով մասնակի այդ ժողովներին. այս մասին իր մասնակցութեան իրաւունքը հարկաւ կը ճշդէ օրէնքին դիմելով:

Եւ որովհետեւ գիտենք թէ Ընդհ. Ժողով տեղի պիտի ունենայ այս տարի, կը փափաքինք Դուրան Բարձրաւանդակի կոմիտէները իրենց բոլոր իրաւունքով մասնակցին:

Ժողովուրդի ներկայացուցչական ժողովը փափաք կը յայտնէ որ պատգամաւորական հարցը լուծուի, պայմանաւ որ անձերն ալ որոշուին, եւ այդ պատգամաւորութեան՝ կ'որոշէ Պ. Ռուբէնը, սակայն ի հարկին երթալ՝ վերադառնալու պայմանով: Ժողովս միաձայն հաւանութեամբ կը պահանջէ նաեւ Պ. Ռուբէնի հետ ընկերանայ Պ. Գեղամ Տ. Կարապետեանը անպայման կերպով՝ ներկայ գտնուելու դաշնակցական Երդ Ընդհանուր Ժողովին ներկայացնելու Դուրանի ժողովրդեան ցաւերն ու պահանջներն:

Հակառակ պարագային եթէ չվերադառնան եւ այդ մասին զլանան, իրաւունք չունին մեր ցաւերը ներկայացնել ժողովին:

Ա. ըցաւ յայտնեց որ Երջանային ժողովին քաղաքը չէ հրահրուած. ուստի Երջանային ժողովի երկրորդ նիստին՝ կ'որոշէ որ Մշոյ քաղաքն ալ իր ներկայացուցիչներն ունենայ, անշուշտ տեղ. մարմինների վերակազմումէն յետոյ, եւ մասնակցութեամբ նախկին ընկերներից կարեւորներին:

Կ'որոշէ պահանջ դնել, որ չորս հատ բարձրագոյն վարժարաններ բացուին Դաշտի եւ վանքերու մէջ. աս-

կէ մէկը արդէն Ս. Կարապետի վանքի մէջ պիտի բացուի: Մնացած երեքը յետոյ կ'որոշուի, որ տեղեր բանալ պէտք է:

Երջանային ժողովը իւր բոլոր նիստերու արձանագրութիւնները կարդաց, ուսումնասիրեց եւ որոշեց ի հաստատութիւն իւր բոլոր որոշումներուն՝ իւր ստորագրութիւններով վաւերացնել, եւ ասկէ զատ՝ կ'որոշէ որ Վանէն Մուշ հասած մեր յեղափոխական երեք ընկերներէն երկուքն ալ անպայման այստեղ մնան, հակառակ պարագային ուրիշ երկու ընկեր ուզել:

Ի հաստատութիւն ԱՆԻԱՄՔ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

Փաստ. 702-22

2.- ՎԱՀԱԳՆԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԺՈՂՈՎՈՅ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԵՒ ՊԱՀԱՆՋՆԵՐ՝

Վահագնեան շրջանի գործ. մարմնոցն 1909 թուի Փետրուար 2ին ունեցած ժողովոյ որոշումներն ու պահանջները:

1. Կազմակերպութեան ձեւեր հին ու նոր, ըստ կանոնադրի

Ժողովոյս որոշումն է որ իւրաքանչիւր գիւղը բաղկանայ մի խմբէ, ունենայ իրեն համար 3-5 հոգինոց գործնական) մարմին մը եւ զբաղի միայն կազմակերպական գործերով:

2. Նպատակը դէպի քաղաքականութիւն

Երջանին գործող անդամները պարտաւոր են բողոքներ չինայել տալ կառավ(արական) գեղծումներու դէմ. ըլլա՛յ դատական մարմնոյ եւ ըլլա՛յ հասարակութեան միջոցաւ, պաշտպանել տալ իրաւունքները եւ աշխատիլ լայնացնել տալու Սահմանադրութիւնը, ամրափակելով զայն:

Նպատակը դէպի տնտեսականութիւն

Երջանիս մէջ պէտք է պատրաստել տնտեսական ընկերութիւններ եւ շինել տալ հացահատիկների շտեմարան. աժան վարկի պանք հիմնել. ազատել ժողովուրդը աղաների, վաշխառուների ձեռքից եւ պահանջել կառավարութենէ գիւղատնտեսական օգտակար նոր գիտելիքներ եւ հաստատել տալ ջրաբաշխային ընկերութիւն:

Նպատակը դէպի Ազգային կուր

Հաստատ հիման վրայ դնելու է կրթական գործը. զարգացնելու՝ մայրենի լեզուն, ապահովելու եկեղեցւոյ եկամուտների աղբիւրները եւ օրինական հոգաբարձութեան տակ դնելու է վանքերը:

3. Գործելակերպ

Յեղափոխական գործերը շարունակելու է խաղաղ գործունէութեամբ, Սահմանադրական օրինաց սահմաններու մէջ:

4. Պրոպագանդ

Հարկաւոր է ունենալ մշտական այն կարգի քարոզիչներ, որոնք ունին Յեղ. գաղափարի պաշարներ թէ՛ գրաւոր եւ թէ՛ բերանացի. նաեւ ժողովրդի մտքերը բարեփոխող ամէն տեսակ գիրքեր:

5. Համերաշխութիւն
Համերաշխութիւն պէտք է մտցնել նախ հայ ժողովրդ-

դի աղքատ եւ հարուստ դասակարգին մէջ. ապա միահամուռ կերպով ձեռք մեկնել մեր դրացի թուրք եւ քիւրտ ճնշուածների հետ, անոնց մէջ եւս տարածելով արդի սահմանադրական կարգեր եւ ինքնաշխատութեան գաղափարը:

6. Ինքնապաշտպանութիւն
Չանազան պայմաններ ի նկատի ունենալով կը թողուք ապագայի մարմիններին

7. ----- եւն²

8. ----- եւն²

9. Դատական գործեր
Դատական գործերը թողելու է ըէյս եւ մէճլիսի դատողութեան եւ պատասխանատուութեան, որոնք համարատու լինին սակայն Յեղ. առջեւ:

10. Ազգային-կրօնական
Կազմակերպութիւնը վերահսկիչ պէտք է լինի կրօնական դասին, որոնք ժողովրդի գայթակղութեան պատճառ չլինելով՝ իրենց կոչման բարձրութեան վրայ կանգնին:

Հասարակական գործեր
Հասարակական գործերը (Գիւղապետ, պահապան եւն.) որոշելու պարտքը՝ թողելու է գիւղի ընդհանրութեան ազատ քուէին:

11. Ազգային եւ տեղական կարիքներ

Իւրաքանչիւր գիւղի մէջ հիմնելու է դպրոցներ եւ ստեղծելու դպրոցական հոգաբարձութիւններ, պահանջելով կեդրոն(ական) տեսչութենէն դպրոցական ծրագիր եւ օժանդակութիւն, նաեւ հաստատելու է որբախնամ ընկերութիւն մը, որ ներսէն ու դրսէն միջոցներ ստեղծէ ինամելու անտէր մնացած որբերը:

Նմանապէս պէտք է պահանջել բժշկական օգնութիւն մը, որի կարեւորութիւնը շատ անհրաժեշտ է:

1.- Վահագնեանը՝ Արածանի գետի ձախ ափին, Սուրբ Յովհաննու վանքի շրջանին կուսակցական ծածկանուցն է:
2.- Բնագրին մէջ կիտաւոր:

12. Հոդային հարցի լուծումը
Ամէն օրինական միջոցներ ստեղծելու է, ետ դարձրելու համար քէօջանով եւ առանց քէօջանի գրաւուած հոդերը:

13. Հին դրամական եւ գինական հաշիւներ
Որոշեալ օր մը պէտք է նորոնտիր մարմինը գինական ու դրամական գործունէութեան քննութիւնը կատարէ եւ ի գիտութիւն ժողովրդեան յայտարարէ:

14. Դէպի սահմանադրութիւնը
Շրջանս պարտաւոր է սահմանադրութիւնը պահպանել կարելի միջոցներով, հակառակ պարագային հետեւիլ Դաշնակցութեան յառաջացրած օրէնքներին:

15. Դէպի աղա պէկեր եւ ռայա ռէնջպար տարրեր
Պէտք է խզել հետզհետէ մեր յարաբերութիւնը աղաներէն ու պէկերէն սելեֆի, մրիպայի եւն տեսակէտով, իսկ ռայա ու ռէնջպար քիւրտ եւ թուրքերին՝ եղբայրութեան ձեռք կարկառելու է, փոխադարձաբար իրար օգնելով:

16. Կուսակցութիւններու միացումը
Ներկայ պարագային կուսակցութեանց միացումը անհրաժեշտ կերպով մեր ամենամեծ փափաքն է:

17. Շրջանիս Դաշնակցութեան յառաջադիմութիւն
Խմբից արտաքսելու է այն անձնաւորութիւնները, որոնք արգելք կ'ըլլան եւ արատ կը բերեն յեղ. եւ ազգային գործին եւ փոխարէն խմբի մէջ առնել սկզբունքի տէր բարոյական ու գարգացած անձեր:

18. Հայ դաւաճանները
Հայ դաւաճաններու իսկական կերպարանքը դուրս բերելու համար՝ քաղաքական յանցաւորներու դատա-

կան թղթերը ձեռք բերելու է կառավարութենէն:

19. Դուրան-Բարձրաւանդակ եւ շրջաններ
Ի նկատի ունենալով Բարձրաւանդակի աշխարհագրական դիրքը, առանձնապատու պայմաններն ու մարդահամարի թիւը, նաեւ Դուրանի մարդահամարի թուի կազմութիւնը եւ նպաստաւոր պայմաններն, առ այդ պէտք է հաստատուին երեք կեդրոն(ական) մարմիններ, որոնց կեդրոնատեղին՝ Մուշ (Դուրան, Մուշ եւ Բարձրաւանդակ) եւ պատասխանատու մարմին մը:

20. Շրջաններու յարաբերութիւնը
Հարկ եղած պարագային շրջանս յարաբերութիւն ունենալու է Դուրանի շրջաններու, մանաւանդ Բարձրաւանդակի հետ:

21. Դուրանի Ռայոնական ժողով եւ Ընդհ. ժողով
Ռայոնական ժողովին ներկայանալու են շրջանէս՝ խմբերի միահամուռ համաձայնութեամբ ընտրուած երեք հատ ներկայացուցիչներ, իսկ Ընդհ. ժողովին ղրկուելու են նմանապէս ժողովրդական կեանքին ու ցաւերուն ծանօթ երեք հատ փորձառու եւ ազնուամիտ պատգամաւորներ:

22. Բիւտջէ
Ներկայ թուականիս կարելի չէ որոշել բիւտջէի քանակի թիւը. ի նկատի ունենալով ժողովրդի տնտեսական վիճակի քայքայումն ու գաղափարական տհասութիւնը, կազմակերպական անդամներու ամսավճարները իրենց կամքին թողելու է:

Մեր վերոգրեալ որոշումներն ու պահանջները կը ստորագրենք Վահագնեան շրջանի ժողովոյ պատգամաւորներս:

[Ստորագրութիւններ]

Փաստ. 705-433

3.- ՎԱՀԱԳՆԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԽՈՒՄԲԵՐՈՒ ՎԻՃԱԿԱՑՈՅՑ

Դուրան-Բարձրաւանդակի կեդրոն. կոմիտէին
ի Մուշ

Սիրելիք,

Վահագնեան շրջանս կը բաղկանայ ընդամէն 12 գիւղէ որոնցմէ միայն Գոմեր, Պլէյ եւ Փիթար գիւղերը կը մնան տակաւին անկազմակերպ վիճակի մէջ, իսկ մնացածները կազմակերպուած են Յունուարի վերջեր: Կազմակերպութեան ձեւն է հետեւեալը. ենթակոմիտէ չունինք բնաւ: մինակ 3-5 հոգինոց գործ[աղիւր] մարմին մը ունինք իւրաքանչիւր խմբին, որոնք միաբան կը կառավարեն խումբը:

Խմբերի վիճակագրոյց

	Խումբ	Կը բաղկանայ	անդամէ գործ.	մարմին	5 հոգինոց	ամս. անդամավճար	ըրուշ
Խալաղաճի խումբը		կը բաղկանայ	54 անդամէ գործ.	մարմին	5 հոգինոց	ամս. անդամավճար	27¼
Քիւրտմէյտանի խումբը	»	27	»	»	3	»	18¼
Շէխլանի	»	39	»	»	5	»	26¾
Աւաղբիւրի	»	30	»	»	3	»	13¾
Արդիսօնկի	»	27	»	»	3	»	17
Սնձնուտի	»	15	»	»	3	»	4
Փողարկովի	»	21	»	»	3	»	13½
Խորոնաց	»	18	»	»	3	»	11¾
Քարձորի	»	36	»	»	3	»	11½

Վերոյիշեալ խմբերի կողմից շական ներկայացուցիչ, ի մի հաւաքուելով՝ Շրջանային ժողով մը ունեցանք, Փետր. 2ին որով ընտրուեցաւ շրջանիս կոմիտէական մարմինը, որք են Սարգիս Յովհաննէսեան եւ Մանուկ Տ. Մամբրէեան ղզլաղաճցի, Գրիգոր Մովսիսեան քիւրտմէյտանցի, Սողոմոն Տ. Մկրտչեան շէխլանցի եւ Օհան Աւագեան սնձնուտցի, իսկ Ռայոնական ժողովի համար՝ պատգամաւորաց ընտրութիւնը մնաց, մինչեւ անցեալ օր Մայիս 13ին նորէն խմբերի կողմից ղրկուած մէյ մէկ պատգամաւորի ժողովով մը ընտրուեցան 3 պատգամաւոր, Սարգիս Յովհաննէսեան ղզլաղաճցի, Գրիգոր Մովսիսեան քիւրտմէյտանցի, եւ գինուոր Մանուկ փեթարցի:

Առաջին վկայականով ձեր ղրկած հարցերի համաձայն՝ շրջանիս պահանջը պատրաստ է գրաւոր, որը պատգամաւորների միջոցաւ պիտի ղրկուի Ռայոնական ժողովին:

Բարեւներով
ՎԱՀԱԳՆԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐ

Փաստ. 730-16

4.- ՄԱՐԶՊԵՏԷՆ ՍԵԼԱՆԻԿԻ ՕՍՄ. ՅԵՂ. ԿՈՄԻՏԷԻՆ

Պատճէն

Սելանիկի Օսմ. Յեղափոխական կոմիտէին

Սիրելի ընկերներ,

Ընկեր Նաջի պէյի հետ Պարսկաստանէն մինչեւ հոս եկանք ընկերները ինձ մինակ թողուցին ու մեկնեցան. չնայելով որ հոս թուրք ընկերով մը ներկայութիւնը անհրաժեշտ էր, քանի որ մանաւանդ մահմետական քիւրտ տարրը զուրկ կրթութիւնից տգիտութեան խաւարի մէջ թաղուած՝ չէ ենթարկուած յեղ. պրոպագանդի ու կը սնուցանէ իր մէջ ռէակցիոնէր հակումներ, հակահայկական զգացումներ: Մենք անշուշտ համերաշխութեան պրոպագանդը յառաջ ենք մղում ընկեր զապիտների հետ, քարոզում ենք եղբայրութեան սկզբունքները, բացատրում նրանց օգուտները, բայց տգիտութիւնը մի ապառաժ է, որու վրայ դժուար է ազդում պողպատեայ քունքը: Կրկնում եմ մի ինտելիգենտ, ազդեցիկ թուրք ընկերով մշտական ներկայութիւնը Բիթլիսի մէջ անհրաժեշտ է: Ղրկեցէք փութով մէկը: Պոստով ճամբեցէք նաեւ ձեր ու Սաբահէտիմնի կուսակցութեան ծրագիրները, յեղափոխական գրականութիւնը եւն:

Թալան թուլանը, սպանութիւնները դեռ կը շարունակուին այս դժբախտ երկրի լեռնային մասերով առաջուան պէս: Քրտերու բռնութիւններին չդիմանալով խիզանի Մամուտանը (Նէմրան) շրջանակի հայերը եւ Ոզմայ մօտ գտնուող Ակէ գիւղի հայ բնակիչները թափուած են քաղաքներ եւ փողոցներում կը կորչին սովամահ: Քէօջարներու գաղթող մասը իր հետ սրբեց տարաւ Շատախի, Մոկսի, Կարկառի, Սպարկերտի ոչխարի հօտերը, հայ ազգաբնակչութիւնը գրկելով ձմրան ապրուստի միջոցներէ: Խիզանում դեռ կը գործեն Շէյխ Սէիտ Ալի, Ֆարհօ իրենց նախճիրները հայհոյելով ժողովրդի առաջ սահմանադրութեան ու յեղափոխութեան: Վերջինս — Ֆարհօ — Խիզանի Շէն գիւղում սպաննեց թուման անուն հայը: Խիզանի Խակն գիւղից քիւրտ թահիր աղան այս օրերս քեց տարաւ 115 ոչխար: Իւրաքանչիւր միլիթէզիմ գիւղի մէջ ինքնիշխան տէր է: Սրանցից Արիֆ եւ Սիւլէյման Ախլաթի Տափալանը գիւղում կը սպաննեն Օգոստոս 22ին Յակոբ անուն հայը: Թեղուտից (Ախլաթ) տարած են 7-8 եզներ: Գոզլու գիւղում (Խնուս) օր ցերեկով քիւրտ Մորոյի ղոյամները կը թալանեն Ամերիկայէն վերադարձող խնուսցի հայեր, կը տանին փողեր, կը վիրաւորեն մէկը: Խալաֆ անուն

պիթլիսցի աւագակ մը սարսափի տակ կը պահէ շրջանիս հայ գիւղերը նրանցից առնելով ըստ քմահաճոյս տուրքեր, կաշառքներ: Նա սպաննած է աւելի քան 10 հայեր: Մի ընտանիք ամբողջովին սրէ անցուցած է: Թալանչիները, կողոպտիչները, մարդասպանները կը վայելեն պաշտպանութիւն տեղական կառավարութեան պաշտօնեաներու կողմից, որոնք դեռ գրեթէ բոլորն ալ հին ռեփմի ներկայացուցիչներն են եւ չեն փոխուած նորերով: Քանի սրանք դեռ կը մնան պաշտօնի վրայ, քանի դեռ անպատիժ կը մնան յայտնի չարագործներ — ինչպէս Ղասըմ-բէկ (Մուշ) եղբայր վատահամբաւ Մուսա բէյի, Ռիզա բէյ, (Բուլանըխ), Շէյխ Սէիտ Ալի, Խիզան) Քէօռ Հիւսէյն փաշա (Ալճաւազ): Չարագործութեանց եւ չարագործներու շարքը այնքան երկար է, որ մենք այս նամակի մէջ չենք կարող թուել: Ժամանակին մանրամասն տեղեկագրեր կազմելով կու տանք մամուլին ի հրատարակութիւն:

Վերոյիշեալ անուններու հետ կապուած են ահագին երկիրներու աւերում, քաղաքական ու տնտեսական ստրկութիւն, հազարաւոր անմեղներու արիւն, հազարաւոր կոյսերու բռնաբարում, առեւանգում, ինկվիզիտորութիւն եւն եւն:

Դուք ալ սիրելի ընկերներ, կը տեսնաք որ այս պայմաններում ռեֆորմների ներմուծումը հայկ. դժբախտ նահանգներում հնարաւոր բան չէ, ուրիշ խնդիր երբ տեղական կառավարութիւնները փոխուին եւ նոր կառավարութիւնները ձեռք առնեն խիստ կտրուկ եւ բացառիկ միջոցներ: Ժողովուրդը սպասում է արդարութեան գործադրութիւնը տեսնել եւ երբ այդ չի տեսնում կրկին ընկնում է գերեզմանային յուսահատութեան մէջ:

Այսպէս է քաղաքական դրութիւնը, աւելի վատթար է ժողովրդի տնտեսական դրութիւնը: Տարիներով բռնակալ կառավարութեան հալածանքներուն, բնաջրնման քաղաքականութեան ենթարկուող հայ ժողովուրդը անօթի եւ մերկ վիճակի մէջ է: Յայտարարուած ազատութիւնը ի՞նչ արժէք ունի, երբ ժողովուրդը թահսիլտարներու միջոցառումների, սալաֆտարների, միլիթէզիմների³ տնտեսական գերութեան մէջ կը տառապի: Հայ ժողովուրդի ձեռքը չէ մնացած մի արտ հերկելու համար: Մէկ կողմ թողնենք բռնութեամբ բռնագրաւուած մեծաքանակ հողերը: Թահսիլտարը խարազանի ու-

3.- Թահսիլտարը հարկահաւաք, միջոցառող գիւղացիի արտին ապօրինի միջոցներով տիրացած հողատէր, սալաֆտարը բարձր տոկոսով փոխատուութիւն կատարող վաշխառու. միլիթէզիմը տասնորդական տուրքի կապալառու:

ժով տուրք է պահանջեր. թալանուած ձեռնունայն գիւղացին դիմեր է վաշխառուին, սալաֆտարին: Սա պատրաստ է բարիք անելու: Տուրք է օրինակ] 20 դշ. եւ գիւղացիէն պայմաններ է առեր որ կալի վրայ 100 օխա ցորեն ստանայ: Դուք չպիտի հաւատաք, ընկերներ, իմ ասածին, ես ալ չէի հաւատար երբ լսէի, բայց սա իրողութիւն է, կալի վրան գիւղացին 100 օխա ցորեն չի կարող տալ, որովհետեւ միջոցառում տէրը կալին կէսը տանում է, միւս կէսը քիւրտ աղան, միւս կէսը ով գիտէ ով: Իսկ սալաֆի տէրը կը պահանջէ իր սալաֆը: Խեղճ գիւղացին վիզը ծուռ կը կանգնի նրա առաջը:

— Աման, աղա, ցորեն չունիմ սալաֆ արա: Նրա պատասխանը խիստ է եւ դաժան. «Զէ՞, չի լինիր»: Բայց տեսնելով որ բան չկայ առնելու, կը տանի գիւղացու ձմրան աղքատիկ պաշարը ամբողջութեամբ եւ մնացորդը կրկնապատկելով կրկին սալաֆ կ'անի: Օրինակ եթէ 20 օխա առաւ, 80 օխա մնաց, նա յաջորդ կալին ստանալու պայմանով գիւղացիէն կ'առնի 160 օխայի պայմանագիր: Եւ այսպէս ամէն տարի:

Աւագակներից եւ սալաֆտարներից թալանուած գիւղացին ձեռնունայն կը դիմէ մի ուրիշ բարերարի, միջոցառում տիրոջ: Կը ստանայ նրանից սերմնացու եւ 20-25 ոսկի փող՝ եզներ գնելու համար ու կը դառնայ նրա միջոցառում: Մի տեսակ ֆէտտալականութիւն: Խեղճ գիւղացին ամէն տարի կը կիսէ իր կալը ու միւս արդիւնաբերութիւնները նրա հետ: Նա այնուհետեւ ֆէտտալ աղայի ստրուկն է: Աղան անշուշտ իր տուածը մէկ տարիէն լիք տոկոսով ետ ստացած է, բայց միեւնոյն է. նա ամէն տարի պիտի ստանայ:

Գիւղացու մի ուրիշ տէրն ալ միլիթէզիմն է, մի ուրիշը թահսիլտարը: Այս կրկնակի տնտեսական ու քաղաքական գերութեան շնորհիւ ժողովուրդը արագ քայլերով դիմում է դէպի գերեզման, դէպի անխուսափելի մահ: Այս տարի եւս գիւղացին իր կալէն ձեռնունայն տուն դարձաւ. մօտեցող ձմրան հանդէպ նա կայնած է մերկ անօթի:

Չմոռնամ ըսել որ երկրագործական պանքն եւս իր պահանջի դիմաց գրաւած է մեծ հողաբաժիններ: Կարճ՝

- 4.- Կիսամիջոցներ, ժամանակաւոր լուծումներ:
- 5.- Յետնեալ տուրքեր:
- 6.- Օրենսգտնելու եւ գիւղատնտեսներ:

ամբողջ գիւղացիութիւնը դարձած է հողագուրկ միջոցառում:

Պէտք է ժողովուրդը, աշխատաւոր գիւղացիութիւնը մանաւանդ ազատել այս դրութենէն: Բարեգործական ընկերութիւնների հանգանակած դրամները պալիատիւներ⁴ են միայն: Պէտք են արմատական միջոցներ: Մենք դիմելով Ձեր աջակցութեան առաջարկում ենք հետեւեալ միջոցները. 1) Ձնջել միջոցառումները, սալաֆտարութիւնը կառավարութեան միջոցով, յայտարարելով որ նրանք իրենց տուածները 100ապատիկ ստացած են եւ այդ դրութիւնը պետական օրինաց հակառակ է. 2) Վերադարձնել ուժով եւ չնչին վճարումներով գրաւուած հողերը իրենց տէրերին, որոնք դեռ գրեթէ ամբողջութեամբ կը մնան կողոպտիչների ձեռքերում. 3) Պետական գանձարանից գիւղացիներին տալ սերմնացու ու նպաստ առանց տոկոսի. 4) Անմիջապէս դադարեցնել տուրքերու գանձումը, թահսիլտարները գիւղերից ետ կանչել: Պագիրները⁵ նետել եւ 2 տարի գոնէ տուրքեր չգանձել. 5) Դէպի Պոլիս, Ռուսաստան գաղթող դադարեցնելու համար կազմել հասարակ(ական) աշխատանքներ. (հանքերը բանեցնել, վաճառել կայ նաւթ, աղ, Պիթլիսում՝ երկաթ, նաւեր բանեցնել վանայ ծովի վրայ): 6) Բացառիկ օրէնքներով պատժել Ղասըմ բէյը, Ռիզա բէյը, Շէյխ Սէիտ-Ալի, Քէօռ Հիւսէյն փաշա եւ նման աւագակները:

Այսպապաղ գրկել juriste-ներից եւ ակրոնոմներից⁶ կազմուած մի կոմիտէ, լիազօր ուժերով որ ուսումնասիրէ հողային եւ իրաւաբանական հարցերը ու անմիջական լուծում տայ:

Տալ վիլայէթներին կտրուկ հրահանգներ, բացառիկ օրէնքներով, աւագակները, յափշտակիչները, կողոպտիչները, մարդասպանները պատժելու, գրաւուած թալանը, հողերը ետ դարձնելու, քանի որ դատարանները անկարող են, անկանոն եւ ժողովրդի գանգատները մնում են միշտ առանց հետեւանքի:

Ներկայացնելով, ընկերներ, այս բոլորը ձեր խորին ուշադրութեան:

Ընկերական բարեկեցութիւնով
ՄԱՐԶՊԵՏԷՆ^[?]

23 Սեպտ. 908
Բաղէշ

Փաստ. 730-22

5.- ՄԱՐԶՊԵՏԷՆ ՊՈԼՍՈՅ ՊԱՏ. ՄԱՐՄՆԻՆ

Բաղէշ, 30 Սեպտ. 908

Կ. Պ.-ի Պատասխ. մարմինին

Սիրելիք,

Կը դրկեմ ձեզ ծրարով ա) դուրսմաններ, որոնք կը պարզեն մեր դրուժինը եւ ձեզ ընդարձակ նիւթ կու տան մամուլին հաղորդելու. բ) Հրայրի եւ այլ գործիչների նամակներ, որոնք գտած եմ տեղույս խմբերի մօտ: ա)ին մէջ կը գտնէք նաեւ մեր Սելանիկ Իթթիհատ եւ Թերագզրին դրկած պատճէնը: Նայելով շրջաբերական]-նամակի գ. կէտին մեր յարաբերութիւնը այդ աջկողմեան կուսակցութեան հետ լաւ է, բայց էրգորումէն առած նամակներու նայելով նրանց ներկայացուցիչ Վեհրե-բէյ բռնած է հակադաշնակցական ընթացք, մերոնց հետ միասին գործ չի տեսնում, այն անտեղի առարկութեամբ թէ Պոլսից իրեն միայն Վանի մարմինը պաշտօնապէս յանձնարարուած է: Դուք հապա ինչո՞ւ նրան չէիք յանձնարարում Դուրանը եւն եւն: Այժմ Վան գրեր եմ, որ մինչեւ Դուրանը նրան յանձնարարեմ. բայց լաւ է դուք ալ հեռագրով նրան մեզ յանձնարարէք: Այսօր երբ մենք մեր ազդեցութիւնը սկսեք ենք տարածել, վատ կ'ազդի երբ նա գայ եւ մեզ հետ չյարաբերի պաշտօնապէս: Նրբութիւնը անշուշտ կ'ըմբռնէք: Է՛հ, ինչ անենք, մենք կը լինէինք այսօր շատ տեղեր հրահանգ տուողը, բայց աչքը քօռնայ Շամին, մեզ այս օրին գցեց, դարձուց մուրացկան:

Աշխատեցէք Սաբահէտտինի կուսակցութիւնից անպայման կազմակերպող ուժեղ մարդիկ հասցնել այս կողմերը: Նրա ծրագիրը, գրականութիւնը առատօրէն դրկեցէք հոս: Խնդրեցէք Սաբահէտտինին մեր կողմէն, նամակ գրէ հոս իւրաքանչիւր Իհսան էֆ.ին, իւրաքանչիւր Հիւսէին էֆ.ին, միւլազիմ Հասան էֆ.ին, բացատրէ իր ծրագիրը ու առաջարկէ իր կուսակցութեան շուրջը հաւաքուել, կազմակերպութիւն յառաջացնել: Հոս դեռ որեւէ կազմակերպութիւն չկայ թուրքերու մէջ, պէտք է կանխել:

Ձեր ընդարձակ հեռագիրը, թէ մեր ծրագրի սկզբբունքները ընդունուում են զանազան կուսակցութիւններից, ի՛նչ կը նշանակէ երբ Վէհրե բէյը այս տեսակ վարմունք է ցոյց տալիս: Կեդրոնից նրան յանդիմանութիւն գրել տուէք մեր իրմէ ստացած այս տպաւորութեան հիման վրայ, եթէ ի վիճակի էք:

Ձեր շրջաբերականի կէտերի շատերին պատասխանը

մեր շարունակ դրկած նամակների, հեռագրերից մէջ կը գտնէք: Մնացածը հետզհետէ: Միայն աւելորդ չէ կրկնել, թէ ռեֆորմները այս կողմերը դեռ չեն իսկ սկսած գործադրուել: Ամէն ինչ դեռ խօսք է, հին պաշտօնեաները կը մնան պաշտօնի մէջ, տարուած թալանները, բռնի կամ չնչին վճարումով գրաւուած հողերը դեռ չեն դարձուած հայերին, չարագործները կը մնան անպատիժ: Հիմնական ռեֆորմներ ներմուծող մարմին եւ մարդիկ չկան հոս: Կրկնում եմ Պոլսից պէտք է դրկել մասնագէտներից, յեղափոխականներից կազմուած մասնախումբ, որ բաւարարութիւն տայ ժողովրդի կարիքներին եւ ներմուծէ բարենորոգումներ: Առանց դրան ամէն ինչ ոչինչ է]:

Սրիկայ Ղասրմ-բէգը, թէ եւ երաշխաւորութեան տակ առնուած, փախաւ ասկէ, օգտուելով կառավարութեան թուլութիւնից: Վալին խիստ հրաման տուած է Մուշ նրան ձերբակալել: Դուք հետեւեցէք դրան, Խիզանի աւերիչ Սէիդ-Ալուն, Բուլանըլի հրէշ Ռիզային (ըրզախ), Պոլիս կանչել տալ դատի ու դատապարտել տալ: Սրանք գլխաւորներն են, որոնց ներկայութիւնը ժողովրդի համար շարունակական մի սպառնալիք է: Սէիդ Ալին հոս բերուեցաւ: Նրա դէմ ներկայացրել ենք անագին բողոքներ, բայց ոչ տեղույս դատարանին ենք հաւատում, ոչ էլ կառավարութեան: Դրանց մասին մեր գրածները ստոյգ են (նոյնիսկ մեծաւ մասամբ քաղուած պաշտօնական աղբիւրներից): Այս սրիկաների պատիժը անմիջական կարիք մըն է, որը դուռ կը բանայ ռեֆորմներին, զսպելով խաւար, ռհակցիոնէր, տգէտ տարրերը, որոնք այնքան ուժեղ են, որովհետեւ ամբողջ ինքն է այդ:

Չդադրել պահանջելէ, որ համիտիէները գինաթափ արուին: Նրանց գէնքի տակ մնալը մշտական սպառնալիք մըն է խաղաղութեան համար, հակառակ պարագային պէտք է գինել եւ հայերը:

Մի կարեւոր կէտ եւս: Պէտք է անպայման յաջողցնէք որ բարենորոգումները մտցուին վարչական կերպով, այս անկար դատարաններից ժողովուրդը արդէն յուսահատուած է: Այս մասին վիլայէթ դրկել տուէք հրահանգներ եւ մեզ հաղորդեցիք:

Անմիջական մի կարիք է վարչական ճանապարհով ջնջել տալ միրիբայութիւնը, սալաֆը³, այդ դրութիւնը օրինաց հակառակ բան յայտարարելով: Բոլոր հողերը կեդրոնացած են միրիբատներին, սալաֆտարների ձեռքում: Ժողովուրդի ձեռքը բան չի մնացած: Նրանք տարած են աշխատաւոր գիւղացու բոլոր արդիւնքը եւ գիւղացին հանդէպ ձմրան կայներ է անօթի, մերկ: Սով

է այս կողմերը, կատարեալ սովի մաստնուած է ժողովուրդը, մինչդեռ նրա թալանիչները, հարստահարիչները, բէգերը, սալաֆտարները, միրիբաները լիքը ամբարներ ունին, կը կթեն թալանած հազարաւոր ոչխարներ: Բացի շուտափոյթ դրկուելիք խոշոր նպաստներից, պէտք է պետական օգնութիւն լինի գիւղացուն. ա) պէտք է հրահանգել դադարեցնել տուրքերի գանձումը, բ) գիւղացուն տալ ձմրան պաշար-ցորեն, սերմնացու, պետական հաշուով առանց տոկոսի:— (Պետութիւնը կարող է աղաների ամբարները բանալ ժողովրդի առաջ, մատչելի դնելով եւ տոկոսով ցորենը ցրուել ժողովրդին: Ուրիշ կերպ անկարելի է ժողովուրդը փրկել վերահասու մահէն: Արդէն ցրտի, անօթութեան հետեւանքով սկսած են վարակիչ հիւանդութիւններ տարածուել:

Գրեցէք բժիշկ Ջաւրիբեկին շտապել այս կողմեր: — Ընտրութիւններին յոյս ունենք մեր թեկնածուն Արմենակ Օխիկեանին անցնել:— Հակառակորդները ցրուում են ձայները, մինչդեռ մենք ի վիճակի ենք զանոնք ամփոփ պահել: Գաւառները արդէն հաներ ենք ազիտատորներ:

7.- Սեօ Քաղաքը Թիֆլիսն է, կամ Արեւելեան Բիւրոն:
8.- Ղազարոս Ղազարոսեան:

— Ղրկեցէք, եթէ կարելի է հեռագրով, մեզ փող: Մախսեր անագին, բիւտջէ չունինք:

— Ղրկեցէք 80-100 օրինակ Դրօշակ եւ դաշնակց. յեղգրականութիւն:

Անհրաժեշտ է հոս հասցնել, Մեծ Քաղաքից⁷ կը լինի թէ ատկէ, մի կարող կազմակերպիչ, ընդունակութիւններով օժտուած գործիչ: Շրջանը մեծ, մարդ չկայ: Ես մտաւորապէս յոգնած, ֆիզիքապէս քայքայուած, գործերը երկար չեմ կարող տանել, պէտք ունիմ գոնէ վեց ամսեայ հանգստեան՝ ծամեայ լարուած գործունէութենէ յետոյ, ուղղակի հիւանդացի եմ յոգնածութիւնից: Մտադիր եմ 1-1/2 ամսից մեկնել:

Ամէն պոստով նամակ գրեցէք եւ ընդարձակօրէն տեղեկութիւն տուէք ընդհ. դրութեան մասին: Նոյնը կ'ընենք մենք:

Ղրկեցէք մի հասարակական կլիւբի (club populaire) ծրագիր:

Համբոյրներով
ՄԱՐԶՊԵՏԷՍ

Մեր հասցէն Marspet-Bitlis

Փաստ. 697-72

6.- ՍԵՊՈՒՀԷՆ ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻՆ

Պոլսոյ Պատասխանատու մարմ[նի] ընկերներին

Սիրելիք,

Իրականութիւնը դառն է: Ահա չորս ամիսից աւել է Սահմանադրութիւնը յայտարարուած է. յեղափոխականները գէնքը վար դրած են եղել, վստահ լինելով որ Սահմանադրութիւնը հաստատուն հիմքերի վրայ դրուած է. այս երկրի գլխին գուլում անողները կը պատժուին. բայց ոչինչ չտեսանք, այլ հակառակը. այսօր, այս րոպէիս, այս երկրի գուլումտարները նորից պաշտօնի վրայ են. նորից նոյն չարագործութիւնները կատարում են ինչ էր առաջ, գուցէ աւելի վատ: Յեղափոխական ընկերները գղջացել են որ գէնքը վար դրած են. եթէ այսպէս շարունակուի, յայտնում ենք ստիպուած գէնք պիտի վեր առնենք, նորից բարձրանանք այն արժիւնների վայրերը որտեղից շարունակ գնդակներ էինք ուղղում հին ռեժիմի պաշտպանների գլխին, որոնք կատարուել[?] էին մեր գեղեցիկ վաթանին քարուքանդ անողներին ուղարկել այն աշխարհը: Ընկերները գէնք վար դրին կարծելով որ արդէն գոհացում տրուել է Թուրքիայի տանջուող ու հալածուող ժողովուրդին. ոչ մի գոհացում չկայ. անուանական սահմանադրութիւն է. մարդիկ ահ ու սարսափի մէջ են. վտանգը՝ ջարդը դամոկլեան սրի նման կախուել է մեր գլխին. ամէն րոպէ սպառնում է կոտորած ու թալան: Կառավարութիւնը արդէն անգոր է, իսկ թուրք յեղափոխականներ արդէն գոյութիւն չունին բացի մի քանի սպաներից:

Կազմուել է իրօք այստեղ մի քանի մարդկանցից մի թուրք կոմիտէ, սակայն այն մարդկանցից, որոնք սեւ հարիւրեակի գլուխ անցած մի քանի ամիս առաջ՝ գիւղացի խեղճ ժողովուրդին էին թալանում ու կոտորում: Ժողովուրդի առածը ասում է՝ շուներ իւղի տկին են կապել: Ճիշդ այդ ենք տեսնում. ասէ՛ք, ի՞նչ կարելի է այդպիսի մի մարդկանցից բան սպասել: Աւելի եւ աւելի շատ են գրգռում ժողովուրդին եւ սրում մեր դէմ: Ընկերներ, քանի գոյութիւն ունին եւ պաշտօնի վրայ են այս սրիկայ եւ ոճրագործ պաշտօնեաները, ոչ մի բան այս երկրից մի սպասէք, եւ շուտով պիտի տեսնաք, որ ձեր ընկերները գէնք են վեր առել ու բարձրացել սար: Յայտարարում ենք ձեզ եւ յայտնեցէք թուրք ընկերներին, եթէ շուտով խիստ միջոցներ ձեռք չառնէք այս կատարուած գուլումների դէմ, եղած վտանգներին մենք պատասխանատու չենք: Ընկերներ, զարմանալի է ձեր լռութիւնը, ահագին թուով հեռագիրներ տուել ենք, ոչ մի պատասխան չկայ. մենք մեր կրիտիկական դրութիւնը ներկայացնում ենք, իսկ դուք լռում էք. ինչո՞ւ,

ի՞նչ պատճառաւ. թէ չէ Պոլսոյ շքեղ պալատները ձեզ շլացուց, կամ այդ տեղաց հանգստութիւնները տեսնելուց կարծեցիք, որ Տաճկաստանի բոլոր վայրերը Պոլսոյ նման հանգիստ են: Չէ, ընկերներ, այստեղ դեռ մարդիկ վախով[խելով են արեգակին նայում, դեռ քիւրտի հրացանը ձեռ տալուն[?] իւր հունձը անում. դեռ չի դադարել քիւրտը իւր նժոյգից գատուելը. նա շոյում [?] է որպէս մի գեղանի հարսի իր արաբական նժոյգը. նա պարծենում է հայի առաջ, որ քանի կայ իմ ձին, քանի իմ հրացանը կայ՝ ես կ'ապրիմ եւ չեմ ճանաչի ոչ մի բան:

Մի քիչ էք խօսանք այն գուլումների մասին, որ ամէն օր, ամէն վայրկեան, այս հինգ հարիւր տարի է կատարուում է մեր երկրում եւ դեռ այս սահմանադրութեան օրերում էլ շարունակուում է:

1) Պաշտօնեաներ որոնք հիմա գոյութիւն ունին: Այն գոմանտարը որ երէկ առջի օր, զօրք վերցուցած յեղափոխականներին հալածում էր, եւ երբ լսում էր ոեւէ գիւղում յեղափոխական կար, վախկոտ մուկի նման մտնում էր ծակէ ծակ. խոզ էր դառնում երբ լսում էր ոեւէ գիւղից հեռացել են յեղափոխականներ, յարձակում էր խեղճ անգէն գիւղացիների վրայ, ջարդում փշրում էր եւ գազանաբարոյ գինուորներին հրամայում էր «գեաֆուրուն մայր սիգէ հելալ տրը, նէ կէո-րիրսինս կէորին»: Այսօր այդ սրիկայ խապիրը դեռ պաշտօնի է: Այդ որ չորրորդ բանակի Չէքիի երկու աչքի լոյսն էր, դրան կասկած չկար: Այս լիբի արածների չափ ու սահման չկայ, եւ դեռ շարունակում է: Մի փոքրիկ փաստ որը կու գայ կը լրացնէ նրա պատկերը ձեզ պարզ լինելու համար: Այսօրուան օր, որ Ախլաթի խեղճ գիւղացիներ Պարսկաստանի սահմանից վերադարձող զօրքերի գոյքերն են բերած 20 սայլով դեռ փողոցներում թափառում են եւ ոչ մի րոպէ ուշադրութիւն չի դարձնում, խաբում է այսօր վաղը ասելով եւ դեռ ով գիտէ քանի օր էլ պիտի տանջէ խեղճերին. ահա քեզ մի սահմանադրութիւն, որ ամանը կայ ամանումը չկայ: Այդ միեւնոյն ֆերիքը գաղտնի կերպով ոճրագործ Ղասրմ բէկին բերել տալիս է, ժամերով խօսում ու ճանապարհ է դնում: Վալին հրամայում է նորան ձերբակալէք, իսկ անամօթը կանչում, խրախուսում ու ճանապարհ է դնում:

Ֆէրիքից բռնած մինչեւ յետին պաշտօնեան հայատեաց անձնաւորութիւններ են եւ ոչ մի միջոց ձեռք չի առնուած, որ հեռացուին այդ փտած ու թաղուած ռեժիմի թափթփութները, որ մի քիչ ճնշուած ժողովուրդը ազատ շունչ քաշէ: Ժողովուրդի մէջ տարիների ընթացքում կուտակուած թոյնը պոռթկում է, ուզում է թափ-

ւել, բայց պաշտօնեաների ահ ու սարսափը չի թողնում: Մի քիչ ազատութիւն տուէք, տեսէք ինչ գանգատներ պիտի թափուին Պոլսոյ ընկերների գլխին:

2) Թահսիլտարներ: Արդէն սրանց արածը տանելու համար անպատճառ պէտք է հայ լինել: Հայից գատ ոչ մի մարդ չի կարող տանիլ: Այս ժողովուրդը քարից ու պողպատից դարբնուած է, որովհետեւ սարեր [?] չի դիմանար նրանց արարքներին: Թահսիլտարը Տաճկաստանում մի սարսափելի ճիւղ է, ոչ գուլթ ունի, ոչ խղճմտանք: Կառավարութիւնն էլ ընտրում է արդէն այնպիսի անգութներ, որ ոչ մի սրբութիւն չեն ճանաչում: Թահսիլտարը, ո՛ր գիւղի մէջ իջնում է, այնտեղ սուգ ու շիւանը տիրում է, նա իւր ետեւին թողնում է աւերածութիւն: Թահսիլտարների արարքները հայ գիւղերի մէջ վերջին աստիճանի քստմնելի է: Թահսիլտարը երբ գիւղ է իջնում, պէտք է պատրաստ լինի նորա համար հաւն ու գառը եւ դրա հետ միասին մի քանի հարիւր դրուշ կաշառքը. թէ որ այս յիշածներէս հետ հարսն ու օղին էլ չեղաւ, այն ժամանակ վայն եկել տարել է գիւղացին: Թահսիլտարի խօսքը երկնքէն իջած պատգամ է, պէտք է սրբութեամբ կատարել նրա ասածների իւրաքանչիւր բառը:

Տաւուլով գուռնայով գեղեր ման գալը հարկահաւաքների համար մի սովորական բան էր եղած նախքան սահմանադրութիւնը եւ այսօր էլ հին ուղղութեամբ շարունակուում է, որովհետեւ նոյն մարդիկն են եւ նոյն գեղծարարները: Դրանց ամենայայտնիներից մէկն է Առանց Ապտիւլլահ չաւուշը, որի արարքները գրչով նկարագրելու համար պէտք է քար սիրտ: Մարդկանց կրտել ամորձիքները ոլորանի մէջ դնելով. գլխիվար կախել, գանակոծել, ձմեռը վրան սառ ջուր լեցնել ու բացօթեայ թողնել. կանանց վարտիկների մէջ կատու ձգել ու հաստ փայտով հարուածել. վերջը բռնել բռնի կերպով բռնաբարել. 80 տարեկան պառաւ կնոջ վրայ ձի վազել. եւ այսպիսի հազար ու մէկ չարագործութիւններ կատարած է այս գարշելին:

Ահա այսպիսի մի հրէշ դեռ պաշտօնի է եւ դեռ պարծենում է իւր արարքներով այս սահմանադրութեան օրերում. եւ կառավարութիւնը, փոխանակ այսպէս մի վատ գազանին պատժելու հեռացնելու տեղ, նորից նոր են պաշտօններ յանձնում, գիւղերը թահսիլտարութեան է ուղարկում: Ասէք, ընկերներ, սա ազատութիւն է, հաւասարութիւն է ու եղբայրութիւն: Ամէն տեղ հուրիաթ է ըստում, իսկ մեր տեղում այդ չկայ քանի կան Առանց Ապտիւլլահներ ու Հիւսնի պէյեր: Այսպիսի սրիկաներ լեցուն է մեր նահանգի կառավարութեան պաշտօնատեղիներում. ոչ մի փոփոխութիւն մտած չէ: Ճենտէրի [?] գլխաւորը ----- էֆէնտին սրանից մի քանի ամիս առաջ դաշտի գիւղացիների բերանը աղբ էր լեցնում եւ տեսակ տեսակ տանջանքների ու չարչարանքների ենթարկում. էլի այսօր մնում է իւր պաշտօ-

նի վրայ: Ահա քեզ սահմանադրութիւն:

3) Քիւրտ աղաներ: 89 թուականներին Մշոյ դաշտում սուգ ու շիւան ներկայացնող [?] Մուսա պէկ (Հաճի Մուսա պէկ), որ նոյն թուականներին որպէս ոճրագործ աքսորուեց Աքիա, երբ սահմանադրութիւնը յայտարարուեց, վերադարձաւ: Մեծ զարմանք, 10-20 մարդ սպանողը, մի քանի գիւղեր բոլորովին ամալի դարձրնողը որպէս քաղաքական յանցաւոր իւր աքսորավայրից յետ վերադարձաւ... Չգիտեմ, ո՛ր երկրում կամ ո՛ր տէրութեան օրէնքի մէջ կայ մարդասպան ոճրագործը ազատուի առանց իւր վճիռը վերջացնելու: Այդ անձնաւորութիւնը այսօր իրան ընկերացրել է իւր եղբօր Ղասրմ բէկին, Հաճի Ֆերոյին, յայտնի Ռիզաղին ու Ֆաթուլլահ բէկին եւ հակասահմանադրական պրոպագանդա են մղում ու մտքեր են պղտորում: Իսկ մեր ներկայիս կառավարութիւնը ոչ մի միջոցներ ձեռք չի առնում այդ արիւնարբու լկտիների դէմ: Քանի անգամ դիմեցինք, բողոքեցինք. մեզանից փաստեր են պահանջում. չգիտենք ինչ փաստ. մի քանի գիւղ էլ կոտորեն ու թալանեն, այն ատեն ասենք՝ ահա ձեզ փաստ: Փոքրիկ գործերը փաստ չեն համարում: Սրանից 20 օր առաջ տեղիս նահանգապետը բանտարկում է Ղասրմ բէկին Բաղէշում: Մուսաբէկի երաշխաւորութեամբ դուրս է ելնում որպէսզի գայ Մուշ անձնատուր լինի: Երբ բանտից ազատուում է, գալիս գաղտնի կերպով Ֆերիքի հետ տեսնում է, ու վերադառնում իւր գիւղը. նոյն օրը իրա գիւղացի մի հայի մատակը մորթում, միսը բաժանում է իւր ծառաներին. խեղճ գիւղացին լալով դիմեց միւլթեսարիֆ, բայց վերջինիս պատասխանը եղաւ՝ այդպիսի փոքրիկ դէպքեր Փարիզում էլ լինում է: Այսպիսի լըրբութիւն, այսպիսի պատասխան երբեք չէինք սպասում: Այն մարդը որոշուած է որ անմիջապէս բանտարկուի ու պատժուի. փոխանակ հրամանը կատարուելու, սանձարձակ ման են գալիս ու սպառնալիքներ են թափում հայ գիւղացու գլխին: Քանի մեր երկրից այս վերել յիշածներս չեն պատժուած, քանի այս երկրից չեն հեռացուած, վստահ կերպով կ'ըսեմ — այստեղ ոչ մի խաղաղութիւն չի տիրել եւ գնալով աւելի վատ պիտի լինի, որովհետեւ ռայա քիւրտը տեսնում է որ չարիքներով այս երկիրները խեղդողները կառավարութեան վստահութիւնն ունին, նրանք էլ երես են առնում, ու նրանք էլ պակաս փորձանք չեն դառնում ժողովուրդի գլխին: Խասագիւղից վերել որ սա հայի գիւղ է — իրանց հարեւան քիւրտ գիւղը սկսել է նրանց հազար ու մի չարիքներ անել, ասելով՝ «հայեր, սահմանադրութեան սկզբի օրերում ուրախանում էիք որ քիւրտ ցեղապետները պիտի աքսորուին ու այստեղից հեռանան. մենք էլ յիմարաբար համոզուեցինք եւ դադարեցինք գողութիւն ու աւազակութիւն անելէ, կարծելով որ ցեղապետները կը պատժուին. բայց դա հայերի կողմից մի խաբէութիւն է. սուլթանը այդպիսի բանից տեղեկութիւն չունի»:

Ահա այսպիսի անհեթեթ խօսակցութիւն. ժողովուրդին նորից կողոպտում են: Արդէն Բուլանուխում մի քանի դէպքեր եղել են օրիորդների առեւանգութեան: Կողակ գիւղում 13 տարեկան եւ 14 տարեկան երկու օրիորդներ գնում են գիւղի եզրում գտնուած աղբիւրից սափորով ջուր բերելու. յանկարծ 2-3 քիւրտ յարձակում են ու առեւանգում աղջիկներից 13 տարեկան եղողին, իսկ միւսին յաջողում է փախչել ազատուել: Առեւանգած աղջկան տանում են շէխի տուն, անկից էլ Գոպ գիւղաքաղաքը, որ գայմազամի առաջ աղջիկը ասէ «Հախ տինը ընդունել եմ»: Ճանապարհին բռնի տարած աղջիկը մէկէն փախչում ազատում է, այդպիսով փրկում է իւր կեանքը: Ահա քեզ սահմանադրութիւն, ահա քեզ ազատութիւն, ուր դեռ չի դադարել հայի աղջիկ առեւանգելն ու թալանը:

4) Մուհաբեթի հարցը: 1877 թուականներին, երբ ռուս-թուրքական պատերազմը վերջացաւ, այն ատեն թուրք գաղթականներ գաղթեցին Ռուսաստանից դէպի Տաճկաստան եւ լցուեցին գանազան վայրեր, որոնց մի մասն էլ Մուշի դաշտում տեղաւորուեցին: Երբ այս վերջին տարիները սկսան թուրք-հայկական ընդհարումները, յեղափոխական անունով խեղճ գիւղացիներին հալածել սկսան. շատերը այլեւս կառավարութեան զուլումները չկարողանալով տանիլ, թողին իրանց պապենական օճախները ու գաղթեցին, օտարութեան գնացին հեռու աշխարհներ, որ ազատուին թուրքի զուլումներից: Կառավարութիւնը թափուր մնացած հողերը տուեց այդ նորեկ մուհաբեթիներին եւ վերջիններս տէր դառան հայերի հողերին. որ մէկի հողն էլ հարուստ վաշխառուն կամ սալաֆտարը գապթ ըրաւ, շատերին էլ քիւրտ ցեղապետը: Այսօր սահմանադրութիւնը երբ հրատարակուաւ, այն գաղթողներից շատերը վերադարձել են, յոյս ունենալով որ սահմանադրական օրէնքների համաձայն իրանց հողերը յետ կը խլուին եւ կը տրուին իրանց: Բայց այդ քայլը մինչեւ այսօր կառավարութեան կողմից չէ եղած. օրինակ Կոմս գիւղը, որը Մուրատ գետի հիւսիսային կողմն է. 804-ի կռիւներից յետոյ չեքքէզներ բնակած են: Երբ հայերը վերադարձան իրանց տեղերը, չեքքէզները չթողին ասելով՝ մենք ենք այս գիւղի տէրը: Հայ գիւղացիք հեռագրեցին կուսակալութեան, բայց ոչ մի արդիւնք չունեցաւ: Արդէն ցուրտերը սկսան, ժողովուրդը ցրտից եւ անձրեւներից մեռնում է, ճար անող չկայ. այսպիսի գիւղեր շատ են արդէն, բոլոր գաղթականները իրենց ունեցածին տէրը չեն կարողանում լինել: Թող ոչ ոք չդառնայ, եթէ ոչ ձմեռուայ դաժան ցրտին զոհ կը դառնան:

5) Սալաֆտար: Սալաֆտարութիւնը արդէն միանգամայն ժողովուրդի տունը քանդել է. սա այնպիսի ա-

ւերածութիւն է այս կողմերը եւ սարսափելի տարածել է: Մուշ, Մալազկերտ, Պուլանուխ, Խնուս, Ախլաթ, Բաղէշ, Սղեբոզ, Մասուն եւլ. տեղեր չկայ մի հայ, որ սալաֆտարած չլինին. թէ քիւրտից եւ թէ հայից առնուած է այս սալաֆտարը: Սալաֆտարը գարունը գալիս է, 10-20 դրուշ հաշուով է գառը եւ նա այդ գառը աշնան առնում է, որը գարունը արժէր 20 դրուշ, աշնան՝ 40-50 դրուշ. եթէ գիւղացին աշնան չկարողացաւ տալ, արդէն մէկին՝ երեք չորս վրայ է գալիս. այդպիսով քանդում է գիւղացին:

Կառավարութիւնը այս ամէն ինչ տեսնում է. ոչ մի միջոց ձեռք չի առնում, որովհետեւ իր հաշուին չի գալիս: Դեռ շատ գործեր կան գրելու, բայց ի նկատի ունենալով ժամանակի սղութիւնը, թողնում եմ ուրիշ ժամանակի:

Կազմակերպական գործերը այստեղ բաւականի թոյլ է, որովհետեւ այժմեան կառավարութիւնը ճնշումներ է գործ դնում: Մալազկերտ մի վարժապետ ուղարկած էինք ուսումնարանական գործերով: Կառավարութիւնը ձեռքաւորում եւ քստորում է, որ միւսիւր մարդիկ են այսպիսի մարդիկ: Չգիտենք, սահմանադրութեան օրերում ինչ միւսիւր մարդիկ կան: Ուղղակի կառավարութիւնը չի ուզում [որ] մենք չըջանները կազմակերպական մարդիկ հանենք, իսկ իրանց համար ազատութիւն է, ուր որ ուզում են մարդիկ կարող են ուղարկել:

Գուլէշ, ընկերներ, այսքան երկար գրում եմ, ձանձրանաք, չկարդաք: Լաւ գիտցած լինիք, որ ցաւ ունեցողը շատ կը խօսայ. եւ ձեր այդ ընթացքը մեզ մեծ ցաւ է պատճառում: Բոլորը հաւաքուել էք այդտեղ, ի՞նչ էք շինում: Ուզում էք Պոլիսը Հայաստան դարձնել. քանի այդտեղ հաւաքուել էք, ոչ մի գործիչ գաւառներում պիտի չլինի: Ուղղակի անբարեխղճութիւն է մեզ մինակ թողնէք այստեղ: Ահա ասում ենք այսօրուանից, որ հեռանում ենք. տեղերիս պատասխանատուութիւնը թողնում ենք ձեզ վրայ:

Բարեւներով
ՍԵՊՈՒՀ

1908 Հոկտ. 13
Մուշ

Թ. Գ.- Ոչ մի կազմակերպական թերթ չի ստացւում. ուստի գրէք որ ուղարկեն Դրօշակ, Գործ, Ռազմիկ եւ ուրիշ թերթեր ու գրքեր:

ՆՈՅՆ

Ուղարկէք 300 ոսկի

Փաստ. 697-76

7.- ԳԱՐՄԵՆԵՆ ԼԻԱԶՕՐԱԳԻՐ ՍԵՊՈՒՀԻՆ

Դուրան-Բարձրաւանդակի եւ դրացի շրջանների բոլոր մարմիններին եւ ընկերներին
Սիրելիք,

Ընկերական բարեւներով
ի դիմաց Դուր.-Բարձր.ի Կեդր. Կոմիտէի
ԳԱՐՄԵՆ

Դուրան-Բարձրաւանդակի Կեդրոնական Կոմիտէի անդամներից ընկեր – Սեպուհ – Արշակը այս անգամ մեկնեցաւ Դուրան-Բարձրաւանդակի ամբողջ շրջանում կազմակերպական գործերով պարապելու:

Յանձնարարում ենք մեր բոլոր ընկերներին եւ մարմիններին ամեն կերպ բարոյական աջակցութիւններ չխնայել նրան, դիրացնել իւր աշխատութիւնները, ընդունելով նրան իբր Դուր.-Բարձր.ի Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչ:



1908 Յոկտ. 16
Դուրան

Փաստ. 697-77

8.- ՍԵՊՈՒՀԵՆ ԳԱՐՄԵՆԻՆ

Սիրելի Գարմեն

Երեկ հասայ Շէնիկ եւ այսօր էլ այստեղ եմ: Ժողովուրդը սարսափելի խեղճ դրութեան մէջ է. տուն կայ, որ բոլորովին մի փոր կորել չունի. շատերը սկսել են հիւանդանալ, եւ շատերն էլ եկել դիմել ինձ որ մի ճանապարհ ցոյց տամ: Բացի հացից, արդէն բնակարանները վերին աստիճանի վատ կերպով շինուած է որ ապրիլ չի կարելի: Անկողին ասած բանը գոյութիւն չունի այս երկրում: Մարդիկ պառկում են կորեկի բռուկի(?) վրայ: Այս երկու գիշեր ես էլ բախտ ունեցայ պառկել: Կեանքը անտանելի է. եթէ շուտով ռեւէ միջոցաւ օգնութիւն չհասնի այս ժողովուրդին, ժողովուրդի մեծամասնութիւնը սովամահ կը լինի: 40 փարայով ճանապարհ չենք կարող կտրել. միջոցներ պէտք է ստեղծել: Շատերը ուզում են գնալ դէպի օտարութիւն ընտանիքներով միասին: Եւ մտածում են թոյլ տամ գնան, բայց մի ուրիշ միտք տանք: Եւ նրանց գնալէն յետոյ, հաւատացել են քիւրտեր գան բնակուին սրանց տեղերը: Իսկ թոյլ չտամ՝ բոլորը սովամահ պիտի լինին: Այժմ ընկերներ ձեզ եմ դիմում. ինչ էլք ճանապարհ ողնեք այս ժողովուրդի առաջ: Ձեր գրածի համաձայն 40 փարայից տուի, այդ գիտցած լինիք. իսկ մնացած 10 փարան արդէն ձեր գրածի համաձայն աւելի արքատ եւ չքաւորներին կը բաժանեն եւ ի նկատի կ'ունենան ընկած ընկերների ընտանիքներին: Այսօր Կելիկուզան էինք. ողբալաց դիմեցին ինձ, որոնց 6 մարդը բանտարկուած էր լուծկան կովի պատճառաւ եւ 9 ոսկի սալաֆ արել է: Այդ դրանը մինչեւ այսօր մնում էր. քիւրտերը եկել նրանց տները լցուել, ունեցած չունեցածնին կ'ուզեն տանիլ: Ես այդ դրութիւնը տեսնելով չկարողացայ տանիլ: Երեք ոսկի տուի, մնացածի համար ձեզ եմ դիմում մի կարգադրութիւն անել: Եթէ ես ունենայի արդէն բոլորը կը վճարէի, մասաւանդ Մուրատը եւ Ռուբէնը համաձայնել եմ տալու: Է՛հ, սիրելիք, դրութիւնը այս ժողովուրդին սոսկալի է. բոլորովին արիւնքաւ է եղել քիւրտ սալաֆտարի եւ թուրք թահիլտարի ձեռքը: Ուզում եմ մեռնել չտեսնել այս սարսափելի տեսարանները: Թշուառ սասունցիի կրած նեղութիւնները կարծես քիչ է, մէկ էլ աւելանում է այս վատաբարոյ գիւնուորների տուած նեղութիւնը: Մտնում են Շէնիկ, Սեմալ, Կելիկուզան, բռնութեամբ օլամի են տանում, առանց վճարի, առանց վարձի: Վա՛յ այն հայուն, որ դիմադրո ու նրանց ասա-

ծը չկատարէ, փայտի ու ծեփ տակ կը սպաննեն: Մէկին ծեծել են, որ գիւղի ռէխս էր. 3-4 օր հիւանդ պառկել է: Ի սէր Ալլահին, դիմեք Սելանիկ, Պոլիս՝ հեռագրով. գուցէ այս անխիղճ զազաններին այս տեղից դուրս հանեն: Եթէ ծնեաւ մնան այստեղ շատեր փքախեղդ պիտի լինին:

Ի՞նչ անէ թշուառ սասունցին, իր տարտերի համար լա՞յ, թէ ոչ թուրք զօրքերի, օլամների համար: Վարդ կը գնամ զօրանոցը զօրքի զօրապետի հետ տեսնուելու: Պիտի բողոքեն դրա գիւնուորների կատարած չարութիւնների համար. թէւ գիտեմ անօգուտ է, բայց ինչ անեն:

Տեղիս կազմակերպելու մասին մի քանիսների հետ խորհրդակցեցի, եւ ընկեր Մանուկի հետ, ոչ ոք չի համաձայնիր. տեսակ տեսակ պատճառաբանութիւններ բերին, ի հարկէ բոլորովին անհիմն: Մանրամասնութիւնը Մանուկից կը լսէք: Շէնիկ, Սեմալ, Կելիկ, Գանջ, Շուշաներկ եւայլն, այստեղ չի կարելի կազմակերպել այն ձեւով, ինչ ձեւով մեր ծրագրի եւ կանոնագրի պահանջն է: Շատ երկար եմ խօսել, դուք էլ Մանուկի հետ խօսացեք եւ ձեր կարծիքները գրեցեք:

Տարագոսմցիք ուղարկում եմ իրանց գիւղի համար բողոքելու. դուք էլ ձեր կողմից պէտք եղած ճանապարհները ցոյց տուեք: Արգուիայի փող էլ տաք: Պէտք եղած միջոցին հեռագրի էլ փող չխնայեք: 2 ոսկի յանձնել եմ Մանուկին Մասնոյ համար գրքեր առնելու. եթէ դրանը պակաս գայ լրացնեք: Ուսուցիչ վարձել եմ 600 դրուշ. մօտաւորապէս 30-40 աշակերտ կը կարդան:

Տալուորիկիցների վիճակը աւելի դառն է. մի քանի երեխաներ սովածութիւնից մեռել են: Եղկարից 6-7 տուն բոլորովին սովամահ են լինում: Գլուխս կորուցել եմ, չգիտեմ ինչ գրեն. ձեռքերս գրիչ չի բռնում որ գրեն:

Արդէն սարերը ձիւնով ծածկուեցին. հաղորդակցութիւնը երեւում է շուտով պիտի կտրուի այդտեղի հետ, եւ ես պիտի մնամ այս տեղերը. եթէ մնամ այս սոված ժողովուրդի հետ, ինչ պիտի անեն:

Շուտով ուղարկեցեք ինձ համար կարուելիք շալվարը եւ բալդոն. արդէն սարսափելի ցուրտ է:

Արտասահմանից եկած լուրերից մեզ էլ բաժին հանեք. չմոռանալ թերք ուղարկելու:

Բարեւներ ՍԵՊՈՒՀ
1908, Յոկտ. 19
Շէնիկ

Փաստ. 730-52

9.- ՆԱՄԱԿ ՉԵՐՔԷՉ ՑԵՂԱՊԵՏ ՄԱՀՄԵՏ ԷՖԷՆՏԻՆ

Թուրք եւ հայ յեղափոխական կոնգրէի պատուարժան անդամոց

Բաղէշ

Պուլանըք, Մանազկերտ եւ Խլաթ գաւառներու ներկայ կացութեան մասին Յոսիկեան Արմենակ էֆ.ի հետ ունեցած տեսակցութեանս միջոցին իմ տեսութիւններս երկարորէն պարզած եմ թէ եւ, իբրեւ այս հայրենիքի գաւազ, նուիրական պարտականութիւն կը համարեմ գրով եւս Ձեր ուշադրութիւնը հրաւիրել այս կողմերու ներկայ դժբախտ վիճակին վրայ:

Սահմանադրութեան հրատարակութեան թուակահին, արտաքին երեւոյթով այնպէս կարծուեցաւ որ օսմանեան տէրութեանց մէկ ծայրէն միւսը Գանուը է-սասը՝ առանց կրօնի եւ ազգութեան խտրութեան, ամէնուն ընդունելութեանը արժանացաւ...: Հին ռեփիմը յանկարծակիի եկաւ, քրտութիւնը շմորեցաւ եւ ուռկանի մէջ ընկած ձուկի մը նման թփրտաց ժամանակ մը. շուարած դրութեան մը մէջ էր, երբ յանկարծ սթափեցաւ եւ զգաց որ նոր օրէնքը իր ունեցած ցեղային անսահման իրաւունքներուն, ազատութեանը, բռնապետութեան եւն եւն սահման մը կը դնէ, սանձ կը դնէ իր բերանին. արգելք կը դնէ իր ազատ քայլերուն. շուարած էր այր, եւ իր ընելիքը չէր գիտեր, երբ Հին օձը — Հին ռեփիմը, օգնութեան հասաւ եւ գործելու, նոր օրէնքը տապալելու ճանապարհը գծեց իր առաջ:

Այժմ քրտութեան ներկայացուցիչները — ցեղապետները, կրօնապետները գործելու որոշ ծրագիր եւ ուղղութիւն ունին. անոնք արդէն սկսած են այլեւայլ տեղեր համախմբումներ ունենալ. Հասանանցի ցեղապետներէն տիպլումաթիք յատկութեամբ ծանօթ Ֆաթուլլահ պէյն արդէն իբր պատգամաւոր իր աշխրէթին, ուղեւորութեան ղէպի Պիթլիս նշանաւոր օճախի ներկայացուցիչ չէյի Սայիտ Ալիի հետ տեսութիւն եւ խորհուրդ փոխանակելու: Ռէակսիոնը մեծ ծաւալ գտած է. շատ մեծ ուժով եւ եռանդով կը գործուի քրտական նշանաւոր պրոպագանդիստներու միջոցաւ: Ձեզ արդէն յայտնի պիտի լինի այս պարագան որ քրտական ռայա դասակարգը ձայն ու կարծիքի ազատութիւն չունի թուրքներու հանդէպ. բաւական է որ Ադան հրամայէ, եւ ռայան պատրաստ է հպատակելու եւ գործելու:

Ռէակսոնի այս գործողութիւնը իր կեդրոնն ունի Հայտարցի աշխրէթին պատկանեալ երկիրը. գլխաւոր ներկայացուցիչն ու պարագլուխը Հիւսէյն փաշան է.

միւս՝ Հասանանցի, Սեփկըցի եւայն աշխրէթներու թուրքները երդումով եւ ուխտով միացած են գործելու այն ընդարձակ եւ հակասահմանադրական ծրագրին համաձայն, որ Պոլիսէն դրկուած է քիւրտ քոմիտէներու կողմէ:

Այսօր, որ բարեբախտութիւնն ունինք մեր երկրի կուսակալութեան կեդրոնին մէջ ունենալու յեղափոխական կարեւոր ոյժ մը յանձին Ձեզ, Ձեր ուշադրութիւնը կը հրաւիրեմ այս կէտին վրայ. եւ կ'առաջարկեմ որ քոնկրէիդ անդամներից 4-5 ազգեցիկ եւ խելացի անձինք անմիջապէս դրկէք այս կողմերը: Մենք իբր գաւազ հայրենիքի, մեր ծառայութիւնը ամենայն սիրով կ'առաջարկենք, միանալու համար այդ անձանց հետ եւ գործելու յօգուտ երկրին ու Սահմանադրութեանը, որ իսկապէս վտանգի մէջ կը տեսնեմ...:

Այս նամակը Ձեզ դրկելով՝ այսօր եւեթ կը մեկնեմ դէպի Հայտարցուց երկիրը, հետամուտ լինելու վերոյիշեալ ծրագրին եւ եթէ չյաջողիմ՝ պատճէնն առնելու, գոնէ իմաստն հասկնալու եւ գրաւոր կերպով Ձեզ ներկայացնելու:

Ձմռանամ յայտնել որ թուրքն աղաներէն մաս մը որքան որ չեն ուզեր ընդունել այդ ծրագիրը եւ միանալ ռէակսիոնէրական այդ գործեաց բայց սպառնալիքի ներքեւ ակամայ կը միանան, օրինակ՝ ինչպէս կը լսուի, Հայտարցի Ալի պէյն:

Գործը քանի դեռ ընդարձակ ծաւալ չէ ստացած փութացուցէք քանի մը անձինք, որպէսզի՝ ուխտով ազնիւ խօսք կու տամ, իրենց հետ միանալով մենք եւս սկսենք պրոպագանդայի եւ քրտական այս վտանգաւոր շարժման առաջն առնելով, գոնէ ոյժերին կը բաժնենք եւ հակառակ կուսակցութիւններն կը չէզոքացնենք:

Փորձեր եղան չէրքէզ գիւղերն եւս միացնել հետերնին. բայց առայժմ չեն յաջողուած. եթէ ուշադրութեան չառնուի մեր առաջարկը՝ գուցէ ռէակսիոնը մուտ գործէ եւ չէրքէզներու մէջ:

Կրկնելով մեր ուխտը սիրեցեալ վաթանի ծառայութեանը համար, ակնդէտ կը սպասեմ մօտալուտ կարգադրութեան մը Ձեր կողմէ:

Մնամ խորին յարգանքներով Խլաթ գաւառի Ղուլիկ գիւղի չերքէզ ցեղապետներէն՝ ՄԱՀՄԵՏ ԷՖԷՆՏԻ

18 Նոյեմբ. 1908
Կոփ

Փաստ. 701-21

10.- ՍԵՊՈՒՀԷՆ ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԵՐՆ

Կ. Պոլսոյ Պատ. մարմնին

Ընկերներ!

Ձեզ պարբերաբար գրած ենք շրջանի վերակազմութեան մասին, այլեւ այն խուլիգանական շարժման մասին, որ վերջերս հանդէս էր եկել մեր շրջանում եւ որը սակայն ձեռք առնուած ազդու միջոցների շնորհիւ հէնց իւր սաղմնային վիճակումն էլ խեղդուեց: Վերակազմութիւնը վերջացած լինելով 10-12 օրէն հրաւիրելու ենք Ռայոնական ժողով, որի զբաղմունքների եւ արդիւնքի մասին ժամանակին կը հաղորդենք մանրամասնօրէն:

Բազմիցս Ձեզ գրել ենք վիճակին դառն կացութեան մասին եւ օգնութիւն ուզել նիւթական թէ բարոյական. սակայն էլի հարկադրուած ենք կրկնելու, որովհետեւ անհնար է լինում չգրել եւ չխօսել ի տես այն գրկումներու եւ հարստահարութիւններու որին ենթարկուած է դեռ այժմս էլ տարօնցին: Գարունն է. գիւղացին ձեռքը ծոցին, վիզը ծուռ մնացել է շուարած. սերմ եւ լուծք, սոյն երկու ամենակարեւոր բաներէն գրկուած է գիւղացին եւ այդ դրութեան ենթարկուած է մեծագոյն մասը գիւղացիութեան: Եղած օգնութիւնները կաթիլներ են ովկիանոսի մէջ. ժողովրդին սովի ճիրաններէն ազատելու համար հարկաւոր են աւելի արմատական միջոցների եւ ռեֆորմների գործադրութեան աշխատել, որոնց մասին արդէն ուրիշ անգամներ գրել ենք Ձեզ:

Ընկեր Գարմէնին հեռագրով Բարձրաբերդ էք հրաւիրում. սակայն այժմ անհնար է նրա բացակայելը, որովհետեւ մինչեւ օրս համարեա մենակ է տարել ամբողջ գործը եւ այժմ էլ չափազանց զբաղուած է, թէ շրջանին վերակազմութեան եւ թէ հաշուական եւ այլն խնդիրներով: Բացի դրան էլ, գարունն է. քիւրտ քոչւորները եայլախ կը բարձրանան եւ գողութիւնները, սպանութիւններն ու ծեծերը անպակաս կը լինին. այլեւ հարստահարուած ժողովրդի հողային-կալուածական խնդիրները, հարկահաւաքութիւնը՝ աղնամ, սերմնցուի, լուծքի եւ ջրի կռիւները եւ դրանց բարւոք կարգաւորման համար այնքան կարեւոր գիւղացիական համայնական միութիւնների լաւ եւ յաջող կազմակերպումը են եւն. գործեր՝ որոնց յաջող կարգաւորման համար ոչ միայն կարեւոր է Գարմէնի ներկայութիւնը, այլեւ մենք կը խնդրէինք որ շտապեցնէիք մի քանի գիտակազմաբարակ վարիչ ոյժեր եւս. օրինակ, Ռուբէն Զարդարեանին իբրեւ տեսուչ կեդրոնական վարժարանին. Ներսէս Փափագեանին իբրեւ Դուրանի կրթական-թեմական տեսուչ: Մենք կը խնդրէինք յատկապէս որ

ընկեր Ս. Զաւարեանը իբրեւ գիւղատնտես այցելէր մեր շրջանը ուսումնասիրելու համար գիւղացիական-համայնական հողային հարցը եւ համայնական աշխատանքը եւ իբրեւ օրինակ մի քանի գիւղերում սկսէր գործնական աշխատանք: Մեր շրջանի համար շատ կարեւոր է նաեւ մի փաստաբան-իրաւաբան ունենալը, այնպէս ինչպէս էջմիածինն ունի, որպէսզի ճիշտաբար պաշտպանէ հայ չքաւորների հողային-կալուածական դատերը դատարանում, որով ժողովուրդը կ'ազատուի շրջանիս անպէտք, շահամոլ եւ ապիկար փաստաբանների ձեռքից եւ հազարաւոր անմեղների դատերը չպիտի այլեւս ոտնահարուին դատարաններում: Երջանս բոլորովին գուրկ է կարող ընկերներէ, իսկ հիւանդութիւններն անպակաս են շնորհիւ վատ սնունդի, անառողջապահի պայմաններու եւ գրկանքներու. հետեւաբար մի քանի այր եւ կին բժիշկներու ներկայութիւնը շրջանումս շատ կարեւոր է: Կարող ուսուցիչներու եւ ուսուցչուհիներու կատարեալ սով է մեզանում. ի նկատի առնելով կրթական գործի այնքան կարեւորութիւնը, չէք գլանալ անշուշտ ընկերներ մեզ ուղարկելու եւ կրթական գործը ամուր հիմքերու վրայ դնելու կարեւոր խնդրին բաւարարութիւն տալու մեր խնդրին լիուլի գոհացում կու տաք, եւ եթէ տրամադրելի ընկերներ գտնուին, ուղարկեցէք մեզի շրջիկներ եւ վիճակագիր պատրաստողներ: Ձեզ հաղորդուած այն լուրը, թէ սկսուած շարժումը ուղղուած է միմիայն ընկեր Գարմէնի դէմ, ոչ մի հիմք չունի, եղածը հնի եւ նորի կռիւ էր, որը սակայն վերջացել է ձեռք առնուած կարգ մը միջոցների շնորհիւ: Այժմ մեր գործերը կանոնաւորել են. մնում է միմիայն Կորուտի վերակազմութեան խնդիրը, որը դեռ չէ վերջացել: Երեք օր առաջ Եւսէն տեղս հասաւ մշեցի Հաճի Յակոբը, որի ներկայութիւնն այնքան օգտակար կարող է լինել մեզ ներկայ պարագաներում:

Հայ կնոջ բռնի իսլամացման առթիւ մեր սարքած գործադուլի պատճառաւ մեր յարաբերութիւնները (իթիֆհատի հետ) լարուել էին. - ցրտութիւնը ի հարկէ իրենց կողմից էր. սակայն երբ մենք յաղթեցինք, կրկին այժմ սկսել է պաշտօնական յարգալիք վերաբերմունք թէ գինուորութեան եւ թէգիտակից թուրք տարրի կողմից դէպի մեզ. իսկ շովէն եւ մուլթ ուժերը բոլորովին թուլացել են:

[Դաշնակցութեան] Խորհրդի գումարումը ինչո՞ւ է ձգձգուում. ե՞րբ կը լինի եւ ովքե՞ր պիտի մասնակցին. յայտնեցէք մեզի: Ընդհանուր ժողովի օրակարգը տակաւին չստա-

ցանք ինչո՞ւ: Հաղորդեցէք մեզի Սարուստանի եւ Վրէ-
ժի՞ գործերի ներկայ կացութեան մասին եւ մեզ գիտակ
պահեցէք ընդհանուր կազմակերպական գործերին:

Քրիստոնեաներու գինուորագրութեան յետաձգման
մասին ստացուած լուրերի պատճառաւ միթիւնկ մը գու-
մարեցինք, եւ հեռագրով բողոքեցինք պարլամենտին
յետաձգման դէմ եւ պահանջ դրինք հէնց այս տարուա-
նից սկսել քրիստոնեաներու գինուորագրութիւնը:

Գաւառները եկող քննիչ յանձնաժողովը ինչո՞ւ է ու-
շանում. լսում ենք որ պագիաները՝ պիտի հաւաքուին
շուտով. ժողովուրդը չունի որ վճարէ. աշխատեցէք կամ
յետաձգել հաւաքումը եւ կամ բոլորովին չհաւաքել:

Կառավարութեան ուղարկած սերմնցուի դրամները
ժողովրդին կը տրուի միմիայն երաշխաւորութեամբ եւ
դժնդակ պայմաններով, որով եւ ժողովուրդը չպիտի
կարողանայ օգտուիլ դրանից. այդ մասին ալ հարկ ե-

9.- Յաջորդաբար՝ Կովկասի եւ Պարսկաստանի:

ղած դիմումները ըրէք ուր որ հարկն է որպէսզի ժողո-
վրդին տրուի առանց փոխարինութեան կամ գոնէ
տանելի պայմաններով:

Մեր կազմակերպական դրամական եւայլն հաշիւնե-
րը պատրաստ են եւ յաջորդ փոստայից սկսած կ'ուղար-
կենք:

Կազմակերպական ծախսերը գոցելու համար դրամի
մեծ կարիք ունինք. այդ մասին քանիցս գրել (ենք) Ձեզ
եւ անպատասխան մնացել. պատճառն ի՞նչ է: Այժմ շըր-
ջանիս համար կարեւոր են գիտակից ընկերներու եւ
դրամի առաքումը, որոնց բաւարարութիւնը տալը կը
խնդրենք:

Ընկերական բարեկենդրով՝

Դուրան-Բարձրաւանդակի Կ. Կոմիտէի կողմից:
ՎՐՈՅՐ

1909 թ. Մարտ 30

Փաստ. 701-88

11.- ԳԱՐՍԷՆԷՆ ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԵՒՆ

Կ. Պոլսոյ Պատ. Մարմին,

Սիրելիք,

Մեր միւթասարի՞քը մեկնեց. նորը դեռ չեկաւ: Միւ-
թասարի՞քի մեկնելով մուհաջիրների գրաւած հողերի
հարցը երեսի վրայ մնաց եւ աշունը վրայ գալով մուհա-
ճիրները այս տարի եւս պիտի մնան, որով կրկին փողոց
մնալով հայ հողատէրերը եւ ձմրան սաստկութեան չըի-
մանալու պատճառով ճարահատ պիտի կրկին գաղթեն
եւ այս անգամն աւելի յուսահատ, որ սահմանադրու-
թեան օրին իսկ հայը գրկուած եւ հալածուած է: Մայ-
րայեղ յուսահատութիւնից սպասուում են բարդութիւն-
ներ, որոնք գուցէ ազգային թշնամութիւնների բռնկ-
ման պատճառ դառնան: Եւ այս անգամին գուցէ դժ-
ւարանանք կարգը պահպանել: Ահա ձեր գոված նոր
կառավարութեան խաղաղ եւ արդարամիտ գործու-
նէութիւնը: Այն գիւղերը որոնց մասին որոշումներ ե-
ղան թէ անիրաւութեամբ եկուոր քիւրտերը պիտի թող-
նեն, օգտուելով առիթից կրկին մնում եւ նոյնիսկ վե-
րադառնում են հայերի հողերի վրայ, բռնի ոյժով, ո-
րովհետեւ իրենք գինուած են, որովհետեւ կառավարու-
թիւնը իրենց կողմն է:

Ահա այս պայմաններում անկարելի է համերաշխու-
թեան գաղափարին գոհել իրաւագուրկ գիւղացիներին:

Պատրիարքարանի հաշուին որքան ժամանակ եղաւ ինչ
խնդիրներ եւ պահանջներ արինք: Ատանան՝ Տարօնը
մոռացնելու չէ՛:

Բժիշկ խնդրեցինք եւ ահա կապոյտ հագի, տիֆի եւ
յայտնի ու անյայտ հիւանդութիւնների մի համաճարակ
է սկսել որ անխնայ գլորում է: Շուրջ 20 օրէ ինչ եղա-
նակները անսպասելի եւ անժամանակ կերպով փոխուե-
ցին: Անձրեւ եւ կարկուտ: Կալերը մեծամասամբ մնա-
ցին երեսի վրայ. թշուառ ժողովուրդը հագիւ էր ցորենի
երես տեսել, հագիւ արիւն քրտինքով ցորենը կալը բե-
րաւ եւ ահա նախանձոտ երկինք նոր պատուհաս բերաւ.
օրեր կ'անցնին եւ կանոնաւոր կերպով ցերեկները արե-
ւի երես չենք տեսած. ցորենները կալերի մէջ կը ծլին ու
կը փտին, կորեկները եւ գլգլները փչացան. վրայ եկաւ
կարկուտը եւ մի քանի գիւղերում բոլորովին փչացրեց
թուփոնները, կորեկները եւ բրինձները, իսկ այդ գիւ-
ղերում գիւղացիների միակ բերքը եւ հարստութիւնը
թուփոնն է, որ պիտի հասցնէր, քաղէր վաճառէր եւ
հաց ու պաշարեղէն պիտի գնէր, բայց ահա գրկուեց
այդ ամէնից եւ յուսակտուր, ձեռը ծոցին իւր սեւ
բախտն անիծելով կուսակցութեան դուռը դիմեց որ
դժուար թէ բացուի աշխատաւորների առաջ:

1500 ոսկի, բաւականին գոհացուցիչ մի գումարի
հանգանակութեան ձեռնարկեցինք. գիւղացի, դաշտեցի

ժողովուրդը ուրախ իր բերքերի առատութիւնից սիրով
ընդունեց կրթական այդ բիւտլէն:

Տարօրինակ է: Հացի սով կար, օգնեցիք. այժմս մըտ-
քի, հոգու սով է. մէկը չուզեց պատմական Տարօնի ու-
ղիդ 100 հայ գիւղ ունեցող Դաշտին կրթական մի օգնու-
թիւն անել, չեղան մի քանի գաղափարական երիտա-
սարդ վարժապետներ եւ վարժուհիներ որ ինքզինքնին
տրամադրէին Տարօնի կրթական գործին: Ապա Սասու-
նի.- այդ մտքով, երգով փառաբանուած, հեռուից պաշ-
տուած ազատաբեր Սասունը վէրան եւ անօթի. տակա-
ւին մի հատիկ դպրոց իսկ չունեցաւ: Ահա քու վարձքը
ազատութեան 20ամեայ գոհ եղած Սասուն:

Մամուլը գաղթականութեան տէր է. բայց հայրենի
կեանքից կտրուած մամուլը մինչեւ օրս չուզեց, անգի-
տացաւ եւ թերացաւ մի քանի ուսումնասիրողներ, թղթ-
թակիցներ դրկել Երկիրը ուսումնասիրելու, իրականու-
թեանը ծանօթանալու: Գաղթականութիւնը անմտու-
թիւն կը համարէք, բայց գուրումի օրով փախստական,
պանդուխտ ընկածները խաբուեցին եկան իրենց վաթա-
նը իրենց աւերակների վրայ, եւ ահա քիւրտը, մուհաջի-
րը, կառավարութիւնը նրան իւր սեփական տան շէմքից
իսկ կոխել արգիլելով՝ հեռուն, անբնակ վայրերն է ցոյց
տալիս: Չմոռանալով ի հարկէ յետամնաց տուրքերը,
չվարած, չցանած հողերի վճարները, քիւրտ, թուրք,
մուհաջիր գուրումքարի ձեռքը ընկած, խլած հողերի,
որի արդիւնքը — բերքը հարստահարիչներ կ'ուտեն կա-
ռավարութեան քթի առաջ: Իսկ կառավարութիւնը նո-
ցա չի տեսնում այլ նպաստից օգնութեամբ վերադար-
ձող հայ հալածուածները:

Տեղիս իթիթիհատը մինչեւ օրս չպատասխանեց մեր
դիմումներին, «խառն մարմիններ» կազմելու համար:
Եւ եթէ պատասխանէր իսկ մի եզրակացութեան չպիտի
գայինք որովհետեւ նրա կազմից հեռացել են եղած ա-
զատականները, գինուորականները եւ մնացել են միայն
մութ ոյժերը. չնչին բացառութիւն կազմի մէջ մնացող
լաւ ոյժերն էլ ինքզինքնին անկարող ցոյց կը տան մի

քայլ անելու. բաւականին թուով նորանոր դիմումներ
են լինում մեզ թուրք դաշնակցական խմբեր կազմա-
կերպելու:

Հաճի բէյից լուր չունինք, թերթերի լուրեր ունենք
միայն: Ձեր համերաշխութեան կանոնագիր ծրագիրը
չունենք:

Թուրքերէն յեղափ. գրականութիւնը թերթերից,
ծրագիրներից, թուրքիկներից խնդրեցէք: Այս պայման-
ներում Ազդակի եւ Ազատամարտի բաժանորդագները
փակելու խնդիրը մի քիչ կ'ուշանայ: Ը. ժողովից, Սա-
րուստանից, Պարսկաստանից, ընդհ. յեղափոխական
կեանքից տեղեկութիւններ գրեցէք:

«Դորջակ» ինչո՞ւ չենք ստանում. ինչպէ՞ս է որ Բա-
ղէշ կը գայ, Մուշ՝ ոչ: Նոյնպէս եւ «Հորիգոնը». նոցա
քանի քանի նամակներ գրեցինք բայց... Նոր հրատարա-
կութիւններ չկա՞ն: Գիրքեր, թերթեր, բրոշիւրներ դը-
կեցէք. թող վարժուին, ծանօթանան գրի, գրականու-
թեան:

Դպրոցական գործի համար առաջներ խոստումներ
եղան բայց ո՞ւր մնացին ձեր միջոցով բացուելիք 15
դպրոցները: Իզմիրցիները ինչքա՞ն եւ ի՞նչ նպատակով
են խոստումներ արել: Ներսէս վ[արդապետ]ին կրթա-
կան ինչքա՞ն նուէրներ են եղած. նա ասում է որ Դաշտի
մասին ոչինչ կայ. եղածը Ս. Կարապետի համար է: Ս.
Կարապետի դիրքը, կլիման, մանրամասնութիւնները
որքա՞ն նպատակայարմար են այնտեղ վարժապետանոց
կամ միջնակարգ դպրոց բաց անելու. Ռոստոմը, Մու-
րատը ծանօթ են նահատակ ընկերների ընտանիքներին,
որբերին. գինուոր ընկերներին օգնելու մասին ի՞նչ կը
մտածէք: Ջօրեղ ռէակցիայի, մեծ անտեղութիւնների
խնդիր էլ կայ այդ բարոյական ջակցութեան հետ
կապուած: Լուրջ մտածեցէք:

Ընկերական բարեկենդրով՝
ԳԱՐՍԷՆ

Ձ Սեպտ. 09 թ.
Տարօն

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ՉԼՈՒԽ VIII

ԲԱՐՉՐԱԲԵՐԳ – ԿԱՐԻՆ

Բարձրբերդ կամ Բարձրաբերդ կուսակցական ծածկանունն է Էրզրում-Կարին շրջանին, որուն թղթա-ծրարը կը բովանդակէ հետեւեալ նիւթերը.---

1.- «Երկրի Արեւելեան շրջանի մարմինների ուսուցանական ժողովի որոշումները» (13 Հոկտեմբեր 1908): Խորագիրը թիրիմացութեան տեղի պէտք չէ տայ: Այս մէկը տարբեր է ուսուցանական այն ժողովներէն, որոնք, ինչպէս ծանօթ է, սովորութեան կարգ մտած էին Արեւելեան Բիւրոյի իրաւասութեան տակ գտնուող շրջաններուն համար եւ կը գումարուէին կուսակցութեան Ընդհ. Ժողովներու միջեւ ինկող ժամանակաշրջանին, պարբերաբար, երբեմն քանի մը անգամ նոյն տարուան ընթացքին: Կարին կայացած Ռայոնական այս ժողովը յատուկ է բացառաբար Մեծ Հայքի, այսինքն բուն Երկրի կազմակերպական շրջաններուն: Հրապարակուած են միայն գործադիր մարմիններուն ներկայացուցիչները եւ գործիչ ընկերներ, անուններ չեն յիշատակուած:

Ժողովին նպատակն էր՝ Մահմանադրութեան հռչակման հետեւանքով, երբ դադրեցուած էր մօտիկ անցեալի յեղափոխական-մարտական ընդլայնակէայ գործունէութիւնը, օրինական ձեւ տալ կուսակցութեան աշխատանքներուն եւ այդ իմաստով համապատասխան որոշումները կայացնել:

Արձանագրութեան մէջ ծածկանունով յիշատակուած տեղանունները կը համապատասխանեն հետեւեալ վայրերուն.

- Շամ – Վան-Վասպուրական
- Լեռնապար – Վասպուրականի հարաւի լեռնային գօտին (Ռշտունիք, Շատախ, Մոկս)
- Բարչրաբերդ – Կարին-Էրզրում
- Ծովափ – Տրապիզոն
- Խորչոր – Քղի
- Բիւրակն – Խնուս
- Սալնոյ չոր – Բաղէշ-Պիթլիս եւ Խլաք
- Լիս – Կ. Պոլիս
- Հանքեր – արդեօ՞ք Արդանա-Մատենն է, Տիարպէթիի շրջանին մէջ:

2.- «Դերջանի գաւառէն տեղեկագիր», ազգագրական եւ տեղեկագրական բնոյթի գրութիւն Դերջան գաւառի մասին: Հեղինակը՝ Մեղրիկեան Տիգրան:

3.- Արեւելեան Բիւրոյի ներկայացուցիչ Միւրեանէն (Օհանջանեան Համօ) երկու նամակներ ուղղուած գործիչ Հրաչեայ Մարալի (Փիլոս) եւ Կարնոյ Կեդր. Կոմիտէին, գործիչներու ուղարկման մասին:

4.- Գիսակի (Վարդգէս, Սերենկիկեան Յովհ.) նամակները Արեւմտ. Բիւրոյին եւ Պոլսոյ Պատ մարմինին:

Փաստ. 1594-1

1.- ԵՐԿՐԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

(13 Հոկտեմբեր 1908)

Որոշուեցաւ Ռայոնական ժողովի զբաղումները բաժնել երկու մասի. ա) Բուն կազմակերպական, գաղտնի, դաւադրական խնդիրներ, որոնց կը մասնակցեն միայն Բիւրոյների, Կենտ. Կոմիտէների ներկայացուցիչները եւ աչքի ընկնող գործիչ ընկերներ

բ) Կազմակերպական ընդհանուր խնդիրներ, որոնց կը մասնակցեն խորհրդակցական ձայնով բոլոր հրաւիրուած ընկերները:

Արեւելեան Բիւրոյի, Կենտ. Կոմիտէների ներկայացուցիչների եւ գործիչ ընկերներ, որոնք մասնակցում են

Ռայոնական ժողովին ձայնի իրաւունքով:

- 1) Արեւելեան Բիւրոյից -----
- 2) Լեռնապարի Կ. Կ.ի կողմից -----
- 3) Շամի Կ. Կ.ի կողմից -----
- 4) Բարձրբերդի Կ. Կ.ի կողմից -----
- 5) Ծովափի Կոմիտէի կողմից -----
- 6) Գործիչ ընկեր -----
- 7) Գործիչ ընկեր -----

Հրաւիրուած ընկերներ, որոնք ժողովին մասնակցում են խորհրդակցական ձայնով՝

- 1) Սալնոյ Չորից -----

- 2) Բիւրակնից -----
- 3) Բագրեւանդից -----
- 4) Խորձորից -----
- 5) Բարձրբերդի «Որսորդ» ենթակոմիտէից -----
- 6) Հանքերից -----
- 7) Բարձրբերդի քաղաքային կոմիտէից -----

Օրակառօղի խնդիրներ

- 1) Մարմինների գեկուցումներ
- 2) Քաղաքական եւ տնտեսական կռիւ,
- 3) Դաշնակցութեան գործունէութիւնը զուտ ազգային թէ՛ համապետական
- 4) Մեր վերաբերմունքը դէպի «Իթթիհատը» եւ այլ քաղաքական կուսակցութիւններ:
- 5) Մեր տաքտիկը հայկական, թուրքական եւ քրտական եւ այլ վայրերում:
- 6) Կազմակերպական. — ա) Արհեստակցական. բ) Գիւղացիական միութիւններ. գ) Քաղաքական եւ մարտական խմբեր:
- 7) Պրոպագանդա. — ա) Բանաւոր. բ) Գրաւոր (թերթ, թուղթիկ, բրոշիւր):
- 8) Զինում. — ա) Յեղափոխական ընկերների. բ) Զէ-զոք տարրերի:
- 9) Կազմակերպական բիւռօ՛ք:
- 10) Մեր վերաբերմունքը գաղթականների բռնի գրաւուած հողերի վերաբերմամբ. ա) Մեր վերաբերմունքը [դէպի] այդ հողերի վրայ բնակող բէգերը եւ բ) Աշխատաւոր քրտները:
- 11) Դաշնակցութեան վերաբերմունքը դէպի դարոցական, վանական եւ այլ հասարակական խնդիրներ:
- 12) Կովկասեան գործունէութիւն:
- 13) Պարսկական յեղափոխութիւն:
- 14) Դիպլոմատիա:
- 15) Դաշնակցութեան Խորհուրդը եւ ընդհանուր ժողովը:
- 16) Պարբերաբար երկրի Ռայոնական ժողովներ:
- 17) Երկրի ուսումնասիրութիւն:
- 18) Տեւորներ:
- 19) Կարէն Սուրէնի գործը:
- 20) Դատական խնդիր:
- 21) Դաշնակցական պլատֆորմը — երեսփոխանական ժողով:
- 22) Կազմակերպական ներքին կանոնադր:
- 23) Նուէրներ յեղափոխական ընկերներին:
- 24) Բիւրակնի խնդիր:
- 25) Ծովափի կոմիտէի կնիք ուզելու խնդիրը:

1) Մարմինների գեկուցումներ. — Ընկերների տուած գեկուցումներից պարզուեց, որ բոլոր յեղափոխական վայրերում կազմակերպութիւնը բաւարար վիճակի մէջ է գտնուած, սակայն նկատի ունենալով, որ ընթացիկ

հրատապ պահանջներին բաւարարութիւն տալու համար մեր ոյժերը քիչ են, որոշուեց զօրացնել մարմինները, նոր ընկերներ հրաւիրելով արտասահմանից եւ Լիւսից:

2) Քաղաքական եւ տնտեսական կռիւ. — Նկատելով որ աշխատաւոր ժողովրդի քաղաքական եւ տնտեսական շահերը սերտ կերպով շողկապուած են միմեանց եւ առանց մէկի միւսը կարող է վնասուել. նկատելով որ երկրի տնտեսական խնդիրներն հասունացել են եւ քաղաքական նոր կարգերը միայն ա՛յն ժամանակ կարելի է ապահովուած համարել, երբ նա կը դառնայ աշխատաւոր մեծամասնութեան պահանջ եւ սեփականութիւն. նկատելով որ աշխատաւոր տարրի դասակարգային գիտակցութեանը զարկ տուած լինելով ապահովեցրած կը լինենք ապագայում նրանց տնտեսական շահերը, եւ այդպիսով անտագոնիզմ՝ առաջացնելով աշխատաւորների, կեղեքողների ու տիրապետողների միջեւ, աշխատաւորութիւնը ու՛շակցիայի ծանր օրերում կ'անցնի յեղափոխական կուսակցութիւնների կողմը, պաշտպանելու համար նոր քաղաքական ազատարար կարգերը: Ի նկատի ունենալով այդ եւ մի քանի կարեւոր հանգամանքներ, Ռայոնական ժողովն որոշեց, որ Դաշնակցութիւնը Տաճկաստանում քաղաքական կռուի հետ զուգընթացաբար պիտի տանի նաեւ տնտեսական կռուի գործը, ղեկավարուելով ընդհանուր աշխատաւորական աշխարհահայեացքով. այսինքն հայ աշխատաւորութեան հետ միասին, կազմակերպել եւ ղեկավարել նաեւ դրացի ժողովրդի աշխատաւորութիւնը, երկրի հասունացած տնտեսական պահանջներին բաւարարութիւն տալու համար:

3) Դաշնակցութեան գործունէութիւնը զուտ ազգային թէ՛ համապետական. — Նկատելով որ Դաշնակցութիւնը իր գործունէութեան ընթացքում, հակառակ իր ծրագրի իսկական ոգուն, Տաճկաստանում այլ եւ այլ պատճառներով գործել է ընդհանրապէս զուտ ազգայնական-քաղաքական տեսակէտով ու տաքտիկով, նկատելով որ մեր հարեւան ժողովուրդների մէջ եւս կայ պարարտ հող մեր բուն ծրագրի ոգուն համապատասխան գործունէութեան, եւ նկատելով որ այս տեսակի գործունէութիւնը զուտ ազգայնական հարցերի լուծման չվնասելուց զատ, ընդհակառակն, աւելի պիտի նպաստէ նրա լուծման, Ռայոնական ժողովն որոշեց, որ այսուհետեւ՝ պէտք է գործել նաեւ թուրքիոյ աշխատաւոր ժողովուրդների մէջ, տարածելով մեր սկզբունքներն ու աշխարհահայեացքը եւ կազմակերպելով նրանց, աւելի ուժեղ յեղափոխական մասսա պատրաստել, բռնակալութիւնը տապալելու եւ մեր նպատակներն հետապնդելու համար:

4) Մեր վերաբերմունքը դէպի «Իթթիհատը» եւ այլ քաղաքական կուսակցութիւնները. — Երկրի ներկայ կացութիւնը հրամայող է թելադրում է, որ բարենորո-

1.- Յակամարտութիւն:

գումները յառաջ տարուեն եւ ստեղծուեն այն տարրական քաղաքական եւ քաղաքացիական ազատութիւնները, առանց որոնց դժուար է ուժեղ կերպով հետապնդել մեր քաղաքական եւ տնտեսական խոչալններին: Նկատի ունենալով, որ Տաճկաստանում կան նաեւ քաղաքական այլ կուսակցութիւններ, որոնք նեղ կամ լայն չափով նոյն նպատակին են ձգտում, Ռ. Ժ.՝ նախ նկատի առաւ «Իթթիհատ վէ թէրագզը ճէմիյեթի» նկատմամբ իւր բռնելիք ընթացքը եւ եկաւ այն եզրակացութեան թէ «Իթթիհատը» շատ բազմազան տարրերից կազմուած եւ այլազան սկզբունքներ դաւանող քաղաքական կուսակցութիւն է, որն իրեն համար ունի չափաւոր յեղափոխական ծրագիր եւ այդ՝ Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրին չհակասելուց զատ, նրա նուազագոյն պահանջները իրականացման նպատակով է: Այդ նկատելով է, որ ներկայ մոմենտում անհրաժեշտ է համերաշխ գործակցութիւնը յեղափոխական այլ մարմինների հետ, այնչափ սուղ գնուած ազատութիւնը պահպանելու եւ նրանով էլ որոշ բարենորոգումների ծրագիրը գործադրելու: Նկատելով որ մեր եւ նրանց չփոխու ու գործակցութիւնը շատ բարեբար ազդեցութիւն կարող է ունենալ թէ՛ անհատների եւ թէ՛ ժողովրդի վրայ, որ այդ գործակցութեամբ կարող ենք մեր գաղափարները տարածել նրանց մէջ եւ յառաջ բերել նրանց շարքերում գուտ յեղափոխական գետնի վրայ գործող ընկերներ, Ռ. Ժ.՝ որոշեց. ա) Առանց կորցնելու մեր ինքնուրույնութիւնն ու անկախութիւնը, նրանց հետ համերաշխաբար գործել, բ) Աւելի սերտ յարաբերութիւն թուրք գուտ յեղափոխական տարրերի մասնաւորապէս Սաբահէդդինի կուսակցութեան հետ, որ ընդունում է մեր քաղաքական ծրագիրը, եւ ջանալ գէթ մօտիկ ապագայում ունենալ թուրք գաղափարակից յեղափոխական կուսակցութիւններ:

5) Մեր տակտիկը հայկական, թուրքական, քրտական եւ այլ վայրերում.— Տաճկաստանի քաղաքական հանգամանքների փոփոխմամբ. անհրաժեշտ է որոշ փոփոխութիւններ մտցնել նաեւ Դաշնակցութեան գործելակերպի մէջ թուրքիայում. ա) Հայկական շրջաններում, նկատելով որ միայն չլիք պրոպագանդիստներով անկարելի է աշխատաւոր մասսաների մէջ յեղափոխական գիտակցութիւն գարթեցնել, որոշուեց զանազան վայրերում ուսուցիչ եւ այլ անուան տակ տեղաւորել գիտակից եւ յեղափոխական տեմպերամենտի՝ տէր ընկերներ, որպէսզի տեւական եւ սիստեմատիկ պրոպագանդով հնարաւոր լինի ցանկալի արդիւնքի հասնել: Կենտրոնական վայրերում առանձին ուշադրութիւն պէտք է դարձնել ինտելիգենտ երիտասարդութեան վրայ ջանալով բարձրացնել նրանց յեղափոխական մտաւոր մակարդակը:

Խմբերի մշտական գինուած ձեւն ու շրջագայութիւնը, ջնայած իր տուած օգուտներին, աւելի վնասակար մի երեւոյթ է եղել, միշտ կապուած լինելով ընդհարումների եւ ժողովրդական վնասների հետ, որոշ-

ւեցաւ որ այս այսուհետեւ մի անգամ ընդ միշտ վերջացած պէտք է համարել այդ նոյն մշտական գինուած խմբերի գոյութիւնն ու շրջագայութիւնը եւ դրա փոխարէն կազմակերպել կամաւորների խմբեր պէտք եղած ժամանակին շարժման մէջ դնելու նպատակով: Իսկ յեղափոխական ակտիւ քայլեր կատարելու անհրաժեշտութեան պարագային, պէտք է մտածել տակտիկական յարմար ու նպաստաւոր ձեւեր եւ առհասարակ պէտք է խոյս տալ ցուցամուլական բնոյթ ունեցող երեւոյթներից եւ ամէն կերպ աշխատել թէ՛ մարտական խմբերը եւ թէ՛ կազմերը որքան կարելի է գաղտնի պահել միայն շատ քիչ անձնաւորութիւններ հրապարակ հանելով:

II) Թրքական շրջաններում պէտք է աշխատել ինտելիգենտ տարրերի հետ որքան կարելի է աւելի սերտ յարաբերութիւններ մշակել: մտցնել նրանց մէջ խմբական կազմակերպութեան սիստեմ եւ նրանց միջոցով ազդել նաեւ նրանց մասսայի վրայ: կազմել նրանց հետ խառն կոնֆերանսներ եւ զարկ տալ նրանց հայրենասիրական վերագործումին, չդիպչելով առհասարակ նրանց կրօնական գզացումներին:

III) Քրտական շրջաններում պէտք է մի անգամ ընդմիջտ ձեռ քաշել քիւրտ աղաների հետ սերտ յարաբերութիւն մշակելուց եւ նրանց հետ ապստամբական ձեռնարկային միութիւններ կազմելուց, որովհետեւ քիւրտ աղայութիւնը ինքնուրույն քեան իւր շահերով ու դիրքով տրամագծօրէն հակառակ է յեղափոխութեան: միայն կարելի է վաճառականական յարաբերութեամբ շահագործել նրանց բարեկամութիւնը դէպի մեզ ի նպաստ զանազան փոխադրութիւնների: Իսկ դրա հակառակը քիւրտ աշխատաւոր ժողովրդի հետ պէտք է աշխատել մօտենալ ամէն կերպ եւ նրանց ընդունել իբրեւ բազա մեր յեղափոխական գործունէութեան՝ կազմակերպելով նրանց եւ ներշնչելով գիտակցութիւն իրենց դասակարգային շահերի:

6) Կազմակերպական.— ա) Գիւղացիական. բ) Արհեստակցական միութիւններ. գ) Քաղաքական եւ մարտական խմբեր.— Հ. Յ. Դաշնակցութիւնը բաղկանում է արհեստակցական, գիւղացիական միութիւններից ու քաղաքական եւ մարտական խմբերից:

Արհեստակցական ու գիւղացիական միութիւններին մասնակցում են այն արհեստաւորներն ու գիւղացիք, որոնք ընդունելով Դաշնակցութեան ծրագիրն իւր ամբողջութեամբ, Դաշնակցութեան ղեկավարութեան տակ կազմակերպուած են իրենց ուրոյն տնտեսական շահերը պաշտպանելու համար:

Քաղաքական խմբերին մասնակցում են այն անհատները, որոնք ընդունելով Դաշնակցութեան ծրագիրը եւ դաւանելով նրա քաղաքական դաւանանքով, նիւթապէս ու բարոյապէս աջակցում են կուսակցութեան գործունէութեանը:

2.- Խառնուածքի:

Մարտական խմբերի անդամներն ընտրուած են վերոյիշեալ երեք խմբերից, ղեկավարուելով անհատական ընդունակութիւններով, որոնց անդամները պիտի լինեն պատրաստ յեղափոխական անձնագրութեան:

Ծանօթութիւն.— Ուել է դաշնակցական անհատ ազատ է միեւնոյն ժամանակ մասնակցելու թէ՛ քաղաքական խմբերի եւ թէ՛ արհեստակցական կամ գիւղացիական միութիւններին, եթէ կարող է բաւարարութիւն տալ երկուսի էլ դրամական պահանջներին:

7) Պրոպագանդա.— ա) Բանաւոր. բ) Գրաւոր (թերթ, թուղիկ, բրոշուր).— Նկատելով որ Դաշնակցութիւնն իւր նախկին գործունէութեան ընթացքում շատ քիչ ոյթ է տուել գրաւոր պրոպագանդային, որն իսկապէս հիմն է կազմում բանաւորին եւ այսպիսով երկիրը զուրկ է մնացել յեղափոխական ինտելիգենտ տարրերից եւ ուղիղ գրականութիւնից, Ռայոնական ժողովն որոշեց ամէն կերպ ջանալ գարգացնել գրաւոր պրոպագանդը հետեւեալ միջոցներով:

ա) Երկու թերթեր հրատարակել. մէկը Պոլսում, միւսը Կարինում:

բ) Աշխատել հայ եւ թուրք լեզուով յեղափոխական մի թերթ հրատարակել Պոլսում եւ մինչ այդ յանձնարարել իւրաքանչիւր Կենտ. Կոմիտէի միանալ թուրք յեղափոխականների հետ փոքր հրատարակութիւններ անելու:

գ) Ամէն կերպ ջանալ հայերէն, թուրքերէն եւ այլ տեղական լեզուներով բրոշուրների հրատարակման եւ տարածման, որոնք կապ ունեն յեղափոխական մտքերի, երկրի կուլտուրական վիճակի, հողային դրութեան եւ այլ խնդիրների հետ:

դ) Հետամուտ լինել թուրք թերթերում հրատարակուած հայերի նկատմամբ սխալ գաղափարներին եւ աշխատել հերքել դրանք զանազան առանձին հրատարակութիւններով կամ նոյն թերթերի մէջ գրելով:

8) Չինումն.— ա) Ցեղափոխական ընկերների եւ ք) Չէզոք տարրերի:

Ի նկատի ունենալով, որ Տաճկաստանում եւ մասնաւորապէս մեզ՝ տաճկահայերիս համար գէնքի ոյթը համարուած է գոյութեան մի խնդիր, թէ՛ ներկայ սահմանադրական ռեֆիմը պահպանելու եւ թէ՛ դիմագրաւելու բոլոր գալիք անակնկալներին. նկատի ունենալով որ այս նպատակաւ եղած ժողովրդական գինումը բացարձակապէս ի նպաստ ժողովրդի ազատագրման է, որով եւ գինման բոլոր միջոցները պէտք է հայթայթուին նոյն ժողովրդից, նկատի ունենալով եւ այն տխուր երեւոյթը, որ անցեալում հայ ժողովուրդը ցոյց է տուել կազմակերպական միջոցներով իրեն հայթայթուած գէնքերի վերաբերմամբ՝ մեծագոյն մասը տալով ժողովրդի հակառակորդներին եւ կամ ծախելով ամենաչնչին գնեւորով. նկատելով որ կազմակերպութեան ցոյց տուած աջակցութիւնն ինքնապաշտպանութեան խնդրի վերաբերմամբ, փոխանակ քաջալերելու մեր ժողովրդին, աւելի եւս անբարոյականացրել է, մեռցնելով ժողովրդի

մէջ նախաձեռնութեան ոգին, մանաւանդ ինքնապաշտպանութեան խնդրի վերաբերմամբ,— Ռայոնական ժողովն որոշեց.

ա) Պարտաւորեցնել բոլոր մարմիններին ակտիւ պրոպագանդ մղել իւր շրջանի հասարակութեան մէջ գարգացնելով նրանց միտքը հաւաքական գործակցութեան, որը խոշոր չափով պիտի նպաստէ ինքնապաշտպանութեան գործին մեզանում:

բ) Մի անգամ ընդմիջտ յայտարարել հասարակութեան՝ երեք եւ ոչ մի տեղ կազմակերպական միջոցներով գէնք չի հայթայթուում յատկապէս ինքնապաշտպանութեան համար. այսպիսով վերացնել այն ակնկալութեան ցաւալի երեւոյթը, որը համարեա անխտիր տաճում են կազմակերպութեան վրայ բոլոր գաւառները, գ) պարտաւորեցնել Դաշնակցութեան բոլոր մարմիններին դիւրութիւններ տալու ամէն տեղ ինքնապաշտպանութեան համար ժողովրդական ֆոնդեր կազմելու եւ նրանց բարոյական լայն աջակցութիւն ցոյց տալու իրենց նպատակների գարգացման համար:

9) Կազմակերպական բիւրօէ.— Մինչեւ այժմ Տաճկաստանում յեղափոխական գործերը վարելու համար պէտք եղած դրամը մեծ մասամբ հայթայթում էին արտասահմանի դաշնակցական մարմինները, եւ որովհետեւ մի ժողովրդի ազատագրման գործը այն ժամանակ միայն հաստատուն կարելի է համարել, երբ բուն ժողովուրդն ինքն է գոհաբերում իւր ազատագրութեան համար, եւ քանի որ Տաճկաստանի ներկայ քաղաքական աւելի ազատ պայմաններում հնարաւոր է զանազան օրինաւոր միջոցներով դրամ հայթայթել, Ռայոնական ժողովն որոշեց, որ այսուհետեւ ժամանակն է, որ երկիրն ունենայ իւր տեղական բիւրօէն: Ուստի հրահանգում է բոլոր մարմիններին աշխատել օրինաւոր միջոցներով այնքան ուժեղացնել կազմակերպական բիւրօէն, որ տեղական կարիքներին բաւարարութիւն տալուց զատ մասնակցեն նաեւ կազմակերպական ընդհանուր բիւրօէին, ըստ կանոնագրի:

10) Մեր վերաբերմունքը գաղթականների բունի գրաւուած հողերի վերաբերմամբ. ա) Մեր վերաբերմունքը [դէպի] այդ հողերի վրայ բնակուող բէգերը եւ ք) աշխատաւոր քրդերը.— Ի նկատի ունենալով որ վերջին տարիներում, մանաւանդ 94-ի կոտորածներից սկսած, զանազան միջոցներով սիստեմատիկաբար հայերի հողերը մեծ քանակութեամբ անցել են թուրքերի, քիւրտների կամ մուհաճիւրների ձեռքը, եւ որովհետեւ ներկայումս առհասարակ անխտիր այդ բոլոր հողերի ետ պահանջելն աւելի կարող է բարդացնել խնդիրը, Ռայոնական ժողովն որոշեց՝ ա) Պահանջել այն հողերը, որ բունի կոպիտ ոյթով գրաւել են քիւրտ աղաները՝ հալածելով եւ դուրս քշելով հողի տէր հայերին: բ) Այն հողերը որ կառավարութիւնը գրաւել է հայերից եւ մուհաճիւրներին բնակեցրել. պէտք է ետ պահանջել որ այդ հողերի վրայ բնակուող զանազան ցեղի աշխատաւոր տարրերին կառավարութիւնն իր միջոցներով բաւարարու-

թիւն տայ, հայթայթելով նրանց հողերի վրայ արած ծախսերը եւ նոր հողեր՝ վերաբնակելու համար:

11) **Դաշնակցութեան վերաբերմունքը դէպի դպրոցական եւ այլ հասարակական խնդիրներ.**— Նկատի ունենալով որ Դաշնակցութեան մասնակցութիւնը դպրոցական, վանական եւ այլ կուլտուրական ազգային գործերում չափազանց կերպով պիտի թուլացնէ կուսակցութեան յեղափոխական գործունէութիւնը, եւ ի նկատի առնելով մեր ոյժերի քանակը այդպիսի մի ընդարձակ գործի համար, Ռայոնական ժողովն որոշեց չմասնակցել ազգային կուլտուրական գործերին իբրեւ կուսակցութիւն, բայց ի նկատի առնելով կրթական գործի չափազանց կարեւոր նշանակութիւնը, Ռայոնական ժողովն յանձնարարում է բոլոր դաշնակցական ընկերներին անհատապէս մասնակցութիւն ունենալ այդ գործերում, աշխատելով ազգային-կուլտուրական բոլոր գործերը տանել ամենալայն դեմոկրատիկական ուղղութեամբ:

12) **Կովկասեան գործունէութիւն.**— Ռայոնական ժողովը լսելով -----ի բացատրութիւնները կովկասեան գործունէութեան մասին, եկաւ այն եզրակացութեան, որ Կովկասի դաշնակցական մարմինների թուլութեան գլխաւոր պատճառներից մէկն էլ լինելով չափազանց սեկտարական³ կիրառումը մեր ծրագրի, որով կազմակերպութեան շարքերը լցուեցին ոչ յեղափոխական տարրերով, Ռայոնական ժողովը Կովկասի ընկերների լուրջ ուշադրութիւնն է հրահրում այդ հարցի վրայ, եւ առաջարկում է օր առաջ սրբագրել այդ պակասը, ձեռնարկելով դաշնակցական ուժեղ քաղաքական խմբերի վերակազմութեան, եւ համերաշխ գործակցութեամբ միւս ընդդիմադիր տարրերի հետ՝ առաջ տանել ընդհանուր քաղաքական-ազատագրական կռիւր:

13) **Պարսկական յեղափոխութիւն.**— Ռայոնական ժողովը ծանօթանալով Արեւելեան Բիւրոյի արած կարգադրութեանց մասին, պարսկական յեղափոխական շարժման օգնելու նպատակաւ, յայտնում է իր համաձայնութիւնը եւ գտնում է, որ Դաշնակցութիւնը պէտք է ամէն կերպ աջակցի պարսկական վերածնութեան գործին:

14) **Դիպլոմատիա.**— Նկատելով որ Դաշնակցութեան ակնկալութիւնը եւրոպական դիպլոմատիայից հայկական խնդրի լուծման վերաբերմամբ, որքան էլ որ արդիւնք են եղել տաճկական հիւանդոտ ռեժիմի արտա-յայտութեան, այնուամենայնիւ նա չէ տուել ոչ մի շօշափելի դրական արդիւնք. նկատելով նաեւ, որ ներկայ քաղաքական պայմաններում Հնարաւորութեան շանսեր կան Տաճկաստանում, համօսմանեան գործակցութեամբ վերածնման շէմքին կանգնեցնելու օսմանեան երկիրը, որի անմիջական մի մասն է կազմում նաեւ դիպլոմատիայի Յ1րդ յօդուածով նախատեսած հայկական վեց վիլայէթները, նկատելով նաեւ, որ Դաշնակցութիւնը որպէս յեղափոխական սոցիալիստական մի կուսակցութիւն ներկայումս կանգնած է համապետա-

կան յեղափոխական տեսակէտի վրայ, Ռայոնական ժողովը գտնում է, որ հասել է ժամանակը, որ Դաշնակցութիւնը բացարձակապէս կանգնելով համապետական յեղափոխական հողի վրայ, մի անգամ ընդ միշտ ձեռք քաշէր եւրոպական դիպլոմատիայի միջամտութիւնից հայկական խնդրի վերաբերմամբ:

15) **Դաշնակցութեան Խորհուրդը եւ Ընդհանուր ժողովը.**— Ի նկատի ունենալով դաշնակցական մարմինների քաղաքական պատճառներով թուլացած դրութիւնը, Ռայոնական ժողովն որոշեց դիմել Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոներին շտապեցնելու համար Դաշնակցութեան Խորհուրդի գումարումը Լիսում եւ նրանից անմիջապէս յետոյ Ընդհանուր ժողովը նոյն տեղում: Ընդհանուր ժողովի կազմի հարցում չզեկավարուել ցննզով, այլ որչափ կարելի է շատ թուով հրահրել թէ՛ գործիչ ընկերներ եւ թէ՛ այնպիսի մարմինների ներկայացուցիչներ, որտեղ անցեալում եղել է յեղափոխական ակտիւ գործունէութիւն, եւ նմանապէս նրանց, որոնք մօտ ապագայում պիտի համապատասխանեն դրամական եւ կազմակերպական ցննզին:

16) **Պարբերաբար Երկրի Ռայոնական ժողովներ.**— Միաձայն որոշուեցաւ, որ ամէն տարի պարբերաբար Սեպտեմբերին գումարուի ամբողջ Տաճկաստանի Ռայոնական ժողով, որի օրակարգը նախօրոք կը մշակէ Տաճկաստանի Պատասխանատու մարմինը եւ հրահրուի կ'ուղարկէ երկրի բոլոր մարմիններին, իսկ պատասխանատու մարմին չեղած դէպքում, այդ պարտականութիւնը կը ստանձնեն իրարու մօտ երկու հարեան Կենտ. Կոմիտէներ:

17) **Երկրի ուսումնասիրութիւն.**— Երկրի ուսումնասիրութեան հարցը քննելիս Ռայոնական ժողովն եկաւ հետեւեալ եզրակացութեանը:

ա) Ի նկատի առնելով որ երկրի լուրջ եւ բազմակողմանի ուսումնասիրութիւնը չափազանց կարեւոր է եւ կարօտ մասնազէտ ոյժերի գործակցութեանը, Ռայոնական ժողովը Բիւրոների լուրջ ուշադրութիւնն է հրահրում այս հարցի վրայ եւ առաջարկում է օր առաջ ձեռնարկել այս գործին, որոշ գումար յատկացնելով այդ նպատակի համար, կազմակերպական ընդհանուր միջոցներից:

բ) Ի նկատի առնելով, որ հայ ազգաբնակչութեան թուի մասին մի որոշ ու ճշգրիտ տեղեկութիւն չունենք ներկայումս, մինչդեռ այդ չափազանց դժուարացնում է մեր ինքնաճանաչութիւնը, Ռայոնական ժողովն որոշեց՝ յանձնարարել երկրի բոլոր Կենտ. Կոմիտէներին՝ անմիջապէս ձեռնարկել իրենց ձեռքի տակ գտնուած միջոցներով, 1) հայ ազգաբնակչութեան մարդահամարը: 2) Մանրամասն տեղեկութիւններ հայերից բռնի կերպով զրաւուած հողերի քանակի մասին 1894 թուից սկսած, լինի այդ քիւրտերի գրաւած թէ՛ մուհաճիւրների համար կառավարութեան կողմից խլուած: 3) Բացի հայ

3.- Պատուածական մոլեռանդութեամբ:

ազգաբնակչութեան թուից հաւաքել նաեւ դրացի միւս ազգութիւնների մասին տեղեկութիւններ, օգտուելով կառավարութեան դոկումենտներից:

18) **Տեւորներ.**— Ռայոնական ժողովը Շամի վերջին անցքերի մասին լսելուց յետոյ, նկատի ունենալով ներկայ քաղաքական փափուկ մոմենտն ու պայմանները որ տեւորներն երկու ազգերի մէջ խռովութիւնների տեղիք կը տան. նկատելով որ կազմակերպութիւնն ենթարկուել է լեգալիզացիայի եւ տեւորներ կատարելու դէպքում մեր բոլոր վարիչ ընկերները ստիպուած պիտի լինեն փախստական դառնալու, որով կը վնասուի կազմակերպական գործը, Ռայոնական ժողովը անյարմար է գտնում ներկայ ընդհանուր տեւորների իրագործումը, թողնելով տեղական Կենտ. Կոմիտէներին յառաջիկայ ամենայարմար մոմենտին գործադրել վճիռները յայտնի մատնիչների վերաբերմամբ, իսկ երկրորդական մատնիչներին անմիջապէս աքսորել շրջանից:

19) **Կարէն Սուրէնի գործը.**— Քննելով Կարէն Սուրէնի խնդիրը, Ռայոնական ժողովն հաստատեց Շամի Կենտ. Կոմիտէի վճիռը նրա վերաբերմամբ:

20) **Դատական խնդիր.**— Նկատելով որ կազմակերպութեան մասնակցութիւնը դատաստանական խնդիրների մէջ անցեալում դրական մի արդիւնք չտալով հանդերձ, ընդհակառակը խոշոր չափով վնասել է կազմակերպական գործին, Ռայոնական ժողովն որոշեց դատաստանական խնդիրը միանգամայն հեռու պահել կուսակցութիւնից եւ չմասնակցել երբեք դատական ոչ մի խնդրի:

21) **Դաշնակցութեան պլատֆորմը երեսփոխանական ժողովում.**—

Ընդհանուր կէտերից առաջին յօդուածի մասին երկար թեք եւ դէմ վիճաբանութիւնից յետոյ հարց ծագեցաւ թէ՛ այդ կէտը ծրագրային է թէ՛ ոչ. երկու հոգի գտան ոչ ծրագրային, 2 հոգի չէզոք, իսկ երեք ընկեր գտան բոլորովին ծրագրային եւ ընդունուեց որ մնայ:

Երկրորդ յօդուածն ենթարկուեց մի փոքր փոփոխութեան. Թուրքաց Հայաստանը կը կազմէ կայսրութեան անբաժան մասը եւ հիմնուած վիլայէթական ապակենտրոնացման սիստեմի վրայ՝ կը վարէ իր տեղական գործերը ինչպէս Տաճկաստանի միւս բոլոր վիլայէթները:

11րդ յօդուածի 5րդ կէտը՝ **Երբեք տարուանէ, իսկ վերջին կէտի վրայ աւելացնել.....** իսկ պետական դպրոցները յաճախող ոչ թուրք տարրերի լեզուների դասախօսութիւնը առաջին տարուանէ:

20րդ յօդուածի ծանօթութեան բ. մասի վրայ աւելացնել չպիտի գանձուեն գիւղացի աշխատաւոր արհեստաւոր դասակարգից, այլ պիտի գանձուի միայն բէգերից, գիւղատէրերից, կալուածատէրերից եւ աղաներից:

22) **Կազմակերպական ներքին կանոնագիր.**— Ռայոնական ժողովը ձեռքի տակ չունենալով ներքին կանոնագիր մշակելու համար ոչ մի աղբիւր, որոշեց որ ամէն Կենտ. Կոմիտէ ղեկավարուելով առաջմ կովկասեան մարմինների ընդգծած⁴ արհեստակցական, գիւղացիական միութիւնների եւ քաղաքական ու մարտական խմբերի ներքին կանոնագրով կազմեն իրենց շրջանների համար ժամանակաւոր ներքին կանոնագիր ու ղեկավարուեն նրանով մինչեւ որ յառաջիկայ Ռայ. ժողովին բոլոր մարմինները կը բերեն իրենց շրջանների ներքին կանոնագիրը եւ կը մշակուի վերջնական ներքին կանոններ:

23) **Նուէրներ յեղափ. ընկերներին.**— Նկատելով որ ժողովրդի կողմից այս կամ այն դաշնակցական անհատին տրուած կամաւոր նուէրները յաճախ այլասերում են գործիչ ընկերներից շատերին, նկատելով նաեւ որ այս տգեղ երեւոյթը անբարոյականացնում է յեղափ. շարքերը, Ռ. Ժ. որոշեց մի անգամ ընդմիշտ վերացնել ընկերների միջից նուէրներ ստանալու յոռի երեւոյթը, եւ տրուելիք նուէրների մասին յայտարարել, որ այդ նուէրները տրուելու են միմիայն կազմակերպութեան իրաւասու մարմիններին, կազմակերպութեան անունով:

24) **Բիւրակնի խնդիր.**— Ռայոնական ժողովը քննելով Բիւրակնի անջատման հարցը Դուրանից, որոշեց յայտարարել այսուհետեւ Բիւրակնը Բարձրբերդի շրջանը եւ նրա հետ կապուել:

25) **Մովսիսի կոմիտէի կնիք ուղարկել խնդիրը.**⁵— Որոշուեց որ Ռայոնական ժողովը գրէ Ընդհանուր ժողովին, որ կնիք գործածելու իրաւունք տրուի Մովսիսի կոմիտէին, այն պայմանաւ որ մինչ այդ նա աշխատի բաւարարութիւն տալ թէ՛ կազմակերպական եւ թէ՛ դրամական ցննզին:

Ռայոնական ժողովն սկսուած Հոկտ. 13-ին եւ տեւեց մինչեւ Նոյեմբեր 29-ը, որի ընթացքում ունեցաւ տասներկու նիստ ընդհանուր կազմակերպական խնդիրների համար եւ երեք նիստ

4.- Արդեօք պէտք է «ընդունուած» ըլլայ, թէ կողմնակի ակնարկութիւն է կուսակցական շարքերու բիրտեղացման (զըտման) նպատակով կովկասեան մարմիններու ձեռք առած ծայրայեղական միջոցներուն:

5.- Մեր օգտագործած թիւ 1594-1 փաստաթուղթին մէջ Օրակարգի թիւ 24 եւ 25 կէտերուն տակ լուծում-որոշումներ չեն արձանագրուած. այդ պատճառաւ ալ ձեռագրին տակ կը գտնուի «Ո՛ր է վերջը» նշումը:

Այլապէս նաեւ բնագրին մէջ կիսաւոր բաժնները գոյութիւն ունին, առանց անուններու կամ թուաբանակի յիշատակութեան: Ներկայ պարագային, ինչ կը վերաբերի 24 եւ 25րդ կէտերուն, դուրս ձգուած մասերը մենք գտած ենք միեւնոյն փաստաթուղթի թուահամար չունեցող մէկ կրկնօրինակին մէջ, ուրկէ եւ վերելի ամբողջացումը:

Փաստ. 761-55

Հ.Յ.Գ. Կ. ՊՈԼՍՈՅ ՈԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

2.- ԳԵՐՉԱՆԻ ԳԱԻԱՌԷՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հայաբնակ գաւառներու ամէնէն ետ մնացած հարըստահարութեան ու գրկանքի պատճառաւ սոսկալի աղքատութեան, տգիտութեան մատնուած այս գաւառին մէջ կան ներփակ համառօտ վիճակացոյցի համաձայն, երեսուն գուտ եւ խառն հայաբնակ գիւղեր մօտ հազար հինգ հարիւր տունէ բաղկացեալ, սակայն թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս խիստ դառն է վիճակնին: Բաւական բազմամարդ գաւառ մը ըլլալով հանդերձ ենթարկուած է Կարնոյ առաջնորդարանի իրաւասութեան. ըստ հաճոյս երբ որ ուզեն առանց Դերջանի համայնքին ընտրութեանը կ'ուղարկեն վարդապետներ որոնք այնքան ապիկար, տգէտ կը լինին որ մինչեւ ցայժմ չեն կարողացել Առաջնորդարան մը ունէ տեղ մը հիմնել: Բնաւ տոմար չկայ, որով մեզ կը պակսի ճիշդ վիճակագրութեան համար ազգային արձանագրութիւնը: 5-10 տարին անգամ մը երեսփոխանական ժողով կը գումարուէր, իսկ 95էն ասդին բնաւ չկայ: Իբր առաջնորդ եկող վարդապետը կ'ընտրէ 5 քահանայէ կրօնական ժողով մը եւ 5 աշխարհականէ քաղաքական ժողով մը միմիայն իր իրաւունքները որոշելու, ապահովելու եւ գանձելու ու իբր Առաջնորդ գաւառին ճանչցուելու համար: Երկու վանք ունի, մին Երզնկայի ճանապարհին մօտը Սրբազլը՝ Ս. Թորոս, հին խարխուլ շէնք մը 10 տուն վանապետ տնտեսներէ բաղկացեալ, որոնք վանքին տէրը, վարիչը ու աշխատաւորներն են: Բաւական անտառ, վարելահող ունի. օդը, ջուրը հիանալի, մեղուաբուծութեան, շերամապահութեան, խաշնարուծութեան յարմար տեղ, սակայն բնակիչները տգէտ: Ազգի կողմէ հսկողութիւն ու կառավարչութեան չկայ, քիւրտերն ալ միշտ կը կեղեքեն: Միւսը Ապրանք գիւղի մօտ՝ Ս. Դաւիթ. գեղեցիկ քարաշէն եկեղեցի մը. բլուրին վրայ ալ մատուռ մը. վանքը շրջապարիսպ ունի քարէ, պարսպէն ներս 20ի մօտ սենեակներ ունէր որոնք գրեթէ ակերակ են. հող քիչ ունի, ջուրը սակաւ բայց Դերջանի բոլոր հայերը պարտաւոր են ամէն տարի պտղի ըստուած տուրքը տալ ցորենով, որը կարելի է արժեքնել 50էն 100 ոսկի: Դերջանի կեդրոնը լինելուն՝ խիստ յարմար է գիւղերէն դպրոցի. ոչ քահանայ ունի ոչ ստացւածք. թալանուած, լքեալ վիճակի մէջ ջանախճեցի տնտէր մը կը հսկէ իբր տնտես:

Գաւառիս մէջ դպրոցի պէտքը խիստ զգալի է. երբեմն գիւղեր տարեկան 5-10 ոսկի վարձքով նախնական կրթութիւն առած Կարմիր վանքի որբանոցի աշակերտներէն մէյնէկ ուսուցիչ կը վարձեն, որոնք 6-7 ամիս

զուր տեղը ժամանակ կը վատեն 10-15 հատ անչափահաս մանկիկներու հետ. առ հասարակ ձեւերով տիրացու վարժապետ մը կը բռնեն տղայ գլուխ 1/2 կամ մէկ շինիկ՝ ցորենի, Նոյեմբերէն մինչ Մարտ պայմանաւ: Այս դրութիւնը երկար տարիներէ ի վեր տիրելուն գաւառիս հազարաւոր բնակիչներու երկու սեռէն եւս հարիւրին 2 տղոս հազիւ հասարակ գրել կարգալ գիտեն. ուրեմն մեր վարչական գործերը վարող բնաւ արժանաւոր մարդ չունինք. մի քանի ցած, վատ, տգէտ, քիչ մը նիւթականի տէր աղա խանեստաններ շրջանաձեւ կը վարեն թէ կառավարական եւ թէ միջազգային գործերը ու պաշտօնները: Հին ռեփիմի աւերիչ ու քայքայող կնիքը դրոշմուած է հայոց աւերակներու վրայ. քիւրտերը, թուրքերը, լազերը, չէրքէզները, տեղական վաշխառուները միշտ կը ծծեն ժողովուրդի արիւն քրտինքի գինը. ժողովուրդը մնացած է աղքատ, մերկ ու սոված: Տասնի չափ գիւղեր, որոնց ցանկը ներփակ է, բոլորովին հայ ամայացած՝ քիւրտերու ձեռքն են անցած. այս գիւղերու բնակիչք ցրուած են. գաղթականութիւնը ծաւալ գտած է. Ամերիկա, Իզմիր, Պոլիս, Ռուսիան, Ռուսիա՝ Դերջանի շատ պանդուխտներ կան. շատ ընտանիքներ Երզնկա, Կարին, Սվազ ու Թոքաթ կը գաղթեն: Ներկայի Սահմանադրութիւնը բնաւ ազդեցութիւն չէ ըրած Դերջանի թէ կառավարութեան եւ թէ այլազգ համերկարացիներու. ժողովուրդը սերմնացու, ուտելիք ու հագնելիք չունի. յուսահատած են: Գասապան՝ Մամախաթունի մէջ հայ գրեթէ չկայ, ժողովուրդը գործ չունի. ընտրութիւն եւ քուէարկութիւն ըստ հաճոյս ու գեղծումներով կը կատարուին: Ամբողջ գաւառին բժիշկ մը՝ թէ մարդոց եւ թէ անասնոց չկայ, դեղարան հիւանդանոց չկայ, կեդրոնական վարժարան մը ուր տեղ կրթեալ մարդիկ հասնին, արհեստանոց եւ գործարան չկայ, ժողովուրդին իրաւունքը ոտքի տակ կ'երթայ: Հակառակ օդին եւ ջրին խիստ ընդունակութեանը եւ առատութեան՝ հողագործութիւնը շատ ետ մնացած է. մինակ հայերը չեն որ նեղ ու թշուառ են, քիւրտերը եւ թուրքերն ալ տկար են. Դերջանի մէջ մի քանի աղաներ, էֆէնտիներ ու պէկեր միայն կ'օգտուին: Այս ցաւալի դրութիւնը փոփոխելու համար զօրաւոր ձեռքի օժանդակութիւնը կարեւոր է:

Յեղափոխութիւնը միայն կարող է փրկել լինել: 6.- Երկու - ցորենի, արմտիքի չափ: 7.- Գասապա - գաւառի կեդրոն քաղաք, աւան:

սակայն ցարդ կանոնաւոր կազմակերպութիւն չէ եղած եւ ունէ կեդրոնէ գործող մը, կազմակերպող մը չէ եկած: Նոր երիտասարդութիւնը բաւական ընդունակ ու համակրող է հայ յեղ. Դաշնակցութեան ծրագրին. գրեթէ հայ գիւղերէ մեծ մասին մէջ 2-20-30 համակրողներ կան. երեք գիւղի մէջ միայն երիտասարդներ Ռուսիան Հնչակեան կուսակցութեան համակրած ու հոս միութիւն հաստատած են: Միմիայն Դաշնակցութիւնը պիտի կարողանայ այս խուլ ու մոռցուած գաւառն եւս փրկել ու միխթարել: Իմ սիրածս ու պաշտած կուսակցութեան համար նուիրուած աշխատիլ պարտականութիւնս է, սակայն քանիցս բանտարկութիւնս, փախստական լինելս, ընտանեկան ծանր հոգսերով բեռնաւորուած լինելս՝ արգելք եղան կանոնաւոր կազմակերպութեան աշխատելու: Ամէն գիւղի ծանօթացած ու քարոզած եմ. ուստի սոյն տեղեկագրով կը դիմեմ ժողովիդ եւ կը խնդրեմ որ ուշադրութեան առնելով անմիջ-

ջական դարման մը տնօրինէք, որոշէք մի կարող պրոպագանտ-կազմակերպիչ գաւառիս եւ շուտով դրկէք քանի ուշ չէ: Թուրք միութիւնը եւ յառաջադիմութիւնը կուսակ.ը նոր սկսած է գործի: Վստահ եմ թէ բարեացակամութիւնը պիտի ունենաք նիւթապէս, բարոյապէս ու ֆիզիքապէս ինկած այս ժողովուրդին օգնութեան հասնելու. ես հոս ժամանակաւոր եկած եմ շրջիկի նոթեր հաւաքելու եւ իմ ձեռքէն եկածն չեմ խնայել միութիւն հաստատելու, բայց միջոց կը պակսի երիտասարդներու պահանջին գոհացում տալու. թերթ, գիրք, զէնք եւ վարժութիւն կ'ուզեն:

Մնամ յարգանքով ՏԻԳՐԱՆ ՄԵՂՐԻԿԵԱՆ (Շրջիկը)

1908 Սեպտ. 18 Դերջան

Մամախաթուն ուղղակի իմ հասցէիս կրնաք գրել:

ՄԱՆԱԻՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԳԵՐՉԱՆԻ

Դերջանը ունի մօտ 200 մեծ ու փոքր գիւղեր, ժողովուրդին կէսը քիւրտ է, շուֆէի եւ գրգըլպաշ. մնացածին կէսէն աւելին թուրք, կէսէն պակասը հայ. հայերէ բնակուած գիւղերը հետեւեալներն են: Սա ճիշդ տեղեկագիրը չէ, բայց կ'աշխատիմ ընդարձակ վիճակացոյց տեղեկագիրը պատրաստել:

1. Գարագուլազ	30 տուն հայ	100 տուն թուրք
2. Խընզըրի	15 » »	20 » քիւրտ
3. Կոմկա	10 » »	5 » քիւրտ
(աղալըզ) այսինքն հողը իրենց չէ		
4. Էսպէվէրէկ	20 տուն հայ	40 տուն քիւրտ
եւ թուրք (աղալըզ)		
5. Ազրակ	10 » »	20 տուն քիւրտ
(աղալըզ)		
6. Բիւլք	100 » »	գուտ
(հողերէն ծախած են աղաներու)		
7. Մանս	40 տուն հայ	110 տուն թուրք
8. Փիրիզ	100 » »	10 » քիւրտ
(հայերէն գնած են հողերը)		
9. Հերանի	5 » »	10 » քիւրտ
(հայերէն բռնի խլած են հողը) (աղալըզ)		
10. Գառն Բերդակ	20 » »	4 » քիւրտ
11. Չամուռտէրէ	20 » »	
12. Աստոյինզումը	5 » »	10 » քիւրտ
(հայերէն գնուած)		

13. Թրվնիկ	100 » »	5 » քիւրտ
(հայերէն խլուած)		
14. Գաչազ	40 » »	
15. Խառխըն	40 » »	120 » թուրք
16. Վժան	30 » »	10 » քիւրտ
(հայերէն խլուած)		
17. Ծաղկարի	80 » »	20 » քիւրտ
18. Վարի Հերանի	10 » »	5 » քիւրտ
(աղալըզ է գիւղը)		
19. Աղաթեր	20 » »	5 »
(աղալըզ է գիւղը)		
20. Զանախճի	5 » »	10 » քիւրտ
(աղալըզ է գիւղը)		
[գումար]		700
Հայ տուն 700,		քիւրտ, թուրք 489 տուն
21. Ապրանք	հայ տուն 35	թուրք տուն 25
22. Կոթեր	հայ տուն 100	քիւրտ տուն 20
23. Սարիգայա	հայ տուն 100	
24. Զրինըս	հայ տուն 50	թուրք, քիւրտ 20
25. Խաչգեղ	հայ տուն 40	քիւրտ տուն 20
26. Խուռղոլ	հայ տուն 30	թուրք տուն 30
27. Խոււմլար	հայ տուն 40	թուրք տուն 20
28. Վարդուկ	հայ տուն 40	թուրք տուն 40

29. Բագառիճ	Հայ տուն 150	Թուրք տուն 150
30. Խաչիկօղլիգումը	Հայ տուն 15	
31. Հողէք	Հայ տուն 50	Թուրք տուն 50
32. Մամախաթուն		
Գասապան	5 Հայ տուն	
Թուրք, քիւրտ	150 (Հայերը օտար քաղաքներէ են)	
	1385	1014

Վերոյիշեալ գիւղերի բնակչաց տան թիւը հաւանականաբար կը գրեմ. իւրաքանչիւր տուն անձը 8-15 կը լինի. միջին թիւ 8 եթէ հաշուենք՝ 1385x8=10920 Հայ կը լինի երկու սեռէ: Հայ գիւղերէն մեծ մասը քրտանոց եղած է. բնակիչները գաղթած են բռնութեան պատճառով:

ուաւ, եւ տակաւին կը շարունակեն. քանի մը գիւղը աստղանիշով որոշած եմ. իսկ շատ գիւղերի մէջ Հայ բնակչէ մնացած, ինչպէս Թոռու, Աստղ, Աբաղձոր, Կէօկտաշ, Բարսենիկ, Գոմձոր եւայլն:

Վստահեցնելով Ձեզ որ աւելի ընդարձակ ու գոհացուցիչ տեղեկագիրն պիտի պատրաստեմ, կը սպասեմ Ձեր հրահանգին: Սոյն տեղեկագրերը եւս իմ կողմէն պատրաստելով՝ ժամ առաջ Ձեզ կը ներկայեմ: Համակրող ընկերներու ստորագրած ուխտագրերը ուր որ հրահանգէք հոն կ'ուղարկուի: Որոշման կը սպասենք:

ՏԻԳՐԱՆ ՄԵՂՐԻԿԵԱՆ

1908 Սեպտ. 18 Դերջան

Փաստ. 18-98

3.- ՄՀԵՐԵԱՆԷՆ ՄԱՐԱԼԻՆ

Սիրելի Մարալ

30 Յուլիս 1908

Նամակներդ ստացել ենք 22 եւ 27 VII [Յուլիս]. Կարին ուղարկեցինք գրածդ: Այստեղ է Տ[եղիսիմի] Աշոտը որ քեզ է հարցնում թէ ուր է: Վանի ընկերներէն մի-երկու ամսից աւելի ուղղակի նամակներ չունենք, կապերը կտրուել է եւ նամակ չենք գրում մինչեւ չպարզուի դրութիւնը: Դուրան կը գրենք ձեր ժողովի մասին եւ ձեր հարցերը: Գլխաւոր հարցը ի հարկէ հիմա մեր տաք-թիկայի հարցն է - մեր կարծիքով պէտք է նորանոր պահանջներ չդնել բոլորովին եւ աշխատիլ միայն ձեռք բերածը ամրապնդել - դրա համար հարկաւոր է առաջ բերել կազմակերպութիւններ, որոնք գիտակցին ձեռք բերածի արժէքը եւ պատրաստուին նրան պաշտպանել եւ գիտենան նրանով օգտուել: Ամենագլխաւորն է մտցնել բոլոր ազգերի ժողովրդական խաւերի մէջ այդ միտքը եւ պատրաստականութիւն ու հակցիայի ժամանակ մինչեւ վերջը պաշտպանել ձեռք բերածը: Միեւնոյն ժամանակ չպէտք է մեր ընտիր ուժերը երեւան գան, նրանք պիտի միշտ գաղտնի մնան, եւ գաղտնի կազմակերպութիւնը պիտի շարունակել մանաւանդ գալիք ու հակցիայի ժամանակ ինքնապաշտպանութիւն] կազմակերպելու եւ տանելու համար:

Ղրկածդ փողը դեռ չենք ստացել. եթէ ստացուեց -

դա լաւ ճանապարհ է, կարող ես բոլորը այդ գծով ուղարկել, 3-4 անգամից կը վերջացնես:

Տեղիդ գործողութիւնների մէջ պէտք է զգոյշ լինել եւ թուրք յեղ[ափոխականներին] խորհուրդներ տալիս նոյնպէս պէտք է աչքի առաջ ունենալ, որ նրանք այնպիսի քայլեր չանեն, որ կարողանայ ապագայում ունակցիա առաջ բերել: Օրինակ քո գրածը որ դու խորհուրդ ես տալիս ահաբեկումներ կատարել - դա աւելորդ բան է, կարելի է բաւականանալ պաշտօնականութեամբ: Դու հոդ սպասիր մինչեւ Լեւոնի գալը, եւ գլխաւորը մինչեւ բոլոր դրամական հաշիւները վերջացնելը: Քո հրապարակուիլը եւս մենք անխոհեմութիւն ենք համարում: Այնպէս արա, որ ուրիշ տեղեր գնալիս մնաս անյայտ:

Միջոցներ ենք ձեռք առնում որ օգտուեն սահմանների բացումից գիտակ ընկերներ եւ մտնեն երկիր: Մի հատ քղեցի ընկեր Խմօ անունով Ամերիկայից եկած է հոս, այնտեղի ընկերների առաջարկութեամբ եւ ճանապարհածախսով երկիր գալու համար:

Նրան շուտով ուղարկում ենք Քղի: Այնտեղից նամակ կայ թէ երկրորդ ենթակումիտէ մը կազմած են:

Նամակաբեր ընկերն ալ գիտակ ընկերներից է, իւր հայրենիք է գալիս. կարելի է նրանով օգտուել:

Բարեւներով
ՄՀԵՐԵԱՆ

Փաստ. 18-99

4.- ՄՀԵՐԵԱՆԷՆ ԲԱՐՉՐԱԲԵՐՊԻՆ

Բարձրաբերդի ընկերներին,

Սահմանադրութիւնից յետոյ մոմենտի պահանջ է որ դրսում եղած բոլոր գիտակ ուժերը մտնեն երկիր եւ նպաստեն նրա վերածնութեան, աշխատելով որ այդ վերածնութիւն կատարուի նորմալ եղանակով, առանց ցնցումների եւ ցաւերի, միեւնոյն ժամանակ պատրաստ պահելով ժողովուրդը զանազան պատահարներից որ կարող են առաջ գալ հաւանական ու հակցիայի ժամանակ: Այդպիսի ընկերներից մէկն է ընկեր Խմոն, որ գնում է իւր հայրենիք Քղի իւր ընտանիքի հետ ապրելու եւ իւր ուժերի սահմաններում նպաստել երկրի վերածնութեան: Նրան յանձնարարում է Ամերիկայի Կ. Կ.,

մենք էլ նրան ճանաչում ենք եւ կարծում ենք որ կարող է տեղում օգտակար ուժ լինել: Եթէ տեղական ընկերները հետը ծանօթանալով եւ իրանք էլ ճանաչելով կը ցանկանան օգտուել նրա ուժերով, կարծում ենք վատ չի լինի:

Խնդրում ենք ձեզ յանձնարարել նրան Քղիի ընկերներին:

Ընկերական բարեւներով
Ի դիմաց Արեւելեան Բիւրոյի
ՄՀԵՐԵԱՆ

31 VII 08

Յ. Գ.- Ապրելու է հոն իւր միջոցներով:

Փաստ. 761-101

5.— ԳԻՍԱԿԵՆՑ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՐՈՅԻՆ

22 Հոկտ. 08
Կարին

Արեւմտ. Բիւրոյի ընկերներուն
Սիրելիք՝

Ձեր Սեպտ. 5-ը՝ Տիգրանակերտի ճանապարհով հոս ստացայ. ինչպէս նաեւ Սարաֆեան եղբարց միջոցաւ Ձեր դրկած 500 Ֆր.ը:

Շնորհակալ եմ Ձեր յայտնած զգացումներուն համար եւ շատ ուրախ պիտի ըլլամ եթէ բարեբախտութիւն ունենամ մի անգամ ալ տեսնելու Ձեզ բոլորդ եւ անձամբ յայտնելու իմ շնորհակալութիւնը այն գուրգուրալի խնամքներու համար որ դաշնակցական ընկերներ գրեթէ առանց բացառութեան տարած են իմ վրայ:

Տիգրանակերտի մէջ հնար եղած չափով կազմակերպութիւն մը ստեղծելու աշխատեցանք, կազմեցինք կոմիտէ եւ յարաբերութեան դրինք Պոլսի Պատ. մարմնի հետ. բայց ամէն պարագայի մէջ կարող ընկերի մը պէտքը շատ զգալի է հոն: Յեղափոխական տեսակէտով գրեթէ կոյս երկիր մըն է Տիգրանակերտը, այնպէս որ հոն գնացող ընկերը ուզածին պէս կարող է կազմել, կազմակերպել: Տնտեսական վիճակը բաւական գոհացուցիչ է բաղդատմամբ վերին նահանգներուն, թէեւ ժողովուրդը հաճոյքի եւ գինեմոլութեան շատ հակամէտ է:

Տիգրիսին գրեցի ինչ որ դուք ըսած էիք, նոյնը ըսած էին եւ Պոլսէն: Խեղճ մարդը հաւատացած էր թէ պիտի յաջողի արտ[ասահման] ճանապարհորդութիւնը եւ պատրաստութիւններն ալ տեսած: Ահա քեզ հուրիւրէթ: Ոմանց խիստ եւ ոմանց ալ լաց, որովհետեւ ան շատ յոյսեր դրած էր եւ կարծեմ այդ յոյսերը իր անձնականին ալ հետ ալ կապեր ունէր: Ինչ որ է, լաւ կ'ըլլայ որ Ռազմիկին ալ գրէ՛ք:

Ամիսէն աւելի է որ հոս եմ: Ընտրական գործողութիւնները այսօր վաղը կը վերջանան. հայերը թէեւ բաւական աշխատեցան Գարոյի եւ իմ յաջողութեան համար, սակայն դեռ յայտնի չէ: Թուրքեր եթէ ուզեն, անկարելի կը լինի մեր յաջողութիւնը: Անցեալ օր միացած թուրք եւ հայ, մի փոքր միթինկի պէս գումարում մը ունեցանք, ուր ներկայ էր եւ կուսակալը. երկու թուրքեր, Սարգիս եւ Գիսակ խօսեցան: Գումարման նպատակը Կարնոյ գաւառին հինգ թեկնածուներու ընտրութեան խնդիրն էր. մենք յայտնեցինք մեր թեկնածուներու անունները, իսկ իրենք չյայտնեցին. երկրորդ օրը՝ քուէարկող 45 թուրքեր միայն թուրքերու քուէ տուին,

այն ինչ մերինները ըստ որոշման 2 հայի եւ 3 թուրքի տուին: Այդ խաբէութիւնը բաւական եղաւ մեզ գրգռելու իթթիհատի սպայ անդամները, որոնք անկեղծօրէն բարեկամ են մեզ: Անմիջապէս համախմբումներ ունեցան, եւ վերջնականապէս որոշեցին որ մնացեալ քուէները մեր երկու ընտրելիներուն եւ երեք թուրքերու տրուին, եւ այնպէս ալ եղաւ: Առ այժմ հոս, քաղաքի մէջ յաջող ենք, եթէ գաւառներու մէջ ալ նոյն համեմատութեամբ վաստկինք, մեր ընտրելիները յաջողած պէտք է համարել: Պայագետ եւ Երզնկա ալ մէկ մէկ երեսփոխաններ պիտի տան, որոնք անշուշտ թուրքեր պիտի լինին:

Երկու օր առաջ Արամը՝ Շամէն եւ Մարգաբտ՝ Բաղէշէն՝ գրած էին որ համաձայնած են իթթիհատի ներկայացուցիչ Վեհիպ պէյի հետ, որպէսզի Բաղէշի մէջ շրջանական ժողով մը գումարուի հայ եւ թուրք պատկերակներէ (Իթթիհատի եւ Դաշնակցութեան կոմիտէներէն) վեց նահանգներու բարենորոգումներու եւ թէ իրար հետ ունենալիք յարաբերութիւններու խնդիրներով զբաղելու համար: Այնպէս կը կարծեմ թէ այստեղ գտնուող ընկերներ չպիտի համաձայնին եւ արդէն այժմ յարմարութիւններ ալ չկան:

Շաբաթէ մը աւելի սկսած ենք Ռայ. ժողովը¹⁰: Ցաւալի է որ Դուրանը չուզեց մասնակցել եւ պատուիրակ ալ չդրկեց՝ առանց բացատրութիւն մը իսկ տալ գիջանելու կամ ուզելու, թէեւ նախապէս համաձայնութիւն տուած էին: Արեւել. Բիւրոյի կողմէն Գարոն կը մասնակցի ժողովին:

Տեղիս կազմակերպութիւնը բաւական կարգի մտած է. Կեդր. եւ քաղ[աքային] կոմիտէներ կազմուած են, յուսալի է որ յաջողութիւններ ունենանք. լսարաններու, ընթերցարաններու, երիտասարդաց, Տիկնանց, Օրիորդաց միութիւններ առանձին առանձին կազմուած են, եւ դաշնակցական ուժեր են որ ծնունդ տուած են այդ միութիւններուն: Գրքերու, լուրջ գրքերու շատ պէտքեր կան, եւ դժբախտաբար դուք ալ կանոնաւորապէս չէք դրկեր Դրօշակ, որին շատ պահանջ կայ:

Ամբողջ կուսակալութեան մէջ յայտնի փոփոխու-

8.- Գիսակ (Վարդգես, Սերեւկիլեան), 1903 թ. Յունուարէն ի վեր բանտն էր (Վան, ապա Տիգրանակերտ-Տիարպեթի) – Սահմանադրութենէն ետք ազատ արձակուելով՝ անցած էր իր ծննդավայրը՝ Կարին:

9.- Արամը՝ Մանուկեանն է, Մարգաբտը՝ Ղազարոսեան Ղազարոս:

10.- Խօսքը 13 Յոկտեմբերից գումարուած Արեւելեան շՈՒՔԱՆԻ մարմինների ժողովի մասին է:

թիւններ չկան գրեթէ. նոյն վիճակը, նոյն կազմը եւ գրեթէ նոյն ոգին: Կառավարութիւնը ուժեղ չէ եւ նա ալ չուարած է ու չի գիտեր թէ ի՞նչ եւ ինչպէ՞ս պիտի ընէ: Աստուած վերջը բարին ընէ: Թուրք յեղ. տարրը իրապէս գոյութիւն չունի այս կողմեր, իսկ իթթիհատը ոչ թէ յեղ. կուսակցութիւնը է, այլ զուտ քաղաքական՝ կազմուած այլազան տարրերէ, ճիշդ այդ պատճառաւ ալ ուժ չունի եւ ոչ ալ կանոնաւոր կազմակերպութիւն: Վէհիպ պէյ փոխանակ կազմակերպելու՝ աւելի կազմալուծեց, եւ տաճիկ յեղ. տարրը փոխանակ մեզ աւելի մօտեցնելու՝ հեռացման պատճառ եղաւ. ուր որ գնաց՝ դժգոհութիւն առաջ բերաւ, եւ հայերս ոչ Տրապիզոն, ոչ Բաբերդ, ոչ Երզնկա, ոչ հոս, ոչ Խնուս, ոչ Բաղէշ՝ երբեք գոհ չենք եղած իրմէ: Նա կարծես մի ինչ որ յայտ-

նի եւ յետին դիտումներով Հ.Յ.Դ.ը չէզոքացնելու աշխատած է, եւ այս բանին համոզուած են գրեթէ բոլոր ընկերները: Հակազդելու համար մեր ձեռքէն եկածը չենք խնայեր:

Մի՛ մոռնաք Դրօշակ դրկել. հասցէ, «Հայոց Առաջնորդարան. Վարդգէսին»:

Համբոյրներով՝
ԳԻՍԱԿ

Յ.Գ.- Բաղէշի մէջ կ'աշխատին յաջողցնել Արմենակ Օխիկեանի (Սլաք), իսկ Մուշի մէջ Կոտոյի Հաճիի ընտրութիւնները: Հաւանականութիւններ կան:

ՆՈՅՆ

Փաստ. 761-91

6.— ԳԻՍԱԿԵՆ ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽ. ՄԱՐՄԵՆ

15/28 Հոկտ. 08
Կարին

Պոլսի Պատ. մարմնին,
Ընկերներ!

Ստացած ենք Ձեր Հոկտ. 2/15 թուակիրը եւ շնորհակալ ենք Ձեր տուած բացատրութիւններէն ու խորհուրդներէն, որոնցմէ անպայման պիտի օգտուինք:

Չորս-հինգ օր է Գարոն հոս է եւ այսօր սկսանք Ռ.Ժ.ը: Կը ցաւինք ըսել որ Դուրանը՝ հակառակ իր նախապէս համաձայնութեան՝ այժմ չ'ուզեր մասնակցել եւ իր այս որոշումը հաղորդած էր մեզ հեռագրով: Անյայտ է մեզ համար պատճառը: Թերեւս իրենցմէ զալիք նամակը բացատրէ այդ: Գարոն իր կողմէն կրկին հեռագրեց որ մասնակցին, բայց պատասխան ստացուած չէ տակալին: Կը յուսանք երկու շաբաթէն լրացնել մեր աշխատութիւնները:

Երեսփ. վերջնական ընտրութիւնները այս շաբթու կը վերջանան: Քաղաքի եւ Դաշտի մէջ մենք շահեցանք բ. ընտրելիներ, որչափ որ իրաւունք ունէինք, քաղաքը 18 հայ 20 թուրք. Դաշտը 27 հայ 8-9 թուրք, իսկ գաւառակներն ու գաւառները թոյլ ենք, թող որ արդէն այն կողմերը թուրք մեծամասնութիւնը շատ շատ է, թէեւ եթէ մի քիչ աւելի լուրջ աշխատութիւն լինէր, կարելիութիւն կար աւելի վաստկելու: Չմոռնանք ըսել որ պաշտօնական կարգ[աղիք] յանձնաժողովները միշտ կ'աշխատէին հայերու իրաւունքները կապտել՝ հակառակ նոյնիսկ օրէնքի որոշ տրամադրութիւններուն:

Եթէ մեր հակառակ տարրերը մեր դէմ պլոկ չկազմեցին՝ մէկ քանի շաբաթէն Վարդգէսն ու Գարոն Ձեր մէջ տեսնելու բախտը կ'ունենաք:

Մեր շուրջէն եկած լուրեր, տեղեկագրեր, նամակներ շատ ցաւալի դրութիւն մը կը ներկայացնեն. վիճակի ոչ մի փոփոխութիւն. միսիթարական կէտը իմայն այն է որ հային իբրեւ Փետայիի այլեւս չեն սպառնար: Այդ բոլորին մեր կարողութեան չափով դարման տանելու համար ուզեցինք տեղիս իթթիհատին աւելի մօտենալ, անոնց հետ մի խառն մարմին կազմել եւ անոնց հետ ու անոնց միջոցաւ ընել ինչ որ կարելին էր: Վեհիպ պէյի կազմած կոմիտէն Վեհիպի մեզ ցոյց տուած մի անձի միջոցաւ բանակցեցաւ մեզ հետ: Այդ պատգամաւորը անձնապէս մի լուսամիտ մարդ էր եւ Սապահէտիսի համակիր: Դեհան պլատֆորմը վիճաբանութեան նիւթ ըրին եւ մենք յաջողեցանք ընդունիլ տալ զայն գրեթէ նոյնութեամբ: Սակայն մինչեւ այդ՝ իրենց մէջ անմիաբանութիւն առաջ եկաւ, ցրուեցան եւ մէկ քանի օր առաջ կրկին մի հատ կոմիտէ ստեղծեցին. ա՛յ չենք գիտեր ինչ պատասխան պիտի տան մեզ: Այստեղի փշօները երկուքի բաժնուած են, զինուորականներն ու մէկ քանի պաշտօնեաներ բոլորովին սապահէտիսիական են, եւ նոյնիսկ հիմակուրնէ կը մտածեն հոս առանձինն աշխատիլ մի կուսակցութիւն ստեղծելու, իսկ միւսները աջակողմին կը պատկանին եւ բոլորովին հակառակ են. Վեհիպ պէյ շատ թունալից գործ մը ունեցաւ հոս. անոր գալէն վերջ՝ մտքեր գրեթէ փոխուեցան, եւ ոչ միայն հոս, այլեւ Խնուս, Երզնկա, դեռ չենք գիտեր Մուշ ինչ

ըրած է, բայց ամէն պարագայի մէջ հաւատացած եղէք որ նա ո՛ւր որ ալ երթայ՝ հակահայկական փրոփականտ պիտի ընէ եւ այնպիսի կոմիտէներ պիտի կազմէ՝ որոնք ջանան չէզոքացնել Հ.Յ.Դ.ը: Այսօր իմացայ որ նա իր ճանապարհէն շեղած է, եւ փոխանակ Վան երթալով՝ ուղղակի պիտի անցնի Տիգրանակերտ. ստուգութեան կարօտ է անշուշտ այս լուրը: Բայց երանի թէ ստոյգ լինէր:

Չէ՞ կարելի արդեօք այդ տեղէն Սապահէտի կողմէն սակիցներէն մէկը հոս զրկել տալ. ամէն պարագայի բաժանում պիտի ըլլայ իրենց մէջ եւ լաւ է որ գէթ ասոնք նախընթաց ըլլան:

Ձեր նամակով յիշած այդ երդուողներէն ոչ մին կազմակերպութեան անունով ներկայացած է անոնց եւ երդուողացած, այլ լուկ իբրեւ անհատներ, եւ արդէն իրենց մէկ մասն ալ իրապէս ոչ մի կապ չեն ունեցած մեզ հետ. բայց թո՛ղ որ արդէն այդ ամէնքը քայքայուած են, եւ ամէնքի երդումը իր տիրոջ սեփականութիւնը դարձած է: Մենք երբեք մեր անկախութիւնը կորսնցուցած չենք եւ ոչ ալ մի այդպիսի բան մտքերնէս անցած եւ թերեւս աւելի արմատական եղած ենք ինչ որ դուք եղած

չէք հող. ասով անշուշտ ձեզ մեղադրել չենք ուզեր, կը զգանք ժամանակի եւ տեղի պահանջները եւ կը գնահատենք ձեր աշխատութիւնները:

Մեր ընկերներ բոլորն ալ կը փափաքին որ Դաշն. Խորհուրդը շուտ տեղի ունենայ, այս մասին վերջը աւելի երկար կը գրենք:

Կովկասի մէջ մեր ընկերներէն շատեր կարծեօք վտանգուած կը լինին, լաւ չէ՞ր ըլլար, որ ընկերներու փոխանակութիւն լինէր. եւ այդ փոխանակութիւնը ո՛չ միայն Կովկասի եւ Երկրի, այլեւ Արեւել. եւ Արեւմտ. Թուրքիայի մէջ ալ տեղի ունենար:

Նամակս կ'աշխատիմ շուտ վերջացնել: 7-8 թուրք սպաներ եկած են խօսելու. մեզ համակրողներ են, ուրեմն ներողամիտ կը լինէք:

Պէտք է գիտնալ որ հոս կազմուած է Կ.Կ. եւ քաղաքական կոմիտէ. կ'աշխատինք զօրացնել եւ աւելի հաստատական հիմերու վրայ դնել կազմակերպութեան գործը. մէկ ժամէն սուրհանդակը կը մեկնի. ցտեսութիւն:

Ի դիմաց Կ.Կ.ի եւ ընկերներու Գ.ԻՍԱԿ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ՉԼՈՒԽ IX

ԾՈՎԱՓ – ԱՒԱԶԱՆ

(ՏՐԱՊԵՉՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ)

Նախապէս Տրապիզոնի շրջանը ծանօթ էր Ծովափ ծածկանունով: Օսմ. սահմանադրութեան հռչակումէն ետք Ծովափի Կ. Կոմիտէութիւնը վերակազմուեցաւ եւ իր առաջին Շրջանային Ժողովին, գումարուած 1909 թ. Յունուար 5-10ին, որոշեց «Աւագան» ծածկանունը գործածել, նախկին «Ծովափը» վերապահելով Տրապիզոն քաղաքի տեղական կոմիտէին: Երկրորդ Շրջ. Ժողովի որոշումով կեդրոնը եւս տեղափոխուեցաւ Կիրասոն քաղաքը (Փառնակ):

Աւագանի Կ. Կոմիտէութեան կազմակերպական միւս շրջաններն էին՝ Տրապիզոն (Ժայռ), Եոնուրան (Մարափ), Կիւմիշխանէն (Լեռնաշղթայ) եւ Էլեվի (Գետափ):

Տրապիզոնի շրջանին համար կը ներկայացուին հետեւեալ երկու փաստաթուղթերը.՝

1.- «Հ.Յ.Դ. Աւագանի Շրջանային երկրորդ Ժողով», 1909 թ. Յունիս 14-25:

2.- «Տեղեկագիր Օրսուի շրջանի հայաբնակ գիւղերի»:

Փաստ. 788-17

1.- Հ.Յ.Դ. ԱՒԱԶԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ II ԺՈՂՈՎ

909 ՅՈՒՆԻՍ 14/25

Կազմը

Ժողովին մասնակցում էին.՝ 15 վճռական ձայնով.՝

Ֆ...ի ընկերների կողմէ ընկերներ Կ. Վ. Լ.

Ֆ...ի կոմիտէի կողմէ.՝ ընկեր Դ.

Ս...ի ընկերների կողմէ.՝ ընկերներ Փ. Թ.

Ս...ի կոմիտէի կողմէ.՝ ընկեր Գ.

Փ...ի ընկերների կողմէ.՝ ընկեր Գ.

Փ...ի կոմիտէի կողմէ.՝ ընկեր Վ.

Վ...ի ընկերների կողմէ.՝ ընկերներ Ա. եւ Հ.

Վ...ի կոմիտէի կողմէ.՝ ընկեր Ս.

Կ...ի ընկերների կողմէ.՝ ընկեր Մ.

Ժ...ի ընկերների կողմէ.՝ ընկեր Ս.

Աւագանի Կեդրոնական Կոմիտէի կողմից ընկեր Ժ.:

Ժողովում պարբերաբար խորհրդակցական ձայնով մասնակցել են.՝ ընկերներ Ս. Հ., Մ. Զ., Ֆ. Ծ. նաեւ Մ. Զ. եւ Ժ.:

Ժողովը որոշեց գումարել օրական երկու նիստ. կէսօրից առաջ ժամը 12-4 եւ կէսօրից ետք ժամը 9-11:

Շրջանային ժողովը ունեցաւ 21 նիստ:

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Ե. Ընդհանուր ժողովի օրակարգի քննութիւնը

Պոլսոյ Պատասխ. մարմինը.՝

Շրջանային ժողովը գտնուած է 1) որ նա անփոյթ է գտնուել երկրի մարմիններին իրազեկ դարձնելու երկ-

րի ամբողջական դրութեան մասին: 2) Հակառակ իրաւ շրջաբերականների, թերացել է ժամանակին պատասխանել մարմիններից ստացած նամակներին: 3) Համաձայն Պատասխ. մարմնի արած խոստումին, թէ ինքը պատրաստ է հասարակական ցեցերին չէզոքացնել ասպարէզից եթէ տրուեն իրան կոնկրետ փաստեր, մեր շրջանը արել է այդ ուղղութեամբ քայլեր (Վաշտի դիմումը) բայց մինչեւ այս օր Պատասխ. մարմինը արձագանք չի տուել եւ այդ ցեցերը մնում են այժմ էլ իրանց դիրքերում: Պատասխ. մարմինը այդ գործի յապաղման պատճառներն իսկ դեռ մինչեւ այժմ չի յայտնել մեզ: 4)

Արեւմտեան Բիւրօ

Փարիզի Կոնգրէ.՝ Մեր գոհունակութիւնն ենք յայտնում որ Բիւրոն IV Ընդհ. Ժողովի որոշմամբ իր վրայ դրած պարտականութիւնը յաջողութեամբ կատարեց:

Լահէյի խաղաղարար վեհաժողով.՝

«Ընդունելով որ նախկին ռեժիմին ժամանակ Լահէյի վեհաժողովին դիմելը անհրաժեշտ էր, Դ[աշնակցութեան] այդ ժողովին դիմումը գտնուած ենք համապա-

1.- 4րդ կետը բնագրին մէջ կիտաւոր է: Բովանդակութիւնը տրուած է այս տեղեկագրի աւարտին՝ «Մարմիններին» բաժնի մէջ:

տասխան Դ[աշնակցութեան]ն նոյն ժամանակի գործելակերպին (ընդունուեց 11 ձայնով)։—

Փոքրամասնութեան կարծիքը։—

«Քանի որ եւրոպական դաշնագրի մեզ վերաբերող յօդուածներէն մենք օգտուել ենք այնքան որ անօրինակ գոհեր ենք տուել միայն, հայ ժողովուրդը ընդհանրապէս եւ Հ.Յ.Դ. մասնաւորապէս չպէտք է գնար Լահէյ աւանդական մուրացկանութեամբ ու աղբրսարկութեամբ։ Չենք կարող հաշտեցնել միմեանց հետ «Յեղափոխութիւն» ու «Աղբրսանք» բառերը։—

Մենք պահանջում ենք մի կողմ թողնել օպպորտիւնիստութիւնը² եւ այլեւս չգնալ խաղաղարար դեսպանախորհուրդ անունը կրող գիշատիչների ժողովին։ (Ընդունուեց 4 ձայնով)։

Հայկական հարցը եւ Եւրոպան (Յ1 յօդուած)։—

Նկատելով որ Յ1րդ յօդուածը չի մտնում Դաշնակցութեան ոչ ծրագրի, ոչ աշխարհահայեացքի եւ ոչ գործելակերպի մէջ, կ'առաջարկենք այդ յօդուածը երբեք խնդրոյ նիւթ չընել օրագրի մէջ։ Ի դէպ, մեր բուռն գայրոյթը յայտնում ենք որ այդ չարաբաստիկ յօդուածը իր հրատարակութեան օրէն ի վեր շահագործման գործիք եղած է Եւրոպայի նենգ դիպլոմացիայի ձեռքը։

Շտուտգարտի սոցիալիստական կոնգրէս։—

Մեր ուրախութիւնն ենք յայտնում որ Հ.Յ.Դ. իր ամբողջութեամբ միջազգային սոցիալիստական մեծ ընտանիքի մասը դարձաւ։

Բրիւքսելի Սոցիալիստական բիւրօ։—

Ընկեր Վարանդեանը խոշոր խոստումներ էր տուել Թուրքիայի մեր հարեւան ազգերի մէջ էլ սոցիալիստական գործունէութիւնը տարածելու, որ այնքան էլ հաւանական չէր եւ ապացոյց՝ որ ցարդ ոչ մի քայլ չի եղել այդ ուղղութեամբ։ գտնում ենք քննադատելի այդպիսի վաղաժամ խոստումներ տալը։

Քաղաքական գործունէութիւն Եւրոպայում։—

Այս գործունէութեան անցելով տուած օգուտները անուրանալի են, չնայած որ նիւթական ահագին միջոցներ է եղել։ մինչեւ այժմ եղած գործունէութեան համար յայտնում ենք մեր գոհունակութիւնը։ Իսկ սրանից յետոյ աւելորդ ենք գտնում, քանի որ սոցիալիստական կոնգրէսների միջոցաւ աւելին կարող ենք անել եւ ձեռք բերել։

Եւրոպայի Հայ Յ. Դ. Ուսանող. միութիւն։—

«Նկատելով որ մեր ժողովրդի ամէնէն կենսունակ ոյժն է մեր ուսանողութիւնը, որ մինչեւ այժմ բացի տեսական գործունէութիւնից ուրիշ ոչինչ չի արել գործնական (օրինակ Օսմ. Սահմանադրութեան հրատարակման օրից մինչեւ Հոկտ. ամիսը առնուազն)։ 2 ամիս ազատ ժամանակ ունենալով ոչ ոք չի մտել երկիր, [ինչ] որ ահագին օգուտներ կարող էր տալ մեր կենդանի գործի կարօտ ժողովրդին։ Պահանջում ենք որ մեր ուսանողութիւնը գոնէ սրանից յետոյ իր արձակուրդները ամենալայն կերպով տրամադրէ եւ ժողովրդի մէջ լինի...»։

«Pro Armenia»։—

Նկատելով որ Pro Armeniaն անցեալ ռեժիմի ժամանակ ջանացած է մի կողմից կաշառուած եւրոպական մամուլի դէմ մեր դատը պաշտպանելու, միւս կողմից Եւրոպայի հանրային կարծիքը ի նպաստ մեր դատի դարձնելու, մենք այդ թերթի անցեալը որոշ չափով օգտակար ենք գտնում։

Դաշնակցութիւնը եւ Երիտասարդ Թուրքերը։—

Այս հարցը որ գրեթէ երեք նիստ գրաւեց, երկար եւ տաք վիճաբանութիւններից եւ այս անգամ ժողովին ներկայ եղող ձեռնհաս ընկերների բացատրութիւններից եւ լուսաբանութիւններից յետոյ, դրուեց քուէարկութիւնը հետեւեալ ձեւով՝ «Դաշնակցութիւնը եւ երիտ. Թուրքերը պէ՞տք է համերաշխ գործեն թէ ոչ», ընդունուեց 12 ձայնով ընդդէմ 3ի, համերաշխ գործակցութիւնը սկզբունքով։

Մեր դիրքը Սահմանադրութեան հանդէպ։—

Ընդունելով հանդերձ որ ներկայ Սահմանադրութիւնը չի տալիս եւ չի էլ կարող տալ մեր պահանջներին լիակատար բաւարարութիւն, այնու [ամեն]այնիւ նկատելով ներկայ սահմանադրական կարգերը իբր մի քայլ յեղափոխական յառաջխաղացութիւն դէպի վերջնական ազատագրումը, մենք պէտք է ամէն հնարաւոր միջոց գործ դնենք պաշտպանելու ներկայ սահմանադրութիւնը եւ նրան դնելու ամենալայն հիմունքների վրայ ձգտելով նրա մէջ մտցնել մեր ծրագրի ոգին»։

Կուսակցութեան լեզալիզացիան (օրինականացում)։—

«Նկատի ունենալով երկրի ներկայ պայմանները, ո՞ր 2.- Պատեհապաշտութիւնը։

րոնք ոչ մի ապահովութիւն կու տան Թուրքիոյ զանազան ազգութիւնների բացարձակ իրաւահաւասարութեան, Դաշնակցութիւնը է եւ կը մնայ գաղտնի յեղ. կուսակցութիւն մը, սակայն օգտուելով տիրող պայմաններից Դաշնակցութիւնը կ'ունենայ լեզալ գործունէութիւն՝ ժողովրդի խորհրդարանական հասարակական եւ կուլտուրական զարգացման համար, ջանալով կարելի եղածին չափ քիչ անհատ գործիչներ հրապարակ գան. (ընդունուեց միաձայն)։

Ազգային հարց։—

Նկատելով որ մանր ազգութիւնները տարբերում են թէ ցեղային թէ կրօնական թէ աշխարհագրական եւ թէ ներքին առանձնաշատուկ պայմաններով, իւրաքանչիւր ազգութիւն իր ամբողջութիւնը պահպանելու եւ իր ներքին կուլտուրական գործերը զարգացնելու համար, անհրաժեշտ է ազգերի ինքնուրոյնութիւնը պահպանել, որպէս օսմ. պետութեան անբաժան մասը. միեւնոյն ժամանակ աշխատել աւելի լայնացնելու ազգերի իրաւասութեանց սահմանները. (ընդունուեց միաձայն)։

Մեր դիրքը Սաբահտինական եւ Ահրար խմբակցութիւնների [նկատմամբ]։—

Դէպի սաբահտինականները մեր դիրքը բնորոշ կը լինի միայն այն ժամանակ, եւ այն չափով ու տեւական, երբ եւ ինչպէս կը պարզուի իրանց վերջնական Ֆիզիոնոմիան³, եւ բացի սրանից քանի սաբահտինականները ունին որոշ ձախակողմեան ուղղութիւն, ուստի ամէն կերպ ցանկալի էր որ նրանք օր առաջ կազմակերպուին որպէս գործօն կուսակցութիւն. այս ընդունում ենք եւ Ահրարի վերաբերմամբ։

Մակեդոնական կազմակերպութիւնները։—

Նախապէս որոշելով որ Պատասխ. մարմինը մեզ երբեք իրագել չի կացուցել մակեդոնական կազմակերպութեանց ներկայ վիճակի եւ իրարու հանդէպ ունեցած վերաբերմունքի մասին, չնայած որ վերջին քաղ. մեծ խնդիրներում ունեցել են նրանք իրանց նշանակելի մասնակցութիւնը, բայց եւ այնպէս տեղեակ ըլլալով Դ[աշնակցութեան] անոնց հետ անցեալում ունեցած գործակցութեան մասին, առաջարկում ենք, շարունակել նրանց հետ ունենալ գործակցութիւն, իբրեւ ընդդիմադիր տարրերի։

Հնչակեան կուսակցութեան։—

«Նկատելով որ սա չի ներշնչում մեզ բարոյական վստահութիւն, որ արդիւնք է մի շարք տխուր պատճառների հետ եւ կեղրոնացման սիստեմի, մենք չենք

կարող տեւական գործակցութիւն ունենալ նրանց հետ։ Գործակցիլ բացառիկ դրութիւնների մէջ եւ համաձայն տեղական պայմանների»։

Մեր դիրքը Տաճկաստանի այլ ազգերի հանդէպ։—

Ընդունելով ազգ. հարցի գոյութիւնը, նաեւ որ ազգերն իրանց կենսունակութիւնը պահել կարողանում են ինքնուրոյն կուլտուրայով, եւ նրա միակ երաշխաւորութիւնն է ազգային ինքնուրոյնութիւնը, ուստի Տաճկաստանում ապրող բոլոր փոքր ազգերը, որպէս վիճակակից «միլլէթի հաքիմէի»⁴ տիրապետութեան ձգտումի դէմ, գտնում ենք որ մենք համերաշխ գործակցութիւն պիտի ունենանք բոլոր փոքր ազգութիւնների հետ։ Ազգ. հարցի, ազգային ինքնուրոյն կուլտուրայի զարգացումը ապահովելու գործում միակ հնարաւորը իւրաքանչիւր ազգի աշխատակողմեան տնտեսական, կուլտուրական, քաղաքական շահերի ազատ բարգաւաճումն է (ընդունուեց միաձայն)։

Bloc (համամտութիւն) պարլամենտի մէջ

եւ դուրսը։— Դաշնակցական պատգամաւորների գիտելիքներն պարլամենտում, պարլամենտական գործունէութիւն։—

«Նկատելով որ օսմ. պարլամենտը ներկայումս հանդիսանում է ամենահեղինակաւոր մարմինը ամբողջ Թուրքիոյ քաղ[աքական] եւ տնտեսական-հասարակական կարգերի որոշման, որով գերազանցապէս շահագրգռուած է Թուրքիայի աշխատակողմեան դասակարգը իր ամբողջութեամբ,

Նկատելով որ նոյն պարլամենտում բուն աշխատակողմեան ներկայացուցչութիւնը չի ներկայացնում ցանկալի մեծամասնութիւնը, հետեւապէս էլ շատ բնական խնդիր է որ Թուրքիայի աշխատակողմեան ինքը գիտակ մնայ նոյն պարլամենտի ամբողջ քաղաքականութեան եւ որը առաւելապէս հնարաւոր է աշխատակողմեան պատգամաւորների պատասխանատուութեամբ դէպի իրանց ընտրող աշխատակողմեանը, Շրջանային ժողովը գտնում է որ՝

- 1.- Դաշնակցութեան պատգամաւորները անպայման կերպով շարունակական գործակցելու են պարլամենտական այնպիսի հոսանքների հետ, որոնց աշխարհահայեացքը համապատասխան է Դ[աշնակցութեան] աշխարհահայեացքին, իսկ ընդհանուր եւ բացառիկ պարագաներում էլ՝ բոլոր նրանց հետ որոնք կողմնակից են սահմանադրական կարգերի պահպանման։
- 2.- Դ[աշնակցական] բոլոր պատգամաւորները ան-

3.- Բնոյթը, դիմագիծը։
4.- Տիրող, տիրապետող ազգի։

պայման կերպով պարտական են գէթ չաբաթը մի անգամ մանրամասն զեկուցումներ տալ պարլամենտի ներքին կեանքի եւ նրա քաղաքականութեան վրայ, իրանց ընտրող մարմիններին գիտակ պահելու նրանց պարլամենտական գործունէութեան:—

3.- Ընտրել 5 հոգուց բաղկացեալ մի դաշնակցական պարլամենտական բիւրօ, որի երկու անդամները ընտրուին պատգամաւորներից իսկ 3-ը Ընդհ. ժողովից, որը որպէս պարլամենտական գործունէութեան իրաւասու մարմին ուղղութիւն տայ դ[աշնակցական] պատգամաւորներին պարլամենտի գործունէութեան մէջ. իսկ դրսում յատուկ թերթերով ու թուոցիկներով (զանազան լեզուներով) ամբողջ Թուրքիոյ աշխատաւորութեան պարզի պարլամենտական ֆիզիոնոմիան, միաժամանակ տալով վերլուծումը պարլամենտում ընդունուած բոլոր հարցերի: Պարլամենտական Բիւրոյի պիւտձէն կը ծածկուի պատգամաւորների ստացած թոշակի 20%-ով իսկ մնացածը Կ. Կոմիտէներից. (ընդունուեց միաձայն):

Մեր դիրքը հանդէպ ուսու կառավարութեան:—

Նկատելով որ ուսու կառավարութիւնը մանաւանդ վերջերս իր ամբողջ թափով հալածում է Դաշնակցութեան, ինչպէս նաեւ միւս յեղ. կուսակցութիւններին, գտնում ենք, որ պիտի գործադրել հակահարուած եւ այլն ամենայայն չափով. (ընդունուեց միաձայն):

Մեր դիրքը ուսու սոց. յեղ. կուսակցութեան հանդէպ:—

Նկատելով որ այս կուսակցութիւնը մեզ հետ միեւնոյն ծրագիրը, տաքտիկն ու հայեացքներն ունի, ցոյց տալ ընկերական ամենաջերմ վերաբերմունք. (միաձայն ընդունուած):

Մեր դիրքը ուսու սոց. դեմոկրատների հանդէպ:—

«Սրանց հետ, որպէս սոցիալիստական բայց ոչ մարտական կազմակերպութիւն, գործակցել զանազան հարցերում. (միաձայն ընդունուած):»

Մեր դիրքը Պարսկաստանի շարժման հանդէպ:—

Նկատելով որ Պարսկաստանի ազատագրումը նշանակում է եւ ազատագրութիւնը հայ ժողովրդի մի որոշ հատուածի, մենք պէտք է մասնակցենք այդ շարժումին հնարաւոր չափով, միաժամանակ ամէն կերպով պէտք է պայքարել Ռուսաստանի այդ երկրում ունեցած տիրապետական ձգտումների դէմ. (միաձայն ընդունուած):

Աշխատաւորական քաղաքականութիւն:—

Ընդունելով որ մեր շրջանի մէջ մասնաւորապէս եւ ամբողջ Թուրքիոյ մէջ ընդհանրապէս, արդիւնաբերութիւնը կը գտնուի յետամնաց վիճակի մէջ, եւ թէեւ դասակարգային շարժումները չեն բնորոշուած խոր գոյներով, եւ կեղեքողներու եւ կեղեքուողներու կռիւր չի մղուիր մեր մէջ այնպէս ինչպէս արդիւնաբերական զարգացած կեղրոններու մէջ: Բայց նկատելով որ շահագործումը կայ լայն չափերով, որու ճանկերուն մէջ կը հեծեն քաղաքներու չքաւոր եւ գիւղերու հողագործը (եւ) սակաւահող մասսաները, որ ազրարային շարժում յառաջացնելու համար լուրջ եւ արդիւնաւոր հող կայ գիւղական շրջաններու մէջ, որ գտնէ այսուհետեւ պիտի բարգաւաճի մեր մէջ արդիւնաբերութիւնը:— ուստի մենք կը գտնենք որ անոր յառաջ բերած սոցիալիստական շարժումներուն դէմ պէտք եղած ոյժը հէնց այժմեանից կազմելու եւ վաղուան պրոլետարական մասսան կազմող այս օրուան մանր արհեստաւորութիւնը, այժմեան սակաւաթիւ ու ցիրուցան բանուորութիւնը հէնց այժմեանից տոգորելու համար սոց. աշխարհայեացքով, — յառաջ բերել անոնց մէջ արհեստաւորական կոոպերատիւ միութիւններ: Բացի այդ՝ նկատելով աշխատաւորութեան դասակարգային շահերը, Հ.Յ.Դ. նր որպէս դասակարգային կուսակցութիւն (sic) անպայման հարց է որ այժմեանից սկսի աշխատաւորներու մասսան կազմակերպել, հաւաքելով իր շուրջը մանր արհեստաւորութիւնը, իսկ գիւղերու մէջ հողագործը եւ սակաւահող գիւղացիութիւնը, աշխատելով անոնց վիճակին բարւոքման այնչափով որքան թոյլ կու տան երկրի ընդհանուր տնտեսական եւ քաղաքական պայմանները:

Պէտք է նաեւ պայքար մղել վաշխառուներու վոհմակիւն դէմ, մանաւանդ գիւղերու մէջ, ուր ազգաբնակչութիւնը կը ճզմուի անոնց ձեռքին մէջ. կազմել արտադրողական եւ մանաւանդ սպառողական կոոպերատիւ եւ մանր վարկային միութիւններ, որոնցմով մեր շարքերուն եւ մեր ժողովրդական խաւերուն մէջ արծարծել համայնականութեան ոգին, դաստիարակելով եւ պատրաստելով զանոնք ապագայ սոց. ցանկալի կեանքի համար. (միաձայն ընդունուած):

Մեր դիրքը եւ վերաբերմունքը ժողովրդական ինքնապաշտպանութեան հանդէպ:—

Ինքնապաշտպանութիւնը կազմակերպել գոլտ ժողովրդական միջոցներով, կազմակերպութեան բարոյական աջակցութեամբ, ընդունելով միլիցիական սիստեմ ընդհանուր ղեկավարութիւնը վերապահել միմիայն կազմակերպութեան:

..... 5

Ազգ. ներքին քաղաքականութիւն (սահմանադրութիւն):—

Նկատի ունենալով որ ներկայ ազգ. սահմանադրութիւնը, այնքան որ սաղմն է ազգ. ներքին կուլտուրական աստիճանի, բայց որը իր ներկայ դրութեամբ պահանջուած չափով երբեք չի ապահովում հայ ազգի աշխատաւորական դասակարգի շահերը, որը առաւելապէս կեղրոնացած է կղերական տոգոյն ու աղայական շահագործող դասակարգի ձեռքին. որ նա իր հուլիսեամբ իրապէս էլ ազգային է, այլ միայն դաւանանքային, Շրջանային ժողովը գտնում է որ հրամայողական անհրաժեշտ դրութիւն է հիմնովին վերաքննութեան ենթարկել յիշեալ սահմանադրութիւնը հետեւեալ սկզբունքներ վրայ.

1.- Դարձնել նրան համազգային մի սահմանադրութիւն, որի մէջ հաւասար պրոպորցիոնալ (համեմատական) ձայն ունենան հայ հասարակութեան բոլորական եւ կաթոլիկ համայնքներն եւս:

2.- Խլել նրան կղերական-աղայական դասակարգի ձեռքից եւ ընտրողական քառանդամ սկզբունքով տալ նրա օրէնսդրական եւ գործադրողական իշխանութիւնը աշխատաւորութեան ձեռքին:

3.- Վերցնել ձայներու առանձնաշնորհումը եւ քառանդամ ընտրողական ձեւով հաւասար տեղ տալ գաւառներին եւ բոլոր համայնքներին:

Պատրիարքի եւ կաթողիկոսի հարցը:—

Կաթողիկոսական եւ պատրիարքական հարցերը լինելով հակամիտական աշխատաւորական քաղաքականութեան հետ՝ չենք ընդունում սկզբունքով մտնէ Ընդհ. ժողովի օրակարգի մէջ այդ հարցը:

Կուսակցական վերաբերմունքը դէպի ազգ. կուլտուրական հաստատութիւնները:—
Մամուլ — Գիրք — Դպրոց — Լսարան եւ այլն:—

Ընդունելով որ ազգութեան գոյութեան միակ իրաւունքը ազգային ինքնուրոյն կուլտուրայի զարգացումը, եւ այդ՝ միայն ընդհ. մարդկութեան շահերի տեսակէտիցը: ընդունելով որ կեանքում արմատ ձգած անարդարութիւններն ու նախապաշարումներն — դասակարգային եւ քաղաքական — իրանց հիմքն սկսում են կուլտուրական հաստատութիւններից, գտնում ենք որ մենք որպէս յեղ. եւ կեանքի կուսակցութիւն, մեր աշխարհահայեացքին տարածման շահերիցը առաջնորդուած՝ պիտի ձգտինք կուլտուրական հիմնարկութիւններում մեր ուղղութիւնը հիմնաւորելու եւ նրանցում տեղաւորելու մեր աշխարհահայեացքին համապատասխան անձերին:

Առ այս՝ գտնում ենք որ պիտի ուժ տալ ոչ թէ միայն դպրոցական այլ եւ ժողովրդի արտադրողական գործազմանը, լսարաններով, հրատարակութիւններով եւ թատրոնով:

Պարտաւորացնում ենք բոլոր դաշնակցականներին որ կուլտուրական հիմնարկութիւնների գործում անհատապէս մասնակցին բուռն ակտիւ, բայց ոչ թէ կուսակցութեան անունից:

Կուսակցութիւնը եւ կիսապաշտօնական թերթեր:—

Նկատի ունենալով որ կիսապաշտօնական դաշնակցական թերթերը խլում են Դ-նից նիւթական ու բարոյական աջակցութիւն, որոնք չեն կարողանում ճշգրիտ արտայայտիչը հանդիսանալ Դ-ն սկզբունքներին ու աշխարհահայեացքին,

Նկատելով նաեւ որ թերթերի բազմազանութիւնը առաջ է բերում լայն շփոթութիւններ Դաշնակցութեան) հիմնական սկզբունքների լուսաբանման մէջ եւ այսպիսով չեն կարողանում կանգնած լինել յեղ[ափոխական] հիմքի վրայ՝

Շրջ. ժողովը գտնում է որ Դ[աշնակցութիւնը] կիսապաշտօնական թերթերի վերաբերմամբ չպիտի անի ոչ մի նիւթական աջակցութիւն եւ սրա փոխարէն ունենալու է ճիշդ յեղ. դաշնակցական թերթ՝ Պոլիս, Վասպուրական եւ Կարինում, որոնք անպայման կերպով կանգնած պիտի լինեն յեղ. հողի վրայ եւ հարազատ արտայայտիչը Դ-եան աշխատաւորական աշխարհահայեացքի:

Թերթերը իրանց յեղ. բարձրութեան վրայ պահելու համար պարտադիր է որ Դ[աշնակցութիւնը] խմբագրական ղեկավարութիւնը ուժեղ ձեռքերի մէջ պահի միշտ թերթերի հրատարակուած վայրերում:

Պաշտօնական թերթ — Դրօշակ. նրա տեղափոխումը:—

Առաջարկում ենք «Դրօշակի» խմբագրութիւնը պահել անպայման ժրնեւում:

Մեր Շրջ. ժողովը գտնում է որ «Դրօշակը» մինչեւ այսօր որպէս կուսակցութեան պաշտօնական օրգանը չի տուել մեր ծրագրա-սկզբունքային հարցերի համար ուսումնասիրութիւններ: Գտնում ենք որ նա մինչեւ այսօր կատարել է ընդհանրապէս լրագրի դերը. — առաջարկում ենք որ Ընդհ. ժողովը լուրջ կարգադրութիւններ անի խմբագրական կազմը ուժեղացնելու, թերթի էջերում բաց անելու աշխատաւորական բաժիններ եւ պարզել մեր պատմափիլիսոփայական տեսակէտները եւ վերջապէս «Դրօշակ» թերթը դարձնել ուսուցանող մի օրգան:

«Ազատամարտ».—

Աւագանի Երջ. II ժողովը գտնում է որ Պոլսում հրատարակուած «Ազատամարտ» թերթը հակառակ իրա յայտարարութիւններին, իբրեւ կուսակցական թերթ, բնաւ չի համապատասխանում իրա բովանդակութիւնով մեր ծրագրին եւ սկզբունքներին, եւ դեռ աւելին՝ որ նա խեղաթիւրում է յեղ. սկզբունքները. մենք բուռն կերպով բողոքում ենք եւ յայտնում մեր զայրոյթը այդ անգոյն ուղղութեան հանդէպ:

Առաջարկում ենք Ընդհ. ժողովին, որ պատշաճ կարգադրութիւններ անի որպէսզի քանի «Ազատամարտը» մնում է, իրա բովանդակութիւնով հակառակ մեր կուսակցութեան աշխարհահայեացքին, չվայելէր կուսակցութեան նիւթական ու բարոյական եւ ոչ մի օժանդակութիւնն իսկ:

Գիրքեր (Հայերէն եւ զանազան լեզուներով), թուղթիկներ, շրջաբերականներ.—

Նկատելով որ Արեւմտեան Բիւրոն մինչեւ Օսմ. սահմանադրութեան հրատարակուելը չափազանց քիչ է օգտուել հրատարակելով գրքեր, եւ նկատելով որ գրքերը պրոպականտի գլխաւոր միջոցն է, պահանջում ենք որքան կարելի է շատցնել դրանց քանակը եւ մասնաւանդ որակը, նշանակելով աւելի մատչելի գներ:

Պատկերներ եւ կարտ-փոստաւանդներ.—

Նկատելով որ պատկերները եւ կարտ-փոստաւանդները ոգեւորիչ բնոյթ ունին, շարունակել հրատարակել մասնաւանդ նորերը եւ նկատելով որ գները այնպէս բարձր են նշանակուած նամանաւանդ «Արծիւ» գրատան, եւ մոնոպոլ դարձնելով աւելի եւս բարձրանում են գները եւ այդպիսով աշխատաւորութեան մեծ մասին անմատչելի են լինում, որը Դաշնակցութեան ծրագրին ոգւոյն իսկ հակառակ է,—

Պահանջում ենք Լիսի գործը շրջանին հետ մատակարարելու համար վարեն ընկերները: Անհրաժեշտ է հրատարակել աշխատաւորական գրքեր ու նոթաներ:

Պրոպագանդ — սխտեմատիկ դասընթացներ.—

Անպայման անհրաժեշտ է ի նկատի ունենալով կարող պրոպականդիստների զգալի պակասը: Ընդհ. պիւտեմէն մաս հանել դասընթացների ծախսերի համար որոշ գումար:—

Պահանջում ենք ուժեր կեդրոնացնել խոշոր քաղաքներում ինչպէս մինչեւ այժմ է եղել, այնպիսով որ հնարաւորութիւն կ'ունենանք պրոպագանդային դասախոսութիւններ սարքել լայն չափերով եւ լայն շրջաններում, ստեղծելով տեղական շկոյաներ:

րում, ստեղծելով տեղական շկոյաներ:

Կուսակցական կարգապահութիւն.—

Կանոնադրի տրամադրութիւնները շատ մեղմ են. հարկաւոր է աւելի խիստ յողուածներ մտցնել:

Օժանդակ խմբեր.—

Չընդունել ու չճանաչել այդ անուան տակ որեւէ խումբ. դաշնակցական եղողը առանց այլեւայլութեան պարտաւոր է ընդունել եւ կեանքի մէջ իրագործել Դաշնակցութեան [ծրագիրը]:

Խիստ կանոններ նոր անդամների մասին.—

Կանոնադրի առաջին յօդուածը առանց դիտողութեան ընդունուեցաւ:

Կարմիր խաչ.—

Համաձայն մեր ծրագրի իգական սեռի դաշնակցական շարքերում հաւասար ձայնով եւ իրաւունքով նոյնպէս եւ պարտականութիւններով ընդունելու սկզբունքը իրականացնել:—

Առաջարկում ենք Դ-ն շարքերից առանց սեռի խըտութեան կազմել «Կարմիր խաչի» միութիւնը. սրա անդամները միաժամանակ մնում են իրանց քաղաքական խմբերի կամ բանուորական ու գիւղացիական միութիւնների մէջ:

«Կարմիր խաչի» միութիւնը ընդունել դաշնակցական մարտական կազմակերպութեան որպէս մի օժանդակ մասը եւ սահմանափակել նրա գործունէութիւնը համապատասխան միասնային մէջ, որն է կուռի դէպքում սանիտարական օգնութիւն հասցնել մարտիկ խմբերին, բացի այդ, նիւթական եւ բարոյական օժակցութիւն ընծայել աքսորուած ու բանտարկուած ընկերներին:

Տուրքի կանոնաւորում.—

Միաձայնութիւնով ընդունուեցաւ հետեւեալ բանաձեւը: Պարտաւորիչ է դաշնակցականների համար կուսակցական տուրքը վճարել պրոկրեսիւ (յառաջատուական) եւ պրոպորցիոնալ (համեմատական) կերպով:

Եկամտի ապագայ աղբիւրներ.—

Դ[աշնակցութեան] եկամտները կազմում են.— անդամների կանոնաւոր տուրքը, բացի այդ՝ ներկայացումներ, երեկոյթներ, նուագահանդէսներ, տարեգլխի եւ այլ առթիւ նուիրատուութիւնները շարքերից եւ հա-

մակրողներից եւ հանգանակութիւն: Բացի այդ, Դաշնակցութեան պրոպագանդով որեւէ պաշտօնի անցնող անհատ ընկերները, իրենց սովորական եկամտից դուրս գալով արտակարգ ծախսերը, մնացած գումարը պատրաստ են յանձնել կուսակցութեան կասսային:

Հ.Յ.Դ. V Ընդհ. ժողովի պատգամաւորի ընտրութիւն.—

Երջ. ժողովը երկար ու տաք վիճաբանութիւններից յետոյ եկաւ այն եզրակացութեան որ Երջ. ժողովը լինելով չորսանի աւելի բարձր մարմինը քան Կեդրոնական Կոմիտէն, հետեւաբար աւելի մեծ իրաւասութիւն ունենալուն համար իրան է պատկանում առաջնորդութիւնը Ընդհ. ժողովի պատգամաւորի ընտրութեան մէջ:

Որոշեց Աւագանի շրջանից ուղարկել մի պատգամաւոր, ընտրուած՝ Երջ. ժողովից:

Ընտրուեց ընկ.⁶ Երջ. ժողովում մասնակցող ներկայ վճուական ձայների 2/3ով:

Պատգամաւորների ծախսը որոշուեց վճարել շրջանից:

Մ...ի շրջան 5, Վ...ի շրջան 3, Ս...ի շրջան 2, Փ...ի շրջան 2, Ժ...ի շրջան 1, Կ...ի շրջան 1 ոսկի:

«Խարխալ» թերթի հարցը.—

Նկատի առնուեցաւ Մայիսի հրաժարականը խմբագրութիւնից: Երջ. ժողովը որոշեց դադարեցնել «Խարխալ»ի հրատարակութիւնը:

Դատական.—

.....⁶

Նոր Կեդր. Կոմիտէի ընտրութիւն.—

.....⁷

Հաշուական.—

Նկատելով որ Երջ. ժողովը պիտի ցրուի պատգամաւորների մեկնումի պատճառով, որոշուեց հաշուետուական մասնախումբը լուծուած համարելով, նրանց տեղ 3 հոգուց բաղկացած մի մասնախումբ կազմել ստանալու [համար] Կ. Կոմիտէի ձեռքը գտնուած այն ամէնը (հաշիւ, գոյք, դրամ) ինչ որ պատկանում է շրջանի կազմակերպութեան եւ յանձնել ժամանակաւոր մարմինին: Ընտրուեցին այդ մասնախումբի անդամները՝ Ա. Հ. եւ Ա., որոնց տալ որոշուեց հարկ եղած վկայականը:

(Ծանօթ.— Նախկին Կ. Կոմիտէի ձեռքում եղած կազմակերպական, ինչպէս նաեւ «Խարխալ» թերթի ու այլ

հաշիւների քննութիւնը եւ քննադատութիւնը մնում է յաջորդ Երջ. ժողովին եւ կամ Ե. Ընդհ. ժողովին:

ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ.⁸—

Երջ. ժողովի Պոլսոյ Պատասխ. մարմ. վերաբերմամբ կայացրած որոշումի չորրորդ կէտը, որ բաց է թողնուել խմբերին յատուկ գրուած որոշումների մէջ հետեւեալն էր:—

4) Նա չնայած որ ինքնապաշտպանութեան գործում չի օժանդակել մարմիններին, նոյնիսկ երբ մարմինները իրանց միջոցներով կանխիկ գնումներ են արել, Պատասխ. մարմինը որոշ տուկոս բարդելով է մատակարարել, ինքը գնելով Փապրիթից աւելի աժան գներով:

Դատական.—

Ընկեր Պ... մի բողոք էր ներկայացրել Երջ. ժողովին որով յայտնում էր թէ նախորդ Երջ. ժողովի նշանակած դատական յանձնախումբը իրա դատին չի նայել եւ խնդիրը ձգձգուել է,

Այս առթիւ ընկեր Մ...ի յայտարարութիւնների համեմատ որմէ կը հասկցուէր թէ խնդիրը առնչութիւն չունի Երջ. ժողովի հետ այլ վերաբերում է Արեւելեան Բիւրոյին, որի լուծումը վերապահուած է Ե. Ընդհ. ժողովին, ժողովը համամիտ գտնուելով ընկեր Մ...ի կարծիքին, որոշեց հաղորդել այս նկատումը ընկեր Պ...ին:

Երջ. ժողովը ամբողջ 6 նիստ յատկացնելով Կ. Կ.ի եւ ընկեր Ջ[ուլա]ի⁹ միջեւ եղած դատին, լսելով երկուստեք եւս, յանգաւ հետեւեալ ընդհանուր եզրակացութեան.—

«Ճիշդ է որ Կեդր. Կոմիտէն թոյլ ու քննադատելի է եղել իր գործունէութիւնների մէջ, որով առիթ է տուել ընկեր Ջ-ի բուռն բողոքներին, իսկ ընկեր Ջ-ին գտնում է յախուռն ու պատուոյ զգածութենէն մղուած կարգապահութեան պակաս ունեցող:

«Եւ նկատելով որ մեր կազմակերպութեան բարոյական հեղինակութիւնը կախուած է դաշնակցականների փոխադարձ ընկերական ջերմ վերաբերմունքից, նրա պակասը տեսնում է թէ Կ. Կոմիտէի եւ թէ Ջ-ի մօտ. եւ յարգանքի պակաս՝ որ տեսնում է ընկ. Ջ-ի մօտ հանդէպ բարձր մարմինին:

6.- ԲՃԱԳՐԻՆ մէջ կիտաւոր: Տեսնել քիչ մը վարը «Մարմինների» բաժնի մէջ:

7.- Կիտաւոր. տրուած չեն ընտրուած նոր կազմի անունները:

8.- Մարմինների սահմանուած այս բաժնի մէջ տրուած է արծաճարութեան մէջ բաց ձգուած (կիտաւոր) տողերու բովանդակութիւնը:

9.- Չուլալ, Տրապիզոնի շրջանի գործիչ, որ հարց տր ունեցած նախորդ Կ. Կոմիտէին հետ:

Կ. Կոմիտէի եւ Հաշիւ. —

Շրջ. ժողովը Կ. Կոմիտէի մինչեւ այժմ ունեցած վարմունքի մասին կազմեց հետեւեալ մեղադրական բանաձեւերը.

1) Հաշուետես կոմիտսիայի ընտրութեան օրից մինչեւ վերջին օրս, Կ. Կոմիտէի Հաշիւ չյանձնելը, — պատճառաբանելով թէ մի երկու մարմիններ իրանց հաշիւները դեռ չեն յանձնել — մենք ընդունում ենք ոչ-արդարացուցիչ եւ վնասող գործերի նորմալ ընթացքին:

2) Որ նա առանց վերջապէս հաշիւ ներկայացնելու հրաժարական է տալիս մի ոչ պաշտօնական թղթի վրայ գրուած (ընդունուեց միաձայն):

3) Որ նա հակառակ երրորդ դիմումին հաշիւ պահանջելու, յայտարարում է թէ Կ. Կոմիտէի իրան պատիւ չի համարում Շրջ. ժողովի առաջ ելլելու. ասում է թէ յանձնաժողովը թող գայ եւ ստանայ:

4) Որ նա հակառակ ժողովի քանիցս դիմումներին որ ինքը անհրաժեշտ է համարում թողնել կանցլերական¹⁰ ձեւերը եւ բերանացի յայտարարել Շրջ. ժողովին, Կ. Կոմիտէն շարունակել է միշտ նամակներով խօսել (ընդունուեց 8 ձայնով եւ 1 ձեռնպահ):

5) Համաձայն Կ. Կ. ի յայտարարման, որ մի կարծ ժամանակ իր նիստերի վերաբերմամբ արձանագրութիւնները պահել է եւ Ձ(ուլալ)ի ձեռքակալման առթիւ ոչընչացնելուց յետոյ այլեւս չէ օգտուած նոյնիսկ քաղաքական նպաստաւոր պայմաններէ ու, գոնէ ոչ-գաղտնի հարցերի վերաբերմամբ արձանագրութիւն պահելու, որով հնարաւոր լինէր Կ. Կ. ի գործունէութեան ընթացքին վրայ գոնէ մօտաւոր գաղափար կազմելու (ընդունուեց 9 ձայնով 1 ձեռնպահ):

6) Եւ որ գլխաւորն է, Շրջ. ժողովը իր գրադմունքներ

րի ամբողջ ընթացքում ինչպէս նաեւ իր կատարած քննութիւնների մէջ, հիմնուած վերոյիշեալ կէտերի վրայ, դժբախտաբար յանգեց այն տխուր համոզման, որ Կ. Կ. էն իր պաշտօնավարութեան ամբողջ ընթացքում չի ունեցել երբեք ընկերների վերաբերմամբ ընկերական-բարոյական կապեր, որ նա ցաւալիօրէն զուրկ է եղել բարոյական խոր ըմբռնումներից. ըմբռնումներ որոնք բխում են Դաշնակց(ութեան) ոգուց եւ որոնք անպայման ամէն մի կազմակերպութեան ներքին կեանքում գործի յաջողութեան խթաններն են, առանց որոնց չի կարող մի կազմակերպական) մարմին ծաւալել ու զարգանալ կեանքում, եւ որի տխուր ազդեցութիւնը ծաւալուեց նաեւ Շրջ. ժողովի վրայ գլխաւորապէս ընկեր Զ. ի եւ իրենց միջեւ տեղի ունեցած ցաւալի դէպքերի քննութիւններից յետոյ (միաձայն ընդունուեց):

Ընտրութիւն նոր Կ. Կոմիտէի. —

Մտքերի երկար ու տաք փոխանակութիւններից յետոյ, որոշուեց 7 ձայնով ընդդէմ 3-ի, որ Կ. Կոմիտէութեան վայր ժամանակաւոր կերպով լինի Փառնակը¹¹ եւ Կ. Կոմիտէութիւնը յանձնել Փառնակի 3 ընկերներին⁷ որոնք պիտի վարեն գործերը, աջակցութեամբ ազատ ընկերների որոնց պիտի տրուի վճարական ձայնի իրաւունք:

Այս կարգադրութիւնը ժամանակաւոր է մինչեւ Ե. Ընդհ. ժողովի վերջնալը:

10.- Կիւսնակալական:
11.- Փառնակը ծածկանունն է Կիրասոն քաղաքի:

Փաստ. 1538-21

2.— ՏԵՂԵԿԱԳԻՐ ՕՐՏՈՒԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՅԱԲՆԱԿ ԳԻՒՂԵՐԻ

Ուլիբեյի երկրորդ շրջանի գիւղամասեր

Սողուճա, Այիպի եւ Պազար սուլի գիւղամասերում ապրում են ներկայումս 80 տուն հայ գիւղացիք:

Վերջին երկու տարուայ ընթացքում գաղթել են 7-8 տուն Ռուսաստան. մի ժամանակ ունեցել են դարոց 15-20 աշակերտներով. բերքն է կաղին եւ կորեկ: Սեփական հող չունեն, բոլորն էլ մարապա¹² են: Շնորհիւ նախկին ռեփիմներին իրանց մշակած հողերը անցել է թուրք աղաների ձեռքը, որոնց մօտ այժմ իրենք մարապայութեամբ պարապում են:

Արդիւնաբերուած բերքի ահագին մասը աղաները են յափշտակում, իսկ իրենց հագիւ մի ապրուստ է մնում: Գիւղացիք իրանց հողերը յետ ստանալու համար դիմել են դատաստանի, բայց մինչեւ այսօր դեռ ոչ մի արդիւնք...

Այս գիւղամասերը լինելով գոլտ հայկական, սրանց մօտ ապրում են դրացի թուրք գիւղացիք, որոնք նոյնպէս հողագուրկ են եւ աղաների հողերի վրայ մարապայութիւն են անում: Հայ եւ թուրք գիւղացիք միմեանց հետ համերաշխ են: Սողուճա, Այիպի եւ Պազար սուլի գտնուում են քաղաքից 2-3 ժամ հեռաւորութեան վրայ:

Ուլիբեյ շրջան. — առաջին գիւղամասեր

Գիւղ Էօրէն, Սոշ կիւր, Եաղապատն, Ճիրագլը:

Այս գիւղամասերը քաղաքից 5-8 ժամուայ հեռաւորութեան վրայ են գտնուում, եւ միմեանցից մի մի ժամ հեռաւորութեան վրայ ցրուած են:

Այս գիւղամասերում իւրաքանչիւրում հազիւ 15ական տուն հայ բնակչութիւն լինի: Սրանցից հազիւ կէսը ունեն իրանց սեփական հողերը, իսկ մնացած մասը դարձեալ մարապածիւնութիւն են անում թուրք աղաների ձեռքի տակ: Իսկ հող ունեցողներն էլ իրանց ունեցած հողերը գնել են փողով աղաներից: Արդիւնաբերուած բերքն է սովորաբար կաղին եւ կորեկ: Ունեն դըպրոց բայց դժբախտաբար կրթական գործը Օրտուի շրջակայ գիւղերում, համարեա թէ բոլոր տեղերում էլ, շատ վատ հողի վրայ դրուած է: Տարին հազիւ 4-5 ամիս աշակերտներն յաճախում են ուսման: Ուսուցիչի ռոճիկը սովորաբար 6-7 հարիւր դրու է, ոչ աւելի: Աշակերտներն միայն ձմրան ամիսներում են ուսանում, մնացած ժամանակը նրանք արտում աշխատում են:

Այս գիւղամասերի մօտ ապրում են դարձեալ թուրք գիւղացիք, որոնք նոյն տնտեսական դրութեան մէջ են գտնուում, ինչ որ հայերը: Միմեանց հետ համերաշխ են եւ հանգիստ:

Կատր գիւղ

Ներկայումս ունի 35 տուն հայ գիւղացիք: Սրանցից մի մասը ունի սեփական հող, որը ինչպէս ամէն տեղ նոյնպէս էլ այստեղ յետ է գնուած յատուկ վճարով: Իսկ միւս մասը չունենալով սեփական հող ապրում է աղաների հողերի վրայ մարապածիւնութեամբ պարապելով: Սրանց դրացի կան թուրք եւ մուհաճիրներ: Բերքերն միեւնոյնն է կաղին եւ այլն:

Ուլիբեյ Կռանը

Անցեալում այս գիւղամասում եղել է 15 տուն հայ. ներկայումս հազիւ 8 տուն է մնացել. վերջին 4 տարուայ ընթացքում գաղթել են Ռուսաստան: Սեփական հող չունեն, բոլորն էլ աղաների հողի վրայ են աշխատում. շրջակայ իրանց դրացի թուրք գիւղացիք դարձեալ տնտեսապէս վիճակակից են հայ գիւղացուն:

Այս գիւղամասում դարոց չունեն:

Սայլաթ (Ուլիբեյ շրջան)

Սրանք լինելով մի ժամանակ բոլորովին հողագուրկ, որ խլել էին անցեալում սրանց հողերը աղաները, այժմ նրանցից հազիւ 7-8 տունն է չափ յետ են գնել իրանց հողերը նոյն աղաներից եւ աշխատում սեփական հողերի վրայ. իսկ մնացած մասը շարունակում է մնալ մարապա՝ հողատէր աղաների, որոնք ահագին տարածութիւններ ձեռք են գցել անարդար կերպով: Ամբողջ գիւղը ունի 25-28 տուն հայ ազգաբնակչութիւն:

Կումա (նոյն շրջանի)

Ներկայումս այս գիւղում կայ 54 հայ տուն. ունեն նաեւ դարոց որտեղ սովորում են 25-30 աշակերտ: Տնտեսական դրութիւնն նոյնն է ինչ միւս գիւղերում այս շրջանի. դրացիք են թուրք գիւղացիք որոնց պայմանները տնտեսական համարեա թէ նոյնն է ինչ հայ գիւղացունը:

Հոճոյի (Ուլիբեյ շրջան)

Ներկայումս հազիւ 25 տուն հայ կայ. տնտեսական դրութիւնը նոյնն է ինչ որ միւս գիւղերում այս շրջանի:

12.- Մարապա կամ սրիպա, հողագուրկ գիւղացի, որ իբրեւ նշակ կ'աշխատի կալուածատիրոց հողի վրայ:

Ունեն դպրոց, որտեղ նոյն ձևով ինչպէս միւս դպրոցներում սովորում են 15-20 աշակերտներ:

Չաթախ

Այս գիւղը ունի 70 տուն հայ բնակչութիւն: Քաղաքից 7-8 ժամ հեռավորութեան վրայ է գտնուում: Այս գիւղացիք համարեա թէ կէսը ունեն սեփական հողեր, իսկ միւս հողագործերից մի որոշ մասը հարստահարւում է ամենաստոր կերպով մի հայ օրտուցի վաճառական աղայի ձեռքին, Մարտիրոս էֆէնտի անունով, որու ձեռքի տակ մարապաներ են: Ունեն դպրոց 25-30 աշակերտներով:

Փոտրնա (Ուլիբէյի շրջանում) դէպի արեւելեան մասը: Քաղաքից 8-9 ժամ հեռավորութեան վրայ գտնուում է այս գիւղը, որը ունի 45-50 տուն հայ ազգաբնակչութիւն: Տնտեսական պայմանները կարելի է ասել մօտաւորապէս որ նոյնն է ինչ միւս գիւղերում այս շրջանի: Ունեն նաեւ դպրոց որտեղ ուսումը շատ անհոգ կերպով է տարւում, ինչպէս այդ անուամ է միւս գիւղերում:

Չոկտամ

Այս գիւղը ունի 30-33 տուն հայ գիւղացիութիւն որից կէսը հազիւ ունի իր սեփական հողերը, իսկ մնացած միւս մասը հողագործ է եւ աշխատում է ինչպէս միւս հողագործները աղաների հողերի վրայ ու արդիւնաբերածից միայն մի մասը, ամենափոքր մասը մնում է իրանց ձեռքում: Ունեն դպրոց:

Քէօքներ բէյի

Մի ժամանակ այս գիւղում կար 39-40 տուն հայ ազգաբնակչութիւն, բայց վերջին 7 տարուայ ընթացքում կամաց կամաց գաղթել են Ռուսաստան 9-10 տուն: այս գաղթելը աւելի շատացել էր վերջին երկու տարուայ ընթացքում սահմանադրութեան վերահաստատումից առաջ:

Մուսակըզ

Այստեղ գտնուող 53 տուններից 13 ընտանիք գաղթել են Ռուսաստան նոյն ժամանակուայ ընթացքում ինչպէս Քէօքներ բէյի:

Քիրագ տերէ

Այս գիւղի 58 տնից 30 տունը 7 տարուայ ընթացքում գաղթել է Ռուսաստան: գաղթը աւելի զօրացել էր սահմանադրութեան վերականգնմանից երկու տարի առաջ: Սրանք շրջապատուած են թուրք գիւղացիներով եւ մուհաճիւրներով: Այս վերջիններից հայ գիւղացիք շատ վնասներ են ստանում: Նամանաւանդ Ահմետ էֆէնտի պաճնագատէից: Ունեն դպրոց նոյն կրթական մակարդակով 25-30 աշակերտներով:

Կատնճըզ (նոյն շրջանի մօտ)

31 տուն հայ գիւղացիութիւնից վերջին 2 տարուայ ընթացքում գաղթել են Ռուսաստան 7 ընտանիք: Պէտք է ի նկատի առնել նաեւ այն որ ինչպէս այս գիւղից, նոյնպէս էլ միւս բոլոր գիւղերից սահմանադրութեան վերահաստատումից վերջը այլեւս ոչ ոք չէ գաղթել, եւ եթէ մի օր իսկապէս գաղթողները վստահանան երկրի մէջ եղած կարգերի ապահովութեան, հաւանական է որ բոլորն էլ վերադառնան: Ունեն նաեւ դպրոց: Տնտեսական դրութիւնը չի տարբերուում միւսներից: 3/4ը մարապա են: Կատնճըզ եւ Չաթախը գիւղերը քաղաքից 4 ժամուայ հեռավորութեան վրայ են գտնուում:

Չաթալլը

Մի ժամանակ, դեռ սրանից մի քանի տարիներ առաջ կար 18 տուն, բայց վերջին տարիներում միեւնոյն ձեւով ինչպէս Կատնճըզից նոյնպէս այս տեղից գաղթել են Ռուսաստան եւ ներկայումս հազիւ 10 տուն հայ կայ: Կատնճըզի եւ Չաթալլի գիւղացիներն 3/4ը մարապաներ են, չունեն սեփական հող:

Ֆարմուտայի շրջանի հայ գիւղեր

Սայաճա գիւղ

Քաղաքից 4 ժամ հեռավորութեան վրայ: այս գիւղում ապրող 75 տուն հայ ընտանիքից 25 տունը գաղթել է վերջին մի քանի տարիների ընթացքում, դարձեալ Ռուսաստան: Սրանցից մի մասը տասը տարի առաջ իրանց հողերի մի մասը գնեցին, իսկ միւս մասը 500 ոսկիով քաղաքից երկու թուրք հարուստ աղաներ գնեցին եւ վերջ ի վերջոյ ծախեցին հայ գիւղացիներին 2000 ոսկիով: այսպիսի ծանր ու կեղեքման պայմանների տակ այս գիւղացիք ձեռք բերին հազիւ հազ իրանց արդիւնաբերող մշակուած հողերը, որոնց վրայ ինչպէս եւ միւս գիւղացիք սրանք էլ արդիւնաբերում են կաղին եւ այլն: Ունեն նաեւ դպրոց աւելի կանոնաւոր քան միւս գիւղերինը:

Թեփէ գիւղ նոյն շրջանի

Այս գիւղում եղած 90 տուն հայ գիւղացիներից 20 տունը գաղթել է Ռուսաստան վերջին տարիների ընթացքում: Թեփէ գիւղի գիւղացիներից 3/4ը իր սեփական հողերն ունի, իսկ 1/4ը աշխատում է աղաների հողերի վրայ որպէս մարապա: Սրանք նոյնպէս ունեն դպրոց միւսների նման կիսատ պաւտ: Այս գիւղը Սայաճա գիւղին մօտ է: քաղաքից 4 ժամուայ հեռավորութեան վրայ է գտնուում:

Ալաճա աղաճ

Այս գիւղից 25 տունից 8-9 գաղթել են նոյնպէս Ռու-

սաստան: Չունեն դպրոց: Սրանք հողերը գնել են քաղաքի հարուստ Հաճի Օսման Ֆուրտուն գատէից եռապատիկ գներով, որը հոչակաւոր վաշխառու հարստահարող մըն է:

Փէրչէմպէյի շրջան

Քաղաքից 3 ժամ հեռավորութեան վրայ

Քուրուլէքի

18 տուն հայ գիւղացիներից մնացել է այժմ հազիւ 8 տուն եւ սրանցից կէսն էլ սեփական հող չունի: մարապաներ են աղաների մօտ: Այս գիւղում դպրոց չկայ:

Եոնուս, Առեք

գիւղերը միեւնոյն տնտեսական պայմանների մէջ են: միջին թուով այս գիւղերում կան 10նական տուն հայ գիւղացիք: սրանք իրանց երեխաներին ուղարկում են Թէփէ գիւղի դպրոցը:

Քարա օյլուք

21 տունից ներկայումս հազիւ 11-12 տուն է մնացել: Գաղթել են Ռուսաստան: Սրանց հողերը իրանք արդէն գնել սեփականացրել են, իսկ միւս կէսը շարունակում է մարապա մնալ աղաների ձեռներում: Սեփական դպրոց չունեն յաճախում են Թէփէ գիւղի դպրոցը սրանց երեխաները:

Բուլ տան (Ֆարմուտայի շրջան)

Այս գիւղում 17 տունից այժմ մնացել է հազիւ 10-11 տուն, միւս մասը գաղթել է Ռուսաստան: Այս գիւղացիներից միայն 1/4ը ունի իր սեփական հող, միւս մնացած 3/4ը մարապա է եւ աշխատում աղաների հողերի վրայ:

Չամաշի շրջան

Տաշօլուկ գիւղ

Այս գիւղի 95 տունից 35 տունը գաղթել է դէպի Ռուսաստան: Գիւղացիներից հազիւ կէսը կարողացել են հողերը ձեռք բերել, իսկ միւս կէսը շարունակում է մնալ մարապա հարուստ աղաների ձեռքում: Այս շրջանում անասելի չարիք ու պատուհաս է գիւղացւոց գլխին չամաշի հաճի Մատաֆա աղայի եկէնը, Օսման էֆէնտի

անուն հրէշը, որը ամէն չարիք ու փորձանք հասցնում է գիւղացւոց: Այս գիւղը Օրտուից 13 ժամ իսկ Ֆատաշից 3 ժամ հեռավորութեան վրայ է գտնուում: Ունեն դպրոց, մի ուսուցիչ, ուսումը հազիւ մի քանի ամիս է տարեկան: ուսման գործը շատ աննախանձելի վիճակի մէջ է:

Օրտուի շրջանի հայաբնակ գիւղերից գաղթականութիւնը հետեւանք է միմիայն հողագրկութեան եւ բացարձակ տնտեսական քայքայման ու հարստահարման գանազան աղաների ձեռքում: Բացի սրանից ուսման գործը բոլոր գիւղերում էլ ամենածայր աստիճան յետ ընկած է: ուսումը մի կերպ տարւում է, այն էլ կարծէք թէ միմիայն այդ ու բեն սովորացնելու համար:

Անիրաւութիւնը, հարստահարումը, աղքատութիւնն եւ խաւարը այս ժրաջան ժողովուրդը դուրս է քշում իր հայրենիքի հողերից որոնց վրայ այնքան աշխատանք են թափել ու անտառապատ գետիները արտերի ու կաղինոցների են վերածել: Մինչդեռ սրանից առաջ գոյութիւն ունեցող ռեժիմը այդ բոլոր գիւղացու հալալ աշխատանքը յափշտակել ու տուել է աղաներին, որոնք տէր ու տիրական դառնալով չարաչար տարիներ շարունակ շահագործել, արիւնաքամ են արել գիւղացի աշխատաւոր ժողովուրդը, որը դեռ մինչեւ այսօր էլ շարունակում է:

Ֆարմուտայի շրջան

Չաւուշլար

Ներկայումս այս գիւղում կայ միայն 50 տուն հայ գիւղացի, մնացեալ մասը, 30 տունը վերջին տարիների ընթացքում գաղթել են Ռուսաստան: Սրանց 3/4ը ունի սեփական հող ներկայումս, միւս 1/4 աղաների հողերի վրայ են աշխատում: Ունեն նաեւ դպրոց: համեմատած միւս դպրոցների հետ սրանց դպրոցը աւելի լաւ վիճակի մէջ է: Չաւուշլարից համեմատած միւս գիւղացւոց հետ աւելի գիտակից են եւ քաջ:

Քուլչի էրէն

Հազիւ մի ժամ քաղաքից հեռավորութեան վրայ: Նախկին 80 տունից գաղթել են 20 տուն: Սրանք համարեա թէ իրենց հողերը բոլորն էլ գնեցին: Ունեն նաեւ դպրոց, որտեղ սովորում են 30-35 աշակերտ: քուլչի էրէնցիք դէպի դպրոցը առանձին սէր ունեն:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ԳԼՈՒԽ X

ՓՈՔՐ-ՀԱՅՔ

Օսմանեան սահմանադրութեան հռչակումէն անմիջապէս ետք, Թուրքիոյ ամբողջ տարածքին, նախկին ընդլատակեայ գործող կազմակերպական շրջաններու կողքին, արագ թափով ստեղծուեցան նոր միաւորներ: Յատկապէս Երկրի արեւմտեան հայաշատ գօտիներուն մէջ կուսակցական հին թէ նոր այդ շրջանները կազմակերպելու նպատակով, Պոլսոյ Պատ. մարմնի հրահանգով 1909 թ. Փետրուարին գումարուեցաւ ուսումնական անունը ստացած այս շրջանային ժողովը, որուն մասնակցելու հրահարուած էին հիմնականին մէջ Սեբաստիա եւ Խարբերդ-Մամուրէթ իւ Ազիզ նահանգներու, ինչպէս նաեւ յարակից կարգ մը գաւառներու կոմիտէութիւնները:

Նորակազմ շրջանը կոչուեցաւ Փոքր-Հայք, որուն առաջին «ուսումնական» ժողովին իսկ կազմաւորուեցան հետեւեալ չորս Կեդր. Կոմիտէութիւնները.—

I - Բերդ (Շապին Գարահիսար)

II - Բերդաքար (Խարբերդ), որ շուտով «Լեոնասար» անունով պիտի վերակոչուէր:

III - Սեւ Բլուր (Սեբաստիա)

IV - Բանալի - Մամսոն, որ իբրեւ շրջանի կեդրոն յետագային փոխարինուեցաւ Մարգուանով (Կայան):

Վերոյիշեալ բաժանումներուն համաձայն եւս, խմբած ենք իւրաքանչիւր շրջանին վերաբերող փաստաթուղթերը, ջանալով ըստ կարելոյն ճշգրտել ծածկանունով յիշատակուած տեղանուններուն համապատասխան վայրերը:

Առաջինը՝ Փոքր-Հայքի կազմակերպութեան հիմնադիր Առաջին Ռայոնական ժողովն է:

Փաստ. 840-40

Ա 1.- Հ. Յ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՓՈՔՐ-ՀԱՅՔԻ Ա. ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Գումարուած Սեւ-բլուրի մէջ 1909 Փետր. 18-28

Մասնակցեցան.—

- | | |
|--|---|
| 1) Բերդաքար ¹ քաղաքի կոմիտէէն ընկեր Չախու | 10) Բերդ ¹⁰ քաղաքի կոմիտէէն ընկեր Ազատ |
| 2) Բերդաքար ² քաղաքի կոմիտէէն ժիրայր-1 | 11) Հրաբուխ ⁵ քաղաքի կոմիտէէն ընկեր Ներշապուհ |
| 3) Որոտում ³ քաղաքի ենթակոմիտէէն ընկեր Գայլ | 12) Վիշապի ¹¹ Պատ. մարմնի ներկայացուցիչ ընկեր Պերճ |
| 4) Սեւ-բլուր ⁴ քաղաքի կոմիտէէն ընկեր ժիրայր-2 | 13) Մասնագէտ ընկեր Կարօ |
| 5) Դաշտ ⁵ քաղաքի ենթակոմիտէէն ընկեր Գագիկ | 14) Դուրան-Բարձրաւանդակի Կ. Կ.էն ընկեր Սուրէն |
| 6) Կայան ⁶ քաղաքի կոմիտէէն ընկեր Հրատ | 15) Իսկ խորհրդակցական ձայնով ընկեր Գեղամ |
| 7) Պոնտոս ⁷ քաղաքի կոմիտէի կողմէն Բասիլ | Նախագահ ընտրուեցաւ ընկեր Պերճ, օգնական՝ Գայլ |
| 8) Բանալի ⁸ քաղաքի կոմիտէի կողմէն Արտակ | Քարտուղարներ՝ ընկեր Արտակ եւ Բասիլ |
| 9) Չորայր ⁹ քաղաքի կոմիտէէն ընկեր Հրաչեայ | |

1.- Բերդաքար՝ Խարբերդ:
 2.- Բերդաքար՝ Սալաթիա:
 3.- Որոտում՝ Տիվրիկ:
 4.- Սեւ Բլուր՝ Սեբաստիա:
 5.- Վայրը անձանօթ:
 6.- Կայան՝ Մարգուան:

7.- Պոնտոս՝ Ամասիա:
 8.- Բանալի՝ Մամսոն:
 9.- Չորայր՝ Թոքատ:

10.- Բերդ՝ Շապին Գարահիսար:
 11.- Վիշապ՝ Կ. Պոլիս:

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Ա. Ընդլայնում կազմակերպական շրջանակի.—

1) **Պրոպագանդա.—**

Նկատելով որ Փոքր-Հայքի մէջ փորձուած եւ իրենք գիրենք կազմակերպութեան տրամադրող անձեր, ըլլայ մտաւորական ըլլայ մարտական, կը պակսին,

Նկատելով որ տեղական ուժերը նոյնիսկ եթէ տրամադրուէին անբաւական պիտի ըլլային այսքան ընդարձակ շրջանի մը կազմակերպական նորանոր պահանջներուն առանձինն բաւարարութիւն տալու,

Նկատելով որ դուրսէն գործիչներ ապագային կազմուելիք Կ. Կ.երու մէջ ինչպէս նաեւ թերթի մը հրատարակութեան պարագային պէտք է ունենան մեծ դեր մը,

Նկատելով որ դուրսէն գործիչներ կրնան մանաւանդ տեղւոյն վրայ նոր գործիչներ պատրաստել,

Մեծամասնութեամբ որոշուեցաւ.— Հրաւիրել դուրսէն ազատ գործիչներ Փոքր-Հայքի շրջանին համար, անոնցմէ ոմանք մտաւորական ոմանք ալ մարտական ըլլալու պայմանաւ:

2) **Կանանց Շարժում.—**

Նկատելով որ բարձրու յետամնացութեան պատճառով մեր շրջանին մէջ խիստ դժուար է կանանց շարժում առաջ բերել սոսկ այդ գործիչներու ձեռամբ,

Նկատելով որ միւս կողմէ անհրաժեշտ կարիք կայ կանանց զարթնում մը ստեղծելու մասնաւանդ այստեղ ատով հասարակական կեանքը աւելի ոգեւոր դարձնելու համար,

Նկատելով որ շրջանին մէջ թէեւ կան գաղափարական կիներ բայց անոնք բաւականաչափ զարգացած եւ փորձուած չլլալով չեն կրնար ամբողջ շրջանի կարիքներուն գոհացում տալ,

Միաձայնութեամբ որոշուեցաւ.— Հրաւիրել դուրսէն փորձուած պրոպագանդիստ կիներ ամէն մէկ Կեդր. Կոմիտէի շրջանին համար մէկ հատ:

3) **Գրաւոր պրոպագանդա.—**

Միաձայնութեամբ որոշուեցաւ.— Առանց դուրս ելլելու ընդհանրապէս ռայոնի տեղական պէտքերուն համար Ընդհ. Ժողովի կողմէն որոշուած տոկոսի քանակէն, հրատարակել դաշնակցական թերթ մը Փոքր-Հայքի մէջ — քաղաքը որոշելը թողով ընդհ. Ժողովին:

Բացի այդ որոշուեցաւ.— Խորհուրդ տալ ռայոնի բոլոր մարմիններուն որպէսզի, մասնաւանդ մինչեւ թերթի հրատարակուելը, մերթ ընդ մերթ հրատարակեն թոռուցիկներ ընդհանուր քաղաքական եւ կազմակերպական հարցերու վերաբերմամբ տեղեկութիւններ տալու համար հասարակութեան, պահպանելով վերին աստիճանի լուրջ ուղղութիւն:

4) **Պատանեկան խումբեր.—**

Միաձայնութեամբ որոշուեցաւ.— Յանձնարարել ռայոնի մարմիններուն որպէսզի կազմակերպեն ազգային թէ օտար վարժարաններու աշակերտներէն եւ աշակերտուհիներէն անոնք որ առնուազն 14 տարեկան են, անոնցմէ կազմելով պատանեկան խումբեր՝ անոնց մէջ զարգացնելու համար ընդհանրապէս յեղափոխական ու մասնաւորապէս դաշնակցական դաստիարակութիւնը:

5) **Որսորդական, ճանապարհորդական եւայլ խումբեր.—**

Միաձայնութեամբ որոշուեցաւ.— Դաշնակցական մարմինները պէտք է նախաձեռնութիւնը առնեն կազմելու որսորդական¹², մարմնամարզական, ճանապարհորդական, երգեցիկ-թատերական եւ այլ նմանօրինակ խումբեր ոչ-կուսակցական հողի վրայ եւ, եթէ կարելի է, երկսեռ:

6) **Լսարան, ընթերցատուն, վիճաբանական ժողովներ.—**

Նկատելով որ իբրեւ պրոպագանդի միջոցներ անվիճելի են լսարաններու, ընթերցատուններու եւ վիճաբանական ժողովներու օգտակարութիւնները,

Միաձայնութեամբ որոշուեցաւ.— Յանձնարարել ռայոնի մարմիններուն որպէսզի կարելի եղածին չափ զարկ տան այդ ուղղութեամբ կատարուած աշխատանքներուն, բայց մասնաւոր ուշադրութիւն, դարձրնելով որ դաշնակցական ընկերներ առ հասարակ, թէ-կուզ չէզոք վայրերու մէջ խօսած ժամանակ անգիտակցաբար թէ գիտակցաբար չարտայայտեն Դաշնակցութեան ծրագրին հակասող գաղափարներ:

7) **Գիշերային դասախօսութիւններ, երեկոյթներ.—**

Միաձայնութեամբ որոշուեցաւ.— Յանձնարարել մարմիններուն կազմել գիշերային դասախօսութիւններ եւ երեկոյթներ նոյնիսկ չէզոք մտաւորական ուժերու աջակցութեամբ՝ պահպանելով յամենայնդէպս անոնց մէջ յեղափոխական ոգի:

8) **Յեղափոխական գրականութեան տարածում.—**

Մեծամասնութեամբ որոշուեցաւ.— Բանալ ռայոնի գլխաւոր քաղաքներուն մէջ գրախանութներ որտեղ տեղական մարմիններու հսկողութեան տակ վաճառուին Դաշնակցութեան հրատարակութիւնները եւ առհասարակ յեղափոխական-գրական երկեր: Այդ խանութները պիտի ըլլան իւրաքանչիւրը իր շրջանի գիւղեր:

12.- Որսորդական անուան տակ կ'իմացուէր զինավարժական խումբ:

րուն մէջ յեղ. գրականութեան տարածման կեդրոններ:

Չ) Ուսումնասիրութիւն Փոքր-Հայքի շրջանին.—

Նկատի ունենալով որ պատգամաւորներու բերած տեղեկագիրները շատ ցայտուն թերութիւններ ունին, միաձայնութեամբ որոշուեցաւ.— Խնդրել Պատ. մարմնէն վիճակագրական ուսումնասիրութեան համար լաւ հարցարան մը եւ անոր պատճէնները ուղարկել ռայոնի զանազան մարմիններուն, Կ. Կ. ներուն միջոցաւ, որպէսզի անոնց հետեւելով պատրաստեն իւրաքանչիւրը իր շրջանին ուսումնասիրութիւնը:

Բ. Մեր վերաբերմունքը դէպի հայ եւ օրարագգի ուրիշ կուսակցութիւններ.—

1) Հնչակեան կուսակցութիւն.—

Նկատելով որ մեր շրջանի մէջ գոյութիւն ունեցող հնչ.ները իրենց անորոշ ուղղութեամբ եւ գործունէութեամբ ոչ մէկ բարոյական վստահութիւն չեն ներշնչեր, Միաձայնութեամբ որոշուեցաւ.— Չճանչնալ զանոնք իբրեւ կուսակցութիւն մը այլ, մղել պայքար անոնց դէմ իբր վնասակար տարրի, սարքելով վիճաբանական ժողովներ, հրատարակելով թուղթիկներ եւ բողոքներ, մնալով յամենայն դէպս քրոնկետ հողի վրայ եւ միեւնոյն ժամանակ ջանալով անոնց մէջ գտնուող մաքուր եւ խաբուած տարրերը հաւաքել Դաշնակցութեան դրօշին տակ:

Ժողովս այս մասին լսելով Բերդի¹⁰ պատգամաւորին բացատրութիւնները եւ առանց ջնջած լինելու վերոգրեալ որոշումը, որոշեց նաեւ.— Յանձնարարել ռայոնի այն մարմիններուն որոնց գտնուած քաղաքներուն մէջ գոյութիւն ունին հնչ.ներ, որպէսզի նախ կողմնակի միջոցներով եւ պատասխանելով անոնց շարունակական համբարաշխութեան հրաւերներուն, առաջարկեն հետեւիլ Բերդի օրինակին, որտեղ երկու կողմերու ցոյց տուած անձերէն փոխադարձօրէն 3-ական հոգի նշանակելով կազմած են կոմիտէ մը՝ որ, իբրեւ Դաշնակցութեան մարմին պիտի վարէ տեղւոյն յեղ. գործերը դաշնակցական ուղղութեամբ, հնչ.ները դադարեցնելով ամէն յարաբերութիւն իրենց նախկին կուսակցութեան հետ եւ վերադարձնելով անոնց կնիքը: Երբ կողմնակի միջոցներով կատարուած այսպիսի առաջարկ մը հաւանութիւն գտնէ այն ատեն մեր մարմինները հարցը կը դնեն պաշտօնական հողի վրայ:

2) եւ 3) Ռամկավարական-սահմանադրականներ եւ Վեր. Հնչ.ներ:

Նոյն նկատում եւ նոյն որոշում ինչ որ տրուած էր հնչակեաններու վերաբերմամբ:

4) Իթիբիհատ-Թէրագգը.—

Նկատելով որ Իթիբիհատ-Թէրագգը թէեւ բուրժուազիական եւ մեզի բաղդատմամբ աջակողմեան կուսակցութիւն մըն է, բայց թէ նա յամենայնդէպս սահմանադրական կուսակցութիւն մըն է որուն ըստ էութեան դաշնակից կը մնանք մենք ընդդէմ բռնապետութեան,

Մեծամասնութեամբ որոշուեցաւ.— Յանձնարարել ռայոնի բոլոր մարմիններուն, խումբերուն եւ ընկերներուն պահպանել մօտիկ յարաբերութիւն Ի. եւ Թ.ի մասնաճիւղերուն հետ, այսպիսով ոչ միայն Երկրի սահմանադրական տարրի բարոյական ուժը աւելցուցած ըլլալու համար, այլեւ մեր պրոպագանդով անոնց մէջ արթնցնելու համար նորանոր գաղափարներ աւելի համապատասխան՝ մեր ծրագրին:

Ժողովը միեւնոյն ժամանակ տեղեկանալով որ ռայոնի ինչ ինչ վայրերուն մէջ կան մեր ընկերներէն այնպիսիներ, որոնք անդամ են Ի. Թ.ին եւ նկատելով որ անհատ մը չի կրնար միեւնոյն ատեն երկու կուսակցութիւններու պատկանիլ, միաձայնութեամբ որոշեց.— Յանձնարարել այդպիսի ընկերներուն, տեղական մարմիններու միջոցաւ, որպէսզի անոնք հրաժարին կամ Դաշնակցութենէն կամ Ի. Թ.էն:

5) Ահրար եւ Յ) Քրտական «Թէպիլին»

Նկատելով որ Օսմ. Ահրար (Սաբահէտիյնական) եւ քրտական «Թէպիլին», կուսակցութեանց քաղաքական եւ տնտեսական դաւանանքները մեր շրջանին մէջ գոյութիւն ունեցող բոլոր կուսակցութեանց դաւանանքներէն աւելի կը մօտենան մերիններուն,

Նկատելով սակայն որ Ահրար եւ Թէպիլին մեր շրջանին մէջ չեն ներկայացներ տակաւին կազմակերպել վիճակ մը,

Միաձայնութեամբ որոշուեցաւ.— Յոյց տալ ամէն բարոյական աջակցութիւն, որպէսզի Ահրարի եւ Թէպիլինի մարմիններ ստեղծուին Փոքր-Հայքի մէջ եւ անոնց ստեղծուելէն ետքը կարելի եղածին չափ ուժ տալ անոնց զարգացման:

7) Ֆէտաբարանը Միլլէթ.—

Միաձայնութեամբ որոշուեցաւ.— Յանձնարարել ռայոնի Կ.Կ. ներուն որպէսզի հետաքրքրուին նաեւ «Ֆէտաբարանը Միլլէթ» ընկերութեան ծրագրով եւ ուղղութեամբ, եւ եթէ անոնք կը համապատասխանեն մերիններուն,— այս ընկերութեան մասին ալ ունենալ նոյն վերաբերմունքը ինչ որ որոշուած է Ահրարի եւ Թէպիլինի մասին:

Գ. Մեր վերաբերմունքը դէպի Ազգ. բարեգործական ու զարգացական եւ պետական հաստատութիւններ.—

1) Ազգ. բարեգործ. եւ զարգացական հաստատութիւններ.—

Միաձայնութեամբ որոշուեցաւ.— Բոլոր մարմինները եւ ընկերները պէտք է ամէն ջանք ի գործ դնեն ազգ. հաստատութիւններու վարիչ ժողովներուն մէջ անցընելու մեր ընկերները կամ առնուազն մեր համակիրները, այդպիսով այդ հաստատութիւնները ռամկավարացնելու եւ աշխարհականացնելու համար:

2) Պետական հաստատութիւններ.—

Միաձայնութեամբ որոշուեցաւ.— ա) Ջանալ բոլոր պետական հաստատութիւններուն մէջ մտցնել դաշնակցական ուղղութեան հետեւող (կամ Ահրարի կուսակիցներ կամ առնուազն պարզ սահմանադրականներ) անձնաւորութիւններ, այդ մտքով կատարուած աշխատանքներուն մէջ ի հարկին պիտի կազմելով ձախակողմեան տարրերու հետ: Բացի այդ դաշն. մարմինները պէտք է ուշադրութիւն դարձնեն պետական ամէն կարգի պաշտօնեաներու ընթացքին եւ բողոք բառնան անոնց կողմէ գեղծումներ կատարուած պարագային:

բ) Ռայոնի դաշն. պատանիններու ամէնէն ուշիմ մանուկներէն մրցմամբ երկու կամ աւելինքը ուղարկել Պոլիս կամ Եւրոպա հետեւելու համար կարեւորագոյն վարժարաններու եւ վերադառնալով իրենց հայրենիքը ստանձնելու ազգ. ուսուցչական, պետական եւ այլ հանրային պաշտօններ: Ժողովը այս որոշման գործադրութիւնը կը յանձնէ ռայոնի Կ.Կ. ներուն, ծախքերը հոգալու պայմանով ազգային աղբիւրներէ եւ յամենայն դէպս կողմնակի միջոցներով:

Դ. Կեդրոնական Կոմիտէ

Նկատի ունենալով Փոքր-Հայքի մէջ Դաշնակցութեան արդի ուժերը, միաձայնութեամբ որոշուեցաւ առայժմ ունենալ չորս Կեդր. Կոմիտէ, հետեւեալ կերպով.—

I Կ. Կ. — Բերդ¹⁰.—

- Սուշէհիր
- Համիտիէ
- Թօփ ալթը
- Կիրճանիս
- Ալըծօրա
- Շէյրան
- Քէչէ եուրտ
- Օվա

} Իրենց գիւղերով

II Կ. Կ. — Բերդաբադ¹.—

Մամուրէթ իւր Ազիզի վիլայէթը ամբողջ ֓ինկեան եւ Բալու:

III Կ. Կ. — Սեւ-բլուր⁴.—

- Տիվրիկ
- Ջարա
- Գոչ հիսար
- Կիւրին
- Եէնի խան
- Տարենտէ
- Շէհիր գչլա
- Ղանղալ

} Իրենց գիւղերով

IV Կ. Կ. — Բանալի⁸.—

- Սինապ
- Պաֆրա
- Չարչամպա
- Չորում
- Եօզղատ (գիւղերով)
- Մարգուան
- Ձիլէ
- Հաճի գիւղ
- Թօգատ
- Քէօփրիւ
- Սունկուրլու
- Տէնէքմատէն
- Ագտաղ մատէն
- Ամասիա
- Հէրէք
- Նիքսար
- Արթովա

Կեդր. Կոմիտէները պէտք է ընտրուին ամենաուշը մինչեւ յառաջիկայ Ապրիլ 15/28, վերոգրեալ չորս շրջաններու մէջ գոյութիւն ունեցող մարմիններէն գումարուած շրջանակային ժողովներու մէջ ուր կ'որոշուի նաեւ վերջնականապէս Կ.Կ. ներուն վայրը:

Ժողովը որոշեց նաեւ, միաձայնութեամբ, խնդրել յառաջիկայ Ընդհ. ժողովէն ընտրել Փոքր-Հայքի համար Պատ. մարմին մը:

Ե.— Տնտեսական պայքար

1) Արհեստակցական միութիւններ

Նկատի ունենալով որ Փոքր-Հայքի մէջ տնտեսական պայքարը արդէն ինքնըստինքեան ստեղծուած է, թէ այս շրջանին մէջ գոյութիւն ունին առաւել կամ նուազ մեծ կապիտալիստական ձեռնարկներ ինչպէս նաեւ սփականագուրկ բանուորութիւն,

Միաձայնութեամբ որոշուեցաւ.— Յանձնարարել մարմիններուն սկսիլ անմիջապէս բանուորներու եւ մանր արհեստաւորներու կազմակերպման՝ զանոնք համախմբելով ոչ-կուսակցական արհեստակցական միութիւններու ձեւին տակ, բայց անոնց տալով սոցիալիստական ուղղութիւն, մերոնք ներկայանալով անոնց

պաշտպան խորհրդատուներ եւ հսկելով որպէսզի տրնտեսական անմիջական շահերով զբաղուած ժամանակ բանուորական միութիւնները զարգացնեն իրենց անդամները նաեւ քաղաքական իտէալներու տեսակէտով, այդպէսով դիւրացնելու համար այդ միութիւններու ապագային կուսակցական դառնալը:

2) Արտադրողական եւ սպառողական քոռքերաթիւներ.—

Ժողովը այս հարցի վերաբերմամբ լսելով զանազան պատգամաւորներու զեկուցումները, մեծամասնութեամբ որոշեց.— Ռայոնի Կ.Կ.ներուն թողուլ այս խնդրի մէջ ղեկավարուել իրենց սեփական ուժերու համաձայն:

3) Գիւղացիական միութիւններ.—

Միաձայնութեամբ որոշուեցաւ.— Յանձնարարել մարմիններուն ձեռնարկել գիւղացիական միութիւններու կազմութեան ոչ-կուսակցական հողի վրայ, պայմանաւ որ այդ միութիւնները զբաղին որոշ չափով նաեւ քաղաքական կեանքով, այսպէսով հետզհետէ պատրաստուելու համար դէպի կուսակցականութիւն:— Ժողովս պարտք կը դնէ Կ.Կ.ներուն վրայ ձեռք բերել ուրիշ շրջաններու մէջ գործածուած արհեստակցական ու գիւղացիական միութիւններու կանոնադրներէն եւ անոնց հիման վրայ պատրաստել կանոնադրներ իրենց շրջաններուն պայմաններուն համապատասխան:

4) Վաշխառուներուն դէմ

Նկատի ունենալով վաշխառութեան զանազան ձեւերուն մեր շրջանին մէջ վերին աստիճանի զարգացած վիճակը,

Ժողովը միաձայնութեամբ պարտք կը դնէ Կ.Կ.ներուն վրայ մղել կատաղի պայքար այդ ախտի դէմ ամէն առթիւ դիմակազուրկ ընելով վաշխառուները եւ հասկնելով գիւղացիներուն իրենց իրաւունքներու պաշտպանութեան եղանակները:

Ժողովը միաձայնութեամբ պարտք կը դնէ նաեւ Կ.Կ.ներուն վրայ որպէսզի իւրաքանչիւրը իր շրջանին մէջ շատ խորին ուշադրութիւն ընէ որ մանաւանդ գիւղերու մէջ վաշխառու եւ ուրիշ կեղեքող տարրեր չմտնեն կազմակերպական շարքերուն մէջ:

Որոշուեցաւ նաեւ Վիշապի¹¹ մարմիններուն միջոցաւ դիմում ընել Օսմ. կառավարութեան որպէսզի ան ալ փոխատուութեան պետական դիւրամատչելի միջոցներ ստեղծելով փրկէ գիւղացիութիւնը տարապայման տոկոսներէ:

5) Բարեօրում գիւղական համայնքներու վիճակին.—

Միաձայնութեամբ որոշուեցաւ.— Յանձնարարել Կ.Կ.ներուն որպէսզի ամէն ջանք ի գործ դնեն վանքապատկան կալուածներու մատակարարութիւնը յանձնելու համար միմիայն ռամկավար աշխարհականներէ բաղկացած ժողովներու (եթէ կարելի է մանաւանդ մեր ընկերներու) եւ անոնց հասոյթները յատկացնելու իր թեմի գիւղական համայնքներու կուլտուրական եւ ինքնապաշտպանական կարիքներուն:

Որոշուեցաւ.— Ժողովի կողմէն դիմել Ազգ. Երեսփ. Ժողովի անդամ մեր ընկերներուն որպէսզի դնեն այս հարցը ժողովի սեղանին վրայ:

Զ.— Պիւտճէի հզօրացում

1) Հանգանակութիւն

Ժողովը մէկ ձայնի առաւելութեամբ որոշեց որ Փոքր-Հայքի շրջանէն յառաջիկայ Ընդհ. Պատգ. ժողովին գացող պատգամաւորները առաջարկեն ջնջել ընդհ. կանոնագրի 128րդ յօդուածը¹³, եւ առանց ոեւէ մասնաւոր յօդուած նշանակելու այս մասին կանոնագրի մէջ, իրաւունք տալ միմիայն պատասխանատու մարմիններուն՝ որպէսզի ի պահանջել հարկին բռնի միջոցներու դիմեն հանգանակութեան գործին մէջ:

Այս որոշումը տրուած ժամանակ ժողովը բաղկացած էր 11 հոգիներէ, որոնցմէ Գայլ, Ժիրայր-1, Չախու, Ժիրայր-2 եւ Ներշապուհ հակառակ իսկ Պերճ, Կարօ, Հրատ, Գագիկ, Հրաչեայ եւ Ազատ հաստատական քուէ տուին:

2) Պետական էքսպրոպրիացիա

Միաձայնութեամբ որոշուեցաւ առաջարկել Ընդհ. Ժողովին իբրեւ հասոյթի միջոց ընդունել պետ. էքսպրոպրիացիայի սիստեմը յեղ. դրութեան մէջ գտնուող շրջաններում գործադրուելու պայմանաւ:

3) Ռայոնի պիւտճէն եւ անոր բաշխումը

Ժողովը ուսումնասիրելով ռայոնի դաշն. պիւտճէն զայն կը գտնէ բացարձակապէս անհամապատասխան գոյութիւն ունեցող կարիքներուն, հետեւաբար կը յանձնարարէ մարմիններուն շուտ ընդ փոյթ՝ ա) Կատարել ընդհանուր հանգանակութիւն, բ) սարքել յաջորդաբար վիճակախաղեր, ներկայացումներ, խնճոյքներ, դաշտահանդէսներ, անուանակոչութեան եւայլն առթիւ, գ) Ստեղծել դրամական շրջաններ համակիրներէ, դ) Անպայման գործադրել անդամավճարներու մասին 2%ի դրութիւնը եւ առհասարակ խիստ վարուել այս տուրքի գանձման գործում:

Ժողովը նկատի ունենալով ռայոնի թէ պրոպագանդայի եւ թէ ինքնապաշտպանութեան շատ մեծ կարիք:

ները, որոշեց առաջարկել յառաջիկայ Ընդհ. Ժողովին որպէսզի տեղական հասոյթներու 50%ը յատկացուի տեղական պէտքերուն իսկ մնացեալ 50%ը միայն յատկացուի ընդհ. կազմ. ձեռնարկներուն: Այս առաջարկը ընդունուելու պարագային գործադրուելու համար ժողովս այդ 50%ը կը բաշխէ հետեւեալ կերպով.—

- 50% գինման
- 20% պրոպագանդայի (գրաւոր)
- 30% գործիչներու ապրուստի:

Է.— Կուսակցութեան լեկալիզացիան

Ի նկատի ունենալով ներկայ սահմանադրութեան անորոշ դրութիւնը եւ անբաւարար բովանդակութիւնը, ինչպէս նաեւ քաղաքական անստոյգ կացութիւնը, կազմակերպութիւնը առայժմ կը մնայ անլեկալ, բայց օգտուելով ներկայ կարգերու տուած դիւրութիւններէն կը գործէ նաեւ լեկալ հողի վրայ հնարաւորութեան չափով:

Ը.— Անջատման հարց

Ժողովը լսելով որ ինչ ինչ մարդիկ կ'ուզեն կրկին առաջացնել անջատման հարց կովկասահայերու եւ տաճկահայերու միջեւ, եւ այդպիսի քայլ մը աղէտ մը նկատելով Դաշնակցութեան եւ անոր պաշտպանութիւնը վայելող աշխատաւոր ժողովուրդին համար, միաձայնութեամբ կ'որոշէ.— Պահանջել Ընդհ. Ժողովէն բացարձակապէս մերժել ամէն անջատման առաջարկ, անգամ մը եւս յայտարարել թէ Դաշնակցութեան համար ոչ մէկ նշանակութիւն չունին պետութիւններու զծած սահմանները եւ թէ նա հաւատարիմ իր աւանդութիւններուն պիտի շարունակէ կռիւ մղել ի շահ աշխատաւոր մասաններուն թէ Ռուսաստան, թէ Տաճկաստան եւ թէ Պարսկաստան: Ժողովը միեւնոյն ժամանակ կը խնդրէ Ընդհ. Ժողովէն որ անջատման գաղափարը հետապնդողները ի սպառ արտաքսուին կազմակերպութենէն իբրեւ վնասակար տարրեր կազմակերպութեան ապագային համար:

Թ.— Հակակղերական պայքար

Ժողովը կը յանձնարարէ ռայոնի մարմիններուն եւ ընկերներուն ուշադրութեամբ մօտենալ հակակղերական պայքարի գործին եւ բաւարարութիւն տալ միայն հասունացած պէտքերուն, կղերականութեան դէմ պայքարը սահմանափակելով միայն մամուլի մէջ, եթէ կարելի է:

Ճ.— Կովկասահայկական հարց

Ժողովը միաձայնութեամբ որոշեց իր ստորագրու-

թեամբ հրատարակել նամակ մը «Դրօշակ»ի մէջ, ուղղուած կովկասահայերուն, յանուն տաճկահայերուն՝ անոնց շնորհակալութիւն յայտնելու համար նիւթական եւ բարոյական այն աջակցութեան համար, զորս անոնք ըրած են թուրքիոյ տանջուած հայ ժողովուրդի պաշտպանութեան գործին մէջ: Միեւնոյն ժամանակ ժողովը նկատի ունենալով որ ռուսական բռնապետութիւնը կրկին գլուխ կը բարձրացնէ, թէ ճնշումը դարձեալ կը սաստկանայ, որոշեց իր տրամադրելի ուժերէն դրկել այնտեղ գործելու, այդ մասին համաձայնելով կանխաւ կովկասեան մարմիններու հետ¹⁴:

Ընկերներ Սուրէն (երկու եղբայրներով), Կարօ, Պերճ, Հրանտ, Չախու, Գայլ եւ Հրաչեայ տրամադրեցին իրենց անձը այդ գործին համար:

ՃԱ.— Հայ-թուրքական քննկրէս

Ժողովը քննելով Փոքր-Հայքի մէջ հայ-թուրք-փլորտական քննկրէսի մը գումարման հարցը եւ նկատելով որ այդպիսի քննարէս մը կրնայ մեծ օգտակարութիւն ունենալ ոչ միայն զանազան ցեղերու միջեւ համերաշխութեան կապը ամրացնելու այլ նաեւ երկրի սահմանադրական ճախակողմեան ուժերը ի մի ամփոփելով զանոնք աւելի պատկառելի դարձնելու տեսակէտէն՝ որոշեց.—

Յանձնարարել Կ.Կ.ներուն որպէսզի նախաձեռնութիւնը առնեն գումարելու Փ. Հայքի մէջ այդպիսի քննարէս մը հրակիրելով թուրք եւ փլորտ գործօն կուսակցութիւններէն:

ՃԲ.— Ինքնապաշտպանութիւն

Ժողովը լսելով ինքնապաշտպանութեան հարցի վերաբերմամբ զանազան ընկերներու զեկուցումները, որոշեց, միաձայնութեամբ.— Ունենալ Փոքր-Հայքի մէջ Զիֆոնի կեդր. Մարմին մը եւ անոր ստորադասեալ Զիֆոններ իւրաքանչիւր Կ.Կ.ի շրջանին մէջ: Իւրաքանչիւր Կ. Կ.ի Զիֆոն պարտաւոր է երեք ամիսը անգամ մը հաշիւ ներկայացնել կեդր. Զիֆոնին, իսկ կեդր. Զիֆոնը պարտական է հաշիւ ներկայացնել Ռայոնական ժողովին եւ Ընդհ. Ժողովին:

Զիֆոնները կը զբաղին միմիայն զինման գործով: Որոշուեցաւ 900 (ինը հարիւր) օսմ. ոսկիի ֆոնտ դնել կեդր. Զիֆոնի տրամադրութեան տակ բաշխումը կատարելով հետեւեալ կերպով.—

Բանալիի Կ. Կ. ⁸ —	300	Օսմ. Ոսկի
Սեւ-բլուրի Կ. Կ. ⁴ —	200	»
Բերդի Կ. Կ. ¹⁰ —	100	»
Բերդաբարի Կ. Կ. ¹ —	300	»
	900	

14.- Տեսնել յաջորդ փաստաթուղթը:

13.- Կանոնագրի 128րդ յօդուածի տրամադրութիւնն էր.— Բռնի միջոցներու գործածութիւնը հանգամանկութեան գործին մէջ խստիւ արգիլուած է:

Կեդր. Զինոնի Հաստատման վայր որոշուեցաւ Բա-
նալի եւ անդամներ ընտրուեցան, ընդհ. հաւանու-
թեամբ.—

- 1) Միհրան Օհանեան, 2) Միհրան Փիրանեան, 3) Բժիշկ Տամրամայեան, 4) Գասպար Իփէկեան, 5) Տ. Ուստոս[?] քհնյ. Մազմանեան, 6) Կարօ, 7) Նիկ. Օզանեան եւ 8) Վարդան Շահպազ:

Բացի այդ որոշուեցաւ Պատ. մարմնի միջոցաւ
խնդրել Պարոյրէն, որպէսզի նա վերցնէ իր յարմար դա-
տած իրերը գնելու գործը:

Իւրաքանչիւր Կ. Կ. Զինոնի Համար իր տալիք դրա-
մին կէսը յառաջիկայ Ապրիլ 1ին եւ մնացեալ կէսը Մա-
յիս 1ին արդէն դրկած ըլլալու է Զինոնի Կեդր. մարմ-
նին՝ Բանալի⁸:

Ժողովը միաձայնութեամբ պարտք կը դնէ Կ.Կ. նե-
րուն վրայ որպէսզի մինչեւ յառաջիկայ Ընդհ. Ժողով
պատրաստեն իւրաքանչիւրը իր շրջանին մանրամասն
աշխարհագրական քարտէսը:

ԺԳ.— Ե.րդ Ընդհ. Պատգ. Ժողով

1) Ժամանակը

Նկատելով որ 1907ի Ընդհ. Ժողովէն յետոյ ըլլա՛յ
Տաճկաստանի, ըլլա՛յ Ռուսաստանի եւ Պարսկաստանի
քաղաքական կացութեանց մէջ առաջ եկած են խորին
փոփոխութիւններ, ինչ որ անհրաժեշտ կը դարձնէ Հա-
ւաքական ուժերով ուսումնասիրելու ստեղծուած նոր
դրութիւնները եւ գործունէութեան նոր ուղի,—

Միաձայնութեամբ որոշուեցաւ.— Դիմել Արեւմտ-
եան Բիւրոյին եւ Պատ. Մարմնին, որպէսզի հարկ եղած
պատրաստութիւնները տեսնեն Ե.րդ Ընդհ. Ժողովը
գումարելու համար ամենաուշը մինչեւ առաջիկայ
Օգոստ. Սեպտեմբեր ամիսները:—

2) Պատգամաւորի ընտրութիւն

Ե.րդ Ընդհ. Ժողովի Համար ռայոնական ժողովի
կողմէ պատգամաւոր ընտրուեցաւ ընկեր Պերճ:

ԺԴ.— Կազմակերպական

Մշակուեցաւ ներքին կանոնագիր որ գործածու-
թեան պիտի դրուի Փոքր-Հայքի մէջ:

2) Յառաջիկայ ռայոնական ժողովը

Որոշուեցաւ Փոքր-Հայքի երկրորդ ռայոնական ժո-
ղովը գումարել 1910 Յունիս ամսուայ ընթացքին,
ճշգրիտ ժամանակը եւ գումարման վայրը որոշելը թող-
լով Կ. Կ. ներուն:

ՍՈՒՐԷՆ	ՀՐԱՏ	ԱԶԱՏ
ՊԵՐՃ	ԳԱՅԼ ՆԵՐՇԱՊՈՒՀ	
ԿԱՐՕ	ԺԻՐԱՅՐ-1	ԲԱՍԻԼ
ՀՐԱԶԵԱՅ	ԳԱԳԻԿ	ԱՐՏԱԿ
ԶԱԽՈՒ	ԺԻՐԱՅՐ-2	

Սեւ-բլուր, 28 Փետր. 1909

Փաստ. 839-18

Ա 2.— ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Արեւմտ. Բիւրոյին,

Յարգելի ընկերներ,

Խնդրում ենք ներփակ գրութիւնը ուղղուած կովկասահայ ժողովուրդին, հրատարակել «Դրօշակ»ի մօտակայ
քիւմ մէջ:

Ինչպէս պիտի տեսնէք, ժողովի ատենագրութիւններից գորս ձեզ ուղարկում ենք զատ փոստով, ժողովը միաձայ-
նութեամբ յայտնել է այդ փափաքը իբրև սիրոյ ու համերաշխութեան մի արտայայտութիւն դէպի կովկասահայը:

Ընկերական սիրալիր բարեւներով
Հ.Յ.Դ. Փոքր-Հայքի Ռայոնական ժողովի կողմից

Նախագահ
ՊԵՐՃ

Քարտուղար
ՊԱՍԻԼ

Սվազ, 28/2/09

Հ. Յ. Դաշնակցութեան Փոքր Հայքի անդրանիկ Ռայոնական ժողովը գումարուած Շ քաղաքին մէջ, հազարա-
ւոր ընկերներու կողմէ կ'ուղղէ եղբայրական ողջոյն կովկասահայ գաղափարապաշտ ժողովուրդին, անոր՝ որ
նիւթական եւ բարոյական անփոխարինելի օժանդակութեամբ թեւ ու թիկունք հանդիսացաւ տաճկահայ բազմա-
չարչար դատին, անոր՝ որ մտքի եւ բազկի հզօր անհատականութիւններով ազնուական, անվեհեր եւ յար արթուն
արծիւի պէս հսկեց, տարիներ անդադար, սահմանի ա՛յս կողմը տառապող բազմութեան վրայ, անոր՝ որ յանձին
իր լաւագոյն ներկայացուցիչներուն, իբրեւ նոր դարու առաքեալի մը, քարոզեց ու սորվեցուց, գրով եւ սրով, թէ
երկրի վրայ անոնք միայն իրաւունք ունին ապրելու, որոնք զիտեն այդ իրաւունքը ձեռք բերել հաւաքական աշ-
խատութեամբ:

Եւ յեղափոխութիւնը յաղթանակեց Տաճկաստան: Բռնապետութիւնը գէթ առ այժմ սարսափած է ժողովուր-
դին ազատագրական ահեղ շարժումէն, արհաւիրքները դադրած կ'երեւին որոշ չափով եւ սկսող խաղաղ աշխա-
տանքի ասպարէզին մէջ մենք կը տեսնենք դարձեալ կովկասահայ մտաւորականութեան լաւագոյն տարրերը
կանգնած առաջին գործօն շարքերում, իրենք զիրենք տուած մեղուաջան, բարեխիղճ, անաղմուկ, հոյակապ եւ
չինարար աշխատանքի մը:

Պատիւ կովկասահայերուն:

Եւ ի՛նչ դառնութեամբ կը համակուին մեր սրտերը հիմա, երբ մեր այս՝ համեմատաբար ուրախութեան օրե-
րուն մենք կը տեսնենք անոնց մօտ ահաւոր տեսարան մը կախաղանի, արիւնի եւ աւազակութեան, երբ կը տես-
նենք այն սոսկալի կեանքը բանտի, աքսորի ու տանջանքի, «քրիստոնեայ» ոճրագործին երկրին մէջ:

Մա՛հ բռնաւորներուն:

Մեզ փոյթ չէ թէ թուրքիա արդէն հանգստացեր է: Հ. Յ. Դաշնակցութեան համար չկա՛ն սահմաններ: Կովկա-
սահային ցաւը ու պարսկահային ցաւը այսուհետեւ ալ պիտի ըլլան ցաւերը տաճկահային, եւ փոխադարձաբար,
ինչպէս այդ եղած է անցեալին մէջ, բազմաթիւ տարիներու ընթացքին: Ու մենք այժմ պատրաստ ենք երթալու
այնտեղ եւ մեր բողոքի ձայնը միացնելու մեր Կովկասի եղբայրներու ձայնին, նորէն անգամ մը միասին գոչելու
համար:

Մա՛հ բռնաւորներուն:

Հ.Յ.Դ. ՓՈՔՐ ՀԱՅՔԻ ՌԱՅՈՆ. ԺՈՂՈՎ

28 Փետր. 1909

Փաստ. 1538-20

Ք 1.- Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԵՐՊԻ¹⁰ ՇՐՋԱՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Ընկերներ

Հ. Յ. Դաշնակցութեան Ե. Ընդհ. Ժողովի օրակարգի խնդիրներուն իւրաքանչիւրին մի առ մի պատասխանը չենք ուզում տալ: Մենք կը փափաքինք մեր կարծիքները յայտնել միայն այն խնդիրներու մասին, որոնք մեզ ամէնէն աւելի հետաքրքրում են:

Մասնաւոր խնդիրներու անցնելէ առաջ Ընդհ. Ժողովի ուշադրութեան կը յանձնենք առաջին անգամ ազգ. գոյութեան հարցը: Թէեւ ազատ, թէեւ սահմանադրական երկիր, բայց դեռ հայ ժողովուրդին գոյութեան հիմքերը ամուր կռուաններու վրայ հաստատուած չեն երեւիր: Մենք կ'ապրինք դեռ այլազան տարրերէ բաղկացեալ իսլամ ժողովուրդային գանգուածի մը հետ, որուն մէջ շատ զօրաւոր են դեռ նախապատմական բարբարոսներու գործերուն եւ ձեռնարկներուն ուղղութիւն տուող բնագոյնները: Կրօնն է որ դեռ գիրենք կ'առաջնորդէ. ան է որ գիրենք կը փոթորկէ կամ կը հանդարտեցնէ: Այդ կրօնը՝ կրօններու ամէնէն կաշկանդիչը, ամէնէն սեղմիչը, ամէնէն յետադիմասէրն է, եւ շատ դժուար անոր տիրապետութեան ներքեւ արեւմտեան քաղաքակրթութեան բարձր գաղափարականները հիւրընկալել տալու անոնց: Պատմութիւնը չի ցուցներ շրջան մը, ուր իսլամութեան ազդեցութեամբ մարդկային միտքը զօրաւոր թուիչք մ'ընդունած ըլլայ: Զկարծենք ուրեմն թէ հայ ժողովուրդին ապագան պիտի երաշխաւորուի, մեր հարեւան իսլամ տարրերու գաղափարները յեղաշրջելով: Այդ յեղաշրջումը ողջունել մենք անկարելի ենք համարում: Զկայ արդէն ո՛չ մէկ բառին բուն նշանակութեամբ ճշմարիտ ազատական կուսակցութիւն իսլամ շրջանակներու մէջ: Եղածին ալ քարուքանդումը հաւանական է, երբ ան պատիկ վեհերոտութիւն մը կամ թուլութիւն մը ցոյց տայ իր քայլերուն մէջ:

Մենք ժէօն թուրքերու ծրագրին մէջ ամբողջ թուրքիոյ եւ անոր բնակչութեան մասերը կազմող այլացեղ համայնքներու եւ մասնաւորաբար հայ տարրին ապագային կատարեալ փրկութիւնը չենք տեսներ: Ամբողջ հայութիւնը ժէօններու վրայ ունեցած իր լաւատես հայեցողութիւններովը հանդերձ, անոնց շովինիստական ձգտումներէն չ'ախորժիր եւ անոնց մէջ կատարեալ փրկութիւն չ'ակնկալեր: Հայ ժողովուրդը ընդունակ է, ժիր է, խաղաղասէր է, շինող շէնցնող է. ամէնէն բարձր գաղափարականները ընդունելու պատրաստ միտք ու-

նի, բայց ապահով չէ իր ապագային մասին: Ուրեմն առաջին եւ ամենակարեւոր խնդիրը ազգային գոյութիւնը երաշխաւորել է, ուրիշ բանի մը վրայ մեր ուժերը կեդրոնացնելէ առաջ: Հ. Յ. Դաշնակցութեան ճարտարութեանը յառած ենք մեր աչքերը, եւ անկէ կը սպասենք մեր պատիւին, ինչքին, կեանքին ապահովութիւնը: Թէ ի՛նչ միջոցներ կը ձեռնարկուին այդ մասին, մենք ոչ ի՛նչ չենք կարող ըսել: Ընդհ. Ժողովը լաւագոյնը կարող է մտածել: Ժէօն թուրքերու եւ Հ.Յ.Դ.ի միջեւ փոխադարձ վստահութեան ամրացումի միջոցներ, կամ բարլամենդական որոշումով լայն ապակեղրոնացման դրութեան հաստատում՝ կարող են երաշխաւորել ըստ բաւականին մեր գոյութիւնը: Առանց մոռնալու կամ անտեսելու ուրեմն կրթական, եկեղեցական եւ այլն ազգային խնդիրներու նկատառումը եւ անոնց նորանոր ուղղութիւնները տալու կարեւորութիւնը, մենք նախընտրութիւնը եւ առաջին մեծ կարեւորութիւնը տալիս ենք այլամերժօրէն ազգ. գոյութեան հարցին վերջնական եւ բարւոք եւ նպաստաւոր լուծումին: Միւսները երկրորդական հարցեր պէտք է լինեն:

Օրակարգի խնդիրներ

Դաշնակցութիւնը եւ Երիտ. Թուրքերը եւ միւս յեղ. կուսակցութիւնները

Մենք կը փափաքինք որ Դաշնակցութիւնը միջոցներ գտնէ մասնաւորաբար ժէօն թուրքերու հետ համերաշխութեան եւ փոխադարձ վստահութեան հանգոյցները աւելի ամրացնելու: Իսկ ազգ. ուրիշ կուսակցութիւններու հետ ո՛չ միայն համերաշխելու, այլեւ միանալու նախաձեռնարկը ինքը ըլլայ, ինչ որ կարող է իր բարոյական ազդեցութեան եւ համբաւին մեծապէս սատարել: Լաւ կը լինի որ վեհանձն գտնուինք ուրիշ Հ[այ] կուսակցութիւններու հանդէպ եւ ընդհ. կազմակերպութեան արժանապատուութեան վնասող հանգամանքները չնկատենք այս նպատակով ըլլալիք ձեռնարկներու մէջ նոյն իսկ մեր ընելիք գիշողութիւնները, քանի որ անոնցմէ պիտի օգտուի մանաւանդ հայ ժողովուրդը, որուն մէջ կուսակցական ոգին թշնամական ոգիի շատ դիւրութեամբ կը փոխուի: Մենք ջերմապէս պիտի ծափահարենք եթէ ոեւէ գնով հայ կուսակցութիւններու միջեւ գոյանայ միութիւն:

Մեր դիրքը դէպի ուս կառավարութիւն եւ ուս կուսակցութիւնները

Դաշնակցութիւնը ուս կառավարութեան հանդէպ պիտի չունենայ այնպիսի ընթացք մը, որ արդի ուս կառավարութիւնը կասկածով լեցնելու տեղի տայ Դաշնակցութեան մասին. պէտք է համակիր ցուցնէ ինքզինքը արդի վարչական սիստեմին ցորչափ Տաճկաստանի վիճակը չէ բացորոշ եւ չենք կարող անոր ապագային մասին կատարելապէս լաւատեսի հայեացքներ ունենալ: Դաշնակցութիւնը պէտք է իր ոյժը կեդրոնացնէ առ այժմ մէկ խնդրոյ շուրջ. իր դէմը երկու կամ երեք պետութիւններ ունենալէ աւելի աշխատելու է մի միայն մէկին հետ գործ ունենալ: Մանաւանդ ուս եւ տաճիկ դիւանագիտութիւններ միանալով, կարող են աղիտայի վնասներ հասցնել մեր ժողովուրդին: Դաշնակցութիւնը պէտք չունի բնաւ ուս յեղափոխական կուսակցութիւններու մէջ յառաջապահի դերն ստանձնելու: Պարզ համակրանք մը այդ կուսակցութիւններու գաղափարին մասին, եւ ո՛չ դրական աջակցութիւն անոնց գործերուն:

Մեր դիրքը պարսկական շարժման հանդէպ

Որոշ է թէ Պարսկաստանի մէջ եւս սահմանադրական ազատութեան վերահաստատումը մեծ բարեփոխութիւն պիտի կարողանայ յառաջ բերել մանաւանդ սահմաններու հայ ժողովուրդին կեանքին մէջ: Դաշնակցութիւնը իր զօրաւոր աջակցութիւնը պէտք է զլայնայ գործին յաջողութեան համար:

Տաճկաստանի վերաշինման գործը

Վարչական լայն ապակեղրոնացում մը միայն կարող պիտի ըլլայ թէ ամբողջ թուրքիոյ եւ թէ անոր բնակչութեան ամբողջականութիւնը կազմող տարրերու ապագան ապահովել եւ թուրքիոյ վերաշինումի գործը երաշխաւորել:

Մեր դիրքը ազգ. իշխանութեանց հանդէպ

Հակառակ մեր ազգ. իշխանութիւնները որոշ կազմական դրութեան մէջ սրբագրելիք կէտեր ունենանուն, մենք ջերմապէս կը փափաքինք որ անոնք մնան եւ դեռ յարատեւեն. ցորչափ օսմ. սահմանադրութիւնը տակաւին հեռու է արդարութեան եւ եղբայրութեան եւ կատարեալ հաւասարութեան հիման վրայ օրէնք հաստատելէ, բնաւ խոհեմութիւն չէ տապալել աշխատել մեր ձեռքով իսկ, ի՛նչ որ մերն է եւ տեղ մ'ալ մեր իսկութիւնը տարրորոշող: Եւ մենք կը ցաւինք որ Դաշնակցութիւնը գոնէ նախանձախնդիր չի ցուցներ ինքզինքը, ազգ. իշխանութեանց անվթար պահպանումին:

Հայկական հարցը եւ Եւրոպա (Յ1 յօդուած)

Ստոյգ է թէ եւրոպական դիւանագիտութիւնը ո՛չ մէկ երաշխաւորութիւն կ'ընծայէ ճշուածներու հանդէպ բարեացակամ տրամադրութիւններ տածելու: Սակայն միւս կողմէն վստահութիւն չունինք մենք օսմ. սահմանադրութեան վրայ, եւ մանաւանդ տաճիկ կրօնամուկ եւ տգէտ ժողովուրդին վրայ: Այդ յօդուածը իր առաձգական տրամադրութիւններով, լաւագոյն միջոցը կամ առիթը կ'ընծայէ միշտ Եւրոպայի յիշեցնելու իրենց խոստումը եւ անոր գործադրութիւնը պահանջելու: Անշուշտ միշտ միեւնոյն շահամուկ եւ խարդախ ոգին չէ որ կը վարէ Եւրոպայի դահլիճները եւ նպաստաւոր վայրկեանի մը մէջ կարելի է գայն գործածել ի նպաստ հայ ժողովուրդի տառապանքները մեղմացնելու: Խնդիրը կը փոխուի երբ Տաճկաստանը կատարեալ բարեկարգութեան շաւղին մէջ մտնէ, ընդհանրացումովը եւ գործադրութիւնովը ապակեղրոնացումով: Մենք դէմ ենք ո՛րեւէ առաջարկի որ նոյն յօդուածի ջրնջումին կը յանգի: Պէտք է գիտնալ թէ այդ յօդուածով Եւրոպան միշտ գոնտորի մը ներքեւ առած կ'ըլլայ Տաճկաստանը: Իսկ եթէ ան ինքզինքը բարեկարգէ ամէն մասամբ, դա ուրիշ խնդիր է:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿՈՄԻՏԷ ԲԵՐԴԻ

Փաստ. 824-36

Գ 1.- ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎ Հ.Յ.Գ. ԼԵՌՆԱՍԱՐԻ ՇՐՋԱՆԻՆ¹⁵

Գումարում 1909 Ապրիլ 5-9 X քաղաքին մէջ

ՕՐԱԿԱՐԳ

- 1.- Դիւանի ընտրութիւն
- 2.- Պատգամաւորներու վաւերացում
- 3.- Դուրսէն ներկայ ըլլալիք ընկերներ
- 4.- Տեղեկագիրներու ընթերցում
- 5.- Կեդրոնական Կոմիտէի վայրի հարց
- 6.- Կեդրոնական Կոմիտէի ստեղծում
- 7.- Զիֆոն եւ յարակից պիւտճէ
- 8.- Ներքին փրօփականտին համար շրջուն գործիչ
- 9.- Կոմիտէներու կնիքի հարց
- 10.- Ինքնապաշտպանութեան հարցին մէջ իրերօգնութիւն
- 11.- Փոքր Հայքի Ռայոնական ժողովոյ շնորհի կանոնագիր եւ որոշումներու» բացատրական ընթերցում
- 12.- Ընդհանուր պատգամաւորական ժողովոյ հրահրագիր — շրջաբերական

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

- 1.- Դիւանի ընտրութիւն
Ժողովի նախագահ ընտրուեցաւ ընկեր Վրոյր եւ քարտուղար ընկեր Վազգէն:
- 2.- Պատգամաւորներու վաւերացում
Պատգամաւորներու վկայագրերը քննութեան առնուեցան եւ ընդունուեցան հետեւեալները.
Բերդաբարէն¹ ընկեր Վրոյր եւ Վահագն Մեսրոպաւանէն¹⁶ ընկեր Ալպէս եւ Լիւ Բլրակէն¹⁷ ընկեր Ասպետ եւ Պերճ Գահաւանդէն¹⁸ ընկեր Գնունի Բազէն¹⁹ ընկեր Զոհրապ Կարօ Լեռնասարէն ընկեր Չախու եւ Վազգէն
- 3.- Անհատ ընկերներու ներկայութիւն ժողովին
Նկատելով որ Լեռնասարի շրջանակին մէջ կան փորձառու ընկերներ, որոնք կրնան գեղեցիկ խորհուրդներ տալ ծծուելիք հարցերուն մէջ, միաձայնութեամբ որոշուեցաւ ժողովին հրահրել ընկեր Պերճ, Համազասպ եւ Պարոյր:

- 4.- Տեղեկագրերու ընթերցում
Կարդացուեցան տեղեկագիրները եւ տեսնուեցաւ որ՝

Բերքառատ ² ունի	400 ընկեր եւ ամսական 1200 դրշ.
Մեսրոպաւան ունի	250 » » 500 » »
Բլրակ ունի	337 » » 600 » »
Գահաւանդ ունի	28 » » 28 » »
Բազէ ունի	40 » » 40 » »
Լեռնասար ունի	200 » » 300 » »

5.- Կեդրոնական կոմիտէի վայր
Նկատելով որ Բերքառատի շրջանի իր անդամական եւ դրամական ցննգով ամէնէն աւելի իրաւունք ունի Կ. Կոմիտէի վայր ըլլալու, բայց նկատելով նաեւ որ Լեռնասարը բոլոր շրջանակներուն կեդրոնն ու ամէնէն հայաշատ վայրն ըլլալու հանգամանքին հետ գործի ընդարձակ ասպարէզ կը ներկայացնէ, որոշուեցաւ այդ երկու վայրերուն համար կարծիքներու փոխանակութիւն մը ընել եւ երկար ու երկու նիստ տեւող վիճաբանութենէ ետք գաղտնի քուէարկութեամբ երեքի դէմ վեց ձայնով կեդրոնական կոմիտէի վայր ընդունուեցաւ Լեռնասարը:

6.- Կեդրոնական Կոմիտէի ստեղծում
Կեդրոնական Կոմիտէի ընտրութեան համար Լեռնասարի կոմիտէի ներկայացուցած քանտիտաններու ցանկին վրայ քուէարկութեան ձեռնարկուեցաւ, որուն արդիւնքը եղաւ հետեւեալը.
Ընկեր Համազասպ 8 ձայն
» Պարոյր 7 »
» Վազգէն 6 »
» Չախու 5 »
» Ս. Տ. 5 »

7.- Զիֆոն եւ յարակից պիւտճէ
Նկատելով որ ներկայ իրականութեան մէջ մանաւանդ Փոքր Հայքի շրջանին համար ինքնապաշտպանութիւնը ամէնէն հարկեցուցիչ ու կենսական հարցն է եւ նկատելով նաեւ Ռայոն. ժողովոյ այս մասին տուած

- 15.- Լեռնասարը Խարբերդի շրջանն է, որ նախապէս կը կոչուէր Բերդաբար:
- 16.- Մեսրոպաւանը՝ Բալուն է:
- 17.- Բլրակը՝ Արաբկիրն է:
- 18.- Գահաւանդը՝ Չարսամճաք:
- 19.- Բազէն՝ Չմշկածագ:

որոշումը, միաձայնութեամբ որոշուեցաւ ստեղծել Զիֆոն մը եւ այս մասին ամենայնաւոր վայրը ընդունուեցաւ Բերքառատը եւ նոյն վայրին կոմիտէին ներկայացուցած քանտիտաններու ցանկին վրայ գաղտնի քուէարկութեամբ Զիֆոնի մարմինը կազմուեցաւ հետեւեալ կերպով.

Ընկեր Վրոյր	8 ձայն
» Գուրգէն	9 »
» Վահագն	7 »
» Ս. Շ.	8 »
» Խ. Կ.	7 »

Ռայոնական ժողովին որոշած երեք հարիւր ոսկին քաշխուեցաւ հետեւեալ կերպով

Լեռնասար	100 օսմ. ոսկի
Բերքառատ	60 » »
Բլրակ	70 » »
Մեսրոպաւան	50 » »
Գահաւանդ	50 » »
Բազէ	20 » »
Գումար	300 » »

Եւ նկատի ունենալով որ օր օրի ինքնապաշտպանութեան հարցը ամէնէն անյետաձգելին կը դառնայ, ժողովս միաձայնութեամբ որոշեց որ պատգամաւոր ընկերները իրենց վայրերը դառնալուն պէս առաջին գործերնին ընեն ընդունուած միջոցներով ստեղծել պահանջուած գումարը եւ առնուազն մինչեւ առաջիկայ Մայիս 20, հասցնել Բերքառատ՝ Զիֆոնին, իրենց ցոյց տրուած հասցէով.

8.- Շրջուն գործիչ
Նկատելով որ շրջանի կոմիտէներուն եւ ենթակոմիտէներուն զօրացման եւ կազմակերպական տեսակետով ուժեղացման համար անհրաժեշտ է շրջուն գործիչ մը, ժողովս միաձայնութեամբ որոշեց այս գործին յատկացնել առժամապէս ընկեր Համազասպը եւ այս կէտը յանձնարարեց Կ. Կոմիտէին որ անհրաժեշտ կարգադրութիւնը պիտի ընէ ընկեր Համազասպի հետ բանակցելով եւ անոր յատկացուելիք դրամական վարձատրութեան համար իրեն հետ համաձայնելով մինչեւ որ յառաջիկայ ընդհ. պատգ. ժողովը դրկէ պահանջուած գործիչը:

9.- Կոմիտէներու կնիքի հարց
Նկատի ունենալով մեր շրջանի կոմիտէներուն իրարմէ ունեցած հեռաւորութիւնը եւ առանց կնիքի անոնց գործունէութեան սահմանափակումը, մեծամասնութեամբ որոշուեցաւ պահանջել Ընդհ. Պատգ. ժողովէն որպէսզի կնիք տրուի շրջանային ժողովի յարմար

դատած հետեւեալ երեք կոմիտէներուն՝ Բերքառատ, Բլրակ եւ Մեսրոպաւան:

10.- Ինքնապաշտպանութեան ատեն իրերօգնութիւն
Նկատի ունենալով մօտալուտ հաւանականութեանց ատեն իրերօգնութեան անհրաժեշտութեան կարիքը, ժողովս միաձայնութեամբ որոշեց ստեղծել թռուցիկ խումբեր եւ սուրհանդակներ, համաձայն արդէն պատրաստ գտնուած «Ինքնապաշտպանութեան հրահանգներ»ուն:

11.- Ռայ. ժողովոյ «Ներքին կանոնագիր» եւ «Որոշումներ»
Նկատի ունենալով որ Ռայ. ժողովոյ մշակած ներքին կանոնագրին եւ որոշումներուն մէջ կրնան գտնուիլ կէտեր, որոնք անգործադրելի կամ թերի կրնան ըլլալ մեր շրջանին համար, ժողովս որոշեց յաջորդական նիստերու մէջ կարգաւ զանոնք յօդուած առ յօդուած եւ ընել հարկ եղած դիտողութիւններն ու դրկել զանոնք Ընդհ. ժողովոյ նկատառութեան: Ընթերցման միջոցին պատահելով այն յօդուածին ուր Շրջանային ժողովի պատգամաւորներու թուին հարցը կը շօշափուէր, Բերքառատի պատգամաւոր ընկերներ անդրադառնալ տուին թէ Գահաւանդի ընկերը ձայն չի կրնար ունենալ քանի որ զինքը դրկող մարմինը իր քանութիւն անդամներով չի կրնար ներկայացնել ենթակոմիտէի ցննգը. հետեւաբար նախկին որոշումներուն վրայ կերպով մը կրկին անդրադառնալ հարկ դատուեցաւ եւ Կեդրոնական Կոմիտէի վայրի մասին եղած առաջին ընտրութիւնը մեծամասնութեամբ չեղեալ նկատուելով երկրորդ քուէարկութիւնով — որքան ալ որ Բերքառատը ընտրուեցաւ, սակայն Բերքառատի պատգամաւորները իրենց համամիտ ընկերներով ուզեցին թողուլ այդ իրաւունքը Լեռնասարին, նկատելով որ Լեռնասարը սոսկ վարչային տեսակէտով յարմարագոյն տեղն է ներկայ պարագաներուն մէջ եւ երկրորդ ընտրութիւնով մը Կեդրոնական Կոմիտէ կազմուեցաւ հետեւեալ կերպով.— Տ. Աստ. 8 ձայն, Պարոյր 8 ձայն, Պ. Սրպ. 3 ձայն, Սրգ. 5 ձայն, Վազգէն 5 ձայն:

Միւս բոլոր որոշումները հաստատուեցան:
Ռայ. ժողովոյ բոլոր որոշումները քննելով ժողովս խիստ անհրաժեշտ եւ օրուան պահանջներուն համաձայն գտաւ:

12.- Ընդհ. ժողովոյ հրահրագիր Շրջաբերական) եւ օրակարգ
Ժողովս նկատի առաւ այն «Շրջաբերական»ն ու «օրակարգը» գործ Արեւմտ. Բիւրոն դրկած էր առաջիկայ Ընդհ. ժողովոյ առթիւ:

Ա.- Պատգամաւոր.— Մեր Կեդրոնական Կոմիտէին եւ Շրջանային ժողովի կողմէ երկու պատգամաւորներ

րու իրաւունքը խորհելով անորոշ է, ըստ այնմ մեր շրջանը դեռ նոր կազմակերպուած է, որոշուեցաւ Պատասխանատու մարմնոյն հրահանգին սպասել եւ եթէ արտօնուի, միայն մէկ պատգամաւոր դրկել Շրջանային ժողովի կողմէ եւ անոր ընտրութեան ձեռնարկուելով գաղտնի քուէարկութեամբ ընտրուեցաւ ընկեր Համազասպ:

Բ.- Որակաւորք.— Անդրադառնալով օրակարգին ժողովս ուշադրութեան առաւ միայն այն կէտերը՝ որոնք շահեկանութիւն ունէին մեր շրջանին մասնաւորապէս եւ ամբողջ կազմակերպութեան ընդհանրապէս:

1.- Խորհուրդին փլաթֆորմը.— Յօդուած առ յօդուած կարգացուեցաւ Խորհուրդին պատրաստած փլաթֆորմը եւ գանոնք ամէնքն ալ գտաւ անհրաժեշտ եւ հասունցած պահանջներ մեր երկրին համար. հետեւաբար ժողովս կ'որոշէ Ընդհ. ժողովին դրկելիք իր կարծիքներուն մէջ յայտնել իր բացարձակ համամտութիւնը ամբողջ փլաթֆորմին եւ խնդրել որ երբեք չչեղին կամ չգիջանին անոնց պաշտպանութեան մէջ խորհրդարանական մեր ընկերները:

2.- Ռուս կառավարութեան դիրքը Դաշն. հանդէպ եւ փոխադարձաբար.— Նկատի ունենալով ցարիզմի ձեռք առած հայածանքը Հ.Յ.Դ-ի հանդէպ, ժողովս միաձայնութեամբ որոշեց յայտնել իր զօրաւոր փափաքը Ընդհ. ժողովին որպէսզի քաղաքական տեւորի ձեւով ուս կառավարութեան դէմ մղուելիք պայքարին ուժ տրուի:

3.- Գիրք. պրոչիւր եւ այլն.— ժողովս նկատելով որ զուտ դաշնակցական հրատարակութիւնները ինչպէս նաեւ ուրիշ հայ կուսակցութեանց պրոչիւրները ուղղուած են գրեթէ միմիայն ազգային ազատագրութեան եւ յեղափոխական փրօփականտի նպատակին եւ նկատելով նաեւ որ բոլոր ասոնք միմիայն արական սեռի ազատագրութեան շուրջ են դարձած եւ գրեթէ բնաւ չեն շօշափեր կանանց ազատագրութեան դատը եւ նկատելով նաեւ որ մեր շրջանի մէջ ստեղծուած կանանց շարժումը պէտք ունի զուտ կանանց յատուկ յեղափոխական գրականութեան մը, առանց որուն անկարելի է սպասել ուժեղացում արթնցող կանացի գիտակցութեան, ժողովս որոշեց յայտնել այս մասին իր բուռն բաղձանքը Ընդհ. ժողովին, որպէսզի քիչ մը աւելի ուշադրութեամբ անդրադառնան այս հարցին վրայ:

4.- Մեր դիրքը կաթողիկոսական հարցին մէջ.— ժողովս նկատի ունենալով որ մեր ազգ. քաղաքական կեանքը այսօր մեր կամքէն անկախ պատճառներով սերտորէն կապուած է կրօնական իշխանութեան հետ, որոշեց յայտնել իր փափաքը Ընդհ. ժողովին որպէսզի

ըլլայ Ռուսաստանի, ըլլայ Տաճկաստանի եւ բոլոր հարեւակ երկիրներու մէջ Դաշնակցութիւնը բունէ ուղղակի կամ անուղղակի կերպով այնպիսի ուղղութիւն, որ այդ իշխանութիւնները մեր կուսակցական աշխարհահայեացքներուն համեմատ շարժին եւ կամ առնուազն մեզի չհակադրեն:

5.- Մեր դիրքը երիտ. թուրքերու հանդէպ.— ժողովս նկատելով որ այս մասին, Ռայոն. ժողովը անցուցած է խիստ գեղեցիկ մտածուած որոշումներ, որոշեց իր կարծիքները անոնց վրայ հիմնել եւ ցոյց տալ Ռայոն. ժողովոյ այս մասին տուած որոշումները:

6.- Մեր դիրքը Սահմանադրութեան հանդէպ.— Նմանապէս Ռայոն. ժողովոյ որոշումներուն վրայ յենուելով:

7.- Թուրքիոյ քաղաքական կազմը. ազգայնական հարցը.— Բացարձակապէս չգատուելի մեր փլաթֆորմէն:

8.- Պէտք խորհրդարանին մէջ.— Ահարներու եւ ձախակողմեան ուրիշ տարրերու հետ սերտորէն կապուելով:

9.- Ազգ. ներքին քաղաքականութիւն.— Առանց անջատողական ձգտումներու՝ ազգ. իրաւունքներու պաշտպանութիւն:

10.- Աշխատաւորական քաղաքականութիւն.— Ռայոն. ժողովոյ այս մասին անցուցած որոշումները:

11.- Կազմակերպական կանոններու փոփոխութիւն եւ լրացում.— Նկատելով որ սահմանադրական կարգերը ամբողջապէս ձեւափոխած են մեր շարժելակերպը, հարկաւոր է նաեւ մեր կանոնագիրն ալ փոխել եւ համաձայնեցնել եւրոպական ուրիշ սահմանադրական երկիրներու մէջ գործող յեղափոխական կուսակցութեանց կանոնագիրներուն:

12.- Պոլիս պաշտօնաթերթի մը հրատարակութիւնը.— Ամէն պարագայի տակ հայերէն պաշտօնաթերթին հետ նոյն չափ կարելոր է նաեւ ունենալ թուրքերէն օրկան մը. միաձայն հաւանութեամբ, որոշուեցաւ այս հիմերուն վրայ հաստատուած կարծիքներ դրկել Շրջանային ժողովի անունով Ընդհ. ժողովին:

Մանօթ.— Միայն կոմիտէի եւ ենթակոմիտէի անդամները պէտք է գիտնան այս որոշումները. անգաղտնապահ ընկերները կ'ենթարկուին պատիժներու՝ ներքին կանոնագրի համաձայն:

ԼԵՌՆԱՍԱՐԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎ
9-IV-909
Լեռնասար

Փաստ. 1538-17

Գ 2.- Հ.Յ.Դ. ԲԵՐՔԱՍԻՆՅԻ ԿՈՄԻՏԵԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Սահմանադրութեան հռչակումէն անմիջապէս վերջ ընկեր Պոնափարթեանի նախաձեռնութեամբ կազմուած է Սեպտ.ի սկիզբները տեղւոյն առաջին Հ. Յ. Դաշնակցութեան խումբը «Շանթ» անուամբ. եւ այս իր եօթը անդամներով շարունակած է առանձինն մինչեւ Նոյ. 1: Նոյեմբերի մէկին ձեռնարկուած է կազմակերպական շարքերու աւելի ծաւալման հոգ տանել եւ կարելի է եղած կազմել առաջին ենթակոմիտէն որ իր կարգին աւելի ընդլայնելով կազմակերպական շարքերը՝ Յունուարի մէջ կազմած է կոմիտէն: Այս պարագային ստացած ըլլալով հրաւէր մասնակցելու Սեւ-բլուրի մէջ գումարելի Փոքր-Հայքի Ա. ռայոնական ժողովին՝ փութացած է իր պատգամաւորով մասնակցել յանձին ընկեր ժիրայրի:

Ռայոնական ժողովի փակուելէն անմիջապէս յետոյ տեղս հասած են ընկեր Բ. Շահապազ եւ Կարօ²⁰. մնալով երկու երեք շաբաթի չափ զբաղած են կազմակերպական գործերով: Այս շրջանին կազմուած է նաեւ կանանց Կարմիր-խաչը:

Տեղւոյն մէջ թէեւ մինչեւ այդ ժամանակամիջոցին չկար հնչակեան ո'նէէ կազմակերպութիւն, եւ եղածն ալ սահմանադրութեան հռչակմամբ ցրուած էր, որոնք յետոյ միացան Հ. Յ. Դաշնակցութեան: Ընկեր Շահապազի անփորձ գործիչի ընթացքը եւ աւելի յաւակնոտ վերաբերմունքը դէպի պարզ մահկանացիները՝ պատճառ տուին վերստին նոր հնչակեաններ երեւան բերելու, որ ի շնորհս կրկին թափուած անխոնջ ջանքից լուծուեցան վերջնականապէս գրեթէ:

Ապրիլի սկիզբները Հ.Յ.Դ. Փոքր-Հայքի ռայոնի ժողովոյ որոշման համաձայն գումարուեցաւ Լեռնասարի¹⁵ Շրջանային ժողովը, որով կոմիտէս մասնակցեցաւ իր երկու պատգամաւորներով յանձին ընկերց Վահագնի եւ Վրոյրի: Ժողովուրդի մէջ հետզհետէ տարածուելով յեղափոխական գաղափարը, տեղւոյս կոմիտէի թիւը ներկայիս կը հասնի 300ի:

Մարտ 31ի առթիւ²¹ տեղւոյս Դաշնակցութեան կոմիտէի եւ իթթիհատի միացումը եւ գործունէութիւնը շլացուց կարգ մ'երիտասարդներ, որոնք սկսան խմբովին դիմել մտնելու մեր շարքերուն մէջ, սակայն երկրի հանդարտութիւն ստանալէ վերջ, այսինքն՝ վերջին 1-2 ամսոյ շրջանին մէջ, յեղափոխական գաղափարով իսկապէս չհամոզուածները սկսան կրկին քաշուել շարքերէն, եւ արդէն բաւական մաս մ'ալ սկսաւ գաղթել, որոնք պատճառ եղան որ պզտիկ ժամանակի մը համար

400-450 բարձրացած անդամոց թիւը իյնայ նորէն 300ի: Հետեւաբար այժմ Հ.Յ.Դ. շարքերու մէջ կը մնան 300ի չափ համոզուած ու գտուած ընկերներ: Ժողովուրդեան աղքատութիւնը, արմտեաց տարապայման սղութիւնը՝ առիթ էին եղեր ամսականաց մի քիչ յետոյ ձգձգման, որը եւս վերջնականապէս կարգադրուած է սա վերջին շաբթու ընթացքին մէջ. Հոս կոմիտէս առանձինն պարտ կը համարի յիշատակել ընկեր Կարոյի²⁰ աշխատութիւնը սոյն ամսականաց գանձման եւ գործերու աւելի լաւ կերպարանաւորման: Կոմիտէս մաքրելով իր գրեթէ մէկ տարուան ամբողջ հաշիւներն անմիջապէս կը ձեռնարկէ նոր կոմիտէի ընտրութեան, նորին յանձնելով նաեւ գտուած, կանոնաւորուած հաշիւներ եւ տետրեր:

Ժողովուրդը լաւ տրամադրութիւն կը սնուցանէ դէպի յեղափոխական գաղափարն ընդհանրապէս, եւ դէպի Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ մասնաւորապէս:

Սահմանադրութեան հռչակումէ անմիջապէս յետոյ ժողովուրդը թելադրուած Դաշնակցութենէ սկսաւ բաւական թափով մղուել դէպ ինքնապաշտպանութիւն, ամէն կարելի եղած միջոցները ի գործ դնելով իր նիւթապէս քայքայուած վիճակին մէջ — սակայն եթէ կայ պարագայ մը ցաւալի, ա'յն ալ ժողովուրդեան 2000-3000ի չափ օսմ. ոսկի յատկացնեն էր տեղական ո'չ այնչափ լաւ գէնքերու, միայն փոքրիկ մաս մը յատկացնելով փամփուշտաւոր գէնքերու, եւ այս՝ բացարձակ արդիւնքն էր օրինաւոր հայթայթիչ միջոցներու չգոյուլութեանը:

Թուրք եւ քիւրտ տարրը ի հնուց տիրացած ապօրինի միջոցներով հողերու, եւ միշտ ըլլալով կեղեքիչ եւ սակաւապէտ, շատ աւելի բարձր է տնտեսապէս հայ ժողովուրդէն, որը միշտ կեղեքուած ու կողոպտուած, մանաւանդ քայքայուած 1895ի ընդհանուր ջարդին հետեւանօք, շատ արգահատելի վիճակ մը կը ներկայացնէ տնտեսապէս:

Շրջանի քիւրտ եւ թուրք տարրը լաւ տրամադրութիւններ չունի դէպի սահմանադրութիւն. լաւ պրոպագանդիստներու եւ լուրջ ձեռնարկութեանց կը կարօտին: Հայ ժողովուրդը բնական է թէ սիրով կը փարի գաղափարին եւ ամէն կարելին ի գործ դնելով պատ-

20.- Խօսքը Արմէն Գարոյի մասին է:
21.- Կ'ակնարկուի Սուլթան Յամիտի՝ սահմանադրական կարգերը տապալելու եւ վերստին բռնատիրութիւն հաստատելու փորձին (1909):

րաստ է սահմանադրութեան պահպանման հոգ տանիլ:

Քիւրտ տարրը բոլորովին զուրկ մտաւորական զարգացումէ, կատարեալ վայրենիներ են. թուրք տարրը եւս այնչափ նախանձելի վիճակ մը չի ներկայացնել կրթապէս, իսկ հայ տարրը բաղադրամբ միւսներու քիչ մ'աւելի բարձր է, սակայն այնուամենայնիւ վարժարաններու վիճակը այնքան միտքարական չէ եւ այս կրկին նիւթականի անձկութեան հետեւանօք: Ներկայիս տեղոյս ամէն յարանուանութիւն ունի իր նախակրթարանը, իսկ լուսաւորչականները բացի նախակրթարաններէ ունին մէյ մէկ կեդր. վարժարաններ արականաց եւ իգականաց յատուկ, ուր կը յաճախեն 1800ի չափ երկսեռ ուսանողներ (1000ը մանչ եւ 800ը աղջիկ): Իսկ Կարմիր-խաչը բացաւ մի թաղային իգական սեռի անուս չափահասներու յատուկ դպրոց եւ մտադրած է զանազան վայրերու մէջ երկու դպրոցներ եւս բանալ:

Մալաթիա դաշտագետնի մը վրայ շինուած է միայն հարաւային կողմը 4-5 ժամ հեռաւորութեամբ կը գտնուի Պէյտաղին (Տաւրոսի լեռնաշղթան): Մալաթիա ունի 50,000 բնակիչ որոնց 13,000ը հայ են, իսկ իր գիւղերով եւ վիճակներով միասին (Քիւղթէ, Աղճատաղ, Պեհեսնի եւ Հիւսնու մանսուր) ունի 250,000 բնակիչ որոնց 18,000ը միայն հայ են:

Կազմակերպութիւն

Վերջերս կազմակերպուեցան նաեւ Հիւսնի Մանսուր (10 խումբ 120 անդամ) Պեհեսնի (մէկ խումբ 10 անդամ) Իւմիւրին եւ Քէֆերտիզ (մէյ մէյ խումբ — 10 հոգինոց), սակայն ասոնց տեղեկագիրը տակաւին հասած չըլլալով մեզ, չկրցինք կցել մերինին:

Մեր վիճակացոյցին մէջ որչափ որ առանձինն չեն նշանակուած 1908 Սեպտ. 1 — Նոյ. 1 Շանթ խումբի ե-

թը անդամներու ամսավճարներն ու անուններն, սակայն եւ այնպէս Նոյեմբերի նշանակուած խումբերու մէջ ցրուած են անոնք, այսինքն՝ իւրաքանչիւրը ուրիշ խումբի մ'անդամակցած է, այս իսկ պատճառաւ, մեր վիճակացոյցին մէջ Սեպտ. եւ Հոկտ. ամիսները զանց են եղած, թէպէտեւ արձանագրութեանց եւ այլնի մէջ բուն իսկ Սեպտ.էն կը սկսին:

Հաշուեկշիռէն ինչպէս պիտի տեսնուի, չենք կրցած ո'եւէ արտակարգ միջոցներով դրամ գանձել, ասոր իսկ պատճառը ժողովրդի նիւթականի խիստ անձկութիւնն է, որով ստիպուած ենք բուն իսկ պատգամաւորներու ծախսերը գոցել ամսավճարներով:

Յուսալի է յառաջիկայ աշնան եւ ձմրան կարգ մը հանդէսներ սարքելով այդ ծախսերը գոցել, եւ այն ատեն է որ ամսավճարները անձեռնմխելի մնացած կ'ըլլան, քանի որ այդ արտակարգ միջոցներով գոյացած հասոյթը կրնայ նախապէս ծախսուած ամսավճարներու տեղը դրուիլ:

Ամսավճարներէ գոյացած դրամներու մէկ մասն ալ ստիպուած ենք Մարտի 31ի²¹ միջոցներուն յատկացնել գոյքերու, որոնց պէտքն այնքան զգալի էր այդ պարագային, եւ հիմա պիտի աշխատուի սոյն գոյքերու մէկ մասը եւս դրամի փոխարկել՝ կարենալ օրինաւորելու [համար] ամսավճարներու բուն իսկ նպատակին ծառայեցման:

Ընկերական բարեւներով
Հ.Յ.Դ. ԲԵՐՔԱՌԱՏԻ ԿՈՄԻՏԵ

(Handwritten signatures and stamps)

1909 Օգ. 22
Բերքառատ

Փաստ. 1538-6

Գ 3.— ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.3.Դ. ԲԼՐԱԿԻ ԿՈՄԻՏԵԻՆ¹⁷

Ներկայ տեղեկագրով կը փութանք լրացնել Լեռնասարի Կ. Կոմիտէին այն պահանջը, որով յառաջիկայ Ընդհ. պատգ. ժողովին ներկայացուելու համար, շրջանի ամբողջական վիճակագրութիւնը կ'ուզուէր ի ձեռին ունենալ:

Կազմակերպական վիճակ.— Քաղաքին մէջ 98-ի ծանօթ դէպքերէ յետոյ կազմակերպական ունեցէ կեանք գոյութիւն չէր ունեցած, բացի մի քանի համակիրներէ այս կամ այն կուսակցութեան: Յուլիս 11-ը²² ցնցեց երիտասարդութիւնը եւ ինչպէս ամէնուրեք՝ վերարթնաց թմրած զգացումները, երբ մանաւանդ Հ.Յ.Դ-ի կողմէ ամէն կողմ ուժգին շեշտուեցաւ կազմակերպուելու կարիքը որուն վրայ քաղաքին մէջ ութ ընկերներով, անմիջապէս յետոյ տասնմէկի բարձրացած՝ առաջին խմբական կազմութիւն մը երեւցաւ անցեալ 1908 Սեպտ.ի վերջերը, որ 27 Սեպտ. ամսաթիւ նամակով մը Կ. Պոլսի Պատաս. մարմնոյ վաւերացմանը ենթարկուեցաւ. հազիւ մէկ-երկու շաբաթ վերջը դաշնակցական կազմը արդէն 45-50 ընկերներու ամբողջութեամբ մը ենթակոմիտէի ցենզին բարձրացած էր:

Այս առաջին շարժման վրայ ոգեւորութիւնը սկսաւ Դաշնակցութեան համակիր երկու տարբեր խմբակցութիւններու կազմուիլն ալ լսուեցաւ, որոնք եւս առանձինն դիմած էին Պատաս. մարմնոյն. այն ատեն արդէն հաստատուած մեր կազմի կողմէ թափուած աշխատութիւններով եւ Պատաս. մարմնոյն առանձինն հրահանգներով, այդ անջատ խումբերէն մին նոյն տարուայ Նոյ-ի վերջերը միացած ըլլալով ենթակոմիտէի հետ, արդիւնքը Նոյ. 30 թիւ նամակով մը տեղեկագրուեցաւ Պատաս. մարմնոյն, որով այն ատեն մեր ընկերներու թիւը յանգեցաւ 150-ի: Մինչեւ այն ատեն անդամավճարի տուուչութիւնը անկանոն եղած էր եւ Դեկտ. ամսէն սկսեալ արդէն դաշնակցական տիտիբլինը կանոնաւորապէս սկսաւ կիրարկուիլ 2%-ի համեմատութեամբ²³, իսկ մնացեալ անջատ խումբը մնաց հեռու հակառակ եղած հրաւէրներուն մեր կողմէն, որոնք անյսելի մնացին մինչեւ որ Պատաս. մարմնոյն երկուստեք ուղղուած նամակներուն ի պատասխան, ազդու յորդորականներով վերջ մը գտաւ միութեան հարցը 900-ի Մարտի սկիզբը: Այսպիսով մեր ընկերներու թիւը բարձրացաւ 337-ի, մօտ 40 խումբ:

Տեղական կազմը այս միութենէն վերջ սկսաւ իր ամփոփ գործունէութեան եւ Լեռնասարի առաջին շրջանային ժողովին մէջ ունեցաւ իր երկու պատգամաւորը Ապրիլ 5ին:

Այսուհանդերձ որչափ ալ կազմը քիչ թէ շատ նորմալ վիճակի մը հասած կը նկատուէր, անդին կը մնար պակաս մը, դա կազմակերպական գործելակերպի սկսնակի հանգամանքին վերջ տալու պէտքն էր, գոր եկաւ լրացնել Պատաս. մարմնոյ ներկայացուցիչ ընկեր Բ. Շահպազ, որ Ապրիլ 14-ին հասնելով տեղս նախ ընտրեց քաղաքին նոր կոմիտէն օրինական ամէն ձեւակերպութիւններով՝ եօթն անդամներէ կազմուած, ընտրեց նաեւ կանանց Կարմիր խաչի վարչութիւնը 5 ընկերուհիներով եւ մօտ 35 անդամուհիներէ, որ այժմ հասած է 90-ի:

Կազմի բարոյական վիճակը.— Տեղոյս Դաշնակցութիւնը հազիւ թէ կազմուած սկիզբի օրերուն մէջ մուտ գտած անգիտակից տարրեր չկրցան ըմբռնել իրենց կոչումը, որով եւ դեղեւեցան շատ անգամ իրենց համար որոշ դիրք մը ստեղծելու մասին: Ասոնցմէ ոմանք դրսէն ալ իրենց շուրջը մէկ քանի անչափահաս տղաներ համախմբելով երեւան բերին հին եւ Վեր. հնչակեաններու աննշան խմբակներ, իւրաքանչիւրը 20-30 անդամներէ բաղկացած, որոնց վրայ չարժէ իսկ ուշադրութիւն դարձնել: Այսպէսով թէեւ մի քիչ սեղմուած դաշնակցական կազմը՝ այսուհանդերձ ինչպէս պիտի տեսնուի մեր վիճակացոյցներէն, ներկայ վիճակը կրնանք ըսել բաւական գոհացուցիչ է իր ընդհանուր գիծերու մէջ դիտուած: Կազմի ընկերներուն մէջ գտնուած տհասները, որոնցմէ կը գտնուին բնականաբար, դաշնակցական ծրագրային ամբողջութեամբ դաստիարակելու համար նշանակուած են փրօփականդիստ ընկերներ:

Մեր ընկերներու բարոյական վիճակին վրայ աւելի կամ նուազ չափով կ'ազդէ տիրող աննախընթաց սղութիւնն ու տնտեսական տագնապը, որուն առջեւ շուրած շատեր կը տկարանան այն փաստաբերութեամբ, թէ յեղափոխականին առաջին պարտքն է անձնագոհութիւնը եւ նիւթական գոհողութիւնը, մինչդեռ առաջինին համար թէեւ պատրաստ՝ բայց երկրորդին համար անբաւական կը գտնուին, թէ իսկ իրենց չոր մէկ սնունդէն ալ զրկուելու ըլլան. իրաց այս վիճակին մէջ հարկադրուած ենք խորհիլ, թէ ինչ եղանակով պիտի կրնանք գօտեպնդել զիրենք իրենց այդ դիրքին մէջ: Առայս մեր գործածած բոլոր միջոցներն ալ տկար ու անզոր են, քանի որ տեղական հարուստներ չկան, եւ կազմն ալ հակառակ իր թափած աշխատութիւններուն

22.- Օսմանեան սահմանադրութեան հռչակման բուական (1908):
23.- Ընդհանուր եկամուտին համեմատութիւնը (2%) ճշդուած կուս. ցենզ:

ի վիճակի չէ գտնել իր մարտական տասն խումբերը գի- ներու, մէկդի թողլով ժողովուրդը, որուն գինուամն ալ մեր մտահոգութիւններէն մին է: Կը սիրենք յուսալ որ Ընդհ. պատգ. ժողովը ի նկատի ունենալով այս պարագան, պիտի փութայ դարմանը բերել իրաց այս տխուր կացութեան:

Վիճակագրական.— Բլրակի շրջանը մօտաւորապէս 77 գիւղ ունի, որոնց երկուքը միայն հայ գիւղեր են. այսուհանդերձ թաթառի²⁴ ենթակոմիտէի գիւղերէն վարի մասը, ուր կը գտնուին 13 հայ գիւղեր, արդէն Բլրակի¹⁷ մօտ լինելուն մեր քաղաքի առաջնորդական թեմը կը կազմեն. սակայն Եփրատի շրջանին տեղեկագիրը արդէն կը բերէ այդ գիւղերու վիճակագրութիւնը, որով մենք զանց կ'առնենք հոս:

Հայ ազգաբնակչութիւն Բլրակ քաղաքի

Արու	էգ	գումար
5500	8000	11500

Բլրակի երկու գիւղերու բնակիչները

Արու	էգ	գումար
500	800	1100
8000	8600	12800

Թուրք ազգաբնակչութիւն Բլրակ քաղաքի

Արու	էգ	գումար
3300	2700	6000

24.- Թաթառ՝ կուս. ծածկանունն է Ալլահի:

Բլրակի 75 թուրք գիւղերու բնակիչները

Արու	էգ	գումար
8500	7500	18000
11800	10200	34800

Աշխարհագրական դիրք.— Քաղաքի դիրքը լեռնալին. հիւսիսէն եւ արեւմուտքէն բաւական բարձր, բայց լերկ ու սեպածեւ գագաթներով շրջապատուած, իսկ հարաւէն ու արեւելքէն դաշտավայրի եւ բլուրներու քղանցքին վրայ, աւելի ձորամէջը տարածուն եւ ցրտքուն, պարտէզներով անտառացած վայրի գեղեցկութեամբ մը օժտուած ամփիթէադրի մը համայնապատկերը կը պարզէ դիտողին: Քաղաքը հիւս. արեւմուտք եւ հարաւ կողմերէն շրջապատուած է թուրք գիւղերով, որոնց բաղկացուցիչ տարրերն են քիւրտ սիւննի, գըզլուպաշ եւ քիչ թուրքեր. այդ գիւղերէն մանաւանդ հիւս. եւ արեւմտեանները ամբողջ լեռնային եւ առաւելապէս ձորամէջերը հաստատուած. իսկ արեւելեան կողմը կը գտնուին կէս դաշտավայրի մը վրայ թուրք եւ հայ գիւղեր, որոնց մեծ մասը ինչպէս ըսինք Եփրատի շրջանը կը կազմեն եւ թաթառի կառավարութեան շրջանին մէջ կը գտնուին:

Ի ԴԻՄԱՅ Հ.Յ.Դ. ԲԼՐԱԿԻ ԿՈՄԻՏԵԻՆ ԱՐԳԱՄ ԱՍՊԵՏ ԱՍՐՀԱՏ

7 Յուլիս 1909

Փաստ. 1538-3

Գ 4.— ՏԵՂԵԿԱԳԻՐ ԳԱՀԱՒԱՆԴԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷԻ¹⁸

1909 Յունիս 30

Ա. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԲՆԱԿՉ. ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՄՏԱԻՈՐԱԿԱՆ ԵՒ ՀՈՂԱՅԻՆ

1.- Մինչեւ որ կարելի չըլլայ գիւղ առ գիւղ շրջիլ եւ ստուգել, կարելի չէ ճշգրիտ թիւ մը սահմանել մեր երկրի ընդհ. բնակչութեան: Ձեռնարկներէ ծնունդ առած քէթիմի վաղեմի սովորութիւնները անվստահելի կը դարձնէ պաշտօնական տոմարները, որոնց համեմատ է որ հոս կ'արձանագրենք Չարսանճագի թուրք ու քիւրտ տարրերու մօտաւոր թիւը = 10.000: Իսկ հայ տարրինը = 8.000 անձ. թէեւ խղճամիտ քննութիւն մը պիտի հաստատէր որ այդ երկու այլասեռ տարրերու բուն թիւը աւելի առաջանելով իրարու կը մօտիկանան:

2.- 1895-ի տնտեսական տազնապէն առաջ, հայ տարրին կողմն էր տնտեսական առաւելութիւնը, նոյնպէս հայուն ձեռքն էր գլխաւոր վաճառականութիւնը, արհեստը եւ ամէն գործ. իսկ այժմ տնտեսապէս թուրքը աւելի նախանձելի վիճակ ունի քան հայը, եւ արուեստ ու արհեստ միշտ հայունը մնալով, վաճառականութեան մէջ հաւասարութիւն կը տեսնուի:

3.- Մտաւոր.— Հոս՝ այս երկրին մէջ, հայերն աւելի մտաւոր զարգացում ունին քան թուրք ու քիւրտ տարրերը. հայերը անհամեմատ առաւելութիւն ունին անոնցմէ, զարգացման ձգտումի եւ ընդունակութեան տեսակէտով:

4.- Հողային.— Չարսանճագի սահմանին մէջ տարածուած բոլոր հողը երկար ժամանակներէ ի վեր կը գտնուի ձեռքը 24 թուրք տէրէպէյիներու եւ աղաներու, որոնք չես գիտեր ինչ միջոցներով տիրացան անոր՝ կը վայելեն, կը յղփանան անգութ միջոցներու կիրարկումով: Հայ ու թուրք հասարակութիւնը իրեն սեփական ափ մը հող չունի անոր մէջ: Բացի Բերրիի մէջ ապրող հայ ու թուրք հասարակութենէն, Չարսանճագի 110 գիւղերու բնակչութիւնը չունի նախ իրեն սեփական տունը, այգին, պարտէզն անգամ, այլ ատոնք իւրաքանչիւր գիւղի տիրացող պէյին կամ աղային կը պատկանին. այդ իսկ պատճառաւ ուզած ատեն կրնայ վռնտել գիւղէն իր մարապան, որ համարձակի պզտիկ անհաշտութիւն մը, ըմբոստութեան նշան մը ցուցնել:

Բ. ԵՆԹԱԿՈՄԻՏԵԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1.- Գահաւանդի ենթակոմիտէն թէպէտ կազմուած է 1908 Դեկտ. 1ին, սակայն իր կազմակերպական կանո-

նաւոր գործունէութիւնը կը սկսի 1909 Յունուար 1էն: Այդ թուականէն ցվերջ Յունիսի, այս վեց ամսուան ընթացքին մէջ զբաղած է կազմակերպական գործերով եւ յաճախ փրփականտ ընելով հետզհետէ աւելցուցած է իր անդամներու թիւը յարմար ընկերներով եւ ջանացած է արթնցնել հայ ժողովուրդին մէջ ինքնապաշտպանութեան գիտակցութիւնը, որուն իբր արդիւնք անիկա այսօր բաւական գինուած է, թէեւ ոչ կանոնաւոր գէնքերով: Բացի ասկէ ենթակոմիտէն ժողովուրդեան գանազան անհատներէ 102 ոսկիի չափ դրամ հաւաքելով կանոնաւոր գէնք ապսպրած է Լեռնասարի¹⁵ Ջիֆոնէն, որ սակայն երեք ամիսէ ի վեր չյաջողեցաւ իր գործունէութեան ապացոյցը տալ մեզի դժբախտաբար, ինչ որ կրնայ պակսեցնել հմայքը Հ.Յ.Դ.ի, որ ամէն կասկածէ վեր ճանչցուած է ամէն պարագայի մէջ:

Գ. ՄԻՒՍԹԷՊԻՏՆԵՐ

1.- Թէպէտ որոշ գործերով յայտնի միւսթէպիտ չէ ճանչցուած հոս, ցայսօր, սակայն Չարսանճագի պէյերն ու սպաները, առանց բացառութեան, բոլորն ալ սահմանադրութիւնը արհամարհող հին ռեփիմի ջատագովներ են: Ասոնք ընդունուած սահմանադրութեան ի հեճուկս նախկինէն աւելի եւ աւելի բազմապատկած են իրենց բռնութիւններն ու ճնշումները հայ ռայային վրայ, որ իր հացով ու ջուրով, իր կնիկով, մանչով ու աղջիկով, լուր թէ Կիրակի, երբ որ կանչուի, անխօսուկ կ'երթայ աշխատիլ օրերով, առաւօտեան մինչեւ իրիկուն, երեսի վրայ թողլով իր սեփական գործը, որուն արդիւնքով է որ պիտի հանէ իր բազմաթիւ ընտանիքին ցամաք հացը: Այդ պէյերուն, աղաներուն համար, սովորական բաներ են իրենց հայ ռայան ծեծել չարաչար, բռնաբարել, հայհոյել անոր անձն ու կրօնը:

2.- Իսկ թուրք ու քիւրտ հասարակութեան մէջ չես կրնար գտնել մէկը որ սահմանադրասէր ըլլայ ու անիկա կը մնայ միշտ նոյն բարբարոսը, նոյն լախտը, նոյն ուխտեալ թշնամին հայուն գլխուն:

Դ.- ԽՈՒՄԲԵՐՈՒ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

1.- Գահաւանդի ենթակոմիտէն ցայսօր ունեցած է 10 խումբ 70 ընկերներով. արտաքին եկամտուտի ո՛րեւէ աղբիւր չունի եւ չի կրնար ունենալ ժողովուրդին չափա-

զանց աղքատութեան եւ տիրող սոսկալի սղութեան պատճառաւ. հետեւաբար իր եկամուտի աղբիւրը կը մնան միակ ընկերացողներու մուտքի վճարն ու անոնց ամսավճարները: Մինչեւ այսօր ենթակոմիտէներէն ունեցած է 480 դահեկան մուտք եւ 310 դահ. ամսավճար ներկայ տարուան Յունուար 1էն մինչեւ Յունիսի վերջ: Հարկ է հոս յիշել սակայն թէ շրջակայ գիւղերու խմբապետները տակաւին չկրցան բերել իրենց ընկերներուն մուտքի եւ ամսավճարի գումարները անշուշտ դեռ ամբողջովին գանձած չըլլալով իրենց ընկերներէն, որոնց շատերը հեռաւոր տեղեր աշխատելու գացած են վաղուց:

2.- Մեր մայր տոմարէն քաղելով կ'արձանագրենք հոս որ ենթակոմիտէին պատկանող ընկերներուն՝ իրենց սեփական միջոցներով գնած գէնքերուն համագումարն եղած է ցարդ 13 չախմախլի շիշխանէ հրացան, 10 հզալի հրացան իրենց վերաբերեալ նիւթերով, 2 կեղծ մարթին 150 փամփուռտով, 35 վեցհարուած՝ 1550 փամփուռտով եւ 1 հատ գերման. մաուզէր 100 փամփուռտով: Վերը յիշուած 102 ոսկիով ապսպրուած կանոնաւոր գէնքերէն 11 հատը մեր ընկերներուն կը պատկանի երբոր գայ:

3.- Մեր ենթակոմիտէի ընկերներուն ունեցած վերի տողերով յայտնի գէնքերուն տեսակն ու քանակը պերճախօս ապացոյց մըն է տեղիս տնտեսական աննպաստ կացութեան եւ ոչ թէ չկամութեան կամ անզգայութեան. հետեւաբար այս առիթով պարտք կը համարենք հոս չեշտել թէ այս շրջանակը արժանապէս գինուած վի-

ճակի մէջ դնելու համար ենթակոմիտէն արժանի է բացառիկ ձեռնտուութեանը Հ.Յ.Գ. պատասխանատու մարմինն, որ՝ անշուշտ իր ոտքերն հաստատուն հողի վրայ կը գործէ: Եթէ մեր այս ակնկալութիւնը անտեղի պիտի համարուէր, գոնէ կարելի չէ՞ր յուսալ որ մեր ենթակոմիտէին ամբողջ ինքնին աննշան հասոյթը, իր այդ կարգի պէտքերուն գործածուէր, հետզհետէ գինելու համար իր աղքատ ընկերները: Ամէն պարագայի տակ ենթակոմիտէն պատրաստ է համակերպելու կեդրոնի հրամաններուն:

Ե.- ԱԶԱՏԱՄԱՐՏ

1.- Ազատամարտ օրաթերթին իբր գործակատար ու կանոնաւոր թղթակից որոշուեցաւ Գահաւանդի ենթակոմիտէի շրջանին համար, ընկեր Աբգար Պոլուտեան, ծածկանունն է «Մագնիս»:

2.- Որոշուեցաւ մէկ տարեգին ուղարկելով «Ազատամարտ»ի խմբագրութեան, մէկ օրինակ բերել ենթակոմիտէին համար:

Ատանայի ջարդէն մեր շրջանի արկածեալներուն ընդհ. ցուցակը եւ Գահաւանդի աշխարհագր. քարտէսը պատրաստուելով ղրկուեցաւ Լեռնասարի Կ. Կոմիտէին:

Հ.Յ.Գ. ԳԱՀԱԻԱՆԴԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ

Փաստ. 1538-13

Գ 5.- ԱՆՈՒՇԱԻԱՆԻ²⁵ ԵՆԹԱԿՈՄԻՏԷԷՆ ԼԵՌՆԱՍԱՐԻ Կ. ԿՈՄԻՏԷԻՆ

Գ.Յ.Գ. Լեռնասարի Կ. Կոմիտէին

Ընկերներ, 2եր Յուլիս 15 թուակիրին համաձայն, ահա կը փութանք դրկել Անուշաւանի ենթակոմիտէին տեղեկագիրը, իր ամէն մանրամասնութիւններով:

Յիւսէյնիկ կը գտնուի Մեգրա-ի հիւսիս Արեւելեան կողմը: Իր բնակչութիւնն է 800 տուն, 450ը՝ լուսաւորչական, 120ը՝ բողոքական, 30ը՝ կաթոլիկ եւ 200ը՝ մահմետական: Իւրաքանչիւր յարանուանութիւն ունի իր առանձին դպրոցը, եկեղեցին եւ խնամակալութիւնը: Ժողովուրդը մեծաւ մասամբ արհեստով կը զբաղի, եւ Ամերիկայի մէջ ունի մեծ թուով գաղթական երիտասարդներ:

Գիւղս՝ իր տեղական աննշան մէկ կազմակերպութիւնն ունէր եօթնեակ անուով, որ կազմուած էր 8 ամիս առաջ եւ նպատակ ունէր տեղիս ինքնապաշտպանութիւնը: Անցած Մարտի սկիզբները այս երիտասարդական կազմակերպութիւնը Գ.Յ.Գ. դրօշն ընդունեց ու ասանկով կազմուեցան առաջին երկու խումբերը, Ապառաժ եւ Փայլակ: Կազմակերպութիւնը իր գործունէութեան ամէնէն խանդավառ շրջանն սկսաւ ընկեր Կարոյին²⁶ փրոփականտին շնորհիւ, անանկ որ անոր գիւղը հասնելէն քիչ ետքը, կարելի եղաւ կազմել ենթակոմիտէ Անուշաւան անուով (1909 Մայիս 10):

Գիւղս ունի իր Կարմիր խաչի ընկերուիկներն ալ որոնց կ'առաջնորդէ Ապառաժ խումբի խմբապետը՝ Խան: Ընկերուիկները ունեցած են իրենց առանձին լաթարնը եւ զբաղած են բարեսիրական գործերով: Ատանայէն վերադարձող վիրաւորներուն ի նպաստ եղած հանգանակութեան ատեն, շատ հաւատարմութեամբ ու եռանդով կատարեցին իրենց բաժին ինկած պարտականութիւնը:

Գիւղին մէջ ունինք նաեւ պատանեկան խումբը, որուն կ'առաջնորդէ Արծափ խումբէն՝ ընկեր Ներսէս: Պատանեկան խումբը իր պիտոճէի գորացման համար կը սարքէ ներկայացումներ: Մինչեւ հիմա ներկայացում մը տուած է եւ ուրիշ մըն ալ տալու կը պատրաստուի:

Ենթակոմիտէն մինչեւ հիմա արտակարգ եկամուտ կամ ծախս չէ ունեցած: Եղած ծախսն է միայն 6-7 դրուշի թուղթ եւ պահարան:

Աւելի մանրամասն տեղեկութեան համար, հետեւեալ էջերուն մէջ կ'օրինակենք խումբերուն ցուցակները, ինչպէս նաեւ Կարմիր խաչի ու պատանեկան խումբի ցանկերը:

Ընկերական քերթ բարեւերով
Գ.Յ.Գ. ԱՆՈՒՇԱԻԱՆԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ

1909 Յուլիս 22

Փաստ. 1538-8

Գ 6.- ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Գ. «ԹԱԹԱՌ» ԵՆԹԱԿՈՄԻՏԷԻՆ

«Թաթառ»ի²⁴ ենթակոմիտէն կազմակերպուած է ընկ. Բ. Շահպազ տեղս գտնուած ժամանակ (1909 Ապր. 27) որմէ վերջ եւս շարունակուելով կազմակերպական գործը, այժմ (Յուլ. 1909) ունինք 16 խումբ (ընդամենը 135 անդամ) եւ 4 խումբ Կ. Խաչի (49 անդամուիկ), ամսական եկամուտ ունի «Թաթառ»ի մարմինը մի միայն անդամավճար 300 դշ.:

Քաղաքի եւ արուարձաններուն հայ բնակչութիւնը շատ կը հետաքրքրուի Դաշնակցութիւնով, որ ամէնուն համակրանքին առարկայ է եւ ժողովրդի այս համակիր վերաբերումը մեծ վստահութիւն կը ներշնչէ, թէ յառաջիկային ուրիշ ոեւէ կուսակցութիւն պիտի չկարենայ անդամներ եւ հետեւողներ գտնել:

Ակնայ գագան²⁸ աշխարհագրական տեսակէտով լեռնային դիրք մ'ունի, գագայի բնակչութիւնը 30000 կը հաշուի, որուն 1/3ը հայերը կը կազմեն. Ակն քաղաքի բնակչութիւնը 10000 լինելով՝ հագիւ 3000 հայերէ բաղկացած է:

Գագայի լեռնային կազմուածքը պատճառ եղած է միշտ, որ երիտասարդ ուժեր այլուր փնտռեն շահաստաններ, այդ պատճառաւ Սահմանադրութենէն յետոյ հայ երիտասարդ-

ներ մեծ մասամբ մեկնեցան Պոլիս եւ Ամերիկա. կը յուսանք, որ Թուրքիոյ քաղաքական հորիզոնը մաքրուածին պէս, պանդխտութենէ վերադարձող երիտասարդ ուժերով արեւի փառաւոր դիրք մը կ'ունենանք տեղս:

Գագայի կեդրոնի, Ակնայ մէջ կազմուած է Իթթիհատ Թերազքի մասնաճիւղ մը (գլխաւ), որ 23 անդամ ունի (6ը քրիստոնեայ): Իթթիհատը տեղս Դաշնակցութեան հետ բարեկամական յարաբերութեան մէջ է, բայց կը յուսանք, որ խառն յանձնաժողով մը կազմելով՝ պիտի կարենանք այս յարաբերութենէն օգտուիլ:

Քաղաքի եւ գիւղերու մէջ հայ ժողովուրդը տնտեսապէս անձուկ վիճակի մը մէջ կը գտնուի, որ պարզապէս 1896ի դէպքին արդիւնքն է, քանի որ ասկէ առաջ ակնցի հայու հարստութիւնը ամէն տեղ յայտնի էր: Ներկայիս քաղաքի թուրք հասարակութեան գրեթէ 3/4ը հայերու չափ եւ թերես արեւի նիւթականապէս ինկած է ու աղքատ, իսկ Ակնայ շրջակայքի գիւղերու թուրքերը գրեթէ մեծամասնութեամբ հարուստ են եւ կալուածատիր:

ԹԱԹԱՌԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷԻ ԿՈՂՄԷ
(Ստորագրութիւններ)

25.- Անուշաւան՝ կուս. ծածկանուն Յիւսէյնիկ գիւղի:
26.- Գաւառակը:

Փաստ. 809-34

Դ 1.- ՏԵՏՐ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ Հ.Յ.Դ. ՇՐՋԱՆԱԿԱՆ Ա. ԺՈՂՈՎԻՆ ԳՈՒՄԱՐՈՒԱԾ ԿԱՅԱՆԻՑ ՄԷՉ

20 ՄԱՅԻՍ 1909

ՆԻՍ Ա.

Չորեքշաբթի, 20 Մայիս 1909

Հ. Յ. Դաշնակցական Շրջանային ժողովը, գումար- Լած Կայանի մէջ՝ ունեցաւ իր առաջին նիստը ընկեր Հրատի տանը, Մայիս 20ի Հինգշաբթի օրը:

Շրջանի մարմիններէն ներկայ էին.- ընկերներ Յո- լակ՝ պատգ[ամաւոր] Բանայի կոմիտէին⁸. Պերճ՝ Պոն- տոսի կոմիտէին⁷, Գործ՝ Չորայրի կոմիտէին⁹. Վարու- ժան՝ Վաղարշապատի ենթակոմիտէին. Հրատ՝ Կայանի կոմիտէին կողմէ եւ Շահան իբր ներկայացուցիչ Երեք- բլուրի⁵: Բացակայ էր Կայծակի²⁷ ենթակոմիտէին պատգամաւորը:

Պատգամաւորներու վկայագրերու վաւերացումէն ետք ժողովը անցաւ դիւանի ընտրութեան: Չայնորու միաձայն հաւանութեամբ ընտրուեցան Ա. պետ ընկեր Յոլակ, իսկ Ա. դպիր՝ ընկեր Շահան:

Շրջանային ժողովի օրակարգը.-

1. Հաշուեքննութիւն մարմիններու
2. Զիֆոնի յատկացուելիք դրամին բաշխումը
3. Կեդ. Կոմիտէի վայր
4. Կեդ. Կոմիտէի վարչութեան ընտրութիւն
5. Ե. Ընդհ. Պատգ. ժողովի պատգամաւորին ընտ- րութիւնը
6. Ե. Ընդ. Պատգ. ժողովի ներկայանալի տեղեկագիր մը
7. Մեր դիրքը տարբեր կուսակցութեանց հանդէպ
8. Ուսումնասիրութիւն Ռայոնական ժողովի գծած ներքին կանոնագրին
9. Ագարակի կոմիտէին⁵ նամակը,

Յաջորդ ժողովին ժամանակը որոշուեցաւ Հինգշաբ- թի, 21 Մայիս, ժամը 7ին, նոյն տեղը:

Առաջարկութեամբ մը նիստը փակուեցաւ:

Ի դիմաց ժողովին
 Ա. դպիր Ա. Պետ
 ՇԱՀԱՆ ՅՈՒԱԿ

ՎԱՐՈՒԺԱՆ, ՊԵՐՃ, ԳՈՐԾ, ՀՐԱՏ

27.- Կայծակը՝ Մարգուանի Գաճի գիւղի կուս. ժածկանունն է:

ՆԻՍ Բ.

Հինգշաբթի, 21 Մայիս

Ժողովը բացուեցաւ ընկեր Յոլակի ատենապետու- թեամբ: Բացակայ էր միայն ընկեր Պարոյր:

Առաջարկուեցաւ եւ ընդունուեցաւ միաձայնու- թեամբ իբր խորհրդատու անդամ ընդունիլ տեղ. կոմի- տէի անդամներէն ընկերներ Լէոնիդաս եւ Սիւնի:

Օրակարգը
 I Հաշուեքննութիւն.-

ա. Բանալիի տեղեկագիրը եւ քննութիւնը.-
 13 քաղաքական խումբ } 100 անդամակցութեամբ
 2 Կարմիր խաչի խումբ

Ամսական անդամավճար 6 ոսկի
 Ընդ. մուտք 11050 ղրշ. %
 Ընդ. ելք 1304 3/4 ղրշ.
 Հնչուն դրամ եւ գէնք 9745 1/4

բ. Վաղարշապատի ենթակոմիտէ.-
 8 քաղաքական խումբ 41 անդամակցութեամբ
 Ամս. անդամավճար 121
 Ընդ. մուտք 1218 1/2
 Ընդ. ելք 986 1/2
 Հնչուն դրամ եւ գէնք 232,00

գ. Պարտեզի ենթակոմիտէ.-
 4 քաղաքական խումբ } 210 անդամակցութեամբ
 2 մարտական խումբ

Ամս. անդամավճար 145 1/2
 Ընդ. մուտք 871
 Ընդ. ելք 3510
 2632 պարտք, մաս մը գէնք
 որոշուեցաւ բացատրութիւն պահանջել

դ. Ագարակի կոմիտէ.-
 21 քաղաքական եւ մարտական խումբ, 100 անդամով
 Ամս. անդամավճար 146
 Ընդ. մուտք 583
 Ընդ. ելք 83 1/2
 պատր. դրամ 499 1/2

ե. Կայծակի ենթակոմիտէ.-
 8 քաղաքական խումբ, 35 անդամներով
 Ընդ. մուտք 87
 Ընդ. ելք 20 1/4
 Պատրաստ դրամ 66 3/4

զ. Չորայրի կոմիտէ.-
 20 քաղաքական խումբ }
 8 մարտական խումբ } Թիւ 150

Ամս. անդամավճար 300 ղրշ.
 Ընդ. մուտք 246
 Ընդ. ելք 182
 Պատրաստ դրամ. 64

է. Պոնտոսի կոմիտէ.-
 13 քաղաքական խումբ }
 Մարտական խումբ } 80 անդամ

Ամս. անդամավճար 324
 Ընդ. մուտք
 Ընդ. ելք
 Պատրաստ դրամ 400 ղրշ.

ը. Կայանի կոմիտէ.-
 10 քաղաքական խումբ
 9 մարտական խումբ
 Ամսավճար 324 1/2
 Ընդ. մուտք 6813 3/4
 Ընդ. ելք 888
 Պատրաստ դրամ եւ գէնք 5925 3/4

28.- Ալիս՝ կուս. ժածկանունն Պաֆրա աւանի:

թ. Երեք-բլուրի ենթակոմիտէ.-
 7 քաղաքական խումբ
 Մարտական խումբ
 100 ամսավճար
 Ընդ. մուտք
 Ընդ. ելք

Պ. Զիֆոնի յատկացուելիք 300 ոսկիի բաշխումը.-
 Ժողովը նկատի ունենալով որ մարմինները տակա- Լին ի վիճակի չեն իրենց ինկած բաժինը վճարել, որոշեց գեղջել այդ գումարը 150ի: Ընդունուեցաւ մեծամաս- նութեամբ.

բաշխումը
 35 ոսկի Բանայի կոմիտէին
 30 ոսկի Կայանի կոմիտէին
 25 ոսկի Պոնտոսի կոմիտէին
 20 ոսկի Չորայրի կոմիտէին
 110 ոսկի

110 ոսկի Հայթայթուած կոմիտէներէ
 10 ոսկի Վաղարշապատի ենթակոմիտէ
 10 ոսկի Պարտեզի ենթակոմիտէ
 10 Երեք-բլուրի ենթակոմիտէ
 10 ոսկի Ալիսի ենթակոմիտէ²⁸

Կայծակ անկարող դատուեցաւ
 Ագարակ անկարող դատուեցաւ
 150 ոսկի Զիֆոնին յատկացուելիք դրամը

Ժողովը փակուեցաւ:
 Ի դիմաց ժողովին
 Ա. դպիր Ա. պետ
 ՇԱՀԱՆ ՅՈՒԱԿ ՏԵՐՈՒՆԻ

Անդամք՝ ՊԵՐՃ, ՎԱՐՈՒԺԱՆ, ԳՈՐԾ, ՀՐԱՏ

Քաղաքական խումբ	Մարտական խումբ	Անդամակցություն	անտարածար				
				Ընդհ. մուտք	Ընդհ. ելք	Պատրաստ գումար	
13	2	100	648	Բանալի կոմիտե	11050	1304 ³ / ₄	9745 ¹ / ₄
6	-	41	121	Վաղարշապատի ենթակոմ.	1218 ¹ / ₂	986 ¹ / ₂	232
4	2	40	145 ¹ / ₂	Պարտեզի ենթակոմ.	871	3510	2639
18	3	100	146	Ագարակի կոմիտե	583	83 ¹ / ₂	499 ¹ / ₂
6	-	42	-	Կայծակի ենթակոմ.	87	20 ¹ / ₄	66 ³ / ₄
20	8	150	300	Ձորայրի կոմիտե	246	182	64
11	9	150	324 ¹ / ₂	Կայանի կոմիտե	6813 ³ / ₄	888	5925 ³ / ₄
13	-	80	324	Պոնտոսի կոմիտե	-	-	-
7	-	50	108	Երեք-բլուրի ենթակոմ.	-	-	-
108	24	753	2117		20869 ³ / ₄	6975	19172 ³ / ₄

Կայանը ունի 150 Կարմիր-խաչի անդամուհիներ, իսկ Բանալի՝ 14:

ՆԻՍ Գ.

Ուրբաթ, 22 Մայիս

Ժողովը բացուեցաւ ճիշդ ժամանակին: Ընկեր Պարոյր ներկայ չըլլալուն համար յարմար դատուեցաւ անցնիլ օրակարգի 7րդ կէտին:

7. Մեր դիրքը տարբեր կուսակցութեանց հանդէպ

Լուծում.-

Ա. Գ. Յ. կուսակցութիւն (Գնչ[ակեան], Վերակազմեալ հնչ. եւ Ս[ահմանադրական] Ո[ւսմկալար].-

Համերաշխ ու բարեկամական այն հ[այ] յ[եղ] կուսակցութեանց հանդէպ, որոնք մաքուր ու անկեղծ գործելակերպով կը ձգտին սահմանադրական կարգերու պահպանումին:

Բ. Իթքիատ Թերագոյն կոմիտե.-

Նկատելով որ Իթքիատ Թերագոյնի մեզի բաղադրու-

մամբ աջակողմեան կուսակցութիւն մ'է թէեւ, բայց յամենայն դէպս սահ[մանադրական] կուսակցութիւն մ'է, ըստ էութեան դաշնակից կը մնանք մենք ընդդէմ բոլոր նապետութեան:

Յանձնարարել շրջանի բոլոր մարմիններուն որ պահպանեն յարաբերութիւն Ի. եւ Թ.-ի մասնաճիւղերուն հետ, այսպէսով [ոչ] միայն երկրի սահմանադրական տարրի բարոյական ոյժը աւելցուցած ըլլալու համար, այլեւ մեր պրոպագանդը անոնց մէջ արթնցնելու համար նորանոր գաղափարներ՝ աւելի համապատասխան մեր ծրագրին:

Ժողովը միեւնոյն ժամանակ տեղեկանալով որ շրջանի ինչ ինչ վայրերու մէջ կան մեր ընկերներէն այնպիսիներ, որոնք անդամ են Ի. եւ Թ.-ին եւ նկատելով որ անհատ մը չի կրնար միեւնոյն ատեն երկու կուսակցութեան պատկանիլ, միաձայնութեամբ որոշեց, յանձնարարել այդպիսի ընկերներու՝ տեղական մարմիններու միջոցաւ, որ հրաժարին կամ Դաշնակցութենէն կամ Իթքիատէն:

9. Աիրար (Սապահտտոյնական).-

Նկատելով որ Օսմ. Ահրար կուսակցութիւնը քաղաքական եւ տնտեսական դաշնակցութեամբ մեր շրջանին մէջ գոյութիւն ունեցող բոլոր կուսակցութեանց դաշնակցութեան աւելի կը մօտենայ մերիններուն,-

Նկատելով, սակայն, որ մեր շրջանին մէջ չեն ներկայացնել տակաւին կազմակերպական վիճակ մը,

Միաձայնութեամբ որոշեց,- Յոյց տալ ամէն բարոյական աջակցութիւն որպէսզի Ահրարի մարմիններ ստեղծուին Փ. Հայքի մէջ եւ ստեղծուելէն ետքը կարելի եղածին չափ ոյժ տալ անոնց զարգացման:

8. Ուսումնասիրութիւն Ռայոնական ժողովի գծած ներքին կանոնագրին.-

Կարգացուեցաւ կանոնագիրը եւ միաձայնութեամբ ընդունուեցաւ սա բարեփոխութեամբ միայն 77րդ յօդուածի կոմիտէի ընտրութեան մասին տրամադրութիւնը (տես ներքին կանոնագիրը) փոխուեցաւ հետեւեալին. քուէները բանալու համար պէտք է կազմել յանձնախումբ մը բաղկացած նախորդ կոմիտէի անդամներէն մէկէն եւ կազմակերպութեան վստահութիւնը գրաւող երկու խմբապետներէ:

9. Ագարակի կոմիտէին նամակը.-

Լուծում

Ագարակի կոմիտէին ստացուած թիւ 21 եւ Մայիս 12/25 թուագրեալ նամակը կարգացուելէն ետք միաձայնութեամբ որոշուեցաւ յանձնել Կեդ. կոմիտէին առ ի նկատառութիւն:

Նիստը փակուեցաւ որոշելով յաջորդ նիստին ժամանակը Մայիս 23 Ծաբաթը ժամը 1ին, նոյն տեղը:

Ի դիմաց ժողովին

Ա. դպիր

ՇԱՀԱՆ

Ա. պետ

ՅՈՒԱԿ ՏԵՐՈՒՆԻ

Անդամք՝ ՊԵՐՃ, ԳՈՐԾ, ՀՐԱՏ, ՎԱՐՈՒԺԱՆ, ՊԱՐՈՅՐ

ՆԻՍ Դ.

Ծաբաթ, 23 Մայիս 1909

Ժողովը սկսաւ իր գործունէութեան օրակարգի երրորդ խնդիրով: Ներկայ էին բոլոր ալ:

3. Կեդրոնական կոմիտէի վայր.-

Օրակարգի բաւական շատ զբաղեցնող խնդիրներէն մէկը եղաւ: Բայց թեր ու դէմ կարծիքներու փոխանա-

կումէ ետք, բաւական խորհրդակցութենէ վերջ ու գաղտնի քուէարկութեամբ 2ի դէմ 5 ձայնով որոշուեցաւ Կեդրոնական կոմիտէի վայր ընտրել Կայանը⁸:

Փակուեցաւ նիստը կէսօրէն վերջի ձգելով օրակարգի լուծման շարունակութիւնը:

Ի դիմաց ժողովին

Ա. դպիր

ՇԱՀԱՆ

Ա. պետ

ՅՈՒԱԿ ՏԵՐՈՒՆԻ

Անդամք՝ ՊԵՐՃ, ԳՈՐԾ, ՎԱՐՈՒԺԱՆ, ՀՐԱՏ, ՊԱՐՈՅՐ

ՆԻՍ Ե.

Ծաբաթ, 23 Մայիս

Պատգամաւորներու ամբողջին ներկայութեամբ բացուեցաւ ժողովը:

4. Կեդ. կոմիտէի վարչութեան ընտրութիւն.-

Կայանի տեղ. կոմիտէին ներկայացուց ընտրելիներու ցանկ մը՝ 11 ընտրելիներէն բաղկացած:

Ժողովը գաղտնի քուէարկութիւն կատարելով ձայներու մեծամասնութեամբ ընտրեց

Ընկերք՝ Ծ. Սիւնի 8 քուէ, Հրատ 5, Պարոյր 5, Լէոնի-դաս 4 եւ Շահան 4:

Նուազագոյն թիւ շահողներ Վահէ 3, Ժիրայր 2, եւ Զաւէն 2:

5. Ե. Ընդ. Պատ. ժողովին ղրկուելիք պատգամաւորին ընտրութիւնը

Ժողովը բաւական խորհրդակցութենէ վերջ որոշեց քուէից մեծամասնութեամբ, իբր պատգամաւոր Շրջանային ժողովին ընկեր Յոլակը 5 քուէով: Երկրորդ պատգամաւորին համար համեմատականի մնացին ընկերներ Հրատը, Բարունակը եւ Շահանը: Շահան ետ քաշուեցաւ ի նպաստ միւս երկուքին: Երկրորդ քուէարկութեամբ ընտրեց ընկեր Հրատը 5 քուէով իբր պատգամաւոր) Կ. կոմիտէին:

Յ. Ե. Ընդ. Պատ. ժողովին ղրկուելիք տեղեկագրին պատրաստութիւնը յանձնուեցաւ ընկերներ Հրատին եւ Պարոյրին:

Յաջորդ նիստը Կիրակի ժամը 12, Մայիս 24:

Ի դիմաց ժողովին

Ա. դպիր

ՇԱՀԱՆ

Ա. պետ

ՅՈՒԱԿ ՏԵՐՈՒՆԻ

Անդամք՝ ՊԵՐՃ, ԳՈՐԾ, ՀՐԱՏ, ՊԱՐՈՅՐ

ՆԻՍՏ 2.

Կիրակի, 24 Մայիս

Բացուեցաւ ժողովը ամբողջին ներկայութեամբ:

Ե. Պատգ. ժողովի ուղարկելի տեղեկագրի համար յանձնախումբը պատրաստեց հարցարան մը եւ ժողովը յետ քննութեան յանձնեց իւրաքանչիւր պատգամաւորի, որպէսզի անմիջապէս լրացնելով փութացնէ Կ. Կոմիտէին:

Որոշեց նաեւ ղրկել Ընդ. ժողովի օրակարգը բոլոր մարմիններուն, որպէսզի իւրաքանչիւրը իր կարծիքը յայտնէ Կ. Կոմիտէին որ բոլոր կարծիքները հաւաքելէ վերջ պատրաստէ տեղեկագիրը:

Որոշուեցաւ ղրկել Արեւմտեան Բիւրոյին ցենզը, որպէսզի ըստ այնմ փութացնէ հրաւիրագիրը շրջանիս Կեդ. Կոմիտէին: Խնդրել նոյնպէս, Բիւրոյին, վաւերացումը Կեդ. Կոմիտէին եւ տեղեկագրելով Կ. Կոմիտէի ընտրութեան արդիւնքը պահանջել Կայանի Կ. Կոմիտէի կնիքը:

Ժողովը փակուեցաւ լրացած ըլլալով սկիզբէն գծուած օրակարգը:

Ի դիմաց ժողովին

Ա. դպիր Ա. պետ
ՇԱՀԱՆ ՅՈՒԱԿ ՏԽՐՈՒՆԻ

Անդամք՝ ՊԵՐՃ, ԳՈՐԾ, ՎԱՐՈՒԺԱՆ,
ՀՐԱՏ, ՊԱՐՈՅՐ

ՆԻՍՏ Ե.

Կիրակի, 24 Մայիս

Ժողովը վերեւ նշանակուած օրակարգը լրացնելէ ետք ընկեր Յոլակ կ'առաջարկէ օրակարգի անցնել

1. Շրջանի պրոպականդիստ
 2. Շրջանի մարմիններուն յարաբերական պիւտճէն:
- Ժողովը ընդունեց օրակարգի այս յաւելումը:

1. Լուծում.- Մեծամասնութեամբ ընդունուեցաւ պահել մնայուն պրոպականդիստ մը ապահովելով անոր ապրուստը:
2. Լուծում.-

Ժողովը երկուքի դէմ 4 ձայնով որոշեց որպէսզի

Արեւմտեան Բիւրոյին խնդրուի որ իր առնելիք օրինական գումարին կէսը միայն առնէ - %25ը:

Նոյնպէս որոշեց որ Բիւրոյին այդ ընելիք գեղջը մնայ տեղ. մարմիններուն անտուկը, որ պիտի գործածէ լուկինքնապաշտպանութեան համար:

Յաւելուած.- Շրջանային ժողովը որոշեց յանձնարարել Կ. Կոմիտէին որպէսզի աշխատի հայթայթել պատգամաւորներու ծախքը՝ - 10ական ոսկի իւրաքանչիւր պատգամաւորի - մնացեալ մասը միայն կողմնակի միջոցներով:

Ժողովը փակուեցաւ:

Ի դիմաց ժողովին
Ա. դպիր Ա. պետ
ՇԱՀԱՆ ՅՈՒԱԿ ՏԽՐՈՒՆԻ

Անդամք՝ ՊԵՐՃ, ԳՈՐԾ, ՎԱՐՈՒԺԱՆ

ՆԻՍՏ Ը.

Երկուշաբթի, 25 Մայիս

Ժողովը սկսաւ նախորդ նիստերու ընթացումով եւ վաւերացումով: Ու յետոյ որոշեց Արեւմտեան Բիւրոյին եւ Պատ. մարմին տեղեկագրել Կայանի Կ. Կոմիտէի եւ անդամներուն ընտրութիւնը վաւերացնելու եւ պաշտօնական կնիքը փութացնելու համար:

Երկրորդ նամակով մը, ուղղուած Բիւրոյին՝ ծանուցանելով Ե. Պատգ. ժողովի ընտրուած ներկայացուցիչները եւ ուղարկելով Դ. շրջանի ցենզը, խնդրեց ըստ այնմ հաղորդել Կայանի Կ. Կոմիտէին՝ ժողովի ժամանակը եւ վայրը ծանուցանող տեղեկագիրը:

Պատրաստուեցաւ Կեդր. Կոմիտէի անդամներու հրաւիրագիրները եւ դիւանի կողմէ ստորագրուելով ղրկուեցաւ յիշեալներուն:

Յաջողութեան մաղթանքներով փակուեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան Փ. Հայքի Դ. Շրջանային Ա. ժողովը:

Ի դիմաց ժողովին
Ա. դպիր Ա. պետ
ՇԱՀԱՆ ՅՈՒԱԿ ՏԽՐՈՒՆԻ

Անդամք՝ ՊԵՐՃ, ՎԱՐՈՒԺԱՆ, ԳՈՐԾ,
ՀՐԱՏ, ՊԱՐՈՅՐ

Փաստ. 1538-7

Դ 2.- ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. ԿԱՅԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻՑ

(ՓՈՔՐ-ՀԱՅՔԻ Դ. ՇՐՋԱՆ)

Հ.Յ.Դ. Ե. ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԻՆ

Մեծաբար ընկերներ,

Հ. Յ. Դաշնակցութեան Փոքր-Հայքի Դ. շրջանի Կեդրոնական Կոմիտէն՝ իր կազմութեան թուականէն - Մայիս 25/7 - անմիջապէս վերջ փութաց մասնաւոր շրջաբերականով յանձնարարել շրջանի բոլոր մարմիններուն պատրաստել իրենց տեղեկագիրը Կեդր. Կոմիտէին կողմէ պատրաստուած մասնաւոր հարցարանի մը վրայ եւ յայտնել իրենց կարծիքը Ե. Ընդհանուր ժողովի օրակարգի մասին՝ պատրաստելու համար շրջանիս վիճակը պատկերացնող ընդհանուր տեղեկագիր մը: Բոլոր մարմիններու տեղեկագիրները ստացուելէ վերջ տեսնուեցաւ որ անոնք ընդհանուր գիծերու մէջ մօտաւորապէս նոյնն էին, ուստի կը բաւականանանք ընդհանուր կէտերու մասին ամփոփ տեսութիւններով, կցելով ամբողջ շրջանին մարմիններու կազմակերպական վիճակը եւ բնակչութիւնը ներկայացնող պատկեր մը:

Յեղափոխութիւնը Սահմանադրութենէն առաջ

Սահմանադրութեան հռչակումէն առաջ Փոքր-Հայքի հայութիւնը յեղափոխութեան հանդէպ ցուրտ վերաբերում մը ցոյց կու տար: Տասնեակ տարիներ առաջ հոս ու հոն երեւան եկած շարժումները ի սպառ անհետացել էին: Հագիւ մէկ երկու վայրերու մէջ, օր. Սամսոն, Մարգուան եւ Սեբաստիա գոյութիւն ունէին մի քանի յեղափոխականներ, որոնք վերլակազմեալ՝ հնչակեաններու հետ թղթակցելէ զատ ուրիշ ո՛րեւէ որոշ գործունէութիւն մը եւ նպատակ մը չեն հետապնդած: Փոքր-Հայքը, որ պիտի կրնար յեղափոխական լաւագոյն դաշտ մը ըլլալ իր դիրքով եւ ինչ ինչ վայրերու հոծ բնակչութեամբ, չունեցաւ սակայն զօրաւոր եւ արդիւնաւոր գործունէութիւն մը. սա չէ կարելի վերագրել միայն ժողովուրդին անգիտակցութեան դէպի յեղափոխութիւնը այլ միաժամանակ գործիչներու ապիկարութեան եւ որդեգրուած սխալ սկզբունքներու եւ ուղղութիւններու, որոնք մեծագոյն պատճառները եղան ժողովուրդին ուժացման. եւ այսպէս, Փոքր-Հայքի հայութիւնը մատնուած անհոգութեան՝ բոլորեց տասնեակ տարիներու անյաջող շրջան մը. բաղդատամբ ուրիշ վայրերու, նուազ ենթակայ ըլլալով բռնապետական հալածանքներու եւ ճնշումներու՝ չկրցաւ գրաւել յեղափոխութեան կարեւոր դիրք մը՝ գործերու մէջ: Երբ այս տխուր իրողութիւններու հոգեբանական լուրջ վերլու-

ծումին մտնենք, աւելի յստակ գաղափար մը կազմած ըլլալու համար պիտի ստիպուինք խոստովանիլ թէ՛ հոս մեր շրջաններու մէջ գաղափարական յեղափոխութիւն մը մոտ չէր գտած, որովհետեւ նախ ընդհանուր ժողովուրդը գուրկ՝ լուրջ ազգ. առողջ դաստիարակութենէ՛ երբեք գիտակցութիւնը չէր ունեցած իր ընկերական, հասարակական կեանքի զարգացման, եւ ստացած ըլլալով մակերեսային կրթութիւն մը՝ հեռի ապրած էր ազգ. կեանքէ, ամփոփուած ինք իր մէջ հետամտելով միայն իր շահը եւ իր անձին հանգիստը: 80-86 թուականների յեղափոխական շարժումները շուտ մարեցան եւ դէպքերէ վերջ ժողովուրդի ստուար մեծամասնութիւնը նոյն իսկ սկսաւ անգիտակցաբար հարուածել ու դատապարտել յեղափոխութիւնը եւ յեղ. գործիչները՝ տեսնելով անյաջողութիւնները, առաջ բերած արիւնոտ դէպքերը, եւ մօտ ապագայի մէջ անկախ Հայաստան կազմելու համար իր խաբուած ըլլալը: Ոչ-նուազ վնասակար եղաւ նաեւ այդ թուականների եւ անկից վերջ տեղի ունեցած արտագաղթը, որով բոլորովին հեռացան ամէն քաղաքէ քիչ շատ գործունէութիւն ունեցող գործիչներ, որոնք անշուշտ շատ գոհ չեն թողուր ինչպէս բռնապետ կառավարութիւնը, նոյնպէս եւս ժողովուրդի հակաօրհակական պոռթուած դասակարգը, որ վտանգուած կը տեսնէր իր շահերը յեղափոխութեան մէջ:

Դաշնակցութիւնը՝ Սահմանադրութենէն առաջ

Օսմանեան Սահմանադրութենէն առաջ Հայ Յեղ. Դաշնակցութիւնը ո՛րեւէ գործունէութիւն չէ ունեցած եւ նոյնիսկ մոտեք ալ չէ գործած մեր շրջանին մէջ: Եւ կը ցաւինք ըսել որ Դաշնակցութիւնը իր լուրջ ուշադրութեանը ենթարկած չէ Փոքր-Հայքը: Գիտենք վստահօրէն թէ եթէ Դաշնակցութիւնը կանուխէն մոտ գտած ըլլար մեր շրջանին մէջ՝ Հնչակեանութիւնը չպիտի կրնար սանձարձակ գործել եւ սխալ քայլերու հետեւիլ, այլ Դաշնակցութիւնը իր սկզբունքներով ու գործելակերպով մեծ հիասթափում²⁹ մը յառաջ պիտի բերէր ժողովուրդին մէջ եւ սա բնական պիտի ըլլար վառ պահելու յեղափոխական գաղափարը: Մինչեւ Սահմանադրութեան հռչակումը գտնուած են հոս ու հոն դաշնակցականներ, որոնք չեն կրցած կազմակերպական

29.- Յայտնապէս հեղինակը հոս եւ այլուր սխալ իմաստով կը գործածէ «հիասթափութիւն» բառը: Պէտք է ըլլայ «խանդավառութիւն»:

գործունէութիւն մը ունենալ, եւ մնացած են իբրեւ համակրողներ եւ անուսով յեղափոխականներ:

Յեղափոխութիւնը Սահմանադրութենէն վերջ

Փոքր-Հայքի հայութիւնը, ինչպէս եւ միւս բոլոր ազգեր անակնկալ իրողութեան մ'առջեւ գտան ինքզինքնին Սահմանադրութեան հռչակումովը: Ժողովուրդին մէջ յառաջ եկած հիասթափումը մեծ էր. եռանդուն ոգեւորութիւն մը կը տիրէր ամէնուրեք. եւ ամէն անոնք՝ որոնք Սահմանադրութենէն առաջ յեղափոխութեան թշնամի էին՝ սկսան յանկարծական թափով մը նետուել յեղափոխութեան գիրկը եւ գայն փառաւորել: Զպակսեցան նոյնիսկ դաւաճաններ, որոնք ուզեցին ձեռք առնել յեղափոխութեան դեկը, բայց չուտով վտարուեցան այդպիսիներ, երբ սկսաւ ամէն տեղ կանոնաւոր կազմակերպութիւն մը: Ժողովուրդը որչափ ուրախ Սահմանադրութիւնով, բայց տակաւին անգիտակ կը մնար յեղափոխական լուրջ գործունէութեան մը, քանի որ հնչակեանները բոլորովին մարած էին եւ Դաշնակցութիւնն ալ գոյութիւն չուներ: Սահմանադրութենէն անմիջապէս վերջ Դաշնակցութիւնը շատ աւելի զօրաւոր դիրք մը պիտի կրնար գրաւել եթէ մէկ քանի կարող գործիչներ հասնէին եւ սկսէին կազմակերպութեան:

Հ.Յ.Դ. Կազմակերպութիւնը Սահմանադրութենէն վերջ

Դաշնակցութիւնը, ինչպէս դիտել տրուեցաւ, Սահմանադրութենէն վերջ սկսաւ գոյութիւն ունենալ: Երբեմն վայրեր չպակսեցան անկեղծ յեղափոխականներ, որոնք մօտէն ծանօթ ըլլալով հնչակի եւ անկէ բաժնուած ալ կուսակցութիւններու աղտոտ արարքներուն՝ չուզեցին այդ դրօշին տակ գործել եւ սկսան միջոցներ ձեռք առնել յարաբերութեան մտնելու Պոլսոյ Պատասխանատու Մարմինին հետ. այսպէսով սկսան Դաշնակցութեան հող պատրաստել: Առաջին շարժումը սկսաւ Սամսոնի եւ Մարգոլանի մէջ, ուր կը գտնուէին մի քանի դաշնակցական ընկերներ եւ սկսած էին պրոպագանդով պատրաստել բոլոր մտքերը: Սակայն որոշ եւ կանոնաւոր կազմակերպութիւն մը եւ ո՛չ մէկ տեղ գոյութիւն ունէր մինչեւ ընկեր Շահպազի ժամանումը, թէեւ համակիրներու թիւը ամէն տեղ հետզհետէ կը ստուարանար: Բայց երբ ընկեր Շահպազ հասաւ, կրցաւ իր հրապարակախօսութիւններով ներկայացնել Դաշնակցութիւնը, պարզել նրա ծրագիրը եւ դարձնել ժողովուրդին ընդհանուր ուշադրութիւնը դէպի Դաշնակցութիւն. այս միջոցին հնչակեանները տակաւին չունէին որոշ գոյն մը, ուղղութիւն մը եւ կազմակերպութիւն մը, սակայն իբրեւ աւանդապահները հին «Հնչակ»ի, չկրցան թօթափել այդ անունը իրենց վրայէն. ուստի Դաշնակցութեան դէմ պայքարելու անկարող — իր

ծրագրի, թաքթիքի, անցեալին եւ ներկային տեսակետով,— սկսան միութիւն քարոզելով պիտորել ժողովուրդին կոյս մտքերը եւ շահագործելով անոնց միամիտ հաւատքը՝ ջանացին հեռի պահել ժողովուրդեան անգիտակից մասսային մեծ մասը Դաշնակցութենէն: Բայց Դաշնակցութիւնը որչափ ալ նոր՝ իր երեւոյթով՝ չաճապարեց գործունէութիւն մը ցոյց տուած ըլլալու համար անդամներ շատցնելու, այլ ընտրանօք յառաջացաւ, հաստատ հիմերու վրայ դնել կարենալու համար յեղափոխութիւնը, եւ ուրախ ենք յայտարարելու թէ՛ այսօր ամէն տեղ դաշնակցական ընկերները աւելի գիտակից տարրերէ կազմուած են՝ թէեւ թիւով մեծ բան մը չեներկայացնեն: Դաշնակցութեան մեր Դ. շրջանի մէջ ունեցած դիրքը որոշապէս ճշդուած է, «Մարմինները եւ անոնց վիճակը» հատուածին մէջ:

Այլ կուսակցութիւնները.—

Հնչակեան

Ինչպէս Սահմանադրութենէն առաջ, հնչակեան կուսակցութիւնը այլեւս դադարած էր գոյութիւն ունենալէ, Սահմանադրութենէն վերջն ալ չկրցաւ որոշ ուղղութիւն մը ունենալ, ինչպէս վերեւ պարզուած է: Առաջին անգամ վերակազմաւ անունով երեւան եկան, իսկ յետոյ բոլոր հայ յեղ. կուսակցութիւններու միութեան հարցը մէջտեղ նետելով բոլոր կեդրոններու հետ իրենց յարաբերութիւնները խզած հռչակելով՝ պահեցին «Հնչակ» անունը. իսկ հիմակ աւելի յարած կը թուին հին հնչակեաններուն: Չմոռնանք ըսելու նաեւ որ Սահմանադրութենէն անմիջապէս վերջ մէկ քանի շրջաբերականներ ալ հանեցին հրապարակ բոլորովին անգոյն կերպով «Հայ Յեղ. Վարչութիւն» ստորագրութիւնով՝ ա՛յն ատեն, երբ դեռ Դաշնակցութիւնը մուտք չէր գտած հոս: Մեր շրջանին մէջ հնչակեաններու դիրքը շատ խախտու է. Կայանը որոշուած է՝ իբրեւ նահանգային կեդրոն մը Փոքր-Հայքի հնչակեաններուն, որոնք անկախ հռչակած են ինքզինքնին ամէն կուսակցութիւններէ եւ վերջնական գոյն մը առնելու համար զորք կած են լիազօր մը Պոլիս, բանակցելու հայ կուսակցութիւններու հետ: Սակայն Դաշնակցութեան լուրջ ջանքերը եւ տեւական պրոպագանդը կը յուսանք որ մօտաւոր ապագայի մը մէջ պիտի բերեն բոլոր գիտակից տարրերը Դաշնակցութեան դրօշին տակ. եւ ուրախ ենք ըսելու որ լաւագոյն նշանները եւս օրէ օր սկսած են երեւիլ այդ բանին:

Իթիֆհատ

Թուրք յեղափոխութիւնը Սահմանադրութենէն առաջ գրեթէ գոյութիւն չուներ. շատ շատ կը գտնուէին

մի քանի գինուորականներ, որոնք յարաբերութիւն ունենային Սելանիկի եւ Փարիզի հետ. ԾՅԴի Փարիզի Գոնկրէէն վերջ քիչ քիչ սկսաւ յայտնել իր գոյութիւնը, բայց չէր կարող բռնապետական ռեժիմի մը ներքեւ կազմակերպութիւններ կատարել. մնաց, ուստի, մինչեւ Սահմանադրութեան հրատարակումը անգործ. բայց Սահմանադրութեան հռչակումէն վերջ սկսաւ ամէնուրեք գործունէութիւն մը ունենալ. թուրք ժողովուրդը իր կազմով, կրօնքով, իմացականութիւնով անընդունակ յեղափոխութեան՝ հեռի մնաց իթիֆհատէն, աւելի գինուորականներն էին որ կը վարէին գործերը եւ երբեմն ալ կառավարական պաշտօնեաներ, որոնք իրենց դիրքը պահելու համար մտած են իթիֆհատի մէջ՝ քան թէ խոր համոզումով գործին. ուստի գիտակից եւ գաղափարական իթիֆհատեաններ հազուադէպ են. միայն ուրախալի պարագան ա՛յն է որ թուրք թէեւ գո՛ւրկ՝ ընդհանուր առմամբ զարգացումէ եւ անգիտակ իր վիճակին եւ յեղափոխութեան, սակայն գէթ յարգանքով կը վերաբերի դէպի իթիֆհատեանները՝ գիտնալով որ գինուորական ուժը անոնց ձեռքն է, եւ այս պարագան բաւական միջոցաւ է եւ միջոց կ'ընծայէ անկեղծ իթիֆհատեաններու միջոցաւ պրոպագանդ ընել անոնց մօտ: Իթիֆհատեանները ո՛չ մէկ քաղաքի մէջ թուական առաւելութիւն մը կը ներկայացնեն, բայց թուրք ժողովուրդին հաւատքը շա՛տ մե՛ծ է անոնց մասին: Ահարար եւ այլ թուրք կուսակցութիւններ այս կողմերը դեռ գոյութիւն չունին:

Կրթական վիճակ եւ կուլտուրական ձեռնարկներ

Վերջին տասնեակ տարիներէ ի վեր շրջանին կրթական վիճակը հետզհետէ կը ստանայ բարւոք վիճակ մը, սակայն տակաւին հեռի է զօրաւոր մտաւորականութիւն մը արտադրելէ: Մինչեւ Սահմանադրութեան հռչակումը մեր կրթական բոլոր հաստատութիւնները չունէին ազգ. ազատ դաստիարակութեան մը դրոշմաւելի կը հետեւէին օրուան շարժումը գրականութեան քան գաղափարը բարձրացնող եւ անհատականութիւնը զօրացնող գիտական, տնտեսական եւ իմաստասիրական նորութիւններու: Այսուհանդերձ երբ բաղադրութեան դնենք իւրաքանչիւր քաղաքի կրթական վիճակը իր պիւտճէին հետ, կրնայ գոհացուցիչ նկատուիլ եւ իր դէպի բարձրանալու եւ զարգանալու ձգտումներուն մէջ կարելի է նշմարել լաւագոյն ապագայ մը: Ամէն տեղ ժողովուրդին վերաբերումը դէպի իր կրթական գործը, գիտակից երեւոյթ մը կը ստանայ: Եւ հետեւաբար նա պիտի կարողանար համեմատաբար քիչ ժամանակի մէջ բարելաւել իր դպրոցները, եթէ սակայն իր տնտեսական վիճակը ներող ըլլար առ այդ: Մեր շրջանի մէջ լաւագոյն կրթական շարժումը սկսած է Մարգոլանի մէջ, ուր արդէն գոյութիւն ունեցած էր Ամերիկեան Անաթոլիա գոլէճը 24 տարիներէ ի վեր, եւ ամէն տարի

իր արտադրած շրջանաւարտներով կարողացած է մեծ ոգեւորութիւն մը յառաջ բերել շրջակայ բոլոր քաղաքներու մէջ. սակայն միախոնարական հաստատութիւն մը ըլլալով միշտ պահպանողական մնացած է դէպի գաղափարի ազատագրումը:

Մեր շրջանի բոլոր քաղաքները ունին երկու նախակրթարաններ 8-8 դասարաններով, մանկապարտէզի եւ երբեմն վայրեր ալ, օրինակ Մարգոլան, Ամասիա, Հաճի գիւղ աղջկանց համար նախակրթարանի կից՝ արհեստանոցներ: Մեր վարժարաններու մէջ առ հասարակ կ'աւանդուին բացի հայ եւ թուրք լեզուներէ Փրանսերէն, անգլերէն, գիտական — տարրական — դասեր, պատմութիւն, ուսողութիւն, աշխարհագրութիւն եւ այլն. առեւտրական դասեր — համարակալութիւն եւ վերջին տարիէն սկսուած են նաեւ ազգ. պատմութիւն եւ մատենագրութեան պատմութիւն: Մարգոլանէն վերջ Ամասիան կու գայ, որ ունի երկու երկսեռ նախակրթարաններ 4-8 դասարաններով եւ իբրանոսեան առեւտրական վարժարան մը — անհատական — որ յաջողած է բաւական նշանակալի դեր մը խաղալ Ամասիոյ մէջ. յետոյ կու գայ Սամսոն՝ որ ունի նոյնպէս երկսեռ նախակրթարան մը ըստ բաւականին յաջող, սակայն շրջակայքի, ինչպէս Զարչամպայի եւ Պաֆրայի կրթական վիճակը յետեւալ է, թէեւ ունին նախակրթարաններ. Եւրոպիա (Թոգաթ), Զիլէ եւ Հաճի գիւղ քանի մը տարիներէ ի վեր սկսած են ուժ տալ իրենց կրթական վիճակին, իսկ Չորում, Սոնկուրլու, մանաւանդ Եոզղատ, աւելի յետեւալ վիճակ մ'ունին կրթական տեսակէտով: Դիտելի պարագայ մըն է որ ամէն տեղ ալ նոյն ուժը չի տրուիր իգական սեռի դաստիարակութեան, ինչ որ կը տրուի արական սեռին համար:

Գալով թուրքերու մտաւորական վիճակին, տխուր է: Առհասարակ կը հետեւին կրօնական ծանծաղ գիտելիքներու եւ գուրկ են առողջ դաստիարակութենէ մը — թէեւ ամէն տեղ ունին վարժարաններ եւ «մէտրէսէ»ներ՝ սակայն միջնադարեան: Սամսոն, Ամասիա, Եւրոպիա, Չորում ու Եոզղատ ունին «իտատիյէ» վարժարաններ, իսկ միւս վայրերուն մէջ «րիւշտիէ» եւ «իպթիտայիյէ» վարժարաններ, բացի թաղային ծաղկոցներէ եւ մէտրէսէներէ: Թուրք ուսուցչութիւնը ինկած է. առհասարակ սոփիաներն են որ կը դասախօսեն, կարող եւ բարձր իմացականութեամբ օժտուած դաստիարակներ կը պակսին ամէն տեղ:

Կուլտուրական ձեռնարկներ

Սահմանադրութիւնը նոր դարագլուխ մը բացաւ ընդհանուր ժողովրդեան, ինչպէս մտաւորական, նոյնպէս եւ գեղարուեստական ճաշակի ազնուացման եւ զարգացման տեսակէտներով: Սահմանադրութենէն անմիջապէս վերջ ամէն քաղաքներու մէջ ալ հաստատուեցան ընթերցատուններ կուսակցութիւններու հսկողութեան տակ, ուր ժողովուրդեան տրամադրութեան

տակ դրուեցան բացի տեղական օրաթերթերէ եւ պարբերականներէ՝ օտար թերթեր եւ յեղափոխական հրատարակութիւններ: Հաստատուեցան նոյնպէս լսարաններ մասնաւոր հսկողներու եւ կամ վարժարաններու տեսչութեան յանձնուած, ուր կը բանախօսէին միշտ յեղափոխութիւնը ներկայացնող եւ ազգ. կեանքը, — հին ու նոր — պատկերացնող բանախօսութիւններ. նոյնպէս կազմուեցան թատերախումբեր հոս ու հոն, թէեւ թերի, աւելի ուսանողներէ եւ ուսուցիչներէ կազմուած՝ բայց համեմատաբար քիչ ժամանակի մէջ կարողացան ազգ. կեանքէ առնուած իրական տրամներ ներկայացնելով հրահրել ժողովուրդին եռանդը եւ բորբոքել զգացումները: Եւ ահա, այսպէս ամէն տեղ, ընթերցարան, լսարան, թատերական բեմը նոր ոգեւորութիւն եւ արթնութիւն մը յառաջ բերին ժողովրդեան ամէն խաւերուն մէջ: Եւ այսօր հայ ժողովուրդը աւելի գիտակցաբար կը վերաբերուի իր ազգ. կրթական, յեղափոխական եւ կոլտնտեսական գործերուն, ինչ որ չէր երէկ. եւ սա բաւական յոսանք երեւոյթ մըն է եւ հետզհետէ ա՛լ աւելի պիտի զօրանայ, մանաւանդ երբ ազգ. հաստատութիւններու դեկը յանձնուի կարող ձեռքերու:

Տնտեսական վիճակ

Շրջանս տնտեսապէս բարուք վիճակ մը չի կրնար ներկայացնել, քանի որ արհեստ եւ վաճառականութիւն տակաւին կը գտնուին նախնական վիճակի մէջ եւ արդիւնաբերական գործերը գիտական միջոցներով եւ մեքենական ուժերով չի կատարուիր: Ժողովրդեան ստուար մեծամասնութիւնը կը կազմէ միջին դասակարգը՝ բաղկացած բանուորներէ եւ խանութականներէ: Վաճառականութիւնը ճնշուած է. կը պակսին դրամատէր վաճառականներ. առեւտուրի նախնական տարբերքն են տեղական ամէն կարգի նախնական բերքեր. — արմտիք, ալիւր, ընդեղէն, կանեփ, աֆիոն, մետաքս, խոզակ, մորթ, հաւկիթ, մրգեղէն, բուրդ, ծխախոտ եւ այլն եւ այլն, որոնք մեծ մասամբ Եւրոպա կ'արտածւին: Իսկ ներածութեան նիւթեր են մանիֆաթուրայ, ամէն կարգի մանր իրեղէններ, մանած, եւ այլն: Մանիֆաթուրայի գործը բաւական փայլուն եւ շահաբեր գործ մըն էր. բայց 20 տարիներէ ի վեր սկսած է հետզհետէ կապտուիլ մէկ քանի խոշոր դրամատէրներու կողմէ՝ ի վնաս միջին դասակարգին, ինչպէս Իբրանոսեան եղբարք, որոնք ո՛չ միայն մեր շրջանին մէջ, այլեւ ուրիշ կողմեր ալ մեծ հարուածներ տուած են՝ իբրեւ կապիտալիստ եւ շատերը մատնած են սնանկութեան եւ թշուառութեան: Արհեստներուն գալով, բոլորն ալ նախնական վիճակի մէջ են, թէեւ երբեմն ջանքեր կ'ըլլան ազնուացնելու, ինչպէս մանուսագործութիւնը, խաւիճիութիւնը, որոնք այս շրջանին մասնաւոր արտադրութիւններ են, իսկ ուրիշ արհեստներ, բոլորն ալ յետնեալ են: Միայն դերձակութիւն, կօշկակարութիւն, ատաղձագործութիւն օրէ օր ազնուանալու վրայ են:

Բանուոր դասակարգին վիճակը շատ ինկած է ամէն տեղ ալ. ասոնք հազիւ կարող են ապրուիլ անձուկ պայմաններու մէջ: Մարզուան, Ամասիա, Եւրոպիա եւ Հաճի գիւղ բանուորները ստուար թիւ մը կը ներկայացնեն, որոնք կը պատրաստեն մեծ մասամբ մանուսա, խաւրու, մետաքսեղէնի եւ տպածոյ լաչակներ (եագմա) եւ այլն: Յարը չեն կազմուած արհեստակցական եւ բանուորական միութիւններ, բայց կը կարծենք թէ դժուար պիտի չըլլայ կազմելը: Բանուոր դասակարգին շահերը երբեք չեն պաշտպանուած եւ գործարանատէրերը յաճախ անխղճութիւնը կ'ունենան նուազեցնելու արդէն իսկ անբաւական օրավարձքը: Կառավարութիւնը որեւէ լուրջ ուշադրութեան առարկայ չէ ըրած գործաւոր դասակարգին վիճակը եւ կարող ալ չէ ներկայ պարագաներուն մէջ, մինչեւ որ Պարլամենտը չքուէարկէ օրական աշխատութեան որոշ սահման մը եւ չվերցուի դապալի դրութիւնը: Յաւալի է որ բանուոր դասակարգին մէջ կը գտնուին նաեւ 8-8 տարեկան անչափահաս տղաքներ, որոնք փոխանակ դպրոց յաճախելու՝ դատապարտուած են իրենց հօրը կամ մօրը հետ աշխատելու:

Գիւղացիական վիճակ եւ հողային տիրացում

Շրջանիս գիւղացիութիւնը, ինչպէս մտաւորականապէս նոյնպէս եւ տնտեսապէս անկեալ վիճակ մը ունի. միշտ ճնշուած՝ կառավարութեան բռնութիւններու եւ վաշխառուներու կեղեքումներուն տակ, գիւղացիութիւնը բացարձակօրէն անկարող է իր վիճակին բարուքման աշխատելու, եթէ ուրիշ ուժեր օգնութեան չհասնին: Մշակութիւնը նահապետական վիճակ մ'ունի եւ բերքերու յաջողութիւնը կապուած է անձրեւներու, եւ այս պատճառաւ յաճախ կը մատնուին թշուառութեան սոսկալիօրէն:

Շրք տարին երաշտ ըլլայ, մշակութեան գլխաւոր տարերք են արմտիք, ընդեղէն, աֆիոն, ծխախոտ եւ կանեփ: Հողային բաժանումը չի համապատասխաներ ընտանիքի թիւին. ամէն տեղ ալ չեն պակսիր մեծ հողատէրեր, որոնք գրաւած են մշակելի եւ բերրի հողերուն մեծ մասը: Կ'ենթադրուի թէ մշակելի հողին կէսը գրաւած են հողատէրեր, որոնք իրենց հաշուին մշակել կու տան գիւղացիներուն՝ արդիւնքին մեծագոյն մասը իրենց ապահովելով: Մեր շրջանին մէջ հայ գիւղեր քիչ են, միայն Շոգղատ ունի 40ի չափ հայ գիւղեր: Եւրոպիոյ, Չարշամպայի եւ Մարզուանի մօտերը կը գտնուին մի քանի հայ գիւղեր գոտ հայ բնակչութեամբ, որոնց վիճակը թուրք գիւղացիներէն տնտեսապէս բարձր չէ: Բայց մտաւորապէս անոնցմէ վեր կը մնան միշտ: Գիւղացիական միութիւններ երբեք չեն կազմուած, եւ ներկայիս մէջ մեծ հնարաւորութիւն մը չի կենար՝ քանի որ յետնեալ վիճակ մ'ունին եւ թուրքերուն համար ալ գոնէ իթթիհատը նախաձեռնարկ չ'ըլլար, իսկ հայ գիւղերու մէջ դա կարելի է եթէ Շոգղատի եւ Չարշամպայի կազմակերպութիւնները զօրաւոր հանգամանք մը ստա-

նան, որուն համար Կեդրոնական Կոմիտէն պիտի աշխատի մասնաւոր միջոցներ ձեռք առնել:

Ինքնապաշտպանութիւն հակա-սահմանադրականներու դէմ

Այս կարեւոր խնդիրը ցաւալի է ըսել թէ բաւական տկար մնացած է, հակառակ մեր ջանքերուն եւ տեղական մարմիններու պրոպագանդին, որովհետեւ ինչպէս դիտել տրուեցաւ ժողովրդային անգիտակցութիւնը, նոյնպէս շատ տեղերու տնտեսական անյաջող վիճակը չնքնեցին մէկ անգամէն լուրջ ուշադրութիւն դարձնել. բայց Կայան⁶ եւ Բանայի⁸ համեմատաբար աւելի գոհացուցիչ վիճակ մ'ունին, իսկ միւս մարմիններն ալ հետզհետէ կը ջանան ինքնապաշտպանութեան միջոցները զօրացնելու:

Ներմուծուած են մաս մը թիւ 11 եւ թիւ 4: Պէտք է խոստովանինք սակայն որ տակաւին ոչ մէկ տեղ ինքնապաշտպանութիւնը պէտք եղածին պէս չէ կրցած ապահովել: Ընտիր եւ դիւրամատչելի թիւեր հայթաթելու համար որքան որ որոշուած էր ռայոնական ժողովի կողմէ հաստատել Զիֆոն մը չորս Կեդր. Կոմիտէներէ, 800 ոսկի դրամագլուխ հաւաքելու պայմանով, բայց դժբախտաբար ցարդ կարելի չեղաւ իրագործել այս ձեռնարկը, իւրաքանչիւր մարմնի սահմանուած բաժինը տակաւին ձեռք բերուած չըլլալուն:

Շրջանիս մարմինները

Կայանը դեռ Կեդր. Կոմիտէ չընտրուած միշտ ուշադրութիւն դարձուցած էր իր շրջակայքի քաղաքներու կազմակերպութեան հոգ տանելու եւ ջանալ տարածելու Դաշնակցութեան սկզբունքները եւ լայնցնել կազմակերպական շրջանակը:

Արդէն ընկեր Շահպազ իր ուղեւորութեան ընթացքում կարողացեր էր իր հետապնդած բոլոր քաղաքներուն մէջ կազմակերպութիւններ կատարել եւ դնել բոլոր մարմինները իրարու հետ յարաբերութեան մէջ, որ շատ նպաստաւոր կրցած է ըլլալ փոխադարձ յարաբերութիւն մշակելով իրարու հետ եւ օգնելով իրարու: Այսօր շրջանիս մարմինները թէեւ, ինչպէս դիտել տրուեցաւ, թուական մեծ առաւելութիւն մը չեն ներկայացնել, սակայն համեմատաբար սուղ ժամանակի մը մէջ իրենց գրաւած դիրքը, ներշնչած վստահութիւնը եւ իր հետապնդած ուղղութիւնը լաւագոյն ապագայ մը կը խոստանան: Հոս բոլոր մարմիններու իւրաքանչիւրին մասին առանձին տեղեկութիւններ տալ փափաքելի էր, սակայն նկատելով որ շրջանիս բոլոր մարմիններու վիճակը իր ընդհանուր գծերուն եւ պահանջներուն մէջ նոյնն է, եւ նկատելով որ մարմինները դեռ նոր կազմուած ըլլալով չէին կարողացած մեր պահանջած լիակատար տեղեկագիրը դրկել, ուստի կը ստիպուինք միայն ընդհանուր տեսութիւններով բաւականանալ՝ կցելով

վիճակացոյց-պատկեր մը, ուր նշանակուած են անդամներու թիւը, խումբերը, անոնց տեսակները, իւրաքանչիւրին ամսավճարները, նուիրատուութիւնները (եթէ ունեցեր են) եւ ելքերը, նաեւ իւրաքանչիւր քաղաքի բրնակչութիւնը:

Կազմակերպական պէտքեր յառաջիկային համար

Ա. Նկատելով որ Փոքր-Հայքի մէջ Դաշնակցութիւնը դեռ նոր մուտ գտած՝ կը պակսին կարող եւ փորձ ընկերներ կազմակերպական բոլոր պահանջներուն բաւարարութիւն տալու,

Նկատելով որ փորձ գործիչներ պիտի կրնան իւրաքանչիւր Կեդր. Կոմիտէներու մէջ նոր գործիչներ պատաստել տեղւոյն վրայ,

1) Կ'առաջարկենք ունենալ իւրաքանչիւր շրջանի համար թէ՛ մտաւորական եւ թէ՛ մարտական մէջմէկ փորձ եւ կարող գործիչներ:

Բ. Նկատելով որ Կեդր. Կոմիտէները եւ մարմինները ընդհանրապէս նոր կազմուած ըլլալով պէտք ունին փորձառութեան եւ մօտէն հրահանգուելու,

Նկատելով որ Փոքր-Հայքի մէջ պատասխանատու մարմին մը կազմակերպութեան ընդլայնման եւ ժողովուրդի յեղափոխական ոգի մշակելու մէջ մեծ դեր մը կրնայ կատարել

եւ նկատելով որ Պոլսոյ Պատասխանատու մարմինը իր դիրքով եւ իր ծանրածանր զբաղումներու բերմամբ այն առիթը չ'ունենար մօտէն հսկելու բոլոր մարմիններու

Կ'առաջարկենք Փոքր-Հայքի համար ստեղծել պատասխանատու մարմին մը:

Գ. Ինչպէս տեսնուեցաւ վերը ինքնապաշտպանութեան հատուածին մէջ, Զիֆոնի մը կարեւորութիւնը եւ շուկայ ստեղծելու համար հաստատուն դրամագլուխ մը մէջտեղ բերելու անյաջողութիւնը, որը շատ թերի կը թողու ինքնապաշտպանութիւնը եւ յառաջ կը բերէ ցրտացում մը, ուստի այս կարեւոր պակասը լրացնելու համար կը ստիպուինք խնդրել Փոքր-Հայքի համար յատկացնել որոշ պիւտձէ մը:

Կը սիրենք յոսալ որ Ընդհ. պատգամաւորական ժողովը նկատի ունենալով Փոքր-Հայքի արդի վիճակը, բարի կ'ըլլայ իր մասնաւոր ուշադրութիւնը դարձնել հոս, եւ բաւարարութիւն տալ անոր բոլոր կարիքներուն, որով պիտի կրնայ դարմանել ժողովուրդի վէրքերը եւ մեղմել ցաւերը:

Հ.Յ.Դ. ԿԱՅԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷՆ

(Ստորագրումներ)
 Լ.ՆՈՒՐԻԱՍ ԶՐԱՏ Ծ. ՍԻՒՆԻ ՊԱՐՈՅՐ

10/23 Յուլիս 1909
Կայան

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ԳԼՈՒԽ XI

ՎԻՇԱՊԱԶՈՐ – ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

Ինչպես Փոքր-Հայքի շրջանը, Վիշապաձոր-Տիգրանակերտի Կեդր. Կոմիտեի սահմաններում ևս կազմակերպվում են օսման ահմանադրություններ: Նախապես, թե՛ քաղաքի և թե՛ գաւառական ավաններում մէջ գոյութիւն ունէին արդէն կուսակցական փոքր բջիջներ և անհատ գործիչներ, որոնք մնայուն յարաբերութիւններ կը պահէին Տարօն-Սասունի, Պիթլիսի և Վասպուրականի հետ և կը գործէին այդ տեղերէն եկած ցուցմունքներով: Այդ կորիզին վրայ 1908էն սկսեալ կազմաւորուեցաւ նոր Կ. Կոմիտեի սահմանները:

Շրջանի առանձնայատկութիւնը այն էր, որ բացի վիլայէթի կեդրոն Տիարպէթի քաղաքէն, գաւառական շրջանները տիրապետուած էին քրտական ցեղախումբերէն, և շատ մը հայաբնակ գիւղախումբեր վաղուց արդէն քրտախօս դարձած էին, բայց նոյնքան ենթակայ կը մնային անոնց բռնութիւններուն, որքան հարեւան միւս հայկական նահանգները:

*
**

Թղթածրարին մէջ նկատի առնուած են այն ինչ որ արխիւներուն մէջ մնացած է Վիշապաձորի նորակազմ Կ. Կոմիտեի սահմաններէն հիմնադիր առաջին շրջանային ժողովէն և կարգ մը կոմիտեի սահմաններէն (Բլրակ, Փրակերթ) գրութիւններէն. ապա նաեւ հետաքրքրական տեղեկագիր մը Տիարպէթի քաղաքի ազգագրութեան, տնտեսական կեանքին և կրթական վիճակին մասին:

Վերջին գրութիւնը՝ Ազատամարտի խմբագրութեան ուղղուած բողոք մըն է Մուֆարդին-Նփրկերտի ընկերներուն կողմէ, որոնք, արդարօրէն, իրենց ընդվզումը կը յայտնեն դաշնակցական մամուլին մէջ լոյս տեսնող հակակրօնական յօդուածներու նկատմամբ:

Փաստ. 743-75

**1.- ՕՐԱԿԱՐԳ
Հ.Յ.Դ. ՎԻՇԱՊԱԶՈՐԻ ՊԱՏԳԱՄԱԽՈՐ. Ա. ԺՈՂՈՎԻ**

- 1.- Ուսումնասիրութիւն Տ[իգրանա]կերտի շրջանի – բացի Բալուէն – մէջը ունենալով Հազգոն և Ղարգանը – քաղ[աքական] և տնտ[եսական] վիճակին:
- 2.- Ուսումնասիրութիւն Տ-կերտի դաշն. կազմերու վիճակին:
- 3.- Որոշում Կ Կ[ոմիտէի] վայրի և ընտրութիւն Կ. Կ.ի:
- 4.- Ստեղծում Զիֆոնի մարմնի – ինքնապաշտպանութեան:
- 5.- Պրոպագանդի հարց:
- 6.- Կարմիր խաչի:
- 7.- Յարաբերութիւն օտար ցեղերու և օտար կազմակերպութեանց հետ:

Ծանօթ.– Աստուծոյ վրայ պիտի աւելցուին շրջանի մարմիններէն ներկայացուելիք հարցերը ևս:

Փաստ. 1538-2ա

**2.- Հ.Յ.Դ. ՎԻՇԱՊԱԶՈՐԻ – ԱՂՉՆԻՔ – ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎ
1909 Մայիս 28 – Յունիս 2, գումարուած Վիշապ քաղաքին մէջ**

Փաստաթուղթը վատթար վիճակ ունի և անաւարտ է: Ծածկանունով յիշուած վայրերը ընդհանրապէս անծանօթ են մեզի: Վիշապաձորը անշուշտ Տիարպէթին է, որուն հայերը սովորաբար կու տային Տիգրանակերտ անունը: Վիշապը՝ Կ. Պոլիսն է: Տիարպէթի քաղաքին համար կը գործածուէր Սեւ Վիշապ ծածկանունը: Բլրակը՝ պատմական Աղձնիք նահանգի արեւմուտ Արզն ավանն է, նոր անունով Ղարգան, Սղերդ գաւառին մէջ: Փրակերթն Մուֆարդին քաղաքն է, որուն մօտ կը գտնուէին ենթադրաբար Մեծն Տիգրանի կառուցած քաղաքին աներակները:

Մասնակցած
 Վիշապի Պատ. մարմնոյն ներկայացուցիչ ընկեր – Պերճ
 Շրջանի պատգամաւորներէն – Մուշեղ
 Հիւսիսայլի և Գետափի ենթակոմիտէներէն – Խաչակիր, Վեսուկ
 Բլրակի ենթակոմիտէէն – Կայծակ
 Փրակերթի կոմիտէն – Արամազդ, Արշաւիր
 Ապառաժ Զրդ ենթակոմիտէէն – Վազգէն
 Զարեանդ ենթակոմիտէէն – Վահան
 Ընդարձակ դաշտն ենթակոմիտէէն – Մուշեղ
 Վիշապաձոր կոմիտէն – Արբակ
 Վրէժի ենթակոմիտէն – Ժիրայր
 Առիւծաբոյնի ենթակոմիտէն – Հրաչեայ
 Զրաբերդ » – Աստղ
 Ապառաժ » – Սալտառ
 Ստուեր » – Հմայեակ

Նախագահ որոշուեցաւ Պերճ:
Քարտուղարներ՝ Խաչակիր և Ժիրայր:

Միաձայնութեամբ որոշուեցաւ որ ժողովին աշխատանքները մնան գաղտնի պատգամաւորներուն մէջ, ժողովին վերապահուած է զանոնք մարմիններուն հաղորդելու իրաւասութիւնը:

Որոշումներ

Ուսումնասիրութիւն Վիշապաձորի շրջանի (վիլայէթէն բացի Բալուէն մէջն առնելով Հազգոն ու Ղարգանը), քաղաքական և տնտեսական:

Նկատի ունենալով պատգամաւորներու տուած բերանացի և վիճակագրական ծանօթութիւնները [?] իրենց շրջանի Հ.Յ.Դ. կազմակերպութեանց մասին և հաստատելով որ Վիշապաձորի շրջանը ունի 2000 կազմակերպուած անդամ տարեկան առնուազն 500 ոսկի եկամուտով, ժողովս կը յայտարարէ Վիշապաձորի շրջանը իբրեւ Կեդր. Կոմիտէ անոր սահման գծելով ամբողջ Վիշապաձորի շրջանը իբրեւ Կեդր. Կոմիտէ անոր սահման գծելով ամբողջ Վիշապաձորի վիլայէթը բացի Բալուէն, իսկ մէջն առնելով Հազգոն ու Ղարգանը:

Որոշում Կ. Կոմիտէի վայրի և Կ. Կոմիտէի ընտրութիւն
 Ժողովը նկատի առնելով վարչական և կազմակերպական դիւրութիւնները Կ. Կոմիտէի վայր որոշեց Վիշապաձորը միաձայնութեամբ Կ. Կոմիտէի թիւը նշուելով 5, եռապատիկ ցանկէն գտեալ 10 ընկերներէն քուէից առաւելութեամբ Կ. Կոմիտէի անդամներ որոշուեցան ընկեր Զուլալ (15 քուէով), Ժիրայր (15 քուէով), Արբակ (10 քուէով), Սարհատ (9 քուէով), Կայծակ ([?] քուէով): իսկ ապագային վերոյիշեալներէն որը որ կերպով մը բացակայի [?] Կ. Կոմիտէէն, մնացածները իրենց յարմար նկատած ընկերը կրնան կոչել պաշտօնի:

Պիւտճէի հարց
 Շրջանի կոմիտէները և Կ. Կոմիտէի հետ կապ ունեցող ենթակոմիտէները իրենց մուտքի % 20-ը վերապահելով տեղական ծախսերու, մնացեալը պարտաւոր են երեք ամիսը անգամ մը հասցնել Կ. Կոմիտէին:

Կ. Կոմիտէի մուտքը կը բաշխուի հետեւեալ կերպիւ. – % 5-ը կազմակերպական բարձրագոյն մարմիններուն յատկացնելու համար ընդհ. ձեռնարկներուն, իսկ մնացեալ 5% Զ-ը պրոպագանտայի Զ-ը ընդհանուր ծախսերուն և Գ-ը ինքնապաշտպանութեան (ընդդէմ 4-ի 13 ձայնով որոշուած է):

Անդամավճարներու խնդիր

Ժողովը տեղեկանալով որ շրջանին մէջ անդամավճարներու գանձումը ցարդ չէ կատարուած % առնուազն 2-ի սխտեմով, մասնաւոր ուշադրութիւն կը հրաւիրէ մարմիններուն ընդհ. կանոնագրի յօդուածի վրայ և կը յանձնարարէ խիստ ըլլալ այս մասին, ի հարկին գիւղացիներէ ընդունելով փոխանակ դրամի իրենց բերքի % 2-ը:

Ժողովը որոշեց որ եթէ պիւտճէի բաշխման և % 2-ի գանձման առիթով պատահին ընդդիմութիւններ խումբերու կամ անհատ ընկերներու կողմէ, այդ պիտիները պիտի հրաժարեցուին:

Կանանց Կարմիր խաչի կազմութիւնը
 Նկատելով Կարմիր խաչի խումբերու անուրանալի օգտակարութիւնը

Փաստ. 743-46

3.- ՎԻՇԱՊԱՉՈՐԻ Կ. ԿՈՄԻՏԵԷՆ ՊՈԼՍՈՅ ՊԱՏ. ՄԱՐՄՆԻՆ

Հ.Յ.Դ. Կ. Պոլսոյ Պատ. մարմնոյն

Կ. Պոլիս

Ընկերներ,

Ընկեր Շահապազի հոս գալն Ձեզ իմացուած է անշուշտ անցեալ շաբաթ Մայիս 27ին տեղի ունեցաւ մեր շրջանի պատգամաւորական ժողովը: Ժողովը իրան սահման գծեց ամբողջ Տ[իգրանա]կերտի վիլայէթը բացի Բալուէն, եւ մէջն առաւ Հազգոն ու Ղարզանը:

Շրջանային ժողովին մասնակցեցան հետեւեալ վայրերը համեմատական թուի հաշուով իրենց պատգամաւորներով:

Տիգրանակերտ	Հայնի	Ապիատկ[?]
Լրճէ	Հազգո	Պշէրիկ
Սատուգիւղ	Հազրո	Արղնի
Չընքուչ	Ֆարդին	
Ջերմուկ	Պիմեր	

Ինչպէս նաեւ շրջանին պրոպագանդիստներէն ընկեր Մուշեղ եւ Վիշապի ներկայացուցիչ ընկեր Շահապազ:

Պատգ. ժողով պատգամաւորներու բերած տեղեկութեանց վրայ նկատելով որ շրջանը ունի մօտ 2000 կազմակերպուած անդամ եւ տարեկան մօտ 500 ոսկի եկամուտ որոշեց յայտարարել շրջանս Կեդ. Կոմիտէ:

1.- Ձուլալը՝ բուն անուճով Կարապետեան Լեւոն, Գախապետ իբրեւ գործիչ կը գտնուէր Տրապիզոնի շրջանը: Ֆերիտը Ֆերիտ ճեմիլ, հետագային ժանօթ Տիգրան Ծամհուր ծածկանուճով, իսկական անուճն էր Ամսեան Տիգրան: Երկուքն ալ երիտասարդ գործիչներ, Սահմանադրութեան շրջանին լծուած կազմակերպչական աշխատանքի:

Յարմարութիւնները նկատի առնելով Տիգրանակերտն ալ որոշուեցաւ Կ. Կոմիտէի վայր:

Ժողովս գաղտնի քուէից բացարձակ առաւելութեամբ Կ. Կոմիտէի անդամ ընտրեց Ձուլալ, Արբաք, Սարհատ, Փիրայր, Արամ:

Ժողովը նկատի ունենալով շրջանին համար կարող պրոպագանդիստի մը կարիքը միաձայնութեամբ ընտրեց Ճեմիլը շրջանիս պրոպագանդիստ: Հեռագրով հրաւիրեց գայն, ինչպէս նաեւ Ձուլալը, որ անմիջապէս փութայ:

Ժողովը նկատի ունենալով շրջանին ինքնապաշտպանութեան խիստ յետամնացութիւնը միաձայնութեամբ ընտրեց նաեւ Ջիֆոնի մարմին մը, որը յարաբերութիւն պիտի ընէ Պոլսի Ջիֆոնի հետ:

Ժողովս Փոքր Հայքի ներքին կազմ. կանոնագրէն քիչ փոփոխութեամբ պատրաստեց շրջանին յատուկ կանոնագիր մը, որը տայ իր շրջանի մարմիններուն, ի գործադրութիւն: Յառաջիկայ փոսթով սոյն կանոնագրին հետ կը դրկենք եւ մեր Շրջանային ժողովին որոշումները:

Կիւրակէ (Մայիս 30) տեղիս Կարմիր Խաչն ալ իր մարմինը որոշեց. Շահապազի հոս գալէն ետք անհամեմատ թիւերնիս աճեցաւ. յոյս կայ հետզհետէ աճելու: Ընկեր Շահապազ գուցէ մինչեւ յառաջիկայ Երկուշաբթի-Երեքշաբթի մեկնի: Յամենայն դէպս Բալու պիտի հանդիպի:

Ընկերական բարեւներով ՎԻՇԱՊԱՉՈՐԻ Կ. ԿՈՄԻՏԷ

4 Յունիս 909 Վիշապաձոր (Տ. կերտ)

Փաստ. 1539-14

4.- ՄԵՐ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ Հ.Յ.Դ. ՀԻՆԳԵՐՈՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ

1. Թուրքիոյ ներքին գաւառներուն մէջ ամէն տեղ ալ տիրող պայմանները միեւնոյնն են գրեթէ. հետեւապէս աւելի պատշաճ է բոլորի համար մշակել եւ շուտով տպագրել տալ կազմական միօրինակ ընդհանուր կանոնագիր, ուր ճշդուած լինի Դաշնակցութեան քաղաքական իւրաքանչիւր կազմի առանձին եւ իրարու հանդէպ ունեցած պարտաւորութիւններն ու փոխադարձ յարաբերութիւնները ամէն մանրամասնութիւններով: Այս կանոնագրին մէջ մտցնելու է նաեւ Կարմիր խաչի, բանաւորական, արհեստակցական, գիւղացիական եւ այլ միութիւններու կազմական կանոնները զատ զատ ճշդելով անոնց իւրաքանչիւրին գործելակերպը եւ յարաբերութիւնները կուսակցական մարմիններու հետ: Որով հարկ չէր մնար տարբեր տարբեր ներքին կանոնագիրներ մէջտեղ հանելու:

2. Յարդ շատ տեղեր խուճբերը ուղղակի կապուած են եղեր կոմիտէի, երբեմն կեդ. կոմիտէի: Ենթակոմիտէներն ալ կեդ. կոմիտէի կամ Պատասխանատու մարմնի հետ. ըստ մեզ աւելի յարմար էր սահմանափակելով այդ բացառութիւնները՝ ամէն տեղ իւրաքանչիւր խուճբ կապել իրեն ամէնէն մօտ եղող ենթակոմիտէի (եթէ միեւնոյն վայրի մէջ անբաւական լինի ընկերներու թիւը առանձին ենթակոմիտէ կազմելու), ենթակոմիտէներն ալ ամենամերձ կոմիտէի եւ կոմիտէներն Կեդր. Կոմիտէի հետ: Խուճբը իր պատկանած ենթակոմիտէին վճարելու է իր ամբողջ հասոյթը, իսկ ենթակոմիտէն իր շրջանի կոմիտէին վճարելու է այդ հասոյթին 1/3 մասը միայն՝ մնացածը իր խուճբերու անհրաժեշտ պէտքերուն եւ գինման յատկացնելով. կոմիտէն նոյնպէս իր ամբողջ հասոյթներու (անդամավճար, նուէր, հանգանակութիւն եւ այլ միջոցներով ձեռք բերուած դրամական արդիւնք) 1/3 մասը վճարելով Կեդ. Կոմիտէին՝ միւս մասը ծախսելու է իր շրջանի ընդհանուր պէտքերուն. այսպէս ալ Կեդ. Կոմիտէն իրմէ բարձր մարմնոյն: Այս ձեւը՝ որ աւելի համապատասխան է ապակեդ-

րոնացման դրութեան՝ առաջ պիտի բերէ նախաձեռնութեան ոգի եւ մղէ ընկերները աւելի լայն չափով մասնակցելու նուիրատուութեանց:

3. Ազգային միւս կուսակցութիւններու հետ փափաքելի է միութիւն, իսկ եթէ այդ չէ կարելի՝ գէթ համերաշխութիւն: Երիտասարդ թուրքերու հետ նոյնպէս համերաշխութիւն. իսկ բռնապետութեան դէմ պայքար:

4. Դաշնակցականներու կողմէ հրատարակուող թերթերու եւ բրոշուրներու մէջ յաճախ երեւցած հակակրօնական գաղափարները գէջ կ'ազդեն ժողովրդեան եւ հետզհետէ սա համոզումը կը հաստատեն անոր մէջ թէ Դաշնակցութիւնը կրօնամարտ կուսակցութիւն մըն է, ինչ որ վնասակար է անոր հմայքին, հետեւապէս փափաքելի է դադրեցնել այդպիսի գաղափարներ պարունակող հրատարակութիւնները եւ ասոնց տեղ հրամցնել ժողովրդեան միայն յեղափոխական հերոսներու կեանքի օրինակելի գիծերը պատկերացնող կենսագրականներ, դաստիարակիչ վէպեր եւ քաջութիւն եւ առաքիչ-նութիւն ներշնչող գրուածքներ, որոնք անհաւատութիւն բուրդ փոխտփայլական շատ մը մտքերէ աւելի օգտակար կրնան ըլլալ:

5. Վարժարաններու հանդէպ անտարբեր պէտք չէ ըլլալ, աշխատելու է դաստիարակել տգիտութեան մէջ թաղուած գաւառացին եւ նոր սերունդին տալ բնատուր միկ առողջ կրթութիւն մը:

6. Գրաւոր եւ բերանացի պրոպագանդ խիստ կարեւոր է ամէն տեղ, նոյնիսկ քիւրտերու մէջ: Անհրաժեշտ է շրջուն գործիչներ եւ պրոպագանդիստներ դրկել գաւառները: Քիւրտերու եւ քրտախօս հայերու համար օգտակար է հրատարակել հայատառ քիւրտերէն թերթ մը՝ Տիարպեթի մէջ:

Ի դիմաց Հ.Յ.Դ. Փրակերթոյի կոմիտէի ԱՐԱՄԱՁԴ, ՎԱՐԴ, ԱՐՇԱԻԻՐ, ԼՈՒՍԻԿ

2.- Փրակերթո՝ կուսակցական ծածկանուճն էր Տիարպեթի Գահանգի Մուֆաթիին քաղաքին, հայկական Նփոկերտի:

Փրակերթօ² 20 Օգոստոս 1909

Փաստ. 1538-22

5.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ԲԼՐԱԿԻ ՇՐՋԱՆԻՆՆԵՐ՝

Բլրակի ենթակոմիտէն իր գոյութիւնը ունեցած է Փրակերթոյի Հ.Յ.Դ. կոմիտէի ջանադրութեամբ, որուն հսկողութիւնը ցարդ լիովին վայելած ըլլալով հակառակ տեղւոյն ու դիրքին դժուարութիւններուն կարողացած է վերջապէս իր գոյութիւնն անվթար պահել ու ըստ կարելոյն մարմնացնել իր վրայ դրուած պարտականութիւնները:

Այս ենթակոմիտէն ամենայնիւ ընդունած ըլլալով Հ.Յ.Դ. ծրագիրն, ի սրտէ նուիրուած է անոր գործադրութեան եւ համաձայնած է Վիշապաձորի Հ.Յ.Դ. Կ. կոմիտէին շրջանային վերջին ժողովի որոշումներուն:

Բլրակի ենթակոմիտէն ունի 10-ական անձերէ 5 խումբեր, որով ընկերներուն թիւը կը հասնի 55-ի, բոլորն ալ նուիրուած Դաշնակցութեան ծրագրի գործադրութեանը. ամսական հասոյթն է 75.5 դր.: Արդէն առընթեր կը զրկուի վաւերական անուանացուցակը, որմէ կարելի պիտի ըլլայ քաղել կազմակերպական հարկաւոր տեղեկութիւնները:

Սկիզբէն ի վեր Փրակերթոյի հսկողութիւնն վայելած ըլլալնուս եւ մեր թղթակցութեան ու յարաբերութեան թելն նոյն մարմնոյն հետ հաստատ պահելու խոստումն ըրած ըլլալնուս համար մինչեւ վերջ նոյն մարմնոյն հովանաւորութիւնը պիտի խնդրենք մեր վրայ եւ պիտի սիրենք միշտ ենթակայ մնալ նոյն հաստատութեանը: Թէեւ Սղերդի ընկերներէն՝ պ. Վաղարշը մեր շրջանը պտոյտ մ'ընելով վերջերս մեր փոփոխամիտ ընկերներուն միտքը պղտորած եւ դէպի ինք քաշած է, որով մեր

թիւը բաւականին պակսելով այժմ 55-ի իջած է, բայց մեր 55 ընկերներն սիրով ու սկզբունքով փարած ըլլալով գործին հետ, անդրդուելի կը մնան իրենց խոստումին եւ հաւատարիմ Վիշապաձորին եւ Փրակերթոյին:

Յաւօք կու գանք յայտնել, թէ դարաւոր դառն գուրումն, բռնապետական տաժանակիր շղթան բոլորովին կքած ըլլալով մեր կողմերի հայերս, արիւնաքամ ըրած են մեր նիւթականը. բոլորն ալ վաշխառու քիւրտի տուկոսաւոր պարտքին տակ ընկճուած կը մնան. իրենք իրենց միջոցներովը զինուելու կարողութենէն զուրկ են բոլորովին. բոլորն ալ աղքատ, բայց փափաքող ու ջերմեռանդ ինքնապաշտպանութեան, որովհետեւ իրենց ինչքը, կեանքը, ապագան ենթակայ են կորստի, կողպուտի եւ առեւանգութեան. ենթակոմիտէի յորդորներով ու ստիպումներով վերջապէս յաջողած ենք ընկերներու մէջէն 20 հատ յունական գէնք գնողներ որոշել, որոնք իրենց բերնէն կտրելով ու պարտքն աւելցնելով պատրաստած են իրենց դրամներն գէնքին վճարելու: Կրկնակի եւ ուժգնակի կը խնդրենք ուրեմն, որ շնորհք ընէ Դաշնակցութիւնը 20 հատ գէնք մեզի հայթայթել օր առաջ ու ծանուցանել հոս դրամը փութացնելու: Վնասի տակ ենք, վտանգի մէջ ենք, մեր կեանքն ի զուր պիտի կորսուի, եթէ ուշանան մեր խնդրած գէնքերը, ուստի նորէն կը խնդրենք որչափ կարելի է փութացնել հաճեցէք մեզ մեր խնդրած գէնքերն, որով զմեզ փրկած կը լինիք կորստեան ճիրանէն: Խնդրելի է որ կարճ տեսակէն լինի:

Քաղաքականը բոլորովին ամպամած է այս կողմեր, կառավարութիւնը հայաջնջումի նորանոր քաղաքականութիւններ..... [շարունակութիւնը կը պակսի]:

3.- Բլրակը՝ Ղարգանն է, Սղերդ գաւառին մէջ:

Փաստ. 742-22

6.- ՆՓՐԿԵՐՏԻ ԵՆԹԱԿՈՍԻՏԷՆ ՊՈԼՍՈՅ ՊԱՏ. ՄԱՐՄՆԻՆ

Նփրկերտ, 20 Սեպտ. 1908

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Պատ. մարմնոյն

Կ. Պոլիս

Ընկերներ՝

Վիշապաձորի (Տիգրանակերտի) դաշնակցական ընկերներու միջոցաւ ստացանք օգոստ. 9/22 թուակիր շրջաբերական նամակին պատճէնը եւ կարդացինք:

Ուրախ ենք որ առանց ժամանակ կորսնցնելու՝ կը փութաք հրաւիրել երկրին այլեւայլ անկիւններու մէջ գտնուող ձեր ընկերները՝ շուտով յարաբերութեան մտնելու ձեզ հետ եւ հետաքրքիր կ'ըլլաք հասկնալու անոնց թիւը, կազմական վիճակն ու կարիքները:

Ներքեցէ՛ք որ ձեր կարեւոր հարցումներուն պատասխանելու համար բաւական ուշացանք (ձեր հասցէին անծանօթ ըլլալնուս պատճառաւ գլխաւորաբար). բայց լաւ է ուշ քան բնաւ:

Ահա՛ մեր պատասխանները.

1) Երեւակայեցէք երկրագործ ստրուկ ժողովուրդ մը՝ բոլորովին զուրկ ուսումէ ու կրթութենէ, զուրկ մայրենի լեզուէ՝ որուն տեղը քիւրտերէնը գրաւած է, իր սեփական հողերը բռնի միջոցներով խլուած քիւրտ աղա-պէյերէ, որոնց կամքի գերին եւ քմահաճոյքի առարկան է ինք, ենթակայ միշտ քիւրտ հրոսակախումբերու յարձակումներուն եւ յափշտակութեանց, վերջապէս չունի կեանքի եւ ինչքի ապահովութիւն, չունի մտքի լուսաւորութիւն, չունի իր վիճակին վրայ խորհելու կարողութիւն — ու պիտի կրնաք որոշ գաղափար մը կազմած ըլլալ շրջանիս հայ ազգաբնակչութեանը վրայ: Տէրէպէյերու եւ քիւրտերու ճնշումները չեն մեղմացած բնաւ. իրերու վիճակը նոյնն է այժմ ինչ որ էր սահմանադրութեան հռչակումէն առաջ. միակ փոփոխութիւնը որ աչքի կը զարնէ սա է որ կառավարութեան կողմէն նախկին խուզարկութիւնները դադրած են եւ ազատ թերթերը կրնանք կարդալ համարձակ:

2) Մեր շրջանին մէջ թուրքեր չկան բնաւ բացի կառավարական պաշտօնեաներէ: ամբողջ ազգաբնակչութիւնը հայ եւ քիւրտ են՝ (բացառութիւն համարելով ասորիները, որ չնչին փոքրամասնութիւն մը կը կազմեն) որոնց յարաբերութիւնը՝ ինչպէս վերի պարբերութեամբ բացատրուած եղաւ արդէն՝ բարի է բնաւ:

3) Մեր վայրին վրայ թուրք կոմիտէներ գոյութիւն չունին. ամբողջ մահմետական ժողովուրդը հին ուսթի-մին կողմն է. ազատամիտ ու լուսաւորեալ անձեր չեն գտնուիր իր մէջ:

4) Մեր շրջանին մէջ հայ քաղաքական բանտարկեալներ չկային. այլ միայն մի քանի թուրք աքսորեալներ, որոնք սահմանադրութիւնը հռչակուելուն պէս ազատ թողուցան:

5) Մեր կազմակերպական արդի վիճակին վրայ խօսելու առթիւ՝ հարկ չկայ ներկայացնել նաեւ մեր անցեալը. բաւական է ըսել որ այժմ ենթակոմիտէ մը կը կազմենք հոս՝ բաղկացած չորս փոքրիկ խումբերու ներկայացուցիչներէ: Տեղւոյս բոլոր ընկերներու թիւը 35ի կը հասնի. նոյնքան ընկերներ ալ ունինք շրջակայ այլեւայլ գիւղերու մէջ: Ենթակոմիտէիս կազմակերպութիւնը կը սկսի 1902էն՝ այսինքն այն ժամանակէն երբ երջանկայիշատակ Վահանը ոտք կը դնէր Սասնոյ հողին վրայ: Յարաբերութիւն մշակած ենք նախ Վահանի եւ Արմենակի՝ յետոյ Գէորգ Չառուչի եւ Ռուբէնի հետ: Դժոխքի (Սղերդի) դաշնակցական ընկերներու միջոցաւ վերջերս յարաբերութիւն հաստատած էինք նաեւ Լեռնապարի ընկեր Սարգիսի եւ Իշխանի՝ հետ եւ կ'օգնէինք Տիգրանակերտի մէջ նոր կազմուած դաշնակցական խումբի մը յարաբերութեանց յետեւ վերջին անձերուն հետ 1908էն ի վեր:

6) Ամենաէական պէտքը մեզի համար գէնքն է, մենք որքան որ պարտք կը սեպենք մեր միջոցներով զինուել, բայց եւ այնպէս չենք կրնար յաջողիլ: Մեր ընկերներու մեծամասնութիւնը կը բաղկանայ այնպիսի անձերէ, որոնք նիւթապէս խիստ աննախանձելի կացութիւն մը ունին ու հազիւ հազ կրնան իրենց օրապահիկն հայթայթել, այն ալ հազար դժուարութիւններով: Բարեկեցիկ դասակարգին ամէն պարագայի մէջ կը ջանանք թելադրել որ իր միջոցներովը զինուի. բայց աղքատներուն ինչ կրնանք ընել: Մեր կազմակերպական տուրքերը խիստ աննշան ըլլալով՝ ատոնցմով տարուան ընթացքին մէջ հազիւ մէկ հատ կանոնաւոր գէնք կարելի պիտի ըլլայ առնել: Եթէ զինուելու տեսակէտով կարենաք օգնել

4.- Վահանը (Մանուկեան) Դաշնակցութեան Սասնոյ լիազօր ներկայացուցիչն էր. Արմենակը՝ Գրայր-Դժոխքն է, Ռուբէնը՝ Տիր Մինասեան:

5.- Լեռնապարը կուս. ժածկամուտն է հարաւային Վասպուրականի Լեռնային գօտիին: Սարգիսի (Վանայ) բուն անունն է Օտապաշեան Պողոս, Իշխանինը՝ (Վանայ) Պողոսեան-Միքայելեան Նիկոլ:

մեզի՝ մեր ամենազլխաւոր եւ էական պէտքը լրացուցած կ'ըլլաք: Ձէնքէն յետոյ մեզ համար հարկաւոր են յեղափոխական թերթեր, գրքեր եւ բրոշուրներ: Հիմա որ արգելքները վերցուած են՝ պիտի խնդրենք որ ամէն շաբաթ կանոնաւորապէս ղրկէք մեզ այդ թերթերէն ինչպէս նաեւ երբեմն երբեմն գիրքեր եւ բրոշուրներ, որոնց համար միշտ դիմում կ'ըլլայ մեզի մեր շրջանի ընկերներէն: Շնորհակալ պիտի ըլլանք եթէ յեղափոխական հերոսներու լուսանկարներէն ալ չզլանաք մեզի:

Անտեղի չպիտի ըլլայ անշուշտ խնդրել նաեւ որ փոյթ տանիք Միացեալ ընկերութեան միջոցաւ շուտով մի քանի վարժարաններ բանալ մեր շրջանի (Սլիվանի, Պշերիի եւ Հագրոյի) կարեւոր գիւղերուն մէջ եւ կեդրոնական վարժարան մ'ալ տեղւոյս մէջ, ինչ որ բաւական պիտի նպաստէր յառաջդիմութեան գործին: Մենք մեր կարողութեան համեստ սահմանին մէջ ամէն ճիգ կը թափենք այդ նպատակին համար: Օրերս նախաձեռնարկ եղանք տեղւոյս մէջ, կրթասիրաց միութիւն մը կազմելու եւ բանալու կիրակնօրեայ վարժարան մը՝ լսարան եւ գրադարան, անոնց միջոցաւ լուսաւորելու համար երիտասարդութեան մտքերը եւ առաջնորդելու զանոնք դէպի իրաւունքի եւ պարտականութեան գիտակցութիւն: Կը յուսանք թէ պիտի քաջալերէք մեր այս ձեռնարկը եւ ձեր պարբերական նամակներով ու հրահանգներով պիտի զօրացնէք մեր կազմը:

Ձեր հրահանգին համաձայն՝ երեսփոխանական ընտրողաց քուէարկութեան համար ջանացինք թելադրել մեր շրջանի ժողովուրդին որ իր քուէները արժանաւոր անձերու տայ. տեղ տեղ յաջողեցանք. բայց մի քանի տեղեր ալ քիւրտ պէյերու սպառնալիքները հակազդեցութիւն առաջ բերին:

Շրջանիս դէպքերու եւ հարստահարութեանց մասին ցարդ մի քանի տեղեկագիրներ ղրկած ենք Արեւելք եւ Բիւզանդիոն օրաթերթերուն (Սահմանադրութենէն ասդին) բայց անոնց եւ ոչ մէկին հրատարակուիլը տեսանք տակաւին. եթէ ասկէ վերջ այդ կարգի տեղեկագիրներ պատրաստելով Ձեզ ղրկուի, պիտի հաճի՞ք հրատարակութեան տալ:

Հաճեցէ՛ք ցոյց տալ մեզ այն հասցէն, որուն միջոցաւ պիտի կարենանք այսուհետեւ կանոնաւորաբար թողթակցիլ ձեզ հետ. մենք մեր կողմէն այդ նպատակին համար կը ներկայացնենք ձեզ հետեւեալ հասցէն.

دیاربکر طریقیه) فارقیه کتب وادبیات اوھانس اقسیم

Հայերէնն ալ այսպէս:

Ընկերական բարեւներով
Ի դիմաց Նիւրկերտի Հ.Յ.Դ. ենթակոմիտէի
ՎԱՐԴ ԱՐԱՄԱԶԴ ԿԱՐԹ ԼՈՒՍԻԿ

Փաստ. 1538-2

7.- ՎԻՇԱՊԱԶՈՐԻ Կ. ԿՈՍԻՏԵՆ ՓՐԱԿԵՐԹՈՅԻ ՄԱՍԻՆ

Ընկեր,
Փրակերթոն Մուֆարդինն է, իրենց շրջանի տեղեկագիրը, հաշիւները, գոյացուցակը եւ կարծիքները ներփակը ստանաք՝ Աշեր էֆ. խան Պօղոսոֆ Մկրտչէն:
Հագիւ հազ կրցանք այսչափ կատարել մեր պարտականութիւնը, որովհետեւ մէկ ամիս առաջ մեզի լուր տրուած էր ժողովի մասին եւ անոր մէջ ծեծուելիքներէն շատ քիչ բան գիտէինք:
Տ[իգրանա]կերտի տեղեկագիրն ալ թերեւս ղրկենք այս փոսթիւ. յաջորդին անպատճառ. բարեւներ՝

Հ.Յ.Դ. ՎԻՇ. Կ. ԿՈՍԻՏԵ

Փաստ. 743-74

8.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ ՄԱՍԻՆ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

ՆԱՀԱՆԳԸ.— Տիգրանակերտ նահանգը կ'իյնայ Միջագետքի, Եփրատ գետին, Կարնոյ նահանգին ու Սասունի մէջ: Բնակիչներուն մեծ մասը քիւրտ են, որոնք ցարդ ինքնագլուխ վիճակով մը կը կառավարուէին, բայց Սահմանադրութեան սահմանուկ շարժումէն վերջ, մասնաւորապէս Միլլի աշխրէթի պետ՝ Իպրահիմ փաշայի անկանգնելի անկումը, քիչ-շատ զգաստ ու հանդարտ վիճակի մէջ դրաւ գիրենք: Կը գտնուին նաեւ Քիլտանի (հին քաղղէացիներու մնացորդ), ասորի, եգիպտի, արաբ, հրեայ:

Բարբեր նահանգ մըն է: Արտածութիւնը հաւասար է ներածութեան. աւելի իսկ պիտի ըլլար, եթէ չպակսէր ուռձացող ձեռքը, երկիրը սիրող սիրտը, ինչպէս նաեւ կանոնաւոր ու սիստեմաթիկ ռեֆիմը, որ կ'արգասաւորէ: Արտածելիք գլխաւոր բերքերն են՝ ցորեն, գարի, բամբակ, բուրդ, իւղ, գոտոր (մուգի), ոչխար եւայլն: Շատ անգամ, ինչպէս անցեալ տարի, ինքը կը կերակրէ Մուշը, Բաղէշը, Բաբերդը, Սվազ, Այնթապ եւայլն կեդրոնները:

Լին տակաւին կեռիքները, պարիսպին ստորոտը յարձակումէ գերծ պահելու համար: Վերջերս եկած հրամանի մը համաձայն որոշուեցաւ քակել, որ քաղաքին օդը բացուի: Քաղաքին մէջ կայ Միջնաբերդը, իր մէջն ունենալով վազող ջուր մը: Տիգրիսի աջ եզերքին, դէպի Սեւար երկարող լեռնադաշտին վրայ շինուած՝ զուարճալի երեւոյթ մ'ունի, ուր չորս եղանակներն ալ կանոնաւոր կերպով կը գործեն: Ձմեռը ցուրտ է. ամառը ճնշող տաք մ'ունի, եւ ինչ որ աւելի յատուկ կը դարձնէ, ամառուան օդի փոփոխութիւնն է, — ցերեկը տաք, իրիկունը փոթորկոտ, գիշերը պաղ: Պարսպէն եւ տուններու խիտ առ խիտ շինուածքէն քաղաքին օդը հեղձուցիչ կը դառնայ: Փողոցները նեղ ու անկանոն են, իսկ շուկան լաւ ու կոկիկ ձեւ մ'ունի, մանաւանդ երկու դուռները (Մերտին Գափուսու եւ Տաղ Գափուսու) իրարու միացնող ընդարձակ պողոտան: Այս երկու դուռներէն զատ կան նաեւ ուրիշ երկու դուռներ եւս. Հոռմի դուռ (հոռմէական անունէն մնացած) եւ Նոր դուռ, որ ընդհակառակն ամէնէն հինն է դուռներուն: Տուները քարաշէն ու ամուր դիրք մ'ունին, խիստ նպաստաւոր ինքնապաշտպանութեան համար. իւրաքանչիւրը պատիկ ամրոցի մը երեւոյթն ունի, հրդեհի անմատչելի. ամէն տուն իր ջրհորն ունի, որոնք ընդհանրապէս գործածելի են:

ՏԻԱՐՊԵՔԻՐ.— Կեդրոն Տ. կերտի նահանգին. 72 աշտարակ ունեցող հաստատահիմն պարիսպով մը շրջապատուած, որուն վրայ կը նշմարուին արաբական, պարսկական եւ հռոմէական ճարտարապետութեան ոճի հետքերը. հռոմէականները յայտնի են որմերու մէջ տեղաւորուած գլաններովը, ամրութեան համար: Պարիսպը փլած է մինչեւ պահուողին յատակը. բայց դարձեալ 15 մեթր միջին բարձրութիւն ունի. տեղ տեղ կ'երե-

Քաղաքն ունի մօտ 50.000 բնակիչ, հետեւեալ համեմատութեամբ. 25.000 թուրք, 20.000 հայ (մօտ 800 բողոքական եւ նոյնչափ ալ կաթոլիկ միասին առնելով), 3000 ասորի, 1500 քիլտանի եւ 500 հրեայ:

Վաճառականութիւն.— Տ. կերտ բանուկ եւ վաճա-

ուշաճ քաղաք մըն է: Իր հաղորդակցութեան տեղերն են՝ Հալէպ, Պէյրութ, բացառաբար Պոլիս եւ Կարին: Վաճառականութիւնը ամբողջովին հայերուն ձեռքն է: 10% համեմատութեամբ կը գործեն քիւտանի եւ ասորի տարրերը: Հրեաները բոլորն ալ մանրավաճառ են եւ շատ աննշան դիրք մը ունին: Թուրք վաճառական հազիւ 4-5 խանութ կը գտնուի: այնուամենայնիւ ցորենի, իւղի եւ այլ կողմի առուծախը թրքաց ձեռքն է, հազիւ հազ մի քանի հայ ունենալով իրենց շարքին մէջ: ասոր պատճառը ուրիշ բան չէ եթէ ոչ անվստահութիւնը, որով քրիստոնեան, մասնաւորապէս հայը կը վախնայ գիւղ (աշար) առնելու, քիւրտերու մէջ երթալ իւղ հաւաքելու, գլտոր ձեռք բերելու եւ այլն:

Քաղաքի տնտեսական վիճակը, բաղդատմամբ Թուրքիոյ կարգ մը նահանգներուն շատ մխիթարական է:

Արհեստ.— Մօտ 60-70 արհեստ կայ, որուն ջախջախիչ մեծամասնութիւնը կը կազմէ հայ տարրը, գրեթէ 90% եւ աւելի ալ թերեւս: Թուրք արհեստաւոր չկայ բնաւ, ի բաց առեալ կարգ մը դիւրին, ծոյլի յատուկ արհեստները: օրինակի համար խահուէճի, ուրկէ եղած 37 խանութիւն գրեթէ 30-ը թուրք են, աշխատաւորներու մեծ մասը սակայն հայ ըլլալու պայմանաւ: Շերամաբոյժ՝ ուրկէ եղած 150 վարպետներէն 50-ը թուրք են, ունենալու պայմանաւ հայ ընկերներ կամ բանուորներ, առանց որոնց անկարող կը մնան յաջողելու: Մափրիչ՝ ուրկէ եղած 55 արհեստաւորներուն 20-ը թուրք են: Միտք յոգնեցնող, խելք ուզող որեւէ արհեստի մէջ թուրք չկայ: այլ թէ ինչպէս կ'ապրին ուրեմն, վարը պիտի խօսուի այդ մասին:

Շերամաբուծութիւնը բաւական յառաջացած է Տիգրանակերտի մէջ: մօտ 6-7000, այսինքն անով եւ անոր արդիւնքը եղող արհեստներով կ'ապրին: օրինակի համար տօլապփութեամբ (խոզան մետաքսի վերածել), կարծողութեամբ, պուրուճութեամբ (ոլորոց), ներկարարութեամբ, սարքարութեամբ (թելը ամրացնող), ջուլիակութեամբ (փուշի, չարչափ, մանխա եւ այլն բաներով): Այս բոլոր արհեստներուն մէջ 90%-ը հայ են եւ մնացածները՝ քիւտանի եւ ասորի: Թուրք հոս կարգ մը արհեստները եւ իրենց համեմատական հաշիւը տանք: կօշկակար (68 խանութ, որոնց 50-ը հայ, 5 հրեայ, 3 թուրք, 3 քիւտանի) եւ 2 ասորի են): կոնտուրաճի (40 խանութ, որոնց 3-ը քիւտանի, 15-ը հայ կաթողիկ, 2-ը յոյն, մնացածը հայ: պղծագործ (30 խանութ, 1-ը քիւտանի), 2-ը ասորի, 3-ը հայ կաթողիկ): կլայեկագործ (15 խանութ, 1-ը ասորի, 14-ը հայ): քիթեղագործ (30-40 խանութ, 2-ը քիւտանի, 2-ը հայ կաթ., 1-ը բողբ., մնացածը հայ: ժամագործ (8 խանութ, 1-ը թուրք, մնացածը հայ): դերձակ (քիւրտ իշի) 7 խանութ, 3-ը ասորի, 4-ը հայ: ծուլիչ (10 խանութ, 1-ը քիւտանի), 9 հայ: Նոյն այս համեմատու-

թիւնը կարելի է ընդունիլ հացագործի, տարագծի, որոնադիրի, քարահատի, բրուտի, փալանճի, պայտառի եւ այլն արհեստներու համար:

Գործարան.— Կան մօտ հինգ ֆապրիքաներ, ուրկէ կ'ելնեն բաւական ճաշակաւոր մետաքսեղէն բանաւածքներ, գլխաւորաբար սանդիկ չարչափ ըստածը: Իւրաքանչիւր գործարանի մէջ կ'աշխատին, միջին հաշուով 40-50 բանուորներ, որոնք, ինչպէս նաեւ բոլոր արհեստաւորները, չարաչար աշխատութեան մը, այլ ջնջին շահի մը զոհ կ'երթան: վերջերս, Հ.Յ.Դ. կողմէ կազմուած արհեստակցական միութեան մասնախումբ մը կը թուի առաջը առնել այս խեղճութեան եւ մխիթարելի ընել կեանքը այդ բանուորներուն:

Կրթա-բարոյական վիճակը.— Տիգրանակերտ կրթա-բարոյական տեսակէտով այնքան մխիթարական վիճակ չի ներկայացներ: հակառակ շատ մը նահանգներէ աւելի բարուք տնտեսական վիճակ մը ունենալուն՝ ցարդ կրցած չէ մղում տալ իր կրթա-բարոյական վիճակին: Այնուամենայնիւ մխիթարական է որ հայը, բաղդատմամբ բոլոր ցեղերուն աւելի ուսումնասէր ու կրթասէր է: իր դպրոցները աւելի ծաղկուն են քան միւսները: Եթէ համեմատութիւն մը կարելի ըլլայ շինել, հետեւեալ արդիւնքը ձեռք պիտի բերուի: հայ տարրին 30%-ը եւ թերեւս աւելին գիտէ կարդալ եւ գրել քիչ շատ: Թուրքին 20%-ը միայն: քիւտանիին եւ ասորիին 70%-ը թուրքերէն, սակայն եւ շատ քիչ ալ հայերէն, իբր մայրենի լեզու ունենալով՝ արաբերէնը: Հայեր ունին երկու դպրոցներ, մին Ս. Կիրակոսի նախակրթարանը, ուր կը յաճախեն երկսեռ մօտ 1000-է աւելի ուսանող, ունենալով 25-է աւելի ուսուցիչներ: երկրորդը՝ Ս. Սարգսի տարրական դասընթացքը, ուր կը յաճախեն մօտ 100-150 ուսանող 3-4 ուսուցիչներով: բողբականներն ու կաթողիկներն եւս ունին դպրոցներ: այս վերջինները այս տարի, վերջապէս իրենց քնարանին մէջ շարժկտելով բաներ մը ընելու նշանները ցոյց տուին: ունին մէկ մէկ տարրական դասընթացքներ նաեւ քիւտանի եւ ասորի համայնքները: Թուրքերը թաղային ծաղկոցարաններէն ու նախապատրաստականներէն զատ ունին երկու դպրոցներ եւս գինուորական եւ քաղաքական: վերջինս կը թուի թէ յառաջ պիտի երթայ նորեկ կրթական պաշտօնեային ջանքերովը: այս տարի, բաւական քրիստոնեայ հայ, ասորի եւս, ուսանողներ իբր քանտիտա ներկայացան: ունի մինչեւ հինգերորդ տարին, բայց այս տարի մինչեւ 7-երորդի բարձրացաւ: Բարոյական վիճակը, ինչպէս վերը ակնարկեցինք, մխիթարական չէ: կանանց բարոյականը աւելի բարձր է քան արանց, թէ եւ գինեմոլութիւնը երկու սեռի մէջ եւս ընդհանրացած է: բարոյականի տեսակէտով թուրքաց մասին խօսելով՝ աւելորդ կը սեպեմ, վասնզի մխիթարական կէտ մը

գտնելը տխուր պիտի ըլլայ: Դաշնակցութեան տեղակազմ. բաւական բարուքում ներմուծել յաջողած է քայքայուելու տրամադիր հոգիններուն խորը: լսարաններ, լէգճըրներ, ընթերցարաններ, վիճաբանական սրահներ եւ այլն սարքելով: Գինեմոլութիւնը զգալի կերպով նուազած է, նոյն համեմատութեամբ նաեւ մոլութիւնը: Այս տեսակէտով ալ հայը մխիթարական երեւոյթ մ'ունի: բաղդատմամբ երկրացիներուն, մասնաւորապէս թուրքին:

Լսարաններ.— Մօտ երեք կանոնաւոր լսարաններ կան: Ա. Դաշնակցութեան նախաձեռնութեամբ, Ս. Կիրակոս) եկեղեցւոյ մէջ, ամէնէն կանոնաւորը: Բ՝ բարեգործականաց (չէզոք) լսարանը, որը չունի առաջնոյն չափ prestige. Գ. Կաթողիկաց, խցիկ մը աւելի քան լսարան, վերջերս բացուած կարգ մը երիտասարդներու նախաձեռնութեամբ, խրախուսուած դաշն. ընկերներէ: Վերջերս Միութիւն եւ յառաջդիմութիւն կոմիտէն կուսակցութեան հետ միանալով բացաւ ազգ. ընթերցարան մը, ուր կը բերուին երկու ազգի վերաբերեալ թերթեր եւ ուր, երբեմն երբեմն, կը տրուին քոնֆերանսներ: Դաշնակցութիւնը, սակայն, եկեղեցւոյ շրջափակին մէջ ունի իր մասնաւոր ընթերցատունը: Այս տեսակէտով նկատի առնելու արժանի է նաեւ գիշերեայ վարժարանները, որոնք բաւական մեծ օգուտ ընծայեցին անուս երիտասարդներուն:

Ընկերութիւններ.— Երեք կուսակցութիւններ գոյութիւն ունին: Միութիւն) եւ Յառաջդիմութիւն) Կ. Կոմիտէ, որ ոչ այնքան գովելի տարրերէ կազմուած — մեծ մասը հին միապետական տգործներէն շինուած է, յեղեղուկ, թոյլ, պատրաստ ամէն հոսանքէ քշուելու: աւելի հաճոյքի հակամէտ քան գործելու, խմբուելու:

Դաշնակցութիւն.— Աւելի ընդարձակ եւ աւելի ժողովուրդին համակրանքը գրաւած: բայց կայ դասակարգ

մը, ջոջերու դասակարգը, որ եթէ ոչ ուղղակի, գէթ անուղղակի կը հակասեն ու կը հակառակին: խուլ պայքար կը մղուի:

Շնչակեան.— Քիչ: միայն իր գոյութիւնը զգացնելու չափ կ'երեւի:

Կանանց մէջ միայն Կարմիր խաչը կայ ու կը գործէ դաշնակցական տեղ: մարմնոյ իրաւասութեան տակ: բաւական յառաջացած է: ունի իր լսարանը:

Այս ամէնէն վերջ, աւելորդ պիտի չըլլայ կարծեմ, եթէ մէկ-երկու խօսք ալ բուն թրքաց պարելակերպին վրայ ընենք: ինչպէս տեսանք թուրքերը արհեստաւոր չեն: վաճառականութիւնը իրենց ձեռքը չէ: բայց կ'ապրին ամէնքն լաւ եւ հանգիստ: Առաջին պատճառն է որ Արագի ըստածը թրքաց ձեռքն է: Շերամաբուծութեան համար թուրքի տերեւ իրենք կ'ունենան: քրիստոնեայ ունեցող չկայ: մսագործին իրենք կու տան ոչխար, կամ քիւրտերու մէջ ուղղակի մորթուած կը բերեն, կամ քաղաքին դուռը կը կայնին, կը գնեն գրեթէ զօրով եւ կէս ժամ վերջ կը ծախեն շահով: նոյնը բանջարներուն համար: շուկայի մէջ բանջար ծախողները հայ են, բայց բուն տէրերը բոլորն ալ թուրք են: Վերջապէս ամէն ուտելիք, ցորեն, միս, բանջար, իւղ, հաւկիթ, ոչխար, մեղր, եւ այլն եւ այլն մէջ մը քաղաքէն դուրս կամ ներս՝ առաջ թուրքի մը կը ծախուի, վերջը խանութպանի մը կամ տան համար առնողի մը: շատ անգամ ալ, առանց առնելու սապէս կ'ընեն, երբ կը տեսնեն որ քրիստոնեայ մը ուտել քան կը գնէ, կը մօտենան եւ պայման կը դնեն: եթէ այդ առնողը վճարէ քան մը իրենց, լաւ, եթէ չվճարէ, անմիջապէս գինը կ'աւելցնեն, գործը կ'աւարեն, բայց մարդը երթալուն պէս կամ չեն առներ կամ նորէն նոյն գնովը վար կը դնեն: Ահա այսպէս ապրած է եւ կ'ուզէ ապրիլ թուրք տարրը: է, կրնայ այդ ուզել հաւասարութիւնը):

ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Փաստ. 743-59

9.- ՓՐԱԿԵՐԹՈՅԻ ԵՆԹԱԿՈՍԻՏԷՆ «ԱԶԱՏԱՄԱՐՏ»ԻՆ

Նփրկերտ 12 Սեպտ. 1909

Պատուարժան խմբագրութիւն
«Ազատամարտ» օրաթերթի,
Կ. Պոլիս

Պատ. Տեա՛րք,

Վերջին ատեններս կարգ մը թերթերու եւ հրատարակութիւններու մէջ հակակրօն պայքար մը սկսած է երեւան գալ եւ այդ պայքարի հերոսները դաշակցականները կը հանդիսանան դժբախտաբար: Եկեղեցի, Աստուած, կրօնական համոզում, հաւատք՝ ձաղկումի առարկայ դարձած են այլեւս: Ի՞նչ նպատակ ունի այս շարժումը: Ի՞նչ կ'ուզուի հայ ժողովուրդէն: Քանզի իր նուիրական եկեղեցին, որոյ ծոցին մէջ միայն դարերով պահպանուած է իւր ազգային գոյութիւնը: Մերժել կրօնը՝ որ անհրաժեշտ պէտք է հոգիին, ամենագորաւոր ազդակը, բարոյական զարգացման եւ ամենամեծ մխիթարութիւնը սրտին: Ուրանա՛լ Աստուածը՝ որոյ գոյութիւնը ճշմարիտ գիտութիւնը չի կրնար ժխտել բնաւ:

Բայց ինչո՞ւ այդչափ կ'ատեն կրօնը: Ինչո՞ւ կը խրտչին անկէ: Հակառակ իրենց համոզումին՝ անիկա մարդուս միտքը կաշկանդելու, մարդս անբանացնելու չէ որ կը ծառայէ: այլ բարոյականացնելու, ազնուացնելու եւ լուսաւորելու միայն: Անկրօնութիւնն է ընդհակառակն՝ որ կրնայ մարդս անբարոյականացնել եւ անասնութեան առաջնորդել: Եթէ կան կրօններ, որ ունին իրենց մէջ սխալ վարդապետութիւններ եւ յոռի ու վնասակար տրամադրութիւններ, այդ չի նշանակեր թէ ոչ մի կրօն ճշմարիտ է եւ բոլոր կրօնական վարդապետութիւնները սուտ են: Եթէ ռուսաց Յարը բռնակալ է եւ մարդասպան, եթէ Երուսաղէմի հայ վարդապետները անբարոյական ու լպիրշ արարքներ կը պարզեն, ատով տրամաբանական չէ արհամարհել քրիստոնէութիւնը իբր պատճառ այդ երեւոյթներուն, զի անոնք քրիստոնէական ոգիէ թելադրուած չեն բնաւ: այլ միայն տգիտութենէ եւ աշխարհասիրութենէ: Բռնակալն եւ անբարոյական հաճոյամբը իրական քրիստոնեայ չեն կրնար համարուիլ: այլ աւելի անհաւատ: Աւետարանը դէմ չէ ազատութեան. հակառակ չէ անիրաւութեանց դէմ բողոքելու. հակառակ չէ բռնութիւններու եւ անհաւասարութեանց վերացումին. անոր գիտակցողները՝ կամ իրենց շահուն ծառայեցնել ուզողները միայն՝ կրնան տարբեր մեկնութիւններ տալ անոր

տրամադրութիւններուն: Այս է մեր ըմբռնումը եւ այսպէս համոզուած ենք մենք:

Սերոբները, Գուրգէնները, Հրայրները, Վահաններն ու Գէորգները իրենց հայրենասիրական անձնուէր քայլերով ու հերոսական մահով՝ սէր ներշնչեցին մեզ դէպի Դաշակցութիւնը, զոր կը նկատենք կուսակցութիւն մը բարձր ու սուրբ, որ կը ձգտի պաշտպանել անիրաււածներու եւ զրկեալներու իրաւունքները, խորտակել բռնութեան կապանքները ու առաջնորդել ազգը դէպի քաղաքական, տնտեսական, բարոյական եւ իմացական զարգացում, պահպանելով անոր ինքնուրոյնութիւնը, լեզուն, եկեղեցին ու կրօնը: Այս ըմբռնումով աշխատեցանք ցարդ համոզել ժողովուրդը եւ Դաշակցութեան դրօշին տակ հաւաքել մօտաւորապէս 500 ընկերներ: Բայց կ'երեւի թէ մեր գլուխները շատ թանձր ըլլալուն համար սխալ հասկցած ենք անոր ծրագիրը եւ չենք կրցած ուղիղ ըմբռնել: Կ'երեւի Դաշակցութիւնը ազգային ազատութիւնն ու յառաջդիմութիւնը եկեղեցին քանդելու եւ կրօնը արհամարհելու մէջ կը տեսնէ, թէ անոր ամբողջ ձգտումները սոսկ դէպի նիւթական շահերն են ուղղուած եւ նա զմեզ դէպի անասնութութեան սոսկալի վիհը կ'առաջնորդէ: Այսպէս խորհիլ կուտան մեզ ատենէ մը ի վեր ա) Ազգակը՝ ուր Վասպուրականի այլասերուած «նոր սերունդ»ի մը՝ ազգութեան, ամուսնութեան, կրօնի ու բարոյականի մասին ունեցած անհեթեթ եւ ամբարիշտ գաղափարներն ու կարծիքները կը ջատագովուին: Աւետարանը մէկ կողմ ձգել կը յանձնարարուի եւ «Աստուածը ոչինչ է ու ոչինչը Աստուած» կը քարոզուի: բ) Պոսթընի Յայրենիքը՝ որ Ազգակի եւ Վասպուրականի խմորատիպներու ակեղցիկութիւնները կը փառաբանէ իբր հերոսութիւն, կրօնական հաստատութիւնները կ'անարգէ եւ հաւար կը ձգէ չորս կողմ կացիները վերցնելու եւ շուտով տապալելու դարաւոր կաղնին - եկեղեցին, համարելով այդ գործը Դաշակցութեան ծրագրային գլխաւոր պահանջներէն մին: գ) Ուսանողը՝ ուր թելադրութիւն կ'ըլլայ կրօնական դասաւանդութիւնը դուրս վտարել դըպրոցէն իբր անպէտ եւ աւելորդ առարկայ: դ) Կուսակցութեան պաշտօնական օրկան՝ Դրօշակը՝ ուր կը յայտարարուին թէ «բոլոր կրօնները մարդս անբանացնելու կը ծառայեն», «կրօնը արդիւնք է տգիտութեան եւ երկիրի» - ապաստուածութիւնը բանաւոր է» եւ այլն:

Եթէ բոլոր կրօնները հաւասարապէս արդիւնք են տգիտութեան ու աւելորդ, ինչու ուրեմն տարիներ շարունակ տառապեցանք ու դեռ կը տառապինք չըլլալու

համար Ահմետ կամ Հիւսէյն: Եթէ չկայ հոգի, չկայ վարձատրութիւն, չկայ ուրիշ կեանքի մը յոյս, չկայ ուրեմն պարտականութիւն եւ ի՞նչ բանն է որ կը մղէ ոեւէ մէկը՝ ուրիշներու օգտին համար՝ հրաժարիլ իր դիրքի բարձրութենէն, թողուլ իւր հանգստութիւնը, հարստութիւնը, անուշ վայելքները եւ վտանգի մէջ նետուելով՝ զո՛ւ տալ իր կեանքը, եթէ ոչ բացարձակ անմտութիւնը: Եթէ չկայ Աստուած, չկայ դատաստան, եթէ բարին ու չարը միեւնոյն վախճանը ունին եւ մարդուն կեանքը այս աշխարհին մէջ սահմանափակուած է, պէտք չէ որ գոյութիւն ունենայ ուրեմն խիղճը ու հարկ է որ մարդուն ամբողջ միտքն ու ջանքը կեդրոնանայ միայն իր մարմնոյն վրայ՝ զանիկա պաշտպանելու, փայտալու, անոր վայելքներ եւ հեշտանքներ հայթայթելու համար՝ ամէն կարելի միջոցներով: Ինչդիր չէ բարի կամ չար, պատուաւոր կամ անպատիւ:

Սոսկալի է անհաւատութիւնը: Մեզի համար հայ չէ, այլասերուած մըն է այն որ չի հաւատար Աստուծոյ, որ կը մերժէ կրօնը: Հայը՝ հայ պէտք է ըլլայ չէ թէ միայն անտէնով, այլ եւ կրօնքով, եւ լեզուով եւ վարք ու բարքով: Մենք կը թքենք այդ ազատութեան վրայ եւ այն զարգացման վրայ, զոր անասնութիւնը պիտի տայ մեզի: Եթէ մեր փրկութեան ճամբան՝ մեր եկեղեցին քանդելն ու կրօնքին դէմ պայքարիլն է, աւելի լաւ կը սեպենք գերի ապրիլ, բայց չբաժնուիլ մեր կրօնքէն ու եկեղեցիէն:

Մենք համակիր ենք կուսակցութեան քաղաքական ու տնտեսական ձգտումներուն ու կազմակերպական ուղղութեան: մենք չենք պաշտպաներ կղերին աշխարհական իշխանութիւնը՝ ոչ ալ աւելորդապաշտութիւններն ու նախապաշարումները, բայց չենք ալ ներեր որ քրիստոնէական կրօնի հիմնական վարդապետութիւնները՝ իբր նախապաշարում ծաղրուին ու անարգուին: չենք ընդունիր որ մեր ինտելիգենտները սկեպտիկ իմաստասէրներու եւ անհաւատ գիտնականներու մտքի աղտոտ փախուցները մեզի հրամցեն իբր լաւագոյն գրականութիւն:

Համոզուած ենք թէ կան ճշմարտութիւններ, որոնք մտքով չեն շօշափուիր եւ որոնց փարած կը մնանք մենք

մեր նախնեաց վճիտ հաւատքով: Առանց շեղելու այդ հաւատքէն, առանց ժխտելու Աստուծոյ գոյութիւնը եւ առանց ուրանալու մեր կրօնքն ու եկեղեցին, վստահ ենք թէ լոկ անվհատ աշխատանքով, բարոյական ու նիւթական գոհողութեամբ՝ կրնանք հասնիլ մեր փափաքած ազատութեան եւ տնտեսական ու կրթական զարգացման, ինչպէս հասան մեզի նման շատ մը փոքր ազգեր: Ուստի կը փափաքենք որ Դաշակցութիւնը իւր թերթերու եւ բրոշիւրներու հրատարակութեանց մէջ՝ տեղ չտայ այսուհետեւ հակակրօն պայքարի: Աստուածամերժ գաղափարներու եւ հայհոյութիւններու, որոնք չափազանց պժգանք կ'ազդեն քրիստոնեայ ընկերներուն: Կը խնդրենք մեր անհաւատ գրողներէն որ իրենց վերապահեն օտարներէն ծախու առած անասնութութեան ամբարիշտ գաղափարները եւ զուր տեղ չաշխատին անոնց ապականիչ թոյնով վարակել մեր հաւատաւոր ժողովուրդի կոյս մտքերը:

Կը յայտարարենք թէ ժամանակէ մը ի վեր մտքերը բաւական յուզուած են հոս եւ Դաշակցութեան հմայքը շատ բան կորսնցուցած հակակրօն հրատարակութեանց հետեւանքով: Արդ կը խնդրենք խմբագրական պատ. մարմինէդ որ փութայ Ազատամարտի միջոցաւ հանդարտեցնել այդ մտքերը եւ առաջըր առնել գայթակղութեանց: Իսկ եթէ մեր խնդրանքը ու թելադրութիւնները նկատողութեան առնուելու չարժանանան եւ Դաշակցութիւնը վերջնականապէս իրեն սկզբունք ընտրած ըլլայ պայքարիլ կրօնի եւ Աստուծոյ գաղափարին դէմ, քանդել հայ եկեղեցին եւ կործանել ազգային կրօնական յիշատակարանները, հաճեցէք որոշակի յայտնել մեզ զայդ, որպէսզի գիտնանք թէ ի՞նչպիսի կուսակցութեան մը յանձնած ենք եղեր ցարդ մեր ճակատագիրը:

Հաճեցէք ընդունիլ մեր յարգանքները
Ի դիմաց Հ.Յ.Դ. Փրակերթոյի կոմիտէի
ԱՐՇԱԻԻՐ, ՎԱՐԴ, ԱՐԱՄԱԶԴ, ԼՈՒՍԻԿ

Ի դիմաց խմբագրական ժողովոյ՝
ԼՐՏԵՍ, ՈՐՍՈՐԴ, ՔԱԶԲԵՐՈՒՆԻ,
ՆՈՐԱՅՐ-ՎԱՐԱԺՆՈՒՆԻ, ՄԱՆՈՒՇԱԿ, ԵՐՈՒԱՆԴ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ԳԼՈՒԽ XII

ԼԵՌՆԱՎԱՅՐ – ԿԻԼԻԿԻԱ

Լեռնավայրի դաշնակցական կազմակերպությունը, բացի պատմական Կիլիկիայէն՝ կը տարածուէր նաեւ Սուրիոյ եւ Լիբանանի կարեւոր քաղաքներուն վրայ, ինչպիսիք էին Հալէպն ու Պէյրութը: Կը դեկավարուէր համեմատաբար աւելի ազատ պայմաններու մէջ գտնուող Եգիպտոսէն: Գորրորդ Ընդհ. Ժողովի որոշումով այլևս գոյութիւն չունէր Լեռնավայրի Պատ. Կեդր. Կոմիտէն, որ փոխարինուած էր Օժանդակ մարմնով մը, նոյնպէս հաստատուած Աղեքսանդրիոյ մէջ:

Սահմանադրութեան հռչակումէն ետք, շարք մը երիտասարդ գործիչներու առաքումով նոր թափ պիտի տրուէր Լեռնավայրի վերակազմակերպման: Շրջանը ահագանգի մատնող գլխաւոր դէպքը Ատանայի աղէտ անունով ծանօթ կոտորածներն ու աւերածութիւններն էին:

- Լեռնավայրի թղթածրարին համար նկատի առած ենք հետեւեալ փաստաթուղթերը.–
- 1.- «Տեղեկագիր Հ.Յ.Դ. Լեռնավայրի Օժանդակ մարմնի, 1909 թ. Յուլիս 20»:
 - 2.- «Տեղեկագիր Հողաբլուրի, շրջակայ գիւղերու եւ Եղեւսիոյ»:
 - 3.- Ընդհանրապէս Պոլսոյ Պատ. մարմնին ուղղուած գրութիւններ՝ տեղւոյն կուս. մարմնիներէն եւ անհատ գործիչներէ:

Փաստ. 1538-12

**1.- ՏԵՂԵԿԱԳԻՐ
Հ.Յ.Դ. ԼԵՌՆԱՎԱՅՐԻՒ ՕԺԱՆԴԱԿ] ՄԱՐՄՆԻ**

Լեռնավայրի Օժանդակ մարմինը, կազմուած Արեւմտ. Բիւրոյի հրահանգով, ընկերներ Ն. Հանգոյց¹, Բ. Շահապազ եւ Մ. Խաչատուրեանէ, սկսաւ իր գործունէութեան 1907 Հոկտ. ամսուն: – Ընկեր Հանգոյցի Աղեքսանդրիայէն մեկնելէն յետոյ, անոր փոխարինեց, Բիւրոյի հաւանութեամբ, ընկեր Տ. Շաղուպեան:

Լեռնավայրի Օժ. Մարմնի համար իրաւասութեան որոշ սահման գծուած չլլալով, անիկա կը կատարէր սոսկ միջնորդի դերը, Արեւմ. Բիւրոյի եւ Լեռ.ի շրջանի միջեւ, բոլոր կարեւոր ձեռնարկներն ու կարգադրութիւնները ընկելով Արեւմ. Բիւրոյի հաւանութեամբ եւ անոր հրահանգով:

*
**

Մարմինս երբ գործի ձեռնարկեց, Լեռ.ի շրջանի ամենակարեւոր երկու վայրերը «Մոց» եւ «Դաշտ» կը գտնուէին շատ աննպաստ դրութեան ու անկերպարան վիճակի մը մէջ²:

Մոցի ընկերները որոնք նախապէս կը ներկայացնէին մէկ խումբ միայն («Մայր» խումբ) ու անմիջական հրակողութեան ներքեւ կը գտնուէին Դաշտի մարմինն, այդ միջոցին արդէն երկուքի բաժնուած էին: Անոնց մէկ մասը կը մնար իր նախկին դրութեան մէջ, իսկ նորակազմ «Հսկիչ» խումբը, որ գլխաւորապէս ինքն էր արտասահմանի հետ յարաբերութիւն մշակողը, կը ձգտէր դուրս գալ Դաշտի հսկողութենէն ու ինքնուրոյն գործել:

Այս երեւոյթներու հետեւանքով Դաշտի մարմնի եւ «Հսկիչ»ի միջեւ ծնունդ առած պայքարը մէկ կողմէն իսկ միւս կողմէն «Մայր» խումբի ընկերներէն մի քանիսին «Հսկիչ» խումբի հետ եւ փոխադարձաբար ունեցած կարգ մը անձնական հաշիւներով խառն կռիւները ու

- 1.- Ն. Հանգոյցը՝ Նիկոլ Աղբալեանն է, որ իբր գործիչ ուղարկուած էր Եգիպտոս, ուր մնաց 1905 թ. Դեկտեմբերէն մինչեւ 1908 թ. Մայիս ամիսը, գործելով նաեւ Սուրիոյ եւ Լիբանանի մէջ:
- 2.- Ծածկանուն-տեղանուններու բացատրութիւնը տեսնել տեղեկագրի վերջին մասին մէջ:

կրճերը այնքան լարուած էին, որ բուն գործը վտանգուելու աստիճանին հասած էր:

Իսկ միւս կողմէն Դաշտի դրութիւնը բոլորովին անկերպարան վիճակ մը կը ներկայացնէր:

Մարթին³ նոր ազատուած բանտէն (իր ծննդավայրը աքսոր գնալու ժամանակ, ոստիկաններու ձեռքէն խոյս տուած ու ապաստանած էր Դաշտ, ստիպուած ըլլալով գաղտնի ապրիլ այնտեղ) ի վիճակի չէր հրապարակ գալ եւ ցրուած ու լքուած ուժերը ի մի հաւաքել: Իսկ Մոցի հետ ունեցած պայքարն ալ աւելի եւս կը շեշտուէր եւ կը սպառնար գործի քայքայման:

Կարծես տիրողի եւ հպատակողի պայքար մըն էր որ ծայր տուած էր այդ երկու կէտերու միջեւ:

Դաշտ՝ իբրեւ Լեռ.ի շրջանի միակ վարիչ, յանձին Մարթինի կը ներկայանար իբր գերագոյն մարմին ու կ'ուզէր անպայման հպատակեցնել իրեն «Մոց»ը եւ սահմանափակել զայն միայն իր միջնորդի (Արտասահմանի եւ Երկրի) երկրորդական դերին մէջ առանց ուրիշ ունէ իրաւասութիւն թոյլատրելու անոր: Իսկ «Մոց», իր կարգին, զգալով իր մէջ գործելու անզուսպ եռանդ կը ձգտէր դուրս գալ Դաշտի հովանաւորութենէն ընդլայնելու համար իր գործունէութեան սահմանները եւ լիովին գործելու:

Մենք, նկատելով, որ ներքին այս, թէեւ ինքնին թեթեւ կռիւները կարող են աւելի սուր կերպարանք ստանալ ու անախորժ հետեւանքներու շարժառիթը դառնալ, ջանացինք ամէն կերպով վերացնել այս դժգոհութիւնները եւ թէ՛ մեր կողմէն, թէ՛ մանաւանդ Արեւմտ. Բիւրոյի թելադրութեամբ գրուած յորդորական նամակներով ու խորհուրդներով, յաջողեցանք երկու կողմէն փոխադարձ զիջումներով փակել այս հարցը:

Սակայն, հազիւ թէ ներքին տարաձայնութիւնները վերջացած եւ գործերը գտած էին իրենց նորմալ ընթացքը, ահա յանկարծ դուրս եկաւ Մարտինի⁴ ծանօթ սկանդալը:

Մեր պաշտօնավարութեան հէնց սկիզբէն, մէկ կողմէն նկատելով Երկրի ընկերներու պահանջը եւ միւս կողմէն տեսնելով մանաւանդ գործերու անկերպարան ու թոյլ վիճակը, գրած էինք Արեւմ. Բիւրոյին եւ գործիչ ուզած էինք անկէ, իմացած ըլլալով մանաւանդ այս վերջինէն, որ արդէն Դ. Ընդհ. Ժողովի կողմէն մի քանի ընկերներ նշանակուած են, իբրեւ գործիչ այս շրջանի համար: Սակայն հակառակ երկրի ընկերներուն Բիւրո գրած կրկնակի նամակներուն եւ մեր կողմէն ալ յաճախակի եղած դիմումներուն, այդ նշանակուած գործիչները չեկան եւ երկիրը մնալով այսպէս առանց կարող եւ գիտակից ղեկավարի զոհ գնաց Մարտինի եւ ընկ. կողմէն լարուած թակարդներուն:

Մարտին, դժգոհ՝ Դ. Ընդհ. Ժողովի կողմէն իր մասին տրուած որոշումներէն եւ չբաւականանալով Եգիպտոսի ընկերական շարքերուն մէջ սերմանած պա-

ռակտումներէն, Դաշնակցութենէն վրէժ լուծելու տղայական մտածումներէն տարուած, աւելի առաջ մղել ուզեց իր ձախաւեր ու նախակազմակերպական գործունէութիւնը եւ մտաւ Լեռ.ի շրջանը: Օգտուելով Մարթինի վաղեմի բարեկամութեան հանգամանքէն ու մանաւանդ անոր անգիտակցութենէն, յաջողեցաւ գանազան սուտ ու սխալ տեղեկութիւններով ու կարգ մը առասպելներով համոզել զայն ու կապել իրեն, քարշ տալով անոր հետ նաեւ Դաշտի, Հովիտի, Կարմիր Լեռի եւն. ընկերները, որոնք տեսնելով, որ Մարթին, իրենց շէֆը, յարած է Մարտինի, իրենք ալ հետեւեցան անոր ու անկէ վերջն է, որ հրապարակ եկաւ այն համբաւաւոր «Կոչ»ը ուղղուած արտասահմանի «Բողոքող դաշնակցականներուն»:

Մենք, օրը օրին այս ամէն անցուդարձը տեղեկագրելով Բիւրոյին, ջանացինք հէնց սկիզբէն անհետեւանք թողնել Մարտինի ջանքերը. թէ՛ մեր կողմէն եւ թէ՛ Բիւրոյի կողմէն գրուած շատ մը նամակներով հասկցուցինք Մարթինին իր ահաւոր սխալը եւ զգուշացուցինք զինքը, յիշեցնելով նաեւ Դ. Ընդհ. Ժողովի որոշումները Մարտինի մասին, որոնք շատ կանուխէն տեղեկագրուած էին թէ՛ իրեն եւ թէ՛ Լեռ.ի բոլոր ընկերներուն:

Սակայն այս ամէնը ոչ մի օգուտ չտուին եւ արտասահմանի մէջ տարածուած հոսանքը պահ մը կը սպառնար տարածուիլ նաեւ Լեռ.ի այն շրջաններն ալ որոնք գերծ մնացած էին Մարտինի սաղորանքներէն: Մոցի ընկերներն ալ սկսած էին մի տեսակ կասկածոտ ու վարանոտ վերաբերում ունենալ դէպի Դաշնակցութիւնը:

Այս միջոցին, բարեբախտաբար, ընկեր Արշակ որ Եգիպտոս կը գտնուէր եւ Բաստի շրջանը պիտի մեկնէր⁵ յանձն առաւ իր ուղեւորութիւնը կատարել Դաշտի ճամբով ու մեր խնդրանքով խոստացաւ որոշ ատեն մնալ այդ շրջանները եւ ջանալ կարգի բերել այնտեղի գործերը:

Սակայն ոչ Արշակ եւ ոչ ալ իրմէ յետոյ Բալկ. Կ. Կ.էն իբր Լեռ.ի գործիչ յանձնարարուած Մանուկը, զոր այստեղէն մենք ուղարկեցինք, չկարողացան խելքի բերել Մարթինը:

Ասոնցմէ վերջ, գրեթէ Սահմանադրութեան հռչակման հետ միաժամանակ ներս անցաւ նաեւ Ճեմիլը⁶, իր իսկ կամբով:– Այս ընկերը յանձնարարուած էր մեզ կովկասէն ընկեր Ս. Զաւարեանի կողմէն եւ պիտի

- 3.- Լեռնավայր-Կիլիկիոյ հին գործիչներէն Մարթին Սուրաւեան:
- 4.- Սարիատ, Ամերիկայէն եկած գործիչ Յունաստանի, Իգմիոյ եւ Կիլիկիոյ մէջ, անցագրի անուսով Յակոբեան ժամ-ժա-գոպ:
- 5.- Արշակ Սուաճեան, Եգիպտոսի ընկերներէն, որ Սեբաստիա (Բաստ) պիտի մեկնէր Փոքր Գայքի շրջանը կազմակերպելու նպատակով:
- 6.- Ֆերիտ Ճեմիլ, ծանօթ նաեւ Տիգրան Ծածկուած Ծածկուած (Տ. Աստեան):

գնար իր հայրենիքը Սղերդ եւ որ ընտրեց Հայկաի գիծը:

Այս ընկերներու Դաշտ ներկայութիւնը, թէեւ շատ ուշ, բայց վերջապէս ունեցաւ իր արդիւնքը:

Հովտի ընկերները բաւական կանուխէն հասկցան իրենց սխալը եւ նամակով մը յետս կոչուան ըրին «Կոչ»ի մէջ իրենց գրածները: Իսկ ծոցեցիք բոլորովին խզեցին իրենց յարաբերութիւնը Մարթինի հետ: Այս վերջինն ալ, թէեւ բաւական ուշ, բայց վերջապէս անդրադարձաւ իր սխալին վրայ եւ իր համախոհներով յայտնեց իր սխալած՝ ինչպէս նաեւ Սարհատ եւ ընկ. հետ իր յարաբերութիւնը խզած ըլլալը:

Չմոռնանք ըսելու նաեւ, որ տեղույս «բողոքող»ներու շրջանին մէջ անակնկալ կերպով առաջ եկած պառակտումի ժամանակ մեր ձեռքը անցաւ Մարթինի կողմէն Սարհատ, Առանձար եւ ընկ. ուղղուած կարգ մը նամակներ ու գանազան տղթումէնտներ որոնք աւելի լոյս սփռեցին անոնց այս գործունէութեան!! շուրջը: Այս նամակներն ու փաստաթղթերը իր ատենին փոխադրած ենք Արեւմ. Բիւրօ:

*
**

Լեռ.ի շրջանի կազմակերպուած վայրերն էին.

- 1- Մոց — Բէյրութ
- 2- Կարմիր լեռ — Անտիոք
- 3- Հեղեղատ — Քեսապ
- 4- Դաշտ — Հայկա
- 5- Հովտ — Այնթապ
- 6- Քարձոր — Կիւրիւն
- 7- Աւազան — Ուրֆա
- 8- Խորշ — Քիլիս

Այս տեղերու հետ նախապէս յարաբերութիւն կը մշակուէր Հայկաի միջոցով, իսկ Մարթինի խնդրէն յետոյ Մոցն էր, որ կը թղթակցէր այս շրջաններու հետ մինչեւ Սեւ-Վիշապ (Տիգրանակերտ):

*
**

Լեռ. Օժ. մարմնի տեւողութեան շրջանին մէջ, մեր գլխաւոր գործունէութիւնը կայացած է հետեւեալ երկու կէտերու շուրջը.

- Ա.- Գրականութեան փոխադրութիւն
- Բ.- Գրաւոր պրոպագանդ

Մարմինս, իր սկսած օրէն մինչեւ Օսմ. Սահմանադրութեան հռչակուիլը, Երկիր մտցուցած է 1084 կտոր գանազան գրքեր, որոնցմէ 384ը հայերէն, 180 եւրոպական լեզուներով (ֆրանս., գերմ. եւն.) եւ 520ն ալ թուրքերէն. ասոնցմէ դուրս են թերթերը, ինչպէս «Դրօշակ», «Ռազմիկ», «Հայրենիք», Կովկասի թերթը, «Ենի-Ֆիքր», «Թէրաքթի» եւն. որոնք պարբերաբար կը փոխադրուէր:

Այս ամէնը փոխադրուած են Մոց ուրկէ Հայկա եւ այնտեղէն ալ անշուշտ շրջանի գանազան կողմերը:

Իսկ ինչ կը վերաբերի գրաւոր պրոպագանդային, մենք ջանացած ենք, ըստ կարելոյն, նամակներով հարկ եղած թելադրութիւնները ընել Երկրի ընկերներուն, մասնաւորապէս «Հսկիչ» խումբին, որոնք սահմանադրութենէն մի քանի ամիս առաջ կազմեցին 3 հոգինոց մարմին մը պաշտօն ունենալով շրջուն պրոպագանդիստի գործը: Ասոնց յատկացուեցաւ որոշ բիւջէ Արեւմ. Բիւրօյի կողմէն: Սակայն չունենալով այս մարմնի գործունէութեան տեղեկագիրը, չպիտի կարողանանք ոեւէ կարծիք յայտնել արդիւնքի մասին:

Լեռ. Օժ. մարմինը գէնքի փոխադրութեան գործով չգրադեցաւ, որովհետեւ՝ նախ որ նմանօրինակ ձեռնարկի մը իրաւասութիւնը չունէր եւ երկրորդ որ այս տեսակ գործի համար ոեւէ բիւջէ յատկացուած չէր Դ. Ընդհ. Ժողովի կողմէն: Մեր կողմէն միայն երկու տասնհարուածեան մառազէր ատրճանակ (187 բաղրոնով) դրկուած է Դաշտ այնտեղի ընկերներու պահանջով:

Մենք ձեռքի տակ չունենալով Լեռ.ի շրջանի գանազան կէտերու մանրամասն տեղեկագրերը, կը բաւականանանք միայն ամփոփ մէկ ուրուագիծը ներկայացնելու մեր գործունէութեան ընթացքում տեղի ունեցածներուն:

Հ. Յ. Դ. Լեռ. Օժ. Մարմնի կողմէն

Յանց *Կոմիտէի*

ՎԱՀԷ ԾՈՎՀԱՆՆԵՍ

Աղբջանդրիա,
20 Յուլիս 1909

Յ.Գ.- Ներկայիս կը միացնենք նաեւ մեր ընդհ. հաշ-ւեկշիւը:

2.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀՈՂԱԲԼՐԻ [ԱՅՆԹԱՊ], ԾՐՉԱԿԱՅ ԳԻՒՂԵՐՈՒ ԵՒ ԵԳԵՍԻՈՅ

Հողաբլուրի (Այնթապ եւ շրջակայք) այս տեղեկագիրը եւս կազմուած է Դ. Ընդ. Ժողովի աւարտէն ետք. քուական չունի. առաջին էջի վերի ճախ անկիւնը գրուած է. «Ստ. Սեպտ. 1, դիւան Ընդ. Ժողովի»: Պակտող տարեթիւը 1907 չի կրնար ըլլալ, որովհետեւ տեղեկագրին մէջ խօսք կայ «յետ Սահմանադրութեան» մասին. խօսքը անշուշտ կը վերաբերի 1908 Յուլիսին հռչակուած Օսմանեան սահմանադրութեան: Պէտք է եզրակացնել ուրեմն որ տեղեկագրի կազմութեան հաւանական ամէնէն կանուխ տարին 1908 է:

ՀՈՂԱԲԼՐԻ

Հողաբլուրը կառուցուած է արեւմուտքէն դէպի հիւսիս-արեւելք երկարող 3 բլուրներու վրայ, որուն երկուքը — միջինը եւ արեւմտեանը իրենց յարակից թաղերով գրաւած են հայերը: Քաղաքը ծովու մակերեսէն 2000 ոտք բարձր ըլլալով կլիման բարեխառն ու շատ առողջարար է:

Յայ լուսաւորչական.	Արական		
	ուսանող	ուսուցիչ	պիւտճէ
Աղբնական կրթարան	250	10	240
Վարդանեան կրթարան	200	8	210
Ներսէսեան (Ազգ.) նախակրթ.-----	480	10	200
Հայկազնեան (Ազգ.) նախակրթ.-----	120	4	80

Իգական	ուսանող		
	ուսանող	ուսուցիչ	պիւտճէ
Հայկանուչեան (Ազգ.) նախակրթ.-----	350	9	200
Կրթասիրաց նախակրթ.-----	150	5	100
Մանկապարտէզ (2 հատ)	150	6	100
Մաղկոց (10 հատ երկսեռ)	500	10	150
(Արական եւ իգական համագումար) -----	2180	62	1280

Բնակչութիւն

Թուրք	8.000 տուն
Քիւրտ	500 տուն
Հրեայ	300 տուն
Հայ լուսաւորչական	4.000 տուն
Լատին	30 տուն
Հայ բողոքական	1.000 տուն
Հայ կաթողիկ	75 տուն
Մօտաւորապէս կամ	14.000 տուն 70.000 բնակիչ:

ԿՐԹԱԿԱՆ

Թուրքեր.— Ունին արական մէքթէպ ի ըրիւշտի մը եւ 5 ծաղկոց նոյնպէս արական. աղջկանց համար ունին մէկ ծաղկոց միայն. թէ քաղքի եւ թէ շրջակայ գիւղերու թուրք վարժարաններուն համար յատկացուած է 280 լիրա միայն. Մէարիֆը⁷ 500 լիրա եկամուտ ունի, որուն 280ը վերոյիշեալ պիւտճէն կը կազմէ իսկ մնացածը չենք գիտեր ո՛ր լաբիւրինթոսի մէջ կ'իյնայ:
Քիւրտեր.— Քրտերը կրթական որեւէ հաստատութիւն չունին:
Հրեայք.— Ունին վարժարան մ'որ ունի 40 լիրա պիւտճէ, 70 ուսանող եւ 3 ուսուցիչ:

Յայ բողոքական վարժարաններ			
2 նախակրթարան			
(Արական)	300	8	300
2 Աղջկանց վարժարան	150	10	150
3 Տարրական նախակրթ.	300	7	200
3 երկսեռ ծաղկոց	150	3	30
1 մանկապարտէզ	50	2	40
1 որբանոց (Հայլաճեան Ազգ.) -----	100	3	200
Համագումար -----	1050	33	920
Լատին			
1 վարժարան (Արական)	125	4	100
» » (Աղջկանց)	80	8	մայրապետ

7.- Մէարիֆ՝ հանրային կրթութեան տեսչութիւն:

Հայ կաթնիկ

կրթական գործի մէջ լատիններու հետ միացած են [կրթական] օտար հաստատութիւններ

ուսանող	ուսուցիչ	պիւտճէ
1 Գոլէճ (գիշերօթիկ)	180	14 1000
1 Սէմինէրի	120	6 վրժհի 500
1 Որբանոց (Անգլ-ամերիկեան)----	75 երկսեռ	4 վրժհի 350

ԿՐՕՆԱԿԱՆ

Թուրքեր.— Ունին 50է աւելի մզկիթ եւ 100է աւելի առանց մինարէի (էօթաիւզ) ճամիւներ: Ունին 1000է աւելի ճրիակներ մոլլաներ որոնց մեծամասնութիւնը զինուորագրութենէ ազատուելու համար ճերմակ փաթթած մոլեռանդ յետադիմական են:

Հրեայք.— Ունին մէկ սինակոկ եւ մէկ րաբբունի եւ մէկ րաբբունապետ:

Հայ լուսաւորչական.— Ունին եկեղեցի մը եւ 9 քահանայ:

Հայ բողոքական.— 3 աղօթարան եւ 3 պատուելի:

Լատին.— 1 վանք, 4 քահանայ եւ 1 քահանայապետ:

Հայ կաթոլիկ.— 1 եկեղեցի եւ 1 վարդապետ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Ունինք տեղային ընդհանրացած երկու արհեստ — մանուսայագործութիւն եւ խաղախորդութիւն. առաջինը հայոց ձեռքն է իսկ վերջինը տաճկաց: Մանուսայագործութիւնը իրենց վարպետներով միասին մօտ 8000 մարդ կը սնուցանէ, իսկ խաղախորդութիւնը՝ 1000: Վաճառականութիւնը եւ սեղանաւորական գործառնութիւնները մեծաւ մասամբ քրիստոնեաներու ձեռքն են. արհեստաւոր դասակարգը նոյնպէս մեծ մասամբ քրիստոնեաներէ կը բաղկանայ. թուրքերը կը զբաղին մասվաճառութեամբ, մանրավաճառութեամբ, պագալութեամբ եւ այլն:

Երջակայ գիւղերու 80/100ը քաղքիս եւ Հայէպի պէյերուն կը պատկանի. աւելորդ է ըսել թէ խեղճ գիւղացիութիւնը կարծես տարիներէ ի վեր վարժուած տնտեսական անձուկ վիճակի, անկեալ, վերջին ծայր անախանձելի վիճակ մ'ունին: Քաղաքիս գլխաւոր արտադրութիւններն են, խաղող, պիստակ, ձիթապուղ, ցորեն, գարի, եգիպտացորեն եւ այլն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կառավարական աստիճանը գայմագամութիւն է.

Ե. գորաբանակի կը պատկանի եւ զինուորութիւնը 2 վաշտի բաժնուած է — Այնթապի վաշտ եւ Գրգըլ Հիսարի վաշտ:

Ունինք գորանոց մը եւ նահապետական դրութեամբ կառուցուած անշուք պալատ մը: Ունինք 10 պահականոց, պարսկական հիւպատոսարան մը:

Ունինք չորս գլխաւոր քաղաքական կուսակցութիւններ

1. Մ[իուրթիւն] Յ[առաջդիմութիւն] Ընկերութիւնը.— Ունի 180 անդամ 130է աւելին թուրք, 4ը հայ լուսաւորչական եւ մնացածը բողոքական:

2. Հնչակեան.— Ունին 100 անդամ, լսարան մը իրը պրոպագանդի վայր:

3. Իթիթհատ եւ Թէպիվիւն.— Որոշ ծրագիր մը չունին, եւ խուժանային համախմբութիւն մըն են, պետ ունենալով Ալի Ռիզա անուն խուժանապետ մը:

4. Դաշնակցութիւն.— Ունինք 100 ընկեր եւ 25 ընկերուհիներ Կարմիր Նաչի ընկերուհիներ անուան տակ աշխատող: Ունինք ընթերցատուն մը եւ 150 կտոր յեղափոխական, ընկերվարական գրքեր. ունինք երկու լսարան, մին արական եւ թրքերէն լեզուաւ, միւսը երկսեռ եւ հայ լեզուաւ:

ԳԻՒՂԵՐ ԵՒ ԳԻՒՂԱՔԱՂԱՔՆԵՐ

Հողաբլուրը ունի 190 հատ գիւղեր, գիւղաքաղաքներ ու մի քանի աւաններ, որոնց ամէնը, միայն մէկ բացառութեամբ, թուրքերէ կը բաղկանան. քաղաքէս դէպի արեւելք, 6 ժամ հեռու, ունինք Օրուլ անուն գիւղ մը ուր 15-20 տունի չափ հայեր կան. ունին եկեղեցի մը եւ քահանայ մը: Ուրիշ հայ կամ հայախառն գիւղ չունինք:

ԵՂԵՍԻԱ (ՈՒՐՅԱ)

Ուրֆա բերդաքաղաքը կը գտնուի Միջագետքի կեդրոնը Եփրատայ ափերէն 80 մղոն հեռու՝ դէպի արեւելք: Քաղաքի աշխարհագրական դիրքը դաշտային է. ընդհանրապէս հայերը գրաւած են անոր արեւելեան մասը, Թրֆուտըր բլուրը եւ անոր յարակից տեղերը, որուն մօտերը կը գտնուի նաեւ հայոց եկեղեցին. հայերու թաղը ամուր է եւ կ'իշխէ քաղաքին վրայ:

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

Ուրֆա 80.000ի չափ բնակիչ ունի. 5-6 հազար տուն իսլամ, 3 [հազար] տուն հայ, 3-4 հարիւր տուն բողոքական, նոյնչափ եւ ասորի, 200 տուն ալ քաղղէացի եւ կաթոլիկ:

Քաղաքը ի հնումն ոստանը լինելով ասորական փոքրիկ պետութեան, հայն ու ասորին երկար ատեն քովէ քով ապրելով եւ տարիներու ընթացքում միջազգային ամուսնական յարաբերութիւններ հաստատելով, ասորիներու մեծ մասը լուծուելը են հայոց մէջ, իրենց նկարագրի տխուր եւ թերի կողմերը դրոշմելով հայերու մտքին եւ սրտին վրայ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Հայերը տիրացած են առեւտրական ասպարէզին եւ առանց բացառութեան բոլոր արհեստներին: Հայերը կը կազմեն քաղաքին կենսունակ տարրը եւ ողնասիւնը: Ծի աղէտալի դէպքէն ի վեր քաղաքը տակաւին թշուառութեան եւ աղքատութեան լայն հետքեր կը կրէ: չբաւորութեան մատնուած եւ կամ միանգամ ընդմիջտ փճացած օճախներ փոքրամասնութիւն մը չեն կազմեր:

ԿՐԵՆՏՈՒՐԱԿԱՆ

Ծի դէպքը ուրֆացիներուն համար իմացական վերազարթնումի դարագլուխն է եղած. յետ այնու կուլտուրապէս աւելի բարձր մակարդակի մը հասնելու ձգտումը ունեցեր է անընդհատ եւ յար: Բայց աղքատութիւնը իբր անանցանելի պատուար արգիլեր է ուրֆացին իր փափաքը գոհացնելէ: Դպրոցները անախաճելի վիճակ մ'ունին. հետեւաբար ապագայ սերունդը զուրկ է միջավայրի պահանջից համաձայն դաստիարակութեան խնամքներէն:

ԿՐՕՆԱԿԱՆ

Չափազանց, նոյնիսկ կրօնամոլ ըսելու չափ կրօնասէր է ուրֆացին: Ունի եկեղեցի մը Ս. Աստուածածնի նուիրուած. ունի նաեւ Ս. Սարգսի վանքը՝ քաղաքէն 10-15 վայրկեան հեռու բլուրի մը վրայ կառուցուած:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

Հոն որեւէ կուսակցութիւն մուտ գտած չէ ցարդ. թէեւ յետ Սահմանադրութեան մի քանի երիտասարդներ Հ. Յ. Դաշնակցութեան անուան տակ գացած են, բայց ջոճ դասակարգի ոմանց դիտողութիւններէն վերաւորուելով՝ տեւորական գործողութեան ենթարկելու զգած են զանոնք: Ասոր նման տհաս եւ համբակ գործելակերպով վարկաբեկած են Դաշնակցութիւնը, հետեւաբար եւ յեղափոխութիւնը: Ասիկա մեզ համար ցաւալի վնաս եւ մեծ կորուստ մըն է զոր շուտ ընդ փոյթ դարմանելու համար պարտ ու պատշաճն տնօրինել անհրաժեշտ է:

ԳԻՒՂԵՐ ԵՒ ԱԻԱՆՆԵՐ

Ա. Սիզիպ

Թրքախառն աւան մը՝ որ 50-80 տուն լուսաւորչական ունի. ունի նոյնպէս եկեղեցի մը եւ վարժարան մը. քահանան եւս իբր օգնական ուսուցիչ կը ծառայէ: Բողոքական չկայ. կաթոլիկ երկու տուն միայն. թուրքերը 450 տուն են: Գիւղը դաշտային է. ունի նաեւ 20 տուն հրեայ: Քրիստոնեայք առանց բացառութեան արհեստաւոր են. հրեայք փերեզակ են. երկրագործութիւնը ամբողջութեամբ թուրքերուն ձեռքն է: Գլխաւոր արտադրութիւնն է ձիթապտուղ. ունի 5 մասմանա (օճառի գործարան). Հոն ունինք 3-4 ընկեր միայն. կառավարութեան ձեռն է «միւսիրութիւն»:

Բ. Էնճէ (Չոռսկլայ)

Եփրատի եզերքը Հողաբլուրէն տասը ժամ դէպի հիւսիսային արեւելք սքանչելի դիրքով գուտ 100 տուն հայ լուսաւորչականներէ բաղկացեալ գիւղ մըն է: Ունին եկեղեցի մը եւ վարժարան մը: Կը զբաղին երկրագործութեամբ. շատ չարքաշ են եւ ունին քաջ ու զինավարժ երիտասարդներ: Հնչակեանք ունին 10ի չափ ընկերներ Հոն: Գիւղի անմիջապէս վերելը կայ Ներսէս Շնորհալուր բերդը, որը եւ հայերու ուխտատեղին է:

Գ. Գիպիճ

Ունի 200 տուն քրիստոնեայ, 10 տուն բողոքական իսկ մնացածը լուսաւորչական. բայց ցաւելով կ'ըսենք թէ կրօն[ական] եւ ազգ[ային] զգացումներէ կատարելապէս զուրկ են. եթէ մի քիչ նեղուին կը տեսնաս որ ամէնքը մէյ մէկ սիւննի՝ մոլեռանդ թուրքեր կը դառնան, օր մ'ետք կրկին քրիստոնէութիւնը կ'ընդունին. կան ընտանիքներ որոնց մի մասը թուրք է իսկ միւս մասը քրիստոնեայ: Ունին եկեղեցի մը եւ խիստ խեղճուկ վարժարան մը:

Դ. Պիրոճիկ

Եփրատի անմիջապէս եզերքը շինուած դաշտային երկիր մըն է: Ունի 200 տուն հայ, եւ 200 տուն թուրք, 30 բողոքական, նոյնչափ եւ կաթոլիկ: Քրիստոնեայք ունին մէյ մէկ եկեղեցի եւ մէյ մէկ վարժարան: Գրեթէ ամէն տեսակ արհեստ եւ վաճառականութիւն քրիստոնեաներու ձեռքն է: Մենք թէպէտ Հոն 3-4 ընկեր ունէինք բայց ուսանող ըլլալուն ստիպուեցան դուրսերը երթալ. հետեւաբար Հոն ընկեր չունինք: Ծի կոտորածին 20ի չափ ընտանիքներ տաճկացած եւ ցարդ անդարձ կը մնան:

Ե. Պուսպուճ

Ունի 15 տուն քրիստոնեայ. ոչ եկեղեցի ունի եւ ոչ վարժարան. առ հասարակ աղօրեպաններ՝ են. դիրքը դաշտային է եւ գլխաւոր արտադրութիւննին է եգիպտացորեն:


Սիրելի ընկերներ, իբր մեր շրջանի բոլոր մարմիններու թարգմանը կը փութանք Ձեր նկատողութեանը յանձնել յետագայ երկու կենսական պահանջները,—

Ա.— Կիլիկեան Գոլէճի մը բացումը.— սոյն նպատակին համար լոկ մեր քաղաքը կրնայ եւ տրամադիր այ է երեք հազար օսմանեան ոսկի հայթայթել: Գոլէճի մը օգտակարութիւնէ ճառել՝ ըստ մեզ աւելորդ է:

Բ.— Մեր շրջանի անկերպարան վիճակը կը կանոնաւորուի եւ Ուրֆայի եւ Մարաշու պէս տեղեր վարկաբեկ եղած Դաշնակցութեան անունը իր նախկին վարկն ու պատիւը կը ստանայ եթէ Հոս դրկուի մնայուն, կարող գործիչ մը որ միեւնոյն ժամանակ իր վրայ միացնէ կարող պրոպագանդիստի, կազմակերպիչի բարեմասնութիւնները, մինչեւ յարմար ժամանակ մը յետաձգելով հակակրօնական եւ հակակղերական պայքարը, լոկ եւ միակ վերոյիշեալ երկու առաջարկը միացնելու, իրականացնելու աշխատի: Գործիչը պէտք է լինի խոհեմ, որ իւր հրահանգներով եւ անձին օրինակովը զգուշացնէ տաքարիւն երիտասարդութիւնը յախուռն եւ անշրջահայեաց ընթացքէ:

Գործիչը պէտք է որ հմտութիւն ունենայ ընկերվարական եւ տնտեսական խնդիրները ձեռնհասօրէն լուծելու, գիտնայ բանուոր-էսնաֆ դասակարգի վիճակը բարուրդելու լուրջ ձեռնարկներ ընել:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀՈՂԱԲԼՈՒՐԻ ԿՈՄԻՏԷ


ԱԼԻՇԱՆ ԵՓՐԱՏ ԾՈԾՍ

Փաստ. 53-138

3.- ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ԼԵՌՆԱՎԱՅՐԻ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄՆԻՆ

8 Օգոստոս 1908

Լեռնավայրի Օժանդակ մարմին

Ընկերներ,

Ստացել ենք Ձեր նամակները, ինչպէս եւ Լեռնավայրի շրջանի նամակների պատասխանները, եւ բոլորի պատասխանները ամփոփելով Ձեզ ենք ուղարկում, խնդրելով Լեռնավայրին վերաբերեալ բոլոր կէտերը արտագրել եւ ուղարկել այնտեղի մեր ընկերներին:

Սահմանադրութիւնը այդպէս թափով երկրում հաստատուելուց յետոյ անհրաժեշտ է որ գործունեայ տարրը մտնի Երկիր, ամէն մարդ իր բնավայրը, եւ մի ուժեղ պրոպագանդով աշխատէ ժողովրդականութիւն ձեռք բերել: Ժամանակը շատ թանկ է եւ պէտք է օգտուել նրանից: Պէտք է ձգտել շրջաններ ձեռք բերել եւ ամէն տեղ Դաշնակցութեան հմայքը բարձր պահել, որպէսզի կարելի լինի մեր ծրագրի ոգին թափանցել տալ ժողովրդական բոլոր խաւերում եւ ինքնապաշտպանութեան գործը եւ նրա անհրաժեշտութիւնը ըմբռնել տալ բոլորին:

Այս հոգով նամակներ գրեցէք ամէն տեղ ուր կարելի է եւ այդ մտքով պրոպագանդ մղեցէք մեր համակիր շրջաններում: Շատ հասկանալի է որ պէտք է հաւատ ներշնչել այն բոլորին, որոնք մտածում են թողնել երկիրը: Հոգով փարել բնավայրին եւ կուռ ջանքերով հող պատրաստել ապագայ մեր գործունէութեան:

Չնայած առաջ եկած խոշոր փոփոխութեան երկրում, մեր տակտիկի եւ գործունէութեան մէջ ոչ մի փոփոխութիւն չի մտնում մինչեւ առաջիկայ Ընդհանուր ժողովը:

Շատ գոհ ենք որ Լեռնավայրի Շրջանային ժողովը վերջացաւ եւ ամէն մէկը ցրուեցաւ իր վայրը:

Արշակի վերաբերեալ տուած մեր որոշումները մնում են իրենց ոյժի մէջ, այն է՝ միւս ընկերների հետ միասին աշխատէ տեղական կազմակերպական գործում:

Եթէ օր. Ջարուհուն⁹ Եղեսիա գնալը հաճելի է, կարող են կարգադրել, հակառակ պարագային կարող է գնալ Կովկաս, ինչպէս այդ առթիւ արդէն գրուած է:

9.- Ջարուհի Տերոյեան (Ժենիա), քոյրը Ժանօթ յեղափոխական գործիչ եւ մարտիկ Վազգէնի (Տերոյեան Տիգրան): Ջարուհին եւս յայտնի էր իր յեղափոխական գործունէութեամբ (եղած էր անդամ Վասպուրականի Կեդր. Կոմիտէին: 1896ին ձերբակալուած եւ աքսորուած էր Երուսաղէմ: Սահմանադրութենէն ետք նոր էր ազատ արձակուած):

10.- Նազարեթ Չաւուշ (Նորաշխարհեան), Ձէթունի Ժանօթ հերոսներէն, որ 1914ին պիտի սպանուէր բանտին մէջ:

11.- Ձէթունցի:

Նազարեթ Չաւուշի¹⁰ եւ այլ բանտարկեալներին (որոնք այժմ ազատ են) օգնելու համար գրուած է Ձեզ որպէսզի դիմէք Կարմիր խաչի ընկերութեան եւ հարկ եղած օգնութիւնը անէք:

Ինչ վերաբերում է որեւէ ապստամբական ձեռնարկի, որի համար գրած են եւ նոյն իսկ արժուաբերողի¹¹ որոշ անուններ տուած, առ այժմ թողնելու է այդ միտքը ու զբաղուելու լուրջ կազմակերպութեամբ:

Շրջանային ժողովի տեղեկագիրը, որի մասին գրուած է Լեռ-ից Յուլիս 15 թուակիր նամակում, դեռ չենք ստացել:

Դրամական պահանջներին բաւարարութիւն տալու համար ուղարկում ենք Ձեզ 700 Փրանկ, որ կը բաժանէք հետեւեալ կերպով. 1) Ժիրայրին ապրուստի համար 100 Փրանկ, 2) Գառնիկին՝ 200 Փրանկ. անցագրի խնդիրը շնորհիւ Սահմանադրութեան վերանում է՝ իսկ եթէ հարկ դատուի անպայման ունենալ, թող մեզ գրեն, մենք կ'աշխատենք մի հատ բերել տալ, 3) Ճէմիլին՝ 200 Փրանկ, որպէսզի ստանալով անմիջապէս մեկնի դէպի հայրենիք, եւ 4) Լեռնավայրից եկած պատգամաւորին՝ 200 Փրանկ, որպէսզի նրանով վերադառնայ: Թէպէտ մեզ թւում է, որ այդչափ մեծ ծախքեր անել նման մի փոքրիկ ճամբորդութեան համար, չափազանց է. եւ յոյս ունինք որ այսուհետեւ նման դէպքեր տեղի չեն ունենայ:

Տիգրիսի վերաբերմամբ մեր որոշումները մնում են նոյնը:

Նորից շեշտում ենք որ բոլոր գնացողները պիտի ջանան առանց աղմուկի, լուելեայն քարոզել ժողովրդին ինքնապաշտպանութեան գաղափարը եւ որքան կարելի է մեր ծրագրի ոգին արծարծել ժողովրդական խաւերում: Միեւնոյն ժամանակ յարմար ենք գտնում կրկնել, որ ներկայ պայմաններում, ուր երկրի մէջ մեր աշխատանքներն աւելի խաղաղ բնաւորութիւն են կրելու, մեր բոլոր ընկերները ձգտին գործ գտնել իրենց ապրուստը հոգալու համար:

Ալեքսանդր Էսմերեանի ձգտումը գովելի է, բայց ցաւելով պիտի ասենք, որ այստեղ իր ձգտումները իրականացնելու ոչ մի կարելիութիւն չկայ: Ուստի, խնդրում ենք, այդ առթիւ մտածողներին այս կողմերը չուղարկել:

Խնդրում ենք, որ ձեր ենթակոմիտէի անդամներին մէկը գնայ Կահիրէ ծանօթանալու այնտեղի խմբի գործունէութեան ու հաշիւներին եւ մեզ որոշ տեղեկութիւններ տայ այդ առթիւ, որովհետեւ ամիսներ անցան եւ մենք նրան մասին ոչ մի լուր չունենք:

Ընկերական բարեկեցութիւն
ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՒՐՈ

Փաստ. 953-14

4.- ԳԱԼՖԱՅԷՆ¹³ ՊՈԼՍՈՅ ՊԱՏ. ՄԱՐՄՆԻՆ

Ադանա 11/24 Յունուար 1909

Սիրելիներ,

3-4 շաբաթներէ ի վեր այս կողմերը կը գտնուիմ. դժբախտաբար չգտայ Կիլիկիան այն, ինչ կը կարծէի:

Կան կենսունակ տարրեր, բայց անգիտակ, երկար ժամանակ է հարկաւոր անոնց կրթելու, դաստիարակելու: Ադանացին զուրկ իր մայրենի լեզուէն, նիւթապէս ապահովուած, ազատ եւ համեմատաբար ապահով թուրքին եւ քրուտին զուլումէն, կտրուած մայրենի երկրէն, մնացել է անտարբեր, անգիտակ, զուրկ ազգային հասարակական ձգտումներէ եւ հէնց այդ պատճառներով երկար եւ անդուլ աշխատութիւններ են հարկաւոր: Մինչեւ իսկ չտեսայ մի քիչ ուժեղ զարթում մը ազատութենէն ի վեր, ինչ որ շատ ու շատ զգալի կերպով կը նշմարուի Իզմիրի մէջ: Միակ բանը որ կայ ժողովրդին մէջ առաջ է եկել բուռն ցանկութիւն լսելու:

Դաշնակցականները բացած են կլիւբ, ուր ամէն երեկոյ կը խօսին: Հնչակեանները կը խօսին իրենց կլիւբին մէջ, չհոգնելով ամէն Կիւրակի՝ եկեղեցին: Խօսքը շատ է, բայց գործը քիչ: Ժողովուրդը ընդհանրապէս դանդաղ եւ ծոյլ: Գալէս ի վեր կ'աշխատիմ կազմել զանազան խմբակցութիւններ եւ գործի մղել քիչ շատ կենսունակ տարրերը. կազմել տուի Թատերասիրաց խումբ մը, որը պիտի ներկայացնէ փոքր պիէսներ մեր ժողովրդի քաղաքական-յեղափոխական եւ հասարակական

կեանքէ առնուած: Որսորդաց խումբ գինավարժութեան համար: Մարմնամարզական խմբեր աշակերտներու մէջ: Սկսած եմ լուրջ ընկերութիւններ կազմել, որոնք նպատակը պիտի լլայ հայ լեզուն տարածելը ամբողջ Կիլիկիոյ մէջ: Այս ընկերութիւններուն պիտի մասնակցին ուրիշ կուսակցութեան մարդիկ եւ չհոգնելու:

Այստեղ կայ Ֆէլլաճ ըստուած տարր մը. կ'երեւի սրանք մնացորդն են հին փրկիկեցիներու: Այս տարրը նոյնպէս շատ հալածուած է թուրքերէ: Յօր առաջ հրաւիրուած էի ասոնց շէֆերէն մէկուն տունը, ուր գտայ այս ժողովրդէն մի քանի տասնեակ երեւելիներ: Մէկ ժամ խօսեցայ: Այնտեղ կազմակերպուեցան եւ 100 ոսկու մօտ դրամ հանգանակեցին: Շուտով բաց պիտի անեն կլիւբ մը: Հայերու հետ ասոնց (նիւսէյրիցիներու) յարաբերութիւնը շատ բարեկամական է եւ մինչեւ իսկ մտերմական: Իրենց կլիւբը պիտի բացուի հայերու շէնքին մէջ եւ լսարան-ընթերցարանի կից:

Վաղը կը մեկնիմ դէպի Սիս, ուր կը մնամ մի շաբաթ: Կը վերադառնամ այստեղ եւ Ալէքսանդրէթի ճամբով կը մեկնիմ Չոք-Մարզիմէն: Ուրկից եթէ առողջական վիճակս ներէ պիտի երթամ Սուէտիա մեր ընկեր Պրզ-տիկեանի հետ: Այնտեղից Պէյրութի գծով պիտի իջնեմ մինչեւ Հալէպ եւ թերեւս Այնթապ:

Չոք-Մարզիմէն մարդիկներ կ'երթան կու գան, ինչպէս Ձէյթունէն ուր կը գտնուի մեր ընկեր Ժիրայրը այս ըրպէս:

Իզմիրէն նամակ չեմ ստացել. կը յուսամ որ Մարը¹⁴ գոհ է այնտեղէն: Զգիտեմ կարողացա՞ն հանգանակութեան մնացած մասը փոխադրել ձեզ մինչեւ այժմ:

Առողջական վիճակս այս վերջին մի քանի օրեր բաւական գոհացուցիչ է: Կը յուսամ որ պիտի կրնամ ճամբորդութեան յոգնութիւններուն տոկալ:

Ձերմ բարեկեցութիւնով
Յ. ԳԱԼՖԱ

13.- Յարութիւն Գալֆայեան, Կիլիկիոյ հին գործիչներէն (Վահրամ). եղած էր ժընեւ. «Դոշակ» խմբագրութեան եւ Արեւմտ. Բիւրոյի գործակալ: Սահմանադրութեան հռչակումէն ետք գործիչային պարտականութեամբ անցաւ Իզմիր, Կիլիկիա եւ Փոքր Ասիոյ միւս քաղաքները:

14.- Մար - Միք. Տէր Մարտիրոսեան, նոյնպէս Կիլիկիոյ հին գործիչներէն, որ 1899-1905 տարիներուն կը գտնուէր Մարաշի բանտը. ազատ արձակուելով անցած էր Եգիպտոս, ապա ժընեւ: Այժմ կը գործէր Իզմիր: Ծանօթ է նոյնպէս թրքական բանտերու մասին «Դոշակ»ի մէջ լոյս ընծայած իր յօդուածաշարքով:

Փաստ. 953-27

5.- ԳԱԼՖԱՅԷՆ ՊՈԼՍՈՅ ՊԱՏ. ՄԱՐՄԵԻՆ

Սիւ, Յունւ. 28/8 Փետր. 1909

Սիրելիներ,

Աղանայէն գրած նամակս ստացած կը լինիք ցարդ: 10 օրէ ի վեր Սիւ եմ եւ կը զբաղուիմ տեղ. գործերով:

Այստեղ 3-4 ամիս առաջ կազմակերպութիւն մուտ գտած է, բայց յետոյ քայքայուած: Այժմ վերակազմուած է եւ գործի սկսած:

1) Տեղ. մարմին մը նշանակուած է, որ մի ժամանակ պիտի վարէ տեղական գործերը, մինչեւ որ ընկերները ստանան որոշ գիտակցութիւն:

2) Խմբերը վերակազմուած. խմբերու քանակի եւ տեղ. մարմնի կազմի մասին ձեզ կը տրուի մասնաւոր տեղեկութիւն:

3) Ինքնապաշտպանութեան գործին զարկ տալու համար ձեռնարկած եմ հանգանակութեան, որը տուաւ ցարդ (80) ութսուն օսմ. ոսկու արդիւնք:

- 4) Կազմուած են հետեւեալ կուլտուրական խմբեր:
 - ա.- Երգեցիկ խումբ
 - բ.- Թատերասիրաց
 - գ.- Երաժշտական
 - դ.- Գիշերուան դասախօսութիւններու
 - ե.- Տիկնանց ընկերութիւն, նպաստելու տեղ. աղջկանց վարժարանի, որ շատ խեղճուկ վիճակի մէջ կը գտնուի:
 - զ.- Մարմնամարզական խմբեր:
- Սկսած եմ կազմակերպել որսորդական եւ զինավարժական խմբեր:

Նկատելով որ Կիլիկիոյ հայութիւնը կորսնցուցած է իր մայրենի լեզուն եւ միշտ կը խօսի թրքերէն, Ատանայի մէջ, ինչպէս այստեղ, կ'աշխատիմ կազմել հայ լեզուն տարածելու նպաստող ընկերութիւններ:

Այստեղ կը մնամ 4-5 օր եւս, յետոյ կամ կը վերադառնամ Ատանա եւ Մէրսինի գծով կ'անցնիմ Չոք-Մարզուան եւ կամ ուղղակի ձեւով կը ճամբորդեմ այս վերջին տեղ, որ շատ կարեւոր է, եւ անկից կ'իջնեմ Հալէպ:

Առողջութիւնս բաւականին գոհացուցիչ է, միայն ստիպուած եմ թեթեւ սնունդ առնել, այլապէս կը վերադառնայ հիւանդութիւնը:

Խօսած եմ թուրքերու ներկայութեան, պիտի տամ երկրորդ կոնֆերանս միայն թուրքերու համար. մասնաւոր կը հրահրեն:

Կ. Պոլսէն՝ Պատասխանատուէն լուր չունիմ. Իզմիրէ գրած նամակներու չկրցան պատասխանել:

Մարէն ալ լուր չունիմ. Իզմիրեան թերթի մէջ իր մասին կը կարդամ:

Չգիտեմ պատրաստութիւններ կա՞ն Ընդհ. Ժողովի համար: Կովկասի դրութիւնը եւ Թիֆլիսի մէջ տեղի ունեցած ձեռքարկութիւններ շատ (ցա՞ւ) պատճառեցին: Չգիտեմ ինչ խնդիրի առթիւ մերոնք բանտարկուած են:

Հանդիպածս տեղերէն կը գրեմ: Կը յուսամ որ Ատանայի հասցէով կը գրէք ինձ, ինչ կը ղրկեն:

Ընկ. ջերմ բարեւներով
Յ. ԳԱԼՖԱ

Փաստ. 953-55

6.- ԳԱԼՖԱՅԷՆ ՊՈԼՍՈՅ ՊԱՏ. ՄԱՐՄԵԻՆ

Ալէքսանդրէտ 10/23 Մարտ 1909

Սիրելիներ,

Սիւնէն գրած նամակս կը յուսամ որ ստացած կը լինիք: Սսէն մեկնելէ առաջ երիտասարդ թուրքերու հետ սարքեցինք բողոքի միտինգ մը՝ Մամլոյնոր օրինագծին դէմ. խօսեցայ մինակ ես եւ քուէարկել տուինք ռեզոլուսիոն մը, որ հեռագրուեցաւ Պոլիս: Նոյն բանը կատարեցի Կարս [պագար]ի մէջ: Նախ այցելեցի գալմագամը եւ կառավարատնի պատշգամէն խօսեցայ հայերէ եւ թրքերէ խառն հասարակութեան մը. եւ բողոք-հեռագիրներ ուղղեցինք Պոլիս թէ նախարարութեան, թէ Պատգ. Ժողովի նախագահին, Դաշն. Պատ. մարմնին: Կարսի մէջ մեր ընկերներուն շրջանը կազմակերպելէ յետոյ Փետր. 23-ին (Ն. Տ.) հասայ Չոք-Մերզմէն: Այս շրջանի մէջ 3-4 ամիսներէ ի վեր մտել են հնչակեանները, սահմ.-առավարները, բայց մենք երբեք: Այս երկու կուսակցութիւններու կողմէ սարսափելի աղմուկ եւ հալածանք մեզի դէմ. առանց կարեւորութիւն տալու գործի ձեռնարկեցինք: Պատիկեանը, որ Ատանայէն եկել էր, նա էլ շուտ հեռացաւ՝ զգացուած մեզի եղած պաղ եւ հակակիր ընդունելութենէն: Մեզի համակիր երիտասարդութեան միջոցով ձեռնարկեցի հանդէս-ներկայացման մը, որ շատ յաջող անցաւ եւ տպաւորութիւնը մեծ: Հակակրութիւնն ու անտարբերութիւնը փոխուեցան համակրութեան եւ սկսեցին մեզ շրջապատել: Ձեռնարկեցի կազմ[ակերպ]ական գործին. տեղ. առժամանակուայ մարմին մը նշանակուած է: Մարմին կազմը փաստ մըն է, որ մենք շատ հաստատ եւ յուսալի կերպով տեղ բռնած ենք այս կարեւոր վայրին մէջ: Կը յուսամ որ ապագան իրաւունք կու տայ ինձի:

Այս կողմերը աւելի ուշացայ. բայց ի՞նչ արած. ժողովուրդը տգէտ, անփորձ եւ նախաձեռնութեան ոգիէն զուրկ: Պատասխանատուն հեռագրած էր Ատանայի, որ անմիջապէս Հալէպ անցնիմ: Այսօր այստեղից հեռագրեցի, վաղը կը ճանապարհուիմ դէպի Հալէպ, ուր գործերը խառնակ կ'երեւին մերոնց անփորձութեան եւ անտակտութեան շնորհիւ: Մտադիր եմ իջնել եւ Այնթապ, ուր Ամերիկեան կողէճը փակուել է՝ մեր ընկերներու եւ կողէճի վարչութեան ընդհարման հետեւանօք: Մանրամասները ինձ կը պակսին դեռ:

Իզմիրէն մեկնած ժամանակ քովս ունէի 180 ֆրանքի փող. ընկեր մը, որ ինձ կ'ընկերանայ Իզմիրէն ի վեր նրա փողէն ծախսեցի մինչեւ այժմ: Հալէպ կամ Պոլիս

վճարեցի 300 ֆր. ի չէկ մը. վերցուցէք այդտեղի Crédit Lyonnaisէն եւ նամակով (պատուիրուած) ուղարկեցէք անմիջապէս Հալէպ: Կ'երեւի այն կողմեր դեռ կ'ուշանամ 5-8 շաբաթներ: Չէքը պէտք է լինի վճարելի à l'ordre de H. Kalfaian (Alep).

Ռոստոմը Պարսկաստանէն գրած է, որ պարսիկներէ, թուրքերէ եւ հայերէ խառն ժողովներ սարքենք եւ հանգանակութիւններ կատարենք ի նպաստ Պարսկ. յեղափոխութեան: Հալէպ կան բաւականաչափ պարսիկներ: Կը յուսամ որ այնտեղ յաջողիմ: Արդէն ունիմ վրաս զանազան յանձնարարականներ զինուորականներու, եւ քաղաքական-վարչական անձնաւորութիւններու, որոնք տրուեցան ինձ նաւու մէջ, Ատանա եւ այլն:

Մարը ցարդ հասած ըլլալու է: Սապահ Գիւլը Իզմիր հասեր է. լիբը իր շուրջ հաւաքեր է մեր մէջէն վտարուած անպիտան տարրերը:

Մնաք բարով եւ համբոյրներ
Յ. ԳԱԼՖԱ

Հնչակեան Մեծ-կեդրոնի գործունէութեան եղանակի մասին փաստ մը: Քանի մը օր առաջ նամակ ստացայ Սսէն: Նամակագիրն է կաթողիկոսական փոխանորդ Ղեւոնդ վարդապետ:

Ահա նամակի այն կէտը: «Անցեալ փոստայով հնչակեանները (Մուրատ) այստեղի մասնաճիւղի անուան խոշոր կնիք մը եւ շատ մը հրահանգներ էին ղրկած, մինչդեռ հոս գրեթէ հնչակեան չկայ, ինչպէս տեսաք արդէն եւ դժբախտաբար այնպիսի մէկու մը ղրկած են, որ ազգային զգացումէն եւ ոգիէ բոլորովին զուրկ է: Շիտակը սա մեր Մուրատին խելքին ըսելիք չկայ. Bravo իրեն»:

Հալէպ կը սպասեմ ձեր մանրամասն նամակին: Գրեցէք թէ ինչ էք մտածում եւ ինչ կարգադրութիւններ ունիք Ընդհ. Ժողովի մասին: Սիմոնէն¹⁵ նամակ եմ ստացած, որով այնքան էլ նպատակայարմար չեն գտնում «Խորհուրդը», որի մասին դուք մտածել էք: Ես միջոցներ ձեռք առած եմ շրջանական ժողով մը գումարել տալ, որուն պիտի մասնակցին Ատանայի եւ Հալէպի նահանգի բոլոր դաշնակցական մարմինները: Տեղը կ'որոշենք երբ ես կը լինեմ Հալէպ:

Ատանացուց ըսած էք, որ մեր հրատարակութիւններու արժէքը փոխադրեն անմիջապէս Պոլիս: Հրատարակութեանց հարցը շատ կարեւոր է. բայց դեռ ըմբռնելու պատրաստ տարրը շատ քիչ է այս կողմեր:

Յ. ԳԱԼՖԱ

15.- Սիմոն Չաւարեանէն:

Փաստ. 953-65

7.- ԾՈՑԻՉ ԿՈՄԻՏԵԷՆ ՊՈԼՍՈՅ ՊԱՏ. ՄԱՐՄԵՒՆ

1909 Ապրիլ 6[?], Մոսկ

Հ.Յ.Դ. Կ. Պոլսի Պատասխանատու մարմին Յարգելի ընկերներ,

Քաղաքական ներկայ տազնապին առթիւ քաղաքիս մէջ գտնուող իթթիհատականները համերաշխ ոգի մը ցուցունելու տրամադիր են. մինչեւ անգամ մեր ընկերներէն երկու անձեր անոնց ընթերցատունը երթալով մասնաւոր տեսակցութիւն մը ունեցած են: Այդ տեսակցութեան եզրակացութիւնը եւ ամփոփոյթըր սա է թէ մենք օսմանցիներս պարտինք ազատութեան եւ հետեւաբար սահմանադրութեան պահպանման համար միասին աշխատիլ ձեռք ձեռքի տուած. մեր ընկերներն ալ համերաշխական ոգի մը ցոյց տուած են. այս մասին Պատասխանատու մարմնոյդ խորհուրդներուն եւ հրահանգներուն կը սպասենք:

Ազնիւ ընկերներ, հաճեցէք մեզ օրը օրին հարկ եղած հրահանգները եւ տեղեկութիւնները հաղորդել. մեզ դրկել նաեւ 5 պրակ անդորրագիր եւ պաշտօնական թուղթ կոմիտէի եւ ենթակոմիտէի, այս վերջինը քիչ մը աւելի շատ վասնզի հինգ ենթակոմիտէներէ կը բաղկանայ Մոսկէն դուրս բոլոր շրջանը:

Այս առթիւ մեր ընկերական սիրալիր բարեւներ

Հ.Յ.Դ. ԾՈՑԻ ԿՈՄԻՏԵ

Փաստ. 953-81

8.- ԱԶԳԱՆՈՒԷՐԷՆ՝Ս Ս. ՉԱՒԱՐԵԱՆԻՆ

Այնթապ 2/15 Մայիս 1909

Մեծապատիւ Տիար Սիմոն Չաւարեան, Կ. Պոլիս

Սիրելի ընկեր

Կը յուսանք հանգիստ էք եւ Պոլսոյ վերջին դէպքերն անվտանգ անցուցիք¹⁷:

Ձեզի ծանօթ ըլլալու է թէ տեղւոյս մեր մարմնոյ ձեռք Ազգ. Գոլէճի մը հիմնարկութեան ձեռնարկուած է, եւ այս՝ միայն Կիլիկիոյ շրջանակի Ազգ. կրթութեան կարեւոր կեդրոնի մը պակասը լրացնելու եւ Գոլէճի (Ամերիկեան Գոլէճ) մեր ընկերներու դէմ մղած պայքարէն ծագում առած է, քանզի սոյն հաստատութիւնը ինչպէս հին ռեփոմիս օրով կը վտարէր մեր ոյժերն իր ծոցէն, նոյնպէս հիմա աւելի կ'ուզէ տեսնել Գոլէճը առանց յեղափոխական շարժումի. Ձեզի ծանօթ է այս Յունուարի ցաւալի դէպքը որ (85) երիտասարդներ (30ի

չափը մեր ընկերներին) Գոլէճը դուրս ձգեց իր շէնքէն եւ կործանեց գրեթէ մեծ մասին ապագան: Այս պարագաներու տակ էր որ մենք ստիպուած էինք սոյն կերպ ձեռնարկի մը ձեռնարկելու: 3000 լիրայի տրամադրելի գումար մը արդէն պատրաստ է եւ պատրաստուելու վրայ: Կը յուսանք աւելի եւ շատ մը նոր հասոյթներ ձեռք պիտի կրնանք բերել:

Նիւթական ուժի չափ եւ աւելի կարեւորութիւն ունի բարոյական ոյժն. մեզի կը պակսին կարող դասատուներ. արդ մենք կը փափաքինք որ այս մասին ձեր թելադրութիւններն ընելով մեզ, բարեհաճիք ստանձնել դասատուութեան պաշտօնն. աւելի կը փափաքինք որ դասատուներէն մին ալ ըլլար ընկեր Ա. Ահարոնեան: Միւսներն դուք կարող էք գտնել. եւ եթէ գալու ըլլաք առաջին տարիին 2-3 կարգերու (հաւանական է 50/60 աշակերտներէ ըլլայ) համար աշխատելու տարեկան քանի ոսկի ամսականով կրնաք գոհ մնալ: Խորհելով կազմակերպական օգուտներն եւ մեր դրամական անձուկ վիճակն նկատողութեան կ'առնէք. վստահ Ձեր անձնագոհութեան՝ սոյն նամակը կ'ուղղենք Ձեզ: Կիլիկիոյ շրջանի հայ Բարձրագոյն կրթարանի մը չգտնուիլն

16.- Ազգանուէր, Այնթապի կոմիտէին օգտագործած ծածկանուցն է:
17.- Ակնարկութիւն Մարտ 31ին Ապտիւլ Գամիտի յետադիմական յեղաշրջումին եւ այդ առիթով ծագած խռովութեանց:

միշտ տուածել կու տայ այս կողմի ժողովուրդին:

Կիլիկիոյ կարեւոր կեդրոններէն մին Ատանա եւ միւսը Այնթապ էր. բայց ցաւօք սրտի կը յիշենք թէ հայակեր ռեփոմը արդէն ամէն կերպով Ատանան կործանեց նոյնպէս Ազգ. ունէ ձեռնարկի յոյս: Արդ կը մնայ միայն Այնթապ, որ պէտք է անպատճառ նոյն ձեռնարկն ընէ. մենք ունինք պատրաստ հող (ժողովուրդ) եւ մեր ժողովուրդն պիտի շինէ նոյն կենարար շէնքը: Ինչպէս տեսնուեցաւ, վերջի օրերս Ատանայի ի նպաստ հանգանակուած դրամ եւ հազուատեղէնէ, 2000

լիրայէն աւելի դրամ եւ հազուատ ժողուեցան: Միայն կը պակսի Ձեզ պէս անձնուէր գործող մը ժողովուրդի վրայ. այս մասին ձեր կարծիքն կ'ուզենք տեղեկանալ:

Հ.Յ.Դ. ԱՅՆԹԱՊԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԵ ԱԶԳԱՆՈՒԷՐ

Նամակի պատասխանն շուտափոյթ գրեցէք. քանզի յառաջիկայ Սեպտեմբերէն սկսեալ պիտի բացուի դրպրոցն:

Փաստ. 953-136

9.- ՀՈՂԱԲԼՈՒԷՆ ՊՈԼՍՈՅ ՊԱՏ. ՄԱՐՄԵՒՆ

5/18 Սեպտեմբեր 1909, Հողաբլուր

Սիրելի ընկերներ Պատասխանատու մարմնի Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Պոլիս

Ընկերներ,

Ստացանք Ձեր 25 թուակիր գրութիւնը: Այս շաբթուան Ազատամարտի մէջ կարդացինք Դաշնակցութեան եւ Միութիւնի Յառաջդիմութիւնի կոմիտէի համերաշխութեան շրջաբերականները. մանրամասնութիւնը կը սպասենք փոստով:

Շաբթուան մէջ Պատրիարքարանէն Առաջնորդարանս հեռագրէ մը տեղեկացանք թէ՝ Ազգ. Կեդր. վարչութիւնը Կիլիկեան որբերը պատսպարելու եւ դաստիարակելու համար որբանոցի մը հիմնարկութիւնը որոշած է Այնթապու մէջ իբր յարմարագոյն վայր. եւ նորա ղեկավարութիւնը պիտի յանձնէ եղբր տեղական վարչական ժողովներու: Յիրաւի քաղաքս ունի իր բազմակողմանի յարմարութիւնները եւ ամբողջ Կիլիկիոյ մէջ չկայ քաղաք մ'որ կարենայ անոր չափ գոհացնել այն պայմանները որ կը պահանջուին սոյնօրինակ հիմնարկութեան մը համար:

Սակայն, հոս գոյութիւն ունեցող վարչական ժողովները, որոնք վերին հսկողութիւնը պիտի ստանձնեն բնականաբար հիմնուելիք որբանոցին, առանց բացա-

ուութեան կուսակցական անարգ ոգուով լի, կղերի ձեռքին տակ հլու գործիք անճարակներէ կը բաղկանան, որոնք անտարակոյս չարաչար պիտի գործածեն իրենց տրուած վստահութիւնը, իրենց համամիտներուն յանձնելով դաստիարակութեան պաշտօնը եւ դրամական հաշիւները:

Արդ, կը կարծենք թէ նուիրական պարտականութիւն մը կատարած կը համարենք ծանօթացնելով Ձեզ ներկայ գրութեամբ մեր ազգային ղեկավարներու խկական արժանիքը եւ կը խնդրենք Ձեզմէ որ Ձեր իրաւասութեան չափով զգուշացնէք Կեդր. վարչութիւնը այսպիսի ձախող ձեռնարկի մը տնօրինութենէ եւ միակ միջոցը գոր կ'առաջարկենք Ձեզ հետեւեալն է. — Առանց գործը յանձնելու տեղական վարիչ ժողովներու կամայականութեան, ընտրել տալ վարիչ մարմին մը տեղացի չէզոք տարրերէ բաղկացեալ, որոնց համար կը խոստանանք գանտիտաներ առաջարկել ի պահանջել հարկին: Եւ եթէ կարելի է, վարիչ մարմիններու վաւերացումը Պատրիարքարանի իրաւասութեան տակ թող իյնայ եւ ոչ կաթողիկոսարանի. սա ալ իր կարեւորութիւնը ունի: Խնդրելով պատշաճագոյն տնօրինութիւն

Մնամք ընկերական բարեւներով Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀՈՂԱԲԼՈՒԷՐԻ ԿՈՄԻՏԵ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ՔԼՈՒԽ XIII

Ա.- ՎԻՇԱՊ – Կ. ՊՈԼԻՍ
Բ.- ՈՍԿԵՀԱՆՔ – ԻԶՄԻՐ

Կ. Պոլիսը ծանօթ՝ Վիշապ, Լիս, Կոուածադիկ ծածկանուններով, հանդիսացած է Հ. Յ. Գաշնակցութեան հնագոյն գործադաշտերէն մէկը: 1893 թուականէն հոն մուտք գործած եւ ընդատակեայ գործունէութիւն յառաջացուցած են Յովհ. Եուսուֆեան (Մելիք), Վարդգէս Սերենկիւլեան, Արշակ Վոսմեան եւ այլն – ասոնց շունչին տակ ալ կազմաւորուած էր երիտասարդ եւ գաղափարապաշտ սերունդ մը, որուն փայլուն ներկայացուցիչներէն են Արմէն Գարօ, Բարգէն Սիւնի, Հրաչ Թիրեաքեան, Խաչիկ Գնունի, Վահագն Տաթևեան եւ շատ ուրիշներ: Օսմանեան մայրաքաղաքին մէջ կուսակցութեան գործունէութիւնը յատկանշուեցաւ շարք մը յանդուգն ձեռնարկներով, որոնցմէ են՝ մատնիչներու եւ լրտեսներու տեռորէն սկսեալ մինչեւ Օսմանեան դրամատան գրաւումը, Սամաթիոյ հերոսական կռիւները, Սուլթան Համիտի ահաբեկման փորձը: Իւրաքանչիւր արարքի կը հետեւէին ոստիկանական խուզարկութիւններ, ձերբակալութիւններ, բանտարկութիւններ եւ իրբեւ դամոկլեան սուր կը թեւածէր զանգուածային ջարդերու արհաւիրքը: Այդ պայմաններուն մէջ աւելորդ էր անշուշտ խորհիլ այլ վայրերու օրինակով կազմակերպական ցանց ստեղծելու մասին: Այսուհանդերձ, յեղափոխական կորիզները կը գոյատևէին եւ անոնց վրայ է որ, Սահմանադրութեան հռչակումէն ետք նոր հիմերու վրայ պիտի վերակազմուէր Վիշապի Կ. Կոմիտէութիւնը, իր իրաւասութեան սահմաններուն մէջ առնելով Պոլիսն ու հայաշատ ընդարձակ շրջանը եւ Թուրքիոյ եւրոպական երկրամասը:

Գրեթէ միեւնոյն պայմաններուն մէջ կը գտնուէր նաեւ կայսրութեան երկրորդ մեծ քաղաքը՝ Իզմիր (Ռուկեհանք), որ ցուցական-դաւադրական գործունէութեան համար նկատի առնուած իբրեւ օժանդակ շրջան Պոլսոյ: Հո՛ս, քիրախ ընտրուած էին ոչ միայն թուրք պետական, այլեւ եւրոպական դրամադուլիսի կեդրոնները, – դրամատուն, հանքերու շահագործման եւ ճարտարարուեստի հիմնարկներ: Նախաձեռնուած գործողութիւնները միշտ չէ որ յաջող ելք կ'ունենային, բայց հետեւանքը նոյնն էր, – ոստիկանական խստագոյն հետապնդումներ, ձերբակալութիւն-բանտարկութիւններ:

Ազատական կարգերու յայտարարութենէն անմիջապէս ետք, Պոլսոյ Պատ. մարմնի ջանքերով շարք մը շրջուն գործիչներ (Գալֆայեան, Մար, Գասպար Իփէկեան, Հայկ Բաթրաբեան) անցան Իզմիրի շրջան եւ լծուեցան կազմակերպութեան վերականգնումի գործին:

Փաստ. 876-14

Ա 1.- ՈՐՈՇՈՒՄՆԵՐ Հ.Յ.Գ. ՊՈԼՍՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

1909 Օգոստոս 5 – 1909 Օգոստոս 14

Հ.Յ.Գ. Կ. Պոլսոյ պատասխանատու մարմնոյն կողմէ Շրջանային ժողովի մասնակցելու հրահրուողական ըլլալով հետեւեալ 15 շրջանները, մինչեւ Օգոստոս 5 այդ հրահրութիւն պատասխանած են:

- 1.- Պրոսա – Գ. Իփէքեան
- 2.- Գուրտպելէն – Մշակ
- 3.- Արմաշ – Կաթ
- 4.- Պարտիզակ – Արտաւազդ
- 5.- Իզմիր – Միրկաթին
- 6.- Ատափազար – Վաղարշ
- 7.- Էտիրնէ – Վահան
- 8.- Ռոտոսթօ – Տոքթ. Մալաքեան
- 9.- Բերա – Արսէն Սիւնի
- 10.- Բուն Պոլիս – Ատրուշան
- 11.- Իւսկիւտար – Ազարիկ
- 12.- Պանտրմա – Պարոյր Հայկազն

Կը բացակայէին Չէնկիլէր, Պիլեճիկ, Սէօլթօզ: Օրինական 2/3-ի մեծամասնութիւնը գոյացած ըլլալով ժողովը սկսաւ իր աշխատութիւններուն, ներկայութեամբ Պատասխանատու մարմնոյն կողմէ նշանակուած ներկայացուցիչի մը – ընկեր Վահագնի: Ժողովը ձեռնարկեց դիւանի ընտրութեան. փոխադարձ հաւանութեամբ ժողովին նախագահ նշանակուեցաւ ընկեր Վահագն եւ քարտուղարներ ընկեր Միրկաթին եւ Արսէն Սիւնի:

- 1.- Որոշուեցաւ իբրեւ խորհրդակից ժողովին հրահրել ընկերք Շահրիկեան, Վաղարշ, Լեւոն, Գեղամ: Ժողովը իր օրակարգը կազմեց հետեւեալ կերպով.
 - I - Տեղեկագիրներու ընթերցում
 - II - Մասնախումբերու կազմութիւն
 - III- Ընդհ. ժողովի օրակարգի վիճաբանութիւն
 - IV- Ընդհ. շրջանի կազմակերպական կանոնաւորում
 - V- Պատգամաւորի ընտրութիւն
 - VI- Կեդր. Կոմիտէի ընտրութիւն
 - VII- Ընդհ. շրջանի ինքնապաշտպանութիւնը

1.- Նախ կարգաւորուեցաւ Պրոսայի տեղեկագիրը. տեղեկութիւններու եւ կարծիքներու փոխանակութենէն ետք, ժողովը դիտելով որ նոյն տեղի ընկերներու յեղափոխական ոգին սկսած է թուլանալ՝ կ'որոշէ հիմէն վերակազմել նոյն շրջանը:

2.- Պարտիզակի տեղեկագրէն եւ պատգամաւորին բերանացի բացատրութիւններէն ժողովը վերահասու եղաւ թէ նոյն շրջանը կը գտնուի գոհացուցիչ վիճակի մէջ:

3.- Իզմիրի վիճակը դատուեցաւ բոլորովին անգոհացուցիչ եւ որոշուեցաւ զայն վերակազմել:

4.- Էտիրնէն գտնուեցաւ գոհացուցիչ վիճակի մէջ, այլ պարտք դրուեցաւ պատգամաւորին վրայ վերադարձին կատարել ժողովին տուած հրահանգը՝ ինքնապաշտպանութեան միջոցներու բարեփոխումի մասին:

5.- Բերայի շրջանին տեղեկագրէն եւ պատգամաւորին բերանացի բացատրութիւններէն՝ ժողովը նոյն շրջանին վիճակը գոհացուցիչ գտաւ, այլ յանձնարարեց ուժ տալ Կարմիր խաչի խումբերու կազմութեան:

6.- Բուն Պոլսոյ մարմիններու տեղեկագրէն ժողովը տեղեկացաւ որ այդ մարմիններուն պակաս է յեղափոխական ոգին որուն հետեւանքով կը գտնուին անկերպարան վիճակի մէջ, եւ նկատի առաւ նոյն շրջանէն ուղարկուած բողոքագրերը:

7.- Կարգաւորուեցաւ Լեւոնյանջի կոմիտէին (Իւսկիւտար, Գատր-գիւղ, Գարթալ) տեղեկագիրը եւ պատգամաւորին բերանացի ծանօթութիւնները՝ Մարտ 31-ի՝ շարժումի ատեն ձեռք առած ինքնապաշտպանութեան միջոցներու կիրարկումը եւ գտաւ գոհացուցիչ: Բայց հարկ տեսաւ հրահանգ տալ պատգամաւորին հոգ տանիլ Կարմիր խաչի խումբերու կազմութեան:

8.- Արմաշի տեղեկագրէն ժողովը վերահասու եղաւ թէ նոյն շրջանը կը գտնուի գոհացուցիչ վիճակի մէջ:

9.- Ռոտոսթոյի պատգամաւորը գրաւոր տեղեկագիր բերած չլինելով, տուաւ իր բերանացի տեղեկութիւնները ու իր առաջարկները: Ժողովը այդ բացատրութիւններէն եւ կարգ մը նամակներէ տեղեկացած բոլոր իրադարձութիւններուն, որոշեց գրել նամակ Ռոտոսթոյի կոմիտէին եւ ստիպել որ իր եւ տեղւոյն մարմիններուն (Կարմիր խաչի ալ միասին) հաշիւները փոսթով հասցնեն Շրջ. ժողովին:

10.- Գուրտպելէնի տեղական կոմիտէին տեղեկագրէն ժողովը համոզուած գոյացուց թէ նոյն շրջանը բաւարար վիճակ մը չի ներկայացներ:

11.- Ժողովը տեղեկանալով Ատաբազարի Կղզիաչէն

1.- Անարկութիւնը Սուլթան Դամիտի կողմէ սահմանադրական կարգերը տապալելու եւ բռնատիրութիւնը վերահաստատելու փորձին մասին է: Թուականը տրուած է իրն տոմարով, որ 13 օրով ետ կը մնայ նորէն (13 Ապրիլ):

կոմիտէին գործառնութեանց՝ գտաւ գոհացուցիչ: Մասնաւոր գոհունակութեամբ դիտուեցաւ որ տեղւոյն մանարաններու 800-ի չափ բանուորուհիները կազմակերպուած են նոյն կոմիտէին ջանքերով:

12.- Պանտրմայի ներկայացուցիչին տուած տեղեկութիւններէն՝ ժողովը համոզուած գոյացուց թէ նոյն շրջանը կը ներկայացնէ բաւարար վիճակ մը, այլ սակայն հաշիւները դեռ հասած չըլլալով: Ինչպէս Պանտրմայի նոյնպէս եւ այն վայրերու որոնց հաշիւները դեռ չեն հասած, յանձնեց հաշուեցնել մնալուն յանձնախումբին ի ջննութիւն: Նոյնպէս նկատելով որ՝ Պանտրմայի տեղական կոմիտէն թոյլ գործունէութիւն մ'ունեցած է, կ'որոշէ հրաւիրել Կեդր. կոմիտէն վերակազմելու այդ մարմինը:

1) Դաշնակցութիւնը եւ երիտասարդ թուրքերը.— Երկար վիճաբանութիւններէ յետոյ ժողովը 2-ի դէմ 9 ձայնով ընդունեց սա բանաձեւը.

«Նկատելով՝ որ երիտասարդ թուրքերը եւ մասնաւորապէս Իթիթիհատ եւ Թէրազզը կուսակցութիւնը ամենամեծ պատուարն է Ռէպաբլիկանական սեւ ուժերու դէմ եւ վճռականապէս կոչուած է հաստատել սահմանադրական լայն կարգեր իր արտադրելիք ազատական ուժերով:

«Նկատելով՝ որ հայութեան համար կենսական է ամէն բանէ առաջ սահմանադրական կարգերու հաստատումը թէ իբրեւ հայ եւ թէ իբրեւ օսմանցի, որչափ ատեն որ Իթիթիհատ եւ Թէրազզը օսմանցիներու հաւասարութեան եւ զանազան ազգերու ինքնորոշութեան ուղղութեամբ գործէ, Դաշնակցութիւնը, իբրեւ սահմանադրութեան ջերմ կուսակից եւ կոչուած պաշտպանելու օսմանեան զանազան ազգութիւններու շահերը ընդհանրապէս,

«Պէտք է համերաշխաբար աջակցի Իթիթիհատ-Թէրազզ-ին, անկեղծօրէն ոյժ տալով անոր գործունէութեան»:

2) Երկրորդ յօդուած.— Մեր դիրքը սահմանադրութեան հանդէպ.— Կուսակցութեան օրինականութեան (légalisation) հարցը.— Ընկերակցութիւններու հրդ յօդուածէն ետք մեր դիրքը.—

Որոշում 3-ի դէմ 7 ձայնով.

«Նկատի ունենալով որ արդի Օսմ. սահմանադրութիւնը հակառակ իր պոլիթոսական էութեան եւ բոլոր բացասական կողմերուն, այնուամենայնիւ փոքր քայլ մ'է դէպի մեր վերջնական նպատակին իրագործումը, Դաշնակցութիւնը պիտի ջանայ ամէն կերպով պահպանել զայն, մնալով սակայն իւրեւելի շողի վրայ, եւ լեկալ գործունէութենէ օգտուելով այնչափով միայն, որչափով որ կը թոյլատրեն տիրող պայմանները»:

3) Երրորդ յօդուած.— Ազգայնական հարցը.—

Որոշում. «Դաշնակցութիւնը, իբրեւ յեղ. ընկերակրական կուսակցութիւն, կը կռուի այն բոլոր բռնութիւններուն դէմ, որոնք կը սպառնան ազգի ինքնորոշման իրաւունքներուն»:

Մեր դիրքը դէպի միւս յեղ. կուսակցութիւնները եւ ազգութիւնները.—

Այս յօդուածը իր բազմակողմանի հանգամանքին պատճառաւ բաժնուեցաւ երեք հարցի.

1.- Մեր դիրքը հնչակեան կուսակցութիւններուն հանդէպ

2.- Մեր դիրքը միւս յեղ. կուսակցութիւններու հանդէպ

3.- Մեր դիրքը միւս ազգութիւններուն հանդէպ

Տրուեցան հետեւեալ որոշումները 3-ի դէմ 8 ձայնով

Ա. որոշում.— «Նկատի ունենալով որ հնչակեանները մեզ չեն ներշնչեր՝ իբրեւ կուսակցութիւն՝ հիմնական վստահութիւն, նկատի ունենալով որ մեր եւ անոնց մէջ կան խորունկ տարբերութիւններ պատմական՝ ծրագրային եւ կազմակերպական ձեւի տեսակէտով, ժողովը կը գտնէ որ միութիւն մը անոնց հետ անկարելի է: գալով համերաշխութեան՝ ժողովը կը ցանկայ որ դաշնակցական մարմինները կարելի եղածին չափ բարեմիտ տրամադրութիւն ունենան այդ մասին եւ ջանան զգուշաւոր կերպով սահմանափակել հնչակեան կուսակցութեան հետ գործունէութիւնը ազգ. ճգնաժամային ատեններու համար միայն:

«Այս որոշումը կը պատշաճի հնչակեան կուսակցութեան բոլոր բաժանումներուն»:

Բ. որոշում.— «պահպանել բարուք յարաբերութիւններ առհասարակ բոլոր սահմանադրական տարրերու եւ կուսակցութիւններու հետ եւ ամէնչէն աւելի մօտիկ կերպով անոնց հետ մանաւանդ, որոնք իրենց քաղաքական աշխարհահայեացքով կը մօտենան մեր ծրագրային դաւանանքներին:

Գ. որոշում.— Դաշնակցութիւնը ինչպէս ասկից առաջ նոյնպէս եւ այսուհետեւ կը ձգտի միշտ համերաշխ եւ բարուք յարաբերութիւններ մշակել շրջակայ ազգութիւններու հետ, ջանալով շրջահայեաց ու զգուշաւոր ընթացք մ'ունենալ հանդէպ անոնց որոնք իրենց քաղաքակրթական գարգացման տեսակէտով բաւականաչափ վստահութիւն չեն ներշնչեր»:

3) Հինգերորդ յօդուած.— Դաշնակցական պատգամաւորներու գիտելիքները խորհրդարանին մէջ: Եւ Երկրորդ յօդուածի մէջ եւ գուրքը:

Որոշում. «Դաշնակցական պատգամաւորները պարտաւոր են սկզբունքային հարցերու մէջ մեր ծրագրի սկզբունքներու համաձայն գործել խորհրդարանի մէջ թէ դուրսը եւ պահանջուած ատեն Եւրոպայի միւս կուսակցութիւններու հետ՝ փոխադարձ զիջողութիւն»:

ներով՝ եթէ մեր սկզբունքներուն չեն հակասեր: Կենսական հարցերու մէջ առնելով մարմիններու կարծիքն ու հաւանութիւնը»:

Վեցերորդ յօդուած.— Կուսակցութեան վերաբերմունքը դէպի ազգ. կուլտուրական հաստատութիւնները. մամուլ, գիրք, դպրոց, լսարան եւ այլն եւ Մարմինները.— Պատրիարքի եւ կաթողիկոսի ընտրութեան հարցը:

Որոշում. «Դաշնակցութիւնը իբրեւ յեղ. եւ սոցիալիստ կուսակցութիւն, պարտի զբաղուիլ ազգ. կուլտուրական յեղափոխութեամբ:

Բայց նկատելով որ՝ մեր շարքերը տակաւին հասունցած չեն այնքան, որ կարենան ուղիղ տաքտիկով մը շարժիլ:

«Նկատելով նաեւ որ ինքնապաշտպանութեան եւ կուսակցութեան այլ պարտականութիւնները թոյլ չեն տար տրամադրելի ոյժերը բաժնելու,

Անհրաժեշտ կը նկատենք մեր սա բանաձեւը ներկայացնել մեր ընկերների շարքերուն,

«Դաշնակցութիւնը իբրեւ կուսակցութիւն ուղղակի կերպով չպէտք է միաջմտէ ազգ. կուլտուրական եւ այլ հաստատութիւններու գործերուն, ինչպէս նաեւ պատրիարքներու եւ կաթողիկոսներու ընտրութեան, բայց անհատապէս ընկերները կուլտուրական հարցերուն մէջ բարոյապէս պարտաւոր են գործելու, ղեկավարուելով Դաշնակցութեան սկզբունքներով»:

Դրդ յօդուած.— Մեր դիրքը եւ վերաբերմունքը ժողովրդին ինքնապաշտպանութեան պահանջներուն հանդէպ:

Որոշում.— Միաձայնութեամբ ընդունուած:

«Նկատելով որ նոյնիսկ սահմանադրական ռեփրի տիրապետութեամբ, չէ դադրած ռէպաբլիկան տարրի գործունէութեան միջոց կազմել տգէտ խուժանը գրգռելը եւ զանազան ազգերու միջեւ խռովութիւն ու կոտորած յառաջացնելը,

Երջ. ժողովը տակաւին անհրաժեշտ կը նկատէ ինքնապաշտպանութիւնը հայ ժողովրդին համար:

Նկատելով որ Հ.Յ.Դ.ը մինչեւ հիմակ ուղղակի եւ անուղղակի միջամտած եւ օժանդակած է ինքնապաշտպանութեան եւ այսպէսով փորձառութիւն եւ միջոցներու հմտութիւն ստացած:

Ժողովս որոշեց որ Հ.Յ.Դ.ը օժանդակէ ինքնապաշտպանութեան՝

- ա) Պրոպականդով
- բ) կազմել տալով գուտ ժողովրդական-անկուսակցական ինքնապաշտպանութեան մարմիններ եւ ֆոնտեր.
- գ) իր փորձառութեամբ՝ օգնել գէնքի հայթայթման, հիմնելով կենտրոնական Զեֆոն² մը, իր ճիւղաւորում-

ներով երկրի ամէն կողմերուն մէջ եւ անոր ղեկավարութիւնը յանձնելով կազմակերպութեան անդամներէն անոնց՝ որոնք ամէնչէն փորձառուներն են այդ գործին մէջ:

դ) Դաշնակցութիւնը պիտի ստանձնէ ինքնապաշտպանութեան ղեկավարութիւնը անակնկալ պէտքերու պարագային»:

Ութերորդ յօդ.— Մեր դիրքը դէպի ռուս կառավարութիւնը եւ ռուս կուսակցութիւնները:

Միաձայնութեամբ կ'ընդունուի հետեւեալ բանաձեւը. «Երջ. ժողովը կը ցանկայ որ Դաշնակցութիւնը՝ առանց առաջնորդ-ղեկավարի դեր ստանձնելու համառուական յեղափոխութեան մէջ՝ վերսկսի այնուամենայնիւ ակտիւ յեղ. գործունէութիւն կովկասի մէջ, տեւորով պատժելով մանաւանդ ցարիզմի ճիւղա պաշտօնեաները:

Միւս կողմէ Դաշնակցութիւնը պէտք է շատ շատ համաձայնութեան գայ էսերներու եւ ուրիշ ռուսական յեղ. կուսակցութիւններու հետ, յառաջացնելու համար ընդհանրական բնոյթ ունեցող շարժումներ:

Պոլսոյ Երջ. ժողովը այս նպատակներու իրագործման համար կը տրամադրէ մարտական եւ մտաւորական ոյժեր»:

Իններորդ յօդ.— Մեր դիրքը Պարսկաստանի շարժման հանդէպ:

Բանաձեւ.— «Նկատելով որ Պարսկաստանի մէջ եւս հաստատուած են սահմանադրական կարգերը, մեր դիրքը պէտք է լինի օժանդակել սահմ. կարգերու հաստատման ու պահպանման, այնչափով՝ որչափով որ պիտի աշխատինք Տաճկաստանի մէջ»:

Երջանային ժողովը գրեթէ խորհրդակցական նիստ գումարելով, կազմակերպական կանոններու մասին իր ընդհանուր դիտողութիւնները կ'ընէ, կարծիքներու փոխանակութեամբ եւ ի միջի այլոց հետեւեալ բանաձեւը կը քուարկէ մեծամասնութեամբ.

«Ժողովը ցանկալով իր կազմերը աւելի ամուր հիման վրայ դնել ու սեղմել իր շարքերը, կ'ընդունի նախապատրաստական վեցամսեայ շրջան մը բոլոր նոր ընկերներու համար, նորեկին յեղափոխական ըմբոստողին ու նկարագիրն հասկանալու եւ պատրաստելու համար գայն»:

Երջ. ժողովը անցնելով ուղղակի իր օրակարգին, կը սկսի կազմակերպական կանոններու վիճաբանութեան:

Դաշնակցութեան ընդհ. կանոնագրի յօդուածները մի առ մի կարդացուելով մինչեւ Յրդ յօդուածը միաձայնութեամբ կ'ընդունուին: Իսկ Դրդ յօդուածի առի-

2.- Ձիմուորական ֆոնդ, զէմքի եւ ռազմաքերքի գնման եւ բաշխման համար յատուկ ֆոնդ եւ այդ նպատակով ստեղծուած մարմին:

թով, ժողովը, երկար վիճաբանութիւններէ յետոյ, մեծամասնութեամբ կը ցանկայ Թուրքիոյ մասին թոյլատրուած շեղումները ինչ ինչ բարեփոխումներով ընդունիլ: Այդ բարեփոխումները, սակայն, իրենց կարգին ընել կ'որոշէ:

10րդ յօդուածի առիթով, ժողովը կ'ընդունի որ, տեղական պայմաններու համաձայն մարմինները (ենթակոմիտէ, կոմիտէ եւայլն) կրնան բաղկանալ մինչեւ 7 անդամէ:

11-28 յօդուածները միաձայնութեամբ կ'ընդունուին:

27րդ յօդուածին առիթով, ժողովը 3-ի դէմ 7 ձայնով կ'ընդունի եւ անհրաժեշտ կը նկատէ որ Կեդր. Կոմիտէն ստիպուած չլլայ ընկերներու իսկական անուններու ցանկը ղրկելու Բիւրոյին, այլ անոնց կեղծ անունները միայն:

28-35 յօդուածները միաձայնութեամբ կ'ընդունուին:

36րդ յօդուածին մէջ ժողովը աւելցուց սա մասը «զուտ կազմ. ծախսերու»: հետեւաբար այդ յօդուածը կը գրուի սա եղանակով. «կոմիտէն իր դրամական հատոյթին մէկ մասը համաձայն ներքին կանոնագրութեան որոշուած տոկոսի՝ կը յատկացնէ իր վարչի գինման, զուտ կազմ. ծախսերու, մնացածը յանձնելով շրջանի բարձր մարմին:

37-39 միաձայնութեամբ կ'ընդունուի:

40րդ յօդ.՝ ժողովը այս յօդուածը իր ամբողջութեամբ անհրաժեշտ չնկատելով հանդերձ, Թուրքիոյ ներկայ պայմաններու մէջ, սա ձեւով կը խմբագրէ.

«Կեդր. Կոմիտէն կ'ընտրուի Երջ. ժողովի կողմէ: Բացառիկ պարագաներու մէջ, երբ անկարելի կը լինի Երջ. ժողով կազմել, բարձրագոյն մարմինը իր շրջանի կոմիտէներու համաձայնութեամբ, անոնցմէ ամէնէն գործունեայ եւ պահանջներու նուազագոյն չափին համապատասխանող կոմիտէն կը յայտարարէ Կեդր. Կոմիտէ՝ յայտնելով այդ մասին բարձր մարմիններուն ի գիտութիւն:

41 եւ 42 յօդուածները միաձայնութեամբ կ'ընդունուին:

43րդ յօդուածը միաձայնութեամբ ո'չ միայն կ'ընդունուի այլեւ անհրաժեշտ կամ ստիպողական կը նկատուի:

44րդ յօդուածը միաձայնութեամբ կ'ընդունուի:

45րդ յօդ. ժողովը այս յօդուածին վրայ կ'առաջարկէ աւելցնել. «եւ պատասխանատուութեան կ'ենթարկուի»:

46-53րդ յօդ. միաձայնութեամբ կ'ընդունուին:

Պատասխանատու մարմիններու վերաբացումը.

- 1.- Պատասխանատու պէտք է վերցնել
- 2.- Պոլսոյ Պատ. մարմինը միայն վերցնել
- 3.- Պատ. մարմինները անհրաժեշտ են, ինչպէս նաեւ Պոլսոյ մէջ, պայմանով սակայն որ տեղական կազմ. մարմիններուն գործերուն չմիջամտեն:

Ապա հետեւեալ բանաձեւը կը քուէարկուի.

«Նկատի ունենալով որ Թուրքիա կ'ապրի յեղ. ժամանակաշրջան մը, որուն մէջ տագնապներ ամէն օր կը սպասուին. ճնկատի ունենալով նաեւ որ մեր զանազան մարմինները մեծաւ մասամբ նոր ստեղծուած լլլալով, կրնայ լլլալ որ բաւականաչափ տոկոսներուն չունենան այդ տագնապներուն դիմադրելու, Պոլսոյ Երջ. ժողովը կը գտնէ որ անհրաժեշտ է Թուրքիոյ մէկ երկու կարեւոր շրջաններուն մէջ ունենալ Պատ. մարմիններ, որոնք առանց տեղական Կեդր. Կոմիտէներու եւ կոմիտէներու անմիջական զբաղումներուն մասնակցութիւն ունենալու, իրենց վրայ առնեն այդ շրջաններուն ընդհ. կուսակցական յեղ. պատասխանատուութիւնը եւ քննարկը»:

Մեծամասնութեամբ կ'ընդունուի:

Աշխատաւորական քաղաքականութիւն.՝ Սոցիալիստական գործունէութիւն.՝ ճշդել դասակարգային կռուի սահմանները մեր իրականութեան մէջ.

Պատգամաւորները գրեթէ միաձայնութեամբ կը գեկուցանեն թէ Պոլսոյ շրջանին մէջ իսկապէս սոցիալիստական գործունէութիւն գոյութիւն ունի, քանի կայ շահագործող ու շահագործուող:

2.- Թէ՛ սոց. գործունէութեան տաքտիկը եղած է բաւական անխոհեմ.

ա) Պահանջներու ծայրայեղութեամբ

բ) Միայն հայ դրամագլուխին դէմ ուղղուելով մէկ քանի տեղեր:

Երկու առաջարկներ եւս կը բերուի ժողովին

1.- Պոլսոյ դասակարգերէն պէտք է առնել մեր շարքերուն մէջ, քանի որ անոնց եւ գիւղացի հասարակութեան շահերը կը նոյնանան ազգ. ինքնապաշտպանութեան հողի վրայ.

2.- Դաշնակցութիւնը կրնա՞յ եւ պէ՞տք է միջազգային սոցիալիստ կուսակցութիւն մը լինի թէ ազգային:

Յետագայ բանաձեւին Ա. եւ Գ. մասերը միաձայնութեամբ իսկ Բ. մասը՝ մեծամասնութեամբ կ'ընդունուի:

«ա) Երկարօրէն ուսումնասիրելէ յետոյ տաճկահայ իրականութիւնը եւ ազգ. քաղաքական այսինքն ոչ դասակարգային պայքարներու սահմաններուն ճշդումը այդ իրականութեան մէջ, կը գտնէ որ Դաշնակցութեան համար անհրաժեշտ է իբրեւ կուսակցական տիրապետող շունչ՝ ունենալ սոցիալիստական յատուկ հոգեբանութիւն եւ պահանջել կազմակերպութեան մաքրութիւնը այդ տեսակէտով:

«բ) Իսկ ազգ. ինքնապաշտպանական գործունէութեան մէջ անպայման գործակցիլ պոլսոյ լիպերալ տարրերուն հետ՝ ի պաշտպանութիւն համաժողովրդական շահերուն:

«գ) Պոլսոյ Երջ. ժողովը այնուամենայնիւ կը մերժէ բացարձակապէս կուսակցութիւնը միջազգայնացնելու մասին եղած առաջարկը, գտնելով այդ բանը անհամապատասխան իրաց արդի կացութեան մէջ նոյնիսկ հայ աշխատաւորութեան նիւթական եւ բարոյական շահերուն, ու կ'առաջարկէ մեր դասակարգային կռուին միջազգային բնոյթ տալ ձգտելով օտարազգի բանուորներուն մէջ ալ առաջացնել կազմակերպութիւնները եւ անոնց հետ հաստատել Ֆեդերատիւ կապեր:

«Երջ. ժողովը կը փափաքի որ դաշն. մարմինները ուժ տան մասնաւորապէս արտադրող եւ սպառող COOPERATIVEներու հաստատման»:

Արհեստակցական միութիւններ, կուսակցական եւ անկուսակցական.՝ Գիւղատնտեսական միութիւններ.

Միաձայնութեամբ կը քուէարկուի հետեւեալ բանաձեւը:

«Երջ. ժողովը կ'ընդունի որ արհեստակցական եւ գիւղացիական միութիւններ անհրաժեշտ են մեր իրականութեան մէջ, իբրեւ միջոց սոցիալիստական պայքարի. բայց կը գտնէ որ այդ միութիւնները պէտք է լլլան միջազգային եւ ոչ կուսակցական:

Միայն մեր մարմինները պիտի ջանան անոնց մէջ ունենալ ղեկավար առաջնորդող դեր, ջանալով անոնց ներարկել դաշնակցական հոգեբանութիւն եւ քաղաքական պայքարի վերաբերումով սէր, հետզհետէ զանոնք դարձնելու [համար] կուսակցական»:

Պատգամաւորի եւ Կեդր. Կոմիտէի ընտրութիւն.

Ընդ. ժողովի պատգամաւորի ընտրութեան կը մասնակցին 11 պատգամաւորներ որ կու տայ հետեւեալ արդիւնքը.

- Շահապազ 8 քուէ
- Շահրիկեան 4 քուէ
- Ճերմակ քուէ 1
- Որով ընկեր Շահապազ 4-ի դէմ 8 քուէով կը յայտարարուի Պոլսոյ պատգամաւոր Ընդհ. ժողովին:
- Ապա ձեռնարկուելով Կեդր. Կոմիտէի ընտրութեան կը կազմուի գաղտնի Կեդր. Կոմիտէ՝:

Բիւրոներու, ռայոնական եւ շրջանի ժողովներու իրաւասութեանց ճշդումը.

Նախորդը նոյնութեամբ կ'ընդունուի:

Սերհուրդի իրաւասութիւն.՝ Հին կանոնագրին տրամադրութիւնը նոյնութեամբ կ'ընդունուի, միայն կ'առաջարկէ որ արեւմտեան ռայոնական ժողովէն ալ 2 ներկայացուցիչ լլլայ:

Ընկեր Արսէն Սիւնի, որ ժողովին կողմէ ղրկուած էր

հաշիւ առնելու Մաքրիքէօյի եւ Սամաթիոյ շրջաններէն, որով բացակայած Ընդհ. պատգամաւորի եւ Կեդր. Կոմիտէի ընտրութեան, ընդհ. պատգամաւորի համար իր քուէն տուաւ ընկեր Շահրիկեանի, որով Շահրիկեան չահեցաւ 5 քուէ:

1.- Մուտքերու կանոնաւորումը.՝ Երջանայի ժողովը կը փափաքի որ Ընդհ. ժողովը խիստ հրահանգներ տայ բոլոր մարմիններուն կանոնաւորման 2% տուրքին, նկատի ունենալով որ անիկա կը կազմէ հիմնական մուտքը կազմակերպական պիւտճէին: Մարմինները պէտք է գործադրեն անպայման ընդհ. կանոնագրի 126 յօդ. եւ անոր ծանօթութիւնը՝:

2.- Կուսակցական կարգապահութիւն.՝ Առանց դուրս գալու ընկերակազմութեան սահմաններէն՝ պահպանել խիստ կարգապահութիւն կազմ. շարքերու մէջ եւ ջանալ որ ամէն շրջաններու մէջ շեղումներ տեղի չունենան կանոնագրի եւ ծրագրի տրամադրութիւններէն:

3.- Քաղաքական խումբեր.՝ Կ. Պոլսոյ Երջ. ժողովը դիտելով որ կազմակերպական զանգուածներու մէջ կայ թիւր ըմբռնում քաղաքական խմբերու վերաբերմամբ՝ իրեն պարտք կը համարի շեշտել թէ՛ քաղաքական խումբերու անդամները ամէն բանէ առաջ յեղափոխականներ պէտք է լլլան եւ թէ՛ քաղաքական մակդիրը զուտ աշխատանքի բաժանում կ'ենթարկէ:

4.- Մարտական խումբեր.՝ ժողովը կը ցանկայ որ իւրաքանչիւր շրջան ունենայ իր մարտական ինքնապաշտպանական խումբերը, որոնք կանխորոշ պատրաստութիւններ տեսած լլլան դիրքերու ճշտման եւ ռազմամթերքի հայթայթման տեսակէտէն ի հարկին լաւ կատարելու համար իրենց պարտաւորութիւնը:

Ժողովը կը ցանկայ նաեւ որ մարտական խումբերու անդամները առնուին շարքերու ամէնէն վստահելի եւ ամենատոկուն տարրերէն եւ իրենց ուսուցողի գինական մարզանք: Մարտական խումբերը պէտք է ջանալ գինել անպայման միօրինակ եւ լաւագոյն զէնքերով:

5.- Խիստ կանոններ Դաշնակցութեան նոր անդամներ ընդունելու մասին.՝ Այս մասին որոշում տրուած է արդէն:

3.- Երջանային ժողովի «քուէահամարի մասնախտւմբի» 1909 թ. Օգոստոս 13/26 նամակէն ի յայտ կու գայ, որ Կեդր. Կոմիտէի ընտրել անդամներն են՝ Ռուբէն Զարդարեան (11 քուէ), Գրայեայ [Թիրեպեան] (11 քուէ), Բարսեղ Շահապազ (11), Արամ Յակոբք (9) եւ Խ. Պապայեան (8):

4.- Կանոնագրի 126րդ յօդուածը կը նախատեսէր հետեւեալը. «Իւրաքանչիւր դաշնակցական պարտաւոր է իր անսակաւ հասոյթի առնուած 2%ը մտցնել տեղական դաշնակցական մարմնի դրամարկը ամիսը մէկ անգամ: Ծանօթ.՝ Այն դաշնակցականը, որ երեք ամիս շարունակ չէ վճարած իր անդամավճարը, ձայնատուութեան եւ ընտրուելու իրաւունքն կը զրկուի մինչեւ հատուցանելը»:

6.- Կարմիր խաչ եւ օժանդակ խումբեր.—

Ջնջել օժանդակ խումբերու մասին եղած տրամադրութիւնը կանոնագրին մէջ: Ոյժ տալ Կարմիր խաչի խումբերու կազմութեան կուսակցական հողի վրայ, ենթարկելով զանոնք տեղական մարմիններու իրաւասութեան:

7.- Բիւրոններու տեղափոխութեան հարցը.— Ոչ մի փոփոխութիւն չ'առաջարկել Արեւմտեան Բիւրոյի մասին, բայց Արեւելեան Բիւրոն եթէ տեխնիկական դժուարութիւններ չկան հաղորդակցութիւններու կանոնաւոր պահպանումի մասին, կը փափաքի ժողովը որ փոխադրուի էրզրում, դիւրացնելու համար աշխատութիւնները:

8.- Դրօշակ — Տեղափոխութեան հարցը.— Տեղափոխութիւնը նպաստաւոր չի դատեր:

9.- Pro Armenia.— Ջնջել Pro Armenia-ն եւ անոր տեղ հաստատել Պոլսոյ մէջ թերթ մը թրքերէն եւ ֆրանսերէն:

10.- Կուսակցութիւնը եւ կիսապաշտօնական թերթեր.— Ձանալ հաստատել կիսապաշտօնական թերթեր պայմանով որ լուրջ ոյժերով հաստատուին կարելի եղածին չափ քիչ բեռ ըլլալով կազմակերպութեան:

11.- Տես Pro Armenia:

12.- Գրքեր հայերէն եւ զանազան լեզուներով — Թուրքիկներ. շրջաբերականներ.— Դաշնակցութեան սկզբունքներու տարածման տեսակէտով անհրաժեշտ լինելով գրքերու հրատարակումը, ժողովս կը ցանկայ որ ամէն դաշնակցական ընկեր ջանայ այդ գրքերու տարածման եւ հետզհետէ կարելու գրքերու զանազան լեզուներով հրատարակումը դրուի կանոնաւոր կազմակերպութեան վրայ. նոյնը նաեւ թուրքիկներու մասին:

13.- Հայկական հարցը եւ Եւրոպան (Ա. յօդուած).— Ընդունելով հանդերձ որ Հ. Յ. Դաշնակցութիւնը ոչ մի կերպով չպէտք է ազդուի ՅԱՐԳ յօդուածէն իր ուղղութեան տեսակէտով, ժողովս կը ցանկայ որ պահուի անիկա, նկատի ունենալով որ պատմական դիւանագիտական յաջողութիւն մ'է անիկա եւ կարելի է ապագային որեւէ դեր խաղալ:

14.- Սիւտեմաթիկ դասընթացքներ պրոպագանդայի համար.— Լաւ է հաստատել եթէ կան տրամադրելի ոյժեր:

15.- Հրապարակային դասախօսութիւններ.— Անպաշտօն անունի տակ ընել դասախօսութիւններ:

Ընկեր Ատրուշան, որ կը բացակայէր ժողովէն խիստ բանաւոր պատճառաւ մը պատգամաւոր ընտրութեան օրը, արտօնուեցաւ իր քուէն տալու, որը իր քուէն տրուաւ ընկեր Բարսեղ Շահպաղի:

Որով 7 քուէով ընկեր Շահպաղ վերջնականապէս

Պոլսոյ պատգամաւոր ընտրուեցաւ:

Շրջանային ժողովը միաձայնութեամբ (20) քսան օսմանեան ոսկի պիւտճէ սահմանեց իր պատգամաւորին, արտօնելով միեւնոյն ատեն Կ. Պոլսոյ նորընտիր Կեդր. Կոմիտէն տալ պէտք եղած դրամը եթէ նոյն գումարը անբաւական ըլլայ:

Մուտքի ապագայ աղբիւրներ (տուրք, հանգանակութիւն, հասոյթ եւ այլն):

Ընկերներ տուրքը կ'ընդունին իբրեւ հասոյթի էական աղբիւր եւ կը թելադրեն ամէն կերպով գայն արդիւնաւոր դարձնել:

Հանգանակութեան մասին՝ Շրջանային ժողովը թէպէտ սկզբունքով կը մերժէ բռնի հանգանակութեան միջոցներու գործադրութիւնը, այլ սակայն կը պահանջէ որ բացառութիւն կազմէ Պոլիսը,

նկատելով որ՝ դաշնակցական խոշոր գումարներ ծախսուած են Պոլսոյ մէջ եւ նա քսան տարուայ ընթացքին մէջ ոչ մէկ կողմէ չէ վճարած, հետեւաբար նա պարտաւոր է բերելու իր բաժինը անվիճելի կերպով:

1.- Շրջանային ժողովը իրաւասութիւն կու տայ Կեդր. Կոմիտէին Ընդհ. ժողովի վերջնական անմիջապէս յետոյ, նոր ներքին կանոնագիր մը պատրաստել, որը պարտաւորիչ պիտի ըլլայ Պոլսոյ շրջանին համար մինչեւ յաջորդ Շրջանային ժողովը:

2.- Շրջանային ժողովը կ'որոշէ հրաւիրել բոլոր այն մարմինները, որոնք ընթերցարան-լսարանի եւ այլնի նման ծախքերու համար վատնած են կազմակերպական դրամները, ոչ կազմակերպական անունով մի կերպ հայթայթելով գոցեն այդ բացերը:

3.- Շրջանային ժողովը 25% միայն կը թոյլատրէ տեղական պէտքերու ծախսին համար, 75%-ը կանոնաւորաբար պէտք է դրկել Կեդր. Կոմիտէին:

4.- Շրջանային ժողովը մնայուն հաշուեքննիչ յանձնախումբ մը կազմեց, խիստ քննութեան մը բովէն անցնելու բոլոր հաշիւները: Անդամներն են ընկեր Արսէն Սիւնի եւ Վաղարշ:

Կ. Պոլսոյ շրջանի

Հ.Յ.Դ. Շրջանային ժողովին

Քարտուղար՝ Նախագահ՝
ԱՐՍԷՆ ՍԻՒՆԻ ՎԱՀԱԳՆ

Անդամներ
ՊԱՐՈՅՐ ՀԱՅԿԱԶՆ
ՄՇԱԿ
ԱԶԱՐԻԿ
ԳԱՍՊԱՐ [ԻՓԷԿԵԱՆ]
ՎԱՀԱՐՇ
ԱՐՏԱԿԱԶԴ

Փաստ. 1538-5

Բ 1.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ԻԶՄԻՐԻ ՇՐՋԱՆԻ 1909 ԸՆԴ. ԺՈՂՈՎԻ

Փաստ. 922ա-1ը Իզմիրի տեղեկագրին մէկ պատճէնն է, որուն առաջին էջին վրայ մատիտով գրուած է.— Իզմիրի տեղեկագիր, պատրաստուած 1909ի Ընդ. ժողովին համար ուղարկուած ուշ, այն է 1910 Ապրիլին: Թղթածրարի օրինակին (1538-5) պատճէնահանման ժամանակ էջերու վերջին 2-3 տողերը չեն ելած: Փաստ. 922ա-1ի պատճէնահանումը աւելի վատ վիճակ կը ներկայացնէ, բայց տեղ տեղ կարելի եղաւ մասամբ վերականգնել մէկ քանի տողերը:

Յուլիս 11ի սահմանադրութեան հռչակումով հայ քաղաքական բանտարկեալներու ալ ընդհանուր] ներում եղաւ: Կառավարութիւնը եւ բանտային վարչութիւնը հակառակ տրուած հրամանին ու իւր ձեռամբ առած միջոցներուն անկարող եղաւ ժամ առաջ ազատել բանտարկեալները, որովհետեւ քրէական յանցանքով դատապարտուած բանտարկեալներ զանոնք գերի աւանդ բռնած էին եւ պայման դրած էին որ իրենք ալ դատուին ազատին: Յուլիս 19ին միայն քաղք. բանտարկեալները կը ցան ազատիլ, բանտապետութեան ու քաղաքական բանտարկեալներու կողմէ գործադրուած միջոցներով:

Անմիջապէս Արեւմտ. Բիւրոյին հարցուեցաւ կազմակերպութեան բռնիք թաքթիքը եւ ուղղութիւնը: մինչեւ այդ Պոտրումի բերդէն եկող բանտարկեալներ կու գային, ընկերները թիւը աւելցնելու:

Օգոստ. 5-ին կազմուեցաւ բոլոր բանտարկեալներու ներկայութեան մարմին մը:

Կոմիտէն անմիջապէս յարաբերութեան մէջ մտաւ իթիֆհատի ու Սապահետինի փարթիի մարդոց հետ. յարաբերութիւնները երեւութապէս անկեղծ էին: Մենք յանձնարարուած էինք սերտ յարաբերութիւններ պահել Սապահետինի փարթիին մարդոց հետ եւ կորեկտ յարաբերութիւններ իթիֆհատի հետ:

Նանդալաուութեան շրջան էր:

Կոմիտէն շրջաբերականով իւր գոյութիւնը հաստատելէ յետոյ յայտարարեց թէ արգիլած է կազմակերպութեան հերոսներուն պատկերները անձնական շահու համար ծախել:

Պոլսոյ Պատասխանատու մարմինը արդէն կազմուած ըլլալով՝ կոմիտէն յարաբերութեան մտաւ եւ իւր առաջարկին վրայ որ կարող ընկեր մը տեղա այցելէ, ընկեր Գալֆայեանը ղրկուեցաւ:

Ակտուեցաւ կանոնաւոր յարաբերութիւններ պահել ժողովրդային բոլոր խաւերու հետ:

Միթիկներ կազմակերպելը օգտակար սեպելով, ըն-

կերներու եւ համակիրներու ներկայալուծեամբ բազմաթիւ դասախօսութիւններէ զատ ունեցանք ժողովրդային 27 պաշտօնակ[ան] միթիկներ:

Վերոյիշեալ միթիկներուն մէջ պարագաներու համեմատ խմբագրուեցան թէ գրաւոր թէ հեռագրով բողոքներ սահմ. տրամադրութիւնները յարգել տալու ու մեր ազգային իրաւունքներու պաշտպանութեան համար:

Ընկերներու նախաձեռնութիւնով կազմուեցաւ փաստաբաններու խառն կոմիտիտն մը կազմակերպելու համար տեւական միթիկներ հայերէն, յունարէն եւ թուրքերէն լեզուաւ:

Սեպտեմբ. 28ին առժամեայ տեղական մարմինը լուծուելով ընդ. քուէարկութեամբ կազմուեցաւ տեղական կոմիտէն. ընտրութիւնը անմիջապէս ծանուցուեցաւ Կ. Պոլիս, Արտասահման ու գաւառները եւ հասցէներ տրուեցան. շրջաններու հետ սկսուած յարաբերութիւններ ալ աւելի կանոնաւորուեցան ու հետզհետէ Մադնիսայի, Ակ-Հիսարի, Կրկ-աղաճի, Կընտիկի եւ Էօտեմիշի ու ասոնցմէ զատ անհատ ընկերներու [հետ], որ սահմանադրութենէ առաջ թէ յետոյ հոս հոն ցրուած էին, կանոնաւոր յարաբերութիւն մշակուեցաւ:

Տեղ. կոմիտէն սկսաւ պաշտօնապէս յարաբերութեան մտնել թէ ազգային վարչութիւններու եւ թէ քաղքիս մէջ գտնուող ո'չ դաշնակցական բոլոր ընկերութիւններու եւ կլիւպներու հետ:

Սոյն յարաբերութիւնները որ մինչեւ հիմա կը շարունակուին ունեցան բարոյական ու նիւթական օգտակարութիւններ:

Դաշնակցութեանը ունեցած բուռն համակրութենէն օգտուելով՝ ընկերներ ու համակիրներ հանգանակութեան ձեռնարկելով մօտ երկու հազար Օսմ. ոսկի հասոյթ մը գոյացաւ, որը ամբողջովին փոխադրուեցաւ առաջարկուած վայրերը:

Հետզհետէ եկան այցելու ընկերներ [եւ] ունեցան իրենց օգտակարութիւնը:

Դաշնակցութեան սկզբունքները եւ ընդ- աշխարհայ- եացքը տարածելու եւ ըմբռնել տալու համար տեղ- կո- միտէն թէ տեղւոյս մէջ գտնուող ընթերցարաններուն եւ թէ շրջանակները նուէրներ ըրաւ:

Շրջականերէ եկած գործիչ պահանջող բազմաթիւ նամակներու եւ Կ. Պոլսոյ Պատ- մարմնոյն յանձնարա- րութեան վրայ կոմիտէն եւ ընկեր Մար⁵ միաձայնու- թեամբ որոշեցին շրջուն-պրոպականդիստներ զրկել գաւառները շրջակաները գտնուող ցիր ու ցան ընկեր- ները կազմակերպելու [եւ] վերջնականապէս կապելու համար Իզմիրի հետ:

Մաղնիսայէ, Կրկ-աղաճէ, Ակ-հիսարէ, Կընտկէ եւ Էօտեմիշէ գատ կազմուեցաւ Պերկամա, Պալքբեսէր, Պայիա, Էսկի-Շեհիր, Սիվրի[հի]սար, Ուշակ, Գասապա, Աֆ[իոն] Գարահիսար, Սալիհի, Տենիզլի, Պայընտըր, Սէօքէ, Այտըն, Պուրտուր, Սբարթա եւ Էնկիւրի:

Ժամանակին կազմուած եւ Պատ- մարմնոյն հետ յա- րաբերութեան մէջ գտնուող հետեւեալ քաղաքներու ընկերներ Պատ- մարմնոյն եւ իրենց համաձայնութիւ- նով վերջնականապէս կապուեցան Իզմիրի հետ՝ Քէօ- թահա, Գարամոն, Էրէկլի եւ Ակ-Շեհիր:

Կոմիտէն քաղաքական շփոթ կացութիւնը նկատի ունենալով՝ բացի քաղաքական խմբերէ, տեղւոյն պա- հանջներու եւ պայմաններու համաձայն ինքնապաշտ- պանութեան խումբեր կազմակերպեց:

Իթիթհատի հետ մեր յարաբերութիւնները կանոնա- ւորելու համար փոխադարձաբար հինգ հինգ հոգիները երկու մարմիններ կազմուեցաւ:

Մեր ընկերներէն Ստեփան Նալպանտեան շրջաբերա- կաններով եւ յօդուածներով անտեղի յարձակումներ ընելուն եւ իր դիտողութիւնները կամ բողոքները կազ- մակերպական ճամբով չընելուն համար երեք ամիս կազմակերպութենէ արտաքսման պատիժ տրուեցաւ:

Բացարձակապէս արտաքսման պատիժ տրուեցաւ (մաղնիսացի) Տիգրան Նալպանտեանի (սպանուած), մաղնիսացի Անդրէաս Նալպանտեանի, (մաղնիսացի) Վահան Պոզողլանեանի, մաղնիսացի Միհրան Քտեր- ճեանի, Իզմիրցի Յակոբ Ղազարեանի, որոնք բանտար- կութեան ժամանակ աննախընթաց մատնութիւններ եւ լրտեսութիւններ ըրած էին:

Բացարձակապէս կազմակերպութենէս վտարման պատիժ տրուեցաւ նոյնպէս Հայկ Քէօսպէքեանի, Արամ Նալպանտեանի, Տիգրան Պոյաճեանի, Աւետիս Ֆրամա- սոնեանի, Գառնիկ Քէչէճեանի, որոնք Յուլիս 11⁵ ա- ռաջ ինքնազրուի սպառնալիքով հարուստներէ դրամ պահանջած եւ իրենց անձնականին գործածած էին:

Վտարման պատիժ տրուեցաւ նոյնպէս ատաղձա- գործ Անդրանիկ Թորգոմեանի ու սեբաստացի Յով- հաննէսի, որոնք Յուլիս 11⁵ յետոյ յայտնի վաճառա- կան Աւետիքեանէ սպառնալիքով դրամ պահանջած էին:

* * *

Շրջուն գործիչներուն վերադարձէն յետոյ կոմիտէն նկատի ունենալով Ընդ- Ժողովի անմիջական գումա- րումը, գաւառները շրջաբերականներ զրկեց եւ ներքին կանոնադրի համաձայն Շրջ. Ժողովը կազմուեցաւ:

Շրջ. Ժողովին մասնակցեցան քսան եւ երեք պատգա- մաւոր. տեւեց 12 օր եւ ունեցաւ 13 նիստ:

Ազգային

Յուլիս 11⁵ յետոյ առաջնորդարանի գործերն ալ, որ անգոյն վիճակ մը կը ներկայացնէին, վերակազմու- թեան կարիք զգացուելով՝ ընտրութիւններու ձեռ- նարկուեցաւ: Ընտրութիւններու գործին մէջ ընկերնե- րը աշխատեցան կազմակերպութեանս ընտրելիները յա- ջողցնել ու այսպէս, թէ Իզմիր թէ մեզի հետ կապուած բոլոր շրջաններու, առանց բացառութեան ազգային բոլոր մարմիններու մէջ ունինք մեր ընկերները ու հա- մակիրները:

Օսմ. երեսփ. Ժողովի պատգամաւորի ընտրութեան ժամանակ կազմակերպութիւնս, նկատելով որ Այտըն վիլայէթի ամբողջ հայութիւնը պատգամաւոր մը զրկե- լու համար պահանջուած ցենզը չի ներկայացներ, նկա- տելով որ կուսակցութեանս ուղղակի մասնակցութիւնը պատգամաւորի ընտրութիւնը ձախողութեան պիտի ենթարկէ, կազմեց Ժողովրդային բոլոր խաւերէն ներ- կայացուցչական մարմին մը, որը հարկ եղած դիմում- ները ըրաւ երեսփ. Ժողովի կանդիդաններու ցանկին մէջ հայ պատգամաւորներու անուններ ալ գտնուելու հա- մար:

Այս քայլը բաւական չհամարելով՝ ձեռնարկուեցաւ դարձեալ Դաշնակցութեան հովանաւորութեան տակ բաց ընդ- ազգային գոյնով մարմին մը կազմելու, որը ամէն ջանք ի գործ դրաւ մեր ընտրելին յաջողցնելու հա- մար:

Երկրորդ կարգի ընտրելիներու ցանկին մէջ նոյնպէս գտնուեցան Դաշնակցութեան ընտրելիները:

Յոյներու եւ թուրքերու մօտ ո՛չ-կուսակցապէս այլ անհատապէս ամէն ջանք ի գործ դրինք հայ պատգա- մաւորի մը ընտրութիւնը յաջողցնելու համար: Փաս- տարկութիւնը որքան որ յայտնի հաստատուեցաւ, ար- դիւնքի տեսակէտէ դատելով պարզապէս հասկցուեցաւ թէ յոյները իրենց խոստումներուն հաւատարիմ չգտնու- ւեցան:

Կազմակերպութիւնս նկատելով որ երկու հայ կան- դիտաններու ներկայութիւնը պատճառ պիտի ըլլայ քուէները ցրուելու՝ բարոյապէս միջոցներ ձեռք առնե- լով մեր թեկնածուն հրաժարեցաւ:

5.- Տըր Մարտիրոսեան Միքայել:
6.- Թուական, հին տոմարով:

Սակայն նորէն յոյն եւ թուրք Բ. կարգի ընտրելիներ- րուն քուէները բաւական չեղան որ մեր պատուիրակը⁷ յաջողէր. բայց Այտըն վիլայէթէն մինակ հայր պատգա- մաւոր չունենալու պարագան կազմակերպութեանս համար բրեսթիթի խնդիր մը դառնալով, ջանք եւ բարո- յական ամէն միջոց գործածուեցաւ հայ երեսփոխանի մը ընտրութիւնը յաջողցնելու համար: Կազմակերպու- թեանս ջանքերը յաջողութեամբ պսակուեցան:

Այս յաջողութեան նպաստեց նաեւ Իթիթհատի կող- մէ հայերէ հանգանակուած 2000 Օսմ. ոսկիէն աւելին, Իզմիրի պէս բազմազգի կեդրոնէ մը — ուր հայերը բարձրագոյն դիրքը գրաւողներէն կրնան սեպուիլ — ներկայացուցիչ չունենալու պարագան եւ աւելին ապա- զայի համար հայերէ դրամի հանգանակութեան յոյսը Իթիթհատի:

Վերոյիշեալ նկատումներէն գատ ցենզ չունեցող տե- ղէ հայ երեսփոխան մը ընտրելու պարագան ուրիշ բան չէր բաց թէ՛ վարագուրել ներքին գաւառներու մէջ կատարուած ընտրական էնթրիկները:

Այսպէսով Իզմիր ունեցաւ faute de mieux⁸ Օսմ. բարլըմանի մէջ իւր հայ պատգամաւորը:

Իզմիրի եւ Շրջանակներու կրթական վիճակը

Յուլիս 11⁵ առաջ Իզմիրի դպրոցները, որ համեմա- տաբար աւելի լաւ վիճակի մը մէջ կը կարծուէին, նա- խանձելի ոչինչ ունէին. ներկայիս մէջ ալ հակառակ Ու- սում. խորհուրդի ջանքերուն փայլուն վիճակ մը չեն ներկայացներ:

Ընկերներու դիմումներու վրայ պիւտճէի վրայ 120 Օսմ. ոսկի մնայուն յաւելում մը եղաւ:

Մեզի հետ կապուած վայրերու դպրոցները նոյնպէս նախանձելի վիճակ մը չունին եւ դպրոցներու ուսուցիչ օրիորդները կամ տիկիները աւելի կարող են քան ու- սուցիչները:

Մանկապարտէզները համեմատաբար աւելի նա- խանձելի վիճակ մը կը ներկայացնեն:

Մեզի հետ կապուած [են] քսան եւ ութը վայրերու հայ Ժողովուրդը, բացի ութը տեղէ. միւս տեղերը թրքա- խօս են եւ սահմանադրութենէն վերջ միայն սկսած են հայերէնին ոյժ տալ:

Հայերէն լեզուին ոյժ տալու համար կազմակերպու- թեանս նախաձեռնութեամբ գաւառները կազմուեցան զանազան ոչ-կուսակցական միութիւններ միմիայն հա- յերէն խօսելու եւ խօսիլ տալու համար:

Նոյն շարժումը կայ նաեւ Իզմիրի մէջ եւրոպական լեզուներու հանդէպ:

Տրուած գրքեր, թերթեր եւ նամանաւանդ թատրոն- ները իրենց որոշ դերը ունեցան լեզուական բարեշրջ- ման գործին մէջ:

Ուղղակի եւ անուղղակի պրոպականդա մղուեցաւ

բազմացնելու համար ազգային վարժարաններու աշա- կերտներու թիւը, այնպէս որ այս տարուան շրջանին մէջ բաղդատաբար անցեալ տարուան երկու հարիւր յիսունի մօտ աշակերտ աւելցաւ:

Միւթարեանները վարժարանին ստիպուեցան գո- ցել ու Ամերիկեան միջազգային վարժարաններու հայ աշակերտներու թիւը որ ութանասունի կը հասնէր երե- սունի հասաւ:

Մուշի մէջ վարժապետանոց մը բանալու համար ըն- կերներու նախաձեռնութեամբ Առաջնորդարանի մէջ հաւաքուեցան բարեկեցիկ դասուն պատկանող տիկին- ներ եւ օրիորդներ. խորհրդակցութիւններ եղան եւ նախաքայլեր առնուեցան:

Ազգային զանազան հաստատութիւններու վիճակը մօտէն ուսումնասիրելու համար ընկերներ տեւական յարաբերութիւններ մշակեցին:

Գաղտնի սիստեմաթիկ դասընթացքներ տեղի ունե- ցան ազգային ու ամերիկեան վարժարաններու աշակեր- տութեան մէջ եւ բոլոր ազգային եւ օտար հաստատու- թիւններու մէջ աշակերտական միութիւններ կազմուե- լով իրարու հետ յարաբերութեան մէջ մտան:

Միութիւնները ունեցան իրենց պարբերական օր- գանները:

Իզմիրի աշակերտական միութիւնները յարաբերու- թեան մէջ դրուեցան գաւառներու աշակերտական միութիւններու հետ:

ՁԻ Ջարդերէն յետոյ եկած գերմանական որբանոցի աշակերտուհիներուն հետ գաղտնի յարաբերութիւններ մշակուեցան եւ ժամանակէ մ'իվեր Ազգին կողմէ դադ- րած յարաբերութիւններ մեր դիմումներուն վրայ վերսկսան:

Դպրոցին մէջ մարմնամարզի դասի ժամանակ գաղտնի զինավարժական դասեր հաստատուեցան:

Կուսակցական եւ ո՛չ-կուսակցական միութիւններ. խմբատեղիներ, գլխապետ եւ սոցիալիստական շարժում

Ազատ պայմաններէ օգտուելով Իզմիրի արուար- ձաններու եւ շրջակայ վայրերու մէջ կազմուեցան զա- նազան միութիւններ:

Իզմիրի մէջ առաջին շարժումը յառաջ եկաւ ինքնա- բերաբար ու նախագիծը դրուեցաւ հայ պաշտօնէից միութեան:

Միութիւնը երկու հարիւր յիսուն անդամէ աւելի ու- նի ընդհանրապէս մանիֆաթուրայի մեծ վաճառատու- ներու մէջ պաշտօնավարող:

Մեծամասնութիւնը մեր ընկերներէն եւ համակիրնե-

7.- Պետք է ըլլայ՝ պատգամաւորը կամ թեկնածուն:
8.- Ֆրանսերէն՝ առ ի զոյգ լաւագոյնի:

րէն են: Ունին իրենց ներքին կանոնադիրը եւ լաւ կազմակերպուած են:

Այս շարժման հետեւեցաւ մաքսի բեռնակիրներու, նաւավարներու, քարափի եւ կէօջ-թեփէի թրամվայներու պաշտօնեաներու գործադուլները:

Շարժումը արագօրէն աւելի զարգանալով՝ ծնունդ տուաւ գրեթէ բոլոր ծառայութեան մէջ գտնուող պաշտօնեաներու եւ գործաւորներու բողոքներուն եւ գործադուլներուն:

Պաշտօնեաներ եւ գործաւորներ համոզուելով որ իրենց յաջողութեան միակ պայմանը միութիւններ կազմելով կանոնաւորապէս կազմակերպուելու մէջ կը կայանար, պրոպականդայով միասին, ոչ մէկ ջանք չխնայելով իրենց նպատակին հասան:

Այսպէս կազմուեցան ալիւրի, մանածի, երկաթի, արծաթի եւ կազի ֆապրիքաներու, ատաղձագործներու, կօշկակարներու, նպարավաճառներու, սափրիչներու, դերձակներու, գրաշարներու, վաճառականներու քով աշխատող պաշտօնեաներու, Գասապայի ու Այտընի երկաթուղիներու պաշտօնեաներու եւ գործաւորներու միութիւնները:

Այս միութիւններու կազմութեան անմիջապէս յաջորդեց առաջարկներ, պայմաններ, բողոքներ ու գոհացում չգտնելու պարագային գործադուլի սպառնալիքներ եւ գործադուլներ:

Բաթրոններէն՝ շատեր խելօք գտնուեցան ներկայացուած առաջարկներ եւ պայմաններ կամ բոլորովին կամ փոփոխութեամբ ընդունելու:

Գործադուլներու կազմակերպիչները՝ ղեկավարները որ խաղաղ տրամադրութեամբ առաջարկած էին պայմաններ եւ բարեփոխութիւններ, երբ ընդդիմութեան հանդիպեցան՝ իրերու բնական բերումով եւ այն ժամանակուան սանձարձակ ազատութենէն, անարշիպայն օգտուելով այնպիսի ծայրայեղութիւններ ըրին որոնց նմանը տեսնուած չէր:

Ամէնէն բուռն ու ամէնէն յեղափոխական գործադուլը Այտընի երկաթուղիի պաշտօնեաներու եւ գործաւորներու գործադուլը եղաւ, որ տասն եւ երեք օր տեւեց ու տեղի տուաւ արիւնահեղութեանց:

Գործաւորները քանդեցին երկաթուղիի ձողերը, սինեալները, սպառնացին պայթեցնել վայրաշարժերու կաթսաները, քանդել կամուրջները եւ սպաննել տեսչին, իւր համախոհները եւ բոլոր անոնց որ իրենց շարժման պիտի ընդդիմանային:

Կառավարութիւնը եւ իթիհատը ստիպուեցան միջամտել եւ երբ հաշտութեան փորձը անյաջող անցաւ տեղւոյն վրայ պաշարման վիճակ հրատարակեցին:

Ընդդիմութիւնը շարունակելով վիրաւորուած եւ --- մի քանի բանուորներ բանտարկուեցան [?]:

Այս բոլոր սոցիալիստական շարժումը որ առանց պրոպականտի ինքնաբերաբար յառաջ եկաւ ուղղակի

կամ անուղղակի ղեկավարուեցաւ մեր ընկերներէն եւ համակիրներէն:

Ընդ. առմամբ բողոքող դասակարգին պահանջները հետեւեալներն են.

- Ա. Օրավարձին յաւելում %15-էն % 20:
- Բ. Աշխատութեան ժամերու չափաւորում 8-10 ժամ:
- Գ. Յաւելեալ աշխատանքի համար յաւելեալ վարձատրութիւն:
- Դ. Տարին 15-20 օր արձակուրդ:
- Ե. Բաթրոններու ու պաշտօնեաներու միջեւ վարուելակերպի բարելաւում:
- Զ. Ունէ պաշտօնեայի գործէ դադրեցնելէ առաջ ծանուցում, հակառակ պարագային եռամսեայ թոշակի վճարում:

Բոլոր գործադուլներու ընթացքին մէջ վաճառականներու եւ ընկերութիւններու կորուստը եղաւ աւելի քան 100,000 Օսմ. ոսկի, իսկ բանուոր դասակարգին միմիայն տարեկան շահը եղաւ աւելի քան 100,000 լ[իրա] որով բանուոր եւ պաշտօնեայ դասակարգը առժամապէս ինքզինք գոհացած զգաց:

Իբրեւ սոցիալիստական ընկերութիւն, կազմակերպութիւնս, բազմազգի, արդէն կազմակերպուած միութիւնները իրենց մէջ ալ աւելի ամրապնդելով բանուորական դաշնակցութիւն մը կազմելու համար նախաքայլեր առաւ:

Բանուորական դաշնակցութիւնը պիտի ունենայ իւր պիւրոն, իւր ընդ. ժողովները:

Եթէ հարկը ներկայանայ պիտի հրատարակէ -----, պիտի ունենայ իւր մասնաւոր մամուլը [?]:

Նշանակելի կէտ մը եթէ կայ սակայն [այն է որ] գործաւորները սոցիալիստական որեւէ վարդապետութենէ չեն ղեկավարուիր: Վերոյիշեալ միութիւններէն զատ քաղաքիս մէջ կազմուեցան զուտ հայկական միութիւններ:

Կազմուեցաւ Հայ-որսորդաց միութիւնը որ ունի իւր առանձին գլխաւորը: Անդամներու թիւը 100ի կը հասնի:

Վերակազմուեցաւ գիշերային դասախօսութեանց միութիւնը:

Կազմուեցաւ Ֆանֆարի միութիւնը որ պիտի ունենայ իւր առանձին գլխաւորը:

Վերակազմուեցաւ թատերական արուեստասիրաց միութիւնը 20 անդամէ որոնց կ'ընկերակցի օրքեսթրայի խումբ մը:

Վերակազմուեցան երկսեռ ընկերասիրաց միութիւնները, որոնց նպատակն է աղքատիկ սաներու ցերեկուան ճաշը ապահովել եւ զգեստեղէն տալ:

Կազմուեցաւ Աղջկանց միութիւն մը, որուն նպատակն է ինքնազարգացման համար աշխատիլ:

9.- Գործատրերուն:

Կազմուեցաւ նոյնպէս ինքնազարգացման ակումբ մը:

Կազմուեցան հայ կօշկակարներու եւ հայ ոսկերիչներու արհեստակցական միութիւններ:

Այս բոլոր միութիւնները ունին իրենց անջատ կանոնադիրները ու կը ղեկավարուին ուղղակի կերպով մեր ընկերներէն եւ ընկերուհիներէն, առանց սակայն դաշնակցական անունը կրելու: Չէզոք հողի վրայ կը գտնուին:

Միութիւնները ունեցան նիւթական եւ բարոյական -----:

Վերոյիշեալ միութիւններէ զատ կազմուեցաւ քաղաքիս արուարձաններէն Գարաճաղի մէջ Ուսումնասիրաց միութիւն մը:

Կազմակերպութիւնս նիւթական եւ բարոյական անջակցութիւններ ըրաւ:

Իզմիրի մէջ կազմակերպութիւնս խմբատեղիի մը պէտքը զգալով փոքրիկ շէնք մը վարձեց Հ. Յ. Դ. խմբատեղիի անուան տակ, բաց ժողովրդային փոլոր խաւերուն առաջ:

Խմբատեղին ունի իւր ընթերցասրահները, մատենադարանը, գրավաճառանոցը:

Մարմնոյն, խմբական եւ ընկերներու յարաբերութեանց կեդրոնը խմբատեղին է:

Խմբատեղիներ բացուեցան նոյնպէս Գորդելենի, երկու հատ Մադնիսայի, Ակ-հիսարի, Կընտկի, Պալիսայի, Պալլըքեսէրի, Կրկ-աղաճի, էօտեմիշի եւ Գասապայի մէջ ուղղակի Դաշնակցութեան անուամբ:

Մնացեալ բոլոր շրջաններուն մէջ անխտիր հիմնուեցան ազգային գլխակներ՝ բաց անխտիր բոլոր դասակարգերուն առաջ:

Գլխակներէն շատեր իրարու հետ յարաբերութեան մէջ կը գտնուին:

Գաւառներու մէջ ասոնցմէ զատ կազմուեցան տիկնանց միութիւններ:

Այս բոլոր միութիւններու եւ գլխակներու անդամներուն եւ անդամուհիներուն մեծամասնութիւնը մեր ընկերներէն եւ ընկերուհիներէն են:

ԻԶՄԻՐԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՆԵՐՈՒ ԵՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Իզմիր ծովեզերեայ քաղաք մ'ըլլալուն եւ երկաթուղիի գիծերով հեռաւոր շրջաններու հետ կապուած ըլլալուն՝ Կ. Պոլսէ յետոյ Թուրքիոյ մէջ ամէնէն վաճառաչ քաղաքն է:

350,000 բնակիչ ունի: Կայ մօտաւորապէս 17,000 հայ: Մօտ 15,000 եւրոպացի, 25,000ի մօտ հրեայ, 50,000-ի մօտ մահմետական. իսկ մնացեալ մեծամասնութիւնը յոյն օրթոտոքս: Հայերը երեք գաղթականութիւն ունեցած են. եր-

կուքը ասկէ 400 տարի առաջ Պարսկաստանէն, իսկ միւսը 95-ի ջարդերէն յետոյ:

Իզմիրի հայերը ընդհանրապէս բարեկեցիկ վիճակ մ'ունին. մանիֆաթուրայի գործը ամբողջովին հայերու ձեռքն է: Թուզի, չամիչի վաճառականներուն շատերն ալ հայեր են:

Արտածման ճիւղին մէջ հայերը ունին իրենց որոշ մասնակցութիւնը:

Արհեստներուն մէջ սակայն շատ յետադէմ վիճակ մը կը ներկայացնեն:

Հայերը աւելի պաշտօնեայ ըլլալու կը ձգտին կամ արհեստաւոր. այնպէս որ տարիներու ընթացքի մէջ շատ մը արհեստներ, որ հայերուն ձեռքը կը գտնուէին, այսօր օտարներուն անցած է:

Գաւառներուն տնտեսական վիճակը տարիներու մէջ բացարձակապէս ոչ-փայլուն վիճակ մը կը ներկայացնէ:

Հայերը հողագործութեան երբեք ոչ տուած չունին, բայց եւ այնպէս կը գտնուին ուրեք ուրեք այգեգործներ եւ բամպակ մշակողներ:

Գաւառներու մէջ հայերը ընդհանրապէս արհեստաւորներ եւ խանութպաններ են. սիվրիհիսարցիք մինակ հողատէր են: Թուրք տարրը ամէն տեղ մեծամասնութիւն կը կազմէ. առհասարակ հողատէր եւ կալուածատէր են ու անբաղդատելի կերպով տնտեսապէս աւելի բարձր դիրքի մէջ կը գտնուին:

Քաղքին եւ շրջականերու մէջ կան արդիւնագործական գործարաններ, որոնց բանուորներուն գրեթէ մեծամասնութիւնը յոյներ եւ իտալիցիներ են:

Իզմիրի մէջ կայ մանածի, բուրդի, լուցկիի, ձէթի, կազի, կաշիի, երկաթի, ալքոլի, ձիւնի, սառի, ատաղձի, օճառի 25-30 ֆապրիքաներ եւ բամպակի 4-5 գտարաններ:

Շրջականերու մէջ ալ կը գտնուի մեծ ու փոքր հարիւրէ աւելի ֆապրիքաներ եւ ջաղացքներ, որոնց բանուորներուն մեծամասնութիւնը օտարազգիներ են:

Եթէ Թուրքիոյ մէջ իսկական սահմանադրական ազատ կարգերը ամրապնդուին — Թուրքիոյ վիճակը որոշ ապահովութիւն ներշնչէ,— Իզմիրի եւ շրջաններու արդիւնաբերական վիճակը մեծ ապագայ կը խոստանայ:

Հանքեր եւ Անտառներ

Հանքային ճարտարարուեստը Թուրքիոյ մէջ սաղմնային վիճակ մը կը ներկայացնէ:

Երկրին մէջ տիրող անապահով կացութիւնը, ճանապարհներու չգոյութիւնը, փոխադրութեանց դժուարութիւնները եւ բռնակալութեան (աւերիչ ու քանդիչ) օրէնքները ինչպէս ուրիշ արուեստներ ու արհեստներ նոյնպէս խեղդած են հանքային ճարտարարուեստը:

Օտար եւ բնիկ դրամագլուխներու պակասը եւ ազատութենէ գրկուած ժողովուրդի մը մէջ initiative¹⁰ եւ համերաշխութեան չգոյութիւնը եւս առաւել շեշտած են այն անկեալ վիճակը որ կայ եւ կը մնայ:

Հանքագործութիւնը Թուրքիոյ ներքին նահանգներու մէջ գրեթէ գոյութիւն չունի. ծովեզերեայ նահանգներու մէջ միայն փոխադրութեանց դիւրութեանց պատճառաւ քանի մը պրպտումներ եղած են:

Հանքեր ունեցող գլխաւոր նահանգներն են. Այտըն, Պրուսա եւ Սելանիկ, մի քիչ Տրապիզոն, Գասթեմունի, Ատանա եւ Գոնիա:

Հանքային ամէնէն շատ պրպտումներ եղած են Այտընի վիլայէթին մէջ:

Թողով մէկ կողմ Պրուսայի վիլայէթի, Պալիայի երկաթխառն արծաթի եւ Սել ծով՝ էրեկլի հանխածուխի հանքերը, որոնք եւրոպական նմանօրինակ հաստատութեանց հաւասար կազմուածք եւ կարգ ու սարք մունին. մնացեալ բոլոր շահագործուող հանքերը շատ նախնական վիճակ մունին ու հանածոներու -----:

Իզմիրի վիլայէթին մէջ հանքերու շահագործման նախաձեռնողները մեծաւ մասամբ անգլիացիներն են:

Հանքերը արդիւնաբերելու համար ընդհանրապէս syndicat-ներ գոյութիւն չունին: Բացառութիւն ըլլալով երկու երեք ընկերութիւններ, ամէն պրպտումներ եւ պեղումներ անհատապէս տեղի ունեցած են:

Հանքային ձեռնարկներու մէջ շատ քիչեր յաջողած են, իսկ շատեր նիւթապէս բոլորին փճացած:

Իզմիրի վիլայէթին ամէնէն շահաւէտ եւ արդիւնաբերող հանքերը գմերիտը (éméri) եւ քրոմն են, որովհետեւ ասոնց արտածումը շատ դրամի չի կարօտիր ու օտար երկիրներու մէջ մինչեւ վերջին ժամանակներս նոյն տեսակ հանքեր գոյութիւն չունէին:

Eméri-ի գոյութիւնը Թուրքիոյ մէջ առաջին անգամ մատնանշուած է Զիհագէֆ(?) անուն ռուս նշանաւոր երկրաբանին կողմէ, որ Փոքր-Ասիոյ carte géologique շինեց:

Գրեթէ կէս դար կայ որ գմերիտը կը շահագործուի այս վիլայէթին մէջ իր շատ մը տեսակներովը եւ տարեկան արտադրութիւն է 25,000 թոն:

Իսկ chrome-ի հանքերը կը գտնուին Մաքրէի եւ Քէոյճիտաղի (երկուքն ալ Մուղլայի սանճագիւն գազաներն են) serpentine կոչուած ժայռերուն մէջ, շատ հարուստ gisementներով¹¹:

Վերջին ժամանակներու Նուվէլ-Գալեդոնիոյ եւ Քանատայի մէջ chrome-ի հարուստ հանքեր գտնուելով եւ բուռն մրցման հետեւանօք այս արդիւնաբերութիւնն ալ գրեթէ ոչնչանալով վրայ է:

----- մօտաւոր լեռներու մէջ, նոյնպէս եւ երկաթի gisementներ, սակայն ճարտարարուեստի բացակայութեան պատճառաւ ցարդ անշահագործելի կը մնան:

Կառավարութիւնը Իզմիրի վիլայէթի հանքերէն տարեկան տուրք կառնէ 30,000 լ.օ.:

Գրեթէ քառասունի մօտ հանքեր կան որոնց մեծ մասը կը կազմէ գմբարան(?):

Շահագործուող հանքերուն գործաւորներուն թիւը կը հասնի միջին հաշուով 5000ի, որոնց մեծ մասը տեղացի գիւղացիներ եւ քիչ չափով ալ կիներ են:

Կան նաեւ բաւականաչափ իտալացի եւ յոյն հանքագործներ, նոյնպէս 800էի աւելի հայաստանցի եւ տեղացի հայեր:

Գործաւորներու օրականը միջին հաշուած 0.5 մեծիտի է:

Աշխատութեան տեւողութիւնն ալ միջին հաշուով օրական 9 ժամ է:

Գարապուրուների մէջ կը գտնուի սնդիկի հանք մը, որ վերջերս անգլիական սենտիքայի մը կողմէ շահագործուելի սկսած է:

Տարեկան արդիւնաբերութիւնն է (90) թոն գուտ սնդիկ:

Էօտեմիշի մէջ ալ կը գտնուի անտեմունի հանք մը գտնուած հայու մը կողմէ:

Կան նաեւ արծաթխառն հանքեր նոյնպէս եւ կապարի որ սկսած են շահագործուել Ֆրանսացիներու կողմէ:

Իզմիրի արուարձաններէն Գորտելիոնի բարձունքին վրայ կը գտնուին ոսկիի հանքեր, որոնք ցարդ չեն շահագործուած:

Այտընի վիլայէթը ունի 195,700 հեքտար եղելինի (?) անտառներ:

Կառավարութեան տարեկան հասոյթն է 30,000 լ. օ.:

Գիտական տեսակէտով՝ ոեւէ ջանք թափած չըլլալով այս անտառներուն պահպանութեան համար եւ նամանաւոր հրդեհները՝ սոսկալի վնասներ հասցուցած են:

Իզմիրի վիլայէթին մէջ կայ (1200) քիւմեթի չափ խճուղիներ: Անոնց վարչային ժողովը բանակցութեան մէջ է անգլիացիներու հետ 25 տարուան պայմանաժամով, ճամբաներու նորոգութիւններ կատարել տալու համար, ինչպէս նաեւ նոր ճամբաներ բանալ տալու համար:

Վերջ:

Իզմիրի պատգամաւոր

Հայր Խարախաբեց

ՀԱՅԿ ԲԱԹԱԲԱՆԵԱՆ

14 Յուլիս 1909
Իզմիր

10.- Նախաձեռնութեան:
11.- Ֆրանսերէն՝ հանքերով:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ՂԱՌԻՍ XIV

ՎՐԷԺՄՍԱՆ – ՊԱՐՍԿԱՍՍԱՆ

Վրէժստանը Պարսկաստանն է, հայկական յեղափոխութեան հնագոյն հնոցներէն, որ սկզբնապէս նկատի առնուած էր իբրեւ խարխախ Կովկասէն դէպի Երկիր մարդոյժի եւ զինամթերքի փոխադրութեան: Կազմակերպական ցանցը, սակայն, յատկապէս Երկրի հիւսիսային նահանգներուն մոջ, հետզհետէ ծաւալ ստացած եւ տարածուած էր շրջանի բոլոր հայաբնակ քաղաքներուն եւ գիւղերուն մէջ: Գործունէութեան գլխաւոր կեդրոնն էր Թաւրիզ (Վրէժ) քաղաքը՝ Սալմաստ, Ուրմիա, Խոյ, Մակու, Թաղէի վանք յեմակէտերով: Հեռաւորութեան պատճառով Թեհրանի եւ Սպահանի (Նոր Ջուղա) կոմիտէութիւնները որոշ իմաստով կը մնային մեկուսացած: Պարսկաստանի յեղափոխական շարժումներու ընթացքին եւս, երբ 1907ին նոր գահ բարձրացած Շահը՝ Մեհմէդ Ալի փորձեց տապալել տարի մը առաջ հաստատուած Սահմանադրութիւնը, դարձեալ Ատրպատականն էր որ ոտքի կանգնեցաւ ազատական կարգերու պաշտպանութեան համար: 1911էն ետք միայն, Սահմանադրութեան վերջնական յաղթանակով, երբ հայկական թէ պարսկական իմաստով թեհրանը դարձաւ որոշումներու կեդրոն, ձեռնարկուեցաւ մայրաքաղաքին մէջ երկրորդ Կ. Կոմիտէութեան մը ստեղծումին:

Ինչ կը վերաբերի Պարսկաստանի քաղաքական ու ընկերային շարժումներուն, պայքարը հակամարտ կողմերու միջեւ տեւեց տարիներ եւ յատկանշուեցաւ թէ՛ երոպական պետութիւններու, յատկապէս Ռուսիոյ եւ Անգլիոյ բռն մրցակցութեամբ՝ շրջանին վրայ գերակայութիւն հաստատելու, եւ թէ ներքին յեղափոխական ու հակաշեղափոխական ուժերու արձանագրած յաջորդական յաջողութիւններով եւ ձախողութիւններով: Մրցակից տէրութիւնները համաձայնաբար երկիրը բաժնած էին ազդեցութեան երկու գօտիներու հիւսիսը Ռուսիոյ, հարաւը բրիտանական կայսրութեան: Այս վերջինը շահագրգռուած էր Հնդկաստանի իր հարուստ գաղթալայրը տանող ճամբու ապահովութեամբ, իսկ Ռուսիոյ համար Իրանի բարձրաւանդակէն կ'անցնէր հարաւի տաք ջուրերուն հասնելու ուղին: Այս բոլորին մէջ Օսմանեան պետութիւնը եւս անտարբեր չէր սահմանակից Պարսկաստանի անցուղարձերուն, որոնք կը զուգադիպէին նոյնպէս Թուրքիոյ մէջ խմորուող անցուղարձերուն: 1907 թ. Յուլիսին սուլթանական զօրքերը մտած էին արդէն Ուրմիոյ շրջանը եւ կը քալէին Սալմաստի ուղղութեամբ, գործակից ունենալով տեղւոյն քրտական ցեղախումբերը: Ներխուժման նպատակներէն մէկը՝ եթէ վերջնական գրաւումն էր հիւս. Իրանի այս հողամասին, մեծամասնութեամբ բնակուած ցեղակից թուրք ազգերիներով, միւսը անկասկած կը միտէր հարուածել հայ յեղափոխականները, որոնք, ինչպէս յիշուեցաւ, Ատրպատականը կ'օգտագործէին զէնք ու մարտական խումբեր փոխադրելու դէպի Երկիր:

Հ.Յ.Գ. Չորրորդ Ընդհ. Ժողովը նոյն թուականին բանաձեւ ընդունած էր՝ տեղւոյն դաշնակցական մարմիններու միջոցաւ զօրավիզ կանգնիլ Պարսկաստանի ազատական շարժումին: Տատամսողներ կային, չէզոքութիւն պահելու կողմնակիցներ՝ նկատի ունենալով երկրի բնիկ ազգաբնակչութեանց յետամնացութիւնը, կրօնական մոլեռանդութիւնը եւ հայութեան սակաւաթիւ ու ցրուած ըլլալու հանգամանքը (ընդամէնը 70.000): Բայց եւ այնպէս, յետադիմական կարգերը վերահաստատելու ուղղութեամբ նոր գահակալին՝ Մեհմէտ Ալի Շահին ձեռք առած բռնապետական միջոցները՝ մոլեգին Արեւելեան Բիւրոն ներգործօն դերակատարութեան եւ Վրէժստանի Պատգամատրական ժողովը, իր կարգին, որոշեց վերջ տալ վարանումներուն եւ գործել համերաշխաբար սահմանադրական ուժերու կողքին:

1907 թուականի վերջերուն Ռոստոմ՝ իբրեւ ներկայացուցիչ Դաշնակցութեան, անցաւ Թաւրիզ, ապա Թեհրան, ուր համաձայնագիր կնքեց սահմանադրական Պարսկաստանի ղեկավարներուն հետ: Դաշնակցութիւնը կը ստանձնէր երոպական միջավայրի մէջ աջակցութիւն ապահովել նոր վարչակարգին. երկրին մէջ միապետականներուն դէմ պայքարի կռուող ուժերով եւ արհեստագիտական միջոցներու (ռումբ,

պայթուցիկ նիւթեր, հրքիո) հայթայթումով: Փոխարէնը, պարսիկները կը խոստանային ընդլայնել հայոց ազգային իրաւունքները եւ պետական մշակելի հողեր յատկացնել հայ գաղթականներուն: Շուտով Կովկասէն Ատրպատական անցան Քեռին (Արշակ Գաւաթեան) իր խումբով եւ փորձուած մարտիկներ,- Չուլումաթ, Սմբատ, Մարտիրոս Չարուխճեան, Դաշնակցական Խեչօ, Գալուստ Ալոյեան եւ ուրիշներ, որոնք իրենց բացառիկ մարտունակութեամբ վճռական բաժին պիտի ունենային տարուած յաղթանակներուն մէջ: Ռոստոմ եւս վերադարձած ըլլալով Թաւրիզ, տարուկէս ամբողջ մնաց Ատրպատականի շրջանին մէջ եւ ձեռք առաւ հայոց կողմէ գործին ընդհանուր ղեկավարութիւնը:

Մինչ երկրի հիւսիսային սահմաններուն մէջ յեղափոխութիւնը յաղթանակած կը թուէր, յանկարծ, 1909 թ. Ապրիլին, ռուսական զօրքը, օտարականները եւ ռուս քաղաքացիները պաշտպանելու պատրուակին տակ, ներխուժեց եւ գրաւեց Թաւրիզը, վերջ մը դնելով այնտեղ մղուող անվերջանալի կռիւներուն: Այդ պայմաններուն մէջ Ռոստոմ, Քեռի եւ դաշնակցական միւս մարտիկները հեռացան Ատրպատականէն: Հակառակը, դաշնակցական ուրիշ մարտիկ մը՝ Եփրեմ (Դաւթեան) փոքրաքիւ ուժով բայց վճռական քայլով տիրացաւ Ռաշտ քաղաքին, ուրկէ յառաջանելով եւ հետզհետէ իր զօրքին թիւը ստուարացնելով, գրաւեց Էնզելին, Ղազուիքը եւ Շահին դրկած գորագունդները ջախջախելով յաղթական մտաւ Թեհրան (1909 թ. Յունիս 29): Պարսկական յեղափոխութեան առաջնորդ Սաթթար խանի հետ, Եփրեմ իրաւամբ պիտի համարուէր Սահմանադրութեան գլխաւոր ազատարարը: Այս յաղթանակով ալ վերջ պիտի գտնէր պարսկական յեղափոխութեան առաջին փուլը:

*
**

Վրէժսպանի յարկացում գլուխը բաղկացած է հետևեալ բաժիններէն.-

- 1.- «Տեղեկագիր Հ.Յ.Դ. Վրէժսպանի Կ Կոմիտէի, 1908-1909», գրուած Հինգերորդ Ընդհ. Ժողովի պայրգամատր Նիկոլ Մալխանեանի (Վահան) կողմէ:
- 2.- «Քաղաքացիներ Հ.Յ.Դ. Վրէժսպանի III Շրջանային պայրգամատրական ժողովի որոշումներից» (1908 թ. Յունուար):
- 3.- «Ընծայրի (Գէորգ Ծ. վրդ. Նալպանյան) Կրեդեկագիրը»:
- 4.- Ռոստոմի նամակը Հ.Յ.Դ. Բիրոններուն, պարսիկ սահմանադրական ղեկավարներու հետ իր բանակցութեանց եւ կնքուած համաձայնութեան մասին:
- 5.- Շարք մը յայտարարութիւններ, ինչպէս նաեւ փոխանակուած գրութիւններ մարմիններու եւ ընկերներու միջեւ:

Ե. Փ.

Փաստ. 476-142

1.- ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. ՎՐԷՃՍՍԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵԻ

1908-1909

1908 սկզբին IV Շրջ. ժողովից ընտրուած Կ. Կ. գործի անցաւ Հէնց իր ընտրութեան օրից: Պարտք ունենալով կապել իրար հետ այնպիսի մի ընդարձակ շրջանում գտնուող մարմինները, Կ. Կ. յարմար գտաւ որ ընկ. Գարեգինը¹ նորից անցնի Մինարէթ², որտեղից հեշտութեամբ կարող է հաղորդակցութիւն պահպանել թէ՛ Փարոսի³ եւ թէ՛ Աւարայրի⁴ հետ: Գիլանի պատգամաւորի առաջարկի համաձայն որոշեց, որ ընկ. Վ. Ն էլ գոնէ մի քանի ամսով անցնի Գիլ[անի] շրջանը եւ շրջելով թէ՛ դրութեան հետ մօտից ծանօթանայ եւ թէ՛ միեւնոյն ժամանակ կազմակերպ[ութեան] անհրաժեշտ համարուած գործերը կարգի բերէ եւ նորից աւելի հաստատուն հիմքերի վրայ դնէ կարիք եղած տեղերում կազմակերպութիւնը: Մինչեւ IV Շրջ. ժողովը դեռ եւս կային մարմիններ, որոնք վարանում էին խմբակային նախկին ձեւերի մէջ որեւէ փոփոխութիւն առաջ բերել, բայց IV շրջ. ժողովում մշակուած ներքին կանոնագիրը պատուիրում էր որոշ փոփոխութիւններ մտցնել նախկին օժանդակ խմբակային ձեւերի մէջ եւ կազմակերպել նրանց որքան կարելի է ըստ պրոֆեսսիաների, եթէ ոչ ուժեղ դասակարգային կուր մղելու համար, գոնէ դասակարգային դաստիարակութիւն տալու համար: Այն վայրերը, որոնք չունէին իրենց պատգամաւորը Շրջ. ժողովում], Կ. Կ. գրաւոր կերպով աշխատեց պարզել մեր նոր կանոնադրութիւնը եւ նոր գործելակերպը եւ յորդորեց նրանց եւս նորոգ ուժերով աշխատիլ կարգի բերել իրենց շրջանի կազմակերպական գործերը:

Կազմակերպուած շրջաններ ունեցել ենք Վրէժ, Մինարէթ, Գիլան եւ Շահ⁵ կոմիտէութիւնները: Կազմուածուած վիճակում է եղել Փարոսը, այդտեղ գտնուող ընկերների հետ է, որ Կ. Կ. կապ է պահպանել:

ՅՅ8-ի սկզբին ամենահրատապ հարցը դա ինքնապաշտպանութեան հարցն է, որը շնորհիւ քրտերի աւազակութիւնների եւ աւարառութեանց ամէնից աւելի բորբոքուած էր Մինարէթի եւ Փարոսի շրջանում: Այս առթիւ արդէն ժանամակին Կ. Կ. արել էր ինչ որ պէտք էր. այն է, դիմուած էր Արեւելեան) Բ[իւրոյ]ին զէնք եւ ռազմ[ամթերք] հայթայթելու, որոնք իրենց իսկական արժէքով ծախուելով պէտք է փողերը վերադարձուէին: Որոշ քանակութեամբ մարտական ուժեր եւս բերուած էր Փարոսի ընկերների խնդրանք, որոնք իբր թէ պիտի հոգային մարտիկ ընկերների ապրուստը: Սակայն կազմակերպութիւնը ներկարարի խանութի ջնմանւելու պատճառով, որովհետեւ պահանջուածը անմիջապէս նոյն վայրկեանին չէր հոգացուում, ուստի եւ ընկեր-

ները անհնարին գտան իրենց խոստումը կատարել, առարկելով նմանապէս, որ ժողովուրդը չի ցանկանում այժմ տալ իր խոստացածը: Նոյնպիսի խաղ խաղացուելու էր հաւանօրէն զէնքերի գլխին, բայց որովհետեւ կանխավճարները արդէն առնուած էին սկզբից, ուստի եւ շատ էլ յաջող չանցաւ: Չնայած մենք ոչ մի իրաւունք չունէինք վարուել ժողովրդի քմահաճոյքի համաձայն եւ աւելորդ ծախսեր անել, սակայն ի նկատի ունենալով, որ դեռ եւս զէնքերի հաշիւները չեն վերջացած, ուստի եւ յարմար համարուեց թողնել, որ ընկերները մնան այնտեղ, շարունակ շրջին եւ աշխատին խմբեր պատրաստել, օրէցօր սպասուող քրտական յարձակումների առաջն առնելու համար: Շնորհիւ հանգուցեալ ընկ. Խորէնի եւ Նուրուհի ջանքերի Փարոսի գիւղերում մարտական խմբերի կազմակերպման գործը բաւական յաջողութիւն ունեցաւ եւ համարեա բոլոր գիւղերը մեծ կամ փոքր չափով պատրաստ էին դիմադրութիւն ցոյց տալ յարձակման պարագայում: Մարտական ուժերի հետ միատեղ սկսուեց նաեւ կազմակերպուել քաղաքական խմբեր, որը սակայն նախկին թուին չէր կարող հասնել: Փարոսի ընկերները նկատելով, որ առանց մարմին՝ իրենց գործը առաջ չի կարող գնալ, մի քանի անգամ մասնաւոր կերպով դիմումներ եղաւ մեզ, այնտեղ պահել մի ներկայացուցիչ Կ. Կ. ի կողմից լիազօրուած: Թէպէտ մեզ համար ցանկալի էր այնտեղ մարմին ունենալ, սակայն նկատելով որ առ այժմ այդ անհնարին է, ուստի որոշեց Կ. Կ. ը Աւարայրում եղած ընկերներից ընկեր Մ...եանին թողնել Փարոսում, որտեղ գնացել էր նա գործով, իբր ներկայացուցիչ, սակայն Աւարայրում մի քանի անձնական խնդիրներ կարգադրելու համար վերադառնալով Աւարայր՝ մի օր էլ լսեցինք որ թողել անցել է Կովկաս, առանց այդ մասին մեզ որեւէ բան ասելու: Թերեւս մեր կարգադրութիւնից տեղեկութիւն չունենալով ընկ. Մ. առանց որեւէ խօսքի համաձայնուել էր ճանապարհածախս վճարել նրան եւ նրա որդեգրի հետ ճամբել Կովկաս:

Այսպէս Փարոսի գործերը անկերպարան վիճակի մէջ մնացին, մինչեւ որ Ա[րեւելեան] Բ[իւրոյ]ից ընկ.

1.- Գարեգին՝ Թաղտեսեան Սամսոն, քեռորդին Քրիստափոր Միքայելեանի: Կը ղեկավարէր Ատրպատականէն դէպի Վասպուրական եւ ընդհանրապէս երկիր մարտական խումբերու եւ զենքերու փոխադրութեան գործը:
2.- Մինարէթ՝ Սալմաստ:
3.- Փարոս՝ Ուրմիա:
4.- Աւարայր՝ Խոյ:
5.- Շահ՝ Թեհրան:

Վ. [ամբան] եւ Կ. Կ. իս անդամներից մէկը անցաւ Փարոս եւ այնտեղ ժամանակաւոր մարմին կազմեցին, որը եւ շարունակուեց ի վարել գործերը:

Չնայած մեր ջերմ ցանկութեան, աշխատիլ որքան հնարաւոր է յաճախակի յարաբերութեան մէջ լինել մեր կոմիտէների հետ, սակայն չի կարելի ասել, որ այդ ամբողջապէս մեզ յաջողուեց: Այդ կողմից դանդաղել են Գիլան եւ Շահ կոմիտէները, նամանաւանդ վերջինս, որը մեր նամակներին կամ չէր պատասխանում եւ կամ եթէ պատասխանում էր, այն էլ շատ հազուադէպ դէպքերում, իսկ տարուայ կէսից սկսած այնպիսի մի լուրջ խնդիր սկսեց պահպանել, որ միանգամայն մեզ զարմացրեց: Այն ինչ իր աշխարհագր. դիրքով լինելով ամենակարեւոր վայրում մենք շատ բաներ էինք սպասում նրանց տուած տեղեկութիւններից: Այնպէս որ մենք թէպէտ շարունակ գրում ենք, բայց չգիտենք այնտեղ մարմինը ժողովներ գումարում է գոնէ մեր նամակները կարդալու համար: Ենթադրուեց, որ հեռավորութեան եւ քաղաքական հանգամանքների անկարող եղանք ընկերներից մէկին ուղարկել Շահ, այնտեղ կազմակերպական գործերի վիճակին նայելու եւ այնտեղի ընկերների այդօրինակ վարմունքի պատճառները քննելու:

1907 թուից արդէն սկսած մեր շրջանի եկամուտները սկսում են կամաց կամաց նուազիլ, կուսակցութիւնը ոտք է կոխում 1908 թուականը աւելի եւս նիւթական աննախանձելի վիճակում: Կ. Կ. ինչ որ կարող էր անել մարմինների այդ ուղղութեամբ թափելիք աշխատանքի համար՝ արել է, այն է գրաւոր կերպով այս ընդհանուր ցաւը պարզել է առանձին առանձին բոլոր մարմիններին եւ յորդորել ընկերներին, որքան հնարաւոր է կանոնաւորել նիւթական հաշիւները. մի քանի տեղեր մինչեւ իսկ Կ. Կ. ի անդամները անձամբ գնացել են: Բայց մի բան որ ընդհանրապէս նկատելի է, այդ այն է, որ հաշիւները ուղարկուեցին ոչ ժամանակին եւ յաճախ ոչ Կ. Կ. ին ցոյց տուած հաշիւների ձեւով, որով եւ մեր հաշիւները մեզ համար անօգտաւոր եւ չենք կարողանում ժամանակին մաքուր հաշիւ ներկայացնել ուր հարկ է:

Նիւթական այս նեղ վիճակը մէջ դնելով մեզ, յաճախ զանազան շրջաններից այնպիսի յանձնարարութիւններ են ստացուում, որի 1/10-ը անգամ անկարելի է մեր նիւթական պայմաններում բաւարարութիւն տալ: Եւ Կ. Կ. կաշուից դուրս էր գալիս հսկայական պահանջներին բաւարարութիւն տալու: Փոխառութիւնը փոխառութեան ետեւից, այն յուսով որ ժամանակին հնարաւորութիւն պիտի ունենանք այդ բոլորը գոցել շրջաններից ստացուելիք արդիւնքով: Սակայն շրջանները ցամաքած աղբիւրի պէս կաթիլներով եւ յաճախ նոյնիսկ առանց այդ կաթիլներն անգամ ցոյց տալու երեւակայում է, որ ինքը իր պարտականութիւնը կատարել է եւ այլեւս այդ ուղղութեամբ անելիք չունի: Այսպիսի հան-

գամանքներում բնական է, որ մեր ջանքերի մեծ մասը թափուում էր այս ու այն կողմ ընկած փող հայթայթել եւ երբեմն էլ զուր որոնումներից յոգնած ձեռքերը ծալել եւ հեռագրներով ու նամակներով ուժբակոծել մարմինները, որ շտապեցնեն իրենց հաշիւները:

Դեռ եւս հին Կ. Կ. սկսել էր մի հանգամանակութիւն, որը շարունակուեց նոր Կ. Կ. ի կազմը եւ սակայն որը շտապեց այն արդիւնքը, որը սպասում էինք, շնորհիւ այն հանգամանքի, որ խուլիզանական տարրերի պրոպոկացիաների տպաւորութիւնը դեռ թարմ էր, որ մշտապէս դրանով զբաղուող ազատ ընկերներ չունէինք եւայլն:

Ընդհանրապէս, այն շարժումը, որ համարեցինք խուլիզանական երկու բնորոշ գոյն էր կրում, մէկ այն, որ աշխատում էին մարդիկ սկզբունքի բողոքով սքողել իրենց արածը եւ մէկ էլ այն, որը ոչ մի քող չէր կրում՝ մերկ բամբասանք: Առաջինը արձագանգ էր տալիս մեր հասկացող համարուած մասսայի մէջ, միւսը՝ խաւար համարուածների մէջ: Մենք երկար չենք խօսի այդ առթիւ, բայց նկատենք որ այդ ազդեցութիւն ունեցաւ ոչ միայն մեր մասսայի վրայ այլեւ մեր գործի վրայ: Ետ անգամներ մենք ստիպուած էինք գուր անախորժ ասէկոսէների առիթ չտալու համար գիջումների դիմել եւ համբերութեամբ սպասել մինչեւ որ կ'անցնի այս աննպաստ պայմանների ժամանակաշրջանը: Եւ իրօք, երբ վտանգի ռոպէները մօտեցան, դարձեալ մենք եղանք, որ պէտք է մտածէինք եւ հոգայինք խաղաղ ազգաբնակչութեան ապահովութեան մասին:

Վտանգի օրերին դէպի մեզ մօտեցան նաեւ ասորիները, որոնց մօտեցնողը թերեւս, ոչ այնքան գաղափարն էր որքան քրտական պարբերական շահատակութիւնները, որոնք ամէնից աւելի ծանրանում էին թուրք եւ ասորի ազգաբնակչութեան վրայ: Անձնական օրինակը սովորեցրեց նրանց, որ ապահով ապրելու համար անհրաժեշտ է ինքնապաշտպանութիւն: իսկ լաւ ինքնապաշտ. միայն հնարաւոր է այն ժամանակ երբ այդ կազմակերպուած է եւ որոշ սահմաններում դրուած:

Ասորիների մէջ որոշ կազմակերպութիւն առաջ բերելու նախնական փորձերը Մինարէթի ընկերներին է պատկանում: Այնտեղ է, որ առաջին անգամ «Եամիրամ» անուան տակ մի փոքրիկ խմբակցութիւն է առաջ գալիս, որի ազգային գոյնը երեւում է թէկուզ հէնց այն անունից որ իր վրայ էր առել այդ խմբակցութիւնը: Չունենալով որոշ ծրագիր, այդ փոքրիկ խմբակցութիւնը ամէն կերպ ձգտում էր «լինել ասորիների համար այն ինչ որ Դաշնակցութիւնն» է հայերի համար»: Սակայն նրա գործունէութեան գլխաւոր նպատակն էր կռիւ մղել կաթոլիկ կղերականութեան դէմ, որը թէ՛ բարոյապէս եւ թէ՛ մտաւորապէս այլասերում էր առանց այդ էլ ստրկութեան եւ խաւարի մէջ այլասերուած ասորիներին: Սա մի կուլտուրական կռիւ էր, որ

ցանկանում էր մղել ասորին եւ որի արմատները շատ հեռուից ու խորից էր գալիս: Այն խիստ հալածանքը որին ենթարկուեցին ճիզուկները Պրանսիայում վերջին երկու տասնամեակում կարծես եկաւ խթանելու նաեւ ասորիների գիտակից ինտելիգենցիայի ազգային ինքնաճանաչութեան ջիղերը: Զարթնումի փոքրիկ ցնցումներ են երեւում, եւ ինչքան էլ շուրջիստ գոյն էր կրում այդ արթնացումը յանձին թէկուզ իր «Աստղ» ականների, այնուամենայնիւ դա մի ուրախալի երեւոյթ էր ասորական տիտուր իրականութեան մէջ:

Մենք, որ գիտակցում էինք այդ արթնացման ամբողջ օգտակարութեանը, պարտաւոր էինք ջանքեր չինայել միշտ բորբոքուած պահելու եւ աւելի եւս կանոնաւորելու այդ շարժումը: Անշուշտ միամտութիւն պիտի լինի երազել անգամ, որ «Աստղականներից» կարելի կը լինի մի աշխատաւորական կուսակցութիւն առաջ բերել՝ նման Դաշնակցութեան, բայց այնուամենայնիւ մեր շրջապատի իրական պայմանները դրդում էին մեզ տակտիկական հողի վրայ en bloc գործել միասին: Բացի այդ, այդ մերձեցումը մեզ հնարաւորութիւն պիտի տար մուտք գործել նաեւ մեզ կից այդ ազգաբնակչութեան մէջ եւ մեր ուղղութեամբ էլ խմբակներ կազմակերպել. եւ ո՞վ գիտէ թերեւս գար մի օր, որ նրանք էլ ունենային իրենց զուտ աշխատաւորական կուսակցութիւնը: Այս անհրաժեշտ էր թէ՛ նրանց եւ թէ՛ մեր շահերի տեսակէտից, որովհետեւ մեզ համար շատ դժուար եւ գրեթէ անհնարին էր գործ ունենալ ամբոխի հետ, այն ինչ մի կուսակցութեան հետ գործ ունենալ եւ գործ սկսելը շատ աւելի դիւրին ու օգտակար կարող էր լինել:

Դեռ եւս Յունիս ամսին էր, որ Կ. Կ. իս մի անգամը, որ Փարոս³ էր գտնուում, ջանքեր եղան ինքնապաշտ. հողի վրայ միասին մի խառը մարմին ստեղծել կուսակցութեանս ղեկավարութեան տակ եւ դէմ դնել քրտական աւարառութեանց: Այս անհրաժեշտ էր նամանաւանդ այն տեսակէտից, որ այդ շրջանի շատ գիւղերում հայ եւ ասորի ազգաբնակչութիւնը խառն էին ապրում եւ անկարելի էր գիւղի մի մասը կազմակերպել եւ միւս մասը թողնել երեսի վրայ: Կամ պէտք էր նրանց էլ պաշտպանել հայ գիւղացու հաշուին կամ պէտք է թողնել որ հայ գիւղացին էլ նոյն վտանգին ենթակայ մնայ, ինչպէս ասորի եւ թուրք ազգաբնակչութիւնն է:

Հրաւիրուած գիտակիցներից ոմանց մէջ կրօնական ջերմեռանդութիւնը բորբոքուեց, ոմանց մէջ շուրջիցմը, շատ շատերի մէջ խօսողը պարզապէս վախն էր, մի քանիսի մէջ էլ աչքի ընկնելու երկիւղը եւ այսպիսով այդ փորձերը ապարդիւն անցան: Անցաւ մի երկու ամիս, մինչեւ որ այդ մոռացութեան տրուեց, եւ երբ Արեւելեան⁴ Բիւրոյի ներկայացուցիչը եւ Կ. Կ. իս մի անգամը կազմակերպական գործերով Փարոս էին անցել, նրանց յաջողում է մի քանի գիտակից ասորիներից մի մարմին ստեղծել, որը պէտք է ջանար ժողովուրդը

կազմակերպել: Այդ նորակազմ մարմինը անմիջապէս գործի գլուխ անցաւ, թարգմանեց մեր ներքին կանոնադրութիւնը ասորերէն: Սակայն այդ բանից յետոյ շնորհիւ Փարոսի հետ մեր յարաբերութիւնների անկանոնութեան, մեր զբաղուած լինելուն չկարողացանք իմանալ թէ մեր սկսած գործին ինչ ուղղութիւն տուեց տեղական մարմինը եւ ինչ եղաւ դրա գործունէութիւնը:

Յունիս 8-ը Պարսկաստանի վերածնութեան մէջ նշանակալից օրերից մէկն է, երբ բռնկուեց էրկրորդ յեղափոխութիւնը, այս անգամ բռնկուեց արիւնի եւ գոհողութեանց ճամբան: Երբ առաջին յեղափոխութիւնն էր կատարուում, խաղաղ, այսպէս կոչուած անարիւն յեղափոխութիւնը, Կ. Կ. ոչ մի միջոց չէր խնայում այդ շարժմանը օգնելու եւ որովհետեւ դեռեւս թարմ էին հայ-թուրքական ընդհարումների յիշողութիւնները, դարաւոր Ֆանատիզմը դեռեւս ստիպում էր երկու ժողովուրդներին էլ բաւական պատկառելի հեռավորութեան վրայ մնալ եւ որ վերջապէս առաջին յեղափոխութիւնը խօսքի, համարձակ ու խելացի խօսքի սահմանից դէնը չէր անցնում, ուստի եւ մենք ուրիշ դիրք չէինք կարող բռնել քան այն, ինչ որ որոշուեց ու գործադրութեան մէջ էլ մտաւ կուսակցութեան ընդհ. ժողովում:

Սակայն անցան այդ օրերը, երկրորդ յեղափոխութեան թէ՛ գոյնը, թէ՛ դրդապատճառները եւ թէ՛ ժողովրդական տրամադրութիւնները այնպէս էր, որ մի ըրպէ մոռացնել էր տալիս արդէն հնացած զգացումները եւ լցնում երկու ազգերին բաժանող անջրպետը:

Նախկին մի քանի ամիսներում, թուում էր թէ թաւրիղի կռիւները պէտք է վերջ գտնեն յօգուտ կառավարութեան: Ամբողջ Պարսկաստանը եւ նոյնիսկ Թաւրիզի կէսից աւելին, թշնամական դիրք բռնած յեղափոխական փոքրամասնութեան դէմ, վայրենաբար խեղդելու էր ձգտում այն շարժումը որին վիճակուած էր ոտքի հանել ամբողջ Պարսկաստանը: Այս, առ երեւոյթս թոյլ հանել ամբողջ Պարսկաստանը, ինչքան էլ մօտ էր մեր ցանկութիւններին եւ ցանկալի իր յաջող լուծումով, սակայն մենք կանգ էինք առնում վերոյիշեալ հանգամանքի առաջ եւ բացի այդ՝ մենք գուրկ լինելով ցանկացած միջոցներից, ստիպուած էինք սպասել եւ շարունակել հին գործելակերպը, որը կայանում էր նրանում, որ եղած կուսակցութեան հետ համերաշխութեամբ զանազան թէ՛ ներքին՝ կուսակցական, թէ՛ արտաքին՝ քաղաքական խնդիրներում խորհուրդներ էինք տալիս եւ խորհրդակցում:

Այս ժամանակի ընթացքում մենք գործ ունէինք մեծ մասամբ այս կամ այն յեղափոխական մարմին հետ: Յուլիսի վերջերին էր որ Արեւելեան⁵ Բիւրոյից ընկեր Վահաբը⁶ եկաւ մեր շրջանը: Մի շարք ժողովներում բա-

6.- Վահաբ՝ Վոսմեան Արշակ:

ցատրուեց մեր ներկայ նիւթական եւ բարոյական ոյժերը եւ գտանք որ շրջաններից շատերում նոյնիսկ ինքնապաշտ. համար բաւարար ոյժեր չունինք եւ Կ. Կ. աշխատեց միջոցներ ձեռք առնել որպէսզի ինչքան հնարաւոր է ուժեղացնել ինքնապաշտպանութիւնը, որի նկատմամբ մեր ժողովուրդը չափից աւելի անհոգ ու անտարբեր է: Այս առթիւ թէ՛ Փարոսում եւ թէ՛ Մինարէթում հարկաւոր միջոցներ ձեռք առնուած էին: Մնում էր Վրէժը, Շահը եւ Գիւլանը: Վրէժի նկատմամբ դիմուեց թեմակալին, որ նրա միջոցով հանգանակութիւնը սկսուի եւ թեմ. ժողովից ընտրուած կոմիսիայի ձեռքով ծախսուեն այդ փողերը: Կուսակցութեանս մնում էր դեկավարել ինքնապաշտ. գործը, ոյժերը, գէնք ու ռազմամթերք հայթայթել: Առանձնապէս խոյս տուինք մենք փողային հաշիւներից, որովհետեւ շատ ասէկօսէներ միայն այդ խնդրի շուրջն են պտտուում եւ որի չէզոքացումով վերացրած կը լինենք բամբասանքների մի խոշոր մասը:

Այս առաջարկը ոչ մի հետեւանք չունեցաւ, որից երեւաց, որ կուսակցութիւնից դուրս, որեւէ հաստատութիւն ոչ միայն անկարող է մեր իրականութեան մէջ ինքնապաշտպանութեան գործը վարել, այլեւ նա անկարող է հարկաւոր միջոցները հայթայթել:

Ընկ. Վահաբի գալը նաեւ այն նշանակութիւնը ունեցաւ որ մեր եւ թուրք յեղափոխ. մասնաւորապէս Ս.խ-ի յարաբերութիւնները եղան նախկինից աւելի մտերմական, այնպէս որ կարելի էր ասել համարեա ոչ մի քիչ ու շատ աչքի ընկնող գործ տեղի չէր ունենում, որտեղ մեր խորհրդակցութիւնը չլինէր: Այդ ժամանակ հրատապ հարցերից մէկն էր հաշտութեան խնդիրը եւ բանակցութիւններ էին տեղի ունենում այդ առթիւ: Կ. Կ. իս մշակած հաշտութեան պայմաններն էին որ մեծ մասամբ առաջարկուեց թուրքերի միջոցով: Բացի այդ օգտուելով այն հանգամանքից, որ ընկ. Սեպուհը նոյնպէս ներկայ էր, նրա կողմից մի շարք անհրաժեշտ զինուորական խնդիրների վերաբերեալ խորհուրդներ տրուեցին: Այսքան մօտեցնելով մեր յարաբերութիւնները, մեր բարեկամները զարմանում էին, որ ինչո՞ւ խոսսափում ենք կռուի ելնել, քանի որ Դաշնակցութիւնը՝ այնպէս զօրեղ, այնքան կարող մի կուսակցութիւն է եւ թերեւս մի քիչ էլ կասկածում էին ներքուստ մեր վերաբերմունքի անկեղծութեան վրայ: Սակայն երբ մենք պատճառաբանում ենք մեր ակտիւ չմասնակցելը ընդհանրապէս հայերիս բացառիկ դրութեամբ, իրենց ժողովրդի ֆանատիզմով, հաւանական պրովոկացիաներով եւ այլն, նրանք էլ կամայակամայ, կամ երեւի քաղաքավարութիւնից դուրսուած համաձայնում էին մեզ հետ եւ իրենց ուրախութիւնն ու շնորհակալութիւնը յայտնում նրա համար ինչ որ արւում է մեր կողմից:

Ընկ. Վահաբի ներկայ եղած ժողովներից մէկում (Յուլիս 30-ին) երբ հարց է ծագում թէ ինչ չափով պէտք

է մենք մասնակցութիւն ունենանք ներկայ շարժումների մէջ, ի նկատի ունենալով նոյնիսկ որ այդ շարժումները տեւական բնոյթ չունին եւ չեն կարող համատարած ռէակցիային հարուածել, քանի որ այդքան նեղ է ու փոքր այն շրջանը որի մէջ տեղի է ունենում յեղափ. ըմբոստացումի այս փոքրիկ քայլերը, ժողովը եկաւ հետեւեալ եզրակացութեան, որ մնալով Ընդհ. ժողովի գծած սահմաններում ընդհանրապէս, մենք այժմ չպիտի զլանանք օգնելու նաեւ յեղափոխ. մարտիկներին գէնք, ռազմամթերք, խնձորներ⁷ եւ նոյնիսկ դեկավար ուժեր տալու հարկ եղած դէպքում, բայց ի հարկէ այս բոլորը պէտք է տեղի ունենան գաղտնի, զանազան պրովոկացիաների առիթ չտալու համար:

Մեր յարաբերութիւնները շարունակուում են այս ձեւով մինչեւ երկու երեք շաբաթ եւս, որի ընթացքում մի շարք փառաւոր յաղթանակներ տանելով աւելի եւս բարձրանում է ժողովրդի յեղ. տրամադրութիւնը. սակայն միւս կողմից նկատելի էր մի ներքին անկարգ վիճակը, որը գնալով թերեւս աւելի եւ աւելի պիտի ջլատէր յեղ. ուժերը, այն ինչ միապետականները կրած պարտութիւններից յետոյ նորանոր ուժերով թարմացնում էին իրենց նօսրացած շարքերը:

Հէնց այս ժամանակներին էր (Օգոստ. 18-ին) որ մեզ մօտ է գալիս Ա[րեւելեան] Բ[իւրոյ]ի յանձնարարականով ընկ. Բրինդարը⁸ եւ յայտնում, որ Ա[րեւ.] Բ[իւրոն] որոշել է ակտիւ կերպով մասնակցել շարժմանը, դրա հետ միասին մի քանի Կ. Կ. նոյն որոշումն են տուել եւ նոյնիսկ զարմացել թէ ինչպէս մենք անտարբեր ենք գտնուել այդ շարժումների նկատմամբ:

Այսպիսով մի անգամ եւս ասպարէզ է գալիս մեր մասնակցութեան խնդիրը. երկար վիճաբանութիւններից յետոյ ժողովը կանգ է առնում երկու բանաձեւերի վրայ որոնցից մէկը⁵ ձայն ընդդէմ 2-ի անցնում է: Այդ բանաձեւները հետեւեալն են.

Ա.- Բանաձեւ որ ընդունուեց ժողովում:

Ի նկատի ունենալով
1) Որ այս նոր ազատագրական շարժմանը, մենք որպէս յեղափոխ. պարտաւոր ենք մասնակցել, որովհետեւ մասնաւորապէս պարսկահայերի եւ ընդհանրապէս ամբողջ Մերձաւոր Արեւելքի քաղաքական կացութեան վրայ կարող է ազդել շարժման այս կամ այն կերպի վախճանը. 2) որ մեր մասնակցութիւնը շարժմանը կը տայ ցանկալի ուղղութիւն եւ տեւողութիւն. 3) որ ներկայ ծանր օրերին մեր մասնակցութիւնը կարելի է համարել ե՛ւ այժմէական ե՛ւ նպատակայարմար, որով թերեւս ցանկալի ոգեւորութիւն կարելի կը լինի ներշնչել

7.- Չեռնառուներ:
8.- Բրինդար՝ Սելթոնեան Արտաշէս:

լքուած ու յուսահատ ժողովրդին 4) որ նախկին նկատումները ա) պրովակացիա հայերի դէմ. բ) մեր մասնակցութեանը վերագրել օտար պետութիւնների ոչ ցանկալի միջամտութեան, գ) շարժումները անյուսալի են, ժողովուրդը անպատրաստ. դ) մենք տաճկահայ դատին վնասած կը լինենք կասկածի տակ դնելով մեր կայանները եւ հալածանքի ենթարկելով դաշն. ընկերներին եւայլն) մասամբ իրենց նշանակութիւնը կորցրել են 5) որ ներկայ շարժման հասած հարուածը մահացու կը լինի նաեւ սահմանադրութեան նկատմամբ 6) որ հետզհետէ զօրացող միապետութեան մէջ ազատագրական շարժումը կը լինի աւելի դժուարին, ուստի եւ պէտք է կոտրել այդ ուժը. 7) որ սերտ յարաբերութեան մէջ մտնելով պարսիկ աշխատաւորութեան հետ, մենք նրան կը հասկացնենք շարժման էութիւնն ու նպատակը, «Կ. է.»-ի պակասութիւններն ու առաւելութիւնները 8) որ սա մի միջոց կը լինի սահմանադր[ական] Պարսկաստ[անից] պարսկահայերի համար իրաւահաւասարութիւն պահանջելու, որպէս նոյն հայրենիքի հարազատ զաւակներին եւ վերջապէս ա՛յն որ եթէ այս մի քանի ամսուայ ընթացքում մեզ չյաջողուեց թուրքերի միջոցով շարժում առաջ բերել նաեւ այլ տեղերում, նամանաւնդ գաւառներում, մեր ակտիւ մասնակցութիւնը թերեւս հնարաւորութիւն կը տայ գլուխ բերել այդ գործը, որը կենսական նշանակութիւն ունի ներկայ շարժումների նկատմամբ, ուստի ժողովս որոշում է ակտիւ մասնակցութիւն ունենալ Պարսկաստանի այս յեղափոխ. շարժումների մէջ:

Բ. բանաձեւը հետեւեալն էր, որին կողմնակից մնացին երկու հոգի

1.- Պարսկ. շարժումները տարբրային են. Թաւրիզի յաջողութիւնները պատահական բնոյթ ունին (Արքը, արսենալը յեղափ. ձեռք անցնելը⁹): Չկան ոգեկան հիմքեր շարժումը առաջ տանելու, ապացոյց որ Պարսկաստանի ոչ մի անկիւնը արձագանգ չտուեց:

2.- Եթէ վաղը յեղափոխակ[անները] ընկճուեն, Դաշնակց. պիտի մնայ մենակ եւ հայ ժողովուրդը ամբողջովին պիտի ենթարկուի թուրք ֆանատիկ ամբոխի (հէնց այսօրուայ «յեղափ.») սրածութեանն ու թալանին: Բնաջնջումի գնով ձեռք բերել ինչ որ անորոշ իրաւունքներ՝ (չմոռանալ, որ պարսկահայերի դրութիւնը շատ է տարբերում ռուսահայերի եւ տաճկահայերի դրութիւնից. նա Պարսկաստանում նոյնիսկ մասամբ արտօնեալ վիճակ ունի՝ ունենալով ազգ.-կուլտ. գործերի ազատութիւն, տուրքերից ազատ լինել եւայլն եւայլն) դա յեղափ[ոխական] գործ չէ. դա մի անտակտ քեալագոգութիւն¹⁰ է:

3.- Դեռեւս տաճկական սահմանադրութեան յայտարարումով չպէտք է ինքնամոռացութեան մէջ ընկնել եւ Տաճկաստանում յեղափ.-ապստամբական գործը վեր-

ջացած համարել: 3 ֆրոնտի վրայ կռուիլը մեզ կը տանէ դէպի ոյժերի ջլատումը:

4.- Ակտիւ մասնակցութեան համար անհրաժեշտ է ունենալ Ընդհ. ժողովի հաստատութիւնը. աջակցութիւն «անուան» տակ այսօր որեւէ ոյժով երեւալ գալ, վաղը յանկարծ հակառակ որոշումով «աջակցութիւն ցոյց տալը» աւելորդ կամ անկարելի համարելը՝ կը տանէ մեզ դէպի նոյն կործանարար հետեւանքները:

5.- Անհրաժեշտ է ունենալ մեր շրջանի մարմինների կարծիքը:

6.- Հակայեղափոխ. բանակը կը յայտարարէ «քաֆիրներին» կռիւ Խալամի դէմ, ինչպէս այսօր «Բաբինների կռիւ է»։ դա կը վնասէ Պարսկաստանի յեղափ. գործին, ինչպէս որ խոստովանել են մեր բարեկամները:

Ընդունելով ակտիւ մասնակցութեան կողմնակից եղող բանաձեւը, այժմ հարց է ծագում. ի՞նչ միջոցներով հայթայթել ոյժեր եւ ռազմամթերք, ինչ միջոցներով հոգալ բոլոր այն ծախսերը որ կապ ունին այդ բոլորի հետ: Այս առթիւ որոշուեց դիմել Ս[աթթար] Խ[ան]ին եւ կոմիտէին եւ որոշ համաձայնութեան գալ: Դիմումը հետեւեալ արդիւնքը տուեց. Դաշնակցութիւնը պարտաւոր է տալ կռուողներ եւ աւելի շուտ դեկավար եւ փորձուած կռուողներ, հոգալ նրանց գէնքերը. մնացած ծախսերը (ճանապարհածախս, ապրուստ, ռազմամթերք, ձիեր, հագուստ եւայլն) պիտի հոգան իրենք թուրք յեղափոխականները՝ յեղափոխ[ութեան] ընդհանուր դրամարկղից:

Այս բոլորը կէտ առ կէտ նշանակուեցին գրաւոր կերպով եւ երկու կողմից էլ կնքուեցին ու ստորագրուեցին:

Ըստ պայմանի, շատ կարճ ժամանակում պէտք է խումբը ժամանէր Թաւրիզ: Այդ շատ կարճ ժամանակամիջոցը տեւել է ամբողջ երկու եւ կէս ամիս: Մի ժամանակամիջոց, որ մենք երբեք երեւակայել անգամ չէինք կարող:

Նախ քան թուրք յեղափոխականների¹¹ հետ պայմանաւորուելը մենք հաշուի առանք այն ուժերը, որով մենք կարող պիտի լինէինք քիչ ու շատ օգտակար դարձնել մեր աջակցութիւնը: Տեղական ուժերից ի նկատի առնուեց մի տասնեակ, իսկ գէնք եւ ռազմամթերք մեզ պատկանող 10 աւստրիական մանլիխերները եւ հակառակ դէպքում ինքնապաշտպանութեան գէնքերն ու ռազմամթերքը:

Գաւառներում այդ տեղական ուժերը մենք հաշուեցինք աւելի շատ՝ մինչեւ 3-7 տասնեակ: Զէնքի եւ ռազմամթերքի պակասութիւն չզգալու եւ մասամբ էլ աւելի ապահովացնելու համար պատուիրեցինք Աւարայրի⁴

9.- Արքը՝ Թաւրիզի միջնաբերդն է. արսենալ՝ զինանոց, ռազմամթերք:
10.- Խաբէական գործողութիւն:
11.- Խօսքը Ատրպատականի թուրքերուն մասին է:

եւ Մենաւորի¹² գէնքերը անպայման կենտրոնացնել Մինարէթ²։ միւս կողմից էլ դիմեցինք Ա[րեւելեան] Բ[իւրոյ]ին երկրապատկան գէնքերը¹³ թողնել մեր տրամադրութեան տակ առ այժմ։ Իսկ Կովկասից պիտի ուղարկուէր մեզ ընդամէնը 40-50 հոգի, որոնցից 10 հոգին թնդանօթածիգներ ու ռմբածիգներ պիտի լինէին, քանի որ դրանց պակասը խիստ շատ է զգացուում կռիւների ընթացքում։ Դրամական միջոցները ապահովուած էինք Համարում պայմանագրի զօրութեամբ, սակայն դարձեալ մեզ վրայ պարտականութիւն էր ընկնում հայ քաղաքացիներից, որ մինչեւ այդ չէին վճարել եւ ոչ մի կուպէկ յեղ. կռուի համար, ստանալ որեւէ բան յօգուտ ընդհանուր գործի։

Անցել էր երկու շաբաթ մեր պայմանաւորուած օրից երբ սկսում են մեր դաշնակիցները յամառ դիմումներ անել եւ ռումբ ու կռուողներ ուզել։ Մենք մնում ենք անել դրութեան մէջ. մեր բազմաթիւ դիմումները Ա[րեւելեան] Բ[իւրոյ]ին կամ մնում են անպատասխան կամ անորոշ պատասխաններ են ստացում, որից չէր կարելի եզրակացնել թէ ի՞նչ դրութեան մէջ է այնտեղ գործը։ Մեր դրութիւնը օրէցօր դառնում է աւելի փափուկ։ Վերջապէս երբ արդէն 5 շաբաթ անցել էր մեր բանակցութեան օրից վճռում ենք տեղական ոյժերից կազմել մի տասնեակ եւ զինապայթուցիկի գործով մեզ մօտ զբաղող ընկերոջ միջոցով պատրաստել մի քանի ռակետներ¹⁴ եւ ուղարկել կռուի վայրը։ Կռուը տեղի էր ունենում քաղաքի երկու ծայրերում՝ 3 կէտից։ Քաղաքի վիճակը օրէցօր վատթարանում էր, ազգաբնակչութեան մէջ նորից յուսահատ մտքեր են ծնւում։ Համարեա պաշարուած վիճակի մէջ, կենսական մթերքների ստակալի թանգուլիւն, առեւտրի դադարում եւ 4 ամսուայ անընդհատ կռիւր քիչ պարարտ հող չէ ներկայացնում իր ամբողջ գոյութեան ընթացքում եւ ոչ մի անգամ այս վիճակին չենթարկուած թուրք ժողովրդի յուսահատութեան։ Բայց ինչպէս յետոյ երեւաց Թաւրիզի թուրք ազգաբնակչութիւնը շատ աւելի տոկոսն էր քան մենք կարծում էինք։

Հէնց առաջին կռուում մերոնք դրւում են անելանելի վիճակում, թուրք ընկերները ինչքան շտապով որ առաջ էին շարժւում նոյն հապճեպով էլ փախչում էին, առանց ի նկատի առնելու թէ ինչ են թողնում իրենցից յետոյ։ Մերոնք մնում են մենակ եւ կարելի է ասել մի հրաշքով ազատուում ի սպառ ջարդուելուց։ Այս անկարգութեան վրայ հրաւիրում ենք Ս[աթթար] խ[ան]ի ուղարկութիւնը, սակայն նա խոստովանւում է այդ շարիքի անխուսափելի լինելը, իսկ մենք յոյս ենք ունենում, որ փորձուած ընկերների ներկայութիւնը թերեւս այս անտակտ յառաջիկայացուցութեան եւ աւելի անտակտ փախուստի առաջը կ'առնէ։

Այս դէպքից մի օր յետոյ որոշուում է յարձակուել գիշերով էլինի) Դ[ոպլէի] բանակի վրայ, որ դեռեւս գտնու-

ում էր քաղաքիս մէջ։ Դարձեալ մեզ են դիմում. անհրաժեշտ էր մերժել. նորից մի տասնեակ գնում է։ Այս անգամ գործը վիժում է որովհետեւ դեռեւս բանակին չմօտեցած՝ գիշերուայ մթութիւնից օգտուելով թուրքերը քիչ-քիչ ցրւում են, մինչեւ որ վերջապէս մնում են միայն մերոնք մի քանի անձնուէր թուրք յեղափոխականների) հետ եւ որովհետեւ առաջնորդող մարդն էլ անյայտացած է լինում, այլեւս անհնարին է դառնում առաջ շարժուել, ուստի եւ առանց որեւէ բան անելու վերադառնում են։

Աւելորդ չէր լինի յիշել այստեղ էլինի) Դ[ոպլէի] տեւորելու հարցը, որը մեր մէջ երկար բարակ խորհրդածութեան նիւթ է դառնում։ Վերջապէս որոշուում է այդ կատարել իրենց թուրքերի միջոցով։ Մենք առաջարկում ենք այդ Ս. Խ.-ին, որը հաւանելով մեր ծրագիրը, բայց հաւանելը բաւական չէր, իրազործող էր պէտք, մի բան որ չկարողացան գտնել նրանք։ Բացի այս մի շարք ռազմական տեսակէտից նշանակութիւն ունեցող խորհրդակցութիւններ եւս ունեցել ենք օր.՝ լրտեսութիւնը կազմակերպել, յարձակման ֆորմներ փոխել եւայլն, որոնք շատ քիչ արդիւնք են ունեցել, շնորհիւ թուրք յեղափոխականների) ապիկարութեան եւ անփորձութեան։

Օրեր, շաբաթներ, նոյնիսկ ամիսներ են անցնում, դրսից ոչ մի ձայն, ոչ մի ծպտուն չենք լսում մեզ գալիք ոյժերի մասին։ Սօտ երկու ամիս յետոյ, Կովկասից վերադարձող ընկերոջ միջոցով տեղեկանում ենք, որ խումբը Երեւանում է եւ մտադիր են շուտով շարժուելու, որ ընկերներն էլ դժգոհ են, որ ուշանում են։ Այս լուրը մեզ սրտապնդում է մասամբ։ Սակայն չէինք կարող չցաւել թէ ինչպէս կարելու վայրկեանները անցնում են եւ մերոնք դեռեւս չկան։

Վերջապէս երկրորդ ամիսը լրանալու վրայ էր, երբ 20 հոգուց բաղկացած «Արրիկ» խումբ Բեռու¹⁵ խմբապետութեամբ, հասնում են Թաւրիզ, մի այնպիսի մոմենտում երբ իզօ խանը, Ռահիմ խանը ջարդ ու փշուր եղած թողել էին իրենց դիրքերը, իսկ միապետական թաղերը արդէն հպատակուել յեղափոխ. ուժի առաջ։ Իւրաքանչիւրը իր որջն էր քաշում։ Սկսուել էր մի շրջան, որի ընթացքում երկու կողմերն էլ յոգնած ու դադրած ըմբիշների պէս հեւ ի հեւ հանգստանում էին։

Ինչ էլ որ լինէր մեր ներքին համաձայնութիւնը թուրք յեղ[ափոխականների] հետ, այնուամենայնիւ մենք արտաքուստ ցոյց էինք տալիս, որ աւելի շուտ մենք ինքնապաշտ. համար ենք պատրաստութիւն տե-

12.- Ս. Թադէի վանք։
 13.- Երկրապատկան գէնքեր, այսինքն այն գէնքերը, որոնք սահմանուած էին Ատրպատականի ճամբով Վասպուրականի, Տարոն ուղարկուելու համար։
 14.- Գործիքներ։
 15.- Բեռի՝ Գաւաֆեան Արշակ։

սել։ Այս ձեւացումի մէջ անշուշտ որոշ չափով ճշմարտութիւն եւս կար, որովհետեւ Կ.Կ. մտածում էր, որ երկու դէպքում էլ, թէ սահմանադրութեան) յաղթութեան թէ կառավարութեան յաղթութեան ժամանակ, կարող է որեւէ թշնամական ցոյց տեղի ունենալ կամ քաղաքացիների եւ կամ գիւղացիների դէմ։ Առաջինի վերաբերմամբ մեզ յոռետեսութեան էր հասցրել այդ ժամանակներում ծայր տուող շանտաժները եւ քաղցած ամբոխի ընչաքաղցութիւնը, որը բնական կարելի է համարել քանի որ կռիւներից միշտ տուժել են թուրքերը ամենամեծ չափով, այն ինչ հայերը ոչ թէ չեն տուժել այլեւ նրա մի դասը՝ վաճառական դասը, մի բան էլ շահել է. իսկ երկրորդ դէպքում շատ աւելի հաւանական էր, որովհետեւ աւագակ միապետականներին աւելի գրաւում էր հայ կիւնը, հայի «անբաւ» հարստութիւնը քան թէ թուրքին, նամանակաւ վրացի յեղափոխականների) մասնակցութիւնը եւս առաւել գալիս էր այդօրինակ «գալի դատաստանը» վաւերացնելու։ Օգտուելով գիտադադարի ժամանակամիջոցից, մենք կամեցանք մի փորձով երկու նպատակի հասնել այն է ա) ծանօթացնել ընկերների մեր շրջանների հետ եւ բ) համոզել ժողովրդին մեր ինքնապաշտպանութեան ձգտելուն. սակայն այս փորձը թանգ նստեց մեզ վրայ թէպէտ աւելի եւս թանգ նստեց այդ նաեւ թշնամու վրայ։

Մեր տղաներից 11 հոգի Հրաչի ղեկավարութեան տակ գնում են մօտակայ Մուսամբար հայաբնակ գիւղը վերոյիշեալ նպատակով։ Երեկոյեան հասնում են գիւղ եւ առաւօտեան կռուի բռնուում Ղարադաղ վերադարձող ձիաւորների, թուով մի քանի հարիւր հոգի, որոնք ճանապարհին պատահած գիւղը թալանելով անցնում էին։ Մերոնք թէպէտեւ անծանօթ դիրքերին ու վայրին, սակայն մի այնպիսի հերոսութեամբ են կռուում, որի նմանը թերեւս չէր տեսնուել ամբողջ շարժումների ընթացքում։ Թշնամու կողմից լինում է 60ից աւելի սպանւածներ, գուցէ մի այդքան էլ վիրաւոր, իսկ մենք կորցրնում ենք երկու թանկագին ընկերներ Արտեմ եւ Նիկոլ. եւ ունենում ենք երկու վիրաւոր Կարոն եւ Նիգոյր։ Այս կռիւր լաւ դաս է լինում թէ մեզ համար եւ թէ թշնամու համար։ Մեզ համար այն նշանակութիւնն է ունենում, որ այլեւս խումբը անջատելու եւ մաս-մաս կռուելուց միանգամայն հրաժարուում ենք, իսկ թշնամին մինչեւ այժմ էլ եւ գուցէ սրանից շատ յետոյ էլ համոզուեց որ հայերը վտանգաւոր պատառ են։

Ընկերների գալստեան հէնց առաջին օրուանից սկսում է մեր նիւթական կրիզիսը, ոչ մի տեղից ոչ մի կուպէկի աջակցութիւն. թուրքերն էլ չնայած մեր եւ նրանց մէջ եղած պայմանագրութեան ձգձգում են նախ եւ վերջիվերջոյ համոզում մեզ իրենց ձգձգուցով, որ անկարելի է որեւէ նիւթական աջակցութիւն սպասել նրանցից։ Մենք չդադարեցնելով հանդերձ մեր պահանջները նրանցից, միւս կողմից ներքուստ արդարացնում

էինք մասամբ, որովհետեւ նիւթական կրիզիսի մէջ էին նաեւ նրանք. հայերս միանգամայն անտարբեր լինելով դէպի շարժումները եւ ոչ մի նիւթական աջակցութիւն չենք ցոյց տուել շարժման ընթացքում, երրորդ՝ մենք ոչ մի կերպ չհամաձայնեցինք որ մերոնք ապրեն թուրք յեղափ. հետ միասին, այն ինչ պայմանի համաձայն մենք պարտաւոր էինք այդպէս վարուել եւայլն։

Այսպիսով մեզ վրայ էր մնում հոգալ մերոնց ծախսերը։ Այս առթիւ «մաջլիսը ջանգ»ի յանձնարարութեամբ ձեռնարկում ենք մի հանգանակութեան հայերի շրջանում, որը տեւում է բաւական երկար ժամանակ, եւ նրանով հոգում նախնական ծախսերը եւ ընկերների առաջին մի քանի ամսուայ կարիքները։ Բայց դա այնքան չնչին բան էր, որ անհնարին էր որեւէ բան անել դրանով։ Այն ժամանակ որոշուում է դիմել արտասահմանում եղող պարսկահայերին, յանուն ինքնապաշտ. յանուն յեղափ. շարժման՝ հանգանակութիւն սկսել, միւս կողմից էլ դիմել մեր արտասահմանեան մարմիններին եւ աջակցութիւն խնդրել նրանցից։ Այս բոլորի հետ միասին քաղաքում ձեռնարկուեց մի նոր հանգանակութիւն յանուն ինքնապաշտպանութեան։

Այս հանգանակութեան ժամանակ առարկութիւններ եղան մեր գործելակերպի վերաբերմամբ, եղան շատերը, որոնք մեր վարած կռիւր ընդունեցին ոչ թէ ինքնապաշտ. այլ կատարեալ ապստամբութիւն կառավարութեան դէմ, սակայն մենք նրանց համոզեցինք, որ ինքզինքը պաշտպանելու ուղղութեամբ վարած կռիւր ոչ թէ տեղի պիտի ունենայ սեփական տան պատերի տակ, այլ մինչեւ այդ պատերը եղած տարածութեան վրայ. մեր կողմից ռազմական անհեռատեսութիւն կը լինի թոյլ տալ գազանացած թշնամուն մեր դռներին մօտենալ։

Մեր պատճառաբանութիւնը այնքան պարզ էր, որ հակառակորդներն էլ ստիպուած էին համաձայնել նրա ճշմարտութեանը։

Աղմկալի ընթացք եւ ցաւալի վախճան ունեցաւ այս հանգանակութիւնը. քաղաքի հայ ազգաբնակչութիւնը մի աւելորդ անգամ ցոյց տուեց իր չարիւթութիւնը նոյնիսկ այն մոմենտում երբ վտանգը ամէն վայրկեան կախուած է իր տան սեմից։ Միւս կուսակցութիւնները նոյնպէս ապացուցեցին, որ պատրաստի ապուրի նստելու համար բաւական ընդունակ են։ Հնչ[ակեան]ները մուրացիկին վայել պնդերեսութեամբ ասպարէզ եկան իրենց գալիք ոյժերի ծախսերը ստանալու։ Տ. Ծ. ներն էլ բաւական մարսական գտան «գիտու զօրութեամբ», «անվայել բռնութեամբ» հաւաքուած դրամները եւ որովհետեւ հանգանակութիւնը ժողովրդական բնոյթ էր կրում, թէպէտեւ մեր նախաձեռնութեամբ եւ մեր միջոցներով էր հաւաքուում դրամը, ուստի աւելորդ բարդութեանց տեղիք չտալու համար համաձայնեցինք մենք էլ մեր կողմից մի որոշ գումար տալ Տ. Ծ. եւ Հնչակ-

եաններին: Հանգանակութեան որոշ գումարները մինչեւ այժմ էլ մնում են չգանձուած, շնորհիւ կռուի այդօրինակ ցաւալի վախճանին: Այս օժանդակութիւնը հետեւեալ արդիւնքն է տալիս. Ամերիկայից ստանում ենք 500 դոլլար. Կ. Պոլսի Պատասխանատու մարմնից 8000 Ֆր. (որի ինչ միջոցներից հայթայթուած լինելը ցայժմ մեզ անյայտ է): Ոսկանապատ¹⁶ ուղարկուած ընկերոջ եւ Պարս. ինքնապաշտ. հանգանակիչ մասնախմբից. օժանդակութեամբ պարսկահպատակ առեւտրականներից ստացուում է մօտ 10,000 ռուբլի, մեր հանգանակութիւնը տալիս է մօտ 1800 թուման: Այդ դրամական օժանդակութիւնը իր չափով մասամբ բաւարար էր, սակայն իր անկանոնութեան եւ ժամանակին չստացուելու պատճառով յաճախ ենթակայ էինք դրամական խիստ նեղութեանց:

Շուտով քաղաքի դրութիւնը նորից փոթորկուում է: Կռիւները վերսկսուում են նոր թափով: Մինարէթ¹⁷ զնացած ընկերները վերադառնում են: Կարծ ժամանակում քաղաքը ամէն կողմից շրջապատուում է: Թշնամին այս անգամ աւելի խելացի է շարժուում: Նա շրջապատուում է ամբողջ քաղաքը, բռնում բոլոր ճամբաները եւ համբերութեամբ սպասում, որ քաղցից ստիպուած յեղափոխականները) անձնատուր լինեն: Արեւելեան կողմից մինչեւ իսկ կտրուում են քաղաք գացող ջրերը, ջրաղացների գործունէութիւնը դադարեցնելով: Ժողովուրդի դրութիւնը օրէցօր դառնում է աւելի եւ աւելի կրիտիքական: Սովը կատարեալ էր: Սակայն յեղափոխականներին դաւաճանելու եւ ոչ մի փորձ տեղի չի ունենում մասսայի կողմից: Թաւրիզի մշտաքաղց ժողովուրդը ցոյց է տալիս անհաւատալի տոկոսներին: Դրամական կրիզիսի վրայ այժմ հացի կրիզիսն է աւելանում, բայց ժողովուրդը համաձայնուում է աւելի շուտ տարին բոլոր շարունակել խոտաճարակութիւնը, քան թէ անձնատուր լինել: Չնայած Հ. Դ-ի եւ այլոց փրօն(?) խոստումներին՝ քաղաքը դրախտի վերածելու նկատմամբ, սակայն այս բոլորին հաւատացող չկար, որովհետեւ օրինակով գիտէին թէ ինչեր կարող են քաջել միապետական աւազակների ձեռքից: Թաւրիզի շրջակայքում տասնեակներով այրուած, թալանուած, տուգանած գիւղերը կենդանի ապացոյցներ եւ իրական գրաւականներ էին իբր թէ սահմանադրութիւնը խեղդելու եւ յեղափոխական շարժումը դադարեցնելու կոչուած «պետական ոյժերի» «անուշուկութեան» եւ «ժողովրդասիրութեան»:

Թեղափոխականներին այժմ վիճակուում է մի դժուարին դեր, մի դեր, որը նրանք միշտ էլ մինչեւ վերջ խաղացին խիստ անյաջող. յարձակողական դերն էր այդ: 7-

8 մասուայ պաշտպանողական կռիւր բաւական չէր անփորձ քաղաքացու սրտում անվեհեր մարտիկի ոգին ներշնչելու: Եւ այսպիսով թուրք վեհերոտ կռիւր բոլոր յարձակումներն էլ (եւ դրանց թիւը քիչ չէ) դարձրին ապարդիւն: Բացի վախկոտութիւնը անյաջողութիւնների մէջ մեծ դեր էր կատարում նաեւ դիսցիպլինայի պակասութիւնը, մի բան, որ նկատելի էր ամենահասարակ գինուորից սկսած մինչեւ ամենազլխաւոր առաջնորդի մէջ: Շատ անգամ որոշ խելացի ծրագիրներ է մշակուած յարձակումը արդիւնաւոր դարձնելու, սակայն դրանք մնացել են միայն թղթի եւ մտքի մէջ, գործի ժամանակ դարձեալ նոյն բաբելոնը, որտեղ կարծես մարդիկ իրար չեն հասկանում կամ աւելի հեշտ հրաժարուում են հասկանալ: Այսպէս էր թուրք յեղափոխութեան կերպերը, այն ինչ, թէ քաղաքի եւ թէ ընդհանրապէս շարժման նկատմամբ ճանապարհներից գոնէ մէկի բացումը կենսական նշանակութիւն ունէր:

Ներսից եղած ապարդիւն յարձակումները ստիպում են մեզ դիմել գաւառները, որ այնտեղից էլ օգնութիւն հասցուի եւ թերեւս երկու կողմից կռուելով հնարաւոր լինի մի բան անել: Օգնութիւնը գալիս է թէ՛ Մինարէթից եւ թէ՛ Ափից¹⁷, սակայն մեզ չէ հասնում: Ճամբաների փակ լինելու պատճառով չենք կարողանում ստոյգ իմանալ թէ ինչեր են կատարուում մեզ շրջապատող թըշնամու թիկունքում: Շատ յետոյ միայն իմանում ենք որ Մինարէթից եկող յեղափոխ. բանակը սկզբում բաւական յաջողութիւններ ունենալուց յետոյ զանազան ներքին ու արտաքին աննպաստ հանգամանքների շնորհիւ վերադարձել է նորից Մինարէթ, իսկ Ափից եկած ընկերները անսպասելի յարձակման եւ վայրի անձանօթութեան պատճառով Սօֆիանում մեծ մասամբ (14-ից 10-ը) սպանուում են: Նորից մեզ մնում է մեր յոյսը մեր ոյժերի վրայ դնելով շարունակել յարձակումները, նորանոր փորձերով եւ նոր թափով*:

Այս կռիւների ընթացքում կորցնում ենք նորից 4 ընկերներ. անմոռանալի եւ սիրուած ընկերներ, Մարտիրոս, Կարօ, Սեթօ (Ալուարի կռուում) եւ Միսաք (Կուլլա-

* Չեռագրի եջատակից մանր տառերով արձանագրուած են հետեւեալ կետերը, որոնք ըստ երեւոյթին բերանացի պիտի բացատրուէին աւելի լայնօրէն.—

- 1- Թէ ինչ էինք մենք Թաւրիզի շարժումների մէջ (կռուող, խորհրդատու, կազմակերպող դիրքերի, պայթուցիկային գործ, նեցուկ).
- 2- Մեր յարաբերութիւնը դէպի թուրք ցեղ (մարմինը եւ Ս. Խ.).
- 3- Մեր յարաբերութիւնը Մ.Ճ. հետ.
- 4- Մեր մասնակցութեան ընդհ. նշանակութիւնը (քաղաքներում, գաւառում, ժողովրդի նկատմամբ, կառավարութեան առաջ, ընդհանուր կուսակցական տեսակէտից):

16.- Պարո: 17.- Ափը՝ Գիմ Զուղայի դիմաց Ս. Ստեփանոս Նախավկայի վանքն է, Պարսկաստանի սահմանէն ցերս:

բաշու կռուում): Այսպէս անյաջողութիւնների եւ անտակտ կռիւներից դժուար էր յուսալ որեւէ փրկութիւն: Բայց այստեղ էլ առաջ են գալիս մի շարք յեղափոխականների) հացին իւր քսող հանգամանքներ, այն, որ թշնամու թալանի փայլուն հեռանկարով յափշտակուած գինուորների շարքերում եւս առաջ է գալիս յուսահատութիւն. ամբողջ ամիսներ գոհեր տալ միայն առանց որեւէ բան թալանելու (չըջակայ գիւղերում թալանելու բան չէր մնացել), այդ արդէն երբեք ի նկատի չէր առել, ոչ Ղարաղաղի աւագակ ձիււորը, ոչ Մարաղայի ռազմիկ քիւրտը, իսկ էլ յին) Դիւլի) ի բանակը մի երկրորդ Փարիոս(?) ունենալով իրեն որպէս գլուխ, տարին բոլոր սպասելուց ճանճրացել էր միանգամայն: Այսպէս էր երկու կողմերի ներքին վիճակը եբր մի դժբախտ օր արտաքին քաղաքականութեան փոփոխումը եկաւ պահ մի վերջ տալու այս յոգնատանջ վիճակին:

Արտաքին պատկերը ուրուագծելով աւելորդ չէր լինի մի քանի խօսք եւս ասել ներքին յարաբերութիւնների մասին:

Նախ հարց՝ ի՞նչ արժէք ունէր յեղափոխ. կռուի մէջ մեր մասնակցութիւնը: Մի քիչ առաջ մենք ասացինք, որ մեր մասնակցութիւնը տեղի ունեցաւ մի այնպիսի մոմենտում եբր արդէն գինադադարի նման մի բան էր տեղի ունեցել եւ որից յետոյ քաղաքի վիճակը դարձաւ աւելի վատթար, քանի որ միապետական ոյժերը թարմացել էին, աւելի քան կռուի սկզբի օրերում, այն ինչ քաղաքում հակառակը՝ յեղափ. ոյժը իր նախկին վիճակից թուլացել էր, տրամադրութիւնը ոչ նախկին չափով բարձր. եւ ոյժերի այնպիսի յարաբերութեան մէջ անշուշտ հեշտ է ենթադրել, որ յեղափոխական ոյժը դժուար կարողանար դիմանալ: Սակայն յեղափ. կռուի այս աննպաստ վիճակին մեծ մասամբ, եթէ չասենք ամբողջովին, օգնութեան դուրս եկաւ մեր մասնակցութիւնը: Մեր ոյժերը ըստ քանակի եղել է չնչին, սակայն ըստ որակի նա եղել է բաւական բարձր. բարձր ոչ թէ իր անձնագոհութեամբ միայն, այլեւ իր ռազմական ընդունակութեամբ, իր դէպի յեղ. գործը ունեցած պայծառ գիտակցութեամբ: Սրանք առաւելութիւններ են [որ] ոչ միայն կռուին այլեւ ղեկավար ոյժերին կարողացաւ պահել մշտական ռեբելութեան մէջ, նրա մէջ ներշնչեց լրջութիւն դէպի գործը, որոշ կարգ ու օրէնք իրաւունքների եւ պարտականութեանց մէջ, աշխատանքի բաժանում որով գործի արդիւնաւէտութիւնը բարձրանալուց գատ զանազան թիրիմացութիւնների առաջնաւազ: Այսպէս օրինակ՝ եբր ամբողջ քաղաքը սովի ճիւղաններում տապակուում էր այն ժամանակ մեր սառը վերաբերմունքը շատ բան ներշնչեց թուրք յեղափոխականներին, որովհետեւ մենք վճռել էինք միշտ էլ դիմադրել առանց ի նկատի առնելու թէ ինչ պիտի անէ

քաղցած մասսան. թէկուզ նա անձնատուր անգամ լինելու համաձայնուի, այնուամենայնիւ յեղափոխականները այդ երեւոյթից չպիտի գան այն եզրակացութեան, որ որովհետեւ անձնատուր լինելը անխուսափելի է, եւ իրենք նրանցից առաջ անձնատուր լինեն: Մինչ այս եբր կռիւները տեղի էին ունենում յոյսը Հազրաթ Աբբասի բազկին դրած, սրանից յետոյ ծրագրուած կռիւներ չեն տեղի ունենում, ինչքան էլ անիրագործելի մնային այդ ծրագիրները, այնուամենայնիւ դա այն արդիւնքն ունէր որ գիտակցել էր տալիս նրանց գործի լրջութիւնը:

Սկզբնական ժամանակներում ամէն ինչ կենտրոնացած էր մի անձնաւորութեան ձեռքում, այդ Սաթթար) Խ[ան]ն էր. մեր ջանքերով կազմուեց դրամական կոմիսիա, որի ձեռքում կենտրոնանում է դրամի ամբողջ հաշիւները: Իսկ մասնակցութիւնից յետոյ մեր ջանքերով կազմուեց առանձին գինուորական խորհուրդ, որը մեծ նշանակութիւն ունեցաւ կռուի ընթացքի վրայ. այն է, բոլոր ղեկավար աչքի ընկող ոյժերը մասնակցել [էին] կռուի. խորհրդակցութեան մէջ նրանց համար պարզուում էր իրենց անելիքը, սրանից բացի անհատից կտրուում էր եւ գործը դրուում մարմնի ձեռքը, մի բան որ անհրաժեշտ էր թէ մեր յարաբերութիւնների եւ թէ ընդհ. կռուի տեսակէտից:

Մեր մասնակցութիւնը թուրք յեղափ. կռուի վրայ եղաւ մի խոշոր պլիւս յատկապէս պայթուցիկների գործով: Ճիշտ է մեզնից առաջ վրացի յեղափոխականներ) աշխատում էին այդ պակասը լրացնել, բայց կորցնելով իրենց գործին հմուտ անհատները վերջերս նրանք չեն կարողանում նախկին անբաւարար չափով անգամ օգտակար լինել պայթուցիկների գործում: Մենք որ աւելի կատարելագործուած միջոցներ ունէինք մեր ձեռքի տակ, հմուտ եւ փորձուած ընկերներ, չունեցանք այդ գործում մեր մրցակիցները ասպարէզի վրայ: Ռակէտների թախչը մշտատեւ սարսափի տակ էր պահում թշնամուն, ականը նրա առաջխաղացութեան եւ քաղաք մուտք գործելու ցանկութիւնը խափանում: Ամէն ռոպէ նա այն սարսափի տակ է թէ թուրք ուումբը կարող է յանկարծ ընկնել իր գլխին, իսկ քաղաքի փողոցները ամէն ռոպէ պատրաստ են իր ոտների տակ պայթելու: Պայթուցիկային գործի այսօրինակ յաջողութիւնները եւ նրանց մեծ նշանակութիւնը մեզ վրայ դարձեալ թանկ նստեց որովհետեւ կորցրինք այդ գործում մէկը մեր սիրելի ընկերներից՝ Գէորգին, որը գոհուեց ռումբի պայթիւնից: Աւելորդ համեստութիւնը մի կողմ թողնելով կարող ենք հաւատալ, որ մենք մեր բազմազան գործունէութեամբ Թաւրիզի յեղափ. վերջին եւ անհամեմատ ամենապատասխանատու Փագի նեցուկներից եւ այն էլ թերեւս խոշոր նեցուկներից մէկն ենք եղել:

Փաստ. 473-157

2.- ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ Հ.Յ.Դ. ՎՐԷԺՍԱՆՆԻ ՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԱՏՓԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ

III Շրջ. Պատգ. ժողովը տեղի ունեցավ Վրէժում 1907 թ. Դեկտ. 19-ին և վերջացավ 1908 թ. Յունուար 12-ին: Ժողովին մասնակցում էին՝ Վրէժից¹⁸ 1 պատգամ. Աւարայրից⁴ 1 պատգամ. Գիլանից 1 » Փարոսից³ 1 պատգամ. Մինարէթից² 1 պատգամ. Բլուրից¹⁹ 1 պատգամ. Մենաւորից¹² 1 » Կ. Կոմիտէից 1 »

Ժողովին հրաւիրուած էին գործիչ ընկերներից և Վրէժի դաշն. մարմիններից 10 հոգի: Բացակայում էր Շահի պատգամաւորը⁵:

1 Ներկայ քաղաքական մոմենտի պահանջները մեր շրջանում և մեր բռնելիք ընթացքը

Ա.- Պարսկ. շարժումները

1. Ի նկատի ունենալով որ ներկայումս պարսկ. շարժումները դեմոկրատիք տարրերի կռիւների արտայայտութիւններն են՝ երկրում տիրող հողատիրական, կղերական փտած կարգերի և նրանց պաշտպան կառավարութեան դէմ: 2. որ շարժումների անկազմակերպ դրութիւնից, մասսաների մեծ չափով անգիտակից լինելուց, շարժումների մոլեռանդ և շովինիստ գոյն ունենալուց կարող են առաջանալ պրոպոկացիաներ և հակահայկական շարժումներ, Շրջ. ժող. որոշում է՝ առայժմ ակտիւ մասնակցութիւն չունենալ Պարսկ. շարժումների մէջ, մինչեւ հնարաւորութիւն կ'ունենանք որոշ հող ստեղծել մեր մասնակցութեան համար:

Այսուհանդերձ մարմինները չպիտի դադարեն նրպաստել այդ շարժման՝ ոչ պաշտօնապէս, աշխատելով հնարաւոր միջոցներով և չափով ուսմակար բնոյթ տալ նրան, յօգուտ աշխատաւոր] մասսայի: Առիթը չպէտք է փախցնել շարժման իսկական բնոյթը պարզելու աշխատաւորների] համար:

Բ. Մեր վերաբերմունքը դէպի հասարակական կուլտուրական ձեռնարկները:

Նկատի ունենալով՝ 1. որ կրթական-կուլտուրական հիմնարկութիւնները ներկայանում են աշխատաւորի գարգացման և առաջադիմութեան գլխաւոր գործօններից մէկը, 2. որ դրանք կարող են աշխ. շահերին ու միտումներին ծառայել եթէ գտնուին նրա անմիջական հսկողութեան և ղեկավարութեան ներքոյ, 3. որ ամէն

տեղ բուրժուազիան աշխատում է կրթական հաստատութիւնների վրայ իր թափը դնել՝ իր դասակարգային շահերին ու պահանջներին ծառայեցնելու համար, 4. որ դպրոցը և միւս կրթական հաստատութիւնները իրենց գոյութիւնը պահպանում են աշխ. մասսային ուղղակի կամ անուղղակի միջոցներով, հետեւաբար աշխատաւորները] պէտք է լինեն նրանց տէրերը, 5. որ կրթ. գործը իր իսկական նպատակին կը ծառայէ այն դէպքում երբ դուրս գալ գանազան աղաների ձեռքից և դրուի ժողովրդական հիմունքների վրայ, ուստի Դաշն[ակցութիւնը] ոչ մի ջանք չպէտք է խնայէ ամբողջ կրթական գործի ղեկը իր ձեռքն առնելու:

Դաշն. մարմինները պէտք է ոյժ տան և կանոնաւոր հիմքերի վրայ դնեն դպրոցները, ընթերցարանները, գրադարանները, թատրոնները, լսարանները, ժողովրդական համալսարանները, երեկոյեան դասընթացները և այլն և այլն:

Նաեւ ի նկատի ունենալով որ բարեգործական ամէն տեսակի ընկերութիւններ այս ու այն աղաների ձեռքում գտնուելով յայտնի են միայն անուամբ և դրամագլխով, որոշեց հնար եղածի չափ ձեռք անցնել դրանց և ծառայեցնել աշխ. շահերին ու նրանց հական կարիքներին:

Գ. Հ.Յ.Դ. գոյութիւն ունենալով ժողովրդի մէջ և իւր շարքերը մտցրած լինելով ժողովրդի ամենաառաջադէմ տարրերը, չպէտք է անտես առնէ հասարակական այն բոլոր հարցերը (քաղ. վարչութիւն, թեմ. խորհուրդ, հոգաբարձութիւն) և այլն) որոնք առնչութիւն ունին աշխ. ժողովրդի շահերի հետ, ուժեղ մասնակցութիւն ունենալով դրանց մէջ աշխատէ հասարակական ամէն մի խնդիր վճռել կամ կարգադրել յօգուտ աշխ. շահերի:

(Կաթողիկոսական ընտրութեան և շանտաժի մասին տես [Կովկասի] ու [այդնական] ժող.ի որոշումները):

Դ. Շրջ. ժ. ի նկատի ունենալով 1. որ Կովկասի մեր օրգանը հնարաւորութիւն չունի Պարսկաստանի սահմաններում փռուած 70,000 հայերի խաւարի և մոռացութեան մէջ թաղուած կեանքը իր էջերում լայն պատ-

18.- Վրէժը՝ Թաւրիզ քաղաքն է: 19.- Ս. Թաղէ վանքի շրջանից մէջ Քիշմիշթեպի գիւղը:

կերացնելու, 2. որ մեր կեանքի հասունացած պահանջները զգացնել են տալիս սեփական թերթի պակասը, ժողովը յանձնարարեց Ատրպ[ատականի] Կ. Կոմիտէին նիւթական և այլ անյարմարութիւնները հարթուած տեսնելու դէպքում հրատարակել սեփական թերթ:

Ե. Շրջ. ժ. ը ինքնապաշտ[պանութեան] հարցի վերաբերմամբ ի նկատի ունենալով՝ 1. որ կազմակերպութիւնը աւելի փորձառու է ինքնապաշտ. գործում, 2. որ ունի միջոցներ և հնարաւորութեան կարճ ժամանակում վտանգի վայրում ռազմամթերք և կռուողներ կենտրոնացնելու, 3. աւելի կարող դիւցիպլինան բարձր պահելու, 4. նա ունի ոյժ, ազդեցութիւն և հմայք, 5. որ այդ աշխատանքը լինելու է յօգուտ ժողովրդի, 6. որ ժողովուրդը ինքն իրեն չի կազմակերպուի մինչեւ իր սեփական կաշու վրայ չզգայ հարուածի ազդեցութիւնը, որոշեց ինքնապաշտ. գործը մեր բոլոր շրջաններում յանձնել կազմակերպութեան տեղական մարմին:

Պրոպականտայի գործը կանոնաւորելու համար ժողովը պարտականութիւն դրեց Կ. Կ.ի վրայ հրաւիրել շրջիկ պրոպագանդիստներ: Մարմինները պարտաւոր

20.- Ընծայր Ս. Թաղէի վանահայր և յեղափոխական անձնուէր գործիչ, Գեորգ Ծ. վրդ. Նալպանտեանն է: Այսուհանդերձ շատ մը ընկերներու կողմէ կը մեղադրուէր վանքի շահերը գերադաս համարելու յանցանքով, այդ պատճառով ալ պիտի մեկուսացուէր այդ գործերն:

են «Յառաջի» գրադարանի լոյս տեսած բոլոր բրոշիւրները տարածել: Հիմնել յեղափոխական գրադարաններ կամ եղած գրադարաններում այդ բաժինը ճոխացնել: Դասախօսութիւնների և ընթերցանութեան գործը կանոնաւոր հիմքերի վրայ դնել և ընկերների յեղափոխական-սոցիալիստական կրթութիւնը սիստեմատիք դարձնել:

- 1. Շրջ. ժ. ը վաւերացրեց Կ.Կ.ի այն որոշումը, որով Ղ. եպիսկ. հեռացում է Վրէժստանի Դաշնակցութիւնից: 2. Վաւերացուեց նոյնպէս, «Գիլան»ի կոմիտէի որոշումը, որով Սարումեանը հեռացում իսկ Վարդանեանը չէզոքացուած է: 3. Գրաֆի վերաբերմամբ եղած որոշումը ժողովը համարեց խիստ և որոշեց վերացնել բոյկոտը: 4. Ընծայրին հեռացրեց Մենաւորի կազմ. գործերից²⁰:



ԱՏՐՊ[ԱՏԱԿԱՆԻ] Կ. ԿՈՄԻՏԷ

Փաստ. 475-1

3.- ԸՆԾԱՅՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Ստորև ներկայացուած տեղեկագրի հեղինակը՝ Ընծայր ծածկանունով, Գեորգ Ծ. վրդ. Նալպանտեանն է, թուրք-պարսկական սահմանին մօտ գտնուող պատմական Ս. Թաղէ վանքին (Մեմաուր) վանահայրը, անձնուրաց յեղափոխական գործիչ, որ 1901 թուականէն ի վեր կը գործէր՝ շրջակայքի պարսիկ իշխանաւորներուն եւ քիւրտ ցեղապետներուն հետ բարեկամական յարաբերութիւններ պահելով, միշտ յօգուտ այն նուիրական գործին, որուն լծուած էր անձնուիրաբար: Արդարեւ, Ս. Թաղէի վանքը սահմանագլուխի այն կարեւոր կէտերէն մէկն էր, որ իբր կայան կ'օգտագործուէր մարտական խուճեր եւ զինամթերք անցնելու համար Երկիր:

Վրէժ-Ատրպատականի Կ. Կոմիտէի յղուած այս տեղեկագիրը, իր պարզունակ լեզուով եւ անպաճոյճ ոճով, կու տայ վստահաբար իրական մէկ պատկերը այն մթնոլորտին ու պայմաններուն, որոնց մէջ գործելու ստիպուած էին վանահայրը եւ հայ յեղափոխութեան միւս նուիրեալները:

Յեռ. գործունէութիւն

Մենաւորի¹² շրջանի [գործունէութիւնը], որը ռազմամթերքի փոխադրութեան, ընկերներու երթեւեկութեանց վրայ կը կայանայ. սրանք շատ ապահով կատարուած են:

Մենաւորի, Բլուրի¹⁹ եւ Արտազու հայ ազգաբնակութեանց եւ տեղի հեռաւորութեանց չափին ու քանակին մասին նախորդ Շրջանային ժողովին յայտնուած լինելուն, կարծեմ այնքան հարկաւոր չի լինիր կրկնելը: Միայն ուշագրաւն այն է, որ 1908էն առաջ 3-4 խմբեր գոյութիւն ունէին Արտազու մէջը, իսկ այնուհետեւ մէկ խումբ ալ կանանց, իսկ Բլուրի մէջը երեք խմբեր եւ մէկ խումբ ալ Մենաւորի երիտասարդներէն կազմուեցան մինչեւ ընկեր Սամսոնի¹ այցելութիւնը, երբ կազմուեցաւ ենթակոմիտէ մը:

Ապա բացուեցաւ Բլուրի գիծը Կոռուաղաշտէն²¹. մինչեւ այն ատեն Աւարայրէն⁴ ու ջրի եզերքէն կը փոխադրուէր ապրանքը, իսկ այնուհետեւ սկսեց Կոռուաղաշտից ի Բլուր եւ ի Մենաւոր, գործը շատ յաջող էր. Բլուր բնակող ընկեր չունէինք. ենթակոմ. ի եւ Բլուրի խմբապետներուն միջոցաւ գործը կը կատարուէր:

Նոյն աշնան Արամը երկրէն վերադարձաւ Մենաւոր նոյնպէս եւ Մաշթոցը²² իւր տունը եւ Արամի յանձնարարութեամբ գործի սկսեց Բլուրի մէջը. Մաշթոցը աւելի ծանօթ է Արտազու վիճակին. իւր շրջանի մասին աւելի լաւ տեղեկութիւններ կը սպասուէ իրմէն:

1908-7 փոխադրութեանց մասնակցած է Մենաւորի եւ Բլուրի ժողովուրդը մերթ ձրի, մերթ չափաւոր հատուցումով:

Իսկ երկիր գնալիք ապրանքի փոխադրութեան վարձքը իւրաքանչիւր 1000 հին ծայրի համար կը վճարուէր մէկ օսմ. ոսկի Շամի կողմէն. չարուխ, գուլպայ եւ այլն անհրաժեշտ պարագային Մենաւորից:

Այս տարի հերոսանից եւ միւս տարիներէն աւելի փոխադրութիւն կատարուած է: Երկիր փոխադրող սուրհակները [անդակ]ներն մեծ մաս կիրճեցի են եւ աւետարանցի եւ

Սուրհակ գիւղացի հայեր են, եւ միշտ պարտաւորուած են 1-2 քիւրտ բերել հետը. այս տարի իւրաքանչիւր ոտքին²³ մի տեսակ քիւրտ եկաւ, չգիտեմ որ աղայի ծառան է ըսելով. այդ մասին դիմեցի Շամ եւ զնայող նշանաւոր ընկերներուն ուշադրութիւնն հրաւիրեցի. ի գուր:

Նկատողութիւն

1907-ի փոխադրութիւնը շատ անկանոն եղած լինելուն դժուար է իմանալ քանակը. գոր օրինակ,

Ա. Տուրակներ եկած են մեր քովը կնքուած եւ պատահաբար իմացածնուս պէս հետամտեցանք եւ իմացանք որ ինչ 40, 50 եւ 70, շատ պակաս եղած են, եւ զեկուցած ենք Վրէժի եւ Շամի ընկերներուն՝ առաջը առնելու համար:

Բ. Սկզբան միամտօրէն ինչպէս ուրիշ տարիներ տուրակներուն քանի ըլլալը չենք նշանակած, այլ՝ պարունակութեանց թիւին հետեւած ենք: Իսկ ցինկերու պարունակութիւնն²⁴ մեծ մասամբ անծանօթ մնացած է մեզ անոր համար որ մեկնով նշանակուած կը լինի. մինչեւ ցԱւարայր կամ մինչ ցԲլուր եւ մեզ հասնելուն կը գտնենք սրբուած-ջնջուած. թէեւ նամակներուն կամ ընկալագրերուն մէջը քանակը նշանակուած կը լինին, իսկ մենք ի հարկէ կը գետեղենք պահարաններուն մէջը. եւ օրեր ու շաբաթներ յետոյ սուրհակներուն յանձնելու ատեն այլեւս անկարելի կը լինէր իմանալ, թէ՛ ո՞ր ցինկը ի՞նչ կը պարունակէ եւ քանի՞ հատ. ստիպուած այլեւս սկսանք կշռել հին ծայրերու հազարին դիմաց ցինկեր, խողովակներ եւ գանազան գործիքներ ու այնպէս յանձնել սուրհակներուն. այս առթիւ ալ

21.- Կոռուաղաշտ՝ Թաղի վանքի շրջանին մէջ Երկիր անցքի կէտ:
 22.- Կակնարկուի Արամ Մանուկեանին եւ տեղական գործիչ Մետրոպ Մաշթոցին:
 23.- Այսինքն՝ իւրաքանչիւր երթեւեկի, ուղեւորութեան:
 24.- Այսինքն՝ զինկով պատուած արկղերու պարունակութիւնը:

գրած եմ Վրէժ եւ Շամ: Եւ ընկեր Սամսոնին¹ եւ բանակցութիւն ունեցած ենք եւ յետոյ ստիպուած ենք վերացական կերպով լեցնել ընկալագրերը առանց գիտնալու թէ պարունակութիւնն ի՞նչ է:

Այսպէս եղած է Աւարայր եւ Բլուր:

Գ. Ուշագրաւ էր եւ այն՝ որ մինչեւ աշնան շատ մը նոյններուն նշանակութիւնը չէինք գիտեր որպէսզի իմանալինք ո՞ր թիւը ի՞նչ ապրանք է եւ այսպէս վերացական ուղղութիւնով մը կը վարուէինք. քանի մը տեղեր դիմելէն յետոյ աշնան բանալին ստացանք ընկեր Գարեգինէն¹, որ արդէն ուշ էր. ահա այսպէս խառնուեցաւ ամբողջ հաշիւներն:

Կոռուածներ

1908ին Օգոստ., մի անգամ սահմանի վրայ քանի մը սուրհակներով Թարխանի ներս գնալու ժամանակ, նրա թուութեան պատճառաւ 5000 հին կիլոգր²⁵ եւ եթէր զանազան ատրճանակներ կորսուած են, որուն կէսը Սարդարի ձեռքի անցած է եւ կէսը Մարգանցի քրտերուն. քանիցս իմ եւ բոխիչ Յ. Տ. Ստեփանեանցին պահանջքին հակառակ Սարդարը չէ յանձնած. նոյնիսկ ինքն իւր Սարդ[ար]ի խոստումներն դրժելով:

Իսկ 1907 Յունիս սկզբան, Արամի²² ներս գալուն 5 ձիւ բեռ գանազան ապրանք գրաւուեցաւ հայտարցի քրտերից. Քոլոզ անուն քիւրտ վալատի խարդախութեան հետեւանքով գորս Արամը հետս եւ 2 զինուորներով դիմեցինք անձամբ Գարէջնի հայդարցի Մամէին — ցեղապետ — եւ վերադարձուցինք քիչ վնասով: Աշնան երկու նոր հրացան բռնուեց Բլուրում եւ Սարդ[ար]ի քովն է:

Դարձեալ այս տարի Դեկտ.ին Բլուրէն փոխադրելու ատեն 200 նոր ծայրեր եւ 3 կապոց թերթեր ճանապարհին քրտերը փախցուցին եզան վրայէն: Հին հրացան մը Քերամի մէջը գողացած թումասից, որը վերադարձնել տուի 50-55 դռան փրկանքով:

Այս երկու տարուան միջոցին տեղացի ազգայինք սկզբան աւելի գաղափարական ոգեւորութիւն ցոյց կու տային քան այժմ, որովհետեւ սկզբան աւելի շատ խումբեր կազմուեցան եւ ըստ կարելոյն նիւթապէս — նրւէրներով եւ այլն, եւ բարոյապէս — ձրի օժանդակութեամբ փոխադրութեան մասնակցելով, ապրանքը պահելով եւ այլն եւ այլն գործին յաջողութեան կը մասնակցէին: Արտազու մէջը աւելի ոգեւորութիւն կար. երեկոյթ, տօնախմբութիւն, խմբական հաւաքումներ եւ այլն կը լինէին, քան այժմ: Նախ աւելի էին հանգանակութեան նուիրատուութիւնը եւ ամսավճարներն քան այժմ. գարնանէ ի վեր լքուած էր երտիտասարդութիւնը եւ ենթակոմ. կազմալուծուած դրութեան մէջ էր: Այս բոլորին հակառակ, որ ներկայիս անոնց մէջն էին անխոնջ ջանք թափող Մկրտիչ վարժապետն եւ ընկեր Մեսրոպը²² եւ դարձեալ ի գուր էր. եւ քայքայուեցան

խմբերն եւ լուծուեցաւ ենթակոմիտէն: Մարգապետի²⁶ վերջին այցելութեան այժմ միայն երեք խումբ կայ եւ այն ալ անուանական եւ անկերպարան եւ Արտազի մէջը: Յեղ. գործը 1907-ին աւելի յայտնուած է քան երբեք եւ գործը նշմարող եւ լուծութեամբ անտես ընող համակիր պարսիկներն ու քրտերը աւելի շատ են քան երբեք. եւ այս բոլոր համակրական երեւոյթը հետեւանք է պարսկական շարժման: Պարսից եւ հայոց մէջը նախ Ռուսաստանի հայ-պարսկական ընդհարումներուն ժամանակ լարուած դրութիւն էր, բայց այժմ ընդհակառակը համակրութեան արտայայտութիւն կ'երեւի. այս ալ Սարդարի տուած հայածանքին հետեւանքն էր: Ռուսաստանի պայմաններուն փոփոխութեանց ազդեցութիւնը մեծ է Արտազու շրջանի բնակչութեանը վրայ:

Ինքնապաշտպանութիւն

Այս գիտակցութիւնն ալ երթալով կը զարգանայ եւ անհրաժեշտ պահանջ կը դառնայ հայոց եւ պարսից միջեւ մանաւանդ աղաներուն դէմ. սակայն Սարդ[ար]ի երկիրը սաստիկ է. դժբախտաբար հայ բնակչութիւնն ալ հետզհետէ նիւթապէս կը սկսարանայ թէ՛ բնութեան տուած արհաւիրքէն եւ թէ՛ աղաներու հարստահարութենէն: Սարդարը կամ աղաներն միշտ մայրաքաղաքի եւ բարձրագոյն իշխանութեանց շարժմանը կը հետեւին:

Սկզբան ժողովուրդը լաւ ոգեւորուած էր եւ աղաներն ընկճուեցին, բայց կանոնաւոր կազմակերպութիւն չլինելուն, անփորձ անճիւղամայի²⁷ անդամներն չկարողացան վարել. արդէն դեկավարուելու ալ օրէնք մը չունէին աչքի առաջ:

Հարստութիւն եւ ոյժը Սարդարի կողմն էր. շահամուտութիւնը եւ խոր կեղծիքը միացուց իրարու հետ անհաշտ աղաներն, իսկ անգլուխ ժողովուրդը մնաց անպաշտպան եւ ցիրուցան եղաւ, եւ Սարդարի եւ աղաներուն հրահանգովը կողոպտուեց ու կոտորուեց եւ մինչեւ վերջը նոյն սկզբունքն է ընդունուած՝ «ժողովուրդն ունեցած նիւթականից զրկել — կողոպտել, որպէսզի աղաներուն հնազանդիք» նոյնիսկ իրենցմէ՝ աղաներէն լսած եմ այդ սկզբունքային որոշումն. մեր շրջակայքի կողոպտուածներն ապաստանեցան Մենաւոր, եւ մենք ըստ կարելոյն սիրաշահեցինք, հաց եւ այլն տուինք, 1-2 շաբաթ պաշտպանեցինք. ներկայ էին Արամը, Մալխասը, Մարգապետը, զինուոր Մտոն, Աշոտը, Գրիգորը, Միհրանը եւ այլն: Այս ընթացքը մեծ ազդեցութիւն եւ համակրանք թողուց շրջակայ պարսից վրայ: Այդ առթիւ

25.- Դատարկ փամփուշտի պատեան, պարկուճ: Ծայրը, ինչպէս ծածօթ է, փամփուշտն է:
 26.- Դապարտեան Դազար, Պուլկարիայէն եկած գործիչ Ատրպատականի մէջ, ապա Բաղէ:
 27.- Անջունան. պարսիկ յեղափոխական գաղտնի կոմիտէ:

Սարգ(ար)ի գիտութեամբ իգօ խանը Մենաւորի գիւղացւոց 13 բերդան հրացաններն 50-ական փամփուռչտներով եւ մէկ այնպիսի 110 փամփուռչտներով գրաւեց: Նաեւ 30-35 թուման խարածի փոխարէն 100 թուման եւ կար չծածուած — կալի տասանորդը առաւ 50 թուման մէկ, 30 թուման մէկ եւ 120 սումար ցորեն ու գարի: 30 խոյի (?) բեռ:

Ուլամ եւայլն չպիտի լինի ըստեցաւ. բայց դրուածիւնը անփոփոխ էր. աղաներու ծառաներուն երթեւեկութիւնը անընդհատ եւ կաշառն տեւական. չի ուրացուիր որ հայոց դրուածիւնը թեթեւ էր քան պարսիկ գիւղացւոցը:

Իգօ խանը օգակցիներէն իւրաքանչիւր տնէն 30 թուման փող առած է անորոշ պատճառաւ. Մուզրէ եւայլն գիւղերէն մէկ մի տնէն 100 թուման առնուազն առած է:

Մակուի խառնակութեանց շարժառիթը իգօ խանն եղած է. նա սկսեց անճիւղմայի²⁷ հիւքը դնել եւ հակառակ Սարգարին վարուիլ, մինչեւ անգամ եւ զայն (Սարգ.) արտաքսել տալ ի Ռուսիա եւ ժողովրդից չէզոքներէն իւրաքանչիւրից իբր տուգանք 10 թուման փող կ'առնէր: 1-2 անգամ բռնի տարաւ մեր գիւղի սարբազներն²⁸ ի Մակու պաշտպանութեան համար, յետոյ Սարգ(արի) եւ իգօ խանի վերադարձին անճիւղմայի հրաւէրով հաւաքուեցան շրջակայ պարսիկներն Մակուի վրայ եւ պարսիկներու ազդեցութեան ենթարկուած նախ մեր հայ սարբազներն ալ գացին մասնակցելու կուռն, միացած միլլէթի կողման, թէեւ չդիմացան քրտերուն եւ փախան. այնուհետեւ Սարգարը լռեց եւ վշտացած հրացաններն գրաւել տուաւ.

Բայց յետոյ երբ տեսաւ թէ ժողովրդին աչքերն բացուեցան, ուզեց զսպել, իսկ ժողովուրդն ու անճիւղման աւելի յանդուգն եւ աւելի բուռն գտնուեցան, որ եւ զայն (իգօ խանը) արտաքսեցին ի Ռուսիա: Վերջինը գնաց Սարգարի հետ միացաւ, եւ քիւրտերուն հետը դաշնակցեցան եւ այնպէս վերադարձան: Ահա այս միջոցին էր որ սկսեց ընդհարումներն եւ ժողովուրդը խուժեց Մակուի վրայ. այլ չկրցին քրտերը զսպել կամ յաղթահարել. եւ այսպէս Սարգարի հրահանգովը Մենաւորի բոլորտիքը կողոպտուեցին 23 գիւղեր, եւ սպանուեցան բաւական պարսիկներ: Մուխուրի շրջանին մէջը 14 գիւղեր իսկ Զօրավայի — Սէօկմենաւայի շրջանի կողմերը 21 գիւղեր աւեր ու թալանի մատնուեցան եւ շատ մը պարսիկներ սպանուեցան:

Մակուի շրջան

Ինջէ	Տալլ պուլաղ	Աղթօփրաղ
Աւինջէ	Շամասուր	Գրգրլ տաղ
Գրմըզը տալ	Գուրունա	Կէօրտէշ
Անթէր գիւղ	Սքապուլաղ	
Գարօ գիւղ	Բիթիլ	

Մուխուրի շրջան

Գարանգայ	Մարջաւան	Շաքէրպուլալ
Ջէնճիրլի	Պատրքի	Պէտրլի
Աղպուլաղ	Պաստամ	Զորդան
Պիհիստան	Քէսիան	Տիւլտիւլմէշ
Իշքէսու	Շթօ	

Զօրավայի շրջան

Գարնջայ	Գրգրճա	Գայնար	Գրնիս
Ըշքէֆթի	Ջէյվա	Աս գայնար	Մէյտան
Ալըշըղ	Գարագուշ	Կէօրտօլ	Աս մէյտան
Զօրավայ	Աս գուշ	Քէլէվան	Գորտից
Գարախաղ	Քէրէմիշկ	Մամշիղան	Կապոյտ
		Շորիկ	

Հայոց ալ բաւական վնասներ եղած են, Քիշմիշթ(եփէ)ի նախիրը տարան եւ վերադարձուցին. Թաղից Ոսկանը սպանուեցաւ եւ 2-3 հոգի վիրաւորուեցան եւ 1-2 տներ կողոպտուեցան. դիրքերէն հայոց տեղաշորերն կողոպտուեցան, եւ վերջապէս Սարգ(արը) իւր հին դիրքը ձեռք բերելէն յետոյ երեսէ ձգեց իգօ խանին. սա կրկին սկսեց խառնել կեղծ շարժումներով պատրաստութիւններ տեսնալով եւն. այնպէս ձեւացուց թէ՛ ինքը ժողովրդի իրաւունքը պաշտպանել կ'ուզէ, մինչեւ որ Սարգ(արը) 2000 թուման եւս տուաւ ու բերանը գոցեց:

Սարգ(ար)ի աղաներուն հետ բարեկամ էի. մինչեւ անոր — Սարգ(ար)ի Ռուսիայէն վերադարձը: Երբ սկսեց գիւղերու կողոպուտը, ընկերներու խորհրդակցութեամբ հեռագիր մը պատրաստեցինք ու հեռագրեցինք Թաւրիզի իշխանութեանը: Այս լուրը հաղորդուած էր Սարգ-ին եւ նա գրաւել տուաւ գիւղացւոց հրացաններն. այդ առթիւ ընդհարուեցանք Սարգ-ի հետը. նա պահանջեց որ ո'չ մի տեղ բողոքեմ իրականութեան մասին, իսկ ես բացարձակ մերժեցի, եւ վշտացած բաժանաւոր, դիմեցի ժողովրդեան ցաւերուն եւ հարստահարութեանց մասին Առաջնորդին, եւ ցարդ ոչ մի արդիւնք չունեցաւ: Ուրախալի կէտ մը կայ, որ մեր ընդհարումն շատ լաւ տպաւորութիւն թողուց պարսիկներուն մէջը եւ աւելի ժողովրդականութիւն եւ համակրանք վաստակեցայ:

Յետոյ յայտնուեց որ Թաւրիզի իշխանութենէն խիստ յանդիմանութիւն եկած էր մեր քաղաքի վրայ:

Ուսմուցը

Հետզհետէ հրամայողական պահանջ ըլլալն զգացուած է եւ ամէն կողմէն ցանկութիւն կայ ուսումն եւ գիտութիւն ձեռք բերելու եւ ուսմուսն(արան)ներ ունենալ. հակառակ բուռն ցանկութեան՝ նիւթականի կարօտ է ժողովուրդը:

28.- Պարսիկ զինուորներ:

Փոփակամտ

Արտագում 1905-6 ուսումն(ական) տարին Սահակ Ստեփանեանը ուսուցիչ էր եւ Հայկ ատամնաբոյժը հոն էր. նոյն տարին 1908 Մայիսին ընկեր Սամսոնը այցելեց մեր շրջանը, ենթակում(իտէ) կազմեց ու կարգադրեց: 1908ին Մարգպետը եկաւ, Օգոստ. եւ Սեպտ. ամիսներուն տեղւոյն գործը վարեց եւ Արտագ այցելեց. այս միջոցին Տիգրան պատուելին հիւանդ եկաւ եւ հոն վախճանուեցաւ: Դարձեալ նոյն միջոցին բժիշկ Յ. Տէր Ստեփանեանը եւ Փայլակը²⁹ այցելեցին Մենաւոր եւ Արտագ ու Սարգ-ին եւ այնպէս մեկնեցան:

Մարգպետէն յետոյ Արամը եկաւ, Հոկտ. եւ Նոյեմբ. եւ Դեկտ.ի կէսը գործը վարեց. իսկ 1907ի գարնան մէկ ամիս իբր Անցորդ եկաւ ու ներս գնաց:

Իսկ մենք իբր մնայուն՝ ըստ կարեաց եւ առիթին խօսած ենք ժողովրդեան, պարսիկներուն, քիւրտերուն, պարսիկ աղաներուն, եւ քիւրտ աղաներուն հետը: Մոսթ(աֆա) պէյին (Նազարավայ), Մահմատ պէյին (Սաչան) եւ Գորտկանայ Ահմէտ պէյին հետը եւ լաւ բարեկամ ենք, եթէ կարելի է վստահիլ: Այդ բոլորը եղած է միայն յեղ(ափոխութեան) տարածման համար. նաեւ տպուած թերթեր ուղարկած եմ անոնց, նաեւ Արտագ պարսիկներուն տարածելու, եւ համակրութեամբ ընդունուած է մեր ցոյց տուած բարեկամութիւնը:

Սենաւորի նիւթական դրութիւնը

1904-5ին երբ Կեղը. Կոմ.ի պաշտօնագրով խոստումն եղաւ 500 թուման վճարել՝ Մենաւորի տնտեսական դրութիւնը բարուքելու, ըստ կարելոյն չծանրանալ կազմակերպութեան վրայ, մինչդեռ վանքը եկամուտ չունէր. Քիշմիշթ(եփէ) եւ Մակու շատ ջնջին մաս մը կը վճարէին եւ խոյի պտղին չէր բաւեր: Ուստի հետզհետէ վանքի պարտքը բարդուեց մինչեւ ցայսօր: Վերջապէս

29.- Դերձակեան Ռուբէն, գործիչ Ատրպատականի մէջ:

1908ին ամառը քարերու գինը ստացանք եւ [այս] աշնան եւս քիչ մը փող՝ քարերը փոխադրելու. այն տարին ջրաղացքը չըրացաւ. գարունը Մայիսի վերջը Արամը²² եկաւ եւ կարգադրեց որ կազմակերպութեան փողէն վերցընէի եւ գործը լրացնէի. շինեցինք բայց շատ թանգ նրստաւ, որովհետեւ ցանքի քաղի ատեն լինելուն գործաւորը կրկին գնով աշխատեցուցինք, որով եւ գործը թանգ վերջացաւ. ջրաղացքը սարքող վարպետ չճարուեց մինչեւ յետին աշուն, մինչեւ որ ստիպեալ տեղացի տկար վարպետին հետը պայմանաւորուեցանք եւ սարքեց, բայց ուշ էր. այն օրը որ պիտի աշխատեցնէինք ձիւնը ծածկեց եւ սառեցոյց. մէկ խօսքով ջրաղացքը սարքն է. եւ անպայման գարունը կ'աշխատի:

Այս տարի դժբախտաբար կարկուտը արտերն աւերեց, կայէն եկամուտ չեղաւ եւ գոյացածը կերուեցաւ. միայն աւելորդ անասուններ կային, որոնք զանազան արգելքներու, խոչընդոտութիւններու պատահեցան եւ չծախուեցան. եւ պարտքերն մնացին անվճար:

Երթեւեկ

Տեղացի սուրհ(անդակ)ներ, 116 հոգի ձիաւորներ, որոնք Բլուրից 18 ոտք եւ Աւարայրից 25 ոտք²³ փոխադրած են:

Երկրի սուրհ(անդակ)ներ, 154 հոգի ձիաւոր, 30 ոտք փոխադրած են:

Մպտեալ եւ ականաւոր ընկերներն Երկրէն եկած 140 հոգի, իսկ Երկիր գնացողներն 119 հոգի: Մնայուն ձիեր 8-10: Եւ Մնայուն անձինք 4-6 հոգի:

Մենաւորի կազմակերպութեան վերաբերեալ եւ վանքի վերաբերեալ հաշիւներն պատրաստ են:

ԸՆԾԱՅԻ

7 Յունուար 1908, Վրէժ

Փաստ. 1729-2

4.- ՌՈՍՏՈՄԻ ՆԱՄԱԿԸ Հ.3.Գ. ԲԻՒՐՈՆԵՐՈՒՆ

1907 թ. վերջերուն Ռոստոմ անցած էր Ատրպատական եւ անկէ Թեհրան, պարսիկ սահմանադրական ղեկավարներուն հետ յամուն Դաշնակցութեան բանակցութիւններ վարելու նպատակով: Արեւելեան եւ Արեւմտեան Բիրոններուն յղուած այս նամակով ան մանրամասն տեղեկութիւններ կը հաղորդէ փոխադարձ գործակցութեան շուրջ ձեռք բերուած քաղաքական եւ զինուորական համաձայնութեան մասին:

Միրելիք,

Բանակցութիւնները վերջացան, տեւելով 8 օր: Ուղարկուած ենք ձեզ արձանագրութեան պատճէն: Աւելացնում ենք նրան մեզ հետ բանակցողների ներկայացուցիչների նամակը, ուր նրանք բացատրում են, թէ ինչ պատճառով արձանագրութեան տակը չեն ստորագրում: Բայց պէտք է իմանաք, որ շտապով գնալու չէ դրա բուն պատճառը, դա միայն մի պատրուակ է: Բանն այն է, որ բանակցողները, իբրեւ որոշ հասարակական եւ քաղաքական դիրք ունեցող անձինք, խոյս են տալիս ստորագրելու մի պայմանագիր, որ կնքուած է յեղափոխական կուսակցութեան ներկայացուցչի հետ: Ինչպէս երեւում է, նրանք կ'աշխատեն ստեղծել մի ուրիշ մարմին՝ նոյնպէս յեղափոխական անունով, ուրիշ անձերից բաղկացած, գուցէ եւ ֆիկտիւ³⁰, որը մեզ հետ կը մտնի պաշտօնական յարաբերութեան մէջ: Իսկապէս՝ ստորագրութիւնը մեզ համար էլ ցանկալի չէր: Աչքի առաջ ունենալով Շամի մարմին³¹ եւ մի քանի ընկերների տրամադրութիւնը, մեզ համար եւս անհրաժեշտ էր չկապուել ոչ մի ստորագրութեամբ, այլ համաձայնութեան կէտերի իրագործումը թողնել իրերի ընթացքին: Բայց գործը այնպէս էր տարուած, որ ստորագրութիւնից հրաժարուելը նրանց կողմից պիտի լինէր: Այդ միջոցով կարելի էր չափել նրանց պատրաստակամութեան աստիճանը, որը հիմնուած պիտի լինէր այն ուժերի ու ֆակտորների վրայ, որ իսկապէս տրամադրելի են նրանց համար: Դրանով միայն կարելի էր հասկանալ, թէ մինչեւ ո՞ր աստիճան կարելորութիւն են տալիս սահմանազրի դէպքին եւ իրօք անխուսափելի են համարում պատերազմը կամ պատրաստուած են նրան: Ուղարկում ենք նաեւ մեր պատասխանի պատճէնը, ուր հասկացրել ենք, թէ մենք ի՞նչ չափով կարելորութիւն ենք տալիս բանակցութիւնների հետեւանքին:

Համառօտ կերպով առաջ բերեմ բանակցութիւնների պատմութիւնը: Բազու էի հասել երբ տեղի ունեցաւ Շահի եւ Մէջլիսի միջեւ կռիւը: Ենթադրելով, որ դա պիտի խանգարի անպատճառ մեր բանակցութիւններին, հեռագրով հարցրեցի այստեղի ընկերներին, հարկաւոր չէ՞ արդեօք յետաձգել իմ

ուղեւորութիւնս, աչքի առաջ ունենալով դրութեան անկալութիւնը: Եւ երբ Թեհրան հասայ, սահմանադրականների գլուխը շատ խառը գտայ: Թէեւ Շահի կառավարութիւնը պարտութիւն էր կրել, բայց նրա կողմնակիցները դեռ շարունակում էին գաղտնի դաւեր լարել սահմանադրութեան դէմ: Կազմուել էին տեղական սեւ հարիւրեակներ, որոնք տեղորի միջոցով ձգտում էին ընկճել սահմանադրականներին: Իմ գալուստը երրորդ օրը տեղորի ենթարկուեց իր տան մէջ սահմանադրական շարժման աջակից յայտնի հարուստ Արբաբ Ֆրէյդունը, ինչպէս քիչ յետոյ հաստատուեց, հէնց Շահի մտերիմ սենեկապետի մարդկանց ձեռքով: Մի օր անց հրացանաձգութեան ենթարկուեց արտաքին գործոց նախարարը, նոյնպէս իր տան մէջ: Սա եւս յայտնի է իբրեւ ջերմ սահմանադրական. սրա հայրը հանգուցեալ Մուշիր Դովլէն էր, որ սաղրագամ եղած ժամանակը կարողացել էր համոզել Շահ Մոգաֆարէդը ինչին սահմանադրութիւնը ստորագրել: Մէջլիսի անդամները մշտական վախի մէջ էին, շատերը տանը չէին քնում, իրենց կողմից միջոցներ էին խորհում թէ իրենց անձը եւ թէ սահմանադրութիւնը ապահովելու համար: Ահա թէ ինչու իմ գալուց մի շաբաթ անց միայն, Դեկտեմբ. 30-ին տեղի ունեցաւ առաջին նիստը: Հետեւեալ նիստերն էին՝ 31-ին Դեկտ., 2, 3, 4-ին Յունուարի 1908 թ.: Մեզ հետ բանակցող խմբի մէջ մտնում էին՝

- 1.- Վօսուդ-օդ-Դովլէն (կառավարութեան վստահութիւն), Մէջլիսի փոխ-նախագահը: Խօսում է Ֆրանսերէն:
2.- Մոսթէշար-օդ-Դովլէն (պետական խորհրդական), պատգամաւոր Թաւրիզի, նոյնպէս խօսում է Ֆրանսերէն:
3.- Հաջի Ամին-ալ-Չարբը (դրամատան հաւատարիմ), պատգամաւոր Թաւրիզի, նոյնպէս խօսում է Ֆրանսերէն:
4.- Հաջի Մուհին-օդ-Թոջար (վաճառականների օգնութիւն): Նոյնպէս շատ հարուստ: Հաջի Ամին-օլ-Չարբի հետ միասին նկատուած է սահմանադրականների ֆինանսական ոյժը: Գլխաւորապէս սրանք են հոգում շարժման ծախքերը:

30.- Ոչ իրական, շինծու:
31.- Վան-Վասպուրականի Կ. Կոմիտի:

5.- Հաջի Միրզա Իբրահիմ աղա, պատգամաւոր Թաւրիզի, յեղափոխական անջումաների³² պարագլուխ:
6.- Աղա Սէյիդ Հասան Թաղի Ջադէ, երիտասարդ պատգամաւոր Թաւրիզի. մէջլիսի ամենաազդեցիկ եւ կարող անդամը: Սա է բանակցութեան նախաձեռնողը եւ վերոյիշեալներին համախմբողը, սա եւս յենում է յեղափոխական անջումաների ուժի վրայ:

Այս խումբը՝ կազմուած Մէջլիսի գանազան խաւերից, ներկայանում է իբրեւ մի կորիզ, որը իր հեղինակութեամբ կարողանում է ուզած ուղղութիւնը տալ գործերի ընթացքին: Նրա հետ են Թեհրանի ամենահեղինակաւոր հոգեւոր պետերը՝ Աղա Սէյիդ Աբդուլլահ եւ Աղա Սէյիդ Մոհամմադ մուշտէյիդները, որոնք համարում են սահմանադրութեան հիմնաքարերը եւ վայելում են Նաջաֆի հոգեւոր ծայրագոյն պետերի վստահութիւնը:

Ինձ հետ միասին ժողովներին մասնակցում էր մեր հին ընկեր Յովսէփ Միրզայեանը: Եւ ամէն մի ժողովից յետոյ ունենում էինք խորհրդակցութիւն ուրիշ երեք ընկերների հետ, որոնք մինչեւ իմ գալը, անկախ տեղական կոմիտէի կազմից, վարել էին Յովսէփի միջոցով բանակցութիւնները: Դրանք են՝ 1) Ձեզ ծանօթ բժիշկ Տէր Ստեփանեանը, 2) Թումանեանների տան ներկայացուցիչ Ալեքսան Թումանեանը, 3) Ալէք Ջալալեանը, բոլորն էլ լաւ ծանօթ տեղական պայմաններին եւ պարսիկների հոգեբանութեան:

- Ժողովներին դրուած էին հետեւեալ հարցերը.
1) Որքա՞ն ապահովուած է սահմանադրութեան նորմալ ընթացքը Շահի յետագայ դաւերի կողմից.
2) Ի՞նչ միջոցներ են ձեռք առնուում անգլո-ռուսական համաձայնութեան դէմ, որ ժամանակին կարող է սպառնալ Պարսկաստանի քաղաքական անկախութեանը.
3) Ի՞նչ են սպասում սահմանազրի յանձնաժողովից. Ի՞նչ յոյսեր ունեն տաճիկ զօրքը պարսից տեղափոխարկից հեռացնելու³².

- 4) Ի՞նչ ոյժ կարող են Տաճկաստանի դէմ հանել:
5) Ինչո՞ւ պիտի կայանայ մեր աջակցութիւնը:
6) Իրենք՝ պարսիկները ի՞նչ օգնութիւն կամ դիւրութիւն կարող են մեզ տալ:

Առաջին հարցին պատասխան եղաւ, որ սահմանադրութիւնը հաստատուն հիմքերի վրայ է դրուած եւ որ Շահի ընդդիմութիւնը կարող է միայն խանգարել, դանդաղեցնել կանոնաւոր աշխատանքը, բայց ո՛չ վերացնել սահմանադրութիւնը: Աւելացրին նաեւ, որ արդէն արուած են որոշ քայլերը՝ վերջ տալու համար խառնակութիւններին, հակառակ պարագային իրենց ձեռքին տակ ունեն միջոցներ, որոնցով կը հարկադրեն ուժով Շահին՝ յարգելու սահմանադրութիւնը:

Իսկապէս, հետեւեալ օրը, Երկուշաբթի, յայտարարուեց մեզ, որ Շահը վերջնականապէս գիջել է, կրկնելով մի անգամ եւս հաւատարմութեան երդումը կրօնապետների եւ Մէջլիսի պատուիրակների ներկայու-

թեամբ (փակագծի մէջ ասեմ, որ Շահի ռոճիկը հասցրել են մինչեւ 750.000 (1.500.000 ռուբլի) թումանի, մի հանգամանք, որ մեծ դեր է խաղացել հաշտութեան խնդրի մէջ):

Երկրորդ հարցի վերաբերեալ որոշ բան չասուեց: Չէր երեւում, որ մի բան ծածկելու լինէին. պարզ էր, որ ասելու բան չունէին: Մեր կողմից շեշտուեց անհրաժեշտութիւնը՝ ձեռք բերել աջակցութիւնը որեւէ ուրիշ պետութեան, որը անմիջական կերպով աչք չունենար Պարսկաստանի վրայ՝ ինչպէս Անգլիան է կամ Ռուսաստանը. իբրեւ այդպիսին մատնացոյց արուեց Ֆրանսիան: Այդ առաջարկը հաւանութիւն գտաւ եւ հետեւեալ օրը մեզ յայտնեցին, որ այդ ուղղութեամբ աշխատանք թափուում է եւ որ եթէ Դաշնակցութեան կողմից աջակցութիւն լինի, նրա կապերի շնորհիւ Ֆրանսիան կարելի կը լինի մօտեցնել պարսկական գործին: Դրամական փոխառութիւն կնքելու մասին (սա ամէնից ցաւոտ տեղն է պարսից սահմանադրութեան) խօսք չեղաւ բոլորովին, սակայն կասկած չկայ, որ նրանց բոլորի մտքում այդ խնդիրն է նստած: Կողմնակի աղբիւրներից իմացանք, որ Ֆրանսիան հրաժարուում է դրամ տալ Պարսկաստանին՝ առանց Ռուսաստանի երաշխաւորութեան:

Այստեղ հարց դրինք մի քանի անձանց մասին: Մելքոն Խանից նրանք վշտացած են երեւում. քանիցս անգամ դիմել են նրան նամակներով, բայց պատասխան են ստացել շատ ուշ եւ սառը: Նրա վրայ ոչ մի յոյս չունեն: Երբ մենք հարց դրինք, թէ ի՞նչպէս կը վերաբերին, եթէ Մելքոն Խանը ինքը պատրաստականութիւն յայտնի իր կապերով, իր անունով այս կամ այն խնդրում օգնութիւն ցոյց տալ սահմանադրականներին, նրանք պատասխանեցին, թէ ի հարկէ ուրախ կը լինին: Այս բանը ուրեմն ի նկատի ունեցէք: Արշակ Խան Գորոյեանին բոլորովին բացասաբար են վերաբերում, իսկ Յովհաննէս Խան Մասէհեանին՝ շատ լաւ:

Ֆրանսիայի նման համեմատաբար մի չէ գոք պետութեան միջամտութիւնը անհրաժեշտ դատուեցաւ նաեւ սահմանազրի խնդրի տեսակէտից, իբրեւ հակակշիռ Անգլիային եւ Ռուսաստանին: Եթէ տաճիկ կառավարութիւնը յամառի, ռուս կառավարութիւնը ինքը կարող է ներս խուժել Ատրպատական տաճիկ զօրքերը քշելու նպատակով կամ պատրուակով: Երկու դէպքում էլ ձեռք չի քաշել այդ նահանգից: Անգլիան «հաւասարակշռութիւնը պահպանելու» համար իր կողմից որոշ շրջան կ'առնի իր հովանաւորութեան տակ:

Երրորդ հարցի վերաբերեալ նրանց կողմից արուեց 3 ենթադրութիւն:

- 1) Թուրք զօրքերը կը հեռանան գրաւուած վայրերից խնդիր պարզուելուց եւ վիճելի տեղափոխան Պարս-

32.- Պարսկաստանի ներքին խռովութիւններն օգտուելով, քրքական զօրքերը ստած էին հայաբնակ գաւառները՝ մինչեւ Սալմաստ:

կաստանի սեփականությունն ճանաչելուց յետոյ: Պատերազմի խնդիրը դրանով ուրեմն կը փակուի: 2) Այլ եւ այլ պատրուակներով գործը կը ձգձգուի եւ պատերազմը կը յետաձգուի: 3) Թուրք կառավարությունը բացէ ի բաց կը մերժէ հեռացնել զօրքերը: այդ դէպքում պատերազմը անխուսափելի կը լինի:

Առաջին ենթադրությունը անհիմն նկատուեց, որովհետեւ թուրք կառավարությունը եթէ նահանջողներէն լինէր, առաջ չէր գալ: Իսկ եթէ նահանջի, դա կը լինի Ռուսաստանի ճնշման տակ, որը ինքը կը գրաւի վիճելի վայրը կամ սահմանակից շրջանը «պապագայի ապահովութեան համար»: Դա աւելի միտնաբերական չի լինիլ Պարսկաստանի համար: Երրորդ ելքը նոյնպէս հաւանական չհամարուեց այն պարզ պատճառով, որ Պարսկաստանը պատերազմ հրատարակելու հնարաւորութեան մէջ չէ: Միակ հաւանական եւ Պարսկաստանի համար համեմատաբար աւելի նպաստաւոր եւ պատուաբեր նկատուեց երկրորդ ենթադրությունը: Եթէ նոյնիսկ Տաճկաստանը կատէգորիկ կերպով մերժի հեռացնել իր ուժերը, այնուամենայնիւ պարսիկները ստիպուած պիտի լինին դիպլոմատական ճանապարհով ձգձգել խնդիրը, իրենց համաձայնութիւնը չտալ մինչեւ քաղաքական աւելի բարենպաստ հանգամանքների առաջ գալը: Զրգձգելը, բացի այդ, այն առաւելութիւնը կը ներկայացնի, որ հնարաւորութիւն կը տայ կանոնաւորելու Պարսկաստանի ներքին գործերը, պատերազմական պատրաստութիւնների դիմել եւ այլն: Միաժամանակ՝ Թուրքիայի ընդհանուր յեղափոխական շարժումը ծաւալուելով ու ուժեղանալով՝ զգալիապէս կը թուլացնի միապետութեան նուաճողական քաղաքականութիւնը եւ այդ պիտի կը հանդիսանայ Պարսկաստանի համար բնական դաշնակից: Խօսելով քաղաքական նպաստաւոր բարդութիւնների մասին, մասնաւորապէս կանգ առանք Բուլղարիայի վրայ: Պարզելով Բուլղարիայի բռնած ընթացքը մակեդոնական խնդրի վերաբերմամբ, պատերազմի անխուսափելիութեան հաւանականութիւնը, որ վաղ թէ ուշ պիտի կախուի երկու կողմերի վրայ էլ, առանձնապէս շեշտեցինք բուլղար-պարսկական համաձայնութեան անհրաժեշտութիւնը: Նրանց կողմից խոստում եղաւ ամէն ջանք թափել գլուխ բերելու այդ գործը: Մերձեցնելու նպատակով խոստացան Սոֆիա ուղարկել տալ իբրեւ ներկայացուցիչ-հիւպատոս մի վստահելի անձ, իսկ մինչ այդ, բանակցութիւնները վարել Բուլղարիայի հետ եւրոպական մի դեսպանատան միջոցով: Աչքի առաջ ունէին աւելի Բերլինի դեսպանատունը:

Երբ կարգը եկաւ այն հարցին (IV հարցին), թէ ի՞նչ ո՞ր կարող են հանել, պատերազմի դէպքում, Թուրքիայի դէմ, նրանց առաջին խօսքը եղաւ, որ չվստահանալով իրենց բանակի ուժին, գրեթէ ամբողջ յոյսը դրել են անկանոն զօրքերի, Շահսեփանի, Ղարաղաղի, Լուխտանի

եւ այլ ճիւղերի վրայ: Յոյս ունէին նաեւ ապստամբեցնել շիա ցեղերին, որոնք բնակուած են Տաճկաստանում, Բաղդատի մօտերը: Իսկ բանակը կանոնաւորելու մասին չէին խօսում, ապագայի վերաբերմամբ էլ մեծ յոյս չունենալով: Մենք ստիպուած եղանք նրանց յայտնել, որ մեր զինուորական ժողովի կարծիքով, որ հրաւիրուած էր Թիֆլիսում Մաջիտ-Սալթանէի գալու առթիւ (սա եւս մտածում էր կռուել թուրք զօրքերի դէմ անկանոն զօրքերի միջոցով), անհնարին նկատուեց թուրք կանոնաւոր բանակի դէմ որեւէ յաջողութիւն յուսալ՝ միայն անկանոն զօրքերին ապահինած: Աւելացրինք նաեւ որ ռուս զինուորական իշխանութիւնը ինքը ակնածում է թուրք բանակից, որ լաւ զինուած է, մարզուած եւ ունի հմուտ ղեկավարներ: Մեր ապագայի աջակցութիւնն էլ, ինչպէս խօսուել է Մաջիտ-Սալթանէին, կարող է արտայայտուել պարտիզանական կռիւներով, որոնք արդիւնաւէտ կը լինին այն ժամանակ միայն, երբ մեր պարտիզանական խմբերը աջակցելիս լինին կանոնաւոր բանակի գործողութիւններին:

Այնպէս որ նոյնիսկ քաղաքական նպաստաւոր հանգամանքներում, Թուրքիոյ յեղափոխական շարժման առաջ բերելիք ներքին դժուարութիւնների պարագային էլ Պարսկաստանը անհրաժեշտ պէտք պիտի ունենայ իր բանակի կանոնաւորման եւ զինման:

Իսկ գալով այն կէտին, թէ ինչ աջակցութիւն կարող է ցոյց տալ Դաշնակցութիւնը Պարսկաստանին եւ Պարսկաստանը Դաշնակցութեան, աւելորդ ենք համարում կանգ առնել դրանց առթիւ եղած խօսակցութիւնների մանրամասնութիւնների վրայ: Դրանք ամփոփուած են արձանագրութեան մէջ, որ ուղարկուած է նամակիս հետ միասին: Կ'ասենք միայն հետեւեալը.

Կէտերը բաժանուած են երկու մասի. 1) կէտեր, որոնք վերաբերում են նախապատրաստական շրջանին եւ պարտաւորեցուցիչ պիտի լինէին երկու կողմերի համար էլ հէնց հիմնկուանից. 2) կէտեր, որոնք կապ ունին անմիջապէս պատերազմական գործողութիւնների հետ: Դրանց մասին միայն խօսուել է, այդ կէտերը միայն աչքի առաջ պիտի ունենանք. պարտաւորեցուցիչ պիտի լինէին մի նոր ժողովից յետոյ, ուր կարող էին դրուել եւ ուրիշ հարցեր, ուր համաձայնութիւն կը կայանար աւելի կոնկրէտ կէտերի շուրջը: Երկու մասին բաժանելու պատճառը այն է, որ 1) մենք պարտաւորեցուցիչ կարող էինք ընդունել միայն այն, ինչ մտնում է Ընդհանուր ժողովի որոշումների սահմանի մէջ: Եւ ինչպէս կը տեսնէք, մեր խոստումները գրեթէ բոլորը այնպիսի բաներ են, որ առանց համաձայնութեան պարսիկների հետ էլ պիտի ի կատար ածէինք, հէնց մեր շահերից դրդուած: Իսկ մինչեւ մի նոր ժողովը պարսիկների հետ, մենք կ'ունենանք մեր Խորհուրդը, որը իրաւասութիւն կ'ունենայ խնդրի մանրամասնների մէջ մտնել: 2) Պարսիկների համար եւս հնարաւոր չէր պարտաւոր

րութիւններ յանձն առնել, քանի որ նրանք չզիտէին, թէ ովքեր են իրենք եւ իբրեւ ի՞նչ են մեզ հետ բանակցում: Նրանց գործը թեթեւացնելու նպատակով առաջարկեցինք, որ կազմեն մի անկախ մարմին՝ թէկուզ Comité de la Défense Nationale³³ անունով: Իրենք էք մտածել էին Մէջլիսում ընտրել տալ, այդ կոմիտէին կից, որը կը գործի Մէջլիսից դուրս, մի մասնաժողով, որը յատկապէս զբաղուէր Թուրքիայի խնդրով եւ որի մէջ մտնեն իրենք բոլորը: Պարլամենտական կոմիտիսինը ընտրուեց, բայց բացի իրենցից մտան 3 ուրիշ անձ եւս. ընտրութիւնը այդ պատճառով անաջող է համարոււմ. բացւել բոլոր այդ երեքի առաջ նրանք չեն ուզում: Գուցէ կանգ առնեն միայն մեր առաջարկած Comité-ի վրայ:

Բայց նրանց մերժումով՝ արձանագրութիւնը ստորագրել (տես նրանց նամակը) պարտաւորեցուցիչ ոչինչ չի մնում: Իւրաքանչիւր կողմը բարոյապէս պարտաւորուելով աջակցել միւսին, պիտի աշխատի նշանակած կէտերը իրագործել հնարաւորութեան սահմանում:

Այստեղ մնում է իբրեւ միջնորդ Յովսէփ Միրզայեանը, որը յարաբերութիւն կը պահպանի պարսիկ խնամիների հետ, խորհրդակցելով միւս երկու կամ երեք ընկերների հետ: Տեղական մարմինը չզիտէ մեր բանակցութիւնների մասին. այդ առթիւ պարտք եմ համարում նախազգուշացնել ձեզ, որ սխալ թոյլ չտաք ձեզ: Գրէք նախկին հասցեով (Բժ. Տէր Ստեփանեանին, յանձնել Արբակին³⁴):

Մի քանի խօսք ենք ուզում աւելացնել պարզելով մեր տեսակէտը: Մեր կարծիքով եթէ Թուրքիայի դիրքը միշտ սպառնական մնայ, պարսիկները անպայման կը ձգտին մեզ հետ իրականապէս կապուելու: Եթէ Թուրքիան թուլացնի իր ուժերը, նահանջի նշաններ ցոյց տայ, յոյս չունենք, որ նրանց կողմից ակտիւ մերձեցման քայլեր առնուեն: Մենք յամենայն դէպս պիտի աշխատենք պարզել ապագայի վտանգի անխուսափելիութիւնը նրանց համար եւ անհրաժեշտութիւնը նպաստելու օսմանեան յեղափոխական շարժման, հէնց իրենց շահերի տեսակէտից: Մենք մեր կողմից անհրաժեշտ ենք համարում իրագործել մեր հետեւեալ խոստումները, նոյնիսկ անկախ այն բանից, թէ փոխադարձաբար պարսիկները մի շօշափելի աջակցութիւն ցոյց կը տան մեզ, թէ ոչ: Մի կողմ ենք թողնում 4-րդ, 5-րդ կէտերը, որոնք առանց այն էլ կատարոււմ են:

1) Պրոպագանդը Եւրոպայում յօգուտ սահմանադրական Պարսկաստանի պէտք է տանել մեր սովորական եղանակով եւ ցոյց տալ, որ տանում ենք: Զեզ կ'ու

ղարկուեն տեղեկութիւններ, նիւթեր եւրոպական մամուլին մատակարարելու համար: Դուք էլ հարկաւոր կըտրօնները թերթերից կ'ուղարկէք պարբերաբար այստեղ:

2) Ֆրանսիայի խնդրում չենք կարծում, որ առանձին յաջողութիւն ունենանք, քանի որ Ֆրանսիան կապուած է բարեկամաբար թէ՛ Անգլիայի եւ թէ՛ Ռուսաստանի հետ, մի հանգամանք, որ աւելի աննպաստ է Պարսկաստանի համար, քան նպաստաւոր: Բայց եւ այնպէս անհրաժեշտ կը լինի հարցապնդումների, տեսակցութիւնների միջոցով ազդել եւ հետեւանքը տեղեկացնել այստեղ: Գուցէ այս խնդրում հարկաւոր գայ Մելքոն Խանի միջամտութիւնը կամ լոկ անուը: Զեր հեռագրի représentant iranien-ը³⁵ եթէ սա է, աւելի լաւ: Պիտի խնդրէինք, որ այս կէտի վրայ առանձնապէս ուշադրութիւն դարձնէք, որովհետեւ սա է ամէնից շատ ազդելու մեր պարսիկ բարեկամների հոգեբանութեան վրայ: Մանաւանդ որ հրապարակի վրայ փոխառութեան խնդիր էլ կայ:

3) Նոյնը պիտի անել բուլղար-պարսկական համաձայնութեան վերաբերեալ: Պէտք է ձեզ յայտնի լինի որ Պարսկաստանի վարանոտ դրութիւնը հետեւանք է ամբողջովին նրա անօգնական լինելուն: Եթէ մեր մտադրութիւնը իրագործուի, դա մեծ քաջալերիչ հանգամանք կը հանդիսանայ շուարած Պարսկաստանի համար: Զենք կարծում, որ Բուլղարիան ուրիշ կերպ վերաբերի, եթէ նրան պարզուեն այստեղի պայմանները եւ մեր տեսակէտները: Այս աշխատանքն էլ ձեզ վրայ է ընկնում:

7-րդ եւ 8-րդ կէտերի իրագործումը կը նպաստի մեր հայ-թուրքական համաձայնութեան գործին կովկասում:

Պարսիկ բարեկամների խոստումներից կարեւոր են մեզ համար եւ գործնական՝ ներկայ պարագաներում հետեւեալները,-

1.- Մեր ուժերի փոխադրութիւնը Պարսկաստանի ներսում, որ գրեթէ ապահովուած է:

2.- Պիտի առանձնապէս աշխատենք, որ իրագործուի խոստումների երկրորդ կէտը՝ արտասահմանից զէնք եւ ռազմամթերք փոխադրելը: Եթէ ուրիշ բան չլինի, միայն այդ բանը հերիք է մեզ:

4) Չորրորդ կէտի համար պէտք է ասել, որ խոստացել են, հարկաւոր դէպքում, երբ պահանջելու լինենք, ուղարկել Մադիկ³⁶ մի պարսիկ, որը յարաբերութեան մէջ ղնի մեր ընկերներին այն պարսիկների հետ, որոնք պատրաստ կը լինին աջակցել մեր այնտեղի գործունէութեան: Թէեւ առանձին կարեւորութիւն չենք տալիս այս կէտին, այնուամենայնիւ դա գրում ենք ի տեղեկութիւն Մադիկի ընկերներին:

Այսքանս բաւական է: Համբոյրներով՝ Զեր ՌՈՍՏՈՒ

Թ.Գ.- Եթէ հարցնելու բաներ ունենաք, գրեցէք Մ. Բ.³⁷ Ն(ՌԹՆ)

33.- Ֆրանսերէն՝ Ազգային Պաշտպանութեան Կոմիտէ:
34.- Յովսէփ Միրզայեանի ծածկանունը:
35.- Ֆրանսերէն՝ Իրանեան Գերկայացուցիչ:
36.- Կ. Պոլսոյ մէկ այլ ծածկանունը, կրճատուած՝ Կոռա-ժաղիկի փոխարէն:
37.- Մեծ-քաղաքը Թիֆլիսն է. այս պարագային՝ Արեւելեան Քիւրոն:

Փաստ. 475-15

5.- ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Աւելի քան մի ամիս է անցնում, որ սկսուեց մեր շրջանում սահմանադրական շարժումը ընդդէմ նախկին միապետական փտած կարգերի, եւ մօտ հնգամեայ կռիւներից սահմանադրականներս դուրս ենք գալիս յաղթական: Ճիշդ է այդ յաղթութիւնը գնեցինք գոհերի եւ կորուստների գնով, բայց այդ հանգամանքը անխուսափելիութիւն է ազատութեան եւ լաւագոյն քաղաքական ու տնտեսական կարգեր ստեղծելու, յոյսով տոգորուած բոլոր ժողովուրդների համար: Տարուած յաղթանակով ուրախ՝ չպէտք է սակայն կարծենք որ գործը վերջացած է: Յաջողութիւնը ձեռք բերելուց յետոյ, մնում է տակաւին ամենակարեւոր աշխատանքը, — ապահովել այն ապագայի համար, պայմանների կատարեալ գիտակցութեամբ:

Ներկայիս կոչ ենք անում Սալմաստի մեր բոլոր ընկերներին եւ ժողովրդեան ընդհանրապէս, լարելու, պատրաստ պահելու իրանց ինչպէս Ֆիզիքապէս, նոյնպէս եւ բարոյապէս բոլոր կարողութիւնները առաջադրուած աշխատանքի համար: անհրաժեշտ է լինել զգաստ եւ հեռատես ներկայի ամէն տեսակ յարաբերութիւններին մէջ: Շարժումների սկիզբից ցարդ նկատուած որոշ անհատների անուշադիր քայլերը մեր հարեւանների նկատմամբ՝ համոզում են մեզ [որ] որոշ անհատներ կարող են հեշտութեամբ սխալուել եւ անտեղի գծտութիւններ ու բարդութիւններ առաջացնել:

Ուստի խստիւ զգուշացնում ենք թէ ընկերներին եւ թէ ժողովրդին, եւ պահանջում ենք լինել փափկանկատ եւ կշռուած թուրք եւ քիւրտ հարեւանների հետ ունեցած յարաբերութիւնների մէջ: Հակառակ վարմունքի մէջ գտնուողները կ'ենթարկուին խիստ պատասխանատուութեան: (Մեր մարմինները՝ կոմիտէն եւ ենթակոմիտէները նոյնպէս առանց լուրջ խորհրդակցութեան եւ ժողովների որոշման չպէտք է կարգադրութիւններ անեն):

Ներկայ անցողական շրջանում ինքներս՝ հայերս պէտք է ցոյց տանք մաքուր յեղափոխականութեան օրինակ, եւ փաստեր՝ որ գիտենք գուրգուրալ ազգերի համերաշխութեան գործի մասին, որով միայն կարող կը լինենք մեր հարեւանների անտեղի թիրիմացութիւնների եւ դրանցից առաջանալիք վնասների առաջն առնել ու հայերիս վերաբերմամբ նրանց ունեցած կարծիքը միշտ ու աւելի բարձր պահել:

Հ. Յ. Գ. Ատրպ[ատականի]
Կ. Կոմիտէի ներկայացուցիչ
ՍԱՄՍՈՆ¹

16 Դեկտ. 1908, Սալմաստ

Փաստ. 476-3

6.- ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

11 Յունուար 1909

Հ. Յ. Գաշն. Արեւմտեան Բիւրոյին

Ընկերներ!

Ձեզանից նամակ չենք ստանում, սակայն սոյն երկտողով մեր վիճակի եւ քաղ. դրութեան մասին անհրաժեշտ ենք համարում գրել:

Մեծ գործի առաջ ենք կանգնած մեր չնչին ուժերով: Յարմարագոյն առիթները մէկիկ-մէկիկ փախչում են մեր առաջից, սակայն ի՞նչ կարող ենք անել մեր ձեռքի տակ ունեցած այսօրինակ փոքր միջոցներով: Մեր ազգային ճակատագիրն է դարձել, կարծէք, միշտ մեր

կողքին մեզնից աւելի թշուառ, աւելի անգիտակից, աւելի անկարող հարեւան ու գործակից ունենալ: Եւ կարծես մեր պարտականութեանց շարքը պիտի մտցնել բացի մեզ ղեկավարել նաեւ նրանց, մեր հարեւաններին: Բայց սրա համար ուժեր են պէտք. ինչքան էլ լարելու լինենք մեր այժմեան ուժերը, ինչքան էլ ջանանք ոչինչ ձեռնարկել, այնուամենայնիւ անկարելի է բաւարարութիւն տալ գոնէ ներկայիս ամենաէական պահանջներին: Կռուող ուժերը քիչ, ռազմամթերքը անբաւարար չափով, փող ամբողջապէս բացակայ: Գաւառներից շարունակ կռուողների եւ ռազմամթերքի պահանջներ են անում. քաղաքիս ներկայ դրութիւնը կռուողների մեծ պահանջ է զգացնել տալիս. մեր ունեցած ընկերներին

պահելու հազար ու մի տեսակ ծախսեր են պահանջում: Թուրքերի որեւէ նիւթական օժանդակութիւնը գուր է: Ա[րեւելեան] Բ[իւրոյ]ից նոյնպէս: Մնում են մեր միջոցները, իսկ դրանք էլ այնքան չնչին են: Յոյներս դրել ենք Դաշն[ակցութեան] դրսի մարմիններում եղած ընկերների ջանքերի վրայ: Տեսնենք մի բան դուրս կը գայ դրութիւնից թէ ոչ: Արդէն սկսուել է Ոսկանապատում¹⁸ կազմուել ինքնապաշտ[պանութեան] մի մարմին՝ դուրս կուսակցութիւնից, որոնք պիտի օժանդակեն մեզ: Չգիտենք որքան յաջողութիւն կ'ունենանք:

Վերջին դէպքերի մասին անշուշտ կարդացած կը լինէք թերթերում: Վստահ կարելի է ասել, որ մեր 25 մարտիկներին է պատկանում երկու յաղթութիւններն էլ, որ տարուեց Սամաղ խանի վրայ: Պարսիկ Ֆետայիների գործը այն եղաւ որ իրենց անվարժութեան շնորհիւ վերաւորեցին մեր ընկերներից երկուսին:

Արտաքին դրութիւնը նոյնն է: Քաղաքը երկու կողմից բռնուած է միապետական ձիւղերներով՝ արեւելից էլ ինչ-որ-Դոյլիւն, իսկ արեւմուտքից Սամաղ խանը: Առ այժմ կռիւներ չկան: Չուլֆայի գիծը յեղափոխականների՝ ձեռքն է: Վերջերս լուր ստացանք, որ Մա-

կուից Իգօ խանը ուզում է յարձակուել Չուլֆայի վրայ եւ այդ գիծը նորից իր ձեռքը գցել: Այդ գիծը Թաւրիզի համար եւ ընդհանրապէս գործի տեսակէտից կենսական ամենամեծ նշանակութիւն ունի: Սալմաստը, Խոյը ազատ են: Ուրմիայում, շնորհիւ դատաւորի խորամանկ ընթացքի, յեղափ. շարժումը չբռնկուեց եւ ամէն ինչ խաղաղացաւ, սակայն քրտերի ալան-թալանը շարունակուում է եւ յեղափոխականները իրենց ուժերը վատնում ու սպառում են այդ բանի դէմ: Այդպիսի մի կռուում կորցրինք սիրելի Խորէնին, որը մեր այնտեղի գործիչն է 2 տարի շարունակ:

Քաղաքի ներսում աշխատանքները կամաց-կամաց կանոնաւորուում են: Թաղիզադէի ներկայութիւնը խիստ օգտակար է սոյն գործում: Նա արդէն ձեռնարկել է մի ռեզոլուտոր³⁸ մարմին կազմակերպել, որտեղ հրաւիրել է մեզ երկու ձայնի իրաւունքով: Ձայների ընդհ. թիւը 12 է:

Կ'աշխատենք յաջորդիւ կանոնաւոր եւ պարբերաբար տեղեկութիւններ հաղորդել, որքան կը ներէ մեր ժամանակը:

Ընկերական ջերմ բարեւանքով՝
Ա[ՏՐՊԱՏԱԿԱՆԻ] Կ. Կ[ՈՄԻՏԵ]

38.- Կարգաւորիչ:

Փաստ. 476-14

7.- ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Ամիս 14-ին Գիւնէյում սահմանադրական ուժերի միապետական բանակից կրած պարտութեան մանրամասնութիւնները արդէն յայտնի են, որից եւ առաջացաւ ազգաբնակչութեան մէջ լքում եւ պանիկա: Գուրգէնի խմբի մասին տարածուած անճիշտ լուրը այդ պանիկան տարածեց եւ հայ ժողովրդի մէջ: Բայց իրողութիւնը այն է որ Գուրգէնի խումբը հերոսաբար կռուելով՝ Խոյի վրայով վերադարձաւ այստեղ:

Ընկերներ եւ եղբայրներ, յեղափոխական ներկայ տենդոտ կռիւների ընթացքում յաջողութիւնների հետ անխուսափելի են եւ այսպիսի ձախողութիւններ, որոնք սակայն չպէտք է լքում առաջացնեն մեր մէջ: Այո՛ դժուար է ականատես լինել գիւղերի անխնայ թալանումներին, հողեհումներին, ծանր են ժողովրդի ստրկութեան շղթաները: Իսկ այժմ այդ շղթաները քանդուելու վեհ ընդհանր է: Լքուել, պանիկայի անձնատուր լինել, անպատուաբեր է մասնաւորապէս հայ ժողովրդի համար, որի մէջ կենդանի է եղել եւ այժմ աւելի քան երբեւէ կենդանի պէտք է լինի յեղափոխական կրակը:

Հեռո՛ւ, ուրեմն մեզանից ամէն մի վհատեցուցիչ միտք. պինդ պիտի գրկենք յեղափոխական դրօշակը՝ եւ աւելի բարձր թող ծածանի նա, կեղեքուած եւ կաշկանդուած մասսաների իրաւունքների այդ սրբազան խորհրդանշանը: Խտացնենք մեր շարքերը եւ աննկուն դէպի կռիւ: Կը գան յեղափոխութեան ժայռի վրայ կը խուժեն բռնակալութեան բոլոր հարուածները եւ փշրուելով ետ կը դառնան, վերջնական յաղթանակը թողնելով դարձեալ յեղափոխական քաջաբար մարտնչող տարրերին:

Հ. Յ. Գ. Ատրպ[ատականի]
Կ. Կոմիտէի ներկ.՝ ՍԱՄՍՈՆ

16 Ապրիլի 1909 թ., Սալմաստ

Փաստ. 57-38



ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

1890

ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՐՈ

FÉDÉRATION RÉVOLUTIONNAIRE ARMÉNIENNE
DASCHNAKTZOUTIOUN

1909 թ. 16

Գ. Ն. Պ. Ն. Պ.

ժ ը Ն Ծ Վ - GENÈVE

№

8.- ՇՐՋԱՆԱԿԱՆ ԿՐԵՆՆԵՐՈՒՄ

ԸՆԿԵՐՆԵՐ,

Ի հարկէ ուշի ուշով կը հետեւիք Պարսկաստանի անցքերուն, մասնաւորապէս Թէպրիզի կոնկրետին, ուր մեր ընկերներու դերը ու գործնական մասնակցութիւնը փայլուն կերպով երեւան եկաւ վերջերս կարգ մը ընդհարումներու միջոցին, մասնաւորապէս Սալմաստ-Խոյի շրջանին մէջ, ուր գրեթէ գլխաւորապէս կռուողները մերիններն են:

Թուրքիայէն յետոյ Պարսկաստանի մէջ Սահմանադրութեան վերահաստատումը լինել-չլինելու խնդիր է Առաջաւոր Ասիայի եւ հոն ապրող ժողովուրդներու, ինչպէս եւ հայ ազգաբնակչութեան ապագայի, ապահովութեան եւ բարգաւաճումի տեսակետով: Սա քաղաքական խոշոր նշանակութիւն ունի թէ Թուրքիոյ եւ թէ Կովկասի վերաբերմամբ: Սահմանադրութեան ու ազատ կարգերու հաստատումը Պարսկաստանի մէջ նոր ոգեւորութիւն կը ներշնչէ Տաճկաստանի եւ Կովկասի ժողովուրդներուն եւ ազատական կուսակցութիւններուն՝ կրկնապատկելու կռուի իրենց եռանդը: Իսկ բռնապետական ուժերու յաղթանակը նոր խրախուսանք եւ խրախճանք կարող է դառնալ թէ Թուրքիոյ եւ թէ Կովկասի յետադիմական ուժերուն որ, միանալով, կը ստեղծեն սոսկալի կացութիւն եւ, հաւանաբար հալածանք եւ կոտորած:

Դաշնակցութիւնը, բնականաբար, այսպիսի պատմական-սակական թուրքի մը, որ մեր ճակատագրին հետ սերտ առնչութիւն ունի, չէր կրնար լոկ եւ անտարբեր հանդիսատես ըլլալ: Իր մասնակցութիւնը տրամաբանօրէն եւ իրերու բռնութիւնով անխուսափելի եղած էր, նոյնիսկ մեր շահերու եւ ուղղութեան տեսակետով:

Մենք մեր ուժերէն կարելոր բաժին մը տրամադրած ենք Պարսկաստանի յեղափոխութեան գործին՝ մեր ընկերներու եղած բոլոր ծախքը մեր վրայ առնելով, ցոյց տալու համար պարսիկ ժողովրդին, մեր անշահախնդիր եւ անկեղծ համակրութիւնը իրենց դատին: Այս քայլը մեծապէս գնահատուած է պարսիկ ազատականներէն, որոնք հայերը կը նկատեն իբր բարոյական եւ կռուող մեծ ուժ:

Մեր ներկայ նիւթական պայմանները եւ միջոցները անբաւական են լիովին սատարելու Ատրպատականի մէջ մեր կռուող ուժերուն, որոնք թախանձագին օգնութիւն կը խնդրեն մենէ, այնպէս որ եթէ ժամանակին չկարողանանք աջակցութիւն փութալ անոնց, երկիւղ կայ Յեղափոխութիւնը վիժելու եւ Թէպրիզն ու Ատրպատականը, Պարսկաստանի ազատութեան այդ ամրոցը, թշնամու վայրագ ուժերուն ձեռքը իյնալու: Ներկայ պայքարին յոյսը եւ կռուանը կը կազմեն մեր կարող ու կռուող ընկերները, որոնք իրենց փորձառու խորհուրդներով կը ղեկավարեն ազատամարտը, եւ որոնք, ամէն գնով, վճռած են որ վերջին յաղթութիւնը ազատութեան կողմը կը մնայ:

Արեւմտեան Բիւրոն, որոշած ըլլալով իր սուղ միջոցներէն դուրս, կարելոր գումար մը ձեռք բերել ապահովելու համար կռիւլ եւ մեր ընկերներու վիճակը, ստիպուած կը գգայ դիմել Դաշնակցութեան մարմիններուն եւ թախանձագին խնդրել, որպէսզի այս գերագոյն եւ ճգնաժամային թուրքի կարելին ընեն շուտափոյթ դրամական օգնութիւն հասցնելու համար մեր ընկերներուն:

Սիրելի ընկերներ, դուք որ ցարդ բարձրագոյն գոհողութիւններու ու յեղափոխական համերաշխութեան ազնիւ ու խրոխտ օրինակը տուած էք, յոյս ունինք որ մեր առաջարկը ձեր սրտին մօտիկ պիտի ընդունիք, եւ ընթացելով թուրքի ընկերները եւ փափկութիւնը պիտի քանաք արծազանգ տալ մեր հրաւերին:

Դիտել կու տանք դարձեալ, որ Պարսկաստանի դէպքերուն մեր մասնակցութիւնը մնալու է իբր բացարձակ գաղտնիք 4. Կոմիտէներուն մէջ եւ երբեք տարածայնուելու չէ. իսկ թէ ինչ ձեւով կը հանգանակէք գումարը այդ նպատակին, կը ձգենք ձեր տեղական պայմաններու գիտակցութեան ու խոհեմութեան:

ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՐՈ

Փաստ. 476-127

9.- ՌՈՍՏՈՍԵՆ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՐՈՅԻՆ

Ռոստոմի այս նամակը, ուղղուած ժընեւ Արեւմտեան Բիւրոյին, թուական չունի: Գրուած է Թաւրիզէն հեռանալու նախօրեակին, երբ ռուսական բանակը 1909 թ. Ապրիլի վերջերը մտած ու գրաւած էր քաղաքը: Ուրեմն գրութեան հաւանական թուականը Մայիսի առաջին շաբաթն է: Հրատարակուած է Հ. Տասնապետեանի կազմած Ռոստոմի «Նամականի» հատորին մէջ (էջ 450) բայց անաւարտ վիճակի մէջ: Կազմողին ուշադրութենէն վրիպած են վերջին էջերը, ուր նամակը կը շարունակուի եւ, ապա, կը լրացուի Նիկոլ Մատինեանի (Վահան) կողմէ: Այս վերջին մասը կու տանք տարբեր տառերով:

Սիրելիք,

Այս գիրքը մտադիր ենք ճանապարհ ընկնել Մինարէթ: Յուսով ենք, ապահով տեղ հասնենք, դժուարութիւնը քաղաքից եւ արուարձաններից դուրս գալն է: Մօտ 12 հոգի ենք, գուցէ մի երկու վրացիներ էլ մեզ միանան: Տղաների մի մասը գնացել է Ղարադաղով, միւսները՝ Ջուլֆայով: Մինարէթ գնացողները գլխաւորապէս տաճկաստանցիներ են: Կը մնան այստեղ 3-4 հոգի, որոնք գուցէ նոյնպէս ստիպուած լինեն հեռանալ մի կողմից վտանգի պատճառով, միւս կողմից՝ անգործութեան:

Այսպէս տխուր եւ վիրաւորիչ վախճան ունեցաւ Թաւրիզի մօտ մի տարուայ կռիւլը: Ռուսների ներս գալը այն ըրպէիւն, երբ Սպահանը, Ղազվինը, Ռաշտը սկսել էին սպառնալ եւ Թաւրիզը ոյժ էր գգում դիմադրելու հակառակ սովին, մեզ շատ կոտորեց: Ասել թէ, ռուսների երեւալը անակնկալ էր, ճիշտ չէր լինի. դրա մասին յաճախ խօսուում էր: Սպասում էին միայն այնպիսի մի առիթի, ինչպիսին կարող էր լինել միապետականների յաղթութիւնը, որպէսզի ներս գալին իբրեւ փրկարարներ եւ ազատէին ժողովուրդը վայրենի հորդանների վայրագութիւններից: Երբ այդ յոյսը կտրուեց, կպան այն «վտանգին», որը իբր թէ կախուած էր օտարների եւ մասնաւորապէս ռուսների գլխին, եւ այն աստիճան լուրջ կարեւորութիւն տրուեց այդ հանգամանքին, որ մի ըրպէ մենք էլ հաւատացինք մի քիչ, որ հիւպատոսը եւ ուրիշները իրօք վախենում են: Մի օր առաջնորդը շտապով ինձ կանչում է. գնում եմ եւ նրա մօտ գտնում եմ ռուսաց հիւպատոսին, որը յուզուած պատմում է, թէ ինքը հաստատ տեղեկութիւն ունի, որ իրենց եւ առհասարակ եւրոպացիներին լուրջ վտանգ է սպառնում պարսիկների կողմից, որ մոջաիդները³⁹ յոյս ունեն այդ իրենց քայլով ճնշում գործ դնել կառավարութիւնների վրայ եւ այլն: Ես շտապեցի կատեգորիկ կերպով յայտնել, որ իր ստացած տեղեկութիւնները հիմնովին սխալ են, որ յեղափոխականները այդ քայլին հակառակ կը լի-

նեն, աչքի առաջ ունենալով դրան հետեւող ռուսական միջամտութեան անխուսափելիութիւնը. գալով մասնաւորապէս մեզ, ասացի, որ ամէն կերպ արգելք կը հանդիսանանք այդ տեսակ մի յարձակման, թէկուզ այն պատճառով որ դրանից առաւելապէս կը տուժեն հայկական թաղերը: Յամենայն դէպս յանձն առայ գնալ Սաթար խանի⁴⁰ մօտ եւ նրա կողմից էլ վստահեցնել, որ բոլորովին հանգիստ մնան: Հետեւեալ օրը Շամ Գազանի կռիւն էր. կռուից յետոյ նկատեցինք, որ հիւպատոսարանի տանիքի վրայ պատերը բարձրացնում են եւ դիրքեր են շինում: Այս կատարելապէս անտեղի պատրաստութիւնները լուրջ մտատանջութեան մէջ ձրգեցին բոլորիս: Անջնմանի²⁷ հաւաստիացումները նոյնպէս ապարդիւն անցան: Պատրուակ բռնելով ճանապարհների բացման խնդրի առթիւ շահի խուսափողական ընթացքը, անհրաժեշտ գտան ռուսաց զօրք մտցնել եւ «պատժել» շահի կամակորութիւնը: Մնացածը արդէն ձեռք յայտնի կը լինի: Կարճ ասեմ, - ռուսները հիմա իրենց կատարեալ տէր են զգում եւ կամաց կամաց ոտները ամրացնում են:

Մեզ մնում է միխիթարուել նրանով, որ այնուամենայնիւ Սահմանադրութիւնը ձեռք բերուեց, որից անպայման կ'օգտուեն Ատրպատականից դուրս վայրերը եւ գուցէ հեռաւոր ապագայում նաեւ Ատրպատականը: Քիչ նշանակութիւնը չունի նաեւ այն, որ հնար եղաւ առաջն առնել սպառնացող կոտորածների, ոչ միայն Թաւրիզում, այլ եւ Սալմաստում, Խոյում, Ուրմիայում:

Հիմա որ գործողութիւնը կատարուել վերջացել է, չնայած որ յաճախ պնդում ենք, թէ այս բանը այսպէս լինէր, ռուսները չէին գալ եւ այլն, պարզուում է աւելի եւ աւելի, որ կռուող կողմերը եղել են հին յունական հերոսների վիճակում, որոնց մասին աստուածները վաղ-

39.- Մոջաիդներ՝ պարսիկ յեղափոխական մարտիկներ: 40.- Սաթար խան՝ պարսիկ յեղ. շարժման գլխաւոր առաջնորդը:

րօք տուել են իրենց վճիռները: Ռուսները ներս պիտի մտնէին, դա որոշուած է եղել: Հարցը միայն ձեւի եւ պարագաների մէջ է եղել: յանդգնում եմ խորհել երբեմն, որ այս պարագան ամէնից նուազ ստորացուցիչ էր սահմանադրականներին համար:

Մինչեւ այս տողերը գրեց Ռոստոմը, շարունակում եմ:

Ենզելիից նամակ կար ընկերներից, որ իմ հասցէին ժընեւից գրքեր են ստացուել: փոստի կառավարչի հասցէին գրուեց, որ Ենզելիում յամենն. ուրեմն խնդրում ենք ուղարկել Վրէժի¹⁸ համար նորից:

Ռուսների ներս գալուց յետ, տէր եւ տիրական են դարձել. կարգադրում են, անում են ամէն ինչ, եւ հեռագրում ըստ իրենց ուզած ձեւի: Ռոստոմի խորհրդով յարմար նկատեցինք որ շատ ստոյգ տեղեկութիւններ շարունակ հաղոր-

դենք ձեզ, որոնք կը տարածէք եւրոպական յայտնի թերթերին, ինչպիսի արուսմ էր առաջ ուրիշ վայրերի նկատմամբ: Չեռագրները խմբագրողները եւ լուրեր հաղորդողները կը լինենք մենք եւ Թադի-Չադէն, որի վրայ կատարեալ վստահանալ կարող ենք, այնպէս որ լուրերը կը լինեն ստոյգ եւ կարող էք վստահութեամբ վերաբերուել:

Իսկ ինչ վերաբերում է այդ ուղղութեամբ արած ձեր ծախսերին, կարծում եմ որ հնարաւորութիւն չի լինի ստանալու եւ ծանր էլ է առաջարկել, կ'անէք դուք:

Չեռագրները կը լինեն Ռոստոմի ստորագրութեամբ, չնայելով որ ինքը գնացել է արդէն եւ այժմ Միմարթ² է, բայց այդպէս յարմար նկատեց ինքը:

Ընկ(երական) բարեւներով՝ ընկ(երների) կողմից
ՎԱՅԱՆ

Փաստ. 476-70

10.- ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՍԻՏԷԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

2 Յուլիս 1909

Ընկերներ,

Հեռագիրները հաղորդած կը լինեն անշուշտ թեւ-րանում կատարուող պատմակ[ան] դէպքերի մասին: Յեղափոխականները Յուլիս 30-ին արդէն մտել են թեհրան, գրաւել քաղաքը եւ շրջապատել Սուլթանապատը, որի վրայ ամբողջ 24 ժամ կրակ թափելուց յետոյ ակերել եւ քարուքանդ են արել: (Յուլ. 1ին) սրա ակեր-ւելուց յետո՞յ, թէ առաջ, որոշ չէ այնքան, Շահը փախել եւ ապաստանել է ռուս. դեսպանատուն: Քաղաքում մնացել են դիմադրողներ միայն մի քանի տասնեակ պարսկ. կազակներ՝ կազակխանէում, հաւանօրէն Լեախովի⁴¹ հրամանատարութեամբ: Այսօրուայ լուրերը գալիս են հաղորդելու, որ այդ դիմադրողներն էլ բանակցութիւններ են վարում յեղափոխականների հետ անձնատուր լինելու համար: Մտածուում է նոր Շահի մասին, որի գահակալութիւնը երեւի չի ուշանար: Ռաշ-

տից-էնզէլիից արշաւող բանակում գտնուում է եւ մեր Եփրեմը՝ հայ կամաւորների գլուխն անցած:

Այս պոստով ուղարկում ենք 1907 թ. մեր շրջանի հաշուեկշիռները՝ մեր պատգամաւորին⁴² հասցնելու համար, որ շուտով կը ճանապարհուի որոշուած տեղը: 1908ի եւ 1909ի հաշուեկշիռները ուղարկել ենք նախորդ պոստերով: Խնդրում ենք սրա հետ միացրէք եւ մի կապոցով ուղարկեցէք (հասցրէք մեր պատգամաւորին):

Մեր շրջանի IV Պատգամաւորական ժողովը կայացաւ վերջին օրերս Մինարէթում²: Այդ ժողովի որոշումները շուտով կ'ուղարկենք Ձեզ: Այդ ժողովում ընտրուած է եւ Ընդհ. ժողովի համար մեր շրջանի պատգամաւորը: Տրամադրութիւնը մեր շրջանում առհասարակ շատ բարձր է, չնայած որ անկոչ հիւրերը քիչ թէ շատ այդ տրամադրութիւնը խառնում են:

Ընկերական բարեւներով
Ատրպ[ատականի] Կ. Կ.ի կողմից
ՀԱՅՐԻԿ

P. S.- Ստացանք 100 օրինակ (2 կապոցով) թերթի № 5-ը: 50 օրինակը այստեղի համար բաւական լինելով, խնդրում ենք կրճատեցէք 50 օրինակը եւ ուղարկեցէք սրանից յետ միայն 50-ը՝ նոյն հասցէով — Մկրտիչ...

41.- Լեախով՝ Թեհրան հաստատուած ռուսական զօրքի հրամանատար:
42.- Խօսքը կը վերաբերի Նիկոլ Մատինեանի (Վահան), որ ընտրուած էր Վրէժի պատգամաւոր 7.3.7. Գիւնգերորդ Ընդհ. ժողովին:

Փաստ. 1728ա-10

11.- ՌՈՍՏՈՄԷՆ ԵՓՐԵՄԻՆ

Սիրելի Եփրեմ,

Բոլոր այստեղի ընկերների կողմից սրտանց շնորհակարտում ենք քո յաջողութիւնները: Միայն թէ անյարմար պաշտօն է քեզ վիճակուել: Լաւ կը լինի, եթէ յեղափոխական խառը դրուութիւնը անցնելու լինի եւ քիչ թէ շատ խաղաղ կեանք ստեղծուելու լինի, հրաժարական տաս ոստիկանապետի պաշտօնից:

Արդէն քեզ դիմած կը լինեն մանրամասն տեղեկագրի համար: Եթէ չես ուղարկել, պատրաստիր կամ պատրաստել տուր շատ շուտով եւ անպատճառ ուղարկիր Պոլիս «Ազատամարտ»ի հասցէով ինձ յանձնելու համար: Տեղեկագիրը կը սկսես շարժման առաջին օրերից:

Եթէ ժամանակ չուեննաս դէպքերը մանրամասն նկարագրելու, յիշատակիր գոնէ գլխաւոր դէպքերը ժամանակագրական կարգով: Տեղեկագիրը պիտի լինի ընդհանուր շարժման մասին եւ մասնաւորապէս Դաշնակցութեան դերի մասին ձեր շրջանում:

Սրտագին ողջոյններ բոլոր ընկերների կողմից: Մասնաւորապէս Մուրատի եւ Արամի⁴³:

Համբոյրներս այդտեղի ծանօթ եւ անծանօթ ընկերներին:

Քո ՌՈՍՏՈՄ

26VII 1909

Փաստ. 585-29

12.- ԵՓՐԵՄԷՆ ՌՈՍՏՈՄԻՆ

1910 թ. Մայիս 23

Սիրելի Ռոստոմ

Որտեղից էլ սկսելու լինիմ՝ մի ահագին բան է դուրս գալու, դրա համար էլ թողնում եմ ակելի յարմար ժամանակի: Յովսէփը⁴⁴ իր յատուկ սովորութեամբ էլի մարգարէութիւններ է անում ռուսների վերաբերմամբ: Խօսքը մեր մէջը շատ անշնորհք քաղաքագէտ է. նրանց բուժ քաղաքականութիւնը, արդէն ջարդ ու փշուր լինելու վրայ է, մանաւանդ վերջերս քրտնզը քարին է կպնում շարունակ. անգլ[իացիների] ձեռքին խաղալիք են դարձել եւ այլն եւ այլն:

10 օրից յետոյ կ'երթամ Ատրպատականը, Ձանջանը եւ Արտաքիլը խաղաղացնելու. վերցնում եմ 200 բախտիարի, 200 կոզակ եւ 200 յեղափոխական, երկու բատարէյ թնդանօթ⁴⁵ եւ 2 պիւլմիտ⁴⁶: Պաշտօնիս համար էլի գրել. շատ ճիշտ է գրածդ, զգում եմ ինչ ես ասում, բայց եթէ յանձն չառնէի արտաքին միջամտութիւնը անխուսափելի էր. տաճկական ու անգլիական դեսպանատները ուղղակի ստիպեցին ինձ այդ ժամանակաւոր պաշտօնը ստանձնելու. կազմակերպել եմ ու վերջացնելու վրայ եմ. այնպէս որ իմ բացակայութեամբ գործը կ'երթայ իր ընթացքով: Ամսական 24 հազար թումանով ապահովացրել եմ, զբաղուած եմ ջանտարմիան կազմակերպելու որ մի քանի օրից կը վերջանայ: Այս բոլորը ինչ խօսք որ Ռ[ուսաստան]ի դուր չէր գալ: Նրանք անտէր երկիր են ուզում որ յափըլ-տակեն: Հերիք է առայժմ. համբուրում եմ

Քո ԵՓՐԵՄ

Յ.Գ.- տեղեկագիրը շուտով կ'ուղարկեմ:
ՆՈՅՆ

43.- Յաջողաբար՝ Սեբաստացի Մուրատ եւ Արամ Մանուկեան:
44.- Յովսէփ Սիրոպեան, պարսկական հին ընկերներն, որ Ռոստոմին ընկերացած էր Թեհրան՝ պարսիկ սահմանադրա-
կաններու հետ բանակցութեան ընթացքին:
45.- Գրետանի մարտկոց:
46.- Գնդացիք:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ՉԼՈՒԽ XV

Կ Ո Վ Կ Ա Ս

Հակառակ Թուրքիոյ, որ 1908 թ. Յուլիսին հռչակուած Սահմանադրութեամբ ազատութեան շունչ մը պիտի քաշէր, ռուսական կայսրութեան մէջ, ընդհակառակն, յեղափոխական կուսակցութիւններու դէմ ուղղուած քայլերը թափ ստացան:

Հալածանքները առանձին սաստկութեամբ ուղղուեցան Հ.Յ.Դաշնակցութեան դէմ, որ կ'ամբաստանուէր իբրեւ ղեկավարը Կովկասի մէջ խմորուող բոլոր հակապետական շարժումներուն: 1907 թ. վերջերուն սկսած ձերբակալութիւնները յաջորդ տարուան ընթացքին հասան իրենց գագաթնակէտին: Արեւելեան Բիւրոյի եւ Կեդր. Կոմիտէներու բազմաթիւ անդամներ, յեղափոխական եւ հասարակական գործիչներ, մը-տատրական եւայլն (Համօ Օհանջանեան, Աւետիս Ահարոնեան, Հայր Աբրահամ (Սահակեան), բանաստեղծ Յովհ. Թումանեան եւ ուրիշներ) բանտ նետուեցան, մինչ ուրիշներ ապաստան ու գործունէութեան դաշտ պիտի ընտրէին Պոլիսը կամ հայկական նահանգներու մէկ կեդրոնը (Վան, Էրզրում, Տարօն): Կազմալուծուեցաւ, հետեւաբար, կազմակերպական կեանքը Կովկասի մէջ, ուր մինչեւ ոստիկանական հետապնդումներու սաստկացումը, կուսակցական մարմինները, այսուհանդերձ, յաջողութեամբ գլուխ հանած էին շարք մը փայլուն գործեր, ինչպէս՝ միհրամական եւ անջատական անունով ծանօթ հակակուսակցական շարժումներու զարմանք, բանուորական եւ զինուորական միութիւններու ստեղծումը եւ, Պարսկաստանի յեղափոխութեան նպաստելու նպատակով՝ մարտական, զինական եւ դրամական օժանդակութեան կազմակերպումը:

1908 թ. Մարտին Թիֆլիս գումարուած Դաշնակցութեան Խորհուրդը, քննելով կուս. մարմիններու եւ շարքերու կիսակազմալուծ վիճակը, հարկ համարեց վերակազմակերպել շրջանը՝ գործերը կեդրոնացնելով համեմատաբար կանգուն մնացած կազմերու վրայ: Այսպէս, ըստ իրենց ունեցած անդամներու թիւին, դրամական ցեւզին ու գործունէութեան, Կովկասի մէջ չորս Կեդր. Կոմիտէներու (նախկին տասի փոխարէն) նկատուեցան որպէս անհրաժեշտ պայմաններ լրացնող մարմիններ:

Անոնք էին՝

- 1.- Մեծ քաղաք-Թիֆլիսը:
- 2.- Ոսկանապատ-Պաքուն:
- 3.- Մրգաստան-Երեւանը:
- 4.- Նաւահանգիստ-Պաքունը:

Ասոնց պիտի միացուէին մնացեալ շրջաններէն՝ Այգեւստան-Փանձակը՝ Թիֆլիսին, Ապառաժ-Ղարաբաղը՝ Պաքուն, Քար-Ալեքսանդրապոլն ու Ջրաբերդ-Կարսը՝ Երեւանին, իսկ Նալբանդ-Նոր Նախիջեւանը, յարակից շրջաններով՝ Պաքունին:

1908ի վերջերուն, պայմաններու խստացումով եւ իր անդամներուն մեծագոյն մասին բանտարկութեամբ կամ արտասահման անցնելով, Արեւելեան Բիւրոն եւս դադրած էր գործել: 1909 թ. Ապրիլին Պաքուի մէջ գումարուած «Կովկասեան Ռայոնի մարմինների արտակարգ ժողովին» մեծ դժուարութեամբ ընտրուած Ժամանակաւոր Արեւելեան Բիւրոն նոյնպէս չկրցաւ դարմանել տագնապալի կացութիւնը: Փաստօրէն նոյն Պաքուի Կեդր. Կոմիտէն ինք պիտի ստանձնէր Բիւրոյական պարտականութիւնները, մինչեւ Հինգերորդ Ընդհ. Ժողովի գումարումը:

Հետեւաբար հասկնալի կը դառնան պատճառները Հ.Յ.Դ. արխիւներուն մէջ Կովկասի կուսակցական կեանքի այս տարիներու վերաբերեալ բաւարար փաստաթուղթերու բացակայութեան: Այդ նիւթերէն յետագայ էջերուն մէջ կը ներկայացնենք.---

- 1.- Թիֆլիսի Կեդր. Կոմիտէներէն, Ախալքալաքի շրջանէն (Թմբուկ) տեղեկագրութիւն մը, 1907 թ. վերջերէն:
- 2.- Ոսկանապատի Շրջանային մէկ ժողովի արձանագրութիւնը (Դեկտ. 1907) եւ շրջանի զինապահեստներու կացութեան մասին երկու ամփոփ զեկոյցներ:
- 3.- Տեղեկագիր Քար-Ալիքի (Ալեքսանդրապոլ), Յուլիս, 1909:
- 4.- Պաքունի Կեդր. Կոմիտէի 1907-1909ի տեղեկագիրը եւ 1909 թուականի Շրջանային ժողովի արձանագրութիւնը:

Ե. Փ.

Ա.- ՄԵԾ ՔԱՂԱՔ – ԹԻՖԼԻՍ

Փաստ. 50-89

Ա 1.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ԹՄԲՈՒԿ-ԱՆՍԱԼՔԱԼԱՔԻ

Թմբուկը ծածկանունն էր Ախալքալաքի շրջանին: Այս հակիրճ տեղեկագիրը թուական չի կրեր. կը գտնուի Արեւմտեան Բիւրոյի 1907 թ. թղթածրարին մէջ: Կազմուած է հաւանաբար տարեվերջին գումարուած Կովկասի Ռայոնական ժողովին ներկայացուելու համար:

Վերջին երկու տարուայ ընթացքում Թմբուկի կոմիտէն գործել է, աշխատելով առանձնապէս իրագործել կեանքի մէջ «Կովկասեան նախագիծը»: Այդ ուղղութեամբ մղուել է պրոպագանդ թէ՛ գաւառում, թէ՛ քաղաքում: Գաւառում գլխաւորապէս պրոպագանդ է մղուել ազրարային հարցի մասին, կապելով վերջինս քաղաքական պայմանների հետ: Քաղաքական-տնտեսական գիտակցութիւնը արթնցնելու համար, բացի բանաւոր պրոպագանդայից, տարածուել է համապատասխան գրականութիւն՝ «Յառաջի գրադարանը», կուսակցութեան օրգանը եւ թոռուցիկները: Կազմակերպուել է կանոնաւոր խմբական ընթերցանութիւն: Պրոպագանդան մղուել է այն ուղղութեամբ, որպէսզի տնտեսական տարբերութիւնները շեշտուած լինի եւ մասսան շերտաւորուի, բաժանուելով կեղեքողների եւ կեղեքիչների:

Քաղաքում նոյնպէս մղուել է համապատասխան պրոպագանդ եւ տարածուել է թէ՛ մեր կուսակցութեան եւ թէ՛ այլ կուսակցութիւնների յեղափոխական գրականութիւնը:

Դասակարգային գիտակցութիւնը խիստ զգալի կերպով բարձրացել է քաղաքում՝ այժմ երկու հակառակ բանակների է բաժանուած քաղաքը 1) աշխատաւոր արհեստաւորութիւն եւ բանուորութիւն եւ 2) խոշոր եւ միջակ վաճառականութիւն եւ այլ հարուստ տարրեր: Այդ երկու բանակների յարաբերութիւնները խիստ լարուած է եւ թշնամական: Դա արտայայտուում է ամէն տեսակ հասարակական ընտրութիւնների ժամանակ, երբ միշտ անցնում են աշխատաւորութեան թեկնածուները:

Քաղաքում կազմակերպուած է գործակատարների արհեստակցական միութիւնը, բաղկացած 40 անդամից: Նրանք դրել են իրանց խազէիններին մի շարք տնտեսական պահանջներ եւ բաւարարութիւն ստացել: Այս միութիւնը ունի իւր գրադարանը, ունենում է խմբական ընթերցանութիւն, ունի իւր կասսան: Արհեստաւորներից կազմուած է կոոպերատիւ միութիւններ, որոնք ունեցել են փոքրիկ ձեռնարկներ: Սրանց միութիւնները կանոնաւոր կազմակերպուած չեն. չունեն

կուսակցական կասսաներ. այդպիսի դրութեան պատճառը այն էր, որ արհեստաւորներին դժուար էր գտել: Կան մէջները բանուոր ունեցողներ, որոնց շատ դժուար է բաժանել բանուոր չունեցողներից: Բերելով նրանց դասակարգային գիտակցութեան իբրեւ անպայման շահագործողների, մենք սպասում էինք ընդհանուր ժողովի հեղինակաւոր որոշման՝ ինչպէս ընդունել այդպիսի արհեստաւորներին:

Արհեստաւորները ամբողջապէս կարող են համարուել Դաշնակցութեան համակրողներ: Թիւր հասնում է 500: Նրանք բաժանուում են 13 ցէխերի: Սրանց միջից մօտ 80 մարդ կարելի է համարել գիտակից եւ կարող է դառնալ գործօն անդամ: Գործակատարների միութիւնից 18 անդամ կարելի է համարել գործօն:

Գիւղերում մեզ աջողուեց կազմել գիւղացիական միութիւններ ամէն գիւղում առանձին: Գիւղերի միութիւնները տալով ներկայացուցիչներ կազմում են ներկայացուցչական ժողով, որը որոշում է գիւղացիական միութիւնների գործունէութեան ծրագիրը: Ծրագիրը իրագործելու համար ներկայացուցչական ժողովը ընտրում է «գիւղացիական միութեան վարչութիւն»: Այդպիսի վարչութիւններ եղել է մեր գաւառում 2, որովհետեւ գաւառը բաժանուած էր 2 շրջանի: Վարչութիւնները ունեցել են 7-ական անդամ: Կարելու հարցերում երկու շրջանի վարչութիւնների համագումարը որոշում էր միութիւնների գործերը, յաճախ կոմիտէի մասնակցութեամբ: Շնորհիւ դասակարգային պրոպագանդայի մեզ աջողուեց ընտրութիւնները անել այնպէս, որ վարչութեան մէջ չմտնան կեղեքող տարրերից: Միութիւնների մէջ մտել է գիւղական ազգաբնակչութեան գրեթէ 90%, որոնցից մեծ մասը կարելի է համարել Դաշնակցութեան համակրող, իսկ մի փոքրիկ մասը գործօն դաշնակցականներ — գիտակիցներ: Գործօնների թիւը կարելի է հասցնել 300-ի: Իսկ համակրողների թիւը հաւասար է գրեթէ գաւառի ամբողջ հայ ազգաբնակչութեան:

1.- Ցէխ կամ ցէխ՝ արհեստակցական միութիւն:

Գիւղացիական միութիւնը գործել է մի ծրագրով, որը բերում եմ սրա հետ: Կալուածատիրական գիւղերում յատուկ պրոպագանդ է մղուել կալուածատիրութեան դէմ. տրամադրութիւնը լաւ է. եղան դէպքեր բռնի վարելու, առանց թոյլտուութեան շինութիւններ կառուցելու կալուածատիրական հողերում. եղան դէպքեր բոյկոտի կալուածատէրերի կառավարիչների դէմ (սուբաշիների). այդ ուղղութեամբ 2 անգամ անողուեց փոխել տալ: Կալուածատէրերը հետզհետէ կրճատեցին իրանց ապօրինի պահանջները եւ վերջացրին բոլոր ապօրինի հաւաքումները: Եղան դէպքեր եւ կալուածատէրերը պատուեցին իրանց լիստ-երը² (մօտ 1000 ռուբլու թերթ պատուեց Անտոն Քանանովը): Վաշխառու կապալառու Սանդաձէն պատուեց 900 ռուբլու լիստերը² եւ վերջացրեց արածացնելու պատճառով յարուցած քրէական դատը, մղուած իմանդօ գիւղի բնակիչների դէմ: Վաշխառու Սանդաձէները դադարեցին գիւղացիներին անհրաժեշտ վերցնելիք արօտատեղերը առնել՝ այդպիսով 4-5 գիւղ ազատուեցին հարստահարութիւնից (կապալի պատճառով): Պէտք է ընտրապէս նկատել, որ

վաշխառութիւնը, որ խոչոր չափերով տարածուած էր մեր գաւառը, շուտ ընկաւ շնորհիւ Դ[աշնակցութեան] նրանց դէմ մղուած կռուի: Ընդհանրապէս կարող ենք ասել, որ ժողովուրդի քաղաքական եւ տնտեսական գիտակցութիւնը վերջին 2 տարուայ ընթացքում հոստիւլ չափերով առաջ են գնացել, մանաւանդ վերջի տարուայ: Թէ քաղաքում եւ թէ գաւառում մենք ունեցել ենք զինավարժ խմբեր, որոնք պահեստի զինուորների դեկավարութեամբ զինավարժութեամբ են պարապել: Այդպիսի խումբ ունեցել ենք քաղաքում 100 հոգուց, իսկ գաւառում 300-500 հոգի: Նիւթական օժանդակութիւն գրեթէ չի եղել զանազան պատճառներով՝ գլխաւորապէս զինման պատճառով. եղածն էլ ծախսուել է. այժմ նոյն իսկ փոքրիկ դեֆիցիտ ունի մեր գանձարանը: Մենք կարծում ենք, որ մեր գաւառը կարող է մօտիկ ապագայում սոցիալիստական ուղղութեամբ խոչոր առաջադիմութիւն անել, եթէ ոյժերի պակասութիւնը չլլատէ եղած ոյժերի եռանդը:

Թմբուկի կոմիտէի կողմից՝
ԽՈՐԽՈՒՈՒՆԻ

2.- Բնագրին մէջ ռուսատառ:

Բ.- ՈՍԿԱՆԱՊԱՏ – ՊԱՔՈՒ

Բ 1.- ՈՍԿԱՆԱՊԱՏԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԴԵԿՏ 12-ԷՆ ՄԻՆՉԵՒ 25-Ի ՆԻՍՏԵՐՈՒ [1907 Թ.]

Հինգերորդ Ընդհ. Ժողովի քրթածրարին մէջ Ոսկանապատ-Պաքուի ընդարձակ շրջանին մասին գոյութիւն չունի տեղեկագրական բնոյթի ոչ մէկ փաստաթուղթ, իբրեւ հետեւանք, հաւանաբար, ցարական ոստիկանութեան գործադրած խստութիւններուն, որոնք սկսած էին սաստկանալ արդէն 1907 թ. երկրորդ կիսուն: Այսուհանդերձ Հ.Յ.Դ. կեդրոնական արխիւներուն մէջ պահպանուած է Պաքուի մէջ գումարուած շրջանային ժողովի մէկ հակիրճ, մեր տպաւորութեամբ նաեւ պակասաւոր, այս արձանագրութիւնը: Յայտնենք որ Շրջ. ժողովը կը գումարուէր ի նախապատրաստութիւն քանի մը օր ետք բացուելիք կովկասեան ընդհանուր ռայոնական ժողովին: Հակառակ Ռ-ստումի, Աբր. Գիլխանդանեանի (Աբրո), Նիթրայի (Յար. Շահրիկեան), Չոփուռեանի (Թաղէսեան Լեւոն, Պապաշա) եւ այլ հանգամանաւոր դէմքերու մասնակցութեան, ժողովական այս համառօտ եւ թերի արձանագրութիւնները չեն ցոյցաներ, անշուշտ, հարազատ եւ ամբողջական պատկերը Ոսկանապատի նման ծաւալուն գործունէութիւն ունեցող Կեդր. Կոմիտէութեան մը, որ, հակառակ Դաշնակցութեան դէմ ցարական իշխանութեանց ի գործ դրած խստագոյն հալածանքներուն, կը շարունակէր տակաւին Կովկասի տարածքին ունենալ գործօն դերակատարութիւն:

Արձանագրութեանց թերի ըլլալու մասին կը վկայեն նոյնպէս, տեղ-տեղ Ռ-ստումի ձեռագրով կատարուած սրբագրութիւններն ու յաւելումները, յատկապէս իր գեկուցման բաժնին մէջ:

Փաստ. 328-67

I ՆԻՍՏ

12 Դեկտ. 1907 թ.

- Ընտրուած էին I կոմիտէից՝
1) Վան-Փուշ (մ.կ.)
2) Լալա
3) Դժոխք
4) Խեչօ

- II կոմիտէից 1) Տիգրան (մ.կ.), 2) Ռօդոս, 3) Պարոյր,
4) Բարսեղ, 5) Գեղամ, 6) Գէորգ եւ 7) Յովակիմ:
Դուման ենթակոմիտէ 1) Վահան (մ.կ.) 2) Արշակ, 3) Ասրի.
Կ. կոմիտէից Աբրո, Չոփուռեան

- 1) Ընտրուեցան նախագահներ՝ Աբրո, Չոփուռեան եւ Զաւախեան:
Ման. -նախագահները ձայնի իրաւունք ունին միայն իրենց նախագահութեամբ եղած նիստերին:
2) Ընտրուեցին 3 գոյգ (6 հոգի) քարտուղարներ — Ռօդոս, Դժոխք, Վան-Փուշ, Լալա, Պարոյր եւ Հայրում:
3) Արձանագրութիւնների մէջ պիտի մտցուեն բանաձեւեր՝ իրենց պատճառաբանութիւններով՝ թէ՛ մեծամասնութեան, թէ՛ փոքրամասնութեան:
4) Որոշուեցաւ հրաւիրել 18 հոգու՝ խորհրդակցա-

կան ձայնով, իսկ զուտ տեխնիկական պայմանների պատճառով որոշուեց մնացած գործիչ-ընկերներին հրաւիրել միայն որոշ ծանրակշիւ հարցերի քննութեան ժամանակ:
5) Ժողովը հրատարակուեց փակուած: Հետեւեալ նիստը Դեկտ. 13-ին երեկ. ժամը 7-ին:

Նախագահ ժողովի՝
Քարտուղար՝ ՌՕԴՈՍ

Փաստ. 328-68

ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

13 Դեկտ. 1907 թ.

Ժողովը բացուեց նախագահութեամբ Չոփուռուի եւ քարտուղարութեամբ Ռօդոսի եւ Դժոխքի:
Ներկայ էին 15 հոգի պատգամաւորներ: III կոմիտէից ոչ ոք չկար: 10 հոգի գործիչ ընկերներ էին եկել:

Որոշումներ

- 1) Ժողովը, լսելով ընկեր Զաւախեանի պատճառաբանուած հրաժարականը՝ նախագահութիւնից, որոշեց միաձայն առաջիմ ընդունել այդ հրաժարականը եւ բաւականանալ միւս երկու նախագահով:

2) Ժողովը որոշեց, որ պատգամաւորները պարտաւոր են գրաւոր ներկայացնել իրենց շրջանների հաշուետուութիւնը ըստ Բիւրոյի առաջարկած Օրակարգի առաջին կէտի բաժանման, մինչեւ ամսոյս 18-ը:

3) Պատգամաւորների մանտաղների ստուգման համար ընտրուեցան ընկերներ՝ Ջահել եւ Վան-Փոլ:

4) Դուրսը մնացած պրոպագանդիստների վերաբերմամբ որոշուեց, քանի հոգի էլ որ լինեն, հրաւիրուում են շրջանային ժողովի կողմից՝ խորհրդակցական ձայնով:

5) Ժողովը միաձայն համաձայնուեց լսել ընկեր Ռոստոմի բանաւոր զեկուցումը մեր տակտիկայի մասին Թուրքիայում եւ ապա անցնիլ քննութեան:

Ման.- Որոշուեցաւ, որ քարտուղարները պարտաւոր են ընդհանուր գծերով արձանագրել ընկեր Ռոստոմի զեկուցումը:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՏԱԿՏԻԿԱՆ ԹՈՒՐԻՔԻԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընկեր Ռոստոմի զեկուցումը:

Ապստամբական ձեռնարկներ.— Դաշնակցութեան տակտիկան սկզբից եւեթ, տարբերուում էր միւս կուսակցութիւնների տակտիկայից, առանձնապէս Հնչակեանների:

1.- **Հնչակեանների տակտիկան** կրում էր ագիտացիայի բնաւորութիւն, օգտուում էին ժողովրդի տրամադրութիւնից եւ աշխատում էին սարքել օրեւէ ցոյց, առանց հաշուի առնելու կուսելու ընդունակութիւնը կամ միջոցները: Նոքա ցանկանում էին ընդհանրութեան ուշադրութիւնը դարձնել բողոքի վրայ: Գում Գափուի ցոյցը՝ իբրեւ ամենայնպէս այդ տեսակէտից:

2.- **Դաշնակցութեան տակտիկան.**— Կազմակերպել ժողովուրդը, գտել կուսելու ընդունակներին, զինել նրանց եւ վարժեցնել կուսներին: Գործունէութիւնը ամփոփուած էր այն վայրերում ուր հայութեան մեծամասնութիւնն էր: Դաշնակցութիւնը իր կուսի ձեւով գրաւեց Հնչակեանների մարմիններին, ինչպէս նաեւ անհատներին, գործունէութիւնը փոխադրելով Սասուն, ուր անհրաժեշտութիւն կար յեղափոխական խակական կուսի: Հնչակեանները ստիպուած էին Դաշնակցութեան հետ բանակցութիւնների մէջ մտնել, զգալով իրենց անկարողութիւնը:

3.- Դաշնակցական ո՛չ մի խումբ, մինչեւ 95 թուականը, նախաարձակ չի եղել, որովհետեւ համապատասխան ոյժերի պակասութիւն էր զգացուում եւ պէտք էր պատրաստուել:

4.- Ընդհանուր ծրագրից դուրս եղան շեղումներ, բայց 95 թուի ընդհանուր կոտորածներից յետոյ, Բանկ

Օտտոման եւ Խանասորայ արշաւանքը, որ անհրաժեշտ էին, ի միջի այլոց, ընդհանուր շարժման յետագայ կազմակերպութեան համար: 98 թուից յետոյ որոշուեցաւ հին տակտիկայի հետ միասին կանոնաւորել ցուցական գործունէութիւնը:

5.- **Ցուցական ձեռնարկներ.**— Նպատակ ունէին դիպչելու եւրոպական շահերին, որի համար էլ երկու ձեւ կար. ա) **անմիջական**, ինչպէս Բանկ Օտտոման եւ Ծովեզերեայ քաղաքների ցոյց եւ բ) **ընդհանուր շարժում**, որով պիտի խախտել ընդհանուր Օսմանեան պետութեան հիմքերը, որի մէջ շահագրգռուած են եւրոպացիք:

6.- Ժողովրդի կազմակերպած այս ցոյցերից յետոյ, որը տեւեց մինչեւ 900 թիւը, անհրաժեշտ զգացուեց Սասնոյ ապստամբութիւնը, որովհետեւ, ինչպէս ասում են - «դիմանալ չէր կարելի»:

Այդ ժամանակ կառավարութիւնը, գիտենալով այդ, իր ոյժերը մեզնից շուտ կենտրոնացրեց եւ ապստամբութիւնը վիժեց:

Յեղափոխական ձեռնարկների վիժումը դեռ փաստ է անյաղդութեան, այլ մի հիմք՝ ապագայ յաջող ձեռնարկների:

Դորանից պարզուեց նախ՝ որ ժողովուրդը արդէն որոշ չափով պատրաստ է ընդգրկելու իւրաքանչիւր յեղափոխական շարժում,

Երկրորդ՝ յեղափոխական ոյժերը, ծանօթանալով աւելի լաւ դիրքի եւ ժողովուրդի տրամադրութեան հետ, ամրացրին իրենց դիրքերը,

Երրորդ՝ որ յեղափոխական ոյժերը կարող են բաւարար համարուել պարտիզանական կուսների համար եւ **Չորրորդ**՝ որ ստեղծուեց յեղափոխական կառավարութիւն, որը զարկ տուեց ժողովրդի գիտակցութեան:

7.- 908-ի⁴ Ընդհանուր ժողովը ի նկատի ունենալով վերոյիշեալները, գտաւ որ ա) Հնարաւորութիւն չունենք դիմելու ընդհանուր ապստամբութեան,

բ) Ունինք այնքան ոյժ, որ կարող ենք ստեղծել **ապստամբական վիճակ** երկրում,

գ) Յեղափոխութեան համար առաջ վայրերը շատ նեղ էին, այժմ բաւականին լայնացել են, որ Վասպուրականի եւ Մուշի յարաբերութիւններն այնպէս են, որ կարող են կառավարուել մի պատասխանատու մարմնով եւ դա մի խոշոր պիլս է յեղափոխութեան համար, դ) Ցուցական եւ այլ ձեռնարկներ թողնել ո՛չ տեղական մարմիններին, այլ մի **ընդհանուր** (մարմին), որ գործը աւելի բազմակողմանի հիմքերի վրայ լինի դրուած,

3.- Բնագրի մէջ երկրորդ եւ չորրորդ նիստերու միջեւ չէ նշուած երրորդ նիստ մը: Մեր տպագրութեամբ Ռոստոմի զեկուցման յատկացուած է առանձին նիստ մը, այսինքն՝ երրորդ:

4.- Պետք է ըլլայ 907-ի:

բ) **Զինել ժողովրդին**, որ առաջ շատ քիչ պահանջ կար եւ նոյն իսկ զէնքը առեւտրի նիւթ էին դարձրել հայերը, իսկ այժմ անհրաժեշտ կարիք է նոցա համար եւ

գ) Վիճակագրական ճիշտ թուեր հաւաքել ու կազմել քարտէսներ, որ այժմ իրագործուում է Վասպուրականի շրջանում:

ՏԵՌՈՐ

1.- **Տեւորները** (91 թ. Վանում, 93-95 Պոլսում — Օտտոման — 1000 ու կար) [?] նշանակութիւն ունէին ո՛չ միայն հայերի համար, այլ եւ օտարազգիների, որոնք ցնցուում են եւ սթափուում:

Այդպիսի խոշոր տեւորները անհասկանալի էր մնում ժողովրդի համար: Այդ տեւորներից յետոյ էր, որ անհրաժեշտութիւն զգացուեց ընդհանուր Օսմանեան պետութեան ռեֆորմացիայի:

2.- Սուլթանի կեանքի դէմ եղած փորձը մի կրթիչ նշանակութիւն ունեցաւ ռամիկ ժողովրդի վրայ՝ առանձնապէս տաճիկների, որոնք «Ֆետիխ» էին դարձրել մարդ-գազանին: Եւ այդ դէպքից յետոյ էր որ առաջ եկաւ որոշ շարժում եւ նկատուում էր որոշ դժգոհութիւն իրարից — թէ ինչո՞ւ մենք չձեռնարկեցինք այդ գործը, մի՞թէ մեզ չէր վերաբերուում —:

3.- **Տեւորը** ունի երկու նպատակ — նախ հասնելու մեր նպատակին, ոչնչացնելով խոչընդոտները եւ երկրորդ՝ յեղափոխականացնելու մասսան:

Այժմ Տեւոր կազմող մարմինը ո՛չ թէ պիտի կրէ Հ.Յ.Դ. անունը, այլ ընդհանուր ընդդիմադիր, յեղափոխական կուսակցութիւնների եւ խմբակների, որը եւ կը կարգադրէ այդ ընդհանուր եւ անհրաժեշտ գործը:

ԱՐՇԱԿԱՆՄԵՐԵՐ

1.- Արշաւանք, բառի բուն նշանակութեամբ, եղել է միայն Սանասորինը, իսկ մնացածները զէնք տեղափոխող խմբեր են եղել, որոնք ընդհարուել են քրդերի հետ:

2.- Թորգոմի արշաւախումբը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱԿՏԻԿԱ

1.- Հայկական Յ վիլայէթներում, չնայած մեծամասնութիւնը կազմում են տաճիկները, բացառապէս զբաղուել ենք հայկական խնդրով:

2.- Ժամանակի ընթացքում ժողովուրդը, նկատելով մեր շարժման նպատակայարմարութիւնը, կը շարժուի եւ այն ժամանակ մեր շարժումը կը լայնացնենք:

3.- 98 թ. Փարիզի համաժողովը, ուր Սաբահէդդինը իր խմբակով ընդունեց նախ՝ հայկական վիլայէթների ինքնավարութիւնը եւ երկրորդ՝ դաշնակցական-ֆեդե-

րատիւ սկզբունքի անհրաժեշտութիւնը:
4.- Տաճիկ յեղափոխականները, ենթարկուելով մեր շարժման ազդեցութեան եւ կազմակերպուելով, այժմ չունին որոշ ուսի մի որեւէ գործ սկսելու:

5.- Եւ ջանքեր կան ձուլելու մեր շարժումը ընդհանուր տաճիկական շարժման հետ, որովհետեւ եթէ գուտ ազգային մի որեւէ արտօնութիւն ձեռք բերենք, չենք կարող պահել որովհետեւ ընդհանուր պետական մթնոլորտը հակառակն է թելադրում:

ԴԻՊԼՈՄԱՏԻԱ

1.- Դիպլոմատիան մի մնայում ոյժ է, որի վրայ հիմնուենք:

2.- Դա կազմուած է մի քանի պետութիւնների հակամարտ ոյժերից:

3.- Որ յեղափոխականները չեն դիմում նոցա մարդասիրութեան, այլ յարաբերութեան մէջ են մտնում՝ որպէս մի ոյժի, որ այսպէս թէ այնպէս շահագրգռուած են Տաճկաստանով:

4.- Ռուսիային ձեռնտու չէ որոշ փոփոխութիւն, որովհետեւ նպատակ ունի առաջ անցնելու մինչեւ ծովը, իսկ դորա համար հարկաւոր է որ Տաճկաստանում կազմակերպուած խոչընդոտ ոյժ չլինի, որ ներկայացնում է միապետական կառավարութիւնը՝ ստրուկ ժողովուրդներով:

5.- Անգլիան, Ֆրանսիան եւ այլն շահագրգռուած են ռեֆորմներով, որ նախ՝ խոչընդոտ հանդիսանան Ռուսիային եւ երկրորդ՝ իրենց որոշ ազդեցութիւնն ունենան՝ հպատակների վերաբերմամբ:

Ժողովը շնորհակալութեամբ ընդունեց ընկեր Ռոստոմի այս զեկուցումը եւ անցաւ բուն խնդրի քննութեան:

Դժոխքի առաջարկը.— Ի նկատի ունենալով, որ մենք բաւականաչափ ծանօթ չենք Թուրքիայի իրականութեան, առաջարկում են չանցնել այս հարցի քննութեան:

Աբրոյի առաջարկը.— Ի նկատի ունենալով որ կան որոշ խնդիրներ, որոնց մասին ցանկալի էր եւ կարելի էր խօսիլ, առաջարկում են անցնել հարցին՝ ըստ էութեան:

Ժողովը 11 ձայնով ընդդէմ 4-ի որոշեց անցնիլ հարցի քննութեան եւ յետագայ միւս նիստին:

Հետեւեալ ժողովը ամսոյս 14-ին, երեկոյեան ժամը 7-ին:

Նիստը յայտարարուեց փակուած:

Նախագահ՝
Քարտուղարներ՝ ՌՕԴՈՍ

Փաստ. 328-69

ԲԱԳՈՒԱՅ Հ. 8-Դ. ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ Դ. ՆԻՍՏԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ժողովը բացուեցաւ ժամը 7 եւ 40 րոպէին: Նախագահոււմ էր ընկեր Աբրոն:

Օրակարգի խնդիրներն էին.

- 1) Դաշնակցութեան տակտիկական Թուրքիայում
- 2) Դաշնակցութեան վերաբերմունքը դէպի եւրոպական դիպլոմատիան:

Ի կէտի վերաբերմամբ ձայների մեծամասնութեամբ անցաւ ընկեր Դժոխքի հետեւեալ բանաձեւը — «Բագուայ Շրջանային ժողովը ծանօթ չլինելով Տաճկահայաստանի իրականութեան, պայմանների հետ, բարոյական իրաւունք չի համարում այս կամ այն գործելակերպը առաջարկելու: Ընկեր Թոփչեանի առաջարկը այդ խնդրի վերաբերմամբ հետեւեալն էր՝ «Քննելով Դաշնակցութեան տակտիկայի հարցը Թուրքիայի վերաբերմամբ եւ աչքի առաջ ունենալով երկրում գործող դաշնակցական ընկերների արդիւնաւէտ գործելակերպը՝ թէ ընդհանրապէս աշխատաւորական եւ թէ տարբեր ազգերի համերաշխութեան ու գործակցութեան տեսակէտից, Ոսկանապատի շրջանային ժողովը իր գոհունակութիւնն է յայտնում այդ առթիւ եւ ցանկանում որ Դաշ. IV Ընդհանուր ժողովի շեշտած կէտերը այդ հարցի վերաբերմամբ աւելի եւս լայն չափերով իրականանան ու ծաւալուին:

II- Եւրոպական դիպլոմատիայի վերաբերմամբ ձայների մեծամասնութեամբ անցաւ ընկեր Ա-ի եւ Աբրոյի միացեալ առաջարկութիւնը՝ այն է Բագուայ Շրջանային ժողովը ցանկանում է որ Դաշնակցութիւնը հաւատարիմ իւր աւանդականութեան չփոխէ իւր վերաբերմունքը դէպի դիպլոմատիան աչքի առաջ ունենալով հետեւեալ պատճառաբանութիւնները:

ա) Որ դիպլոմատիան, ճիշտ է, իւրաքանչիւր դիպլոմատիկական քայլերի մէջ նա իւր շահն է ի նկատի ունենում բայց եւ չի մոռանում այդ երկրում գոյութիւն ունեցող կազմակերպուած ուժայ ոյժերը:

Որ դիպլոմատիային չենք խնդրում, չենք դիմում, այլ յարաբերութեան մէջ ենք մտնում որպէս մի ճշդ ոյժ, որ որոշ դեր է խաղում այդ դիպլոմատիայի ծրագիրների իրագործման,

Որ դիպլոմատիայի շահերի իրագործմանը աւելի օգտակար է եւ նպաստաւոր պայմաններ է տալիս երկրի եւ ժողովրդի տնտեսական եւ քաղաքական զարգացումը,

Առաջարկում ենք դիպլոմատիան չընդունել որպէս մի յենակէտ, մի յուսոյ աստղ, այլ նա պիտի լինի մի շահագործման առարկայ որի վերաբերմամբ միշտ մեր դիրքը պիտի որոշենք:

Որ դիպլոմատիան եւրոպական կապիտալիստների մեծ վոհմակն է, իրական տէրը այն երկրի, որի համար եւ պիտի դիմենք եւ ապա մեր անելիքը որոշենք:

Դիպլոմատիայի վերաբերմամբ ընկեր Դժոխքը առաջարկում էր «Դաշնակցութիւնը դէպի եւրոպական դիպլոմատիայի վերաբերմամբ բռնած դիրքի մասին Ոսկանապատի շրջանային ժողովը յայտարարում է որ այս խնդրում Դաշն. մինչեւ այսօր պարզ չէ արտայայտուել: Բողոքելով այդպիսի անորոշ գործելակերպի դէմ, իւր կողմից բացասելով բացասում է թէ՛ նրան դիմելը եւ թէ՛ նրա վրայ յոյս դնելը: Մեր պատճառաբանութիւնը՝ ոյժը իրաւունք է մեր դարձում, շահը գործունէութեան շարժառիթ ու պատճառ»:

Փաստ. 328-70

ՆԻՍՏ

15 Դեկտ. 1907 թ.

Ներկայ են բոլոր պատգամաւորները բացի Սեւ-քաղաքի եւ Աստապատի ընկերներից: Ընդամէնը 15 ձայն:

Հարց բարձրացրուեց նոր ընկերներ հրաւիրելու մասին, որի համար որոշուեց՝

Աչքի առաջ ունենալով, որ բացի արդէն հրաւիրուածներից դրսում կան շատ ընկերներ, բայց տեխնիկական մեծ անյարմարութիւնների պատճառով անհնար է նրանց եւ բաւարարութիւն տալ, շրջանային ժողովը որոշեց բաւականանալ միայն հրաւիրուածներով, եւ այլ եւս նոր առաջարկներ ժողովներում չանել:

Դրուեց Դաշն. տակտիկական Թուրքիայում. խօսեց ընկեր Ռոստոմը, տեղի ունեցան վիճաբանութիւններ առանձնապէս դիպլոմատիային դիմումներ անելու վերաբերմամբ, բայց վիճաբանութիւնները ոչ մի եզրակացութեան չյանգելով, որոշուեց միւս ժողովում գալ պատրաստի բանաձեւերով:

Դրուում է Դաշն. տակտիկական Պարսկաստանում. ընկ. Ռոստոմի գեկուցումից յետոյ ընդունուեց 13 ձայնով հետեւեալ բանաձեւը ընդդէմ 2-ի:

Շրջանային ժողովը գտնելով Ընդհ. ժողովի որոշումները Պարսկաստանի վերաբերմամբ նպատակայարմար, անցնում է հերթական հարցերին:

Փոքրամասն[ութեան] բանաձեւ

Բագուայ շրջանային ժողովը ծանօթ չլինելով Պարսկաստանի իրական պայմանների հետ, բարոյական իրաւունք չի համարում այս կամ այն գործելակերպը ա-

առաջարկելու. միայն այս կ'առաջարկէր, որ նոցա ընդունած գործելակերպը անպայման բխէր Դաշն. ծրագրից: 2 ձայն:

ՆԻՍՏ

17 Դեկտ. 1907 թ.

Ժողովին ներկայ են 11 պատգ. բաց[ակայ] Խէչօ, Լալա, Վահան, Արսէն, Արշակ:

Դրուեց Դաշն. տակտիկական եւ աշխատաւորական քաղաքականութիւնը գիւղացիական, արհեստակցական եւ կոոպերատիւ միութիւնների միջոցաւ:

Լուեց ընկ. Արշակի գեկուցումը գիւղացիական միութիւնների մասին, որը առիթ տուեց երկար վիճաբանութիւնների եւ ժողովը ընդունելով որ Ռայոնական ժողովի օրակարգում դրուած այդ հարցը այնքան էլ պարզ չէ.

Որ այդ հարցի լուծումը անմիջական կապ ունի կոոպերատիւ եւ արհեստակց. միութիւնների հարցի հետ, որոշեց յետաձգել բանաձեւերը այդ առթիւ, մինչեւ կը լսուի ընկ. Վահէի գեկուցումը արհեստակց. եւ կոոպերատիւ միութիւնների մասին:

ՆԻՍՏ

18 Դեկտ. 1907

Ներկայ են 15 պատգ. բաց. 1-ը՝ Գեղամ:

Շարունակուում են վիճաբանութիւնները «Դաշն. տակտ. ընդհ. ուսական շարժման մէջ եւ համերաշխ գործակցութեան մէջ այլ կուսակց. հետ» հարցերի, որի դիւրութեան համար հարցը բաժանուեց հետեւեալ կերպ.

Ա) Դաշն[ակցութեան] դիրքը ընդհ. ուսական շարժման մէջ եւ ինչպիսի կապ պիտի հաստատուի այլ յեղափ. սոց. կուսակցութիւնների հետ.

Բանաձեւեր
Մեծամասն. Դաշն[ակցութիւնն] ունենալով իր ուրոյն գործելակերպն ու մասնաւոր գործունէութիւնը՝ պիտի աշխատի այնպիսի հարցերում, որոնք համապետական բնաւորութիւն են կրում եւ համաժողովրդական բողոք ու գործունէութիւն առաջ բերում, անպայման համերաշխութեան գալ միւս յեղափ. կուսակցութիւնների հետ: Ճանապարհը հարթեցնելու համար թէ՛ յանուն ապագայի արդիւնաւէտ գործունէութեան եւ թէ՛ անտանելի դրութեան գէթ աննշան բարոյքման, թէ՛ Դ[աշնակցութիւն]ը եւ թէ՛ Ռուսաստանի միւս յեղափ. կուսակցութիւնները պիտի աշխատին շողկապել իրանց ուժերը, պիտի պատրաստուին մի ընդհանուր գրոհի՝ մի ընդհանուր պահանջով, չկաշկանդելով միաժամանակ իրանց անկախութիւնն ու ուրոյնութիւնը յե-

տագայ յեղափ. գործունէութեան մէջ. վերը յիշած նրապատակի համար, Դ-ը պիտի աշխատի կազմել մի խորհրդաժողով, բաղկացած ծայրագաւառների բոլոր ակտիւ գործունէութեան ընդունակ յեղափ. սոց. կուս[ակցութիւններ]ից, եւ ապա դիմել ուսական երկու սոց. կուսակց.ներին՝ C.R. եւ C.D.ների [սոցիալ ուսուցիչներին] 11 ձայն ընդ. 4-ի:

Փոքրամասն[ութեան] բանաձեւ

I. Դաշն-ը իր մասնաւոր գործունէութիւնը եւ տակտիկական, անկախ միւս կուսակցութիւնների գործունէութիւնից եւ տակտիկայից, չի կարող ունենալ. ոչ միայն Դաշն-ը, այլ եւ միւս յեղափոխ. կուս.ները, յանուն յեղ. յաղթանակի, պէտք է միացնեն իրանց ուժերը մի ընդհանուր ու մեծ գրոհ անելու համար: Այս գրոհը պիտի սահմանափակուի նախնական եւ ամէնքի համար անհրաժեշտ յեղափ. քայլերով, չկաշկանդելով միաժամանակ կուսակց.ների ազատութիւնն ու ուրոյնութիւնը յետագայ յեղափ. գործունէութեան մէջ: Մի ընդհանուր գրոհ ծրագրելու, կազմակերպելու եւ նախապատրաստելու համար, անհրաժեշտ է կազմել բոլոր յեղափ. կուսակց[ութիւն]ների մի միացեալ ժողով, սկսելով ծայրագաւառներից: 1 ձայն:

II. Ի նկատի ունենալով, որ ուս. Ս[ոցիալ] Դ[եմոկրատ] Բ[անուորական] Կ[ուսակցութիւն]ը մեր ծրագրած ապստամբական ձեռնարկներին մասնակցելու ոչ ուժայ ուժ ունի եւ ոչ էլ ընդունում է՝ բացի գործադուլից, միւս ձեռնարկները, առաջարկում եմ կազմել բոլոր սոց. յեղ. կուսակց.ների հետ, առաջ բերել շարժում, որի ժամանակ եթէ ոչ Ռ.Ս.Դ.Բ.Կ.-ը պաշտօնապէս չմասնակցի, գոնէ Ս.Դ. մասսան անտարբեր չի գտնուիր: 1 ձայն:

Բ) Խորհրդաժողովը կայանալու դէպքում Դաշն. տալիք դիրքերիւնները իւր ներկայացուցչին.

Բանաձեւ մեծամասնութեան՝

Խորհրդաժողովը կայանալու դէպքում պէտք է ձգտել առաջ բերել միաժամանակ ամբողջ Ռուսաստանում ապստամբական դրութիւն (քաղաքական մեծ գործադուլներ, ագրարային շարժումներ, խլրտումներ գործի մէջ, պետական էքսպրոպրիացիա, զինուած ընդհարումներ՝ տեւոր բարձրաստիճան անձերի վրայ) այդ միջոցներով պատրաստուելու եւ առաջ բերելու ընդհ. ապստամբութիւն:

Փոքրամասն.— նոր բանաձեւը առանց «ընդհանուր ապստամբութեան նպատակի»:

14 ձայն ընդ. 1 ձեռնպահի

Գ) Մեր մօտակայ լոզունգը.

I «Կորչի միապետութիւնը, կեցցէ՛ ֆեդերատիւ Ռուսաստանը»: 14 ձայն 1 ձեռնպահ:

ՆԻՍ

21 Դեկտ. 1907

Ներկայ էին 14 պատգ. բաց[ակայ]՝ Տիգրան, Արսէն – Վահան II:

Դրուում է կաթողիկոսական ընտրութիւնների հարցը: Զեկուցանողն է ընկ. Նիթրան:

13 ձայնով ընդդէմ 1-ի ընդունուեց – Չմասնակցել կաթ. ընտրութիւններին, պատճառաբանուած բանաձեւը յանձնել մի խմբագր[ական] մարմնի (Արսէն, Արթուր, Հայրուհի), որ ներկայացնեն յաջորդ ժողովին:

Դրուում է Դաշն. վերաբերմունքը դէպի ներկայ հասարակական անարխիան: Կարողացում է ընկ. Զաւարեանի զեկուցումը:

Պատճառաբանուած բանաձեւը յանձնուեց նոյն մարմնին:

ՆԻՍ

22 Դեկտ. 1907 թ.

Ներկայ են 16 պատգամաւոր:

Եկաւ Աստապատի ընկեր պատգ.ը: Բաց[ակայ] Սեւ քաղաքից Ոսկան Ս. եւ Քաղ[աք]ից Լալա:

Խմբագրական մարմինը չէ պատրաստել բանաձեւերը: Ժողովը նկատողութիւն անելով պարտաւորեցրեց յաջորդ ժողովին ներկայացնել:

Դրուեց օրակարգից դուրս՝ Բագում նաւթարդիւնաբերողների եւ բանուորութեան կողմից կայանալիք խորհրդակց[ական] ժողովի հարցը: Որոշուեց որ բանուորական շրջանների ընկերները անմիջապէս գործի անցնեն, որպէսզի ընտրութիւնները տան ցանկալի հետեւանք:

Ապա լսուեցին բերանացի տեղեկագիրները քաղաքի, Աստապատի, Բիրի էյբաթի եւ Սեւ քաղաքի ներկայացուցիչներից, որոնց վրայ պարտականութիւն դրուեց գրաւոր եւ ներկայացնել Կ. Կ.ին:

Ժողովը անցաւ կազմակերպչական հարցերի քննութեան, որի շարունակութիւնը թողուեց միւս նիստին:

ՆԻՍ

23 Դեկտ. 1907 թ.

Ներկայ են 13 պատգ[ամաւոր]. բաց[ակայ] Ոսկան Ս., Լալա, Խէչօ, Գէորգ, Արշակ:

Շարունակուեցին վիճաբանութիւնները «Գիւղաց», արհեստ. եւ կոոպերատիւ միութիւններ եւ ազգութիւնների հարցը նրանց մէջ՝ հարցի առթիւ:

Բանաձեւ մեծամասն[ութեան] կոոպերատիւ միութիւնների մէջ պէտք է տեղ տալ օտարազգիներին, եթէ նրանք ընդունում են մեր ծրարը:

գիրը: Եթէ օտարազգիները շատ մեծ թիւ են կազմում, նրանցից կամ պէտք է կազմակերպել իրանց ազգային դաշն. կազմակ.ը, կամ թէ չէ որոշ տոկոս հանել համեմատական չափով, օտարազգիների կուլտուրական կարիքների համար՝ կասսայից: 10 ձայնով ընդ. 3-ի:

Փոքրամասն.

Դաշն.ը, որպէս մի կուսակցութիւն որ գործում է Կովկասի ներկայ իրականութեան մէջ, ուր ազգութիւնների հարցը բունում է առաջնակարգ տեղ, պէտք է կազմակերպէ մեր ծրագրի եւ աշխարհայեցողութեան համաձայն՝ եւ մեր հարեւան ազգերի աշխատաւորութեան, ստեղծելով նրանցից առանձին կազմակերպութիւններ, իսկ գործնական կեանքում՝ անհատական կամ մասնաւոր խմբական դէպքերում, մեզ հետ մօտիկ յարաբերութեան մէջ դնել եւ մենք պաշտպանում ենք նրանց շահերը որպէս մի կուսակցութիւն, որ որոշուէալ ոյժ ունի:

3 ձայնով ընդդէմ 10-ի: Որոշուեց վաղը՝ 24-ին, կատարել պատգամաւորների ընտրութիւնը:

ՆԻՍ

24 Դեկտ. 1907 թ.

Բացակայ են Բարսեղ, Արշակ. ներկայ են 16 պատգամաւոր:

Դրուեց Կարմիր խաչի հարցը. զեկուցանողն էր ընկեր Մաշտոցեանը. տեղի տուեց վիճաբանութիւնների եւ առաջարկուեց բանաձեւեր:

Մեծամասնութեան բանաձեւեր:

Ի նկատի ունենալով որ վնասուող եւ կարօտ ընկերների եւ նրանց ընտանիքներին օժանդակութեան գործը մեր անմիջական բարոյական պարտքն է, բայց եւ ի նկատի ունենալով որ կուսակցութեան կանոնագիրը չի ընդունում կուսակցական միջոցներից օժանդակելը, Շրջանային ժողովը ընդունում է՝ — կուսակցական շարքերից կազմակերպել օժանդակող միութիւն (դաշնակցական) Կարմիր խաչ) որի մէջ մտնում են գլխաւորապէս կանաչ. այդ միութիւնը ընտրում է մի մարմին չորս հոգուց բաղկացած, իսկ հինգերորդը տալիս է տեղական կոմիտէն, որը վարում է Կարմիր խաչի ֆունկցիաները (սանիտարական, օգնութեան գործի կազմակերպում, նպաստների բաշխում, վիճակախաղերի երեկոյթների կազմակերպում, հաշուապահութիւն եւ այլն): Նպաստներ տալու հարցերը վճռում են նախապէս նպաստողի մասին ստանալով կազմակերպական համապատասխան մարմնից տեղեկութիւններ: Կարմիր խաչին կարող են մասնակցել եւ ոչ դաշնակցականներ, չունենալով միայն ընտրուելու եւ ընտրելու իրաւունք:

Դրամական միջոցներն են կամաւոր տուրք, նուէրներ, երեկոյթներ, հանգանակութիւններ եւ այլն: 9 ձայն:

Փոքրամասնութեան բանաձեւը

— Կարմիր խաչի գործունէութիւնը գտնելով անհրաժեշտ՝ Ոսկանապատի Շրջանային ժողովը գտնում է որ նա նպատակ պէտք է ունենայ:

ա. Նախապատրաստել վիրաբուժական եւ սանիտարական խմբեր յեղափոխական ձեռնարկների դէպքում օգնութեան հասնելու:

բ. Օգնութեան հասնել բանտարկուած ընկերներին բանտում եւ նոցա ընտանիքներին բանտից դուրս:

գ. Պաշտօններ գտնել մեր անգործ ընկերների համար, տալ նոցա ապրուստի եւ հագուստի միջոցներ եւ օգնել նոցա հիւանդութեան միջոցին:

Կարմիր խաչը պէտք է կազմել տեղական կամ կենտրոնական մարմինների միջոցով սեկցիական սիստեմով, գլխաւորապէս աչքի առաջ ունենալով կանանց:

Կ. խաչը իր միջոցները հայթայթում է անդամավրճարների միջոցով ըստ կամաց, ժողովարարութեամբ⁶, ներկայացումներով, երեկոյթներով եւ այլն:

Կ. խաչը իր գումարներից կէսը ուղարկում է Բիւրոյին, երկիր ուղարկելու համար:

Կ. խաչի սեկցիան պահում է իր առանձին կասսան: 3 ձայն:

Ոսկանապատի Շրջանային ժողովը առաջարկում է

Կ. խաչը կազմակերպել Դաշնակցութեան) դրօշակի տակ կազմակերպուած աշխատաւոր կանանց խմբերից ճիշտ այնպէս, ինչպէս աշխատաւոր տղամարդկանց շարքերից մարտական խմբերը: Դրամական միջոցները ստանում է կամաւոր տուրքերից եւ պատահական եկամուտներից:

Նրանք պիտի օգնեն նիւթապէս մեր բանտարկուած ընկերներին, նրանց ընտանիքներին, գործազուրկ ընկերներին եւ այլն, իսկ յեղափոխական կուռի ժամանակ նրանք գթութեան քոյրեր են, ունին ընտրելու եւ ընտրուելու իրաւունք: Կարող են ունենալ օժանդակողներ որոնք ընտրելու եւ ընտրուելու իրաւունք չպիտի ունենան: 3 ձայն:

Կատարուեց պատգամաւորների ընտրութիւնը. ընտրուեցին Վահան 11 ձայնով Արսէն 10 ձայնով:

ՆԻՍ

25 Դեկտ. 1907 թ.

Ներկայացուցիչներից ներկայ էին 12 ներկ. բաց. 6: Ժողովը անցաւ քաղաքական խմբերի կազմի որոշմանը. զեկուցում տուեց ընկեր Նիթրան եւ առաջարկուեց բանաձեւեր առանց վիճաբանութեան:

1. Ամէն մի դաշնակցական պարտաւոր է պատկանել որեւէ խմբի, այսինքն արհեստակցական կամ քաղաքական:

2. Բոլոր այն դաշնակցականները որոնք իրենց տրեստական դիրքի բնաւորութեամբը չեն կարող պատկանիլ արհեստակցական խմբերի, նրանք պէտք է պատկանին քաղաքական խմբերին:

3. Քաղաքական խմբերի ընթացիկ կեանքում գլխաւոր գործունէութիւնը պէտք է լինի կազմակերպական պրոպագանտ:

4. Քաղաքական խմբերը կազմակերպական մարմինների հետ, յարաբերութիւն կ'ունենան իրենց ներկայացուցիչների միջոցով:

5. Քաղաքական խմբերի տուրքը ամբողջովին մտնում է կազմակերպութեան կասսան:

6. Քաղաքական խմբերի պրոպագանդը եւ այլ գործունէութիւնը ենթարկուում է անմիջապէս կազմակերպական մարմինների կարգադրութեան:

Ընդունուեց միաձայն: Յետոյ խօսուեց թերթին հրահանգներ տալու մասին. տեղի տուեց վիճաբանութեան եւ առաջարկուեց բանաձեւեր:

Ի նկատի առնելով որ լեզու թերթը անհրաժեշտ է աշխատաւոր դասին, որ նրա փակումը մեծ կորուստ կը պատճառէ մեր յեղափոխական կազմակերպչական գործին, ուստի առաջարկուում է բոլոր ընկերներին աջակցել թերթի տարածման:

Բացի այդ կենտրոնական Կոմիտէի միւս ցենզերի մէջ պէտք է մտնել որոշ քանակութեամբ թերթ տարածելու պարտականութիւնը եւս (ցենզի քանակութիւնը կ'որոշէ Ռայոնական ժողովը) ի նկատի առնելով որ թերթը իր ջշերում չափազանց խոշոր տեղ է տալիս այնպիսի հասարակական խնդիրներին, որոնք շատ տեղ չպէտք է բռնէին մի կուսակցութեան օրգանի մէջ, Շրջանային ժողովը հրահանգում է թերթին զգուշութեամբ մօտենալ այդպիսի խնդիրներին առիթ չտալով մեր ընկերների մէջ դժգոհութիւն առաջ բերելու: Շրջանային ժողովը աւելորդ չի համարում նոյնպէս հրահանգել կանոնաւորելու տնտեսական գործը. ցանկալի է եւ գաւառական բաժինը առանձին ուշադրութեան արժանացել եւ որքան կարելի է լեզուն մատչելի դարձնել: 11 ձայնով:

Փոքրամասնութեան բանաձեւը

— Աչքի առաջ ունենալով որ մեր թերթը զբաղեցնում է մեր ամենալաւ ոյժերին եւ երկրորդ՝ նիւթական միջոցների տեսակէտից շատ վնասներ է հասցնում կուսակցութեան. չնայած այդ բոլոր գոհաբերութեան, նա ոչ մի բան չի տալիս դաշնակ. ինտելիգենցիային եւ ոչ:

5.- ժողովարարութիւն կը նշանակէ հանգանակութիւն:

չընչով չի նպաստում կուսակցական շահերին, Շրջանա- յին ժողովը առաջարկում է փակել թերթը եւ հրատա- րակել մի անլեզու թերթ որը բաւարարութիւն կը տայ վերեւ յիշածներին: 1 ձայնով:

Խօսուեց ամսաթերթի մասին եւ առաջարկուեց բա- նաձեւ:

— Ի նկատի առնելով, որ օրաթերթը չի կարող եւ չի տալիս գիտական հարցով հետաքրքրուող ընկերներին բաւարարութիւն, իսկ մի լուրջ ամբազրի մեծ պակա- սութիւն է գագացում մեր իրականութեան մէջ, Շրջա- նային ժողովը առաջարկում է շուտափոյթ ձեռնամուկ լինել Ընդհանուր ժողովի որոշման համաձայն ամսա- գրի հրատարակման: 7 ձայն:

— Աչքի առաջ ունենալով, ինչքան էլ որ Յառաջի գը- րադարանին ոյժ տրուի, կուսակցական ինտելիգենցիա- յին չի կարող զբաղեցնել եւ բաւարարութիւն տալ տե- սական հարցերի վերաբերեալ, եւ ուսումնասիրութեան

ենթարկել թէ մեր շրջապատող պայմանները եւ թէ պայմաններից եւ ընդհանուր աշխարհայեացքից առա- ջացած զանազան հոսանքները, ցանկալի է որ փոխա- նակ ամսագրի մի շաբաթաթերթ հրատարակել եւ մա- նաւանդ շտապեցնել այդպիսի շաբաթաթերթի հրատա- րակութիւնը: 5 ձայն:

Խօսուեց անլեզու թերթի մասին.
— Ի նկատի առնելով որ այժմեան պայմաններում անկարելի է ազատ գրել մի լեզու օրաթերթում, Շրջա- նային ժողովը անհրաժեշտ է գտնում հրատարակել ան- լեզու շաբաթաթերթ: Յանկալի է որ լինի այդ թերթը ընդհանուր կովկասեան, որի մէջ տեղ գտնէին բոլոր շրջաններից տեղեկութիւններ: Բացի ընդհանուր թեր- թից ցանկալի է ունենալ Կենտրոնական Կոմիտէների տրամադրութեան տակ անլեզու թերթեր, այդ բոլոր թերթերը պիտի կրեն տեղեկատուի եւ ագիտացիայի բնաւորութիւն: Միաձայն:

Փաստ. 330-28

Բ 2.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ՈՍԿԱՆԱՊԱՏԻ ԶԻՆԱՊԱՀԵՍՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Ռ[այո]նական ժողովի (1908 թ. Յուն- ւարի) որոշումներին գինական յանձնաժողովն ամսոյն 1ից մինչեւ 11ը ստուգելով եւ արձանագրելով Ոսկանա- պատի պահեստներում գտնուած պատրաստի գէնքերը եւ ռ[ազմամ]թերթը, պարտք է համարում զեկուցանել հետեւեալը.

1) Քաղաքի I, II եւ VII պահեստները իրանց մէջի ա- հագին մթերքներով գտնուած են ակներեւ վտանգի առ- ջեւ, գրկուած լին[ել]ով որեւէ կոնսպիրացիայից⁶. անհը- րաժեշտ է անմիջապէս տեղափոխելով ապահովել (կա- րելի է փոխադրել 1 չոր թաքստոցը).

2) Քաղցրաւենիքի IV պահեստը հնարաւորութիւն չեղաւ անձամբ ստուգելու տանտիրոջ անհամաձայնու- թեան պատճառով, սակայն ընկեր Գրիչան վստահաց- րեց որ ապահով է տեղը եւ ներկայացրեց եղածի ցուցա- կը:

3) III պահեստը բաւական ապահով է եւ կոնսպիրա- տիւ⁷, սակայն խոնաւ է եւ գուրկ կանոնաւոր օդանցք- ներից. ծայրերը⁸ եւ աւազը գտանք խոնաւ դրութեան մէջ: Անհրաժեշտ է մի կերպ միջոցներ ձեռք առնել օ- դանցքները կանոնաւորելու եւ հնար եղածին չափ շուտ շուտ մաքրել եղած ապրանքները:

4) V Բ[ալա]խանի եղած գէնքերը տեղ տեղ գտանք շատ անմիջապէս դրութեան մէջ, մի երկու տեղ գրեթէ փտած հողի մէջ: Այդ անհոգութեան եւ անբարեխղճու- թեան առթիւ յայտնում ենք մեր դժգոհութիւնը տեղա- կան մարմինն եւ հրաւիրում Կ. Կոմիտէի ուշադրու- թիւնը: Պահեստներից մէկը անկարելի եղաւ ստուգել, մի քանի տեղ ձեռքերում պահած գէնքերը բաւական խնամքով էին պահուած: Առաջարկում ենք խոնաւ տե- դերից եւ վախկոտ անհատներից վերցնել եւ ապահովել որոշ կէտերում, պատասխանատու մարմնի հսկողու- թեան տակ:

5) VI Բ[իբի] [էյ]բաթի պահեստներից ստուգուեց մէկը որը թէ ապահով էր եւ թէ չոր, միւսները անմատ- չելի եղան եւ բաւականացանք կանոնաւոր ներկայաց- րած ցուցակներով:

6) IX Հրայրի մօտ եղածները ստուգել չկարողացանք անմատչելիութեան պատճառով. տեղական ընկերը վստահեցնում է, որ շատ ապահով է եւ չոր. բաւակա- նացանք կանոնաւոր ներկայացրած ցուցակով:

7) Անհատների մօտ եղած գէնքերի քանակը ստուգել չկարողացանք, քանի որ չկար ցուցակ, բաւականացանք ընկերների յիշողութեամբ մի կերպ կազմած ցուցակով. չեչտում ենք, որ այս ձեւը եւ վերաբերմունքը շատ ան-

կանոն է եւ չի ապահովում կազմակերպութեան մթերք- ների անկորուստ եւ ապահով լինելը: Անհրաժեշտ է ժո- ղովել եւ միմիայն տալ նրանց, որոնց որ եւ գործ է յանձնուում.

8) Գաւառական մարմինների ցուցակները չկարողա- ցանք ստանալ եւ հնարաւորութիւն էլ չուներանք ան- ձամբ շրջելու, ուստի պարտաւորեցնում ենք շտապով ներկայացնել, ընդհանուր հաշիւներին կցելու համար:

9) Յանձնաժողովս եկաւ այն եզրակացութեան, որ պահեստներում ապրանքները պահուած են մեծ մա- սամբ խառը, անսխտեմ, եւ մասամբ ժանգոտած, եւ որ ցաւալին է վտանգաւոր դրութեան մէջ (փոշի, խմոր⁹ եւ այլ բաներ խառը միասին). առաջարկում ենք Կ. Կոմի- տէին ցուցակագրուած ապրանքները դասաւորել եւ կանոնաւորութեան տակ պահել, որի համար անհրա- ժեշտ է այն տեսակը, ուր ցուցակագրուած է բոլոր գէնքերը, լրացնել եւ միշտ կանոնաւոր կերպով գրել նոր աւելացածները՝ N-ով, սխտեմով եւ այլն, մուտքի եւ ելքի հաշիւները պահել օրդերներով, նշանակելով N- ները եւ սխտեմը. ունենալ մի տեսակ, որի մէջ բանալ հաշիւներ ամէն տեսակին առանձին ռեեսկոնտրո¹⁰ մուտքի եւ ելքի: Պարտաւորեցնել պահեստապահին որ առանց պաշտօնական օրդերի ոչ մի ելք չանել:

Կ. Կոմիտէն պարտաւոր է տարեկան երկու անգամ ցոյց տուած ձեւով տախտակ-հաշուեցոյցով հաշիւ ներ- կայացնել Ար[եւելեան] Բիւրոյին պահեստներում եղած մուտքի եւ ելքի ստոյգ հաշիւները:

Վաճառուած ռ[ազմամ]թերթի կամ աւելորդ գէնքե- րից գոյացած գումարը փոխադրել անձեռնմխելի Արե- ւելեան Բիւրոյին կամ ծախսել միմիայն նրա թոյլտը- ւութեամբ:

Յանձնաժող[ով]ի անդամներ
Ա. ՄԵՂԱԻՈՐԵԱՆ
ԴԱՐՎԻՇ

15 VII 1908թ.

Յ. Գ.— Առաջարկում ենք պահեստապահ նշանակել ամենաապահով մարդոց, որոնց կողմնակի գործ չպէտք է յանձնել ոչ ոստիկանական եւ ոչ ահաբեկչութեան:

6.- Գաղտնապահութեմ, ոստիկանական հետապնդում պաշտպանուած:
7.- Ընդատակեայ, կառավարութեմն գաղտնի:
8.- Փամփուշտները:
9.- Պայթուցիկի պատրաստութեան բաղադրիչ միջոցներ:
10.- Բնագրին մէջ ուսատառ՝ հաշուեցուցակ:

Փաստ. 1540-28

Բ 3.- ՄԻ ՓՈՔՐԻԿ ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. ԸՆԴ. V ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

1.- 1908 թուի Յուլի 5-ից մինչև 1909 թիւ Մայիս 20, Արեւելեան Բիւլլետենի կողմից յանձնարարուեց շրջել կովկասի պ. 4. [պահեստ]ները,

- 1. ստուգել
- 2. բաժանել իրերը կատեգորիաների, եւ կազմել նոր ցուցակ,
- 3. միեւնոյն միտադրել էր նաեւ ընկ.ներ թորոսը, Ման. եւ Մատ.: Ամբողջ շրջանը մի քանի մասի բաժանելով, եւ շրջեցի Ապառաժ, Քար եւ Զրաբերդ¹¹ իւր շրջաններով:

Ապառաժ

- 1- Պ. 4. [պահեստ]ների դրուժիւնը, գաղտնապահութեան տեսակէտից՝ միտարարական է:
- 2- Ջ[էնք]երի դրուժիւնը բաւարար*:
- 3- Հաշիւի ստուգումը ճիշդ էր, աննշան տարբերութեամբ, որը պէտք է վերագրել սխալմունք համրանքի մէջ:
- 4- Պահեստապահը իւր պաշտօնի մէջ վստահելի է, բայց անձանօթ գործին:
- 5- Բաժանուեց կատեգորիաների. երրորդ տեսակը աչքի էր զարնում. բացատրուում է ինքնապաշտպանութեան ստիպողական պահանջով.
- 6- Չնայած իւր մեծ քանակութեան՝ ծախքերը մեծ չեն եղել:
- 7- Կազմուեց ընդ. ցուցակ իւր բոլոր մանրամասնութեամբ, որից մի օրինակը իրենց մօտ է, իսկ մէկը յանձնուած է Արեւ. Բիւրօ:

Զրաբերդ

- 1- Պ. 4. [պահեստ]ների դրուժիւնը գաղտնապահութեան տեսակէտից թոյլ:
- 2- Ջ[էնք]երի դրուժիւնը ոչ բաւարար:
- 3- Հաշուի մէջ խոշոր տարբերութիւն իւր նախկին հաշուի համաձայն. այս պակասը բացատրուում է պահեստապահի թուղթիւնից եւ կան կասկածներ անվրատահութեան: Այդ հանգամանքը ստիպեց հեռացնել պ. 4. [պահեստ]ներից պակասող տեսակը. կան նաեւ կասկածներ այն գինուորների վերայ, որոնք անմիջական գործ են ունեցել այս պահեստի հետ եւ որոնք այժմ պարապում են զ[էնք]ի վաճառականութեամբ**:

*) Բաւարար պէտք է ընդունել համեմատական չափով:
 **) Ջէնքի վաճառականութեամբ պարապում են այն բոլոր գինուորները եւ պահեստապահները, որոնց միջոցով անցեալներում մերոնք գործ են ունեցել:

- 4- Բաժանուեց կատեգորիաների:
- 5- Նայած իւր քանակութեան եւ արուած իւր գործողութեան՝ ծախքը համեմատաբար շատ էր:
- 6- Կազմուեց մի ընդհանուր ցուցակ, որից մի օրինակ իրենց մօտ:
- 7- Պահեստապահը իւր դերի մէջ չէ, բայց ունի գործից տեղեկութիւն:
- 8- Ունի զ[էնք]երի դրամական խոշոր ապառիկներ, մօտ 2000 ռուբլի:
- 9- Երրորդ տեսակը իր քանակութեամբ խիստ աչքի էր զարկում. դուրս դրուեց պ. 4. [պահեստ]ներից, ծախուեց մի մասը եւ մի մասն էլ ուղղակի ոչնչացուեց, որի հաշիւը եւ տեղեկութիւնը ժամանակին տրուած է Զին(ուորական) սեկցիային:

Քար

- 1- Պ. 4. [պահեստ]ների դրուժիւնը գաղտնապահութեան տեսակէտից թոյլ է:
- 2- Ջ[էնք]երի դրուժիւնը ոչ բաւարար:
- 3- Հաշուի մէջ խոշոր տարբերութիւն. այդ տարբերութիւնը բացատրուում է ոչ վստահելի մարդկանց ձեռքով կատարած տեղափոխողների եւ պահեստապահի անձնական ֆիզիքական թուլութեամբ, որը մօտ օրերս մեռաւ թոքախտից. յանձնուեց իւր օգնականին:
- 4- Ունին մեծ քանակութեամբ ցրուած զ[էնք]եր մասնաւոր անձանց մօտ. մարմնի կարգադրութեամբ է եղել այդ ցրումն, եւ այժմ իւրաքանչիւրի հետ մի պատմութիւն կայ. պատմութիւններ՝ որոնցով հետաքրքրուել միեւնոյն է կորցնել ժամանակ. ոչ մի հնարաւորութիւն չկայ ստուգելու իսկութիւնը. բացակայում է որոշ տոկոսներ:
- 5- Բաժանուեց կատեգորիաների. II եւ III տեսակները մեծ տեղ է բռնում. բացատրուում է ոչ մասնագէտ մարդկանց միջոցով կատարած գնումով. միեւնոյնը եւ ծայրերի⁸, որոնց մէջ կեղծը աչքի է զարկում:
- 6- Պահեստապահը վստահելի է եւ քիչ շատ հասկանում է գործից:
- 7- Կազմուեց ցուցակ որից մի օրինակ թողնուած է իրենց մօտ:
- 8- Երրորդ տեսակի մթերքները դուրս դրուեց պահեստից եւ ծախուեց, որի հաշիւը տեսնել վարի ցուցակի մէջ:

11.- Ապառաժ, Քար եւ Զրաբերդ՝ կուսակցական ծածկանուններն են յաջորդաբար՝ Ղարաբաղ-Սիւնիքի, Ալեքսանդրապոլի եւ Կարսի շրջաններուն:

Մի քանի լրացուցիչներ.— Գաղտնապահութեան բացակայութիւնը բացատրուում է այս ձեւով.— Ինքնապաշտպանութեան ժամանակ, երբ առիթ է եղել աւելի գործ ունենալ պ[ահեստ]ների հետ, դրան աւելացրու այն հանգամանքը որ իրենք իրենց աւելի ուժեղ են զգացել քան կառավարութիւնը, գաղտնապահութիւնը զանց է առնուել եւ տեղերը որ հրապարակի վերայ են եղել, մնացել է մինչեւ վերջին օրերը, թէեւ ձեռք առնուել են մի քանի պալիատիւ միջոցներ¹², բայց դրանք չեն կարող գալիք չարիքի առաջը առնել. հնարաւոր է այդ բոլորը իր ժամանակին յայտնուած է եղել, չի իրագործուել ըստ իւր պահանջի. պատճառ դրան Ղալաբլիսի պ. 4. [պահեստ]ի կորուստը. Սեւ քարի կորուստը բացատրուում է դրանով. դրան պակաս չի նպաստել նաեւ այն, որ գործողութիւններ են կատարուել պ. 4. [պահեստ]ների հետ առանց Զ[ինուորական] սեկցիայի գիտութեամբ:

Գործողութիւններ.— Մախուեց Զրաբերդի բոլոր երրորդ տեսակին. շխախտեց Քարի բոլոր երրորդ տեսակին, որի հաշիւը ստուգելի մէջ իմ հաշուի.

Տեղափոխուեց Կարինեանին¹³ N° 1-ից 10, N° 2-ից 10, N° 10/11 — 2 հատ:

Մուշ (Մուշեղի միջոցաւ) N° 1-ից 10 հատ,
 N° 1a-ից 3000 հատ
 Մայրեր⁸ 1450 հատ

եւ միեւնոյնին 4-ից, նաեւ զանազան իրեր, որի ցուցակը ներփակ ուղարկում եմ:

Ափ¹⁴ փոխադրուած.— N° 10/10a-ից — 6287
 N° 1a —ից — 4998
 N° 3a —ից — 1000
 Ափ — գումարով 12285 հատ

12.- Անկատար, ոչ արմատական միջոցներ:
 13.- Պէտք է հասկնալ Կարին, էրզրում:
 14.- Ափ ծածկանունով ծանօթ էր Արաքսէն հարաւ Գին Զուղայի մօտ գտնուող Ս. Ստեփանոս վանքը եւ անոր պատկանող Ղարաշամ գիւղի դաշնակցական կազմակերպութիւնը: Գոմ փոխադրուող գինւորները ամենայն հաւանականութեամբ սահմանուած էր օգտագործուելու Պարսկաստանի յեղափոխական կոմիտեան մէջ:

Գ. – ՔԱՐ-ԱԼԻՔ – ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ

Փաստ. 1538-14

Գ 1.– ՏԵՂԵԿԱԳԻՐ ՔԱՐ-ԱԼԻՔԻ ՇՐՋԱՆԻ

Քար-Ալիքի շրջանը ներկայումս կառավարում է տեղական կազմի միջոցով, որը կազմակերպված է վերջնականապես Յուզբաշի սկզբներին Ար[եւելեան] Բ[իւրոյ]ի լիազոր նրկայացուցիչ Սիգի¹⁵ ընտրութեամբ եւ բաղկացած է հինգ ընկերներից: Դրանցից միայն մէկն է երկու տարի շարունակ գործի մէջ եւ տեղեակ շրջանի հանգամանքներին, մէկը հրահրուած է անցեալ Նոյեմբեր ամսից իսկ միւս երեքը մեր նախկին գործող ընկերներից են եւ կազմի մէջ մտել են միայն Յուզբաշի սկզբներին:

Քար-Ալիքի սահմանները տարածւում են հիւս[իսից] մինչեւ Ախալքայաք, արեւելահիւս[իսից] մինչեւ Դիլիջան-Շամուտ¹⁶, արեւելահարաւից մինչեւ ապարանները, հարաւից մինչեւ Սարդար[ապատի] դաշտը, իսկ արեւմուտքից Ախուրեան գետը: Այս ընդարձակ տարածութեան վրայ ապրում է մօտաւորապէս 150,000 ազգաբնակչութիւն իր ծով կարիքներով եւ ծայրայեղ բռնութիւնների մատնուած: Ազգաբնակչութեան մեծագոյն մասը գիւղացիութիւնն է, որ կուլտուրապէս յետ մնացած եւ հողի սակաւութեան պատճառով տնտեսապէս հիւժժած է: Այդ տեսակէտից գաւառից ստացուող տեղեկութիւնները ոչինչ միջոցառական բան չեն խոստանում: Երբեմն Անդրկովկասի շտեմարան համարող Շիրակը այսօր ենթակայ է պարբերական քաղցի եւ առանց պետական օժանդակութեան անկարող է պահել իր գլուխը: Հողը շատ սակաւ է, եղածն էլ մշակում են հին ձեւով, որովհետեւ շիրակեցիներ խարխափում է տգիտութեան մէջ: Տնտեսական անկման թէեւ որոշ չափով հետեւում է բարոյական անկումը, բայց միեւնոյն ժամանակ նկատելի է, որ այս հանգամանքը քիչ չէ ազդում նաեւ նրա մտածելակերպի վրայ: Նա լաւ է զգում, որ ժամանակները փոխուել են, փոխուել են նաեւ ապրուստի պայմանները, որ հարկաւոր է մի ելք գտնել այս ծանր կացութիւնից դուրս գալու համար: Թէեւ այսպիսի մտքերը քչերին են զբաղեցնում, միայն սակաւաթիւ երիտասարդութեան շրջաններում երբեմն միայն լրսւում են, որ ժողովրդի ցաւոտ վէրքերին դարման չի լինի կառավարութեան կողմից, այլ այդ հոգսը ամբողջապէս պիտի ծանրանայ իրան՝ ժողովրդի վերայ եւ բաւարարութիւն կը ստանայ նրա ըմբոստ հոգու ընդզուով եւ յեղափոխական ճանապարհով: Կեանքն իր պահանջներով ինքնին տրամադրել էր նրան դէպի վերջին ուղին. հարկաւոր էր օգտուել այդ հանգամանքից եւ պրոպագանդի միջոցով աւելի ցայտուն գծերով պատկերացնել կեանքն ու նրանից բխած պահանջներին բա-

ւարարութիւն տուող միջոցները — գիւղացիական միութիւնները՝ անարդարութիւնների, շահագործութիւնների եւ վաշխառութիւնների դէմ մաքառելու համար: Զգալով այդ պահանջը եւ իր անդամների մէջ չգտնելով ազատ պատրաստի մարդ պրոպագանդի համար, Ալիքի մարմինը 1907 Նոյեմբերին դիմեց Ար[եւելեան] Բ[իւրոյ] ընկերներին եւ խնդրեց այդ գործի համար յարմարաւոր մարդ: Գտնուեց այն յանձին Ճ-ի, որը դժբախտաբար ոչ մի անգամ չայցելեց գիւղը — թէեւ մարմինն ստիպուած եղաւ մի քանի ամիս իր սուղ միջոցներով պահել նրան: Այսպիսով շրջանի նկատմամբ այս փոքրիկ անյաջող քայլից յետոյ ոչինչ չէ կատարուած մինչեւ այժմ: Շնորհիւ այս եւ ռէակցիայի սաստիկ ուժեղանալուն գիւղն ամբողջովին ընկել է յեղափոխութեան արեւմտեային անձնական հաշիւներին բաւարարութիւն տուած լինելու համար, ոչ միայն չի արհամարհում նրան, այլ եւ կառավարութեան ձեռքին գործիք դառած պատրաստ է ամենայն տեսակ խայտառակութեան եւ խուլիգանութեան: Այսպիսի ձախող պայմաններում գարմանալու էլ չէ, որ գիւղական վաշխառուն, կուլակը գիւղի միակ տէրն է եւ ամէն մի հասարակական գործ, լինի դա դպրոցական, հարկաբաշխական, հողաբաժանութեան, կամ նոյնիսկ գիւղական ամենաստորին պաշտօնեաների ընտրութիւնը վճռում է դրանց շահերի տեսակէտից: Կան գիւղեր, որտեղ տասնեակ տարիներով հողաբաժանութիւն չի կատարուել, գիւղական ազդեցիկները, տարիների ընթացքում յայտնի եւ անյայտ միջոցներով սեփականացրել են համայնական հողերի մեծ բաժինը, իսկ կող ու բէկերի ծանրութիւնը դեռ եւս շարունակում է մնալ իր ամբողջ ծանրութեամբ գլխաւորապէս հողագուրկ եւ սակաւահող մեծամասնութեան վերայ: Այս ողբալի պատկերն ընդհանուր է — ամբողջ շրջանի նկատմամբ միջոցառական երեւոյթներն հազուադէպ են:

Միակ, բայց փոքրիկ միջոցառական երեւոյթը այդ տեղ այն է, որ վերջերս կարծէք մեր գիւղացիք զգացել են համագործակցութեան կարեւոր նշանակութիւնը իրանց տնտեսական կեանքում: Կոռպորացիան սկսել է մուտք գործել նաեւ հայ գիւղը. բացի փոխատու խնայողական բանկից, Թոմարտաշ գիւղում մի խումբ երիտասարդների ջանքերով ինքնաբերաբար հիմնուել է սպառողական մի խանութ, որը թէեւ սկզբում հալա-

15.- Սիգ: Ժածկանունն էր Սիմոն Վրացեանի:
16.- Շամուտ՝ Ժածկանունն էր Դիլիջանի:

ծանքի եւ արգելքի էր ենթարկուած հարուստների դրոշմամբ տեղական պրիստուակի¹⁷ կողմից, բայց վերջերս հիմնադիրներին յաջողուեց հաստատել տալ խանութի կանոնադրութիւնը եւ գործը դնել օրինաւոր հիմքերի վերայ, որը արդէն որոշ ժողովրդականութիւն է վայելում գիւղացիների շրջանում:

Կազմակերպչական տեսակէտից այժմ մեր շրջանի բոլոր գիւղերը ոչինչ չեն ներկայացնում իրենցից. կան միայն այստեղ այնտեղ երիտասարդ անհատներ, որոնք իբրեւ մեր նախկին գործուն ընկերները շարունակում են կրել իրանց վերայ կուսակցութեան անունը, սակայն առանց գործնականապէս ցոյց տալու իրանց ինչ լինելը: Վերջերս միայն, շնորհիւ ամէն կողմից գլուխ բարձրացրած հայածանքների, մեր նախկին ընկերներից ու մանց մէջ ցանկութիւն առաջացաւ մօտենալու նորից կազմակերպութեան այն էլ լուր միայն հովանաւորութիւն գտնելու դիտաւորութեամբ: Ցանկալի կը լինէր ի հարկէ շահագործել այս հանգամանքը, սակայն տեղական կազմը անկարող է եղել այդ ուղղութեամբ գիւղերում որեւէ քայլ անելու: Ինչ վերաբերում է քաղաքին, պէտք է ասենք, որ այստեղ գոյութիւն ունէին մի քանի արհեստակց. միութիւններ եւ գործակց. ընկերութիւն: Սրանց մտաւոր առաջադիմութեան նկատմամբ դարձեալ այնքան քիչ է արուած, որ կեանքի ձախող պայմանների շնորհիւ փոխանակ առաջադիմելու, քայքայուելու անհետացել են: Ամէնից լաւ եւ ուժեղ կենդանութեան նշաններ էին ցոյց տալիս գործակց. միութիւնը, դերձակների բանուորները եւ մասամբ էլ կօչկակարների բանուոր[ական] միութիւնը: Վերջինս իր գործադուրով առաջ բերեց մի ահագին շփոթութիւն եւ անյաջողութեամբ վերջ դրեց նրա գոյութեան: Կային հաց[թուխ] բանուորների, նալճիների, մխչիների եւ դեօգիջիների միութիւնները — մանաւանդ վերջին երեքը — իրանց կեանքով մեծ հոգսեր էին կազմի համար: Ամբողջ տարուայ ընթացքում նրանք ունեցել են հազիւ մի քանի ամիս խաղաղ կեանք. մնացած ժամանակը ամբողջովին նուիրած է եղել գործատէրերի եւ իրանց մէջ ծագած վէճերի, որ ի դէպ ասել կազմի դերը բանուորական շարժման մէջ լաւ չըմբռնելու համար — ամէն մի միջնադէպի համար դիմում էին անմիջապէս կազմին, թէեւ ունէին իրենց վարչութիւնները եւ խորհուրդը: Երբեմն հանգամանքներն այնպէս են բարդուել, որ ստիպուած է եղել մարմինը մարդ հրահրելու Բ[իւրոյ]ից միջնադէպին վերջ տալու համար, ինչպէս այդ եղաւ 1908 թ. վերջերին: Ար[եւելեան] Բ[իւրոյ]ի ներկայացուցիչը հազիւ կարողացաւ խաղաղ վախճան տալ այս անհանգիստ վիճակին, թէեւ երկու ամիս յետոյ նոյնը նորից բարձրացաւ եւ այս անգամ մեր մասսան ուղտիմատում դրեց — կամ բռնի ուժով բաւարարութիւն տալ եւ զսպել գործատէրերին կամ թոյլ տալ շարունակելու իրենց նախկին յարաբերութիւնը գործատէրերի հետ, որ նրանց հայեցակէտով աւելի լաւ էր քան կազմակ. հովանու տակ մտնելը: Այսպէս տարուայ վերջին այդ խմբերն էլ հեռացան եւ սրանց աշխատավարձը

պակասեց 20-25%: Բանուորական այս անյաջողութիւնները ունեն իրանց խոր եւ յայտնի պատճառները. նախ խոշոր չափով աչքի է ընկնում տեղական բանուորական մասսաների անգիտակ եւ անպատրաստ լինելը, բանուորական շահերի եւ նրանց պաշտպանութեան միջոցների սխալ ըմբռնումը: Պակաս բաժին չուներն այստեղ նաեւ բանուորական գործի ղեկավար ընկերները, որոնք մեծ մասամբ եղել են անպատրաստ եւ գործին թեթեւ կերպով նայող անհատներ: Բանուորական միութիւնների նպատակը հասկացուել է շատ նեղ մտքով եւ կոպէկային գծով հաշիւներից այն կողմը չի անցել: Հանդիպելով իր վարած տնտեսական կուլիների մէջ, որը արտայայտուել է միմիայն գործադուրներով եւ աշխատավարձի աւելացման պահանջով, խոշոր արտաքին արգելքների եւ նոյնիսկ ոստիկանական հալածանքների, բանուորութիւնը իր անյաջողութիւնների պատճառը անկարող է եղել ճիշտ կերպով ըմբռնելու աւելին կ'ասեմ, այդ խնդրով նա չի զբաղուել եւ նրան չեն էլ զբաղեցրել: Քաղաքական խնդիրների, աշխատաւորական եւ գործատէրի շահերի հակադրութեան, առաջինի ի սպառ իրաւագուրկ եւ երկրորդի հովանաւորեալ լինելու, ընտրողական ցենզի, մամուլի, խօսքի հաւաքումների եւ միութիւնների ազատութիւնը կաշկանդուած լինելու եւ դրանց դրդապատճառների մասին մեր բանուորութիւնը ոչինչ, կամ համարեա ոչինչ չգիտէ: Աւելորդ չեմ համարում աւելացնել նաեւ այն, որ բանուորական գործին խոշոր չափով արգելք են հանդիսացել նաեւ մեր ընկերների զանազան խմբակները, որոնք սկզբունքով դէմ լինելով աշխատաւորական կուլիին, օգտուել են բանուորների ամէն մի սխալից, բռնի ուժ են գործ դրել նրանց վրայ եւ համարեա բոլոր դէպքերում պաշտպան են հանդիսացել միմիայն գործատէրերին: Ալիքի գործի մէջ աչքի զարնող տեղ է գրաւում կար ու ձեւի կանանց խմբերի կազմակերպութիւնը ու նրանց գործադուրը: Այս դէպքում էլ կազմ. մարմինը շտապողութեամբ իր կէտ նպատակը չէ իրագործել: գործադուրի դիմումն այնքան շտապով է լինում, որ փոքրիկ անյաջողութիւնից առաջանում է մասսայական հիասթափութիւն եւ որ գլխաւորն է, կազմակերպութեան ուժի անկման ապացոյց, որպիսին ծանր արտայայտուեց միջոցների նկատմամբ: Համեմատաբար իրենց դիրքի վերայ մնացին եւ միմիայն գործ. միութիւնը եւ քաղ. «Ժալու» խումբը, որոնք իրանց մէջ ունենալով անհամեմատ աւելի ինտելիգենտ անհատներ, պահպանեցին կեանք եւ կենդանութիւն, որը վերջին սարսափների ընդհանուր ազդեցութեան տակ բաւականին թուլացաւ:

Գործակատարների միութիւնը վերջերս համարեա քայքայուելու նշաններ էր ցոյց տալիս: Կանոնաւոր ժողովներ չէր կայանում, հաշուետուութեան համար ընտրուած հաշուետուները մի ամիս աւելի ձգձգում են եւ չնայած յաճախակի դիմումներին թերանում են ի-

17.- Պրիստուակ՝ ցարական (գաւառական) ոստիկանապետ:

րանց տարրական պարտականությունները կատարելու մէջ: Միևս կողմից էլ գործակատարների մէջ առաջացել է մի նոր հոսանք, որը պահանջ է դնում լուծել միութիւնը եւ դրամարկղում եղած մօտ երեք հարիւրը բաժանել հաւասար իրանց մէջ: Յաւօք սրտի պիտի ասել որ այս հոսանքի գլուխ են կանգնած գիտակից համարուածներին ումանք, նախկին վարչութեան անդամներ, որոնք շահագործում են աւելի թոյլ եւ անգիտակից ընկերների տրամադրութիւնը ի վնաս այն գործի, որին իրանք երբեմն նուիրուած են եղել:

«Փայռ» խումբը նպատակ էր դրել պատրաստել իր միջին գործին պիտանի քարոզիչներ եւ գործնական մարդիկ, որ ի դէպ աւելի գոհացուցիչ չափով տարաւ իր պարտաւորութիւնը, թէ եւ կարող էր անհամեմատ աւելի բարձր լինել: «Փայռ» խումբը բաղկացած է 25-30 հոգի ինտելիգենտ անձերից եւ մինչեւ անցեալ Յունուարի վերջերը ունենում էր կանոնաւոր հերթական ժողովներ, շաբաթական մի անգամ, որտեղ զբաղւում էին կուս. ծրագրի եւ աշխարհահայեացքի լուսաբանութեամբ. մի երկու անգամ այդ խնդիրների շուրջը կարգացուցին խմբի յանձնարարութեամբ զեկուցումներ եւ ռեֆերատներ, որոնք ապա ընդհանուր քննութեան առարկայ էին դառնում: Յունուարից յետոյ երբ կովկասում ամէնուրեք հալածանքները ուժեղացան, դարեւորին նաեւ «Փայռ» խմբի կանոնաւոր ժողովները, որից յետոյ դժուարացաւ եւ նրա անդամավճարների գանձման գործը: Այդ խմբի միջոցները ուժեղացնելու համար անցեալ տարի ձեռնարկուեց ներկայացումներ եւ երեկոյթ, որոնք այնքան էլ յաջողութեամբ չպսակւեցին ընդհանրապէս ժողովրդի դէպի կազմակերպութիւնը վատ տրամադրուած եւ տնտեսապէս քայքայուած լինելու պատճառով: Ժողովրդի տրամադրութեան գլխաւոր պատճառն էլ ըստ նրա բացատրութեան, այն էլ, որ կազմակերպութիւնը ընդունելով նոր ծրագիրը եւ առաջ մղելով աշխատաւորական վարդապետութիւնը, մասնաւանդ Ալիքի պէս տեղում, զբաղւում էր եղբայրն եղբոր դէմ, մոռնալով իբր թէ ամենամեծ իտէալը — Տաճկահայաստանը — թէ եւ պիտի ասել, որ այս բացատրութիւնը բռնագրօսիկ էր — նրանց վատ տրամադրել էր շահերի ընդհարումը եւ այն, որ նախկին տարիներում իրանց դաշնակցական համարուողներին այժմ դուրս են վճռել իբրեւ աւելի կարողաւոր նիւթականի կողմից եւ բանտարականութեան հակառակորդներ: Բայց ամէնից շատ դէպի վատն է թեքել ժողովրդի տրամադրութիւնը 1907 թ. բ. վաճառականի առեւանգումը, որը կատարուած լինելով կուս. երկարամեայ անցեալ ունեցող ընկերների ձեռքով խոշոր հարուած հասցրեց կուս. պրեստիժին, թէ եւ երիտասարութեան շարքերում յաճախ են լինում այդպիսի ձեռնարկները խրախուսող կարծիքներ եւ նոյնիսկ դատապարտում են կուս. բարձր մարմինները այդ գործին միջամտելու եւ յանցաւորներին դատելու համար:

1908 թ. Ալիքում գոյութիւն ունէր մարտ(ական) խումբ, որի անդամները ընտրուած էին արհ. միութիւնների միջից: Այդ խումբը մօտաւորապէս կազմուած էր 20 հոգուց, Պանդխտեանի ղեկավարութեամբ: Ամբողջ ութն ամիս պարապեց նա իր խմբի հետ, վարժեցնելով նրանց զին. տարրական պատրաստութիւններ, մարմնամարզ(ութեան) եւ զէնք բանագնելու մէջ: Այդ խումբը կարիք եղած դէպքում տալիս էր մարդիկ զանազան պարտաւորութիւններ — փոխադրութիւն եւ այլն կատարելու: Նա մի անգամ խմբով դուրս է գնացել վարժութեան եւ փորձի: Այդ խմբի ղեկ-ուսուցիչը հայրենիք վերադառնալու պատճառով խումբը մնաց առ ժամանակ առանց մարզիչի, իսկ սրանից յետոյ վրայ հասան ընդհ. հալածանքի օրերը եւ նա էլ ինքն ըստ ինքեան մնաց անգործ — նուիրուելով իրանց անձնական գործերին — արհեստներին: Զինական գործն ու պահեստը վարում էր մինչեւ իր գնալը Պանդ(խտեանը) ու կազմի անդամ մէկը, իսկ սրանից յետոյ արդէն վարում էր զին. սեկցի(իայի) անդամ Պ., որ կանոնաւորեց, տեսակները բաշխեց, հաշիւները ի մի ամփոփեց եւ Ար(եւելեան) Բ(իւրոյի) որոշմամբ բաւական բան կարգի մտցրեց: Նա վարում էր նաեւ վրէժտոտ գործերը — որի նկատմամբ շատ քիչ բան է արել Ալիքը. թէ եւ սկզբում յոյս կար մեծ նպատակ: Այս էլ հանգամանքներից, բարդութիւններից բխած արգելք էր: Թէ զէնքի եւ թէ դրամ. ապառիկների վերաբերմամբ դիմումներ են եղել քանիցս զուտ ընկերական միջոցներով, բայց որովհետեւ այդ միջոցներն էլ նպատակի չհասցրեց, ուստի որոշուեց դիմել զին. ուժի, որ նոյնպէս անգործադրելի մնաց առաջացած քաղաքական պայմանների եւ դրամ չլինելու պատճառով: Դրամականի պատկերը պարզուում է այն համեմատութեամբ որ ներկայացրուում է, իսկ ինչ վերաբերուում է կազմակերպութեան մէջ մասնակցողների թուին, այն հասնում էր մօտ 800 մինչեւ կազմալուծումը: Ընդհանուր առմամբ կազմ. գործի թուլանալուն մեծ գարկ են տուել քաղաքական ուժակցիան, որ շատ է ազդել ոչ միայն ժողովրդական մասսաների, այլեւ ինտելիգենտ, երբեմն գործով տարուող անհատների վերայ: Վերջիններից ումանք յուսահատուել են, ումանք յոգնել կամ երկիրից մի կողմ են քաշուել, ումանք էլ շատ յայտնի պատճառներով հակառակ հոսանքի մէջ ընկնելով թշնամական դիրք են բռնել դէպի կազմը:

Կազմի գործով բանտ նստածների մասին այս բանը միայն կարելի է ասել, որ խուզարկութիւնները եւ ձերբակալութիւնները մեր քաղաքում չստացան այնպիսի լայն չափեր, ինչպէս որ կովկասի միևս հայաշատ վայրերում: Մայիսի մէջ ձերբակալուեցին միայն քաղաքում երկու հոգի Յ. Ղ. եւ Վ. Ա., որոնք այժմ ազատ են արձակուած. խուզարկութեան ենթարկեցին նաեւ մի քանի այլ բնակարաններ, սակայն առանց հետեւանքի: Այդ կողմից աւելի խիստ վերաբերմունք եղաւ գաւառի գիւղերից մի քանիսում, որտեղ խուզարկութիւններն ու ձերբակալութիւններն աւելի մեծ ծաւալ ստացան: Այժմ գաւառական բանտում նստած են մեր ընկերներից Վ. Նալբ. պահեստի գործով, երբ(այրներ) Վանօ եւ

Արտեմ պահեստապանները, որոնք արդէն դատապարտուած են Սիբիր մշտական աքսորի, Զերուանչ[?] գիւղից 7 հոգի դատուում են կազմ. դատապարտութեան գործով մի սպանութեան վերաբերեալ. վերջերս արձակուած են հոռոմցիներ եւ գիւղալուրացիներ մօտ 10 հոգի, որոնք նստած էին հողաբաժանութեան վերաբերող խնդիրների համար, իսկ մի քանիսը այժմ քննութեան տակ են: 1907 թ. ձերբակալուել ու ապա աքսորուել են Վարդանը, Եկորը եւ Գրիշը, որը փախել է աքսորից: Անցեալ տարի Անտառապատում¹⁹ կատարուած մի սպանութեան համար դատապարտել են տաժանակիր աշխատանքի Գոչոն եւ մի այլ ընկեր:

Մի քանի խօսք էլ Ընդհ. ժողովի համար եղած պատրաստութիւնների մասին: Ի նկատի ունենալով, որ այս ամառ պիտի գումարուի Ընդ. ժող. տեղական մարմինը դեռ Փետրուարից մտածում էր գումարել Երջանային ժողով, որտեղ պիտի մասնակցէին քաղ. խմբերից եւ բան(ուորակներ) միութ. ամէն 30 հոգուց մի մի ներկայացուցիչ եւ գիւղերից հրաւիրուած անհատ ընկերները, բայց հանգամանքները այնպէս դասաւորուեցին, որ այս ցանկութիւնը իրագործելու հնարաւորութիւն չեղաւ: Վերջերս միայն հնարաւոր եղաւ Ա(րեւելեան) Բ(իւրոյի) ներկայացուցիչ Ս(ի) ներկայութեամբ կայացնել փոքրիկ խորհրդակցութիւններ, որտեղ բացի տեղական մարմնից մասնակցում էին քաղ(աքի) ընկերներից մի քանի հոգի: Այդ ժողովների քննութեան նիւթն էր Ընդ. ժող. դրուելիք հարցերի պատասխանները: Հազիւ հնարաւոր եղաւ այդ խնդիրներից մի քանիսը ծեծել եւ եզրակացութիւններ դուրս բերել որը ստորեւ առաջ ենք բերում:

1. Դիտողութիւնները ցոյց տալիս, որ թուրքերի մէջ նկատուում է զինումն, որի համար գոյութիւն ունի յատուկ կազմակերպութիւն, որը հաւաքում է այդ նպատակով դրամական միջոցներ, ի նկատի առնելով, որ հայ-թուրքական յարաբերութիւնները վերջնականապէս դեռ չեն հարթուել, որ թուրք աղա-բէգ-խանական դասը միշտ էլ դժգոհ է հայերից, մասնաւանդ հայ բուրժուազիայից եւ առիթներ է որոնում նրան տապալելու, որ կառավարութեան ներկայ քաղաքականութիւնը հայերի նկատմամբ միշտ էլ ընդունակ է պրովոկացիոն դեր խաղալու, անկարելի չէ հայ-թուրքական նոր բարդութիւնների առաջանալը: Այդ պատճառով Ալիքի մի խումբ (8 հոգի) ընկերների ժողովը կարեւոր է գտնում, որ այդ հարցը քննութեան առնուի առաջիկայ Ընդհանուր ժողովում:

2. Քննութեան առնելով հասարակական-կուլտուրական հաստատութիւններին մասնակցելու հարցը, կարեւոր համարուեց, որ կուսակցութիւնը կազմակերպուած եւ ակտիւ կերպով մասնակցի բոլոր այն հաստատութիւնների կեանքին, որոնք մեր աշխարհ(ահ)

հայեացքի տեսակէտից յառաջադիմական են: Այդպիսի հաստատութիւն է ներկայումս եւ կաթողիկոսական հաստատութիւնը իր քաղաքական-կուլտուրական դերով մինչեւ այն ժամանակ, երբ այդ ֆունկցիաները յանձնեն ժողովրդին: Այդ պատճառով պէտք է մասնակցել կաթողիկոսի ընտրութեան եւ նրա գործունէութեան վերայ հսկողութիւն ունենալ (7 ձայնով):

Մէկ ընկերի կարծիքով կուսակցութեան մասնակցութիւնը հասարակական-կուլտուրական կեանքին մանրացնում է նրան, թուլացնում է նրա յեղափոխական թափը: Այդ պատճառով հաս. -կուլտ. կեանքին կուսակցորէն մասնակցիլը պէտք է մերժել եւ այդ թողնել անդամների ազատ կամքին: Միևս կողմից մեր մասնակցութեան եւ ամրացում է թէ կաթողիկոսի եւ թէ կղերականութեան նշանակութիւնը ժողովրդի աչքում եւ դրանով խոչընդոտ հանդիսանում մեր հիմնական նպատակին: Դրա համար կաթողիկոսի ընտրութեան չպէտք է մասնակցել (1 ձայն):

3. Քննութեան առնելով Ռուսաստանի ներկայ քաղաքական մոմենտը, ժողովը միաձայն որոշեց յանձնարարել մեր բարձր մարմինն նախաձեռնող հանդիսանալ Ռուսաստանի յեղափոխական եւ ընդդիմադիր տարրերից մի միջկուսակցական խորհրդաժողով գումարելու՝ գործակցութեան ընդհանուր տակտիկա մշակելու նրպատակով:

4. Միաձայն որոշուեց ընդունել սկզբունքով պետական եւ մասնաւոր գոյքերի գրաւումը կեդրոնացնելով գրաւման իրաւունքը կուսակցութեան բարձրագոյն մարմնի ձեռքը:

5. Ի նկատի ունենալով մեր գիւղերի ներկայ իրակաւութիւնը, որոշուեց առանձին զարկ տալ գիւղերում կոոպերացիային եւ գրաւոր-բանաւոր պրոպագանդին գիտակցութիւն առաջ բերելու եւ հաւաքական աշխատանքի վարժեցնելու նպատակով: Կազմակերպել վիճակագրական տեղեկութիւնների հաւաքումը գիւղերում:

6. Բանտարական քաղաքականութեան մէջ լինել զգոյշ ու չափաւոր. հաշուի առնել տեղի ու ժամանակի պայմանները: Արձարծել բանտարակութեան մէջ կոոպերացիայի գաղափարը, լայն պրոպագանդա վարել, բանտարակութիւնը հարբեցողութիւնից եւ նման ախտերից յետ պահելու նպատակով: Մեր բանտարակ(ական) կազմակերպութիւնների մէջ ուրիշ կուսակցութիւնների) անդամների չեն ընդունում: Այդպիսիներին՝ փոքրամասնութեան դէպքում կազմել խմբակներ, որոնք մեր միութիւնների հետ որոշ յարաբերութիւնների մէջ կարող են լինել:

Զեմստոլոյին²⁰ եւ առ հասարակ կառավարութեան ռեֆորմներին այնքան հաւատ չպէտք է ընծայել եւ պէտք է միջամտել միայն մեր ազիտացիայի նպատակով շահագործելու համար:

Ի դիմաց Գ-Ալիքի ընկերների ՄԱՆՍՈՒՐ

19.- Անտառապատ ծածկանուցն էր Դարաքի(խասի), Գերկայ Վանաձորի:
20.- Զեմստոլո՝ տեղական ինքնավարութեան խորհուրդ:

Գ.- ՆԱԲԱՀԱՆԳԻՍՍ – ՊԱԹՈՒՄ

Փաստ. 1538-4

Գ 1.- Հ.Յ.Գ. VI Կ. ԿՈՍԻՏԵԻ [ՊԱԹՈՒՄ] ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ

1907 Թ. Յունուարից մինչև 1909 Թ. Յունիս

Նաևաճանգատի²¹ արդի Կ. Կ. 1908 թ. Յունուար 1-ից ստանձնում է կուսակցութեան գործերը ամենա-ծանր պայմանների մէջ: Նախկին մարմինը միանգա-մայն քայքայուած դրութեան մէջ էր, որի պատճառով կազմալուծուած վիճակի մէջ էր նաև ամբողջ շրջանը: Նոր վերջացած թուրք-հայկական անմիտ կռիւների յի-շողութիւնը թարմ էր, որոնք թողել էին իրենց աւերիչ ազդեցութիւնը հայկական իրականութեան, մասնաւո-րապէս մեր կուսակցութեան վրայ:

Դաշ. IV-րդ Ընդհանուր Ժողովը հնչեցրել էր արդէն իր հեղինակաւոր ձայնը. դժգոհ տարրերի, մութ ուժե-րի, մամուլի անխնայ յարձակումների պատճառով մեր շարքերում սկսուել էր գտման պրոցեսը: Հեռանում էին անվստահելի, բախտախնդիր տարրերը, հեռանալիս իւ-րաքանչիւրը կարծես պարտք էր համարում մի վնաս, մի հարուած հասցնել Դաշնակցութեան: Մեր կուսակ-ցութիւնը ամենավտանգաւոր ճգնաժամն էր ապրում. նա պիտի խմէր դառնութեան բաժակը մինչև յա-տակ... Միհրանական ռէակցիոն շարժումը պարարտ հող էր գտել մասնաւորապէս Նաևաճանգատում, որով-հետեւ հայ ազգաբնակչութեան, մանաւանդ աշխատա-ւորութեան ստուար մասը կազմում էին տաճկահայե-րը: Այդ խուլիզանական շարժման պատճառով առաջ էին եկել զանազան ինտրիզներ ու թայֆայական կռի-ւներ նոյնիսկ մեր շարքերում: Ռուսաստանում ընդհա-նուր յեղափոխութեան պարտուելը, կառավարութեան միապետական բռնակալ ռեժիմի արագ աճումը, տնտե-սական ընդհանուր ճգնաժամը, անյաջող գործադուլնե-րը, գործարանների փակումն առաջ էին բերել լքումն. միևս կողմից սանձարձակութիւն եւ բարքերի ապակա-նումն: Կ. Կ. ի մարմինը քայքայուած էր. գործերը մի կերպ տանում էին Ղարիբ II եւ վերջերս էլ Արմէն: Վեր-ջինիս հեռանալուց յետոյ VI Կ. Կ. ի ընկերներից ոչ ոք չի մնում Նաևաճանգատում. դրամարկը 173 ռ. գումար-ով, արխիւր եւ կնիքը յանձնուում է ընկեր Ռոսկանին, որ նոյն Կ. Կ. ի օրով 1908-ի վերջերին հրաւիրուած էր իբր ազատ ընկեր սուրհանդակի գործով եւ պահում էր դրսի հետ յարաբերութիւն: Մի քանի ամիս Կ. Կ. de facto գոյութիւն չի ունենում. շրջանի գործերը վարում են Մ[եծ] Բ[աղաք]ից ժամանակաւոր եկած ընկերները եւ միացած տեղական ընկերներին սկսում են բանուորնե-րի մէջ միութիւններ կազմակերպել: Փոխարինաբար

գալիս են ընկերներ Ծարաֆ, Ա. Դարբինեան, Քոչ եւայլն. սրանց անդուլ ջանքերով կազմակերպուում է պրոպագանդիստների սեկցիա, որը սուղ ժամանակում հնարաւորութիւն չի ունենում բաւարար պատրաստու-թիւն ձեռք բերել եւ օգտակար դառնալ մեր անգիտա-կից մասսային: Վերոյիշեալ ընկերները կազմակերպում են հին, կիսաքայքայուած խմբերից արհեստակցական եւ բանուորական միութիւններ: Միայն Նաևաճանգա-տում քայքայուած խմբերի թիւը 98 էր 1500 անդամնե-րով:

Գործարաններում եւ արհեստակցական աշխատա-նոցներում միութիւնների կազմակերպութիւնը աջո-ղութիւն է գտնում, իսկ մնացած մասերում, մասնաւո-րապէս շոգենաւային եւ այլ արտեղներ²² մէջ դանդա-ղում են ու խոյս տալիս կազմակերպուելուց գլխաւո-րապէս տգիտութեան եւ թայֆայական խժոժութիւն-ների պատճառով: Սակայն բանուորների այս մասը միանգամայն հեռու լինելով Դաշնակցութեան աշխար-հահայեացքի պարզ տարրերի գիտակցութիւնից, միա-ժամանակ իրենց համարել են հին, իսկական դաշակ-ցականներ: Սրանք էլ, ի վերջոյ համաձայնում են մտնել միութիւնների մէջ Դաշնակցութեան հովանաւորու-թիւնը վայելելու համար. եւ որպէսզի բացասական եւ վնասակար տարր չդառնան, ընկերները սրանց եւս ա-կամայից կազմակերպում են դաշնակցական միու-թիւնների մէջ:

Դիտուած է, որ թէ բանուորներին եւ թէ արհեստակ-ցական միութիւններին առաջնորդել է առաւելապէս տնտեսական շահը եւ դրանով պիտի բացատրել այն հանգամանքը, որ գալիս համախմբում էին նոյնիսկ օ-տար ազգի աշխատաւորներից Դ-եան շուրջը՝ տարուած նրա հմայքից-ոյժից եւ համոզուած, որ նա միայն յաջո-ղութեամբ կարող է իր պահանջներին զոհացում տալ, ուստի շարունակ գործադուլների պահանջներ են դրել-եղել են դէպքեր, որ Դաշնակցութեան կողմից գործա-դուլային պահանջներն անյարմար եւ ոչ տեղին համար-ւելով՝ մերժուել են: Այդպիսի դէպքերում օտարազգի

21.- Կովկասի եւ Ռուսաստանի 10 Կ. Կոմիտուեի Ընդհանր թողկացած ցանցին մեջ, Նաւահանգիստ-Պաթումը վեցերորդ դիրքը կը գրաւէր եւ կը տարածուէր Սեւ ծովու հարաւային, ա-րեւելեան եւ հիւսիսային գօտիներում մեջ:
22.- Արհեստակցական միութիւններում:

բանուորները հեռացել են Դ-ից. անշուշտ դեր է խաղա-ցել եւ այն հանգամանքը, որ նկատել են Դաշնակցու-թեան հմայքի նսեմանալը. աւելի ազդել է վրացի Ս[ո-ցիալ] դ[եմոկրատ]ների անդուլ պրոպագանդան, թէ Դաշնակցութիւնը բուրժուական կուսակցութիւն է եւ բանուորներից հաւաքած կռակներով նա ջանում է իր ազգային նպատակներն իրագործել:

Մեր միութիւնները մասնաւորապէս շոգենաւային եւ նման արտեղներում աշխատողները, մանաւանդ բուն երկրացի՝ տաճկահայատակները ընդհանրապէս խոյս են տուել տնտեսական եւ քաղաքական գործա-դուլներից ու պահանջներից, գլխաւորապէս այն պատ-ճառով, որ Մ. Դ. վրացի եւ ռուս բանուորները խարդա-խութեամբ եւ տմարդօրէն գրաւել են մերոնց տեղը (օր-ֆոթի, Օտեսա եւայլն): Գործարանային աշխատանոց-ներում աշխատանքի կամ գործադուլ յայտարարելու պահանջներով արտայայտուում էին մասնաւորապէս կովկասեան գիւղացի բանուորներ, որոնք իրենց պա-հանջները մերժելու եւ գործարանը փակուելու դէպ-քում կարող էին իրենց տուն վերադառնալ եւ մի կերպ գլուխ պահել: Տաճկահայ բանուորները գործարանի հաւանական փակումից վախենալով եւ չունենալով ա-ռաջինների յարմարութիւնը՝ սուր պահանջներից խու-սափել են:

IV Ընդհանուր Ժողովի գումարման միջոցներին Նաւահանգատում տեղի են ունենում տխուր դէպքեր տնտեսական հարցի շուրջը. դրանք են.

1- Մեր մարտիկ եւ յուսալի ընկեր Սիմէոնի եւ եղբոր՝ Յովհաննէսի սպանութիւնը շահագրգռուած վրացի, թուրք բանուոր խուժանի կողմից. վրէժ հանելու նպա-տակով մեր տղաները սպանում են նաեւ Բ. օրբերին երեք [?] վրացի, որոնցից մէկը լինում է մի անմեղ պրոպա-գանդիստ: Սրանում են հայ-վրացական յարաբերութիւն-ները. առաջ գալիք վտանգը խափանելու համար կազմը-ւում է միջ կուսակցական մի մարմին տեղում եղած կուսակցութիւններից, որը իր հրատարակած թուրքիկ-ներով վերջ է դնում թշնամական յարաբերութիւննե-րին եւ մշակում միջոցներ ապագայում նման դէպքերի առաջն առնելու: Միջոցներից մէկն էր, որ ընկերու-թիւնների մէջ նոր բանուորների ընդունելութիւնը ըստ ազգութեան պիտի համեմատական չափով լինէր: Մի քանի գործարաններում, ուր հայերը քանակով գերիշ-խող են եղել, վրացիք պահանջ են դրել համեմատական չափը այնտեղ եւս գործադրել, այսինքն հայ բանուոր-ներին հեռացնել եւ վրացի դնել տեղը. այդպիսի դէպքե-րում մեր կողմից պահանջ է եղել երկաթուղու ծառա-յողներին վերաբերմամբ եւս մտցնել համեմատական չափը: Վրացի «ընկերները» չեն համաձայնել, հասկաց-նելով որ այդ տեղերը մոնոպոլիա են վրացիներին հա-մար: Որոշումներից մէկն էլ այն էր, որ բանուորների շահը միասին պիտի պաշտպանել. սակայն դէպքեր

եղան, երբ մեր կուսակցութիւնը մենակ մնաց. Մ. Դ.-նե-րից միայն մի անհատ է մասնակցել Սեւերի Օրշէլ-ի²³ ընկերութեան հետ. բանուորները (արտել) պայմանա-ւորուել էին, որ սոյն ընկերութեան նաւերը իրենք դատարկեն: Մի անգամ նոյն ընկերութեան նաւերով գալիս է Սիտերիտեսի (ընկերութեան) ապրանքը: Սիտե-րիտեսի ընկերութիւնը ուզում է իր բանուորներով ի-ջեցնել ապրանքները: Սեւերի Օրշէլ-ի²³ արտելը իր պայ-մանների խախտումն տեսնելով եւ իր իրաւունքների ոտնահարումն՝ արդար բողոք է բարձրացնում եւ հա-կառակում: Մէջ է մտնում կառավարութիւնը իր կո-զակներով պաշտպանում Սիտերիտեսին, որի հետ հա-մաձայն էր եւ Սեւերի Օրշէլ-ի²³ ընկերութիւնը: Այսպի-սի աչք ծակող անարդարութեան դէմ կուռելու եւ ճշը-մարտութիւնն ու բանուորների շահը պաշտպանելու համար միայն մեր կուսակցութիւնն է հրապարակել-նում: Դաշնակցութեան պահանջով Ս. Օրշէլ-ի²³ ընկե-րութիւնը ստիպուում է իր գլխաւոր կանդորի²⁴ կար-ծիքն իմանալ այս դէպքի առթիւ: Պատասխանը թէ եւ յօգուտ Սիտերիտեսի է լինում եւ ի վնաս Ս. Օրշէլ-ի²³ ար-տելի, բայց Դաշնակցութեան պահանջով վնաս կրող արտելը ստանում է 400 ռուբլի:

Երկրորդ ցաւալի դէպքը Նաևաճանգատում մեր փորձուած մարտիկ ընկեր Սմբատի եղբրական սպա-նութիւնն է մի քանի կոպիտ հայ դաւադիր բանուորնե-րի կողմից. չարագործը գտնուում է եւ ենթարկուում տե-ռորի. սրան մասնակից եղող երկու հոգու Արեւել. Բիւ-րոն աքսորում է Նաևաճանգատից եւ դնում Ոսկանա-պատի²⁵ Կ. Կ. ի տրամադրութեան տակ: Այս սպանու-թիւնից երկու օր առաջ Հ. Յ. Դ. ահաբեկիչների խումբը (Սմբատի առաջնորդութեամբ) փառաւոր աջողու-թեամբ գործադրել էր Շամի²⁶ հայ եւ թուրք ընկերների մահապիճիւր Վանի կուսակալ Ալի բէգի վրայ. այս տե-ռորը թողնում է խոշոր տպաւորութիւն հասարակու-թեան վրայ եւ համակրութիւն գտնում հայ ու թուրք ժողովուրդների կողմից:

Այս անցուդարձի ժամանակ կուսակցութիւնը դեկա-վարում է մի քանի ընկերների կողմից, որոնք ժամա-նակաւոր գալիս փոխարինում են իրար:

Գործերը այսպէս ընթանում էին, երբ յաջողում է 1907 թ. Դեկտ. 20-ից գումարել Նաևաճանգատում շրջա-նային ժողով: Այս ժողովը ունենում է 19 նիստ, զբաղ-ւում շրջանի վերակազմութեան հարցով եւ Մ. Բ. ում²⁷ կայանալիք ռայոնական ժողովի օրակարգով, որին մասնակցելու համար ընտրում է երկու պատգամաւոր:

Շրջանի գործերը այնուհետեւ կանոնաւորութեամբ

23.- Ռուսատու:
24.- Գրասենյակի:
25.- Պաթուի:
26.- Վասպուրականի:
27.- Մեծ-քաղաքում թիֆլիսում:

տանելու համար ընտրում է Կ. Կ.-ական մի մարմին 5 հոգուց բաղկացած:— Կարմին, Շալո, Դարևիչ, Սպարապետ եւ Խրիստ: այս մարմինը իր գործունեությունը սկսում է 1908 թ. Յունուար 1-ից եւ մինչեւ օրս տանում շրջանի գործերը: Նոր մարմինը շրջանի նախկին հաշիւների եւ գործերի պատասխանատուությունը իր վրայ չի առնում, որովհետեւ նախկին մարմինը գոյություն չուներ, որպէսզի կանոնաւոր հաշուետուութիւն ներկայացնէր: Կ. Կոմիտէն առաջին օրից հրաւիրում է վճարական ձայնով ընկեր Որսկանին: սրան եւ իր անդամ՝ ընկեր Դարևիչին պահում են որպէս ազատ ընկեր²⁸. վերջինս շրջանը պիտի շրջէր եւ գործէր: Առաջին օրերից հրաւիրուել է նաեւ ընկեր Սկ-ին եւ ձեռնհաս պատահական ընկերներից օգտուել՝ զանազան յանձնարարություններ անելով: Մեկուսացրել է իր կազմից Խր-ին, դէպի գործը թող վերաբերմունք ցուցնելու, եւ երկրորդ՝ հասարակական-ծխական դրամներից մի գումար վատնելու համար, որ խնդիրը պարզելուց եւ պահանջից յետոյ յանձն է առնում վճարել: Ժամանակի ընթացքում ընկերների պակասի պատճառով հրաւիրուել է շրջանը պատելու համար ընկեր Ղարիբ 1-ը, իբր ազատ ընկեր փոխարինելու Դարևիչին, Սեպտեմբերից հրաւիրել վրձնական ձայնի իրաւունքով ընկեր Վազրիկին: Որսկանին փոխարինելու հրաւիրուել է Բաբկէն: Կազմը իր մեծամասնությունը միշտ էլ պահել է:

Նոր Կ. Կոմիտէն իր առաջին անհրաժեշտ գործը համարում է շրջանի վերակազմութեան հարցը: այդ նպատակով եւ հաշուական գործերը մաքրելու համար մի քանի անգամ ընկերներ է ուղարկել, որոնք, պիտի խոստովանել, որ անքան էլ մեծ յաջողություն չեն ունենում տիրող աննպաստ պայմանների շնորհիւ: Անհրաժեշտ կարիք է զգացուել մնալուն պրոպագանդիստների, մի հանգամանք, որ շեշտուել է նախկին եւ վերջին շրջանային ժողովներում բոլոր մարմինների կողմից:

Բաց թողնուել են կազմակերպական եւ պատժական թուղթիկներ: Մարմինը աշխատել է եղած միութիւնների վրայ նորերն աւելացնել եւ մասնաւորապէս վերջերս ոյժ է տուել քաղաքական խմբերի կազմակերպման:

Տուել է եւ պատժական որոշում, ումանց շարքերից հեռացնելով, եւ ումանց աքսորում, որոնք ազդում են մեր անդիսցիպլին շարքերին: Այդ միջոցներին ստիպւել է դիմել մարմինը վերջ տալու համար տիրող անարխիան, տգեղ կուլաները, որոնք երբեմն գէնքի դիմելուն էին դառնում:

Շամիր²⁸ ընկերների միջոցով ջանացել է կազմակերպել համերկացիների միութիւններ, որ յաջողութիւն չի ունեցել:

Կազմակերպական գործի համար անհրաժեշտ էր դրամ, իսկ եղածը 173 ռ. էր: մնացածը՝ մոռացուած պահանջներ եւ անյուսալի ապառիկներ էին: բացի այդ մարմին վրայ կային պարտքեր: Նիւթական նեղ դրու-

թիւնից դուրս գալու համար ձեռնարկել է հանգանակութեան թէ՛ Նաւ[ահանգստ]ում եւ թէ՛ Կարմիր ու Խառն²⁹ քաղաքներում: այս հասոյթի մի մասը (2000 ռ. երկու հազար) փոխադրել է Պ[ոլսի] Պատասխանատու մարմինին Արեւել: Բ.ի համաձայնութեամբ, մի մասով վճարել է նախկին Կ. Կոմ.-ի թողած 1100 (տոկոսով 1177 ռ.) պարտքը մշեցի որբերին: Վճարել է Ծաղկաձորի ընկեր թշուառի պահանջը 347 ռ. տուել է նաեւ Ապաստանի³⁰ 1908 թ. ծախսերի պահանջը 377 ռ. մնածացն էլ իր պէտքերին ծառայացնել:

Տրուել է տեւորի 5 վճիռ, սրանցից մէկը միայն գործադրուեցաւ Ապաստանի մէջ, որի մանրամասնութիւնը հետեւեալն է:— 1908 թ. ընդհանուր ապստամբութիւններին հայերն էլ են մասնակցել: Մեր ընկերներից Վահանին մեղադրում էին այդ գործի մէջ եւ մի տարի բանտարկելուց յետոյ՝ անպարտ արձակել էին: Վահանը տեղացի մեր ընկերներից էր — յայտնի որպէս յեղափ. եւ կուսակցական գործիչ: Տեղական մատնութիւնների շնորհիւ նորից ուզում են ձերբակալել: սա պահում է: եղբօրն են բռնում նրա տեղ, որը կաշառքով ազատում է: Վահանը ծածուկ գիշերները երբեմն երբեմն այցելելիս է լինում իւրայիններին: Ինչպէս երեւում է Վահանի գոյութիւնը բացի խուլիզան տարրից, անհանգստութիւն է պատճառում կառավարութեան տեղական վարչութեան: որոշում են, ինչ գնով ուզում է լինի վերացնել մէջտեղից:

Մի երեկոյ լուր առնելով, որ տանն է, գալիս ձերբակալում են եւ առաւօտեան քաղաք տանելիս շօսէի վրայ սպանում են դանակով ու հրացանի բռնելով: իրենց այդ գազանական արարքը արդարացնում են, պատճառաբանելով որ փախչում էր եւ իրենց կոչին՝ կանգ չի առել, մինչդեռ վէրքի ձեւը եւ նախօրք ճանապարհի փակելը հաստատում են, որ սպանութիւնը դաւաճան ու վայրի հասկացողութեան արդիւնք է եղել: Կառավարութեան կողմից գալիս են եւ բերում բժիշկ, որոնք ամենայն ինամբով իրողութիւնը ծածկում են: Տանող ստրաժնիկները³¹ գլխաւոր Սերգէյ Կազակովը մի քանի տեղ ասել է, թէ «յեղափոխականներին հարկաւոր չէ դատել, այլ ուղղակի պիտի խփել»: Կասկած կայ, որ ուղղութիւն տուողը եղել է տեղի գաւառապետը: Կ. Կ. ուղարկեց երկու ահաբեկիչ՝ երկու հայ մատնիչների, որ մեծ դեր էին խաղացել Վահանի սպանութեան մէջ եւ Սերգէյ Կազակովին վրայ կայացած մահուան որոշումը ի կատար ածելու: Հայ մատնիչներից մէկին քաղաքի մէջ յա-

28.- Այսինքն՝ գործիչ ընկեր:
29.- Կարմիրը՝ Դրիմսկ քաղաքի ծածկանուցն է. Խառնը անժամօք է սեզի, Խաւանաբար Խրիմի թերակղզիի այլ բնակավայրի մը ծածկանուցն:
30.- Ապաստան՝ Սոչիի կուս. ծածկանուցն է, իսկ Ծաղկաձոր՝ Քութայիսի:
31.- Պահնորոցերու, գիւղական ոստիկաններու:

ջողում է սպանել, իսկ միւսին մի քանի ամիս յետոյ տեղացի ընկերները փորձ են անում, բայց անյաջող անցնում: Ս. Կազակովը չափազանց զգոյշ է պահում իրեն:

Մարմինը հայ-յունական աղէտի առաջն է առնում, որ պիտի ծագէր մեր տղաների եւ յոյների մէջ պատահած կռուի շնորհիւ, ուր ընկնում է մեր մի ընկերի գրնդակից իրեն հետապնդող յոյն տղան: Վերջինիս ընկերը եւ շանտաժիստական հակումն ունեցող մի հայ տղայ միացած ուզում են վրէժն առնել եւ ահա այդ հանգամանքից չփոթութիւն առաջ կը գար երկու ազգերի մէջ: Ընդհարման վտանգը վերացնելու համար հրաւիրուում են յոյն հասարակութեան ներկայացուցիչներ եւ ստացւում նրանցից ստորագրութիւն, որ եթէ իրենց այդ տղաների կողմից քայլ արուի եւ Դաշնակցութիւնը պատասխանի, չտրուի այդ դէպքերին ազգային գոյն:

Նոր մարմին օրօք կանոնաւորում է գէնքերի պահեստը, որ մի ժամանակ խառն ու անկարգ դրութեան մէջ էր: Ձեռք է առնում միջոցներ կենտրոնացնել շրջանի վրայ հնուց մնացած գէնքերը, համաձայն կովկ. բայոնական ժողովի գինուորական սեկցիայի որոշման: Այս գործում մեծ յաջողութիւն եւ արդիւնք չի ստացւում փոխադրական աննպաստ պայմանների շնորհիւ:

Ստանում ու տարածում է կուսակցական եւ թուրք անլեգալ գրականութիւն:

Հրաւիրում է Նաւ[ահանգստ]ի շրջանի արհեստակցական միութիւնների ներկայացուցիչների ժողով եւ ընտրել տալով մի պատգամաւորի դրկում է Մ. Ք.²⁷ մասնակցելու Կովկաս Դաշ. արհեստ. միութեանց համագումարին:

Բանուորների եւ շահագործողների միջեւ միշտ եղել են անհամաձայնութիւններ: Դաշնակցութիւնը միշտ պաշտպան է հանդիսացել իր շարքերին:

Տեղումս գոյութիւն է ունեցել Հ.Յ.Դ. աշակերտական միութիւն, որ մեծ ապագայ էր խոստանում: Հրատարակեց երկու համար Բորբա³² ամսաթերթը եւ ղեկավար հանդիսացաւ Կովկասի Հ.Յ.Դ. աշակերտական միութեան: Համերաշխութիւն սրանց եւ մարմնի մէջ չեղաւ, որովհետեւ պահանջ էին դնում ունենալ առանձին կնիք եւ իրենց օգտին հանգանակութիւն անել:

Մեր օրօք Կարմիր խաչը գոյութիւն չի ունեցել:

Պարսիկ յեղափոխութեան հայթայթել է գէնք: իսկ Ատրպատականի մեր մարմինն մատակարարել գէնք, նաեւ ուղարկել 10 կռուող ընկերներ, որոնցից երեքը զոհուել են — Ստեփան Ազնաւուրեան, Յովսէփ Խոյսեյի (Սոպչի տեւորիստներից մէկը) եւ Մուրո Ախլաթցի:

Պատրաստել է 30 գինավարժներ: կազմել է մարտական խմբեր, այժմ ցրուած եւ անգոյ:

Նախկին Կ. Կ.ի ընկերների օրով եղած որոշումը 400 ռ. ընկերասպան Մեսրոպ Սահակեանից գանձելով դրրկել է զոհի ընտանիքին եւ աքսորել շրջանից, արտաքսելով նաեւ շարքերից:

Նախկին շրջանային ժողովի կողմից ընկերասպան Համբարձումին տրուել էր մահապատիւ: այս մահապատիւն փոխել է աքսորի՝ նկատի ունենալով սպանողի 4 տարուայ տարագիր կեանքը, զղջումնազիրը, նախկին Կ. Կ.-ի վճուի չգործադրելը: իր վրայ է վերցրել պատասխանատուութիւնը յետագայ շրջանային ժողովի առաջը դնելու այդ խնդիրը:

Ամենայն խստութեամբ հետեւել է, որ շանտաժը չվարակէ մեր շարքերը:

Նաւահանգստում եւ շրջանում տեղի են ունեցել գէնքի վատնումներ: Նաւ[ահանգստ]ում եղածը խնդրի տակ է: շրջանում եղածի համար ընկեր է ուղարկուել, բայց վտանգուելու պատճառով տեղ չի հասել:

Շրջանի հետ յարաբերութիւնը ընկերական ու սերտ է եղել: յարաբերութիւնը Արեւել: Բ.ի հետ եղել է սերտ: Արեւել: Բ. շատ անգամ ուղղակի յարաբերութեան մէջ է մտել շրջանում եւ Նաւ[ահանգստ]ում անհատ ընկերների հետ, փոխանակ Կ. Կ.ի հետ անելու: Այդ հանգամանքը անշուշտ անյարմար է դիսցիպլինի տեսակէտից եւ այդ մասին եղել է դիտողութիւն: Սոչիում, Սուխումում, Ատլերում կան անհող գիւղացիներ՝ մօտ 20-25 հազար գաղթական հայեր, որոնք ցանկանում են երկիր վերադառնալ: Բաթումից այդ մասին գրուել է Պոլիս, բայց պատասխան չի ստացուել: կարելի է դրանց տեղաւորել ազատ հողեր ունեցող գաւառներում — ինչպէս օր. Սեբաստիայում:

Համառօտ տեղեկութիւններ վայրերի.—

1.- Ջրաչէն (Փոթի):— Հայ բանուորութեան մեծամասնութիւնը տաճկահայեր են: այստեղ մի ժամանակ քաղաքական խմբեր էին, յետոյ միութիւնների մէջ մտան բանուորները: այժմ քայքայուած տնտեսական կրիզիս: Մի ժամանակ 300-ի էր հասնում դաշնակցական բանուորութեան թիւը, այժմ 150-ի չափ կան:

2.- Ապաստան (Սոչի):— Բանուորութիւն չկայ: հոծ գիւղացիութիւն, մշակում են բացառաբար ծխախոտի տունկ: մի ժամանակ երբ տեղում կարող ընկերներ են եղել եւ բարձր տրամադրութիւն՝ գոյութիւն են ունեցել խմբեր: այժմեան մի երկու խմբերն էլ քայքայման մէջ են տիրող ունեցիտի եւ հեռացած ընկերների պատճառով: Ապաստանում եւ Ատլերում եղել են մեր շարքերում 500 հոգի: Այստեղ 800 տուն անհող տաճկահայեր կան, որոնք երկրումն էլ հող չունեն: Նկատուում է բարքերի անկումն:

3.- Գաղթավայր (Սուխում):— Նոյնպէս մի ժամանակ մեծ թիւով խմբեր են գոյութիւն ունեցել: 3000 տուն — մեր շարքերում եղել են 1000 հոգի 80 խմբի մէջ:

3.- Անտառ (Թուրքապէ):— Գոյութիւն ունին երկու խումբ 40-50 հոգի — կայ 40-50 տուն հայ:

32.- Ուսատառ՝ «Պայքար»:

4.- Նոր քաղաք (Նովորոսիսկի).— Բանուորութիւնը գործազուրկ եւ տգէտ. Երկրից եկած գինուորների շահատակութիւնները վարկաբեկ են արել կուսակցութեան հմայքը եւ քայքայել են շարքերը եւ կազմալուծել տեղական մարմինը: Պէտք է յիշել նաեւ, որ կազմալուծման պատճառ եղել է կարող ընկերների բացակայութիւնը — կայ այնտեղ 500-ի չափ բանուորութիւն, իսկ երկու տարի առաջ այստեղ կային 700 հայ բանուորներ — որ յետոյ գործազուրկ դարձել են մեծ մասով. աշխատելիս է եղել ցորենի եւ ցիմենտի վրայ, որոնք գլխաւորապէս մշեցի, խլաթեցի եւ երեւանեան նահանգից:

5.- Եսայլաղ (Անապա).— Բանուորութիւն չկայ. գիւղերում կան բաւականաչափ հայ գաղթականներ եկած Սեւ ծովի տաճկական) ասիերից. անկազմակերպ: Մեր շարքերում եղել են 50-80 հոգի:

6.- Կլորիկ (Թէոդոսիա).— Այժմ անկազմակերպ վիճակ. ընկերները անճարակ... յետ մնացած կեանքից. պրոպագանդա չի եղել, մասսան տգէտ: Հնչակեանները պրովակատորի դեր են կատարել, տարածելով թէ Հ. Յ. Դ. ը սպանեց տաճկահայ դատը: Կան արհեստաւորներ. մի ժամանակ քաղաքական խմբեր են գոյութիւն ունեցել եւ մեր շարքերում եղել են 200-300 հոգի:

7.- Դաշտ (Միմֆերապոլ).— Մօտ 300 տուն հայ — ջրրկիրներ — մեր շարքերում մօտ 200 հոգի, 1200 ու մուտքով. պահանջ կայ կարող ընկերների. եղել է մի ժամանակ եւ Կ. խաչ. վերջերս եղել է գէնքի վատնումն:

8.- Զրահաբերդ (Սեւաստապոլ).— 60-70 հայ ազգաբնակչութիւն: Մեր շարքերում 50 հոգի. նաւային արտեղներում աշխատում են խլաթեցի, մշեցի եւ կովկասցի գաղթականներ. սրանք մի ժամանակ նաւահանգրստի միհրանականների հետ յարաբերութիւն են պահել. կազմակերպուել է միայն մի խումբ:

9.- Կայծ (Օդեսա).— Հայ ընտանիքներ 200-300: Մի ժամանակ մեր շարքերում եղել են 100-150 բանուորներ. այժմ գործազուրկ վիճակ. մարմինները լուծուած, քայքայուած ամէն ինչ:

10.- Զորափոր (Արդուին).— Հայեր մօտ 7 հազար. մեր շարքերում եղել են մօտ 100 հոգի. այժմ 20-ի չափ. մեր օրօք կազմակերպուածներն էլ քայքայման վիճակի մէջ. ձեռքակալութիւններ եւ մատնութիւններ յաճախ պատահում են այստեղ. մարմնի ընկերները անկերպարան:

11.- Մաղկաձոր (Քութայիս).— 20 խումբ [է] եղել, բուրժուաներից. գործը ղեկավարող չի եղել — այժմ կան անհատ ընկերներ:

12.- Նաւահանգիստ (Բաթում).— Ենորհիւ այն հանգամանքի, որ այստեղ եղել են մնայուն եւ եկուոր կարող ընկերներ, կազմուել են միութիւններ ու խմբեր (թուով 18) անդամները 450 վերջերս: Գործազուրկութեան, տնտեսական կրիգիսի, խստութիւնների պատճառով վերջերս թուլացել են եւ %-ը [ցենզ] դժուարութեամբ են գանձում:

Երջանում ամէն տեղ այժմ տնտեսական ճգնաժամ է եւ կառավարական հալածանքների պատճառով քայքայուել են, շարքերն ու մարմինները կազմալուծուել. մասսան՝ չնայելով քայքայուած վիճակին, իրեն համարում է դաշնակցական:

Շատ զօրեղ է զգացում կարող պրոպագանդիստների եւ կարող կազմակերպողների կարիք:

1909 թ. Յուլիս 6-ին հաւաքուել էին ընկերներ Կ. Կ. ի հրաւերով շրջանային ժողովի. սակայն բացի Նաւահանգրստի մարմինների եւ միութիւնների ներկայացուցիչներից, Զրաչէնի եւ Ապաստանի մի մի ընկերներից, միւս վայրերից ոչ ոք ներկայ չէր: Զրաչէնից եկողը ընտրուել էր մի խումբ ընկերների կողմից. Ապաստանի ընկերը հրաւիրուել էր Կ. Կ. ից: Նաւահանգստի ներկայացուցչական ժողովից 3 հոգի ընտրուած, տեղական մարմնից 2, Կ. Կ. ի 2 ձայն. ընդամէնը 9 ձայն. կային ձայնի իրաւունքով նաեւ 3 անհատ ընկերներ: Այս ժողովը կոչեց իրեն Նաւահանգստի մարմինների ներկայացուցիչների եւ շրջանի երկու ընկերների արտակարգ ժողով:

Այս ժողովը մանրամասն զբաղուեց շրջանի եւ V-րդ Ընդհ. ժողովի օրակարգերով: Ընտրեց իր կողմից պատգամաւոր Արտաչէս Զիլինգարեանին, փոխանորդ՝ Ե. Ֆրանգեանին, սակայն հաստատ չգիտնալով, թէ այդպէս կիսատ Երջ. ժողովից ընտրածին Ընդհանուր ժողովը կը տա՞յ կամ կ'ընդունի որպէս պատգամաւոր, երկրորդ նիւթականի սուղ դրութիւնը թոյլ չտուեց ընտրուածներին ուղարկել:

Այս տեղեկագրին, որպէս լրացում կցուում է Հ. Յ. Դ. Նաւահանգստի Երջանային 1907 թ. ժողովի արձանագրութիւնը եւ 1909 թ. Յուլիս 6-ի արտակարգ ժողովի արձանագրութեան համառոտութիւնը:

Մուշեղ
ՎԱՋՐԻԿ

Փաստ. 380-14

Գ 2.- Հ. Յ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ VI Կ. Կ. Ի ՆԱԽԱՀԱՆԳԻՍՏ-ՊԱԹՈՒՄ]
ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎ (ՅՈՒԼԻՍ 5 - 12 [1909])

Հայ. Յեղ. Դաշնակցութեան VI Կ. Կ. ի Երջանային ժողովը, տեղի ունեցած Յուլիսի 5 - 12ին, քննելով իր մի կարգ նիստերում շրջանի դրութիւնը եւ կարիքները եկաւ այն եզրակացութեան, որ շրջանի դրութիւնը չափազանց անմխիթարական է եւ կարիքները՝ նրան բարելաւելու՝ խիստ մեծ:

Ժողովի նախնական նիստերում պարզուեց, որ հակառակ Կ. Կ. ի քանիցս գրաւոր դիմումներին (հրաւերներին), շրջանի նոյնիսկ ամենավստահելի վայրերից իսկ որեւէ պատասխան չէ ստացուել, եւ հետեւաբար կարելի չէ եղել շրջանի կանոնաւոր ժողով գումարել:

Ի նկատի ունենալով այդ հանգամանքը եւ տիրող ուժակցիայի ստեղծած ճնշող պայմաններից առաջացած մի կարգ հական այնպեւազեղի կարիքներ, Կ. Կ. ին յաջողուում է գոնէ շրջանի երկու վայրերից, այն է Զրաչէնի եւ Գաղթավայրի³³ երկու ընկերների, Նաւահանգրստի տեղական Կ. ի երկու ներկայացուցիչների, նոյն տեղի խմբերի եւ միութիւնների երեք ներկայացուցիչների եւ կողմնակի հրաւիրուած երեք ընկերներից կազմել Նաւահանգստի եւ շրջանի արտակարգ ժողով, որը ղեկավարուելով իրաւական ձեռնհասութեան եւ կարիքի ստիպողականութեան տեսակէտներով՝ իր մի կարգ նիստերում քննեց հետեւեալ հարցերը:

I — **«Կ. Կ. ի գեկուցումը»**.— Զեկուցումից երեւաց, որ Կ. Կ. ն շատ աննպաստ պայմանների մէջ յանձն է առել իր պաշտօնը եւ վերաբերուել է իր շրջանի կարիքներին թոյլ, որը եւ շնորհիւ տիրող քաղ., տնտ. պայմաններին հասցրել է շրջանը կազմալուծման վիճակին:

II — **«Նաւահանգստի Կ. ի գեկուցումը»**.— Նաւ. ի տեղական Կ. ի ներկայացուցիչը յայտնեց որ ներկայ մարմինը յանձն է առել իր պաշտօնը այն ժամանակ, երբ տեղական միութիւններից մի քանիսը արդէն կազմալուծուած է եղել եւ քայքայման պրոցեսը շարունակուել է եւ իրանց օրերում շնորհիւ թէ՛ իրանց թուլութեան եւ թէ՛ տիրող քաղ. տնտ. կրիգիսին:

III — **«Զրաչէնի ընկերով գեկուցումը»**.— Զրաչէնի տեղական մարմինը գոյութիւն ունեցել է մինչեւ 1909 Յունուարի սկիզբներին, որից յետոյ շնորհիւ ուժակցիայի ճնշման՝ գործատէրերի արած կեղեքումների դէմ անկարող լինելով որեւէ միջոց ձեռնարկել եւ գլխաւորապէս թուրքիայում սահմանադրական կարգեր մտնելու հետեւանքով, մասսայի մէջ (բացարձակապէս թուրքահայ մշակներից բաղկացած) յեղափոխական տրամադրութիւնը ընկած լինելով՝ տեղական մարմինը

անգործութեան դատապարտուած՝ կազմալուծուում է:

IV — **«Գաղթավայրի ընկերով գեկուցումը»**.— Գաղթավայրի Կ. ն իր գոյութիւնը պահպանել է իրականապէս մինչեւ 1908 թ. ի վերջերը, իսկ մինչ այդ շրջանը աստիճանաբար կազմալուծման վիճակի մէջ էր գտնուում, շնորհիւ ընկերների թոյլ եւ անհեռատես գործելակերպին, կուսակցական հողի վրայ թայֆայական հակառակութիւններին (հնչ. դաշն վէճեր եւ սպանութիւններ), միհրանական շարժման, պրոպագանդի բացարձակ պակասութեան եւ վերջապէս քաղ. ճնշող պայմանների:

Շրջանի անմիջական եւ ընդհանուր կարիքները. —

Ժողովում գեկուցանող եւ կողմնակի ընկերների տուած տեղեկութիւններից երեւաց, որ շրջանը իր կազմուելու օրին ունեցել է իր բազմազան կարիքները, որոնց մինչեւ այժմ չափազանց թեթեւ կերպով են վերաբերուել ժամանակի ընթացքում միմեանց յաջորդող բոլոր Կ. Կ. ները եւ որոնց անբաւարարութիւնը առաւելապէս շեշտուել է ներկայ քաղ.-տնտ[եսական] ճգնաժամում հասցնելով ամբողջ շրջանը քայքայման դրութեան:

I — **Պրոպագանդ.**— Շրջանի կազմալուծման ամենագլխաւոր պատճառը եղել է կանոնաւոր, սիստեմատիկ պրոպագանդի կատարեալ բացակայութիւնը: Այդ մասին ամէն ժամանակ բոլոր Կ. Կ. ներին միշտ թախանձագին դիմումներ է եղել շրջանի բոլոր վայրերից եւ ոչ մի տեղ բաւարարութիւն չէ կարող ստացել ժամանակի գործող որեւէ Կ. Կ. ից: Այդ պատճառով շրջանի մասսան չէ եղել գէթ ամենաթոյլ կերպով գիտակցօրէն կազմակերպուած եւ այդպիսով ենթակայ [եղել] քաղ. տնտ. ամենաթեթեւ խորշակից կազմալուծուելու:

II — **Կարգապահութիւն.**— Ենորհիւ մասսայի անգիտակցութեան եւ ղեկավարող մարմինների թուլութեան, կուսակցական կարգապահութիւնը միշտ եղել է թերի, որի պատճառով պակաս չեն եղել շարքերում գանազան թիրիմացութիւններ, վէճեր եւ նոյնիսկ սպանութիւններ: Այդպիսի հարցերի լուծման համար տեղակ[ան] մարմինները միշտ համարեա անձեռնհաս գտնու-

33.- Զրաչէնը Փոթին է, Գաղթավայրը՝ Սոխումը:

ւելով դիմել են Կ. Կոմիտէներին, որոնք իրենց կարգին, կամ թոյլ վերաբերմունք ցոյց տալով եւ կամ անուշադիր թողնելով, առկա են թողել այդ կարգի շատ հարցեր, որոնք պատճառ են դարձել մասսային եւ անբարոյականալուծ, եւ սառչելուն յեղափոխական գործից:

III — Հաշուետուութիւն. — Կանոնաւոր դրամական հաշուետուութեան բացակայութիւնը Կ. Կ. ներքին կողմից մի մեծ չարիք է դարձել կուսակցութեան պրեստիժին: Առանց այդ էլ տգէտ մասսան հակուած լինելով «ուտում են»-ի ցինիկ բամբասանքին, իսկ հաշուետուութեան բացակայութեան պատճառով, միջոտ տեղական մարմինները հանդէպ մասսայի, մի անելանելի դրութեան մէջ են գտնուել: Համարեա այդ է եղել տուրքերի անկանոն գանձման պատճառը:

Անցնելով V Ընդհ. ժողովում քննուելիք հարցերի օրակարգին, ժողովը որոշեց իրա կոմպետիցիային³⁴ մատչելի հարցերի մասին միայն իր կարծիքը յայտնել, որոնցից առաջ ենք բերում ընդունուած բանաձեւերը:

Դաշնակցութիւնը եւ Երիտ. թուրքերը. իրենց դիրքը փոխադարձօրէն. — «Հ. Յ. Դ. ըր պէս միակ սոցիալիստական կուսակցութիւնը Թուրքիայում, աշխատելու է կրթել մասսաներին, առանց կրօնի եւ ազգ. խտրութեան, սոցիալիստական ուղղութեամբ. իր դիրքը՝ դէպի Երիտ թուրքերը կը լինի լոկ տակտիկական, այսինքն՝ սահմանադրութեան եւ ազգերի համերաշխութեան վտանգ սպառնալու դէպքում միայն համագործակցութեան ձեռք կը մեկնէ նրանց»:

Դ.եան վերաբերմունքը դէպի Թուրքիայի ներկայ սահմանադրութիւնը. — «Թուրքիայի արդի քաղ. ռեժիմը ենթարկուած լինելով մի բիւրոկրատական կազմի քմահաճոյքին, որը յենակէտ ունի խաւար մասսայի մոլեռանդութիւնը, մի չափազանց թերի սահմանադրութիւն է, բայց որովհետեւ համեմատած նախկին համիրեան ռեժիմին աւելի յառաջդիմական է, Դ. ըր ամբողջ ոյժով պէտք է պաշտպան հանդիսանայ նրան որեւէ վտանգ սպառնալու դէպքում, իսկ խաղաղ ժամանակ բանաւոր եւ գրաւոր պրոպագանդով մասսային առաջնորդելու է դէպի աւելի դեմոկրատիկ կարգերը:

Կուսակցութեան օրինականցումը. — «Որովհետեւ քաղ. արդի յեղեղով վիճակը ընդհանրապէս եւ բիւրոկրատական ռեժիմի անարդարութիւնը մասնաւորապէս միջոտ հնարաւոր կարող են դարձնել թէ՛ խաւար մասսայի եւ թէ՛ կառավարութեան հետ զինուած ընդհարման հաւանականութիւնը, անհրաժեշտ է որ կուսակցութիւնը [մնայ] անլեզաւ Հողի վրայ»:

Ազգայնական հարց. — «Ազգայնական հարցի մասին ժողովը գտնելով՝ որ բաւականի պարզ նախատեսուած է Դ.եան ծրագրում, թողնում է այդ Ընդհ. ժողովի հայեցողութեան»:

Մեր դիրքը դէպի միւս յեղ. կուսակցութիւնները. — «Այն քաղ. կուսակցութիւնները, որոնք յեղափոխական

տեսակէտից հաւատ են ներշնչում մեզ, մեր վերաբերմունքը դէպի նրանց լինելու է համերաշխ, բարեկամական, առանց դադարելու սկզբունքային պայքար մղելու նրանց դէմ»:

Դ.եան պատգամաւորի դիւստրիպիան պարլամենտում. — «Դ.եան պատգամաւորը պարլամենտում դեկավարուելու է գլխաւորապէս կուսակցութեան դիրեկտիւններով»:

Ըլոկ խորհրդարանում եւ դրսում. — «Որովհետեւ քաղ. ներկայ պայմաններում Դ.եան ծրագրից բխող սկզբունքների հիման վրայ որեւէ ըլոկ անհնարին է կազմել թէ խորհրդարանում եւ թէ դրսում, ուստի Դ.եան պատգամաւորի գործունէութիւնը թէ խորհրդարանում եւ թէ դրսում պէտք է լինի խիստ քննադատող եւ մերկացնող»:

Կաթողիկոսական, պատրիարքական ընտրութիւններ եւ կուլտուրակ. հարցեր. — ժողովը այդ հարցերի մասին ընդունում է 1907 թուի Կովկ. ռալոնական ժողովի ընդունած բանաձեւերը (տես. արձանագրութ. էջ 5, յօդ. II եւ էջ 75 յօդ. IV):

Մեր դիրքը դէպի ռուս կառավարութիւնը եւ ռուս կուսակցութիւնները. — «Պատրաստելով մասսաներին ապագայ մեծ ակտին, ցարիզմի ռեժիմի տապալմանը, միաժամանակ յարմար մոմենտներում ցնցող ակտեր կատարել, մեր հակառակորդների մէջ սարսափ եւ պատկառանք առաջ բերելու, եւ ժողովրդի մէջ յեղափոխական ոգին բարձրացնելու համար: Իսկ քաղ. կուլը յաջող տանելու նպատակով Ռուսաստանի բոլոր ձախակողմեան կուսակցութիւնների հետ ունենալ համերաշխ գործակցութիւն»:

Մեր դիրքը Պարսկաստանի շարժման հանդէպ. — «Հ.Յ.Դ. ըր պէս սոցիալիստական կուսակցութիւն, ձգտում է տապալել բիւրոկրատական կարգերը. նա շարունակելու է նոյնպէս իր գործունէութիւնը Պարսկաստանում, աշխատելով պետական կարգերը ռամկավարացնել»:

Կազմակերպական կանոնները վերաքննութիւն եւ լրացում. — «Որովհետեւ ժողովը հնարաւորութիւն չունեցաւ մանրամասն քննութեան ենթարկելու գոյութիւն ունեցող կանոնադրութիւնը, ուստի ընդհանրապէս ի նկատի առնելով Ռուսաստանի ներկայ դրութիւնը ցանկալի համարեց կանոնադրութեան մէջ մտցնել դրա համապատասխան այնպիսի կէտեր, որոնք գործադրում էին Թուրքիայում նախկին ռեժիմի օրով»:

Կոմիտէների կազմութիւնը. — «Ի նկատի ունենալով քաղ. ներկայ պայմանները, ժողովը նպատակաւորաբար է գտնում առաջարկել Ընդհանուր ժողովին փոքրացնել Կ. Կ. ներքին շրջանները (տեքրիտորիալ), համապատասխան չափով նուազեցնելով Կ. Կ. ներքին ցենզը»:

34.- Չեռնիստութեան:

Պատասխանատու մարմինների վերացումը. — «Ժողովը ի նկատի ունենալով Տաճկաստանի ներկայ բարեյաջող պայմանները, առաջարկում է վերացնել պատասխանատու մարմինների գոյութիւնը»:

Բիւրոների, ռալոնական եւ շրջանային ժողովների իրաւասութեան սահմանների որոշումը. — «Մեկնելով այն ելակէտից, որ կուսակցութեան վարչական ձեւը անհրաժեշտ է ռամկավարացնել, պէտք է այդ տեսակէտից փոփոխել Բիւրոյի ընտրութեան ձեւը այսպէս, — Բիւրոն 7 անդամից բաղկանալու դէպքում 5-ը ընտրուի ռալոնական ժողովի կողմից եւ 2-ը Ընդհ. ժողովից, որից կը հետեւի այն՝ որ Բիւրոն պատասխանատու է լինելու իր ընտրող ռալոնական ժողովի առաջ, միաժամանակ պատասխանատու լինելով Ընդհ. ժողովի առաջ, որի տուած որոշումների եւ ուղղութեանը նախանձախնդիր գործադրողն է: Իսկ ռալոնական եւ շրջանային ժողովները մնում են իրանց նախկին իրաւասութիւնների սահմաններում»:

«Դաշնակցութիւն»-ի խորհուրդը. — «Նկատելով որ «Խորհուրդը» չունի եւ չի էլ կարող ունենալ օրէնսդրական Ֆունկցիա, իսկ իբրեւ վարչական մարմին չափազանց բիւրոկրատիկ յատկանշով է տոգորուած, ուստի եւ անհամապատասխան Դաշն.եան հիմնական սկզբունքների ոգուն, ժողովը միանգամայն աւելորդ է գտնում նրա գոյութիւնը: Արտակարգ հարցերի վերաբերմամբ «Խորհուրդի» վարչական Ֆունկցիաները Ընդհ. ժող.ի կողմից կարելի է յանձնել Բիւրոներին, տալով նրանց խորհրդակցութիւն կազմելու իրաւունք: Իսկ Բիւրոների միմիայն դրամական հաշիւները քննելու համար, «Խորհուրդի» փոխարէն ընտրել Ընդհ. ժող.ում մի վերստուգիչ յանձնաժողով»:

Միեւնոյն հարցի վերաբերմամբ ժողովականների կէսը առաջարկեց (որը չանցաւ) հետեւեալ բանաձեւը. «Նկատի ունենալով որ քաղ. անակնկալ պայմաններում հնարաւորութիւն չի լինում Ընդհ. ժող. գումարել կամ մեր մասսայի կարծիքը հաւաքել եւ բնորոշել մեր բռնելիք դիրքը այդ արտակարգ պայմանի հանդէպ, եւ դարձեալ նկատի ունենալով, որ այդպիսի պայմաններում հարցի շուտափոյթ լուծումը անյետաձգելի է եւ ժամանակի հրամայական պահանջ կուսակցութեան համար, ուստի անհրաժեշտ է, որ «Խորհուրդը» գոյութիւն ունենայ, սահմանափակելով, սակայն, նրա իրաւասութիւնը ռալոնակ. ժող.ներին եւ Բիւրոյի տուած որոշումների հանդէպ»:

Անհատ ընկերների դերը կուսակցութեան մէջ. — «Իւրաքանչիւր իրան դաշնակցական համարող անհատ առանց բանաւոր պատճառի չի կարող կազմակերպութիւնից դուրս մնալ. հակառակ պարագային նա չի համարուի իբրեւ դաշնակցական»:

Դրամական եւ հաշուական սխտեմի վերաքննութիւն եւ վերանորոգում. — «Գանձման գործնականու-

թեան տեսակէտից ցանկալի է, որ ունենան իրանց ստորաբաժանումները (օր. տասնեակներ): Տեղական մարմինների (Կ.) ներքին գործերի մասին ծախսուելիք դրամական %-ները աւելացնել: Պէտք է իւրաքանչիւր շրջանի Կ. Կ. ն շուտ-շուտ հաշիւ տայ իր ստացած փողերի, տպուած թերթիկներով»:

Տուրքերի կանոնաւորում. — Այս հարցի մասին ի նրկատի առնուեց վերելի բանաձեւը եւ ժողովը աւելացրեց, թէ «տուրքերի կանոնաւորելու ամենամեծ խթանն է մասսայի մէջ յեղափոխական գիտակցութիւն մտցնելը»:

Դրամական եւ կարգապահական գեղծումներ. — «Որովհետեւ որեւէ գեղծում կուսակցութեան ներսում առաջ է բերում դեմոքրալիզացիա³⁵ իսկ դրսում՝ վարկաբեկում, այդ կարգի բացասական երեւոյթների դէմ ժողովը միաձայն պահանջում է, աւելի այժմ քան երբեք, ամենախիստ կարգադրութիւն եւ շուտափոյթ գործադրութիւն»:

Նախընթաց Ընդհ. ժող.ից ընդունուած մարմինների գործունէութեան մասին քննութիւն. — «Ժողովը միաձայն քննութիւն է պահանջում վանի պատասխանատու մարմինն գէնքերի պահեստի բացման խնդրի առիթով եւ Դ.եան «Խորհուրդին» հարցապնդում կաթողիկոսական ընտրութեան առիթով»³⁶:

Կուսակցութեան կարգապահութիւն. — «Ի նկատի ունենալով՝ որ կուսակցութեան քայքայման եւ կուսակցութեան անհատների եւ մասսայի բարոյականի անկման ուղղակի պատճառը կարգապահութեան (դիսցիպլինա) բացակայութիւնն է, ժողովը անհրաժեշտ է համարում խիստ ուշադրութիւն դարձնել կուսակցական կարգապահութեան վրայ»:

Քաղաքական խմբեր. — «Հ.Յ.Դ. ըր իբրեւ յեղ. կուսակցութիւն, մանաւանդ քաղ. այսպիսի յեղեղով եւ ռէակցիոն պայմաններում պէտք է աւելի ուժ տայ քաղ. խմբերի կազմակերպուելուն»:

Մարտական խմբեր. — «Ի նկատի ունենալով՝ որ ներկայ քաղ. պայմանները առաջ են բերում կարիք ինքնապաշտպանութեան, զինուած կուլի եւ կուլի վնասակար անհատների դէմ, ժողովը անհրաժեշտ է համարում

35.- Վիստուքիւն, յուսալքութիւն:
36.- Վանի գէնքերու պահեստին գրաւման խնդիրը ծանօթ է: Դաշնակցութեան խորհուրդի հարցապնդումը կը վերաբերի այն իրողութեան, որ Կովկասի Ռալոնական ժողովը (Դեկտ. 1907 – Յունուար 1908) որոշում ընդունած էր՝ «Կուսակցութիւնը եւ նրա գործօն անդամները ոչ մի մասնակցութիւն չպիտի ունենան առաջիկայ կաթողիկոսական ընտրութիւններին»: Իսկ խորհուրդը իր 1908 թ. Մարտի Գտաշրջանին, հարցի քննութեան ատեն աչքի առաջ ունենալով տարբեր շրջաններ արտայայտուած տեսակետներու, եզրակացուցած էր որ
1.- «Գ. 3. Դաշնակցութիւնը իբրեւ կուսակցութիւն չի մասնակցում կաթողիկոսական ընտրութիւններին»:
2.- Դաշնակցական ընկերները իբրեւ սուկ քաղաքացիներ ազատ են վարուելու ըստ իրենց հայեցողութեան»:

մարտական խմբերի վրայ աւելի լուրջ ուշադրութիւն դարձնել»:

Դ.եան նոր անդամներ ընդունելու մասին խիստ կանոններ.— «Դ.եան նոր անդամներ ընդունելու դէպքում պէտք է ի նկատի ունենալ անհատի բարոյական դիրքը հասարակութեան մէջ եւ ղեկավարուել Դ.եան աշխատաւորական սկզբունքի համաձայն մի պարզորոշ ցենզով»:

Կ[արմիր] խաչ եւ Օժանդակ խմբեր.— «Կարմիր խաչ անունով գոյութիւն ունեցող կանանց խմբերը պէտք է միանգամընդմիջտ վերածել արհեստակցական միութիւնների եւ քաղ. խմբերի եւ նրանց կրթել յեղափոխական ոգով, իսկ այդ խմբերի եկամտները կարելի է յատկացնել Կ. խաչի կարիքներին: Իսկ նկատելով՝ որ օժանդակ խմբերի գոյութիւնը Դ.եան սկզբունքի տեսակէտից մի չափազանց մեծ հակասութիւն է, ժողովը առաջարկում է միանգամընդմիջտ լուծել այդպիսի խմբերը»:

Բիւրոնների տեղափոխութեան հարցը.— «Ժողովը առաջարկում է գոյութիւն ունեցող Բիւրոնները չտեղափոխել, այլ մի նորը ստեղծել Թուրքահայաստանում»:

Կուսակցութեան կիսապաշտօնական թերթերը.— «Ժողովը գտնելով անհրաժեշտութիւն կիսապաշտօնական թերթերի, առաջարկում է այդպիսի թերթերի համար մի այնպիսի ուղղութիւն, որը չհակասէր Ընդհ. Ժող.ի գծած ուղղութեան, իսկ տնտեսական-հրատարակչական տեսակէտից էլ լինէր անհատական նախաձեռնութեան արդիւնք առանց կուսակցական նպաստի ակնկալութեան»:

Կուսակցական գրականութիւն.— «Որովհետեւ մեր կուսակցութեան շարքերում [եւ] ոչ միայն մասսաների մէջ է տիրում կուսակցութեան սկզբունքային հարցերի վերաբերմամբ անորոշ գաղափար, նոյնիսկ տգիտութիւն, այլ եւ ղեկավարող շրջաններում (օր. Կ.ի անդամներ) իսկ համարեա դա ընդհանուր մի երեւոյթ է, այդ պատճառով բանաւոր պրորազանդի հետ գուզընթաց այժմէական անհրաժեշտութիւն է կազմում կուսակցական գրականութեան մասին հոգ տանելը»:

Ախտեմատիկ դասընթացներ.— «Նկատելով որ մե-

զանում որքան պրոպագանդիստ, այնքան Դ.եան սկզբունք կայ, այդ խառնաշփոթութեան [վերացման] ամենայարմար միջոցն է գտնում ժողովը պրոպագանդիստներ պատրաստելու համար ստեղծել սիստեմատիկ դասընթացներ, որի ծրագիրը նախապէս կազմուած եւ պատաստուած լինի Ընդհ. Ժող.ից»:

Հրապարակային դասախօսութիւններ.— «Պրոպագանդի եւ ագիտացիայի տեսակէտից նպատակայարմար լինելով, միանգամայն անհրաժեշտ է գտնում ժողովը, որ այդ դասախօսութիւնները լինին եւ մեր հարեւան ազգութիւնների լեզուներով»:

Յլրդ յօդուածը.— «Ի նկատի ունենալով՝ որ բուրժուա պետութիւններից անշահախնդիր միջամտութեան յոյս թողնելն պաշտպանելու համար, միանգամայն անհրաժեշտ է միամտութիւն է, ժողովը միաձայն որոշում է Յլրդ յօդ.ը Դ.եան մտահոգութեան առարկաների ցանկից դուրս հանել»:

Ժողովի քննելիք հարցերի ցանկը վերջացած լինելով, Կ. Կ.ին պարտաւորեցնում է հնարաւոր եղած դէպքում միջոցներ տալ շրջանի պատգամաւորին Ընդհ. Ժող.ի ներկայացնելու իր որոշումները, հակառակ դէպքում իր պատճառաբանութիւնները ներկայացնելու իր որոշումները, հակառակ դէպքում իր պատճառաբանութիւնները ներկայացնել առաջիկայ շրջանային ժողովին: Շրջանի պատգամաւորի Ընդհ. Ժող.ին չգնալու դէպքում ժողովը միաձայն իրաւունք է տալիս Կ. Կ.ի պատգամաւորին արտայայտիչը հանդիսանալու շրջանի կարիքներին եւ տրամադրութիւններին³⁷:

Նաւահանգիստ
12 Յուլիսի 1909

37.- Արձանագրութիւնը կը կրէ «Հ. Յ. Դաշնակցութիւն-Կենտրոնական VI Կոմիտե» կնիքը: Անընթեռնելի են Նախագահի եւ Վ[ասն] քարտուղարի ստորագրութիւնները: Ժողովականներէն կարելի է կարդալ անուանները՝ Որսկանի, Վագրիկի, Աշուղի, Շանթի եւ Բարկէնի:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ԳԼՈՒԽ XVI

ՊԱԼՔԱՆՆԵՐ

Պալքանեան Կեդր. Կոմիտեի տեսանկյան իրաւասութիւնը կը տարածուէր Պուկարիոյ եւ Ռումանիոյ վրայ: Յատկապէս Պուկարիոյ եղած է Դաշնակցութեան հին ու կարեւոր շրջաններէն մէկը, ուր գործած են բազմաթիւ յայտնի դէմքեր՝ ինչպէս՝ Ա. Վոսմեան, Վ. Սերենկիւեան, Գարեգին Խաժակ, Ռոստոմ, Քրիստափոր, Յար. Շահրիկեան եւ, աւելի ուշ, Անդրանիկ: Ստեղծուած են սերտ կապեր պուկար կառավարական շրջանակներու եւ մանաւանդ մակեդոնացի յեղափոխականներուն հետ: Պուկարիոյ մէջ հաստատուեցաւ նոյնպէս Դաշնակցութեան զինուորական վարժարանը, մինչ կառավարութեան բարեհաճ կարգադրութեամբ պետական Սպայից վարժարանին մէջ իրենց կազմաւորումը ստացան շարք մը հայ մարտիկներ (որոնց շարքին՝ Գարեգին Նժդեհ): Ֆիլիպէ կամ Փոլսի հայաշատ քաղաքին մէջ կը հրատարակուէր «Ռազմիկ» թերթը (1905-1909) Ռուբէն Չարդարեանի խմբագրութեամբ: Այս վերջինը Մահմանադրութեան հռչակումէն ետք պիտի հաստատուէր Պոլիս՝ իբրեւ անդամ Պատասխանատու մարմնին եւ խմբագիր «Ազատամարտ» օրաթերթին: Իրեն պիտի հետեւէին ուրիշ գործիչներ, ինչպէս Բարթող Չօրեան (Ժիրայր):

Պուկարիոյ եւ Ռումանիոյ հին գաղթականութեան վրայ աւելցած էին մեծ թուով նորեր, դեռ 1895-96ի համիտեան կոտորածներէն փախուստ տուած պանդուխտ հայեր, որոնք, ինչպէս պիտի տեսնուի, Մահմանադրութենէն ետք մեծ խումբերով պիտի վերադառնային Երկիր:

Պալքանեան թղթածրարը կը պարունակէ երկու ծաւալուն փաստաթուղթեր.— Ընդի. Ժողովին ներկայացուած Կեդր. Կոմիտեի տեղեկագիրը եւ 1909 Մարտին գումարուած Շրջանային ժողովի ատենագրութիւնը:

Փաստ. 1152-38

**1.- ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ] ՊԱԼՔ. ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻ
(1908 Ապրիլէն – 1909 Մարտի 31)**

Շրջապատող ընդհ. պայմաններ.—

Բարդ եւ մտահոգիչ պայմաններով շրջապատուած տարեշրջանի մը սկիզբն էր որ մեզ աշխատութեան գլուխ կը կանչէր ճիշդ տարի մը առաջ Հ. Յ. Դաշն. Պալքանեան է. Շրջ. ժողովը: Կը զգայինք որ մեր համեստ ուժերով համապատասխան աշխատութիւն մը չէր մեզ վստահուածք: Երկիրը երկար տարիներու հալածանքներուն տակ ընկճուած ընդհանուր լքումի եւ յուսահատութեան մը անձնատուր կ'ըլլար, որուն կողմէն գար աւելնալ Ռուսաստանի եւ Պարսկաստանի մեր ժողովուրդին եւ սպասող վիճակը: Կազմակերպութիւնը այս պայմաններուն մէջ շրջապատուած բազմաթիւ դժուարութիւններով ու խոչընդոտներով՝ չէր կրնար կարիքին համապատասխան յաջողութիւններ ձեռք բերել նիւթական թէ բարոյական կրկնակ տեսակէտներով: Վասպուրականի մէջ պատահած վերջին դժբախտ դէպքերը՝ եկած էին ջլատելու ժողովուրդին եւ նոյնիսկ մեր շարքերը կազմող ընկերներու ոչ-կորովի մէկ մասը, ինչ որ նշանակելի խոչընդոտ մըն էր նոյնպէս Արտասահմանի

թէ Երկրի կազմակերպական մարմիններու յաջող գործունէութեան համար: Ժողովուրդին անգիտակից մասը՝ գուրկ դէպքերու եւ իրականութեան վերլուծումն ընելու եւ ըմբռնելու կարողութենէն, եւ տրամադիր միջոց շօշափելի օգուտներ տեսնելու տեղի ունեցած ամէն մէկ երեւոյթէ յետոյ, հետզհետէ կը դառնար սկեպտիկ ու թերահաւատ վաղուան յաջողութիւններուն նկատմամբ եւ նոյն տրամադրութիւններով ալ կը վերաբերուէր հանդէպ իր պարտականութիւններուն եւ կազմակերպութեան: Գաղութներու եւ երկրին մէջ տիրող տնտեսական ընդհանուր տագնապը իր կարգին կու գար աւելի ծանրացնել մեր գործունէութեան պայմանները: Ու այս ամէնուն վրայ՝ Երկրին համար ծրագրուած պատասխանատու ձեռնարկներու մէջ մեր աշխատութեան բաժինն ալ ունենալ կոչուած էինք՝ մեր շրջանին դիրքին ու պարտականութեան հարկադրական բերումովն իսկ:

1.- Ակնարկութիւն Վասպուրականի զինապահեստներու գրաւումին եւ թրքական իշխանութեանց բանցեցուցած հալածանքներուն:

Ահա այս պայմաններուն մէջ ստանձնեցինք մեզ վստահուած աշխատութիւնները, այն հաստատ առաջադրութեամբ թէ մեր կողմէ ոչ մէկ ջանք ու հոգածութիւն պիտի խնայուէր մեր ուժերու թոյլատրած սահմանին մէջ:

Բայց հազիւ գործի ձեռնարկած ու նախնական աշխատութեանց ընթացք տուած, յանկարծ մեր առջեւ կը ցցուին ներքին խոչընդոտներ ու դժուարութիւններ: Պուկկար Տեմոկրատ դահլիճը, որուն վրայ բաւական յոյսեր դրուած էր, յանկարծ կը փոխէր իր տրամադրութիւնը հայ եւ մակեդոնացի յեղափոխականներու հանդէպ՝ իր կարգ մը քաղաքական հետապնդումներուն տիրանալու համար: Կը ծրագրուի մօտ 25-30 կարող ընկերներու արտաքսումը երկրէն՝ պատրաստուած յատուկ ցանկի մը վրայ, ուր մէկ քանի ընկերներու անունները յայտնապէս կ'երեւէին: Ֆիլիպպի մէջ կը հարցաքննուին ընկերներ, մինչ ծրագիրը մակեդոնացիներու վերաբերմամբ արդէն գործադրութեան կը դրուի, վերջացնելու համար մեզմով: Այս պարագաներուն մէջ է որ դժբախտ զուգադիպութիւնով մը, Ֆիլիպպի մէջ տեղի ունեցող անհրաժեշտ փորձերու պահուն շուկային կեդրոն մէկ տեղին վրայ կը պատահի պայթիւն մը՝ վիրաւորելով երկու ընկերներ: Դէպքը ընդհանուր աղմուկ եւ խուճապ կը յարուցանէ, խնդիրը կ'արժարծուի՝ մասնաւորապէս Ֆիլիպպի ոստիկանապետին ոչ-փորձառու եւ բարեացակամ տրամադրութեանը պատճառով, մինչեւ որ թէ Ֆիլիպպի եւ թէ Սոփիայի մէջ մեր ըրած ազդու դիմումներուն վրայ գաղտնի ճամբաներով կասկածելի առարկաները կ'անհետացուին իսկոյն եւ խնդրոյն կը տրուի, գոնէ երեւութապէս, անհատական հանգամանք ու ձերբակալուած ընկերները կ'արձակուին: Բայց եթէ մէկ կողմէն շնորհիւ գործ դրուած ջանքերուն, խնդիրը որոշ չափով մեղմանալով ընդհանուր ուշադրութեան եւ հետապնդութեանց առարկայ ըլլալէ մասամբ կը դադրի, սակայն միւս կողմէ թուրք կառավարութիւնն իմանալով «Երլտըզի» պահանջով Սոփիայի գոմիսարը կը փութայ Ֆիլիպպի, ուր տեղւոյն վրայ քննութիւն կատարելով կը տեղեկացնէ ուր որ պէտք է եւ խստիւ կը պահանջուի պուկկար նախարարութենէն հայ յեղափոխականներու արտաքսումը: Խնդիրը այս անգամ կը ստանայ տարբեր հանգամանք եւ կը դառնայ պուկկար եւ թուրք շահերու համաձայն գործադրելի գէնք, որուն շուրջը տեղի կ'ունենան բանակցութիւններ՝ երկրին օգուտը պահանջած եղանակով վերաբերուելու համար հայ յեղափոխականներուն վերաբերմամբ: Այս բանակցութիւնները բաւական կը ձգձգեն կառավարութեան նախկին ծրագրին գործադրութիւնը մեզ նկատմամբ, նոյնիսկ պատճառ դառնալով քաղաքական նպատակներով անորոշ ժամանակի մը համար անոր յետաձգման, երբ վերջապէս Թուրքիոյ Սահմանադրութիւնը կու գայ հիմնովին յեղաշրջել դէպքերու ընթացքը:

Ի հարկէ կառավարութեան սնուցած դիտաւորութիւններուն եւ ակնարկուած ծրագիրներուն վրայ անմիջապէս գաղտնի նամակներով զգուշացուցինք չրջանի մարմինները՝ ընելով անոնց որոշ ցուցմունքներ եւ թելադրելով որ պատրաստ գտնուին ոեւէ պատահարի առջեւ: Միւս կողմէ դիմումներ ըրինք Բիւրոյին՝ կարող ընկերոջ մը ներկայութեան պէտքը չեչտելով՝ խմբագիր-ընկերներու աքսորման պարագային «Ռազմիկը» ոեւէ ընդհատումէ գերծ պահելու համար, ինչ որ նման պարագայի մը մէջ կազմակերպութեան բրեսթիփին եւ թերթին նիւթական վիճակին վրայ ծանրօրէն պիտի ներգործէր: Եւ տեղի է ըսել նաեւ որ այդ անցողական պարագաներուն մէջ ոչ մէկ ատեն չխանգարեցինք մեր յարաբերութիւնները չրջանի մարմիններուն հետ, ընդհակառակը նախկին կանոնաւորութեամբ առաջ տարուեցան գործերը:

Մեր աշխատութիւնները իրենց գլխաւոր գիծերուն մէջ.—

Այս տարեշրջանին Թուրքիոյ քաղաքական մեծ եւ պատմական դէպքը իր արտակարգ եւ անակնկալ հանգամանքովը նոյնքան եւ աւելի արտակարգ եւ անակնկալ պայմաններու մէջ դրաւ Թուրքիոյ ամբողջ ժողովուրդին հետ նաեւ հայ ժողովուրդը ինչպէս նաեւ Դաշնակցութիւնը իր բոլոր մարմիններով ու Պալքանի մարմիններուն հետ Կեդր. Կոմիտէն: Գործունէութեան եղանակ ու եռանդ, պիւտճէ, ծախք, հասոյթ, նախկին որոշումներ՝ հիմնովին կերպարանափոխուեցան: Մասնաւորելով խօսքերնիս Պալքանի մեր կազմակերպութեան վրայ՝ պէտք կը գգանք չեչտել որ, մինչ տարեշրջանի սկիզբը ձախող եւ ձախող պայմաններէ չրջապատուեցաւ Կեդր. Կոմիտէն, Սահմանադրութենէն յետոյ ոչ նուազ նման այլ [պարագաներ] պատճառ դարձան աշխատութեանց բարդացման, տեղի տալով որ ոեւէ խնդիրի առթիւ մէկէ աւելի դիմումներ ըլլան, նամակներ գրուին, շրջաբերականներ տպագրուին: Երեւակայեցէք որ Շրջ. ժողովիդ կանխապատրաստութեանց համար Յունուար 1-ին եղած կարգ մը անհրաժեշտ յանձնաձեռքներ — ինչպէս օրինակ հաշիւ, հարցեր եւ վիճակացոյցներ — մինչեւ այս պահուս մնացած են անգործադրելի, պատճառ դառնալով որ մեր այս տեղեկագրին ինչ ինչ կարեւոր կէտերը մինչեւ վերջին պահուն մնան բաց՝ հող, Ռուսճուկի մէջ ամբողջացնել կարենալու յոյսով:

Դժբախտաբար այս անկանոնութիւնը աւելի չեչտրուեցաւ Պուկկարիոյ մարմիններուն կողմէ՝ ուր ինտելիգենտ երիտասարդութիւն մըն ալ գոյուցութիւն ունի, ուրկէ բաւական աշխատութիւն եւ արդիւնք ակնկալելու իրաւունք ունինք: Պուկկարիոյ մարմիններուն կարեւոր մէկ մասը ոչ միայն աւելի անկանոն եւ անպարտաճանաչ յայտնուեցաւ, այլ եւ նիւթական շատ վտիտ ար-

դիւնք մը ցոյց տուաւ իր տեղական եւ այլ ծախքերու խտտոր համեմատութեամբն հանդերձ: Նիւթական այս անգոհացուցիչ արդիւնքին դէմ սակայն Կեդր. Կոմիտէի ծախքերը, տիրող եւ անխուսափելի պէտքերուն իսկ հետեւանքով, աւելցան, ինչպէս կազմակերպութեան առհասարակ բոլոր մարմիններունը:

Ահա մարմիններու իւրաքանչիւրին գործունէութեանց եւ արդիւնքին մասին մեր կազմած գաղափարը իրենց գործունէութեան եւ յարաբերութեան համաձայն:

Ֆիլիպպի.— Պուկկարիոյ մարմիններուն մէջ թէ թուական եւ թէ նիւթական տեսակէտով մնաց համեմատաբար ամէնէն կարեւորը: Կեդր. Կոմիտէիս հետ պահած իր թղթակցական յարաբերութիւնը ոչ այնքան գոհացուցիչ: Նիւթականը նոյնպէս ոչ-այնքան գոհացուցիչ բաղդատմամբ նախորդ տարիներու: ընկերական ընդհակառակմաներ ունեցան՝ բայց շարքերը թոյլ եւ միշտ 30-60 ընկերներու ներկայութեամբ: Ներքին անհամաձայնութիւններ եւ գժտութիւններ բնաւ գոյուցութիւն չունին: Հասարակական գործունէութիւններու մէջ արտայայտուեցաւ ներկայացում-հանդէսներով: Կոմիտէի կազմը չունի այն բաղդատական առաւելութիւնը զոր կը պահանջեն Ֆիլիպպի ընկերական եւ հասարակական պայմանները, ինչ որ մասամբ վերագրելի է Կեդր. Կոմիտէի գոյուցութեան նոյն քաղաքի մէջ, որ 4-5 ոյժեր գրաւած է ընկերներու շարքերէն:

Սոփիա.— Արդէն անցեալ Շրջ. ժողովին չկրցաւ ունենալ իր պատգամաւորը: յարաբերութիւն չկրցաւ պահել: Հաշիւ եւն. չուղարկուեցան: Եւ յանձնարարուեցաւ Կեդր. Կոմիտէի ընկերներուն անկէ անցած պահուն քննել եւ տեղեկաբերել ժողովիդ: Տարեշրջանի սկիզբի ամիսներուն հոն ղրկուեցան ընկերներ Զարդարեան, Վահագն², բայց անոնց մեկնումէն յետոյ ալ շարունակուեցաւ նոյն վիճակը: Հաւաքում եւ ընկերական կեանք գոյուցութիւն չունի: Սահմանադրութենէն յետոյ մեկնած ըլլալով համեմատաբար քանի մը գործօն ոյժեր, բոլորովին տկարացաւ եւ դարձաւ լոկ 2-3 օժանդակ խումբերով օժանդակ շրջան մը, որուն համար հարկ կ'ըլլայ որոշ կարգադրութիւն եւ յարաբերութիւն ոեւէ մարմնի հետ: Իր թուական եւ օրինական բոլոր պայմանները գինքը կը գրկեն Շրջ. ժողովի մէջ ձայն ունենալու իրաւունքէն:

Ռուսճուկ.— Իր թղթակցական յարաբերութեանը մէջ ցոյց տուաւ սպասուած փութաջանութիւնը: կազմը համեմատաբար լաւ ոյժերէ բաղկացած: Նիւթականը ոչ գոհացուցիչ: ժողովները եւ ընկերական շարքերը յար եւ նման Ֆիլիպպիին: ներքին անհամաձայնութիւններ չյայտնուեցան: ընդհանուր գործունէութիւնը անհամապատասխան իր կարեւորութեան եւ իր մէջ ունե-

ցած մէկէ աւելի մտաւորական ոյժերու կարողութեան:

Վառնա.— Սկիզբի օրէն մարմնի կազմը չունեցաւ օրինաւոր թիւը՝ մեկնումներու եւ հրաժարումներու պատճառով: ներքին խնդիրներ եւ փոխադարձ դժգոհութիւններ գոյուցութիւն ունին, որոնք արտայայտուեցան անհատական եւ այլ նամակներով՝ առանց սակայն սեղանի վրայ դրուելու: Կազմը վերջին ամիսներուն մէջ կորսնցուց իր օրինական մեծամասնութիւնն ալ: յանձնարարուեցաւ ամբողջացնել խմբապետներէ ընտրուած երկու ընկերներով: անկէ ասդին ոչ մէկ նամակ եւ տեղեկութիւն իրենցմէ: ժողովները աւելի թոյլ եւ գումարումները աւելի ուշ՝ քան Ֆիլիպպի եւ Ռուսճուկը: Նիւթականը յար եւ նման Ռուսճուկին: ընդհանուր կազմն ու գործունէութիւնը անհամապատասխան եւ նոյնիսկ ոչ-օգտակար բաղդատմամբ Վառնայի շրջանի կարեւորութեան: Դեկտեմբերի կիսուն կը թելադրէր Յունուար 15-ին Շրջ. ժողով գումարել, մինչ Յունուար 15-ն մինչեւ այժմ հարց չէ ղրկուած եւ վերջին ամիսներու իր կեանքին ու գործունէութեանը անտեղեկ մնացած է Կեդր. Կոմիտէն: իր իրաւասութեան շրջանակին ենթարկուած խումբերուն հետ փոխադարձ յարաբերութիւն գոյուցութիւն չունեցաւ որով եւ լուծուած վիճակի մը ենթարկուած են նաեւ անոնք:

Պուրկազ.— Բոլորն ալ Հայաստանցի ընկերներ եւ ջերմ դէպի գործը: Նիւթական տագնապը արգելք եղած է իրենց հաշուական պարտաճանաչութեանը կիրարկումին: առաջին վեցամսեայ հաշուեկշիւը գոնէ ուղարկուած չըլլալով՝ յիշեցուած է իրենց «ներքին կանոնագիրի» տրամադրութիւնը, որուն հիմունքով կը գրկուին վճարական ձայն ունենալու իրաւունքէն: Կեդր. Կոմիտէիս հետ մարմինը յաճախ չէ թղթակցած: ժողովներ շատ քիչ տեղի ունեցած է: ընդհանուր դրութիւնը ցոյց կու տայ որ մարմինը հաւաքաբար իր պարտականութեանը մէջ թոյլ է եւ գործերը ծանրացած մէկ ընկերով վրայ:

Ալիվէն.— Բաղդատմամբ իր ոյժերուն եւ իր լայն շրջանակին՝ գոհացուցիչ իր յարաբերութեանց մէջ: Նիւթական արդիւնքը նոյնպէս, նկատի առնելով կայարաններու մէջ տիրող թշուառութիւնն ու անգործութիւնը: ժողովներ չեն ունեցած յաճախ գոնէ տեղւոյն մէջ: մարմինին կազմը պահած է իր մեծամասնութիւնը:

Պուրքէշ.— Ոչ կանոնաւոր յարաբերութիւն եւ ոչ իսկ ո'եւէ վճարում ու հաշիւ: Պուրկազի մարմնոյն եղած առաջարկին յար եւ նմանը գրուած է Պուրքէշի մարմնին: այս առթիւ աւելի ընդարձակ պիտի խօսուի տեղեկագրիս յաջորդ գլուխներուն մէջ:

2.- Վահագն Տաթեւան:

Կալաց.— Նիւթական տեսակէտով անսպասելիօրէն գոհացուցիչ թղթակցական յարաբերութիւնները նոյնպէս՝ բաղդատմամբ իր ոյժերուն. կեանքը խաղաղ, վերջերս միայն Մարմնի մէկ ընկերը կը հրաժարէր իր ինչ ինչ պատճառաբանութիւններով. ընկերական պարտաճանաչութիւնը լաւ. ժողովներ առհասարակ քիչ անգամ կը գումարուի մտաւորական ոյժերու չգոյութեան պատճառով:

Սուլինա.— Նիւթապէս գոհացուցիչ՝ բաղդատմամբ ընդհանուրին. վերջին ամիսներու մէջ միայն թղթակցութեանց մէջ ցոյց չտուաւ հարկ եղած փութկոտութիւնը. ժողովներու եւ հաւաքումներու պարագան յար եւ նման Կալացին. ներքին խնդիրներ գոյութիւն ունին որոնց ծագումին եւ պատճառներուն վրայ պիտի խօսուի իր տեղին:

Պրայա.— Նիւթապէս գոհացուցիչ՝ բաղդատմամբ ընդհանուրին եւ պայմաններուն. թղթակցութեանց կանոնաւորութեամբ Ռուսմանիոյ եւ նոյնիսկ Պուլկարիոյ մարմիններէն ամէնէն աւելի ճշդապահը համեմատաբար: Ժողովներ այնքան՝ որքան կը թոյլատրեն գիրենք շրջապատող ընկերական, մտաւորական եւ քաղաքական պայմանները. համեմատաբար աւելի կենդանի շրջան քան Ռուսմանիոյ միւս շրջանները. ներքին խնդիրներ չեն յայտնուած:

Քոնսթանցա.— Նիւթապէս գոհացուցիչ՝ համեմատութեան նոյն սկզբունքով, թղթակցութիւններով, իսկ ժողովներով ոչ այնքան. բաղդատմամբ ինտելիգենտ ուժեր պարունակող շրջան մը ըլլալուն՝ կազմին մէջ չեն գտնուիր անոնցմէ. ներքին խնդիրներ չյայտնուեցան:

Մարմիններու գործունէութեան եւ ընդհանուր վիճակին վրայ տալով այս շատ խտացած պատկերը, բնականաբար մեր նպատակն է մատնանշել այն աղաղակող ճշմարտութիւնը թէ՛ մեր շրջանը չի տար եւ չտուաւ այն որ իրմէ կը պահանջէ ընդհանուր գործը եւ կազմակերպութիւնը՝ իր պայմաններուն, դիրքին եւ իբր գաղթավայր՝ ունեցած կարեւորութեան տեսակէտով: Ասկից գատ պարզուած երեւոյթը կու գար աննպաստ վկայութիւն մը տալ մեր շարքերը կազմող ընկերներու կազմակերպական-կուսակցական գիտակցութեան վերաբերմամբ:

Սկզբի օրերէն ակնյայտնի այս թերութիւնները դարմանելու հետամտութիւնը մեր գլխաւոր մտահոգութիւններէն մէկը կազմեց որուն ամէն առիթներով ձգտեցանք: Մեր յարաբերութեանց տուինք շատ ստիպողական եւ սերտ բնաւորութիւն մը, ստիպելով որ նոյն վերաբերութիւնը հարկադրուին մարմինները նաեւ մեզի հանդէպ: Այդ նպատակով արդէն, բացի մեր անհատական նամակներով եղած թելադրանքէն, Երկրի թէ Պալքանի, ինչպէս նաեւ Բիւրոյի եւ Արտասահմանեան

մարմիններու ուղարկած մեր նամակներու թիւը կը հասնի 200ի: Մօտ 70 շրջաբերականներ հրատարակած ենք՝ շօշափելով եւ տեղեկագրելով մեր շրջանին հետ անմիջական կապ ունեցող խնդիրներ ու հարցեր, որպէսզի շրջանի ընկերները մնային գիտակ կազմակերպական անցուդարձերու, որոնք տեղի կ'ունենան իրենց շուրջը: Վստահաբար կ'ըսենք թէ, եւ այս ցաւ ի սիրտ, մեր այդ աշխատութիւնները դժբախտաբար գնացին դատապարտուած մնալու կոմիտէի արխիւին եւ արկղին մէջ. քիչ մարմիններ կարողացին, պարզեցին անոնց միտքը. այդ գանցառութեան դէմ հասած դժգոհութիւններ ալ չեն պակսիր մեր արխիւին մէջ, որ ամբողջութեամբ ձեր տրամադրութեան տակ դրուած է ծանօթանալու համար անոր պարունակութեան հետ: Բացի յաճախակի հաւաքումներէ եւ խորհրդակցութիւններէ ունեցած ենք նաեւ արձանագրութեան տակ առնուած 24-25 նիստեր:

Եւ սակայն լոկ հեռաւոր, թղթակցական կանոնաւոր, հարկադրող յարաբերութիւն ալ պիտի չբաւարարէր մարմիններուն պարտաճանաչութեան աննպաստ օրինակներն ալ ունէինք մեր աչքին առջեւ: Ուստի գործի ձեռնարկելու մեր առաջին օրէն իսկ դիմեցինք Արեւմտ. Բիւրոյին յիշեցնելու Շրջ. ժողովի որոշումը փրփականտի հարցի վերաբերմամբ եւ խնդրելու ընկեր Արչակ Խսահակեանի առաջումը որ խոստացուած էր նախ քան նախորդ Շրջ. ժողովը:

Դժբախտաբար յիշեալ ընկերը չկրցաւ գոնէ 2 ամսուան համար ալ տրամադրելի ընել ինքզինք, իսկ իր առաջարկած պայմանաժամը — 2-3 շաբաթ միայն — բացի նիւթական կորուստէ մը ոչինչով աչքի պիտի գարնէր: Հետեւաբար մեզ կը մնար ետ կենալ այդ պայմանը ընդունելէն, միեւնոյն ժամանակ շեշտելով Բիւրոյին դարձեալ կարող ընկերող մը ներկայութեան պէտքը մեր մէջ:

Դեռ նախորդ Շրջ. ժողովին մէջ պարզուած իրողութիւնները պէտքը կը զգացնեն ընկերող մը այցելութիւնը Ռուսմանիոյ մարմիններուն, ըստ որում յիշեալ մարմինները տարիներէ ի վեր գրկուած շրջուն-գործիչներու ներկայութենէն, ինչպէս նաեւ չկրնալով ամբողջապէս մասնակցիլ պարբերաբար գումարուող Շրջ. ժողովներուն, միւս կողմէ գրկուած՝ տեղական մտաւորական ընկերներու գոյութենէն, կը մնային անգիտակ կազմակերպութեան ներքին կեանքին, անհաղորդ անոր որոշումներուն, գործունէութեան եւ սկզբունքներուն եւ հետեւաբար ենթակայ տակաւ ուժացումի, ներքին անհամաձայնութիւններու եւ թուլութիւններուն: Այս պայմաններուն առջեւ հարկ կ'ըլլար գոնէ ընկեր Վտարանդին³ իբրեւ Ռուսմանիոյ ընկեր եւ տեղւոյն կառավարութեան կասկածանքէն հեռի մնացած մէկը:

3.- Վտարանդի - Արամ Չարոզ:

անմիջական այցելութիւն մը տար Ռուսմանիոյ մարմիններուն, թէ՛ Շրջանական եւ Ընդհանուր ժողովներու սկզբունքներն ու որոշումները բացատրելու եւ թէ՛ մարմիններու ընտրութեանց գլուխը կենալու համար որ տեղի պիտի ունենար ցարդ գործադրուածէն հիմնովին տարբեր եղանակով մը: Ասոնցմէ գատ՝ անոնց հաշւական չքննուած եւ խճողուած խնդիրները նոյնքան եւ աւելի հարկադրական կը դարձնէին այդ այցելութիւնը: Ուրախ ենք յայտնել որ այդ այցելութիւնը եղաւ օգտակար. քննուեցան հաշիւները, տեղի ունեցան ժողովներ, կատարուեցան մարմիններու ընտրութիւններ եւ կարգադրուեցաւ Կալացի մէջ գտնուած սրճարանականպահեստի դրամին խնդիրը՝ Շրջ. ժողովի կողմէ յանձնարարուած՝ փոխադրուելով Կեդր. Կոմիտէի արկղը:

Յուլիսի վերջը Արեւմտ. Բիւրոն կը դրկէր նաեւ ընկեր Շահլամեանը, որ նոյնպէս յարմար դատեցինք ուղարկել Ռուսմանիոյ շրջանը, քանի որ գաղթականութեան հոսանքը դէպի Երկիր աւելի Ռուսմանիայէն ծայր պիտի տար: Ընկեր Շահլամեան եւս այցելեց Ռուսման, Վառնա եւ Ռուսմանիոյ բոլոր մարմիններուն՝ խօսելով, բացատրելով կազմակերպութեան սկզբունքները եւ Երկիր վերադարձող գաղթականներու պարտականութիւնը:

Սահմանադրութենէն յետոյ, շրջանի մարմիններու եւ ընկերներու ցոյց տուած տրամադրութեանց եւ հոգեբանութեան պահուն ալ, ամէն կարելի աշխատութիւններով հետամտեցանք յիշեցնել իրենց պարտականութիւնները — ապացոյց՝ մեր պահած յարաբերութիւններն ու հրատարակութիւնները: Անշուշտ տիրող այս պայմաններու պահուն տրամադրելի փրփականտիստ ընկերող մը այցելութիւնը մասնաւորապէս Պուլկարիոյ մարմիններուն՝ պիտի ունենար իր բարեբար ազդեցութիւնը եւ գուցէ որոշ չափով վեր պիտի բարձրացնէր այդ տրամադրութիւններն ու գործերու ընթացքը իր ներկայ շեղումէն: Դժբախտաբար կազմակերպութեան ընդհանուր ուղադրութիւնը կեդրոնացած ըլլալով Երկրին վրայ եւ տրամադրելի բոլոր ոյժերը գրաւուած Երկրի գործերով, ոչ միայն անկարելի եղաւ այդ պէտքին դարման տանիլ, այլ նաեւ մեր ունեցած ոյժերն ալ առնուեցան եւ դեռ կ'ուզուի առնել այն կողմը: Եւ արդէն պալքանեան ընկերներու տրամադրութիւնը, որքան ալ իր էութեանը մէջ աններելի, եթէ ունի հասկնալի կողմ մը, այդ ալ ընդհանուր ուղադրութիւնն ու հետաքրքրութիւնը Երկիրով կ'լանուած ըլլալու պարագան է, որ բոլորովին անակնկալ եւ անսպասելի, բայց գերազանցօրէն բարեբար ու փրկարար յեղաշրջումի մը մէջ դրուեցաւ: Ստեղծուած նոր պայմաններուն առջեւ, Արտասահմանի ընկերներու ու չէզոք հասարակութեան մէջ այն սխալ մտածումը յաւաքաւ թէ Արտասահմանի մէջ կազմակերպութիւնը կը կորսնցնէ իր գոյութեան իրաւունքը ու հողը, մինչ անոր գոյութիւնը աւելի քան հարկադրական կը դառ-

նար՝ հէնց պահելու համար Երկրի կազմակերպութիւնը, մինչեւ որ այնտեղի ժողովուրդը տնտեսապէս վերանորոգուի եւ դրուի իր կազմակերպութիւնը պահելու վիճակի մէջ, մինչեւ որ Արտասահմանի կազմակերպական ընկերներու եթէ ոչ ամբողջութիւնը գէթ բացարձակ մեծամասնութիւնը լեցուի Երկիր: Նկատի առնելով տիրող պայմանները, գաղթականութեան հոսանքը, սովեալներու օգտին նպաստներու յաճախակի հաւաքում եւսյն, չկրցանք ստիպողաբար գործադրութիւնը յանձնարարել «Ներքին-կանոնագրի» այն տրամադրութեանը, որ պարտաւորիչ կը դարձնէր հանգանակութիւնները, ձգելով որ մարմինները շարժին համաձայն իրենց հայեցողութեան եւ պայմաններուն: Բայց եթէ հանգանակութիւնը անկարելի եղաւ, կարող էին օրինակ Ռուսմանիոյ, Վառնայի եւ Պուլկարի մարմինները կազմակերպութեան օգտին մէջ մէկ ներկայացումներ սարքել, ինչպէս սովորութիւն ըրած է Ֆիլիպպին տարիներէ ի վեր եւ որ գործադրուեցաւ այս տարի եւ որ բարոյական թէ նիւթական նշանակելի յաջողութիւն մը (եղաւ): Անդամավճարներու դանդաղ, անկատար հաւաքումներուն, ինչպէս նաեւ անդամներու ցրուումին եւ մեկնումին միանալով նաեւ հանգանակութեան ալ գանցառութիւնը, պալքանեան շրջանի մուտքը կէտ առ կէտ նուազեցաւ, ինչպէս պիտի տեսնուի իր տեղին:

Ընտրողական նոր օրէնքը տուաւ անսպասելի արդիւնաւորութիւն մը իր առաջին գործադրութեամբ: Ուղղակի, գաղտնի եւ հաւասար ընտրութեան սիստեմի կիրառութեամբ, ոչ միայն ընկերները աւելի ջերմ վերաբերում մը ունեցան դէպի մարմիններու ընտրութեան գործը, այլ եւ առջեւը առնուեցաւ ընտրութեան պահուն յայտնուած անախորժ էնթրիկներու ու հակառակութեանց, դնելով գործը խաղաղ ընդհանուր գործունէութեան մը վիճակին մէջ:

Նախորդ Շրջ. ժողովը կը յանձնարարէր Կեդր. Կոմիտէիս՝ պատրաստել պատանեաց խումբերու յատուկ ծրագիր մը՝ ընելով այդ առիթը ցուցմունքներ: Տեսնուած պէտքի մը վրայ՝ հարկ դատեցինք փորձառու ընկերներու կարծիքն եւս առնել. այդ դիտաւորութեամբ ալ դիմեցինք ընկեր Չաւարեանին, բայց մէկ կողմէ ժամանակի սղութիւնը, միւս կողմէ հարցը անգամ մը եւս Շրջ. ժողովի նկատողութեան յանձնելու պէտքը՝ հարկադրեցին մեզ որ չկրնանք իրագործել այդ որոշումը:

Նոյնպէս անիրագործելի մնաց պուլկար եւ ռուսման մամուլին մէջ հայանպաստ փրփականտի մասին տրուած որոշումը: Սահմանադրութենէն առաջ դիմում եղաւ պուլկար բարեկամներու, բայց մատնանշուած ոչ մէկ թերթ կրնար մեր սկզբունքներուն եւ հայեցանքներուն համապատասխան բաւարարութիւն մը ընծայել:

4.- Ժիրայր - Բարթող Չօրեան, անդամ Պալքանի Կ. Կոմիտէին:

խակ Սահմանադրութենէն յետոյ հարցը կորսնցուց այլևս իր կարեւորութիւնը՝ գոնէ իր նպատակին ուղղութեան տեսակէտով որ աւելի քաղաքական էր:

Նախորդ Երջ. ժողովի սկզբունքներէն մէկն ալ եղաւ ռայոնական ժողովի գումարման հարցը՝ թելադրութեամբ Արեւմտեան Բիւրոյին, որուն համար շրջանի կողմէ իրեն պատգամաւոր ընտրեց ընկեր ժիրայրը⁴:

Սկիզբէն մեր Բիւրոյի կարծիքը ժողովի գումարման ի նպաստ էր, սակայն երբ Ընդհ. ժողովի ի մօտոյ գումարման հարցը ծնաւ եւ անոր յաջորդեց նաեւ Թուրքիոյ սահմանադրութիւնը, հարցը կորսնցուց իր կարեւորութիւնը. այնպէս որ Կեդր. Կոմիտէն ինք եղաւ առջարկող որ չգումարուի այդ ժողովը, քանի որ արդէն Արեւմտ. Ռայոնական ժողովը իր սահմանափակ կազմութեամբ իսկ — Պալքան, Ամերիկա եւ Եգիպտոս — պիտի չունենայ աչքառու եւ կարեւոր օգտակարութիւն մը կազմակերպական տեսակէտներով, թէեւ բաւական նշանակելի գումար մըն ալ ծախսուէր այդ նպատակով:

«Ռազմիկ» — Հա՞րկ է ըսել որ այս տարեշրջանի մեր գլխաւոր եւ ամէնէն ծանր մտահոգութիւններէն մէկն ալ կազմեց «Ռազմիկ»ը, իր նիւթական թէ բարոյական կրկնակի պէտքերովը միանգամայն: Նախորդ Երջ. ժողովին մէջ, արդէն Կեդր. Կոմիտէն իր տեղեկագրով պէտք եղածէն աւելի մանրամասն խօսած էր, պարզելով հարցը իր սկզբնաւորութենէն: Համաձայն այդ եւ Երջ. ժողովի ուսումնասիրութեանց ու եզրակացութեանց՝ տարեկան 2000 Փր.ի պէտք մը անխուսափելի եղած էր ու պիտի մնար, բայց այդ պէտքին հայթայթումը եղած էր միշտ Ընդհ. ժողովի սահմանած ծախքի՝ սակի ու ցենզի սահմանին մէջ:

Հետեւաբար նոյն համեմատութեամբ ալ իր պիւտճէի բաշխումը սկսաւ նախորդ Երջ. ժողովը: Դիտելի էր սակայն որ նախորդ Երջ. ժողովը այս բաշխումն ու դրամական սահմանը կ'ընէր՝ թերթը եւ հետեւաբար անոր պիւտճէն ընդարձակելով հանդերձ, որ կը հասնէր 2000-2500 Փրանքի մօտ գումարի մը: Այնպէս որ իրականին մէջ նոր բան մը աւելցած չլլային գատ, սահմանուած գումարին դէմ ալ նոր ծախք մը կը ստեղծէր: Երջ. ժողովը իր այս որոշման պահուն՝ միայն կը յուսար թէ թերթին ծաւալը մեծնալով՝ բաժանորդներու թիւին վրայ զգալի յաւելում մ'ալ պիտի լլայր: Կեդր. Կոմիտէի այս տարեշրջանի գործերը լլայլով նախորդէն համեմատաբար թեթեւ եւ ոչ ծանրաբեռնեալ՝ կարելի պիտի լլայր գանձումներուն աւելի կանոնաւորաբար հետեւել, ինչպէս նաեւ նախորդ տարեշրջանէ մնացած մօտ 6000 Փրք. գանձելի բաժնեգրներուն գէթ կէսին գանձումը ապահովել, որով թերթին պիւտճէն իրապէս պիտի դրուէր միտնարական հաւասարակշռութեան մը մէջ: Բայց կեանքի ստիպողական ու անակնկալ պայմանները այս կանխամտածութիւններն ալ եկան խանգարելու: Նախ՝ Ֆիզիքապէս պակսեցաւ ամէն հնարա-

ւորութիւն, որովհետեւ խմբագրութեան գործը ամբողջ մնաց մէկ ընկերով վրայ՝ տարեշրջանի սկիզբի օրէն իսկ, երբ անցեալ շրջանին երկու խմբագիր-ընկերներու ներկայութիւնը անբաւական նկատուելով տիրող պէտքին առջեւ, հաշուապահ մըն ալ պէտքը կը զգացուէր: Ընկեր Զարդարեան Մայիսի-Յունիսի մէջ մեկնելով Սոֆիայի մէջ գումարուած պուկարահայ համագումարին դեռ չվերադարձած անկէ՝ Սահմանադրութիւնը կը յայտարարուէր Թուրքիոյ մէջ: Այս իրողութիւնը հարկադրեց որ ան մինչեւ Յունիսի վերջերը մնայ Սոֆիա ընկեր Ակնունիի հետ, ուրկէ վերադառնալով անմիջապէս մեկնեցաւ Պոլիս: Այնպէս որ ընկեր Զարդարեան, հեռուէն պահելով իր աշխատակցութիւնը չի կրնար իր մասնակցութիւնը ունենալ խմբագրական միւս աշխատակցութեանց մէջ: Իսկ վերջնապէս Հոկտեմբերին Պոլիս փոխադրուելէ յետոյ անոր աշխատակցութիւնը դարձաւ այլեւս պատահական. արդէն ուրիշ կերպ ալ անկարելի էր եւ վեր բնականաբար ընկեր Զարդարեանի ֆիզիքական ուժերէն: Իսկ այս պայմաններուն մէջ ընկեր ժիրայրի ոյժերը մարդկօրէն անբաւական էին միաժամանակ հասնել թէ խմբագրական հոգերուն եւ թէ դրամական-հաշուական աշխատութեանց ու գանձումներուն: Ասոր հետ մէկտեղ պարտք կը զգանք սակայն յիշել միեւնոյն ատեն որ դիմումները այս տարի աւելի յաճախ ու կանոնաւոր եղած են քան նախորդ տարեշրջանին: Ինչպէս գիտէք, ընկեր ժիրայրին օգնական մը բերել տալու համար մեր ըրած դիմումներն ալ մնացին ապարդիւն:

Միւս կողմէ, Սահմանադրութեան յայտարարութենէն յետոյ, նիւթական նոր գոհողութիւններու պէտքը կը ծնէր հարկադրաբար, եւ նոր կորուստներ՝ փոխանակ նոր բաժանորդներու, ինչպէս կը յուսար նախորդ Երջ. ժողովը: Երկրէն՝ անհուն պահանջ կ'ըլլար թերթի, որոնց մեծագոյն մասը ճրի կը ցրուուէր. բնականաբար փրոփականտի այդ փոթորկոտ շրջանին կազմակերպութիւնը պիտի չուզէր զրկել Երկիրը, ստիպողական այդ պէտքին գուզադրելով նիւթական նեղ նկատումներ: Այնպէս որ Յունիս 15էն մինչ Սեպտեմբերի վերջերը 1000 օրինակ «Ռազմիկ»ի փոխարէն հրատարակուեցաւ 1500էն մինչեւ 3500, տեղի տալով թուղթի, տպագրական եւ դրոշմի եռապատիկ ծախքի մը: Դրոշմի ծախքը 1000 օրինակ հրատարակուած պահուն ամսական 160-էն 190 Փր.ը չէր անցներ. Յունիս, Օգոստոս եւ Սեպտեմբեր ամիսներուն մէջ մինչեւ 1200 Փր.ը կ'անցնէր. այս համեմատութեամբ ե՛ւ թուղթը ե՛ւ տպագրութիւնը: Ասդին՝ գաղութներու մէջ «Ռազմիկ» կը կորսնցնէր իր կարեւորութիւնը. բաժանորդագրութիւնները կը դադրէին արագօրէն, իսկ Երկիր դարձողներէն շատեր կ'երթային առանց պարտքերին տալու, առանց նոյնիսկ իրենց մեկնումը իմացնելու, որպէսզի գէթ թերթերը դրկուին աւելորդ ծախքէ խուսափած լլայլու համար: Հոկտ. Նոյեմբերին արդէն Երկրի ժողովուրդը վայր-

կեանի գինովութենէն յազեցած՝ կը գտնէր իր սովորական խաղաղ վիճակը:

«Ռազմիկ» հեռուէն անոր հետաքրքրութիւնը չէր կրնար յազեցնել, քանի որ Պոլիս որ աւելի մօտ էր եւ կեանքը անկէ կը բխէր: Մեր կողմէ կ'ըլլային ճրի-առաքումներու համար սահմանափակումներ ու «Ռազմիկ»ի հրատարակութեան թիւը կ'իջնէր դարձեալ 900-1000ի, բայց այս անգամ 800-850 բաժանորդ կը մնար Արտասահման եւ Պուկարիա. Երկիր կը մտնէր 200-250 թերթ՝ մեծ մասամբ ճրի, այնպէս որ իր նիւթական արդիւնքը կը դառնար լիուլի անբաւարար: Այս պայմաններու մէջ Կեդր. Կոմիտէն նոյնիսկ Բիւրոյի եւ Պոլսոյ Պատասխանատու մարմինն գիտակցութեամբ ու թոյլտուութեամբ՝ հարկադրուեցաւ իր 2000ի սակէն դուրս գալ, կրկնելով այդ գումարը, չուզելով թերթը անժամանակ կերպով ընդհատելով՝ ձգել կազմակերպութեան վարկը: Բայց կարեւոր կը նկատենք անմիջապէս ըսել որ գանձելի մօտՓրանքի գումարէն անպատճառ կարելի պիտի լլայր հաւաքել գոնէ 2000 Փրանք, որով կրկին Երջ. ժողովի գծած սահմանին մէջ պիտի մնանք, պայմանով որ՝ Երջ. ժողովէն անմիջապէս յետոյ սկսուի այդ դիմումները եւ 1-2 ամիս մասնաւոր եւ տեւական աշխատանք թափուի եւ ընկեր ժիրայրի դէպիս Պոլիս մեկնումը յետաձգուի Պատասխանատու մարմնի յօժարութեամբ:

Արդէն այս պահուն մաս մը գումարներ տրամադրելի կը մնան հոս հոն գործակալներու քով, այնպէս որ վերջին աշխատութիւն մը պիտի ունենայ իր նշանակելի արդիւնքները:

Դեռ Երկրի գործակալներէն վերջնապէս հաւաքուած չլլայով հաշիւները, կարելի չէ եղած ճշդել թէ՛ որքան ճրի թերթ ցրուուած է Երկրի մէջ: Միայն աչքի առջեւ ունենալով անհատ բաժանորդներներու եւ ճրիներու թիւը, իր գոյութեան օրէն մինչեւ հիմա, առանց հաշուելու Սահմանադրութենէն յետոյ ծրարով փոխադրուած եւ ցրուուած ճրիներ, հետեւեալ հաշիւը կը յայտնուի.

Երկիր փոխադրուած 50ական օրինակ 905 Հոկտ. 15էն մինչ 1908ի Հոկտեմբ. 15 եւ ծրարներ՝ Սահմ[անադրութենէն] յետոյ Փր. 3450
Անհատ բաժանորդներու վրայ կորսուած » 3389
Սկիզբի ամիսներուն, աշխատակիցներու-խմբագրութիւններու եւն » 4843
Գանձելի բաժնեգրներն՝ որոնց կորուստը եւ գանձումը դեռ չէ ճշդուած վերջնականապէս » 7521
Իսկ 3½ տարուան մէջ մինչ 1909 Մարտ 31 ձեռքէ ծախուածներէ եւ բաժնեգրներէ չգանձուածն է

.....
Ընդհ. մուտքն է Փր⁵

Գալով ձեռնարկին բարոյական նշանակութեան եւ ազդեցութեան, կը կարծենք թէ աւելորդ պիտի լլայր տող մը իսկ գրել այդ մասին:

Բացի նիւթական պարագաներէ «Ռազմիկ»ի ընդհատման ծնունդ տուող բարոյական-կազմակերպական պարագաները արդէն մանրամասնօրէն բացայայտուած է մարմիններուն՝ մասնաւոր շրջաբերակաւով մը: Սահմանադրութենէն յետոյ՝ թերթին գոյութիւնը այլեւս ստիպողական կը դառնար Պոլսոյ մէջ՝ օրաթերթի հանգամանքով: Խնդիրը մէկէ աւելի անգամներ արժարժուեցաւ մեր եւ Պատասխանատուի մէջ, բայց պայմանները չթոյլատրեցին անոր անմիջական հիմնումին, որով հարկ եղաւ պահել «Ռազմիկ»ը՝ կազմակերպութիւնը գոնէ Պոլսոյ մօտ ինքզինքը արտայայտող սեփական թերթ մը ունենալու համար: Այժմ երբ արդէն մօտ օրէն լոյս պիտի տեսնէ Պոլսոյ մէջ կազմակերպութեան թերթը, հարկ կը դառնար այլեւս ընդհատել «Ռազմիկ»ը, որուն համար շրջանի կարծիքն ալ առնուած էր կանխաւ, եւ փոխադրել իր գրերն ու տպագրական իրերը Պոլիս:

Կը յուսանք թէ այն աշխատութիւնը որ թափուեցաւ «Ռազմիկ»ի վրայ մեր շրջանի ընկերներուն կողմէ՝ կրկնապատկուած կերպով պիտի թափուի «Ազատամարտ»ի վրայ:

Յարաբերութիւն Երկրի հետ եւ կազմակերպութեան աջակցութեան անոր մէջ.

Բնական էր որ Երկիրը եւ անոր հետ յարաբերուելու խնդիրը պիտի կազմէր կարեւոր եւ տիրական աշխատութիւններէն մէկը մեր պարտականութեանց սահմանին մէջ: Այս առաջադրութեամբ ալ առաջին օրէն մինչեւ հիմա կանոնաւոր կերպով յարաբերուած ենք՝ օրը օրին յանձնաձեւով այն ամէնը, որոնց պէտքը զգացուեցաւ: Դեռ անցեալ տարիէն Պոլիս-Իզմիրի շրջանը ուղղակի յարաբերութեան դրուած էր պալքանեան մարմինն հետ: Ասոնցմէ գատ յարաբերութիւններ կը պահուին Պէյրութի, Սամսոնի, Սեբաստիոյ եւ այլ վայրերու հետ: Մինչեւ Սահմանադրութեան յայտարարութիւնը մեր յարաբերութիւնները շարունակուեցան նոյն վայրերուն հետ պէտք տեսնուած ատենը:

Փարիզի Քոնկրէնէն յետոյ լոյս տեսած թուրքերէն պրոչիւրներ մեծ քանակութեամբ փոխադրեցինք: Յունիս 11էն յետոյ, մինչեւ դրութեան պարզումը եւ մինչեւ Պատասխանատու մարմնին յարաբերութեան սկզբնաւորութիւնը, մեծ քանակութեամբ յեղափոխական գրականութիւն մտցուցինք ներս օրը օրին: Յետոյ երբ արդէն կազմակերպութիւնը հիմնաւորուեցաւ եւ հոս հոն մարմիններ կազմուեցան, լլայր պաշտօնապէս, լլայր «Ռազմիկ»ի խմբագրութեան միջոցով եւ կամ անհատական նամակներով, շարունակուեցան նոյն յարաբերութիւնները, գոհացում տալով բոլոր խնդրանքներուն: Փոխադրեցինք մեր խմբագրական տետրակներէն՝ անդամավճարներու գանձման համար, նոյնպէս

5.- Բնագրին մէջ գումարը չէ նշանակուած:

մեր «ներքին կանոնագիրներէն», որուն հիմունքով Երկիրը կազմակերպուեցաւ, մինչեւ որ համապատասխան մարմինները կարենան տեղական պահանջին համաձայն սեփական կանոնագիրներ գծել:

Որպէսզի Պատասխանատուի կազմը Պոլսոյ մէջ դրուէր բաղձալի վիճակի մը մէջ, առաջին օրէն իսկ արդէն մեր ընկերներէն Զարդարեանը, համախորհուրդ Պատասխանատուին, ուղարկեցինք Պոլիս, որուն միացաւ նաեւ ընկեր-Շաւարշ, իբրեւ ծանօթ տեղական ընկերներուն եւ պայմաններուն: Դարձեալ Պատասխանատուին ուժեղացման եւ Երկրի կազմակերպութեան բարեւոյց հիմնաւորման համար որոշ առաջարկներ ներկայացուցինք Բիւրոյին, որոնք տակաւ իրականութեան մէջ մտան:

Երկրի կազմակերպութեան այժմեան վիճակին վրայ Շրջ. ժողովիդ աւելի լուրջ գաղափար մը տալու փափաքով՝ վերջերս դիմեցինք Պատասխանատուին, որուն հաղորդած տեղեկութիւնները ամէն կերպով մխիթարական են: Հայաստանի Արեւելեան մասը՝ Վան, Մուշ, Պիթլիս եւ Կարին որ սկիզբէն ի վեր եղած էին Դաշնակցութեան գործունէութեան խարխուր, կը գտնուին կազմակերպող թէ մարտական լաւագոյն ոյժեր: Վաւերեան եւ Դաւթեան՝ Վանի մէջ, բացի նախապէս գտնուած տեղական ոյժերէն: Գարմէնը, Մարգաբտ եւ Սեպուհը՝ կը գտնուին Պիթլիսի եւ Մուշի շրջանները: Իսկ Մուրատը՝ Վաթանին հետ անցած է Տիգրանակերտ, ուրկէ Վաթանը՝ իրմէ բաժնուելով Սեւերէկի, Ուրֆայի եւ Հալէպի գիծով ճամբորդած է, իսկ Մուրատ անցած է Խարբերդ Մալաթիա գծով դէպի Սեբաստիա: Վանի Սարգիսը բաւական ատեն Կարին մնալով՝ վերջերս միայն մեկնել է դէպի Պոլիս:

Այնպէս որ Արեւելեան Հայաստանի բոլոր շրջանները կազմակերպական տեսակէտով կը ներկայացնեն մխիթարական վիճակ: Այդ շրջանը ունեցաւ նաեւ իր Ռայոնական ժողովը Կարնոյ մէջ: Վան, Մուշ եւ Կարին կը ներկայացնեն Կ. Կոմիտէներ, իսկ Պիթլիսը հետզհետէ ուժեղանալու եւ ձեւաւորուելու վրայ է: Կարելի է ըսել այդ շրջաններու հայ կեանքի բովանդակ արտայայտութիւնները կ'անցնին մեր կազմակերպական քանակով: Պոլսոյ Պատասխանատու մարմինը շարունակաբար կը ստանայ հեռագիրներ եւ տեղեկութիւններ, գանգատ եւ բողոքներ, որոնց գոհացում տալու համար կ'առնէ հարկ եղած քայլերը:

Արեւմտեան Հայաստանի մէջ եւս կազմակերպութիւնը ստացած է որոշ ձեւակերպութիւն եւ գործունէութեան հիմնաւոր ընթացք: Սեբաստիոյ մէջ տեղի ունեցաւ նոյնպէս ռայոնական ժողով ընկեր Շահապի եւ Մուրատի՞ ներկայութեամբ, որուն մասնակցած են Սամսոն, Թոքատ, Ամասիա, Մարգուան, Տիվրիկ, Շապին Գարահիսար եւ Խարբերդ իրենց ներկայացուցիչներով: Ժողովը տուած է մխիթարական որոշումներ եւ իր գործունէութեան համար ըրած առաջադրութիւններ, որոնց իրագործման համար մարմինները կ'աշխատեն:

տին բոլոր սրտով: Նոր ժողովի որոշումով այդ շրջանը կազմած է 4 Կեդր. Կոմիտէութիւններ: Անդին Տրապիզոնը կը ներկայացնէ արդէն առանձին Կեդր. Կոմիտէ, ուր կան մէկէ աւելի ինտելիգենտ ուժեր եւ ուր շուտով լոյս կը տեսնէ մեր ընկերներու նախձեռնութեամբ տեղական թերթ մը: Սամսոնէն մինչեւ Սեբաստիա, բացի Դաշնակցութենէն, կան նաեւ հնչակեաններ անդեկ ու անկեդրոն, ինչպէս կը յայտարարուի, որոնք կը մնան տատանող վիճակի մէջ: Իրենցմէ ոմանք համակիր [են] Դաշնակցութեան ու ձուլումի, ոմանք ալ անվճռական ու անվստահելի ինքնին: Մեր ընկեր Մուրատ՝ դարձեալ բանակցութեան սկսեր է վերջերս նոր տարրերուն հետ վերջնական համաձայնութեան մը յանգելու համար:

Պատասխանատու մարմնի յանձնարարութեամբ՝ վերջերս ընկեր Շահապ զասած է Մալաթիա, անկէ կ'անցնի Խարբերդի շրջանը — Արաբկիր, Ակն, Բայուր ուրոնք արդէն կը ներկայացնեն մէկ մէկ կոմիտէութիւններ: Մէկ քանի շրջուն ընկերներ, դարձեալ «Պատասխանատու»ի հրահանգով անցած են Գոնիայի, էնկիւրիի, էրէյլիի եւ այդ կողմերը ցան ու ցրիւ եկած հայ համայնքներու մէջ, կազմակերպելով եւ յարաբերութեանց մէջ դնելով «Պատասխանատու»ի հետ: Կեսարիոյ վիճակը նոյնպէս գոհացուցիչ է, ուր վերջին անգամ եթէ վերահաս ջարդերը տեղի չունեցան՝ պատճառը միայն մեր ընկերներու եւ մարտական խումբերու լուելեան սպառնալիքն եղած է: Պոլսոյ մէջ՝ իր շրջանակներով, Ռոտոսթօ, Ատաբազար, Եալովա, Պրուսա՝ իրենց բազմաթիւ գիւղերով եւ քաղաքներով՝ Դաշնակցութիւնը ունի մարմիններ, խումբեր եւ կանանց կազմակերպութիւններ: Ինքնապաշտպանութեան գործը ժողովրդական լայն խաւերու մէջ առաջ կը տարուի ցանկալի ծաւալով:

Գալով Կիլիկիոյ շրջանին Ատանան կը կազմէ Դաշնակցութեան ուժեղ վայրը, իր հետ ունենալով Սիս եւ յարակից մասերը: Սկիզբի օրէն Դաշնակցութիւնը հոն ունէր ժընեկի համալսարանէն շրջանաւարտ ընկեր մը եւ կազմակերպութիւն: Այդ կողմերու միակ թոյլ վայրը Հալէպն է, ուր գտնուող մեր կարգ մը ընկերները իրենց սխալ տաքտիքով չեն կրցած կազմակերպութեան նպաստել եւ ժողովրդական համակրութիւն ստեղծել: Վերջերս ընկեր Գալֆայեան երկար մնալով Կիլիկիոյ շրջանը՝ եղած կազմերը գորացնելէ եւ նորեր հիմնելէ ետք «Պատասխանատու»ի հեռագրին վրայ մեկնած է Հալէպ ուրկէ պիտի անցնի նաեւ Մարաշ եւ Զէյթուն:

Երկիր կը փոխադրուին մեծաքանակ հրատարակութիւններ: Կազմակերպական ամէն վայրի մէջ բացուած են ժողովրդական ընթերցարաններ, մատենադարան, լսարան եւ դասաւանդութիւններ: Տեղ տեղ կազմա-

6.- Սեպուհ - հանրաժամօք մարտիկն է, բուն անունով՝ Արշակ Ներսէսեան:
7.- Վաթան - Ղեւոնդ Սելոյեան:
8.- Բարսեղ Շահապ իւ Սեբաստացի Սուրբատ:

կերպուած են եւ կը շարունակուին կազմուիլ երգեցիկ խումբեր, թատերական եւ որսորդական խումբեր, կուլտուրական ընկերութիւններ: Կազմուած են նաեւ բոլոր ճարտարագործական տնտեսապէս զարգացած շրջաններու մէջ բանուորական միութիւններ՝ անկուսակցական հողի վրայ, բայց մեր մարմիններու ընդհանուր հակողութեան տակ:

Այս հաշուով յոյս կայ որ յառաջիկայ Ընդհ. ժողովին պիտի մասնակցին Երկրէն տասնէ աւելի կեդր. կոմիտէներ՝ իրենց ձայներով:

Սահմանադրութենէն մինչեւ հիմա, ըսել է 8-9 ամսուան ընթացքի մը միջոցին՝ ժողովրդական համակրութիւնը ոչ թէ կեցած ու շեղումներու ենթարկուած է ղէպի Դաշնակցութիւնը, այլ ամէնօրեայ դիմումներն ու նամակները եւ յայտնուող փաստերը ցոյց կու տան թէ աւելի շեշտուած եւ խորացած է: Այսպէս, կարելի է եզրակացնել թէ՛ Դաշնակցութիւնն է այսօր Երկրին մէջ այն հայ քաղաքական կազմակերպութիւնը, որ կարող է ունէ պարագայի տակ վստահօրէն ինքզինքը յայտարարել հայ ժողովրդի գիտակից մեծամասնութեան ներկայացուցիչը:

Մէջբերելով Պատասխանատուի նամակը իր ընդհանուր եւ կարեւոր գիծերով, անհրաժեշտ կը նկատենք նաեւ տեղեկացնել որ Երկրի գինման գործը նոյնպէս Պալք. Կեդր. Կոմիտէի նշանակելի զբաղում-մտահոգութիւններէն մէկը կազմեց: Սահմանադրութեան առաջին օրէն իսկ, Երկրին գանազան վայրերէն եւ ընկերներու կողմէ գէնքի ստիպողական պէտքը շեշտուեցաւ: Այս մասին սխտեմաթիկօրէն աշխատելու համար ունեցանք մասնաւոր ժողով՝ մասնակցութեամբ Անդրանիկի եւ Հրաչեայ-Մարալի՞: Այդ ժողովին իսկ որոշումով ընկ. Անդրանիկ մեկնեցաւ իսկոյն Սոֆիա՝ կարգ մը անմիջական գնումներ ու յանձնարարութիւններ ընելու համար, որոնք պարբերաբար փոխադրուեցան Պոլիս: Մեր ձեռքով գնուած եւ փոխադրուած ատրճանակներու թիւը կը հասնի 61 հատի 8051 ամփուշտով եւ 8500 Փր. արժէքով, որոնց մէջն է նաեւ Զինուորական վարժարանէն¹⁰ մնացած 4-5 կտոր ատրճանակները: Ասկէ յետոյ ընկեր Անդրանիկ անցաւ Վիեննա — Փարիզ, ուրկէ 14000 Փրանքի գնում մը եւս ըրաւ: Մինչ Արեւմտ. Բիւրոն ալ Մարսէյի գիծով փոխադրութիւններ ըրաւ: Ասոնցմէ գատ Կեդր. Կոմիտէիս միջոցաւ փոխադրուեցան ռազմական ուրիշ կարեւոր պիտոյքներ: Բայց տեսնելով որ փոխադրութեանց եւ յանձնման այս ձեւը շեշտուած պէտքին ու պայմաններուն համաձայն բաւարար չէ, Պատասխանատուի խորհրդով եւ թելադրութեամբ համակիր քանի մը անձնաւորութեանց կողմէ հիմնուեցաւ Պոլսոյ մէջ Զինավաճառանոց մը, որ մէկ կողմէ գէնք պիտի հայթայթէ կազմակերպութեան, միւս կողմէ վաճառէ նաեւ հայ հասարակութեան մատչելի գիւղերով: Այս հաստատութենէն եւս ըլլայ կազմակերպութիւնը, ըլլայ հասարակութիւնը մեծաքանակ գնումներ ըրած են:

Կը մնայ Պալքանի մէջ Զին. վարժարանի հրացաններն ու Անդրանիկի ձեռքով գնուած 50000ի մօտ բերդանկայի պարապ փամփուշտներու փոխադրութիւնը Երկիր, որոնց համար եւս թէեւ գրեցինք Պատասխանատուին, բայց յարմար դատեց յետաձգել մինչեւ Ընդհ. ժողով: Այնպէս որ հարկ կ'ըլլայ մարմիններու մօտ ժամանակի մը մէջ եւ կեդրոնացնել որոշ վայր մը: Բացի Պատասխանատու մարմնին եւ Երկրի հաշուին փոխադրուած եւ ծախսուած գումարներէն Երկրի բանտարկեալներուն փոխադրուած է նաեւ գանազան պարագաներու տակ⁵ Փրք:

Վերջերս նոյնպէս Արեւմտ. Բիւրոն գաղտնի-շրջաբերականով մը պէտքն զգացնելով Պարսկաստանի մէջ կուռող մեր ընկերներու նիւթական աջակցութեան, նոյն նպատակով փոխադրեցինք Պատասխանատուի միջոցաւ 1000 Փրք: Արեւմտեան Բիւրոն կը յանձնարարէր նաեւ այս նպատակին համար նիւթական նպաստի բացառիկ միջոցներ խորհիլ, սակայն գէթ առժամապէս անկարելի կը դառնար այդ բանը ընել, որովհետեւ ծանօթ էր մեր շրջանի հասարակութեան վայրկեանի հոգեբանութիւնը, երբ մանաւանդ միւս կողմէ խորհուրդ կը տրուէր գաղտնի պահել Դաշնակցութեան պաշտօնապէս մասնակցելուն պարագան՝ պարսկական յեղափոխութեան մէջ:

Համերաշխութեան բանակցութիւններ մակեդոնացիներու հետ:—

Մեր լաւ յարաբերութիւնները ըստ առաջնոյն շարունակուեցան մակեդոնացիներու հետ, հին եւ նոր կարգ մը ձեռնարկներու բերումովն իսկ պահելով սեղմ կապ Սարաֆովի Փրակցիային հետ, որ հետզհետէ գանազան գունաւորումներու ենթարկուեցաւ: Թուրքիոյ Սահմանադրութենէն յետոյ Սանտանսքի Փրակցիային կողմէ յատկապէս ընկեր մը եկաւ երկրին մէջ մեզ հետ համերաշխելու առաջարկով: Միւս կողմէ նոյն Փրակցիային աւելի երիտասարդ հատուածէն ուրիշ մը՝ որ մեկնեցաւ ժընեկ, յատկապէս ուսումնասիրելու միտքով Դաշնակցութեան սկզբունքներն ու ծրագրային կազմակերպական սխտեմները: Իրողութիւնը իր ատենին տեղեկագրեցինք Պոլսոյ Պատասխանատուին: Նոյն ատենները Պոլսէն հոս եկաւ նաեւ ընկեր Զարդարեանը, որ ուղղակի Պատասխանատուի կողմէ տեսակցութիւն մը ունեցաւ Պ. Միք. Կէրճիքովի հետ: Այս տեսակցութեան եզրակացութիւնը այն եղաւ որ պ. Միք. Կէրճիքով բոլոր Փրակցիաներու ղեկավար-շրջանակներու հետ պիտի թղթակցէր, որոշ համերաշխութեան մը բերէր

9.- Անդրանիկը հանրաժամօք հայրուկապետն է, Սասնոյ հերոսը: Դրաչեայ Մարալի իսկական անունն է Գրիգոր Ղարիպեան:
10.- Խօսքը Պուլկարիոյ Դ.Յ.Դ. Զին. վարժարանին մասին է:

զանոնք եւ յետոյ Դաշնակցութեան հետ միասին ընդդիմադիր-տարրերու նոր-քոնկրէ մը կազմուէր գործունէութեան ընդհանուր ուղղութիւն մը գծելու համար: Կէրճիքովի դիմումները ոչ մէկ արդիւնք չունեցան, նոյնիսկ շատեր չպատասխանեցին ալ: Էտիրնէականները, ջերմապէս համակիր այս գաղափարին նախ քան մակեղոնացիներու ներքին համերաշխութիւնը, արդիւնք մը չէին ակնկալել եւ հաւատք չունէին ձեռնարկին յաջողութեանը վրայ, այլ շատ շուտ իրենք առանձնապէս համերաշխարար կ'առաջադրէին գործել Դաշնակցութեան հետ: Նոյն ատենները մաթովականներն ալ յատկապէս Գր. Վասիլեւը կը դրկէին Պոլիս բանակցութիւններ կատարելու մերիններուն հետ: Բայց որքան յայտնի է մեզ, բոլոր այս գործերը ոչ մէկ դրական արդիւնքի մը յանգեցան: Այս պայմաններուն մէջ հայ-մակեղոնական համերաշխութեան սահմանները ու յարաբերութեանց եղանակը գծել կ'իյնայ Ընդհ. Ժողովին, որուն ի հարկէ ժողովը կու տայ իր կարծիքը:

Դատական-դրամական հին եւ նոր խնդիրներ.

Այս տարեշրջանի պայքանեան կազմակերպական կեանքի միտքարական կողմերէն մէկն է ներքին անախորժ խնդիրներու բացակայութիւնը: Գէթ Կեդր. Կոմիտէի սեղանին վրայ չեն դրուած նման խնդիրներ, բացի Սուլիմայի մեր սրճարանի հաշիւներու մէջ պատահած գեղծումի մը խնդիրը որ Վարդոյի¹¹ անպատասխանատու օրերուն — 1904ին — պատահած՝ այս տարեշրջանին հրապարակ կ'ելլէ:

Խնդիրը իր իսկութեանը մէջ ակնյայտնի է) եւ դերակատարները որոշ, սակայն իր մանուածապատ եւ ճարպիկ հիւսուածքովը կու գայ տեղւոյն մեր մէկ քանի ընկերներու գլուխը ցաւցնել իբրեւ նոր տարեշրջանի մարմնոյն անդամներ, որոնց պատասխանատուութեան տակ գործուած է, առանց սակայն իրենց գիտութեան:

Տիրահաշիւ Մկրտն — արտաքսուած կազմակերպութեան շարքերէն 1908ի Շրջ. ժողովէն — կը յաջողի ճարպիկօրէն սրճարանի առ ու ծախէն ինչպէս եւ հասոյթներէն զեղծել, որուն գումարը կը հասցնեն մօտ երկու-երեք հազարի: Այս տարի երբ ընկեր Վտարանդին³ աջեկեց Սուլիմայ՝ լսեց տեղւոյն բողոքող ընկերներէն, բաղդատեց նոյն տարուան սրճարանի հաշիւները վերջին տարուան հաշիւներուն հետ եւ եկաւ այն եզրակացութեան որ իրօք գործուած է զեղծումը, որովհետեւ երբ 1904ին Սուլիմայ ներկայիս կրկինը ընկեր կը գտնուէր, առեւտուրները բաց էին եւ օրական այսքան քաշ սուրճ կը սպառէր սրճարանի մէջ՝ հասոյթները անհամեմատ աւելի նուազ կը յայտնուէին, փոխանակ կրկին եւ եռապատիկ ըլլալու:

Խնդիրը հոն է որ հարցը լուսաբանելու համար կը բացակային նոյն տարեշրջանի մարմնոյն անդամներէն

ումանք: Ընկեր Վտարանդի տեղական ընկերներէն «Քննիչ-Ատեան» մը կազմած էր, որուն ուղարկեցինք, Սուլիմայի մարմնի միջոցով՝ հարցարան մը, եղած հարցումներուն որոշ պատասխանները ուզելով, որով կարելի պիտի ըլլար պատասխանատուներն ու զեղծարարները շուտով ճշդել եւ տնօրինութիւն ընել: Բայց չենք գիտեր ինչ պատճառներով մինչեւ այս պահուս ալ նոյն հարցարանի պատասխան չհասաւ մեզ, հակառակ մեր դիմումներուն եւ հակառակ տեղական ընկերներու մեզ ուղղած բողոքներուն:

Այժմ Սուլիմայ գտնուող նոյն տարեշրջանի մարմնի անդամները իրենց անունը ունէ արատէ հեռու պահելու համար, յանձն կ'առնեն իրենց ինկած տուգանքի բաժինը վճարել, եթէ երբեք հեռացողներն ալ յանձն առնեն նոյն բանը ընելու: Այս է ահա խնդիրը իր ամփոփումին մէջ, զոր կը յանձնենք ժողովիդ նկատառութեանը, անպատասխանատու տարեշրջաններու արատները միանգամ ընդմիջտ վտարած ըլլալու համար շրջանի կազմակերպութեան սեղանին վրայէն:

Քրոնստացայի Գր. Խաչատուրեանի վրայ եղող Կազմակերպութեան պահանջին մնացած 400 Փր. գումարն ալ գանձուեցաւ եւ կը մնայ 90 Փր. այսքան գումար մը, որը անշուշտ ցարդ գանձուած եւ տեղին մարմնոյն հաշիւներուն մէջ անցուած ըլլալու է:

Նախորդ Շրջ. ժողովը Կեդր. Կոմիտէիս կը ձգէր կարգ մը վճիռներու գործադրութիւն-ծանուցումը անոնց ենթակայներուն, ինչպէս նաեւ Վառամ Արապեանի-Յայլայեանի տխուր խնդիրի մը քննութիւնն ու վճիռը:

Այս վերջին խնդիրը տեղւոյն մէջ կազմուած «Հարցաքննիչ-Ատեանի» մը կողմէ հացաքննուած եւ թուղթերը, թէեւ քիչ մը ուշ, դրկուած էր մեզ: Կեդր. Կոմիտէս կարողալով եւ ուսումնասիրելով այդ հարցաքննութիւնները որոշեց Վահան Յայլայեանը արտաքսել կազմակերպութեան շարքերէն, իսկ Վառամ Արապեան երկու տարի դուրս յայտարարել կազմակերպութեան շարքերէն սկսեալ 1908 Ապրիլին, իսկ անկէ յետոյ ներս առնել միայն այն պարագային, երբ իր դուրսը մնացած ժամանակամիջոցը անցուցած ըլլայ կազմակերպութեան եւ յեղափոխական անունին պատուաբեր կեանք մը եւ յարաբերութիւն: Իսկ կազմակերպութեան մէջ ընդունելէ յետոյ եւս տարի մը զինքը նկատել պարզ անդամ, առանց Կոմիտէի, խմբակցութիւն եւ ուրիշ պատասխանատու պարտականութեան տակ կանչելու:

Վճիռները հաղորդուած են թէ Վառամայի մարմնին եւ թէ Պոլսոյ Պատասխանատուին առ ի գործադրութիւն:

Մենք պիտի առաջարկէինք ժողովիդ, եթէ չունի այս

11. Վարդ Պատրիկեան, Վառնայի «Շարժում» քերթի խմբագիր. դրամական իւրացումներու պատճառաւ արտաքսուած Պաշնակցութեան եւ ապա անարեւմտեան եմբարկուած (1907):

որոշման դէմ ունէ դժգոհութիւն, ոչնչացնել այդ անախորժ խնդիրին վերաբերեալ հարցաքննութեան բոլոր թուղթերը՝ չգտնուելու համար անոնք յեղափոխական արխիւին մէջ:

Ֆիլիպէի կոմիտէի յանձնարարուեցաւ հաղորդել Հին Կեդր. Կոմիտէի անդամներէն Յակոբ Սվաճեանի, Երուանդ Ալաճաճեանի, ինչպէս նաեւ տեղական նախկին ընկերներէն Յակոբ Պատրիկեանի մասին տրուած որոշումները նախորդ Ընդհ. Ժողովէն: Սակայն յիշեալները չեն ուզած ըստ օրինի ունկնդրել այդ վճիռները, ինչպէս կը տրամադրէ «Ներքին Կանոնագիրը», որով զրկուած են դաշնակցականի ամէն իրաւունքէ եւ կազմակերպութենէն վտարուած՝ անորոշ ժամանակով, եթէ ժողովը չունի ունի նոր նկատողութիւն: Իսկ ինչ կը վերաբերի պ. Ալաճաճեանի, քանի որ յիշեալը կազմակերպութեան հետ ունի նաեւ դրամական հաշիւ մըն ալ, կարեւոր դատուեցաւ գրաւոր եւս հաղորդել իր մասին տրուած վճիռը ապագային ունէ՝ առարկութեանց տեղի չմնալու համար:

Նախորդ Շրջ. ժողովի որոշումներէն մէկն ալ էր Պուլքէշի անցեալ խնդիրներու գլխաւոր դերակատարներէն Գր. Սայեանի, Արթաքի Բախիկեանի եւ Նշանի մասին տրուած արտաքսման վճիռներուն հրատարակութիւնը: Այդ որոշումը արդէն շրջանի բոլոր ընկերներուն հաղորդուած ըլլալով՝ յայտնապէս շրջաբերականով մը, անյարմար դատեցինք հրապարակումը նաեւ «Ռազմիկ»-ով՝ այս պարզ պատճառով որ 1) Ռումանիոյ մէջ հոս հոն քաղաքական հոսանքները կը շարունակուին մերիններուն դէմ եւ խնդիրին հրապարակումով նոր հետապնդումներու առիթ ընծայած պիտի ըլլայինք: 2) Պուլքէշի ընկերական միջնորդութեան հազիւ քիչ մը խաղաղած՝ խնդիրը հրապարակի վրայ դնելով վերստին կիրքերը պիտի արծարծենք առիթ տալով նոր բանալիներու՝ ուրկէ ապահովաբար տուժողը կազմակերպութեան հեղինակութիւնը պիտի ըլլար: 3) Նոյն նախկին ընկերները՝ որոնք վայրկեանական կիրքերու եւ անհատական թելադրութեանց անսալով հեռացած էին մեր շարքերէն՝ այդ խնդիրներու արծարծումով վերըստին առիթ տրուած պիտի ըլլար իրենց, որպէսզի շարունակեն իրենց վնասակար յամառութեան մէջ, մինչ այսօր արդէն որոշ չափով զղջացած են իրենց գործած սխալներուն համար եւ կը ձգտին կազմակերպութեան մէջ մտնել: Ի հարկէ կազմակերպութիւնը պիտի չթոյլատրէ անոնց մուտքը, ցորչափ հրապարակով չդարմանեն այն վիրաւորանքը, զոր հրապարակով հասցնել փորձեցին կուսակցութեան բրեսթիփին ու անունին, անսալով անուղիղ մարդոց դիտումնաւոր թելադրութեանց: Նոյն բանը պիտի կրկնէինք Վառնայի մէջ գտնուող այն նախկին ընկերներու վերաբերմամբ, որոնք զանազան առիթներու տակ փորձեցին մօտենալ կազմակերպութեան, առանց սակայն ճանչնալ ուզելու անոր որոշումներն ու իրենց յանցանքը:

Պուլքէշի մէջ կային նաեւ դրամական խնդիրներ, որոնց կարգադրութիւնը Շրջ. ժողովի որոշումով կ'իյնար Կեդր. Կոմիտէիս պարտաւորութեան սահմանին մէջ: Իժմախաբար Պուլքէշի մարմինը, հակառակ մեր քանիցս պնդումներուն, ոչ միայն չգոհացուց մեզ նոր շրջանի անդամավճարները դրկելով, այլ նախորդ շրջանէն ընկեր Առաքելի քով գտնուած 482 Փր. գումարը, ինչպէս նաեւ Թատերասիրաց վարչութեան քով մնացած 180-200 Փր. դրամը եւ ուրիշ գումարներ մնացին անվճար: Տեսնելով որ մեր դիմումները անպատասխանի սկսան մնալ, պարտականութիւն յանձնեցինք Ռուս-ճուկի ընկերներէն Մովսէս Պետրոսեանին երթալ տեղւոյն վրայ քննել խնդիրը: Ուրախ ենք որ ընկեր Մովսէս երթալով հարկ եղած քննութիւններն ըրաւ եւ գրաւոր յանձնառութիւններ առաւ այդ դրամներուն վճարման համար: Համաձայն ընկեր Մովսէսի տեղեկագրութեան՝ դիմեցինք Պոլսոյ Պատասխանատուին յիշեցնելով եղած կարգադրութիւնները եւ խնդրելով գանձումը ընկեր Առաքելի վրայ մնացած դրամին եւ ընկեր Այտնեանի ինկած բաժինին: Պատասխանատու մարմինը պատասխանելով մեր նամակին՝ կը յայտնէր որ ընկեր Առաքելը մեկնած էր կրկին Պուլքէշ, իսկ Այտնեան կը գտնուէր Իզմիրի շրջանները: Հետեւաբար իրականի մէջ Պուլքէշի դրամական հաշիւները կը մնան գանձելի վիճակի մէջ եւ յառաջիկայ Կեդր. Կոմիտէի մէկ գործը, եթէ երբեք ժողովը նոր բան մը չունի աւելցնելիք ընկեր Մովսէսի եզրակացութեան վրայ կամ փոփոխելիք անկէ: Պուլքէշի մարմինն ալ, իր կարգին, հակառակ իր խոստումին, ոչինչ դրկեց այս տարեշրջանի իր անդամավճարներէն: Խնդրոյն մանրամասնութեան վրայ աւելի լայն գաղափար կարելի է կազմել ընկեր Մովսէսի տեղեկագրէն որ ձեր տրամադրութեան հակ կը գտնուի արդէն:

Նոյնպէս տակաւին կարելի չեղաւ կարգադրել Պուլքէշի «Նեվրուզ» ընթերցարանի վիճակահանութեան տոմսակներուն իբր փոխարժէք եւ նախորդ Կեդր. Կոմիտէի հաշուոյն Ռազմիկի բաժնեգրներէն վճարուած 125 Փր. խնդիրը: Սոֆիա դրկուած դիմումներու դէմ 20 այսքան Փր. ստացուեցաւ եւ տոմսակներու 5-8 հատը կորսուած յայտնուեցաւ: Վառնա եւ Շումլա դրկուած տոմսակներու ի պատասխան ընկեր Ադամեան կը յայտնէր թէ 15 տոմսակ ինք անձամբ ետ տարած է Պուլքէշ, Շումլայի 10 տոմսերէն տեղեկութիւն չունի, ծախսարւածներուն փոխարժէք գումարէն ալ ծախսուած է եւ 1908ին Կեդր. Կոմիտէի դրամական խնդիրներու քննութեան համար եկած է Ֆիլիպէ, առանց սակայն վերջնական ճշդում մը ընելու: Կը մնայ այս խնդիրն ալ ճշդել: Իրողութիւնը այն է որ 125 Փր. դրամական խնդիրը միայն ստացուած է եւ թէ այդ դրամական խնդիրը Կեդր. Կոմիտէի հաշուական մէկ խնդիրը կ'ըլլայ՝ որ վճարուած է «Ռազմիկ»ի բաժնեգրներէն:

Համաձայն Ֆիլիպէի կոմիտէի տեղեկագրութեանց եւ

հաշուետուության ընկեր Ամբակում Դաւիթեան նախորդ երեք Շրջ. ժողովներու կողմէ որոշուած եւ կրկնուած 50 Ֆր. տուգանքը վճարած է եւ հետեւաբար ընկերական-կազմակերպական իրաւունք վայելելու ազատ:

Սուրէն Կամսարի մասին տրուած որոշումը նոյնպէս հաղորդուած է նախ Եգիպտոս եւ վերջերս ալ Պոլսոյ Պատասխանատուին ուր կը գտնուի յիշեալը:

Հայկ Մաղազեանի եւ Վահան Գրիգորեանի ինչպէս նաեւ բոլոր վտարուածներու վերաբերմամբ եղած են համապատասխան կարգադրութիւններ:

Պարբերաբար երեք-չորս Շրջ. ժողովներու ինչպէս նաեւ Կեդր. Կոմիտէիս կողմէն վճիռի ենթարկուած եւ իրենց պատիժի սահմանը չվերջացած անձնաւորութեանց ցանկը հետեւեալն է, որուն վրայ նոր Կեդր. Կոմիտէի ուղարկութիւնը պարտաւորիչ է, որպէսզի անոնք ունենան տեղ, Պալքանի մէջ թէ ալ ուր, չկարենան սարկել կազմակերպութեան շարքերուն մէջ:

Սուրինա.— Մկրտ՝ դրամական եւ բարոյական գեղծարար — արտաքսուած անպայման ժամանակով:

Քոնսթանցա.— Գրիգոր Խաչատուրեան — նոյնպէս:

Պուրթէշ.— Կազմակերպական յանցանքով արտաքսուած անպայման ժամանակով՝ Գրիգոր Սայեան, Արթաքի Գալիկեան, Նշան Սարգիսեան, իսկ դուրսը մնացած ասոնց համախոհները նկատի ունենալ իբրեւ անսաստող Կազմակերպութեան որոշումներուն:

Ռուսնոք.— Հայկ Մաղազեան, Վահան Գրիգորեան, անպայման ժամանակով արտաքսուած:

Վառնա.— Մուրատ Երանոսեան, Աբրահամ Ծաղիկեան (այժմ Պոլիս), Մարտո, Բարսեղ եւ Յարութիւն, արտաքսուած անպայման ժամանակով:

Նոյն քաղաքէն Մելքոն, Բիւզանդ, խմբապետ եւ կոմիտէի անդամ չեն կրնար ըլլալ, բայց անսաստած ըլլալով ժողովի որոշման՝ կը մնան դուրս: (Նկատի ունենալով Վառնայի մէջ դուրս մնացող անոնց համախոհները՝ որոնք չեն ուզած ճանչնալ ժողովի որոշումները: Դարձեալ նոյն քաղաքը գտնուող Գալուստ Մարտիրոսեանէն կը զգուշացուին ընկերները):

Նոյն քաղաքին Վահան Եայլայեան կ'արտաքսուի անպայման ժամանակով:

Իսկ Վառնա Արապեան դուրսը կը մնայ 908 Ապրիլէն սկսեալ երկու տարի, իսկ անկէ յետոյ կ'ընդունուի միայն այն պայմանով երբ իր դուրսը մնացած ժամանակամիջոցը անցուցած ըլլայ կազմակերպութեան եւ յեղափոխական անունին պատուաբեր կեանք մը: Իսկ ընդունելէ յետոյ տարի մը եւս զինքը նկատել իբր պարզ անդամ, առանց կոմիտէի, խմբապետի եւ ուրիշ պատասխանատու պարտականութեանց տակ կանչելու:

Ֆիլիպէ.— Յակոբ Սվաճեան, Յակոբ Պատիկեան, դուրս կը մնան անպայման ժամանակով: Երուանդ Ալաճաճեան նոյնպէս դուրս կը մնայ անպայման ժամանակով, իսկ 908 Ապրիլէն հաշուելով մինչեւ երկու տարի վերջ կը պարտաւորուի վճարել կազմակերպութեան պահանջը եղող 1577,20 Ֆր.ը:

Նոյն քաղաքէն՝ Յարութիւն Յրէնկեան (այժմ Պոլիս) 1908 Հոկտ. սկսեալ 6 ամիս դուրս կը մնայ կազմակերպութեան իսկ անկէ յետոյ մէկ ու կէս տարի խմբապետ, կոմիտէի անդամ չի կրնար ըլլալ:

Նոյն քաղաքէն՝ Պարտիզեան քոյրերը կը զգուշացուին ընկերներէ՝ մինչեւ հասարակութեան եւ Ֆիլիպէի ընկերներու մէջ իրենց մասին չըլլած տարածայնութեանց բարձումը եւ վստահութեան վերահաստատումը:

Շրջանի հասոյթը.— Արդէն պատրաստած ըլլալով մանրամասն հաշուեցուցակը արտաքին եւ մեր շրջանի մարմիններէ ունեցած մեր մուտքին ու ելքին, Հոս կարելոր կը նկատենք միայն յիշել որ մեր այս տեղեկագրով մէջբերուած աննպաստ պայմանները զգայալէս ներգործեցին այս տարեշրջանի մեր հասոյթին վրայ, նուազեցնելով կէս առ կէս բաղդատմամբ նախորդ շրջանի հասոյթին հետ, որոնց նմանը ոչ մէկ տարեշրջան ունեցաւ:

Ահաւասիկ մէկ ամիտի պատկերը 1908 Ապրիլին մինչեւ 908 Մարտ 31 Պալքանեան Կեդր. Կոմիտէի ունեցած մուտքին՝ շրջանի մարմիններէն.—

Անդամավճար, Հանգանակութիւն, Սրճարան եւնէ գոյացած գումար Մուտք Կարմիր Խաչերէ Դրօշակ եւ հարատարկութիւններէ } Ֆր. 19149,05

Ձ-ի համար իբրեւ կարանդ պանքան դրուած 2000 Ֆր.ը կը մնայ տակաւին, որովհետեւ դատը դեռ տեսնուած վերջացած չէ. իսկ տ-ը կը գտնուի Մակեդոնիս:

Ընդհանուր անհրաժեշտութիւններ.— Մեր ցրուած շրջաբերականներով արդէն ծանուցինք Ընդհ. ժողովի մօտալուստ գումարումը: Յայտնի է որ Թուրքիոյ այժմեան պայմանները կազմակերպութիւնը կը դնեն նոր ուղղութեան մը մէջ եւ թաքթիքական բաւական փափուկ հողի մը վրայ: Մեր շրջանը եւս կոչուած ըլլալով իր բաժինը ունենալ ուղղութեան-թաքթիքական եւ կազմակերպական այլ հարցերու մասին եւ տալ իր կարծիքը բանաձեւուած եւ բերանացի՝ իր պատգամաւորին միջոցաւ, կը յուսանք թէ ժողովը իր լուրջ զբաղումներէն մէկը պիտի ընէ այդ հարցերը եւ պիտի տայ բանաւոր եւ խոհական որոշումներ՝ որոնք պատշաճին օրւան իրականութեան եւ համապատասխան են մեր կուսակցական սկզբունքներուն ու նպատակակէտին:

Նոյնպէս կարգադրութիւններ ընել հարկ կը տեսնու-

ւի պատրաստելու համար Պալք. Կեդր. Կոմիտէի երկու տարուան տեղեկագիր հակակշիռը 1907-1909, ուր պատկերացուած ըլլայ ոչ միայն մեր նիւթական եւ բարոյական անցեալ եւ ներկայ գործունէութիւնը, այլեւ յառաջիկայի առաջադրութիւնները՝ դարձեալ համապատասխան մեր շրջանի այժմեան եւ ապագային սպասուած պայմաններուն:

Գաղթականներու վերադարձի խնդիրը նոյնքան տիրական անհրաժեշտութիւն մըն է: Հոս հոն ունինք պանդուխտներ, որոնք բացարձակապէս նիւթական աննախանձելի վիճակի մը մատնուած են եւ չունին ճանապարհածախսի ունէ միջոց: Մասնաւորապէս Ֆիլիպէի շրջակայ կայարաններուն մէջ, Արեւելեան երկաթուղիի գծին գրաւումէն յետոյ, նոր աշխատաւորութիւնը դուրս ձգուած՝ անոնց տեղ պուլկարներ դրուած են, մինչ հայերը կը թափառին խեղճ ու անօգնական: Բարոյական պարտք մըն է՝ դրական միջոցներ ձեռք առնել եւ հաւաքական օժանդակութիւններով անոնց վերադարձի գործը դիւրացնել, ինչ որ արդէն օրակարգի մէջ եւս անցած է:

Նոյնքան կարեւոր անհրաժեշտութիւն մըն է շրջանը կազմակերպելու գործը: Ներկայ պայմաններու մէջ երբ մէկ կողմէ կազմակերպութեան նիւթական թէ բարոյական պէտքերը բազմապատկուած են, միւս կողմէ սակայն ցամաքած են անոր նիւթական միջոցները, որովհետեւ Թուրքիոյ այժմեան իրականութեան մէջ չենք կրնար այլեւս ամէն պատեհութեամբ ոչ-կուսակցական հասարակութեան նիւթական օժանդակութեան կոթընիլ: Հետեւաբար հարկ կ'ըլլայ կանոնաւորել մեր նիւթական աղբիւրները եւ միանգամ ընդ միշտ կազմակերպութիւնը դնել անկախ դիրքի մը մէջ չէզոք ու հարուստ տարրերէն: Այն օրը որ կազմակերպութիւնը այդ վիճակին տիրանայ արդէն կարեւորագոյն քայլ մը առած պիտի ըլլայ: Այս իսկ տեսակէտներով ալ ժողովի պատգամաւորներուն վրայ պարտականութեան մեծագոյն բաժինը կ'իյնայ իրենց դարձին լուսաբանել շրջանի իրենց ընկերները, ծանօթացնել զանոնք ժողովի եւ առ հասարակ կուսակցութեան որոշումներուն եւ սկզբունքներուն հետ եւ եռանդազին փրփականտ մղել այդ ուղղութեամբ:

Բայց ստեղծուած նոր պայմաններուն մէջ պարտականութեան, աշխատութեան էն կարեւոր բաժինը կ'իյնայ դարձեալ յաջորդ Կեդր. Կոմիտէին վրայ: Ակնյայտնի է որ հետզհետէ գաղթականութեան հետ նաեւ գիտակից ընկերներէն ալ դառնալով Երկիր, առ հասարակ կը պակսին աշխատող ձեռքերը, եւ քննադատութեան ոգին, որուն խթանովը հարկադրուած ըլլային գործե-

լու մեր մարմինները: Ընկերական կարծիքը հետզհետէ բացակայելու վրայ է, այնպէս որ ասկէ յետոյ մարմիններու եւ Կեդր. Կոմիտէի ընկերներու բարեխիղճ, տուկուն եւ յարատեւ ջանքերն ու աշխատութիւնները պիտի ըլլան շրջանի ընկերները գործի մղողը: Այս տեսակէտով ալ, Կեդր. Կոմիտէն հարկադրուած պէտք է զգայ ինքզինքը՝ նախորդ տարեշրջաններէ աւելի սերտ յարաբերութիւն մը ստեղծել շրջանի մարմիններու հետ: Բացատրել, ստիպել, մղել զանոնք գործի. ըլլալ պահանջկոտ, խիստ իր վերաբերումներուն մէջ եւ նախանձախնդիր օրէնքներու, աւանդութեանց ճշգրիտ ու անշեղ գործադրութեան: Ի հարկէ այս պայմաններու մէջ, անհրաժեշտ կը դառնայ նոյնպէս շրջուն ընկերներու այցելութիւնը մարմիններու, մասնաւորապէս ընտրութիւններէն առաջ, որպէսզի հարկ եղած թելադրութիւններն ընէ գործի կանչելու այնպիսի ընկերներ՝ որոնք իրենց կարողութիւններով եւ աշխատելու տրամադրութիւնով համապատասխան են ստեղծուած պէտքին:

Ահա՛ թէ ինչ կ'ուզենք ըսել իբր վերջին խօսք մեր յաջորդներուն, արդիւնք մեր համեստ փորձառութեան: Այս ամէնէն յետոյ անհուն ուրախութեամբ մըն է որ կու տանք մեր տեղը նոր ընկերներու, որոնք լիայոյս ենք որ նոր աշխոյժով եւ իրենց կեանքի օրինակով պիտի գան ապացուցանել թէ մեր կազմակերպութիւնը իր օրգանական կենդանութիւնը եւ թարմութիւնը պահելու համար պէտք է միշտ ասպարէզ կանչէ նոր ոյժեր, նոր գործօններ, որ արդէն սկիզբէն ի վեր եղած է գաղտնիքներէն մէկը Դաշնակցութեան յառաջդիմութեան եւ կենսունակութեան:

Հ. Յ. ԴԱՇՆ. ՊԱԼՔ. ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

(Handwritten signatures)



1909 Մարտ 27
Ֆիլիպէ

Փաստ. 1152-43

2.- ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ Հ.Յ.Գ. ՊԱԼՔԱՆԵԱՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ Ը. ԺՈՂՈՎԻ

ԳՈՒՄԱՐՈՒԾ ՌՈՒՍՉՈՒՔԻ ՄԷՉ 1909 ՄԱՐՏ 30 – ԱՊՐԻԼ 8

ՆԻՍ Ա.

Մարտ 30 (Երկուշաբթի)

Բացում ժողովի.— Համաձայն Պալք. ներքին կանոնադրի տրամադրության եւ նոյն կեդր. Կոմիտէի շրջաբերական-յանձնարարութիւններուն՝ Շրջանի պատգամաւորներու մեծամասնութիւնը հաւաքուած լլլալով Ռուսջուք՝ այսօր տեղի ունեցաւ Շրջանային ժողովի առաջին նիստը:

Շրջանը տարուան սկիզբը կը ներկայացնէր վճռական ձայն ունեցող 11 մարմիններ թէեւ, սակայն տարուան ընթացքին անոնցմէ ոմանք ըստ օրինի կը գրկուին իրենց ձայնէն՝ հետեւեալ պատճառներով — 1) Սոֆիան բացարձակապէս կորսնցուցած էր իր թուական ցննզը եւ մարմինը անգործունէութեան դատապարտուած: 2) Պուքրէշ՝ նախորդ տարիէն իր դրամական խնդիրները չկարգադրելէ զատ, ոչ մէկ վճարում ունեցած էր նոյնիսկ վերջացող տարեշրջանին մէջ: 3) Պուրկազ՝ նոյնպէս չէր ուղարկած գոնէ իր առաջին վեցամսեայ հաշվեկշիռն ու դրամական հասոյթները: Այս վերջին երկու մարմիններուն կեդր. Կոմիտէն կանխաւ յիշեցուցած էր կանոնադրի տրամադրութիւնը, բայց հակառակ այդ դիմումներուն՝ նոյն մարմինէն մինչեւ ժողովի բացումը ոեւէ դրամական-հաշուական առաքում ըրած չլլալով՝ կեդր. Կոմիտէն կանոնադրի տրամադրութեանց գործադրութիւնը ընդունելով՝ մնացած 8 մարմիններու կողմէ ներկայ 5 պատգամաւոր ընկերներու մեծամասնութեամբ ժողովը օրինաւորապէս բացուած յայտարարուեցաւ, որուն կը մասնակցէր կեդր. Կոմիտէն 1 ձայնով: Իբրեւ պատգամաւոր ներկայ էին Ֆիլիպէշն՝ Փայլակ (Գառնիկ Քիւրքեան), Ռուսջուքէն՝ Ֆելիքս (Մովսէս Պետրոսեան), Սուլիմայէն՝ Սուրէն (Ստեփան Գրիգորեան), Կալացէն՝ Հրաչք (Մարտիրոս Իսկոյեան), Քոնսթանցայէն՝ Հրայր (Գէորգ Սէֆերեան), իսկ կեդր. Կոմիտէի ձայնը կը ներկայացնէր՝ Ժիրայր: Ժողովին նախագահ ընտրուեցաւ Փայլակ, քարտուղար՝ Ժիրայր:

Վաւերացում պատգամաւորներու ընտրութեան օրինաւորութեան եւ ճշգրտման անոնց ինքնութեան.—

Ֆիլիպէ՝ ընտրութեան մասնակցած 49 տեղական ընկերներ, 12՝ շրջաններէն, տեղական քուէներու մեծամասնութիւնը.— 2/3 կեդրոնացած. շրջակայ քուէները չ'ընդունուիր ուղղակի եւ գաղտնի տեղի ունեցած չլլալուն համար. ընտրութիւնը օրինաւոր եւ վաւերական: Քոնսթանցայէն՝ մասնակցած են 64 ընկերներ եւ պատգամաւորին վրայ կեդրոնացած բացարձակ մեծամասնութեան — 2/3 ձայնը. ընտրութիւնը օրինաւոր ու վաւերական: Ռուսջուք՝ մասնակցած են 54 ընկեր. պատգամաւորին վրայ կեդրոնացած բացարձակ մեծամասնութեան ձայնը՝ 2/3. շրջակայ քուէները չ'ընդունուած՝ օրինաւոր չլլալուն համար. ընտրութիւնը օրինաւոր եւ վաւերական: Կալացի ընտրութիւնը կատարուած լլլալով բաց քուէարկութեամբ եւ ստորագրութեան տակ, որոշուեցաւ տեղւոյն մարմինէն պահանջել ստորագրութիւնները պարունակող վաւերացումը: Սուլիման նախապէս իր ընտրութիւնը կատարած գաղտնի քուէարկութեամբ, հարկադրուած էր, երկրորդ քուէարկութիւն մը եւս կատարել, ըստ որում գաղտնի քուէներու մեծամասնութիւնը շահող ընկերը չէր ուզած գալ եւ հետեւաբար կեդր. Կոմիտէն հրահանգած էր ձեռնարկել նոր քուէարկութեան, քանի որ հրաժարող ընկերը անմիջապէս յաջորդող ընկերը չէր կեդրոնացներ իր վրայ քուէներու մեծամասնութիւնը. որոշուեցաւ գրել նաեւ Սուլիմա՝ պահանջելով ընտրութիւնը հաստատող սրբագրութիւններ եւս տեղւոյն ընկերներէն, խմբապետներու եւ մարմնի անդամներու ստորագրութեանէն զատ, որ արդէն ժողովը իր տրամադրութեան տակ ունի: Կեդր. Կոմիտէն յայտնեց որ հակառակ շրջաբերականներով եւ հեռագիրներով եղած յանձնարարութիւններուն՝ Վառնայի կազմը իր պատգամաւորը չէր ընտրած եւ իր վերջին դիմումին վրայ Վառնայի մարմինը «նիւթական» տեսակէտը մատնանշած էր իբրեւ արգելիչ պատճառ. կեդր. Կոմիտէն նկատելով Վառնայի այժմեան կազմակերպական ոչ-գոհացուցիչ վիճակը, ինչպէս նաեւ նախորդ տարեշրջանէն անգանձելի մնացած 300 այսքան գումարի մը գոյութեան հետ նաեւ այն բարոյական պարագան՝ որ երեւան կ'ելլէր Վառնայի կողմէ այս վերջին անգամ եւս մէջբերուած նիւթական պատճառաբանութիւններէն, որոշած էր խնդիրը յանձնել Շրջ. ժողովի նկատառութեանն ու որոշումին: Շրջ. ժողովը՝ նկատի առնելով Վառնայի կարեւորութիւնը իբրեւ կազմակերպական վայր, ինչպէս նաեւ տեղական խնդիրներու եւ անգոհացուցիչ կազմին դարման մը տանելու անհրաժեշտութիւնը՝ կ'որոշէ Վառնայի պատգամաւորին ծախքին կէսը հոգալ կազմակերպութեանէն,

մնացած կէսն ալ տեղական ընկերներու բացառիկ միջոցներով, ինչպէս եղած էր առհասարակ ներկայ բոլոր պատգամաւորներուն վերաբերմամբ. այս առթիւ գրուեցաւ ներքոգրեալ նամակը: Ըստ կանոնադրի Պուրկազ եւ Պուքրէշ պատգամաւորներ չէին կրնար ունենալ: Պուրկազի մարմինը իր ձայնը կու տար Ռուսջուքի ընկերներէն Ֆելիքսի (Մովսէս Պետրոսեանի) կատարուած գաղտնի եւ օրինաւոր քուէարկութեամբ, սակայն ներքին կանոնադրէն թեթեւ չեղում մը ընելու պարագային իսկ — քանի որ պատգամաւոր մը տեղական ընկեր պիտի լլլայ եւ ձայն տալու դրութիւնը չ'ընդունւիր — անկարելի յայտնուեցաւ ընդունելութիւնը Պուրկազի առաջարկին, ընկեր Ֆելիքս արդէն Ռուսջուքէն պատգամաւոր ընտրուած լլլալուն: Կեդր. Կոմիտէն պարտականութիւն զգաց միաժամանակ յայտնել որ Պուրկազի նիւթական վճարումներու յապաղումը արդէնք է լոկ տեղական տնտեսական տագնապին եւ թէ այդտեղի ընկերները սկիզբէն մինչեւ վերջ եղած են զոհուելու ժողովէն՝ սոսկ նիւթական հանգամանքը նկատի առնելով գայն ձայնէ չգրկել. բայց ժողովը գտնուելով վերոյիշեալ պայմաններուն առջեւ չկրցաւ գոհացնել Պուրկազը՝ յանձն առնելով նոյնիսկ չեղում կանոնադրէն: Սլիվէնի մարմինը թէեւ կանխաւ պատգամաւոր չկարենալ տալ իմացուցած էր կեդր. Կոմիտէին, սակայն Ռուսջուքի ընկերներէն Գառնիկի (Գառնիկ Մկրտիչեան) ուղղած հեռագրով մը կը խնդրէր ընդունիլ իրենց ձայնը: Ժողովը լսելով սակայն որ յիշեալ ընկերը իր անկարելիութիւնը կը մատնանշէ եւ այդ իսկ պատճառներով ալ չէ ուզած նոյնիսկ իր թեկնածուութիւնը դնել Ռուսջուքի մէջ, չկրցաւ նոյնպէս գոհացնել Սլիվէնի ընկերները: Պրայլայի մարմինը եւս իր պատգամաւորը ցարդ չէր ուղարկած, ինչպէս նաեւ ոեւէ նամակ այդ մասին. Կալացի պատգամաւորը յայտնեց թէ իր ճամբորդութեան պահուն հանդիպելով հոն՝ ընկերներէն իմացած է պատգամաւորութեան համար տրամադրելի ընկեր չունենալին: Ժիրայր յայտնեց ժողովին թէ՛ կեդր. Կոմիտէի կողմէ երկու ընկերներ ներկայ կը գտնուին՝ փոխանակ մէկի, ինչպէս կը տրամադրէ կանոնադրը. կեդր. Կոմիտէն իր այդ կարգադրութիւնը ըրած է — 1) Նկատի առնելով կեդր. Կոմիտէի տեղափոխութեան հանգամանքը, հարկադրողական կը դառնար գանձապահին եւս ներկայութիւնը Ռուսջուքի մէջ՝ հաշուական գործերուն լիուլի տեղեակ դարձնելու համար նոր կազմը, երբ մանաւանդ հին կազմէն ոչ մէկ ընկեր պիտի մնայ նոր կազմին մէջ: 2) մարմիններու հաշիւներու քննութեան բաւական բարդ աշխատութիւնը, որուն հասնելու համար բաւականաչափ աշխատողներ կը պակսին եւ որ ամէն տարի Շրջ. ժողովէն կը խլէ 5-8 օրուայ աւելորդ ժամանակ մը, տեղի տալով եռապատիկ ծախքերու: Ժողովը միաձայնութեամբ իր

ջերմ հաւանութիւնը յայտնեց կեդր. Կոմիտէի այդ կարգադրութեան, աւելցնելով որ այն ինչ որ ստիպողաբար հարկադրուած էր ընել ինքը՝ կեդր. Կոմիտէն կանխատեսած եւ գործադրած է առաջուց:

Յանձնարարութիւն մարմիններուն.— Ժողովը Կալացի, Սուլիմայի ընտրութեան եղանակը աչքի առջեւ ունենալով դիտել կու տայ որ ընտրողական օրէնքները պէտք եղած կերպով չեն ըմբռնուած իրենց իսկական իմաստով եւ հետեւաբար մարմիններու վրայ պարտականութիւն կը ծանրանայ կանոնադրի բոլոր կէտերը լաւ ուսումնասիրել, իւրացնել եւ ըստ այնմ գործադրութեան դնել, բացատրել անոր միտքը ընկերներուն: Ժողովը փակուեցաւ կէսօրէ ետք ժամը 1 1/2-ին:

Գրուած նամակներ Ա. նիստի որոշումով.—

№ 1 909 Մարտ 30

Հ.Յ.Գ. Վառնայի մարմինի ընկերներ,

Հ.Յ.Գ. Պալք. Շրջանական ժողովը լսելով Վառնայի կազմակերպութեան մասին կեդր. Կոմիտէի տեղեկութիւնները, ինչպէս նաեւ ծանօթանալով ձեր պատգամաւորի ընտրութեան եւ առաքման մասին կեդր. Կոմիտէի եւ ձեր մէջ փոխանակուած հեռագիրներու պարտականութեան հետ, ըմբռնելով միաժամանակ Վառնայի շրջանին կարեւորութիւնը՝ կազմակերպական տեսակէտով, կը յանձնարարէ անմիջապէս քուէարկութեան ձեռնարկել եւ քուէարկութեան մեծամասնութիւնը իր վրայ կեդրոնացնող ընկերը անմիջապէս փութացնել Ռուսջուք, հոգալով անոր ճանապարհածախսի կէսը ընկերական բացառիկ միջոցներով եւ կէսն ալ կազմակերպութեանէն: Քուէարկութիւնը պէտք է կատարուի 24 ժամուայ ընթացքին, որով անհրաժեշտ է բոլոր ընկերներուն իմացնել. իսկ քուէարկութեան մասնակցող ընկերներու ստորագրութիւնն ալ ուղարկել մեզ: Ընտրութիւնը պիտի կատարուի ընտրողական մասնախումբի մը հսկողութեան ներքեւ:

Խնդրենք փութացումը նաեւ ձեր հաշիւներուն, տեղեկագրերուն եւ արձանագրութեանց ու այլ տեսութեան, ինչպէս նաեւ ընկալագրերուն:

Ընկերական բարեկեցութիւնով
Հ.Յ.Գ. ՊԱԼՔ. Շ. Ժ. Կողմէ՛
Նախագահ՝ ՓԱՅԼԱԿ, Քարտուղար՝ ԺԻՐԱՅՐ

№ 2

ՆԻՍ Բ.

909 Մարտ 30

Մարտ 30 (Երկուշաբթի կէսօրէ ետք)

Հ. Յ. Դաշնակցութեան Կալացի ենթակոմիտէին Ընկերներ,

Հ. Յ. Դաշնակցութեան Պալք. Շրջ. ժողովը ծանօթանալով ձեր պատգամաւորին ինքնութիւնն ու ընտրութիւնը հաստատող գրութեան պարունակութեան հետ, պէտք կը տեսնայ իր տրամադրութեան տակ ունենալ այդ ընտրութիւնը հաստատող այն թուղթը՝ որ բոլոր ընկերներու կողմէ ստորագրուած է: Սպասելով շուտափոյթ առաքմանը յիշեալ գրութեան՝

Ընկերական բարեւեներով եւն.

№ 3

909 Մարտ 30

Հ. Յ. Դաշ. Դանուբ ենթակոմիտէին¹², Ընկերներ,

Հ. Յ. Դաշնակցութեան Պալք. Շրջանական ժողովը ծանօթանալով ձեր պատգամաւորին ինքնութիւնն ու ընտրութիւնը հաստատող գրութեան մը պարունակութեանը, պէտք կը տեսնայ իր տրամադրութեան տակ ունենալ վաւերացուած մը՝ ուր ստորագրած ըլլան բոլոր այն ընկերները, որոնք ձայն կու տան ուղարկուած պատգամաւոր ընկերով՝ Ստեփան (Գրիգորեանի) Կարապետեանի: Եթէ կան ընկերներ՝ որոնք տարբեր ընկերներու ձայն տուած են կամ կ'ուզեն տալ, անոնք ալ կրնան ստորագրել, նշանակելով իրենց յարմար տեսած ընկերով անունը: Ստիպողական պէտք ունենալով այդ թուղթին, կը խնդրենք անոր շուտափոյթ ստորագրելին ու մեզ ուղարկուելը:

Ընկերական բարեւեներով եւն.

Հեռագիր Պրայլայի մարմինն՝
«Անմիջապէս գաղտնի քուէով պատգամաւոր ընտրելով փութացուցէք հոս»:

ԺՈՂՈՎ

Ներկայ հինգ պատգամաւորները. Կեդր. Կոմիտէն մէկ ձայնով, յանձին ժիրայրի եւ ընկեր Ասպետ¹³՝ խորհրդակցական ձայնով:

Ժողովներու կանոնաւոր յարատեւութեան համար պէտքն զգացուելով ներքին կանոնագրի մը, կարդացւեցաւ նախորդ Շրջ. ժողովի կողմէ պատրաստուածը եւ ընդունուեցաւ նոյնութեամբ՝ որ հետեւեալն է.

- 1) Առաջին անգամ խօսք առնող ընկեր մը իր խօսելիք նիւթին վրայ մաքսիմում 15 րոպէ միայն կը խօսի:
- 2) Միեւնոյն ընկերը նոյն նիւթին վրայ երկրորդ անգամ կրնայ խօսիլ 8 րոպէ:
- 3) Ընկեր մը ըստ կարգին կրնայ խօսիլ 5 րոպէ միայն:

4) Ժողովի բացման համար նշանակուած ժամերուն՝ պատգամաւորները անհրաժեշտօրէն պէտք են ներկայ ըլլալ: առաջին զանցառութեան պարագային նկատողութիւն պիտի ըլլայ զանցառու ընկերով՝ նախագահէն, երկրորդ անգամին արձանագրութեան մէջ պիտի անցուի, իսկ երրորդ անգամին՝ պատկանած մարմնին պիտի տեղեկագրուի:

5) Նիստերը ընդհանրապէս կէսօրէ ետք պիտի սկսին եւ պիտի տեւեն մինչեւ 8, իսկ գիշերները ժամը 9էն մինչեւ 12, առաւօտեան ժամանակները յատկացուելու համար յանձնախումբերու աշխատութեանց:

6) Առանց նախագահի հաւանութեան՝ պատգամաւոր ընկեր մը չի կրնար բացակայիլ քաղաքէն:

7) Ամէն որոշում օրինաւոր կը նկատուի քուէներու 2/3ի մեծամասնութեամբ:

8) Ժողովի ամբողջ տեւողութեան ընթացքին թոյլատրելի չէ որ ընկերները իրենց պատկանած մարմնոյն կամ անհատ ընկերներուն հետ թղթակցութիւն պահեն՝ ծեծուած հարցերու եւ տրուած որոշումներու մասին:

Ժողովին ուղղուած նամակներ.—

Ժողովը գոհունակութեամբ լսեց ընկեր Զարդարեանէ հասած նամակ մը, որով իր ընկերական ողջոյնները կ'ուղղէր ժողովին հեռուէն՝ տարիներու գաղափարական գործունէութեամբ մը կապուած ըլլալով Պալք. շրջանին, եւ տալով իր գործունէութեան համարատուութիւնն եւս ընելու իրաւունքը՝ իրեն հետ աշխատող Կեդր. Կոմիտէի միւս ընկերներուն:

Պրայլայի մարմինը նամակով մը կ'իմացնէր թէ պատգամաւորութեան համար տրամադրելի ընկեր մը չունենալուն համար, տեղւոյն ընկերները իրենց ձայնը հաւաքաբար կու տային Ռուսշուքէն ընկեր Գառնիկի. Ժողովը նկատելով Գառնիկի պայմանները, որոնք թոյլ

12.- Դանուբ՝ կուս. ծածկանուսն է Ռուսմոյ Սուլիմա քաղաքին:
13.- Ասատուր Պետիկեան:

չէին տուած ընդունելու նաեւ Սլիվէնի պատգամաւորութիւնը, չկրցաւ գոհացնել նաեւ Պրայլայի ընկերները, եւ առանց պատասխան մը տալու, յարմար դատեց նախապէս տրուած հեռագրի պատասխանին եւս սպասել:

Ընտրութիւն յանձնախումբերու.— Անցնելով յանձնախումբերու ընտրութեան, ժողովը աչքի առջեւ ունեցաւ դատական եւ ալ խնդիրներու թեթեւ հանգամանքին հետ ժողովին մասնակցող ընկերներու թիւի նուազութիւնը, հարկ չտեսաւ դատական յատուկ յանձնախումբի մը ընտրութեան եւ որոշեց դատական խնդիրները քննել ժողովներու մէջ եւ հաւաքաբար. իսկ հաշիւներու եւ արձանագրութեան տեսրակներու քննութեան համար ընտրեց մէկ յանձնախումբ հետեւեալ ընկերներէն — Ֆիլիպէի պատգամաւոր՝ Փայլակ, Ռուսշուքի պատգամաւոր Ֆելիքս, Սուլիմայի պատգամաւոր՝ Սուրէն, որոնց պիտի ընկերանայ նաեւ Կեդր. Կոմիտէի ընկերներէն Ասպետ, եւ Քոնսթանցայի պատգամաւոր Հրայր:

Ընթերցում տեղեկագրերու.— Կեդր. Կոմիտէն կարդաց իր գործունէութեան ընդարձակ տեղեկագիրը: Կարդացուեցան նոյնպէս Ֆիլիպէի եւ Կալացի մարմիններուն տեղեկագիրները, անոնցմէ բխած հարցերը պարբերաբար անցնելով օրակարգի մէջ:

Պարտադրութիւն նորընտիր Կեդր. Կոմիտէի վրայ.— Որոշուեցաւ որ նորընտիր Կեդր. Կոմիտէն տեղեկագիրները ամփոփէ առանձին շրջաբերականի մը մէջ, ինչպէս եղած էր անցեալ տարի, որով ժողովը հարկ չզատեց տեղեկագիրներու պարունակութիւնը ամփոփել նաեւ ժողովի ներկայ արձանագրութեան մէջ: Ժողովը վերջացաւ իրիկուան ժամը 8ին:

ՆԻՍ Գ.

Մարտ 30 (Երկուշաբթի գիշեր)

Ներկայ ամբողջ կազմը:
Շարունակութիւն տեղեկագրերու ընթերցումին.— Կարդացուեցաւ Ռուսշուքի եւ Սուլիմայի տեղեկագիրները:

Կալացի մասին Կեդր. Կոմիտէն տուաւ տեղեկութիւններ, ապացուցանելով որ պաշտօնական նամակներէն ոմանք կը գրուին մարմնի անդամ չեղող մէկու մը կողմէ որուն ինքնութիւնը անծանօթ կը մնար: Այս մասին տեղեկութիւն ուղղուեցաւ Կալացի պատգամաւորէն, որ պարզեց տեղւոյն վիճակը, հաստատելով որ

մատնանշուած նամակները գրողն է նորեկ համակիր մը: Այս պարագան ուշադրութեան առնելով ժողովը՝ խիստ նկատողութիւն կ'ուղղէ Կալացի մարմնին, որ հակառակ ներքին կանոնագրի տրամադրութեան, նամակներ գրել տուած է մարմնին մէջ չգտնուող, ոեւէ մէկու մը, ըլլայ ընկեր կամ ոչ-ընկեր:

Պարտադիր յանձնարարութիւն մարմիններու.— Ժողովը նկատելով որ ինչպէս Կալացի, նոյնպէս Ռուսմանիոյ եւ Պուլկարիոյ մարմիններու մէջ աշխատանքի բաժանումը կը բացակայի, ստիպողաբար կը յանձնարարէ մարմիններուն իրենց աշխատութեանց մէջ պարտադիր ընել փոխադարձ աջակցութիւնն ու աշխատանքի բաժանումը: Ռուսմանիոյ մարմիններուն մէջ գտնուող այն ընկերները, որոնք գրել կարդալ գիտեն, պարտաւոր են օգնել մարմնի քարտուղարին: Ինչպէս նաեւ սրճարանի եւ ալ հաշիւներու արձանագրութեան:

Ժողովը վերջացաւ ժամը 12ին:

ՆԻՍ Դ.

Մարտ 31 (Երեքշաբթի կէսօրէ ետք)

Ներկայ ամբողջ կազմը՝ 7 ընկեր:

Նոր հասած նամակներ.— Պրայլայի մարմինը պատասխանելով ժողովի կողմէ ուղղուած հեռագրին, կրկին անգամ կը յայտնէր իր անկարելիութիւնը տեղական պատգամաւոր մը ուղարկելու համար, կրկնելով իր նախորդ որոշումը՝ ընկեր Գառնիկի վերաբերմամբ. բայց այս հեռագրին յետոյ ալ ժողովը չկրցաւ բաւարարութիւն տալ Պրայլայի ընկերներու պահանջին՝ ծանօթ ըլլալով ընկեր Գառնիկի անկարելիութեան պարագան:

Պուրկագի մարմինը եւս նամակով մը կ'իմացնէր իր ընտրութեան արդիւնքը՝ յանձին ընկեր Ֆելիքսի, սակայն ժողովը հարկադրուած եղաւ մնալ իր նախորդ որոշման վրայ:

Վառնայի մարմինը նամակով մը կը պարզէր տեղւոյն կազմակերպական վիճակը եւ պատգամաւոր չըրկուելու պատճառները, որոնք աւելի դրամական էին: Ժողովը կրկնեց իր նախորդ որոշումը եւ սպասեց իր դրկած նամակի պատասխանին:

Ֆիլիպէէն Պարտիզեան քոյրերը իրենց շուրջը եղած տարածախումբեանց եւ այդ առթիւ տեղական կոմիտէի կողմէ եղած կարգադրութեանց դէմ կը գրէին՝ արդարացնելով ինքզինքնին եւ ժողովին կարծիքը ուղղելով: Որոշուեցաւ խնդիրը նկատի առնել դատական հարցերու բաժինին մէջ իր հերթին:

Կարգադրութիւն կազմակերպութեան առձեռն գումարը մասին.— Ընկեր Ասպետ Կեղը. գանձը գտնուած առձեռն գումարը՝ 5000 Ֆ. յանձնած ըլլալով Ռուս-ջուրի մարմնի ընկերներէն Միհր-Պաքի, յայտնեց որ ինք պատասխանատուութենէ ազատ ըլլալով, ժողովին կ'իյնայ կարգադրութիւն ընել այդ մասին: Որոշուեցաւ յիշեալ գումարը ընկեր Ասատուրի անունով ձգել առժամապէս պանքան, մինչեւ նոր Կեղը. Կոմիտէի ընտրութիւնը:

Օրակարգ Երջ. ժողովի.— Կարդացուելով չըջանի հարցերը, տեղեկագիրներն ու նամակները, ինչպէս նաեւ Կեղը. Կոմիտէի տեղեկագիրն ու անոր ցուցմունքները՝ պատրաստուեցաւ հետեւեալ օրակարգը.

- 1.- Ընդհ. ժողովի հարցեր.— ա) Նկատառութիւն Բիւրոյի օրակարգին. բ) Նկատառութիւն չըջանի հարցերուն. գ) Կարգադրութիւն Պալք. Երջանի երկամեայ հաշուեկշիռ տեղեկագրի՝ Ընդհ. ժողովի համար:
- 2.- Քննադատութիւն Դաշնակցութեան ռեֆորմիստական թաքթիքին վրայ:
- 3.- Երջանային հարցեր.— ա) Ներքին կանոնագրի քննութիւն եւ նկատառութիւն այդ մասին չըջանէն եկած հարցերուն. բ) Միջոցներ՝ Երջանական ժողովէն յետոյ չըջուն ընկերոջ մը այցելութիւնը պահանջելու համար չըջանի ընկերներուն. գ) Մարմիններու վիճակը՝ Ռումանիա, Պոլկարիա. դ) Վառնայի վիճակը եւ Ռումանիոյ քաղաքական վիճակը. ե) Հէմէրիական դրութիւն եւ չառուզ-գործակալներու դերը Ռումանիոյ մեր կազմակերպական շարքերուն մէջ եւ անոնց ներգործութիւնը:
- 4.- Հնչակեան հակառակութիւններ.— Միջկուսակցական ատեան եւն:
- 5.- Միջոցներ՝ Պալքանի մէջ հոս հոն ցրուելու Դաշ. մատենադարաններու գրքերը փոխադրելու Երկիր:
- 6.- ա) Ռումանիոյ եւ Պոլկարիոյ գաղթականութիւնը Երկիր ճամբելու մասին կարգադրութիւններ. բ) Դրամական միջոցներ՝ անօգնական մնացողներուն:
- 7.- Բողոք Կեղը. Կոմիտէի դէմ Ռուսջուրէն՝ երկու պատգամաւոր տալու մասին արգելք յարուցած ըլլալուն համար:
- 8.- Պատանեաց խումբեր եւ միօրինակ կանոնագիր:
- 9.- Դատական խնդիրներ.— ա) Սուլիմայի սրճարանի 1904ի դրամական գեղծման խնդիրը. բ) Յովհ. Յարութեանի 13 Ֆրքի խնդիրը՝ Սուլիմայ. գ) Պարտիզեան մայր եւ քոյրերու խնդիր՝ Ֆիլիպէ. դ) Պուրէշի դրամական խնդիրները. ե) Ֆիլիպէի մէջ նախորդ Երջ. ժողովին դատապարտուածներու խնդիր. գ) Վահան Ծայլայեանի եւ Վառնի խնդիր՝ Վառնայ. է) Պուրէշի արտաքուստներու մասին Կեղը. Կոմիտէի դիրքը եւ դուրս մնացողներու խնդիրը. նոյնը եւ վառնացիներու

համար. Ներուզ ընթերցարանի վիճակահանութեան խնդիրը՝ «Ռազմիկ»ի եւ Կ. Կ.ի եւ Ադամեանի մէջ:

- 10.- Պիւտձէի կանոնաւորում.— Նիւթական հասոյթներ:
- 11.- Ընտրութիւն Ընդհ. ժողովի պատգամաւորին:
- 12.- Ընտրութիւն Կեղը. Կոմիտէի:

Ընդհ. ժողովի համար հարցեր եւ բանաձեւեր Աչքի առջեւ ունենալով Արեւմտ. եւ Արեւելեան Բիւրոներու կողմէ ցրուելու օրակարգը, կարծիքներու լայն փոխանակութիւններէ եւ վիճաբանութիւններէ ու լուսաբանութիւններէ յետոյ հետեւեալ բանաձեւը քուէարկեց ժողովը՝ առաջադրուած խնդիրներուն ի պատասխան.

- 1.- ա) Դաշնակցութիւնը եւ երիտասարդ թուրքերը՝ իրենց դիրքը փոխադարձօրէն. բ) Մեր դիրքը դէպի միւս յեղ. կուսակցութիւնները եւ ազգութիւնները. գ) Պլոք խորհրդարանին մէջ:
- «Նկատի ունենալով թուրքիոյ մէջ մեզ շրջապատող պայմանները՝ Դաշնակցութիւնը յարաբերութիւն կը պահէ «Իթիհատի» հետ, լոկ Երկրի սահմանադրական տարրի բարոյական ուժը աւելցուցած ըլլալու եւ մեր պրոպականտով անոնց մէջ արթնցնելու համար նորա-նոր գաղափարներ աւելի համապատասխան մեր ծրագրին. նոյնպէս ուժ եւ բարոյական աջակցութիւն ցոյց տալ «Ահարար»ին՝ նկատի ունենալով որ անոր քաղաքական ծրագիրը համեմատաբար մօտ է մեր ծրագրի նուազագոյն քաղաքական պահանջներուն: Նկատի ունենալով միաժամանակ Տաճկաստանի մէջ գոյութիւն ունեցող քաղաքական այժմեան կազմակերպութիւն-խմբակցութիւններու ծրագիրն ու կազմը, կ'առաջարկուի չընել անոնց հետ պլոք՝ փարլամենթէն դուրս կարելի է ընել պլոք փարլամենթի մէջ այս կամ այն հարցի շուրջ, որ մեր պահանջներուն չի հակասեր: Դաշնակցութիւնը կ'աշխատի միւս հարեւան ազգութիւններու աշխատակողմանց մէջ ալ փրօփականտա մղել համաձայն իր ծրագրին եւ զանոնք ալ կազմակերպել»: (Ընդունուած միաձայնութեամբ):
- 2.- բ) Մեր դիրքը Սահմանադրութեան հանդէպ.— Կուսակցութեան օրինականացման հարցը. ը) Մեր դիրքը եւ վերաբերմունքը ժողովուրդին ինքնապաշտպանութեան պահանջներուն հանդէպ.— «Դաշնակցութիւնը թուրքիոյ մէջ կը գործէ իբրեւ լեկալ քաղաքական կուսակցութիւն, կը մասնակցի փարլամենթին՝ իր սեփական անունով: Գալով մարտական ճիւղին՝ անիկա կը տարուի անջատ կազմակերպութիւնէն եւ հրապարակ կը բերուի մի միայն ուժակցիայի պահուն. միաժամանակ կազմակերպութիւնը կ'աշխատի ինքնապաշտպանութեան ոգին արթնցնել եւ ջանալ որ ինքնապաշտպանութեան գործը ստանձնէ ինքը ժողովուրդը»: (Ընդունուած միաձայնութեամբ):

ՆԻՍ Ե.

Մարտ 31 (Երեքշաբթի գիշեր)

Ներկայ բոլոր ընկերները՝ 7 հոգի: Ընդհ. ժողովի հարցերու եւ բանաձեւերու շարունակութիւն

3.- Կուսակցութեան վերաբերմունքը դէպի ազգային կուստուրական հաստատութիւնները. մամուլ, գիրք, դպրոց, լսարան եւն եւ մարմինները.— Պատրիարքի եւ կաթողիկոսի ընտրութեան հարցը.—

«Դաշնակցութիւնը Տաճկաստանի եւ Կովկասի մէջ այլեւս մտնելով գործունէութեան տարբեր փուլի մը մէջ, իր բոլոր ուժով կը ձգտի աշխատակողման շահերու տեսակէտէն եւ մեր ծրագրի ոգւոյն համաձայն հետեւի կրթական աշխարհիկ քաղաքականութեան ու ձգտիլ բաժնելու եկեղեցին վարժարանէն. կրթական եւ կուստուրական գործերը յանձնել քաղաքական ժողովներու, իսկ կրօնական գործը ձգել կղերականներուն եւ թոյլ չտալ անոր՝ որ օգտուելով քաղաքական նպաստաւոր պարագաներէ՝ ձգտի թոն եւ ուղղութիւն տալ ժողովուրդի գուտ քաղաքական կուլին, աշխատելով սոյն պայքարին մէջ ժողովուրդի աւանդութեանց մօտենալ զգուշաւորութեամբ: Կրօնապէս հայութենէն անջատուած տարրերը միացնել քաղաքական գործերու շուրջ: Դաշնակցութիւնը կը տարածէ աշխատակողման գրականութիւն, որոնցմով կը դաստիարակէ աշխատակողմանը, յատկացնելով այս մասին իր պիւտձէէն կարեւոր մաս մը: Դաշնակցութիւնը իբրեւ աշխատակողման կուսակցութիւն չի մասնակցի կաթողիկոսական եւ պատրիարքական ընտրութեանց»: (Ընդունուած մէկի դէմ 5 ձայնով):

4.- Մեր դիրքը դէպի ռուս կառավարութիւնն ու ռուս կուսակցութիւնները եւ դէպի պարսկական շարժումը.—

- ա) «Ռուս յեղափոխութեան հասուն պայթման մը պահուն՝ Դաշնակցութիւնը իր նիւթական թէ մարտական ուժերու համեմատական չափով կը մասնակցի անոր եւ յեղափոխական բոլոր տարրերու հետ ձեռք ձեռքի տուած կը կռուի Յարիզմին դէմ, մասնաւորապէս գործակցելով Սոցիալ Յեղափոխական եւ Սոցիալ-Դեմոկրատ կուսակցութեանց հետ»: (Ընդունուած միաձայնութեամբ):
- բ) «Դաշնակցութիւնը չունենալով Պարսկաստանի մէջ առանձին ազգային-քաղաքական պահանջներ՝ միայն աշխատակողման շահերու տեսակէտէն մեկնելով կը մասնակցի պարսկական յեղափոխական շարժման իր նիւթական-մարտական-մտակողման ուժերու համապատասխան չափով՝ տապալելու համար բռնակալութեան կարգերը, որով եւ կ'ապահովուին զանա-

զան ազգութիւններու ազգային-կուստուրական շահերն ալ: Դաշնակցութիւնը կը ջանայ նաեւ տեղական ազգաբնակչութիւնը այդ շարժումներով հետաքրքրելու եւ անոնց նիւթապէս աջակցելու պէտքով»: (Ընդունուած միաձայնութեամբ):

5.- Վերաբննութիւն մեր նուազագոյն պահանջներուն եւ սահմանագծում «նուազագոյն» պահանջները եւ «փլաթֆորմ» հասկացողութիւններուն.—

«Մրագրի նուազագոյն պահանջները կը պահուին անփոփոխ»: (Ընդունուած միաձայնութեամբ):

Ժողովը վերջացաւ ժամը 12ին:

ՆԻՍ 2.

Ապրիլ 1 (Չորեքշաբթի կէսօրէ ետք)

Շարունակութիւն Ընդհ. ժողովի հարցերու եւ բանաձեւերու: Ներկայ ամբողջ կազմը:

Յ.- Վիճաբանութեան դրուելով Բիւրոյի պատրաստած օրակարգի ժա հարցը, Արհեստակցական միութիւններու կուսակցական-անկուսակցական հողի վրայ կազմակերպելու մասին, ընկերներ ժիրայր եւ Ֆելիքս դրին հետեւեալ բանաձեւերը, որոնք առանձին առանձին քուէարկութեան ենթարկուեցան եւ տուին հետեւեալ արդիւնքը: Ժիրայրի բանաձեւը՝

«Յորչափ աշխատակողմանը դեռ իր շահերու լուրջ գիտակցութիւնը չունի, նախընտրելի է դնել Արհեստակցական միութիւնները «անկուսակցական» հողի վրայ, որպէսզի աշխատակողման շարքերը մնան կուռ եւ հեռու կուսակցական անջատումներէ եւ հակամարտութիւններէ՝ բուն իսկ աշխատակողման անմիջական շահերու իսկ տեսակէտով եւ ի վնաս պուրժուակցիային. այսպէսով Դաշնակցութիւնը աւելի դիւրութիւններ կ'ունենայ իր սկզբունքները տարածելու աշխատակողման խաւերու մէջ՝ թէ իր ծոցին մէջ դաստիարակած ընկերներու եւ փրօփականտիստներու միջոցով»: (Ընդունուած 2ի դէմ չորս ձայնով):

Ընկեր Ֆելիքսի բանաձեւը. «Նկատի ունենալով [որ] Տաճկաստանի մէջ աշխատակողման շարժումը նոր կը սկսի ձեւակերպուած մէջտեղ գալ, Դաշնակցութիւնը այժմ իբրեւ միակ աշխատակողման պաշտպան կուսակցութիւն՝ Տաճկաստանի մէջ կը կազմէ արհեստակցական եւ գիւղացիական միութիւններ կուսակցական հողի վրայ, որովհետեւ սոցիալիստական կուսակցութեան ղեկավարութեան տակ միայն աշխատակողմանը կրնայ մղել դասակարգային կռիւ՝ պուրժուակցիային դէմ յանուն»

իր մօտաւոր եւ ապագայ տնտեսական եւ քաղաքական շահերուն. անկուսակցական միութիւնները, մանաւանդ ներկայ պայմաններուն մէջ կ'ունենան վատ ազդեցութիւն դասակարգային կռիւին, որ պէտք է ըլլայ տեւիզը՝ աշխատաւորութեան»։ (Կի դէմ 2 ձայն շահած, որ պիտի երթայ Ընդհ. Ժողովին իբրեւ փոքրամասնութեան կարծիք)։

7.- Պատասխանատու մարմիններու վերացում.— Խորհուրդի իրաւասութիւնը.— Բիւրոներու, ռալոնական եւ շրջանի ժողովներու իրաւասութեանց ճշդումը.—

«Արեւմտեան Բիւրոն փոխադրել Պոլիս, որ կը հսկէ կուսակցութեան Թուրքիոյ եւ արտասահմանի գործունէութեան եւ մարմիններուն վրայ։ Պատասխանատու մարմինները ջնջել՝ աւելորդ նկատելով ներկայ պայմաններուն մէջ։ Արեւելեան Բիւրոն կը հսկէ Պարսկաստանի եւ Կովկասի գործունէութեան։ Ռալոնական ժողովներու վերաբերմամբ կազմական կանոնագրի գծած սահմաններուն համաձայն ենք։ Ուսանողները կը մտնեն կազմակերպութեան շարքերուն մէջ եւ կ'օգտուին իրենց ձայնի իրաւունքէն սոսկ իբրեւ անհատ ընկեր, առանց բացառիկ կազմ եւ ձայն ունենալու ժողովներու մէջ։ Խորհուրդի գոյութիւնը ընդունելով այլեւ աւելորդ, անոր տեղ ընտրել քոնֆրոնտ մարմին մը՝ Ընդհ. Ժողովի կողմէ, որ կը հսկէ Բիւրոներու նիւթական եւ բարոյական գործունէութեան վրայ»։ (Ընդունուած միաձայնութեամբ)։

8.- Դրամական ու կարգապահական գեղձումներու մասին կարգադրութիւն.— «Քննել Վանի դէպքերը, եւ պատասխանատուները ճշդելով՝ ենթարկել համապատասխան պատժի»։ (Ընդունուած միաձայնութեամբ)։

9.- Դրամական-հաշուական սխտեմի վերաբնութիւն եւ վերանորոգում.—

ա) «Հաշուական-դրամական խնդիրներու մասին գծուած օրէնքները ընդունելով՝ կ'առաջարկուի տրպագրել նաեւ միօրինակ հաշուական բլանկներ եւ ուղեցուցներ, որոնց համաձայն ընթացք տան մարմիններն ու Կեդր. Կոմիտէները իրենց հաշուական գործունէութեանց։ Բիւրոն ինք կը բաշխէ Կեդր. Կոմիտէներուն հաշուական միօրինակ տետրակներ՝ միօրինակ թուագրուած եւ վաւերացուած՝ պահուելու համար կանոնաւոր նաեւ բոլոր Կեդր. Կոմիտէներուն հաշիւները»։ (Ընդունուած միաձայնութեամբ)։

բ) «Ջնջել 2 առ հարիւր սակը եւ նշանակել իբրեւ անդամավճար՝ մինիմում մասական 1 Ֆր. ատկէ աւելի բարձր վճարում մը ընել ձգելով ընկերող կամքին»։ (Ընդունուած միաձայնութեամբ)։

գ) «Նկատի ունենալով որ հանգանակութիւնը անհամաձայն է մեր սկզբունքներուն, միւս կողմէ կուսակցութիւնը դրամական բազմապահանջ պէտքեր ունի իր գործունէութեան համար, պարտաւորեցնել մարմիններն ու ընկերները՝ միջոցներ խորհիլ կուսակցութեան նոր հասոյթներ հայթայթելու նուիրատուութիւններու, ներկայացում-հանդէսներու եւ ուրիշ նման միջոցներով»։ (Ընդունուած միաձայնութեամբ)։

Ժողովը ցրուեցաւ ժամը 8ին։

ՆՒՍՏ Ե.

Ապրիլ 1 (գիշեր-Չորեքշաբթի)

Ներկայ ամբողջ կազմը՝ 7 ընկերով։ Շարունակութիւն Ընդհ. Ժողովի հարցերու եւ բանաձեւերու

9.- Կուսակցութեան գտումը.— Խիստ կանոններ Դաշնակցութեան նոր անդամներ ընդունելու մասին.—

«Նկատելով որ Սահմանադրութենէն առաջ եւ մանաւանդ անկէ յետոյ Դաշնակցութեան մէջ այնպիսի տարրեր մուտք գտած են՝ որոնք չեն համապատասխաներ մեր սկզբունքներուն, կ'առաջարկուի գտել շարքերը եւ թոյլ չտալ կազմակերպութեան ոգւոյն եւ սկզբունքներուն հակադիր տարրերու մուտքը հոն։ (Ընդունուած միաձայնութեամբ)։

10.- Կարմիր խաչ եւ օժանդակ խումբեր.—

ա) «Կարմիր խաչերու կազմութիւնը Արտասահմանի մէջ կորսնցուցած ըլլալով իր կարեւորութիւնն ու գոյութեան իրաւունքը, պարտաւորիչ չդարձնել անոնց կազմութիւնը։ Բ) Գործօն ընկերները պարտաւոր կ'ըլլան ենթարկուելու կազմակերպութեան օրէնքներուն եւ ներկայ կը գտնուին անպայման Ընդհ. Ժողովներուն. իսկ անոնք որ ամէն մէկ շրջանի ներքին կանոնագրի տրամադրութեանց չեն ենթարկուիր եւ կը բաւականանան սոսկ նիւթապէս օժանդակելով՝ գործօնի իրաւունքէն կը զրկուին եւ կը նկատուին Դաշնակցութեան օժանդակողներ. ասոնցմէ կը կազմուին օժանդակողներու խմբակներ, որոնց նուիրատուութիւնները գանձելու համար տեղական դաշնակցական մարմին կողմէ կը նշանակուին հաւաքիչներ»։ (Ընդունուած միաձայնութեամբ)։

11) ա) «Դրօշակ», Բ) «Փրօ Արմենիա», Գ) Պոլիս պաշտօնական օրկանի մը հրատարակութիւնը. գ) Կիսապաշտօնական թերթեր։

14.- Նշանարան։

ա) «Դրօշակ»ը պահելով առայժմ Արտասահմանի մէջ, վերածել զայն երկամսեայ ճոխ հանդէսի մը, այժմեանէն եռապատիկ կամ քառապատիկ ծաւալով, որ մնալով կուսակցութեան կեդրոնական օրկանը՝ դառնայ տեսակ մը ուսումնասիրական հանդէս, թոն տալու համար կուսակցութեան սկզբունքային խնդիրներուն եւ ուղղութեան, ուր եւ հրատարակուին պաշտօնական բոլոր տղթումաններն ու նուիրատուութիւնները»։

բ) «Ներկայ պայմաններուն մէջ «Փրօ Արմենիա» հրատարակութիւնը ըլլալով աւելորդ եւ աննպատակ, վերջ տալ անոր»։ (Ընդունուած միաձայնութեամբ)։

ՆՒՍՏ Ը.

Ապրիլ 2 (Հինգշաբթի գիշեր)

Ներկայ ամբողջ կազմը՝ 7 ընկերով։ Շարունակութիւն Ընդհանուր Ժողովի հարցերու եւ բանաձեւերու

12.- գ) «Սկզբունքով ընդունելով Պոլսոյ մէջ լուրջ եւ բազմակողմանի կազմակերպական օրաթերթի մը անհրաժեշտ եւ անխուսափելի կարեւորութիւնը որ իսկական արտայայտիչը ըլլայ մեր աշխարհահայեացքին եւ ուղղութեան, կ'առաջարկուի անոր յատկացուած կազմակերպական նիւթական օժանդակութիւնն եւս ընել համեմատական ձեւի մը մէջ՝ կազմակերպական ընդհանուր հասոյթին հետ, անակնկալ դէպքերու պահուն հարկ եղած գոհողութիւնն ընելու առաջադրութեամբ՝ անոր յարատեւութիւնը պահպանելու համար։ Փափաքելի է նաեւ նման թուրքերէն թերթի մըն ալ հրատարակութիւնը, տարածելու համար կուսակցութեան սկզբունքները թուրք աշխատաւորութեան մէջ եւս, եթէ կուսակցութեան պիտեճէն թոյլատրէ ատիկա»։

դ) «Կիսապաշտօնական թերթերու համար գծել տալ սահման։ Գաղութներու մէջ միայն Ամերիկան պէտք ունենալով կազմակերպական սեփական թերթի մը, «Հայրենիք»ը դնել կուսակցութեան սկզբունքներուն համապատասխան ուղղութեան մը մէջ, յատկացնելով կարող վարիչ մը, որ տանի միաժամանակ Ամերիկայի փրօփականտը։ Իսկ Երկրի ռալոնները կ'ունենան իրենց ռալոնական թերթերը՝ որոնք կը զբաղին գաւառի պէտքերով եւ իրենց ուղղութեամբ ու նիւթական պայմաններով պէտք է պատասխանատու ըլլան կուսակցութեան առջեւ. այդ թերթերու յատկացուած նիւթականն ալ ըլլայ համապատասխան հրատարակուող շրջանի նիւթական հասոյթի որոշ սակին։ Գալով անհատ ընկերներու եւ խմբակներու կողմէ հրատարակուած ոչ-պաշտօնական բայց կազմակերպական հանգամանք ունենալ նկրտող թերթերուն՝ չթոյլատրել դաշ-

նակցականի հանգամանքով խօսելու»։ (Ընդունուած միաձայն)։

13.- Հայկական հարցը եւ Եւրոպան (Յերդ յօդուած) «Դաշնակցութիւնը ունենալով իր որոշ աշխարհահայեացքը եւ քաղաքական ծրագիրը, ոչ մէկ առնչութիւն կրնայ ունենալ Յերդ յօդուածին հետ»։ (Միաձայնութեամբ)։

Հարցեր Ընդհ. Ժողովին՝ Պալք. Շրջանէն առաջարկուած

14.- Նուազեցում արտասահմանեան մարմիններու ցենզի

«Նկատելով որ գաղթավայրերու ընկերները հետզհետէ Երկիր կը մեկնին, որով անդամներու թիւը տակաւ նուազելով գաղթավայրերու կազմակերպութիւնները կը զրկուին Դաշնակցութեան Ընդհ. Ժողովներուն մասնակցելու իրաւունքէն, կ'առաջարկուի Երդ Ընդհ. Ժողովին՝ գաղթավայրերու կազմակերպութեանց դրամական ցենզ ընդունել 7000-10000 Ֆրանք, իսկ անդամներու մինիմում թիւը՝ 500»։ (Ընդունուած միաձայնութեամբ)։

15.- Մախսի սակ՝ արտասահմանեան մարմիններու «Արտասահմանի Կեդր. Կոմիտէներու տեղական ծախքի սակը բարձրացնել 25%»։ (Միաձայնութեամբ)։

16.- Յարաբերութիւն Կեդր. Կոմիտէներու միջեւ

«Կ'առաջարկուի յարաբերութիւն հաստատել կազմակերպութեան մէջ գտնուող բոլոր Կեդր. Կոմիտէներու միջեւ. տեղեկագրերու, շրջաբերականներու փոխանակութիւնը՝ գիտակ մնալու համար կազմակերպութեան ծոցին մէջ կատարուող անցուղարձերուն եւ գոյութիւն ունեցող հոսանքներուն»։ (Միաձայն)։

17.- Ընտրութեան եղանակ Ընդհ. Ժողովի պատգամաւորին

«Ընդհ. Ժողովի պատգամաւորի ընտրութիւնը կատարել համաձայն Պալք. շրջանի Կեդր. Կոմիտէի ընտրութեան եղանակին»։

18.- Ընդհ. Ժողովի պատգամաւորի ինքնութեան մասին առաջարկ՝ Պալք. Երդ Շրջանական ժողովէն

«Ընդհ. Ժողովի պատգամաւորը պիտի ըլլայ իր ընտրական վարի տեղական-յեղափոխական պայմաններն ու կեանքը ուսումնասիրած անձնաւորութիւն»։

19.- Բիւրոներու եւ ալ կարեւոր մարմիններու ընտրութեան առթիւ

«Ընդհ. Ժողովի գումարումէն առաջ դիմել բոլոր Կեդր. Կոմիտէներուն եւ յարմարագոյն ու տրամադրե-

լի ընկերներու անուններ ուզել, որպէսզի Ընդհ. ժողովը դիւրութիւն ունենայ Բիւրոներու եւ այլ կարեւոր մարմիններու ընտրութեանց պահուն կանոնաւոր ընտրութիւններ կատարելու եւ ընտրուած մարմինն ալ մնայ իր ամբողջական կազմին մէջ, առանց հրաժարումներու տեղի տալու. այս եղանակին գործադրութեամբ հետզհետէ ասպարէզ կանչուած կ'ըլլան նաեւ կազմակերպութեան ծոցին մէջ գտնուող թարմ եւ կարող ուժեր»: (Միաձայն):

20.- Դաշնակցութեան ռեֆորմիստական քաղաքականութիւնը

«Նկատելով որ Սահմանադրութենէն յետոյ մասնաւորապէս Պոլիս եւ այլուր դաշնակցական կարեւոր ընկերներու կողմէ եղան այնպիսի արտայայտութիւններ եւ երեւոյթներ՝ որոնք կը հակասէին Դաշնակցութեան ոգւոյն եւ հիմնական սկզբունքներուն եւ կը մթազնէին աշխատաւորութիւնը, կ'առաջարկուի Ընդհանուր ժողովին որ խիստ կերպով յանձնարարէ Մարմիններուն նման երեւոյթներու արգելումը»: (Միաձայն):

ՆԻՍ Թ.

Ապրիլ 3 (Ուրբաթ կէսօրէ ետք)

Ներկայ ամբողջ կազմը՝ 7 ընկերներով:

Վառնայէն հասած նամակով մը մարմինը կ'իմացնէր թէ խմբագրական ժողովը չէր համաձայնած իր աջակցութիւնը ընծայել պատգամաւորի ընտրութեան առթիւ՝ պատճառաբանելով ժամանակի սղութիւնը. մարմինը կ'ուղարկէր նաեւ խմբագրութեան անունով ուղարկուած նամակը: Ընկեր ժիրայր յայտնեց ժողովին որ այսօր հաւանականաբար հասնի Վառնայի պատգամաւորը, որովհետեւ այդպէս իմացուցած էին թելեֆոնով Վառնայէն: Կարդացուեցաւ նաեւ Պուլքրէշի ընկերներու կողմէ ստորագրուած նամակ մը՝ որով մարմնի ընկերներէն Հաճի կ'իմացնէր 150 Ֆր. գումարի մը փոխադրութիւնը, խոստանալով յառաջիկային ընել կարգադրութիւններ՝ ցրուած ընկերները հաւաքելու եւ գէթ 2-3 կանոնաւոր խումբերու բաժնելով յարաբերելու տեղական մարմնին հետ Ռուսիոյ քի. նոյն նամակով մէջ կը բերուէր պատճառաբանութիւններ՝ կազմը ցրուելու պատճառ նկատուող շարժառիթներու շուրջը: Որոշուեցաւ սոյն նամակը նկատի ունենալ իր հերթին երբ ժողովը զբաղի Պուլքրէշի խնդիրով: Վառնայէն հասաւ նաեւ հեռագիր մը, որով կը ծանուցուէր պատգամաւորին մեկնումը:

Ժողովը անցաւ Պալք. ներքին կանոնագրի քննութեան եւ բարեփոխութեան եւ ունեցաւ հետեւեալ արդիւնքը:

Ներքին ընդհանուր կանոնագիր Հ.Յ.Դ. Պալք. շրջանի կազմակերպութեան

Պատրաստուած Ե. 2. է. եւ Ը. Երջ. ժողովներու կողմէ

Նպատակ.— Հ. Ե. Դաշնակցութեան պալքանեան կազմակերպութեան նպատակն է նիւթապէս եւ բարոյապէս աջակցիլ Թուրքիոյ եւ Ռուսաստանի յեղափոխական եւ աշխատաւորական շարժման, միեւնոյն ժամանակ դաստիարակելով իր անդամները ընկերվարական ոգւով, ի հարկին իր մասնակցութիւնը ունենալու համար տեղական ընկերվարական շարժման՝ մտնելով համապատասխան Արհեստակցական միութիւններու մէջ:

Յօդ. 1.— Կազմութիւն եւ անդամակցութիւն.— Ամէն անհատ, առանց սեռի խտրութեան, կրնայ անդամակցիլ Հ.Յ.Դ. Պալք. կազմակերպութեան՝ եթէ սկզբունքով ընկերվարական-յեղափոխական է եւ Դաշնակցութեան ծրագրին եւ ուղղութեան հետեւող է եւ տեղական ընկերական ընդհանուր ժողովին առջեւ կ'ուրիշէ հաւատարիմ մնալ Հ. Ե. Դաշնակցութեան հիմնական ծրագրին:

Յօդ. 2.— Տեղական կազմակերպութիւնները կը բաժնուին որոշ խումբերու՝ որոնք կը կազմուին գործօն անդամներէ եւ պարտաւոր կ'ըլլան ենթարկուելու կազմակերպութեան օրէնքներուն եւ սոյն ներքին կանոնագրի տրամադրութեանց: Իսկ անոնք որ կազմակերպութեան օրէնքներուն եւ ներկայ կանոնագրի տրամադրութեանց չեն ենթարկուիր եւ կը բաւականանան սոսկ նիւթապէս օժանդակելով՝ կը նկատուին Դաշնակցութեան օժանդակողներ, որոնցմէ կը կազմուին Օժանդակողներու խմբակներ եւ որոնց նուիրատուութիւնները կը գանձուին մարմնին կողմէ նշանակուած հաւաքիչներու միջոցով:

Ծանօթ.— ա) Խումբերու անդամներու նուազագոյն թիւ կ'ընդունուի 7:

բ) Մարմնի գոյութիւն ունեցող տեղերու հարեւան վայրերուն [մէջ], Դաշնակցութեան օժանդակողներու եւ գործօն ընկերներու վերաբերմամբ պատկանեալ նոյն մարմինը կ'ընէ համապատասխան կարգադրութիւն՝ ըստ ներքին կանոնագրի:

Յօդ. 3.— Կազմակերպութեան անդամակցիլ ուզողը կը դիմէ տեղական կոմիտէին գրաւոր կամ բերանացի, որ եւ կը յանձնէ ընդհանուր ժողովներու հաւանութեան. նոր անդամը կ'ընդունուի ձայներու 2/3ի մեծամասնութեամբ, լսելով տարակարծիքին պատճառները:

Յօդ. 4.— Գործօն անդամները պարտաւոր են ամսական 1 Ֆր. վճարել. անկէ աւելի վճարում մը ընել կը ձգուի ընկերներու կամքին:

Յօդ. 5.— Երեք ամիս շարունակ անդամավճար չհա-

տուցանող ընկերը կը հրաժարեցուի, եթէ բացառիկ պարագաներ չկան նկատողութեան արժանի:

Յօդ. 6.— Նորեկ դաշնակցական ընկեր մը պէտք է վկայական ունենայ իր ձեռքը՝ մեկնած քաղաքի մարմինէն, հակառակ պարագային իբր պարզ թեկնածու կը նկատուի, մինչեւ որ որոշ վստահութիւն մը չունենան ընկերները անոր վրայ:

Յօդ. 7.— Խումբը կ'ունենայ հաւաքիչ մը միայն, որ կ'ընտրուի համապատասխան խումբի ընկերներու գաղտնի քուէարկութեամբ. հաւաքիչը պարտականութիւն ունի 1) ամէն ամիս գանձել անմասվճարները եւ նշանակել տեսրակին մէջ, որոնց դէմ պէտք է ստորագրէ վճարողը. 2) խումբին եռամսեայ հաշուեկշիռը յանձնել կոմիտէին եւ անկէ առած ընկալագիրը ներկայացնել իր ընկերներուն եւ անկորուստ պահել:

Յօդ. 8.— Եթէ խումբ մը ընկերներ հաւաքաբար ձեռնարկ մը ընել ուզեն, պարտաւոր են տեղական մարմնոյն դիմել եւ անոր հսկողութեան տակ ընել:

Յօդ. 9.— Ընկեր մը կամ ընկերներ երբ ընկերական ընդհանուր ժողովի գումարման պէտքն զգան՝ կ'առաջարկեն կոմիտէին, որ եթէ յարմար դատէ կը գումարէ ժողովը: Ընդհ. ժողով պահանջող ընկերներու թիւը երբ 10ի հասնի, կոմիտէն պարտաւոր կ'ըլլայ գումարելու:

Ժողովի ընթացքին հասաւ նաեւ Վառնայի պատգամաւորը՝ Տուտուխեան (Մանուկ Մինասեան), որուն վկայութիւնն ու յարակից տողիմանը քննուելով հաստատուեցաւ օրինաւորութիւնը եւ թոյլատրուեցաւ մասնակցութիւնը ժողովին: Դիւանին կողմէ նորեկ պատգամաւորին հաղորդուեցան անցեալ ժողովներու զբաղումներուն եւ ժողովի կազմին նկատմամբ: Վառնայի պատգամաւորին ներկայութեամբ պատգամաւորներու թիւը բարձրացաւ 8ի, որով Կեդր. կոմիտէի վճռական եւ խորհրդակցական ձայնին հետ միասին ժողովին մասնակցող ընկերներու թիւը կը հասնի 8ի:

Ժողովը ցրուեցաւ ժամը 8ին:

ՆԻՍ Ժ.

Ապրիլ 3 (Ուրբաթ գիշեր)

Ներկայ ամբողջ կազմը՝ 8 ընկերներով:

Նոր հասած նամակներ.— Սիլվէնէն օր. Թ. Սրապեան նամակ մը ուղղելով ժողովին՝ Պարտիզեան քոյրերու խնդիրն ու քննութիւնն ու այդ առթիւ կարգադրութիւն մը կը խնդրէ՝ յիշելով անոնց անմեղութիւնը: Կարդացուեցան Քոնսթանցայէն հասած հարցերը, որոնց պարունակութիւնը արդէն բովանդակուած ըլլալով ժողովին կողմէ բանաձեւուած հարցերուն մէջ՝ աւելորդ նկատուեցաւ օրակարգ անցնել եւ վիճաբանութեան ենթարկել: Կալացի մարմինը դրկած էր պատգա-

մաւորի ընտրութիւնը հաստատող ստորագրութիւնները, որ պահանջուեցաւ ասկէ առաջ՝ ժողովիս կողմէ: Վառնայի ընկերներէն հասած էր նաեւ տեղեկագիր-գանգատագիր մը՝ որ նկատի պիտի առնուի իր հերթին: Այս ընթացումներէն յետոյ ժողովը անցաւ կանոնագրի քննութեան:

Տեղական կազմակերպական Ընդհ. ժողովներ.—

Յօդ. 10.— Ընդհ. ժողովները տեղի կ'ունենան մարմնին հրահրով՝ երբ կարեւոր հաղորդելիք կամ խորհրդակցութիւն մը ունի, ինչպէս նաեւ ընկերներու առաջարկութեամբ՝ նախագծուած կանոնի սահմանին մէջ:

Յօդ. 11.— ա) Մարմինը պատրաստելով ժողովի օրակարգը եւ ընկերներու ցանկը՝ իւրաքանչիւր ընկերով ստորագրել կու տայ՝ առաջադրուած ժողովին ներկայ գտնուելու համար: բ) Առանց բանաւոր պատճառի տարուան մէջ երեք ընդհանուր ժողովներու ներկայ չգտնուող ընկեր մը իր ձայնը կը կորսնցնէ նոյն տարուան համար: գ) Ընդհանուր ժողովները կը գումարուին ընկերներու 2/3ի ներկայութեամբ. Եթէ առաջին ժողովին այդ թիւը լրացնել անկարելի ըլլայ՝ երկրորդ ժողովը օրինական է՝ որքան ընկեր որ ներկայ գտնուի: դ) Ժողովի բացումէն առաջ մարմինը ներկայի-բացակայի դրութեամբ կը ճշդէ ներկաներու թիւը՝ համաձայն անդամներու թիւին. այն ընկերները՝ որոնք իրենց բացակայութեան պատճառները իմացուցած են եւ կամ բացակայ են քաղաքէն՝ չեն հաշուուիր ընդհանուր թիւին մէջ, բայց չեն ալ կորսնցնել իրենց ձայնի իրաւունքը յաջորդ ժողովներուն մէջ, իսկ անոնք որ չեն իմացնել իրենց բացակայութեան պատճառները եւ ասիկա կը կրկնուի երեք ժողովներու առթիւ, մարմինը կը գործադրէ սոյն յօդուածին առաջին տրամադրութիւնը:

Յօդ. 12.— Ընդհանուր ժողովները կը զբաղին կազմակերպական հարցերով, կը կատարեն մարմնի եւ պատգամաւորի ընտրութիւն, կը զբաղին տեղական կազմակերպական խնդիրներով:

Կոմիտէ

Յօդ. 13.— Առնուազն 50 գործօն անդամ ունեցող շրջան մը կը կազմէ կոմիտէ, որ կը բաղկանայ 5-7 անդամներէ/անդամուհիներէ:

Յօդ. 14.— Մարմնի անդամ կրնան ընտրուիլ այն ընկերները միայն՝ որոնք գէթ վեց ամիս ապրած են նոյն քաղաքին մէջ եւ երկու տարիէ ի վեր գոնէ մտած կազմակերպութեան մէջ:

Յօդ. 15.— Մարմինը կ'ունենայ գանձապահ, քարտուղար եւ գոյքապահ, որոնք ժողովին մէջ կ'ընտրուին փոխադարձ հաւանութեամբ:

ա) Քարտուղարը կը վարէ գրաւոր գործառնութիւնները եւ կը պահէ բոլոր դիւանական գրութիւնները:

րը: ք) Գանձապահին պարտականութիւնն է կանոնաւորապէս պահել հաշիւները, իրենց պարտականութեանց մէջ թերացող հաւաքիչներուն յիշեցնել պարտքերնին, գանձուած գումարներուն փոխարէն տալ ընկալագրեր:

Յօդ. 16.— Պաշտօնական նամակներու տակ կը ստորագրեն կոմիտէի բոլոր անդամները իսկական կամ կեղծ անունով, կանխաւ այդ անուններուն վաւերականութիւնը իմացնելով կեղծ կոմիտէին:

Մարմինը անկախ է իր տեղական գործերուն մէջ, իսկ իրեն համար գծուած իրաւասութեան սահմանէն դուրս ձեռնարկ մը ընելու համար պարտաւոր է կեղծ կոմիտէի հաւանութիւնը ստանալ:

Յօդ. 17.— Մարմինը կը վարէ՝ ա) Տեղական կազմակերպութեան ընդհանուր գործերը եւ միջնորդ կը հանդիսանայ ընկերներու եւ կեղծ կոմիտէի ու աւելի բարձր մարմիններու միջեւ: ք) Ընկերներու զարգացման եւ Դաշնակցութեան փրոփականտին հոգ կը տանի, սերտ յարաբերութիւն կը մշակէ ընկերներու հետ: գ) կը կազմակերպէ իր տեղւոյն մէջ վիճակախաղ, ներկայացումներ, լսարաններ եւն: դ) Յարաբերութիւն կը պահէ հարեւան վայրերու գործօն ընկերներու հետ:

Յօդ. 18.— Մարմինը պարտաւոր է՝ ա) առնուազն ամիսն անգամ մը կոմիտէական ժողովներ ունենալ եւ կանոնաւոր արձանագրութիւն պահել: ք) Տարուան մէջ 8-10 ընդհանուր ժողովներ գումարել: գ) Մասնաւորապէս ուժ տալ աւելի լսարանական-ընդհանուր ժողովներու: դ) Պատասխանել իր ստացած նամակներուն առ առաւելն 8 օրուայ ընթացքի մէջ: ե) Տարին երկու անգամ իր կիսամեայ բարոյական թէ նիւթական գործառնութեանց ամփոփ համարատուութիւնն ընել տեղական ընկերներուն՝ ընդհանուր ժողովներու մէջ: զ) Առ առաւելն մինչեւ Հոկտեմբերի վերջը հասցնել իր բարոյական եւ նիւթական գործառնութեանց տեղեկագիրը կեղծ կոմիտէին՝ դիւրութիւն տալով այս վերջինին՝ կարենալ կազմելու իր կիսամեայ տեղեկագիրը: Է) Շրջ. ժողովէն առ նուազն ամիս մը առաջ պէտք է իր հաշիւներն ու տեղեկագիրը հասցնէ կեղծ կոմիտէին, որպէսզի կարելի ըլլայ նախ քան Շրջ. ժողովը հաշիւները քննել, ստուգել եւ տեղեկագրել Շրջ. ժողովին՝ վաւերացուելու համար:

Մանօթ.— Մարմինները Շրջ. ժողովի գումարումէն ճիշդ ամիս մը առաջ հաշիւները փակած եւ դրամները հաշուետետրին հետ ուղարկած պէտք է ըլլան կեղծ կոմիտէին. պիտի ուղարկուին նաեւ «Դրօշակ»ի գործածած կամ ամբողջ ընկալագրերը, նուիրատուութեանց տոմսերը եւ ելք-մուտքի բոլոր տղբումանները՝ դիւրութիւն տալու համար կեղծ կոմիտէին՝ մանրակրկիտ քննութենէ անցնելու համար զանոնք:

Յօդ. 19.— ա) Ամէն մարմին իր մէջէն կ'ընտրէ հաշուեքննիչ յանձնախումբ, որ կը քննէ գանձապահին հա-

շիւները հարկ տեսած պարագային եւ կը վաւերացնէ, իսկ մարմինը հաւաքաբար պատասխանատու կ'ըլլայ իր հաշիւին: ք) Իւրաքանչիւր երեք ամիսն անգամ մը մարմինը պարտաւոր է կեղծ կոմիտէին դրկել հաւաքուած դրամները՝ հաշիւներով միասին:

Յօդ. 20.— Մարմինը իր դրամական եւ բարոյական գործառնութիւններուն համար հաշուետու է կեղծ կոմիտէին եւ Շրջ. ժողովին առջեւ:

Յօդ. 21.— Մարմինը իր տեղական հասոյթին 10% էն աւելի ծախսելու իրաւունք չունի:

Մանօթ.— ա) Կազմակերպական հրատարակութեանց եւ օրկաններու հասոյթը տեղական այդ ծախսին մաս պիտի չկազմէ: ք) Գոյթի դրամ կարելի է յատկացնել 10% սակէն, այլապէս ի սպառ արգելուած է կազմակերպական դրամը գործածել այդ նպատակով:

Յօդ. 22.— ա) կեղծ կոմիտէն վաւերացնելով պիտի դրկէ մարմիններուն մէկ տետրակ՝ երեք մասերու բաժնուած եւ առանձին թուագրուած՝ հաշիւի, արձանագրութեան եւ գոյքերու, հրատարակութեանց ու «Դրօշակ»ի հաշիւներուն յատկացեալ: ք) Մարմինները պարտաւոր են այդ տետրակին մէջ կանոնաւորապէս արձանագրել իրենց նիստերը, հաշիւները եւ գոյքերու, հրատարակութեանց ու «Դրօշակ»ի գործառնութիւնները՝ իւրաքանչիւրը իր առանձին բաժնին մէջ:

Յօդ. 23.— Պալքանեան շրջանի մէջ տարածուելիք դաշնակցական հրատարակութեանց եւ պատկերներու բոլոր բաշխումը պիտի կատարէ ինքը կեղծ կոմիտէն. այդ հաշիւներու մասին ամէն յարաբերութիւն եւ գործառնութիւն տեղի պիտի ունենայ իր եւ Բիւրոյի մէջ միայն:

Յօդ. 24.— Մարմինը կեղծ կոմիտէէն պատրաստուած հաշուի տետրակներ կը յանձնէ հաւաքիչներուն՝ եւ ամէն տարուան վերջը քննելով զանոնք՝ կ'առնէ իր տրամադրութեան տակ, ու ամէն հաշիւ փակելէ յետոյ միայն կ'ոչնչացնէ:

Յօդ. 25.— Այն մարմինները՝ որոնք հաշուական, արձանագրութեան եւ այլ օրէնքներու կիրառման մէջ զանցառու կը գտնուին՝ պատասխանատու պիտի ճանչցուին Շրջ. ժողովին առջեւ:

Յօդ. 26.— Մարմինը ամէն տարուան մէջ կը պատրաստէ ընկերներու վիճակացոյցերը կեղծ կոմիտէէն դրկուած բլանկներու համաձայն եւ անկէ օրինակ մը իր քով պահելով՝ օրինակ մըն ալ մինչեւ Յունուար կը դրկէ կեղծոնական կոմիտէին:

Յօդ. 27.— ա) Պալք. շրջանին մէկ վայրէն միւսը, ինչպէս նաեւ Շրջանէն դուրս տեղափոխուող ընկերներու համար մարմինը կրնայ լոկ բարոյական յանձնարարագիր տալ իր քոյր մարմիններէն մէկուն ուղղուած՝ ճշդ դելով պայմանաժամը, որմէ յետոյ յանձնարարականը կը կորսնցնէ իր ուժը. այս յանձնարարագիրներու բանաձեւը տպագրուելով կեղծ կոմիտէն կը ցրուէ իր

մարմիններուն: ք) Մարմինները պարտաւոր են յանձնարարեալին ձեռքէն առնել ոեւէ յանձնարարական, եթէ արդէն այդ յանձնարարականը մեր շրջանէն դուրս մարմին մը կնիքը կամ ստորագրութիւնը կը կրէ. նոյն յանձնարարականը անպայման պէտք է դրկել կեղծ կոմիտէին:

Յօդ. 28.— Առանց կեղծ կոմիտէին հաւանութեան եւ խորհրդակցութեան ոեւէ մարմին վիճակահանութեան եւ այլ կարգի տոմսեր չի կրնար դրկել քոյր շրջանի մը:

Յօդ. 29.— Մարմին մը իրաւունք չունի շրջաբերականներ հանելու՝ եթէ այդ մասին չէ համաձայնած կեղծ կոմիտէի հետ:

Մանօթ.— Մարմինները կ'ունենան փոխադարձ հասցէներ. կրնան թղթակցիլ տեղական ընթացիկ խնդիրներու մասին, իրաւունք չունենալով մտնել կազմակերպական ընդհանուր բնաւորութիւն ունեցող խնդիրներու մէջ:

Յօդ. 30.— ա) Բացարձակապէս կ'արգիլուի շրջանի մարմիններուն՝ պաշտօնական ոեւէ թուղթ եւ տղբուման անհատ ընկերներու եւ ոչ-կազմակերպական անձնաւորութեանց ձեռքը յանձնել: ք) Բոլոր նամակներու եւ պաշտօնական թուղթերու համար ունենալ առանձին արձանագրութեան տետր մը՝ ուր պէտք է նշանակած ըլլան մարմնի պաշտօնավարութեան ընթացքին մէջ փոխանակուած կամ մարմնի հետ առնչութիւն ունեցող բոլոր նամակներու եւ տղբումաններու ստացման թուականը եւ յարակից անունները (անձի, տեղի, մարմնի, եւն): գ) Նոյն արձանագրութեան տետրն ու պաշտօնական թուղթերը եւս պիտի դրկուին կեղծ կոմիտէին՝ Շրջ. ժողովէն առաջ՝ քննուելու եւ տեղեկագրուելու համար Շրջ. ժողովին:

Յօդ. 31.— Եթէ վայրի մը ընկերներու մեծամասնութիւնը լուրջ զանգատներ ունի մարմնին դէմ, ընդհանուր ժողովներու կողմէ այդ առթիւ տրուած որոշումները կը դրկուին կեղծ կոմիտէին, որ քննելով խնդիրը կ'ընէ հարկ եղած կարգադրութիւնները:

Յօդ. 32.— Մարմինը իր մէկ ընկերը չէզոքացնելու համար պէտք է կանխաւ տեղական ընդհանուր ժողովի հաւանութիւնը առնէ եւ արդիւնքը տեղեկագրէ կեղծ կոմիտէին:

Մարմինը պատասխանատու է իր եւ ընկերներու վերաբերմամբ գծուած այս կանոններու ճշգրիտ գործադրութեան:

Յօդ. 33.— Արձարան-ընթերցարան-խմբատեղիներ.— ա) Արձարաններու մէջ ծառայողները անպայման վրստահելի եւ գաղափարակից ընկերներ պէտք է ըլլան: ք) Գոյքերը մանրամասն պէտք է արձանագրել տեղւոյն կազմակերպական մթերատետրին մէջ: գ) Ելեւմուտքի կանոնաւորութեան եւ տնտեսութեան մասին պատասխանատու է տեղական մարմինը: դ) Ընթերցարան —

խմբատեղիները անպայման պէտք է ունենան դաշնակցական բոլոր թերթերն ու հրատարակութիւնները՝ որոնց համար մարմինները կարող են իրենց տեղական ծախսի 10% սակէն որոշ բաժին մը յատկացնել՝ համաձայն տեղական պահանջին: ե) Ընթերցարան — խմբատեղիներու վարչութիւնները կը գտնուին տեղական դաշնակցական մարմնի հովանաւորութեան ներքեւ եւ կը պարտաւորուին ամէն Յ ամիսն անգամ մը իրենց հաշիւները ներկայացնել անոր:

Թուաշուքի պատգամաւոր ընկեր Ֆելիքս առաջարկեց մարմնի անդամակցութեան համար ոեւէ ցենց չընել, սակայն ժողովը ի դէմ Յ ձայնով ընդունեց 14րդ յօդուածը:

Ժողովը փակուեցաւ ժամը 12ին:

ՆԻՍՏ ԺԱ.

Ապրիլ 4 (Շաբաթ գիշեր)

Ներկայ ամբողջ կազմը՝ 8 ընկերներով: Ժողովը անցաւ կրկին ներքին կանոնագրի քննութեան:

Կեղծոնական կոմիտէ

Յօդ. 34.— Հ.Յ.Դ. Պալք. կեղծ կոմիտէն իր շրջանի Դաշնակցութեան ներկայացուցիչ մարմինն է եւ ան է կապ պահողը տեղական, արտասահմանեան ու Երկրի մարմիններու ու Բիւրոններու հետ:

Յօդ. 35.— կեղծ կոմիտէն կ'ընտրուի ամէն տարի շրջանի պատգամաւորական ժողովին կողմէ եւ կ'ունենայ 5-7 անդամ միեւնոյն քաղաքին մէջ:

Յօդ. 36.— կեղծ կոմիտէի անդամ կրնան ըլլալ միայն այն ընկերները, որոնք գոնէ 3 տարի Դաշնակցութեան մէջ գտնուած են, կազմակերպական տեսակետով դատական ամբաստանութեան մը տակ չեն գտնուած ընտրութեան նոյն միջոցին եւ կամ օրինաւոր ճամբով ու սահմաններով արտաքսուած եւ վերստին ընդունուած չեն:

Յօդ. 37.— կեղծ կոմիտէի պարտականութիւնն է՝ ա) կէտ առ կէտ գործադրել Հ.Յ.Դ. Պալք. Շրջ. ժողովին որոշումները: ք) Կազմակերպութիւնը զօրացնելու հետամուտ ըլլալ: գ) Գործիչ եւ շրջուն ընկերներու միջոցով մղում տալ կոմիտէներու գործունէութեան եւ քննել տալ անոնց հաշիւները: դ) Հետամուտ ըլլալ որ կոմիտէներու մէջ ծագած ոեւէ խնդիր օրինական ճամբով եւ շուտափոյթ լուծում գտնէ: ե) Իր Բիւրոյէն առաջ տեղեկութիւններու հիման վրայ՝ շրջաբերականներով հաղորդել Երկրի եւ կազմակերպական ուրիշ հարցերու այն մասերը՝ որոնք հարկաւոր են: գ) կոմիտէներու պարտականութիւնները յիշեցնել եւ պահանջել հաշուեկշիւ, տեղեկագիր, վիճակացոյց եւ այլն: Է)

Շրջանի նուիրատուութիւնները ամէն երեք ամիսն անգամ մը հրատարակել: ը) Ընդհանուր եւ շրջանական ժողովներէն որոշուած դրամական բաշխումները կատարել: թ) Ամէն տարի Շրջ. ժողովի գումարումէն 6 ամիս յետոյ Բիւրոյին հաղորդել իր շրջանի գործունէութեան տեղեկագիրը: ժ) Տարին երկու անգամ իր Բիւրոյին ներկայացնել շրջանի հաշիւը թէ օրագրական եւ թէ այն բլանկներու համաձայն որ ընդունուած է Ընդհանուր ժողովէն, միաժամանակ բոլոր անդամներու կողմէ ստորագրուելով ու Կեդր. Կոմիտէի կնիքով կնքելով: ժա) Ներկայացնել Բիւրոյին իր շրջանի կազմակերպութեան վիճակացոյցը: ժբ) Բաժնել մարմիններուն պրոչիւրներ, դաշնակցական հրատարակութիւններ, եւն:

Յօդ. 38.— Կեդր. Կոմիտէի գանձը՝ Կեդր. Կոմիտէի երեք անդամներու անունով պէտք է յանձնել Պուլկարական Ազգային Դրամատունը՝ համաձայն պանֆայի օրէնքներու բարուք տրամադրութեանց: Կեդր. Կոմիտէն առձեռն կրնայ պահել իր քով մինչեւ 500 Ֆրանք: Գանձի պատասխանատուութիւնը կը ծանրանայ Կեդր. Կոմիտէի ամբողջ կազմին վրայ:

Յօդ. 39.— Կեդր. Կոմիտէն ընդունելով իր կազմին մէջ աշխատանքի բաժանում, իւրաքանչիւր անգամ պարտաւոր է սակայն հակակշռել փոխադարձաբար՝ կատարուած գործառնութեանց վրայ. իսկ կազմը հաւաքաբար իր մէջէն ընտրած առանձին յանձնախումբերու միջոցով քննութեան պէտք է առնէ հաշուական եւ այլ գործերն ու պատրաստի դրամները:

Յօդ. 40.— Բացառիկ պարագաներէ դուրս տարին 3 անգամ ընդարձակ շրջաբերականներով Կեդր. Կոմիտէն պէտք է գիտակ պահէ շրջանի մարմինները՝ Պալք շրջանի եւ Դաշնակցութեան ընդհանուր խնդիրներու մասին, միաժամանակ իր պաշտօնավարութեան առաջին կիսամեակին մարմիններուն որկէ շրջանի ելեւմըտական վեցամսեայ հաշուեկշիռը, իսկ շրջանական ժողովէն յետոյ՝ տարեկան հաշուեկշիռը:

Մանօթ.— Մարմինները տարուայ ընթացքին մէջ իրաւունք չունին Կեդր. Կոմիտէի այս կամ այն ծախսի մասին բացատրութիւն պահանջել, այլ իրենց այդ իրաւունքը կը վերապահեն Շրջանական ժողովին:

Յօդ. 41.— Կեդր. Կոմիտէն իր արկղը մտած գումարներուն 25% միայն կրնայ ծախսել տեղական բնոյթ ունեցող ծախսերու վրայ:

Յօդ. 42.— ա) Կեդր. Կոմիտէն ինչպէս նաեւ շրջանի մարմինները իրենց ծախսած 10 Ֆրանքէն աւելի գումարներուն համար պարտաւոր են տղթիւմաններ ունենալ: բ) Կեդր. Կոմիտէն ինչպէս նաեւ շրջանի մարմինները պարտաւոր են իրենց ստացած գումարներուն համար ընկալազիր տալ: գ) Մարմինները Կեդր. Կոմիտէի հաշուոյն եւ անոր հրահանգով տրուած գումարներուն համար պարտաւոր են ընկալազիր առնելով որկել Կեդր. Կոմիտէին՝ իբրեւ դրամ:

Յօդ. 42.— ա) Կեդր. Կոմիտէն Շրջանական ժողովէն առ առաւելն ամիս մը ետք պէտք է ժողովին ատենագրութեան ամփոփումը հասցնէ մարմիններուն: բ) Շրջանի գործերուն համար մարմնի մը ամբողջութեան հետ թղթակցութիւն պահել, ոչ թէ մարմնի ունէ մէկ անհատին հետ: գ) Իր ստացած նամակներուն պատասխանել առնուազն 8 օրուայ ընթացքի մէջ: դ) Շրջանի ունէ մարմնէն առաջարկուած ունէ բաղձանք — հաղորդել միւս մարմիններուն, եթէ այս մասին առաջարկող մարմինը հարց դրած է: Կեդր. Կոմիտէն իրաւունք ունի այդ բաղձանքներուն կցել նաեւ իր դիտողութիւնները կամ հայեացքները՝ եթէ ունի:

Մանօթ.— Երբ Կեդր. Կոմիտէն բաւարարութիւն չտայ առաջարկը ներկայացնող մարմնին, այս վերջինը պատասխանատու նկատելով Կեդր. Կոմիտէն, կարող է բողոքել Արեւմտ. Բիւրոյին:

Յօդ. 43.— Կեդր. Կոմիտէն ընդունելով մարմիններէն վիճակացոյց-բլանկներու ընդօրինակութիւնը, կը կազմէ անդամներու ընդհանուր մայր-տոմար մը, ուր պարբերաբար պիտի արձանագրուին նոր անդամներու, հրաժարուածներու եւ պատժուողներու անունները՝ իրենց յարակից պարագաներով:

Մանօթ.— Մարմինները իրենց ուղարկած վիճակացոյցի բլանկները պիտի պահեն՝ կազմել տալէ ետք, առաջնորդուելու համար վերը ընդգծուած եղանակով:

Յօդ. 44.— Երբ Կեդր. Կոմիտէն պարտագանց գտնուի Շրջանական ժողովի որոշումներուն մէջ, անկէ ամէն տեղական մարմին բացատրութիւն պահանջելու իրաւունք ունի:

Շրջանական ժողով

Յօդ. 45.— Շրջանական ժողովը պալքանեան շրջանի դաշնակցական բարձրագոյն մարմինն է:

Յօդ. 46.— Շրջանական ժողովը կը գումարուի տարին անգամ մը՝ Զատիկի օրերուն՝ որուն կը մասնակցին 50-150 ընկերներ ունեցող մարմինը մէկ պատգամաւորով, իսկ 150-200 եւ աւելի ունեցողները 2 պատգամաւորով:

Մանօթ.— ա) Շրջ. ժողովին չեն կրնար մասնակցել այն մարմինները՝ որոնք գտնէ իրենց տարեկան հաշիւին առաջին երկու եռամսեան չեն վճարած: բ) Կեդր. Կոմիտէն Շրջ. ժողովի գումարումէն երկու ամիս առաջ կը խորհրդակցի շրջանի մարմիններուն հետ, որոշելու համար ժողովի վայրը եւ երկու ամիս առաջ կը ցրուէ հրաւիրագրերը:

Յօդ. 47.— Բացի տարեկան Շրջանական ժողովներէ, կը գումարուի նաեւ արտակարգ Շրջանական ժողով, երբ Կեդր. Կոմիտէն եւ կամ մարմիններու մեծամասնութիւնը պէտք տեսնեն անոր:

Յօդ. 48.— Շրջանական ժողովի պատգամաւոր մը առնուազն 6 ամիս ապրած պէտք է լլլայ այն քաղաքին

մէջ՝ ուրկէ կ'ընտրուի, եւ երկու տարի ալ գործօն ընկեր եղած՝ Դաշնակցութեան, եւ իր պարտականութիւնները կատարած:

Մանօթ.— ա) Կեդր. Կոմիտէի անդամ մը՝ շրջանի կողմէ Շրջանական ժողովին մէջ երբեք պատգամաւոր չի կրնար լլլալ: բ) մէկ պատգամաւորը երկու ձայն չի կրնար ներկայացնել: գ) Շրջանական ժողովին ինչպէս նաեւ ուրիշ ունէ ժողովի մէջ փոխանցուած կամ տրուած տարբեր ձայն մը չ'ընդունուիր: դ) Կը մերժուի էմփերաթիվ մանտաթի սկզբունքը՝ Շրջ. ժողովին մէջ, իսկ պատգամաւորը իր վերադարձին զուտ բարոյական պարտականութիւն կ'ունենայ ժողովին որոշումները ընդհանրացնելու եւ արմատացնելու, որուն պէտք է աշակցին տեղական մարմինն ու ընկերները:

Յօդ. 48.— Պատգամաւորներու ծախքը — լլլան անոնք մէկ թէ երկու — պէտք է հոգացուի բացառիկ միջոցներով. տեղական մարմինը 10% սակէն միայն կրնայ յատկացնել պատգամաւորի ծախք՝ եթէ հարկ տեսնէ:

Յօդ. 50.— Կեդր. Կոմիտէի միւս անդամները ազատ են ներկայ գտնուիլ ժողովին՝ իրենց ծախքով եւ առանց ձայնի, իսկ կազմակերպական ծախսով եւ խորհրդակցական ձայնով՝ միայն գանձապահը՝ երբ ժողովը կեդրոնականի վայրէն հեռու քաղաքի մը մէջ գումարուի:

Յօդ. 51.— Շրջուն-գործիչը առանց ձայնի կրնայ ներկայ լլլալ Շրջ. ժողովին:

Յօդ. 52.— Պատգամաւորներու 2/3ին ներկայութիւնը օրինական կը սեպուի Շրջանական ժողովը բացուած յայտարարելու համար:

Յօդ. 53.— Շրջանական ժողովը Ընդհ. ժողովի գծած օրէնքի համաձայն ինք կը հրաւիրէ շրջանին մէջ գտնուող եւ իր յարմար դատած գործիչ-ընկերները:

Յօդ. 54.— ա) Շրջանական ժողովը պարտաւոր է Կեդր. Կոմիտէի հաշիւներուն մանրամասն քննութիւնը կատարել եւ անոր պատրաստ դրամներուն ուղղակի քննթրոլ ընել, իսկ մարմիններու հաշիւները կանխաւ քննած կ'լլայ Կեդր. Կոմիտէն եւ կը տեղեկագրէ ժողովին: բ) Շրջ. ժողովը միայն իրաւունք ունի գործիչ-ընկեր բերել տալու եւ այդ բանին համար պիւտճէ բանալու՝ կազմական կանոններու սահմանին մէջ:

Յօդ. 55.— Շրջանական ժողովը նկատի առնելով Կեդր. Կոմիտէի համար մարմիններէ ներկայացուած ցանկերը, նախ կ'որոշէ Կեդր. Կոմիտէի վայրը, յետոյ որոշուած վայրի թեկնածուներու այդ ցանկէն օգտուելով՝ կը ձեռնարկէ ընտրութեան գաղտնի քուէարկութեամբ:

Մանօթ.— Այս ցանկերը քուէարկութեանց միջոցի պարտաւորեցուցիչ հանգամանք չունին:

Յօդ. 56.— Շրջանական ժողովէն կ'ընտրուին ընդհանուր եւ ռայոնական ժողովներու գնալիք պատգամաւորները:

Յօդ. 57.— Շրջանական ժողովի որոշումները պար-

տաւորիչ են շրջանի բոլոր մարմիններուն համար եւ փոփոխութեան կրնան ենթարկուիլ յաջորդ շրջանական ժողովին միայն:

Ընկեր Ֆելիքս Կեդր. Կոմիտէի անդամակցութեան նախապայման ցենզի համար կ'առաջարկէր 1 տարի, իսկ Շրջ. ժողովին երկու պատգամաւոր ուղարկելու իրաւունք ունենալու համար 100-200 ընկերներու թիւը բաւական կը նկատէր. նոյնպէս կ'առաջարկէ պատգամաւորութեան ընտրելիներու ցենզ՝ 1 տարի Դաշնակցութեան մէջ մնացած լլլալու հանգամանքը՝ բաւական նկատել, սակայն ժողովը չի դէմ 6 ձայնի բացարձակ մեծամասնութեամբ ընդունեց վերոյիշեալ 38, 48 եւ 48 յօդուածները:

Ժողովը ցրուեցաւ ժամը 12ին:

ՆԻՍՏ ԺԲ.

Ապրիլ 5 (Կիրակի առաւօտ)

Ներկայ ամբողջ կազմը՝ 8 ընկերներով: Շարունակութիւն ներքին կանոնագրի քննութեան եւ վաւերացման:

Կարգապահութիւն եւ պատիժ.—

Յօդ. 58.— Կազմակերպութեան հանդէպ յանցաւոր կը նկատուի այն ընկերը որ՝ ա) Կազմակերպութեան օրէնքները չի յարգեր: բ) Դաշնակցական ատենի առջեւ վկայութեան կանչուելէ ետք չի ներկայանար: գ) Կազմակերպութիւնը պառակտելու կը հետամտի անձնական հաշիւներով եւ կազմակերպութեան սկզբունքներուն հակառակ հոսանքներ ստեղծելով: դ) Կազմակերպութեան անունը չարաչար կը գործածէ իր շահուն համար եւ կամ մարմնոյն պատկանող ունէ ինչք կամ դրամ կ'իւրացնէ:

Յօդ. 59.— ա) Կազմակերպութիւնը իր ներքին գործերուն համար կ'ընդունի «ընկերական դատաստան»ի սկզբունքը: բ) Ընկերական դատաստան կը կազմուի իրաւասու դաշնակցական ընկերներէ, մարմնի գիտակցութեամբ եւ երկու հակառակ կողմերու փոխադարձ ընտրութեամբ, հաճութեամբ եւ անկախ, որուն վճիռը պարտաւորիչ կ'լլայ եւ կը հաղորդուի մարմնին առ ի գիտութիւն:

Յօդ. 60.— Ընկերական Ատենանով կամ կոմիտէական եւ այլ ժողովներով անգամ մը կարգադրուած եւ փակուած խնդիրներ հրապարակ նետող ընկերները՝ իբրեւ խառնակիչ դուրս կը ձգուին շարքերէն՝ մարմնի գիտակցութեամբ:

15.- «Եմփերաթիվ մանտաթ», ֆրանսերէն, պարտադիր յանձնարարութիւն իմաստով, որով պատգամաւորը պարտաւոր էր գինք ընտրող ժողովի որոշումին ենթարկուիլ եւ անոր համաձայն քուէարկել:

Յօդ. 61.— Յանցաւոր նկատուած ընկերը կ'ենթարկուի օրինական ճամբով «դրամական տուգանքի», «յանդիմանութեան» կամ «արտաքսումի»: Յանդիմանութիւնը կամ պատիժին տեսակն ու չափը կ'որոշուի ընկերական Ատեանէն եւ կը կարգացուի ընկերական ընդհանուր ժողովի մէջ՝ մարմին կողմէ եւ պարտադրուած ընկերոջ ներկայութեան:

Մանօթ.— Եթէ յանցաւորը խոյս տայ, կը զրկուի դաշնակցական բոլոր իրաւունքներէ, մինչեւ որ օրինական կարգով չունենդէ:

Յօդ. 62.— ա) Ընկերներու նկատմամբ ընկերական Ատեանի կողմէ տրուած վճիռն դէմ եղած բողոքը կը հասնի առ առաւելն մինչեւ Կեդր. Կոմիտէ, որուն վճիռը վերջնական է եւ պարտաւորիչ: Կոմիտէի հաւաքական անդամներու դէմ տրուած վճիռը՝ մինչեւ Երջանական ժողով, իսկ Կեդրոնական Կոմիտէի հաւաքական անդամներու դէմ տրուած վճիռը մինչեւ ռայոնական ժողով, որոնց վճիռը վերջնական, անդառնալի եւ պարտաւորիչ է: բ) Երջանական ժողովին միայն վերապահած է մէկ կամ մէկէ աւելի ընկերներու հրապարակալին արտաքսումը: գ) Արտաքսուածի մը պատիժի պայմանաժամը լրանալէն ետք՝ ընդունուելու պարագային իմաց կը տրուի Կեդր. Կոմիտէին:

Յօդ. 63.— Ընկերական կամ կոմիտէական Ատեաններու կողմէ տրուած վճիռներու վերաքննութեան պարագային՝ երկու կողմերը կը ներկայանան այն ատեն՝ երբ պէտքը կը տեսնուի բարձր մարմնոյն կողմէ: հակառակ պարագային՝ երկու կողմի գրուածքներն ու յաւելումները կարգացուելով՝ վերջնական վճիռը կ'արձակուի: Եթէ դատաստանական ծախս պատահի, պարտաւոր է վճարել դատապարտուած կողմը:

Ընտրողական կանոններ

Յօդ. 64.— Տեղական մարմիններու եւ պատգամաւորներու ընտրութիւնը կը կատարուի՝ գործօն անդամներու ուղղակի, գաղտնի, ընդհանուր եւ հաւասար քուէարկութեամբ:

Յօդ. 65.— ա) Տեղական ընդհանուր ընկերական ժողովը ընտրութիւններէն երկու շաբաթ առաջ կը ճշդէ մարմնի անդամներու թիւը, կը պատրաստէ թեկնածուներու եռապատիկ ցանկը եւ մարմնի միջոցով կը դրկէ զայն շրջակայ ընկերներուն՝ ծանուցանելով ընտրութեան բուն օրը: բ) Նոյն Ընդհանուր ժողովը կ'ընտրէ նաեւ ընտրողական յանձնախումբը՝ քուէարկութեան վրայ հսկելու համար: գ) Որոշեալ օրը քուէարկութիւնը կը կատարուի եւ քուէատուփը կը բացուի 24 ժամուայ ընթացքին մէջ: դ) Քուէարկողները ազատ են նշանակուած թեկնածուներու ցանկին մէջ չգտնուող ընկերոջ եւս քուէ տալ: ռ) Իւրաքանչիւր քուէարկու պարտաւոր է քուէարկելէ առաջ ստորագրել յատուկ տետրակի մը մէջ: ե) Քուէատուփը կը բացուի պայմանաժամի աւար-

տումէն ետք՝ ընկերներու ներկայութեամբ:

Յօդ. 66.— ա) Ընտրութեան մասնակցողներու թիւը պէտք է համեմատական ըլլայ գործօն ընկերներու ընդհանուր թիւի 2/3ին: բ) Ընտրութիւնը վաւերական կը համարուի այն պարագային երբ ընտրուածներու վրայ կեդրոնացած է քուէներու 2/3ը, հակառակ պարագային կը կատարուի նոր կամ համեմատական ընտրութիւն՝ վերի կանոններու համաձայն՝ որուն արդիւնքը վաւերական եւ վերջնական է:

Մանօթ.— ա) Երջանի հեռաւոր ընկերները ընտրութեան կը մասնակցին կանխաւ դրկելով իրենց հաւաքական քուէն՝ որոշ քանտիտաններու վրայ կեդրոնացուցած: բ) Քուէարկութիւնը համեմատականի մնացած պարագային՝ շրջանէն ուղարկուած քուէները կը պահեն իրենց ուժը:

Յօդ. 67.— Կեդր. Կոմիտէն՝ Երջանական ժողովէն երեք ամիս առաջ շրջանի մարմիններէն ստանալով Կեդր. Կոմիտէի յառաջիկայ կազմին համար թեկնածուներու անուններ՝ զանոնք շրջաբերականով կը հաղորդէ փոխադարձաբար բոլոր շրջաններուն՝ որպէսզի պատգամաւորները դիւրութիւն ունենան իրենց հետ բերելու իրենց շրջանի ընկերներու ձայնը այդ մասին:

Մանօթ.— ա) Երբ Կեդր. Կոմիտէի անդամներէն մէկը կամ երկուքը պակսին, Կեդր. Կոմիտէի մնացած ընկերները պակսող անդամներու թիւին համաձայն կըրկ-նալ պատիկ ցանկ մը կը ներկայացնեն շրջանի մարմիններուն՝ կանխաւ առնելով թեկնածուներու համաձայնութիւնը: շրջանի մարմիններու կարծիքները առնելէ ետքը՝ մեծամասնութեան ձայնը շահող ընկերը կը կանչէ Կեդր. Կոմիտէի անդամակցութեան: բ) Կեդր. Կոմիտէի անդամ մը կոմիտէի անդամ չի կրնար ընտրուիլ:

Աւարտելով ներքին կանոնագրի քննութիւնը, ժողովը անցաւ օրակարգի միւս խնդիրներուն:

Պատրաստութիւն երկամեայ տեղեկագիր-հաշուեկշիռի Ընդհանուր ժողովին համար.

Այս մասին ժողովը կարծիքներու փոխանակութիւն մը ունենալով որոշեց Պալք. շրջանի երկամեայ տեղեկագիր-հաշուեկշիռի պատրաստութիւնը յանձնել հրաժարող Կեդր. Կոմիտէի ընկերներուն՝ իբրեւ ծանօթ եւ տեղեկ նախորդ երկու տարուայ գործունէութեան ու անցուղարձերուն եւ իբրեւ պատասխանատուն՝ մասնաւորապէս վերջին տարուայ գործերուն: Տեղեկագիրը պատրաստուելով նախորդ կազմի ընկերներու կողմէ՝ պիտի ստորագրուի նաեւ անոնցմէ, որ եւ պիտի վաւերացնէ նորընտիր Կեդր. Կոմիտէին:

Հրատարակութեանց բաշխում եւ վաճառում.— Ժողովը տեսնելով որ հրատարակութիւններու բաշխումն ու վաճառումը ցանկալի կանոնաւորութեամբ տեղի չ'ունենար, որ՝ մարմիններէն շատեր ստանալով հրատարակութիւնները՝ ջանադիր չեն ըլլար անոնց սպառ-

ման եւ կը դատապարտեն զանոնք անօգտակարութեան, նիւթական կորուստներու եւս տեղի տալով, ժողովը կը յանձնարարէ նորընտիր Կեդր. Կոմիտէին նախապէս մարմիններուն հաղորդել նոր հասած հրատարակութեանց ցանկը: Մարմինները այդ ցանկին համաձայն կը դիմեն ընկերներուն եւ ճշդելով սպառելի գրքերու քանակութիւնը՝ ըստ այնմ կը տեղեկագրեն Կեդր. Կոմիտէին: Մարմինները պարտաւոր պիտի ըլլան նաեւ սպառելի գրքերու փոխարժէք գումարը անյապաղ փոխադրել Կեդրոնական Կոմիտէի արկղը:

Պատանեաց խումբերու կանոնագիր.— Պատանեաց խումբերու կանոնագրի կազմութիւնը կը ձգուի կրկին Կեդր. Կոմիտէին, այդ կանոնագիրը աւելի կ'ըլլայ նախագիծ մը՝ ձգելով ազատ տեղական կոմիտէները տեղական պայմաններու համաձայն հարկ եղած փոփոխութիւնները ներմուծելու:

ՆԻՍՏ ԺԳ.

Ապրիլ 5 (Կիրակի կէսօրէ ետք)

Ներկայ ամբողջ կազմը՝ 8 ընկերներով:

Նոր հասած նամակներ.— Վառնայէն ընկեր Վ. Մազմանեան ընդարձակ նամակ մը ուղղելով ժողովին՝ իր դժգոհութիւնը կը յայտնէր տեղական կազմակերպութեան մասին եւ պատասխանատուներ կը մատնանչէր, ինչպէս նաեւ ուրիշ մէկ երկու խնդիրներ — Վաւր Արապեանի վճիռ, Ամբակում Դաւիթեանի տուգանքի խնդիր, Բաբգէն Սիւնի միացման հարց, Սանուց ընկերութեան գրքեր — կը յանձնէր ժողովին ուշադրութեան: Որոշուեցաւ այս նամակը նկատի առնել իր հերթին: Սուլինայի մարմինը կ'իմացնէր հաշուետեւերը եւ նուիրատուները ուղարկած ըլլալը:

Ուրհորդակցութիւն Կեդր. Կոմիտէի նոր կազմին համար.— Ժողովը յարմար դատեց իր այս նիստով զբաղիլ Կեդր. Կոմիտէի յառաջիկայ կազմի ընտրութեան հարցով, իբրեւ կարեւորագոյն խնդիրներէն մէկը իր օրակարգին: Ռուսջուլքի կոմիտէի տեղեկագրին, Ռուսջուլքի պատգամաւոր ընկերոջ զեկուցումէն եւ անհատական տեսակցութիւններէն կը յայտնուէր որ Կեդր. Կոմիտէի համար ցոյց տրուած ընկերներէն Գառնիկ, Մարտիկ, Գէորգ, Օր. Չապէլ իրենց թեկնածութիւնը ետ կը քաշէին: Ժողովը աչքի առջեւ ունեցաւ թեկնածուներն ու ընդունակութիւնները, միաժամանակ անդրադարձաւ Կեդր. Կոմիտէի բարդ եւ պատասխանատու աշխատութիւններուն եւ եկաւ այն եզրակացութեան որ, առանց հրաժարող թեկնածուներու մասնակցութեան՝ անկարելի պիտի դառնայ կազմը ստեղծել եւ դնել զայն տանելի վիճակի մէջ: Հրաժարող Կեդր. Կո-

միտէի ընկերներէն Ասպետ եւ Ժիրայր յայտնեցին որ՝ իրենք հարկ եղած ընկերական դիմումներն ըրած են հրաժարողներուն, բայց կարելի չէ եղած դրական խոստում մը առնել, իսկ ընկեր մարտիկ բացարձակապէս իր անկարելիութիւններուն վրայ կը պնդէ, մինչ ընկերներ Գառնիկ եւ Գէորգ կը շեշտեն նաեւ ընկեր Մարտիկի կողմէ հաւանութիւն տրուելու պէտքին վրայ, կարելիութիւն տալու համար ժողովին գոնէ որոշ չափով նպատակայարմար կազմ մը ստեղծելու: Միւս կողմէ Ռուսջուլքի տրամադրելի ընկերները յանձն կ'առնէին կազմին մէջ մտնել՝ վճարուած եւ մասնաւոր քարտուղարի մը ներկայութեան պարագային հոն, որ թէ շրջանի թղթակցութիւնները վարէր եւ թէ երբեմն կազմակերպական գործերով այցելութիւններ տար շրջանի մարմիններուն: Կարծիքներու լայն փոխանակութենէ յետոյ, նկատելով յարմարագոյն եւ տրամադրելի ընկերոջ մը չգոյութեան հետ՝ շրջանի պիւտճէին եւս անբաւականութիւնը — քանի որ 25% ծախսի սակի հաշուով հազիւ 2000 Քրոնք տրամադրելի գումար մը կ'ունենայինք յառաջիկայ շրջանին, ինչ որ պիտի չլրացէր նոյնիսկ դիւանական եւ փրփականտի ծախքերուն — ետ մղուեցաւ այդ առաջարկը, այն առաջադրութեամբ որ Կեդր. Կոմիտէն հաւաքաբար տանի գործը՝ անհրաժեշտ եւ կարելի աշխատութիւնը չնսնայելով: Բայց որպէսզի ժողովը կարենար որոշ եզրակացութեան մը հասնիլ, պարտականութիւն յանձնուեցաւ տեսնուիլ ընկեր Մարտիկի հետ՝ ընկեր Փայլակին, առաջարկելով որ իր թեկնածութիւնը ետ չքաշէ:

Միջոցներ՝ փրփականտիստ ընկերոջ մը այցելութիւնը ապահովելու համար շրջանի մարմիններուն.— Ժողովը ընդունելով փրփականտիստ ընկերոջ մը այցելութեան կարեւորութիւնը շրջանի մարմիններուն, միաժամանակ նկատի ունենալով տրամադրելի ուժերու բացակայութիւնը՝ որոշեց օգտուիլ Ընդհ. Ժողովին զայիք պատգամաւոր ընկերներէն, կանխաւ գրելով այս մասին Բիւրոյին եւ նոյնը պնդել յանձնարարելով իր պատգամաւորին՝ Ընդհ. Ժողովին մէջ:

Շրջաններու բաժանում.— Աչքի առջեւ ունենալով շրջանի կարգ մը մարմիններու թուական-կազմակերպական վիճակը, որոշապէս յայտնուեցաւ որ Պուքրէշ եւ Սոֆիա պիտի չկրնան լրացնել կոմիտէի մը համար նախասահմանուած ցենզը, ունենալով հանդերձ գործօն ընկերներ եւ Դաշնակցութեան օժանդակողներու խմբակներ: Ուստի որոշուեցաւ Պուքրէշը ենթարկել Ռուսջուլքի մարմնի իրաւասութեան, իսկ Սոֆիան՝ Ֆիլիպէի: Միւս շրջանները կը պահեն նախորդ շրջ. ժողովներէն որոշուած յարաբերութեան նոյն սահմանները:

Վառնայի վիճակը.— Կարդացուեցաւ Վառնայի մարմնի անունով պատրաստուած տեղեկագիրը, ուր թուելով կոմիտէի գործունէութիւնը՝ կը մատնանչուէր

տիրող ընդհանուր թուլութիւնը եւ ընկերներու ոչ-ցանկալի վերաբերմունքը՝ հանդէպ գործին: Կ'իմացնէր թէ Համբարձում անուն նախկին ընկեր մը չէզոքացուած է շարքերէն՝ դրամական անուղղամտութիւններուն պատճառով: Կարգացուեցաւ նոյնպէս խմբապետական ժողովի տեղեկագիրը, որ իր կարգին պարզելով Վառնայի կազմակերպութեան աննախանձելի կացութիւնը, գլխաւոր պատասխանատու ցոյց կու տար ընկեր Նրանեանը, որ շարունակած է գործերը առանձին եւ ոչ-ընկերական ճամբաներով: Նոյնիմաստ նամակ մըն ալ կ'ուղղէր նաեւ ընկեր Մազմանեան: Կեդր. Կոմիտէն տուաւ տեղեկութիւններ Վառնայի կազմակերպական վիճակին վրայ, մասնաւորապէս ծանրանալով այն ցաւալի երեւոյթին վրայ, ըստ որում Վառնան իր ներքին ճղճիմ խնդիրներով եւ անխորժ հակասութիւններով պարբերաբար երեք-չորս շրջ. ժողովներ կը զբաղեցնէ՝ ձգելով նաեւ կազմակերպութեան վարկը տեղւոյն մէջ. Կեդր. Կոմիտէն պահանջեց արմատական դարման մը ընել Վառնայի մասին, այլապէս տիրող ըսի-ըսաները ոչ մէկ ատեն վերջ պիտի գտնեն եւ միշտ պիտի զբաղեցնեն կազմակերպութիւնը: Վառնայի պատգամաւորը եւս իր կարգին տուաւ տեղեկութիւններ ընդհանուր վիճակին մասին, ինչպէս նաեւ այն հարցումներուն՝ որոնք բխեցան կարգացուած տեղեկագրերէն:

Ժողովի փակման ժամանակը հասած ըլլալով, Վառնայի մասին որոշում մը յետաձգուեցաւ յաջորդ նիստին: Ընկերները ցրուեցան ժամը 7ին:

ՆԻՍՏ ԺԴ.

Ապրիլ 5 (Կիրակի գիշեր)

Ներկայ ամբողջ կազմը՝ 8 ընկերներով:

Ընկեր նախագահը յայտնեց ժողովին թէ՛ ընկեր Մարտիկի հետ ունեցած իր տեսակցութիւնը ոեւէ արդիւնք չէ ունեցած եւ թէ անիկա կը պնդէ Կեդր. Կոմիտէի թեկնածութենէն իր հրաժարելուն վրայ. նոյնպէս յայտնեց որ որոշ խոստում չեն տուած նաեւ ընկերներ Գառնիկ եւ Գէորգ: Ժողովը ինքզինք գտնելով անել վիճակի մէջ եւ համոզուած որ ստեղծուած պայմաններուն մէջ բացարձակապէս անկարելի պիտի ըլլայ Ռուս-Ղուկի մէջ կազմել Կեդր. Կոմիտէն, հակառակ տրամադրելի մէկ-երկու ընկերներու պատրաստակամութեան, կանգ առաւ Ֆիլիպպի վրայ: Ֆիլիպպի պատգամաւորը տուաւ տեղեկութիւններ, ինչպէս նաեւ Ժիրայր եւ Ասպետ՝ ծանօթացուցին հոն գտնուող իրենց միւս երեք ընկերները, աւելցնելով որ իրենք — Ժիրայր եւ Ասպետ — հարկադրուած են մեկնիլ եւ հետեւաբար երկու տեղական նոր ընկերներու գործակցութեամբ

Ֆիլիպպի պիտի կրնայ համեմատաբար տանիլ կազմը եւ յարաբերութիւնները աւելի լաւ, քանի որ անոնք ունէին մէկ-երկու տարուայ փորձառութիւն մըն ալ: Ժողովը որոշեց այս մտքով հեռագիր մը ուղղել Ֆիլիպպի մնացած երեք ընկերներուն եւ յանձնարարեց այդ բանը՝ ընկերներ Ժիրայրի եւ Ասատուրի:

Շարունակութիւն Վառնայի վիճակի նկատառութեան.— Նախորդ եւ այս ժողովի մէջ տեղի ունեցած կարծիքներու փոխանակութենէն ժողովը այն եզրակացութեան հասաւ, որ ուշադրութեան յանձնարարուած բոլոր մանր-մունր խնդիրներու քննութիւնը դուրս [է] ժողովի պարտականութեան սահմանէն եւ աւելորդ ու անօգուտ միանգամայն. հարկ կը դառնար ընկերոջ մը առաքումը հոն, որ առանց մտնելու այդ ճղճիմ խնդիրներու քննութեան մէջ, շարքերը գտէր եւ ստեղծէր նոր կազմ: Բայց ժողովը չլքնալով անուշադրութեան [մատնել] տիրող ընդհանուր անխորժ երեւոյթը, վարկաբեկումները եւ փոխադարձ թերութիւնները, միաձայնութեամբ տուաւ հետեւեալ որոշումը.

«Շրջ. ժողովը ծանօթանալով Վառնայէն հասած տեղեկագրերու եւ բողոքագիր-նամակներու պարունակութեան, լսելով Կեդր. Կոմիտէն եւ Վառնայի պատգամաւորը եւ տեղեկանալով տեղւոյն կազմակերպութեան վիճակին եւ անոր ծոցին մէջ կատարուած անցուդարձերուն հետ,

Նկատելով որ Վառնան իր ներքին անվերջանալի եւ ճղճիմ խնդիրներով ու վէճերով երեք չորս շրջանային ժողովներ պարբերաբար կը զբաղեցնէ նիւթական թէ բարոյական վնասներու տեղի տալով,

Նկատելով որ Վառնայի կազմը եւ ընկերական վիճակը ոչ միայն հեռու եղած է կազմակերպութեան պատուաբեր հանգամանք մը ունենալէ, այլեւ վարկաբեկած է գայն.

Նկատելով որ մարմինը եւ ընկերները եղած են թոյլ եւ իրենց փոխադարձ յարաբերութիւններով ու վերաբերութիւններով աւելի ջլատած են մէկզմէկ, քան թէ շինարար գործ արտադրած, եւ կազմակերպութեան ոգիին մղուած, Շրջանական ժողովը կը յատնէ իր խորին ցաւը եւ կը նկատէ կազմալուծուած Վառնայի ամբողջ կազմը:

Շրջ. ժողովը միաժամանակ պարտականութիւն կը յանձնէ ընկեր Ժիրայրին՝ ժողովէն անմիջապէս յետոյ այցելել Վառնա եւ պարզելով այնտեղի ընկերներուն ժողովին տուած որոշումները, առաջացնել նոր կազմակերպութիւն եւ ընտրել տալ նոր մարմին: Ընկեր Ժիրայր նախ քան ընտրութեան ձեռնարկելը՝ նկատի պիտի ունենայ ընկերներու ընդհանուր ցանկը, անոնց նիւթական թէ բարոյական պարտականութեանց կատարման պարագան եւ կանոնագրի տրամադրած սահմաններուն մէջ պիտի ճշդէ օրինական անդամներու թիւը»:

Ընդհանուր յանձնարարութիւն մարմիններուն.— Ժողովը իր աշխատութեանց ընթացքին մէջ՝ դիտելով որ շատ մը խնդիրներ ուղարկուած են իր սեղանին վրայ առանց կանխաւ տեղւոյն մէջ կարգադրելու զանոնք եւ օրինական սահմաններէ անցնելու, ինչպէս կը տրամադրէ ներքին կանոնագիրը, միւս կողմէ դիտելով նաեւ որ այդ խնդիրներէն շատեր իր իրաւասութեանց եւ պարտականութեանց սահմանէն դուրս է, խիստ կերպով նկատողութիւն կ'ընէ մարմիններուն եւ ընկերներուն, որպէսզի նմանօրինակ խնդիրներ չուղարկեն Շրջ. ժողովին, վստահ ըլլալով որ նկատի պիտի չառնուին անոնք:

Ռուս-Ղուկ վիճակը.— Չառուշ-գործակալներու եւ հէմշէրիական ձգտումներու ազդեցութիւնը.— նկատելով որ Ռուս-Ղուկ մէջ հոս հոն ընկերներէն ոմանք չառուշներու ազդեցութեան տակ եւ հէմշէրիական զգացումներով կը դեկավարուին՝ կազմակերպական աշխատաւորական գործերու մէջ, խստիւ կը յանձնարարուի ընկերներուն զգուշանալ այդ կարգի վնասակար միտումներէ եւ իրենց գործունէութեան տալ զուտ ընկերական բնոյթ եւ իրենց յարաբերութեանց մէջ ըլլալ համերաշխ:

Միջ-կուսակցական Ատեան.— Նկատի ունենալով որ պալքանեան շրջանի զանազան վայրերու մէջ գտնուող հնչակեան եւ դաշնակցական շարքերու միջեւ կրնան պատահիլ թիրիմացութիւններ եւ հակառակութիւններ, կը յանձնարարուի միջ-կուսակցական Ատեանի սկզբունքը, որով կարելի կ'ըլլայ կարգադրել առաջացած ոեւէ թիրիմացութիւն ու խնդիր: Միջ-կուսակցական Ատեանը կը կազմուի երկու կազմակերպութիւններու կողմէ նշանակուած երկուական ներկայացուցիչներէ, որոնք կ'ընտրեն հինգերորդը. այդ Ատեանի որոշումները պարտաւորիչ կ'ըլլան երկու կողմերուն համար հաւասարապէս:

Պալք. շրջանի մէջ հոս-հոն գտնուող Դաշնակցութեան ընթերցարաններու գրքերը փոխադրել Երկիր.— Մարմիններէ ոմանց կողմէ այս մտքով առաջարկ եղած ըլլալով, Շրջ. ժողովը աչքի առջեւ ունեցաւ զանազան քաղաքներուն մէջ գոյութիւն ունեցող մեր մատենադարան-ընթերցարանները, անոնց օգտակարութիւնը իրենց տեղւոյն մէջ եւ եկաւ հետեւեալ եզրակացութեան.

«Նկատելով որ այս պահուստ Պալք. շրջանին մէջ չկան այնպիսի ընթերցարաններ՝ որոնց գրքերը կարելի ըլլայ փոխադրել Երկիր, Շրջանական ժողովը կը յանձնարարէ մարմիններուն եւ ընկերներուն՝ ամէն կարելի պատեհութիւններով ջանալ գրքեր փոխադրել Երկիր. իսկ այն դաշնակցական մատենադարանները, որոնք յառաջիկային կրնան փակուիլ եւ անոնց գրքերը կորուստի վտանգին ենթարկուիլ, Կեդր. Կոմիտէն պարտաւոր կ'ըլլայ փոխադրել Երկիր»:

Շուրջ Պետր[ոս] Պուլկարիայի ընթերցարանի գրքերը կազմակերպութեան տրամադրութեան տակ ունենալու համար կը յանձնարարուի Վառնայի մարմինն հարկ եղած աշխատութիւնը ի գործ դնել:

Անօգնական գաղթական-ընկերներու Երկիր վերագրելի խնդիրը.— Նկատելով որ Պուլկար-Ֆիլիպպի գծին վրայ գտնուող կայարաններու մէջ կան տասնեակներով հայ գաղթականներ որոնց մեծագոյն մասը ընկերներ [են] որ գծին գրաւումէն յետոյ մնացած են անգործ եւ թշուառ, զանոնք հայրենիք փոխադրելու համար կը յանձնարարուի մարմիններուն՝ իւրաքանչիւրն իր տեղական պայմաններու ներած սահմանին մէջ ընկերական ժողովարարութիւններ¹⁶ ընել եւ կամ վիճակախաղ-ներկայացումներ սարքել եւ արդիւնքը փոխադրել Կեդր. Կոմիտէին՝ գործածուելու համար իր նպատակին:

Ժողովը փակուեցաւ ժամը 12ին:

ՆԻՍՏ ԺԵ.

Ապրիլ 6 (Երկուշաբթի գիշեր)

Ներկայ ամբողջ կազմը՝ 8 ընկերներով:

Ժողովը կրկին զբաղեցաւ Կեդր. Կոմիտէի ընտրութեան հարցով: Ընկերներ Ժիրայր եւ Ասպետ յայտնեցին որ Ֆիլիպպի մէջ գտնուող հրաժարեալ Կեդր. Կոմիտէի երեք ընկերները ժխտական պատասխան տուած են իրենց ուղղուած հեռագրին: Ստեղծուած պայմաններուն մէջ Ռուս-Ղուկի մէջ Կեդրոնական Կոմիտէի կազմ ստեղծելու անկարելիութիւնը մատնանշելով, ընկեր նախագահը առաջարկեց ժողովին Կեդր. Կոմիտէի նախորդ կազմը բարոյապէս ստիպել՝ որպէսզի հաւաքաբար շարունակեն գործը, քանի որ ժողովը կատարելապէս անել կացութեան մը առջեւ կը գտնուի: Ընկեր Ժիրայր իր մեկնիլը հարկադրուած ըլլալու ծանօթ պարագան յիշելուց՝ նոյնը կրկնեց նաեւ ընկեր Ասպետ իր վերաբերմամբ: Սակայն պատգամաւոր ընկերները նկատի առնելով մէկ կողմէ Ռուս-Ղուկի մէջ ստեղծուած պայմանները, միւս կողմէ Թուրքիոյ վերջին անցուդարձերը, որոնք նախագոյն քայլերու պէտքը կը շեղուեն, առաջարկեցին ամէն պարագայի տակ կազմը Ֆիլիպպի պահել եւ բարոյապէս ստիպել Ժիրայրը մնալ Ֆիլիպպի եւ վարել թէ դիւանական-թղթակցական գործառնութիւնները եւ թէ այցելութիւններ տալ մարմիններուն: Ժիրայր աշխատելու ամէն պատրաստակամութիւն ցոյց տալով հանդերձ՝ այդ պայմանով Պալքանի մէջ չկարենալ մնալ յայտնեց եւ չուզեց պայմանական կերպով ստանձնել ոեւէ պարտականութիւն. նոյն բանը

16.- Հանգանակութիւններ:

ըսաւ նաեւ ընկեր Ասատուր իր մասին: Միւս կողմէ նկատելով, որ «Ռազմիկ»-ի եւ այլ կազմակերպական հարկադրողական պէտքերով ժիրայր ստիպուած պիտի ըլլայ մնալ Պալքանի մէջ եւ ընկեր Ասատուրի եւս մեկնումը կը մնայ անորոշ, պատգամաւորներէն ու մանք առաջարկեցին վերընտրել նախկին կազմը հաւաքաբար եւ հաւաքական պատասխանատուութեամբ, ձգելով ազատ գիրենք իրենց ներքին աշխատութեանց մէջ եւ թոյլատրելով ժիրայրը (որ) շեշտուած պէտքին համաձայն իր աշխատութիւնն ու ներկայութիւնը բերէ հեռուէն թէ մօտէն, մնալով Պալքանի կամ Երկրին մէջ, երբ մանաւանդ յիշեալ ընկերները, ժիրայր եւ Ասպետ, գործի ստիպողական պէտքին առջեւ յանձնառու կ'ըլլալին ամէն աշխատութեանց: Այս խորհրդակցութիւններէն ալ յետոյ, որպէսզի ժողովը կարենար վերջնական եզրակացութեան մը յանգիլ, որոշուեցաւ հեռագիր մը եւս ուղղել Ֆիլիպէի երեք ընկերներուն թէ՛ ժողովը նախկին կազմը կ'ուզէ վերընտրել հաւաքական պատասխանատուութեամբ եւ աչքի առջեւ ունենալով ժիրայր ու Ասպետի հաւանական մեկնումը՝ սպասել այս մասին իրենց հեռագրին, որ ստորագրուած ըլլայ երեք ընկերներէն ալ:

Ռուսջուրէն բողոք Կեդր. Կոմիտէի դէմ՝ երկու պատգամաւոր տալու մասին արգելք յարուցած ըլլալուն համար.— Ռուսջուրի պատգամաւոր Ֆելիքս բացատրեց այս բողոքին շարժառիթ եղող պատճառները: Կեդր. Կոմիտէի կողմէ ընկեր ժիրայր տուաւ հարկ եղած լուսաբանութիւնները եւ իբրեւ արդիւնք տեղի ունեցած վիճաբանութեան՝ ընկեր ժիրայր հետեւեալ բանաձեւը առաջարկեց, որ ընդունուեցաւ՝ Յի դէմ 4 ձայնով:

«Ռուսջուրի կոմիտէն կը բողոքէր Կեդր. Կոմիտէի դէմ, դիտել տալով որ սկիզբէն ի վեր կոմիտէ անունով ճանչցած է գինք, սակայն Կեդր. Կոմիտէն տեղեկացուց որ խնդիրը լոկ անունի մը տարբերութեան մէջն է, որ սկիզբի օրէն գործածել սովորութիւն եղած է, մինչ կոմիտէի իրաւասութիւնը կը ճշդուի արդէն անդամներու թիւին վրայ: Ժողովը այս լուսաբանութիւնը բաւական նկատեց»:

Ռուսջուրի պատգամաւոր ընկեր Ֆելիքս առաջարկեց հետեւեալ բանաձեւը, որ ստացաւ 4ի դէմ երեք ձայն:

«Նկատի ունենալով որ Պալք. Կեդր. Կոմիտէն հակառակ ներքին կանոնադրի տրամադրութեան (յօդ. 32) ընդունած է Ռուսջուրը, Ֆիլիպէն եւ Վառնան իբր կոմիտէ, սակայն իր 7 թիւ շրջաբերականով առաջարկած է որ իբր շրջանի մարմինները մէյ մէկ ձայն ունենան, երբ այդ վերոյիշեալ մարմինները Յօդ. 32ի համաձայն երկու ձայնի իրաւունք ունին, օրինակ որ կը համարէ Ռուսջուրի կազմակերպութեան բողոքը»:

Դատական խնդիրներ

Պարտիզեան քոյրերու եւ մօր խնդիրը՝ Ֆիլիպէէն.— Ֆիլիպէի կոմիտէն կարգադրութեան մը մասին կը տեղեկագրէր, որուն համաձայն Ֆիլիպէէն օր. Պարտիզեաններ եւ մայրը, իբրեւ ծանօթ դաշնակցականներ, նախկին ռեժիմի օրով յաջողած ըլլալով յանկարծ մեկնիլ Պոլիս, թէ տեղական ընկերներու եւ թէ հասարակութեան ընդհանուր կասկածն ու անվստահութիւնը հրաւիրած են իրենց վրայ, ինչ որ առիթ տուած է անոնց չէզոքացումին ընկերական շարքերէն՝ մինչեւ ընկերներու վստահութեան վերահաստատումը: Կոմիտէի այս կարգադրութեան դէմ կը բողոքէին Պարտիզեան քոյրերը, նամակ մը ուղղելով Երջ. ժողովին, պարզելով Պոլիս երթալու յաջողութեան պատճառները, որոնք արդիւնք էին ազդեցիկ բարեկամներու աջակցութեան եւ իրենց օտարահպատակ ըլլալու հանգամանքին: Նոյն խնդրոյն համար Սիլվէնէն Օր. Թագուհի Սրապեան եւս նամակ մը ուղղելով ժողովին՝ կը խնդրէր կարգադրութիւն մը, աւելցնելով որ յիշեալ քոյրերու անձ(եր)ը հեռու են անվստահելի նկատուելու հանգամանքէ: Լսուեցաւ նաեւ Ֆիլիպէի պատգամաւոր ընկեր Փայակ՝ որ պարզեց խնդիրը իր գոյութենէն մինչեւ վերջը եւ տեղական հասարակական եւ ընկերներու հաւաքական վերաբերումը դէպի յիշեալ քոյրերը: Ժողովը կարծիքներու լայն փոխանակութենէ յետոյ միաձայնութեամբ տուաւ հետեւեալ որոշումը:

«Նկատի ունենալով Օր. Պարտիզեաններու նամակին պարունակութիւնը, ինչպէս նաեւ Ֆիլիպէի պատգամաւորին բացատրութիւնները, Երջ. ժողովս եկաւ այն եզրակացութեան թէ գոյութիւն ունեցող գորաւոր պատճառներն ու երեւոյթները կրնալին մղել տեղական ընկերներն ու հասարակութիւնը անվստահութեան եւ կասկածի, քանի որ իրենք իբր դաշնակցական՝ շարքերուն մէջ ծանօթ եւ յայտնի էին եւ իրենց եղբոր լրտեսութիւնը ապացուցանող փաստեր ունէր նախորդ Կեդր. Կոմիտէն: Միւս կողմէ նկատելով որ Օր. Պարտիզեաններ իրենց կողմէ ոչ մէկ փորձ ըրած են ուղղակի դիմելու տեղական կոմիտէին՝ ինքնարդարացման համար, մինչ առանց այդ օրինական տրամադրութիւնը գործադրուելու կը դիմեն Երջանական ժողովիս, որ չի կրնար հեռուէն լիուրի ծանօթանալ խնդրոյն, խորհուրդ կու տայ յիշեալ օրիորդներուն իրենց վրայ հրաւիրուած կասկածները հեռացնելու աշխատիլ՝ տեղոյն մէջ եւ ընկերներու ու հասարակութեան վստահութիւնը ապահովել իրենց հանդէպ, մտնել կարենալու համար շարքերուն մէջ: Գալով Տիկին Վ. Պարտիզեանի, որ բացի նոյն անվստահութեան պարագայէն, կ'ամբաստանէր Ֆիլիպէի կոմիտէին կողմէ տեղոյն Տիկինանց Ծաբէ խումբի հաշուական գործերուն մէջ գործած դրամական անուղղամտութեամբ մըն ալ, Երջ. ժողովս քննեց

յիշեալ խումբի ընկալագրերը եւ ստուգեց ճշմարտութիւնը Ֆիլիպէի կոմիտէի ըրած քննութեան արդիւնքին, յանձնարարելով յիշեալ մարմնոյն չթոյլատրել Տիկին Պարտիզեանին մտնել կազմակերպութեան շարքերուն մէջ»:

Նախորդ Երջ. ժողովէն Ֆիլիպէի մէջ դատապարտուածներու խնդիր.— Տեղեկանալով որ Յակոբ Սվաճեան եւ Ալաճաճեան չեն ուզած լսել իրենց մասին նախորդ Երջ. ժողովէն տրուած որոշումը, իբրեւ կազմակերպութեան օրէնքներուն դէմ անաստողներ՝ կը կրկնուի կազմակերպութենէն դուրս մնալու պայմանաժամը, իսկ Ալաճաճեան կը պարտաւորի 908 Ապրիլէն սկսեալ մինչեւ երկու տարի յետոյ՝ վճարել կազմակերպութեան պահանջը եղող 1577,20 Ֆր-ի գումարը, որուն համար պարտականութիւն կը տրուի յառաջիկայ Կեդր. Կոմիտէին վրայ՝ իր ժամանակին տեղեկացնել յիշեալին:

Ժողովը վերջացաւ ժամը 12ին:

ՆԻՍՏ ԺԶ.

Ապրիլ 7 (Երեքշաբթի կէսօրէ ետք)

Ներկայ ամբողջ կազմը՝ 8 ընկերներով:

Ընտրութիւն Կեդր. Կոմիտէի.— Դիւանը կարդաց հրաժարեալ Կեդր. Կոմիտէի Ֆիլիպէ գտնուող երեք ընկերներէն հասած հեռագիր մը, որոնք ի պատասխան նախապէս ժողովին կողմէ իրենց ուղղուած հեռագրին՝ կը յայտնէին որ կազմակերպութեան վարկը պարտադիր կ'ընէ գիրենք համակերպիլ ժողովի որոշումին, պայմանով որ ժիրայր եւ Ասպետ միասին ըլլան, իսկ յառաջիկային, անոնց մեկնումէն յետոյ, Կեդր. Կոմիտէն ազատ ձգուի ընկեր կանչել՝ երբ հարկ ըլլայ: Ուստի ժողովը միաձայնութեամբ վերընտրեց նախկին կազմը հաւաքաբար եւ հաւաքական պատասխանատուութեամբ, ազատ ձգելով Կեդր. Կոմիտէն պէտք տեսած պարագային, համաձայն ներքին կանոնադրի տրամադրութեան, շրջանի հաւանութեամբ նորեր հրաւիրելու, երբ տեսնէ որ ժիրայր եւ Ասպետ հեռուէն չեն կրնար հարկ եղած օժանդակութիւնը նուիրել: Այս պարագային եւս՝ ժիրայր եւ Ասպետ պիտի պահեն իրենց անդամակցութիւնն ու պատասխանատուութիւնը եւ կ'արտօնուի Կեդր. Կոմիտէն ժիրայրը ի հարկին ունենալ իր տրամադրութեան տակ, որքան կը ներեն զայն շրջապատող կազմակերպական պայմանները, դիւանական եւ շրջանային գործերու կարգաւորութեան համար:

Ժողովը իր արտաքին շնորհաւորութիւններն ուղղելով նոր կազմին, խորին ցաւով կ'արձանագրէ Ռուսջուրի թեկնածուներէն ոմանց վերաբերումը, որոնք իրենց թեկնածութիւնը շրջանի նկատառութեան ենթարկելէ ետք անժամանակ կերպով ետ կը քաշուէին, մինչ պատ-

գամաւորները եկած էին այն մտքով որ կարելի պիտի ըլլայ ներկայացուած 9 թեկնածուներէն ստեղծել նոր կազմ մը, առանց պէտք զգալու տարբեր առաջարկներ եւ ցուցմունքներ բերելու ժողովին:

Դատական խնդիրներ

Սուլիմայի սրճարանի 1904 տարուայ դրամական հաշիւը եւ այդ առթիւ բողոք.— Տարեշրջանին մէջ Կեդր. Կոմիտէի սեղանին վրայ դրուած էր դրամական գեղծման մը խնդիրը, որ իբր թէ պատահած է Սուլիմայի Դաշնակցութեան սրճարանի 1904ի հաշիւներուն մէջ: Տեղոյն ընկերները կը բողոքեն որ հին եւ նոր հաշիւներուն մէջ 1900 Ֆր-ի տարբերութիւն մը կայ, մինչ պէտք էր վերջին տարիներու շահը աւելի պակաս ըլլար քան նախորդ տարիները, քանի որ սկանարկուած թուակախին աւելի սուրճ կը սպառէր քան այժմ: Ընկեր Վտարանդին Ռուսմանիոյ մարմիններուն ըրած այցելութեան պահուն նոյն հաշիւները քննած եւ դրամական այդ տարբերութիւնը գտած էր, առանց զայն գեղծումի մը գոյութեան վերագրելու եւ առանց կարենալ ստուգելու պատճառները: Տեղոյն մէջ կազմուած էր հարցաքննիչ Ատեան մը, որուն մասնաւոր հարցարան մըն ալ ուղղուած էր Կեդր. Կոմիտէին, ըստ այնմ կատարելու համար հարցաքննութիւնը, բայց մինչեւ Երջ. ժողովի գումարումը ուղարկուած չէր այդ հարցարանին պատասխանը: Կեդր. Կոմիտէն տալով այս մասին իր կարծիքը, որ լոկ երեւոյթներէն միայն կը բխէր, խնդիրը ժողովին նկատառութեան կը յանձնէր: Որպէսզի խնդիրը մանրակրկիտ ուսումնասիրութեան մը բովէն անցնէր, հաշուեքննիչը մանրամասնօրէն քննեց եւ բաղդատեց, ուրկէ տեսնուեցաւ որ իրօք 1900 չափ տարբերութիւն մը գոյութիւն ունէր հին եւ նոր հաշիւներուն մէջ, բայց այդ տարբերութիւնը 3-3½ տարուայ ընթացքին մէջ գոյացած էր եւ մտցուած էր անոր մէջ ենթադրական գումարներ, օրինակ՝ թղթախաղի հասոյթը, որ օրական միշտ 2 Ֆր. նշանակուած էր, մինչ հազիւ կրնար 1 կամ քիչ մը աւելի ըլլալ, բայց որուն տարբերութիւնը երեք ու կէս տարուան (ընթացքին) խոշոր գումար մը կը կշռէր: Միւս կողմէ հաշիւները ամէն ամիս մասնախումբէն վաւերացուած էին եւ այսօր այդ հաշիւներուն դէմ կը բողոքէին նոյնինքն յանձնախումբի անդամներէն ալ ոմանք: Գանձապահին դէմ կը բողոքուէր, մինչդեռ գանձապահը ոչ իսկ սնտուկը բացած էր, այլ մէկ-երկու ընկերներու ներկայութեամբ յանձնուած գումարները միայն ստացած եւ արձանագրած տետրակին մէջ, եւ յետոյ, բողոքողները իրենք իսկ չէին համարձակել գեղծման մը վերագրել իրողութիւնը, այլ յոռի մատակարարութեան: Ուստի Երջ. ժողովը եւս լսելով բոլոր այս բացատրութիւնները, կարծիքներու փոխանակութենէ յետոյ եկաւ այն եզրակացութեան որ, Սուլի-

նայի սրճարանի մատակարարութեան 1904ի հաշիւներու տարբերութիւնը ենթադրուածին չափ մեծ գումար մը չէ եւ ոչ ալ զեղծումի մը արդիւնք, այլ լոկ մատակարարութեան թերութեան եւ անհոգութեան. թերութիւն մը՝ որուն վրայ ինչպէս Սուլինայի, նոյնպէս Ռուսիայի միւս մարմիններու լուրջ ուշադրութիւնը կը հրաւիրէր, որպէսզի աշխուրջ եւ խնամքով հսկեն իրենց յանձնուած գործին եւ թոյլ չտան նման թիրիմացութիւններու եւ վնասներու՝ որ կազմակերպութեան համար ոչ նպաստաւոր են, ոչ ալ պատուաբեր:

Սուլինայի կազմակերպական 13 Ֆր-ի խնդիրը.— Սուլինայի մեր ընկերներէն Կարապետ Առաքելեան Ամերիկա մեկնած պահուն 13 Ֆր-ի անդամավճար մը կը յանձնէ Յովակիմ Յարութիւնեան անուն անձին՝ մարմնին յանձնելու համար, որ սակայն կ'ուրանայ այդ կարգի դրամ մը ստացած ըլլալը եւ չի յանձներ մարմնին: Ժողովը ընդունելով որ յաջ կազմակերպութեան պարտականն է ընկեր Կարապետ Առաքելեանը, կը յանձնարարէ տեղույն մարմնոյն՝ նամակ մը գրել եւ պահանջել այդ դրամը, իսկ եթէ յիշեալը դժուարանայ վճարել, իմացնել Կեդր. Կոմիտէին, որպէսզի Ամերիկայի Կեդր. Կոմիտէին միջոցաւ գանձէ:

Վահան Եայլայեանի եւ Վռամ Արապեանի խնդիրը.— Վառնայէն Մազմանեան ինչպէս նաեւ Վառնայի պատգամաւորը ընկեր Տուտուխեան կը բողոքէին Վռամ Արապեանի եւ Վահան Եայլայեանի մասին Կեդր. Կոմիտէի կայացուցած որոշման դէմ, պահանջելով երկուքին ալ հաւասարապէս արտաքսումը: Իսկ Վռամ Արապեան ժողովին ուղղած նամակով մը նկատողութիւններ կ'ընէր իր մասին տրուած վճիռին առթիւ: Ժողովը լսելով այս մասին յայտնուած կարծիքները, ծանօթանալով Կեդր. Կոմիտէի որոշման ամբողջութեան հետ, ինչպէս նաեւ հարցաքննութեան գլխաւոր կէտերուն եւ քննիչ յանձնախումբի եզրակացութեան՝ Կեդր. Կոմիտէի նկատումներուն կը կցէ Եայլայեանի տարիքի փոքրութիւնը՝ ուրկէ օգտուելով Վռամ գայն առաջնորդած էր անբարոյական վայրեր, ինչ որ աններելի է, եւ կ'որոշէ Եայլայեանի անպայման արտաքսումը սահմանել երեք տարիի, սկսեալ 1908 Ապրիլի 1-էն. Ժողովէն, պայմանով որ արտաքսման պայմանաժամը լրանալէ յետոյ կազմակերպութեան մէջ ընդունուին միայն այն պարագային՝ երբ այդ ժամանակամիջոցին մէջ անցուցած ըլլան մաքուր կեանք եւ կազմակերպութեան ու յեղափոխական անունին անպատուաբեր ոչ մէկ ընթացքի մէջ գտնուած ըլլան. արտաքսման պայմանաժամը լրանալէն յետոյ կազմակերպութեան մէջ ընդունուելու պարագային մէկ տարի եւս պիտի չընտրուին կոմիտէի անդամ կամ առ հասարակ ոեւէ պատասխանատու պարտականութեան տակ պիտի չկրնան կանչուիլ:

Ժողովը վերջացաւ ժամը ծին:

ՆԻՍ ԺԵ.

Ապրիլ 8 (Չորեքշաբթի կէսօրէ ետք)

Բացակայ ընկեր Ֆելիքս:
Առաջարկ նախագահէն.— Ընկեր նախագահը առաջարկեց հեռագրով շնորհաւորել ժողովին անունով Ֆելիպէի Կեդր. Կոմիտէի երեք ընկերներու ընտրութիւնը, ինչ որ միաձայնութեամբ ընդունուեցաւ:

Տեղեկագիր Հաշուեքննիչ յանձնախումբի.— Կարդացուեցաւ Հաշուեքննիչ յանձնախումբի տեղեկագիրը եւ ծանօթանալով անոր պարունակութեան, ժողովը միաձայնութեամբ տուաւ հետեւեալ որոշումը.

«Շրջ. ժողովը նկատելով որ մարմիններէն ոմանք կանոնադրի նախասահմանած ծախսի սակէն կարելոր չեղումներ կ'ընեն, կ'ընէ խիստ նկատողութիւն, յայտնելով որ յառաջիկային նման չեղումի մը պահուն պատկանեալ մարմինը պարտաւոր պիտի ըլլայ վճարել իր ծախսած աւելորդ գումարը՝ հայթայթելով գայն բացառիկ միջոցներով: Ժողովը մասնաւորապէս կը յիշէ Ֆելիպէն եւ Վառնան, որոնցմէ առաջինը 8%ի դէմ ծախսած էր 14%, իսկ երկրորդը՝ 19%, ճիշդ եռապատիկը. ժողովը դիտել կու տայ որ Վառնան նոյն չեղումը ըրած էր նաեւ նախորդ շրջանին մէջ եւս ծախսելով նոյնքան առ հարիւր գումար մը: Մասնաւորապէս պէտք կը զգացուի կանգ առնել այդ չեղումներուն ունեցած նիւթական եւ բարոյական վնասներուն վրայ՝ քոյր շրջաններու վրայ, որոնցմէ շատեր նոյնիսկ նախասահմանուած սակէն շատ նուազ կը ծախսեն: Գալով պատգամաւորներու առթիւ ծախսուած հին գումարներուն՝ պիտի վճարուին բացառիկ հաւաքումներով. կը յիշատակուի մասնաւորապէս դարձեալ Վառնայի մարմինը, որ իր նախորդ տարուայ երկու պատգամաւորներու վրայ ծախսուած 350 Ֆրանքէն ոչ իսկ չնչին գումար մը վճարած է, ուստի Վառնայի կազմը խստիւ պարտաճանաչութեան կը հրահրուի: Մարմինները կրնան իրենց յառաջիկայ տարուայ 10% ծախսի սակէն խնայողութիւն ընելով զեղջել պատգամաւորական ճանապարհածախսի իրենց ունեցած պարտքէն»:

Պուրջիչի դրամական առկախ հաշիւները եւ հին պարտքերը.— Կը յանձնարարուի Ռուսչուքի մարմնին գանձումը Պուրջիչի մէջ առկախ մնացած դրամական հաշիւներուն՝ իբրեւ իր իրաւասութեան ենթարկուած մարմնի:

Նախորդ Շրջ. ժողովի կողմէ արտաքսուած նախկին երեք դաշնակցականներու վճիռը յայտարարուած չըլլալուն առթիւ.— Ժողովը լսելով Կեդր. Կոմիտէն եւ ծանօթանալով այն պատճառներուն՝ որոնք արգիլած էին զինքը հրատարակելու ակնարկուած որոշումը, գտաւ բաւարար եւ բաւական գտաւ ներքին շրջաբերականով ամբողջ մարմիններուն եղած յայտարարութիւնը:

ՆԻՍ ԺԸ.

Ապրիլ 8 (Չորեքշաբթի գիշեր)

Ներկայ ամբողջ կազմը՝ 8 ընկերներով:

Ընտրութիւն Ընդհ. Ժողովի պատգամաւորին.— Առաջարկուեցաւ Ժիրայրի¹⁷ թեկնածութիւնը, բայց ինքը Ժիրայր առաջարկեց դնել ընկեր Ասլանի¹⁷ թեկնածութիւնը եւ ստիպել որ ընդունի ժողովի որոշումը: Սակայն ժողովը նկատելով ընկեր Ասլանի թեկնածութիւնը անհաստատ եւ ընդունիլը՝ կասկածի տակ, միաձայնութեամբ եւ ձեռամբարձ քուէով Ընդհանուր Ժողովին պատգամաւոր ընտրեց Ժիրայրը:

Ընթերցում եւ վաւերացում արձանագրութեան.— Կարդացուեցան սկիզբէն մինչեւ վերջ ներկայ արձանագրութիւնները եւ վաւերացուեցան:

- Պատգամաւոր Ռուսչուքի՝ Ֆելիքս
 Պատգամաւոր Ֆելիպէի՝ ՓԱՅԼԱԿ
 » Վառնայի ԴՈՒԴՈՒԽԵԱՆ
 » Սուլինայի ՍՈՒՐԷՆ
 » Կալաքի ՀՐԱՇԲ
 » Քոնսթանցայի ՀՐԱՅՐ
 Կեդր. Կոմիտէի կողմէ ԺԻՐԱՅՐ

Պուրջիչի այն նախկին դաշնակցականները, որոնք ոեւէ վճիռ չունին բայց դուրս կը մնան կազմակերպութեանէն, կրնան ներս ընդունուիլ միայն այն պարագային, երբ հրապարակով Դաշնակցութեան հասցուցած բարոյական վնասը կը դարմանեն հրապարակով յետս կոչում ընելով: Նոյնպէս Վառնայի այն նախկին դաշնակցականները, որոնք կազմակերպութեան որոշումներուն չհպատակելով դուրսը մնացած են, կրնան ընդունուիլ, պայմանով որ ընդունուելէ յետոյ գործադրութեանը յանձնառու ըլլան իրենց համար կանխաւ տրուած վճիռներուն:

Ներուզ ընթերցարանի վիճակահանութեան տոմսերու խնդիրը «Ռազմիկ»ի եւ Կեդր. Կոմիտէի հաշիւներուն հետ.— Պարտականութիւն կը յանձնուի Ժիրայրին Վառնա երթալուն անձամբ տեսնուիլ ընկեր Յակոբ Ադամեանի հետ եւ ստուգելով վերջապէս մաքրել եւ վերցնել իր առկախ դրութեանէն:

Պիւտճէ.— Ժողովը յառաջիկայ տարեշրջանի համար իբր նուազագոյն հասոյթ կը կանխատեսէ — Ֆելիպէ՝ Սոփիա եւ շրջակայք՝ 2000 Ֆր. Վառնա՝ 1200, Ռուսչուք՝ Պուրջիչ եւ շրջակայք՝ 1500, Պուրկազ՝ 500, Սլիվէն շրջակայք՝ 700, Պրայլա՝ 2500, Սուլինա՝ 2500, Կալաք՝ 2000, Քոնսթանցա՝ 2000. ընդհանուր գումար 12000-15000:

Ժողովը փակուեցաւ ժամը վեցին:

17.- Ասլան՝ Ռուբէն Չարդաբեանի կուս. ծածկանունը:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՉԱՆՆԵՐ

ՔԼՈՒՆ XVII

ԵՒՐՈՊԱՅԻ Հ.Յ.Գ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Եւրոպայի համալսարաններուն մէջ կ'ուսանէին բազմաթիւ հայ երիտասարդներ: Գոյութիւն ունէր «Եւրոպայի հայ ուսանողներու միութիւն»ը, որ հրատարակած էր քաղաքական եւ ընկերային բովանդակութեամբ շարք մը հայերէն եւ օտարալեզու գրքոյկներ: 1904 թուականին այդ միութեան անդամներուն թիւը կը հասնէր 400ի: Հայ ուսանողութեան դաշնակցական հատուածները ունեցած էին նաեւ իրենց պատգամաւոր ներկայացուցիչներ Հ.Յ.Գ. Երրորդ (1904) եւ Չորրորդ (1907) Ընդհ. Ժողովներուն: Աւելին. տեղ-տեղ գոյութիւն ունէին դաշնակցականներէ բաղկացած առանձին խումբեր, ինչպէս էր Ժընեւի Չանքը: Այսուհանդերձ «Եւրոպայի Հ.Յ.Գ. Ուսանողական միութիւն»ը պաշտօնապէս գոյութիւն առած է 1908 թ. Ապրիլին Ժընեւի մէջ կայացած դաշնակցական ուսանողներու Ա. համագումարին:

Միութեան կ'անդամակցէին առաւելաբար Չուիցերիոյ, Գերմանիոյ եւ Փարիզի համալսարաններու հայ ուսանողները: Միութեան մասնաճիւղերու ընթացիկ աշխատանքները կեդրոնացած էին հայ դատի քարոզչութեան եւ դասախօսութիւններու վրայ, ուր կ'արծարծուէին ու կը քննարկուէին ընկերային ու քաղաքական հարցեր:

Նորակազմ միութեան առաջին գլխաւոր իրագործունը պիտի ըլլար «Ուսանող» պարբերաբերթին հրատարակութիւնը:

Թղթածրարին մէջ, բացի Տեղեկագրէն ներառած ենք նաեւ ուսանողներու պատգամաւոր Ալլան Շիրակունիի (Յար. Մարտիրոսեան) միութեան վարչութեան ուղղած մէկ զեկուցագիրը, ուր գրի առած է իր տպաւորութիւնները Ընդհ. Ժողովի աշխատանքներուն եւ արծարծուած կարեւոր հարցերուն մասին:

ԵՒՐՈՊԱՅԻ Հ. Յ. ԳԱՇՆ.
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ
UNION DES ETUDIANTS ARMÉNIENS
D'ASCHNAKTZAKANS DE L'EUROPE

Փաստ. 1538-9

Ա 1.- ՏԵՂԵԿԱԳԻՐ
ԵՒՐՈՊԱՅԻ Հ. Յ. ԳԱՇՆ(ԱԿՑՈՒԹԵԱՆ)
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ 1908 – 9 Թ.

Եթէ մէկը մեր միութեան առաջին համագումարի արժէքը այն մտքով է հասկացել, թէ հէնց որ համագումարը իրաւաբանօրէն կազմակերպեց դաշն. ուսանողներին մի միութեան մէջ, անմիջապէս պէտք է այդ ուսանողները մի արտակարգ գործունէութիւն, արտակարգ եռանդ ցոյց տային իրենց կուսակցական պարտականութիւններին շաւղի վրայ՝ ապա այդ մէկը դիտելով մեր Միութեան այս մի տարրուայ կեանքի ընդհանուր պատկերը՝ պէտք է հիասթափուէր: Սակայն ով որ Ա. համագումարի հետ աւելի ռէալ յոյսեր է կապել, ով որ նրա գնահատութեան ժամանակ չի մոռացել այն հանգամանքը, որ ուսանողների կուսակցական գործունէութիւնը կապուած լինելով որոշ մտաւոր-թէորիական պատրաստութեան հետ՝ հանդէս կը գայ այն չափով ինչ չափով որ ուսանողը այդ մտաւոր-թէորիա-

կան ասպարէզում առաջադիմում էր, նրա համար պարզ կը լինի, որ մեր ուսանողութեան այս մի տարրուայ գործունէութիւնը անցեալի համեմատութեամբ չէր կարող թուիչքային բնաւորութիւն ունենալ: Եւ եթէ նա այս կանխամտածողութեամբ մօտենալու լինի մեր միութեան այս մի տարրուան գործունէութեան եւ գնահատութեան, նա կը տեսնի, որ առաջին համագումարը դաշնակց. ուսանողների վրայ ազդեցութիւն ունեցել է եւ այն էլ խիստ բարեբար ազդեցութիւն:

Այդ ազդեցութիւններից մէկը այն է, որ դաշն. ուսանողները, չնայած չըջապատի քաղաքական ապատիկ¹ տրամադրութեանը այսօր աւելի սերտ կերպով են կապուած իրենց կուսակցութեան հետ, քան առաջ էր. նրանք

1.- Անտարքեր, անփոյթ:

այսօր աւելի են հետաքրքրուում կուսակցութեան մէջ անցած դարձածով քան անցեալ եւ նախանցեալ տարիները, երբ քաղաքական միջնորդութիւնը շատ աւելի բարձր էր, շատ աւելի նպաստաւոր էր այս տեսակէտից քան այժմ:

Երկրորդ բարեբար ազդեցութիւնը, որ առաջինի հետեւանքն ու շարունակութիւնն է կազմում, այդ այն զգալի հետաքրքրութիւնն է, որ մեր ուսանող ընկերները տածում են դէպի հասարակագիտական հարցերը: Եթէ առաջներում շնորհիւ Դաշնակցութեան առանձնաշատուկ պայմանների, քաղաքական-հասարակական գործունէութեան այս ղեկավարող կողմը պակասել է մեր ուսանողութեանը՝ այժմ յոռետես ընկերներն անգամ ստիպուած են խոստովանել, որ դաշն. ուսանողները իրենց տեսական հետաքրքրութեամբ — եթէ չասենք պատրաստականութեամբ — առաջին տեղերից մէկն են բռնում մնացած ուսանողութեան մէջ եւ այս հետաքրքրութիւնը մեր մէջ զարկ է ստանում յատկապէս վերջին տարին: Այդ հետաքրքրութիւնը երեւում է թէ այն անհամբերութեան մէջ, որով ուսանողները սպասում են «Ուսանողի» լոյս տեսնելուն, թէ մեր օրգանի գտած ընդունելութեան մէջ, թէ այն մի շարք թէորիական բնաւորութիւն կրող դասախօսութիւնների մէջ, որ իրենց ուժերի չափով կազմակերպել են մեր ուսանողները զանազան տեղերում եւ թէ մեր կուսակցական օրգաններում ուսանող ընկերների ստորագրութեամբ լոյս տեսած յօդուածների մէջ:

Դաշնակցութեան մէջ միշտ նկատուած մի խոշոր բացը լրացնելու տենդենցն² ունեցող այս երեւոյթը իր արժանի գնահատութիւնը կը գտնէ անկասկած մեր կուսակցութեան հեղինակաւոր հիմնարկութիւնների կողմից:

Այսուհետեւ՝ համագումարի էական ազդեցութիւններից մէկը պէտք է համարել այն, որ շատ ուսանողներ, որոնք մինչեւ համագումար մի տեսակ անորոշ եւ տարտամ տրամադրութիւն ունէին իրենց քաղաքական գունաւորման տեսակէտից՝ վերջնականապէս ինքնորոշւեցան եւ հաստատապէս տեղ բռնեցին Դաշնակցութեան շարքերում:

Համագումարի արդիւնքներից մէկն է «Ուսանող» որի կարեւորութեանը մասին խօսելն իսկ աւելորդ է եւ որի մասին կը գրենք իր տեղին:

Համագումարի արդիւնքներից է, որ դաշնակցական ուսանողը աւելի քան երբեւիցէ իրեն պարտաւորուած է զգում նիւթական գոհաբերութեամբ եւս արտայայտելու իր կուսակցական պարտականութիւնը եւ այն եւ այլն:

Հեռու գնացած կը լինէինք եթէ մանրամասնութիւնների մէջ մտնելով մի առ մի թուէինք այն բոլոր դրական ազդեցութիւնները, որ թողել է դաշն. ուսանողները:

2.- Զգտումը, հակումը:

րի վրայ Առաջին համագումարը. այսքանն եւս, կարծում ենք, բաւական է համոզուելու համար, որ Եւրոպայի Հ.Յ.Գ. Ուս. Առաջին համագումարը դաշն. ուսանողների կուսակցական գործունէութեան տեսակէտից մի վերին աստիճանի արդիւնաւոր քան է կատարել:

Առաջին համագումարի թողած ազդեցութիւնների մասին այսքանը բաւական համարելով՝ դառնում ենք Ձեզ մի ընդհանուր պատկեր տալու միութեան այս մի տարրուայ գործունէութեան մասին, համաձայն այն համառօտ տեղեկագիրների, որ գործադիր մարմինը ստացել է միութեան խմբերից. նաեւ ներկայացնելով միութեան Բ. համագումարի կատարած աշխատանքները*:

Միութեան ընդհանուր վիճակը եւ անդամների թիւը

Միութեան մէջ մտնում են հետեւեալ խմբերը. Պարիզ — 19 հոգի, Ժընեւ 19, Լօզան 13, Ցիւրիխ 2, Բագը 2, Բեռն 2, Միւնիխ 8, Հայլէ 5, Լայպցիգ 3, Ենա 5, Բերլին 8: Դրանցից զատ անհատ ընկերներ կան Հայտեբերգ 1, Կանտ 1, Բրիւքսել 1, Մոնտպելիէ 1, ընդամէնը՝ 88 հոգի:

Եթէ այս խմբերի եւ թուերի վրայ մի փոքր քննութեան հայեացք ձգենք պիտի տեսնենք, որ չնայած մի շարք աննպաստ պայմանների, միութեան կազմակերպական վիճակը բարեյաջող է:

Չնայած այն հանգամանքին, որ քաղաքական ռէակցիայի եւ դրա շնորհիւ քաղաքական ապատիայի պատճառով կուսակցական կեանքը ներկայումս ընդհանրապէս ոչ մի հրապոյր չի ներկայացնում ուսանողութեան համար, — գործադիր մարմինն հասած տեղեկութիւններին նայելով միայն երկու հոգի են թողել միութեան շարքերը, մէկը Միւնիխում սկզբունքային նկատումներով, իսկ միւսը Հայլէում այն պատճառով, որ դաշն. անհատներ մասնակցել են կաթողիկոսական ընտրութեան: Անդամների թուի պակասը անցեալ տարրուայ համեմատութեամբ բացատրուում է նրանով, որ անցեալ տարրուայ ընկերներից շատերը հեռացել են Եւրոպայից: Այսպէս Պարիզից հեռացել են 2 հոգի, Ժընեւից 21 հ., Լօզանից 1, Բագից 1, Լայպցիգից 5, Բերլինից 3, Բեռնից 3, Նիդշատել 3, Ցիւրիխ 2:

Սակայն նոր անդամներ եւս մտել են միութեան մէջ. նորեկ ուսանողներից, որոնք գլխաւորապէս տաճկահայեր են, այսպէս Պարիզի խումբը ընդունել է 5 հոգի. Ժընեւ՝ 14, Հայլէ 1, Լօզան 1:

* Մեր միութեան առաջին համագումարի մասին մի ընդարձակ զեկուցում հրատարակուած է Բաքուում Հ. Յ. Դաշնակցութեան տպարանից: Տեսնել «Գրոհ»-ի գրադարանի N° 2-ը:

Նորեկ ընկերների թիւը թերեւս աւելի լինէր, եթէ չլի- նէր այն հանգամանքը, որ վերջերս ընդհանրապէս պա- կասել է ուսանողների հոսանքը դէպի Եւրոպա, մասնա- ւորապէս կովկասահայերից, որոնք միշտ ստուար թիւ են կազմել դաշնակցական ուսանողների մէջ: Սրանք այժմ դէպի Ռուսաստանի համալսարաններն են դի- մուում:

Այժմ մի քանի խօսք մեր խմբերի գործունէութեան մասին: Այդ գործունէութիւնը կարելի է բաժանել երեք տեսակի. 1) ընթացիկ հարցերի վերաբերեալ. 2) կուսակ- ցական տեսական հարցերի վերաբերեալ եւ 3) դրամա- կան:

I Խմբերի ընթացիկ կեանքի վերաբերեալ գործու- նէութիւնը դառնում է մանր մուկ, զուտ տեղական խնդիրների շուրջը, որոնք ընդհանուր հետաքրքրու- թիւն չունեն:

II Կուսակցական եւ տեսական գործունէութեան տակ հասկացուում են 1) քննութիւններ այնպիսի խնդիր- ների որոնք զուտ տեղական բնաւորութիւն չունեն եւ առնչութիւն ունեն ընդհանուր կուսակցական ընթա- ցիկ կեանքի հետ, 2) խմբերում կարգացուած թէորիա- կան բնաւորութեամբ դասախօսութիւններ եւ 3) Արձա- գանդ կուսակցութեան կոչերին ընդգրկելու ակտիւ յե- դափոխական ասպարէզ:

Առաջին կարգի գործունէութիւնը արտայայտուել է գլխաւորապէս ծրագրուած բայց չկայացած Արեւմտե- ան ռազմական ժողովի եւ V Ընդհանուր ժողովի օ- րակարգի քննութեամբ: Այդ առթիւ թէ խմբերը եւ թէ հիւսիսային Գերմանիայի դաշն. ուսանողների ռազմա- կան ժողովը եւ թէ Բ. համագումարը հանել են որոշ եզ- րակացութիւններ:

Երկրորդ կարգի գործունէութիւնը, որ արտայայ- տուել է ինչպէս ասացինք մի շարք թէորիական բնաւո- րութիւն կրող դասախօսութիւնների մէջ, աւելի հե- տաքրքրական է եւ հաստատուում է մեր խօսքը դաշն. ու- սանողների դէպի տեսական խնդիրները ունեցած հե- տաքրքրութեան մասին: Մեր ձեռքը հասած տեղեկու- թիւնների հիման վրայ՝ Միութեան խմբերում այս մի տարուայ ընթացքում (Առաջին համագումարից մինչեւ Բ. համագումարը, որ տեղի է ունեցել 1909 թ. Ապրիլին) կարողացուել են հետեւեալ դասախօսութիւնները:

1. Տպաւորութիւններ անցեալ եւ ներկայ Թուրքիա- յից (ժընեւ)
2. Պարսկաստանի յեղափոխութիւնը (ժընեւ)
3. Կովկասեան դաշնակցութիւնը (ժընեւ)
4. Կաթողիկոսական հարցի մասին (ժընեւ)
5. Ինտիլիտուալիզմ (ժընեւ)
6. Երիտասարդ թուրքերը եւ Դաշնակցութիւնը (ժը- նեւ)
7. Կուլտուրական գործը եւ Դաշնակցութիւնը (ժը- նեւ)

8. Յլրդ յօդուածը եւ Դաշնակցութիւնը (ժընեւ)
9. Դաշնակցութեան հին եւ նոր գործունէութիւնը (Լօզան)
10. Միքայէլ Նալբանդեանը եւ նրա յարաբերութիւնը Բակունինի եւ անարշիստների հետ (Լօզան)
11. Մարքսիստական պատմափիլիսոփայութիւն (Լօ- զան)
12. Հողի համայնացում (Լօզան)
13. Պետական Դոման եւ բոլկոտը (Լօզան)
14. Պետութիւն եւ իրաւունք (Միւնխէն)
15. Հողային հարցը կովկասում (Միւնխէն)
16. Թուրքիայի յեղափոխութիւնը եւ հայերը (Միւնխէն)
17. Ինչ է յառաջադիմութիւնը ըստ Միխայլովսկու (Ենա)
18. Ընտանիքի եւ պետութեան ծագումը ըստ Ենգել- սի (Ենա)
19. Մինդիկալիզմ (Ենա)
20. Անարխիզմ (Ենա)
21. Պատմական մատերիալիզմ (Ենա)
22. Ազրաբային հարց եւ հողի համայնացում (Լայպցիգ)
23. Սոցիալիզմ եւ Ազգութիւն (Լայպցիգ)
24. Սոցիալիստական գործունէութեան հիմքերը Թուրքիայում (Բերլին)
25. Տաճկաստանի արդի դրութեան մասին (ժընեւ եւ Լօզան):

Այս դասախօսութիւնների շարքը, որքան էլ որ պա- կասաւոր լինի, կարծում ենք, մի ընդհանուր պատկեր կը տայ մեր ընկերների մտածողութեան ուղղութեան մասին եւ եթէ դրանց վրայ աւելացնենք այս կամ այն հարցի մասին զանազան խմբերում կազմակերպուած վիճաբանութիւնները, այն ժամանակ իրաւամբ կարող ենք ասել, որ տեղական խնդիրների ուսումնասիրու- թեան տեսակէտից Միութեան մէջ կազմակերպուած ընկերների կեանքը նախկին տարիների համեմատու- թեամբ շատ աւելի բովանդակալից է եղել:

Այստեղ աւելորդ չենք համարում մի երկու երեւոյթի վրայ կանգ առնել, որոնք թէեւ մի երկու խմբի կողմից են կատարուել բայց եւ այնպէս Միութեան ընդհանուր տրամադրութիւններից են բխում: Այս երեւոյթներից մէկն է Լօզանի տաճկահայ ընկերների կողմից ձեռնար- կած եւ գլուխ բերած "Club Libéral Ottoman"-ը, որ ուղ- դակի գործադրութիւնն է Առաջին համագումարի այն հրահանգի, թէ պէտք է՝ որտեղ այդ հնարաւոր է՝ համե- րաշխութեան կապեր հաստատել պատմականօրէն մեզ հետ վիճակալից ազգերի հետ: Այդ ակումբը կազմուել է անցեալ տարի (1908 Հոկտեմբերին) եւ այդտեղ մեր ըն- կերները տուել են հետեւեալ դասախօսութիւնները:

1. Ազգերու հարցը Տաճկաստանում. Ֆեդերացիայով միայն կարելի է այդ հարցի խաղաղ լուծումը:

2. Ֆեդերացիան իբրեւ նախապայման իսկական օո- դովորապետութեան:

3. Կրօններու դերը Արեւելքում:
4. Ֆեմինիզմը Տաճկաստանում:
5. Երկու հարցապնդում Ատանայի կոտորածների եւ երիտասարդ թուրքերի քաղաքականութեան վրայ:

Այն վառ հետաքրքրութիւնը, որ երեւան բերել են մեր ընկերները այդ ակումբում, այն դիրքը որ ձեռք են բերել կարելի է համարել բացառիկ եւ եթէ նրանք քաշ- ւին գործից Ակումբը կը կորցնի իր գոյնը եւ ապա կը քայքայուի: Մեր ընկերներու պրոպականդան թէ սո- ցիալիստական եւ թէ ապակենտրոնացման համար տուած է արդիւնքներ, այնպէս որ միայն թուրքերը կը- պած մնացած են կենտրոնացման գաղափարին (այդ ա- կումբին մասնակցած են նոյնպէս յոյներ, արաբներ եւ մակեդոնացիներ). հակառակ նրան որ դաշնակցական ընկերները 5 հոգի են 30 անդամների մէջ, բայց փողովի ոգին դաշնակցական է (դասախօսութիւնները լինում են Ֆրանսերէն լեզուով):

Լօզանի օրինակի համեմատ Օսմանեան ուսանողա- կան միութիւն կազմուած է նաեւ Պարիզում, ուր դաշ- նակց. ուսանողները դարձեալ առաջնակարգ դիրք են գրաւել:

Երկրորդ երեւոյթն է ժընեւի ընկերների կողմից ձեռնարկած մի հրապարակային դասախօսութիւն՝ ա- տենախօսուած պրոֆէսոր Միլհօ-ի կողմից "socialisme et le crédit public" նիւթին մասին:

Ուշադրութեան արժանի երեւոյթ է եւ այն որ սոց- յեղափոխական եւ դաշնակցական ուսանողների յարա- բերութիւնը աւելի բնորոշուում է ու լայնանում. խառն միութիւններ՝ կազմուած յիշուած կուսակցութիւննե- րի ուսանողներից կան Բեռն եւ Միւնխէն:

Երրորդ կարգի գործունէութիւնը պէտք է լինէր արձագանգ տալ կուսակցութեան անմիջական կարիք- ների մանաւանդ երբ կոչ է լինում այդ ուղղութեամբ: Այս մի տարուայ ընթացքում Դաշ. ուսանողական միութիւնը երկու անգամ հրաւէր է ստացել այդ մըտ- քով: առաջին 1908ի գարնան երբ պրոպագանդիստի կարիք կար Բուլգարիայի եւ Ամերիկայի համար. այդ առթիւ միայն մի ուսանող յանձն առաւ իր արձակուր- դի ամիսները զոհել եղած հրաւէրին: Երկրորդ կոչն ե- դաւ ներկայ տարուայ Ապրիլին համագումարի ժամա- նակ: Չեռնհաս ուսանողները հրաւիրուում էին գնալ Կովկաս բռնելու ձեռքակալուած ընկերներու թափուր մնացած տեղերը, որպէսզի յեղափոխական գործը շատ չտուժէ: Վերջին կոչը նոյնպէս մնաց անհետեւանք:

Անշուշտ մենք գտնուում ենք մի անմխիթար երեւոյ- թի առաջ, բայց սխալ կը լինի որ այս փաստերի վրայ հիմնուած՝ մարդ տխուր եզրակացութիւնների յանգի թէ դաշնակցական ուսանողները չգիտեն խանդավառ-

ւել, որ նրանք չունեն իտէալական թռիչք, որ նրանք էլ կարիէրիստներ են: Փաստը ունի իր մեկնաբանութիւնը: Մեր միութեան մի ստուար մասը, գուցէ ճնշող մասը կազմուած է սկսնակներէ. այնպիսի ուսանողներէ, ո- ռոնք հազիւ վերջացուցած դպրոցական ընթացքը եկել են Եւրոպա ուսանելու: Դրանք որչափ էլ իտէալական, ընդունակ խանդավառուելու այնուամենայնիւ չափա- զանց անվստահ են դէպի իրենց ոյժերը, նրանք նոյնիսկ չեն էլ համարձակուում իրենց առաջարկել: չէ՞ որ վստահ չեն որ ընդունուելու պարագային իսկ կարող պիտի լի- նեն մի դրական դեր կատարելու: Իսկ միութեան ձեռն- հաս անդամները, որոնք յաճախ եղած են յեղափոխա- կան գործունէութեան մէջ, ուստի պատճառ չունին տարակուսելու — նրանք են որոնք արդէն 3-4 տարիէ ի վեր Եւրոպայում են, ուստի համալսարանական ընթաց- քը վերջացնելու մօտ: Նրանց համար որչափ էլ ծանր լի- նի արձագանգ չտալ եղած հրաւէրներին, այնուամե- նայնիւ մտածում են մի ձեւ տանել մնացած քիչ ժամա- նակը եւ ապա ամբողջովին նուիրուել կուսակցական յեղափոխական գործունէութեան: Հակառակ այս երե-ւոյթներին այնուամենայնիւ պէտք է խոստովանել, որ Ռուսաստանի ծանր ուժակցիան, որ ընդգրկել է ամբողջ Ռուսաստանի ուսանողութիւնը, որոշ չափով վարակել է նաեւ կովկասահայ դաշ. ուսանողներին, որոնք միայն իրաւամբ կարող էին արձագանգ տալ կուսակցութեան կարիքներին: Վերջին փաստերը կարելի է ախտանիշեր համարել:

* * *

Դառնանք այժմ Միութեան դրամական գործին: Որքան էլ նախկին տարիների համեմատութեամբ դաշնակցական ուսանողները նիւթապէս աւելի զոհած լինին իրենց կուսակցական կարիքների համար եւ որ- քան էլ այս տեսակէտից մենք իրաւունք ունենանք շեշ- տելու Միութեան դրական դերը այս կէտում եւս, այ- նուամենայնիւ, բացարձակ կերպով վերցրած Միութեան դրամական վիճակը չի կարելի բաւարար համարել:

Ինչպէս յայտնի է Միութեան եկամտի աղբիւրները կազմուում են անդամավճարներից եւ մի շարք կողմնա- կի աղբիւրներից որպիսիք են՝ երեկոյթներ, դասախօ- սութեանց կազմակերպում, վիճակախաղ եւ այլն: Այս տարի գանձուած անդամավճարների ընդհանուր պատ- կերը կարելի է ուղղակի անբաւարար համարել, շատ տեղերում մի տարուայ ընթացքում գրեթէ ոչինչ չի գանձուել:

Արտակարգ եկամուտների ընդհանուր վիճակը եւս բաւարար չէ: Երեկոյթներ եւ այլ նման բնաւորու- թեամբ ձեռնարկներ կազմակերպուել են ոչ ամէն հնա- րաւոր վայրերում եւ եղածներն էլ ցանկալի արդիւնք չեն տուել:

Հետեւեալ աղիւսակը տալիս է ամբողջ Միութեան դրամական վիճակը: Մենք նշանակած ենք այն բոլոր

գումարները, որոնք Միութեան ընդհանուր գանձարանն են մտած եւ կամ տեղական անհրաժեշտութիւններու համար ծախսուած են:

Միութեան առաջին համագումարի համար ծախսուած է մօտաւորապէս 800 Ֆր.: Մօտաւոր ենք ասում, որովհետեւ դժբախտաբար փոքրիկ թիւրիմացութիւններ կան այդ հաշիւներու մէջ: Այդ գումարը կազմուած է Բերլինի խմբի եւ «Ջանք»ի երեկոյթներից: պակասած մասը պարտք ենք վերցրել Արեւմտեան Բիւրոյին: Իսկ հետեւեալ աղիւսակը տալիս է մի տարուան պատկերը:

խումբ	մնացորդ	անդամավճար	կողմ. մուտք	ծախք	Գ(ործադիր) Մ[արմնից]	խմբում մնացած
Բերլին Ենա	121	108	231,25	11,15	413,85	35,25
Յալլէ	-	64,50	-	10	54,50	-
Լայպցիգ	-	28,50	-	-	20	8,50
Միւնխէն	-	40,28	2,40	-	42,68	-
ժընեւ	35,50	187,40	-	54,17	101	67,73
Լօզան	0,80	27,60	92	19,80	88,80	11,80
Բեռն	-	48	353,42	5,60	323,02	72,80
Ցիւրիխ	-	21,60	-	-	-	21,60
Ցիւրիխ	-	16	-	-	-	16
Բազել	-	10	-	-	10	-
Փարիզ	-	16	-	-	-	16
Մասնակի գումար	157,30	567,88	679,07	100,72	1053,85	249,68
Ընդհ. գումար		1404,25			1404,25	

Գործադիր մարմնոյ գանձարանը մտած 1053,85 մարքը գործածուել է հետեւեալ ձեւով՝

Դիւանական ծախք	106,80
Ուսանող I եւ II թիւ	387,98
Արեւմտեան Բիւրոյին	100
Համագումարին	387,95
Գումար	942,73

Հանելով ընդհանուր մուտքից (1053,85 — 942,73) մնում է 111,12 մուտք: Միութիւնը առնելիք ունի մի ընկերոջից նաեւ 150 մարկ: Թէ խմբերում մնացած գումարները եւ թէ մի քանի ընկերներու պարտքերու գումարը կը հասնի մօտ 500 մարկի: Այդ առնելիքներից գատ մենք պարտք ենք Արեւմտեան Բիւրոյին 353 Ֆրանք:

Թէ եւ ըստ կանոնադրութեան մենք ստիպուած էինք

մեր եկամուտի 50%ը Արեւմտեան Բիւրոյին ղրկել բայց դժբախտաբար անդամավճարներու անկանոն գանձումը, պարտականներու վճարելու ի վիճակի չլինելը, «Ուսանող»ի եւ Համագումարի ծախսերը արգելք են լինում մեր պարտականութիւնը կատարելու: Գէթ այս մէկ տարուան կեանքը մեզ հնարաւորութիւն չտուեց «Ուսանող»ի հրատակարարութիւնը աւելի շուտ սկսել, մեր պարտքը Արեւմտեան Բիւրոյին վճարել եւ կարենալ մեր պատգամաւորի ծախսը հոգալ:

Ինչպէս երեւում է ցուցակից անդամավճարները տատանում են ամսական 2 մարկից մինչեւ 5 Ֆինկի միջեւ: մի վերին աստիճանի անմիջիճար երեւոյթ, մանաւանդ երբ ի նկատի ենք ունենում, որ դաշնակցական ուսանողների գոյուլութեան պայմանները մօտաւորապէս նոյնն են: Անդամավճարների կանոնաւորելու հարցով մի քանի խմբերում յատկապէս զբաղուել են, բայց այդ եւս չէ ազդել նրա գործնական ելքի վրայ:

Արտակարգ եկամուտների ընդհանուր վիճակը եւս բաւարար չէ: Երեկոյթներ եւ այլ նման բնաւորութեամբ ձեռնարկներ կազմակերպուել են ոչ ամէն հրնարաւոր վայրերում եւ եղածներն էլ ցանկալի արդիւնք չեն տուել:

Ահա այս է ներկայացնում Միութեան դրամական վիճակը: Եթէ փորձենք մօտաւորապէս մի տարուան բիւտժէն կազմել մէջը հաշուելով «Ուսանող»ի հրատարակութիւնը (տարեկան 8 թիւ) կը ստանանք հետեւեալ պատկերը:	Դիւանական ծախք	100 մարկ
	Ուսանող (համարը 200 մ.)	1200 »
	Համագումար	500 »
Գումար		1800 մարկ

Աւելացնենք դրա վրայ մեր պարտքը Արեւմտեան Բիւրոյին 284 մ. կը ստանանք 2084 մարկ, որը մեր բիւտժէի անհրաժեշտ միւնիումն է: Այդ գումարը պիտի ստացուի անդամավճարներից, երեկոյթներից եւ Ուսանողի վաճառումից: Վերջին երկուքի արդիւնքի մասին ոչինչ չի կարելի ասել, իսկ անդամավճարները

պէտք է տան առնուազն 800-1000 մարկ, որովհետեւ այս տարի համեմատաբար աւելի լաւ են գանձուում քան նախորդ տարի:

*
**

Այս տեղեկութիւններէն գատ մի քանի խօսք էլ Միութեան Բ. Համագումարի մասին, որ տեղի ունեցաւ ներկայ տարուան Ապրիլ 10-15ին Լայպցիգում:

Համագումարի աշխատանքները մեծ մասով պտրտուում են Միութեան կեանքի հետ կապ ունեցող հարցերի շուրջը եւ ընդհանրապէս հասարակական նշանակութիւն չունին: Համագումարը լսած է խմբերու զեկուցումները, նաեւ խմբագրութեան եւ գործադիր մարմնոյ տեղեկագիրները ապա քննադատելով կամ գնահատելով իր վերաբերմունքն է ցոյց տուել: Քննած է Միութեան կանոնադրը եւ արած է մի քանի փոքրիկ փոփոխութիւններ, որոնք առանձին նշանակութիւն չունին: Համագումարից երկար ժամանակ է խլել «Ուսանող»ը, որի մասին վճռուեց անպայման շարունակել, տպագրութիւնը Փարիզից տեղափոխել ժընեւ, ընտրել երեք հոգուց եւ երկու փոխանդամից կազմուած պատասխանատու խմբագրական մարմին: Ահաւասիկ այն բանաձեւը որ ընդունուած է «Ուսանող»ի համար.— Խմբագրութիւնը պատասխանատու է եւ պարտաւոր է հսկելու որ

1. Իւրաքանչիւր յօդուած ըստ իր բովանդակութեան համապատասխանի «Ուսանող»ի ծրագրին:
 2. Յօդուածը ունենայ գրական-գիտական լրջութիւն, մշակուած եւ օտարաբանութիւններից ազատ լինու:
 3. Թերթը իր լրիւ բաժիններով հանդէս գայ:
 4. Խմբագրութիւնը պիտի տեղ տայ բոլոր վիճաբանական յօդուածներին սկզբունքային հարցերի վերաբերեալ, բայց նրա իրաւունքն է մերժել այնպիսի յօդուածներ, որոնք կարող են վտանգել կուսակցական այս կամ այն ձեռնարկը:
- Համագումարը ի միջի այլ երկրորդական վճիռների որոշած է նաեւ մի ցաւակցական նամակ գրել Սոց. Յեղափոխական կուսակցութեան Ազգելի³ դաւաճանութեան առիթով: Նորընթաց գործադիր մարմինը կատարած է այդ հրահանգը հետեւեալ նամակը ուղղելով Ս. Յեղ. կուսակցութեան կեդրոնական մարմնոյն:

3.- Ուսու ընկերվար-յեղափոխական կուսակցութեան «մարտական կազմակերպութեան» ղեկավարը, որ դուրս եկած էր իրբեւ դաւաճան եւ լրտես ցարական գաղտնի սպասարկութեանց, ինչ որ մեծ ցնցում առաջացուցած էր նոյն կուսակցութեան շարքերում մէջ:

Ուս Սոց. Յեղափոխական կուսակցութեան Կեդրոնական մարմնոյն

Փարիզ

Սիրելի ընկերներ,
Եւրոպայի Գ. 3. Դաշ. Ուսանողների միութիւնը իր երկրորդ համագումարում, կայացած 1909 Ապրիլ 10-15ին, միաձայնութեամբ վճռեց Ձեզ արտայայտել իր խորին համակրանքը այն դժբախտութիւններու համար, որոնք Ձեզ եմ հասել Ազգելի ստոր դաւաճանութեան պատճառաւ:

Ի նկատի ունենալով այն փառաշուք անցեալը, որով պատկան է Ձեր կուսակցութիւնը մենք յուսով ենք, որ շուտով Ձեզ կը տեսնենք կոռի դաշտում յաթաճակին համար այն իտալի որով խանդավառուած էք դուք:

Սիրելի ընկերներ, մենք ձեզ դրկում ենք մեր երիտասարդական լաւագոյն բաղձանքները որ Ձեր կուսակցութիւնը վերականգնի այս ցաւոտ փորձանքներէն, բան մը, որ հրճուանքը պիտի կազմէ բոլոր անկեղծ յեղափոխականներու ինչպէս նաեւ մեր Ձեր ընկերներու:

Եղբայրական բարեւերով
Գործադիր Մարմին

Համագումարը հարցերը սպառել է վերջ կատարեց ընտրութիւնները: Գործադիր մարմնոյ անդամ ընտրուած են՝ Արտաշէս Բաբայեան, Արա Մամիկոնեան եւ Վահագն Քրմոյեան: փոխ անդամներ՝ Գարեգին Տիւրկէրեան եւ Տիգրան Ունանեան:

Խմբագրական մարմնոյ անդամներ ընտրուած են՝ Վ. Վայրեան, Սիմոն Նարինեան, Բարսեղ Կիւլպէնկեան. փոխ անդամներ՝ Արմենակ Բարսեղեան եւ Մելքոն Քրիշչեան:

Դաշնակցութեան յառաջիկայ Ե. Ընդհ. Ժողովի համար Ուսանողութեան կողմէ պատգամաւոր ընտրուած է Ասլան Շիրակունին, թեկնածու՝ Հայկ Մելքոնեան:

Այդ ընտրութիւններէն վերջ համագումարը քննութեան է ենթարկած Դաշնակցութեան Ե. Ընդհ. Ժողովի օրակարգը: Բայց դժբախտաբար պէտք է նկատել որ չէ կարողացել հարկ եղած չափով զբաղուել եւ եզրակացութիւններ հանել: գլխաւորաբար ոստիկանական խստութիւնները մէկ կողմէն, բռնութիւն վտանգը միւս կողմէն համագումարի համար անհրաժեշտ դարձրին ընտրել կարեւորագոյն հարցերը եւ դրանց մասին խօսել:

Արձանագրութիւնները ընդարձակօրէն նշանակում են արտայայտած կարծիքները: կան բանաձեւեր անհատների կողմից տրուած բայց ժողովը տիրող կարծիքը չի բերեղացրել քուէարկուած բանաձեւերով: Այդ կողմից Գերմանիայի ուսանողների ռայոնական ժողովը աւելի բան կատարել է ծրագրուած բայց չկայացած Արեւմտեան ռայոնական ժողովի օրակարգի հարցերի վերաբերմամբ:

Ահա այս է մեր Միութեան մի տարուայ գործունէութեան ընդհանուր պատկերը, որն ըստինքեան որքան էլ պակասաւոր լինի բայց եւ այնպէս այս ունակցիւցի օրերում մի խոշոր քայլ է դէպի առաջ, դէպի կուսակցական պարտականութիւնների բարեխիղճ կատարումը:


Այս բոլորից յետոյ թերեւս ակնորդ չի լինի, որ մի ընդհանուր ակնարկ ձգենք Եւրոպայի դաշնակցական ուսանողների արդի տրամադրութեան վրայ՝ համաձայն այն տպաւորութեան, որ մարդ ստանում է նայելով այս մի տարուայ գործունէութեան, նայելով երկրորդ համազումարին:

Քաղաքական տրամադրութիւնը այն մեծութիւններից մէկն է, որը չափելու եւ ճշգրտէն գնահատելու համար ամենամեծ չափով պէտք է ի նկատի ունենալ միջավայրը, ժամանակը եւ հանգամանքները: Եւ մեր ուսանող ընկերների տրամադրութիւնը գնահատելու համար եւս մենք չպէտք է աչքաթող անենք այդ մոմենտները:

Արդ՝ մենք մի քանի անգամ արդէն առիթ ունեցանք շեշտելու ամէնքիդ յայտնի քաղաքական այն անտարբերութիւնը, որ այսօր համակել է ոչ միայն ուսանողութիւնը այլեւ երէկուայ ակտիւ կուռով յափշտակուածների բանակը: Բաւական է մի հարեւանցի ակնարկ ձգել մեզ՝ մեր միեւնոյն միջավայրում գործող քաղաքական կուսակցութիւնների վրայ, բաւական է մի անգամ պատկերացնել նրանց լքուած շարքերը եւ մեզ համար պարզ կը լինի այն ընդհանուր վհատութիւնը եւ յոգնածութիւնը, որ այսօր պատել է յեղափոխական տարրերին: Դուք գիտէք թէ ի՞նչ է անում այդ ուսանողութիւնը: Նա կամ բացարձակ հեզանքով անցնում է յեղափոխութեան ակունքների մօտից եւ կամ անձնատուր լինում «կուլտուրական» գործունէութեան մանրալիք հոսանքներին եւ կամ թէ չէ, լաւագոյն դէպքում յուսահատուած յեղափոխութեան յաղթանակի մէջ՝ քաշուել է իր ուսանողական խուցիկը եւ նուիրուել գիտնական աշխատանքի՝ անասան դէպի նրան հաս-

նող օրհասական աղաղակները: Մենք դեռ խօսում ենք փոքր ինչ վայելուչ ուսանողութեան մասին, որ իւր հասարակական կոչման գիտակցութիւնը դեռ չի կորցրել: Հապա՞ ուսանողական այն ամբողջը, որի գոյութեան նպատակը սրճարաններում ու կանաչ սեղանների շուրջն է դառնում: Այսպէս է ահա այն ուսանողական մթնոլորտը, որի մէջ ապրում է դաշնակցական ուսանողը: պահանջել որ նա այդ մթնոլորտում էլ երեւան հանէ նախկին տարիների յեղափոխական ակունք իր բոլոր ցայտուն պոռթկումներով, դա չափազանցութիւն կը լինէր: բայց պահանջել որ նա չսեղդուի այդ անձուկ մթնոլորտում, որ նա հաւատարիմ մնայ յեղափոխութեան տրադիցիաներին, որ նա կեդրոնացնի իւր մտաւոր բարոյական ուժերը եւ պատրաստուի գալիք մեծ պայքարի համար՝ այդ կարելի է պահանջել եւ դաշնակցական ուսանողութիւնը այսօր ընդհանրապէս արդարացնում է այդ պահանջը: Որ այդ այդպէս է դրան վկայ է այս տարուան կեանքի անպաճոճ նկարագիրը, դրան վկայ է Միութեան Բ. համազումարը, որ ընդհանուր քաղաքական մեծելութեան մէջ իբրեւ մի դիսուտանս՝ է հանդէս գալիս:

Ընկերական ջերմ բարեւներով
Գործադիր մարմին



Վ. ԳՐՄՈՅԵԱՆ
ԱՐԱ
Ա. ԲԱԲԱԼԵԱՆ

13 Յուլիսի 1909
Ժընև

4.- ԱՃՆԵՐՈՂԱՆՈՒԹԻՒՆ:

Փաստ. 1469-117

2.- ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հ.Յ.Գ. V Ընդհանուր Ժողովի մասին պատրաստուած
Եւրոպայի] Հ.Յ.Գ. Ուսանողական Միութեան պատգամաւորի կողմից
նոյն Միութեան համար 3/16 Մեպտ. 09

Եւ. Հ.Յ.Գ. Ուս. Մ. Գործ[ադիր] մարմին

Ընկերներ!

Երբ մի քանի անգամ դիմումներին՝ որ V Ընդհ. Ժ. դժբախտաբար տեղի է ունենում մի այնպիսի ժամանակ, երբ ես անկարող եմ մինչեւ վերջը մասնակցիլ նրան, Գործադիր մարմինը այնուամենայնիւ ինձ յայտնեց իր վճիռը, որ ես ուղեւորուեմ Ընդ. Ժ. եւ մասնակցեմ աշխատանքներին, որքան որ կարող եմ, ես ճանապարհուեցի Օգոստոս 31-ին (ն. տ.), Մեպտ 3-ին հասայ Ժողովի վայրը եւ 4-ի առաւօտուանից մասնակցում էի նիստերին մինչեւ այսօր. այսինքն 13 օր:

Ես շատ չէի ուշացել. Ժողովը համարեա նոր էր սկսել իր կանոնաւոր զբաղմունքները: դեռ տեղեկագիրների շրջանն էր, որոնք այս անգամ, ժամանակի խնայողութեան տեսակէտից ոչ թէ տրուում էին իւրաքանչիւր մարմնի կողմից առանձին, այլ մարմինների խմբերի կողմից. այսպէս՝ Արեւելեան Բիւրոն ամբողջ շրջանի մասին. Արեւմտեանը՝ իր շրջանի մասին, որի մէջ եւ Ուսանողական միութեան տեղեկագիրն էր մտել, Պոլսի Պատասխանատու մարմինը եւ Պարսկաստանը: Դրանց վերջնալուց յետոյ սկսուեցին զեկուցումներ տակտիկայի մասին Ռուսաստանում, Տաճկաստանում եւ Պարսկաստանում. վերջում զեկուցում ինքնապաշտպանութեան մասին. եւ այսօր ընդունուելու են բանաձեւեր այս չորս խնդիրների վերաբերմամբ, որպէսզի ապա անցնին այլ հարցերի: — Ահա մինչեւ այստեղ հագիւ հնարաւորութիւն ունեցած լինելով մասնակցել Ժողովի պարապմունքներին, հաղորդում եմ ընկերներին իմ տպաւորութիւններս համառօտակի: Պիտի ակեղացնեմ, որ համաձայն Ընդ. Ժ. ի վճռի, ոչ մի տեղեկութիւն չպիտի հաղորդուի մարմիններին Ընդհանուր Ժողովից, մինչեւ նրա վերջնալու: Ուստի իմ այս տեղեկագիրս կը պահուի Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցչի մօտ, մինչեւ Ժողովի վերջնալու, ապա կը յանձնուի Գործ. մարմնին: Այս պատճառով ես խուսափում եմ որոշումների մասին մի բան գրելուց, մանաւանդ բանաձեւերը հաղորդելուց, որովհետեւ դրանք կարող են մինչեւ վերջնալու դեռ փոփոխութիւնների ենթարկուել:

Ընդհանուր պատկերը: — Առաջին տպաւորութիւնը,

որ մարդ ստանում է Ժողովի արտաքին պատկերից, մանաւանդ այն մարդի համար, որ ներկայ է եղել նաեւ IV Ը. Ժ. ին, դա բազմաթիւ նոր եւ երիտասարդ դէմքերն են: Դրա պատճառը նախ այն է, որ Թուրքիայի յեղաշրջման շնորհիւ այնտեղ կազմուել են բազմաթիւ նոր մարմիններ համապատասխան ցենզով, որոնք շտապել են իրենց ներկայացուցիչները ուղարկել: Եւ ապա կովկասեան բազմաթիւ բանտարկութիւնները, որոնք շատ հին փորձուած ընկերների գրկել են հնարաւորութիւնից ներկայ լինելու, եւ որոնց փոխարինել են նոր երիտասարդ ուժեր: Այս հանգամանքը ինչպէս մի կողմից հրճուանք է առաջ բերում, միւս կողմից պատկերացնում է մեզ կովկասեան սրտածմիկ իրականութիւնը:

Եւրոպայի] Հ.Յ.Գ. Ուս. Միութիւնը: — Մինչեւ իմ հասնիլը, արդէն Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչը իր տեղեկագրի մէջ խօսել էր Եւ. Ուսանողական Միութեան մասին:

Իմ հասնելու պէս ես զգացի, որ տպաւորութիւնը մեր մասին բացասական է եղել: Թէեւ Բիւրոյի ներկայացուցիչը գովասանքով էր խօսել մեր մասին, բայց այն հանգամանքը, որ կովկաս գնալու եւ բանտարկուած ընկերներին փոխարինելու կոչին՝ մեր կողմից արձագանգ չէր տուած, մեր պատգամաւորը բացակայում էր, եւ ըստ տարածուած լուրերի, որովհետեւ Միութիւնը միջոց չունէր նրան ճանապարհածախս տալու, ապա մի քանի ընկերով առաջարկը, որ կուսակցութիւնը միջոց տայ մեր պատգամաւորին գալու՝ հասկացուել էր այնպէս, որ մեր կողմից է այդպէս դիմում եղել: Եւ վերջապէս մեր տեղեկագրի մէջ գրուած այն խօսքերը, որ անցեալ ամառուայ ամիսներում Միութեան անդամներից միւր համաձայնեց «իր արձակուրդի երկու ամիսը զոհել» եւ գնաց բալկանեան շրջանը, եւայլն, մի տեսակ հեզանական մթնոլորտ էին ստեղծել մեր շուրջը: Եւ երբ ես կարդացի այդ օրուայ արձանագրութիւնը եւ ծանօթացայ եղած վիճաբանութիւններին եւ ընդունուած բանաձեւին, զգացի, որ մի խոշոր թիւրիմացութիւն կայ եւ պահանջ դրի ինձ հնարաւորութիւն տալ պարզելու այդ: Ժողովը բացառութիւն արեց եւ ինձ թոյլ տուեց օրակարգից դուրս խօսք վերցնել հարցը պարզել: Մեզ վրայ կար ի միջի այլոց մեղադրանք, որ մենք կու-

սակցական մամուլին չենք աշխատակցել բաւարար չափով: — Ես իմ ճառում ասեցի, որ մենք դրամի պահանջ չենք արել, եւ մեր պատգամաւորի ծախսը ինքներս ենք հոգում: Կովկաս գնալու կոչին արձագանգ չենք տուել, որովհետեւ մի քանի ընկերներ առանց այն էլ գնալու էին, եւ նրանց գնալը մենք չէինք ուզում ի հաշիւ առնել, իբր արձագանգ այդ կոչի: Իսկ միւսները յարմարութիւն չունէին գնալու, գլխաւորաբար որովհետեւ իրենց պատրաստ չէին զգում օգտակար լինելու: Յետ մղեցի մեղադրանքը, որ իբր մենք չենք աշխատակցել կուսակցական մամուլում, յիշելով այն բոլոր թերթերը որոնց մէջ գրել ենք, եւ այն ընկերներին որոնք գրել են, թուով 8-9. նրանք գլխաւորաբար շեշտում էին, որ մենք չենք գրել «Երկիր» եւ «Հայրենիք» թերթերում: Առաջինի մասին ես ասեցի, որ ճիշդ չէ: Իսկ երկրորդում չենք գրել, որովհետեւ նրա գոյութեան մասին գաղափար չենք ունեցել, մանաւանդ Գերմանիայում: Բայց երբ մեզ դիմեցին, մի ընկերոջ յանձնարարեցինք, որ գրէ, բայց սկսուեց մեր Ուսանողը եւ մեր աշխատանքը կլանուեց նրանով: Ժողովը որոշեց իմ յայտարարութիւնները մտցնել արձանագրութեան մէջ եւ անցաւ օրակարգին: Ընդունուած բանաձեւը մնաց անփոփոխ, որով գնահատուում է մեր ձգտումը պատրաստուել թէրիական աշխատանքի, բայց եւ յանձնարարում է աւելի անձնակազմին գործնական աշխատանքների մէջ: — Այնուհետեւ, երբ խնդիր կար գաղութների ուսանողութեան կազմակերպութեան մասին, ես առաջարկեցի, որ բանաձեւի մէջ մտնի, որ ժողովը պարտաւորութիւն է դնում Եւր. Ուս. Միութեան վրայ իր շրջանի հայերի կազմակերպութեան վրայ հոգ տանել: Այս կէտը հաւանօրէն կը մտնի բանաձեւի մէջ, որը դեռ վերջնականապէս չէ ընդունուած:

Երեք երկրների տաքտիկի մասին ես չեմ յիշի այն բազմաթիւ խնդիրները, որոնք այնտեղ շօշափուեցին, այլ իւրաքանչիւրի նկատմամբ կանգ կ'առնեմ այն հարցի վրայ, որ ամէնից աւելի զբաղեցրեց ժողովը:

Պարսկաստան — Զեկուցողը նկարագրելով մեր ընկերների կատարածը այդ երկրի յեղափոխական շարժման մէջ, առաջարկեց, որ Ընդհ. Ժողովը այժմ սանկցի տայ այդ գործունէութեան եւ Պարսկաստանն էլ համարէ Դ[աշնակց]ութեան գործելավայրը, ինչպէս Կովկասը եւ Թուրքիան: Այս խնդիրն էր, որ մեծ վէճերի պատճառ դարձաւ: Ոմանք պնդելով, որ մեր այս մասնակցութիւնը Պարսկական շարժման մէջ միայն մի պատահական նշանակութիւն ունէր, ինչպէս մենք կը վարուենք եթէ օրինակ նոյնպիսի դէպքեր լինէին Բուրգարիա, Ամերիկա եւայլն, եւ միւս կողմից մատնանշելով այն փոքրիկ քանակը, որ այնտեղ է բնակուում (70.000 — 100.000-ի մէջ) գտնում էին, որ Պարսկաստանում

նում մեր ընկերները պիտի մասնակցին տեղական բոլոր հարցերին, թէ քաղաքական, թէ տնտեսական եւ թէ կուտորական իբրեւ քաղաքացիներ եւ իրենց այս գործունէութեան մէջ պիտի ղեկավարուին Դ[աշնակց]ութեան սկզբունքներով: Միւսները շեշտում էին ոչ թէ հայութեան թիւը այնտեղ, այլ նշանակութիւնը, որ հայերն ունին այնտեղ, նրանց կատարած խոշոր դերը շարժման յաջողութեան մէջ եւ այն ազդեցութիւնը պետական ընդհանուր կեանքի վրայ, որ նրանք կարող են ունենալ այսուհետեւ, անհրաժեշտ էին գտնում, որ մենք ճանաչենք Պարսկաստանը իբրեւ գործելավայր, եւ մինչեւ անգամ առաջարկում էին ծրագրում մտցնել Պարսկաստանի համար յատուկ նուազագոյն պահանջներ: Կային առաջարկողներ էլ, որ տեղական մարմինների վրայ ծանրանայ պարսկական գործերի ղեկավարութիւնը, եւ կուսակցութիւնը ամբողջութեամբ պարտաւորուած չլինի միջամտել այնտեղի գործերին, ինչպէս որ պարտաւոր է Թուրքիայում եւ Կովկասում: — Բանաձեւը, որ առաջարկուեց եւ դեռ վերջնականապէս չէ ընդունուած, բայց մեծամասնութեան հաւանութիւնը ունի, յանձնարարում է անպայման մասնակցութիւն, առանց որոշակի շեշտելու, որ նա համարուում է մեր մի նոր գործելավայրը:

Ռուսաստան — Եթէ նկատի չառնենք այն թէորիական վիճաբանութիւնը, որ տեղի ունեցաւ կարէտների շուրջը — արդեօ՞ք առաջիկայ ձեռնարկների մէջ մենք կարող ենք նրանց էլ հրաւիրել գործակցութեան ընկերվարական կուսակցութիւնների հետ միասին — ծանրութեան կենտրոնը ներկայ կացութիւնն էր՝ ստեղծուած այն բացառիկ խստութիւններից եւ բանտարկութիւններից, որ Կովկասեան վարչութիւնը վերջին ժամանակներում գործադրում է բացառապէս Դ[աշնակց]ութեան դէմ: Բոլորն էլ ընդունում էին, որ անհրաժեշտ են ուժեղ հակահարուածներ, բայց թէ դրանք ինչպէս կազմակերպուին, ինչ տաքտիկով տարուին, եւայլն, սրանց առաջ է, որ ժողովը կանգ էր առնում եւ չէր կարողանում պատասխան տալ: Մանր էր տեսնել, թէ ինչպէս ժամանակին հօր կուսակցութիւնը, որը դողացնում էր ոչ թէ միայն կովկասեան այլեւ ամբողջ Ռուսաստանի պաշտօնէութիւնը, այժմ գալարուում էր անզօր ջղաճգնութիւնների մէջ, ատամ էր կրճատացնում, բայց ստիպուած էր զսպել իրեն նկատի ունենալով իր բազմաթիւ պատանդները եւ հաւանական ծանր հետեւանքները: Բայց սա էլ ոչինչ. կուսակցութիւնը այստեղ էլ պատուով դուրս կը գայ. նա սկզբունքով տուեց իր որոշումը, կայացրեց վճիռը:—

Թուրքիա — Այստեղ վիճաբանութիւնների ծանրութեան կենտրոնը լեզալիզացիան էր: Կարելի է ասել ամբողջ ժողովի մեխը: Որեւէ ճանապարհով լեզալ կերպով

արտայայտուել բոլորի կողմից անհրաժեշտութիւն էր համարուում: Ամբողջապէս լեզալ լինելու անհնարինութիւնը նոյնպէս զգալի էր: Ոմանք պահանջում էին կուսակցութիւնը յարմարեցնել Միութիւնների օրէնքի 4-րդ յօդուածին, որը արգելում է ազգային կուսակցութիւններ, եւ Դ[աշնակց]ութիւնը դարձնել միջազգային, այսինքն մեր շարքերն ընդունիլ նաեւ ոչ-հայեր: Սրանք հաւատացած էին, որ այս կերպ, այսինքն մեր կուսակցութեան վրայից ջնջելով «Հ.» եւ «Յ.» տառերը, ինչպէս պատկերաւոր կերպով արտայայտուում էին նրանք, մենք արդէն բաւարարութիւն տուած կը լինենք օրէնքին, իսկ կուսակցութիւնը իր հոլթեամբ կը մնայ նոյնը: Սա կարեւոր է, որպէսզի միանգամ ընդմիշտ թուրք ժողովուրդը, կառավարութիւնը եւ իթթիհատը համոզուին, որ մենք գաղտնի նպատակներ չունինք, եւ այդ ճանապարհով միայն կարելի է վերացնել այս լարուած յարաբերութիւնը եւ կոտորածների առաջը միանգամ ընդմիշտ առնել: Մեծամասնութիւնը հակառակ էր լեզալիզացիայի, համարելով դա վտանգաւոր այն տեսակէտից, որ սահմանադրական կարգերը Թուրքիայում դեռ չեն ամրապնդուած. շատ հեշտութեամբ կարող է ռէակցիա առաջ գալ եւ մենք մերկացած կանգնած կը լինենք կառավարութեան առաջ, ինչպէս դա եղաւ համարեա Կովկասում: Եւ վերջապէս Դ-ութիւնը ունի գործ նաեւ Կովկասում. ինչպէ՞ս կարող է նա այստեղ լեզալ լինել, իր ծրագիրը փոխել յարմարեցնել օրէնքի պահանջներին, իսկ Կովկասում շարունակել նախկին ձեւով կռիւր — ընդհանուր տրամադրութիւնն էր, որ լեզալ լինել անհնար է, բայց մի ելք պիտի փնտռել մտքերը խաղաղացնելու համար եւ այս մտքով առաջարկում էին — թողնել նախկին զինուորական մարտակերպը

5.- Այս «տեղեկագրի» հեղինակը Ա. Շ., Ասլան Շիրակունի ծածկանունով, Եւրոպայի Ուս. Միութեան պատգամաւորն է Ընդհ. ժողովին. իսկական անունը Մարտիրոս Յարութիւնեան: Իբրեւ քարտուղար մասնակցած էր Գաեւ Գախորդ Զորորդ Ընդհ. ժողովին (Վիեննա, 1907):

(ռուսեր, ապստամբութիւն, հայդուկային խումբ, եւայլն) եւ ժամանակ տալ, որ ժողովուրդը միառժամանակ շունչ քաշի: Ուրիշները անհրաժեշտ էին համարում մի նոր ձեւական ծրագիր կազմել եւ ներկայացնել կառավարութեանը, եւ նրանով թաքցնել մեր իլլեգալ կազմերը որդնները վերջապէս առաջարկում էին հրապարակ դուրս գալ քաղաքական կլուբների միջոցով: Կար նաեւ առաջարկ կազմել խառն գիւղացիական խմբեր իրենց տնտեսական պահանջներով եւ նրանց ուղղութիւն տալ: — Թէ որը սրանցից կը վճռուի, անորոշ է առժամանակ, բայց ճնշող մեծամասնութեան տրամադրութիւնն է, որ կուսակցութիւնը մնում է իլլեգալ:

Ինքնապաշտպանութիւն — Այս խնդրում ի հարկէ կրկին հրապարակ եկաւ այն տրադիցիոնէլ վէճը, թէ ով պիտի վարէ ինքնապաշտպանութիւնը, ժողովուրդը ինքը, թէ կուսակցութիւնը: Ոչ ոք չկայ որ պնդէ, թէ Թուրքիայում ժողովուրդը առանց կուսակցութեան միջամտութեան կարող է պաշտպանուել: Բայց ոչ ոք էլ չէր ցանկանում, որ կուսակցութիւնը այդ գործը ամբողջապէս իր վրայ վերցնի, թէ գէնքի մատակարարութիւնը, թէ նախապատրաստական աշխատանքները եւ թէ ղեկավարութիւնը կուրի ժամանակ: Կովկասեան գործերից խրատուած, ոչ ոք չի ուզում, որ գէնքի մատակարարութեան գործը կուսակցութեան ձեռքը լինի: մենք կարող ենք հսկել, որ վատ գէնքեր չգնեն: Մենք իբրեւ աւելի փորձուած՝ պիտի ուղղութիւն եւ ընթացք տանք: Մի խօսքով տրամադրութիւնն այն է, որ Դ-ութիւնը՝ մասնակցում է ինքնապաշտպանութեան գործին կերպով, իբրեւ հայ ժողովրդի մի հատուած:

Միւս խնդիրների մասին ուրեմն ընկերները կ'իմանան Ընդհ. ժողովից յետոյ արձանագրութիւններից:

Ընկերական բարեկեցիկ
Ա. Շ.⁵

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ԳԼՈՒԽ XVIII

ԱՄԵՐԻԿԱ

Ամերիկայի Հ.Յ.Գ. կազմակերպական ցանցը կը տարածուէր առաւելաբար Միացեալ Նահանգներու Արեւելեան գօտիին վրայ: Քալիֆորնիան եւ Քանատան դարասկզբին (20րդ), թէ՛ հայութեան համրանքի եւ թէ՛ կուսակցական միաւորներու թիւի տեսակէտէն, անհամեմատ նուազ կշիռ ունէին: Առանց ատոր ալ, հայերէր բնակուած արեւելեան շրջանի քաղաքներուն իրարմէ ունեցած հեռաւորութիւնները, թէ՛ կազմակերպութեան ամրացման եւ թէ՛ կենդանի կապ հաստատելու իմաստով, յարուցած են երբեմն անյարձակաբար լի դժուարութիւններ:

Միացեալ Նահանգներու մէջ Դաշնակցութիւնը հրապարակ կու գայ 1896 թուականին: Կուսակցութեան հիմնադրման, ծաւալման եւ գաղափարական զարգացումին մէջ անգնահատելի երախտիք ունեցած են առաջին սերունդի նուիրեալներէն Յովհ. Եուսուֆեան (1896-98) եւ ապա՝ Արշակ Վուսեան: Այս վերջինը ամբողջ 8 տարի (1899-1907) իբրեւ Դաշնակցութեան ներկայացուցիչ եւ «Հայրենիք» խմբագիր գործեց, հայրենասիրական ոգին վառ պահելով իրենց հայրենի բնակավայրերէն հազարաւոր մղոններով հեռու նետուած պանդուխտներու հոգիին մէջ: Այդ ոգիով ալ պիտի ապրէր Ամերիկայի դաշնակցական կազմակերպութիւնը, հաւատարմ շարքերով եւ միշտ պատրաստ ընդառաջելու՝ տառապող ազգակիցներուն օգնութեան ձեռք կարկառելու իւրաքանչիւր կոչի: Շրջանին պակասող մտաւորական ուժերն էին եւ գործիչները, որոնց համար յարատեւ պահանջ ու դիմում կը կատարուէին:

- 1.- «Տեղեկագիր Հ.Յ.Գ. Ամերիկայի շրջանի», 1907-1908, որ պատմական շահեկան տեղեկութիւններ կու տայ Միացեալ Նահանգներու հայկական գաղութի կազմութեան մասին:
- 2.- «Ամփոփ Տեղեկագիր Հ.Յ.Գ. Ամերիկայի կոմիտէներուն 14րդ Պատգ. Ժողովին» (1908 թ. Դեկտ.):
- 3.- «Որոշումներ մշակուած Հ.Յ.Գ. Հինգերորդ Ընդհ. Ժողովի համար», (Մարտ, 1909 թ.):
- 4.- Կեդր. Կոմիտէի երկու շրջաբերականներ (Նոյ. 1908 եւ Յունիս 1909 թ.):

Փաստ. 1396-125

1.- ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Գ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ (1907-1908)

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Ճշգրիտ թուական մը չենք կարող տալ այս պահուստ առաջին գաղթական հայուն մասին, բայց ապահովապէս կրնանք ըսել թէ՛ 80 տարուան թուական մը ունի ան եւ անմիջապէս կապուած է բողոքական միսիոնարութեան հետ: Առաջին գաղթը կը թուի ըլլալ երկու պատճառներու արդիւնք. նախ՝ կրօնական զգացումները եւ յետոյ՝ միսիոնարներու ուսումնաստեղ Հայ երիտասարդներու որդեգրումը, ուր Ամերիկան պիտի տար անոնց մտաւորական բարձրագոյն պաշար: Եւ բացառիկ փոքրագոյն մաս մըն ալ ապրելով Պոլիս ու անոր անմիջական շրջանակները եւ իբրեւ վաճառականներ կապուած ըլլալով առեւտրական գործով ամերիկեան եւ եւրոպական տուններու հետ, հաստատուած էր հարստութեան կեդրոնը՝ Նիւ Եորք:

Իսկ գաղթի գլխաւոր հոսանքը հսկայ համեմատութիւններ առած է Հայ գիւղացիութեան մէջ, իբրեւ անմիջական հետեւանք Երկրի մէջ տիրող կառավարութեան ստեղծած տնտեսական աննպաստ կացութեան:

ԳԱՂՈՒԹԻՆ ԹԻԻԸ

Միացեալ Նահանգներու Հայ գաղութին ճիշդ թիւը կարելի չէ տալ, որոշ վիճակագրութիւն մը մեր տրամադրութեան տակ չըլլալուն համար: Այդ վիճակագրութեան պակասը կայ նոյնպէս լուսաւորչական եւ բողոքական պաշտօնական տուններու մէջ ալ: Մենք կրցած ենք ձեռք բերել Հայերու իսկական թիւը այն տեղերէն ուր կոմիտէներ ունինք, որոնց թիւը մասնաւորապէս նշանակուած են տեղեկագրին վերջի մասին — կոմիտէներու վիճակագրոյն մէջ, բայց միջին հաշուով կրնանք

ըսել որ Միացեալ Նահանգներու եւ Հարաւային Ամերիկայի մէջ հայերու թիւը 45.000էն պակաս չէ բնաւ:

ԱՄԵՐԻԿԱՀԱՅԵՐՈՒ ԶԲԱՂՈՒՄԸ

Ամերիկայի մէջ հայերը կեդրոնացած են գլխաւորաբար Նիւ Եորքի, Պոսթընի, Փրայմիտենսի, Ուսթրի, Շիքակոյի, Սէյնթ Լուիզի, Միչիկընի, Քալիֆորնիայի եւ Քանատայի շրջանները, ինչպէս եւ Հարաւային Ամերիկա, ուր կան Հայ գաղութներ, բայց համեմատաբար ցանցառ է անոնց թիւը: Ամերիկահայերու զբաղումն է՝ գորգի վաճառականութիւն. քանի մը փոքր գործարանատէրեր, զանազան արհեստներ, գիտական քանի մը ճիւղեր, նպարավաճառութիւն. գործաւորներու հսկայ զանգուածներ զանազան քաղաքներու տարբեր ճիւղերու գործարաններու մէջ, օրինակ կօշիկի, երկաթի, բուրդի, բամպակի, կաշիի, ձուլարանի, եւայլն:

Վերջին 15 տարուան ընթացքին մէջ հայերը սկսան թողուլ գործարանական կեանքը եւ հետեւել այլ եւ այլ անկախ գործերու եւ արդիւնաբեր արհեստներու: Ասոնց մէջ աչքի զարնողն է հողագործութիւնը: Քալիֆորնիոյ մէջ եղած հայերը կարելի է ըսել ընդհանրապէս կը զբաղին երկրագործութեամբ եւ այգիի ու չամիչի գործով:

Հարաւային Ամերիկայի Հայ գաղութին զբաղումը կարելի է համարել մանրավաճառութիւն: Հիւսիսային Ամերիկայի կամ Միացեալ Նահանգներու Հայ գաղութին բաւական խոշոր թիւ մը երկրագործութեամբ կը պարապի: Եւ այն բոլոր հայերը որոնք երկրագործութեամբ կը պարապին 90 առ հարիւր հողը կարելի է համարել սեփականութիւն:

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ԱՄԵՐԻԿԱՀԱՅԵՐՈՒ ՄԷՁ

Ամերիկահայ գաղութը՝ որքան շփուեցաւ տեղական կեանքին հետ, կրօնական կեանքը նոյն համեմատութեամբ թուլացաւ: Հայ լուսաւորչական հաստատութիւնը չկայ, կազմալուծուած է առաջնորդութիւնը, միայն քանի մը պարզ քահանաներ հոս հոն մկրտութեան, պսակի եւ թաղումի գործերով կը զբաղին:

Բողոքական Հայ համայնքը համեմատաբար աւելի կազմակերպուած համայնք մը ունի, օտար միսիոնարութեան Ամերիկեան Պօրտի պաշտպանութեանը տակ ըլլալուն համար: Պատուելիներու ամսաթոշակները, շատ քիչ բացառութեամբ ապահովուած է միեւնոյն ընկերութեան կողմէ: Կաթոլիկ Հայ հասարակութիւնը շատ աննշան մաս մը կը ներկայացնէ:

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ԲՆԱԿԶՈՒԹԻՒՆԸ

Ամերիկահայ գաղութը կազմուած է ընդհանրապէս Թրքահայաստանի եւ Թուրքիոյ միւս գաւառներու մէջ գտնուած հայութեան: Կովկասահայերու եւ պարսկահայերու թիւը Միացեալ Նահանգներու մէջ շատ աննշան է:

ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

Ամերիկահայ գաղութը ըլլալով արդիւնք տնտեսական աննպաստ պարագաներու Երկրին մէջ, ընդհանրապէս բաղկացած է գործաւոր երիտասարդ դասակարգէն: Վերջին 15 տարիներու ընթացքին մէջ թուրք կառավարութեան հայածանքներուն պատճառաւ, մրտաւորական փոքր հոսանք մը սկսաւ դէպի Ամերիկա, որուն արդիւնքը եղաւ մամուլի ստեղծումը, որ միանալով բեմին հետ գլխաւոր օժանդակողը եղաւ Ամերիկահայ տարրը ազատելու անմիջական օտարացումէ եւ հաւաքելու զայն Երկրի ազատագրումի գործին շուրջը:

Ամերիկահայ մամուլը, սակայն, չկրցաւ տալ այն բոլորը ինչ որ ազատ երկրի մը պայմանները իր առջեւ լայն ասպարէզ բացած էր: Լայն գաղափարական պակասը մէկ կողմէն, կուսակցական ճղճիմ նկատումները միւս կողմէն ու պատուելիներու կրօնա-բարոյական եւ հակայեղափոխական փրփականտը մտքերու քառս մը ստեղծեցին, որով կարելի է ըսել թէ՛ Ամերիկան ամէնէն դժուար միջավայրը դարձաւ յեղափոխական գործիչին համար: Եւ ահա այսպիսի լուրջ պատճառները գլխաւոր արգելքը եղան Դաշնակցութեան տարածման, թէ՛ եւ ամէնէն գործնական արդիւնքը Ամերիկայի մէջ Դաշնակցութիւնը ունեցած է:

ՕՍՄԱՆԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵՆԷՆ ՅԵՏՈՑ

Օսմանեան Սահմանադրութենէն ետք Հայ կեանքը — ինչպէս սովորական է բոլոր տեղերու համար — խանդավառութեան նոր թափ մը ստացաւ: Դաշնակցութիւնը իբրեւ նախակարգաբար ու հոշակողը Հայ-թուրք համերաշխութեան՝ ծափահարութեամբ բոլոր խաւերէն ալ, նամանաւանդ այս բանին նպաստեց Պոլսոյ բեմը եւ լրագրութիւնը: Պոլսոյ խանդավառութեան հետ միեւնոյն մտքով տարուեցաւ ամերիկահայ գաղութին ալ: Պոլիսը կողմնացոյցը հանդիսացաւ որեւէ ցոյցի: Յորչափ կեանքը ոգեւորուած էր եւ յետադիմական ոգիին անծանօթ, բոլոր խաւերը կը պատրաստուէին երկիր վերադառնալ: Բայց դժբախտաբար վերջին քանի մը տարուան ընդհանուր գործերու թուլութիւնը ամերիկահայ գաղութը նիւթապէս քամած էր, որով ան

Հնարաւորութիւն չունեցաւ խոշոր չափերով երկիր վերադառնալ եւ ցարդ 800-1000 հոգի կրցած են Երկիր վերադառնալ եւ տակաւին կը շարունակէ գործերու թուլութիւնը արգելք ըլլալ վերադարձին: Ասկէ զատ, Պոլսոյ յետադիմական շարժումը եւ Ատանայի չտեսնուած ջարդը մտքերը պաղեցուց առժամապէս, բայց յեղափոխական ոգին բնաւ չմարեցաւ մեր շարքերուն մէջ:

Երկրէն գէնքի պահանջին արձագանգը օրը օրին վրայ հասնելով, կամաց-կամաց սկսաւ խմորուիլ գործնական կեանքի մը նշանները, թէեւ տակաւին շատ թոյլ: Միջանկեալ հոս ըսենք որ ինքնապաշտպանութեան գործի արագ չընդարձակուիլը կարելի է երկու պատճառի մէջ փնտռել:

Առաջին՝ անգործութեան հետեւանքով նիւթական պակասը, յետոյ՝ ամերիկահայ մամուլի որոշ մասի մը մոլորեցնող ընթացքը: «Ե. Հ.» եւ «Ազգ» թերթերը կարծես ծնած են Ամերիկահայ կեանքը պղտորելու:

Այս ծանօթութենէն յետոյ պէտք է խոստովանիլ թէ՛ մեր գաղութը իր անցեալի ծանր՝ անմարսելի նախապաշարումի փոշին թօթուած է, ընդհանուր համերաշխութեան հոսանք մը սկսած է դէպի Դաշնակցութիւնը եւ եթէ այդ հոսանքը զօրաւոր չէ, այդ կարելի է համարել արդիւնք մեր մէջ զօրաւոր մտաւորականութեան մը պակասին եւ ժողովրդին նիւթապաշտ բնաւորութեան: Նիւթական գոհողութիւնը, ահա միակ պատճառը որ ժողովուրդը հեռու կը մնայ յեղափոխական շարքերէն:

Հակառակ իր ժլատութեան, պէտք է ըսել թէ՛ ան արդէն կողմնակի ճամբով ընկած է գոհողութեան հոսանքին մէջ: Այսօր, երկրէն գաղթող բոլոր գաւառի հայերը իւրաքանչիւրը իր գիւղի ուսումնասիրացը ունի 500-800 տալէրի դրամագլուխով եւ փոքր ի շատէ իր գիւղին մէջ նախակրթարանէն մինչեւ միջնակարգ դպրոց ունի:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Հ. Յ. Դաշնակցութիւնը ամերիկահայութեան մէջ իր գործունէութիւնը սկսած է 1898-ի գարնան, այն պահուն երբ Հնչակեանները արդէն տարիներով իրենց մուտքը գործած եւ բաւական զօրաւոր դիրք մըն ալ գրաւած էին: Սկիզբները հոս հոն միայն անհատներու «Դրօշակ» կը դրկուէր՝ ցրուելու համար ժողովրդական խաւերու մէջ: Փոքր ի շատէ բարեխիղճ անձեր ազնիւ յանձնառութեամբ կը տարածէին «Դրօշակ»ը, ոմանք ալ հակա-հնչակեան հոսանք մը ստեղծելու համար «Դրօշակ»ի տարածուելուն կը սատարէին: Ասով մէկ-տեղ, մինչեւ 1898, Դաշնակցութիւնը Ամերիկայի մէջ

գործնական հող չունէր, մինչեւ որ նոյն թուականին Սուրէն Մինասեան (Շխեան) Ամերիկա հասաւ: Այդ պահուն արդէն հակա-հնչակեան հոսանք մը սկսած էր հրապարակել եւ անոնց շարքերուն մէջ խուլ բողոքի ձայն մը սկսած էր ծայր տալ կեդրոնին դէմ: 1895-ին Հնչակեան Ամերիկայի Երջանական ժողովը, կեդրոնին գործերը քննելու մանաւանդ իրենց կազմակերպութեան գործերուն վրայ ընդհանուր ծանօթութիւններ ստանալու համար, երկու կամ երեք պատգամաւոր դրկեց Լոնտոն՝ կեդրոն, որոնց մէջ Մուրատ Շիրվանը: Շիրվանը դժգոհ կեդրոնին ցոյց տուած վերաբերմունքէն կը տեղեկագրէ դժգոհներու հատուածին Ամերիկա, եւ ինքը կ'անցնի ժընեւ ու անկից ալ Կիպրոս, որ յետոյ ըստ ոմանց կեդրոնի դաւադրութեամբ խեղդամահ կ'ընեն իր իսկ ընկերները:

Դժգոհութեան հոսանքը սկսաւ զօրանալ եւ առաջ եկաւ հատուած մը Ամերիկայի մէջ «Հայկազեան Օթեակ»ներ անունով, որ նպատակ ունէին իբրեւ առանձին կազմակերպութիւն երկրին մէջ գործել: Այդ նպատակով արդէն 3-4 հոգի Շիրվանին հետ անցան Երկիր, ասոնք էին Ս. Պոյաճեան (Եղուարդ), Մ. Մուրատեան (Մարթին) եւ Մ. Նորսիկեան (Նախեան): Վերջինը Պոլիս հանդիպելով տեղական Դաշնակցական մարմնէն գէնքի եւ դրամի նպաստ ստացած էր, որ իր ատենին (1898) արդէն տեղեկագրած էր Ամերիկա:

Մէկ կողմէն հայկազեաններու ուժին պակասը, միւս կողմէն Հնչակեաններէն կրած հալածանքին եւ նաեւ միութեան մը հարկեցուցիչ հանգամանքը քանի մը ամիսներէ ի վեր կազմակերպուած դաշնակցական կոմիտէներու հետ միութեան մը միտքը սկսաւ խմորուիլ: Այդ պահուն պրն. Աւետիս Մէլքիսեան Պոլսէն Ամերիկա փոխադրուած էր եւ Պոլսոյ Մարմնէն յանձնարարած էր իրբեւ գործիչ: 1898 թուականին, դաշնակցականներու թիւը Ամերիկայի գանազան քաղաքներուն մէջ հագիւ 50-ի կը հասնէր:

Նոյն տարին, հայկազեաններու հետ միութեան ժողով մը գումարուեցաւ Պոսթրնի մէջ: Այդ ժողովին մէջ համեմատաբար անոնք թուական առաւելութիւն մը կը ներկայացնէին: Միութեան բանակցութիւնները վերջացան եւ հայկազեանները թողլով իրենց անունը մտան Հ. Յ. Դաշնակցութեան անուան եւ դրօշին տակ: Կազմուեցաւ կեդրոնական կոմիտէ մը հինգ անձերէ բաղկացած՝ երեքը դաշնակցական եւ երկուքը՝ հայկազեան:

Կազմուած միութեան ժողովը, հեռու ըլլալով յեղափոխական հասուն շրջահայեցողութենէ, առաջին պատեհութեամբ իսկ իր Կեդր. կոմիտէի երկու անդամները շաբաթական 10 տալէրով պաշտօնի կանչեց եւ բիւրօ մը հաստատեց Նիւ Եորքի մէջ: Ատոր գլխաւոր պատճառը այն հաւանական ենթադրութիւնն էր թէ՛ American-Armenian Relief Association-ի նիւթական օժանդակութիւնը պիտի դարձնեն դէպի Դաշնակցութիւնը: Ենոր-

հիւ քանի մը պատուելիներու, ինչպէս նաեւ տղթ-Գարրիէլեանի եւ Հրանդ Քիրէճեանի (Գարրիէլեան եւ Քիրէճեան այդ ատեն դաշնակցականներ էին, բայց անձնապէս իրարու չհամակրողներ) միջեւ կայացած անհամաձայնութեան, յիշեալ ընկերութեան նիւթական օժանդակութիւնը դէպի Դաշնակցութիւնը դարձնելու գործը չյաջողեցաւ: Մէլքիսեան եւ Շխեան մնացած էին անորոշ կացութեան մը մէջ, տարուած Գարրիէլեանի եւ Քիրէճեանի ու եկուոր հայկազեաններու անվստահելի ընթացքներէն: Կեդրոնական կոմիտէի թոշակաւոր երկու պաշտօնեաններու շաբաթավճարները անվճար կը մնային եւ բացուած գրասենեակին ամսավարձերը անվճար կը մնային եւ American-Armenian Relief Association-ի խոստացած նիւթական օժանդակութիւնը չէր գար: Կացութիւնը սպառնական էր:

Նոյն տարուան 1898-ի աշնան Մելիք (Յովհաննէս Եռուսեֆեան) Պոլսէն Ամերիկա կու գար: Հայկազեաններու եւ դաշնակցականներու միջեւ եղած միութիւնը լուծուեցաւ: Շխեան Ամերիկայէն հեռացաւ, Մէլքիսեան Քալիֆորնիա գնաց անձնական գործով զբաղելու: Մելիք մօտաւորապէս երկու տարի մնաց Ամերիկա իբրեւ գործիչ: Մելիք գուցէ ամէնէն չարաբուրած անձը եղաւ, նիւթապէս եւ բարոյապէս: Իր ժամանակուան ընկերներու նիւթական աննպաստ վիճակը Մելիքը ենթարկեց իր այդ վիճակին:

Հնչակեաններու ձգած ոչ-ժողովրդական տպաւորութիւնը, որ մասամբ արդիւնք կարելի է համարել պատուելիներու եւ կղերականներու հակահարուածին, իր անդրադարձը ունեցաւ Դաշնակցութեան հանդէպ, իբրեւ անհաւատներ եւ անիշխանականներ:

Մէկ կողմէ յեղափոխական ոգիի պակասը եւ միւս կողմէ կղերականութեան հակահարուածը, երկար տատանումներու եւ շուարուն դրութեան մէջ պահեցին ժողովուրդը: Իբրեւ փաստ աւելցնենք նաեւ կուսակցական փոխադարձ հակառակութիւնները, որոնք որոշ չափով վնասեցին յեղափոխական հմայքին:

1898-ի Հնչակեան պառակտումը եկաւ նոր աղէտ մը ըլլալու յեղափոխութեան համար: Երկու հատուածներու իրար հակասող աշխարհահայեացքները եւ իրար հալածող եղանակը այնպիսի քոսոսային դրութիւն մը ստեղծեցին ամերիկահայերու մտքին մէջ, որ զայն առաջնորդեց եւ շտկելը իսկապէս դժուարին գործ մը դարձաւ: Երբ այս յեղեղուկ ու անորոշ դրութեան մէջ էինք, Մելիք կանչուեցաւ Դաշնակցութեան 1898-ի Ընդհանուր ժողովին: Ամերիկայի սակաւաթիւ ընկերները, հագիւ 150 մնացին իրենք իրենց, կարօտ մտաւոր առաջնորդի:

Վերակազմեալ Հնչակեանները՝ ըստ երեւոյթին տիրող ուժերն էին այն ատեն. իրենց հետ ունեցան պահ մը կղերական ուժը: Բեմի, հրապարակային ամբոխավարութեան քով ստեղծեցին իրենց համար մամուլ-օրկան

«Տիգրիս»ը, որ յետոյ փոխուեցաւ «Ձայն Հայրենեաց»ի, որուն կատարած դերը եւ գործը ծանօթ են արդէն:

Ամերիկայի Դաշնակցութիւնը նիւթապէս աննպաստ կացութեան մէջ, զուրկ մտաւորական ուժէ, պարտաւորուեցաւ մաքառիլ Վերակազմեալ [ներու] նենգագործութեանց դէմ, ինչ գնով որ ալ ըլլար այդ, փրկելու համար յեղափոխական գործը որ այլասերելու վիճակի մէջ կը գտնուէր: 1899-ին քանի մը ընկերներու մասնաւոր ջանքով եւ նիւթական գոհողութիւնով հաստատուեցաւ «Հայրենիք» շաբաթաթերթը, որ կաղն ի կաղ առաջ տարաւ փրփականտի գործը, հրապարակային ժողովներու հետ միասին:

1899-ին շարքերը զգալապէս լայնցած էին, Դաշնակցութեան գործունէութիւնը Երկրին մէջ եւ Սերբիոյ ու ընկերներուն կռիւներուն արձագանգը փարատեցին ամերիկահայ միջնորդտին մռայլութիւնը, մինչեւ որ ընկեր Վուսեան իբրեւ գործիչ Ամերիկա հասաւ:

Գործունէութեան կազդուրիչ հոսանք մը վերստեղծուեցաւ: Վերակազմեալ Հնչակեանները խաչակրութեան ամէն տեսակ գունաւորումներով գինուած՝ արատաւորեցին յեղափոխութիւնը եւ իրենց գոյութիւնը քարշ տալու համար ամէն անագնիւ միջոցներու դիմեցին Դաշնակցութեան դէմ: Ժողովուրդին մտաւորականը բարձրացնող եւ զայն յեղափոխութեան ճամբան առաջնորդող դասախօսութիւնները եւ հրատարակութիւնները (պարտաւորուած ժամանակ մը մեր կողմէն անդին դրուած էր ինքնապաշտպանութիւնը) հակահարուածի հոսանքին դէմ, մեծագոյն այժմէութիւնը դարձած էր ու այսպէս շարունակուեցաւ գրեթէ մինչեւ 1903-1904:

Մինչեւ Դաշնակցութեան Չորրորդ Ընդհանուր ժողով (1906-1907), Ամերիկայի մէջ Դաշնակցութիւնը կռիւի, գէնքի, նիւթական եւ բարոյական փրփականտի հողին վրայ մնաց: Հաւատացող ազգային ազատագրութեան գործին եւ հայկական ինքնավարութեան մը սկզբունքին, ծրագրային եւ սկզբունքային հարցեր մէկ կողմ թողուած էին:

Թուսաստանի յեղափոխութիւնը, Կովկասեան հարցը եւ անոր հետ անմիջապէս դաշնակցական աշխարհահայեացքին գործնական վերագարթնումը, մտքերը փոթորկեցին եւ Չորրորդ Ընդհանուր ժողովին, Ամերիկայի Դաշնակցութիւնը ընկերվարական մտքերու հակառակ ճամբով մը տարուեցաւ, անծանօթ մնացած ըլլալով այն կարգ մը իրականութիւններուն, որոնք հարկեցուցիչ եւ լրացուցիչ մասը կը կազմէին Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրին:

Ընկերվարական սկզբունքը, որ Դաշնակցութեան աշխարհահայեացքին գլխաւոր մասը կը կազմէին, Չորրորդ Ընդհանուր ժողովէն ետք անհաճոյ տպաւորութիւն թողուց իր առաջին օրերուն ընկերներուն եւ ժողովուրդի մտքին, ժողովուրդին միտքը մոլորեցնելու եւ զայն իրենց կողմը հակեցնելու համար: Փարիզեան հայ-

թրքական համերաշխութեան հարցը, արտասահմանի այլ շրջաններէն ալ աւելի Ամերիկայի շրջանին մէջ քննադատութեան, խժբժանքի նիւթ դարձաւ: Եթէ այդ օրերուն արտասահմանէն կարող գործիչ մը ունենայինք, շատ աւելի ուժգին պիտի հակադարձէինք:

1908-ի Օսմանեան Սահմանադրութեան հռչակումէն ետք միայն, ժողովուրդը եւ ընկերները կոցին հիմնական համոզում գոյացնել Դաշնակցութեան ծրագրին շուրջը: Ամերիկայի տարածքին սարքեցինք դասախօսութիւններ, ընկերվարական, պետական, օրէնսդրական, հողային, ապակեդրոնացման եւ դաշնակցական հարցերու շուրջ:

ՄԵՐ ԴԻՐՔԸ ՀԱՅ ԵՒ ՕՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՆԴԵՊ

Պաշտօնական աչքի զարնող յարաբերութիւն ունեցած չենք տեղական հայ կազմակերպութիւններու հետ, միայն զանազան քաղաքներու կոմիտէները ի նպաստ երկրի արկածեալներու գործին մէջ միասին հանգանակութեան ձեռնարկեցինք:

Ամերիկայի Ընկերվարական կուսակցութեան հետ պաշտօնական ոչ մէկ յարաբերութեան կապ պահուած է, միայն անոնց թերթերէն ու հրատարակութիւններէն օգտուած է «Հայրենիք»ը:

Սկիզբները, Փարիզի համագումարէն առաջ, Եգիպտոսէն թրքերէն հրատարակութիւններ բերել տուինք եւ տարածեցինք թուրքերու մէջ: Համագումարէն անմիջապէս ետք, քանի մը թուրք մտաւորականներու հետ յարաբերութիւններ հաստատեցինք եւ հրապարակային դասախօսութիւններու առաջնորդեցինք զիրենք թուրք ժողովուրդին մէջ: Թուրք ժողովուրդը Ամերիկայի մէջ ըլլալով ծայրայեղ յետադիմական մտքերով տոգորուած, շատ չնչին արդիւնք ձեռք բերուեցաւ: Պէտք է ըսել որ կարծուած թուրք մտաւորականները ուժեղ գաղափարականի տէր չեն:

ԲՆԱԳԱՒԱՌԻ ՀԱՄԱՐ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

Սահմանադրութենէն ետք, ինքնապաշտպանութեան գործին համար ըստ կարելոյն հոգ տարուած է եւ ի նպաստ անոր փրփականտ եղած է ժողովրդական խաւերու մէջ: Ատոր իբր արդիւնք այլեւայլ գաւառացիներու մէջ շարժում մը արթնցած էր, խնդիրը գործնական հողի վրայ դնելով: Խարբերդի Մովզ գիւղացիները եւ Տիգրանակերտի քաղաքացիները առաջինն եղան այս շարժման արձագանգ տալու: Առաջինը իր Ուսումնասիրաց Ընկերութեան պահեստի գումարէն 500 տալէր յատկացուց Մովզի ինքնապաշտպանութեան գործին: Յիշեալ գումարը կեդր. կոմիտէի միջոցով ան-

միջապէս դրկուեցաւ Պոլսոյ Պատասխանատու մարմնին իր նպատակին գործածելու համար:

ԵՐԿԻՐ ՂՐԿՈՒԱԾ ԳՈՐԾԻՉՆԵՐ

Սահմանադրութենէն առաջ, Երկիր Քղիի շրջանը իբր գործիչ դրկուած է ընկեր խմօ (Մարտիրոս Ղազարեան), որ տեղին վրայ խիստ օգտակար եղած է: Իբրեւ բնագաւառի գործիչ միեւնոյն վայրը գացին ուրիշ չորս ընկերներ ալ, իրենց սեփական ծախսերով: Իսկ Սահմանադրութենէն ետք, Երկիր վերադարձող կարող ընկերներ օգտակար հանդիսացան իրենց տեղին վրայ: Ասոնց մէջ է ընկեր Յ. Ամատունի, որ վերադառնալով խարբերդ մեծ մղում տուած է կազմակերպական գործերուն տեղին վրայ:

ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ԹԻՒԸ

Ամերիկայի դաշնակցական ընկերներու (գործօն) թիւը 1200 է, բացի ասոնցմէ զանազան շրջաններ ցրուած են ընկերներ, որոնց թիւը 250-ի կը հասնի: Մօտաւորապէս 100-ի չափ ընկերներ Երկիր վերադարձան Սահմանադրութենէն ասդին: Արդ եթէ նկատի ունենանք այս թիւերը, զանց առնելով Երկիր մեկնողները, Ամերիկայի շրջանի դաշնակցական ընկերներու թիւը 1450-ի կը հասնի:

ԿԱՆԱՆՑ ԿՈՄԻՏԷ

Կանանց կոմիտէներ գոյութիւն ունեցած են Փրովիտենս, Նիւ Եորք, Պոսթըն, Տիլատելֆիա, Պրէնթֆորտ եւ Թրոյ քաղաքներու մէջ: Ներկայիս գրեթէ կազմալոյծ վիճակ մը կը ներկայացնեն անոնք, բացի մէկ երկուքէն: Վերջին չորս հինգ տարուայ ընթացքին, խիստ օգտակար եղած են կազմակերպութեան բարոյապէս թէ նիւթապէս, սարքելով հանդէս-պազարներ եւ ներկայացումներ, ի նպաստ կազմակերպութեան, բանտարկեալներու, սովեալներու եւ արկածեալներու:

ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐ

Ամերիկայի մէջ Դաշնակցութեան նպաստած են նաեւ դաշնակցական անուան տակ դերասանական խումբեր: «Լեռնային Դերասանական Խումբ»ը Փրովիտենս, «Արամեան»ը Պոսթըն, «Թատերասէր-Երգեցիկը»՝ Նիւ Եորք, Լորէնսի, Ուսթըրի եւ այլ վայրերու խումբերը վերջին 3-4 տարուայ մէջ, բաւական օգտակար հանդիսացած են թէ՛ փրփականտի տեսակէտով եւ թէ՛ իրենց տուած նիւթական օժանդակութեամբ, բանտարկեալներու, կազմակերպութեան, արկածեալներու եւ ուրիշ բարենպաստ ձեռնարկներու օգտին:

ՉԻՆԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐ

Վերջերս Փրովիտենսի մէջ «Հրայր» եւ Ուայթինսվիլի մէջ «Անդրանիկ» գինավարժական խումբեր կազմուած են, որոնք մեծ չափով կը նպաստեն փրփականտի գործին եւ ընկերներու մէջ ոգեւորութիւն ստեղծած են: Երազիրներ կը մշակուին այլ քաղաքներու մէջ եւս նման խումբեր կազմելու համար:

«ՀԱՅՐԵՆԻՔ»

«Հայրենիք» իբրեւ շաբաթաթերթ 1899-ի Մայիսին հաստատուեցաւ ընկերներու օժանդակութեամբ: 1906-ի Ամերիկայի Պատգամաւորական ժողովի որոշումով կազմակերպութեան սեփականութիւնը դարձաւ: Թերթը եղած է միշտ լաւագոյն միջոցը Դաշնակցութեան փրփականտը ընելու ամերիկահայ հասարակութեան մէջ: Վաւառնի Ամերիկայէն մեկնելէն ասդին, 1907-ի սկիզբը, «Հայրենիք»ը ղեկավարուած է տեղական ուժերով, որոնք իրենց լաւագոյնը ըրած են բարձր պահելու համար Դաշնակցութեան հմայքը եւ տարածել անոր սկզբունքները եւ աշխարհահայեացքը ամերիկահայ հասարակութեան մէջ: Վերջին երեք չորս տարուայ մէջ «Հայրենիք» ինքզինք հեռու պահած է կուսակցական պայքարներէ եւ վէճերէ, հակառակ անոր որ հակառակորդ կուսակցութեանց թերթերը միշտ շարունակած են անագնիւ միջոցներու դիմել թէ՛ թերթին եւ թէ՛ կազմակերպութեան դէմ: «Հայրենիք»ը իր այս ընթացքով

յաջողած է իր կողմը գրաւել Ամերիկահայ հասարակութեան ողջմիտ եւ լուրջ դասակարգը:

Ներկայիս «Հայրենիք»ը կը տպուի շաբաթական անուուազն 3000 օրինակ, որուն 2300-ը բաժանորդ իսկ 700 գործակալներու միջոցաւ կը վաճառուի: Մինչեւ 1908-ի Սեպտեմբերի սկիզբ, թերթի բաժնեգինը տարեկան 1.5 տալէր էր եւ կը հրատարակուէր իբրեւ շաբաթաթերթ, բայց այդ թուականին թերթը վերածուեցաւ կիսաշաբաթաթերթի, տարեկան երկու տալէրի բաժնեգինով:

«ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ՏՊԱՐԱՆ

«Հայրենիք» թերթի եւ ապսպրանքներու տպագրութեան գործը դիւրացնելու եւ այլեւայլ հրատարակութիւններու ձեռնարկելու համար, Ամերիկայի 1907-ի Պատգամաւորական ժողովը որոշեց սեփական տպարան մը հաստատել: Այս ձեռնարկը յաջողցնելու համար, միեւնոյն ժողովը քուէարկեց երկու հազար տալէրի փոխատուութիւն մը «Հայրենիք»ին: Տպարանը հաստատուեցաւ 1908-ի Մայիսին եւ կը կրէ «Հայրենիք-Տպարան» անունը:

Տպարանը «Հայրենիք» թերթէն զատ կը տպէ գրքեր, պրոշիւրներ: «Հայրենիք»ի տպարանէն լոյս տեսակ են «Հայրենիք Զայնագրուած Երգարանը», Ռուս Յեղափոխականներու Երազիրը, իտալացի ծանօթ հեղինակ Ֆէրիի «Ընկերվարական Հարց»ի թարգմանութիւնը: Այս ձեւով, «Հայրենիք» կը դառնայ ինքնաբաւ:

Փաստ. 1396-83

2.- ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵՆԵՐՈՒՆ ՏԱՄԵԼՉՈՐՐՈՐԴ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի կոմիտէներու ԺԴՐԴ Պատգամաւորական ժողովը գումարուեցաւ 1908 Դեկտեմբեր 24, 25, 28 եւ 27 օրերը Պոսթընի մէջ: Նախապատրաստական ժողովը բացուեցաւ Դեկտ. 24 Զորքը լայն կէսօր ժամը 12ին: Պատգամաւորներու յանձնարարականները քննուելով, ստուգուեցաւ որ պատգամաւորներու մեծամասնութիւնը — երկու երրորդը ներկայ էր: Հետեւաբար ժողովը օրինաւորապէս բացուած յայտարարուեցաւ:

Ժողովին կը մասնակցէին հետեւեալ կոմիտէները.

Փրավիտենս	5	ձայն
Նիւ Եորք	8	»
Թրոյ	2	»
Լին	2	»
Նէշուէ	2	»
Ուսթր	2	»
Ուոթթաու	2	»
Պոսթըն	2	»
Փորթլընտ	2	»
Թամսընսիլ	2	»
Լորէնս	1	»
Հէյլըվիլ	1	»
Ուայթնզվիլ	1	»
Նիւպրիփորթ	1	»
Նիւ Պրիթըն	1	»
Նիւ Հէյվն	1	»
Ուեսթ Հոպոքն	1	»
Ուրնսաքէթ	1	»
Պրաքթըն	1	»
Սենթրլ Զոլզ	1	»
Տիթթոյթ	1	»
Փէթրսըն	1	»
Ֆիլատելֆիա	1	»
Քէյմպրիճ	1	»
Ուոքսին, Ռէյսիս եւ Կրենտ Ռէփիտզ	1	»
Իսթ Սէյնթ Լուիզ, Սէյնթ Լուիզ եւ Կրէնիթ Սիթի	1	ձայն
Հէյլըվիլ	1	»
Շիքակօ	1	»
Ռիչմընտ	1	»
Լոուէլ	1	»

Հետեւեալ կոմիտէները տեղի հեռաւորութեան եւ

ինչ ինչ պատճառներով պատգամաւոր դրկած չէին պատգ. ժողովին: Որոնք են,— Նորֆոք, Ուեսթ Փուլմն, Չլսի, Պֆլօ, Պրէնթֆորտ, Կոլթ, Ռիչպրկ, Պրիմփորթ եւ Ֆրեզնօ:

Ուրեմն, ժողովին կը մասնակցէին 34 կոմիտէներ 43 ձայնով, Կեդր. Կոմիտէն 1 ձայն, Հայրենիքի վարչութիւնը 1 ձայն եւ Նիւ Եորքի Շրջանական խորհուրդը 1 ձայն, որ ընդամէնը կ'ընէ 48 ձայն: Պոսթընի Շրջ. խորհուրդը կազմալուծուած վիճակի մէջ ըլլալով չկրցաւ իր ներկայացուցիչը ունենալ ժողովին մէջ:

- Դիւանի ընտրութենէ ետք, ընտրուեցաւ
- 1.- Օրակարգ պատրաստող յանձնախումբ
 - 2.- Պատգամաւորներու յանձնարարականները քննող յանձնախումբ
 - 3.- Կեդր. Կոմիտէներու եւ «Հայրենիք»ի հաշիւները քննող յանձնախումբ:
 - 4.- «Հայրենիք»ի կանոնագիրը պատրաստող յանձնախումբ:
 - 5.- Կեդր. Կոմիտէի յարաբերական գործերը քննող յանձնախումբ:

ՕՐԱԿԱՐԳ

Պատգամաւորական ժողովի զբաղումը կազմող խնդիրները կրնան ամփոփուիլ հետեւեալ գլուխներուն տակ:

- 1.- Տեղեկագրերու ընթերցում, Կեդր. Կոմիտէի, Շրջ. խորհուրդներու եւ «Հայրենիք»ի վարչութ.:
- 2.- Կոմիտէներու իրաւասութիւն:
- 3.- Հեռաւոր կոմիտէներու մասնակցութիւնը պատգամաւորական ժողովներուն:
- 4.- Ներքին կանոնագրի վերաքննութիւն:
- 5.- «Հայրենիք»ի համար կանոնագրի մը մշակումը:
- 6.- Կազմակերպական տուրքի յաւելում եւ նուազեցում:
- 7.- Անդամատերի դրութեան վերացում:
- 8.- Խորհրդակցական ժողովներ:
- 9.- Շրջանական խորհուրդներ:
- 10.- Գործադրու աւրողներու հարց:
- 11.- Գործիչի հարց:
- 12.- Յեղ. հերոսներու Ալկոմ մը եւ «Դրօշակ»ի հաւաքածոյ:

- 13.- Ամերիկայի ընկերներու մտաւոր զարգացում:
- 14.- Ամերիկահայ հարուստներէն դրամ հանգանակել:
- 15.- Ուեսթ Հոպոքնի եւ Փէթրսընի Տիգրանակերտցի ընկերներու դիմումը:
- 16.- Երկրի ժողովրդի ինքնապաշտպանութիւն:
- 17.- Արեւմտեան Բիւրոյի նամակը:
- 18.- Ընդհանուր ժողովի գումարում:
- 19.- Այլեւայլ դիմումներ Պատգ. ժողովին:
- 20.- Ընտրութիւններ:

1908ի Պատգ. ժողովի ատենագրութիւնը կարդացելէ ետք, կարդացուեցան Կեդր. Կոմիտէի, Նիւ Եորքի եւ Պոսթընի խորհուրդներու եւ «Հայրենիք»ի տեղեկագրերը:

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ

1908ի տարեշրջանին մէջ կոմիտէներու նուազ զօրացումը, նիւթապէս թէ ֆիզիքապէս, արդիւնք եղած է մեծ մասամբ գործերու ընդհանուր թուլութեան: Ինչպէս Կեդր. Կոմիտէի հաշուեկշիռէն կը տեսնուի, կոմիտէներէն եկած դրամական հասոյթը գրեթէ անցեալ տարուան կէսը եղած է: Հակառակ այս անպաստ դրութեան, ընկերները կրցած են իրենց լաւագոյնը ընել կազմակերպութեան հանդէպ:

ԳՈՐԾԻՉԻ ՀԱՐՑ: Ինչպէս անցեալ տարի, նոյնպէս այս տարի ալ, Կեդր. Կոմիտէն ամէն ջանքի գործ դրած էր ճարել կարող եւ փորձառու գործիչներ Ամերիկայի շրջանին համար: Կեդր. Կոմիտէն, Արեւմտեան եւ Արեւելեան Բիւրոներուն ըրած իր դիմումներուն մէջ, միշտ ներկայացուցած է իր շրջանի գործերու իսկական դրութիւնը եւ կարող գործիչներու անհրաժեշտ պէտքը:

Այս տարեշրջանին մէջ, Արեւմտեան Բիւրոն Ամերիկայի շրջանին համար Կեդր. Կոմիտէին ներկայացուցած է իբրեւ գործիչ չորս ընկերներ, որոնք են — Սիմոն Յակոբեան, Մուսայէլեան, Մարտիրոս Յարութիւնեան եւ Ռուբէն Զարդարեան:

Ընկեր Յակոբեան, առաջին անգամ յօժարեցաւ Ամերիկա գալ իբրեւ խմբագիր «Հայրենիք»ի համար: Բայց, յետոյ, մեզի անծանօթ պատճառներով հրաժարեցաւ Ամերիկա գալ:

Մուսայէլեան, համալսարանէն ընթացաւարտ երիտասարդ մը, Արեւմտեան Բիւրոյէն ներկայացուեցաւ Կեդր. Կոմիտէին իբրեւ անփորձառու ընկեր մը, եւ քանի որ ընկեր Յակոբեանի Ամերիկա գալու հարցը կար մէջտեղ, առաջնութիւնը այս վերջինին տրուեցաւ: Ընկեր Յակոբեանի մերժումէն ետք, Կեդր. Կոմիտէն դիմեց Արեւմտեան Բիւրոյին որ ընկեր Մուսայէլեանը ղրկեն: Բայց, Արեւմտեան Բիւրոն նամակով կ'իմացնէր

ընկեր Մուսայէլեանի չկրնալ գալը հիւանդութեան պատճառով:

Առաջարկուեցաւ Մարտիրոս Յարութիւնեան, այցելել Ամերիկա դարձողի ամառուան երեք ամսուայ արձակուրդի միջոցին: Յիշեալ ընկերոջ գալը տարուան այդ եղանակին անյարմար նկատուեցաւ, եւ աւելի ծախք պիտի ըլլար:

Ընկեր Զարդարեան վեց ամսուայ այցելութեան մը համար Ամերիկա պիտի գար, բայց վերջերս Թուրքիոյ մէջ տեղի ունեցած քաղաքական փոփոխութեանց պատճառով, յիշեալ ընկերը կազմակերպութեան կողմէ Պոլիս փոխադրուեցաւ:

Պատասխանատու մարմինները դժուարաւ կրնային գոհացում տալ Կեդր. Կոմիտէի պահանջներուն, գործիչի մասին, երբ Երկրէն եկած պահանջները աւելի ստիպողական էին, եւ բնականաբար աւելի առաջնութիւն պէտք է տրուէր անոնց:

Գործիչի պակասը մասամբ լրացնելու համար, Կեդր. Կոմիտէն բաւականացաւ տեղական ուժեր գործածելով միայն: Ընկեր Ճելալեան տարուան սկիզբը այցելեց Արեւմուտքի շրջանը, իսկ ընկերներ Ամատունի եւ Աստիկեան Նիւ Եորքի շրջանը:

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ: Նախորդ Պատգ. ժողովին կողմէ յանձնարարուած էր Կեդր. Կոմիտէին որ ներքին եւ խմբական կանոնագրիները միացնելով նոր մը պատրաստէ: Բայց, Կեդր. Կոմիտէն, նկատի ունենալով որ խմբական դրութիւնը իր կարճ ժամանակամիջոցի մէջ առաջացուցած էր անտեղութիւններ եւ լքում ընկերական շարքերու մէջ, նկատի ունենալով որ խմբական դրութեան վերածուած կարգ մը կոմիտէներ արդէն ստիպուած էին նախկին դրութեամբ շարունակել, նպատակաւորաբար սեպեց չձեռնարկել երկու կանոնագիրներու միացումին, այլ թողուլ որ իւրաքանչիւր կոմիտէ շարունակէ իր յարմար սեպած կերպով, մինչեւ որ 1908ի Պատգ. ժողովը վերջնական կարգադրութիւն մը ընէ այս մասին: Կեդր. Կոմիտէն, հիմնուած այլեւայլ կոմիտէներու փորձառութեանց վրայ, վերջապէս եկած էր այն եզրակացութեան որ խմբական դրութիւնը անօգտակար եղած էր Ամերիկայի համար:

ԵՐԿՐԻ ԳՈՐԾԻՆ ՀԱՄԱՐ ՄԱՐԴ ՊԱՏՐԱՍՏԵԼ:

Նախորդ Պատգ. ժողովի որոշումի համաձայն, Կեդր. Կոմիտէն ձեռնարկած էր այս գործին եւ գտած էր տրամադրելի երկու ընկերներ, որոնք յանձն առած էին սորվիլ պահանջուած մասնագիտութիւնը: Վերջերս, Թուրքիոյ մէջ տեղի ունեցած քաղաքական փոփոխութեանց պատճառով, Կեդր. Կոմիտէն չհետապնդեց այս խնդիրն այլեւս:

ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ: Արեւմտեան Բիւրոն, իր

չրջանի գործերուն աւելի զարկ տալու համար, յարմար նկատած էր անցեալ Օգոստոսին գումարել Դաշնակցութեան Արեւմտեան մարմիններու Ռայոնական-չրջանական ժողով մը: Այս ժողովին մէջ մեր ներկայացուցիչը ունենալու համար, գումարեցինք խորհրդակցական ժողով մը: Բայց, Արեւմտեան Բիւրոն, նկատի ունենալով Ընդհ. ժողովի մօտալուտ գումարումի խնդիրը, յարմար նկատեց չգումարել յիշեալ ժողովը:

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ: Երկրի որոշ վայրերու մէջ մամուլ հաստատելու նպատակով, Պոլսոյ Պատասխանատու մարմինը ներկայացուցած էր Կեդր. Կոմիտէին 30 հազար Ֆրանքի հաշիւ մը, որը հայթայթուէր մի միայն բացառիկ նուիրատուութեամբ: Այս գումարը բաժնուած էր Կովկասի, Պուլկարիոյ եւ Ամերիկայի շրջանի մարմիններուն վրայ: Ամերիկայի ինկած բաժինը — երկու հազար տալէր — բացառիկ հանգանակութեամբ ձեռք պիտի ձգուէր: Այս մասին քայլեր առնուած են արդէն:

ԲՆԱԳԱՒԱՌԻ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԻՉ: Այս տարեշրջանին մէջ բնագաւառի համար գործիչ ղրկուած է Կրէնիթ Սիթիի ընկերներէն Խմօ, որուն ներկայութիւնը Քղիի շրջանին մէջ խիստ օգտակար եղած է:

ԲՈՂՈՔՈՂՆԵՐՈՒ ՀԱՐՑԸ: Նիւ Եորքի մէջ ծագում ունեցող բողոքողներու խնդիրը ծանօթ էր նախորդ Պատգ. ժողովին արդէն: Այս խնդիրը կարգադրելու համար, ընկեր Ամատունի Նիւ Եորք ղրկուեցաւ, եւ Նիւ Եորքի կոմիտէի եւ Շրջ. խորհուրդի աջակցութեամբ, յաջողեցաւ կարգադրել գայն: Նիւ Եորքի մէջ եղած բողոքող սեպուածները, շատ քիչ բացառութեամբ, նորէն միացան տեղի կոմիտէին:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՏՊԱՐԱՆ: Նախորդ Պատգ. ժողովի որոշման համաձայն, արտօնուեցաւ Կեդրոնական Կոմիտէին երկու հազար տալէրի փոխատուութիւն մը ընել «Հայրենիք»ի սեփական տպարանը հաստատելու համար: «Հայրենիք»ի տպարանը անգամ մը հաստատուած ըլլալով, ինչպէս նաեւ «Հայրենիք»ի ձայնագրուած երգարանի տպագրութիւնը ձեռնարկուած ըլլալով, Կեդր. Կոմիտէն հարկադրուած էր յաւելուածական հազար հինգ հարիւր տալէրի փոխատուութիւն մը ընել «Հայրենիք»ի տպարանին: Եթէ այս յաւելուածական փոխատուութիւնը չընէինք, «Հայրենիք»ի տպարանի գոյութիւնը կը վտանգուէր եւ երգարանի տպագրութիւնն ալ տարակուսելի պիտի ըլլար:

ԿՈՄԻՏԷՆԵՐՈՒ ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԻՆ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ: Այս հարցը որ կը բխէր տարեկան տուրքերը վճարելու դժուարութենէն,

Պատգ. ժողովը նկատի ունեցաւ որ 1908ի տարին 1907էն աւելի ձախող եղած է գործերու թուութեան պատճառով, բայց որովհետեւ հաշիւներն լման չփակող կոմիտէներու մեծամասնութիւնը կը ներկայանար ժողովին հաշիւները մօտ ատենէն փակելու խոստումներով, թոյլատրուեցաւ ներկայացող կոմիտէներուն որ, առանց բացառութեան, մասնակցին ժողովին:

ՀԵՌԱՒՈՐ ԿՈՄԻՏԷՆԵՐՈՒ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՊԱՏԳ. ԺՈՂՈՎՆԵՐՈՒՆ: Պատգ. ժողովը, նկատողութեան առնելով հեռաւոր կոմիտէներու ձայներու անհամեմատական կերպով պատգ. ժողովներու մէջ ներկայացուելու հարցը, ըրաւ հետեւեալ կարգադրութիւնը այս մասին:

Իսթ Սէյնթ Լուիզի, Շիքագոյի, Տիթթոյթի, Պրէնթֆորտի, Հէմիլթնի եւ Ռիչմոնտի շրջաններուն մէջ գտնուած կոմիտէներուն վրայ պարտադիր ընել որ, առանց նկատողութեան առնելու ըլլալիք ծախքերը, ղրկեն մէկ մէկ պատգամաւոր երկ-երկու ձայնով, եւ իւրաքանչիւր պատգամաւոր կ'ունենայ իր խորհրդատու պատգամաւոր մը ընտրուած Պոսթընի շրջանէն:

Պատգ. ժողովը, նկատողութեան առնելով նաեւ այն բոլոր դժուարութիւնները եւ անպատեհութիւնները, որ յաճախ առաջ կու գան տեղի հեռաւորութեան եւ ուրիշ պատճառներով Պատգ. ժողովներուն մասնակցելու անկարող կոմիտէներու ձայները բաշխելէն, որոշեց որ ասկէ ետք այդ կարգի կոմիտէներ իրենց ձայնը չներկայացնեն ոչ Կեդր. Կոմիտէին եւ ոչ ալ Պատգ. ժողովին:

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳՐԻ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ: Խըմբային դրութեամբ դեկավարուող կոմիտէներու պատգամաւորները յայտնի ապացոյցներով կը հաստատէին այս դրութեան անգործնականութիւնը: Պատգ. ժողովը, նկատի ունենալով այս պարագան, որոշեց վերահաստատել կոմիտէական նախկին դրութիւնը: Վաւերացուեցաւ կոմիտէական դրութեան նախկին կանոնագիրը, եւ այս կանոնագիրը բարեփոխման ենթարկելու համար, նորընտիր Կեդր. Կոմիտէն յաջորդ Պատգ. ժողովի գումարումէն երկու երեք ամիս առաջ, կոմիտէներու դիտողութիւնները եւ թելադրութիւնները ստանալէ ետք կը մշակէ նոր մը, եւ այս կանոնագիրը յաջորդ Պատգ. ժողովին վաւերացուելով երկրորդ տպագրութեամբ լոյս կը տեսնէ:

«ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ԳՈՐԾԵՐՈՒ ԱՆԿԱՆՈՆ ԸՆԹԱՆԱԼԸ: Պատգ. ժողովը, մանրամասնօրէն նկատողութեան առնելով այս հարցը, եկաւ այն եզրակացութեան որ կանոնագրի մը պակասութեան արդիւնք եղած էր այդ: Այս անկանոնութեանց եւ անպատեհութեանց առաջն առնելու, եւ «Հայրենիք»ի վարչական թէ խմբագրական գործերը աւելի կանոնաւոր վիճակի մէջ դնելու

համար, որոշուեցաւ ունենալ առանձին կանոնագիր մը «Հայրենիք»ին համար:

«Հայրենիք»ի գործերը վարելու համար, Պատգ. ժողովը ընտրեց հինգ անդամներէ բաղկացեալ մարմին մը, որը կը կոչուի խմբագրա-վարչական մարմին: Այս մարմինը Կեդր. Կոմիտէի աջակցութեամբ կ'ընտրէ խմբագրական մարմինը:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐՈՒ ՆՈՒԱԶՈՒՄ: Քանի մը կոմիտէներ հարց բերած էին Պատգ. ժողովին կազմ. տուրքերը նուազեցնելու համար: Բայց, Պատգ. ժողովը անտեղի նկատելով այսպիսի քայլ մը առնելը ներկայիս, որոշեց շարունակել տուրքի նախկին դրութիւնը, քանի որ նիւթական օժանդակութեան մեծ բաժին մը կը ծանրանայ Ամերիկայի շրջանին վրայ ներկայիս:

ԱՆԴԱՄԱՏԵՏՐԻ ԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՑՈՒՄ: Այս մասին հարց ըլլալով, Պատգ. ժողովը գրեթէ բացարձակ միաձայնութեամբ ետ մղեց այս գաղափարը: Գրեթէ բոլոր պատգամաւորներն ալ ընդունեցին որ անդամատետրի դրութիւնը մեծ չափով նպաստած էր հաշիւները կանոնաւորելուն եւ տուրքերը ատենին գանձուելուն:

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ: Կեդր. Կոմիտէն բացառիկ պարագաներու տակ իր յարմար տեսած ընկերները կրնայ հրաւիրել խորհրդակցական ժողովի, որուն անհրաժեշտութիւնը ընդունուեցաւ Պատգ. ժողովին կողմէ: Որպէսզի թիւրիմացութիւններու [տեղի] չտրուի, հրաւիրը տեղի ունենալու է պատկան կոմիտէի միջոցով, եւ միեւնոյն ատեն հրաւիրուած ընկերոջ ճանապարհածախար հոգացուելու է կազմակերպական գանձէն:

ՇՐՋԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ: Շրջ. խորհուրդներու օգտակարութիւնը, ինչպէս առաջ, այս անգամ ալ շեշտուեցաւ Պատգ. ժողովին կողմէ: Բայց, ներկայացուած տեղեկագրերէն տեսնուեցաւ որ Շրջ. խորհրդի բոլոր անդամներն ալ, առանց բացառութեան, անձնական գործերով զբաղուած ըլլալով, դիւրութիւնը եւ միջոցը չեն կրնար ունենալ յաճախ այցելել հեռաւոր թէ մօտակայ կոմիտէներուն եւ գոհացում տալ անոնց պէտքերուն:

Պոսթընի Շրջ. խորհուրդը, որուն երկու անդամները Ամերիկայէն մեկնած ըլլալով, մասամբ կազմալոյժ վիճակի մը մէջ կը գտնուէր, եւ այս պատճառով չէր կըրցած իր ներկայացուցիչը ունենալ ժողովին մէջ:

Պատգ. ժողովը վերջանալէ ետք, Պոսթընի շրջանի կոմիտէներու պատգամաւորները հաւաքուելով, անհրաժեշտ չնկատեցին Շրջ. խորհրդի մը գոյութիւնը Պոսթընի մէջ, քանի որ Կեդր. Կոմիտէի ներկայութիւնը հոն մասամբ կը փոխարինէր անոր պակասը:

ԳՈՐԾԱԴՈՒԼ ԱԻՐՈՂՆԵՐՈՒ ՀԱՐՑ: Քանի մը կո-

միտէներու կողմէ գործադուլ աւրող ընկերներու մասին բողոքներ եկած էին, եւ Պատգ. ժողովը, նկատելով որ Հ. Յ. Դաշնակցութիւնը ընկերվարական-յեղափոխական կուսակցութիւն մըն է եւ պաշտպան աշխատաւոր դասակարգի շահերուն, եւ որ այդպիսի քայլ մը բացարձակ հակառակ է կուսակցութեան սկզբունքին, որոշեց որ ասկէ ետք գործադուլ աւրող ընկերներու պարագան յանձնուի տեղական կոմիտէի քննութեան, եւ երբ հաստատուի մատնանշուած պարագան, յարմարագոյն պատիժը կը տնօրինուի յանցաւոր ընկերոջ նկատմամբ:

ԳՈՐԾԻՉԻ ՀԱՐՑ: Պատգ. ժողովը լսելով Կեդր. Կոմիտէի եւ անոր դիւանի յարաբերական գործերը քննող յանձնախմբի տուած տեղեկութիւնները, այն համոզումը գոյացուց որ իսկապէս, հակառակ գործ դրուած բոլոր ջանքերուն, կարելի եղած չէր արտասահմանէն գործիչ մը ունենալ: Սակայն, Պատգ. ժողովը թելադրեց նորընտիր Կեդր. Կոմիտէին որ գէթ կազմակերպական կանոնագրի յօդ. 71ի գործադրութիւնը պահանջուի Արեւմտեան Բիւրոյէն:

Պատգ. ժողովը նկատողութեան առնելով մնայուն գործիչի մը անհրաժեշտ պէտքը Արեւմուտքի շրջանին համար, ընտրեց ընկեր Ս. Չ. Իբրեւ մնայուն գործիչ յիշեալ շրջանին համար: Բայց, որովհետեւ, ընկեր Ս. Չ. դպրոցէն ընթացաւարտ կ'ըլլայ 1909ի տարուայ Յունիսին, անոր տեղը առժամապէս նշանակուեցաւ ընկեր Ն. Թ.:

ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՀԵՐՈՄՆԵՐՈՒ ԱԼՊՈՍ ԵՒ ԴՐՕՇԱԿԻ ՀԱՒԱՔԱԾՈՑ: Յեղափոխական հերոսներու այլ պոմի եւ «Դրօշակ»ի քսանամեակի առթիւ «Դրօշակ»ի հաւաքածոյի մը պատրաստութեան անհրաժեշտ պէտքը շեշտուեցաւ Պատգ. ժողովին կողմէ: Այս խնդիրը ընդհանուր կազմակերպական հանգամանք ունենալուն համար, թելադրուեցաւ նորընտիր Կեդր. Կոմիտէին որ այս մասին ղիմէ Արեւմտեան Բիւրոյին:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՄՏԱՒՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄ: Ամերիկայի ընկերներու մտային վիճակը աւելի բարձրացնելու համար, Պատգ. ժողովը կը յանձնարարէ Կեդր. Կոմիտէին եւ Շրջ. խորհուրդներուն սարքել հրապարակային դասախօսութիւններ, լսարանական ժողովներ եւ նոյնանման ընկերական հաւաքումներ, ուր կրնան լուսաբանուիլ եւ բացատրուիլ կազմակերպութեան ծրագիրը եւ սկզբունքը: Միեւնոյն ատեն ընկերներ օգտուելու են կազմակերպական այլեւայլ հրատարակութիւններէն:

ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ՀԱՐՈՒՍՏՆԵՐԻՆ ԴՐԱՄԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ: Պատգ. ժողովը, նկատողութեան առնելով Հայաստանի կարեւոր վայրերու մէջ մամուլ հաստատելու հարցը, որը արտաքին նիւթական օժանդա-

կուլտուրայի և միայն, յանձնարարեց նորընտիր Կեդր. Կոմիտէին շարունակել 1908ի Կեդր. Կոմիտէին կողմէ արդէն ձեռնարկուած Հանգանակութիւնը ամբ- թիկահայ շարունակելուն:

ՈՒԵՍԹ ՀՈՊՈՔՆԻ ԵՒ ՓԷԹԸՐՄՆԻ ՏԻԳՐԱՆԱ- ԿԵՐՏՑԻ ԸՆԿԵՐՆԵՐՆԵՐՈՒ ԴԻՄՈՒՄԸ: Ուեսթ Հոպոք- նի եւ Փէթըրմի տիգրանակերտցի ընկերներ — իրենց հետ ունենալով նաեւ համակիր համագիւղացիներ — մասնա- լոր դիմումով մը Պատգ. ժողովին բաղձանք կը յայտնէ- ին որ — Դաշնակցութեան հովանաւորութեան տակ — Տիգրանակերտի մէջ հայաթերթ մը հաստատուի:

Պատգ. ժողովը, նկատի ունենալով որ թերթի նիւ- թական օժանդակութիւնը տեղացիներէն ապահովուած է արդէն բաժանորդագրուած գումարով մը եւ կազմա- կերպութեան վրայ ալ բեռ ըլլալու հանգամանք չունի, յանձնարարեց նորընտիր Կեդր. Կոմիտէին դիմել ուր որ անկ է, անոնց բաղձանքին գոհացում տալու համար: Նոյն որոշումը անցուց նաեւ այդ շրջանին համար կա- ռող գործիչ մը հայթայթելու խնդրանքի մասին, միեւ- նոյն պայմաններու տակ:

ԵՐԿՐԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ: Երկրի այլեւայլ գաւառներու ժողովրդի մէջ ինքնա- պաշտպանութեան գործը առաջ տանելու հարցը խոր- հրդածութեան առնելով, Պատգ. ժողովը եկաւ հետեւ- եայ եզրակացութեան,— Պատգ. ժողովը, նկատի ունե- նալով Երկրի ժողովրդի ինքնապաշտպանութեան գոր- ծը առաջ տանելու անհրաժեշտ պէտքը, կը յանձնարարէ բոլոր կոմիտէներուն նախաձեռնարկ ըլլալ իրենց տե- ղին վրայ համագիւղացիական շարժումներ առաջ բե- ռելու կամ ուժ տալ արդէն այս առթիւ սկսուած շար- ժումներուն, իրենց բնագաւառի ժողովրդի ինքնա- պաշտպանութեան գործը պատրաստելու եւ զայն ա- մուր եւ հաստատուն հիմերուն վրայ դնելու համար, որու մասին արդէն Դաշնակցութեան վերջի չորրորդ Ընդհ. ժողովը որոշում անցուցած էր:

Ամերիկայէն բնագաւառներու համար գործիչներ զրկելու մասին ալ թելադրուեցաւ նորընտիր Կեդր. Կո- միտէին որ միջոցներ ձեռք առնէ կարող ընկերներ ճա- րելու, տալով անոնց պէտք եղած դիւրութիւնները:

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ՆԱՄԱԿԸ: Պատգ. ժողովի գրադումներու միջոցին Արեւմտեան Բիւրոյին ստաց- ւեցաւ նամակ մը, որ Ամերիկայի շրջանի գործունէու- թիւնը գնահատելէ ետք, ցաւ կը յայտնէր որ — հակա- ռակ գործ դրուած ջանքերուն — չկրցաւ կարող գործիչ մը ճարել Ամերիկայի շրջանին համար: Քանի որ դրսէն կարող ուժերու գալը անհաւանական կը թուի ներկա- յիս — նամակը կը թելադրէր — տեղական ուժեր գոր- ծածուկելու են:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՈՒՄ: Դաշնակցու- թեան խորհուրդի որոշումով հինգերորդ Ընդհ. ժողովը պիտի գումարուէր 1909ի տարուան սկիզբը, բայց, վեր- ջերս թուրքիոյ մէջ տեղ ունեցած քաղաքական փոփոխու- թեանց պատճառով յետաձգուեցաւ ժողովի գումարումը առժամայէս: Այս պարագան դիւրութիւն պիտի տայ թրքահայաստանի մարմիններուն որ աւելի ուժեղացած ներկայանան ժողովին: Պատգ. ժողովը, նկատի ունենալով այս կարգադրութիւնը, որոշեց որ, երբ ժողովի հրաւերը ստացուի, արտակարգ ժողով գումարուի ներկայացուած հարցերը մշակելու եւ պատգամաւոր ընտրելու համար:

ԱՅԼԵՒԱՅԼ ԴԻՄՈՒՄՆԵՐ: Պատգ. ժողովին եկած էին անհատական այլեւայլ դիմումներ, որոնց կարգադրու- թիւնը յանձնարարուեցաւ նորընտիր Կեդր. Կոմիտէին:

Պատգ. ժողովը նկատողութեան առաւ կազմ. գանձէն «Հայրենիք»ին եղած յաւելուածական 1500 տալէրի փո- խատուութեան խնդիրը: Պատգ. ժողովը, այս մասին բա- ցատրութիւններ լսելէ ետք, Կեդր. Կոմիտէի այդ արարքը իրաւասութեան սահմանէն չեղում մը նկատեց, ընդունե- լով հանդերձ այդ փոխատուութեան անհրաժեշտու- թիւնը: Թելադրուեցաւ նորընտիր Կեդր. Կոմիտէին ամէն միջոց գործ դնելով փութացնել այդ փոխատուութեան վերադարձը եւ չկրկնել այդ կարգի զանցառութիւնները:

Կեդր. Կոմիտէի յարաբերական գործերը քննող յանձնախումբի տեղեկագրէն տեսնուեցաւ որ Կ. Կոմիտէ- ները վերջի տարիներու մէջ արձանագրութեան տեսր պահած չեն: Պահանջուեցաւ նորընտիր Կ. Կոմիտէին յօդ. 73ի — ներքին կանոնագրի — գործադրութիւնը: Տեղեկագրէն տեսնուեցաւ նաեւ [որ] Երկրի եւ արտա- սահմանի մարմիններու եւ անհատ ընկեր գործիչներու հետ Կեդր. Կոմիտէի հաղորդակցութիւնները պահուած են կանոնաւորապէս:

«Հայրենիք»ի հաշիւները մանրամասնօրէն քննելու հա- մար, Պատգ. ժողովը ընտրեց երեք անձերէ բաղկացեալ յանձնախումբ մը, որ իր աշխատութեանց արդիւնքը պի- տի հաղորդէ կոմիտէներուն Կեդր. Կոմիտէի միջոցով:

«Հայրենիք»ի խմբագրա-վարչական մարմնի անդամ ընտրուեցաւ հետեւեալ ընկերները,— Յ. Զ., Տ. Ա., Վ. Ա., Ս. Ն. եւ Գ. Պ.: «Հայրենիք»ի խմբագիր նշանակուեցաւ ընկեր Յ. Զագամագճեան:

Կեդրոնական Կոմիտէի անդամ ընտրուեցան հետեւ- եալ ընկերները,— Յ. Զ., Ի. Շ., Գ. Պ., Ա. Ի. եւ Ն. Մ.:



ԱՄՓՈՓՈՒԱՄ
ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԻ
ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵՆԷՆ

Հ Ա Շ Ո Ւ Ե Կ Շ Ի Ո

Հ. Յ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ

1907 Դեկ. 31էն մինչև 1908 Դեկ. 31

ՍՈՒՏՔ		
Կոմիտէներէն	Անդրանիկի համար	Կազմ. տուրք
1.- Փրավիտենս		615.00
2.- Թրոյ		400.00
3.- Ուոթթաուս		400.00
4.- Լիմ	14.50	895.00
5.- Պրէնթրոս	68.00	880.00
6.- Սիւ Եորք	84.00	870.50
7.- Յէմիլթըն	50.00	850.00
8.- Շիքակօ		347.00
9.- Ռիչմոնտ		330.00
10.- Լօրէնս	10.00	809.35
11.- Ուեսթ Փուլմն	29.28	293.10
12.- Ուոքեյլըն	20.50	270.00
13.- Փօրթլանտ	20.00	250.00
14.- Յուայթնքվիլ	9.25	210.00
15.- Լօուէլ		200.00
16.- Սիւ Յէյվն		190.00
17.- Փէթրսն	6.50	175.00
18.- Պոսթըն		165.25
19.- Թամսնվիլ	14.00	158.59
20.- Սէշուէ	17.25	156.00
21.- Ուեսթ Յոպոքն	21.50	148.76
22.- Ռէյսիմ	16.00	120.00
23.- Նորթոք		123.00
24.- Սթրիլ ֆոլք	6.50	110.00
25.- Նիւարիփոք	14.50	105.00
26.- Յէյվրվիլ	10.00	104.00
27.- Իսթ Սէյնթ Լուիզ	28.00	100.00
28.- Կոլք		97.25
29.- Ուսթր		92.76
30.- Վուսսաքթ		90.00
31.- Ֆիլիտելֆիա	14.00	80.00
32.- Կրէնտ Ռէփիտ	16.00	66.75
33.- Պըֆլօ		45.00
34.- Տիթոյ	61.50	44.50
35.- Պրաթթըն		40.00
36.- Քէմփիճ	5.00	25.00
Կազմալուծուած կոմիտէներէ		26.04
Անհատ ընկերներէ		22.70
Կրէնթ Սիթի	66.00	
Ֆրէզնօ	12.00	
Կազմ. տուրքի գումարը		7403.55
Անդրանիկի գումարը		614.28

Այլեւայլ աղբիւրներ		
Ի նպաստ սովեալներու	– Գ.Յ.Գ. Նիւ Եորքի Թատ. երգեցիկ խմբէն	100.00
»	» – Լօրէնսի կոմիտէն, դաշտահանդէս	100.00
»	» – Փրավ. կոմիտէն, ներկայացում	82.00
»	կոռուղներու – Փրավ. տիկ. կոմիտէն, հանդէս-պագարտ	70.00
»	» – Շիք. կոմիտէն, երկու հարսանիքներ	57.50
»	բանտարկեալներու – Գ.Յ.Գ. Նիւ Եորքի Տիկ. Շաքէ խմբէն	90.00
»	բանտարկեալներու – Այլեւայլ միջոցներ	82.00
» Սերոբ Աղբիւրի ընտանիքին – «Հայրենիք»ի միջոցով		
Դրամի շահ – 1908ի տարուան		173.92
Ծախուած զինանշաններէն		122.50
«Գործ» թերթի բաժնեգիններէն		76.50
Ուեսթ Դոպրքնի տիգրանակերտցիներէն – ինքնապաշտպան. գործի համար		50.00
Փանձանակներէ եւ ամերիկահայ նուիրատուներէ		27.46
1908ի տարուայ մուտքի գումարը		9050.74
Ե Լ Ք		
Արեւմտեան Բիւրոյին		6500.00
«Հայրենիք»ին – փոխատուութիւն, տպարանի հաստատման համար		3500.00
Տ. Աստիկեանին – 53 շաբաթական		450.00
– ճանապարհածախս Նիւ Եորքի շրջանի այցելութեան		87.00
Ն. Թաշճեանին – 53 շաբաթական		424.00
Պոլսի Պատ. մարմնին – սովեալներու դրամը		282.00
Թ. Ճէլալեանին – 26 շաբաթական – Արեւմուտքի շրջանի այցելութեան համար		260.00
– ճանապարհարհածախս		80.72
Վասպուրականի Կեդր. կոմիտէին – սովեալներու դրամը, 1907ի շրջանէն		242.15
Յ. Չագմագճեանին – 26 շաբաթական		234.00
Վարդգէսին – բանտարկեալ		157.50
Խմոյին – ճանապարհածախս եւայլն		134.00
Նահատակուած Տ. Խարբուքլեանի պահ դրած դրամէն իր մօրը տրուած		114.00
Դիւանական ծախք եւայլն		113.69
Պալք. Կեդր. կոմիտէին – Պոտրումի եւ Իզմիրի բանտարկեալներուն համար		100.00
Յ. Ամատունի – 11 շաբաթական, Նիւ Եորքի շրջանի այցելութեան համար		88.00
– ճանապարհածախս		84.80
Կ. Կ.ի անդամներու եւ հեռուոր կոմ.երու պատգամաւորներու		
ճանապարհածախս 1907ի եւ 1908ի Պատգ. ժողովներու առթիւ		64.18
«Գործ» թերթին դրկուած		60.75
Արեւելեան Բիւրոյին – Տիգրանակերտցիներուն դրամը դրկուած		50.00
Իսթ Սէյնթ Լուիզի կոմիտէին – փոխատուութիւն անգործներու համար		50.00
1907ի եւ 1908ի Պատգ. ժողովներու սրահի վարձք		43.50
Չանազան ընկերներու ծախք – խորհրդակցական եւ ուրիշ ժողովներու համար		88.09
Անցագրերու համար ծախք		88.00
Կովկասեան վերջերու վերջին տպագրութեան համար		86.89
Դաշնակցութիւնը Ամերիկայի մէջ վաւերացնելու առթիւ		85.00
Նիւ Եորքի Շրջանական խորհրդի ծախք		82.24

Պոլսի Պատ. մարմնին – Սերոբ Աղբիւրի ընտանիքի դրամէն	29.50
Ուսանող կամաւորի մը տրուած	23.00
Պոսթընի Շրջ. խորհրդի ծախք	22.00
Զինանշանները	20.00
Հեռագիրներու ծախք – գործիչներու եւ ուրիշ խնդիրներու առթիւ	16.35
Նամակատուփի վարձք	12.00
Վարդին – ազատուած բանտարկեալ մը	9.50
Համագումար Ելքի	13332.86
1907էն գանձը մնացած	11067.41
1908ի մուտքի գումարը	9050.74
Համագումար	20118.15
Ելքի գումար	13332.85
Պատրաստ դրամ 1909ի գանձին մէջ	6785.29



Փաստ. 1397-31

3.- ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՄՇԱԿՈՒԱԾ Հ.Յ.Գ. Ե.Պ. ԸՆԳՀ. ԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՐ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿՈՍԻՏԵՆԵՐՈՒ ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԻՆ ԿՈՂՄԷ
ԳՈՒՄԱՐՈՒԱԾ ՊՈՍԹԸՆԻ ՄԷՋ, ՄԱՐՏ 20-21 1909

Չարգ: Դաշնակցութիւնը եւ Երիտասարդ թուրքերը:

Որոշում: Դաշնակցութիւնը Երիտասարդ թուրքերուն հետ գործակցի այնքան ատեն, որքան ատեն որ անոնք սահմանադրական կը մնան:

Չարգ: Մեր դիրքը սահմանադրութեան հանդէպ: Թուրքիոյ քաղաքական կազմը, - Ազգայնական հարցը:

Որոշ.: Ներկայ սահմանադրական օրինագիծը անբաւարար գտնելով, կը պահանջենք քաղաքական լայն ապակեղորոնացում, որ ազգերու ինքնօրինութիւնը կ'երաշխարհէր համաձայն Դաշնակցութեան սկզբունքին: Թուրքիան կազմող բոլոր ազգութիւններու իրաւունքները կը նկատուին նուիրական եւ անձեռնմխելի: Պայքարը կը մղուի պարագաներու համաձայն:

Չարգ: Մեր դիրքը դէպի Երիտասարդ թուրքերը:

Որոշ.: Փարիզի Համագումարէն եւ սահմանադրութիւնը հրատարակուելէ ետք, նկատի ունենալով Երիտասարդ թուրքերու «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» հատուածին ընթացքը եւ բռնած քաղաքական դիրքը Օսմ. երկրի բոլոր ժողովուրդներու հանդէպ, եւ մասնաւորապէս հայ ժողովուրդի իրաւունքներու բռնաբարձման գործին մէջ, Դաշնակցութիւնը այսուհետեւ, վերապահ դիրք մը բռնելու է հանդէպ այդ կուսակցութեան՝ իբրեւ բոլորովին հակառակ սկզբունքի հետեւող, եւ սերտ կապ պահպանել, առանց ազգութեան խտրութեան, միայն այն կազմակերպութիւններու հետ, որոնք իրենց աշխարհահայեացքով մօտ են Դաշնակցութեան ծրագրին եւ ջատագով ազգերու ինքնավարութեան գաղափարին:

Չարգ: Մեր դիրքը դէպի միւս յեղափոխական կուսակցութիւնները եւ ազգութիւնները:

Որոշ.: Համագործակցիլ բոլոր այն կուսակցութիւններուն եւ ազգութիւններուն հետ, որոնք իրենց աշխարհայեացքով մօտ են Դաշնակցութեան:

Չարգ: Համախմբում կուսակցութիւններու Օսմ. խորհրդարանին մէջ եւ դուրսը:

Որոշ.: Վերել տրուած որոշումի համաձայն շարժիլ:

Չարգ: Ազգային ներքին քաղաքականութիւն:

Որոշ.: Կազմակերպութիւնը ջանալու է իր ձեռքն առնել ազգային ներքին քաղաքականութեան ղեկավարութիւնը, եւ առաջ տանիլ զայն Դաշնակցութեան ծրագրի համաձայն:

Չարգ: Մեր դիրքը դէպի ռուս կառավարութիւնը եւ ռուս կուսակցութիւնները:

Որոշ.: Դաշնակցութիւնը, Դ.րդ Ընդհ. ժողովի որոշման համաձայն, շարունակէ արդէն սկսուած կռիւը, համերաշխելով ռուս յեղ. Ընկերվարական կուսակցութեան հետ:

Չարգ: Մեր դիրքը Պարսկաստանի շարժման հանդէպ:

Որոշ.: Նկատելով որ պարսիկ բռնապետութեան տապալումով՝ ազատութեան տեսակէտէ՝ կրկնակի օգուտներ պիտի ծնին թէ ռուս եւ թէ թուրք սահմանադրութեան, նկատելով նաեւ որ Պարսկաստանի հայ ժողովուրդը բախտակից ըլլալով դրացի պարսիկ ժողովրդին եւ իր գոյութիւնը հաւասարապէս վտանգուած է, Դաշնակցութիւնը ներքին կերպով աջակցելու է յեղափոխական շարժման, բայց երբ վտանգը ուղղակի հայ ժողովրդին կը հասնի, այն ատեն ամէն միջոց գործ դրուելու է անոնց պաշտպանութեան համար:

Չարգ: Դպրոցական, կուլտուրական եւ հասարակական գործունէութիւն:

Որոշ.: Դաշնակցութիւնը ամէն միջոց գործ դնելու է իր ձեռքն առնել հայ ժողովրդի կրթական եւ հասարակական գործերը եւ անոնց ուղղութիւն տալ իր աշխարհահայեացքին համապատասխանող:

Չարգ: Աշխատատեղական, քաղաքականութիւն, ընկերական գործունէութիւն, արհեստակցական, կուսակցական եւ ոչ-կուսակցական գիւղաց. միութիւնը:

Որոշ.: Ասոնք հայ ժողովրդի կեանքին մէջ իրականացնելու համար, Դաշնակցութիւնը աստիճանաբար գործելու է կազմակերպելու է, եւ այս շարժումները աւելի առաջ տանելու համար, անհրաժեշտ է բերանացի եւ գրաւոր փրոփակման:

Չարգ: Կազմակերպական կանոններու վերաքննութիւն:

Որոշ.: Կազմակերպական կանոններու յօդուած 71ի գործադրութիւնը կամ ջնջումը, 108-րդ յօդուածի բարե-

փոխում. Թուրքիոյ եւ Կովկասի Կեդր. Կոմիտէներու մեծամասնութիւնը որոշէ Ընդհ. ժողովի գումարման ատենը եւ վայրը:

Չարգ: Հաշուական դրութեան վերաքննութիւն եւ տուրքի կանոնաւորում:

Որոշ.: Դաշնակցութիւնը տուրքի եւ հաշուական միօրինակ դրութիւն մը հաստատելու է իր բոլոր շրջաններուն մէջ:

Չարգ: Դրամական եւ կարգապահական գեղծումներու մասին կարգադրութիւն:

Որոշում: Դաշնակցութիւնը իր շարքերը աւելի գտնելու եւ ամրապնդելու համար, անհրաժեշտ է խիստ կարգադրութիւններ ընել դրամական եւ կարգապահական գեղծումներու մասին:

Չարգ: Քաղաքական եւ մարտական խմբեր:

Որոշ.: Քաղաքական եւ մարտական խմբերու կազմակերպութիւնը անհրաժեշտ է:

Չարգ: Կարմիր խաչ եւ օժանդակ խմբեր:

Որոշ.: Անհրաժեշտ է կազմակերպել Կարմիր խաչը եւ օժանդակ խմբեր, որոնք ըլլալու են կուսակցութեան դրօշին տակ:

Չարգ: Միութեան եւ համերաշխութեան հարց:

Որոշ.: Հայ կազմակերպութիւններու եւ խմբակցութիւններու հետ համերաշխութեան մասին վճռական որոշում տալը թողով Թուրքիոյ պատգամաւորներու հայեցողութեան, անհրաժեշտ կը նկատուի Միջկուսակցական ատենաներու հաստատումը, որ թոյլ չտայ կուսակցական ռեւէ ընդհարումներու, որոնք կրնան ժողովուրդին հաւատքը խախտել հանդէպ յեղափոխութեան:

Չարգ: Մեր դիրքը ազգային իշխանութեանց հանդէպ:

Որոշում: Դաշնակցութիւնը ամէն ջանք գործ դնելու է ազգային սահմանադրութիւնը աւելի հաստատ հիմներու վրայ դնել, տալով անոր ռամկավարական սկզբունք, եւ դարձնել զայն ամբողջ Հայ ազգի իսկական ներկայացուցչութիւնը. կազմակերպութիւնը ամէն կերպով աշխատելու է իր ներկայացուցիչները ունենալ հոն, մեր ազգային կրթական եւ հասարակական գործերուն ուղղութիւն տալու համար:

Չարգ: Կիսապաշտօնական թերթեր:

Որոշ.: Կիսապաշտօնական թերթեր պէտք է շարունակել, բայց անոնք կազմակերպութեան հանդէպ հակասական ուղղութիւն ցոյց տալու չեն:

Չարգ: Պաշտօնական թերթի մը հրատարակութիւնը Պոլսոյ մէջ:

Որոշ.: Պաշտօնական հայերէն օրաթերթի մը հրատարակութեան գատ, պէտք է նաեւ հրատարակել թուրքերէն ամսաթերթ մը, հայ ժողովուրդը եւ անոր պահանջները թուրքերուն եւ քիւրտերուն ծանօթացնելու համար:

Չարգ: Հայկական հարցը եւ 61-րդ յօդուածը:

Որոշ.: Քանի դեռ Օսմ. Սահմանադրութիւնը կատարեալ վստահութիւն չի ներշնչեր հայերուն, 61-րդ յօդուածը անխախտ մնալու է:

* * *

Արտակարգ պատգ. ժողովը, կազմակերպական կարգապահութեան հարցի խորհրդածութեան միջոցին, նկատողութեան առաւ Ներսէս Փափագեանի պարագան, որ Պոլսոյ պատասխանատու մարմինը կարգապահութեան հակառակ քայլ առած եղաւ, երբ պատասխանատու պաշտօն յանձնեց յիշեալ ընկերոջ, որը իր բարոյական թերութեան համար Ամերիկայի շրջանին մէջ պատասխանատու պաշտօն ստանձնելէ դադրեցուած էր առժամապէս: Պոլսոյ պատասխանատու մարմինը անտեսեց այս որոշումը:

* * *

Ժողովը, նկատողութեան առնելով նաեւ Վանի մէջ մատնութեան հետեւանքով զենքերու գրաւումի խնդիրը, կը պահանջէ որ Ընդհ. ժողովը խնդիրը մանրամասնօրէն քննելէ ետք, խիստ պատիժի ենթարկէ այդ մեծ եւ անդարմանելի կորուստին պատասխանատու եղողները:

Փաստ. 1396-97ա

4.- ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Ընկերներ,

Այս շրջաբերականով կը փոխանց յայտարարել կոմիտէներուն որ մեր Ամերիկայի տարեկան Պատգամաւորական ժողովը տեղի պիտի ունենայ առաջիկայ Դեկտեմբեր 24, 25, 26 եւ 27ի օրերը Պոսթընի մէջ:

Կոմիտէները երբ պատգամաւոր կ'ընտրեն, նկատողութեան առնելու են հետեւեալ խիստ կարեւոր կէտերը, որոնք անհրաժեշտ են գործի յաջողութեան տեսակէտէ: Ընտրուած պատգամաւորները ըլլալու են,— վստահելի, կարող եւ զաղտնապահ,— կազմակերպական գործերու ծանօթ,— տարեկան գէնքի տուրքերը վճարող,— եւ առնուազն երկու տարուայ դաշնակցական եղող: Պատգ. ժողովին ներկայացուելիք հարցերը շուտով պատրաստելու են կոմիտէները եւ ղրկեն Կեդր. Կոմիտէին Պատգ. ժողովը գումարուելէն առաջ կամ թէ պատգամաւորին հետ: Պատգամաւորները հետեւին բերելու են իրենց վկայագրերը կամ թէ կոմիտէները ղրկելու են Կեդր. Կոմիտէին ժողովէն առաջ: Պատգամաւորները Դեկտեմբեր 24ի Հինգշաբթի առաւօտ կանուխ Հայրենիքի տպարանը ըլլալու են, ուրկէ կ'առաջնորդուին ժողովի վայրը: Ընտրուած պատգամաւորներու ճամբու եւ ուրիշ ծախքերը կը վճարուին կոմիտէներու գանձէն: Պատգամաւոր ընտրելու պարագային, կոմիտէները նկատի ունենալու են Ամերիկայի ներքին կանոնագրի յօդուած 119ը: Տեղի հեռաւորութեան պատճառով, Արեւմուտքի շրջանը կ'ընտրէ երկու պատգամաւոր իսկ Քանադայի շրջանը մէկ: Այսպէս,—

Սէյնթ Լուիզ, իսկ Սէյնթ Լուիզ եւ Կրէնիթ Սիթի մէկ պատգամաւոր: Տիթթոյթ, Կրէնտ Ռէփիտ, Ուօքսին, Ուեսթ Փուլմն եւ Ռէյսին մէկ պատգամաւոր: Պրէնթֆրտ, Կոլթ եւ Հէմիլթն մէկ պատգամաւոր: Յիշեալ կոմիտէները խառն ժողովներով կ'ընտրեն պատգամաւորները: Տեղի հեռաւորութեան եւ ըլլալիք ծախքերու պատճառով երբ կոմիտէները չեն կրնար պատգամաւոր ղրկել, իրենց ձայնը կրնան տալ Կեդր. Կոմիտէին:

Կոմիտէներու մասնաւոր ուշադրութեան կը յանձնենք նախորդ տարուայ պատգամաւորական ժողովին կողմէ անցուած այն կարեւոր որոշումը, որ պարտադիր կ'ընէր կոմիտէներուն 1908ի հաշիւներու փակումը Պատգ. ժողովէն առաջ: Հակառակ պարագային պիտի զրկուին ժողովին մասնակցելու իրաւունքէն: Ահա այդ որոշումը,— «Պատգ. ժողովը քննեց կոմիտէներու իրաւասութեան հարցը, եւ նկատելով որ գրեթէ ամէն կոմիտէ միշտ տարի մը բաց ունի, եւ նկատելով մասնաւորապէս 1907ի տարուայ գործերու անյաջող վիճակը, որոշեց մինչեւ 1908ի տարուայ սկիզբը մնացած բոլոր ապուրիկ հաշիւները պարտադիր չընել, եւ 1908էն սկսած հաշիւները բացարձակապէս պարտադիր ընել, եւ առաջիկայ պատգամաւորական ժողովէն զրկել բոլոր այն կոմիտէները որոնք փակած չեն իրենց 1908ի հաշիւները: Այս որոշումը ինքնին այնքան պարզ է, որ պէտք չունինք երկար բարակ բացատրութիւններ տալու այդ մասին: Հետեւաբար, ամէն կոմիտէ ջանալու է որ գործադրէ այս որոշումը, հակառակ պարագային, ինչպէս ըսուեցաւ, Պատգ. ժողովը յիշեալ որոշումին համաձայն պիտի վարուի պարտագանց կոմիտէներու հանդէպ: Այն կոմիտէները որ ի վիճակի չեն գործադրելու այս որոշումը, համոզիչ եւ բանաւոր պատճառներ ներկայացնելու են Կեդր. Կոմիտէին կամ թէ Պատգ. ժողովին:

Մեր տրամադրութեան տակ գտնուած հաշիւներէն կը տեսնուի որ շատ մը կոմիտէներ տակաւին իրենց տարեկան հանգանակութիւնները կատարած չեն: Քանի որ դեռ Յ շաբաթ կայ Պատգ. ժողովին, կոմիտէները ջանալու են որ յիշեալ ժամանակամիջոցին մէջ իրենց հանգանակութիւնները կատարեն անպատճառ, եւ նաեւ ասկէ ետք կոմիտէները իրենց հրապարակային ժողովները յատկացնելու են հանգանակութեան:

Առանց մեր կողմէ բառ մը անգամ աւելցնելու, վստահ ենք որ ընկերները պիտի կրնան ըմբռնել կազմակերպութեան նիւթական պահանջներու ստիպողականութիւնը ներկայիս: Թէեւ ամէն դաշնակցական իր առանձին հոգսը եւ նեղութիւնը ունի, բայց պէտք չէ մոռնալ այն կենսական եւ հակա կէտը, որ կազմակերպութեան ուժը եւ զօրութիւնը կախում ունի մեր անհատական նիւթական, բարոյական եւ ֆիզիքական օժանդակութենէն:

* * *

Վերջերս, Թուրքիոյ մէջ հաստատուած սահմանադրութենէն օգտուելով, Ամերիկայի շրջանէն շատ մը ընկերներ սկսան Հայրենիք վերադառնալ: Աստուծոյ ուսմանք Ամերիկայէն մեկնելէ առաջ, դիմեցին մեզ հրահանգներ եւ թելադրութիւններ ստանալու մեզմէ՝ երկրին մէջ կազմակերպութեան օգտակար ըլլալու համար, ինչ ուղղութեամբ գործելու նկատմամբ:

Նկատի ունենալով մինչեւ հիմա եւ ասկէ ետքը ըլլալիք այս կարգի դիմումները, կարեւոր կը նկատենք այս մասին կարգ մը թելադրութիւններ ընել ընկերներուն եւ կոմիտէներուն, թէ ինչ պէտք է ընէ ընկեր մը Ամերիկայէն մեկնելէ առաջ եւ երկիր հասնելէ ետք: Ահա թելադրութիւնները — Ամերիկայէն մեկնելէ առաջ անհրաժեշտ է՝

1.- Ամէն մեկնող ընկեր իր նիւթական միջոցներուն վրայ դնելու է իր յոյսը եւ ոչ մէկ նիւթական ակնկալութիւն յուսալու է կազմակերպութենէն: Կազմակերպական օժանդակութեամբ երկիրը գործիչ-ընկերներ ղրկելու պարտականութիւնն ու որոշումը կ'իյնայ ձեռնհաս մարմիններուն վրայ:

2.- Իւրաքանչիւր մեկնող ընկեր պարտաւոր է կազմակերպութեան պատկանող իր բոլոր նիւթական եւ բարոյական հաշիւները փակել տեղին մարմինին հետ եւ ապա մեկնիլ: Նոյն ուղղութեամբ մարմիններու եւ ընկերներու ուշադրութիւնը կը հրաւիրենք «Հայրենիք»ի եւ կազմակերպական ուրիշ թերթերու բաժնեգրիներու գանձման մասին:

3.- Ընկերներու մեկնումով դատարկուած շարքերը անմիջապէս լրացնել եւ սեղմել վստահելի եւ գիտակից նոր անդամներով, պահպանելով կազմակերպութիւնը իր վիճակին եւ դիրքին մէջ, որովհետեւ ոչ մէկ կերպով թոյլատրելի է ենթադրել թէ կազմակերպութիւնը իր գոյութեան իրաւունքը կը կորսնցնէ արտասահմանի մէջ:

4.- Առաջուան պէս հոգ տանիլ անդամավճարներու կանոնաւոր գանձման, եւ նուիրատուութեանց ու հանգանակութեանց գործադրութեան, որովհետեւ ասկէ ետք երկրին մէջ գործունէութեան սահմանները աւելի կ'ընդունակուին եւ պահանջները աւելի կը բազմապատկուին: Երկրի ժողովուրդին տնտեսական, բարոյական, մտաւորական եւ քաղաքացիական զարգացման համար Դաշնակցութիւնը կոչուած է կատարելու հսկայական աշխատանք: Ասկէ զատ, Դաշնակցութիւնը — իբրեւ քաղաքական որոշ կուսակցութիւն — պիտի պաշտպանէ աշխատաւոր հայ ժողովուրդի տնտեսական եւ ազգային շահերը, ունենալով իր ներկայացուցիչները Օսմ. Երեսփոխանական ժողովին մէջ:

Երկիր հասնելէ ետք անհրաժեշտ է ընկերներու համար — 1.- Պրոպականտ մղել Դաշնակցութեան սկզբունքներուն համար, եւ կազմել խումբեր ու մարմիններ համաձայն մեր կազմակերպութեան օրէնքներուն:

2.- Անմիջապէս կապուիլ տեղին կամ մօտաւոր վայրին մէջ արդէն գոյութիւն ունեցող մարմինին հետ: 3.- Յատկապէս ուժ տալ ինքնապաշտպանութեան գործին — զինուելով եւ զինելով ժողովուրդը, որպէսզի փորձութեանց եւ յետադիմութեան պարագային յանկարծակիի չգայ երկիրը: Բայց եւ այնպէս այս զինումը պէտք է ըլլայ մեծ խոհեմութեամբ եւ զգուշաւորութեամբ, առանց մագի չափ կասկածի տեղի տալու որ այդ պատրաստութիւնները կը կատարուին ընդդէմ թուրք տարրին եւ անջատողական ձգտումներու նպատակով:

4.- Ընդհակառակը, ջանալ խօսքով, բարեկամական յարաբերութեամբ եւ գործնական փորձերով ապացուցանել հայ ժողովուրդի եղբայրական եւ համերաշխական ոգին դէպի իր դրացի ազգերը, եւ ասանկով ամրացնել խաղաղասէր դրացնութեան եւ աշխատաւոր տարրերու համագործակցութեան կապերը: Որովհետեւ, ունենալով միեւնոյն շահերը եւ միեւնոյն պահանջները, մեզի ճակատագրուած է ապրիլ նոյն հողին վրայ եւ աշխատիլ միեւնոյն հայրենիքի ազատութեան եւ բարձրութեան համար եւ զգալ միեւնոյն ցաւերը ու միեւնոյն ուրախութիւնը:

5.- Հիմնել գրադարաններ, լսարաններ եւ ակումբներ, բաժանորդագրուել կազմակերպական հրատարակութեանց, ուժ տալ վարժարաններու զարգացման եւ բարեկեցման, կազմակերպել այլեւայլ միութիւններ, այսպէս սկսելով շինարար գործունէութեան եւ ժողովուրդի գիտակցական զարթոնումին:

6.- Ամէն ջանք թափել որպէսզի ասկէ առաջ բռնութեան միջոցով կորսնցուցած իր ստացուածքներուն՝ կալուած, հող, տուն, այգի եւ այլն — տէրը դառնայ, օրինաւոր միջոցներով եւ օրինաւոր բողոքներու ուժով:

7.- Հաւաքական կազմակերպութեամբ կռիւ մղել վաշխառուներու եւ ամէն տեսակ կեղեքիչներու դէմ. հիմնելով գիւղական, արհեստակցական միութիւններ, անոնց միջոցով օգնութեան հասնիլ կարօտեալներուն:

8.- Երեսփոխանական ընտրութեանց ատեն բուռն պայքար մղել, որպէսզի ընտրուին ոչ թէ աղաներ ու այլեւայլ հանգամանքներով դիրքի տիրացած անընդունակ անձնաւորութիւններ, այլ ժողովրդային պահանջներու գիտակցութիւնն ունեցող եւ ժողովրդային շահերու պաշտպան մարդիկ:

Ահա ասոնք են ընդհանուր գծերով կազմակերպական այն յանձնարարութիւնները որ կը ներկայացնենք մեր շրջանի կոմիտէներու եւ ընկերներու մասնաւոր ուշադրութեան: Միւս կողմէ ի հարկէ կազմակերպութիւնն ալ իր կարգին ղրկած է եւ պիտի ղրկէ յատուկ պրոպականտիստներ եւ գործիչներ պահանջուած ուղղութեամբ աշխատելու համար երկրին մէջ:

* * *

Ընկերներ, քանի որ Թուրքիոյ մէջ հաստատուած է սահմանադրական կառավարութիւն, Դաշնակցութիւնը որ ասկէ առաջ յեղափոխական միջոցներով կը ջանար հայ ժողովուրդի վիճակը բարելոքելու, ասկէ ետք պիտի գործէ քաղաքական-տնտեսական հողի վրայ խաղաղ միջոցներով, քանի դեռ այդ սահմանադրութիւնը հաստատուած կը մնայ ազգերու փոխադարձ վստահութեան եւ համերաշխութեան սկզբունքին վրայ: Ինչպէս թերթերուն հաղորման ղեկավարները կը տեսնուի, հայկական բոլոր գաւառներուն մէջ տիրող կազմակերպութիւնը Դաշնակցութիւնն է, որը արդիւնք է տարիներու անդուլ աշխատութեան ու գործունէութեան եւ անթիւ հերոսներու թափած սուրբ արիւնին: Անոնց արիւնով ցանուած սերմերու պտուղն է որ այսօր վայելելու բարեբախտութիւնը կ'ունենանք: Ասի-րիւնին: Անոնց արիւնով ցանուած սերմերու պտուղն է որ այսօր վայելելու բարեբախտութիւնը կ'ունենանք: Ասիկա յայտարարողը մենք չենք, այլ երէկուայ անհաշտ իսկ այօրուայ բարեկամ ճանչցուած թուրքերն են, որոնք ան-

Գալով տեղական կազմակերպական գործերուն, լարելու ենք մե բոլոր ուժերը, սարքելով հրապ[արակային] ժողովներ, դաշտային հանդէսներ եւ նոյնիսկ դասախօսութիւններ, միշտ եւ միշտ գործօն պահելու հասարակութեան գիտակցութիւնը իրենց վիճակին հանդէպ: Կոմիտէներ կանոնաւոր կերպով սարքելու են իրենց անդամական ժողովները:

Որպէսզի ընկերները գաղափար մը կազմեն նաեւ մեր գործադիր մարմիններու քաղաքական ուղղութեան եւ գործունէութեան մասին, քաղաքաբար մէջ կը բերենք Պոլսի Պատասխանատու մարմնի վերջին նամակին գլխաւոր մասերը:

— Սելանիկի իթթիհատեան Կեդր. Կոմիտէի քով բանակցութեան գացող մեր երեք ընկերները վերադարձան արդիւնաւոր հետեւանքով: Այդ բանակցութեան արդիւնքն են հետեւեալները.—

1.- Կազմել Պոլսի եւ երկրի գլխաւոր կեդրոններուն մէջ մեզմէ եւ իրենցմէ նշանակուած ներկայացուցիչներէ խառն մարմիններ, հաւաքաբար վարելու համար քաղաքական գործերը եւ կռուելու յետադիմական շարժման դէմ: Պոլսոյ մարմինը ուղղութիւն պիտի տայ գաւառի մարմիններուն:

2.- Իթթիհատեան ալ համակարծիք է մեզի՝ հիմնովին բարեփոխելու գաւառներու իշխանութեանց կազմը, նշանակելով վստահելի եւ սահմանադրական պաշտօնեաներ: Մենք խորհուրդ տուած ենք նախընտրել նոյնիսկ քաղաքական պաշտօնէութեանց մէջ զինուորականներ, որոնք աւելի յեղափոխական նկարագիր կը ներկայացնեն: Գտնուած են նոյնպէս համակարծիք այս առաջարկին:

3.- Մեր այն առաջարկին դէմ — որով պնդած ենք այս տարի իսկ սկսիլ քրիստոնեաներու զինուորագրութեան — լրջօրէն մէջ բերած են անյաղթելի դժուարութիւններ: Գործնականապէս անկարելի ցոյց տուած են նոյն օրէնքին այս տարի գործադրութիւնը, բայց գալ տարուան համար կասկած չկայ որ օրէնքը պիտի գործադրուի: Սակայն, նկատելով որ տնտեսապէս բոլորովին քայքայուած մէկ երկու գաւառներ միջոց չունին տուրք վճարելու, խոստացած են մեզի աջակցիլ որ Պիթիսի եւ Վանի կուսակալութեանց համար թոյլատու կարգադրութիւններ ձեռք առնուին իշխանութեանց կողմէ: Ասկէ զատ, խոստացած են եւ յօժարակամ, բանակին մէջ ընդունիլ այս տարի հայ կամաւորներ, պայմանով որ անոնց այս տարուան ծառայութիւնը հաշուի առնուի նաեւ զինուորական ընդհանուր ծառայութեանց շրջանին մէջ:

Խոստումներ տրուած են նաեւ գաւառներուն մէջ ալ՝ զինուորական դատարաններու հրատարակութեամբ՝ սկսիլ արմատական մաքրագործման, մէջտեղէն վերցնելով յետադիմական տարրերը: Կը կարծենք որ Պոլսի մէջ այս ուղղութեամբ սկսուած աշխատանքը ավարտելէ ետք կարգը պիտի գայ գաւառներուն: Երկրէն հասած հեռագիրները եւ նամակները իրաւ է թէ դեռ կը խօսին ընդհանուր երկիւղներու վրայ, բայց կարելի է խոստովանիլ որ անմիջական վտանգը անցած է արդէն: Կեդր. կառավարութեան դիրքը որքան կ'ուժեղանայ Պոլսի մէջ, գաւառներն ալ նոյն համեմատութեամբ կը կրեն ներգործութիւն, անշուշտ դէպի լաւը: Յոյս ունինք որ ներկայ դահլիճը երկար կեանք պիտի չունենայ, եւ շուտով պիտի յաջորդէ անոր աւելի նոր ու բոլորովին թարմ տարրերէ կազմուած դահլիճ մը: Կարեւորութիւն մի տաք խորհրդարանին կողմէ մէկ երկու օր առաջ դահլիճին համար տրուած վստահութեան քուէին. այդ քուէն տրուած է լոկ առժամանակեայ ըլլալու համար:

Մեր բժշկական ընկերները հասած են Ատանա, սակայն կ'երեւի թէ բոլորովին կլանուած են հարկեցուցիչ պատրաստութիւններով եւ ժամանակ ու միջոց չեն գտներ մեզի ղրկելու պէտք եղած տեղեկութիւնները: Այս շաբթու ճամբայ կ'ելլէ նաեւ ընկեր Զաւարեան Ատանա երթալու համար, պաշտօն ունենալով մեր կողմէն հետեւելու պաշտօնական քննութեանց, անցուդարձերուն, կառավարութեան ընթացքին եւ ուսումնասիրելու կոտորածը իր մանրամասնութեանց մէջ: Այժմ մէկ բան ճիշդ է որ ինքնապաշտպանութիւնը կատարուած է շատ ուժեղ եւ բաղձալի կերպով առաջին յարձակման միջոցին, այնպէս որ յաղթական կողմը եղած է հայկական թաղը: Մեծագոյն աղէտը սկսած է Տէտէ-Աղաճի զօրքին հասնելէն ետք, որոնք կրակի տուած են Հայոց թաղը եւ կատարած նախճիրներ:

Ընկերական բարեկենսական
ՀԱՅ ԹԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՄԵՐԻԿԱԹԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

11 Յունիս 1909
Պոսթըն Մէս.

ԱՆՉՆԱՆՈՒՆՆԵՐ

- Աբրահամ — Տես Ռուբէն (Գիւլիանդանեան Աբրահամ):
- Ագիլեան — 6, 42:
- Ագէֆ — 55, 170, 521:
- Այաճաճեան Երուանդ — 491, 513:
- Այէս (Պարսամեան) — 307:
- Ալի բէյ — 48, 213, 218, 473:
- Ալոյեան Գալուստ (Դարվիշ) — 6, 24, 428, 465, 466, 474:
- Ակնունի Է. (Մալումեան խաչատուր) — 3, 6, 22, 32, 67, 73, 76, 78-80, 84, 88, 91, 94, 95, 99, 100-103, 106, 108, 113, 114, 117, 119-121, 129, 131-136, 140, 144-146, 160-162, 185, 186, 189, 191, 195, 202, 204-207, 214, 217, 218, 224-226, 228-230-237-240, 256, 259, 271, 486:
- Ահարոնեան Աւետիս (Ղարիբ, Մանիչակ) — 65, 161, 210, 212, 218, 225, 412, 454:
- Աղայե — 88, 141:
- Աղա սէյիդ Աբդուլլահ — 47, 445:
- Աղա սէյիդ Մուհամմադ — 445:
- Աղբալեան Նիկոլ — Տես Ն. Հանգոյց:
- Ամատունի Թ. — 6, 42, 71, 79, 80, 89, 90, 94, 115, 530, 533, 534, 538:
- Անդրանկ (Պարոյր) — 6, 20, 23, 24, 40, 57, 102, 104, 146, 168, 169, 185, 186, 202, 204, 205, 238, 315, 481, 489, 544:
- Անտոն — Տես Զաւարեան Միմոն:
- Ապտիւլ Համիտ Բ. — 3, 4, 38, 45, 60, 67, 156, 166, 169, 182, 185-189, 198, 200, 203, 211-214, 232-235, 239, 242, 244, 259, 268, 272, 274, 275, 412, 414, 545:
- Առանձար (Գուլումճեան Միսաք) — 172, 404:
- Ասպետ (Պետիկեան Ասատուր) — 496-498, 509-513:
- Աստիկեան Տիգրան — 6, 22, 23, 28, 29, 74, 101, 102, 113, 115, 119, 145, 146, 533, 538:
- Ատիլ բէյ — 276:
- Ատրուշան — 415, 420:
- Արարատսկի — 21, 23, 140:
- Արմենակ (Շալճեան) — 307:
- Արմէն Գարօ (Փաստրմաճեան Գարեգին) — 6, 8, 21-23, 64, 91, 106, 119, 120-136, 186, 203, 206, 225, 239, 240, 266, 346, 347, 373, 379, 414:
- Արսէն քահանայ — 286:
- Աւերեան — 6, 107, 116, 145:

- Բարալեան Արտաշէս — 521, 522:
- Բարգէն Միւնի — 414:
- Բաթարեանեան Հայկ — 6, 23-25, 42, 47, 94, 126, 128, 131, 414, 426:
- Բահադդին Շաքիր — 186:
- Բադր խան — 29, 48, 49:
- Բասիլ — 13, 360, 366, 367:
- Բասմաջեան Կարապետ — 228, 237:
- Բարսեղեան Սարգիս (Վանայ Սարգիս, բուն անունով՝ Օտապաչեան Պօղոս) — 6, 17-19, 22, 23, 37, 56, 76, 80, 88, 91, 94, 100, 102, 103, 109, 113, 114, 116, 117, 120, 130, 132, 136, 144, 145, 147, 230, 237, 293, 306-308, 313, 346, 395, 488:
- Բեդիրխան գաղէ — 187:
- Բիստուատի — 164, 165:
- Բորիս — Տես խաչատրեան Սմբատ:
- Բրինտար (Մելքոնեան Արտաշէս) — 35, 37, 432:

- Գալֆայեան Թարութիւն — 160, 163, 168, 186, 187, 190, 202, 206, 230, 237, 279, 300, 409-411, 414, 421, 488:
- Գապոն — 37:
- Գարեգին — Տես Թադէոսեան Սամսոն:
- Գարեգին խաժակ — 36, 481:
- Գարեգին Նժդեհ — 481:
- Գարմէն (Մելքոնեան Տաճատ) — 145, 315, 331, 333-335, 488:
- Գէորգ Զաուր — Սարհատ (Ղազարեան) — 39, 40, 124, 167, 315, 395:
- Գիսակ — Տես Սերենկիւլեան Վարդգէս:
- Գիւլիանդանեան Աբրահամ — Տես Ռուբէն (Գիւլիանդանեան):
- Գորվանով — Տես Կորվանով:
- Գուրգէն (Մալեանց Պաղտասար) — 124:
- Գրիգոր (զինագործ) — 168, 225, 226, 229:
- Գրիգոր Զօհրապ — 62-64, 185, 187, 188, 191, 198, 199, 269, 276:
- Գրիգորեան Եփրեմ — 6, 23, 26, 27, 53:

- Դաշնակցական խնջօ (Ամիրեան) — 428:
- Դարվիշ — Տես Ալոյեան Գալուստ:
- Դաւթեան Թոնան — 6, 20-26, 32, 90, 93, 103, 114, 121, 122, 132, 133, 136, 145, 160, 164, 168, 169, 185, 186, 190, 229, 230, 283, 286, 488:
- Դաւիթ (Դհերցի) — 26, 38, 115, 162, 293, 297, 298, 301, 306:
- Դրօ (Կանայեան Դրաստամատ) — 203, 225, 229, 239, 241:

- Եղիկեան Կարապետ (Սեւ Աշոտ) — 15:
- Եռուստֆեան Թովհ. (Մելիք) — 414, 526, 529:
- Եսայեան Զապէլ — 185, 199, 286:
- Երուանդ — Տես Թոփչեան Եղիշէ:
- Եփրեմ — Տես Գրիգորեան Եփրեմ:
- Եփրեմ խան (Դաւթեան) — 128, 279, 428, 452, 453:

- Զարդարեան Ռուբէն (Ասլան) — 119, 120, 145, 185, 186, 190, 205, 206, 230, 238, 240, 245, 333, 419, 481, 483, 486, 488, 489, 496, 533:
- Զարեհ — 229, 239:
- Զաւարեան Միմոն (Անտոն) — 6, 20, 22, 23, 32, 35, 36, 39, 43, 50, 53-56, 61, 65, 67, 76-78, 80, 82, 86-92, 94, 95, 99, 101, 102, 104, 105, 107, 109, 110, 114, 116, 120, 121, 124, 126, 133, 144, 145, 160, 186, 188, 264, 269, 279, 282, 284, 333, 403, 411, 412, 485, 546:
- Զաւէն Արշակունի — Տես Լեապով:
- Զաւրեան Թ. — 145, 146, 165, 168, 327:
- Զուլալ (Կարապետեան Լեւոն) — 6, 86, 87, 92, 99, 102, 107, 114, 117, 128, 134, 355, 356, 391, 392:
- Զուլումաթ (Պասեցի Թովհ.) — 428:
- Զօհրապ — Տես Գրիգոր Զօհրապ:
- Զօրեան Բարթող (Ժիրայր) — 6, 14, 21-23, 28-30, 35, 52, 58, 59, 61, 62, 80, 86, 113, 117, 118, 131, 136, 481, 485, 486, 493-496, 502, 509-513, 515:

- էյին Դովլէ — 48, 434, 437, 449:
- էնվէր — 270:

Ընծայր (Գէորգ Մ. վրդ. Նալպանտեան) – 428, 439, 440, 443:

Թաղէնոսեան Սամսոն (Գարեգին) – 429, 440, 441, 443, 448, 449:

Թաթուլ (Արամեան Արամ) – 124:

Թաթաղ բէյ – 68, 78, 110, 186, 187:

Թաղի զաղէ – 48, 445, 448, 452:

Թերզեան Թ. – 281:

Թերզեան (Գերապաժառ) – 286:

Թերլեմէզեան Տաճատ – 293, 299, 300, 313:

Թէոս (Տեղադրիկեան) – 179:

Թիրեաբեան Հայկ (Հրաչ) – 145, 185, 189, 205, 206, 414, 419:

Թորգոմ – Տես Սերեմճեան Արտաշէս:

Թորոս – Տես Ալոյեան Գալուստ-Դարվիշ:

Թումանեան Յովհաննէս – 454:

Թոփչեան Եղիշէ (Երուանդ, Եղիշ) – 6, 22, 23, 32, 80, 107, 108, 110, 113-115, 119-121, 126, 128, 132, 145, 160, 245, 264, 460:

Ժիրայր – 279, 409:

Ժիրայր – Տես Զօրեան Բարթող:

Ժօրէս Ժան – 76, 161, 275, 276:

Ժօրիս (պելճիքացի) – 169, 237:

Իգօ խան – 434, 442, 449:

Իշխան* – (Միքայէլեան Նիկոլ) – 293, 313, 395:

Իփէկեան Գասպար – 366, 414, 415, 420:

Լեախով – 452:

Լեապով (Զաւէն Արշակունի) – 203, 228, 238:

Լէոնիդաս – 380, 383, 389:

Լինչ Հենրի – 165, 276:

Լիպարիտ – Տես Նազարեանց Լիպարիտ:

Լուսիկ – 393, 396, 401:

Խաչատուրեան Մինաս – 402:

Խաչատուրեան Սմբատ (Բորիս) – 185, 186, 190, 205:

Խարախանեան վրդ. Ներսէս – 178:

Խմօ (Ղազարեան Մարտիրոս) – 345, 530, 534, 538:

Խորխոռունի – 456:

Խրիմեան Մկրտիչ կաթողիկոս (Հայրիկ) – 36:

Կարաբէկով – 88, 141:

Կարճիկեան Խաչատուր – 145:

Կարվանով Եուզիան – 176, 203, 222, 238:

Կերչուին – 170:

Կիլիկեան (Պատրիկեան Զաքարիա) – 6, 107, 116, 119, 124, 279, 411:

Կլեմանսօ Ժորժ – 165, 166, 226:

Կոմս – Տես Փափազեան Վահան:

Կոչեն Դընի – 166, 276:

Կոտոյի Հաճի (Կոտոյեան Յակոբ) – 347:

Կորիւն (Գոմայ Իսօ) – 316, 317:

Կրէյ էտուարտ – 164, 165:

Հագգը պէյ – 186-188, 292:

Հալաճեան Պետրոս – 62-64, 188:

Հաճի Յակոբ – 333, 335:

Համազասպ (Փոքր-Հայք) – 370, 371:

Համարձուճեան Կոստի – 203:

Հայկ – Տես Բաթարեանեան Հայկ:

Հայր Աբրահամ (Սահակեան) – 145, 186, 454:

Հանգոյց (Աղբալեան Նիկոլ) – 171, 179, 402:

Հաջի Ամին էլ Զարր – 444:

Հաջի Մուրին աղ-Դովլէ – 444:

Հաջի Միրզա Իբրահիմ – 445:

Հասան – 186:

Հրայր Դժոխք (Ղազարեան Արմենակ) – 124, 315, 326, 395:

Հրանտ – Սարճանտ (Սարաֆեան) – 6, 42, 87, 88, 95:

Հրաչ – Տես Թիրեաբեան Հայկ:

Հիլմի փաշա – 188, 270:

Հիւսէյն Թոսուն – Տես Զերքէզով:

Ղասըմ բէգ – 124, 324-326:

Ճապոնացի (Ճապոնացի) – Տես Տէր Յակոբեան Ալեքսանդր:

Ճեմալ պէյ – 186, 188:

Ճեյալեան (Զալալեան) Թովմաս – 6, 21-23, 25, 27, 80, 91, 100, 116, 533, 538:

Ճեւատ պէյ – 288:

Ճեւտէթ Ապտիւլլահ – 215, 216:

Ճեւտէթ փաշա – 166:

Մազմանեան Վ. – 509, 510:

Մալխաս (Յովսէփեան Արտաշէս) – 128, 355, 441:

Մալումեան Խաչատուր – Տես Ակնունի է.:

Մահմէտ էֆէնտի (չերքէզ ցեղապետ) – 322:

Մամիկոնեան Արա – 521, 522:

Մանիչակ – Տես Ահարոնեան Աւետիս:

Մանկասի զաղէ – 186:

Մանուկեան Արամ – 179, 293, 297, 298, 300, 306, 313, 346, 440, 441, 443, 453:

Մաշթոց Մեսրոպ – 440, 441:

Մասեճեան Յովհ. խան – 279, 445:

Մատինեան Նիկոլ (Վահան) – 6, 19, 22, 44, 55, 71, 77, 84, 91, 113, 121, 128, 131, 132, 135, 140, 145, 146, 428, 451, 452:

Մար (Տէր Մարտիրոսեան Միք) – 65, 145, 160, 237, 409-411, 414:

Մարալ (Հրաչեայ Մարալ, Ղարիպեան Գրիգոր) – 6, 31, 38, 40, 57, 66, 78, 82, 102, 115, 185, 188, 237, 336, 345, 489:

Մարգարեան Մարտիրոս (Սաֆօ) – 15, 16:

Մարգպետ (Ղազարոսեան Ղազարոս) – 6, 59, 80, 107, 116, 119, 120, 124, 126, 146, 185, 315, 324-327, 346, 441, 443, 488:

Մարթին (Մուրատեան) – 172, 177, 403, 424, 528:

Մեղոն խան Միրզա – 46, 445, 447:

Մեղոնեան Հայկ – 521:

Մեղաւորեան (Մանասեան Սարգիս) – 465:

Մեղրիկեան Տիգրան – 336, 343, 344:

Միհրան – Տես Վանիկ:

Միհրան, միհրանական շարժում – 3, 30, 31, 35-37:

Մինասեան Սարգիս (Արամ-Աշոտ) – 145, 160, 300:

Միրզայեան Յովսէփ – 445, 447, 453:

Մհեր – Տես Օհանջանեան Համօ:

Մոստաշար Դովլէ – 46, 444:

Մուգաֆերիտոյին Շահ – 47, 444:

Մուշեղ եպօ. (Սերոբեան) – 274:

Մուշիր Դովլէ – 444:

Մուսա բէգ – 124, 324, 329:

Մուսայէլեան – 245, 533:

Մուրատ – Սերաստացի Մուրատ:

Մուրադ – Տես Պոյաճեան Համարձուճ:

Յակոբեան Թ. (Սարճատ) – 171, 172, 177, 179, 403, 404:

Յարուսթիւնեան Մարտիրոս – Տես Շիրակունի:

Յոսիկեան Արմենակ (Մլաք) – 327, 332, 347:

Յոնան – Տես Դաւթեան Յոնան:

Յովհաննիսեան Միքայէլ – Տես Վարանդեան Միքայէլ:

Յովսէփեան Արտաշէս – Տես Մալխաս:

Նազարեանց Լիպարիտ – 36:

Նազարէթ չաւուշ (Նորաշխարհեան) – 408:

Նաջի պէյ – 324:

Նիպոլ – 270:

Նիթրա – Տես Շահրիկեան Յարուսթիւն:

Նիկոլ Դուման (Տէր Յովհաննիսեան) – 6, 20, 23, 24, 31, 37, 41, 74, 78, 79, 82, 86, 88, 89, 91, 93, 101, 103, 104, 109, 110, 115, 121, 132, 135, 146, 186, 205:

Նիհատ – 186:

Նշանեան Ս. տոքթ. – 185, 200, 201:

Նորատունկեան Գարրիէլ – 106:

Նորսիկեան Ս. (Նալեան) – 528:

Շահխաթունեան Աւետիք – 24, 145:

Շահնազար Յովհաննէս – 161, 188, 230:

Շահպազ Բարսեղ (Պերճ) – 6, 22, 23, 41, 54, 65, 70, 78, 81, 87, 88, 93, 95, 99, 108, 110, 113, 115, 116, 123, 126, 134, 143, 145-147, 185, 187, 360, 364-367, 370, 373, 375, 380, 383, 384, 386, 389, 391, 392, 402, 419, 420, 488:

Շահպազ Վարդան – 88, 89, 293, 365:

Շահրիկեան Յարուսթիւն (Նիթրա) – 6, 14, 18, 23, 28, 32, 65, 66, 71, 75-78, 80, 81, 89, 91, 95, 111, 113-115, 120, 126, 132, 136, 145, 186, 189, 203, 205, 415, 419, 457, 463, 481:

Շեւքէթ Մահմուտ – 263:

Շեւքէթ փաշա – 188:

Շիրակունի (Յարուսթիւնեան Մարտիրոս) – 6, 46, 79, 82, 90, 93, 516, 521, 525, 533:

Շիսեան (Մինասեան Սուրէն) – 528, 529:

Չաբմազճեան Թ. – 171, 536, 538:

Չարուսճեան Մարտիրոս – 203, 225, 229, 428, 436:

Չերազ Մինաս – 228:

Չերքէզով (Հիւսէյն Թոսուն) – 40, 186, 239-241:

Չիլինգարեան Արտաշէս – 476:

Չոփուռեան (Թաղէնոսեան Լեւոն) – 457:

Չօպանեան Արշակ – 162, 223, 238:

Պապայեան Խոսրով – 419:

Պապիկեան Յակոբ – 269:

Պարոյր – Տես Անդրանիկ (Օզանեան):

Պարոյր (Փոքր-Հայք) – 366, 370, 371, 380, 382-384, 389:

Պարոյր Հայկազն – 415, 420:

Պետօ (Սերեմճեան) – 293:

Պերար Ալեքսանտր – 166:

Պերար Վիկտոր – 161, 164-166, 276:

Պետրոս (Տէր Յովհաննիսեան, գինագործ) – 168, 225, 229:

Պերճ – Տես Շահպազ Բարսեղ:

Պգտիկեան Զաքարիա – Տես Կիլիկեան:

Պիեռ – 6, 21-23, 27, 32, 53, 76, 78, 80, 90, 95, 102, 108, 110, 113, 116, 120, 133, 144, 145:

Պիշոն – 165, 166, 276:

Պլեւէ – 155:

Պոյաճեան Համարձուճ (Մուրադ) – 226, 228, 238, 269, 411:

Պրեսանսէ – Տես Փրեսանսէ:

Ջալալ փաշա – 306:

Ջալալեան – Տես Ճեյալեան Թովմաս:

Ջալալեան Ալեքսան – 445:

Ջանյաթեան Փ. – 35:

Ջաւախեան – 457:

Ջեվտէթ փաշա – Տես Ճեւտէթ փաշա:

Ռազպոյնիկոֆ Ա. – 222:

Ռակկա – 164, 165, 168:

Ռահմի պէյ – 186:

Ռալիմ խան – 48, 434:

Ռեմզի – 186:

Ռեմզի փաշա – 268:

Ռեյատ – 273:

Ռիզա Ահմէտ – 161, 162, 186, 210, 211, 213, 217-219, 223-225, 228, 229, 239, 241, 243, 245:

Ռիզալի բէգ – 124:

Ռիֆաթ փաշա – 276:

Ռոստոմ (Զօրեան Ստեփան) – 6, 20-24, 30, 36, 37, 40, 46, 54, 56, 76-78, 80, 90-92, 95, 100, 102, 109-111, 114, 115, 119-121, 127, 131-133, 135, 144, 145, 177, 204, 224, 225, 238-240, 335, 411, 427, 428, 444, 447, 451-453, 457, 458, 460, 481:

Ռուբէն (Արարատեան, բուն անունով Գիւլխանդանեան Աբրահամ) – 6, 22-25, 28-30, 32, 37, 39, 41, 42, 44, 47, 48, 50, 52, 54, 55, 57-59, 63, 65, 66, 73, 75, 76, 79, 80, 82, 84, 86, 88, 93, 96-97, 99, 100, 102, 103, 107, 114-116, 122, 126, 127, 131, 134, 144-146, 457, 460, 462:

Ռուբէն Տարօնացի – Տես Տէր Մինասեան Ռուբէն:

Ռուբինա (Արէշեան) – 203:

Ռօդոս – 457, 459:

Սաթթար խան – 29, 48, 49, 428, 433, 434, 437, 451:

Սաղաթէլեան Թ. – 6, 21, 36:

Սամատ խան – 48, 449:

Սայէթ Դր. – 186:

Սայիտ փաշա – 61, 78:

Սանտանաքի – 122, 489:

Սաշա – Տես Յակոբեան Ալեքսանդր:

Սապահ Գիւլեան – 238, 411:

*) «Նիւթեր»ու Գինգերորդ հատ

Սապահետտին – 3, 4, 59, 68, 186, 187, 212, 213, 224, 225, 237, 273, 313, 324, 326, 347, 348, 351, 421, 459:
 Սարաֆեան Յովսէփ – 221, 229, 230, 237:
 Սարաֆով Բորիս – 122, 162, 169, 176, 203, 222, 228, 238, 489:
 Սարգիս (Վանայ) – Տես Բարսեղեան Սարգիս:
 Սարհանտ – Տես Հրանտ:
 Սարհատ – Տես Գէորգ Չաւուշ:
 Սարհատ (Լեռնավայր) – Տես Յակոբեան Թ.:
 Սարհատ (Պարսկաստան) – 50:
 Սաֆօ – Տես Մարգարեան Մարտիրոս:
 Սեբաստացի Մուրատ (Խրիմեան) – 6, 20, 23, 39, 46, 61, 80, 82, 88, 91, 94, 104, 110, 128, 135, 185, 315, 335, 453, 488:
 Սեպուհ (Ներսէսեան Արշակ) – 6, 59, 80, 107, 119, 121, 146, 185, 315, 328, 330, 331, 333, 432, 488:
 Սերեմճեան Արտաշէս (Թորգոմ) – 15, 16:
 Սերենկիւրեան Վարդգէս (Գիսակ) – 6, 21, 23, 30, 31, 40, 52, 57, 61, 64, 65, 76, 82, 86, 90, 92, 94, 99, 101, 102, 106, 110, 113, 114, 117, 129, 145, 166, 185, 188, 269, 276, 282, 336, 346-348, 414, 481, 538:
 Սերոբ Աղբիւր (Վարդանեան) – 124, 167, 315, 538, 539:
 Սեւ Աշոտ – Տես Շիրիկեան Կարապետ:
 Սեքիմեան Աւետիս – 528, 529:
 Սէյիդ Ալի – 124, 285, 324-326, 332:
 Սէյիտ բէգ – 124:
 Սէյրատ – 307:
 Սիգ – Տես Վրացեան Սիմոն:
 Սիւնի – 380, 383, 389:
 Սիւնի Արսէն – 415, 419, 420:
 Սմբատ (Բորոյեան) – 28, 428:
 Սուսճեան Արշակ – 403, 408:
 Ստոյիպին – 154:

Վազգէն (Տէրոյեան Տիգրան) – 203, 313:
 Վազրիկ (Նաեւ Քազրիկ) – 6, 20, 21, 474, 476, 480:
 Վաթան (Մելոյեան Ղեւոնդ) – 488:
 Վալդեան Վալդ – 521:
 Վահագն – Տես Տաթևեան Վահագն:
 Վահան – Տես Մատինեան Նիկոյ:
 Վահան (Գայլ) – 6, 116, 120, 134, 360, 364-366:
 Վահան Մանուէլեան – 395:
 Վահագ – Տես Վառամեան Արշակ:
 Վաղինակ քահանայ – 88, 89:
 Վանայ Սարգիս – Տես Բարսեղեան Սարգիս:
 Վան-Փուշ (Ջրաղացականեան) – 457, 458:
 Վանիկ (Թերլեմէզեան Միհրան) – 6, 21, 22, 31, 33, 40, 50, 52, 63, 76, 80-82, 92, 96, 103, 115-117, 126, 128, 132, 140, 144:
 Վասիլէֆ Գրիգոր – 257, 490:
 Վարանդեան Միքայէլ (Յովհաննիսեան) – 20, 23, 145, 160, 161, 164, 165, 206, 210, 350:
 Վարդան Խանասորի (Մեհրաբեան Սարգիս) – 293:
 Վարդան վրդ. Յակոբեան (Յեսու) – 316-318:
 Վարդօ (Վարդ Պատրիկեան) – 171, 490:
 Վեհր բէյ – 326, 346, 347:
 Վառամեան Արշակ (Վահագ) – 17-19, 37, 64, 88, 89, 103, 145, 414, 430-432, 481, 488, 526:
 Վտարանդի (Արամ Չարրզ) – 484, 490, 513:
 Վրացեան Սիմոն (Սիգ) – 145, 246, 468:
 Վօսուղ-օդ-Դովլէ – 444:

Տաթևեան Վահագն – 25, 119, 120, 185, 186, 189, 191, 202, 204, 206, 207, 209, 237, 239, 414, 415, 420, 483:
 Տալիմ պէյ Հիւսէյին – 286, 287:
 Տաննապետեան Հրաչ – 284, 451:
 Տերսիմի Աշոտ – 345:
 Տէր Կարապետեան Գեղամ (Տատրակ) – 6, 21, 40, 59, 87, 315, 320:
 Տէր Մարտիրոսեան Միք. – Տես Մար:
 Տէր Մինասեան Ռուբէն (Տարօնացի) – 6, 20, 22, 23, 31, 38, 52, 56, 59, 61, 79, 104, 315, 316, 320, 395:
 Տէր Յակոբեան Ալ. (Ճապոնացի) – 6, 14, 22-24, 52, 53, 78, 93, 97, 100-102, 104, 109, 110, 114, 132, 145, 146:
 Տէրոյեան Չարուհի – 408:
 Տէր Ստեփանեան Թ. – 441, 443, 445, 447:
 Տիգրան – 298:
 Տիգրան Մամհուր – (Ճերիտ Ճեմիլ, Ամսէեան) – 392, 403, 408:
 Տոչքով Ս. – 222:

Ծովակ Տիրունի – 380, 381, 383, 384:

Փամպուքեան Երուանդ – 6, 185, 214, 269, 293, 315, 428, 454:
 Փայլակ (Դերձակեան Ռուբէն) – 443:
 Փաստրմաճեան Գարեգին – Տես Արմէն Գարօ:
 Փափագեան Ներսէս – 63, 333, 541:
 Փափագեան Վահան (Կոմս) – 6, 21, 106, 120, 141, 266, 293, 298-300, 306, 307, 313:
 Փիլոս – Տես Մարալ:
 Փորթուգալեան Մկրտիչ – 162, 221, 229, 230, 237:
 Փրեսանսէ – 164, 165, 226:

Քազրիկ – Տես Վազրիկ:
 Քաջագնունի Յովհ. – 189:
 Քեամիլ փաշա – 61, 62, 68, 78, 186:
 Քենտրեան Վառամշապուհ – 140:
 Քեռի (Գաւաթեան Արշակ) – 50, 127, 427, 434:
 Քէօռ Հիւսէյին փաշա – 324, 325:
 Քիյառ – 60, 161, 164, 165, 168-170, 226:
 Քութերիմսքի Տ. – 222:
 Քրիս (Ճեներճեան) – 15, 16:
 Քրիստափոր (Միքայէլեան) – 140, 481:
 Քրմոյեան Վահագն – 521, 522:

Օխիկեան – Տես Յոխիկեան Արմենակ:
 Օհանջանեան Համօ (Մհեր) – 313, 336, 345, 454:

Ճաթէ բէգ – 124:
 Ճաթուլլահ պէյ – 332:
 Ճավր Լէոպոլդ – 275:
 Ճերիտ բէյ – 110, 166, 188:
 Ճերիտ Ճեմիլ – Տես Տիգրան Մամհուր:
 Ճրանգեան Երուանդ – 476:
 Ճրէյլուս Արբաբ – 444:

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ազգանուէր (Այնթապի ենթակոմիտէ) – 280, 412, 413:
 Աթէնք – 168, 174:
 Ալեքսանդրապոլ (Քար, Քար-Ալիք) – 6, 20, 25, 34, 127, 129, 142, 454, 466-471:
 Ալեքսանդրիա – 123, 168, 171, 172, 174, 239, 274, 402, 404:
 Ալեքսանդրէթ – Տես Իսկնտերուն:
 Ալիս (Պաֆրա) – 381, 387:
 Ալմաւազ – 304, 324:
 Ալպանիա – 110, 113, 233:
 Ախալքալաք (Թմրուկ) – 454-456, 468:
 Ախալթ (Խլաթ) – 124, 315, 324, 328, 330, 332, 336:
 Ակն (Թաթառ) – 376, 379, 488:
 Ամասիա (Պոնտոս) – 360, 363, 380-382, 387, 388, 488:
 Ամերիկա (Միացեալ Նահանգներ) – 6, 10, 20, 25, 29, 50, 57, 58, 63, 65, 81, 98, 123, 127, 129, 132, 138, 142, 149, 157, 167, 170, 171, 174, 206, 220, 221, 228, 233, 245, 342, 345, 379, 403, 436, 486, 501, 519, 524, 526-546:
 Այգեստան – Տես Գանձակ:
 Այնթապ (Հովիտ, Հողարլուր) – 89, 125, 172, 280, 397, 402, 404, 405-407, 409-413:
 Այ Ստեֆանօ – Տես Սան Ստեֆանօ:
 Այտրն – 422, 426:
 Անգլիա – 10, 46, 47, 51, 164-167, 180, 445, 447:
 Անուշաւան – Տես Հիւսէյինիկ:
 Անտառ (Տուապսէ) – 475:
 Անտառապատ (Ղարաքիլիսա, Վանաձոր) – 471:
 Անտիոք (Կարմիր լեռ) – 281, 283, 284, 403, 404, 409:
 Ապառաժ – Տես Ղարաբաղ:
 Ապաստան – Տես Սոչի:
 Ատաբազար – 283-286, 415, 488:
 Ատանա (Խոր Վիրապ) – 4, 5, 29, 43, 44, 60, 62, 70, 91, 103, 117, 125, 140, 158, 165, 166, 185, 188, 189, 214, 256, 259, 268-270, 272-286, 288-292, 334, 409-411, 413, 426, 488, 519, 528, 546:
 Ատրիւր – 475:
 Ատրիանապոլիս – Տես Էտիրնէ:
 Ատրպատական – Տես Վրէժ, Վրէժստան:
 Արաբիա – 17, 70, 110, 113, 192, 232, 233, 312:
 Արաբիիր (Բլրակ) – 70, 370, 371, 375, 376, 488:
 Արդուին (Չորափոր) – 476:
 Արծուաբերդ – Տես Զէյթուն:
 Արմաշ – 286, 415:
 Արտաբիլ – 453:
 Արտազ – 440, 441, 443:
 Աւագան – Տես Տրապիզոն-Մովափ:
 Աւարայր – Տես Խոյ:
 Աւետարան (Խաչան գիւղ) – 297:
 Աւստրիա – 78, 166, 167:

Բաբերդ – 308, 347, 397:
 Բագառիճ – 344, 544:
 Բագէ – Տես Չմշկածաք:
 Բալկան – Տես Պալքան:
 Բալու (Մետրոպոլիս) – 125, 363, 370, 371, 390-392, 488:
 Բախէ (Պախճէ) – 282-285:
 Բաղէշ – Տես Պիթիլիս:
 Բայազէդ-Պայազիտ – 283:

Բանալի – Տես Սամսոն:
 Բաստ – Տես Սեբաստիա:
 Բարձրաւանդակ – Տես Սասուն:
 Բարձրաբերդ – Տես Էրզրում-Կարին:
 Բերդ (Շապին Գարահիսար) – 13, 360, 362, 365, 368, 468:
 Բերդաքար – Տես Խարբերդ:
 Բերքառատ – Տես Մալաթիա:
 Բիւրակն – Տես Խնուս:
 Բլուր – Տես Քիչմիշթեփէ:
 Բլրակ – Տես Արարկիր:
 Բլրակ (Վիշապաձորի շրջան) – Տես Ղարզան:
 Բուլանուր – 330, 332:

Գանձակ (Այգեստան) – 36, 142, 454:
 Գահաւանդ – Տես Չարսանճաք:
 Գահիրէ – 123, 171, 173, 215-217, 408:
 Գաւաշ – 294, 307:
 Գերմանիա – 30, 46, 78, 105, 110, 111, 166, 167, 171, 518, 521, 524:
 Գէօքսիւն – 43, 45:
 Գիլան – 429, 430, 432, 438:

Դաշտ – Տես Հալէպ:
 Դաշտ (Փոքր-Հայքի մէջ) – 360:
 Դերջան – 40, 336, 342-344:
 Դիլիջան (Շամուտ) – 468:
 Դուրան – Տես Տարօն:
 Դուրան-Բարձրաւանդակ – Տես Տարօն-Սասուն:

Եալթա – 32, 36:
 Եայլաղ (Անապ) – 476:
 Եարֆուղ – 284:
 Եգիպտոս – 6, 10, 29, 57, 58, 123, 127, 129, 138, 142, 149, 157, 167, 169-172, 180, 238, 281, 486:
 Եդեսիա – Տես Ուրֆա:
 Երլարզ – 186, 188, 209, 233, 271, 272, 278, 482:
 Երզրատ – 200-201, 363, 387, 388:
 Երմուրա (Սարափ) – 349:
 Երեւան (Մրգաստան) – 6, 14, 20, 24-26, 30, 34-36, 78, 93, 142, 434, 454:
 Երզնկա – 342, 347:
 Եւրոպա – 10, 12, 56, 58, 59, 67, 70, 85, 98, 138, 157, 161, 164, 166, 167, 170, 179, 203, 213, 232, 233, 235, 350, 369, 516-524:

Զէյթուն (Արծուաբերդ) – 43-45, 126, 134, 150, 279, 280, 283, 409, 488:
 Զուլիցբերիա – 30, 167:

Էլմիածին – 78, 333:
 Էնգէլի – 167, 428, 452:
 Էտիրնէ (Ատրիանապոլիս) – 198, 222, 258, 415:
 Էրզրում-Կարին (Բարձրաբերդ) – 6, 31, 32, 38, 40-42, 61-64, 78, 128, 129, 133, 142, 148, 162, 213, 264, 271, 273, 308, 312, 317, 333, 336-338, 342, 345-347, 353, 397, 398, 454, 467, 488:

Թաթառ – *Տես Ակն*:
Թարսուս – *Տես Տարսոն*:
Թաւրիզ – 46-49, 90, 99, 170, 427, 428, 431, 432, 434, 436-438, 442, 444, 445, 448, 450, 451:
Թեհրան (Շահ) – 49, 165, 225, 240, 427, 429, 430, 432, 438, 444, 445, 452:
Թիֆլիս (Մեծ քաղաք) – 8, 32, 36, 99, 100, 102, 127, 133, 142, 160, 186, 218, 224, 229, 283, 300, 313, 327, 410, 446, 447, 454, 473:
Թմրուկ – *Տես Ախալքալաք*:
Թուրքիա-Օսմանեան կայսրութիւն – 3-7, 22, 29, 35, 37, 46, 51-54, 56, 57, 59, 65-74, 76-78, 84, 90-95, 98-105, 107-114, 116-120, 123, 130, 132-139, 141, 143, 146, 148, 150-152, 154-163, 165-168, 178, 181-183, 185, 189, 192-194, 198, 199, 202, 203, 206, 209, 213-215, 220, 222, 223, 227, 229, 230, 233-235, 237-242, 245, 247, 250, 255, 257, 261, 264, 266, 269, 276-278, 290, 293, 305, 307-314, 328, 337-339, 350, 351, 366-369, 372, 379, 393, 416, 418, 446, 447, 450, 458-460, 477-479, 481, 482, 486, 492, 498-500, 502, 511, 523-525, 527, 533, 536, 540-544:
Թորքատ (Ձորայր) – 41, 342, 360, 363, 380-382, 387, 388, 488:

Ժրնել – 7, 12, 132, 133, 138, 151, 159-162, 164, 166, 170, 176, 182, 188, 203, 206, 210, 212, 213, 215, 218-221, 223-225, 228, 230, 232, 238, 245, 298, 300, 353, 450, 517, 519-521, 528:
Ժլատ – *Նալբանդ (Հիւս. Կովկաս)* – 142:

Իզմիտ (Նիկոմիդիա) – 191, 271, 415:
Իզմիր-Չմիւռնիա (Ոսկեհանք) – 6, 20, 25, 42, 61, 79, 126, 129, 142, 160, 161, 163, 166, 174, 175, 179, 186, 187, 189, 190, 201, 202, 204, 206, 256, 271, 272, 274, 283, 342, 409, 411, 414, 421-426, 487:
Իսկենտերուն-Ալեքսանդրէթ – 280, 409, 411:
Իտալիա – 160, 164-168, 180:
Իրան – *Տես Պարսկաստան*:

Լահէյ – 10, 29, 161, 175, 349:
Լեմպերկ – 59:
Լեոնապար – 293, 394, 396, 336, 395:
Լեոնասար – *Տես Խարբերդ*:
Լեոնավայր (Կիլիկիա) – 5, 6, 10, 29, 43-45, 125, 126, 134, 139, 142, 143, 148, 152, 153, 160, 165-168, 172-175, 177, 179, 180, 185, 187, 268, 269, 272, 273, 278, 280, 402-413, 488:
Լիմասոլ – 167:
Լիւ – *Տես Պոլիս*:
Լիֆլանդիա (Լիվանիա) – 154:
Լճէ – 392:
Լոնտոն – 160, 164, 165, 170, 221, 276, 528:
Լոռիստան – 446:
Լոզան – 160, 164, 517-520:

Խաչան – *Տես Աւետարան*:
Խասսա – 284, 285:
Խարբերդ (Լեոնասար, Բերդաբար) – 6, 41, 42, 46, 61, 114, 125, 126, 129, 142, 149, 256, 273, 282, 317, 360, 363, 365, 370-372, 378, 379, 488, 529, 530:
Խիզան – 124, 303, 324:
Խնուս – 40, 324, 330, 336, 337, 341, 347:
Խոյ (Աւարայր) – 48-50, 128, 297, 427, 429, 433, 438, 440, 441, 443, 449-451:
Խորձոր – *Տես Քղի*:

Մաղկաձոր (Բուժայիս) – 474, 476:
Մոց – *Տես Պէյրուսթ*:

Կարաց – 484, 494, 495, 497, 503, 515:
Կայան – *Տես Մարզուան*:
Կայծակ – *Տես Հաճի գիւղ*:
Կարին (Բարձրաբերդ) – *Տես էրզրում*:
Կարկառ 303, 324:
Կարճկան – 106, 293:
Կարմիր (Ղրիմսկ) – 474:
Կարմիր լեռ – *Տես Անտիոք*:
Կարս (Ջրաբերդ) – 129, 142, 466, 467:
Կարս-պազար – 43, 45, 125, 268, 285, 411:
Կեսարիա (Բարձր սար) – 200:
Կիլիկիա – *Տես Լեոնավայր*:
Կիպրոս – 125, 167, 528:
Կիրասոն (Փառնակ) – 149, 349, 354, 356:
Կիւմիւշխանէ (Լեոնաշղթայ) – 349:
Կիւրին (Քարձոր) – 323, 363, 404:
Կյորիկ (Թէոդոսիա) – 476:
Կովկաս (Սարուստան) – 6, 10, 11, 17, 24, 32, 34, 36, 48-53, 55-57, 64, 65, 75, 76, 80, 83, 84, 88, 101, 108, 109-113, 117, 118, 121, 123, 128, 132-135, 143, 146-148, 153, 156, 159, 162, 167, 178, 179, 206, 240, 277, 294, 333, 335, 340, 348, 367, 410, 417, 427, 434, 450, 454-480, 499, 500, 523-525, 533, 541:
Կրանտոզար – 56,

Հազգօ – 390-392:
Հազրօ – 392, 396:
Հալպ (Դաշտ) – 125, 140, 168, 172, 274, 280, 283, 398, 402-404, 406, 409-411, 488:
Հաճրն – 43-45, 78, 125, 126, 268, 282-286:
Հաճի գիւղ (Կայծակ) – 380-382, 387, 388:
Համիտիէ – 282, 284, 285:
Հանէ – 392:
Հապէշխատան – 167:
Հասան Պէյլի – 285:
Հիւսէյնիկ (Անուշուան) – 379:
Հիւսնի Մանսուր – 374:
Հնդկաստան – 46, 167, 279:
Հողարուր – *Տես Այնթապ*:
Հովիտ – *Տես Այնթապ*:
Հրաբուխ (Փոքր-Հալքի մէջ) – 380:

Ձորայր – *Տես Թորքատ*:

Ղազուին – 279, 428, 451:
Ղարաբաղ (Ապառաժ) – 142, 454, 466:
Ղարաղաղ – 435, 437, 446, 451:
Ղարզան – 390-392, 394:

Ճիպին – 407:
Ճիւլամերկ (Չուլամերկ) – 304:

Մալաթիա (Բերքառատ) – 79, 256, 360, 370, 371, 373, 374, 488:
Մակեդոնիա – 3, 17, 60, 110, 111, 163, 192, 210, 213, 214, 233, 235, 241-243, 259, 283, 312:
Մակու – 427, 442, 443, 448:
Մաղնիսա – 421, 422, 425:
Մամախաթուն – 342-344:

Մամուրէթ իւլ Ազիզ – *Տես Խարբերդ*:
Մամրտանք – 303, 324:
Մանազկերտ – 330, 332:
Մանջուրիա – 46, 155:
Մարանդ – 48, 49:
Մարաշ (Սահմանաբերդ) – 125, 278, 280, 284, 407, 488:
Մարզուան (Կայան) – 6, 14, 20, 25, 42, 44, 45, 81, 87, 126, 129, 142, 360, 363, 382, 384-389, 488:
Մարսէյլ – 221, 229, 230, 237, 489:
Մեծ քաղաք – *Տես Թիֆլիս*:
Մենաւոր (Թաղէոս առաքեալի վանք) – 297, 308, 427, 434, 438-443:
Մերսին – 283, 285, 410:
Մինարէթ – *Տես Սալմաստ*:
Միսիս – 282-284:
Միւնիխ – 245, 517-520:
Մոկս – 293, 307, 324:
Մոնաստր – 222, 230, 242:
Մուսամբար – 28, 435:
Մուշ – *Տես Տարսոն*:
Մուֆարդին – *Նիքիկերտ* – *Տես Փրակերթօ*:
Մրգաստան – *Տես Երեւան*:

Յունաստան – 167, 189:

Նաջաթ – 47:
Նարեկ գիւղ – 38:
Նաւահանգիստ (Պաթում) – 6, 20, 24, 27, 129, 142, 213, 218, 454, 472-476:
Նիզիպ – 406:
Նիկոմիդիա – *Տես Իզմիտ*:
Նիւ Եորք – 526-528, 530, 531, 534, 537, 538:
Նովորոսիսկ (Նորքաղաք) – 476:
Նորտուզ – 304:
Նիքիկերտ – *Տես Փրակերթօ*:

Շահսեփան – 446:
Շամ, Շամիր – *Տես Վասպուրական-Վան*:
Շապին Գարահիսար – *Տես Բերդ*:
Շատախ – 79, 106, 293, 307, 324:
Շէխլան – 323:
Շէյխ Մուրատ – 45, 125:
Շէնիկ – 331:
Շիքալօ – 532, 534, 537, 538:
Շումլա – 491, 511:
Շուշնամերկ – 331:
Շտուտգարտ – 10, 29, 161, 167, 170, 349:

Ոսկանապատ (Պաքու) – 6, 20, 24, 32, 36, 88, 100, 112, 113, 127-129, 142, 174, 283, 436, 449, 454, 457, 459, 463, 465:
Ոսկեհանք – *Տես Իզմիր*:
Որոտում – *Տես Տիլիլիկ*:
Ուոթրթաուն – 532, 537:
Ուսթըր – 527, 530:
Ուրմիա (Փարոս) – 48, 50, 128, 427, 429-432, 438, 449, 451:
Ուրֆա-Երեսիա (Աւազան) – 402, 404-408, 488:

Չարչամպա – 387, 388:
Չարսանճաք (Գահաւանդ) – 370, 371, 377, 378:
Չէնկիլէր – 415:

Չմշկածագ (Բազէ) – 370, 371:
Չնգուշ – 392:
Չորք Մարզուան (Տէօրթ Եոլ) – 43, 45, 125, 126, 268, 278, 279, 283, 285, 409-411:

Պաթում (Բաթում) – *Տես Նաւահանգիստ*:
Պալբան (Բալիան) – 6, 7, 10, 14, 20, 25, 29, 32, 57, 58, 64, 71, 88, 123, 127, 129, 138, 142, 149, 157, 163, 164, 167, 169-171, 173, 174, 190, 205, 239, 278, 279, 481-515:
Պանտրմա – 415, 416:
Պարիզ – *Տես Փարիզ*:
Պարտիզակ (Պաղէճիկ) – 42, 273, 283, 286, 415:
Պարսկաստան (Իրան) – 3, 5, 11, 22, 24, 29, 31, 37, 46-48, 50-52, 68, 78, 79, 83, 84, 88, 90, 95, 101, 104, 107, 121, 127, 128, 132-134, 137, 143, 150, 153-155, 157-159, 164, 165, 167, 168, 170, 176, 200, 204, 224, 226, 239, 240, 244, 279, 335, 340, 366, 369, 372, 411, 417, 425, 427-454, 460, 467, 478, 481, 499, 500, 523, 524, 540:
Պաքու – *Տես Ոսկանապատ*:
Պաֆրա – *Տես Ալիս*:
Պելճիքա – 122, 167, 169:
Պեհեսնի – 374:
Պետերբուրգ (Հիւսիսակերտ) – 225:
Պերլին – 166, 170, 446, 517, 520:
Պէյրուսթ (Մոց) – 172, 173, 281, 282, 398, 402-404, 409, 412, 487:
Պիթիս (Սալնոյ ձոր) – 6, 91, 107, 124, 142, 148, 188, 214, 315, 325-327, 330, 332, 335, 336, 346, 347, 390, 397, 488, 546:
Պիլեճիկ – 415:
Պիրեճիկ – 407:
Պչերիկ – 392, 396:
Պոլիս (Լիւս, Վիշապ, Կոռածաղիկ) – 4, 6, 7, 31, 32, 35, 42, 59-61, 63-66, 69, 77, 79, 98, 100, 102, 107, 125-127, 129, 131-133, 142, 159-161, 163-170, 180, 185-191, 193-198, 200-209, 214, 222, 224, 225, 239, 243, 245, 252, 255, 256, 258, 259, 261, 264, 266, 269-276, 281-283, 285, 290-292, 305, 307, 308, 312, 330, 331, 336, 338, 340, 346, 354, 360, 363, 364, 379, 386, 392, 398, 410-426, 447, 454, 459, 475, 481, 486-489, 502, 526-528, 546:
Պոնտոս – *Տես Ամասիա*:
Պոսթըն – 298, 400, 527, 528, 530, 532, 535, 537, 539, 542, 544:
Պոտրում – 245, 421, 538:
Պուկարիա – 5, 51, 58, 109, 123, 149, 160, 163, 167, 170, 171, 180, 189, 203, 204, 206, 241, 446, 447, 481-515, 519, 524, 533:
Պումպուլու – 407:
Պուրկաղ – 483, 485, 494, 495, 515:
Պուրէշ – 123, 483, 491, 492, 494, 495, 498, 502, 509, 514, 515:
Պրալա – 484, 495-497, 515:
Պրիւքսէլ – 10, 160, 161, 517:
Պրուսա – 271, 415, 426, 488:

Ջերմուկ – 392:
Ջուլֆա (Հին) – 29, 49, 127, 449, 451:
Ջրաբերդ – *Տես Կարս*:

Ռահուան – 124:
Ռաշտ – 47, 49, 128, 428, 451, 452, 518, 519, 523, 524:
Ռչտուլիք – 293:
Ռոտտսթօ – 190, 271, 283, 415, 488:
Ռումանիա – 58, 167, 342, 343, 481, 484, 485, 491, 497, 498, 511, 513, 514:

Ռուսիա, Ռուսաստան – 5, 8, 30-32, 46, 47, 51, 53-57, 67, 68, 70, 72, 77-79, 83, 90, 95, 104, 107, 110, 111, 116, 133, 137, 150, 153, 155, 156, 159, 165, 167, 182, 189, 200, 240, 241, 244, 342, 357-359, 366, 372, 427, 428, 441, 442, 445-447, 451-453, 460, 471, 472, 478, 481, 502:
Ռուսճուրբ – 482, 483, 485, 492, 494-498, 505, 509, 511, 512, 514, 515:

Սարմատ (Մինարէթ) – 28, 46, 48, 50, 88, 128, 297, 427, 429, 430, 432, 434, 436, 438, 448-452:

Սալնոյ ձոր – Տես Պիթլիս:
Սամսոն (Բանալի) – 60, 87, 173, 178, 209, 281, 360, 363, 365, 366, 380-382, 385-387, 487, 488:

Սան Ստեֆանո – 62, 272, 279:
Սասուն (Բարձրաւանդակ) – 39, 79, 124, 150, 214:
Սարուստան – Տես Կովկաս:

Սեբաստիա (Բաստ, Սել բլուր) – 13, 14, 23, 24, 41-43, 88, 118, 126, 134, 142, 146, 172, 173, 175, 178, 179, 275, 342, 360, 363, 365, 366, 373, 385, 397, 403, 475, 487, 488:

Սելանիկ – 59, 60, 162, 163, 169, 185-187, 198, 201, 246, 256, 266, 269, 273, 313, 324, 326, 331, 387, 426:

Սեւաստապոլ (Չրահապատ) – 476:
Սել բլուր – Տես Սեբաստիա:
Սեւերէկ – 488:

Սել Վիշապ – Տես Տիարպեքիր-Տիգրանակերտ:
Սըվազ – Տես Սեբաստիա:
Սիմֆերապոլ (Դաշտ) – 476:

Սիս – 45, 125, 268, 279, 409-411, 488, 515:
Սլիվէն – 40, 483, 495, 497, 503:

Ս. Կարապետ վանք – 315, 316, 320, 335:
Սղերդ – 307, 330, 394, 395, 404:
Սոչի (Ապաստան) – 474-476:

Սուէտիա – Տես Անտիոք:
Սուլթանապատ – 452:
Սուլինա – 484, 490, 492, 494, 495-509, 513-515:

Սուխում (Գաղթավայր) – 475, 477:
Սոֆիա – 187, 202, 203, 205, 207, 238, 257, 446, 482, 483, 486, 489, 491, 494, 509:

Սպահան – 49, 427, 451:
Սպարկերտ – 303, 324:
Ստամպոլ – Տես Պոլիս:
Սոֆիան – 436:

Վահագնեան շրջան – 321-323:
Վառնա – 5, 20, 171, 185, 483, 485, 490-492, 494, 495, 497, 498, 502, 503, 509, 510, 512, 514, 515:

Վասպուրական-Վան (Շամ) – 6, 17, 18, 20, 26, 29, 38, 40, 46, 61, 64, 78, 79, 88, 89, 99, 102, 111, 115, 116, 124, 127-129, 131, 133, 135, 136, 142, 144, 146-148, 161-165, 175, 178-180, 183, 188, 213, 214, 216, 224, 239, 240, 256, 275, 293, 294, 296-298, 300-315, 326, 333, 336, 341, 345, 346, 348, 390, 400, 408, 440, 441, 444, 454, 458, 459, 473, 474, 479, 481, 488, 500, 538, 541, 546:
Վասիլինջ – 48:
Վարդենիք, Վարդանոց – Տես Պուլիարիա:
Վիեննա – 78, 160, 162, 163, 170, 186, 202, 203, 205, 206, 225, 226, 238, 239, 292, 489:
Վիշապ – Տես Պոլիս:
Վիշապաձոր (Տիգրանակերտ) – Տես Տիարպեքիր:
Վլադիկաւկաս – 32:

Վրէժ, Վրէժստան (Ատրպատական, Պարսկաստան) – 6, 11, 19, 20, 22, 25, 28, 29, 31, 37, 44, 88, 127, 129, 142, 170, 175, 297, 333, 427-453:

Տարսոն – 43, 282, 283, 285:
Տարոն-Մուշ (Դուրան) – 17, 38-40, 59, 61, 97, 124, 125, 133, 188, 213, 214, 282, 315-323, 326-335, 345-347, 397, 423, 454, 458, 467, 488:
Տարոն-Սասուն – 6, 39, 87, 142, 315-323, 326-335, 390, 397:
Տերսիմ – 42:
Տէտէադան – 271, 278:
Տէօրթ Եոլ – Տես Չորք Մարզուան:

Տիարպեքիր (Տիգրանակերտ, Վիշապաձոր) – 6, 38, 60, 79, 114, 125, 126, 142, 148, 149, 173, 178, 282, 317, 336, 346, 348, 355, 390-401, 404, 488, 536:
Տիգրանակերտ – Տես Տիարպեքիր:
Տիվրիկ (Որոտում) – 360, 363, 488:
Տրապիզոն (Մովափ) – 6, 20, 26, 42, 43, 61, 63, 80, 87, 128, 129, 142, 166, 167, 336, 337, 341, 347, 349, 426, 488:
Տրիպոլի (Ժայռ) – 349:
Տրիպոլիա (ափրիկեան) – 167:

Փառնակ – Տես Կիրասոն:
Փարիզ – 3, 5, 10, 29, 59, 90, 160-170, 173, 174, 176, 186, 189, 190, 193, 199, 203, 206, 210-214, 218, 219, 221, 223-230, 237-239, 242, 244, 256, 387, 489, 517, 520, 521:
Փարոս – Տես Ուրմիա:
Փոթի (Չրաշէն) – 475-477:
Փոքր Հալք – 6, 41-43, 118, 133, 134, 143, 148, 149, 169, 173, 177, 178, 187, 360-390:
Փրակերթօ (Նփրկերտ) – 390-396, 400, 401:
Փրավիտենս – 527, 530, 531, 537, 538:

Քանատա – 526, 527:
Քաստեմունի – 38, 40, 308, 426:
Քար – Ալիք-Քար – Տես Ալեքսանդրապոլ:
Քարձոր – Տես Կիւրին:
Քեսապ (Հեղեղատ) – 45, 281, 404:
Քիլիս (Խորշ) – 404:
Քիլիմիթեփէ (Բլուր) – 297, 438, 440, 441, 443:
Քիւրտմէյտան – 323:
Քղի (Խորձոր) – 336, 337, 345:
Քոնսթանցա – 199, 485, 494, 497, 503, 515:
Քորիա – 155:

Օղեսա (Կայծ) – 473, 476:
Օսմանեան կայսրութիւն – Տես Թուրքիա:
Օսմանիէ – 282, 284, 285:
Օրտու – 349, 357:
Չընտըճագ – 43:
Չիլատեֆիա – 530, 532, 537:
Չիլիպպէ – 88, 190, 209, 222, 300, 481-483, 485, 491-494, 497, 498, 509-515:
Չոնուզ – 45:
Չրանսա – 10, 105, 123, 160, 164-167, 180, 431, 445, 447:
Չրեզնօ – 532, 537, 544:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅԱՌԱՋԱՐԱՆ ----- 3

ՎՈՒԽ Ի.– Հ.Յ.Գ. ՀԻՆԳԵՐՈՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

Ա 1.– Արեւմտեան Բիւրոյի շրջաբերականը Ե. Ընդհ. Ժողովի գումարման մասին ----- 7
Ա 2.– Արեւելեան Բիւրոյի հրատերը Ե. Ընդհ. Ժողովին ----- 9
Ա 3.– Օրակարգ Հ.Յ.Գ. ԵՄ Ընդհ. Ժողովի ----- 10
Բ.– Լիազօրագրեր ----- 13
Գ 1.– Զրիսի եւ Թորգոմի նամակը Ե. Ընդհ. Ժողովին ----- 15
Գ 2.– Վոսմեանի եւ Վանայ Սարգիսի նամակը Ինքնի յանձնախումբին ----- 17
Գ 3.– Յար. Շահրիկեանի նամակ ----- 18
Գ 4.– Վոսմեանի նամակ ----- 18
Գ 5.– Վանայ Սարգիսի նամակ ----- 19
Գ 6.– Մատինեան Նիկոյի նամակ ----- 19
Դ.– Արձանագրութիւն Հ.Յ.Գ. ԵՄ Ընդհ Ժողովի ----- 20
Ե.– Հինգերորդ Ընդհ Ժողովի կազմակերպական որոշումներ ----- 148
Զ.– Ե. Ընդհ. Ժողովի որոշումներն ու Յայտարարագիրը ----- 151

ՎՈՒԽ ԻԻ.– Հ.Յ.Գ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՆԵՐ

1.– Տեղեկագիր Արեւմտեան Բիւրոյի (1907 Յունիս – 1909 Յուլ.) ----- 160
2.– Ընդհանուր հաշուեկշիռ (1907 Յունիս – 1909 Յուլ.) ----- 174
3.– Երջաբերական-նամակ Արեւմտեան Բիւրոյի (26 Փետր. 1908) ----- 176
4.– Երջաբերական-նամակ Արեւմտեան Բիւրոյի (15 Յուլ. 1908) ----- 179
5.– Երջաբերական-նամակ Արեւելեան Բիւրոյի (20 Յուլ. 1908) ----- 181
6.– Արեւմտեան Բիւրոյի գաղտնի շրջաբերականը (27 Յուլ. 1908) ----- 182
7.– Երջաբերական-նամակ Արեւելեան Բիւրոյի (5 Օգոստ. 1908) ----- 182
8.– Արեւելեան Բիւրոյի կոչ-յայտարարութիւն (Փետր. 1909) ----- 184

ՎՈՒԽ ԻԻԻ.– ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ ԵՒ ՏԵՄԵՆ

Ա 1.– Տեղեկագիր Հ.Յ.Գ. Պոլսի Պատասխանատու մարմնին (Օգ. 1909) ----- 186
Ա 2.– Որոշումներ Հ.Յ.Գ. Պատասխանատու մարմնի (1908) ----- 190
Ա 3.– Երջաբերական Հ.Յ.Գաշնակցութեան (30 Յուլ. 1908) ----- 192
Ա 4.– Երջաբերական Հ.Յ.Գ. Կ. Պոլսոյ Պատասխանատու մարմնին (2 Օգ. 1908) ----- 193
Ա 5.– Երջաբերական Հ.Յ.Գ. Կ. Պոլսոյ Պատասխանատու մարմնին (3 Օգ. 1908) ----- 194
Ա 6.– Երջաբերական ----- 194
Ա 7.– Երջաբերական մարմններուն (22 Օգ. 1908) ----- 195
Ա 8.– Երջաբերական-նամակ (31 Օգ. 1908) ----- 196
Ա 9.– Երջաբերական-նամակ (4 Մեպտ. 1908) ----- 197
Ա 10.– Գրիգոր Զօհրապ թրքական յեղաշրջման մասին ----- 198
Ա 11.– Չապէլ Եսայեան թրքական յեղաշրջման մասին ----- 199
Ա 12.– Տոքթ. Սուրէն Նշանեան թրքական յեղաշրջման մասին ----- 200
Բ 1.– Որոշումների մատեան Տեմէնի [Տեոորական մարմին] (1908) ----- 202
Բ 2.– Նախագիծ Յուցական Տեոորական գործունէութեան ----- 208
Բ 3.– Արեւմտեան Բիւրոյի նամակը Յուցական Տեոորական մարմնին ----- 210
Բ 4.– Անձտ Ռիզայէն Հ.Յ.Գ. Արեւմտեան Բիւրոյին ----- 211
Բ 5.– Արեւմտեան Բիւրոյէն Տեմէնին ----- 212

ԳԼՈՒԽ IV.- ՕՍՄԱՆԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա 1.- Օսմ. Թուրքիոյ Պոլսոյ ընդդիմադիր տարրերու կոնգրէ ----- 215
 Ա 2.- Համաձայնութեան մը սկզբունքները ----- 217
 Ա 3.- Արեւմտեան Բիրոյն Արեւելեան Բիրոյն ----- 218
 Ա 4.- Ահմէտ Ռիզայի նամակը ----- 219
 Ա 5.- Արեւմտեան Բիրոյն Ամերիկայի Կեդր. Կոմիտէին ----- 220
 Ա 6.- Արեւմտեան Բիրոյն Հնչակեան Կեդր. Վարչութեան ----- 220
 Ա 7.- Մ. Փորթուզալեանի պատասխանը Արեւմտեան Բիրոյն ----- 221
 Ա 8.- Մակեդոնացիներէն նամակ ----- 222
 Ա 9.- Նամակ Ահմէտ Ռիզայէն ----- 223
 Ա 10.- Արշակ Զօպանեանի պատասխան-նամակը ----- 223
 Ա 11.- Ակնունիէն ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան ----- 224
 Ա 12.- Ակնունիէն Արեւելեան Բիրոյն ----- 224
 Ա 13.- Ակնունիէն Ռոստոմին ----- 225
 Ա 14.- Հրաւիրագիր Փարիզի կոնգրէին ----- 227
 Ա 15.- Ակնունիէն ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան ----- 228
 Ա 16.- Փորթուզալեանէն Ակնունիին ----- 229
 Ա 17.- Փորթուզալեանէն Ակնունիին ----- 230
 Ա 18.- Ակնունիէն ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան ----- 230
 Ա 19.- Կոնգրէի հրաւիրագիր ----- 231
 Ա 20.- Յայտարարագիր Օսմ. կայսրութեան ընդդիմադիր տարրերու կոնգրէին ----- 232
 Ա 21.- Կոնգրէի ճաշկերոյթ (ճաշացուցակ) ----- 236
 Ա 22.- Փորթուզալեանէն Ակնունիին ----- 237
 Ա 23.- Գալֆայեանէն Մարին ----- 237
 Ա 24.- Ակնունիի նամակը Արեւելեան Բիրոյն ----- 238
 Ա 25.- Ռոստոմի նամակը Արեւմտեան Բիրոյն ----- 240
 Բ 1.- Ահմէտ Ռիզայի նամակները «Դրօշակ»ի խմբագրութեան ----- 242
 Բ 2.- Արեւելեան Բիրոյն շրջաբերականը (12 Յուլ. 1908) ----- 244
 Բ 3.- Արեւմտեան Բիրոյն Ամերիկայի Կ. Կոմիտէին ----- 245
 Բ 4.- Déclaration ----- 246
 Բ 5.- Revendications ----- 247
 Բ 6.- Հ. Յ. Դաշնակցութեան Պահանջները ----- 250
 Բ 7.- Ծրագիր Օսմ. Միութեան եւ Յառաջդիմութեան կոմիտէին ----- 253
 Բ 8.- Պաշտօնական յայտարարութիւն Վեր. Հնչ. կուսակցութեան ----- 255
 Բ 9.- Հ. Յ. Դ. Հեռագիր Սելանիկի Իթթիհատի կեդրոնին ----- 256
 Բ 10.- Մակեդոնացիներէն երկու նամակ Պոլսոյ Պատ. մարմնին ----- 257
 Գ 1.- Proclamation du comité de l'Union Ottomane ----- 260
 Գ 2.- Déclaration - Յայտարարութիւն ----- 261
 Գ 3.- Յայտարարութիւն «Օսմ. Միացեալ մարմնոյն» ----- 262
 Գ 4.- Մահմուտ Շեքէթի նամակը Հ. Յ. Դ. ին ----- 263
 Գ 5.- Օրինագիծ Խառն մարմնի ----- 264
 Գ 6.- Շրջաբերական Իթթիհատ-Թերագր-ի եւ Հ. Յ. Դ. ի ----- 266
 Գ 7.- Իթթիհատ-Թերագր-ի եւ Հ. Յ. Դ. ի Շրջաբերականի օսմաներէն բնագիրը ----- 267

ԳԼՈՒԽ V.- ԱՏԱՆԱ - ԿԻԼԻԿԻՈՅ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

Ա 1.- Պոլսոյ Պատ. մարմնէն Արեւմտեան Բիրոյն ----- 269
 Ա 2.- Արեւմտեան Բիրոյն Իզմիրի կոմիտէին ----- 271
 Ա 3.- Պոլսոյ Պատ. մարմնէն Արեւմտեան Բիրոյն ----- 272
 Ա 4.- Նամակ Պոլսոյ Պատասխ. մարմնէն՝ Արեւմտ. Բիրոյն ----- 275
 Ա 5.- Շրջաբերական նամակ Հ. Յ. Դ. Պալք. շրջանի ընկերներուն ----- 278
 Բ 1.- Ատանայէն Հ. Յ. Դ. Կ. Պոլսոյ Պատասխ. մարմնին ----- 279
 Բ 2.- «Ազգանուր» [Այնթապի] ենթակոմիտէն Պոլսոյ Պատասխ. մարմնին ----- 280

Բ 3.- Շոնի [Պէյրուսի] ենթակոմիտէն Կ. Պոլսոյ Պատասխ. մարմնին ----- 281
 Բ 4.- Պէյրուսի ենթակոմիտէն Կ. Պոլսոյ Պատասխ. մարմնին ----- 281
 Բ 5.- Շոնէն Պոլսոյ Պատասխ. մարմնին ----- 282
 Բ 6.- Չաւարեանէն Պոլսոյ Պատասխ. մարմնին ----- 282
 Բ 7.- Չաւարեանէն Պոլսոյ Պատասխ. մարմնին ----- 284
 Բ 8.- Չ. Եսայեանի վկայութիւնը Հիւսէյին Տայիմ պէյի մասին ----- 286
 Բ 9.- Իթթիհատի կեդր. մարմնին Հ. Յ. Դ. ին ----- 287
 Գ 1.- Traduction du Tezkéré ----- 288
 Գ 2.- Նամակ «Դրօշակ»ի խմբագրութենէն ներքին գործոց նախարարին ----- 290
 Գ 3.- Բողոքի հեռագիրներ «Դրօշակ»ի խմբ. կողմէ ----- 291
 Գ 4.- Պոլսոյ Պատ. մարմնի եւ Իթթիհատի Սելանիկի կեդրոնին միջեւ փոխանակուած նամակները ----- 292

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ԳԼՈՒԽ VI.- ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

1.- Հ. Յ. Դ. Վասպուրականի Կ. Կ. ի շրջանի խորհրդակց. ժողովի բանաձեւերը ----- 294
 2.- Արամ Մանուկեանի նամակը ----- 297
 3.- Վասպուրականի զինապահեստներու գրաւման մասին ----- 298
 4.- Ինքնապաշտպանութեան հրահանգներ ----- 301
 5.- Հանրագրութիւն Վանայ ժողովուրդին ----- 303
 6.- Վանայ Սարգիսէն Արեւելեան Բիրոյն ----- 306
 7.- Վասպուրականի Կ. Կոմիտէի կոչը (30 Յուլ. 1908) ----- 308
 8.- Վասպուրականի Կ. Կոմիտէի կոչ (3 Օգ. 1908) ----- 310
 9.- Յայտարարութիւն Հ. Յ. Դ. Վասպուրականի Կ. Կոմիտէի ----- 312
 10.- Հեռագիր Սելանիկի Իթթիհատին ----- 313
 11.- Արամ Մանուկեանի հեռագիրները «Դրօշակ»ին ----- 313
 12.- Մեր Դրօշակը ----- 314

ԳԼՈՒԽ VII.- ԴՈՒՐԱՆ-ԲԱՐՉՐԱԲԱՆԴԱԿ

1.- Շրջանային ժողով՝ Ս. Կարապետի մէջ ----- 316
 2.- Վահագնեան շրջանի ժողովոյ որոշումներ եւ պահանջներ ----- 321
 3.- Վահագնեան շրջանի խումբերու վիճակացոյց ----- 323
 4.- Մարզպետէն Սելանիկի օսմ. յեղ. կոմիտէին ----- 324
 5.- Մարզպետէն Պոլսոյ Պատ. մարմնին ----- 326
 6.- Սեպուհէն Պոլսոյ Պատ. մարմնին ----- 328
 7.- Գարմէնէն լիազօրագիր Սեպուհին ----- 331
 8.- Սեպուհէն Գարմէնին ----- 331
 9.- Նամակ չերքէզ ցեղապետ Մահմէտ էֆէնտիէն ----- 332
 10.- Սեպուհէն Պոլսոյ Պատ. մարմնին ----- 333
 11.- Գարմէնէն Պոլսոյ Պատ. մարմնին ----- 334

ԳԼՈՒԽ VIII.- ԲԱՐՉՐԱԲԵՐԴ-ԿԱՐԻՆ

1.- Երկրի Արեւելեան շրջանի մարմինների Ռայ. ժողովի որոշումները ----- 336
 2.- Դերջանի գաւառէն տեղեկագիր ----- 342
 3.- Միերեանէն Մարալին ----- 345
 4.- Միերեանէն Բերձրաբերդին ----- 345

5.- Գիսակէն Արեւմտեան Բիւրոյին	346
6.- Գիսակէն Պոլսոյ Պատասխ. մարմնին	347

ԳԼՈՒԽ IX.- ԾՈՎԱՓ-ԱԻԱԶԱՆ

1.- Հ.Յ.Դ. Ասազանի Երջանային II ժողով	349
2.- Տեղեկագիր Օրտոյի շրջանի հայաբնակ գիւղերի	357

ԳԼՈՒԽ X.- ՓՈՔՐ-ՀԱՅՔ

Ա 1.- Հ.Յ.Դ. Փոքր-Հայքի Ա. Ռայոնական ժողով	360
Ա 2.- Կովկասահայ ժողովուրդին	367
Բ 1.- Հ.Յ.Դ. Բերդի [Շապին Գարահիսարի] շրջանի տեղեկագիրը	368
Գ 1.- Երջանային ժողով Հ.Յ.Դ. Լեոնասարի [Խարբերդի] շրջանին	370
Գ 2.- Հ.Յ.Դ. Բերքառատի [Մալաթիոյ] կոմիտէին տեղեկագիրը	373
Գ 3.- Տեղեկագիր Հ.Յ.Դ. Բլրակի [Արաբկիրի] կոմիտէին	375
Գ 4.- Տեղեկագիր Գահաւանդի [Չարսանճաքի] ենթակոմիտէին	377
Գ 5.- Անուշաւանի [Հիւսէյնիկի] ենթակոմիտէին Լեոնասարի [Խարբերդի] Կ. Կոմիտէին	379
Գ 6.- Տեղեկագիր Հ.Յ.Դ. «Թաթառ» [Ալն] ենթակոմիտէին	379
Դ 1.- Տետր արձանագրութեան Հ.Յ.Դ. Երջ. Ա. Ժողովին [Մարզուան]	380
Դ 2.- Տեղեկագիր Հ.Յ.Դ. Կայանի [Մարզուանի] Կ.Կ.ի	385

ԳԼՈՒԽ XI.- ՎԻՇԱՊԱԶՈՐ-ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

1.- Օրակարգ Հ.Յ.Դ. Վիշապաձորի Պատգամաւոր. Ա. ժողովի	390
2.- Հ.Յ.Դ. Վիշապաձորի Երջանային ժողով	391
3.- Վիշապաձորի Կ.Կ.էն Պոլսոյ Պատ. մարմնին	392
4.- Մեր կարծիքները Հ.Յ.Դ. Հինգերորդ Ընդի. Ժողովին	393
5.- Տեղեկագիր Բլրակի [Ղարզանի] շրջանին	394
6.- Նփրկերտի ենթակոմիտէին Պոլսոյ Պատ. մարմնին	395
7.- Վիշապաձորի Կ. Կոմիտէին Փրակերթոյի մասին	397
8.- Տեղեկագիր Տիգրանակերտ քաղաքի մասին	397
9.- Փրակերթոյի ենթակոմիտէին «Ազատամարտ»ին	400

ԳԼՈՒԽ XII.- ԼԵՌՆԱՎԱՅՐ-ԿԻԼԻԿԻԱ

1.- Տեղեկագիր Լեոնավայրի Օժ. մարմնին	402
2.- Տեղեկագիր Հողաբլրի [Այնթապի], շրջակայ գիւղերու եւ Եղեսիոյ	405
3.- Արեւմտեան Բիւրոյէն Լեոնավայրի Օժ. մարմնին	408
4.- Գալֆայէն Պոլսոյ Պատ. մարմնին	409
5.- Գալֆայէն Պոլսոյ Պատ. մարմնին	410
6.- Գալֆայէն Պոլսոյ Պատ. մարմնին	411
7.- Ծոցի [Պէյրուֆի] կոմիտէին Պոլսոյ Պատ. մարմնին	412
8.- «Ազգանուէր»էն Ա. Չաւարեանին	412
9.- Հողաբլուրէն Պոլսոյ Պատ. մարմնին	413

ԳԼՈՒԽ XIII.- ՎԻՇԱՊ-Կ. ՊՈԼԻՍ Եւ ՈՍԿԵՀԱՆՔ-ԻԶՄԻՐ

Ա 1.- Որոշումներ Հ.Յ.Դ. Պոլսոյ Երջանային ժողովին	415
Բ 1.- Տեղեկագիր Իզմիրի շրջանի 1909 Ընդ. Ժողովի	421

ԳԼՈՒԽ XIV.- ՎՐԷԺՍԱՆ-ՊԱՐՍԿԱՍԱՆ

1.- Տեղեկագիր Հ.Յ.Դ. Վրէժստանի Կ. Կոմիտէի	429
2.- Քաղուածքներ Հ.Յ.Դ. Վրէժստանի III Երջ. Պատգ. ժողովի որոշումներին	438
3.- Ընծայրի տեղեկագիրը	440
4.- Ռոստոմի նամակը Հ.Յ.Դ. Բիւրոներուն	444
5.- Յայտարարութիւն Ատրպատականի Կ. Կոմիտէի	448
6.- Ատրպատականի Կ.Կ.էն Արեւմտեան Բիւրոյին	448
7.- Երջաբերական Ատրպատականի Կ. Կոմիտէի	449
8.- Երջաբերական-նամակ Արեւմտեան Բիւրոյի	450
9.- Ռոստոմէն Արեւմտեան Բիւրոյին	451
10.- Ատրպատականի Կ.Կ.էն Արեւմտեան Բիւրոյին	452
11.- Ռոստոմէն Եփրեմին	453
12.- Եփրեմէն Ռոստոմին	453

ԳԼՈՒԽ XV.- ԿՈՎԿԱՍ

Ա 1.- Տեղեկագիր Թմրուկ-Ախալքալաքի	455
Բ 1.- Ոսկանապատի [Պաքուի] Երջ. ժողովի արձանագրութիւն եւ որոշումները	457
Բ 2.- Տեղեկագիր Ոսկանապատի զինապահեստներու մասին	465
Բ 3.- Մի փոքրիկ տեղեկագիր Հ.Յ.Դ. Ընդ. V համագումարին	466
Գ 1.- Տեղեկագիր Քար-Ալիքի [Ալեքսանդրապոլի] շրջանի	468
Դ 1.- Հ.Յ.Դ. VI [Պաթումի] Կ. Կոմիտէի համառօտ տեղեկագիր	472
Դ 2.- Հ.Յ.Դ. VI [Պաթումի] Կ.Կ.ի Երջանային ժողով	477

ԳԼՈՒԽ XVI.- ՊԱԼՔԱՆՆԵՐ

1.- Տարեկան տեղեկագիր Հ.Յ.Դ. Պալք. Կ.Կ.ի	481
2.- Ատենագրութիւն Հ.Յ.Դ. Պալք. Երջանային Ը. ժողովի	494

ԳԼՈՒԽ XVII.- ԵՒՐՈՊԱՅԻ Հ.Յ.Դ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Ա 1.- Տեղեկագիր Հ.Յ.Դ. Եւրոպայի Ուսանողների միութեան	516
Ա 2.- Տեղեկագիր Հ.Յ.Դ. Ե. Ընդի. Ժողովի մասին	523

ԳԼՈՒԽ XVIII.- ԱՍԵՐԻԿԱ

1.- Տեղեկագիր Հ.Յ.Դ. Ամերիկայի շրջանի	526
2.- Ամփոփ տեղեկագիր Հ.Յ.Դ. Ամերիկայի կոմիտէներու ԺԴ. Պատգ. ժողովին	532
3.- Որոշումներ Հ.Յ.Դ. Ե. Ընդի. Ժողովի համար	540
4.- Երջաբերական (10 Նոյ. 1908)	542
5.- Երջաբերական (11 Յունիս 1909)	545

ԱՆՉԱՆՈՒՆՆԵՐ	547
--------------------	-----

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ	551
--------------------	-----

ՆԻԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ – 2. ՀԱՏՈՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն եւ ծանօթագրութիւններ
ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒՔԵԱՆԻ:

Համակարգչային շարուածք եւ էջադրում
ԹԱՄԱՐ ՄՆԱՊԵԱՆ-ՍՈՒՐՃԵԱՆԻ:

ՑՐՈՒՈՒՄԻ ԿԵԴՐՈՆ

HAMAZKAYIN LIBRARY
P.O.BOX 80-1096
BOURJ HAMMOUD – LEBANON
TEL.: 00961 - 1 - 241263/4
FAX: 00961 - 1 - 260329
E-MAIL: imphamaz@inco.com.lb
www.hamazkayin-bookstore.com



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ